ՎԱԼԵՆՏԻՆ ՊԻԿՈՒԼ

ԲԱՅԱՂԵՏ

ՎԵՊ

ԵՐԵՎԱՆ «ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ» 1989

ԳՄԴ 84 Ռ 7—4
Պ 588

Ռուսերենից թարգմանեց
ՍՈՍ ՄՈՎՍԻՍՅԱՆԸ

Պիկուլ, Վ. Ս.
Պ 588 Բայազետ։ Վեպ/ Վալենտին Պիկուլ։ [Ռուս. թարգմ. Ս. Մովսիսյանը].— Եր.։ Խորհրդ. գրող, 1989. 712 էջ։

Վալենտին Պիկուլի այս վեպը նվիրված է Բայազետի պաշարման փառապանծ հերոսամարտին, որը ժամանակին աշխարհում հռչակվեց «Նոր Սիրակուզա» անվամբ։ Հեղինակը պատկերել է Բայազետի պաշտպանների տոկունությունը, անձնուրացությունը և թշնամուն հաղթելու անընկճելի կամքը՝ թուրքական պաշարման ծանր պայմաններում, 1877 թվականի տոթակեզ ամռանը։

Գլուխ հիմքում ընկած են իրական դեպքեր։

Վեպը առաջին անգամ հայերեն լույս է տեսել 1983 թ.։

Մ $\frac{470201201\ (50)}{705\ (01)\ 89}$ 129—89 ԳՄԴ 84 Ռ 7—4

ISBN 5-550-00318-x

© «Սովետական գրող» հրատարակչություն, 1983
© «Խորհրդային գրող» հրատարակչություն, 1989

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Առօրյա կյանքում հաճախ լինում է այսպես. մի մարդ մեզ դուր է գալիս, մեկ ուրիշը՝ ոչ, մեկին գրկաբաց ենք ընդունում, մյուսի մոտով անցնում ենք՝ փողոցի մյուս կողմից հազիվ գլխով անելով: Համարյա նույն բանը տեղի է ունենում ուրիշ ժողովուրդների հետ մեր հարաբերություններում: Այդ մասին ասելով, ընթերցող, ես անմիջապես հայտնում եմ, որ հայ ժողովրդի նկատմամբ ես վաղուց տածում եմ ջերմ համակրանք:

Ինձ չհամարելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության գիտակ, ես հարգում եմ այդ իմաստուն ու բազմաչարչար ժողովրդին, որը բազում հարյուրամյակների ընթացքում մի անգամ չէ, որ դիմացել է ծանր փորձությունների (և մինչև հիմա էլ շարունակում է դիմանալ): Ինձ վրա մեծ տպավորություն է գործում և այն, որ նույնիսկ տարագրության մեջ ապրելով, ամբողջ աշխարհով մեկ ցրված լինելով, հայերը չեն կորցրել իրենց հարուստ ազգային մշակույթը, խնամքով պահպանել են իրենց լեզուն և իրենց գիրն ու գրականությունը:

Բացի դրանից, ես՝ ռուս մարդս, ինչ-որ հոգեկան հարազատություն եմ զգում հայերի նկատմամբ, և դրա համար կան հիմնավոր պատճառներ: Դեռ անհիշելի ժամանակներից, երբ սելջուկներն ու թուրքերը ավերում էին Մեծ Հայաստանը, ձեր նախահայրերը, ընթերցող, ապաստան էին փնտրում սլավոնների՝ իմ նախահայրերի հողերում:

Հայերի հետ միասին ռուս ցարերը երկարատև պայքար էին մղում պոլովցիների և թաթարների դեմ: Վերջապես Գրյունվալդի 1410 թ. նշանավոր ճակատամարտում հայերը՝ ռուսների, լիտվացիների և բելոռուսների հետ միասին ջախջախեցին Տևտոնյան օրդենի ասպետներին, և այդ ճակատամարտը երկար ժամանակ զսպեց գերմանական «Դրանգ նախ օստեն»-ի էքսպանսիան:

Ինչպես տեսնում եք, ես ծանրակշիռ քիչ փաստեր չունեմ նրա համար, որպեսզի հարգեմ և սիրեմ հայ ընթերցողին...

«Բայազետ» վեպը իմ առաջին պատմավեպն է: Ես այն գրել եմ դեռ գրական երիտասարդության տարիներիս, գերազանց իմանալով, որ վեպի իրադարձությունները ծավալվում են հենց հինավուրց Հայաստանի հողում: Դժբախտաբար, ես ձեռքի տակ չունեի պատմական աղբյուրների բավականաչափ պաշար, որպեսզի իմ վեպի գլխավոր հերոսների թվում լինեին նաև հայեր, թեև հայերը, այնուամենայնիվ, վեպում ներկայացված են:

Չեմ վիճում, որ իմ կողմից թույլ են տրվել և որոշ սխալներ, որոնք հայ ժողովրդի կենցաղն ու սովորույթները, ինչպես նաև պատմական ու աշխարհագրական առանձին տեղանուններ լավ չիմանալու հետևանք են: Դրա համար ես շնորհակալ եմ վեպի թարգմանչից, որը բարեխղճորեն շտկել է իմ տեքստում եղած անճշտությունները:

«Բայազետը» հրատարակվելուց հետո ես գրել եմ բազմաթիվ ուրիշ վեպեր, բայց «Բայազետը» ինձ համար հատկապես թանկ կմնա, ինչպես առաջնեկը՝ մոր համար, ավելի ևս, որ իմ հեղինակային պատկերացմամբ Բայազետի 1877 թ. ամռան իրադարձությունները անտեսանելիորեն կապվում են Բրեստի ամրոցի 1941 թ. ամռան հերոսական պաշտպանության հետ: Նախահայրերի արիությունը կարծես գենետիկորեն փոխանցվել են նրանց թոռներին ու ծոռներին...

Երկրի կինոստուդիաներում վաղուց խոսակցություններ են գնում այն մասին, որ էկրանացնեն իմ «Բայազետը», քանզի նրա ողբերգությունը լավ կդիտվի էկրանի վրա, բայց առայժմ դրանք միայն խոսակցություններ են: Ես հասկանում եմ մեր կինեմատոգրաֆիստների վախը. բնապատկերը չկա, ամրոցը չկա, և հետո որտեղի՞ց հավաքագրել այնպիսի մասսայական տեսարաններ, որոնք պետք է պատկերեն Բայազետը գրոհող վայրենի հորդաներին՝ իմամ Շամիլի որդի Ղազի-Մահոմայի գլխավորությամբ:

Հասկանում եմ, որ մինչև վեպի էկրանացումը դեռ հեռու է: Սակայն ես երջանիկ կլինեմ, եթե հենց իմ վեպը դառնա հայ ընթերցողի սրտին մոտիկ գիրք:

Խոր հարգանքներով՝ ՎԱԼԵՆՏԻՆ ՊԻԿՈՒԼ

Անան առաքելեան

ՀԵՆՑԱԼՆԵՐԸ

Պորուչիկ Կարաբանովը

Ես վատ եմ ճանաչում մարդկանց, բանզի չափազանց սիրում եմ նրանց, սակայն պետք է խոստովանեմ, որ ինձ ոչ ոք այնքան չի նրապուրել, որքան Անդրեյ Կարաբանովը: Սկսած Պետերբուրգից մինչև Բայազետ՝ պետք էր հետևել նրան. նա նման էր երես առած ու կամակոր երեխայի: Նա այլևս մեզ հետ չէ, և ես նրան ամեն ինչ ներում եմ...

Ղրապորչիկ Ֆ. Պ. Ֆոն Կլյուքենաու

1

Պատին բռնել էր տենդը: Բռնել էր ոչ հարմար ժամանակ՝ ծառայության մեջ, սահմանապահ ջոկատում: Նա այդ հիվանդությունն ստացել էր Խիվայի ծանր արշավանքի ժամանակ ցուցաբերած քաջության համար Գեորգիևյան խաչի հետ միասին: Դա չորս տարի առաջ էր:

— Մի՞թե չորս...

Պատի հետևում մռնչում էին քաղցած ուղտերը: Նա պառկած էր թախտի վրա, հնամաշ թուրը կախ էր ընկել հողե հատակին: Առաստաղից ցած էին թափվում պարսկական խորամանկ փայտոջիլները:

— Իրոք, կարծես չորս տարի է,— հնազանդորեն համաձայնեց սպան և վրան քաշեց ցանցառ մահուդից կարված, խարույկներից մրոտված ու քրքրված շինելը:

Այդ պահին ցավը նորից կծկեց նրան: Սկզբից գցեց կողքի, սեղմեց պատին: Հետո, ինչպես ընկնավորության ժամանակ, աղեղնաձև կորացրեց ծոծրակի և կրունկների վրա՝ սապատավոր կամրջի նման:

Եվ սկսվեց:

— Իսկ ժամանա-ա-ա-կը,— նա դողդողալով չխկչխկացրեց ատամները,— ինչպես է թռչու-ու-ո՜ւմ... Անընդհատ թռչում է ու թռչո՜ւմ...

Ներս մտավ մի ծեր զինվոր, ուշադիր նայեց ոտքերի տակ և ուռած ճտքակոշիկով սկսեց ինչ-որ բան երկար տրորել հատակին:

— Ձերդ բարեծնություն,— ծուլորեն մոթմոթաց նա,—

կազակային պահակախումբ է եկել Թիֆլիսից, մի ազնվական տիկնոջ է ուղեկցում։

Խինինի հետ թրմած կես բաժակ օղի ներծծելով՝ սպան գուրս եկավ փայտյա պահակատնից։ Երկու ուղտ, կեղտոտ ու նիհար, պառկած էին ճանապարհի մոտ՝ պարանով կապված։ Հանձնարարված էր նրանց պահել այստեղ, որպեսզի ձիերը վարժվեին բնության այդ այլանդակությանը և չխրտնեին Պարսկաստանից եկող քարավաններից։

Ուղեփակոցի մոտ, հեծյալ կազակներով շրջապատված, շեղահար անձրևի տակ թրջվում էր թաղիքով ծածկված մի կառք։

— Ո՞ւր եք ճանապարհ բռնել, տի-ի-ի-կին։

Ուղեկառքից մայրական հաճելի ու մոռացված փաղաքշանքի նման սպայի վրա փչեց կանացի մի ջերմություն, և թավշյա կապույտ ոստոնդայով երիտասարդ կինը զարմացած նայեց շուրջը։

— Ես, պարոն, շտապում եմ,— ասաց նա,— իմ լազարեթը համար տասնմեկն է։ Գեներալ Տեր-Ղուկասովի էրիվանյան[1] ջոկատը... Բայազետ, կարծեմ այդպես է կոչվում այն վայրը, ուր ես պետք է գնամ։ Իսկ Իգդիրի պարետը իմ ամուսինն է՝ գնդապետ Խվոշչինսկին... Կազակնե՛ր,— ձեռքով կանչեց նրանց ուղեկցուհին, որը հագել էր արծաթագույն ձեռնոցներ,— բարձրացրե՛ք թաղիքը, որպեսզի երևա կարմիր խաչը։

— Խվոշչինսկի՞ն,— ձգվեց սպան,— պատիվ ունեմ ճանաչելու՝ դեռ Սամարղանդից և Խիվայից... Անտիպո՛վ,— կարգադրեց նա, ծածկելով կառքի զոնակը,— ուղեփակոցը բարձրաց-ցը-րո՛։

Թաց խճաքարերի վրա անիվները ճռճռացնելով՝ կառքը շարժվեց։ Կազակները մտրակներով հարվածեցին հոգնած ձիերին և, նիզակները մեջքին գցելով՝ կոացան թամբերի վրա։

Եվ սպան, հայտնելով իր ծառայությունը, վերադարձավ պահակատուն։

[1] Էրիվանյան — պահպանվում է հնդիկական ձևը։ (Այս և հետագա ծանոթագրությունները թարգմանչինն են)։

— Տիկին,— կամաց ասաց նա՝ ստուգելով իրեն,— բարձրացրու... Խվոշչինսկի... Պատիվ ունեմ...

Սպան հանգստացավ. ատամներն արդեն չէին չիկչիկում։

Բաց անելով պահպանաջոկատային հուշատետրը, որը ջղթայով փաթաթված էր սեղանի ոտքին, որպեսզի այդտեղից անցնող կազակները դրանից ծխախոտ չփաթաթեին, նա գրչածայրը թաթախեց թանաքամանի մեջ։ Վերջին գրառումը հուշատետրի մեջ այսպիսին էր.

Պահպանաջոկատի մոտով ծառայության գործերով դեպի Իգդիրի կայազորը ուղևորվեցին ինժեներային պրապորշչիկ Ֆ. Գ. Կլյուգենաուն և Ոսմանյան կազակային գնդի պորուչիկ Ա. Ե. Կարաբաևը, առանց ուղեկցող պահակախմբի, որի համար նրանց արվեց նախազգուշացում։

Մի քիչ ներքև պահակախմբի սպան գրեց.

Բայազետ գնալու ճանապարհին, էշմիածնի վանքի մոտով անցավ մի երիտասարդ հոյակապ տիկին («հոյակապ» բառը նա տեղնուտեղը չջնջեց, իսկ «երիտասարդ»-ը որոշեց թողնել), Իգդիրի պարետի կինը։ Տիկնոջը ուղեկցում էր գծային ծառայության վեց կազակներից բաղկացած պահակախումբ։

Գրելով այդ՝ նա մտածեց, որ տիկինը Բայազետ չի ընկնի։ Այնտեղ նստած են քրդերը, չերքեզներն ու թուրքերը։ Եվ սրում են թրերը։ Եվ կոտորում են հայերին։ Եվ թալանում են գյուղերը։ Պատրաստվում են... ղազավաթի։[1]

Բայց սխալը ուղղել չէր ուզում, և սպան, սուրը ծնգացնելով, նորից փռվեց թախտի վրա։

— Ընդամենը չորս տարի, աստվա՛ծ իմ,— ասաց նա ինքն իրեն, հիշելով անջուր տապը, ավազուտների փայլփլոցը և ուղտերի մռնչոցը՝ ժանգոտված մեխերից պատրաստված խիվայական գնդակների սուլոցի տակ։

Սպայի տրամադրությունը վատ էր։ Նա լավ չէր զգում։ Դրա համար էլ հանգիստ թողնենք նրան։ Մենք նրա հետ ոչ մի գործ չունենք։

Եվ նա երբեք չի լինի մեր հերոսը...

[1] Ղազավաթ — մուսուլմանների «սրբազան» պատերազմ այլադավանների դեմ։

2

Թափանցիկ բաց վարդագույն ցրտաշունչ օդը ցնցվում էր լեռների կատարներին։ Հովիտներով հոսում էին հոտերը, և հովիվները, կեռումեռ ցուպերը ձեռքներին, իրենց վեհությամբ նմանվում էին հնադարյան առաքյալների։ Թվում էր, թե նրանց բեշմեթների հազարամյա ցնցոտիները դեռ պահում են իրենց մեջ ոչխարի պանրի, կայծկլտուն խոտերի և անմարմին մշուշի բիբլիական բուրմունքը։

Ումանյան կազակային գնդի երկրորդ հարյուրյակի պորուչիկ Անդրեյ Կարաբանովը ծնկների արանքում պտտեցնում էր սուրը, որը դեպքերի բերումով գնել էր Էրիվանում, թախծոտ նայում էր գյուղի տանիքներին և մտածում, որ իրեն վիճակված է զոհվել։ Եվ ոչ թե երբևէ, այլ շուտով, հենց առաջին ճակատամարտում, առաջին գնդակից։

Բայց մտածում էր այդ մասին մի տեսակ թեթևությամբ և առանց ցավի. և խաղաղ էր, և ամայացած...

— Խոսեք, պրապորշչիկ, մի՛ քաշվեք,— ասաց Կարաբանովը՝ քորելով բաց գույնի թավ հոնքը,— ձեզ լսելը նույնն է, ինչ ամուսնացած կնոջ գայթակղես կամ հաշիշ ծխես՝ և վնասակար է, և հաճելի...

Ինժեներային պրապորշչիկ Ֆյոդոր ֆոն Կլյուգենաուն, որ գերմանականից պահպանել էր միայն ազգանունը, իսկ բարոնությունից՝ աղքատության պատճառով արդեն ավելորդ դարձած «ֆոն» մակդիրը, ոչ բարձրահասակ, կորամեջք մի մարդ, ակնոցը՝ կճատ քթին, խոսում էր խանդավառությամբ՝ դայլեկնելով տգեղ ու գունատ դեմքը։

— Ասացեք, պորուչիկ, ինչի՞ց է, որ երբեմն մենք հանկարծ սկսում ենք ամաչել իդիլիայից։ Հովվի շվին մեզ թվում է միամիտ, մենք վախենում ենք հոտ քաշել ծաղկից, սրբազան վերաբերմունքը կնոջ նկատմամբ մեր մեջ ծիծաղ է առաջացնում... Խեղճ Լիզան, իհարկե, հիմար է, բայց արդյոք վա՞տ կլիներ հանդիպել նրան կյանքում... Մի՞թե դուք չեք ձանձրացել ինձ լսելուց,— հարցրեց նա՝ կորանալով իր այծենակաճի տակ։

— Բառերը չեն խանգարում,— քմծիծաղ տվեց Կարաբանովը։

— Հասկանում եմ,— գլխով արեց Կլյուգենաուն,— խանգարել կարող են միայն մտքերը... ես հիմա մի քիչ խառնաշփոթ եմ խոսում, ճիշտ չէ՞։ Սակայն ինձ թվում է, որ մեր նախնիները, որոնք մահակը մազոտ ձեռքերում հետապնդում էին եղնիկին, դեռևս չէին կարողանում խանդել կնոջը և թավուտների խշխշոցի մեջ էին տեսնում պոեզիայի բարձրագույն արտահայտությունը, համենայն դեպս, պորուչիկ, նրանք մեզանից շատ ավելի երջանիկ էին...

— Ա՜յ քեզ սրիկա,— անսպասելիորեն հայհոյեց Կարաբանովը,— անիծված հույն։ Վերջին փողերս էլ նրան տվի, ավելի լավ էր խմեի։

— Ինչի՞ մասին եք խոսում,— զարմացավ Կլյուգենաուն։

— Դե նայեք՝ մի քիչ ուժեղ սեղմեցի երախակալը, և նա բարեհաճեց պոկ գալ...

Կլյուգենաուն կարճատեսի պես զննեց պորուչիկի սուրը, գովեց բարակ արծաթագույն սրաշեղը և հանգստացրեց.

— Պորուչիկ, կգաք Իգդիր, այնտեղ կվերանորոգեն։ Միայն անմիջապես խորհուրդ եմ տալիս՝ երբ «լապշայի»[1] մեջ ընկնեք, խուսափեք ծոծրակին խփել։ Ես եղել եմ սրամարտերում, և ամեն մի կովկասցի գիտի, որ այս ոսկորը, ա՜յ սա,— նա ցույց տվեց որ մեկը,— թեկուզ կացնով խփիր, սուրը անմիջապես դուրս է թռչում երախակալից։

— Շնորհակալություն խորհրդի համար,— առանց ժպիտի արտաբերեց Կարաբանովը և փոքր, բայց ջլապինդ ձեռքի հարվածով երախակալը դրեց տեղը։— Ես շարունակում եմ լսել ձեզ,— անփութորեն հիշեցրեց նա։

Կլյուգենաուն վրան քաշեց կարմրագույն մուշտակը, շարժեց մրսած կապտավուն մատները՝ ճկույթին մատանի-դրոշմ։

— Ասացե՛ք, Անդրեյ Ելիսեևիչ,— կծկվեց պրապորշչիկը,— դուք երբևէ սիրե՞լ եք որևէ կնոջ։ Ես հասկանում եմ, իհարկե, որ դուք սիրել եք, այո... Բայց ես հիմա խոսում եմ այն սիրո մասին, որը մարդու մեջ առաջացնում է որպես անզուգական մի վեհություն, ինչպես ասենք, եթե նրան իր ամբողջ կյանքում տրված լիներ միայն մի կին...

Չանչելով գորշ փոշին, Կարաբանովի ոտքերի մոտով

[1] «Լապշա» — ուժեղ սրամարտ։

արագավազ անցավ մի փոքրոտ սարդ. պորուչիկը զայրույթով ճզմեց նրան կրունկով և հանկարծ պայթեց վրդովմունքից.

— Լսե՛ք, թանկագին բարոն։ Սիրել եմ ես, թե չեմ սիրել, ձեր ինչ գործն է, հը՞։

Ինժեներային ծառայության պրապորշչիկը, ակնոցի տակից կարճատես աչքերը կկոցելով, ժպտաց.

— Դե, դուք մի բարկացեք,— մեղմորեն խնդրեց նա,— ես, օրինակ, դեռ չեմ սիրել։ Եվ ոչ այն պատճառով, որ ես չորացած գերմանացի պղպեղ-երշիկ եմ, թթված կաղամբ։ Ո՛չ։ Հավատացե՛ք, ես ուղղակի ժամանակ չեմ ունեցել։ Այո՛։ Դեռ պատանի հասակում եկել եմ այստեղ, Կովկաս, որպես յունկեր և այն ժամանակվանից... Դե ինչ եք ուզում։ Ես արդեն երեք անգամ վիրավորվել եմ, մի տարի չեչենների մոտ գերի եմ եղել, և մազերս արդեն ճերմակել են, իսկ ես դեռ չեմ հանդիպել ոչ մի կնոջ, որ իմ սրտով լինի...

— Դուք ստում եք, բարոն,— չարությամբ ծիծաղեց Կարաբանովը,— դուք բանաստեղծ եք, իսկ բանաստեղծներին չի կարելի հավատալ։— «Ես հիշում եմ հրաշալի ակնթարթը...»։ Դա մենք գիտենք մանկությունից։ Հետո ի՞նչ։

Կլյուգենաուն, որի դողդողացող ձայնի մեջ թախիծ կար, պատասխանեց հանդարտ ու հնազանդորեն.

— Ինձ համար արդեն ուշ է բանաստեղծ լինել։ Եվ եթե նույնիսկ ես բանաստեղծ եմ, ապա բոլորովին էլ ոչ այնպիսին, որ ոտանավոր է թխում և իսկույն վազում հրատարակչի մոտ՝ հոնորարի։ Բայց եթե ես կարողանում եմ վրաս թռչող գնդակների սուլոցի տակ հմայված կանգնել՝ լսելով սոխակի երգը, ապա՝ այո, հավատացեք ինձ, ես բանաստեղծ եմ, և մեծ բանաստեղծ...

Լռեցին։ Գետակի աղմուկը չէր խախտում անդորրը, ընդհակառակը, ասես թանձրացնում էր այն։

— Իսկ աղջիկների մոտ, բարոն, դուք գնացե՞լ եք,— մռայլ ու կոպիտ հարցրեց Կարաբանովը։

Կլյուգենաուն լռությամբ մատները բռունցք արեց և պորուչիկին ցույց տվեց տոհմական գերբով փոքրիկ դրոշմ մատանին։

— Ամեն ինչ ավերված է ու վաճառված,— ասաց նա առանց ափսոսանքի, նույնիսկ ինչ-որ բավականությամբ։— Եվ սա միակ բանն է, որ մնացել է ինձ ժառանգությունից։ Հավատացեք, ազգականներիս մոտ նույնիսկ 1000 ռուբլի չգտնվեց ինձ գերությունից փրկագնելու համար, և հանգանակությամբ փող հավաքեցին գնդում։ Բայց այստեղ դուք կարող եք կարդալ իմ կյանքի նշանաբանը՝ մաքրություն և հավատարմություն։

— Նշանակում է աղջիկների մոտ էլ չե՞ք գնացել,— անուրախ ծիծաղեց պորուչիկը։

— Երբեք...

Կարաբանովը մտածմունքի մեջ ընկավ։

— Իսկ ես գնացել եմ։ Այո՛-ս, և հավատացեք, թանկագին բարոն, որ դա բոլորովին չի խանգարել ինձ սիրել մի հրաշալի կնոջ։ Նա ամուսնացավ և, ասում են, երջանիկ է։ Թեև ես մինչև հիմա չեմ հասկանում, թե ինչպես նա, նա կարող է երջանիկ լինել ոչ թե ինձ, այլ մեկ ուրիշի հետ։ Ասենք դա շատ վաղուց է եղել և... Հերիք է այդ մասին։

Պորուչիկը վեր կացավ։ Նա մի անգամ ևս շոշափեց դաստապանը և հայհոյեց խարդախ հույնին։ Անփութորեն թափ տվեց փոշին կազակային նոր տաբատի վրայից։

— Գնանք սեղանի մոտ, բարոն. ի դեպ, ներկայացրեք ինձ պարոն սպաներին, քանի որ ես այստեղ բոլորովին նոր մարդ եմ։

3

Ճանապարհային պանդոկի նեղլիկ սենյակում, սոխի հոտով ներծծված ու մաշված փալասների վրա ծալապատիկ նստած էին երկու սպա։

Կլյուգենաուն Կարաբանովին սկզբից մոտեցրեց մի վիթխարի կովկասցու, որի ուսերին խոպերյան գնդի փոխգնդապետի ուսադիրներ էին։ Սպայի բարակ իրանը պինդ գրկած գորշավուն չերքեզկայի վրա պսպղում էին մաքուր արծաթե փամփշտակալները, գոտկատեղից կախված էր սուրը՝ սև եղջյուրե պատյանով։ Բայց նրա հանդերձանքի ամենաթանկ բանը մտրակն էր, որի բռնակը ոսկեզօծված էր և զարդարված հատիկավոր ադամանդով։

— Փոխգնդապետ Իսմայիլ խան Նախիջևանսկի,— դիմեց

նրան Կլյուգենաուն, և որպես պատասխան խանը բարեկամաբար գլխով համաձայնության նշան արեց Կարաբանովին ու, բացելով սպիտակ ատամները, ժպտաց։

Երկրորդ սպան զինվորական բժշկի հագուստով էր. նեղ ուսադիրները ցցվել էին նրա ճմռթված զգեստի վրա, նա ամբողջովին թվում էր ուռած ու լխկած։ Միրանագույն դեմքը ելունածածկ էր ու մաղձոտ։

— Կապիտան Սիվիցկի,— խռպոտ ձայնով ներկայացավ նա և դաժանությամբ ավելացրեց,— զինվորական էսկուլապ,[1] ձեր նմաններին մորթազերծողը։ Կցանկանայի ինձ մոտ լինեք սեղանի շուրջ, բայց ոչ սեղանի վրա... Նստեցեք, պորուչիկ, և ներեցեք վատ բառախաղի համար։ Երբեք աչքի չեմ ընկել սրամտությամբ։

Կարաբանովը նստեց։ Բակում բառաչեց վախեցած գառնուկը։ Իսմայիլ խանը վեր թռավ տեղից, վազեց փոշոտ գորգերի վրայով՝ կատվի նման անձայն, փափուկ քայլերով։

— Քսան մտրակ պանդոկապետին,— գոռաց նա Կարաբանովին անհասկանալի կատաղությամբ,— ես կարծում էի, գառն արդեն խորովված է, իսկ նա դեռ նոր է մորթում։

— Ես, պարոնայք, մի բաժակ օղի կխմեի,— ցանկություն հայտնեց մտածկոտ Սիվիցկին, ինչպես երևում էր ինչ-որ բանից դժգոհ, և նայեց ժամացույցին,— ինն է արդեն...— բժիշկը չխկացրեց «մոզերի» կափարիչը։— Երիտասարդ հասակից երբեք կնոջ չեմ սպասել, և հիմա էլ, ծերության տարիներին, բախտս չի բերում։

— Մի՛ բորբոքվեք, ձերդ պայծառափայլություն,— ծիծաղեց Կլյուգենաուն՝ դիմելով խանին,— հիմա այստեղ հոյակապ գինի կլինի։

— Իսկ ես գյավուր չեմ, որ գայթակղվեմ գինով,— ատելությամբ պատասխանեց խանը,— ես խմում եմ միայն «անգելիկա»։

Բազմոցի վրա կողքից կողք շրջվելով՝ գեր ու անշնորհը Սիվիցկին համարձակորեն առարկեց փոխգնդապետին.

— Պայծառափայլ խան, դուք օղին լոկ խառնում եք անգելիկայի հետ, բայց, միևնույն է, օղի եք խմում։

[1] Էսկուլապ — փոխաբերական իմաստով՝ բժիշկ, հեքիմ։

Դուռը բացվեց, և երիտասարդ հայուհին՝ խոնավ, թախծոտ աչքերով, լարումից կլոր փորը ցցած, ձեռքերի վրա ներս բերեց գինու տակառիկը։

— Ահա և մեր գեղեցկուհին,— ասաց բժիշկը, անդրավարտիքի վրայից թափ տալով ծխախոտի մոխիրը,— անունդ ի՞նչ է։

Գլխաշորով ամոթխածությամբ փակելով իր վառ շուրթերը՝ հայուհին մեղմ պատասխանեց.

— Մարիամ։

Կլյուգենաուն մոտեցավ աղջկան, բարի ժպիտով մի կողմ տարավ գլխաշորը։

— Մի՛ վախենա, Մաշենկա,— ռուսերեն վերանվանեց նրան,— ես քեզ չեմ նեղացնի... Իսկ դու իսկապես լավիկն ես։ Եվ դու դեռ շատ երջանիկ կլինես, հավատա ինձ։

— Կոծոխոտ և սխտոր քերիր, որքան կարելի է շատ,— պատվիրեց Իսմայիլ խանը, հայերեն ինչ-որ բան ավելացնելով, և ոտքի ծայրով տակառիկը հրեց հեռավոր մի անկյուն։

Աղջիկը թեթև դուրս սահեց դռնից, իսկ Կլյուգենաուն ասաց.

— Պարոնայք, դուք երևի հիշո՞ւմ եք Պոլոնսկուն։

— Ինչպե՞ս չհիշել,— հոհոաց Իսմայիլ խանը՝ նորից նստելով կարպետի վրա,— նա Նիժեգորոդյան գնդի բնակարանային կարգադրիչն էր, երբ մենք խաղաղեցնում էինք ապստամբությունը Լեհաստանում... Գոնե մի օր ես նրան լուրջ չտեսա։

— Դե ո՛չ, փոխգնդապետ,— կնճռոտվեց Սիվիցկին՝ աչքով անելով Կարաբանովին,— դա նա չէ։ Ավելի լավ է դուք լսեք...

Կլյուգենաուն ոգևորված արտասանեց.

Սրտեր ու հայացքներ շոյելով անցար, Մարիամ, դու,
Ամոթխած ընկերուհիների ընտրությամբ պարելու,
Ինչպես տոնից հետո, երբեմն գինու մեջ մի բաժակ,
Իր ուրախությունն է գտնում զվարճասերը համարձակ։[1]

[1] Բանաստեղծությունները մեծ մասամբ բերվում են բառացի թարգմանությամբ։

Եվ Կարաբանովը անսպասելիորեն մաքուր, ուժեղ ձայնով շարունակեց բանաստեղծությունն ու հասցրեց մինչև վերջ.

Եվ այնպես ուրախ էի ես ուշադիր հայացքից
Իմ Մարիամի՝ այդ ջահել պարուհու...

— Դուք երևի ա՞յդ էիք ուզում ասել, բարոն,— հարցրեց նա և ծիծաղեց ակներև գոհունակությամբ։

— Այո, պորուչիկ, հենց դա։ Եվ դա սքանչելի է։

— Պարոնա՞յք, պարոնա՞յք,— բացականչեց բժիշկը՝ նայելով դեպի պանդոկի պատշգամբը։— Կազակները պահախմբի հսկողությամբ այստեղ են բերում ինչ-որ մեկին...

— Երեկ Օրգովյան պահակակետում բռնվել է մի մաքսանենգ,— ասաց Կլյուգենաուն վեր կենալով։— Կարծեմ դա հենց նա է...

Մաքսանենգը քայլում էր փողոցի մեջտեղով։ Նրա բորիկ կրունկները գրեթե փոշի չէին հանում։ Վերջերս նա Բագրևանդ էր քշել տարել ոչխարների մի հոտ և Թավրիզ էր անցկացրել ռուսական մի աստիճանավորի աղջկա, որը վաճառված է եղել հարեմների համար, իսկ հետդարձի ճանապարհին բռնվել էր՝ հետը անգլիական վերմակների կապոցներ և խորասանյան գորգեր։

Բարձրացնելով սուր ուսերը, ինչպես արծիվն է թռիչքից առաջ թևերը բացում՝ «դիշերային հյուրը» քայլում էր կազակների պահակախմբի հսկողությամբ, զարմանալիորեն ուղիղ ու թեթև, գրեթե չծալելով ծնկները, պատառոտված բեշմեթը պտտվում էր երկար ու նիհար մարմնի շուրջը։

— Պարոնա՞յք, դիմավորենք նրան ինչպես կրթված մարդիկ,— առաջարկեց Իսմայիլ խանը՝ վերցնելով մտրակը։

Մաքսանենգին բերեցին բակ։ Պահակախմբի կազակները հոգնած հենվեցին կարաբինների վրա։ Պանդոկի տերը նրանց համար մի սափոր գինի բերեց։ Պանդոկապանին կոչում էին դը Մոնֆոր, նա ֆրանսիացի էր և ազնվական։ Կլյուգենաուն հասցրեց նրա մասին փսփսալ, որ նա տեսել է Կայեննան[1], և նրա ուսի վրա դրոշմած է տաժանակրի խարանը։

[1] Կայեննա — ֆրանսիական տաժանավայր։

— Սատանան գիտի ինչ է,— հազիվ հավատաց Կարաբանովը. Կովկասը ապշեցնում էր նրան իր հակադրություններով. հովիտներում ծաղկում էին խնձորենիները, իսկ լեռներում ոռնում էր բուքը, մուժիկ-կազակներին ծառայում էր ֆրանսիացի ազնվականը, իսկ տիրակալ խանը բարեհաճում էր զրուցել կեղտոտ ավազակի հետ։

— Գարշահոտ շնագայլ,— մեղմորեն հարցրեց խանը,— երբ մայրդ քեզ լույս աշխարհ գցեց, չմտահոգվե՞ց քեզ որևէ մականուն տալ։

Մոր անունը տալու ժամանակ մաքսանենգը ծառս եղավ, բայց կազակները հայհոյանքով հետ քաշեցին նրան.

— Կանգնի՛ր, սևուկ... կանգնի՛ր, թշնամու որդի...

— Դե՞,— ասաց Իսմայիլ խանը։

Ցցելով ամուր սպիտակ ատամները, մաքսանենգը՝ ի պատասխան, ֆշշաց մոլեգնությամբ.

— Հաջի Ջամալ... Բամատ-օղլի բեկի որդին։

Հետևում կապված նրա ձեռքերի մատները տենդորեն դողում էին, և կազակները, երկար չմտածելով, հարվածեցին նրա վզակոթին մի-մի անգամ։ Հետո պպզելով հյուսացանկապատի մոտ՝ ամեն մեկն իսկույն մի բոքոն հանեց ու սկսեց կծոտել սարսափելի ագահությամբ։

— Ախ դու, ոջլոտ դմակ,— գոռաց Իսմայիլ խանը։— Ես քեզ կտոր-կտոր կանեմ ծխախոտի տերևի պես։

Անսպասելիորեն մի քայլ հետ թռչելով՝ մաքսանենգը հանկարծ ռնգային բարձր ձայնով ինչ-որ բան գոռաց։

— Ի՞նչ է ասում նա,— հարցրեց Կարաբանովը։

— Ջամալ բեկը հիմա ասաց,— բացատրեց Կլյուգենաուն,— որ նա Իգդիրի պարետ գնդապետ Խվոշչինսկու բարեկամն է և բրոնզե մեդալ ունի մեր թագավորին հավատարիմ ծառայելու համար։

— Դուք ասացիք Խվոշչինսկի՞,— աշխույժ հարցրեց Կարաբանովը։

— Այո, Խվոշչինսկի... իսկ ի՞նչ է որ։

Պորուչիկը թեթև ցնցեց ուսերը.

— Ոչինչ, հենց այնպես...

Իսմայիլ խանի պատյանից երգաձայն զնգոցով դուրս

թռավ չեչենական կորաձև սուրը, շողշողալով սառն կապտությամբ։

Փոխգնդապետը, թափահարելով սուրը, բացականչեց.

— Ստում ես, շուն։ Դու ծախվել ես Ղազի Մահմային, որը գողացել է իմ նժույգը... Ստացի՛ր։

Սակայն բժիշկ Սիվիցկին թիկունքի կողմից արագ բռնեց խանի ձեռքը, և սուրը, շեղությամբ շաչելով, կտրեց մաքսանենգի միայն ականջը։

Տաք և ցայտուն շիթով հորդաց արյունը։

— Ո՞վ համարձակվեց կանգնեցնել ինձ։

Կատաղությունից մթագնած խան Նախիջևանսկու հայացքը կանգ առավ բժշկի վրա։ Սիվիցկին հանգիստ ընդունեց այդ հայացքը և նույն հանգստությամբ վառեց ծխախոտը։

— Դա զուտ ճշմարտություն է, ձերդ պայծառափայլություն,— ասաց բժիշկը,— ես ճանաչեցի այս մարդուն. նա չի խաբում և, իսկապես, մեզ պետք է կայազորում... Մանավանդ, սիրելի խան, հիմա այնքան տագնապալի ժամանակ է։ Բաց թողեք նրան...

Մաքսանենգի աչքերում դանդաղ հանգչում էր կատաղության կրակը։ Գունատ դեմքի վրա սկսեց փայլել ժպիտը։ Կտրված ականջն ընկած էր նրա ոտքերի մոտ, գորշ փոշու մեջ։

Հաջի Ջամալ բեկը խառը միջոցին չհասցրեց նկատել, թե ով բռնեց սուրը խանի թիկունքում և այն վերադրեց Կարաբանովին։

— Շնորհակալություն քեզ,— խռպոտ ձայնով ասաց նա պորուչիկին,— ես քեզ նույնպես կօգնեմ։ Դու իմ հորեղբորից ավելի լավն ես...

Խանի սրի հարվածն այնքան շեշտակի էր, որ նրա շեղբի վրա անգամ արյան հետքեր չէին մնացել։ Փոխգնդապետը սուրը նորից խոթեց կորաձև պատյանի մեջ և, թուրքերեն հայհոյելով, քայլեց դեպի խրճիթի շեմը։

— Երբ խժռեք վերջացնեք,— կարգադրեց նա կազակներին,— նրա վրայից կհանեք վարտիքը և երկու հարյուր մտրակ կհասցնեք։ Իսկ հետո թող սողա ուր ուզում է...

Սպաներն անցան սեղանի մոտ, նստեցին ընթրիքի։ Իսմայիլ խանին աղը մատուցեցին առանձին՝ լուծված սխտորով ջրի մեջ։ Ջննելով իր առջև դրված գավաթը՝ փոխգնդապետը նկատեց, որ գավաթն այնքան գեղեցիկ էր արծաթազօծված, որ կարող էր գինու նկատմամբ բուռն սեր հարուցել նույնիսկ մուսուլմանի մեջ։

— Մի՞թե այդ Հաջի Ջամալ բեկը իսկապես մեր քրտեան է,— հարցրեց Կարաբանովը՝ անվստահ նայելով բժշկի կողմը։

— Այո՛, մերը։

— Եվ դրա հետ միասին մաքսանե՞նգ։

— Հավանաբար այդպես է, որ բռնվել է դրա մեջ,— հաստատեց Կլյուգենաուն։

— Անհասկանալի է...

Սիվիցկին հեգնորեն քմծիծաղեց.

— Դուք, պորուչիկ, նոր մարդ եք այս կողմերում, և սկզբում ձեզ համար շատ բան անհասկանալի կլինի։

— Օ՜, սատանա,— հայհոյեց Իսմայիլ խանը՝ լիզելով ճարպոտ մատները։— Էլի մոռացել եմ, այսօր ամսի քանի՞սն է։ Առավոտվանից հիշում էի, իսկ հիմա դարձյալ մոռացա։ Բոլորովին չեմ կարողանում հիշել թվերը։

— Իսկ դուք, փոխգնդապետ, պետք է որ հիշեք,— ոչ առանց թույնի նկատեց բժիշկը։

— Ինչիս է պետք,— անկեղծորեն զարմացավ Իսմայիլ խանը։— Չէ՞ որ ես գեներալ չեմ։ Իսկ ահա իմ ավագ եղբորը՝ գեներալ Քալբուլայ խանին ամսաթիվը հուշում են համհարզները...

— Այսօր ապրիլի 5-ն է, ձերդ պայծառափայլություն,— օգնության հասավ Կլյուգենաուն՝ ժպիտը թաքցնելով թմբլիկ շրթունքներում,— 1877 թվականի ապրիլի 5-ը։

— Դե լավ։ Շնորհակալություն։ Նշանակում է խոպերցիները նորից գնում են հետախուզության։ Ասում են, որ վերջերս Ղազի Մահման նորից բնաջնջել է մեր երկու գյուղերը։

— Ղազի Մահման նախկին իմամի որդի՞ն է, կարծեմ,— հարցրեց Կարաբանովը։— Լավ ժառանգություն է թողել մեզ Շամիլը։

— Իսկ Արարատյան դաշտավայրում,— մռայլորեն ավելացրեց բժիշկը,— Ֆուիկ փաշան քրդերից մարտական ռազ-

մախմբեր է կազմում։ Քուրդ գեղեցկուհիներն իրենց ամուսիններից վատ չեն կրակում։ Դա նրանց արյան մեջ է։

— Երևում է, որ պատերազմը Թուրքիայի հետ արդեն որոշված է։

Կարաբանովը մոթմոթաց.

— Չլինի էլ, Պետերբուրգում կսարքեն։

— Պետերբուրգն այստեղ գործ չունի,— արձագանքեց բարոնը,— սլավոնական կոտորածը պետք է դադարեցվի, դա բոլոր սլավոնների գործն է, և առաջին հերթին ռուս մարդու՝ լինի սենատոր թե պոշեխոնցի մուժիկ։

— Իսկ դուք,— ծիծաղեց Կարաբանովը,— բանից պարզվում է, սլավոնաֆիլ եք։

— Մտքովս էլ չի անցնում,— հանկարծ գայրացավ Կլյուգենաուն,— զիպուն[1] հագնել և միրուք խնամել՝ իմ բանը չէ։ Ես հիանալի եմ զգում ինձ և այս զգեստով...

Որոշ ժամանակ բոլորը լռեցին, ուտում, խմում էին։

— Ձեր թույլտվությամբ, խան,— ասաց բժիշկը՝ զգվանքով շուռումուռ տալով մսի կտորները,— սրանից հետո ես կգնամ ձեր թիկնապահների հետ։ Տիկին Խվոշչինսկայան, ցավոք սրտի, ճանապարհի կարճության համար արագ անցել է էշմիածնի վանքի մոտով, և ինձ համար արդեն իմաստ չունի սպասել նրան այստեղ, այս պանդոկում։

Իսմայիլ խանը հանկարծ աշխուժացավ և սկսեց ճոռացնել էրզրումյան կարմիր ճոքակոշիկները։

— Ասում են, այդ կաղլիկ պարետի կինը դեռ շատ երիտասարդ է, այո՞,— հարցրեց նա։

— Ասում են, այո՛...

Կարաբանովը նստած էր ստվերում, և ոչ ոք չնկատեց, թե ինչպես նրա դեմքի վրա նախ երևաց մտորմունք, հետո թեթև սարսուռ անցավ նեղ բերանի անկյուններով, և դեմքը նորից քարացավ. պորուչիկը կարողանում էր տիրապետել իրեն։

— Մի ժամանակ ես գիտեի մի Խվոշչինսկայայի,— ոչ իսկույն, մտմտալով ասաց նա,— գուցե դա հենց նա՞ է... Դուք պատահմամբ չգիտե՞ք, պարոնայք, ինչպես է նրա անունը։

— Կարծես, Ագլայա Եգորովնա,— պատասխանեցին նրան։

— Ա՜-ա՜-ա՜,— հիասթափված ծոր տվեց պորուչիկը, սակայն նրա ձեռքերի մատները դողացին, և նա պինդ սեղմեց սրի երախակալը։— Չէ,— ավարտեց նա գրեթե անտարբեր,— նա չէ...

Ընթրելուց հետո, սպաները, սպասելով պահակախմբին, պատրաստվեցին հանգստանալու։ Շինելը գցելով ուսերին՝ Կարաբանովը դուրս եկավ պանդոկից։ Քամին լեռնային կածաններից արդեն բերում էր երեկոյան զովությունը։ Վառելափայտի կույտի տակ սնգսնգալով՝ ճանապարհով մի էշ էր անցնում։ Իսկ էշի վզից, ռուսական աչքի համար սովորական զանգուլակների փոխարեն, ճոճվում էր եռանկյունի մի կաշվե տոպրակ։

Կարաբանովը հառաչեց։ Կողքից անցավ մի կազակ, որը տանում էր քրտինքից գարշահոտված թամբը և ձիու դատարկ տոպրակը։

— Սիրելիս,— դիմեց նրան պորուչիկը,— ասա տեսնեմ, այս ճանապարհը հենց վանքի մոտով էլ ինձ կտանի՞ Իգդիր։

— Կտանի, ինչպես չի տանի,— հաճույքով պատասխանեց կազակը։— Երկու սար կլինեն սկզբից։ Մեկը՝ անվերջ վեր, հա վեր։ Մենք նրան Հարբած ենք կոչում։ Նրա վրա կարծես հարբում ես սարսափից։ Իսկ մյուսը՝ անընդհատ ներքև, հա ներքև։ Զարթխումային է, ուրեմն։ Վախից ոնց որ մաճառ խմած...

Կազակը օղու համար դրամ ստացավ և օգնեց սպային նախապատրաստել երիվարը։ Լորդ մականունով ընտիր նժույգը, որ Կարաբանովը շահել էր Նովոռոսիյսկում մի զվարճասեր կալվածատիրոջից, անհամբեր դոփում էր բարակ ոտքերով։

— Թուրը պատյանից հանեք, ձերդ բարեծնություն,— խորհուրդ տվեց կազակը,— ճանապարհը հիմիկվա ժամանակներում հեշտ չէ. թուրքը դարձյալ մեր դեմ է կատաղեցնում քրդին։

— Շնորհակալություն, եղբայր, մնաս բարով։

Բնակավայրերի վերջին կրակները առկայծելով մնացին

[1] Զիպուն — գեղջկական կապայածև վերնազգեստ հին Ռուսաստանում։

հետևում, և ահա նրա առջև ձգվեց գիշերային ճանապարհը։ Կարաբանովը ձեռքով թեթև խփեց ձիու ջլոտ վզին և ասաց.

— Հասցրո՛ւ... նա՛ է...

4

Դա այծ չէ, որ արշավում է,
դա ազնվականի որդին է,
նա սուճկ չի փնտրում, այլ բոյարի աղջկան։

Ժողովրդական երգ

— Արա՛գ... արա՛գ...

Մարդու հուզմունքը փոխանցվում էր ձիուն, և նա շեշտակի սլանում էր առաջ՝ լարելով ականջներն ու ձգելով երկար մարմինը։ Որոշ գյուղերում ձիու սմբակի տակից խրտնած հնդկահավեր էին դուրս թռչում։ Շները հասցնում էին միայն մեկ անգամ հաչել և արդեն մնում էին հեռվում՝ փոշուց և կատաղությունից մոլեգնած։ Գյուղերի լույսերը հանգչում էին հեռվում, և նորից տիրում էր երեկոյան մութը, նորից նժույգի զրնգուն ոստյունների տակից փախչում էր լեռնային ոլորուն ճանապարհը։

— Արա՛գ... Սխալ լինել չի կարող... Այդ նա՛ է...

Եվ նորից խթաններով սեղմում էր ձիու քրտնքից աղակալած կողերը, ձիու ուռած, ձգված շրթունքներից օճառի պղպջակների նման նորից դուրս էին թռչում և թփուտների վրա կախվում փրփուրի փաթիլները։

Կիրճ։ Կամուրջ։

Խախուտ գերանները գլորվում էին սմբակների տակ։ Այստեղ հարկավոր էր ավելի զգույշ։ Բավական է ձին սայթաքի, ամեն ինչ կորած է։ Հոգնած ձին գլուխը կախում էր կամուրջի բազրիքից ներքև. անդունդի սև խորության միջից նա լսում էր ջրի անուշ խշշոցը...

«Ո՛չ, իմ նժույգ, դեռ քո խմելու ժամանակը չէ։ Հետո ես քեզ իմ ձեռքով կխմացնեմ ամենամաքուր ջուրը, որը հոսում է լեռնակատարներից։ Ինքս քեզ համար բերնեբերան կլցնեմ ոսկեհատ կորեկը, և այն խնդությամբ կխշխշա, երբ դու նրա մեջ թաթախես քո գեղեցիկ, խելացի դունչը։ Դու իմ

ափի միջից կվերցնես մի կտոր տաք հաց՝ առատորեն աղը վրան ցանած, և ես կգրկեմ քո ուժեղ վիզը, ինչպես չեմ գրկել աշխարհում դեռ ոչ մի կնոջ։ Իսկ հիմա ես քեզանից մի բան եմ խնդրում՝ չընկնես... չսայթաքես... վազիր արագ... Չէ որ այդ նա է...»։

Միայն մի անգամ պորուչիկը կանգնեց, որպեսզի նայեր ժամացույցին։ Լուցկու կարճատև լույսի տակ նա հազիվ հասցրեց նկատել, որ արդեն երկար ժամանակ է արշավում։ Բայց դեռ չի հասել կառքին։

Անդրեյը սարսափեց և շարունակեց առաջ վարել նժույգը...

Շուտով բախտը բերեց. կտրուկ ոլորապտույտներից մեկի վրա պորուչիկը նկատեց, որ ինչ-որ բան սպիտակին էր տալիս լուսնի լույսի տակ, ճանապարհի մեջտեղը։ Թռչելով թամբից՝ կռացավ։ Շուրջը փռված էին թարմ տաշեղներ։ Եվ հենց այստեղ էլ թափված էին կազակների՝ մինչև վերջ խնամքով ծծած գլանակները, իսկ ոչ հեռու կանգնած էր մի կիսակրտրած ծառ, և պորուչիկը հասկացավ՝ կոտրվել է անիվը, նրանք այստեղ վերանորոգել են։

Այժմ, վերանորոգման պատճառով հետ ընկնելով, պահակախումբը կառքի հետ միասին կարծես ինքն էր ակամայից մոտենում նրան։

— Աստված իմ,— խաչակնքեց Կարաբանովը՝ տարածուն շարժումով ու այնպիսի հավատով, որպիսին վաղուց չէր զգացել իր մեջ,— միայն թե հասնեմ, միայն թե տեսնեմ... Չէ՞ որ նա խելացի է, նա ինձ կհասկանա...

Մի քանի վերստ անց, երբ պորուչիկին թվում էր, թե մոտ է նպատակին, նժույգը մի երեք անգամ բխկաց և ճանապարհից թափով նետվեց ճամփեզր, ջղաձգորեն ծալեց ծնկները, կրծքով փլվեց գետնին։

Կարաբանովը թռավ թամբից։ Խուլ հեծկլտաց, ինչպես լաց էր եղել մի ժամանակ, մանուկ հասակում։

— Այս ի՞նչ արիր,— հետո ասաց նա հանդիմանությամբ և, թողնելով լացը, ջանաց բարձրացնել ձիու գլուխը, շոյեց նրա տաք, լպրծուն պարանոցը։— Դե վե՛ր կաց, վե՛ր կաց,— խնդրում էր նա ձիուն։

Լորդը ցնցվում էր թաց մաշկով և, երկարացնելով բարակ վիզը, փռվել էր խոնավ գետնին ու խռխռացնում էր։

Այն ժամանակ պորուչիկը, թամբից պոկելով հրացանը, ուժգին բարձրացրեց վեր և, կրակոց կրակոցի հետևից, դղրդացրեց լռակյաց լեռները։ Ասես դժկամորեն թափառելով հեռուներում՝ երկար ժամանակ չէր հանգչում արձագանքը։ Հետո տիրեց լռություն։ Լռություն ու սարսափ։ Եվ հանկարծ ինչ-որ հեռվից, ասես հենց հողագնդի խորքից, որպես պատասխան, լսվեց երկու հստակ կրակոց։ Շուտով Կարաբանովը լսեց սմբակների ուժեղ դղրդյուն, և երկու կազակներ, տեգերը դեպի առաջ թեքած, քիչ էր մնում, ցած գլորեին նրան։

— Բարեծնունդյո՞ւնն է, կարծես,— ասաց նրանցից մեկը՝ թամբից ցած կախվելով և ուղղելով տեգը։

— Իսկ մենք կարծում էինք, թե ինչ-որ մեկին օգնություն է պետք եկել քրդից կամ չերքեզից պաշտպանվելու համար։ Ձիուկին հո բոլորովին ուժասպա՞ռ եք արել։

Նրանց բարեհոգի, փոչոտ ստվերներն արդեն պտտվում էին ձիու շուրջը. հաճախ լսվում էր «Սիրտը կարծես չի մարել...— Իսկ դու մատդ խոթիր «խոռոչի» մեջ... Կդիմանա, ձեռք մի՛ տուր նրան, Դենիսկա, հասկացող արարած է...»։

Կարաբանովը մատից հանեց մատանին, որի վրայի թանկագին քարը պսպղաց մթության մեջ, և պարզեց երիտասարդ կազակին.

— Փրկի՛ր, եղբայր, տուր քո ձին, դու մնա իմի հետ։ Ոտքի կանգնեցնես, ինչ կուզես խնդրիր ինձանից... Իսկ ես պետք է շտապեմ։ Դուք հեռո՞ւ եք այստեղից։

— Ո՛չ, լեռնանցքի հետևում ենք կանգնած,— կազակը շուռումուռ տվեց մատանին, հագցրեց մատին, սեպերը բացեց։— Աղայական բան է, իմ կեռ մատին չի նստում էդ զիբիլը։ Դե լավ, հրացան ունեմ, ծխախոտ կա, քո խաղալիքն էլ կուղարկեմ ստանիցա՝ աղջկանս... Գնա, Քրիստոսը քեզ հետ...

Թեթև վարգով գնացին-հասան պահակախմբին։ Չորս հեծյալներ պահպանում էին կառքը, որի տանիքին դրված էին ուղեսնդուկներ և զամբյուղներ։ Կազակներն անծանոթ սպային դիմավորեցին լռությամբ, առանց որևէ հետաքրքրության։ Կարաբանովը դժվարությամբ իջավ թամբից, մոտեցավ կառքին և այստեղ բոլորովին ուժասպառ եղավ. թուլացած նստեց գետնին, ատամների արանքից տնքոցով շշնջաց.

— Օ՜, չեմ կարող... այնպես թափ է տվել ինձ, եղբայրներ։

Կառքի դռնակը լայնորեն բացվեց գլխավերևում, և նա լսեց.

— Ի՞նչ է պատահել, կազակներ։ Ո՞վ է այստեղ։

Այդ պահին Կարաբանովը դեմքը վեր բարձրացրեց և կամաց պատասխանեց.

— Ագլայա, մի՛ վախեցիր... Ես եմ...

Մոտեցան կազակները և, կոպտորեն բռնելով պորուչիկի ոտքերից ու ձեռքերից, խցկեցին կառքը՝ ուղիղ Ագլայայի ջերմության և օծանելիքների ծանոթ բուրմունքի մեջ։

Ուղիղ նրա մոտ։

Եվ կատաղի ձիարշավից մինչև ոսկրածուծը ջարդված, իր երջանկությունը գիտակցելուն արդեն անուժ Կարաբանովը փլվեց բարձերին՝ կրկնելով.

— Այդ ես եմ... Մի՛ բարկանա. նորից ես եմ...

5

— Ինչո՞ւ այդ բանն արեցիք,— հանկարծ խիստ տոնով հարցրեց կինը։— Ես չեմ թաքցնում, որ ուրախ եմ ձեզ տեսնելու, բայց... երկու տարին իմ կարծիքով քիչ չէ, և ժամանակն է, Անդրեյ, որ դուք ինձ մոռանաք և այլևս հիմարություններ չանեք։

Վիրավորանքից զայրացած Կարաբանովը դառնորեն պատասխանեց.

— Որպեսզի միայն տեսնեի ձեզ, ուժասպառ արեցի նժույգս, որը գին չունի։ Դուք ինչպե՞ս կարող եք... Եվ եթե ձեզ համար քիչ է իմ մի խենթությունը, ես կարող եմ կատարել երկրորդը՝ դուրս գալ կառքից և մինչև Իգդիր ոտքով գնալ։

Խվոշչինսկայան տխուր ժպտաց։

— Ճանաչում եմ ձեզ,— պատասխանեց նա,— ճանաչում եմ, ավա՜ղ, առաջվա Անդրեյին... Սակայն երկրորդ խենթությունը թող իրավամբ պատկանի ինձ. ես ձեզ դուրս չեմ թողնի կառքից...

Կարաբանովը նայեց նրա դեմքին, որը և ծիծաղում էր, և տխրում իր հետ միասին՝ գրեթե միաժամանակ։ Եվ ասես զարմանքից վեր ձգված նույն հոնքը, նույն խոշոր խալը ձախ

այտին, և ոսկեգույն մազերի նույն խոպոպը, որ նա կարող է համբուրել, եթե... ցանկանա։

— Դե՛, բավական է...

Խվոշչինսկայան ձեռնոցով խփեց նրա սուր ծնկանն ու կրկնեց.

— Դե, բավական է... Խենթ։ Ա՜խ, ինչ անուղղելին եք դուք։ Եվ անսպասելի՝ իմ ճակատագրի մեջ, ինչպես միշտ։ Ինչ ճիշտ է, ճիշտ...

Կառքը ցնցվում էր, և անկյունում կախված նավթի լապտերը ճոճվում էր այս ու այն կողմ։

— Ի՞նչն է ձեզ բերել այստեղ, հայրենիքի այս ծայրամասը,— հարցրեց Անդրեյը՝ աստիճանաբար հանգստանալով։

— Հիմա գնում եմ ամուսնուս մոտ։

— Նա՞ է ձեզ խնդրել։

— Օ՜, ո՜չ։ Գնում եմ իմ բարի ցանկությամբ։ Կարմիր խաչի միջոցով։ Խարկովը ես մեկընդմիշտ թողել եմ։ Ինձ համար այնտեղ տխուր էր... Եվ ահա գնում եմ ամուսնուս մոտ։

— Դուք այդքան սիրո՞ւմ եք նրան,— կասկածով ու մռայլ հարցրեց նա։

— Մեղք է ասել, բայց հավանաբար...

— Ո՜չ,— նրա փոխարեն շարունակեց Կարաբանովը և ուրախ փայլեց՝ պսպղացնելով ատամները։

— Իսկ դուք մի ծիծաղեք, Անդրեյ,— նկատեց նա քնքուշ հանդիմանությամբ։— Չէ՞ որ ես նրա կինն եմ...

— Իսկ ես ձեզ գրել եմ։ Ինձ համար շատ դառն էր դիմանալ, Ագլայա, որ դուք պատկանում եք ուրիշին... Ինչո՞ւ դուք նույնիսկ չէիք պատասխանում ինձ։

— Ամուսինս խորհուրդ տվեց չանել այդ բանը։

— Եվ դուք... լսեցի՞ք։

— Այո՜։ Նա արժանի է, որ լսեմ նրա խորհուրդները...

Կարաբանովը մի կողմ քաշեց լուսամուտի վարագույրը։ Լուսանում էր։ Պղտոր ապակու հետևում փախչում էին անտառապատ բլուրները, հեռվում արթնանում էին լեռները։ Ծածկակառքի կողքից, նիզակները թամբերի մոտ պահելով, արշավում էին անխոնջ կազակները՝ նայելով կապտավուն մշուշի մեջ։

— Ես հասկանում եմ,— ասաց պորուչիկը մտածելով։— Սակայն... Չէ՞ որ միայն ես չեմ մեղավոր մեր բաժանման համար։

Ագլայան քմծիծաղ տվեց.

— Ես շատ եմ փոխվել այս երկու տարվա ընթացքում։ Զմտածեք, Անդրեյ, որ մնացել եմ առաջվանը։ Հիմա արդեն ես ձեզ թույլ չէի տա այնպես խաբել ինձ՝ օգտվելով իմ միամտությունից ու անփորձությունից։

— Պետք չէ այդ մասին,— խնդրեց Կարաբանովը։— Ես ձեզ սիրում էի։ Ես, իրոք, սիրում էի ձեզ...

— Ես ձեզ նույնպես սիրում էի, Անդրեյ, բայց դուք այնպիսի մարդ եք, որին դժվար է վստահել։

— Իսկ նրան՝ ձեր ամուսնուն կարելի՞ է։

— Օ՜, այո՜։

— Նա երիտասարդ է, ինչպես ե՞ս,— խանդով հարցրեց Կարաբանովը։

— Բոլորովին ոչ։ Ի՞նչ եք ասում։

— Նա մեծ պաշտոնի՞ է կամ գուցե գեղեցի՞կ է։

Ձեռքերով թույլ ծածկելով դեմքը՝ Ագլայան ասաց.

— Պետք չէ... խնդրում եմ ձեզ...

— Այն դեպքում, հավանաբար, նա հարո՞ւստ է,— համառորեն հետամուտ էր լինում Կարաբանովը՝ տանջվելով ինքը և տանջելով կնոջը։

— Աղաչում եմ՝ հարկավոր չէ։ Դա ձեր ինչին է պետք։

— Լավ։ Չեմ հարցնի...

Լռեցին։

— Ո՞ւմ համազգեստն է ձեր հագին,— հարցրեց Ագլայան՝ կտրուկ փոխելով խոսքը։

— Դուք գիտեք, որ ես ուրիշի հագուստ չեմ կրում,— խիստ պատասխանեց պորուչիկը։— Դա իմ համազգեստն է։

— Ահա թե ինչ։ Բայց ես ձեզ երբեք չեմ տեսել այսպիսին,— անկեղծորեն զարմացավ Խվոշչինսկայան։— Իսկ ո՞վ եք դուք այժմ։

Կարաբանովը կծեց շրթունքը, շրջվեց.

— Շատ ավելի ցածր, քան եղել եմ։ Եվ համարձակվում եմ մտածել, որ դրանից շատ ավելի լավն եմ դարձել... Պատիվ ունեմ ներկայանալու,— և նա կոտրատվելով նստեց

նրա կողքին։— Ումանյան գնդի երկրորդ հարյուրյակի կազակային պորուչիկ։ Կարող եք արհամարհել ինձ. ո՛չ Գեորգիևյան ժապավեններով հյուսված արծաթե շեփորներ, ո՛չ փառքի դրոշներ, ոչի՛նչ չկա։ Ամեն ինչ առջևում է։

— Պատկերացնում եմ, թե դա որքան հետաքրքիր է,— ժպտաց Ագլայան և, ուղղելով վերարկուի ծալքերը՝ թեթևակի հետ քաշվեց։

— Այդ էր պակաս հետաքրքիր չլիներ,— հեգնանքով ասաց պորուչիկը,— «նա նժույգը մաքրել է քերոցով» և կերել ճարպամոմեր՝ պիեմոնտյան[1] տրյուֆելներով։ Դա ձեզ բավարարո՞ւմ է։

— Իսկ ես սովոր եմ ձեզ տեսնել այլ կերպ...

— Ինչպիսի՞ն,— աշխուժությամբ հարցրեց Կարաբանովը։

— Դե, ինչպիսին... նորին մեծության արքայահամհարզ, լեյբգվարդիայի փայլուն կավալերգարդ... Ինչպիսի՜ կարիերա, ինչպիսի՜ շուք... օ՜, օ՜, օ՜։

Պորուչիկի դեմքը թեթևակի մռայլվեց.

— Այդ ամենն ինձ համար վերջացել է, Ագլայա, և, փառք աստծո, որ վերջացել է։ Մի անգամ, միայն ոչ հիմա, ամեն ինչ կպատմեմ...

Ինչ-որ բան տկտկացրեց կառքի վերնամասը։ «Կարծես անձրև է»,— մտածեց Անդրեյը և կնոջ ձեռքն զգուշությամբ վերցրեց իր ափի մեջ։

— Դուք... ուրա՞խ եք,— հարցրեց նա։

— Այո,— ոչ անմիջապես պատասխանեց Ագլայան շշունջով։

— Իսկ դուք հիշո՞ւմ եք։

— Ի՞նչը։

— Այն օրը, երբ ես առաջին անգամ համբուրեցի այս ձեռքը։

— Այն ժամանակ էլ անձրև էր գալիս,— տխրությամբ հիշեց Ագլայան,— դուք շտապ եկել էիք ձիամարզարանից, չհասցնելով փոխել համազգեստը, և ձեզանից, ինչպես և հիմա, ձիու հոտ էր գալիս... Ամեն ինչ այնպես էր, ինչպես հիմա, միայն անձրև չկա։

[1] Պիեմոնտ — մարզ Հյուսիս-Արևմտյան Իտալիայում։

— Ճիշտ չէ, կա՛,— բացականչեց Կարաբանովը և հետ քաշեց լուսամուտի վարագույրի ծայրը. ճաքած ապակուն հաճախակի խփում էին անձրևի մանր կաթիլները։— Ամեն ինչ, ինչպես հիմա... Իսկ դուք հիշո՞ւմ եք,— Անդրեյը կռում էր երկաթը, քանի դեռ տաք էր,— դուք հիշո՞ւմ եք, որ ամեն ինչի մասին առաջինը ոչ թե ես ասացի ձեզ, այլ դուք ինքներդ։

— Ես պարզապես չափազանց հիմար եմ եղել։ Դուք ինձ կախարդել էիք... Եվ պետք չէ այդ մասին,— խնդրեց Խվոշչինսկայան՝ շրխկացնելով ձեռնոցի կոճգամը։— Հարկավոր չէ, սիրելիս։ Չէ՞ որ մենք վաղուց արդեն երեխաներ չենք։

— Այո՛։ Հավանաբար արդեն երեխաներ չենք, եթե մինչև հիմա շարունակում ենք իրար սիրել...

Անդրեյը գովեց ինքն իրեն, որ այդպես լավ գիտի Ագլայային։ Նրան հաջողվեց նպատակակետին խփել, և Ագլայան լուռ լաց եղավ։ Անդրեյը չխանգարեց նրան։ Թող մի քիչ լաց լինի։ Հետո բռնեց նրա ուսերից և դեմքը թեքեց դեպի իրեն։

— Այժմ նայիր ինձ, դե՛։

— Ի՞նչ ես ուզում, թո՛ղ...

— Ոչի՛նչ,— պատասխանեց նա և իր շրթունքներով գտավ նրա տաք, դողացող շրթունքները։

Ագլայան նայում էր նրան լայն բացած աչքերով, ասես զարմանալով ինչ-որ բանից, և այդ ժամանակ Անդրեյը քնքշանքով նրան հեռացրեց իրենից։

— Էլի նույնն ես,— ասաց նա։— Նույնիսկ համբուրվում ես ինչպես առաջ՝ չփակելով աչքերդ...

Ագլայայի դեմքը վախվորած էր, գրեթե խղճալի։

— Գիտես,— ասաց նա,— ես սարսափում եմ։

— Սարսափո՞ւմ ես, ինչո՞ւ։

— Մի՛ բարկանա, բայց ես երբեք չէի մտածում, որ դու նորից կհայտնվես իմ կյանքում։ Ի՞նչ դժբախտություններ ես էլի նախապատրաստել ինձ համար...

Մեկը համառորեն ծեծում էր ծածկակառքը։ Կարաբանովը բաց արեց դուռը։ Անմորուք, ծիծաղկոտ մի կազակ, թամբից ցած կախվելով, ձեռքով ցույց էր տալիս ինչ-որ տեղ.

— Ձերդ բարեծնություն, Արարատը երևաց։ Հիմա արդեն, մաքսատունը որ անցնենք, էնտեղ հենց կլինի Իգդիրը...

Կառքը կանգ առավ մի հրապարակից ոչ հեռու, որտեղ քայլում էին զինված մարտիկներ։ Էրիվանյան միլիցիայի մի դասակ սովորում էր սրամարտել։ Ինչ-որ տեղից խիստ կաղալով արդեն վազում էր նիհարակազմ տարեց մի սպա. նրա՝ գնդապետի ուսադիրները կարված էին շարքային զինվորի սպիտակ վերնաշապկի վրա։

Դա Ագլայայի ամուսինն էր, և Կարաբանովը մի կողմ քաշվեց։

Խվոշչինսկին մոտեցավ կնոջը, նրա դեմքը հանկարծ մի տեսակ ծռմռվեց, և նա դանդաղորեն ծնկի իջավ կնոջ առջև։ Թուրքական կեռ սուրը, կպնելով ճամփեզրի քարին, զնգաց։

— Լաց մի լինի,— ասաց Ագլայան՝ նայելով փոշեմած երկնքին։— Ահա և եկա, ինչպես խոստացել էի...

Եվ կինը ձեռքերը դրեց նրա ճերմակ գլխին։

6

— Պարոնայք։ Թուրքական սուլթան Մահմուդը թվով երեսուներորդ սուլթանն էր և հռչակվեց նրանով, որ սպանեց եղբորն ու քեռուն։ Աբդուլ-Մեջիդը կազմակերպեց քրիստոնյաների կոտորած և մահացավ սեռական ուժասպառությունից։ Երեսուներկուերորդ համարի տակ գալիս է Աբդուլ-Ազիզը՝ ի ծնե ապուշի մեկը։ Իսկ այնուհետև արդեն Մուրադ Հինգերորդն է, որը մանկուց սիրում էր շամպայն խմել և այդ պատճառով էլ համարվում էր լուսավորյալ մարդ։ Դրա հետ միասին նա պատանեկությունից չէր արհամարհում կանանց։ Ահա հարցրեք, պարոնայք, հարյուրապետ Վատնինին, նա ձեզ կասի, որ մեր բոլոր ծանր մեղքերը առաջանում են գինուց և աղջիկներից։ Հիմա թվով երեսունչորսերորդ սուլթանն է Աբդուլ-Համիդը, որը նույնպես սրիկա է և... Հուսով եմ, որ մեր մեջ գեղեցիկ կանայք չկան։

Խոսողը շրջվեց դեպի դուռը և նկատեց Կարաբանովին, որը վաղուց լսում էր նրան ու լռում։ Պորուչիկը հասցրեց ուշադիր դիտել պատմողի երիտասարդ դեմքը, խելացի, հանգիստ աչքերը և դաշտային համեստ համազգեստին կպցրած գլխավոր շտաբի ակադեմիայի կրծքանշանը։

— Բարի օր, պարոնայք,— շեմից ողջունեց Կարաբանովը և ներկայացավ անծանոթ սպաներին։

Պատմողը առաջինը ընդառաջ գնաց նրան և դեռ հեռվից մեկնեց ձեռքը։

— Շտաբս-կապիտան Յուրի Տիմոֆեևիչ Նեկրասով... Իսկ դո՞ւք, երևի երկրորդ հարյուրյա՞կ։

Սկսեցին մոտենալ նաև մյուս սպաները։

— Յունկեր Եվդոկիմով... Ուղղակի Ալեքսեյ։— Նա անմիջապես տպավորվեց Կարաբանովի հիշողության մեջ՝ բոլորովին երիտասարդ, գրեթե մանուկ, դեմքը նեղ, օրիորդական, իսկ հայացքը՝ դյուրահավատ ու չափազանց պարզ։

— Մայոր Նիկոլայ Սերգեևիչ Պոտրեսով... հրետանու գծով։ Ներեցեք, որ ձախ ձեռքս եմ տալիս, աջ ձեռքս երեկ հրացանի լցամասով մի քիչ վնասել եմ։

Այդ սպան Անդրեյին հետաքրքրասեր մարդ թվաց. նա այնպես քաղաքավարի էր նայում պորուչիկի դեմքին, որ վերջինս նույնիսկ անհարմար զգաց։ Բայց մայոր Պոտրեսովի դեմքը բարի էր, մեղավորի աչքերով և, չգիտես ինչու, նրան կարելի էր խղճալ։

Իսկ ահա կապիտան Եֆրեմ Շտոկվիչը, որ պառկած էր թերթերով և ամսագրերով ծածկված թախտին, Անդրեյին դուր չեկավ. նա քաղաքավարի էր, բայց չոր, ձեռքը, թյո՜ւ, քրտինքից խոնավացած, իսկ հայացքը բարձրացնում էր ներքևից դանդաղ ու ծանր, ինչպես երեքփթանոց քար։

— Շատ հաճելի է,— առանց որևէ սիրալիրության ասաց Շտոկվիչը և անսպասելի առաջարկեց,— չէի՞ք ցանկանա արդյոք մի բաժակ կարմիր գինի խմել։

Սակայն ամեն ինչից երևում էր, որ Կարաբանովի հայտնվելը նրան քիչ էր հետաքրքրում։

Պրապորշչիկ Վադիմ Լատիշևը, որն անբարետես, պզուկոտ դեմքով մի երիտասարդ էր, ժամացույցի բրոնզե շղթայիկը կախ էր գցել չափից դուրս մաշված բանակային սերթուկի վրա։ «Երևում է շատ աղքատ է, հավանաբար ինչ-որ բանում նույնիսկ խորապես դժբախտ,— անմիջապես մտածեց

նրա մասին Կարաբանովը,— կամ գուցե ինչ-որ հիվանդություն ունի...»։

Հետո սպայական զորանոցի մի անկյունից դեպի Կարաբանովը շարժվեց թավամազ մի հսկա, դեռ հեռվից պարզելով իր վիթխարի թաթը, որն ամբողջովին կեղապատված էր ռամկական սև, կարծրացած կոշտուկներով։

— Վատնին... Նազար Մինայիչ,— կարծես հանքահորի խորքից հնչեց հսկայի ձայնը,— ես Նազար Վատնինն եմ, ահա թե ով։ Իսկ կոչումով՝ եսաուլ... Հա՛, դու էլ ես կազակային հարյուրապետ, դե արի համբուրեմ քեզ, պորուչի՛կ։

Նա թեթևորեն բռնեց Կարաբանովի արմունկից և, ընդհանուր ծիծաղի ներքո, նրա դեմքը մխրճեց իր թավ մորուքի մեջ։

— Շրթունքներս,— ծիծաղում էր եսաուլը,— շրթունքներս համբուրիր...

Հաճելիորեն զարմացած Կարաբանովը դեռ չէր հասցրել նայել շուրջը, երբ սպասյակներն արդեն սեղանի վրայից հավաքել էին քարտեզներն ու գրքերը և դնում էին գինով լի սափորներ ու խորտիկներ։

— Մեղքս ինչ թաքցնեմ,— խոստովանեց Կարաբանովը,— ես չեմ հրաժարվի հյուրասիրությունից, քանի որ սարսափելի քաղցած եմ։ Եվ ընդհանրապես պետք է խոստովանեմ, որ հենց Պետերբուրգից ամեն ինչ թարս է գնում։

— Ուրեմն դուք Պետերբուրգի՞ց եք,— զարմացան բոլորը, նույնիսկ Շտոկվիչը մի կողմ նետեց «Тифлисские ведомости» լրագիրը և ուշադիր զննեց Կարաբանովին։

— Այո՛, ուղիղ Պետերբուրգից։

— Իսկ որտե՞ղ եք ծառայել,— հարցրեց Նեկրասովը։

— Կավալերգարդյան[1] լեյբ-գվարդիայում։ Ամենաուրախ գնդում, պարոնայք... Որպես արքայական երևելի անձանց թիկնապահներ, մեզ համար պահպանել ենք լոկ մի առաքինություն՝ մեզ զգաստ պահել միայն զորահանդեսների համար։

— Օ՜, օ՜, և... Եթե այդպես է, ապա ներեցեք ինձ մի անհամեստ հարցի համար,— հետաքրքրվեց Շտոկվիչը՝ թախտից վեր կենալով։— Դուք ինչպե՞ս ընկաք այստեղ, երբ գվարդիան մայրաքաղաքից դեռ դուրս չի եկել։ Եվ ինչո՞ւ ձեր հագին կազակային համազգեստ է։

— Ճակատագիր է,— խույս տվեց Կարաբանովը։

— Դե, եթե միայն ճակատագիր է,— գլխի ընկնելով՝ աչքով արեց Նեկրասովը,— ապա թքեք այդ ճակատագրի երկար, նողկալի մորուքին։

— Մինչև Մոսկվա մի կերպ թքում էի, իսկ հիմա ցամաքել եմ՝ արդեն թքելու բան չի մնացել,— պատասխանեց Անդրեյը՝ աստիճանաբար աշխուժանալով։— Սակայն դուք նույնպես, Յուրի Տիմոֆեևիչ,— նա ցույց տվեց գլխավոր շտաբի ակադեմիայի կրծքանշանը,— չգիտեմ, ինչու եք այստեղ, այս խուլ վայրում, և ոչ թե մեծ իշխան Միխայիլի շտաբում։

Կարաբանովին ուղեկցելով սեղանի մոտ՝ շտաբս-կապիտանը մտերմորեն ասաց.

— Ով ինչպես, իսկ ես, օրինակ, շատ գոհ եմ, որ ինձ ուղարկել են Իգդիր և ոչ թե աքսորել, ասենք Կամչատկա կամ ուրիշ «ոչ այնքան հեռավոր վայրեր»։

— Ինչո՞ւ այդպես։

Նեկրասովը լրջացավ.

— Գիտեք, ես վաղուց պնդում էի, թե ժամանակն է, որ Ռուսաստանը զբաղվի Բալկանների հարցով։ Եվ որոշեցի, որ օգտակար կլինեմ բալկանյան ապստամբներին։ Մանրամասների մեջ չմտնելով, ասեմ՝ բռնվեցի արդեն Վալախիայի սահմանի վրա. թաքուն անցնում էի ապստամբների մոտ, լեռները...

— Ոչի՛նչ, ակադեմիկոս,— ափով թեթև խփեց նրա ուսին կապիտան Շտոկվիչը,— շուտով ձեզ համար ոչ միայն լեռներ կլինեն, այլև քրդեր։ Եվ հետո, միևնույն չէ՞, թե որտեղ գլուխներս կդնենք ձեր սլավոնների համար... Հրե՛ն, նայեցե՛ք լուսամուտից, կարծես խոպերցինե՞րն են մոտենում։ Նրանք այսօր դարձյալ անցնելու են գետի երկայնքով...

Կարաբանովը նույնպես լուսամուտից դուրս նայեց. ճեղքելով առևտրականների խայտաբղետ և աղմկոտ ամբոխը՝ շուկայի փոշոտ հրապարակով անշտապ շարժվում էր հեծյալների շարասյունը։

[1] Կավալերգարդ — հեծելազորային։

— Իսկ որտե՞ղ են ձեր իրերը, գվարդիական,— հարցրեց Շտոկվիշը Կարաբանովին որոշ չարախնդությամբ։

— Ես ոչինչ չունեմ, պարոնայք,— ազնվորեն խոստովանեց Կարաբանովը։— Ճանապարհը երկար էր, ծանր ու հարբած։ Ինչ քաղաք ինձ դուր էր գալիս, այնտեղ կերուխում էի անում։ Այդպես ամեն ինչ այստեղ-այնտեղ կորցրի։ Եվ չեմ էլ ափսոսում։

— Դա փառավոր բան է,— ձայն տվեց յունկեր Եվդոկիմովը,— ես սիրում եմ այն մարդկանց, որոնք ոչինչ չեն ափսոսում։

Այդ ժամանակ Վատնինը ինչ-որ տեղ գնաց և հետը բերեց կարճահասակ, կլոր դեմքով, գլուխը ուսերի մեջ մտած մի զինվորի։ Զինվորը մաքուր սափրված էր, մի աչքը շիլ։

— Ահա՛, պորուչիկ,— ասաց եսաուլը Կարաբանովին,— թեև նա թաթար է, բայց այստեղ այնքան շատ լսեց, թե ինչ խժդժություններ է անում թուրքը, որ ձեռք քաշեց ալլահից... Նրան ավելի շատ Տյապան են կոչում, իսկ եթե հարկավոր է ուրիշ անունով կանչել, միևնույն է, նա արձագանքում է։ Վերցրո՛ւ, քեզ սպասյակ է պետք...

Իմանալով, որ Կարաբանովը դեռ ընդունելության չի եղել Խվոշչինսկու մոտ, սպաները խորհուրդ տվեցին նրան հենց հիմա գնալ։ «Պետք չէ նեղացնել ծերուկին»,— համոզում էին նրանք։

Երբ սպասյակներն արդեն սկսել էին սեղանի վրայից հավաքել ավելորդ ամանները շտաբս-կապիտան Նեկրասովը Կարաբանովին վախեցրեց բարձրաձայն հրամանով.

— Հա՛-նել փա՛ա-մ...

— Փուշտը,— միահամուռ ձայնակցեցին սպաները և բոլորը ձեռքները տարան գրպանները՝ հանելու ծխախոտի գլանատուփերն ու քսակները։ Կայազորի ավանդույթի համաձայն միայն այժմ կարելի էր ծխել։

Կարաբանովը ծիծաղեց, բայց նախկին անհոգությունն արդեն չէր կարելի վերադարձնել։ Ամբողջովին գտնվելով գնդապետի հետ զինահրապարակում տեղի ունեցած անհարմար և որոշ չափով նվաստացուցիչ առաջին հանդիպման տպավորության տակ՝ պորուչիկը դեռ պատրաստ չէր այցելության։ Եվ այն միտքը, որ նա հիմա պետք է մտնի մի տուն, որտեղ կարող է հանդիպել Ագլայային, անմիջապես ճնշեց նրա լավ տրամադրությունը։

Սակայն Անդրեյը չէր ցանկանում նեղացնել նոր ընկերներին և այդ պատճառով էլ, արիության համար թափով կուլ տվեց մի լիքը գավաթ ռոմ և գոռաց.

— Կոլուպաև... կամ ի՞նչ է քո անունը։

Թաթար-զինվորը արդեն դռների մեջ էր՝ բորիկ կրունկները իրար կպցրած, թաթերը սնայդերովյան հրացանի կոթի լայնությամբ բացած։ Ամեն ինչ կանոնադրության համաձայն.

— Էստեղ եմ ես...

— Ուրեմն, այսպես, Տուտաև, գործի անցիր, հարկավոր է համազգեստը մաքրել, ճտքակոշիկները և կոշիկները նույնպես, գլխարկի ծածկաշապիկը փոխել... Արա՛գ...

7

Կայազորի պարետը բնակվում էր մի ցածրահարկ հյուղակում, որը ծիծեռնակի բնի նման կպած էր ժայռի ելուստին։ Կռացած ներս մտնելով ցածրիկ դռնից՝ Կարաբանովը ցերեկային վառ լույսից հետո ոչինչ չէր կարողանում տեսնել կիսախավարում և դղրդյունով կպավ ինչ-որ մի զրնգուն ու կլոր բանի, կարծես ինքնաեռի։

— Հո չե՞ք վնասվել,— լսեց նա Խվոշչինսկու ձայնը, որը հանկարծ ինչ-որ տեղից հայտնվելով, ուղղակի բռնեց նրա թևից և տարավ իր հետևից, բարեկամաբար ասելով,— ահա քեզ անիծյալ Ասիան։ Կնոջս առաջ էլ ամաչում եմ, բայց ի՞նչ կարող ես անել։ Բոլոր տները լցված են զինվորներով։

Նրանք մտան մի փոքրիկ սենյակ, որը, ըստ երևույթին, գնդապետի համար ծառայում էր որպես աշխատասենյակ։ Սեղանի վրա թափված թղթերի միջից բարձրանում էին կվասի մի քանի դատարկ շշեր, ափսեի մեջ դրված էր մեջբը կրծած չոր ծածան, անկյունում կերակրվող սագի ճտերը պորուչիկի երևալուն պես սաստիկ աղմուկ-աղաղակ բարձ-

բացրին։ Սակայն առաջին բանը, որ հասցրեց նկատել Կարաբանովը, դա Ագլայայի՝ պատից կախված լուսանկարն էր։

Դեմքը հանկարծակի կծկվեց կատաղի ջղաձգությունից։

— Պատիվ ունեմ ներկայանալու,— չոր զեկուցեց պորուչիկը և, ինչպես սուսերով ողջունելիս, գնդապետին պարզեց մի ծրար, որի վրա դրված էր զմուռսի չորս կնիք։

Խվոշչինսկին սագերին դուրս քշեց դռնից, ապա առաջարկեց.

— Դե նստեցեք, պորուչիկ, թեկուզ այստեղ... Ինչպե՞ս հասաք։

— Ձեր կնոջ ծածկակառքով,— հանդգնորեն պատասխանեց Անդրեյը, հասկանալով, որ հիմա իր փոխարեն խոսում է ոռմի վերջին բաժակը...

Կնիքները փշրվեցին Խվոշչինսկու մատների տակ։ Գնդապետը դրեց ակնոցը, ծերունական բծախնդրությամբ թղթերը փռեց իր առջև և թռուցիկ նայելով սպային՝ խորացավ ընթերցանության մեջ։ Կարաբանովը, ձիգ կանգնած, գրեթե ատելությամբ էր նայում դեղնավուն ճաղատ գլխին՝ կապտերակ քունքերի մոտ մազերի թեք սանրվածքով, և ճերմակ աղվամազով ծածկված մեծ, կոճիկավոր ականջներին։

«Աստվա՜ծ իմ,— սարսափով մտածեց Անդրեյը,— և այս սարդը, հավանաբար, արդեն այսօր պետք է փաղաքշի Ագլայային իր կպչուն թաթերով... Իսկ ինչո՞ւ նա և ոչ թե ես... Կարդա՜, կարդա՜, ծեր կապիկ...»։

— Օհո՞,— հանկարծ զարմացավ գնդապետը՝ շոյելով ճաղատ գլուխը,— ձեր կրթությունը ավելի շատ պալատական է, քան զինվորական։ Ես կասկածում եմ, որ նորին մեծության պաժական դպրոցը կարողանա լավ զինվոր բաց թողնել իր պատերից դուրս։ Այդ պատճառով էլ (գնդապետը վեր կացավ, Կարաբանովը չխկացրեց կրունկներով) հանդգնում եմ հույս հայտնել, պարոն պորուչիկ, որ դուք բոլոր ճիգերը կգործադրեք, որպեսզի օգտագործեք մեր պայմանները՝ ձեր դաշտային պատրաստության համար։

Խվոշչինսկին նորից նստեց, տեղաշարժեց շշերը։

— Ասեք ինձ, ծերուկիս,— հարցրեց նա,— ի՞նչը հարկադրեց ձեզ կազակի համազգեստ հագնել։ Չէ՞ որ դուք իշխան Պյոտր Կրոպոտկինը չեք, որը ուղղակի պաժությունից մեկնեց սիբիրյան կայազոր...

Զսպելով ներսում խուլ կերպով ալեկոծվող զայրույթը՝ Կարաբանովը գլխով ցույց տվեց իր թղթերը.

— Բացատրելը համարում եմ ավելորդ։ Այնտեղ, հավանաբար, ամեն ինչ շարադրված է...

Հանկարծ թղթերը մի կողմ թռան, գնդապետի ակնոցը բարձրացավ դեպի ճակատի կնճիռները, և Կարաբանովին նայեցին սուր, գորշ աչքերը.

— Դուք.. իսկ դուք գիտե՞ք, արդյոք, թե ինչ է գրված այստեղ։ «Արարք, որը վայել չէ սպայի կոչմանը...» Բացատրեք, ի՞նչ է նշանակում սա։ Թղթախաղի պա՞րտք, մտերմությո՞ւն անառակ կնոջ հետ, գողությո՞ւն, թե՞ շանտաժ։

— Ո՛չ։— Կարաբանովը ակամայից սարսռեց այդպիսի ենթադրություններից։— Ուղղակի ես հրաժարվեցի մենամարտելուց։ Ավելի ճիշտ,— անմիջապես ուղղեց նա,— ես չհրաժարվեցի կանգնել արգելագծի մոտ, բայց հակառակորդին զգուշացրի, որ նրա վրա չեմ կրակելու։

— Այդպես։ Հետո՞...

— Այն ժամանակ ինձ մեղադրեցին վախկոտության մեջ, և դուք ինքներդ եք հասկանում, որ վախկոտի համբավով ես արդեն չէի կարող մնալ գվարդիայում...

— Եվ դա բոլո՞ր է։

— Այո՛։ Թերևս, բոլորը...

— Այն դեպքում ասացեք և մի՛ բարկացեք ինձ վրա,— անսպասելիորեն մեղմ հարցրեց գնդապետը,— դուք գուցե իսկապե՞ս... վախեցաք։

— Ո՛չ,— հպարտորեն վրա տվեց Կարաբանովը։— Սակայն ես, ինչպես հավանաբար և դուք, գնդապետ, ունեմ իմ բարոյական սկզբունքները, որոնց և հետևում եմ։ Սպանել մարդուն հենց այնպես, նույնիսկ եթե նա սրիկայի մեկն է, միևնույն է, նողկալի հանցագործություն է և պետք է ենթարկվի համընդհանուր պարսավանքի և ոչ թե գովասանքի...

— Իսկ ի՞նչ էր մենամարտի պատճառը,— նորից հարց-

ռեց Խվոշչինսկին։— Ասենք, եթե այստեղ կնոջ մատ կա խառնված, ապա դուք կարող եք ինձ չպատասխանել։

— Այս անգամ,— թթված քմծիծաղ տվեց Կարաբանովը,— գործը եղավ առանց կնոջ։ Ուղղակի ես ապտակեցի իմ գնդի սպաներից մեկին, որը տիտղոսավոր ազգանուն ուներ։

— Նա ձեզ շա՞տ վիրավորեց։

— Ո՛չ։ Բոլորովին ոչ։

— Ուրեմն ի՞նչ, այդ դեպքում։

— Նա հարվածեց մի զինվորի, որը Գեորգիևյան կավալեր էր։ Իսկ զինվորներին, պարոն գնդապետ, ինչպես ձեզ հայտնի է, խաչ տալիս են թափած արյան և ոչ թե հաճոյանալու կարողության համար։

— Դե լավ։ Ես շնորհակալ եմ բացատրության համար։— Խվոշչինսկին ձեռքը սեղանի վրայով պարզեց նրան, և Կարաբանովը ստիպված եղավ սեղմել այն։— Ինձ համար շատ ուրախալի է իմանալ, որ իմ սպան մտածում է հենց այդպես։ Եվ ինձ թվում է, որ եթե նման դեպք ձեզ հետ կատարվեր իմ գնդում, իմ սպաները դրա համար ձեզ երբեք չէին կըշտամբի...

«Իմ գունդը... Իմ սպաները»,— այդ բառերը ծերուկը արտասանում էր հպարտությամբ։ Այդ պահին փողոցից լսվեցին սմբակների թեթև դոփյուն, ասպանդակների զրնգոց, ձիերի աղմկոտ փնչոցներ։

Խվոշչինսկին բաց արեց լուսամուտը։

— Հրեն,— բերկրանքով բացականչեց նա,— խակ և խակ ժամանակին. դրանք ձեր հարյուրյակի կազակներն են։ Նրանք գնացել էին լեռնային գյուղերը։ Գնանք, միանգամից կտեսնեք և մարդկանց...

Սպաները դուրս եկան։ Խրճիթի առաջ մի քանի հեծյալ իջել էին ձիերից։ Ձիերին ազատելով սանձերից՝ նրանք անմիջապես թուլացրին թամբակալները, ձեռքի ափերով ձիերի մեջքերից սրբեցին առատ քրտինքը։ Կազակները ճանապարհին ծածկվել էին փոշով, երկարատև ձիարշավից քայլում էին չոռած ոտքերով, դեմքերը հոգնած էին։

— Ահա և ձեր ուրյադնիկ Տրյոխժոննին,— գնդապետը ցույց տվեց Պուգաչևի կերպարանքով մի տարիքավոր ոսկրոտ գեղջուկի,— նա վերին աստիճանի բարեխիղճ կազակ է...

Անշտապ մաքրելով քիթը՝ ուրյադնիկը քայլեց դեպի սպաները։ Օձի նման երկար մտրակը, որ հյուսված էր ձիու պոչի մազափնջից, նրա հետևից քարշ էր գալիս գորշ փոշու մեջ։

Տրյոխժոննին անփույթ, ալարկոտությամբ պատվի առավ՝ ձեռքը մոտեցնելով փոշոտ գլխարկին.

— Այնպես որ, ձերդ բարեծնություն,— հյութեղ ասաց նա,— մենք վերադարձանք... Ինչպիսի ստորություն։ Անընդհատ քարքարոտ տեղերով, նույնիսկ պայտերն էին ջարդվում։ Հիմա դարբնոց ենք գնում։ Իսկ գյուղերում կարծես հանգիստ է։ Դուք մի անհանգստացեք, ձերդ բարձր բարեծնություն։ Միայն վերջերս հայերը շատ են բողոքում...

— Ի՞նչ կա այնտեղ,— աշխուժորեն հարցրեց Խվոշչինսկին,— ի՞նչ գյուղ է։

— Դե, չգիտեմ Կուրդուսուկ էր... թե Բարդիսիկ։ Մոռացել եմ, երևի անկրթության պատճառով... Այնտեղ, ձերդ բարեծնություն, քրդերը ոչխարներ էին խուզում։ Շաբաթ օր էր կարծեմ։ Եվ հետո երկու աղջկա չեն գտել։ Մեկը վրացուհի, մյուսը կարծեմ հրեուհի։ Ամեն ինչից երևում է, որ նրանց ևս հափշտակել են։ Չէ որ թուրքերը շատ մոտ են...

— Դու կորդոններից դուրս եկե՞լ ես,— հարցրեց Խվոշչինսկին՝ նայելով Կարաբանովին՝ իբր դուք լսեք, դա ավելի շատ ձեզ համար է, ընտելացեք...

— Այո՛, կորդոններից էլ ենք դուրս եկել։ Կարծես թե հանգիստ է այն կողմերում, անասուններ են արածում, Վանի ճանապարհին միայն երկու բեռնավորված ուղտ տեսանք... Ամեն ինչ խաղաղ է։

— Դե լավ, գնացեք հանգստանալու,— թույլ տվեց Խվոշչինսկին և բաց արեց քսակը։— Ահա ձեզ մի ռուբլի, կարող եք գնալ խանութպանի մոտ, նա այսօր օղի է բերել։

Տրյոխժոննին վերցրեց ռուբլին։ Մտրակի ծայրը գցելով ուսին, նա սրտաբուխ ժպտաց՝ լայն բացելով բերանը։

— Ձերդ բարձր բարեծնություն, այստեղից ոչ հեռու, լեռնանցքի հետևում, անտառի մեջ երկու հովազ նկատեցինք...— Ուրյադնիկը հանեց գլխարկը և թափահարեց ճաղատ, վարդագույն գլխի վերևում՝ հովացնելով այն։— Երևում է,— բա-

բեհոգությամբ ավելացրեց նա,— երբեմն շրջում են։ Այնպես որ կարելի է խփել...

Կարաբանովը և Խվոշչինսկին վերադարձան խրճիթ։ Գնդապետը մատով անցողակի կտտացրեց պատից կախված քարտեզին.

— Տեսնում եք ինչ են ասում՝ խաղաղ է, ամայի, հանգիստ։ Իսկ ի՞նչ խաղաղություն, երբ անցյալ շաբաթ երկու զինվոր գնացին ցախ կտրելու ու չվերադարձան։ Հենց այսօր մեր խանութպան Աղա-Մամուկովը մի պարկ բերեց։ Ընկած է եղել ճանապարհին։ Իսկ պարկում՝ գլուխներ...

Սեղանի վրայից մի թուղթ վերցնելով՝ Խվոշչինսկին պարզեց պորուչիկին.

— Ահա, չէի՞ք հաճի արդյոք կարդալ, թե ինչ է գրում հարյուրապետ Վատնինը, որն օրերս եղել է սահմանային գյուղերում։ Ղազի Մահոման՝ հանրահայտ Շամիլի որդին, վերջերս անցել է սահմանը... Կարդացե՛ք ինքներդ։

Ծուռումուռ և անգրագետ գրված զեկույցի մեջ Կարաբանովը զարմանքով կարդաց.

«Գալով գյուղ, որտեղ քրիստոնյաներ են ապրում, թուրքական սուլթանի շֆախմբի անգամ Ղազի Մահոման բռնում է բոլոր հայերին, պանրից մնացած շինուկը լցնում տաշտի մեջ, որով կերակրում են շներին, ապա, գյուղի կատուներին սպանելով, լցնում նույն տաշտի մեջ, դրան խառնում արտաքնոցներից հավաքած մարդկային կեղտը և ծեծելով, կանանց բռնաբարելու ու մանվան սպառնալիքի տակ կերցնում նրանց։

Տուժած հայերին, որ լաց էին լինում պատմելով ինձ այդ ամենը, Թուսաստանի զինվորականության անունից ես խոստացա պաշտպան կանգնել»։

— Սարսափելի է,— ակամայից դուրս թռավ Կարաբանովի բերանից։

Խվոշչինսկին մի քիչ ջուր խմեց և շարունակեց.

— Բալկաններն էլ մեզ այստեղ կարձագանքեն... Մենք ձեզ հետ, պորուչիկ, կընկնենք գեներալ Տեր-Ղուկասովի Էրիվանյան զորասյունը։ Ահա, կարող եք քարտեզին նայել՝ ուր է մեզ սատանան տանելու։ Արարատյան հովիտ՝ դեպի Բայազետ... Իսկ ինչ-որ մեկին կհասնի Ղարսը, մեկ ուրիշին՝ Բաթումը։ Մենք ձեզ հետ, պորուչիկ, ինչպես սպեղանի՝ ինչքան շատ թուրքեր Բալկաններից մեր կողմը քաշենք, այնքան հեշտ կլինի Գուրկոյի և Սկոբելևի գործը Բուլղարիայում...

Անդրեյը լռում էր։ Երբ նա ցանկացավ ցտեսություն ասել, Խվոշչինսկին սղալեց բեղը և անսպասելի պահեց նրան.

— Ներեցե՛ք, ես ձեզ մի հարց էլ ունեմ...

— Խնդրեմ։

Գնդապետը, ծամծմելով շոգից չորացած, բարակ շուրթերը, կմկմաց.

— Ասացե՛ք, Կարաբանով... Հը՞մ, հը՞մ, գիտեք, դուք պատահաբար... Ասենք լավ... Դա այնքան կարևոր չէ հիմա։ Ավելի էական գործեր կան...

Կարաբանովը, հասկացավ, թաքցրեց ժպիտը։

— Ես գլխի եմ ընկնում, պարոն գնդապետ,— ասաց նա,— ինչն է ձեզ հետաքրքրում՝ արդյո՞ք ես այն Կարաբանովը չեմ, որը ծանոթ է Ագլայա Եգորովնային, մինչև ձեզ հետ ամուսնանալը։

Մերուկը լարվեց, կարմրեց, սեղանի տակից ձգեց կաղ ոտքը.

— Դե, ես... այդ չէի ուզում ասել, բայց ինձ...

— Այո, դա ես եմ,— պատասխանեց Անդրեյը կտրուկ և այնքան խիստ, որ ասես հարվածում էր։

Դուրս գալով փողոց՝ նա մտածեց. «Համենայն դեպս, ինչ լավ էր, որ Ագլայան գլխի ընկավ և դուրս չեկավ...»

Նույն օրը երեկոյան ուրյադնիկ Տրյոխժոննին առաջին անգամ նրա մոտ եկավ փոքրիկ զեկույցով. նրա մեջ մանկական խզբզոցով թվարկվում էին ձիերը, խոտի պաշարը, մարտական սրերի քանակը և կարճ հաղորդում դարբնոցի մասին։

— Ձիերը ողջ են,— զեկուցեց նա։

— Իսկ մարդի՞կ,— հարցրեց Կարաբանովը։

— Եվ մարդիկ նույնպես։

— Այսուհետև,— հրահանգեց պորուչիկը,— զեկույցը սկսել մարդկանցից, հետո միայն խոսել ձիերի մասին։

8

Երբ կազակը Լորդին ողջ և առողջ, էլի այնպես արագավազ ու թեթև, բերեց Իգգիր, Կարաբանովը ակամա հիշեց, թե ինչպես Նովոռոսիյսկում կալվածատերը լաց էր լինում,

երբ տանուլ տվեց այդ գեղեցիկ նժույգը։ Անդրեյն անմիջապես թռավ թամբին, և ձին, ենթարկվելով նրան, քառատրոփ պտտվեց հրապարակով, ցատկեց ցանկապատի վրայով, պորուչիկին հանեց սպասավոր բլրակի վրա և վերադառնալով նորից մեխվեց նախկին տեղում՝ կրծելով լկամը և գոհունակ փռնչացնելով։

— Այ, ապրես,— գովեց կազակին Կարաբանովը,— ի՞նչ է քո անունը։

— Ես Օժոգինն եմ, Դենիսկան... Մենք Սուվորովյան ստանիցայից ենք։ Ձեր մատանին ինձ մոտ է։ Գուցե ափսոսո՞ւմ եք։ Դե, վերցրե՛ք...

— Ոչ, եղբայր։ Ինչ նվիրված է, նվիրված է։ Եթե հանկարծ օղի խմել ցանկանաս, արի ինձ մոտ, միշտ կխմեցնեմ։

Եվ նրանք բաժանվեցին բարեկամների պես...

Մի անգամ նրան հանդիպեց Նեկրասովը, գրկեց գոտկատեղից և ասաց.

— Դուք ինձ դուր եք գալիս, պորուչի՛կ։

Կարաբանովը շփոթվեց այդ խոստովանությունից, բայց ներքուստ ուրախացավ։ Նրան նույնպես դուր էր գալիս այդ մարդը, որը բոլորովին նման չէր այն դասին և կաստային պատկանող զինվորական մարդկանց, որոնց մեջ նախկինում Անդրեյին վիճակվել էր ապրել։ Ճիշտ է, նա դեռ լիովին չէր հասկանում այդ քաղքենուն, որը ճակատով իր համար ճանապարհ էր բացել դեպի գլխավոր շտաբի ակադեմիան, սակայն Կարաբանովը հոտառությամբ նրա մեջ արդեն զգում էր այնպիսի հատկություններ, որոնց կարող էր նախանձել ցանկացած սպան։

Նեկրասովի մեջ ամեն ինչ, նույնիսկ նրա վերարկուի գրպանների դասավորությունը, դուր էր գալիս նրան։ Այդ գրպաններում միշտ պահվում էին քարտեզի կտրածներ, խոշորացույց և կարկին, ինքնասարք մասշտաբաչափ՝ հուսարական խթանի անվակով, և աշորայի մի քիչ աղիացած պաքսիմատներ, վիրակապման փաթեթ և անանուխի բլիթներ, կոնյակով լցված տափաշիշ և փոքրիկ ատրճանակ։ Եվ այս ամենը շտաբս-կապիտանը դասավորում էր գրպանների մեջ այնպես, որ ձեռքը գրպանը տանելով, անմիջապես հանում էր ինչ որ պետք է...

— Մի նայեք ինձ,— ծիծաղեց Նեկրասովը,— այս անգամ ես ուղակի ձեռքս հենց այնպես եմ դրել գրպանս։ Ես առաջարկություն ունեմ՝ մտնենք զորանոց։

— Բարոն Կլյուգենաուն ձեզանից օրիգինալ է,— պատասխանեց Կարաբանովը,— նա ինձ հրավիրում է թուրքական բաղնիք...

Զորանոցը դատարկ էր և մռայլ, դա առաջ տեղական կալվածատիրոջ գոմն է եղել։ Պատի երկայնքով շարված էին զինվորական հրացանները՝ թեթևակի փայլփլող սվիններով։ Նեկրասովն անցավ զենքերի շարքի մոտով, ձեռքի ափով ուժեղ խփելով հրացանների փողերին, ասես ցանկապատի ձողերին խփեր։

— Նայե՛ք այստեղ, պորուչիկ. «Բերդանա համար առաջին»,— չի կարելի կրակել պառկած վիճակում... «Կրնկա»— կամ պարզապես, ինչպես ասում են զինվորները, «կրինկա», փամփուշտը ծանր է և էքստրակցիա[1] չունի... «Կարլե»— վախենում է անձրևից, փամփուշտը թղթից է... «Մինյե»— մի անգամ գցիր ավազի վրա, և փականն արդեն չի աշխատի... «Շասեպո»— ուղղակի անպետք է... Տրամաչափերը ևս տարբեր են՝ չորս ու երկու տասներորդականից մինչև վեց գծանի։ Եվ այս ամբողջ հրեշավոր անհերդաշնակությունը, պորուչիկ, մենք բախտ ունենք տեսնել մի վաշտում։

— Իսկ ինչո՞ւ եք զայրանում,— զարմացավ Անդրեյը,— Ռուսաստանը, ինչպես ձեզ հայտնի է, «լայնատարածք» երկիր է և Ռյուրիկի ժամանակներից սկսած հենվում է միայն անկարգությունների վրա։ Ընտրություն կատարեք ինքներդ՝ անկարգություն և Ռուսաստա՞ն, թե՝ կարգ ու կանոն, բայց առանց Ռուսաստանի...

— Սատանան տանի ձեզ բոլորիդ,— լրջորեն գազազեց Նեկրասովը, զինահենակից վերցնելով Ֆելդֆեբելի նոր հրացանը։— Ահա՛, այսպիսի «բերդանա համար երկու» պահեստում գցած են երկու հարյուր երեսուն հազար հատ։ Հարմար, թեթև, գեղեցիկ, ամուր... Եվ ի՞նչ։ Գեներալները չեն ուզում զինվորներին զինել դրանցով... Վախենում են, որ կատարելագործված զենքը զինվորներին կհրապուրի հրաձգությամբ, և նրանք իբր կկորցնեն իրենց հատուկ ձգտումը դեպի

[1] էքստրակցիա — հեռացում, հանում։

սվինամարտը։ Իսկ ինչքա՞ն արյուն է թափվում այդ մարտերի ժամանակ։ Դա անհեթեթություն է...

Հրաժեշտ տալով՝ Նեկրասովը հանկարծ հարցրեց.

— Ասացե՛ք, պորուչիկ, դուք սիրո՞ւմ եք որսի գնալ։

Կարաբանովը մտածեց.

— Երևի ոչ... թեև,— հանկարծ հիշեց նա,— մեր տոհմի ճակատին գրված է. իմ պապը իր ունեցվածքի կեսը ծախսել է քերթե և որսորդական շների վրա։ Աուստերլիցում չի սպանվել (ահա նայե՛ք,— Անդրեյը չխկացրեց կրունկներով,— այս խթանները դեռ նրանից են մնացել), իսկ որսի ժամանակ հրացանը պայթել է ձեռքի մեջ, և նա մահացել է...

— Իսկ մենք մտադիր ենք գնալ։ Եկեք մեզ հետ,— առաջարկեց շտաբս-կապիտանը։— Կազակներն ասում են, որ երկու հովազ են տեսել... Խումբը մեծ չէ, ավելի շատ գնում են զվարճանալու։ Ի դեպ, Նիկիտա Սեմյոնովիչը իր կնոջն էլ է կապել մեր գլխին... Դե՛, որոշեք։

«Եթե Ագլայան էլ է այնտեղ, ուրեմն հարկավոր չէ գնալ»,— մտածում էր Անդրեյը, բայց լեզուն նրա փոխարեն ուրիշ բան ասաց.

— Շնորհակալություն հրավերքի համար, ես ուրախ կլինեմ...

Ագլայան, ինչպես երևում էր, նույնպես չէր սպասում հանդիպել նրան։ Նրա դեմքը մի տեսակ փոխվեց անմիջապես։ Պորուչիկին գլուխ տալով և նրան ոչնչով չառանձնացնելով մյուս սպաներից՝ նա իր ձին քշեց կապիտան Շտոկվիչի ձիու կողքից։ Կարաբանովի ականջին հաճախ էր հասնում նրա ծիծաղը։ «Ինչի՞ մասին կարող է պատմել նրան այդ չորուկը»,— անվստահությամբ մտածեց Կարաբանովը և սրունքներով իր Լորդին քշեց-մոտեցրեց նրանց...

— ...Դուք զուր եք կարծում, տիկին,— լսեց նա Շտոկվիչի ձայնը,— որ կանանց էմանսիպացիայի հարցը բարձրացված է միայն եվրոպական կանանց շրջանում։ Մարդկության գեղեցիկ սեռի արևելյան կեսը նույնպես հայտարարում է ինքնուրույնության իր իրավունքները։ Այսպես, օրինակ, կարող եմ ուրախացնել ձեզ, որ Պարսկաստանում կանայք արդեն միավորվել են «Ադորու-Նիսսա» ընկերության դրոշի ներքո։

— Առաջին անգամ եմ լսում,— զարմացավ Ագլայան,— և ինչ ծրագիր ունի այդ ընկերությունը։

«Իսկ քո ինչին է պետք դա իմանալ,— զայրացած մտածում էր Կարաբանովը,— մի ձևացիր, թե կանացիությունից զուրկ ես...»

— Օ՜,— բացատրում էր Եֆրեմ Իվանովիչը,— այդ ծրագիրը շատ ընդարձակ է։ Համաձայն «Ադորու-Նիսսա» ընկերության կանոնադրության, արևելյան կնոջը խորհուրդ է տրվում ատել ամուսնու ազգականներին, ամեն օր ծեծել աղախիններին, ջարդել կահույքը և ավելի հաճախ կոպտել իր երեխաներին...

Ագլայան ծիծաղում էր։ «Ծիծաղիր, ծիծաղիր»,— մտածում էր Անդրեյը, և այդ պահին նրա համար ատելի էր այդ կնոջ ամեն ինչը. նրա ճկուն մարմնի շրջագարձը թամբի վրա, գունատ վզին փաթաթված շղարշե շարֆը և մինչև արմունկները երկար ձեռնոցներով բարակ թևերը։

Հեծյալները բարձրացան կիրճի լայնքով գցած մի նեղ, կորաձև կամրջի վրա։ Ներքևում, ասես հրեշավոր մի դժոխքում, քշքշում էր պղտոր գետը։

Սարսափը թաքցնելով՝ Ագլայան ասաց.

— Ինչ լավ կամուրջ է... ե՞րբ է կառուցվել։

— Դեռ հնագույն ժամանակներում,— բացատրեց Նեկրասովը։— Այստեղի պարսիկները սիրում են պնդել, որ այն կառուցվել է դեռ Աբբաս Երկրորդի ժամանակ, սակայն այդ Աբբասին նրանք վերագրում են բոլոր կառույցները...

Ագլայան, աչքերը հեռացնելով անդունդից, քաշվեց դեպի կամրջի մեջտեղը։

— Զարմանալիորեն պահպանվել է,— շշնջաց նա։

Կարաբանովն իր ձին քշեց կամրջի եզրով, պարծենկոտությամբ սիգարշավելով քանդված բազրիքների մոտով։

— Իսկ սա հետևանք է այն բանի,— հեգնեց նա,— որ ոչ ոք, նույնիսկ ձեր ամուսինը, չի փորձել վերանորոգել այս կամուրջը...

Կամուրջը մնաց հետևում։ Լորդը սկսեց ջղայնանալ. հանկարծ թռավ ճամփեզր, չռած աչքերով խեթ նայեց, կողքանց

լայնակի կտրեց ճանապարհը, խրտնած ծառս եղավ և փորձեց լեզվով բերանից դուրս հանել լկամը։

— Ի՞նչ ես դեսուդեն նետվում, պորուչիկ,— դժգոհեց Վատնինը,— ինչպես կատաղած շունը պարկի մեջ։ Հանգիստ գնա...

«Եվ ինչի՞ համար ես, հիմարս, կապվեցի այս որսորդության հետ»,— ինքն իրեն կշտամբում էր Կարաբանովը, բայց Իգդիր վերադառնալ արդեն անհարմար էր։ Նա իր Լորդին քշեց մոտեցրեց Նեկրասովի հանգիստ ձիուն, և նրանք երկար ժամանակ գնում էին կողք-կողքի՝ Պետերբուրգում ապրած տարիների հետ կապվող իրենց հիշողությունների մեջ որոնելով ընդհանուր ծանոթների։ Հետո շտաբս-կապիտանն ասաց.

— Չգիտեմ, ձեզ համար ինչպես է, պորուչիկ, ինձ համար այստեղ ավելի լավ է, քան մայրաքաղաքում։ Անկեղծ ասած, ես ավելի շատ կաբինետային զինվոր եմ, ինձ դեռ չի վիճակվել մասնակցել պատերազմի։ Սակայն այս պատերազմը, որը այսօր կամ վաղը կսկսվի, լիովին համապատասխանում է իմ ձգտումներին։ Դուք կարող եք ծիծաղել ինձ վրա, բայց ես նախանձում եմ Պեկո Պավլովիչի, Կարավելով եղբայրների, գեներալ Լյուբիբրատիչի փառքին և Քրիստո Բոտևի մահվանը։

Կարաբանովը կծկվեց. նա մեկ առ մեկ գիտեր Մոսկվայի և Պետերբուրգի պարուհիներին, իսկ այդ սլավոնական անունները նրան ոչինչ չասացին։ Նեկրասովը պորուչիկի լռությունը բացատրեց այլ կերպ.

— Ձեզ տհաճություն է պատճառում իմ պաթոսը,— հարցրեց նա։— Իմ մասին վատ մի մտածեք։ Ո՛չ, ես վերամբարձության հակում չունեմ, Կարաբանով, և մտադիր չեմ Ցարգրադի գարպասներին պողպատե վահան գամել։ Սակայն, ասված վկա, ես երջանիկ կլինեմ, եթե ինչ-որ բանով օգնեմ սլավոնների ազատագրման գործին... Իսկ դո՞ւք։

— Ես այդ մասին չեմ մտածել,— պատասխանից խույս տվեց Կարաբանովը։

— Իզուր։ Խորհուրդ եմ տալիս մտածել...

Շտաբս-կապիտանը նստած էր այծենակաճի էժանագին մահուդով ծածկված անգլիական կոշտ թամբի վրա և ձին վարում էր կազակային փոքրիկ երասանի օգնությամբ։ Կարաբանովը իր փորձված աչքով Նեկրասովի մեջ տեսավ հանգիստ, գրագետ հեծյալի։

— Այս պատերազմը կլինի ազնիվ պատերազմ,— որոշ լռությունից հետո շարունակեց շտաբս-կապիտանը,— Ռուսաստանի համար իր վարած բոլոր պատերազմներից ամենաանշահախնդիրը։ Այստեղ արդեն մենք ձեզ հետ միասին չենք կարող երազել խաչերի մասին... Սակայն,— Նեկրասովը ցույց տվեց Աղրիդաղի լեռնանցքի գագաթները,— շուտով կմթնի, իսկ մենք դեռ ճանապարհի կեսին ենք...

Այդ օրը որսը հաջող չէր, ճանապարհը երկար էր ու դժվար, կնոջ ներկայությունը ստիպեց սպաներին ընտրել ավելի հեշտ ուղի՝ շրջանցել լեռնանցքը։ Հաճարենու վայրի անտառում արահետները թաղված էին ձմեռային քամիներից փլված ծառերի բների տակ։ Ձիերը խիստ հոգնած էին։ Արդեն բոլորովին մթնել էր, երբ հեծյալները հասան այն ճամբարը, որ նախապես պատրաստել էին Վատնինի կողմից դեռ առավոտյան որսատեղը ուղարկված կազակները։

— Կազակներ,— գոչեց եսաուլը, վայր թռչելով թամբից,— հովազներին հո չե՞ք խրտնեցրել։

Մթության միջից երևաց ուրյադնիկի պինդ և կարճլիկ կերպարանքը։

— Մի կասկածեք, Նազար Մինայիչ,— ասաց Տրյոխժոննին,— մենք արդեն թաքստոցի տեղն էլ ենք նշել։ Հրեն, դեպի գետակը նրանք արահետ են գցել.. Միայն մեր Դենիսկան չգիտեմ, թե ուր է կորել։ Հալից ընկել ենք փնտրելուց։

— Դա ո՞ր Դենիսկան է,— անհանգստացավ Կարաբանովը,— արդյոք մեր հարյուրյակի Օժոգինը չէ՞, որ ոտքի կանգնեցրեց իմ ձիուն։

— Հենց նա է, ձերդ բարեծնություն։ Օժոգինը, իմ հայրենակիցը... Ասես գետնի տակը մտավ շան որդին...

Շտոկվիչը հաճկատարությամբ ձեռքը տվեց Խվոշչինսկայային, տարավ խարույկի մոտ, որից ճարճատելով այս ու այն կողմ էին թռչում կիզիչ ու շարաճճի կայծերը։

— Խնդրեմ,— ասաց նա,— չէ՞իք ցանկանա արդյոք մի բաժակ գինի։

— Աստված իմ, ինչ լավ է,— շունչ քաշեց Ագլայան՝ դեպի կրակը պարզելով իր փոքրիկ ձեռքերը. նրա ափերը կրակի բոցերից տաք վարդագույն արյան երանգ ստացան։ Անդրեյը շրջվեց...

Սպաները, բաց թողնելով ձիերը, հավաքվեցին խարույկի շուրջը, և երկինքը, որ մինչ այդ աղոտ լույս էր արձակում, հանկարծ փակվեց նրանց գլխավերևում որպես խուլ ու սև մի գմբեթ։

— Ահա և գիշերը, պարոնայք,— գրեթե հանդիսավորությամբ հայտարարեց Նեկրասովը՝ հանելով գլխարկը։— Նայեցեք, ինչպիսի աստղալի երկինք է։ Ասես վրան առատորեն աղ են ցանել... Այսպիսի սև բոքոն և... աղով,— նա ծիծաղեց ինչ-որ բանի վրա։

Թփուտների մեջ հաճելիորեն քշփշում էր ճամփորդական ինքնաեռը։ Տրյոխժոննին կրակի վրա դրեց շիլայով լցված չուգունե կաթսայիկը։

— Կամաց, կամաց,— թեթևակի ափը ափին խփեց Ագլայան,— ինչ-որ ձայն է գալիս հեռվից։

Ականջ դրեցին։ Քարերի մեջ երգաձայն քչքչում էր գետակը, քնաթաթախ փսփսում էր եղեգնուտը. և հանկարծ հարեվան կիրճից դուրս պրծած քամին նրանց ականջին հասցրեց ինչ-որ մեկի հուսահատ ճիչը։ Կարաբանովը ակամայից ջղաձգեց ուսերը, գիշերային սարսափից նրա մեջքով սարսուռ անցավ։

— Ո՞ւր է կորել Դենիսկան,— ասաց նա,— գուցե հենց ի՞նքն է մեզ ձայն տալիս։

— Ոչ,— պատասխանեց ուրյադնիկը,— դա Դենիսկան չէ... Հրեն, սարից այն կողմ, այստեղից ոչ հեռու, մոլոկանների գյուղն է։ Դա, ձերդ բարեծնություն, պահապաններն են վայրի խոզերին վախեցնում, որպեսզի նրանք իրենց դնչերով քարուքանդ չանեն արտերը։

Շուտով խարույկին մոտեցավ ևս մի կազակ՝ պեպենոտ Եգորիչը, որը գնացել էր Դենիսկային որոնելու։ Բանից դուրս է գալիս, որ Եգորիչը դեռ կեսօրին նրա հետ գնացել էր մոտակա անտառը և մի արահետի վրա ինչ-որ գազան տեսել...

— Սատանան գիտի, թե ինչ գազան էր,— դժկամությամբ պատմում էր Եգորիչը։— Մեկ կարծես նման էր գայլի, մեկ

էլ թվում էր, թե գայլ չէ։ Պոչը մի տեսակ թավամազ էր։ Վազում էր շատ արագ։ Եվ մեջքին մի զոլ կար։ Դենիսկան հիմարի պես վազեց նրա հետևից։ Իսկ մեր զենքերը այստեղ էին մնացել։ Կենդանին մեզանից փախավ, հետո էլ ծլկեց ու կորավ։ Նայեցինք՝ որջը մտավ։ Դենիսկան՝ հիմարը, նրա հետևից։ «Հրացանը բեր, Եգորիչ,— ասում է,— իսկ ես սրան, այս գարշելի գազանին այստեղ կհսկեմ մինչև քո գալը»։ Եվ ես վազեցի։ Հետո, ուզում եք պատժեք ինձ, ուզում եք թողեք, մոռացա էդ տեղը։ Էս կողմ, էն կողմ, չեմ կարողանում հիշել...

— Այ քեզ հիմա՜ր,— եզրափակեց մոայլադեմ Վատնինը՝ խառնելով կաթսայիկի միջի շիլան,— գնա՜, պեպենոտ, նորից փնտրիր Դենիսկային։ Եթե Իգդիր վերադառնանք առանց նրա, ուրեմն մինչև մահ դու մնալու ես առանց ուրյադնիկական ուսադիրների։ Դե գնա, ինքնաեռին էլ մի նայիր։

— Սպասի՜ր,— ասաց Կարաբանովը և, Ագլայայի հայացքի մեջ նկատելով տագնապ, մեղմացած շարունակեց։— Սպասի՜ր, սպասի՜ր... ես էլ եմ գալիս քեզ հետ...

Նրանք վերադարձան մի ժամից՝ գիշերային ցողից թրջված և անասելի տանջված։ Մթության մեջ նրանք կրակել էին բոլոր փամփուշտները։ Սակայն այն որջը, որտեղ մնացել էր Դենիսկան վայրի գազանին հսկելու, նրանք այդպես էլ չէին գտել. կրակոցներին նույնպես կազակը չէր արձագանքել։

— Ասա գոնե, ի՞նչ գազան էր դա,— հարցրեց Շտոկվիչը կազակին։— Գուցե նա արդեն վաղուց խժռե՞լ է ձեր Դենիսկային։

— Կարող է և խժռել է, ձերդ բարեծնություն,— հնազանդորեն համաձայնեց Եգորիչը։— Նա էնպիսի գազան էր... Թույլ հասկացողության տեր՝ նրա համար մեկ է, ինչ գեներալ, ինչ կազակ, ինչ տիրուհի։ Նա բոլորին կխժռի։ Բայց դե, Դենիսկան էլ, ձերդ բարեծնություն, շատ անխելք է, մի՞թե կարելի է գազանի որջը մտնել։

— Գոնե լռիր, քավթառ,— սաստեց Վատնինը և լիզելով գդալը՝ խփեց կազակի ճակատին։

Ագլայան ուրախ ծիծաղեց, բայց, հայացքով հանդիպե-

լով Կարաբանովին, լռեց և այլևս ոչ մի անգամ նրա կողմը չնայեց։ Անդրեյը վրդովված ու վիրավորված էր այդ կնոջից, որը բացահայտորեն խուսափում էր իրենից, և ի հեճուկս իրեն, սպանների հետ չգնաց վրանում քնելու, ամբողջ գիշերը մնաց կազակների հետ խարույկի մոտ և սպասեց Դենիսկայի վերադարձին։

— Այդ դո՞ւ ես,— նիրհը թոթափելով զարմացավ պորուչիկը, երբ թանձր մթության խորքից հայտնվեց կազակը՝ զզզված չեքմենով։

— Երևում է, բոլորովին չէիք էլ սպասում,— պատասխանեց Դենիսկան՝ անցնելով կազակների վրայով։— Խմփացնում են, սատանաները,— բարկացած ասաց նա։— Իսկ Եգորիչը, թող սատկած շուն տեսնի երազում, դեռ ոեխն էլ բաց է արել։ Եվ դրանք էլ իբր իմ հայրենակիցներն են։ Օղի խմելիս լավ են՝ միայն տուր, բայց հենց որ մնում են առանց ծխելիքի, չքվում են գարշելիները...

— Կամաց, մի՛ հայհոյիր,— ընդհատեց նրան պորուչիկը։— Գնացել են քո հետևից։ Փնտրել են։ Ինքս եմ գնացել...

Դենիսկան խորամանկորեն թափ տվեց դատարկ քիսան։ Կարաբանովը հաճախակի հորանջում էր և ամեն անգամ ուժեղ չխկացնում ատամներով։

— Ի՞նչ էր պատահել քեզ,— հարցրեց նա՝ հանելով ծխախոտատուփը։— Քեզանից, եղբայր, ինչ-որ գարշելի հոտ է գալիս... Շան հո՞տ է, շան հոտ չէ, կեղտահո՞տ է, կեղտահոտ չէ, թյո՛ւ, ինչպես է փչում։ Ապա մի կողմ քաշվիր։

Կազակը առանց առարկության հետ քաշվեց։

— Թե որ իմ հոտը լիներ,— դժկամորեն բացատրեց նա,— ախր իմը չէ, այդ գազանը իր որջում ինձ այնպես ծխահարեց, որ մի շաբաթում չի անցնի։ Սկզբից, ձերդ բարեծնություն, անընդհատ կազկանձում էր... Երևի ուզում էր դուրս գալ։ Հետո, անիծվածը սկսեց հոհոալ։ Կծում էր գարշելին։ Հրեն, չեքմենը պատառոտեց... Սպանեցի։ Արդեն շատ էի ձանձրացել Եգորիչին սպասելուց։ Քաշ տվեցի լեշը, քաշ տվեցի և գցեցի... Հոգնել էի, ձերդ բարեծնություն։ Թույլ տվեք հիմա մի քիչ ծխել...

— Ա՛հ, բռնի՛ր։ Լավ է, որ վերադարձար,— ասաց Անդրեյը։— Իսկ հիմա քնիր։ Միայն հեռացիր ինձանից... Ավելի

հեռու... Էլի, էլի։ Այ թե գազան է քեզ հանդիպել, հնարավոր չէ շնչել։

Շուտով քնեցին։ Նրանցից մեկը երազում տեսնում էր ծանր արևածաղիկներ և կանանց ծաղկավոր վերնաշապիկներ՝ մի խայտաբղետ մարգագետնում, իսկ մյուսը հաճախակի արթնանում էր, շշմած նայում մթության մեջ և նորից ընկնում կողքի...

9

Լուսաբացը երկչոտ էր ու տխուր։ Խոտերի բույրը լալկան մառախուղների հետ լեռնային գագաթներից իջնում էր ներքև՝ ասես մանկության օրերին լսած հին կախարդական հեքիաթից։ Հետո մի միայնակ թռչուն աղիողորմ ծղրտաց եղեգնուտում, և Շտոկվիչը, ծուլորեն հայհոյելով իջեցրեց հրացանը։

— Այդպես էլ գիտեի, պորուչիկ, երևի հովազներին քշել են ոչ թե այս արահետով, այլ ուղիղ Վատնինի մոտ... Չէ որ կազակներն այդպես են՝ իրենք իրենց են ճանաչում, իսկ մեզ մարդու տեղ չեն դնում։

— Սատանան տանի դրանց հովազներին,— պատասխանեց Անդրեյը։— Միևնույն է, ես չեմ հասկանում այդ որսամոլությունը... Եգորիչ,— կանչեց նա կազակին,— ավելի լավ է տուր մի քիչ խմեմ քո տափաշշից։

Եվ հանելով խցանը՝ Կարաբանովը երկար ժամանակ ծծում էր տափաշիշը. նայելով բարձր երկնքին՝ նա կուլ էր տալիս օդին, իսկ վերևում ճոճվում էին ծառերի ճյուղերը, թռչում էին նոսր ամպերը, աստղերն արդեն հանգել էին արևի ճառագայթների տակ։

— Լո՞ւմ եք,— ասաց Շտոկվիչը՝ նորից բարձրացնելով հրացանը։

Հեռվում որոտաց կրակոցը, արձագանքը կտոր-կտոր եղավ լեռներում, կարծես մի քանի մուրճեր միաժամանակ հարվածեցին զնդանին՝ չոր ու զրնգուն, և միայն հիմա Անդրեյը հասկացավ, թե ինչու Կովկասում մարդու մասին հազվադեպ են ասում, որ սպանել են, այլ ասում են՝ թրխկացրել են։

«Հավանաբար Նեկրասովն է,— նախանձով մտածեց Կարաբանովը։— Խելոքների բախտը միշտ բերում է»։

— Անդրեյ Ելիսեևիչ,— անվստահորեն ասաց Շտոկվիչը,— քանի մենք մենակ ենք, ուզում եմ ձեզ նախազգուշացնել... Խուսափեք Նեկրասովից. այդ խելքի տոպրակը վատ համարում ունի, նա սիրում է խառնվել քաղաքականությանը։ Ինչպես նաև մայոր Պոտրեսովը. անպայման ձեզանից դրամ կխնդրի, բայց դուք նրան մի տվեք, չի վերադարձնի...

Կարաբանովը չհասցրեց պատասխանել. եղեգնուտը շարժվեց, և մի գեղեցիկ, վիթխարի արու հովազ, երևի կորցնելով ընկերուհուն, դուրս թռավ բացատ։ Հազիվ տեսնելով նրա կարմիր, բերանքսիվայր գետնին սեղմված մարմինը՝ պորուչիկը կրակեց նրա թիակի տակ։ Հասկացավ, որ վրիպել է, երբ գազանը զսպանակաձև վեր ցատկեց կրակոցից և նետվեց մի կողմ...

— Հասի՛ր,— գոռաց նա Եգորիչին, և կազակը իր ձին շեշտակի քշեց եղեգնուտի մեջ, դեռ հեռվից, նիզակի ծայրով ճարպկորեն փորձելով խոցել հովազին...

Կարաբանովը նորից լցրեց հրացանը խոշոր կոտորակային գնդակներով և վազեց նրանց հետևից։ Որսը չէր գրավում, և նա գրեթե հանգիստ էր։ Մոտիկից լսվեց գազանի կատաղի մռնչոցը։ Եգորիչը դեռ թամբի վրա էր, իսկ հովազը արդեն կառչել էր ձիու կոկորդից և այնպես էր դնչով կոացրել ձիուն, որ վերջինս, սարսափահար վրնջոցից շնչահեղձ լինելով, փլվեց առջևի ոտքերի վրա։

— Ձերդ բարե... հարյուրապետ,— բղավեց Եգորիչը,— կրակի՛ր. ի սեր Քրիստոսի... Ձիուն պատառ-պատառ կանի...

Կարաբանովը տենդային հապճեպությամբ հրացանը վեր բարձրացրեց և... լավ էր, որ չկրակեց. կոտորակներով նա կքրքրեր կազակի ոտքերը, որոնք կախված էին մինչև գետին։ Սակայն տեսնելով նոր վտանգը՝ հովազը թողեց ձիուն և նետվեց դեպի պորուչիկը։

— Խփում եմ,— Անդրեյը կրակեց. հովազը չավարտելով թռիչքը, պառկեց փորի վրա. ամբողջովին սև օղերով ծածկված նրա երկար պոչը ուժեղ խփվում էր գետնին, կոտորակները ջախջախել էին հետևի թաթերը...

Շտոկվիչը հայհոյելով մի կողմ գցեց հրացանը և ձիու համար ողբացող Եգորիչի ձեռքից խլեց կազակային նիզակը։

— Ձեզի՛ք կարող, քթներդ չխոթեիք, էլի՛,— ասաց կապիտանը և խոպոտ շնչելով գնաց դեպի գազանը՝ ծուռումուռ դնելով հսկայական հեսկիներով ոտքերը...

Հովազը, հետևի մասը գետնի վրա քարշ տալով, ճանկռելով հողը, մտնում էր եղեգնուտի մեջ։ Դեղին ժանիքներով երախը բաց՝ նա խուլ մռնչաց, և այդ մռնչոցի մեջ զգացվում էր արդեն վերահաս մահվան թախիծը։

— Այ, այսպես է հարկավոր,— գոչեց Շտոկվիչը, և նիզակի ծայրը կրճտոցով խրվեց հովազի երախ. գազանային ժանիքների աքցանից ճարճատեց չոր փայտը։

Արյունը ցայտեց պորուչիկի վրա, նա զզվանքով հետ քաշվեց։ Գազանը պտտեցնում էր գլուխը, աղիողորմ ոռնում, իսկ Շտոկվիչը, նիզակի կոթը ամուր սեղմելով թևի տակ, թափ էր տալիս նրան նիզակի հետ միասին և ինքն իրեն խոսում.

— Այստեղ մտածելու բան չկա։ Մեկ-երկու՝ և վերջ... Սատկի՛ր, սատկի՛ր շուտ, գարշելի... Միայն թե մորթին անվնաս մնա...

Շտոկվիչը սկսեց հովազի գլխին հարվածել ծանր ճտքակոշիկով, նրա ձայնի մեջ զգացվում էր պորուչիկի համար անհասկանալի ուրախություն։ Սպանության անիմաստ դաժանությունը ապշեցրել էր Կարաբանովին։ Դուրս քաշելով ատրճանակը՝ նա մեկը մյուսի հետևից երկու գնդակ ճայթեցրեց հովազի ականջի մեջ։

Եվ այդ ժամանակ կապիտանը, թողնելով սատկած զոհին, կատաղությունից սկսեց դողալ։

— Ինչի՞ համար էր,— գոռաց նա՝ ցցելով «à la Բիսմարկ» բեղերը։— Ո՞վ ձեզ խնդրեց ինձ ծառայություն մատուցել։ Փսլնքոտ, լակո՞տ...

— Այդ ի՞նձ եք ասում,— ձգվեց Կարաբանովը, նայելով Շտոկվիչի դեղնավուն-պղտոր բիբերի մեջ։— Իզուր։ Կարող եք ապտակ ստանալ այդպիսի բառերի համար։

— Իսկ ես՝ ինքս էլ կարող եմ ձեր դնչին տալ,— չվախեցավ Շտոկվիչը։— Այստեղ ձեզ համար գվարդիա չէ, որ մենամարտեք։

— Ես չեմ նայի ձեր մազերի ճերմակությանը,— ճչաց Անդրեյը՝ հարձակվելով կապիտանի վրա...

Հայտնի չէ, թե ինչով կվերջանար այդ վեճը, երևի շատ

վատ, և Կարաբանովը նույնիսկ ուրախացավ, երբ հետևում խշշացին թփուտները, և Վատնինը՝ խցկվելով սպաների միջև, բաժանեց նրանց։

— Ի՞նչ եք աքլորացել... Դեհ, որսի ժամանակ ինչ ասել չի լինում։ Մի՞թե կարելի է այդպես...

— Մսագո՞րծ,— հրաժեշտի պահին շպրտեց Կարաբանովը։

— Լակո՞տ,— պատասխանեց Շտոկվիչը։

Եվ այսպես որսը փչացավ։ Կազակների վիրավորած էգ հովազը հասցրեց փախչել, իսկ Կարաբանովի կոտորակները, պարզվում է, դիպել էին ոչ միայն գազանի թաթերին, այլև կողերին. ամբողջ մորթին ծակծկված էր։ Ուրյադնիկ Տրյոխժոննին այն վերցրեց իրեն։

Անդրեյի և Շտոկվիչի վեճը վերջնականապես փչացրեց լավ տրամադրությունը։ Շուտով լեռների վրա կուտակվեցին ամպերը, փայլատակեց կայծակը, հետո մինչ այդ մաքուր երկնքից սկսեց այնպիսի կարկուտ թափվել, ինչպիսին Կարաբանովը դեռ չէր տեսել իր կյանքում...

— Ձիերին նայեք, կազակներ,— գոռաց Վատնինը,— քշեք սաղարթախիտ թխկենիների և ընկուզենիների տակ...

Կազակների ձիերը վայրի էին, կրակից ու ամպրոպից չէին վախենում, իրենց տիրոջ համար ուզածդ մարդուն կարող էին ատամներով պատառոտել, այդ պատճառով էլ նրանց պախուրցները կարված էին հումամշակ կրկնակի կաշվե թոկերից, պղնձյա օղերով, ինչպես արջերի համար։ Սակայն տարերային սարսափը այնքան մեծ էր, որ կտրելով հասարավանդները՝ ձիերը նետվեցին անտառի սաղարթախիտ մասերը։

— Եվ սա՞ է Կովկասը,— զարմացած ասաց Անդրեյը, երբ երկնքից սկսեցին թափվել դաշույնի պես սուր կարկտահատները՝ կոտրատելով ծառերի ճյուղերը, կտկտոցով գետնին զարկելով և արյուն հանելու չափ գանահարելով ձիերի բռնելու համար վազվզող կազակներին...

Տաք շնչառություն կպավ ծոծրակին։ Անդրեյը շրջվեց, նրա հետևում կանգնած էր Ագլայան՝ աչքերը լայն բացած։ Կարաբանովը, ուրիշներից աննկատ, փնտրեց նրա սառ ձեռքը, որն իրեն պատասխանեց թեթև սեղմումով, և հանկարծ հասկացավ, որ այդ ձեռքը, ինչպես և ինքը՝ Ագլայան, ամբողջովին պատկանում են իրեն, և Ագլայան ոչ ոքի այնպես չի վստահում, ինչպես իրեն...

— Ահա այստեղ,— ասաց նա, մտնելով իր համար սովորական դարձած տիրակալի դերի մեջ։— Կանգնեցեք ահա այստեղ... Մի վախեցեք, չէ որ դա հավերժական չէ...

Երբ կարկուտը կտրվեց, և նորից երևաց արևը, մարդիկ ակամայից աշխուժացան։ Կարաբանովը ձին մոտեցրեց Ագլայային, ասպետական քաղաքավարությամբ բռնեց ասպանդակը։ Ճանապարհ ընկնելով՝ Շտոկվիչը ինքը մոտեցավ Անդրեյին։

— Ես չէի ուզենա գժտվել,— ասաց նա։— Առավել ևս, որ մեզ հետ է տիկին Խվոշչինսկայան... Այնուամենայնիվ, կարող է և գնդապետին հասնել... Եվ պատճառն էլ այն չէ։

— Լավ,— համաձայնեց Կարաբանովը։— Թողնենք դա...

Այս անգամ, որպեսզի ավելի շուտ հասնեին Իգդիր, ընտրեցին ավելի կարճ ուղի՝ լեռներով։ Սակայն ճանապարհն անմիջապես գնում էր կիրճերի միջով։ Արահետն իր օղակաձև ոլորապտույտներով ժայռերի վրա հրեշավոր «ութեր» էր գրում։ Հեծյալների երկար շարանի գլուխը հաճախ հանդիպում էր իր պոչին, և ջոկատը եզրափակող Դենիսկա Օժոգինն ամեն անգամ երկչոտությամբ գոռում էր կիրճի վրայից.

— Ձերդ բարեծնություն, այդ ինչպե՞ս է ստացվում։ Մի՞թե ես ձեր հակառակ ուղղությամբ եմ գնում։

— Ա՜յ քեզ սատանայական բան,— հայհոյում էր Վատնինը։— Ասում են, որ իբր այս ճանապարհը կապալառու Ջերտովն է շինել։ Եվ որպեսզի ավելի շատ փող վաստակի, մոլորված նապաստակի նման ոլորապտույտներ է գործել լեռներում։

Նեկրասովը հիշեց ինչ-որ մեկի բանաստեղծությունը՝ կասկածելով, որ դրա հեղինակը Կլյուգենաուն է.

Դե, Ջերտով, դու մեզ ստիպեցիր
Հիշել քեզ չարությամբ,
Թանկ ուղիով փառաբանեցիր
Քեզ և ճամփան այս դիվական...

Վատնինը, տղամարդկային քաղաքավարությունից ելնելով, վախեցավ վիճել «օրիորդի» հետ, ինչպես նա կոչում էր Խվոշչինսկայային, և ճանապարհը զիջեց նրան։ Ագլայան արշավելով առաջ անցավ սպաներից։

— Իսկ դու ո՞ւր ես հորիցդ առաջ դժոխք մտնում,— դժկամորեն հարցրեց եսաուլը Կարաբանովին։

— Ինձ էլ թող առաջ,— ասաց պորուչիկը Վատնինին, վազացնելով նրա Պոդլյասի նժույգին, և իր ձին քշեց Ագլայայի հետևից։ Սակայն ճանապարհը շուտով այնքան նեղացավ, որ Անդրեյի ասպանդակը սկսեց քսվել ժայռի ելուստներին։

— Զգո՛ւյշ,— ճչաց նա կնոջ հետևից և հետ շրջվեց, որպեսզի վտանգի մասին նախազգուշացնի Վատնինին։

— Մի՛ պտտվիր,— արձագանքեց եսաուլը։— Պանդոկի աթոռին չես նստած...

Կարաբանովը չհասցրեց կատակով պատասխանել. ճանապարհի այն մասը, որտեղից նա նոր միայն անցավ Ագլայայի հետ, հանկարծ փլվեց Վատնինի ձիու ծանրության տակ, և ձին կրծքով կախվեց փլվածքի վրա։

— Եսաուլ, թռի՛ր ցած,— անբնական ձայնով ճչաց պորուչիկը,— թռի՛ր ցած, Վատնին...

Նազար Մինաևիչը այնքան էլ իրեն չկորցրեց. բաց թողեց երասանակը և ասպանդակից հանեց ոտքերը՝ վստահելով իր ձիուն։

— Դե,— չպպացնելով ասաց նա Պոդլյասին,— դե, դի՛, քաշվիր, հիմար... հի՛-հի՛-հի՛... կովի մեկը։

Ծանրաքաշ ձին, որ արդեն կախված էր կիրճի եզրին, հանկարծ միանգամից գավակով հենվելով գետնին, հետ ցատկեց նորից արահետի վրա, և Նազար Մինաևիչը, հանելով թաշկինակը, մաքրեց քրտնած ճաղատը.

— Կարծես պրծանք,— ասաց նա խաչակնքելով։— Բայց դու էլ, պորուչիկ,— բղավեց նա Կարաբանովին,— նույնպես շապկով ես ծնվել։ Տեսնում ես, ամպրոպը ինչպես է քարուքանդ արել ճանապարհը...

Այդ ամենն այնքան արագ կատարվեց, որ առջևից ընթացող Ագլայան նույնիսկ չհասցրեց սարսափել։ Իսկ Կարաբանովը խիստ վախեցավ։ Սակայն նայելով շուրջը՝ նա հասկացավ, որ այժմ ինքը Ագլայայի հետ մենակ է մնում այդ արահետում, և ուրախ ծիծաղեց.

— Մնաք բարով, պարոնայք։ Հետ շրջվեք և մնաք բարով...

Ագլայան դժկամությամբ ձին քշեց առաջ։ Շուտով արահետը լայնացավ, ձիերը գնում էին կողք կողքի, գլուխները թափահարելով։

— Ինչո՞ւ ես լռում,— հարցրեց Կարաբանովը։

— Աստվա՜ծ իմ,— հոգոց հանեց կինը,— չգիտեմ՝ ուրախանալ, թե վշտանալ...

10

Այնտեղ, ուր առևտրականները շամփուրների վրա քյաբաբ են խորովում, ուր զամբյուղների մեջ գարնանային նուրբ ծնեբեկն է կանաչում, իսկ տեղական խրախճասերները պճնազարդվել են սոճու վարոցիկներով, ուր վաճառականը ասեղ ծախելիս մի ամբողջ ճառ է ասում նրա արտակարգ հատկությունների մասին, ուր կազակի չեքմենով եկվոր ծաղրածուն մտրակով ձաղկում է ենիչերիի զգեստով հիմարներին, այդտեղ՝ փափախների և չալմաների այդ խառնակույտում, ումանցիները բռնեցին տարօրինակ տեսքով մի զբոսամոլի և քարշ տվեցին նրան գրասենյակ։

— Այնպես որ, բռնել ենք,— զեկուցեցին նրանք Իսմայիլ խան Նախիջևանսկուն,— բռունցքներով էր մեզ ահաբեկում և այնպես էր ցույց տալիս, թե իբր ռուսերեն ոչինչ չի հասկանում...

— Ա՜խ, ուրեմն չի՛ հասկանում,— զայրացավ պայծառափայլ փոխգնդապետը։— Դեհ, այդ դեպքում տասը մտրակ հասցրեք դրան, այնպես կհասկանա որ...

Բռնվածին պառկեցրին լուսամուտների տակ և, երբ ամեն ինչ պատրաստ էր, Իսմայիլ խանը, դուրս չգալով սեղանի հետևից, տասն անգամ գոռաց։ Բայց ինչպես պարզվեց, ծեծել էին ոչ նրան, ում հարկավոր էր։ Փոխգնդապետը զայրույթով հետապնդում էր մի իտալացի խոհարարի, որին վարձել էր Թիֆլիսում ռազմաերթի համար։ Իտալացին իսկապես ռուսերեն քիչ էր հասկանում, սակայն վատ պատրաստված ճաշի համար ծեծեցին մեկ ուրիշի։

— Ներիր, եղբայր,— նրա առաջ մեղքը խոստովանեց խանը։— Եթե միայն իմանայիր, թե ինչքան եմ ձանձրացել փորոտիքն անգամ չհանված, կիսաբաց ճտեր ուտելուց... Լսիր, իսկ դո՞ւ,— ի դեպ հարցրեց նա,— գուցե դո՞ւ կարող ես պատրաստել...

Պարզվեց, որ մտրակահար են արել հպարտ Ալբիոնի ներկայացուցչին, որը իր թագուհու օրհնությամբ ճանապարհորդում էր հայկական լեռնաշխարհի սարերով ու գյուղերով՝ խոտեր ու բույսեր հավաքելու համար։

— Ափսոս, որ քիչ ենք դնգստել քեզ,— ասաց Իսմայիլ խանը վշտացած։— Ախր քո թագուհին էլ ինչ-որ տարօրինակ է. ուղարկում է խոտ հավաքելու յոթ սարի հետև, այ, ինձ նամակ գրեր, և ես նրան մի ամբողջ սայլ լավ խոտ կնվիրեի..

Այդ պատմությունը կարող էր աննկատ անցնել, եթե չլիներ գնդապետ Խվոշչինսկու միջամտությունը. իր հավատարիմ հետախույզների՝ Վանի մաքսանենգ հայերի միջոցով նա պարզեց, որ Արարատյան հովտի բուսական աշխարհի նկատմամբ հետաքրքրությունը ծեծ կերած «բուսաբանին» հետագայում տարել է ուղիղ քրդական շեյխ Ջալալ-էդդինի վրանը։

Երկու ահեղ հոսանք (մեկը բացահայտ՝ Ռուսաստանից, մյուսը գաղտնի՝ Անգլիայից) բախվում էին լեռնային արահետներում, անմարդաբնակ անապատների քարավանային ուղիներում։ Եվ հիմա Խվոշչինսկուն անհանգստացնում էր ոչ այնքան հերթական «բուսաբանին» (կարդա՝ ռազմական գործակալին) Իսմայիլ խանի կարգադրությամբ մտրակահարելը, այլ այն, որ Իգդիրից հետո նա հանկարծ հայտնվեց քրդական շեյխի մոտ...

— Դա միանգամայն առանց դիտավորության է՞. ի՞նչ եք կարծում,— ասում էր Խվոշչինսկին Շտոկվիչին։— Անգլիացիները ջուր էին պղտորում Խիվայում, էմիրի պատճառով գզվռտվում էին Կոկանդում, հիմա էլ կսկսեն խառնակել քրդերին։ Իսկ շեյխ Ջալալ-էդդինը, թող ձեզ հայտնի լինի, առանց այն էլ քարոզ է կարդում մերկացած սուրը ձեռքին...

Իսմայիլ խանը ևս զարմացավ և զարմացավ անկեղծ.

— Ջեմ հասկանում՝ ինչ-որ մի հիմար եկել է խոտերի համար։ Իսկ ինձ դեռ ասում էին, որ բոլոր անգլիացիները լուսավորյալ ծովագնացներ են... Այո, երևում է, որ նրան քիչ եմ ծեծ տվել։

Գնդապետ Խվոշչինսկին, հավանաբար, մտադիր էր կալանավորել անգլիացուն, որպես Թուրքական լրտեսության մեջ կասկածելի մարդու... և ուղարկել Թիֆլիս. Խան Նախիջևանսկու բուռ ինքնավստահությունը Նիկիտա Սեմյոնովիչին կատաղության էր հասցնում, և նա, օգտվելով կայազորի պետի իշխանությունից, տեղական միլիցիայի փոխգնդապետին տնային խիստ բանտարկության ենթարկեց։

— Բայց ես սպա եմ,— վիրավորվեց Իսմայիլ խանը։

— Իսկ դուք գիտե՞ք արդյոք, թե ինչ տարբերություն կա շարքայինի և սպայի միջև,— չարախնդությամբ պատասխանեց Խվոշչինսկին։

— Ինչպես չէ։ Իհարկե գիտեմ՝ զինվորը ստանում է նպարեղեն, իսկ սպան դրա փոխարեն դրամ է վերցնում։ Միաժամանակ, հրամայում է։

— Գուցե դուք նույնքան անկեղծորեն պատասխանեք ինձ, թե ինչո՞ւ եք ծառայում ռուսական բանակում։

— Որպեսզի ստանամ գեներալական թոշակ և մեկնեմ Մեքքա։ Ես ձեզանից հիմար չեմ,— ուղղակի գնդապետ երեսին շպրտեց Իսմայիլ խանը։

— Շնորհակալություն անկեղծության համար,— գլուխ տվեց Խվոշչինսկին։— Իսկ Մեքքա կարող եք գնալ նաև մինչև թոշակ ստանալը։ Միայն բարի եղեք նախ նստել կալանքի տակ։

Իսմայիլ խանը հայտարարեց, որ ինքն այնքան հիմար չէ, որ բողոքի իր եղբորը, գեներալ Կալբուլայ խանին, քանի որ դա անազնվություն է, բայց կբողոքի գեներալ Կունդուխովին։

— Այս դեպքում,— պատասխանեց Խվոշչինսկին,— ձեզ հարկավոր է գրել հենց իրեն՝ սուլթան Աբդուլ-Համիդին, որի մոտ է փախել այդ բարեպաշտ ձիագողը։ Ի դեպ, նա արդեն դարձել է Մուսա-փաշա, և նրա մականը գտնվում է այստեղից ոչ հեռու՝ Էրզրումի մոտերքում...

Հանդիպելով նեկրասովին, որին անկեղծորեն զվարճացնում էր մտրակահարված անգլիացու այդ ամբողջ պատմությունը, գնդապետը բարկացած ասաց.

— Միծաղելու բան չկա, շտաբս-կապիտան։ Իսմայիլ խանի ծնողներին արժե՞ր ջանք թափել, որ լույս աշխարհ բերեին այսպիսի տհասի։ Խղճում եմ այն միլիցիոներներին, որոնց հրամանատարն է նա և որոնց, հավանաբար, նա կկործանի հենց առաջին իսկ մարտի ժամանակ...

Նեկրասովը ներողություն խնդրելով խոստովանեց, որ իր ծիծաղը հիմարություն էր, իսկ գնդապետը գնաց իր խրճիթը՝ սովորականից ավելի շատ կաղալով և հայհոյանքներ մռ՞թմռ՞թալով...

Մի անգամ, դեռ երիտասարդ հասակում, պարսկական երեք գրվանքանոց ռմբագունդը, խոցելով ձիուն, պոկել էր Խվոշչինսկու աջ ոտքի ջիլերը և կոնտուզիայի ենթարկել ձախը։ Պատմելով այդ մասին՝ նա սիրում էր որպես բացառիկ դեպք նշել. «Պարոնայք, դուք չեք հավատա, բայց միջաթափանց խոցված ձին ոտքերի վրա կանգնած մնաց, մինչև ինձ իջեցրին թամբից...»

Ոսկրոտ, կորացած մարմին, թուխ, անխնամ բեղերի վրա կախված մեծ քիթ. հենարանին հանգիստ դրված ձեռքում նկատվում էր ջղային թույլ դողոց. քայլելիս սովորություն ուներ ձեռքում կրել խաղողի վազերից կտրած ծուռումուռ ճիպոտ. այսպիսին էր գնդապետ Խվոշչինսկին և այդպիսին էլ մնում էր նրան մի քանի անգամ տեսած մարդկանց հիշողության մեջ։ Նրան ավելի մոտիկից ճանաչող մյուս մարդիկ կարող էին գնդապետի մեջ նկատել ոչ զգալի ինքնասիրություն և ծայրահեղ ազնվություն։

Սիրում էր, «օրինակ, բաց անել գնդի գանձարանը և ամբողջ երեք ժամ, թքելով մատների վրա, հաշվել մաշված թղթադրամները, ինչպես նաև ընդունակ էր ծառայական օրդ կորցնել զինվորների ոռճիկի համար նախատեսված մի վիթխարի պարկ մանր դրամներ վերահաշվելու վրա։

— Եվ, իրոք, միանգամայն ճիշտ է,— զարմանում էր նա երեկոյան դեմ, իր մանրախնդրությամբ տանջելով գանձապահին, և հինգ ու տասը կոպեկանոցները խնամքով հետ էր լցնում պարկի մեջ։

Սակայն զինվորները բոլորովին էլ դրա համար չէր, որ սիրում էին նրան։ Գնդապետը նույնիսկ իր գդալով չէր փորձում նրանց կաթսայիկների միջի կերակուրը, ինչպես դա

ընդունված էր Սուվորովի ժամանակներից ի վեր, որպեսզի արտաքուստ հոգատարություն ցուցադրի զինվորի նկատմամբ։ Նա հազվադեպ էր հաճախում նաև զորանոցները, հավանաբար լավ հասկանալով, որ իր գալու առթիվ ամեն ինչ կարգի կբերեն և դեռ շեմին կդիմավորեն իրեն՝ աշխուժորեն «առողջություն» ցանկալով։ Նրան չեն տեսել նաև գերտղամարդկային ուժի մասին անեկդոտներով զինվորներին զվարճացնելիս, ինչպես այն ժամանակ դա անում էին նույնիսկ Սկոբելևի նման ոչ անխելք շատ գեներալներ, որպեսզի մտրուկային հոհոցի տակ «հայր-հրամանատարի» պիտակ ստանային։ Սակայն դրա փոխարեն, մի անգամ Խվոշչինսկին փողոցում վերցնում է մի հարբած նորակոչիկի՝ փլնքոտ ու հայհոյող մի երիտասարդի, որը պատառոտում էր իր հագի վերնաշապիկը, մտցնում նրան իր գրասենյակը՝ քնելու, որպեսզի այդ հիմարին փրկի կալանավորական վաշտից։ Մուսուլման զինվորները իրենց հարազատ գյուղի մոլլային այնպես չէին պաշտում, ինչպես գնդապետին. նա կարգադրել էր մուսուլման-զինվորների համար մեկընդմիշտ կերակուրներ պատրաստել առանձին կաթսայում, որպեսզի արգելված խոզի մսով չվիրավորեին նրանց դավանանքը։

Սպաներին ճաշի հրավիրելու ոչ վատ ավանդույթից, որը միշտ գնահատվում էր կիսաաղքատ յունկերների և պրապորշչիկների կողմից, Խվոշչինսկին խուսափում էր, ինչպես ասում էին, ժլատության պատճառով. ասենք սպաներն իրենք էլ չէին ձգտում նրա մոտ ճաշի գնալ, գիտենալով, որ գնդապետի սեղանը շատ համեստ է՝ գինու փոխարեն կծվահամ կվաս, իսկ ապուրի մեջ հաճախ ճանճեր էին լինում։ Սակայն, չնայած դրան, կայազորում Նիկիտա Սեմյոնովիչի նկատմամբ կար լիակատար հարգանք, գնահատում էին նրա փորձը, և սպաները գոհ էին լինում, երբ գնդապետը զրուցում էր իրենց հետ։

Կարաբանովը միակն էր, որ հասկանալի պատճառներով խույս էր տալիս Իգդիրի պարետից։ Պորուչիկին նույնիսկ դուր էր գալիս իր այդ սեփական անկախությունը, հակառակ ընդհանուր կարծիքի, նա ինչ-որ տեղ, հոգու խորքում, գուցե և ոչ գիտակցաբար, Ագլայայի առջև պարծենում էր

իր տղամարդկային առավելությամբ։ Երիտասարդի միտքը, եթե նույնիսկ նա լավ է, այնուամենայնիվ, հասունացած միտք չէ. որքան էլ ճիգ գործադրես, նրա մեջ շատ բան կա, որ մարդուն ծիծաղելի է դարձնում, և Ագլայայի առջև լավագույն տեսքով իրեն ցուցադրելու ձգտման մեջ Կարաբանովը երբեմն հիշեցնում էր աքլորի, ինչի մասին և մի անգամ ասաց նրան Կլյուգենաուն։

— Լսեք,— ասաց պրապորշչիկը,— ձեր փետուրները, անկասկած, փայլփլում են վառ գույներով, ձեր հրաշալի պոչը գեղեցիկ է, բայց հարևան աքլորները դեռ չեն հասցրել ինչպես պետք է պոկոտել ձեր կուսական կատարը։ Միայն մի՛ բարկացեք ինձ վրա, Կարաբանով, ձեր ինչին է պետք այս ամենը... Ինչո՞ւ, օրինակ, երեկ պահակափոխման ժամանակ թամբին թռաք բոլորից շուտ՝ կտրիճությո՞ւն անելով ուրիշների առջև։ Չէ՞ որ Նեկրասովը և Վատնինը կարող են ձիավարելու վարպետություն ցույց տալ ձեզանից ոչ վատ, բայց, հարգելով Խվոշչինսկուն, ձի նստեցին նրանից հետո, որովհետև գիտեն, որ կաղության պատճառով գնդապետին դժվար է այդ բանն անել...

Խոսակցությունը տեղի էր ունենում թուրքական բաղնիքում։ Կարաբանովին պատասխանից փրկեց միայն բաղնիքի քիսաչու հայտնվելը. մոմլաթով գոտևորված քիսաչին պորուչիկին կանգնեցրեց փայտյա չմուշկների վրա և կեղտոտ նախաբաղնիքից սահեցնելով՝ տարավ ոչ պակաս կեղտոտ բաղնիք։ Վառ պատմուճանի մեջ փաթաթված՝ Կարաբանովը չհասցրեց սթափվել և արդեն պառկած էր քարե թախտի վրա, որը նման էր ոչ այն է հնագույն դամբանի, ոչ այն է՝ ամբիոնի. պառկած էր եգիպտական բարակ խսիրի վրա, իսկ գլխավերևում զիլ երգում էին դեղձանիկները։

— Ի՞նչ ես անում, սրիկա՛,— վախեցած գոռաց Կարաբանովը, երբ քիսաչին ոտքերով բարձրացավ նրա մեջքին, ծնկներով հենվեց թիակներին և պորուչիկի թևերը ճթճթոցով ոլորեց դեպի հետ,— բարոն, այս ի՞նչ է անում ինձ հետ։

— Հնազանդվեք,— խորհուրդ տվեց Կլյուգենաուն՝ թմբլի փորի վրա սողալով դեպի քարե թախտի կենտրոնը։

Այդ ժամանակ հոգու խորքում արհամարհելով գյավուրին՝ քիսաչին առանց խղճահարության ջարդելով կողերը, տանջում ու չարչարում էր Կարաբանովին, արմունկներով ու ծնկներով հարվածում կողքերին։ Հետո վերցնելով ուղտի բրդից պատրաստած քիսան՝ սկսեց տրորել պորուչիկին՝ ինչպես ծովայինը նավի մետաղյա մասերը։

— Խղճա ինձ,— ծիծաղեց Անդրեյը,— չէ որ ես ոչ թե Մուհամմեդին, այլ Քրիստոսին եմ հավատում...

Թողնելով տանջելը, քիսաչին բերեց մի մեծ թաս և բարակ սպիտակ ճիլոպների ճկուն մի փունջ։ Քաղցր խյուս պատրաստող հրուշակագործի ճարպկությամբ նա հարեց օճառի զանգվածը, որն անմիջապես վերածվեց փքուն, բուրումնավետ փրփուրի։ Ճիլոպը ճարպկորեն թաթախելով փրփուրի մեջ՝ քիսաչին պորուչիկին տրորեց այդ բուրավետ ձյունով և ապա լվաց նրան լագանների մեջ լցված տաք ջրով։

— Վե՞րջ,— հարցրեց Կարաբանովը ուրախացած։

— Ձարմանում եմ ձեզ վրա,— արձագանքեց պրապորշչիկ Կլյուգենաուն,— այդքան անհամբեր լինելով դուք ինչպե՞ս եք ինը ամիս սպասել ձեր մոր արգանդում։

— Ուղղակի այն ժամանակ չէի կարող կանխատեսել այն ամենը, ինչ սպասում էր ինձ այս աշխարհում...

Երբ քիսաչիները որոշեցին, որ անհավատները բավականաչափ մաքուր են, ոչ այնքան էլ քաղաքավարությամբ նրանց «թախտերից» ցած հրեցին և ուղարկեցին մի առանձին դահլիճ՝ լոգանքից հետո հանդստանալու։ Սպաները նորից պառկեցին, այս անգամ փոս ընկած բաղմոցներին, և լվերն անմիջապես սկսեցին թռչկոտել նրանց պատմուճանների վրա։

— Դրանց ուշադրություն մի դարձրեք,— ասաց Կլյուգենաուն՝ հոգնատանջ փակելով աչքերը։— Ավելի լավ է եկեք խոսենք...

Հարևան բազմոցներին պառկած էին մի քանի սպիտակ, անշարժ մումիաներ. ինչպես բացատրեց բարոնը, դրանք քրդական բեկեր էին։ Սավանների տակից դուրս էին ցցվել միայն դեմքերը և նարգիլեի մուշտուկներով ծխամորճերը։ Նարգիլեի խողովակները՝ ֆսֆսացնելով և օձի նման շարժվե-

լով՝ ձգվում էին դեպի հատակի բյուրեղապակյա անոթները։ Քրդերը խոսում էին կամացուկ. Կլյուգենաուն շշուկով ասաց.

— Դուք նույնիսկ չեք պատկերացնի, Կարաբանով, ինչի մասին են նրանք զրուցում... Նրանք հիմա մեկը մյուսի առջև գլուխ են գովում, թե ով է իրենցից ավելի շատ քարավաններ թալանել, սպանել մարդկանց, ոչխարներ փախցրել կամ առևանգել կանանց։

— Սակայն,— նկատեց Անդրեյը,— ինչ էլ գեղեցիկ ու պարկեշտ տեսք ունեն այդ բարբարոսները։

— Իսկ դա նրանից է,— պարզաբանեց Կլյուգենաուն,— որ հարյուրամյակներ շարունակ քրդերն իրենց համար առևանգում են ամենագեղեցիկ աղջիկներին։

— Ես դրանց բոլորին Սիբիր կքշեի, թող իրենց ազնվացնեն տունգուսուհիների հաշվին,— զայրույթով ասաց Կարաբանովը։

— Դուք պարզապես չգիտեք Արևելքը,— առարկեց պրապորշչիկը,— դրանում մեղավոր է ոչ այնքան բուրդը, որքան անգլիական ոսկին։ Կոստանդնուպոլսին ձեռնտու է ունենալ այնպիսի քաղաքական բուֆեր, ինչպիսին քրդական ցեղերն են. ցանկացած հանցագործությունը սուլթանն արդարացնում է հենց այդ բեկերի վայրենությամբ։

Կարաբանովին սուրճ մատուցեցին։ Վարդերի ծաղկամաններով բոլորապատված մարմարե կոնքի մեջ մեղմ կարկաչում էր ցայտաղբյուրը։ Դեղձանիկներն առանց հոգնելու երգում էին երկնագույն ուլունքներով զարդարված իրենց վանդակներում։ Լուսամուտների քիվերին, արհեստական ծաղիկների մեջ, դրված էին սրճամաններ, մշկաօճառի տուփեր և արծաթյա գավաթներ, որոնց վրա գրված էին Ղուրանի պատվիրանները՝ մարմնի լվացման և այն քաղցր հաճույքների մասին, որ մուսուլմանի համար պատրաստում են երկնային հուրիները...

— Բարոն,— հանկարծ նկատեց Կարաբանովը,— այդ ի՞նչ է ձեր ոտքերի վրա։ Ասես ապարանջան լինի։

— Դրանք այն կապանքների հետքերն են, որոնք դրված էին իմ ոտքերին չեչենական գերության մեջ, մինչև ինձ փրկագնելը։ Փախչել չկարողացա. իմ վզի շղթան գիշերն անցկացնում էին պատի միջի բացվածքով, և իմ տերն այն

կապում էր իր մահճակալին։ Բայց ինձ հետ կային էլի երկու ապշերոնցի զինվորներ։ Նրանք կրում էին միայն ոտնակապանքներ. իմ շղթան չեչենները անցկացրել էին նրանց ոտքերի արանքով։ Այնուամենայնիվ, ես կազմակերպեցի նրանց փախուստը։ Դե մտածեք, թե դա ինչպես կարելի էր անել, երբ կապանքները մենք չէինք գամահարել, իսկ ես էլ շնիկի պես չէի կարող անցնել այդ զինվորների ոտքերի արանքով...[1]

Բաղնիքի ելքի մոտ թողնած նստել էր մինդեր[2] տերը, որը դեռ հեռվից սպաներին պարզեց փոքրիկ կլոր հայելին։ Բայց մեկնեց ոչ այնպես, որ Կարաբանովը կարողանա իրեն տեսնել հայելու մեջ, այլ հորիզոնական վիճակում, ձեռքի երկարությամբ, և բարոն Կլյուգենաուն հայելու վրա գցեց երկու զնգացող դրամներ։

Երբ նրանք դուրս եկան փողոց, պրապորշչիկը սիրով բռնեց Կարաբանովի արմունկից։

— Անդրեյ Ելիսեևիչ, լսեք արևելյան մի իմաստուն հեքիաթ...— ասաց նա։— Մի անգամ աղվեսին դատարան են կանչում։ Ասում է, որ ինքը լավ աղվես է։ «Ո՞վ կարող է դա ապացուցել»,— հարցնում են նրան։ Աղվեսը վկայակոչում է իր ընկերներին։ «Իսկ ովքե՞ր են քո ընկերները»,— ասում են։ Աղվեսը ցույց է տալիս իր փարթամ պոչը... Պոչով չմնաք, Կարաբանով։

— Դուք այդ ինչի՞ համար ասացիք,— մռայլվեց Անդրեյը։

— Նրա համար, որ դուք, որպես նախկին գվարդիական, չխորշեք համեստ բանող մեր բանակային անասուններից։ Դուք Պետերբուրգից փախել եք Իգդիր, բայց Իգդիրից նորից

---

[1] Հեղինակն այստեղ դիտավորյալ չի բացահայտում այդ հանելուկի գաղտնիքը, հույս ունենալով, որ ընթերցողներից մեկին կարող է հետաքրքիր լինել ինքնուրույն կռահելու շղթաներից ազատվելու եղանակը։ Տեղեկանքի համար ուղարկում են «Ռուսական արխիվ», 1869 թ., որտեղ պատմվում է չեչենական գերությունից երկու ռուս զինվորների փախուստի նման դեպքի մասին (Իվան Ֆեոդորովիչ Կլինգեր) (հեղ.)։

[2] Մինդեր — զանազան մանր-մունր ապրանքներ վաճառող մարդ Արևելքում։

Պետերբուրգ փախչել չի վիճակվի։ Ձեզ խորհուրդ եմ տալիս սիրեցեք ձեր սերմյագան[1], որպեսզի...

— Գեղջո՞ւկ դառնամ,— ծիծաղեց Կարաբանովը։

Կլյուգենաուն թոթվեց կլորիկ ուսերը.

— Դա սրամիտ չէ։ Բայց Պետերբուրգը հեռու է, իսկ Բայազետը մոտիկ՝ հրեն Զինգիլյան լեռնանցքի այն սարերի հետևը, և այնտեղ մենակ գնալ հնարավոր չէ...

11

Երեկոյան հարյուրապետներին տանում էր արդեն մի ճանապարհ. խոտերի ու մշուշների բուրմունքով հագեցած մի թանձր մառախուղ էր շրջապատել նրանց, և Վատնինի ասպանդակը բարեկամաբար զրնգում էր՝ պատահաբար կպչելով պորուչիկի ասպանդակին։

— Նազար Մինաևիչ,— հարցրեց Անդրեյը,— սահմանից պիտի հե՞տ փախչենք, թե ինչ։ Ասում են, վաղն արդեն պիտի պատերազմ հայտարարեն։

— Այդ մասին տեղեկություն չունեմ,— համեստորեն պատասխանեց Վատնինը։

Ամպերի ճեղքերից երբեմն հայտնվում էր լիալուսինը, և այն ժամանակ ճանապարհի մոտակայքում թաքնված քուրդը հավանաբար տեսնում էր, թե ինչպես, մթության մեջ սուրալով, անցնում էին կազակների թավամազ ձիերը, փայլատակում ծածկոցներից հանած հրացանները, գիշերային մթության մեջ նետերի պես մեխվում առաջ թեքված նիզակները։

Երկու կիսահարյուրյակ արշավում էին դեպի Արարատյան հովիտը՝ հեքթական հետախուզության, գնում էին հեռվից նայելու թուրքերի տիրապետության տակ գտնվող լեռներին, վարգով սիգարշավելու քչքչան գետի երկայնքով, շնչելու կիրճերի զովությունը, տեսնելու չի՞ այրվում, արդյոք, որևէ գյուղ, լսելու զգայուն հողը՝ արդյոք չե՞ն կոխկրտում այն օսմանյան անիծված հորդաները...

Դա հիանալի գիշեր էր, որը հիշողության մեջ մնում է ամբողջ կյանքում։ Առջևում դեռ շատ գիշերներ կլինեն, բայց անհնար է վերադարձնել հատկապես հենց այդ մութ, տագնապալի գիշերվա հմայքը։ Այդ գիշեր Անդրեյը սիրեց ինքն իրեն, զգաց մարդկային գեղեցկությունն իր մեջ. անփորձ հոգու տրոփյունի մեջ կար իր համար ինչ-որ նոր, աստակարգ մի բան...

Հետո նա նկատեց, որ սրամարտերում և գիշերային արշավներում կոփված կազակները որոշել են իզուր ժամանակ չկորցնել և սկսել են ննջել իրենց երերուն թամբերի վրա։ Անդրեյը նույնպես փակեց աչքերը և անմիջապես հիշեց Ագլայային, հիշեց, թե ինչպես այսօր նրան հանդիպեց փողոցում. գալիս էր շուկայից, նրա քնքուշ ափը սեղմվել էր, գարձել բռունցք, որի միջից ինչ-որ բան էր հանում ու կրծում։ Ագլայան՝ միշտ այնպես սիպտակադեմ, գեղանի, թեթևոտն, այդպես էլ հեռացավ, ինչպես երազ, ծուռումուռ, կեղտոտ փողոցների խորքը։

«Սիրելիս, սիրելիս, սիրելիս... դու նույնիսկ չգիտես էլ, թե հիմա ինձ ուր է տանում իմ Լորդը, ինչպիսի լուսաբաց պետք է գիմավորեմ ես վաղը, ինչ ծագիկներ կտրեմ իմ նժույգն իր սմբակներով... Մնաս բարով, իմ ուրախություն, բարի գիշեր քեզ»։

— Կա՛նգ առ,— լսվեց Վատնինի հրամանը, և անմիջապես աղմուկով փնչացին ձիերը։

— Տղանե՛ր, հրացանները պահել պատրաստ... Սրերը գուրս հանել...

Մթության մեջ տարածվեց խավ շառաչ ու ճռինչ։ Կարաբանովը նույնպես սուրը ձիգ պատյանից մի քիչ դուրս քաշեց, որ անհրաժեշտ պահին չլռվի, սրընթաց մերկացվի հարվածի համար։ Պորուչիկի գլխավերևում հանկարծ սկսեց փայլատակել մի մենավոր աստղ։ Ինչ-որ տեղ խավարում սրրտաճմլիկ և դառնաղետ ոռնում էր շնագայլը։

Կարաբանովը մոտեցավ Վատնինին.

— Նազար Մինաևիչ, այդ ի՞նչ լեռներ են այնտեղ։

— Աղրիդաղ, ձերդ բարեծնություն։ Նրանք հեռու են մեզնից...

— Դե, ի՞նչ։ Թեքվե՞նք աջ։ Չէ՞ որ ես ոչինչ չգիտեմ։ Առաջին անգամ եմ այստեղ։

[1] Սերմյագա— գյուղական կոչտ հագուստ։

— Ինչպես հարմար կլինի ձերդ բարեծնությանը։ Մենք անկիրթ մարդիկ ենք, ակադեմիաներում չենք սովորել...

— Լսի՛ր, Նազար Մինաևիչ,— ասաց Կարաբանովը,— ինչո՞ւ ես դու սկսել «բարեծնություն» հա «բարեծնություն»։ Գուցե ես քեզ ինչ-որ բանով նեղացրե՞լ եմ։

— Ո՛չ,— կամացուկ պատասխանեց Վատնինը,— աստված խնայի... Իսկ որ «բարեծնություն» եմ ասում, այդպես ճիշտ է, ամեն մեկը չէ, որ մուժիկ պիտի լինի։ Հրեն, ձեր մասին ասում են, որ դուք նրանցից եք... հատուկ ծառայության եք եղել։ Իսկ ես՝ հիմար ծերուկս, դիմավորեցի ձեզ և համբուրեցի ձեր շուրթերը... Մտածեցի՝ կազակ է, մերն է...

Կարաբանովը ամեն ինչ հասկացավ։

— Ահա թե ինչ, Վատնին, աստված վկա, թողնենք այդ, հոգյակս։ Այսօր կամ վաղը պատերազմ է լինելու, գուցե մենք երկուսով էլ զոհվենք հայրենիքի համար, և մի՞թե մենք իրար հավասար չենք։ Ես հեշտությամբ եմ կոչում ստացել. դա իմ բախտն է, իսկ ահա դու գեղջուկից սպա ես դարձել՝ դա էլ քո բախտն է... Դե, տուր ձեռքդ։

Նրանք ձեռք-ձեռքի խփեցին, և Վատնինն ասաց.

— Հարկավոր է գնալ այնտեղ։ Տեսնո՞ւմ ես, Անդրեյ Ելիսեևիչ, այնտեղ մի անզգամ խարույկ է վառել...

Խարույկի մոտ ոչ ոքի չգտան, խոտերի վրա մնացել էին միայն բազմաթիվ ձիերի ու հեծյալների հետքեր։ Վատնինը կազակներին թույլ տվեց մի քիչ հանգստանալ, բաց արեց լայն գլանաշիշը, տվեց Կարաբանովին՝ մի քիչ օղի խմելու։

— Շատ լավ է,— ասաց նա,— եթե խմես քիչ-քիչ ու հաճախ։ Կարծես թե չես հարբում, բայց միշտ մի տեսակ տաքացնում է...

Կազակները խոսակցություն էին բացել ուրիշ բաների մասին, և Կարաբանովին հասնում էր ծեր Եգորիչի խռպոտ ձայնը.

— Եվ դուրս է գալիս, որ դու նրան բռնաբարել ես,— կշտամբում էր նա Դենիսկային,— հարկավոր է, որ կինը ինքը քեզ կանչի։ Դրա համար ստիր, միևնույն է, ստուգելու համար Կովկաս չի գնալու։ Ես կանանց սուտ ասելով եմ գրավում։

— Դու այդ գործում վարպետ ես,— ասաց ուրյադնիկը,—

ստում ես այնպես, որ մինչև ծերության հասնելը շրթունքներդ կմաշվեն, բան չի մնա ատամներդ ծածկելու..

Վատնինը փակեց գլանաշիշը, թքեց։

— Կանանց մասին են խոսում,— ասաց,— նրանք սիրում են դա։ Միայն դու նրանց մի՛ լսիր, Ելիսեիչ, նրանք ավելի շատ փչում են։

— Իսկ դու ամուսնացա՞ծ ես, Նազար Մինաևիչ։

— Ազատել է ինձ հանգուցյալը,— թախիծով պատասխանեց եսաուլը։— Իմ մեղքս էր, որ հարուստ աղջիկ առա։ Սրնդուկներին աչք դրեցի։ Ինքս չքավոր ընտանիքից եմ։ Մեզ համար հարստությունը արտասովոր բան էր։ Եվ ահա նա ինձ ցույց տվեց, թե ինչպես են մախաթով մաթ ուտում։ Ինքն էլ վտիտ, թուլակազմ կնիկ էր։ Նրան ամենևին հակառակ գնալ չէր լինի, կոկորդդ կկրծեր։ Աստված ոչ անի, ընչաքաղցության պատճառով ինչքան եմ ես տանջանքներ կրել։

— Երեխաներ ունե՞ք,— հարցրեց Կարաբանովը՝ զարմանալով եսաուլի սրտաբաց խոստովանությունից։

— Մի աղջիկ։ Լիզավետա է անունը։ Լավ աղջնակ է։ Անընդհատ գրքերի, հա գրքերի մեջ է գլուխը կոխում... Լավ, գնացինք առաջ, պետք չի ժամանակ կորցնել։

Անքուն գիշերն անցավ շրջագայության մեջ։ Լույսը բացվում էր դանդաղորեն, ասես դժկամությամբ։ Հովիտների վրա կախված մառախուղը անշտապ հալվում էր։ Հիսնյակները գնում էին ինչ-որ նեղ, բայց փրփրաբաշ-գետակի երկայնքով, որից այն կողմ թուրքերն էին։

— Հրեն,— մտրակը թափահարեց եսաուլը,— այնտեղ արդեն մեր ոչխարները չեն արածում։ Այսինքն,— ճշտեց նա,— հաշվիր, որ դրանք էլ մերն են, քանի որ գիշերները քրդերը մեր գյուղերից են հափշտակում...

Ջոկատը հետ էր վերադառնում Իգդիր, և կազակները հիմա արդեն առանց քաշվելու ֆսֆսացնում էին թամբերի վրա։

— Պատերազմ կլինի,— հանկարծ կիսաբերան ասաց Վատնինը՝ ոչ ոքի չդիմելով, և խոր, սրտաճմլիկ հոգոց հանեց։

Կարաբանովը նույնպես մտածեց պատերազմի մասին, բայց նրա վախը ուրիշ էր. նա գիտեր, որ հարյուրյակը քիչ

է հավատում իրեն, իր մեջ տեսնում է օտար, անհասկանալի մարդու, և այդ հավատին Անդրեյը կարող էր արժանանալ միայն ինչ-որ կատաղի, խիզախ սրամարտերում։

— Կլինի,— ոչ անմիջապես արձագանքեց նա,— պատերազմ կլինի, Նազար Մինայիչ, միայն ոչ թե դու պետք է հոգոց հանես, այլ՝ ես...

Եվ հանկարծ մի կիրճից արաբական նիհար նժույգի վրա փոթորկի պես դուրս թռավ մի քուրդ և, ձին ծառս անելով, սկսեց պարել իրենց ափին ու հրճվանքով բղավել.

— Հե՜յ, գյավո՜ւր, գյավո՜ւր։ Բոլորովին վատ գյավուր, հյուր չի կանչել։ Օսման լավ, արի, ասում է, հյուր, իսկ ուռուս՝ չէ, ուռուս ժլատ...

Կազակները գնում էին լուռ. միայն երբեմն ծուլորեն թքում էին գետի սահանքներում եռացող փրփուրի մեջ։ Իսկ քուրդը ծիծաղում էր. նրա ձին սատանայի պես պտտվում էր, և հագուստները վազվզում էին։

Այդ քուրդը երևի հարուստ էր և հագնված էր ահա թե ինչպես՝ ուսերի մեջից կտրված ունեցող թեզանիքով մորեգույն պատմուճան, ոսկեգույն քուղերով կապույտ շալվար, վազվզուն շալից գոտի, գեղին սեկե ճաքակոշիկներ, գույնզգույն թաշկինակներով ոլորված բարձր շալմա, կողքից կախված կեռ սուր, իսկ ձախ արմունկի վրա՝ գոմշի կաշվից վահան, որը ներսից ամրացված էր պղնձյա ցանցով։

— Վատ գյավուր, պիղծ,— գոռում էր նա գետի մյուս կողմից,— իմ շուն թքել... գյավուրին խաշել երկար... մեկ օր, երկրորդ գիշեր... Նա գարշահոտ, գյավուր։ Ուռուսի ականջ կտրել. վատ ականջ, յուղոտ չէ...

Կազակները լռում էին, բայց արդեն սկսել էին իրենց փափախների տակից խեթ նայել դեպի մյուս ափը։ Միայն Վատնինն էր, որ կարծես ոչինչ չէր լսում՝ ինչպես գնում էր առջևից, այնպես էլ շարունակում էր։ Վերջապես քուրդը սպառեց իր սրամտությունը և, հետ դարձնելով նժույգը, բարձրացրեց նրա պոչը, շարունակելով գոռալ.

— Էյ, ուռուս, ահա քո կնիկ... ահա քո աստված... իմ ալլահ բարձ, քո աստված պոչի տակ ապրի...

Հետո քրդի երևակայությունը ավելի հեռուն գնաց. կանգնելով ասպանդակների վրա՝ նա սկսեց վրայից իջեցնել շալվարը։ Դենիսկա Օժոգինը չդիմացավ, սաստելու համար կրակեց՝ չկպավ, և քուրդը նորից ծիծաղեց։

Կարաբանովը հանկարծ մտածեց, որ եթե այնպես պատահի, որ թուրքական հորդան ասպատակի քնած Իգդիրը, ահա այս անասունը կարող է անկողնու միջից գերել՝ դեռ տաք, մի շապիկով, գլուխը կորցրած, ոչնչից անտեղյակ և այդ անտեղյակության մեջ խղճալի իր Ագլայային...

Դա նրա համար բավական էր։

— Պարոն պորուչիկ,— ճչում էին նրա հետևից,— վերադարձի՛ր, ձերդ բարեծնություն... Ո՞ւր ես գնում։

Սկսեցին ճայթել փութագար կրակոցները, բայց Լորդն արդեն կրծքով ճեղքում էր սրընթաց հոսանքը։ Նրա սմբակների տակ չուգունե գնդերի պես գլորվում էին քարերը։

Անդրեյը հազիվ հասցրեց դուրս քաշել սուրը, երբ նրա վրա շեշտակի ուժով և վճռականությամբ լի հարձակվեց թուրքական բաշիբոզուկը։ Պողպատի զրնգոցը սարսափ գցեց պորուչիկի սիրտը, սակայն ուժեղ ձիերը նրանց տարան տարբեր կողմեր...

— Այ, հիմա՛ր, այ, հիմա՛ր,— մյուս ափից լսվում էր Վատնինի ձայնը...

Պաժային դպրոցում նրան սուսերամարտ էր սովորեցրել Ֆրանսիացի Շետարդին՝ ուրախ ու թեթև, ինչպես Ֆիգարոն։ Նա սովորեցրել էր նաև թեթև ու գեղեցիկ մենամարտել։ Սակայն այժմ Կարաբանովի առջև կանգնած էր ոչ թե ազնիվ մի հակառակորդ, այլ ձիու վրա պտտվող մի բարբարոս, ավազակ, և ոչ թե նուրբ, գրեթե ոսկերչական վարպետությունն էր շարժում նրա սուրը, այլ ավազակի անասնական բնազդը, շահի և արյան ծարավը...

Կազակները, իհարկե, կգնային պորուչիկին օգնության, բայց լեռնային ջրերի ոռնացող թաթառը վախեցնում էր նրանց ձիերին, և Կարաբանովին հասնում էին միայն նրանց խորհուրդները.

— Խփի՛ր աջից։

— Վահանի մեջ խրի՛ր, խրի՛ր...

— Մի՛ թող երասանակից բռնի...

— Թրատիր և ոչ թե խոցիր. նա զրահ ունի...

— Արմունկը կշնչցու, կկտրի...

Հարմար պահ գտնելով, Անդրեյը ներքևից խփեց՝ հետ մղելով թշնամու սուրը, և ինքն էլ չնկատեց, թե քրդի վահանը երբ երկու կես եղավ։ Սրի շեղերով ևս երկու-երեք հարված՝ «Այսպես,— որոշեց պորուչիկը,— այժմ նրան կվերցնեմ ֆինտ-գարդեով»։

«Վը՜ժժ»,— թափով վրա եկավ սուրը, բայց այդ ոչլոտ սողունը հասցրեց խույս տալ հարվածից...

— Այ գյավուր, այ գյավուր։

— Լոի՛ր շուն,— գոռաց Անդրեյը։

Վը՜ժժ... Վը՜ժժ... ձը՜նգ... ձը՜նգ...

Ձիերը կրծում են մեկը մյուսին, գազանացել են։

«Ահա ա՜ռ քեզ, ստացիր», և քրդի սուրը զրնգոցով թռավ գետի վեր, նա հազիվ հասցրեց բռնել փոկից։

— Ճարպիկ է սատանան,— գետի այն ափից լսվեց Վատնինի գովասանքը, բայց ում էր դա վերաբերում՝ իրե՞ն, թե՞ քրդին, Անդրեյը չհասցրեց որոշել։

Վը՜ժժ, վը՜ժժ...

— Այ գյավո՜ւր, ինչո՞ւ այդպես...

Այնուամենայնիվ, ինչ էլ ասես, շնորհակալություն քեզ, մբսյո Շետարդի, այդ վայրենին արդեն չի հարձակվում, այլ միայն պաշտպանվում է...

Լսվեց «ղը՜րթ», և Անդրեյն իջեցրեց սուրը։ Ընկնելով ձիու բաշատակին՝ քուրդը միանգամից թուլացավ և թամբի վրայից սողաց գետին։

«Մի՞թե այդքան հեշտ է մարդ սպանելը»,— մտածեց Կարաբանովը և զարմացավ, որ իր մեջ չկա ոչ մի խղճահարություն։ Նա երկար ժամանակ կորցրեց, մինչև բռնեց քրդի անհնազանդ արաբական նժույգը և տվեց Օժոգինին.

— Վերցրու,— շռայլությամբ ասաց պորուչիկը։

12

Տեղի ունեցավ տհաճ խոսակցություն։ Պոտրեսովը փոզոցում բռնեց նրա թևից, գողունի, խղճուկ տեսքով նայեց շուրջն ու հարցրեց.

— Անդրեյ Ելիսեիչ, ներեցեք, խնդրեմ, բայց... Դուք չե՞ք կարող փոխարինաբար մի քառասուն ռուբլի տալ։

— Գիտեք, մայոր,— ասաց Կարաբանովը,— ես վաղուց էի սպասում, որ դուք ինձանից դրամ կխնդրեք։ Ինձ նույնիսկ նախազգուշացրել էին, որ ձեզ դրամ չտամ։

— Հա՞, ո՞վ։

— Կապիտան Շտոկվիչը։

— Աստվա՜ծ իմ, ի՞նչ վատ բան եմ արել նրան,— տրտմեց մայորը։— Օգնեք հոգյակս, եթե կարող եք։

— Եվ ես,— ավարտեց իր խոսքը Անդրեյը,— իհարկե, հաճույքով ձեզ կօգնեի։ Ես ուշադրություն չեմ դարձնում բամբասանքներին։ Բայց, ավա՜ղ ինքս եմ առանց կոպեկի։

Պոտրեսովը մեկեն մի տեսակ կուչ եկավ, սմքեց մարմնով, ուսադիրները թեքությամբ կախվեցին ուսերի վրա։

— Դուք չեք հավատա, բայց այնքան պետք է, այնքա՜ն պետք։ Գոնե մի քսան ռուբլի։— Եվ մայորի դեմքը լացակումած ձգվեց, նա խղճալի դարձավ, աչքերն այնքան բարի ու մաքուր էին ինչպես երեխայի աչքեր...

Կարաբանովը գրպանից հանեց թանկագին ծխախոտատուփը, որը ստացել էր Կրասնոյե Սելոյում, ձիարշավների ժամանակ որպես մրցանակ, մեծ իշխանուհի Եվգենիա Մաքսիմիլիանովնա Լեյխտենբերգսկայայից։ Անդրեյը հույս ուներ, որ պլատինե պայտի մեջ ագուցված ադամանդի խոշոր կտորի արժեքով մի օր լավ քեֆ կանի։

— Ուղարկեք ձեր սպասյակին մեյդանի դրամափոխների մոտ,— շռայլորեն թույլ տվեց նա մայորին։— Վերցրեք ձեզ ինչքան պետք է, իսկ մնացածը կծախսենք Էրիվանում։ Վերցրե՛ք...

— Ո՜չ, ի՜նչ եք ասում, շնորհակալություն, բայց... ես չեմ կարող ձեզ զրկել այդպիսի իրից։ Ներեցեք ինձ...

Պոտրեսովը կորացած հեռացավ։ Եվ ցավալի էր, և տհաճ, որ չհաջողվեց օգնել մարդուն դժբախտության մեջ։

Կարաբանովն շտապեց անհետանալ զորանոցում։

— Ո՞ւր եք մտադիր գնալ, Շտոկվիչ,— հարցրեց նա։

— Ձեմ ուզում, գվարդիոնուս, բայց հարկավոր է։ Էրիվան եմ գնում։

— Ինչո՞ւ չեք ուզում,— ալարկոտ ժպտաց Անդրեյը։— Այնտեղ կարելի է գոնե մի քիչ կոնծաբանել։

— Եթե մենակ գնայի,— համաձայնեց Շտոկվիչը,— հա-

վանաբար լավ կհարբեի։ Բայց ինձ հետ է նաև գնդապետ Խվոշչինսկին... Ինքը չի խմում, ուրիշներին էլ թույլ չի տալիս։ Համաձայնեք, որ դա մարդկանց ամենազզվելի կատեգորիան է։

— Եվ երկա՞ր ժամանակով,— հարցրեց Անդրեյը, իսկ իր կոկորդն արդեն չորացել էր, ինչպես այն ժամանակ, ճանապարհային պանդոկում, երբ առաջին անգամ լսեց Ագլայայի անունը։

— Սատանան գիտի, պորուչիկ,— շարունակելով պատրաստվել, պատասխանեց Շտոկվիշը,— Ամեն ինչ կախված է խորհրդակցությունից։ Մեկ կամ երկու օր, հավանաբար։ Իսկ հետո կարծում եմ, որ սահմանը բաց կանենք էշելոնների համար։ Տեր Թագավորը, ասում են, արդեն դուրս է եկել մայրաքաղաքից և ուղևորվել Չիշնև...

Շտոկվիշը գնաց, և Կարաբանովը մենակ մնալով՝ ծանր մտածմունքի մեջ ընկավ. այդպես նախապատրաստում են դիշերային սպանությունը, այդպես բանսարկուները նյութում են իրենց զրպարտությունները, այդպես խաղամոլները որոշում են վերջին խաղաթղթի բախտը։ Այս դեպքում Անդրեյի համար հեշտ չէր... Երիտասարդ, արագաշարժ, ամենևին էլ ոչ հիմար, զգացմունքներով պոռթկացող. նա երբեք անհարմար չէր զգում ամուսնացած կնոջ սիրեկան լինելու համար և հավասար հաջողությամբ օգտվում էր սկսած Պոլյուստրովյան ջրերի մոտ գտնվող ամառանոցային անառականոցներից և վերջացրած տարիքավոր ազնվական կանանց քնքշանվաղ բուդուարներով։ Սակայն Ագլայայի նկատմամբ նա միշտ ազնիվ է եղել. նրա կողքին ինքն էլ ուրիշ էր դառնում՝ ավելի լավ և ավելի մաքուր...

Սակայն այժմ, նախկին կյանքից կտրված, կայսրության ամենահեռու ծայրամասը նետված, որտեղ ոչ ոք իրեն չէր ճանաչում, և ինքը՝ ոչ ոքի, Կարաբանովը մենակ էր, և Ագլայան նրա անցյալի վերջին օղակն էր։

«Ագլայայի նկատմամբ վաղեմի տենչը, ինչպես հողի գրվանի տակ երկար ժամանակ պառկած հատիկ, հանկարծ հասունացավ և բարձրացավ որպես թարմ, կանաչ մի շիվ, որպես սեր»,— այդպես էր ուզում մտածել Կարաբանովը այդ զգացմունքի մասին։

Եվ ամբողջ օրը տոթ Իգդիրում նա ման էր գալիս հարբածի նման, մի տեսակ քաղցր կիսաքուն վիճակում։ Ցերեկային լույսի տակ նրա աչքին այնպիսի բաներ էին երևում, ինչը մարդ կարող է տեսնել միայն գիշերը։ Այդպես էլ է լինում։ Դե, մարդ ի՞նչ կարող է անել։

Նստեց հողաթմբի վրա՝ պրապորշչիկ Լատիշևի հետ շախմատ խաղալու։ Թեև պրապորշչիկը Անդրեյից վատ էր խաղում, սակայն իր մեկնաբանություններով ջղայնացնում էր նրան։

— Վերցնում եմ ձեր ձին,— նախազգուշացնում էր պորուչիկը։

Մտորումների մեջ, վերցնելով ձիու ֆիգուրային փոխարինող Սմիտ-Վասոնի փամփուշտը՝ Լատիշևը պաթոսով գոչեց.

— Ի՞նչ ես ենթադրում, իմ փութաջան նժույգ, ինչո՞ւ ես գլուխդ կախել...

Կարաբանովը ասաց.

— Այստեղ կարող եք խաղալ փիղը։

Եվ պրապորշչիկը, ձեռքը գցելով զինվորական համազգեստի կոճակին, որը փոխարինում էր շախմատի ֆիգուրային, հիշեց Կոիլովի առակից.

— Իսկ փիղը ես չեմ նկատել...

Վերջապես այս ամենը ձանձրացրեց Անդրեյին, և նա շախմատի տախտակը՝ փամփուշտներով ու կոճակներով, շուռ տվեց գրողի ծոցը.

— Դե՛, ի՞նչ եք անում, պրապոր, գիմնազիստի նման քրեստոմատիա՞ եք այստեղ սերտում։ Խաղում եք՝ խաղացեք, իսկ ինձ լուսավորել խորհուրդ չեմ տալիս...

Անդրեյը չգիտեր ինչով զբաղվել, գնաց շուկա։ Ջայրությունից գլուխն ազատելով՝ նա նետվեց այդ խայտաբղետ, մոլեգին հորձանուտի մեջ։ Աղմուկն ու հոհոցը խլացնում էին նրան։ Կարաբանովը քիշմիշ էր ծամում, մատները մտցնում կուպրի տակառի մեջ, գիտակի պես եղունգներով կտկտացնում կճումները։ Ջարահճիությունից ձգեց մի գեղեցկուհու չադրան, որ գործված էր ձիու մազից, և ի պատասխան նրա հանդգնության, ալևոր տիրակալը՝ հաստաքիթ կեղտոտ մի ասորի, խուլ ֆշշոց հանեց։

— Դե մի ֆշշացրու,— ասաց Անդրեյը խանդոտ մարդուն,— ահա, ես քեզանից գնում եմ այս փիրուզը...

Ինչ-որ մեկը ձեռքը դրեց նրա ուսին. դա Կլյուգենաուն էր։

— Խորհուրդ չեմ տալիս գնել,— քմծիծաղով ասաց բարոնը,— փիրուզը՝ չարագուշակ քար է։ Նա հարյուրամյակների ընթացքում աճում է անհույս սիրուց մահացած մարդկանց ոսկորների վրա։ Ավելի լավ է գնանք ինձ հետ և լսենք աղքատ աշուղների երգը։

Վտիտ մեջքով հենվելով քարվանսարայի պատին՝ աղքատ պարսիկը նստած էր արևկեզ տեղում՝ սև, բորիկ ոտքերը չուած։ Նրա ներս ընկած թաց բերանը կիսաբաց էր, շուրջը ուտույտ էին տալիս ամառային կանաչ ճանճերը։ Նա հագել էր ռուսական կիսամուշտակ, բրդյա երեսը շուռ տված։ Նրա՝ արևայրուքից բրոնզի գույն ստացած մերկ կրծքի վրայով դանդաղ հոսում էր կեղտոտ քրտինքը։ Աղքատի դեմքը փայլատ կանաչավուն էր, և նեղ աչքերը թախծորեն նայում էին սպաներին։

— Արևելյան սոխակ անզուգական Ռուբինին՝ Բայազետից,— ասաց Կլյուգենաուն և երգչի առջև դրամ գցեց։

Երգիչը թիկունքից հանեց մի պղնձե ափսե։ Նրա երգի առաջին հնչյունները տխուր էին և հիշեցնում էին հեռավոր արձագանքը լեռներում։ Բայց ահա երգիչը աշխուժացավ, բարձր նոտան, դողդողալով և թրթռալով, սլացավ դեպի փոշոտ երկինք։ Լարվածությունից աղքատի ոտքերի մատները լայն չվեցին։ Նրա պարանոցի սուր ու կոշտացած խնձորակը կտրուկ վեր ու վար գլորվեց քրտինքից թրջված մաշկի տակ, և նա դեմքը ծածկեց ափսեով.

— Աստվա՜ծ իմ,— զարմացավ Կարաբանովը և ակամայից ցնցվեց. այդ մեղեդիում նա լսում էր իր ցանկությունների արձագանքը, երգի հնչյունները, ասես հալած կաթիլներ, թափվում էին նրա վրա։

— C'est étonnant! Mais on n'y peut rien comprendre[1],— ավելացրեց նա՝ կրկնելով ռուսերեն։— Զարմանալի։ Սակայն այստեղ ոչինչ չի կարելի հասկանալ...

[1] Այստեղ և այնուհետև պահպանվում են օտար լեզուներով բերված բոլոր քաղվածքների ռուսական բնագրերը։

— Ուշադրություն դարձրեք,— մտածկոտ ասաց Կլյուգենաուն,— այս աշուղը մի նոտան միահյուսում է մյուսի հետ, ինչպես թանկարժեք խորասանի գորգի թելերը։ Եվ ընդամենը, որտե՞ղ են այստեղ մարդկային շնչառության օրենքները, երբ նրա այդ թելերը անվերջ են։

— Ես այլևս չեմ կարող,— ասաց Անդրեյը և աշուղի դեմքից մի կողմ տարավ ափսեն։

Աղքատը, որ արդեն էքստազի մեջ էր ընկել, շարունակում էր իր մեղեդին, և հիմա միայն պորուչիկը տեսավ, թե նա ինչպիսի ջանքեր էր գործադրում երգելու համար։ Նրա դեմքը այլակերպվել էր տառապանքից, ծռմռվել ու անճոռնիացել, դարձել գրեթե զզվելի...

— Ահա քեզ էլի,— աղքատին դրամ գցեց պորուչիկը և այդ պահին նկատեց Ագլայային։

Մտացիր շուրջը նայելով՝ նա անցնում էր ամբոխի միջով, իսկ հետևից գնում էր ամուսնու սպասյակը՝ բանջարեղենով լցված վիթխարի զամբյուղը ուսին։ Հրմշտելով չարչիների ամբոխը՝ Անդրեյը նետվեց նրա հետևից, բռնեց արմունկից.

— Ագլայա, սպասի՛ր... Դու ինձ պետք ես... սպասի՛ր։

Ագլայան կանգնեց։

— Քո ինչի՞ն եմ պետք, Անդրեյ։

— Ես քեզանից զրկված եմ եղել ամբողջ երկու տարի։ Իսկ հիմա, երբ դու իմ կողքին ես, երբ դու ինձ սիրում ես...

— Ես քեզ չեմ սիրում, Անդրեյ։ Չէ՛, չե՛մ սիրում։

— Դա ճիշտ չէ, ես հո տեսնում եմ՝ նույնիսկ քո դեմքն է փոխվել։ Սովորական ծանոթներին այդպես չեն դիմավորում... Ես այսօր կգամ քեզ մոտ։

— Չհամարձակվես անգամ մտածել։

Մարդկանց հոսանքը պտտեցրեց նրանց հորձանուտում և տարավ իր հետ։

Անդրեյը բաց չէր թողնում կնոջ թևը։

— Դե ասա գոնե մի բառ,— խնդրում էր նա։

— Հեռացի՛ր, Անդրեյ։ Հրեն սպաներ են գալիս։ Աստվա՜ծ իմ, ի՞նչ պետք է ասեմ տանը։

— Ագլայա, ասա՛, դու մտածո՞ւմ ես իմ մասին, հը՞։

— Ո՛չ, Անդրեյ, չեմ մտածում։

— Դե, ուրեմն ես կգամ քեզ մոտ և կստիպեմ մտածել...

— Անդրեյ, սիրելիս,— Ագլայան կանգնեց։— Մոռացի՛ր ինձ... Եվ չհամարձակվես գալ. ես սպասյակին կնստեցնեմ գետն մոտ, և նա քեզ ներս չի թողնի...

Այդ օրն անցավ հեղձուցիչ շմոլքում։ Երեկոյան ընդունեց ուրյադնիկի զեկույցը։

— Ձիերը ողջ են,— ասաց Տրյոխժոնևին։

— Իսկ մարդի՞կ,— հարցրեց Անդրեյը։

— Ողջ են,— հագոց հանեց ուրյադնիկը։— Մարդիկ ձիեր չեն, նրանց ոչինչ չի պատահի։ Իսկ ահա ձին...

— Ես քեզ արդեն ասել եմ,— զայրացավ պորուչիկը,— որ զեկույցը հարկավոր է սկսել մարդկանցից և ոչ թե ձիերից... Հասկացա՞ր։

— Դեհ, այստեղ ինչ կա չհասկանալու... Ահա ես էլ ասում եմ, որ ձիերը ողջ են և մարդիկ նույնպես...

Վրա հասավ գիշերը։ Կարաբանովը հանդգնորեն որոշեց խնայողության գիմել։ Ինչպես և պետք էր սպասել, դռան մոտ սպասյակ չկար։ Բայց դռները ներսից ամուր փակված էին։ Անդրեյը կամաց ծեծեց։ Թափառական մի շուն մթության միջից մատեցավ նրան և, պոչը թափահարելով, սկսեց հոտոտել շինելի փեշերը։

— Գնա՛, գնա՛,— ասաց նա շանը,— ես հիմա քեզանով զբաղվելու տրամադրություն չունեմ...

Ճրագանցելով խրճիթը՝ Կարաբանովը մտավ մամխի փշոտ թփուտների մեջ։ Դուրս պրծնելով կպչուն ոստերից՝ մոտեցավ վարագուրված լուսամուտին։ «Հավանաբար այստեղ է»,— որոշեց նա Պահելով սուրը՝ Անդրեյը ուրքերն անձայն անցկացրեց լուսամուտագոգից այն կողմ...

Ագլայան խոր քնած էր լայն թախտի վրա՝ թափանցիկ ու պայծառ։ Պորուչիկը կամաց նստեց նրա կողքին, դցեց նրա ծունկը։

Ագլայան չշարժվեց։

— Ագլայա՛,— շշնջաց Անդրեյը,— արթնացի՛ր...

Կինը արթնացավ լարումով, արագ վեր թռավ տեղից՝ միայն գիշերանոցով, բոբիկ, վազեց պատի մոտ։

— Վա՛յ, ո՞վ է այստեղ։

— Մի՛ վախեցիր, ես եմ...

— Ինչո՞ւ ես եկել։ Չէ՞ որ ես քեզ խնդրեցի...

— Ներիր,— ասաց նա։

— Հեռացի՛ր հենց հիմա, Անդրե՛յ։

Կարաբանովը դանդաղ մոտեցավ նրան։ Երբ նա համբուրեց, կնոջ շուրթերը դողդողում էին։

— Դու սիրո՞ւմ ես ինձ,— հարցրեց։

Ագլայան լռում էր։

— Ինչո՞ւ ես լռում։

— Ես կկորչեմ քեզ հետ։

— Դե, թող այդպես լինի,— ասաց նա, և շինելը, ուսերից սահելով, բնկավ հատակին...

— Անդրե՛յ,— արդեն չպաշտպանվելով և միայն դեմքը ծածկելով՝ աղերսում էր Ագլայան։— Ախր ի՞նչ ես անում։ Անդրեյ։ Հեռացի՛ր, չէ՞ որ խնդրեցի...

— Ես այսպես եմ ուզում,— պատասխանեց նա և շարունակեց փաղաքշել՝ դաժանորեն ու անամոթաբար...

Եվ երկրորդ գիշերը նորից եկավ։ Ագլայան պառկած էր նրա առջև՝ արդեն բոլորովին հոլանի ու երկչոտ։

— Դու իմ սիրելի,— ասում էր Ագլայան։— Ես նույնիսկ չգիտեի, որ այս բոլորը այդպես... այդպես լավ է։ Եթե կյանքում ինձ ուրիշ ոչինչ չմնար, ապա արժեր ապրել՝ քեզ պատկանելու համար... Համբուրիր ինձ նորից, Անդրեյ։

Նա համբուրեց Ագլայային։

— Ասա՛ծ, ի՞նչ կլինի հետո։ Դու գիտե՞ս։

— Ո՛չ,— խոստովանեց Անդրեյը։

— Ես էլ չգիտեմ...

...Առջևում Բայազետն էր։

Գիշերային հեծյալները

Ապրիլի 24-ին բազավորը ժամանեց Քիշնև և ստորագրեց պատերազմի մասին մանիֆեստը... Մենք չէինք կարող կանխատեսել այն ամենը, ինչ ընկած էր Աղրիդաղի լեռնանցքի մյուս կողմը, սակայն ինքնաթիռյան «Բայազետ» բառի հենց արտասանելն իսկ արդեն զրգռում և բորբոքում էր մեր երևակայությունը: Հեռվից նա մեզ նույնիսկ նոյակապ էր թվում: Բանակի գրլխավոր ուժերը նետված էին Ղարսի վրա և Եփրատի հովիտը: Գեներալ Տեր-Ղուկասովն անջատեց մեզ իր զորախմբից, և գնդապետ Խվոշչինսկին մեր առջև բաց արեց Բայազետի դարպասները: Այդ հիանալի մարդուն ես միշտ կհիշեմ հատուկ հարգանքով...

Շտաբս-կապիտան Ցու. Ֆ. Նեկրասով

1

Լեռներում դեռ ձյուն կար, երեք օր անընդհատ հորդառատ անձրև էր թափվում՝ խմորելով առանց այն էլ վատ ճանապարհները, հետո գիտնի վրա թափվեց արևի անտանելի հուրը, ցեխն արագորեն մոխրացավ, դարձավ դառը փոշի, և այդ ժամանակ փոշու միջով, անիծելով և կուլ տալով այն, շարժվեց Էրիվանյան զորախմբի Բայազետի էշելոնը...

Արարատը կանգնած էր ինչպես առասպելական երկգլխանի մի հսկա՝ ձյունածածկ կատարները երկնքի կապույտի մեջ մխրճած: Նա ճանապարհի ձախ կողմում էր, իսկ ճանապարհը ասես սատանան էր այստեղ գցել, անկանոն ցիրուցան տվել քարերը, արմատահան արել ծառերը, ոլորել, խճճել և, ի սարսափ ճամփորդների, կիրճերի վրա թեթև, ճոճոան կամրջակներ գցել: Օրգովյան պահակակետ... Կազակային կազակները դադարեցնում էին ծառայությունը. պահպանելու բան չկար, քանի որ բանակն առաջ էր անցել: Ճանապարհը թեքվում էր աջ, ապա շարունակ դեպի վեր ու վեր... Ջինգիլյան լեռնանցք. մինչև անցնես, արդեն կուզենաս շապիկդ փոխել, չսիրած կնոջդ կհիշես, երդվյալ թշնամուդ վիրավորանքը կներես:

Աղրիդաղ—այդպես է լեռնային սարսափների անունը:

— Փա՜ռք աստծո,— խաչակնքում են տարիքավորները, երբ լեռնանցքը վերջանում է,— այժմ, կարծես, երկնքից երկիր ես իջնում...

Եվ հանկարծ ոլորանի հետևից կանչում է աքաղաղը, սանդղամուտք է դուրս գալիս պանյովա[1] հագած և ուլունքներով զարդարված մի աղջիկ՝ Ալյոնան, զրնգում են անկտիից կախված դատարկ դույլերը, զրուցում են պատերի տակ հողաթմբերի վրա նստած ծերունիները, տների քանդակազարդ լուսամուտները բացվում են կիրճի վրա, երդիկներից տանիքների վրա տարածվում է թարմ հացի սուր բուրմունքը:

Բայց ոչ, այստեղ զինվորին խմելու ջուր չեն տա, աբցունք չեն թափի նրա ճակատագրի համար, ուղեկցելով մինչև

[1] Պանյովա — *տնահյուս գործվածքից շրջազգեստ:*

գյուղի ծայրը՝ պառավ տատիկը նրա պայուսակի մեջ խաշած ձվեր չի դնի, մի կում կաթ չեն տա խմելու։ Մոայլ ու զայրացկոտ անցնում էին ռուսական գինվորները այդպիսի գյուղերի միջով։ Մոլեկաններ և դուխոբորներ՝ փախստականներ Ռուսաստանից, որոնք քարձրաբերձ լեռների հետևում փնտրում էին իրենց հավատը։

— Մեկ-երկու, մեկ-երկու,— երբեմն բղավում էին սպաները։

Առաջ էր ընթանում բանակը՝ նրա միայն մի էշելոնը, իսկ քանի՞ այդպիսի էշելոններ են անցնում հիմա, և հայրենակիցներն արդեն ինչ-որ տեղ անցել են Դանուբը՝ սլավոններին ընդառաջ. այնտեղ երևի ավելի աշխույժ է...

Այ թե լեռներ ևք, հա՞,
Դուք իմ ուղղակիգ,
Բարձրաբերձ լեռներ։
Օ՜յ, թույլ ավեք, լեռներ,
Ձեզ մոտ հանգրվանել.
Օ՜յ, մի տարի չէ, որ այստեղ
Մենք պետք է անցկացնենք։

— Ո՞վ է այնտեղ ձայնը գլուխը գցել,— թամբի վրայից գոռաց Շտոկվիչը։— Կամ գուցե վաղուց դնչին չի՞ ստացել։ Վե՜ր տալ։ Այստեղ քարերը հազիվ են շնչում, ուր որ է կարող են դղրդյունով փլվել...

Իշան ավելի ներքև։ Ահա և հովիտները՝ աղուտներ, այգիներ և ջրաղացներ։ Այստեղ արդեն հայկական գյուղերն էին փռված կիրճերում, շամբուկի թփուտների մեջ։ Կենդանություն, մարդկային հոտ փչեց։ Ճանապարհը լայնացավ...

— Մեկ-երկու, մեկ-երկու...

Ջուրը ճղփում էր խոնավ խարիների մեջ փաթաթված տիկերում։ Քարերի վրա միտրալյոզների[1] նման ճռնչում էին լազարեթային գծակառքերը և դեղատնային երկանիվ սայլակները։ Դարուփոսերում կռնչում էին հրետանային ֆուրգոնները։ Հրթիռային հաստոցները[2], ասես հավանություն տալով այդ ամենին, եռոտանիներով վարուվեր էին անում ոլորտների վրա։ Վեհակերպ օրորվում էին օղակավորված ռանգներով ուղտերը. երանց սապատներին նռնակներով լցված արկղեր էին, կողքից կախված էին փամփուշտներով լցված խուրջինները, գուռապերչից լաստեր՝ գետերն անցնելու համար։ Էշելոնի հետևից ծուխ էին բարձրացնում շարժական դարբնոցները։

Երկու դաբրին՝ մի եֆրեյտոր և մի զինվոր, տեղնուտեղը հանելով համազգեստը, մուրճերով զարնում էին երկաթին, ջանում հետ չմնալ էշելոնից։ Եվ զորախմբի բոլորովին պոչում, փոշու ամպերի մեջ կորած, հովիվների մահակի տակ մայլով ու բառաչելով քարշ էր գալիս ոչխարի հոտը՝ Բայազետի կայազորի ճարպի ու մսի պաշարը։

Գնում է զինվորը, քայլում է զինվորը։ Ամբողջ պատերազմի համար նրան տվել են 182 փամփուշտ, և ֆելդֆեբելները նրան սովորեցրել են այսպես՝

— Դո՛ւ, անտաշ ռամիկ, երբ կրակոց տուր, հետո վազիր, թե որ կենդանի տեղ հասնես, սվինով խոցիր նրան՝ անօրենին, իսկ հրաձգության մասին մոռացիր, որովհետև դա քո խելքի բանը չէ...

Սպաները ֆելդֆեբելներին սովորեցնում էին այլ կերպ.

— Հասկանա՞ւմ ես, եղբայր, այսպիսի բան. դե ինչպե՞ս քեզ բացատրեմ ավելի հասարակ ձևով... Ախր զինվորը տգետ է, իսկ ինքդ գիտես, նրան դժվար է սովորեցնել։ Իսկ այսպես թող ինքը սվինով կռվի, տգետի համար դա ավելի հասկանալի է...

Գեներալները սպաներին սովորեցնում էին ավելի ճշգրտորեն.

— Պարոնա՛յք, թող Եվրոպայում հնարեն ինչ ուզում են։ Տեխնիկա, և նման այլ բաներ... Մեկնույն է, Եվրոպացիները ոչ թե նրանց, այլ մեզ մոտ են եղել։ Մեր մուժիկը, փառք

---

[1] Միտրալյոզ— կարտեչթենդանոթի մի տեսակ։

[2] Հրթիռային զենքը կիրառություն է գտել 1877—1878 թթ. պատերազմում, թեև այն հեռու էր կատարելությունից։ Այն ժամանակվա ռուս սպաները հրթիռներին վերագրում էին ուժեղ բարոյալքող ներգործություն թշնամու, հատկապես հեծելազորի վրա։ Արտաքին տեսքով հրթիռային հաստոցը հիշեցնում էր ժամանակակից ականանետը։ Ռուսական բանակի սպառազինությունից հրթիռները հանվել են անցյալ դարի ութսունական թվականներին (հեղ.)։

ստծո, անուս է, հարկավոր է միայն նրան թշնամու վրա բաց թողնել, իսկ այնուհետև գործն արդեն առաջ կգնա...

Գեներալներին նույնպես սովորեցնում էին, բայց այդ միտքը նրանց մատուցում էին արդեն ուրիշ կերպ.

— Սվինը, ձերդ գերազանցություն, ամենաարագ և վճռական արդյունքն է տալիս, ընդ որում բարոյապես ակտիվ ներգործություն է ունենում, մինչդեռ հրազենը նման արդյունք չի ունենում, և, խախտելով բարոյական հիմքերը, թուլացնում է հարձակման ներքին ուժը...

Գնում է զինվորը, քայլում է զինվորը։ Գնում է լեռնային արահետներով, որտեղ հետք է թողել թափառական վագրը. քայլում է հովիտներով, որտեղ աղմկում են ծաղկաղարդ այգիները, և ամեն մի այգում աճում է սալոր, դեղձ, թուզ, խուրմա կամ նրբահամ թութ։ «Ա՛յ թե կխժռենք, հա՜,— մտածում էին զինվորները։— Եվ տուն կտանենք, եթե չպառկենք խաչի տակ»։

Ուսապայուսակը ճնշում է վիզը, սակրային գործիքը խփում է կողքին, շուռումուռ է գալիս տափաշիշը, հրացանը հետ է քաշում ձեռքը, շինելի փաթեթը տրորում է ուսը, համազգեստի կոշտ օձիքը խրվել է կզակի մեջ։

— Մեկ-երկու... մեկ-երկու...

Գնում է զինվորը, գնում են 182 փամփուշտները՝

1-ը՝ պահեստատուփում,
85-ը՝ գոտկատեղում,
24-ը՝ ուսապայուսակում,
60-ը՝ վագենբուրգում,
52-ը՝ խուրջիններում,
10-ը՝ զումակում...

Այսպիսով՝ նա կարող է այդ պատերազմում կատարել 182 կրակոց, ոչ ավելի։ Գեներալները բոլորը հաշվել են՝ ոչ հարյուր, ու երկու հարյուր, այլ միայն 182։ «Տեսնո՞ւմ ես, Վանյուխա, մեծ գեներալները որքան ստույգ են, ճիշտ և ճիշտ այնքան, որքան պետք է»։ Միայն թե Վանյուխային հետաքրքիր կլիներ իմանալ՝ այդ ինչի՞ց է, որ երբեմն փամփուշտը հրացանի մեջ չի մտնում, նույնիսկ փորձել են փողից մտցնել, բայց էլի չի մտնում անիծվածը։

— Ձերդ բարեծնություն, էլի չի մտնում...

Նեկրասովը վերցնում է փամփուշտը, շպրտում փոսի մեջ.

— Սրիկաներ, դարձյալ այն տրամաչափի չէ...

Հանդիմանելով սպաներին՝ շտաբս-կապիտանն ասում է.

— Այնուամենայնիվ, դժվար է մեղադրել Միլյուտինին։ Մինիստրը հո ինքը չի տեսակավորի ըստ արկղերի։ Եվ որպես մինիստր, նա արդեն շատ բան է արել բանակի համար։ Բայց, պարոնայք, դեռ մինչդրիմյան ժամանակներից սկսած ամեն ինչ ընթանում է հին ձևով։ Ռեֆորմները միայն հարդարել են բանակը, սակայն հարդարման մոդան՝ գզգզված ման գալ, մնացել է նախկինը։ Զինվորներին պզտորում և փչացնում են գեներալները, որոնք այնպես են տարված այդ սվինով, ինչպես մուրացկանն իր նախշուն տոպրակով։ Այնպես է թվում, թե նրանք պատրաստ են իրենց սեփական որովայնի վրա փորձել սվինի առավելությունը գնդակի նկատմամբ։

— Ձեզ լսում են ստորադրյալ պաշտոնյաները,— նկատեց Շտոկվիչը։

— Եվ թող լսեն... Երբևիցե հարկավոր է վերջապես, որ հասարակ մարդն իմանա ճշմարտությունը։

Պոտրեսովը, վերուվար ցատկող հրետասայլին նստած, ծնկների մեջ պահում էր ուտելիքի կապոցը։

— Դուք միայն տեսնեք,— բղավում է նա հեռվից,— թե զինապահեստում ինչ են կոխացրել ինձ։ Սպառազինությունից վաղուց արդեն հանված երկու հազար նռնակ...

— Սատանան տանի,— ծիծաղեց Կարաբանովը,— գուցե ավել լավ է հե՞տ դառնալ։ Չէ որ թուրքերին սպառազինել են անգլիացիները...

Եվդոկիմովը ժպտալով կողքից նայեց նրան.

— Հավատացնում եմ, պորուչիկ, որ հիմա մեր զինվորը ընդունակ է հաղթելու նույնիսկ մահակով։ Ցանկապատից մի ձող կպոկի և... «Veni, vidi, vici»[1]։ Որովհետև, թեկուզ նա գորշ է, գնդաթիակով է կաղամբապուր խփշտել, եղևնու կոնով է քորել իրեն, բայց, միևնույն է, հասկանում է այս պատերազմի իմաստը..

[1] «Եկա, նայեցի, հաղթեցի» (լատ.)։

Գնդապետ Խվոշչինսկին կանգնեցրեց ձին, խոպոտ ու լարված ձայնով գոռաց զորասյան վրա կախված փոշու թանձրուքի մեջ.

— Պարոնայք սպաներ, խնդրում եմ մոտենալ ինձ։

Նրան շրջապատեցին Բայազետի էշելոնի տարադույն ձիեր նստած սպաները՝ օրվա ընթացքում գորշացած վերնաշապիկներով, որոնց վրա ուսադիրներն անգամ ծոմովել էին ուտիչ քրտինքից։

— Պարոնայք,— սկսեց Խվոշչինսկին, ձիու պարանոցի վրայից քշելով մի մեծ բոռի,— մեր առջև ընկած է Թուրքիան. ռուսական ճանապարհը վերջանում է, այդ քարերն ու ժայռերը արդեն մերը չեն... Ես չէ, որ պետք է բացատրեմ ձեզ այս պատերազմի սրբազան նպատակները, քանի որ մեզանից յուրաքանչյուրն այս բոլոր տարիներին խորապես տառապել է՝ հոգով, մշակույթով և արյունով մեր եղբայրներին օգնելու ցանկությամբ։ Ես շատ կուզենայի ձեզ բոլորիդ ցանկալ վերադառնալ հայրենիք, մեր բոլորիս սիրելի հայրենիքը, բայց... Դուք ինքներդ գիտեք, պարոնայք, որ դա, դժբախտաբար, անհնար է։ Սակայն ես համոզված եմ, որ բոլորն ազնվորեն կկատարեն իրենց պարտքը և չեն խայտառակի ռուսական փառապանծ զինվորականության պատիվը... Աղոթե՛նք միասին, պարոնա՛յք։

Սպաները հանեցին գլխարկները և սկսեցին խանդաղատագին խաչակնքել։ Իսմայիլ խան Նախիջևանսկին, իջնելով ձիուց, քարերի վրա փռեց մի փոքրիկ, նուրբ գորգ և, հետույքը ցցելով, սկսեց սրբազան նամազը։ Նրա սպասյակ Ասլանը կանգնած էր սրբիչը ձեռքին։ Կլյուգենաուն արմունկով հրեց Անդրեյին, և նրանք երկուսն էլ ժպտացին...

Նորից հնչեցին հրամանները.

— Առաջին հարյուրյակ, վարգով՝ երթագլուխ։

— Խոպերցիներ, շան որդի կուրկուլներ[1], ո՞ւր եք արշավում։

— Թմբկահարներ՝ մանրահարվածով։

— Իսկ դուք ո՞ւր, կանգնե՛ք, հետ-հետ։

— Շինելի փեշերը գոտկի՛ն, օձիքն արձակե՛լ։

[1] Կուրկուլ — կուլակ գյուղացի Ուկրաինայում։

— Ում ոտքերը հարված են, ուսապայուսակը կարող է հանձնել սայլորդներին...

Նորից սկսվեց ոլորանը, և այնտեղ, ուր ճանապարհը ուղղաձիգ իջնում էր կիրճի հատակը, միանալով պղտոր ջրի հոսանքին, բոլորը տեսան մի խաչ։

Ռուսաստանը վերջանում էր խաչով, որը կարծես ջնջում էր նախկին խաղաղ կյանքը, և հեռվում, ինչ-որ տեղ ժայռերի վրա արդեն բարձրանում էր իսլամի՝ յաթաղանի նման կորաձև կիսալուսինը՝ սլավոնների դառնությունների ու վիրավորանքների խորհրդանշանը։

Խա՜չ...

2

Ծուռումուռ ընկուզենու կտորներից պատրաստված հին, թեքված խաչն իր վրա պահպանում էր դեռևս թարմ խոր քերծվածքների հետքերը. երևի ինչ-որ գազան էր գիշերներն այստեղ եկել և նրա վրա սրել իր մագիլները։ Խաչի կողքին ընկած էր ժանգոտ թիթեղի մի ծոմոված կտոր, որի վրա դեռ կարելի էր կարդալ՝

> Տեր աստված, ընդունիր նոգոց հոգին խաղաղությամբ։
> Այստեղ հանգչում են անյուններ գեղապետ Տիմոֆեյի,
> ուրյադնիկ Անտիպիի և շարքային Նազարիի,
> որոնք ճանուն հավատի և հայրենիքի՝
> իրենց գլուխները դրեցին այստեղ 1829 թվականին։

— Ուղղել՛ խաչը,— կարգադրեց Շտոկվիչը։

Վատնինը կծեց մտրակի գզգզված ծայրը, թքեց մի կողմ, մտախոհ ասաց.

— Քսանինը թվին այստեղ դեռ իմ հայրն էր, ինչպես մենք հիմա, գնում Բայազետը խլելու Թուրքերից։ Ա՜յ թե սարսափներ են տեսել նրանք։ Երկու շաբաթ անընդհատ արևածագի հետ վեր են կացել, ինչպես բատրակներ, ու մինչև մութն ընկնելը պատ կազմած՝ մահացու սրամարտ են տվել։ Ոչ մի սպա չի մնացել։ Ոչ մի կաթիլ ջուր, ձիու միսն աղել են վառոդով... Ամբակազմ մի կտրիճ է եղել իմ հայրը։ Ես նրա համեմատությամբ մի փսլնքոտ եմ, նա ինձ օղաբլիթի նման կոլորեր և կնետեր վառարանի վրա...

Կարաբանովը հանգիստ ու համաչափ ճոճվում էր թամբին։ Զինվորների օղակաձև գլխարկների և կազակների փափախների վերևում, սվինների հետ վեր էին ցցվել մարտական դրոշները, որ փոշուց պաշտպանելու համար առել էին ծածկոցների մեջ։ Իսկ շուրջը, ուր էլ նայես, երևում էին սանձերն ուժեղ ձգած ձիերի դնչեր։ Սև, արևակեզ դեմքերով տեղի միլիցիոներները բաց էին արել սեպերը։ Եվ մարդկային այդ ժխորի վրա հուր էր թափում վառ կարմիր, անողոք արևը, որ կարծես կախ էր տված շարասյան գլխավերևում, փոշու գորշ պսակի մեջ...

Սակայն սահմանն անցնելու լուրն ստանալուն պես իսկույն դադարեցին աղմուկն ու խոսակցությունները, կազակները կանգնեցին երգը։ Ծանր, երկյուղալի լռության մեջ ինքնաստինքյան մեռան ծիծաղն ու կատակները։

Ոչ մի մարդ չկար, որ հետ չշրջվեր, չնայեր Կովկասյան լեռներին, որոնց հետևում փռված էր սիրելի Ռուսաստանը՝ ամբողջովին ծածկված ծառերի խիտ փշփշուկներով, գարնանային պղտոր առվակներով։ Ոմանք խաչակնքում էին՝ հազիվ սեղմելով շոգից վառված շրթունքները, ոմանք ողջույն էին ուղարկում դեպի հյուսիս՝ կրծքին սեղմելով գեղջկական խոնջ ձեռքերը։ Կարաբանովը նկատեց, թե ինչպես Օժոգինը օրորվեց թամբի վրա և հպվեց ձիու բաշին...

— Դենիսկա, դու դարձյալ հարբա՞ծ ես, սրիկա,— պուրուչիկը մտրակով թեթևակի խփեց նրա մեջքին։

Կազակը արցունքով լցված աչքերով նայեց սպային.

— Ոչ մի կաթիլ, ձերդ բարեծնություն։ Եթե չեք հավատում, հարցրեք ուրյադնիկին։ Տափաշիշը նույնիսկ չեմ արձակել...

— Ուրեմն, ի՞նչ է պատահել քեզ։

— Թախծալի է, ձերդ բարեծնություն։ Առաջին անգամ եմ թողնում հայրենիքը։ Կարծես օձ է կծում սիրտս... Թույլ կտա՞ք թախծից գոնե ջիգիթություն անել,— հարցրեց Դենիսկան։

— Կատաղած ես դու, ինչպես տեսնում եմ,— նկատեց մի տարեց զինվոր, որ կրում էր Պոդյոմկին բարձրագոչ անունը։— Ավելի լավ է դու հող վերցրու, հիմար, դա կմեղմացնի ցավը...

Դենիսկան թափահարեց ձեռքը.

— Իսկ ի՞նչ անեմ այդ չոր հողը։ Ես հրեն իմը ունեմ, դեռ ստանիցայից վերցրած.— Կազակը ծոցից հանեց գունավոր չթից քիսան։— Մայրիկս է կարել, ձերդ բարեծնություն,— ասաց նա զգացմունքով։— Երևի այստեղ մի արցունք չէ, որ կաթել է...

Կարաբանովը հանկարծ իրեն վատ զգաց։ Սատանան տանի, երբեք սենտիմենտալ չի եղել, իսկ հիմա զգաց, որ չի կարող իրեն զսպել և գուցե հիմարություն դուրս տա պրապորշչիկ Կլյուգենաուի ոգով։ Նա գազազած հայհոյեց և մեկ ձախից, մեկ աջից մտրակելով՝ առաջ քշեց իր լորդին։

Շուտով ամբողջ զորասյունը մնաց հետևում, և նա, արդեն բոլորովին մենակ, ձին քշեց դանդաղ քայլերով։ Շուրջն ամայի էր, գլխավերևում կախված էին ժայռերը, գունաթափ խոտերը թառամել էին արևի տակ։ Ներացած մի ագռավ, թողնելով լեշ կտցահարելը, անշտապ թռավ ձիու սմբակի տակից և քիչ էր մնում կպչեր պորուչիկի ճակատին։

Կարաբանովը ձին պահեց, և շուտով նրան հասավ Կլյուգենաուն։

— Ես ձեզ չե՞մ խանգարի,— հարցրեց նա և, հանելով ակնոցը, սկսեց մտախոհ սրբել ապակիները։

— Ոչ։ Ինձ համար միևնույն է։

Նրանք գնացին կողք-կողքի։

— Անկեղծ ասած,— սկսեց Կլյուգենաուն,— ես վախեցա ձեզ համար...

— Վախեցա՞ք։ Ինչի՞ց։

— Դե... Ինքներդ եք հասկանում, արշավեցիք շատ առաջ։ Մենակ։ Ի՞նչ կարող էիք անել ձեր ատրճանակով։

Կարաբանովը ձեռքը շնորհակալությամբ դրեց պրապորշչիկի թմբլիկ ծնկին.

— Շնորհակալություն, Կլյուգենաու,— ուղղակի ասաց նա։— Դուք ինձ լավ մարդ եք թվում, միայն թե, մի՛ բարկացեք, ձեզ հետ ինչ համար երբեմն ձանձրալի է...

Կլյուգենաուն, ուսերը թոթվելով, ոչինչ չպատասխանեց։ Երկար ժամանակ գնում էին լուռ։ Հետո, անուրախ հոգոց հանելով, պրապորշչիկն ասաց.

— Շիտակությունը միշտ էլ մի քիչ ձանձրալի է քա-

նի որ նրա դեմ չի կարելի խորամանկել, իսկ դա էլ հենց երևի ձանձրալի է։ Ես չգիտեմ ինչու, բայց դուք, Անդրեյ Ելիսեևիչ, ինձ տրամադրում եք անկեղծության։

— Իմ առաջ խոստովանություն անել նույնպես խորհուրդ չեմ տա,— քմծիծաղեց Կարաբանովը,— ես բոլոր մեղքերին հախուռն թողություն եմ տալիս։ Ինքս էլ եմ մեղսագործ...

— Ասացեք ինձ, եթե գաղտնիք չէ,— հարցրեց Կլյուգենաուն,— դուք ինչո՞ւ այդպես պոկվեցիք առաջ։

— Ուզղակի որոշեցի մի քիչ թմրաբերծել իմ Լորդին։

— Ճիշտ չեք ասում, պորուչիկ։ Ինչո՞ւ իր զգացմունքների դրսևորման մեջ անգրագետ Դենիսկա Օժոգինը, որն ամեն շաբաթ օր հարբում է և կռիվ սարքում, պետք է ազնիվ լինի, բան դուք։ Չէ որ դուք արշավեցիք առաջ, որպեսզի բոլորից թաքցնեք այն, ինչը տանջում է Դենիսկային։ Միայն Դենիսկան դրանից չի ամաչում...

— Գիտեք, Կլյուգենաու,— ոչ անմիջապես և նույնիսկ ոչոչ վարանանքով պատասխանեց Կարաբանովը,— չգիտեմ դուք ինչպես, բայց ինձ, հավանաբար, փչացրել է այն դաստիարակությունը, որն ընդունված է կոչել ազնվակիրթ...

— Այո՛, այո՛,— ուրախացած ձայնակցեց Կլյուգենաուն։

— Դե սպասե՛ք դուք ձեր «այո, այո»-ներով,— անսպասելի զայրացավ Անդրեյը։— Ես գուցե և ուզենայի շաբաթ օրը հարբել, ինչպես Դենիսկան,— տաքացած շարունակեց նա,— կիրակի օրը կուշտ քնել, իսկ հայրենիքին հրաժեշտ տալու պահին բոլորի ներկայությամբ լաց լինել՝ տանջվելով կանխազգացումներից։ Բայց ես նույնիսկ չկռացա, որպեսզի հայրենի հողից մի բուռ վերցնեմ, թեև այնպես կուզենայի...

— Բուրքե՛ր,— հանկարծ ճչաց Կլյուգենաուն։

Մոտ տասը թուրք հեծյալներ պտույտ էին գալիս ճանապարհին։ Գլխավերևում չարագուշակ սուլեցին առաջին գընդակները։ Ձիերը շրջելով՝ սպաները շեշտակի հետ սլացան։

3

Կովկասյան բանակի 19-րդ գնդի 4-րդ հրետադասակի 2-րդ հրանոթի հրետաձիգ, շարքային Կիրյուխա Պոստնին նստած էր հրետանասայլի վրա և ծամում էր բոքոնի չորը

կեղը (նա, այդ անզգամը, սիրում էր բոքոնի չոր կողը), երբ ինչ-որ մեկը նրան հարմար տեղից հրեց-գցեց ուղիղ փոշու մեջ։ Եվ դժվարությամբ, օրինական կերպով Կիրյուխային պատկանող հրետասայլը բարձրացավ ու նստեց ալեոր ու թավամազ, ինչպես սատանա, բոբիկ ու գլխաբաց, զինվորական սպիտակ վերնաշապիկով մի ծերունի՝ Գեորգիևյան երկու խաչ կրծքին։

— Դու ինչ կոմս չես, որ կառքով ման գաս,— ասաց նա Կիրյուխային։— Չէ, իսկի գլխի էլ չի ընկնում, որ ինքն ասի՝ «Կավալեր Վասիլի Ստեպանիչ Խրենով, համեցեք մի քիչ ման գալ հրետասայլով»։ Ո՜ւ, ո՜ւ, գորշություն։ Այ քեզ գեղացի։— Եվ նա հրացանի սվինով վախեցրեց հրետաձգին։

Հացի կողը բարձրացնելով փոշու միջից, Կիրյուխան հասավ իր հրանոթին։

— Ի՞նչ ես հրում, ծերուկ,— նեղացավ նա,— ես քեզ համար հասարակ զինվոր չեմ, ես հրետաձիգ եմ, հարկավոր է պահպանել ինձ մարտի համար։ Ես Պոստնին եմ...

— Եվ դա երևում է,— մոթմոթաց ծերուկը՝ ավելի հարմար տեղավորվելով,— դու իսկապես պատուց ես և ոչ թե բարեկենդանի։ Դե լավ, մի քիչ հաց կտրիր ծերուկիս համար։

Կիրյուխան հացի չոր կողը կիսեց և ոստոստալով, մանրաքայլ շարժվեց հրետասայլի կողքից.

— Հե՜յ, ծերո՜ւկ, ցած իջիր,— խնդրում էր նա,— մի՞թե կանոնադրությամբ այստեղ է քո տեղը։

— Կորի՛ր, անբեղ,— ասաց ծերուկը՝ կասվի ձագի բերանի նման նուրբ-վարդագույն, նոսրատամ բերանը տանելով հացի չոր կողը։— Քո ոտքերը ջահել են,— սփոփում էր նա հրետաձգին,— դու կարող ես հեռու վազել... Մինչև Ստամբուլ...

Շուտով Խվոշչինսկին երթադադարի հրաման տվեց, մինչև կեսօրվա շոգը անցնի։ Զինվորական սպասյակները ուղտերի սապատների վրայից իջեցնում էին սպայական իրերի և թաղիքների հակերը։ Դումակից քարշ տալով մի կամակոր ոչխար բերեցին, հապճեպ կտրեցին վիզը։

— Սպասեցե՛ք,— ասաց Իսմայիլ խանը և սպասյակին կարգադրեց եղեգնյա մի խողովակ կտրել։

Խողովակը մտցնելով ոչխարի փորի մեջ բացած անցքը,

փոխգնդապետն սկսեց ուժեղ փչել։ Հենց աչքի առաջ ոչխարն սկսեց արագ ուռչել և վերջապես պինդ փչած մի տիկ դարձավ։ Այդ ժամանակ Իսմայիլ խանը բռունցքով խփեց նրա փորին, և մորթին հեշտությամբ անջատվեց մսից։

— Զոխ յախշի, շատ լավ,— ասաց խանը և, ոչխարի մորթին տիկ հանելով, սկսեց դաշույնով կտրել ոչխարի ազդրերի «սուկիները». ճարպոտ, հյութեղ մսակտորները սպասյակները ճարպկորեն շարում էին շամփուրների վրա։ Շուտով սպաներն արդեն ուտում էին հյութեղ խորոված՝ վրայից խմելով Կախեթի սպիտակ գինի։

— Շատ համեղ է,— գովեց Նեկրասովը՝ ձեռքերը խոտերի մեջ մաքրելով,— ուղղակի հիանալի է։ Երբեք չէի սպասում, որ դուք հիանալի խոհարար կլինեք, խան։

— Խա՜ն...— դժգոհ փնթփնթացրեց փոխգնդապետը։— Ես խան եմ եղել, երբ իմ պապը հյուրերի համար փլավ էր եփում այնպիսի կաթսայի մեջ, որտեղ կարող էին խեղդվել ձեր երեք հարբած վանականները։ Իմ հայրը կարողանում էր շամփուրի վրա խորովել մի եզ, իսկ եզան մեջ՝ մի հորթ, հորթի մեջ՝ մի ոչխար, իսկ ոչխարի մեջ՝ մի գառ, գառի մեջ՝ մի սագ, իսկ սագի մեջ՝ մի լոր, լորի մեջ՝ մի ձու...

Թվարկելով այս ամենը՝ փոխգնդապետը պպզած տեղից վեր կացավ, կանգնեց և, վիթխարի հասակով մեկ ձեռքը բարձրացնելով, ավարտեց.

— Ահա այն ժամանակ էլ ես ինձ խան էի զգում...

Նեկրասովը թոթվեց ուսերը և ոչինչ չպատասխանեց։ Մխախոտատուփից հանելով եգիպտացորենի տերևի մեջ փաթաթված ռումինական վերջին գլանակը, որ նա պահում էր որպես Վալախիայի հիշատակ, շտաբս-կապիտանը վառեց այն և գնաց դեպի զինվորական բիվակները[1]։ Մի կաթսայի մոտ, փոխանակ հանգստանալու, զինվորները քիփ շրջապատել էին խարույկը և թուլանում էին միահամուռ հռհռոցից։ Յուրի Տիմոֆեևիչը մոտեցավ, նրան տեղ զիջեցին։ Տեսնելով ծերունի գրենադյոր Խրենովին՝ նա ակամայից զարմացավ, որ իրենց հետ Բայազետ է գնում և այդ ծեր, անատամ ռազմիկը։

[1] Բիվակ — հանգստատեղ։

— Ո՞վ ես դու, ծերուկ,— հարցրեց Նեկրասովը։

— Ես Գեորգիևյան ասպետ եմ։ Եվ եթե ուզում ես տեսնել, ահա թե որտեղ են։— Եվ Խրենովը ուղղեց իր խաչերը։

— Իսկ ինչի՞ համար ես ահա այս մեկը ստացել։

— Անատամ կտրելու համար, ձերդ բարեծնություն։ Այն ժամանակ երբ մենք չեչեններին էինք հնազանդեցնում, ավելի շատ անատամ էինք կտրում։ Դժվար գործ էր...

— Իսկ սա՞,— նորից հարցրեց Նեկրասովը՝ ցույց տալով փոքրիկ ծոված խաչը։

— Ախվայի գրավման համար։

— Այդպիսի գյուղ չկա,— ուղղեց նրան Նեկրասովը,— կա Ախտի։

— Ճիշտ այդպես, Ախտի,— աշխույժ պատասխանեց ծերուկը։

Նեկրասովը քմծիծաղեց բեղի տակ։

— Դե լավ։ Իսկ հրացանը որտեղի՞ց ես վերցրել։

— Նորին բարեծնություն պարոն Խվոշչինսկին է կարգադրել տալ։ Նրանք ինձ հիշում են. միասին Ղարս ենք գնացել, Գունիբի մոտ մյուրիդների հետ ենք կռվել... Իսկ ծառայությունս,— պարծեցավ վերջում ծերուկը,— ես սկսել եմ դեռ Լեկսեյ Պետրովիչ Երմոլովի օրոք, աստված հոգին լուսավորի։ Նրա ժամանակ բախտս բերում էր, իսկ Պասկևիչի ժամանակ, հրես, այստեղ, ինձ ծակել է գնդակը, Վորոնցովի ժամանակ այստեղիս խփել են սրով։ Ես լրիվ, ինչպես որ կամ, ռուս զինվոր եմ, և ոչ մի թուրք չի կարող ինձ հակառակվել։ Հենց որ մի բան լինի, դնչին կտամ...

— Դու երևի շատ պետերի օրոք ես ծառայել, ծերուկ։

— Օ՜, շատերի օրոք, ձերդ բարեծնություն,— հոգոց հանեց Խրենովը՝ թեթևակի մոայլվելով։— Հայրեր էին հրամանատարները։

— Իսկ ո՞ւր են ատամներդ, ծերուկ։

— Է՜հ, հրամանատարներն են ջարդել, ուրիշ էլ ով կարող էր...

Մոտեցավ Յունկեր Եվդոկիմովը, ծիծաղեց բոլորի հետ, լսեց ծերուկին և միամտորեն խորհուրդ տվեց.

— Այ հայրիկ, դե որ ծառայությունը վերջացրել եք, գնայիք ձեր գյուղը և պառկեիք վառարանի վրա՝ ձեր պառավի

մոտ... Հիմա Ռուսաստանում լավ է՝ ձյունները հալվում են, աքաղաղները կանչում, կանայք բլիթներ են թխում...

— Իսկ ես, ձերդ բարեծնություն,— նեղացած պատասխանեց Խրենովը,— ծնված օրից վառարանի վրա չեմ պառկել և ոչ մի գյուղ չունեմ... Փոքր հասակից զինվորական ծառայության մեջ եմ։ Եվ տան ճանապարհը չեմ հիշում։ Ասում են, որ ես իբր Կուրսկից եմ։ Խոսվածքով են որոշում, ուրեմն։ Բայց սատանան գիտի այդ խոսվածքը։ Բա կարո՞ղ ես միայն խոսվածքով տունդ գտնել։

— Իսկ ինչպե՞ս ես ապրել, Վասիլի Ստեպանովիչ,— հետաքրքրվեց Դենիսկա Օժոգինը։

— Ինչպես եմ ապրե՞լ։ Լա՜վ... Ռուսաստան եմ գնացել, միայն թե ինձ համար անսովոր էր. շատ էր խաղաղ։ Իսկ այստեղ ցանկացած անկյունում կռվում են։ Ես էլ հետ դարձա։ Եկա սարերը։ Շատ եմ քայլել։ Ինձ հիշում են։ Եվ հետո խաչերը։ Որտեղ կայազորներում, որտեղ քաղաքացիական բնակչության մեջ։ Բան եմ խնդրել, տվել են։ Երբեմն էլ ծեծել են։ Հարսանիքի մեջ ընկա։ Մի քիչ խմեցի և սկսեցի հիշել, թե ինչպես էինք Շամիլին սանձահարում... Ես, ասում եմ, հիմա ձեզ բոլորիդ... Եվ ապա ցույց եմ տալիս՝ կարճ խոցի՛ր։ Իսկ այնտեղ Շամիլի ազգականներից կային նստած։ Ինձ վրա աչքակալ գցեցին։ Դե, ինձ էլ հո չոլից չեն գտել։ Զեռքս գցեցի՝ ինչ ծանր բան գտա։ Իսկ հյուրերը շատ էին։ Հազարի մոտ։ Դե տուր, թե կտաս։ Խրձերի նման փռվեցին գետնին։

— Այ թե փչում ես, հա՜, ծերո՛ւկ,— ծիծաղեց Դենիսկան։ Խրենովը չնեղացավ.

— Ստելը ո՞ւմ է արգելված որ։ Ուզում ես դու ստիր, ուզում ես՝ ես։ Կաթսան հո ընդհանուր է։ Իսկ էնտեղից խլիր ինչն ավելի քաղցր է...

Ավելի երիտասարդ զինվորները որոշեցին բորբոքել ծերուկին.

— Դե լավ, պապիկ, իսկ կին ունեցե՞լ ես։

— Ի՞.. ի՞նչ։

— Կնիկ, այսինքն։

Ձեր ռազմիկը ձեռքը թափ տվեց.

— Իսկ ի՞նչ օգուտ էդ կնկանից։ Տանջանք է միայն։ Կնիկ ես առնում, մի քիչ չլում, ձանձրացնում է, թքում ես վրան։

— Այդ բոլորը դատարկ բաներ են։ Այ, պատմեք, հայրիկ, մի որևէ հետաքրքիր բան։ Դե, ամենահետաքրքիրը ձեր կյանքում։

Ներունին քորեց ճերմակ, խծուծի նման կիտված մազափունջը.

— Բայց ահա էդպիսի բան չեմ հիշում,— ասաց նա։— Հետաքրքիր բաների մասին, ձերդ բարեծնություն, հարկավոր է գրքերում կարդալ...

Թմբուկները նորից արշավի կանչեցին։

4

Հայկական մի գյուղից, որտեղ նրանց բերկրանքով դիմավորեցին թուրքահայերը և Հարևան վանքի վանականները, խվոշչինսկին Նեկրասովին ուղարկեց թշնամու խանութներն ավերելու։

— Հենց այնտեղ,— հանձնարարեց նա,— ծայրամասերում, ապրում են մի քանի հույներ, որոնք սուլթանի բանակում ծառայում են որպես հմուտ հացթուխներ։ Քշեք նրանց, խնդրում եմ, իսկ թոնիրներն ու հացի փռերը քանդեք։ Երբ զինված մարդ տեսնեք, չկրակեք հանկարծ։ Նա կարող է հյուր գնացող մի խաղաղ օտարական լինել։ Զգուշացեք քրդերից։ Դուք նրանց կարող եք տարբերել չալմաներով, գույնզգույն հագուստներով և քայլվածքով...

Առաջադրանքն այնքան բարդ չէր։ Նեկրասովի ջոկատը թեթև հագնված սլացավ գալարուն արահետով, գոռումգոչյունով և շվացնելով։ Նրանք հասցրին այրել մոտ տասը հազար չեռվերտ կորեկ, գարի և եգիպտացորեն, ոչնչացրին անգլիական գալեոնների և վերմակների մի պահեստ, բայց վերադարձին հանկարծակի հանդիպեցին սուլթանական նիզամի մի խոշոր հեծյալ պարեկի՝ բոլորովին նոր համազգեստով և ֆրանսիական արտադրության մի հին հաուբիցով։

Նկատելով, որ հակառակորդի կրակոցները դիպուկ չեն, շտաբս-կապիտանը նիզամին հարկադրեց փոխհրաձգության

դիմել, և մարտը ձգձգվեց, դեպի զորամաս ճեղքել անցնելը դժվարացավ։

— Փամփուշտները վերջանում են,— գոռացին խոպերցիները։

— Սակայն սվինները մնացել են,— պատասխանեց Նեկրասովը, և զինվորները դարաններից դուրս թռան սվինամարտի...

Միանալով զորամասին՝ շտաբս-կապիտանը պատմում էր թուրքական հրետանավորների մասին, որ ֆանատիկորեն պաշտպանվեցին մինչև վերջ։ Սակայն ձեռնամարտը, որին դիմել էր Նեկրասովը, շատ սպանների դարմացրեց։

— Ինչպե՞ս կհրամայեք հասկանալ ձեզ,— հարցրեց Շտոկվիչը։— Դո՞ւք չէիք, որ այստեղ հաճախակի բաց դռներ էիք ջարդում, որպեսզի մեզ ապացուցեք սվինամարտի հնացած լինելը։

— Իսկ ես,— պատասխանեց Յուրի Տիմոֆեևիչը,— երբեք մտադիր չեմ եղել սվինները պահածոյել թանգարաններում։ Սակայն ձեռնամարտը ծայրահեղություն է, որը կապված է մեծ ռիսկի հետ։

Նիզամի հետ ճակատամարտի ժամանակ Նեկրասովը կորցրեց ձախ ձեռքի երկու մատը, որ սրատվել էին մինչև առաջին հոդը։ Իմանալով այդ մասին՝ Իսմայիլ խանը ուրախացավ.

— Այդպես էլ պետք է նրան։ Երևում է այդ մատներով շատ մեղք է գործել, դրա համար էլ կտրվել են։

— Հաղորդեք նորին պայծառափայլությանը,— հակահարված էր տալիս Նեկրասովը,— որ այդ դեպքում միանգամից կպոկվի նրա գլուխը...

Բայազետն արդեն հեռու չէր։ Էշելոնն աստիճանաբար մտնում էր մի լայն հարթավայր։ Որոշ տեղերում աչքի էր զարնում ճահճային կանաչը, բարձր եղեգները օրորվում էին քամիներից, զառիթափ լեռնալանջերին փայլփլում էին արծաթագույն աղուտները։ Արևամուտից մի ժամ առաջ այդ ամենը սկսեց սուզվել մահուդե կապույտ կիսախավարի մեջ. միայն հարավում դեռ սևին էին տալիս հեռավոր ժայռակատարները, որոնց ծերպերում և պատսպարվում էր խորհրդավոր Բայազետը։

Հոգնած ձիերի վզից կախեցին տոպրակները։ Առջևում դեռ սուր վայրէջք կար դեպի հովիտը, և առաջին հրանոթը, անիվների տակից փլցնելով քարերն ու ավազակույտերը, սկսեց դանդաղորեն սահել սարնիվեր։ Հրետասայլերին լծված ձիերը ուժերի լարումից ընկնում էին ցած։ Մթության մեջ, ծանր քարերի պես թռչում էին կազակական կոպիտ հիշողները. մարդիկ ձեռքերը գցում էին անիվների ճաղերին, լծվում ձգափոկերին՝ անդունդի թեքության վրա հրանոթը կատաղի թափառքից փրկելու համար։

— Ձգո՛ւյշ, տղաներ,— մերթընդմերթ բղավում էր մայոր Պոտրեսովը,— նշանոցները չծռեք, անվաճաղերից բռնեցեք...

Վերջապես վայրէջքն ավարտվեց, և զորքերը տեղավորվեցին գիշերելու։ Կաթսաներում սկսեց խլթխլթալ շիլան, իսկ զինվորները, ընկնելով գետնին և գրկելով հրացանները, արդեն քնած էին մեռելի պես, առանց երազների ու զառանցանքների։ Իսկ լծասարքերի մեջ թեթև ննջում էին և ձիերը։ Մթության մեջ միայն պահակային ուղեկալներն էին թափառում և Բայազետի կողմն էին նայում արկերով լցված հրթիռային հաստոցները...

Կարաբանովը նույնպես քնել էր, Լորդի սանձափոկերը ձեռքին փաթաթած, երբ նրան արթնացրեց Տյապաևը. պորուչիկին կանչում էր գնդապետը։ Խվոշչինսկին նստել էր խարույկի մոտ և թեյ էր խմում, իսկ նրա կողքին, պատռված բեշմետով, պառկած էր Հաջի Ջամալ բեկը. գնդապետը գլխով արեց լրտեսին, և, չերքեզը, փափախը քաշելով ճակատին, սահելով կորավ մթության մեջ, որպեսզի չխանգարի սպաների խոսակցությանը։

— Ներեցեք, որ արթնացրի, պորուչիկ,— ասաց Խվոշչինսկին,— դուք հիմա պետք է վեր կացնեք ձեր հարյուրյակը...

— Ինչպե՞ս վեր կացնեմ նրանց, պարոն գնդապետ, երբ մարդիկ և ձիերը չեն կարողանում ոտքի վրա կանգնել,— դժգոհ փնթփնթաց Անդրեյը։

Խվոշչինսկին մատիտով թխկթխկացրեց ծնկների վրա փռած քարտեզին. նրա կաղ ոտքը անճոռնի չռվել էր մի կողմ։

— Գիտեք, պարոն պորուչիկ,— հանգիստ պատասխանեց

նա,— ի՛մ կնոջ հետ ձեր վաղեմի բարեկամությունը դեռ իրավունք չի տալիս հանդուգն խոսել ինձ հետ։ Եթե դուք չեք ուզում հարգել ինձ որպես մարդու, ապա կարող եք ուշադրություն դարձնել իմ ուսադիրներին. ես դրանք կպցրել եմ, երբ դուք դեռ համբերություն էիք ձեռք բերում լույս աշխարհ գալու։

— Ներեցեք, պարոն գնդապետ,— մեղավոր ասաց Անդրեյը։

— Եվ այսպես, բարի եղեք ոտքի հանել ձեր հարյուրյակը։ Իսկ հիմա նայեցեք այստեղ,— գնդապետը նրա առջև բացեց քարտեզը։— Ահա Ղարաքիլիսայից եկող ճանապարհը։ Հայջի Ջամալ բեկն ինձ ասաց, որ սունիթյան Աք-Սուտսուլ առվի միջով կարելի է ճեղքել անցնել ուղղակի Բայազետ։ Հենց ձեր հարյուրյակն էլ պետք է փորձի այդ բանն անել... Այնուհետև,— շարունակեց Խվոշչինսկին,— եթե հանկարծ դարան ընկնեք, կարող եք Եփրատի երկայնքով նահանջել դեպի Ջեյդեկան։ Այնտեղ ձեզ օգնության կհասնի գեներալ Տեր-Ղուկասովը, որը հիմա գնում է դեպի Ալաշկերտ։

Այդ տաք խարույկի մոտից վեր կենալ, հենց այնպես միանգամից թամբի վրա բարձրանալ և, առաջին շարքում, հարյուրյակը գիշերով տանել օտար, անծանոթ արահետներով,— ոչ, դա չափից ավելի անսպասելի էր։ Կարաբանովը սրտի մոտ ինչ-որ սառնություն զգաց, նրա համար սարսափելի էր իրեն և իր հարյուրյակն անջատել ամբողջ էշելոնից։

— Ըստ երևույթին, պարոն գնդապետ,— դիվանագիտորեն ասաց նա՝ աչքերը հառելով կրակին,— թուրքերն արդեն պատրաստ են Բայազետը հանձնելու, ուրեմն, էլ ինչո՞ւ եմ ես...

— Ո՛չ։ Բոլորովին էլ պատրաստ չեն։

— Ներողություն, իսկ ինչո՞ւ։

— Թեկուզ հենց նրա համար,— բացատրեց Խվոշչինսկին,— որ վալիի հարեմը մնացել է Բայազետում։ Այնպես որ եղեք խելացի և զգույշ։ Եթե ձեր աչքի առաջ սկսեն հարեմը դուրս բերել քաղաքից, չխանգարեք։ Աստված հեռու տանի։ Այլապես կկործանվեք...

— Առաջին հարյուրյակը մնում է այստե՞ղ,— հարցրեց Կարաբանովը՝ նախանձելով Վատնինին։

— Այո։ Ես կուղարկեի Վատնինին, բայց... Համաձայնեք, որ չնայած սպայական իր բոլոր արժանիքներին, նա անընդունակ է դիվանագիտություն վարել։ Իսկ դուք չէ որ պալատական, ազնվակիրթ մարդ եք,— խոսքն ավարտեց գնդապետը ժպտալով։

— Լա՛վ,— Կարաբանովը վեր կացավ,— ես գնում եմ։

— Սպասեք.. Չլինի թե տաքարյունություն անեք և Բայազետ մտնեք երկու կողմից,— խիստ ցուցում տվեց Նիկիտա Սեմյոնովիչը։— Ասիացուն կարելի է նվաճել միայն այն դեպքում, եթե նրա համար նահանջելու սողանցք թողնեք։ Այլապես նա փափախը աչքերին կքաշի, դաշույնը մի ձեռքում կբռնի, սուրը՝ մյուս ձեռքում, և այն ժամանակ, Կարաբանով, ձեզ համար վատ կլինի...

Ասես մեծ կոտորածներից հետո գետնին փռված կազակների մարմնակույտերի մեջ Անդրեյը դժվարությամբ գտավ իր ուրյադնիկին։ Տրյոխժոննին քնից հետո երկար ժամանակ մտմտում էր, մթության մեջ կոկորդը մաքրելով, հետո երկու մատը բերանը կոխեց և շվացրեց սոլովեյ ռազբոյնիկի նման, սանձափոկերով իրար հետ կապված ձիերը խրտնեցին ու հետ ցատկեցին խարույկներից։

Կազակներն իրենց պատրաստակամությամբ ապշեցրին պորուչիկին. յուրաքանչյուրը ձեռքի ափով շփեց երեսը, ասես լվացվեց, փաթաթեց թաղիքը, կապկպեց ունեցածը, դրեց պայուսակի մեջ ու վերցրեց հրացանը. երկու րոպեից հետո հարյուրյակն արդեն թամբի վրա էր։

Ամենուրեք գետնի վրայից բարձրանում էին զինվորների և միլիցիոներների գզգզված գլուխներ։

— Դե, ի՞նչ եք իրար խառնվել, շարունակեք մրափել,— ասաց Տրյոխժոննին ինչ-որ մեկին։— Դու մեր հարյուրյակից չես։ Միայն երկրորդ հարյուրյակն է, որ որոշել են աշխարհի ծայրը քշել...

— Կազակնե՛ր, աջի՛ց... երկո՛ւ-երկո՛ւ... վարգո՛վ։

Շինելը ուսերին գցած՝ հորանջելով մոտեցավ Պոտրեսովը։

— Աղավնյակս, դուք այնպե՛ս եք գոռում... Այդ ո՞ւր։

— Բոլորս էլ այնտեղ կլինենք, Նիկոլայ Սերգեևիչ... Ես

մի բան գիտեմ միայն՝ իմ հարյուրյակը գնում է Բայազետ, իսկ թե ինչպես կդիմավորեն մեզ՝ ծաղիկներով, թե գընդակներով, չգիտեմ։ Մնաք բարով, մայոր։

Գիշերը զով էր և, չնայած հոգնածությանը, ձիերը քայլում էին կայտառ։ Հեծյալներն սկզբում հորանջում էին ծանր, մինչև ծնոտների ճռթճռթալը, հետո, ոչինչ, զվարթացան։ Զամբիկների վրա նստած կազակները մեծ մասամբ ճանապարհի եզրերով էին գնում, գարնանն էր, հովատակները կատաղում էին առաջին կանաչի համար, նրանց կողքին զամբիկներն էլ անհանգիստ էին թամբի տակ։

Մի խարույկի մոտ նստած էին զորաջոկատի մի ուրիշ ստորաբաժանման զինվորներ և ձեռքի ափերի տակից նայում էին, ձիերի փռնչոցից, ասպանդակների ու զենքերի զրնգոցից ասես վախեցած, մթության մեջ։

— Է՜յ,— գոռաց Կարաբանովը,— դեպի Ղարաքիլիսա այսպե՞ս են գնում, թե ճանապարհն ինքը կթեքվի։

— Չգիտենք, մենք տեղացի չենք,— լսվեց խարույկի մոտից։

Շարունակեցին գնալ։ Երկնակամարի վրա ելնում էր լուսինը։

Լորդը վազում էր համաչափ ու սահուն։ Կարաբանովը փափուկ մուճակով լավ էր շոշափում ասպանդակը։ Ավելի հարուստ կազակների արծաթյա փամփշտակալները թույլ առկայծում էին մթության մեջ։

Մի տեղ Անդրեյը քիչ էր մնում ոտքի տակ գցեր մի մարդու, որ բռնեց ձիու սանձից։ Դա մի երիտասարդ հրետանավոր յունկեր էր՝ միամիտ ու խանդավառ։ Նրա զինվորները ոմբարկղեր էին տեղափոխում ինչ-որ տեղ։

— Ի՞նչ ես ուզում, եղբայր,— հարցրեց Անդրեյը։

— Դու ինձ տեղին եղբայր կոչեցիր,— պատասխանեց յունկերը։— Ուրեմն այս գիշերվանից եղբայրներ կլինենք։ Դուք պատահմամբ հիմա Ալաշկերտ չե՞ք գնում։ Ուրեմն գնանք միասին։

— Հաճույքով, կոլեգա,— պատասխանեց պորուչիկը,— Սակայն իմ տոմսն առանց տարանցման է՝ Պետերբուրգից ուղղակի Բայազետ։

— Ես նախանձում եմ ձեզ,— ասաց յունկերը։— Ասում են արևելյան գրգավայելքների և անձկաբեկ, գեղեցիկ հարճերի հեքիաթային քաղաք է...

— Ներողություն, ռոմանտիկան ինձ համար չէ,— պատասխանեց Կարաբանովը ու, ձիու կրծքով ճանապարհից մի կողմ հրելով յունկերին՝ իր հարյուրյակն առաջ տարավ խավարի մեջ...

Կիրճի վրայով ձգվում էր մի կամուրջ, որը կախված էր մետաղյա ճոպաններից, բայց, ինչպես և պետք էր սպասել, թուրքերը կտրել էին ճոպանները։ Կամուրջն ամրացնելով երթային օղապարաններով՝ կազակները մեկ-մեկ թռչելով անցան անդունդը և կիրճից դուրս գալով ճանապարհ՝ իջան ձիերից։ Ամրացնում էին ասպանդակները, զենքերն անջատում թամբերից։ Ում սիրտն ավելի քնքուշ էր և բարի, ձին կերակրում էր պաքսիմատով ու շաքարի կտորներով։

Կարաբանովը բաց արեց քարտեզը, ուրյադնիկին հանձնարարեց լուսավորել։ Բայց հազիվ էր Տրյոխժոննին չխկացրել լուցկին, երբ սուրաց գնդակը և թեքությամբ պատռելով քարտեզը՝ խրվեց ավազի մեջ։

— Երևում է՝ քրդեր են,— ասաց ուրյադնիկը,— թուրքերը չեն կարողանում նշան բռնել։ Այդ թուրքը բոլորովին խելառ է, հիմարի պես միշտ խփում է, ուր պատահի...

Նորից սկսվեց կատաղի արշավը։ Այժմ արդեն ճանապարհով։ Երկու անգամ կանգ առան և ցրիվ տվեցին խոտի այրվող դեզերը, որ հրդեհել էին ուղղակի իրենց ճանապարհի վրա, երկու անգամ կազակները, կուչ գալով թշնամու մոտիկության կանխազգացումից, ցրիվ տվեցին այրվող ծառերի կույտերը։

— Վարգո՜վ, վարգո՜վ,— մերթընդմերթ ճչում էր Կարաբանովը։

Թեք լեռնակատարի հետևից սահելով դուրս եկավ մուսսիմանական կեռ լուսինը, միացավ հեծյալներին և այժմ շարժվում էր նրանց գլխավերևում՝ հարավային պայծառ աստղերի կույտի հետ։ Ձիու սմբակների տակից դուրս թռավ մի սրածայր խճաքար և կայծի պես արծաթին տվեց։ Մի հովատակ սկսեց կատաղի խրխնջալ և անմիջապես մի մտրակ ստացավ վզակոթին.

— Ա՜հ քեզ։ Ժամանակ գտավ խրխնջալու...

— Ուրյադնիկը սկսեց հոտոտել քամին.

— Ձերդ բարեծնություն, երևի շատ շուտով գյուղ կլինի, կարծես աջարի հոտ է գալիս։ Էնպես էլ անուշ է։ Հավանաբար գոմեր են տաքացնում...

Եվ հանկարծ մթության միջից կազակներին ընդառաջ նետվեց հեռուստան մարդկանց մի մեծ ամբոխ, ձեռքերը պարզած դեպի երկինք։ Օդը ցնցվեց աղիողորմ ճիչերից.

— Լյա-ի՜լ ալլահ-իլ-ալլա՜հ. Մուհամեդ Ռասուլ ալլա՜հ...

Առջևից վազում էր վտիտ մի ծերունի՝ գլխին սպիտակ չալմա։ Քամուց ծալում էր նրա երկար մորուքը, և նա այն առել էր բերանի տակ։ Հարյուրյակը ամբողջ թափով սլանում էր, և Կարաբանովը հազիվ հասցրեց կանգնեցնել, որ շորթեն թուրքերին։ Մերուքավոր ծերուկը բռնել էր պորուչիկի ոտքը՝ հաճախակի համբուրելով նրա փոշոտ մուճակը։

— Ուրուս, փրկիր,— իսկական արցունքներով լաց էր լինում ծերուկը՝ ձեռքերը սեղմելով ներս ընկած կրծքին։— Օսմանը եկավ, օսմանը լավ չէ, սեկիմ-բաշկա է ուզում անել։ Երբ ուզտը կռվում է ձիու հետ, սատկում է էշը։ Մենք խեղճ էշ ենք։ Ձեր կազակը բարի է... Մենք ձեզ մոտ ենք գալիս... Լյա-ի՜լ, լյահա-ի-ալլա՜հ,— ծերուկը նորից սկսեց ցնցվել, իսկ թուրքերն արդեն պտույտ էին տալիս ձիերի շուրջը...

Կարաբանովը գՁաց այդ խեղճ գյուղացիներին։ Մանավանդ որ, նրանք այնպես անկեղծ լաց էին լինում և երդվում, որ այսուհետև երկնքում ճանաչում են միայն ալլահին, իսկ երկրի վրա միայն նրան՝ պորուչիկ Կարաբանովին։ Այդ պատճառով էլ նա խղճահարությամբ գոռաց ուրյադնիկի վրա.

— Ի՞նչ ես անում։

Իսկ ուրյադնիկն արդեն բռնել էր ծերուկի մորուքը. նա կախվեց թամբից, դաշույնով արմատից կտրեց մորուքը և շպրտեց թուրքի երեսին։

— Այ դու, քավթառ,— գոռաց նա ձին՝ քշելով նրա վրա։— Քեզ «բարի կազակը» փրկի, իսկ դու մեզ գցես թակարդը... Ուրեմն որտե՞ղ է քո պատավը, որտե՞ղ են ձեր փսլնքոտները։ Մորուքդ երկար է, ծերուկ, բայց խաբել չես կարողանում...

Կարաբանովը ամեն ինչ հասկացավ։

— Դենիսկա՜, մտրակի տակ տուր։

Եվ տուր տվեցին. քշեցին իրենց առջևից՝ մտրակելով կորացած մեջքերին. աղմուկ-աղաղակով ու հրահրոցով իջեցին մի գյուղ, և թուրքական ջոկատը շուտ եկավ դեպի լեռները՝ աչք վախեցնելու համար մի քանի համազարկ տալով...

— Ամեն մեկից մի գոմեշ պիտի վերցնենք,— ասաց Տրյոխժոնին՝ նժույգին նստած պտտվելով հրապարակում։— Այդպես էլ իմացեք՝ ձեր ստորության համար մի-մի գոմեշ յուրաքանչյուր ծխից...

— Հը, սուլթանական գարշելիություն,— Դենիսկան քիթը մաքրեց բռան մեջ՝ ափը քսելով իր Բեսի փոշոտ բաշին։— Թակարդի մեջ էի՞ք ուզում գցել մեզ։

Ձայրույթի մեջ նա ձին քշեց գյուղի տոհմավագի խրճիթի վրա, սրով հարվածեց անկենդան լուսամուտներին, զը՜նգ, այս ու այն կողմ թռան ապակիները, և գարձյալ՝ զը՜նգ։ Պարանի վրա շորեր էին կախված, Դենիսկան պարանն էլ կտրեց։ Հետո սրի ծայրով բարձրացրեց մի դատարկ դույլ, գցեց վեր, և զը՜նգ, օդի մեջ կտոր-կտոր արեց այն...

— Օժոգի՜ն,— բղավեց Կարաբանովը՝ հուզմունքից ծանր շնչելով։— Վե՜րջ տուր, այ հիմա դու էլ ինձանից մտրակներ կստանաս... Թուրքից ոչ պակաս։

— Իսկ ինչ է որ, ձերդ բարեծնություն,— նեղացավ կազակը։— Արդեն չի կարելի և չարություն անել... Իսկ եթե մենք ընկնեինք նրանց ձեռքը, մեր գլուխներից քանի՞սը կթռչեր...

Աբշալույսին (օտար արշալույսը խաբուսիկ է ու սոսկալի) հեծյալները մի բարձր սար ելան։ Նրանց առջև երևաց բարակ գետով երկու մասի կիսված, ժայռերի ու այգիների մեջ փռված մի գողտրիկ քաղաք։ Տները շինված էին սանդղաձև, այնպես որ մեկի կտուրը հարևան տան համար որպես բակ էր ծառայում. կտուրների վրա արածում էին այծերը, իսկ շուրջը անդորր էր, գունավոր մզկիթներն իրենց մինարեթների սյուները վեհորեն պարզել էին դեպի առավոտյան մաքուր երկինքը։

— Հրեն և ինքը՝ ամրոցը, ձերդ բարեծնություն,— ցույց տվեց ուրյադնիկը։— Տեսնում եք, քաղաքից վեր է կանգնած։ Պատշգամբներն էլ կախված են գետի վրա...

Կարաբանովը իջեցրեց հեռադիտակը.

— Ի՞նչ պիտի անենք։

— Հարկավոր է քաղաքը գրավել հիմա,— խորհուրդ տվեց Տրյոխժոննին։— Քանի դեռ ժողովուրդը չի արթնացել թե չէ հետո, որ քաղաք մտնես, մարդիկ դուրս կթափվեն փողոցները, ուր երկու շուն անգամ առանց կռվելու չեն կարող բաժանվել իրարից։ Այն ժամանակ, ձերդ բարեծնունդյան, հարյուրյակի համար շատ նեղ կլինի։

Կարաբանովը ջղաձգորեն շուռումուռ եկավ թամբի վրա. չէր կարողանում որոշել։

— Հարցրու կազակներին, ուրյադնիկ, նրանք ի՞նչ են մտածում։

Տրյոխժոննին շրջվեց և ծիծաղելով ասաց.

— Կազակնե՛ր, նորին բարեծնունդյանն ուզում է իմանալ, դուք արդյոք չե՞ք խղճում ձեր թանկագին հարսնացուներին և քնքշիկներին։

— Ոչ մի դեպքում,— աշխուժորեն ձեռքը թափ տվեց Դենիսկան, ինչպես միշտ, հարմար ժամանակին։— Եթե վախենանք, հարսնացուն կույս էլ կմեռնի։

— Իսկ եթե նույնիսկ սպանեն ինձ,— ավարտեց տարեց Եգորիչը,— փառք քեզ, աստվա՜ծ, գոնե իմ խոցից կազատվեմ...

Լիակատար լռության մեջ, նիզակները հավասար պահած և հպարտորեն ձեռքերը կանթած, հարյուրյակը մտավ ամայի քաղաքը։ Ծառերի ճյուղերը հարվածում էին երեսներին։ Լսվում էր քարե դուռերի մեջ թափվող աղբյուրաջրերի քչքչոցը։ Ճանապարհի մեջտեղը, փոշու մեջ քնած թափառական շները ծուլորեն վեր էին կենում՝ ճանապարհը զիջելով հեծելազորին։

Սակայն իր ամբողջ էությամբ, ամբողջ թիկունքով, կրծքով ու ծոծրակով Կարաբանովն զգում էր, թե ինչպես ամեն մի ճեղքից իրենց հետևում էին ինչ-որ մարդկանց չար աչքեր։ Եվ այդ անտեսանելի հայացքները հրացանի կրակոցներից ավելի սարսափելի էին թվում նրան։

Իսկ լռությունը ճնշում էր. դրա մեջ վատ ու տանջող մի բան կար, և որպեսզի միանգամից ցրի այն, պորուչիկն ասաց.

— Ծղրայրներ, մի երգ։

— Ո՞րը։ Մենք շատ երգեր գիտենք։

— Ամենաուժեղը,— պատասխանեց Կարաբանովը։

5

Արևելյան քաղաքը սմանչելի չի ներկայացնում, որովհետև Արևելքի քաղաքները (այդ թվում նաև Կոստանդնուպոլիսը) հոյակապ են թվում, քանի դեռ դուք չեք հայտնվել նրա սահմաններում...

Պ. Ա. Զիխաչև, Նամակներ Թուրքիայի մասին

Բայազետը կարծես արդեն հաշտվել էր իր ճակատագրի հետ։ Եվ երբ Շտոկվիչը քաղաք մտավ, փողոցներում շրջում էին չալմայավորները, դուքաններում աղմկում էին թավաները, սրճարաններից գարշահոտություն և ծուխ էր փչում, վարսավիրանոցներում սափրիչները օճառում էին ուղղահավատ մահմեդականների գլուխները։ Ճիշտ է, կանանցից երևում էին միայն հայուհիները, իսկ թուրքերի և քրդերի կանայք կազակներին նայում էին միայն դռների ճեղքերից՝ ապշելով հայուհիների անհավատալի համարձակության վրա։

Մտնելով մեյդանի հրապարակ, Շտոկվիչը հենց այնպես գոռաց.

— Բանալի՛։ Ինձ հարկավոր է Բայազետի դարպասների բանալին...

Սպասումների մի քանի րոպե, և նրան բերեցին բանալին։ Քթի տակ ծիծաղելով՝ նա բանալին խոթեց կոշիկի ճիտքը։ Բայազետը, այսպիսով, ընկավ ռուսական դրոշների առաջ՝ առանց մի կաթիլ արյուն թափելու...

Ծանր ճռնչյունով լայնորեն բացվեցին քաղաքի միջնաբերդի դարպասները, և հնամենի ամրոցի աշտարակի վրա ծածանվեց ռուսական դրոշը։ Ամրոցապարսպի աշտարակներից որոտացին հրանոթները՝ ողջունելով դրոշը, և այդ պահին բոլորը նկատեցին, թե որքան հրեշավոր ու սարսափելի էր այդ որոտը։ Բայազետի գոգահովիտը, ինչպես հրաբխի

խառնարան, գեպի երկինք նետեց համազարկերի դղրդյունը, և այն, տարածվելով ծայրամասի կիրճերում, հանկարծ հետ դարձավ՝ եռակի ուժեղ արձագանքով։

— Սատանան տանի,— ցնցվեց Պոտրեսովը,— ինչ զարմանալի ակուստիկա է այստեղ։ Կարծես լավ թատրոնում։

— Այո՛,— համաձայնեց Կլյուգենաուն,— միայն թե դերասանների համար դժվար է խաղալ այսպիսի բեմում, ուղեղդ արդեն հալվում է շոգից, իսկ մինչև գործողության հանգուցալուծումը դեռ հեռու է։

— Ոչինչ, պարոնայք,— խոսակցության մեջ մտավ Նեկրասովը,— սպիտակ վերնաշապիկներով դերասաններն իրենց դերը գիտեն։ Միայն թե հուսախաբ չանեն մեր թիֆլիսյան ռեժիսորները...

Վատնինը հանեց լայն թաշկինակը, սրբեց ճակատից հոսող առատ քրտինքն ու ասաց.

— Ա՛յ, հիմա աղ դրած վարունգ լիներ։ Եվ կվաս...

Թուրքերը Բայազետի մուսուլմանների անունից գնդապետ Խվոշչինսկուն նվեր տվեցին մի նիհար, փետրահան սագ՝ կապույտ, գարշելի բշտիկներով. Սակայն նրանք այն մատուցեցին վեհապանծ արարողությամբ՝ հարուստ սկուտեղով, և գնդապետն ընդունեց նվերը։

— Այս ի՞նչ է նշանակում,— զարմացավ Նեկրասովը։— Այսպիսի սագ նույնիսկ շունը չի ուտի։

— Մի՛ վիճեք, կապիտան, այստեղի շները խտրական չեն։ Բայց այդ նվերով թուրքերը ուզում են ասել, որ իրենք ևս աղքատությունից այնպես խեղճացած են ու հյուծված, ինչպես այդ սատկած սագը։ Սակայն լրտեսների միջոցով ինձ արդեն հայտնի է, որ նրանք, մինչև մեր գալը, իրենց բոլոր հարստությունները նախապես թաքցրել են։

Մզկիթի կողքով անցնելիս՝ Խվոշչինսկին ուշադրություն դարձրեց բազմաթիվ փականների վրա, սկսած փոքրիկ կողպեքից, վերջացրած ահռելի ճարմանդներով, որոնցով Ռուսաստանում վաճառականները գիշերը փակում են պահեստներն ու խանութները։ Փականները ծածկված էին ժանգի հաստ շերտով, մի քանիսը, հավանաբար, կախված էին արդեն հարյուրամյակներով, և դա հետաքրքրեց գնդապետին։

— Ալլահը մեծ է,— բացատրեց նրան մի էֆենդի մեյդանում։— Ապրանքի տերը, եթե չմեռնի սպասելուց, ապա մի օր իր կողպեքը բացված կտեսնի։ Նշանակում է հրաշք է տեղի ունեցել, և այժմ կկատարվեն նրա ցանկությունները...

Նիկիտա Սեմյոնովիչը թափահարեց մտրակը.

— Հրաշքը կկատարվի այսօր, յուրաքանչյուրը կարող է ինձ խնդրագիր տալ, և մենք կկատարենք նրա ցանկությունները, կլուծենք նրան անհանգստացնող բոլոր հարցերը...

Փրփրահույզ գետը, պոկվելով մոայլ կիրճից, շրջանցում էր ընդարձակ մեյդանի աղմկոտ հրապարակը։ Գետը պղտոր էր, սրընթաց ու Լրդեցիկ։ Բժիշկ Սիվիցկին անմիջապես հանձնարարեց ջուրը մաքրել շիբով, համովացնել կիտրոնաթթվով՝ վարակից խուսափելու համար։ Շուտով պարզվեց, որ գետում շատ ձուկ կա։ Կազակներն արդեն սկսել էին ձուկ բռնել, ինչպես արտահայտվեց Շտոկվիշը... «իրենց վարտիքներով»։

Պատմության և ամրաշինության վերաբերյալ ունեցած իր գիտելիքներով Կլյուգենաուն խորտակում էր մյուս սպաների ռոմանտիկական թեթև տրամադրությունը։

— Դուք ծիծաղում եք, պարոնայք, ինձ բանաստեղծ անվանելով,— ասում էր նա,— բայց դուք ինքներդ եք բանաստեղծ, եթե սպասում եք, որ ձեր առջև կտեսնեք հեքիաթային մի դղյակ։ Իսկ փաշան, որ ստեղծել է Բայազետը, նրա պատերի հետևից մի ժամանակ իր ձեռքում էր պահում ամբողջ Քուրդիստանը։ Սակայն նրա թոռ Բալուլ փաշան ավելի շատ ուշադրություն էր նվիրում հարեմին, և Աբդուլ-Մեջիդ սուլթանը նրան Բայազետից վտարեց Հասան-Կալե։ Հիմա մենք Բայազետը կտեսնենք ինժեներական արվեստի այն նույն մակարդակով, ինչպես Սուվորովի և Ռումյանցևի ժամանակներում։ Ղարսի և Էրզրումի ամրոցները միշտ գտնվել են ֆրանսիացիների և անգլիացիների տեխնիկական վերահսկողության տակ։ Իսկ Բայազետն արդեն ամրոց չէ...

Կարմիր և սպիտակ քարերի հարթ կտորներից շարված Բայազետի միջնաբերդն իր լայն բացված դարպասներով գրավում էր բոլորին։ Եվ ահա թմբուկների համաչափ զարկերի ուղեկցությամբ կամարների տակով անցնում էին հետևակի ու հեծելազորի բաց դրոշները, կազակների կրծքանշանները։ Հետո, խստադեմ ժամապահներով շրջապատված,

ամրոց մտավ դրամարկղով բեռնված սայլը։ Արկղի մեջ հաշաձև կապված, զմռսված կաշվե պարկեր էին՝ ռուսական ոսկով (Թուրքիայի հետ պատերազմը պահանջում էր կաշառքի համար ոչ պակաս ոսկի, քան գնդակների համար՝ կապար)...

— Իսկ դա ի՞նչ է,— հարցնում էին ճանապարհի եզրերին կանգնած հետաքրքրասեր թուրքերը։

— «Казна»,— նրանց վրա գոռաց գրագիրներից մի հաղթանդամ ֆելդֆեբել, և թուրքերն իրենց կոշիկներն ու ֆեսերը կորցնելով, իրար հրմշտելով նետվեցին այս ու այն կողմ. նրանք շփոթել էին ռուսերեն «կազան» բառը մահապատիժ (казнь) բառի հետ։ Ոչ անմիջապես հաջողվեց այդ բանը բացատրել նրանց։

Ներումի գրենադյոր Խրենովը, որն իր ծառայության ժամանակ երկրորդ անգամ էր Բայազետ մտնում, տեղնուտեղը հիշեց մի պատմություն։

— Ուրեմն, եղբայրներ, երբ Նիկոլայ Պավլիչը՝ հանգուցյալ կայսրը, Թիֆլիս էր եկել, ժողովուրդն էլի էսպես սխալ էր լսել։ Երեկոյան կողմը Մադաթովի հրապարակում ժողովուրդը հավաքվել էր թագավորին տեսնելու։ Այնքան շատ մարդ, ոնց որ գորտաձուղ։ Առավոտվանից սպասում էին, ոմանք եկել էին ինքնաեռներով, հարմար տեղեր զբաղեցրել։ Եվ ահա, եղբայրներ իմ, գալիս է թագավոր Նիկոլայ Պավլիչը, ականջը չկանչի։ Գալիս է, ուրեմն, ինչպես հարկն է։ Կառքից դուրս է գալիս, որ չի՞ բղավում Ռոզեն... Ի՞նչ է կատարվում այնտեղ։ Մի սարսափելի բան... Բոլորն սկսում են փախչել, ով որտեղ պատահի։ Երեխաներին ոտքերի տակ են տալիս, կանանց են ճզմում։ Եվ այդ բոլորն այն պատճառով, որ թագավորի մոտ մի գեներալ կար Ռոզեն անունով։ Գերմանական ծագում ուներ։ Ժողովուրդը շփոթել էր. թվացել էր, թե թագավորն իբր պահանջում է ճիպոտահարել (розог), և հիմա բոլորին, մեծից-փոքր, պիտի մտրակահարեն։ Չէ որ հանգուցյալը սիրում էր մտրակահարել...[1]

[1] Թիֆլիսի այդ ինքնատիպ «վազվզուքը» տեղի է ունեցել Նիկոլայ 1-ի Կովկաս այցելելու ժամանակ, 1837 թ. (հեղ.)։

Եվ զինվորների շարասյունը Բայազետի դարպասներից ներս մտավ խլացուցիչ հռհռոցով, կարծես գնում էին մեծ տոնակատարության, և ռուս մարդու այդ հանդուգն ծիծաղը արթնացրեց ամրոցի մռայլ անցումները։ Վերջին շարքերում նույնիսկ չգիտեին, թե ինչու են ծիծաղում առաջին շարքերում, բայց հաճույքով ու միաբան ձայնակցում էին ծիծաղին, ինչպես երգին...

Սպաներն իզուր փորձում էին Խվոշչինսկուն հետ կանգնեցնել իր մտադրությունից. Բայազետի գրավման հենց առաջին օրը սպասյակին կարգադրեց հավաքել սպիտակեղենը և ուղղվեց դեպի տեղական բաղնիքը։ Առատ վճարելով իրեն լողացնող քիսաչիներին՝ նա Բայազետի բնակիչներին անմիջապես հասկացնել տվեց, որ իր այստեղ գտնվելը պատահական չէ։ Իսկ գիշերը շրջում էր քաղաքի հետնախորշերը և ստուգում պահակությունը. նրա առջևից գնում էր միայն մի կազակ՝ լապտերը ձեռքին, ուրիշ ոչ մի պահակ չկար։

— Այսպե՛ս պետք է հնազանդեցնել թուրքերին,— ասում էր գնդապետն իր սպաներին,— ցույց տուր նրանց, որ վախենում ես նրանից և դու կորած ես...

Սկսվեց Բայազետի կայազորի հրամանատարի փառավոր գործունեությունը, որը նույնիսկ հիմա էլ, ավելի քան 100 տարի անց զարմանք է պատճառում։ Վրայից գցելով համազգեստը՝ Նիկիտա Սեմյոնովիչը հրամայում էր, թելադրում, զորադասավորման պլաններ մշակում։ Նա կարգադրել էր բաց երկնքի տակ, ամրոցի բակում դնել մի քանի սեղաններ և մի թախտ։ Մի սեղանի մոտից մյուսին անցնելով, թերթելով թղթերը և խրատելով սպաներին՝ նա շուտ հոգնում էր, պառկում մեջքի վրա՝ ծալելով հիվանդ ոտքերը։ Եթե նա որևէ հրաման էր տալիս, ապա անպայման ոտքի էր կանգնում, իսկ եթե ուղղակի խոսում էր կամ հարցնում որևէ բան՝ նորից էր պառկում։ Առաջին երկու օրը նա գրեթե չէր քնում և չէր ճաշում, վերցնում էր մի կտոր հաց, ծամում, հոգ չէր տանում ամանեղենի մասին, ինչ բաժակ տեսներ, նրանով էլ կխմեր։

— Այ՛ քեզ ծերուկ,— զարմանում էր Նեկրասովը,— ես այդպես չէի կարող...

Խվոշչինսկին մի լավ հատկություն էլ ուներ, որ փոխանցվել էր նշանավոր Սկոբելևից, որի հետ նա ռազմական արշավանքի էր եղել, որևէ սպայի նկատողություն անելիս գնդապետն անմիջապես ձեռքը մեկնում էր նրան և ասում.

— Հուսով եմ, որ այդպիսի անկարգություն այլևս չի լինի։ Ես ձեզ հարգում եմ և երջանիկ եմ, որ ծառայում եմ ձեզ հետ...

Եթե Խվոշչինսկին պալատական լիներ, նրանից ճարպիկ բանսարկու կստացվեր, նա, ինչպես ոչ ոք, կարողանում էր զգալ պահը՝ երբ է հարկավոր սեղմել վաշտի գրագրի ձեռքը, որը ապշում էր այդպիսի պատվից, և երբ երեսը չուռ տալ պահակափոխումից ուշացած սպայից։ Գնդապետը լավ էր հասկանում նաև ում կարելի էր տալ երկու-երեք պարգև, ում բավական էր և մեկը։ Գնդապետը սիրում էր, որ առավոտյան սպաները գային իր մոտ բարևելու. նա սիրում էր նաև, երբ իրեն հարցնում էին հիվանդ ոտքի մասին։ Սակայն դրանք ներելի փառասիրության մանրուքներ էին, որոնք ոչ ոքի չէին կարող վնասել...

Բայազետի նկուղներում, խոր գետնի տակ, ամենահաս բարոն Կլյուգենաուն գտավ ռուսական մի հնագույն հրամանդ և երկու մարդկային կմախքներ՝ դարասկզբի զինվորական համազգեստի պատառիկներով։ Գամահանելով ոսկորների վրայից շղթաները՝ նա կարգադրեց դուրս բերել անանուն գերիների աճյունները։ Մի կմախքի դաստակների վրա երևում էին հնացած ֆոնտանելներ[1] (երևի փորձված ռազմիկ է եղել)։ Նկուղից հանեցին նաև հուսարական մի կիսափտած մախաղ՝ անվանագրով և «Օտեչեստվեննիե զապիսկի»-ի մկների կրծած մի հատոր՝ 1818 թվագրությամբ։

— Թաղեք նրանց այնտեղ, բարձունքի վրա,— հրամայեց Շտոկվիշը, և ռուս զինվորների աճյունները թաղեցին բլրի գագաթին՝ սպիտակ, վիթխարի թխկիի տակ, որի փչակում ազատ տեղավորվեց էրիվանյան միլիցիայի գրասենյակը։ Դրանք առաջին գերեզմաններն էին Բայազետում, բայց ոչ վերջինը, և շուտով այդ բլուրը սկսեցին կոչել «Պատվո բլուր»...

Մարդիկ աստիճանաբար սկսեցին ավելի ուշադիր դիտել

[1] Ֆոնտանել — արհեստական վերքերի հետքեր։

Բայազետը։ Քաղաքը դեմք չուներ, համենայն դեպս, սկզբից շատերին այդպես էր թվում։ Բայց այն կար։

Սակավաթիվ պահակաջոկատներով շրջափակված սահմանի մոտիկությունը, վրեժխնդրական արյունարբու բարքերը, որոնք բորբոքվում էին իմամների քարոզներով, թե պատերազմը գյավուրների դեմ հարկավոր է ալլահին, ազգամիջյան կոտորածները, երբ թուրքերը պատռում էին ծծկեր երեխաների փորոտիքը, և վերջապես մաքսանենգի վատնած վերջին դինարները,— այս ամենը դրոշմված էր քաղաքի դեմքին։ Նույնիսկ տներն այդ քաղաքում շինված էին զարդ-թափերին, որովհետև բայազետցու գլխավոր հոգսն էր տունն անառիկ դարձնել, որպեսզի պաշարման ժամանակ կարողանար փրկվել ընտանիքի հետ։

Իսկ ծուռումուռ ու կեղտոտ փողոցների միջև թթվում էին հազար ու մի աղտոտություններով լցված գարշահոտ առուները, հարեմների նեղ պատուհանները բացվում էին հետնաբակերի վրա, ուր դալկանում էին մի քանի խղճուկ ծառեր, և այնտեղից երեկոները լսվում էր զուռնայի ոռնոցն ու մենակյաց կանանց թախծալի ու միալար երգը։

Բայազետում դեռ գործում էին հին ռուսական քսանհինգ և հիսուն կոպեկանոցները. թուրքական դրամների կեսը կեղծ էր։ Դրանք Ռուսաստանի՝ Թուրքիայի դեմ անցյալում վարած պատերազմների և Բարձր Դռան լիակատար ֆինանսական քայքայման նյութական ապացույցներն էին։ Թուրքերի պղնձյա դրամները ևս վերահատվում էին ռուսական հինգ և մեկ կոպեկանոցներից. Եկատերինա II-ի կիսապատկերը պարզ երևում էր սուլթան Աբդուլ-Մեջիդի անվանագրերի տակից։ Սակայն զինվորներն արագ սովորեցին հաշվել դուրուշները, պիաստրներն ու թումանները, թեև նրանք, այնուամենայնիվ, չէին կարողանում բացատրել ռուսական ռուբլու կուրսի անկումը։

— Տեսնում ես՝ ինչ աղքատ ժողովուրդ է,— դատողություն էին անում կայազորում։— Իմ ռուբլու համար նույնիսկ լրիվ վճարել չի կարող։ Քսան պիաստր է տալիս, էլ ոչինչ չունի։ Ախր որտեղի՞ց վերցնեն այդ մուրացկանները։ Հողը չեն վարում, միայն պատերազմով են ապրում անօրենները...

Մի սաժեն փայտը Բայազետում արժեր քսան-երեսուն

ռուբլի։ Կինը շատ ավելի էժան արժեր։ Եվ կյանքի ու մահվան շուկայում բոլորովին չնչին էր մարդկային արյան գինը...

Ամրոց մտնելու երկրորդ օրն արդեն գնդապետ Խվոշչինսկին կարգադրեց քաղաքի նշանավոր բնակիչների ընդունելություն կազմակերպել։ Բայազետի վալին հասցրել էր քաղաքից դուրս բերել իր հարեմը, բայց փախել էր այնքան շտապ, որ քաղաքում էր թողել մի քանի գեղեցիկ տղաներ, առանց որոնց հարուստ թուրքը յոլա գնալ չի կարող։

Վաճառականներից և հոգևորականությունից բացի չէին հասցրել փախչել նույնիսկ սուլթանական որոշ չինովնիկներ. մյուրիդը՝ ոստիկանության պետը, գայմաղամը՝ դավառապետը, և մյուլտեզիմը՝ հարկահավաքը։

Նիկիտա Սեմյոնովիչը ճաշկերույթը նշանակել էր երեկոյան ժամը 6-ին։ Բայց երբ սպաները ներկայացան ամրոցի ամրապատնեշի առջև խփած տոնական վրանը, Կլյուգենաուն դաժանորեն ծաղրեց նրանց ճշտապահությունը.

— Պարոնայք, մի՞թե դուք այդքան քաղցած եք։ Նշանակված ժամին ներկայանալ ճաշի ըստ արևելյան սովորության անտակտության գագաթնակետն է։ Նորից հետ գնացեք զորանոցները և կվերադառնաք գոնե մի ժամ հետո։ Որքան ավելի կարևոր է հյուրը, նա պետք է ստիպի տանտերերին այնքան երկար սպասել իրեն...

Որպեսզի անհարմար վիճակի մեջ չընկնեն, սպաներն ամբողջ մեկուկես ժամ ուշ եկան և նորից եղան առաջինները։ Բայց շուտով երևացին և հյուրերը՝ շրջապատված ծառաների ամբոխով, որոնք նրանց հետևից բերում էին փափուկ նստարաններ, լագաններ, հովհարներ և անխուսափելի նարգիլեները։ Երբ հյուրերը մտան վրան, միայն այդ ժամանակ, ոչ ավելի շուտ, նրանց առջև երևաց Խվոշչինսկին։

Իր կարճ ճառում նա խոսեց այս պատերազմում Ռուսաստանի հետապնդած նպատակների ազնվության մասին։ Բայազետի բնակիչներին հանգստություն ու պաշտպանություն խոստացավ և ճառն ավարտեց Ղուրանից բերված մի երկար քաղվածքով։

— Մենք հարգում ենք ձեր հավատը,— ասաց նա,— սակայն մեզ համար անհասկանալի է, թե ինչպես դուք՝ Ղուրանը սրբությամբ պաշտպանող մուսուլմաններդ, խախտում եք

նրա պատվիրաններից մեկը։ Ղուրանն արգելում է պատերազմը անհավատների դեմ, ինչպես դուք մեզ կոչում եք, որովհետև դուք՝ մուսուլմաններդ, լինելով ավելի թույլ և ավելի քիչ, քան քրիստոնյաները, դրանով իսկ ձեզ և ձեր հավատը ենթարկում եք լիակատար ոչնչացման վտանգի...

Իր ճառի ընթացքում Խվոշչինսկին նստած էր աթոռին, թուրքերի առջև, իսկ վերջիններս նրան լսում էին կանգնած։ Ավելին, ամենապատվավոր տեղում, հենց ավագ էֆենդու դիմաց, նա նստեցրել էր պրապորշչիկ Լատիշևին (ինչպես հետո ծիծաղում էին՝ նրա գերազանց համեստության համար)։ Սակայն պատասխան խոսքում Բայազետի մյուլտեզիմը, որ մի փնթի ծերուկ էր՝ գանգի վրա այլանդակ սպիով, ասաց մոտավորապես հետևյալը.

— Մենք, փա՞ռք ալլահին, իզուր չենք ապրել մեր կյանքը, որովհետև ծերության հասակում երջանկություն ունենք տեսնելու այն աստվածային լույսը, որը ծագում է հիանալի Խվոշչին փաշայի դեմքից, իսկ դա ամենամեծ հաճույքն է բոլոր հաճույքներից, որ կարող են հայտնի լինել ուղղահավատներին։ Եվ, թո՛ղ մեծ լինի ալլահը, իմ աչքերի առջև իրագործվում է Մահմեդի մարգարեությունը՝ քրիստոնյաները կհաղթեն օսմաններին, իսկ այնուհետև շուտով դրան կհետևի աշխարհի վերջը...

Հյուրերին հարուստ նվերներ տվեցին, թուրքերին հատկապես ուրախացնում էին ռուսական մորթիները, որից հետո հրավիրեցին սեղանի մոտ։ Նստելով ղադիի կողքին՝ Նեկրասովը հարցրեց նրան.

— Ասացե՛ք, դուք ինչո՞ւ չպաշտպանեցիք Բայազետը։

Խորամանկ դատավորը պատասխանեց ոչ անմիջապես.

— Ղարսը հայտնի է իր պարիսպների ամրությամբ, Էրզրումը՝ բնակիչների քաջությամբ, իսկ Բայազետը նշանավոր է գեղեցիկ կանանցով։ Էլ ի՞նչ պաշտպանություն եք ուզում դուք մեր քաղաքից...

Սկզբից փոքրիկ գավաթներով թեյ խմեցին։ Հետո նոր համազգեստներ հագած մուսուլման սպասավորները սկուտեղով ներս բերեցին սպիտակ բրնձի վիթխարի մի սար, որն իր արտաքին ձևով հիշեցնում էր Արարատի ուրվագիծը

և որի գագաթին խրված էր ռուսական փոքրիկ դրոշակ, և դա, ըստ երևույթին, տխրեցրեց թուրքերին։

— Այո՛, շուտով աշխարհի վերջը կգա,— տխուր հառաչեցին թուրքերը և, վերջնականապես հուսահատվելով, սկսեցին բրինձն ուտել ոչ թե մատներով, այլ պատառաքաղներով։

Սեղանի վրա երևացին բուրումնավետ համեմունքներ։

Նշի սոուսով ողողված փասիաններ, մեղրի մեջ եփած ճտեր և, վերջապես, որպես համադամ կերակուր, մատուցեցին հորթի խաշլամա։

— Ուղղակի ափսոս է առանց օղու ծամել այս ամենը,— դառնությամբ ասաց Վատինը և աննկատ դուրս եկավ. նրա հետևից ինչ-որ պատրվակով հեռացավ Շտոկվիշը, այնուհետև մեկ-մեկ քաշվեցին նաև մյուսները։

Հյուրերի աչքերն արդեն մշուշվեցին հագեցումից, նրանք արագ-արագ լիզում էին մատները, կզակներից յուղը կաթում էր նվիրած մորթիների և կապույտ մետաքսից կարված խալաթների վրա։ Բայց ահա սեղանի վրա նորից արագ փոխվում են կերակուրները՝ շաքարով շաղախված չոր նուշ ու նարինջ, ռահաթ-լոխում, հալվա ու պաղպաղակ...

Հաջորդ օրը Բայազետում կարելի էր դիտել այսպիսի տեսարան. փողոցներում փոշի էին բարձրացնում ոչխարների հոտերը, թուրքերը տանում էին զանազան կապոցներ, դղրդում էին տնային կահ-կարասիով բեռնված սայլերը։ Դրանք մուսուլմաններն էին, որոնք, համոզվելով անվտանգության մեջ, նորից իրենց տներն էին վերադարձնում թաքցրած ունեցվածքը։

Երբեմն լսվում էին այս կարգի խոստովանություններ.

— Շնորհակալություն քեզ, Մարուք,— գլուխ է խոնարհում թուրքը հային,— դու ինձ լավություն ես արել, և ես քեզ վարձահատույց կլինեմ։ Շուտով ահա քրդերի հետ կգա Ցուրիկ փաշան և կսկսեն թալանը։ Բայց դու մի վախենա, ես էլ քո ունեցվածքը կպահեմ իմ տանը։

Այդ շարաբաստիկ «շուտով»-ի մեջ մի ինչ-որ տարօրինակ բան կար, որին չէիր կամենա հավատալ։

Առաջինը, որպես կանոն, չէր դիմանում Նեկրասովը։

— Արևելյան երանություն,— ասում էր նա, մթության մեջ իրարանցում սարքելով։— Գրաֆիններ՝ անուշաբույր ըմպելիքներով ու կրքոտ կանայք՝ անդրավարտիքներով, շատրվաններ ու նարգիլեներ։ Մինարեթներ ու օշարակներ, հարճեր ու նրբերշիկներ... Օ՜, օ՜, պարոնայք անիծված բանաստեղծներ։ Մինչև ե՞րբ դուք պիտի խաբեք խեղճ քաղքենիներին։ Ո՜չ, ես այլևս չեմ կարող, գնում եմ տանիքի վրա քնելու...

Վերցնելով մի վերմակ ու բարձ՝ նա գնաց։ Նրա հետևից բարձրացավ Շտոկվիշը, որը, մոմերը վառելով, լուսավորեց սպայական զորանոցը։ Արագ վերադասավորվելով՝ փայտոջիլներն ամբողջ խմբերով շտապ թողնում էին արյունալի մարտադաշտերը։ Սակայն նրանց փոխարինելու համար մարտական շրջյունով դուրս էին սողում ուտիճների անկազմակերպ խմբերը։ Բարբարոսական ասպատակությունները շարունակվեցին ամբողջ գիշեր. լուցկու բոցից լուսավորվող զարհուրելի խավարի միջից լսվում էր խոշտանգվածների վայնասունը, լուսադեմին զորանոցում մնացել էր միայն բարոն Կլյուգենաուն, որը հավատացնում էր, թե իրեն «ոչ մի բան չի կծում»։

— Ձեզ՝ կազակներիդ համար լեռներում, այն էլ վրանների տակ, լավ է,— մի անգամ նախանձելով ասաց Եվդոկիմովը։— Իսկ գիտե՞ք, թե ինչ է նշանակում պատերը ներկել։ Եթե չգիտեք, ապա գնանք, ես ձեզ ցույց կտամ։

Թուրքական սահմանապահների զորանոցում, որտեղ տեղավորվել էին Ղրիմյան գումարտակի զինվորները, մի պատը մուգ դարչնագույն էր. դա անքնությունից կատաղած զինվորներն էին կրունկներով սատկացրել փայտոջիլներին։

— Մինչև առաստաղը կհասցնենք,— համոզված հայտարարեց ֆելդֆեբելը։— Թող անհավատներն ուրախանան, որ նույնիսկ իրենց պատերը ռուսական արյունով են ներկված...

Սակայն ամրոցում և զորանոցներում տեղավորված զինվորները դեռ երջանիկ էին։ Ավելի վատ էր տեղական բնակիչների տներում տեղավորվածների վիճակը։ Մարդկանց հետ

միասին մի հարկի տակ պատսպարվել էին գոմեշները, ձիերն ու ոչխարները։ Լինում էր նաև, որ ներքևում բառաչում էին կովերը, իսկ վերևում բնակվում էր մի նշանավոր էֆենդի՝ իր կանանց հետ։ Անասունների գոլորշին և աղբի սուր ժանտահոտը բարձրանում էին վերև՝ շնչահեղձ անելով զինվորներին...

Սակայն դրանք լոկ մանրուքներ էին, որոնց վրա այն ժամանակ ջանում էին ուշադրություն չդարձնել։ Ամենագլխավորը՝ Բայազետը, գրավված էր, ռուսական դրոշը ծածանվում էր հնագույն ամրոցի վրա։ Աստիճանաբար լեզվից անհետանում էին նույնիսկ թուրքական անունները և առաջանում նոր անուններ՝ Վատնիշչևո, գերեզմանոցային Պատվո բլուր, շտաբային Նեկրասովկա, Բիվակ Իսմայիլկա, իսկ Կլյուգենաուի բերած սակրավորային գույքի և հեռագրային սյուների պահեստները զինվորները կոչել էին նույնիսկ բարոնի համար վիրավորական՝ Կլյուշկինի տնակ անունով։

Թեփերիզի լեռնանցքից վերադարձավ Կարաբանովի հարյուրյակը։ Ճանապարհի խաշմերուկում, մուսուլմանական գերեզմանոցի մոտ, նամազ անող մուեզզինների վայնասունների ներքո զինվորները աթուրմա և գորոդկի էին խաղում։ Զորանոցային նվագախումբը, տեղավորվելով քարվանսարայի տանիքին, ուղղահավատներին վախեցնում էր աշխույժ մազուրկաներով, Շտրաուսի վալսերով և Գլինկայի «Կամարինսկայայով»։

— Դուք խելագարվե՞լ եք, ինչ է,— ասաց Կարաբանովը, որ ասես վայրենացել էր անապատից հետո, և շոշափեց վաղուց չսափրված, հոգնածությունից փոս ընկած այտը։ Նա չճանաչեց Բայազետը...

Կազակներն իջան ձիերից։ Լեռնանցումից հետո ձիերն այն աստիճան ուժասպառ էին եղել, որ նրանցից շատերը շների պես նստում էին հետևի ոտքերին, ընդ որում այնպիսի տնքոց հանելով, որ նման էր խուլ ոռնոցի։ Նրանց վրայից արդեն մի քանի օր թամբերը չէին հանել։ Խաշված և տորված մեջքերով նրանք հրաժարվում էին գնալ վարգով և այսօր առավոտյան չկարողացան հասնել երկու թուրք հետիոտն զինվորների հետևից։

— Ի՞նչ է պատահել նրանց,— հարցրեց Խվոշչինսկին։

— Բարև ձեզ, պարոն գնդապետ,— պատասխանեց Կարաբանովը՝ հոգնածությունից օրորվելով։— Կարծում էինք, որ տեղ չենք հասնի... Կապանները շատ ուղղաձիգ էին և քարքարոտ։ Վայրէջքների ժամանակ ձիերը ոտներով դիմհար էին տալիս և կորցնում պայտերը։

— Գնացեք քնելու,— թույլ տվեց գնդապետը։— Հարյուրյակն ուղակի տարեք ամրոց և տեղավորվեք որտեղ ուզում եք, մինչև վաղը։ Թե չէ, ձեզ նայելն անգամ սարսափելի է...

— Շնորհակալություն, պարոն գնդապետ։

Հարյուրյակը միջնաբերդ մտցնելով՝ Անդրեյը կարգադրեց ձիերի համար ախոռ գտնել։ Ուժասպառ ձիերը պառկում էին բակի քարե ողորկված սալերին։ Ձիերը հոգնածությունից չորացած դնչերը պարզում էին դեպի շատրվանային ավազանի պատնեշը. ասես զգում էին, որ հենց այստեղ պետք է ջուր լինի։

Այդ ժամանակ ինչ-որ տեղից հանկարծ հայտնվեց Իսմայիլ խան Նախիջևանսկին և, ինչպես երևում էր, ոչ այնքան լուրջ վիճակում. նրանից բավական ուժեղ փչում էր «անգելիկայի» հոտը։

— Ինչո՞ւ ձիերի պոչերը չեն կտրված,— հարձակվեց նա ուրյադնիկ Տրյոխժոննու վրա։— Աչքերդ որտե՞ղ են եղել, գարշելի, նայի՛ր պոչին։ Բոլորովին այն պոչը չէ, ինչ պետք է...

— Իսկ ինպիսի՞ն է պետք, ձերդ պայծառափայլություն։ Պոչը պոչ է։

Կարաբանովը թքելով մոտեցավ նրանց, որպեսզի դադարեցնի այդ դատարկ խոսակցությունը։

— Պայծառափայլ խան,— ասաց նա շինծու քաղաքավարությամբ,— մեր ձիերը ամբողջ ժամանակ թամբի տակ են։ Եթե միլիցիան, որի հրամանատարը լինելու պատիվ ունեք դուք, մտադրություն ունի թուրքերին երևալ պոչի կողմից, ապա մենք, ընդհակառակը, հոգ ենք տանում ձիերի բաշերի մասին։

— Հիշեք, պորուչիկ,— գաղափեց Իսմայիլ խանը,— ձեր, որպես հարյուրապետի, համբավը ամբողջովին կախված է ձիերից։

— Կհիշեմ,— խոստացավ Անդրեյը։— Դժբախտաբար,

խան, մեր համբավը ընդհանրապես շատ հաճախ կախված է անասուններից...

Աչքին երևաց ուրյադնիկը։

— Իսկ քո լեզվից ո՞ր սատանան է քաշում,— զայրույթով ֆշշաց Կարաբանովը։— Պատասխանիր ինձ, երբ քեզ կհարցնեմ։ Իսկ ինչի՞ համար ես խանի հետ դատարկաբանում։ Կանգնիր և լռիր քարի պես... Երիքոնի բթամիտ։

Պորուչիկը Լորդի ոտքերի մոտ գցեց մի խուրձ խոտ և, թունդ հայհոյելով, երեսնիվայր ընկավ նրա վրա։ Փակելով աչքերը՝ Անդրեյը դեռ հասցրեց մտածել, որ շատ է փոխվել այդ օրերի ընթացքում. հետո նա թռավ թամբին և սլացավ ինչ-որ տեղ, դեղին տերևները պտտվեցին օդի մեջ, Ագլայան գնաց նրան ընդառաջ, հեռվից պարզելով ձեռքերը...

— Տեսնում ես ինչպես է գոռգոռում,— ասաց Դենիսկա Օժոգինը, երբ Կարաբանովը քնեց։— Երևում է, մեր գնդապետի կինը Իգդիրում չի հարգել նրան, և ահա խելառություն է անում հիմա։

— Իսկ դու որտեղի՞ց գիտես,— հարցրեց պեպենոտ Եգորիչը։

— Դե, Սաշկա Լիխովը շրջագայելիս տեսել է, թե ինչպես նա լուսամուտից թռել է այդ կնոջ մոտ։

— Գրողը տանի նրանց,— մռայլ եզրափակեց ուրյադնիկը։— Իրենց գործն է։ Դե, կինն էլ ինքը ծաղկուն հասակում է, միայն հնարավորություն տուր... Իսկ նորին բարձր բարեծնունդն արդեն այն չէ։ Քնե՛նք, կազակնե՛ր։ Վաղը, ով գիտե, մեզ նորից սարերը քշեն...

Սակայն այս անգամ նրանց չքշեցին, գնդապետ Խվոշինսկին որոշել էր կազակներին հանգիստ տալ և երկու հարյուրյակ դուրս բերեց ամրոցից՝ տեղավորելով նրանց Ալագաղի և Աղրիդաղի ստորոտներում, որպեսզի քաղաքը պաշտպանի արևմուտքից, ուր ոլորապտույտ ճանապարհը բարձրանում էր լեռները, ձգվում դեպի Ղարաքիլիսա և Ալաշկերտ, ապա մինչև Էրզրում։

Սկսվեց վրանային ազատ կյանքը։ Սակայն երբ հերթապահում էին, օրենք էր՝ ձիերը ջրելուց հետո թամբել, դանգանավանդները հագցնել, քնել հանդերձանքով, զենքերը պահել իշոտնուկ արած։ Կազակներին տափաստանային ձիաբուծարաններից ուղարկել էին երիտասարդ խամ ձիեր՝ շատ չար ու կամակոր։ Ուստի հարյուրյակները ոչխարների և ուղտերի հոտերը պահպանում էին ասպատակություններից, խամ ձիերին անդադար արշավախաղերով ընտելացնում թամբին։ Եվ շուտով այդ խենթերը պարծենկոտությամբ սլանում էին ցանկապատերի ու փոսերի վրայով, ցատկոտում թամբին, հռհռում և ասպանդակով վերցնում ընկերոջը, որն ընթացքի մեջ տափաշշից գինի էր լցնում դավաթը և տալիս հեծյալին խմելու։

Կարաբանովը սկզբից վախենում էր կազակների համար, հետո, ոչինչ, ընտելացավ։

— Միայն վզներդ չկոտրեք, լոթիներ,— խնդրում էր պորուչիկը (ինքը, ընտելացած լինելով հեծելաերթի միայն բարձրագույն դպրոցին, խուսափում էր հանդուգն ձիախաղերից, որպեսզի չխայտառակվի)։

Լեռներում սնունդն ավելի առատ էր, քան ամրոցում, մեկ-մեկ էլ Դենիսկա Օժոգինն էր գողություն անում՝ տաք կերակուրների համար։ Հովիվները տափաստանային մարդիկ են, նրանց աչքերը արծվի աչքերի պես սուր են։ Երեկոները հոտը քշում են մի խոր կիրճ, տարեց հովիվը մի հայացքով նայում է հոտին և անմիջապես ասում.

— Մի ոչխար չկա։

Սկսում են հաշվել, բոլորը տեղն են։ Մյուս օրը նորից է դուրս գալիս տարեց հովիվը, աչալրջորեն զննում հոտը և նորից.

— Մեկը չկա...

Հաշվում են՝ նորից բոլորը կան։

Մի անգամ խամած վիճակում Դենիսկան ինքը խոստովանեց Կարաբանովին։

— Ձերդ բարեծնություն, դա գողություն չէ։ Մի՞թե մենք գողանում ենք... Այդ սատանան թեև ծեր է, բայց ոչխարները աչքերով է հաշվում։ Իսկ ես հիմար չեմ, մի յուղալի ոչխարի վզին նախօրոք քար եմ կախում։ Ոչխարն էլ չի կարողանում գլուխը վեր բարձրացնել, այդ ժամանակ էլ նա գոռում է, թե մեկը չկա։ Իսկ ոչխարն այդտեղ է, ձերդ բարեծնություն, հոտի մեջ։ Դե, երբ արդեն ընտելանում են,

որ «մեկը չկա», այստեղ արդեն ոչխարը գցիր կաթսայի մեջ, նա ավելորդ է...

— Ախ, Դենիսկա,— մի անգամ չէ, որ Վատնինը սպառնում էր նրան մտրակով,— հարկավոր է քեզ...

— ...Ուրյադնիկ դառնալ,— ուրախ լրացնում է Օժոգինը։

— Ուրյադնիկ, դա ճիշտ է,— մռայլ համաձայնում էր Վատնինը,— միայն գջլոտված ուրյադնիկ։ Մտրակը հո տեսնո՞ւմ ես...

Եվ խարույկների վրա շուռումուռ տալով հրացանների շամփուրները, որոնց վրա ոչխարի թարմ մսի յուղալի կտորներ էին խորովվում, ումանցիներն ասում էին.

— Դե ի՞նչ, եղբայրներ, կարծես թե վատ չենք ապրում, մարդ ենք դարձել...

Շտոկվիչն ամբողջովին թաղվել էր Իգդիրից բերված թարմ թերթերի մեջ, ընթերցելով՝ խոր հոգոց էր հանում և երկար քորում գլուխը։

— Ի՞նչ ապրումների մեջ եք, պարոն կապիտան։

— Դե այստեղ, հասկանում եք, երբեմն չափազանց հետաքրքիր բաներ են լինում։ Թեև փչոցն էլ բավական է...

Զինվորը սմքած էր ու թեթև, կարծես այրվել էր ներսից։ Զինվորը դեռ նիկոլաևյան էր, այդպիսիները հազվադեպ են ծալվում։ Անմիջապես կոտրվում են երկու կեսի, և կարելի է արդեն դագաղի մեջ դնել։ Թմբուկի թնդյունի տակ քայլքն ավարտելով՝ զինվորը վերադառնում է իր Զաուրյադի կամ Կալինովկա (դա միևնույն է) և կյանքի մնացած հատվածում սկսում է համառորեն, իր նկատմամբ անգթաբար փող կուտակել։ Եվ ահա մաշված համազգեստի տակ կամաց-կամաց մոտենում է ծերությունը, ժամանակից մշուշապատվում են խաչերն ու մեդալները։ Զինվորը ծխամորճ չի ծխում, մի բաժակ օղի չի խմում, բոլորը կուտակում է, ժլատությունը դարձել է անսահման։ Կոպեկ առ կոպեկ, երբեմն էլ նույնիսկ մուրացկանություն անելով՝ կուտակում է հա կուտակում։

Ամեն ինչ վերջացավ շատ տարօրինակ։ Այդ զինվորի մասին պատմությունը տարածվեց այն ժամանակվա բազմաթիվ լրագրերի էջերում, և այդ պատճառով մեզ հայտնի է նրա վերջը։ Երկու հարյուր քսանհինգ ռուբլի (քիչ գումար

չէ) տվեց ժլատ ծերուկը... «սլավոնական գործի օգտին», իսկ մնացած գումարի հաշվին տոմս գնեց մինչև Քիշնև և շուտով հայտնվեց Սերբիայում, որտեղ և զոհվեց իր արյունակից եղբայրների ազատության համար մղվող ճակատամարտում։ Կարծես թե ամեն ինչ հասկանալի է, բայց և ոչ բոլորովին...

— Այո՜-ո՜,— ակամայից մտածմունքի մեջ ընկավ Շտոկվիչը՝ ծալելով լրագիրը։

Երբ Վերեշչագինը գնում է Սկոբելևի մոտ, դա ինձ պետք չէ բացատրել, նա կտավներ է ստեղծելու։ Սակայն սա... Այո՜ո՜, այժմ եթե այդպիսիներից որևէ մեկի ատամներին ուղենաս հասցնել, դեռ պիտի մտածես՝ արժե՞ արդյոք։ Գուցե նա ևս իր կովն ու ինքնաեռը վաճառել է, որպեսզի Բայազետ ընկնի։

Կարաբանովն անկեղծորեն սկսեց քրքջալ՝ մատին փաթաթելով քրքրված մտրակը։

— Մեր մուժիկները չեն ուզում փորնիվեր մեռնել իրենց հայրենական թախտերի վրա։ Հիմա նրանց՝ այդ սրիկաներին, ազատություն է տրված։

Խոսակցության մեջ մտավ պրապորշչիկ Լատիշևը.

— Ինձ, օրինակ,— ասաց նա,— ինձ...— և մատով ցույց տվեց իրեն։— Պարդոն, պարոնայք, բայց ինձ տարօրինակ է թվում... Չէ որ ռուս մուժիկը չգիտե ոչ պատմություն, ոչ աշխարհագրություն։ Նրա գիտակցությանը միակ հասանելի բանը Երուսաղեմն է, իսկ այնտեղ էլ տիրակալի դագաղն է, քրիստոնեության սրբությունը, որը գտնվում է թուրքերի գերության մեջ... Հապա ինչի՞ց է, պարոնայք, մեր մուժիկն այդպես համակված այս պատերազմով։

Կլյուգենաուն նստած էր անկյունում, հին սուրը լայնակի դրած ծնկներին, նրա կոշիկների՝ քարերից ծռմռված կրունկները ծիծաղելիորեն ցցված էին այս ու այն կողմ։

— Աշխարհագրությո՞ւն, պատմությո՞ւն...— ասաց նա և, չգիտես ինչու, կրկնեց Լատիշևի շարժուձևը՝ մատով ցույց տալով իրեն։

Խեղճ պրապորշչիկը շփոթվեց և սկսեց կոշիկներով քըստքըստացնել հատակը։

— Ո՛չ, պարոնայք,— շարունակեց նա,— այդպես չի կա-

բելի... Ինձ ահա անհասկանալի է։ Եկեք վերցնենք դարձյալ պատմությունն ու աշխարհագրությունը...

Նեկրասովն արդեն ուզում էր դուրս գալ, բայց հապաղեց դռների մոտ.

— Լա՛վ,— կտրուկ ասաց շտաբս-կապիտանը,— վերցրինք... Իհարկե, պատմությունից և աշխարհագրությունից մեր մուժիկը քննություն չի բռնի, և դրանում, Լատիշև, դուք, անշուշտ, իրավացի եք։ Սակայն քաղաքական պատմությունը... Օ՜, օ՜, մուժիկն այն գիտի՜, հավատացեք ինձ, իր սեփական կաշվի վրա։ Մեզանից ավելի լավ։ Այո՜-ս... Նրա պապը, նրա խնամին, նրա կնքահայրը կամ աներորդին են տեղծել պատմությունը թուրքական պատերազմներում։

Նեկրասովը զայրացած, գլխարկը որքան հնարավոր էր ամուր քաշեց ճակատին, դուռը հրեց, որպեսզի դուրս գա, բայց նորից կանգնեց և շարունակեց.

— Իսկ պատմությունը հասարակ է։ Հանեք մուժիկի վրայից շապիկը՝ նրա կրծքի վրա կտեսնեք սպիներ, որ նա ստացել է թուրքական պատերազմներում։ Եթե չեք զզվում, մուժիկի վրայից քաշեք վարտիքը, հետույքին նույնպես սպիներ կտեսնեք։ Դրանք արդեն այն ապառքների հետքերն են, որոնք բռնագանձվել են նրանից ճիպոտահարությամբ, երբ Ռուսաստանը հոգնում էր այդ պատերազմներից։ Այդպես շարունակվում է ահա երկու հարյուր տարի։ Խորհե՛ք, պարոնայք, երկու հարյուր տարի մեր մուժիկը ոչ թե քարտեզով, այլ սեփական փորով ու մեջքով է ճանաչում պատմությունը աշխարհագրության հետ միասին։ Եվ ճանապարհը դեպի իր եղբայր-սլավոնների կողմը լավ գիտի։ Մի անգամ չէ, որ նա ռազմի արշավի է դուրս եկել դեպի այնտեղ։ Եվ հետո լեզուն... Պետք է լինի, մինչև Կիև կտանի.. Ամենայն բարիք ձեզ, պարոնայք։

Շտոկվիչը ծանր նայեց Լատիշևին՝ իր հայացքով, ասես, սեղմելով նրան աթոռին։

— Այդպե՜ս-այդպե՜ս, երիտասարդ... ոմանց մինչև Կիև, ոմանց էլ մինչև Շլիսելբուրգ։ Միայն արդեն կտանի ոչ թե ոտքով, այլ պետական եռաձի կառքով։ Տվերսկայա-Յամսկայա պուրակով։ Ջանգուլակներով...

Նեկրասովը արդեն դռների հետևում էր, և Շտոկվիչի «զանգուլակները» հնչեցին նրա թիկունքին։ Կլյուգենաուն հորանջեց և, բերանը ձեռքի ափով ծածկելով, հայացքով դիպուկ կրակեց Լատիշևի, հետո Եֆրեմ Իվանովիչի վրա, առանց շտապելու վեր կացավ ու գնաց Նեկրասովի հետևից։

Կարաբանովի համար չորչորուկ պարետի և պրապորշչիկի (որին նա մտքում անվանում էր ոչ այլ կերպ, քան «տհաս») միջավայրում մնալը բոլորովին ցանկալի չէր, և նա նույնպես ուղղվեց դեպի դուռը։

— Մեզ թողնո՞ւմ եք,— կանգնեցրեց նրան Շտոկվիչը։

— Ձեր թույլատվությամբ՝ գնում եմ քնելու...

Փողոցում նրանց պոչից կպավ մի փոշոտ սև այծ և մորուքը տմբտմբացնելով՝ երկար ժամանակ քարշ էր գալիս պորուչիկի հետևից՝ մերթընդմերթ աշխույժ մկկալով։ Կարաբանովը նախ նրան քշում-հեռացնում էր, հետո թքեց, և այծը ինքը հետ մնաց։ Պորուչիկը գնում էր դեպի իր վրանը, որպեսզի գլխովին մտնի թաղիքների մեջ, քնի մինչև երեկո, իսկ երեկոյան Վատնինի հետ «դուրաչկի» խաղա, քանի որ եսաուլը ուրիշ թղթախաղ չգիտեր։ Հետո նորից կպառկի քնելու, իսկ հետո էլի առավոտ կգա։

— Գրողը տանի,— Անդրեյը կանգ առավ։— Իսկ ո՞ւր է հաղթանակի որոտը, որ պետք է հնչի։

Իսկ ռուսական զենքի հաղթանակների որոտը արդեն հնչում էր և նրա արձագանքները թերթերի ու լրաբերների միջոցով հասնում էին մինչև լքյալ Բայազետ։ Մարտանցելով լայնահուն Դանուբը՝ ռուսական բանակն արդեն սկսել էր սլավոնական գյուղերի ու քաղաքների ազատագրումը։

Սակայն այդ բոլոր հաղթանակների որոտը դղրդում էր ինչ-որ մի հեռու տեղ, սարերից ու ծովերից այն կողմ, իսկ Բայազետը շարունակում էր տնքալ տոթակեզ ու հեղձուցիչ մթնոլորտում, լրտեսների ու հետախույզների ստահոդ բամբասանքներում, թվացող հանգստության մեջ։

Քաղաքի ծայրամասերում շրջում էին կազակների ուղեկալները, ժամապահները երբեմն անհետ կորչում էին իրենց պահակակետերից, կարծես այնտեղ չէին եղել։ Միայն որոշ ժամանակ անցնելուց հետո ամերևույթ թշնամին սպանված ժամապահի գլուխը գցում էր բերդախրամի մեջ կամ

մեյդանում բռնում էին մի շարշու, որը սպանվածի շինելի համար խնդրում էր երկու ոչխար։

— Մի՛ այլայլվեք,— ասում էր Խվոշչինսկին երիտասարդ սպանիչին։— Այդ ամենը այդպես էլ պետք է լիներ։ Մի՛ մոռացեք, որ սա սովորական պատերազմ չէ, այլ արևելյան պատերազմ։ Դա հենց նրանով է ուսանելի մեզ համար, որ այդ պատերազմում երբեք դադար չի լինում։ Աչքներդ միշտ բաց պահեք, իսկ սուրը՝ միշտ պատրաստ...

Մայիսի 3-ին բերդում հանկարծ որոտացին թմբուկները, և ամբողջ կայազորի շարասյան առջև կատարվեց առաջին հրապարակային մահապատիժը։ Սանիտարական սայլակի վեր ցցված քեղիներից, որոնք փոխարինում էին կախաղանին, կախեցին երիտասարդ մոլլային, որը փորձել էր քանդել միջնաբերդը սնուցող ջրմուղը, իսկ դրանից առաջ էլ սպանել էր երկու հեծյալների։

Մահապատժից առաջ Խվոշչինսկին մոտեցավ մոլլային և հարցրեց.

— Ինչո՞ւ ես արել, շո՛ւն։

Մոլլան, չպատասխանելով, ձեռքերը պարզեց դեպի երկինք։ Պարանոցը գցեցին նրա վիզը։

— Ինչո՞ւ ես սպանել մեր զինվորներին։

— Ինձ չի կարելի մեղադրել,— խոխոջաց մոլլան։— Դա ինձ ներշնչված է վերևից։

— Ի՞նչ է, ալլա՞հն է քեզ ներշնչել մարդկանց գլուխները կտրել։

— Բայց ես գործել եմ սուրբ զմայլանքով,— աշխուժացավ մոլլան։

Խվոշչինսկին թափահարեց թաշկինակը։

— Կախե՛լ այս շանը...

— Չէի՞ք ուզի մի բաժակ լաֆիտ[1],— քաղաքավարի հարցրեց Շտոկվիչը և հանեց մարդասպանի ոտքերի տակի տախտակը...

Կապիտանը, որպես բերդի պարեհ, ղեկավարում էր մահապատժի արարողությունը, և այդ ամենը նա կատարեց

[1] Լաֆիտ — կարմիր գինու մի տեսակ։

այնքան ճարտարորեն ու անտարբեր, որ Նեկրասովը նույնիսկ կեսկատակ-կեսլուրջ ասաց նրան.

— Եֆրեմ Իվանովիչ, եթե երբևէ ինձ կախաղան բարձրացնեն, ապա ես կուզենայի միայն ձեր ձեռքով կախվել...

Հենվելով ձեռնափայտին՝ Նիկիտա Սեմյոնովիչ Խվոշչինսկին մինչև վերջ հետևեց մահապատժին, հետո մի կողմ կանչեց Պոտրեսովին, Կարաբանովին, Եվդոկիմովին, Նեկրասովին և ֆոն Կլյուգենաուին։

Սպաները հետևեցին կաղ գնդապետին դեպի միջնադարյան, տաղավարի կլոր գմբեթը, որը գտնվում էր սուլթանի կնոջ հանգստարանի վերևում։ Այդ տաղավարում դրված էր մի սեղան, բայց աթոռներ չկային, և Խվոշչինսկին ասաց.

— Նստեցե՛ք, պարոնայք, թուրքական ձևով։ Մեզ՝ կովկասցիներիս համար դա անսովոր բան չէ...

Բոլորը նստեցին պատի երկայնքով՝ աջ ոտքը գցելով ձախի վրա և հանելով գլխարկները՝ պատրաստվեցին լսելու։

— Պարոնա՛յք,— ասաց Խվոշչինսկին տխուր,— իրադրությունը բարդանում է, և, իմ ճերմակ գլխին կշտամբանքներ թափվելուց խուսափելու համար, ուզում եմ անմիջապես ձեզ տեղյակ պահել վերահաս իրադարձություններին... Հետախույզների միջոցով ես օրերս պարզեցի, որ թուրքերը կուտակվում են Ալա-Դաղի շրջանում՝ նախապատրաստվելով հարձակվելու Բայազետի վրա. այդ մասին ես ժամանակին հայտնել եմ Թիֆլիս։ Երեկ, պարոնայք, ինձ հավաստի լուրեր են հասել, որ Վանի մոտակայքում սկսվել է քրդական հեծելազորի կուտակում՝ նույնպես սպառնալով հարձակվել Բայազետի վրա, այդ մասին նույնպես զեկուցել եմ փոխարքային՝ նորին վսեմություն մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչի ռազմակայանին։

Գնդապետը մի քիչ սպասեց, հետո, ասես թոթափելով հոգնածությունը, ձեռքով ուժեղ ու եռանդուն շփեց ճակատի խոր կնճիռները։

— Դժբախտաբար, պարոնայք,— շարունակեց նա,— իմ այդ բոլոր զեկույցները մինչև հիմա պատասխանի չեն արժանացել։ Դա ինձ արդեն ծանոթ է, մինչև ամպրոպը չորոտա, մուժիկը չի խաչակնքի... Իսկ այժմ, պարոնայք, իմ պատասխանատվությամբ ու ռիսկով ես որոշել եմ պարս-

կական սահման ուղարկել Իսմայիլ խանի հեծյալ միլիցիայի ջոկատը, որպեսզի ձեզ, կազակներ,— նա Բեբիեակի Բեբվեց Վատնինի և Կարաբանովի կողմը,— հնարավորություն տրվի հանգստանալու։ Եվ այսպես,— վերջացրեց նա,— մի՛ մեղադրեք ինձ՝ ծերուկիս։ Ես իմ կողմից ամեն ինչ արել եմ քերդի պաշտպանության համար...

Տեղաննման դուրս գալու նախօրեին Իսմայիլ խանը, շարիաթի պատվիրանների համաձայն, բարդ ծիսակատարություն կատարեց։ Պոկեց իր մարմնի վրայից մազերը, կտրեց եղունգները և այդ թափուկները մի կապոց անելով՝ հանձնեց սպասյակին ջրասույզ անել գետում։ Հետախուզական ջոկատի մեկնելը նշանակված էր «Ջումմա-գյունի» օրը, ուրբաթ օրվա նախամուտին՝ մուսուլմանների բոլոր ձեռնարկումների համար ամենաերջանիկ օրը։ Այդ բանում զիջելով Իսմայիլ խանին՝ Խվոշչինսկին միլիցիային թույլ տվեց ճանապարհ ընկնել գիշերը, որպեսզի Իսմայիլ խանը չհանդիպեր որևէ կնոջ, որը դժբախտություն է բերում։

Սպաներն ուղեկցում էին ջոկատին։ Իր զարաբաղյան ճապուկ նժույգին նստած՝ Իսմայիլ խան Նախիջևանսկին, դուրս գալով շարքի առաջ, հարցրեց միլիցիոներներին.

— Հրացաններն ու ատրճանակները լցվա՞ծ են։

— Հա՛յ, հա՛յ, վազուց են լցված,— խառնիխուռն պատասխանեցին կաշվե կիսամուշտակներով և բրդոտ փափախներով զանազանակերպ զինվորները։

— Օտար մարդ պատահի՝ սպանել։

— Վալլա՛հ, վալլա՛հ, կսպանենք, կսպանենք...

Եվ նրանք սլացան առաջ։ Հաջորդ օրը Բայազետ ժամանեց մի անծանոթ աստիճանավոր և կանգ առավ քարվանսարայում։ Թաքնվելով Խվոշչինսկուց՝ նա թուղթիկ ստուգեց այն ամենը, ինչ հարկավոր էր տեսնել ամրոցում։ Ինչպես երևում էր, Նիկիտա Սեմյոնովիչի զեկույցներին Թիֆլիսում քիչ հավատ էին ընծայում, և գեներալները որոշել էին ուղարկել իրենց լրտեսին։

Կարաբանովը հանդիպեց նրան մեյդանում։ Նա, չգիտես ինչու փոստային գերատեսչության լավորակ սերթուկ հագած, վետվետուն ու չաղլիկ մի երիտասարդ էր։ Տեղեկանալով կարակուլի մորթիների գներին՝ նա հարցրեց պորուչիկին.

— Ասում են ձեր Խվոշչինսկին չի սիրում իր զորքերը, մի՞, հասկանում ռուսական զինվորին։

— Ո՞վ է ասում։

— Դե, ասում են։ Չէ՞ որ նա զորադիտում չի կատարում, պլացպարադի արարողությունները միշտ կիսատ-պռատ է անում...

— Հը՞մ, ահա թե ինչի մասին է խոսքը։— Իրեն չկորցնելով՝ պատասխանեց Անդրեյը։— Պետք է խոստովանեմ, որ ես նույնպես դրա համար չեմ սիրում Խվոշչինսկուն։ Իսկ ահա երբ ես ծառայում էի կավալերգարդական գնդի լեյբ-գվարդիայում, նորին մեծություն կայսրը օրումեջ սանձապարանով վազեցնում էր մեզ, և մենք բոլորս նրան շատ էինք սիրում...

Աստիճանավորը վախեցած նայեց Կարաբանովին, որպես աննորմալ կամ չարամիտ մարդու, որից բոլոր դեպքերում պետք է զգուշանալ, և հապճեպ հեռացավ։

Եվ երբ քայլում էր, նրա թմբլիկ կիսագնդերը տարուբերվում էին անառակ կնոջ հետույքի նման։

— Թյո՛ւ, գարշելի,— թքեց Կարաբանովը։

Խվոշչինսկին իր մոտ կանչեց եսաուլ Վատնինին.

— Նազար Մինաևիչ, հոգյակս,— դիմեց նրան գնդապետը,— ես խնդրանք ունեմ. այդ ստահակին դուրս գցիր կայազորից։ Ինչպես հարմար է, ցանկացած ձևով, որպեսզի Բայազետում ստորության հոտ անգամ չգա։ Նրա ձիերն էլ կերակրիր ինչպես պետք է, թե չէ Թիֆլիսում կկարծեն, որ մենք այստեղ քաղցից մեռնում ենք...

Վատնինը, երկար չմտածելով, հյուրին պատիվ բերեց իր այցելությամբ քարվանսարայում։ Սովորաբար այդպիսի դեպքերում մոտավորապես ընդունված է ասել. «Ձենք հանդրգնում ուշացնել, քանի որ, հավանաբար, սպասում են ձեզ ու ձեր պատասխանին»։ Կամ էլ՝ ավելի լավ. «Մենք այնքան ուրախ ենք տեսնելու ձեզ, ճանապարհից հետո մի քիչ նախաճաշեք, իսկ մենք արդեն պատրաստել ենք հետադարձ զեկույցը»։

Նազար Մինաևիչը շատ հեռու էր այդպիսի նրբություններից։ Աչքի տակից դիտելով անկոչ հյուրին՝ եսաուլը դեռ շեմից բարկացած ասաց.

— Ձիերը մատուցված են։

— Ձիե՞րը։ Բայց ես չեմ խնդրել ձի լծել։

— Ես ոչինչ չգիտեմ։ Իսկ ձիերը մարդիկ չեն, նրանց լծել են, ուրեմն բարեհաճեք գնալ։

— Այսինքն... Մի րոպե։ Այդ ի՞նչ է ստացվում։

— Ինչպես ստացվել է, ստացվել, ես վերափոխել չեմ կարող։ Եթե որոշել եք գնալ, շնորհ արեք գնալու։ Ճանապարհը հիմա, երեկոյան, զով է, ճանճեր չկան։

Ստորը՝ փոխարքայի ռազմակայանից, հասկացավ, որ կռահել են իր ով լինելը, և հրաժեշտի պահին սկսեց խնդրել միայն մի բան՝ հաղորդել որևէ հետաքրքիր լուր։

— Հետաքրքիր քիչ բան կա,— ասաց Վատնինը,— կանայք նստած են հարեմներում, տղամարդիկ մեյդաններում վերավաճառքով են զբաղված։ Մենք էլ անընդհատ մաճառ ենք կոնծում և ձանձրույթից ծեծկռտվում։ Այնպես որ, պատահաբար կարող ենք ձեզ սպանել։ Գնացեք ձեր գործին...

— Ախր ես ինչպե՞ս գնամ դատարկ ձեռքերով,— տրտմեց ստորը։— Նորից պիտի ենթարկվեմ ծանոթ կանանց ծաղրանքին։ Իսկ ես «Թիֆլիսսկի վեդոմոստիի» համար նույնիսկ հոդված եմ խոստացել... Գոնե որևէ բան,— կպել էր նա Վատնինից,— գոնե որևէ բան տվեք ապացուցելու համար...

— Որևէ բա՞ն։ Հա, մեր մայորի մոտից վերցրեք հրասանդային մի ռումբ։ Եթե հանկարծ չհավատան ձեզ, դուք այն կամացուկ պայթեցրեք։ Կհավատան...

Կոնուսաձև անճոռնի ռումբը, որը չորս փութ քաշ ուներ, գլորեցին սայլի վրա։ Կայազորը թուլացել էր ծիծաղից, իսկ աստիճանավորը ակնհայտորեն իրեն երջանիկ էր զգում։

— Աստված քեզ հետ,— ասաց Դենիսկան։— Մինչև կյանքիդ վերջը հիշատակ կմնա։ Կարելի է ինքնաեռի փոխարեն պահարանի վրա դնել։ Կամ էլ՝ ասենք, օրինակի համար, կնոջը վախեցնել։ Դա էլ բան է...

Նայելով կատաղորեն ցատկոտող սայլի հետևից, որի վրա փոխարքայի լրտեսը արդեն հուսահատ պայքարի մեջ էր մտել այսուայն կողմ շրմփացող ռումբի հետ, Վատնինը բավականությամբ նկատեց.

— Այդպես... Կարծես թե կհասցնի կեղտոտ տղրուկը։

կորցնելը հո դժվար է։ Չէ՞ որ ասեղ չէ։ Հյուրերին ցույց կտա։ Կանայք երևի կճվճվան...

— Իսկ չի՞ պայթի,— հարցրեց Կլյուգենաուն,— գոնե բռնկիչը հանեիք։

— Բռնկիչով ենք գլորել,— ծիծաղեց Վատնինը։— Իսկ եթե նույնիսկ պայթի, ուրեմն մյուսները թեթև խաչերի հետևից Բայազետ չեն գնա։

Մի քանի օր հետո Իսմայիլ խանի անկանոն միլիցիայի ջոկատը վերադարձավ Բայազետ՝ հետախուզության ժամանակ չկորցնելով ոչ մի մարդ, որովհետև, ինչպես բացատրեց խանը՝ իջնելով իր ղարաբաղյան նժույգից, նրանք չեն հանդիպել և ոչ մի թուրքի։

— Չի կարող պատահել, խան,— առարկեց Շտոկվիչը։

— Ոչ մի,— վերջացրեց խանը, ավելացնելով.— և ես հիմա գոհ եմ, ինչպես նապաստակը, որի հետևից ոչ մի շուն չի վազում։

Անհասկանալի ինչ-որ բան էր տեղի ունենում։ Դուրս է գալիս, որ Խվոշչինսկու անհանգստությունն իզուր էր։ Ուշադրությամբ լսելով պայծառապայլ փոխգնդապետի զեկույցը՝ Նիկիտա Սեմյոնովիչը ոչինչ չպատասխանեց և, գնալով իր տաղավարը, ամբողջ օրը չերևաց ամրոցում։

Ակամա հիշեցին լրտես Հաջի Ջամալ բեկին, և Վատնինը, երկար չմտածելով, խոստացավ թոցնել նրա գլուխը։

— Սրանց տեսեք, բարեկամացել են,— մոլեգնել էր նա վրանում։— Ոչ ոքի չես կարող մի կոպեկի հավատալ։ Բոլորը մեկ են։ Շան որդիներ։ Ուզում են մեզ վախեցնել, որպեսզի մենք ինքներս փախչենք Բայազետից։ Ա՛ռ քեզ, կե՛ր...

Հանգիստ ու խելամիտ Նեկրասովը, ինչպես և պետք է լինի գլխավոր շտաբիստը, միայն թոթվեց ուսերը.

— Ո՞վ գիտի, պարոնայք, գուցե իսկապես մեր ծերուկը քմահաճություն է անում...

Տագնապներով ու վեճերով լի այդ օրը սուրհանդակ-կազակը Կարաբանովին նամակ բերեց Իգդիրից. Ագլայան գրում էր.

Իմ սիրելի.

Սպասում եմ քո նամակներին, իսկ դու չես գրում՝ նողկալի կազակ նողկալի ձիու վրա։ Ինձ համար այնքան դաժան է, ոչ ոք չկա ինձ հետ, և

ես լաց եմ լինում. համաձայնիր, որ դա ինձ համար անսովոր վիճակ է։

Չեմ կարող զրել և ասել այն մասին, որ սիրում եմ քեզ, բայց ե՞ս սիրում եմ և շատ ուրախ եմ, որ դա այդպես լավ է։ Պառկում են քնելու, և դու ինձ հետ ես. դու՝ այդ ես եմ, իսկ ես այդ դու ես, իսկ երկուսս միասին՝ երջանկություն։ Ինչպես զրել շարունակությունը, չգիտեմ, ներիր։ Համբուրում եմ, սիրելիս։

Կարաբանովը զարմացավ, որ նամակում այդքան շատ կետադրական նշաններ կային, որոնց հետ ինքը դեռ վաղուց անհամերաշխ էր, և ժպտալով, նամակը պահեց ծոցագրպանում։

Ուշ երեկոյան, մոմերի լույսի տակ, նա իր սպասյակի հետ շաշկի էր խաղում և կատաղությունից տրաքում էր, երբ տեսնում էր, որ թաթարը իրեն հաղթում է։ Որպեսզի լրիվ չպարտվի, Կարաբանովը թույլ տվեց որոշ խարդախություն՝ հակառակորդից գողանալով երկու խաղաքար, որոնք արդեն դամկա պետք է դառնային, բայց հենց տեղուտեղը բռնվեց հանցագործության մեջ։

— Այ՜, ա՜յ,— ասաց նրան սպասյակը,— ինչո՞ւ վերցնես սեր։ Սև իմ շաշկա կլինի, քո շաշկա սպիտակ կլինի։ Դու վերցնի սպիտակ։

— Ախ դու, Չինգիզ խան,— զայրացավ Կարաբանովը,— և ինչպես ես դու համարձակվում մտածել, որ ես տանուլ կտամ քեզ։ Ասա՝ մեզանից ո՞վ է ավելի խելոք։

— Սև հաղթի, սև խելացի լինի։ Իմը սև շաշկա, իմը հաղթի քո սպիտակ։ Իմը խելացի լինի...

«Ռուսաստանի վրա թաթարների հարձակումից» Անդրեյին փրկեց միայն հանձնակատարի երևալը, որը հաղորդեց, որ պորուչիկին սպասում է Խվոշչինսկին։ Քաղաք գնալ չէր ցանկանում, բայց կոտրատվելով՝ Կարաբանովը մերկախոս հայտարարեց սպասավորին իր հաղթանակի մասին և կարգադրեց նրան՝ թամբել Լորդը...

Գնդապետը Անդրեյին դիմավորեց տարօրինակ մի հարցով, որն անմիջապես զգաստացրեց նրան.

— Ի՞նչ եք կարծում, պարոն պորուչիկ,— հարցրեց Խվոշչինսկին՝ տեղից վեր չկենալով և ակնոցի տակից խիստ նայելով,— նորին պայծառափայլություն Իսմայիլ խան Նա-

խիջևանսկին հետախուզությունը մինչև վերջ կատարե՞լ է, թե ոչ։ Պատասխանե՛ք...

— Ես զարմացած եմ այդպիսի հարցից, պարոն գնդապետ, և չեմ հասկանում դուք ինչո՞ւ եք կասկածում դրանում։

Խվոշչինսկին դանդաղ ծխում էր։

— Իսկ ինձ թվում է, որ խանը... ստում է։ Այո՛։ Ռուսական ծառայության փոխգնդապետը խաբում է ռուսական ծառայության գնդապետին։ Խայտառակությո՛ւն։ Դուք, պորուչիկ,— ասաց Նիկիտա Սեմյոնովիչը արդեն ավելի հանգիստ,— ուշադրություն դարձրե՞լ եք միլիցիական ձիերին։

— Ոչ։

— Ուրեմն այսպես։ Ձիերը բացարձականապես թարմ են։ Հիշեցեք, թե ինչպիսի ձիերով եք դուք վերադառնում հետախուզություններից։ Ձեր ձիերը հոգնածությունից լաց են լինում... Ո՛չ։ Խանը չէր կարող, նա չէր կարող մինչև Պարսկաստան գնալ ու վերադառնալ և այդպես պահպանել ձիերին։ Ստում է։ Վախկոտություն է ցուցաբերել։

Գնդապետը կանգնեց՝ հենվելով փայտին։

— Մի քանի օրից հետո, պարոն պորուչիկ,— հրամայեց նա խիստ,— Պարսկաստանի սահման կգնաք դուք։ Միայն ոչ հիմա։ Ես գիտեմ, որ ռազմակայանում ինձանից դժգոհ են։ Մեծ իշխանին, հավանաբար, թվում է, որ ես ամեն ինչ ուռճացնում եմ։ Դե, ինչ արած, կտեսնենք...

Գիշերային թիթեռը ներս թռավ տաղավար, սկսեց պտտվել լապտերի շուրջը։ Ցնցելով վատ սափրված այտը՝ գնդապետը անսպասելիորեն հարցրեց.

— Ասացե՛ք, պորուչիկ, Ագլայա Եգորովնան ձեզ որևէ բան գրո՞ւմ է Իգդիրից։

Կարաբանովը թոթվեց ուսերը՝ ակամայից հետևելով թիթեռի թռիչքին։

— Ո՛չ։ Եվ ես չեմ էլ սպասում, պարոն գնդապետ։

Խվոշչինսկին շրջվեց դեպի լուսամուտը, որը պատրաստված էր մանր, գույնզգույն ապակիներից և քչփորեց շոգից ճաքճքած մածկանը։

— Ինձ նույնպես ոչինչ չի գրում,— ասաց նա,— տարօրինակ է...

Լապտերը հանկարծ բռնկվեց ավելի պայծառ, դա անզգույշ թիթեռն էր, վառվեց։

— Գնացե՛ք,— թույլ տվեց գնդապետը,— դուք ինձ հիմա պետք չեք։

7

Կարաբանովը քնի միջից լսեց հեռավոր համազարկեր, հետո ձիերի տագնապալից դոփյուն ու փռնչոց։ Նրան վերջնականապես արթնացրեց Վատնինի ձայնը.

— Դու պիտի բռնես նրա մազերից և պինդ ճզմես թամբին,— հեգնակավոր խորհուրդ էր տալիս եսաուլը կազակներից մեկին։

— Հա, կբռնես նրան, ինչպես չէ,— պատասխանեց Կարաբանովին անծանոթ մի ձայն։— Նրա գլուխը լրիվ սափրված է։ Կծում է գարշելին...

Պորուչիկը երկար ժամանակ չէր կարողանում ազատվել խճճված շղարշե վարագույրից, որը կախված էր ճանճերի դեմ։ Հանգստացած մարմնով անուշ ձգվելով՝ դուրս եկավ վրանից։ Նազար Մինաևիչը ոտաբոբիկ, կարմիր սիսեռանախշերով գունազարդված գյուղական շապիկով, սպայական վերարկուն առանց կոճկելու ուսերին գցած՝ ման էր գալիս ձիանոցի երկայնքով։

— Ա՜, հարգանքներս,— ողջունեց եսաուլը Անդրեյին՝ փորը քորելով։— Դու շատ պինդ էիր քնած, չուզեցի արթնացնել։ Իսկ մեզ մոտ այստեղ բախում եղավ...

— Ի՞նչ է պատահել։ Կրակում էին կարծես...

Վատնինը պատմեց, որ երբ ջուրը խմելուց հետո նախիրը նորից հետ են տարել սարերը, մի քանի թուրք թաքուն մտել են անասունների հոտի մեջ և փորձել են աննկատ մոտենալ ռազմաճամբարին...

— Երևում է ուզեցել են տեսնել կազակների կյանքը,— բացատրեց եսաուլը։— Հրեն, նրանք պառկած են...

Քիչ հեռվում ընկած էին մարտի ժամանակ սպանված թշնամիների դիակները՝ շրջապատված ճանճերի պարսով։ Անգլիական հեծելազորային ֆրենչները, որոնք կարված էին ոչ իրենց չափսով, հասնում էին որոշ թուրքերի մինչև սրունքները միայն, շատերն էլ տաբատները հագել էին թարսուշիտակ՝ բացվածքը դեպի հետ։ Մոտ տասը ռազմաավարային «մինյե» տիպի կարաբիններ թափված էին հենց այդտեղ։

— «Սուվարի»,— ասաց Վատնինը, դադարելով քորելուց։— Դրանք թուրքական ուլաններ[1] են։ Անգլիացիները նույնիսկ իրենց թամբերն են տվել նրանց։ Բայց նրանք դրանց վրա նստել չեն կարողանում։

— Ինչո՞ւ ինձ չես արթնացրել, Նազար Մինաևիչ,— նեղացավ Կարաբանովը։— Ափսոսո՞ւմ էիր, ինչ է...

Նստեցին նախաճաշելու բաց երկնքի տակ։ Սպանների հարևանությամբ տեղավորվեցին կազակները։ Պատշաճ կերպով, սվսվոցով ու փնչալով, թեյ էին խմում։ Վատնինը վրայից հանեց նաև շապիկը։ Մինչև գոտին մերկ, հաճախ ճաքատից քրտինքը սրբելով՝ նա գդալը կոխեց կորեկաձավարի շիլայի արդեն երկրորդ կաթսայի մեջ։

— Քրտից պետք չէ վախենալ,— գործի արանքում սովորեցնում էր նա ավելի երիտասարդ կազակներին։— Նա բարձրահասակ է երևում, որովհետև գլխին շալմա է փաթաթում։ Նրա լաթագոտկի տակ երկու-երեք ատրճանակ կա, բոլորն էլ ժանգոտած։ Եթե մեկը գոնե կրակի, լավ է։ Նա նետի պես թռչում է քեզ վրա, ընդ որում բղավելով դիմում իր ալլահին։ Երբեմն նաև թունդ հայհոյում է։ Շատերն այստեղ էլ հենց սխալվում են, թիկունք են ցույց տալիս։ Քուրդն էլ դրան է սպասում։ Հիմա արդեն նա կհասնի քեզ։ Նրա ձին, այո՛, շատ կայտառ է...

Զինվորական մարդու մեջ եղած բնական նախանձով Կարաբանովը դիտում էր եսաուլի վիթխարի կերպարանքը։ Վատնինի մասին Կովկասում առասպելներ էին տարածվել։ Մի անգամ կորցնելով իր մյուրիդներին՝ Շամիլը զսպրույթի մեջ Վատնինին «դաջալ»՝ դև և աստվածուրաց է անվանել։ Չեչենները նրան մկրտել են «Նազար-Բոքլու» (Առյուծ-Նազար) անունով։ Սակայն եսաուլը ուներ ևս մի չհրապարակված տիտղոս՝ «Բաթման-Կլիչա» (փթանոց սրով դյուցազն)...

— Չեչենները,— ասաց Վատնինը կշտանալով,— այնքան

[1] Ուլան — թեթև հեծելազորի զինվոր։

շատ էին ինձ հարգում, որ եթե հանդիպում էին կազակներին, իմ նկատմամբ ունեցած հարգանքից՝ նրանք ավելի լավ էին համարում հետ շրջվել...

Կեսօրին ռազմաճամբար ժամանեց Խվոշչինսկին։ Մանրամասն հարց ու փորձ անելով տեղի ունեցած բոլոր իրադարձությունների մասին՝ գնդապետն ասաց.

— Դուք ինձ մխիթարեցիք, պարոնայք։ Անկասկած, Ֆուիկ փաշան որոշել է շոշափել մեզ իր «սուվարիներով»։ Տեր-Ղուկասովից մենք կտրված ենք ամբողջ 200 վերստով, և, իհարկե, Թաթլիօղլի Մահմեդ փաշան, որը հիմա Զեյդեկանի մոտ է, մեզ հանգիստ չի թողնի։ Դուք ուշադիր հետևեք ծայրամասերին։ Եվ պահպանեցեք անասունների նախիրը, որպեսզի քրդերը չգողանան։ Այսպես կայազորը ստիպված կլինի քամի կուլ տալ։ Իսկ դուք, Կարաբանով, ինչպես պայմանավորվել ենք, պետք է գնաք շրջադիտման։ Պատրաստվեցե՛ք...

Շուտով եկավ Դենիսկան, ականջից ականջ ժպտալով, նա մի գարշելի կենդանի իժ բերեց. գորշագույն էր, մաշկը ողնաշարի երկայնքով մեկ նախշված շիկակարմիր բշտիկներով։ Մատներով սեղմելով օձի գլուխը՝ Դենիսկան տեղնուտեղը նրա համար մի հարմար դեր հնարեց.

— Ահա թե աղջիկներին ինչով կարելի է վախեցնել,— ասաց նա։— Զբոսնելու ժամանակ, օրինակ, մտցնես քղանցքի տակ։ Կամ էլ թե չէ, ուղղակի ցույց տաս, ծիծաղելու համար, իհարկե։

Օձը գալարվում էր կազակի ձեռքի մեջ՝ բացելով բերանը, և Կարաբանովը տեսավ բերանի խոռոչը ներքաշված նրա բարակ գիշատիչ ատամները։

— Հապա ինձ էլ ցույց տուր, տղաս,— խնդրեց Վատնինը։

Դենիսկան իժը մոտեցրեց եսաուլի հենց քթին.

— Խնդրեմ։ Եթե ուզում եք ձեռք բերել հաճույքի համար, մի դույլ մաճառով ձեզ եմ զիջում...

Վատնինը սկսեց ստեպ-ստեպ խաչակնքել երեսը.

— Տեր աստված, ներիր ինձ, չէ որ սա գյուրզա[1] է... Մի անգամ իմ հայրենակցին կծել էր, և գնդի անգութ բժիշկները չկարողացան փրկել... Որտե՞ղ ես գտել։

— Հրեն թթենու մոտ,— պատասխանեց Օժոգինը,— որտեղ «սուվարիներն» են վեր ընկած, սա էլ, ստորը, նրանց մոտ օղի նման կծկվել, տաքանում էր արևի տակ...

— Գցի՛ր դրան, հիմար,— վախեցած բղավեց Անդրեյը։

Դենիսկան ճարպկորեն բռնեց օձի պոչից և կատաղորեն պտտեցրեց օդի մեջ, հետո հարմար պահ ընտրելով, ամբողջ ուժով զարկեց տաք քարին։ Օձը, ջախջախված ու շշմած, հազիվ շարժվեց տեղից...

Շոգից տանջված կիսաքուն կազակները խորհուրդներ էին տալիս.

— Հիմա էլ գցիր կրակի մեջ...

— Ո՛չ, հարկավոր է կտրատել...

Այդ ամենը ձանձրացրել էր Անդրեյին, և գնաց քաղաք, որպեսզի խնդրեր Սիվիցկուն՝ առաջ գցելու իր հարյուրյակի սպիտակեղենը ծծմբային բաղնիք-պահարաններում ծխահարելու հերթը։ Դրա համար հիմք կար արդեն. շուտով նորից շրջադիտման պիտի գնային։

Գետափին հանդիպեց իր սպասյակին, որը պպզած շապիկներ էր տրորում։ Դիմելով այն ամենին, ինչ գետի հոսանքով լողում էր իր առջևից, թաթարը երգում էր ռուսերեն.

Վաճառական, վաճառական,
Ո՞ւր ես դու լողում։
Լողա դու հայրենի վայրեր,
Ասա դու, վաճառական,
Իմ հայրիկ, իմ մայրիկ,
Որ իրենց որդին խելոք դառել։
Բահը աղր մարրի,
Հին սայլ ավազ տանի,
Կազակ վարտիք լվացի...

Կարաբանովը քրքրեց գրպանները, մի ռուբլի գտավ։

— Ա՛ռ,— ասաց,— կարող ես ուղարկել քո «հայրիկին», «մայրիկին»։ Երևի առանց քեզ նրանց ուտելու բան էլ չի մնացել...

Սիվիցկին նրան ընդունեց իր «ամբուլանսում», ինչպես ինքն էր անվանում բերդապարսպի ճակատամասի երկրորդ

[1] Գյուրզա — թունավոր օձերի մի տեսակ։

հարկում տեղավորված իր ընդունարանը։ Նրա դիմաց նստած էր բոլորովին հարբած բուժակ Նենյուկովը, իսկ կապիտանը շատ քաղաքավարի խնդրում էր նրան.

— Գնա՛, թանկագինս, գնա՛ այստեղից։ Ինձ մոտ մարդիկ են գալիս, իսկ դու այստեղ այս վիճակում... լավ չէ։

Հարբածին դուրս անելով՝ բժիշկն ասաց.

— Տեսա՞ք։ Ահա, օրդինատոր Կիտաևսկին է և սա՝ բուժակը, ու վերջ... միայն երեքով ենք, թեկուզ պայթիր... Բայց ոսկի ձեռքեր ունի,— շարունակեց Սիվիցկին Նենյուկովի մասին,— ինչպիսի թեթևությամբ տուրնիկետ է դնում և նույնիսկ թեթև վիրահատություններ անում։ Վերքերից գնդակներն այնպես է հանում, կարծես արևածաղկի սերմ է շրթում։ Սակայն... խմում է։ Բայց այդ գինեմոլը գովելի հատկություն ունի՝ կարող է ամբողջովին ընդհատել, ամենաթունդ հարբեցողությունը, եթե հոսպիտալում օգնություն է պահանջվում։

Հեռահար մտադրությամբ Կարաբանովը մխիթարեց բժշկին.

— Այո՛,— ասաց նա,— ես լսել եմ, որ ձեզ մոտ պետք է ուղարկեն նաև տիկին Խվոշչինսկայային... Նա ինչո՞ւ չի գալիս։

— Կգա,— խոստացավ Սիվիցկին։— Միայն թե ի՞նչ օգուտ կնկանից։ Կնկանից և այն էլ զանվական... Ի դեպ, ուզո՞ւմ եք ցույց տամ մի չափազանց հետաքրքիր փաստաթուղթ։ Ի՞նչ է պատասխանել ինձ Իսմայիլ խանը միլիցեական զորանոցների սանիտարական վիճակի մասին...

Կարաբանովը կարդաց.

«Սանիտարական պայմաններ չկան, իսկ ամեն մի ճիվանդացողի խոստանում եմ ուղարկել լազարեթ, որպեսզի նա կարողանա մեռնել օրինական ճիմունիթետով։ Երեկ մեկը ոչ մի բանից չէր բողոքում, պառկեց մահճակալի մոտ և մահացավ ճնած ժամանակ։ Դիազնոզը՝ դիակ»։

Զեկույցի վերջում ստորագրության փոխարեն դրված էր մուխուր՝ տոհմական կնիք, որի ձվաձև շրջանակի մեջ արաբերեն և ռուսերեն գրոշմված էին՝ «Թող հոսեն օրերն իմ ցանկությամբ»։

— Ասացե՛ք, բժիշկ,— Կարաբանովը նույնիսկ չժպտաց,— դուք կարո՞ղ եք արդյոք բժշկի ձեր իշխանությամբ հաստատել Իսմայիլ խանի ապուշությունը, որպեսզի նրան հեռացնեն ծառայությունից։

— Իմ սիրելի պորուչիկ,— վշտացած հոգոց հանեց Սիվիցկին։— Ոստիկանության տեր ու տնօրեն կոմս Օլովը իրեն շփոթում էր ձիու հետ և նախաճաշի համար խնդրում էր մի պարկ գարի, բայց էլի շարունակում էր որոշել կայսրության բախտը։ Եվ այն էլ ի՞նչ կայսրության...

— Վերջը ի՞նչ կլինի,— հարցրեց Կարաբանովը։

— Վերջը կլինի այն, որ Իսմայիլ խանը կդառնա գնդապետ, իսկ հետո էլ՝ գեներալ։

— Դուք լավատես եք, բժիշկ։

— Ընտելացել եմ...

Քաղաքում գործերը վերջացնելով՝ պորուչիկը վերադարձավ զորատեղի։

Վատնինը, ջանասեր աշակերտի նման գրիչը ճոճոռացնելով, նամակ էր գրում «մինչև տուն»։

— Հը, ի՞նչ կա,— հարցրեց եսաուլը։

— Դե, ոչինչ։ Շոգ է...

Կարաբանովը պառկեց թաղիքին։ Որոշել էր հետախուզության գնալուց առաջ, բոլոր օրերին, որքան կարելի էր շատ քնել։ Սակայն քունը չէր գալիս։

Պորուչիկը վերցրեց կիթառը, ծուլորեն սկսեց մատնահարել նոսր լարերը.

— Ես քեզ չե՞մ խանգարում, եսաուլ։

— Դե նվագիր, նվագիր... երաժշտության տակ գրիչն ավելի կայտառ է վազում։ Դու չգիտե՞ս, թե ինչպես է գրվում «ուրտեղից» բառը։

— Գիտեմ։

— Ինչպե՞ս։

— Որտեղից...

— Այդպես է, իհարկե,— հառաչեց Վատնինը։— Կրթվածություն։ Մենք հո չենք հասկանում ինչը ինչից է... Ուրեմն, այդպես էլ գրե՞մ։

— Գրի՛ր, եսաուլ, չես սխալվի...

Կարաբանովը մի կողմ շպրտեց կիթառը։

— Աղջկա՞դ ես գրում,— հարցրեց նա։

— Աղջկաս,— պատասխանեց հարյուրապետը։— Քո թակել է հարկավոր... Բայց... որտե՞ղ գտնես նրան։ Հեռու է... Ա՜խ-ա՜խ-ա՜խ,— նորից հառաչեց եսաուլը։— Փոքր երեխաներ՝ փոքր հոգսեր, մեծ երեխաներ՝ մեծ հոգսեր...

Վերջացնելով գրելը՝ Վատնինը վստահ ասաց.

— Աղջնակը լավն է։ Բայց վախեցնել պետք է։ Նա գեղեցկուհի է։ Ավելի ու ավելի շատ գիրք է նայում։ Ինձ համար նրա հետ խոսելն անգամ դժվար է... Լավ աղջնակ կլինի,— համոզված կրկնեց եսաուլը։

Կարաբանովը հանեց ծխախոտատուփը։

— Հարյուրապետ, արի ծխենք։

— Ծխենք,— համաձայնեց Վատնինը։

Հետո եսաուլն ասաց պորուչիկին։

— Պետք է գնամ ոտքերս լվալու, բայց մի տեսակ ալարում եմ...

Ներս վազեց մի կազակ.

— Ձերդ բարեծնություն, հրեն... թուրքեր են թե քրդեր, շունը կչոկի։ Արշավում են այս կողմ... Նոր ուզում էին հոտը սարերից քշել տանել, բայց մենք պաշտպանեցինք։

Նուրը կանաչ լեռնաճյուղի երկայնքով, ռազմաճամբարից երկու վերստ հեռավորությամբ, հեծյալներ էին արշավում։ Նրանք շատ չէին՝ մեկ կամ մեկուկես հարյուր մարդ, բայց Կարաբանովին զարմացնում էին իրենց ժիր ու ճարպիկ ձիերով։

Հակառակորդն ահա բաժանվեց երկու թևի։ Առջևից արշավում էին ընտրյալ լեռնցի հեծյալները՝ լեզգիների ու չեչենների իշխաններն իրենց թիկնապահներով։ Այդ դավաճանները, որոնք Ռուսաստանից փախել էին սուլթանի մոտ, իրենց հետ մոլլաներ էին պահում, դա երևում էր նրանց հանդերձանքից։

— Հի՜... հի՜... հի՜...— գոռացին կազակները, թռչելով թամբերին, և սրընթաց արշավեցին թշնամու ճանապարհը կտրելու։

Կարաբանովին համակեց հիացմունքը. սմբակների տակ տրորվում էր բարձր կանաչը, քամին ուռցնում ու հետ էր տանում մետաքսե թեթև աստառով սերթուկի փեշերը...

Թևահար կազակները, մի քիչ բարձրանալով թամբերի վրա, առաջ պարզվեցին նիզակները։ Վատնինը կազակների հետ միաձվեց թշնամու ոհմակի խորքը և իր սուրը թրջեց թշնամու արյունով։

— Նաղար փաշա,— գոռում էին մոլլաները՝ ասես փորձելով մի կողմ կանչել Վատնինին։ Սակայն եսաուլը, ուշադրություն չդարձնելով այդ կանչերին, վազքի ժամանակ բռնեց թևերը պաշտպանող կազակներին և ուղարկեց շրջանցման...

— Սա իմն է,— որոշեց Կարաբանովը, երբ տեսավ, որ ուղիղ իր վրա է արշավում շքեղ հագուստով մի միայնակ հեծյալ և, դեռ հեռվից ժպտալով պորուչիկին, հանգիստ մերսում է ձեռքը՝ գոտեմարտից առաջ...

— Հե՜յ, կազա՜կ,— գոռաց իշխանը։— Դու այսպես կարո՞ղ ես։

Կարաբանովը չհասցրեց սթափվել, երբ թշնամու սուրը նրա առջևից, ծնկի լեյայի[1] վրայից սահելով, կտրեց ձիու սանձը. այլևս անհնար էր ղեկավարել Լորդին։

— Իսկ այսպես կարո՞ղ ես,— նորից հոհոաց իշխանը, և թշնամու արմունկի տակից, թե որտեղից, պայթեց դիմահար կրակոցը. գնդակը՝ տափակացնելով կոճակը և ուժասպառվելով, անցավ կրծքի երկայնքով, պատռելով պորուչիկի սերթուկը։

— Դե, ի՞նչ, գյավուր,— հարցրեց չերքեզը՝ մոտենալով։— Հիմա պիտի մեռնե՞ս։

Լորդը, ենթարկվելով կովարարության բնազդին, թափով սլացավ ուղիղ հեծյալ թշնամու վրա, կրծքով խփեց նրա ձիուն, որը վրնջոցով հետևի մասով նստեց գետնին։

— Քո ձին համա շքե՞ղ է, հա՜,— նկատեց չերքեզը, և երկու սրեր խաչվեցին...

Խաչվեցին։

Կարաբանովը դիմագրավեց առաջին հարվածը և անմիջապես հասկացավ, որ հիմա կսպանեն իրեն։ Նա վայրենի է և իրեն ուղղակի կտոր-կտոր կանի։ Ախոյանի սուրը պտտվում էր իր գլխավերևում և ճեղքում օդը։

Չերքեզը ձեռնածուի պես խաղ էր անում իր սրով։ Ասես

[1] Լեյա — հեծյալների շալվարի վրա կարած կաշվե կամ մահուդե կտոր։

փայլուն աղեղ էր շառաչում պորուչիկի գլխավերևում, և Անդրեյը հազիվ էր հասցնում բարձրացնել սուրը, երբ այն դարձյալ հետ էր թռչում, թռչում հեռու, մի կողմ, թռչում՝ հետ մղված, հետ մղված և նորից հետ մղված։

Այն քուրդը, որին սպանել էր Արաքսի ափին, այս հակառակորդի համեմատությամբ իսկական երեխա էր, այն ժամանակ լոկ խաղ էր, իսկ հիմա՝ գոտեմարտ։

— Դու կնկանից ավելի վատ ես,— ծիծաղում էր չերքեզը։— Ինչո՞ւ չփախար, հիմար... Ինչո՞ւ շարունակեցիր առաջ գալ...

Կարաբանովը ուենչում էր մի պահ հանգստանալ, որպեսզի ուշքի գար թշնամու ճնշումից և կարողանար պատասխան հարված հասցնել։ Սակայն նրա սուրը նորից, արդեն որերորդ անգամ, մի կողմ էր թռչում, դարձյալ հետ մղվելով, հետ մղվելով և մի անգամ ևս հետ մղվելով...

«Գոնե մի հարված։ Կյանքիս կեսը կտայի մի հարվածի համար»։

Սակայն նրա գլխավերևում փայլփլող պողպատի շողջանակը ավելի ու ավելի էր ընդլայնվում, և պորուչիկը ելք չտեսնելով, արդեն հրաժեշտ տալով կյանքին՝ գոռաց.

— Դե սպասի՛ր դու։

— Ի՞նչ,— հարցրեց չերքեզը՝ ձեռքը հետ տանելով։

— Ոչինչ,— պատասխանեց Անդրեյը։

Ամբողջ կատաղությունը, պարտվելու ամբողջ դառնությունը կուտակվեցին սրի մեջ, և պորուչիկը սուրը թափով առաջ մղեց։ Թշնամու փափախը հանկարծ լայն բացվեց, ասես մի մեծ փողի տոպրակ պատռվեց. ջերմությունն ու գարշելի հոտը խփեցին ուղիղ Անդրեյի դեմքին...

Նրա ձեռքում մնացել էր միայն սրի կոթը, ջարդված սուրն ընկած էր խոտերի մեջ։ Իսկ նրա վրա արդեն նորից արշավում էին երեք հեծյալներ։ Անդրեյը ծնկների և բռունցքի հարվածներով ձին հետ քշեց, սակայն գեղեցիկ ձիերը միշտ վատ բնավորություն են ունենում, այդպես պատահեց և Լորդի հետ, նա կարող էր թռչել անդունդի վրայից, բայց հանկարծ կամակորությամբ հրաժարվեց անցնել առվակը...

«Հետիոտնին չեն սրահարի»,— անցավ Կարաբանովի գլխով, և նա արդեն ոտքը հանում էր ասպանդակից, որպեսզի պատշաճ ձևով, զինվորական վարվելաձևի բոլոր կանոններով գերի հանձնվի, երբ թիկունքում լսվեց Եգորիչի ձայնը.

— Պորուչիկ, մի քիչ էլ դիմացիր... Մենք այստեղ ենք...

Թռիչքով անցնելով առվակը՝ Կարաբանովն արդեն չէր խառնվում կոտորածին։ Միայն տեսնում էր, որ իր կազակները բոլորովին մոլեգնել են։ Գոտեմարտում բորբոքված անողոք ու դաժան կազակները Անդրեյի աչքերի առաջ, տեղնուտեղը սրերով համարյա մինչև ոսկորները տաշեցին չերքեզներին։

Կարաբանովը ծեծեց իր Լորդին և ամոթից կուչ եկած վերադարձավ վրան։ Վատնինն անմիջապես չեկավ նրա մոտ, սուրը դրեց մի անկյուն, բոբիկ կրնկից գործարարաբար հանեց փուշը և, նայելով նրա դեմքին՝ կոնչաց, ասես կրակեց վրան.

— Հը՛, ձմերուկ կերա՞ր... Այ թե ինչ, եղբայր պորուչիկ, պետք չէ միայնակ խցկվել այդպիսի մորթազերծարան... Լավ էր, որ իմ վախմիստրը տեսավ քեզ և օգնություն ուղարկեց։ Իսկ այնպես.. Ա՜յ թե կթաղեինք քեզ, Ելիսեիչ, սիրով։ «Պատվո Բլուրը» տեսե՞լ ես։ Ահա հենց ամենաբարձր կատարին էլ կթաղեինք...

Եսաուլը մտածեց ու ավելացրեց.

— Խաչ կդնեինք։ Դեհ, էլ ի՞նչ կա ուրիշ... Կարծես վերջ։

«Ուր է, որ ես հասնեմ Վատնինին»,— մտածեց Անդրեյը բարի նախանձով և, մոտենալով հարյուրապետին, համբուրեց նրա քրտնած ճակատը։

8

Այդ տարի ամառը շոգ էր...

Խվոշչինսկին կարգադրեց ֆուրգոնները և հրետասայլերը մտցնել գետը, որպեսզի անիվները չչորանան։ Սարսափելի չոր ամպրոպները չէին կարող մեղմացնել այրող շոգը։ Անձրևներ չկային, բայց կայծակները հաճախ էին իրենց հրեղեն ոլորագծերը մխրճում կիրճերի գոգափոսերը, և այն ժամանակ Բայազետում զգացվում էր ծծմբի հոտը։

Երիտասարդ կամավորներից մեկը, մի գիշեր, պահակակետում կանգնած ժամանակ, մոռացել էր իջեցնել սվինը, և կայծակը նրան մոխիր էր դարձրել։ Զգիմանալով տոթին՝ մարդիկ դուրս էին վազում շիկացած զորանոցներից, սակայն այստեղ ևս, բաց երկնքի տակ, նրանց պարուրում էր տաք օդը և ճնշում ինչպես մամլած բամբակ։

Քաղաքում հայտնվել էր կատաղած շների մի բազմություն։ Սակայն, առևտրով և վերջին իրադարձություններով կլանված Բայազետի բնակիչներին այդ բանն ակնհայտորեն չէր հետաքրքրում, և կատաղած շները՝ ատամների արանքից փրփրակալած լեզուները հանած, ոհմակներով վազվզում էին կեղտոտ փողոցներով...

— Հարկավոր է սատկացնել դրանց,— ասաց Կարաբանովը։— Ինձ համար զզվելի է նայել, թե ինչպես է թուրքը շրջանցում փողոցի մեջտեղը պառկած շանը։ Եվ շներն էլ կարծես սարդեր լինեն՝ նիհար-նիհար, երկարոտն, միայն փորն է մնացել։

— Ենիչերիների շները վախենում են եվրոպացիներից,— բացատրեց Կլյուգենաուն։— Ահա նայեցե՛ք, ես կգնամ այդ գամփռի վրա, և նա դուրս կգա ճանապարհից։

— Պետք չէ, բարոն,— կանգնեցրեց նրան Կարաբանովը,— հանկարծ վրա պրծնի ու կպչի ատամներով։ Իսկ ես երբեք չեմ իմացել, թե այդպիսի դեպքերում ի՞նչ պետք է անել՝ մարդո՞ւն պոկել շնից, թե՞ շանը՝ մարդուց...

Սպասելով, որ կեսօրվա շոգը անցնի, Կարաբանովը և Կլյուգենաուն այդ օրերին իրենց փրկությունը գտնում էին դուքանի ստվերում։ Եվ նրանք այսօր էլ գնում էին հնամենի քարվանսարայի ծանոթ կրպակը, որտեղ լուսամուտներն ունեին փոսիկի տուզի ձև (դա որոշեց Կարաբանովը), իսկ տանիքի վրա ապրում էր սպիտակ ձկնկուլը (դա որոշեց Կլյուգենաուն)։

Քայլում էին դանդաղ։ Շնչում էին արագ-արագ։ Շոգ էր։

— Լսե՛ք, Կարաբանով,— անսպասելի ասաց Կլյուգենաուն,— փող չունե՞ք։ Ոչ ինձ համար, հավատացեք, այլ մայոր Պոտրեսովի։ Նրա ընտանիքը փոքր չէ, խիստ կարիքի մեջ է։ Իմ ժամացույցը ես գրավ եմ դրել նպարավաճառ Աղա Մամուկովի մոտ, ուրիշ էլ ոչինչ չունեմ։

— Ոչ մի կոպեկ, բարոն, ոչ մի կոպեկ չունեմ,— խոստովանեց Անդրեյը։— Լիներ, իհարկե, կտայի։

— Ափսոս,— տխրեց պրապորշչիկը,— մայոր Պոտրեսովը լավ մարդ է, ես նրան վաղուց գիտեմ։

Կարաբանովը կանգ առավ. ուղիղ նրա դիմավերևում, փայտե ձողերով պատված պատշգամբի լուսամուտից, խորամանկորեն նրան էր նայում Հարեմի բոլորովին երիտասարդ մի միանձնուհի։ Աղջիկը չարաճճի ծիծաղով սպային ցույց տվեց վարդագույն ու սուր լեզուն։ Երևում էր, որ նա դիմադրում էր մեկին, որը փորձում էր նրան հետ քաշել լուսամուտից։

— Նայեցե՛ք, բարոն, նայեցե՛ք,— հիացած շշնջաց Կարաբանովը։— Օ՜, որքան շատ են նրանք...

Իրար հետևից ոտնաթաթերի վրա կանգնելով՝ լուսամուտից նայում էին արդեն մի քանի կանայք։ Ոմանք խեժածամոն էին ծամում, ոմանք էլ բուրավետ ծղոտիկներ ծխում։ Կարաբանովին ապշեցնում էր նրանց նուրբ-գեղեցիկ, գրեթե եվրոպական, անսովոր սպիտակ դեմքերը։ Հարեմի կանայք պորուչիկին նշաններ էին անում՝ մատնելով ինչ-որ բան բացատրելով։ Նրանցից մեկը, որ նկատելիորեն ավելի տարիքավոր էր, Անդրեյին գցեց մոմե մի գունատ ծաղիկ և, արմունկների վրա պառկելով լուսամուտի գոգին, ճոճեց ապարանջանի նման ծանր գինդերը։

— Լսե՛ք, պարոն պորուչիկ,— ասաց նա մաքուր ռուսերենով,— դուք պատահմամբ չգիտե՞ք ինչպես է հիմա Պետերբուրգում. Կուշելևսկի ամառանոցը բա՞ց է, թե ոչ։ Ես այնտեղ երգել եմ ամբողջ երեք տարի։ Եվ եթե հանդիպեք, հարցրեք կոմս Վիտգենշտեյնին՝ հիշո՞ւմ է արդյոք Գալյա Ֆիկկելմոնին։ Այդ ես եմ՝ Գալյա Ֆիկկելմոնը «Մինեռաշկայից», Պետերբուրգում գվարդիոնուսներն ինձ ձեռքերի վրա էին ման ածում...

Բայց ահա կանայք միանգամից հետ քաշվեցին լուսամուտից, Կարաբանովին երևաց Հարեմի բարոյականության պահապանի խոնավ ու մռայլ կանացի դեմքը։ Ներքինին թքեց ներքև և լուսամուտը ծածկեց վարագույրով։

— Է՜խ, էնպե՛ս կտայի մուրթին,— ասաց պորուչիկը։

Սպաները մտան դուքան, որի պատերը զարդարված էին

երիտասարդ գրիզետուհիների և հաղթանդամ նավաստիների պատկերներ կրող փարիզյան վիմագրություններով։ Այստեղ կախված էին նաև սուլթանի անվանագրերը և ուժելիների մի հավաքածու։ Քրքրված բաղմոցները ծածկված էին եգիպտական եղեգնից գործած փսիաթներով։

Դուքանի տերը նեղ աչքերով, դանդաղաշարժ մի մարդ էր, սպիտակ քիրմանշալից պատրաստված հոյակապ չալմայով։ Նա նստած էր դուքանի մի անկյունում, շրջապատված աղմկոտ սրճամաններով և ղլղլացնող նարգիլեներով, մի ձեռքում պահած կոշիկի թաթը, իսկ մյուս ձեռքում՝ սաղմ ծխափողը։

— Հավանաբար պարսիկ է,— ասաց Անդրեյը։

— Ո՛չ,— առարկեց Կլյուգենաուն։— Նա ավելի շատ նման է քաղդեացու կամ նույնիսկ բախտիարի։ Տեսնում եք՝ ինչպիսի ճակատ և բարձր ծոծրակ ունի։

Նրանք փոքրիկ գավաթիկներով շատ թունդ սուրճ էին խմում։ Կարաբանովը ալարկոտ կսմթում էր հալվան։ Մեղրով քաղցրավենիքները կպչում էին լեզվին։ Շոգն ուժեղանում էր։ Սպանդարանի մոտով հոսող կեղտաջրի առվակից գարշահոտություն էր փչում։

— Տեսնում եմ, ձեր տրամադրությունը փչացավ,— նկատեց Կլյուգենաուն։

— Դա կանցնի,— խոր շունչ քաշեց Կարաբանովը։— Ուղղակի այդ երգչուհին պատահաբար անվանեց այն մարդու անունը, որն ինձ համար տհաճ էր լսել։

— Ա՜-ա՜,— գլխի ընկավ բարոնը,— դուք ինձ որոշ բաներ արդեն պատմել եք գվարդիական այդ պատմությունից։ Դա, կարծեմ, հենց այն կո՞մսն է, որի հետ դուք հրաժարվել եք մենամարտել։

— Այո՛, նա է։ Իսկ հիմա ես կկանգնեի արգելագծի մոտ և անպայման կսպանեի նրան,— չարությամբ եզրափակեց Կարաբանովը և լռեց։

Անծանոթ մի երգիչ, վայրենի ոռնոցի և ճղավոցի տակ, մեյդանում սկսեց երգել փառաբանող մի երգ, որ հասնում էր սպաների ականջին։ Կլյուգենաուն գրեթե մեքենայաբար, սովորության ուժով, թարգմանեց.

— Լսե՛ք, թե ինչ է երգում, Կարաբանով.

Օսմանցիներից ավելի խելացի ժողովուրդ չկա,
Ալլահը տվել է նրանց իմաստության բոլոր գանձերը,
Մյուս ցեղերին գցել է միայն բանականության հատիկներ,
Որպեսզի նրանք ուղտեր մնան
Եվ էսորդանան լոկ ծառայել ուղղահավատներին...

— Դուք լսո՞ւմ եք, Կարաբանով։

— Իհարկե, դա ինձ զվարճալի է թվում։

— Իսկ շարունակությունն ավելի զվարճալի է, քանի որ վերաբերում է մեզ.

Եթե նույնիսկ Սև ծովը
Բանաքով ալեկոծվեր,
Անգամ ծովը չէր բավարարի

Նկարագրելու, թե որքան հարուստ է Թուրքիան։
Այնտեղ որքան մետաքս ու փող,
Թանկագին քարեր ու լուսնաղեմ գեղուհիներ կան։
Բոլոր ժողովուրդները նախանձում են Թուրքիայի փառքին,
Նրա գանձերին և զինվորների հզորությանը
Ու հենց դրա համար էլ նրանք եկել են մեզ մոտ, Բայազետ...

Երգիչը տխուր կաղկանձեց ու լռեց։

— Եվ այսպես,— ասաց Կարաբանովը՝ ծնոտը դնելով սրի երախակալին,— ես մոտ օրերս գնում եմ... Մի խնդրանք ունեմ, բարոն, եթե չվերադառնամ, մի լավ խմեք իմ կենացը, գտնե մեկ անգամ կյանքում։

— Ես այդ բանը չեմ անի,— քիչ մտածելուց հետո պատասխանեց Կլյուգենաուն։— Ավելի լավ է ես բանաստեղծություն գրեմ ձեր մահվան առթիվ... Բայց դուք, Կարաբանով, չեք սպանվի։ Դուք չար եք, իսկ չար մարդկանց բախտը բերում է։ Նրանց սիրում են կանայք և չեն դիպչում շները։

— Իսկ ինչո՞ւ, սիրելի բարոն, դուք էլ չեք չարանում,— ժպտաց Անդրեյը։— Շները կվախենան ձեզանից, իսկ կանայք՝ կսիրեն... հը՞։

— Դուք կատակում եք, պորուչիկ, և ձեր կատակները չար են։ Միայն մի մտածեք, թե ես դժբախտ եմ, ո՛չ, ես ձեզանից ավելի երջանիկ եմ, քանզի ես սիրում եմ...

— Ի՞նչ եք սիրում։

— Ամեն ինչ։ Նույնիսկ մեյդանի այդ տխմար երգչին։ Իսկ ի՞նչ եք սիրում դուք, Կարաբանով։

— Ինձ ավելի հեշտ է պատասխանել, բարոն, թե ինչը չեմ սիրում։ Հին պարտքերը, հարբեցողությունից հետո արթնանալը, վատ ձիերին և այն կանանց, որոնք իմաստակություն են անում անկողնում։

— Այնուամենայնիվ, հարուստ չէ ձեր պաշարը։ Նման է կապիտան Շտոկվիչի սրամտության պաշարին՝ լաֆիտի նրա առասպելական բաժակի հետ միասին։

— Բայց դուք, բարոն, այդ էլ չունեք։

— Դուք բանաստեղծ չեք, Կարաբանով,— առանց նեղանալու նկատեց պրապորշչիկը,— և դա աղքատացնում է ձեզ։ Նայեցեք թեկուզ, հրեն՝ այն աղջկան, որ գալիս է յուղի կճուճը գլխին դրած։ Նայեցեք որքան թեթև է նրա քայլվածքը, որքան հավասարաչափ ու սահուն են նրա թևերի շարժումները, որքան նրբագեղ է թեքվում նրա մեջքը։

— Շորոր է տալիս,— նկատեց Անդրեյը՝ նայելով աղջկան։

— Այո՛,— շարունակեց բարոնը,— նա գալիս է՝ մարգարիտի հատիկների պես մանր քայլերով։ Բոլոր աղջիկներն այստեղ քայլում են այդպես զգույշ, և Արևելքում այդպիսի քայլվածքի մասին երգեր են հորինում... Ահա, լսեցեք.

Քելե, քելե, քելքիդ մեռնեմ,
Քո գովական խելքիդ մեռնեմ...

— Դուք տարօրինակ մարդ եք, բարոն, և շատ տարօրինակ։

— Գուցե,— արձագանքեց Կլյուգենաուն։— Բայց ես պոեզիա եմ տեսնում և այդ աղջկա քայլվածքի մեջ։ Եվ նա դեմքով պետք է որ շատ գեղեցիկ լինի։

Կճուճը գլխին դրած աղջիկը հավասարվեց սպաներին, շրջվեց, և պարզվեց, որ շատ տգեղ, կնճռոտված պառավ է՝ ծուռ քթով և փոս ընկած աչքերով։

— Հա՜, հա՜, հա՜,— որոտալից ծիծաղեց Կարաբանովը։— Ա՜յ քեզ ֆոկուս։ Կյանքն ինքը դաժանորեն վրեժ է առնում ձեզանից, բարոն։ Բավական է երևակայեք...

— Ա՜խ, այդ բոլորը այն չէ...— անփութորեն ձեռքը

թափ տվեց Կլյուգենաուն։— Ահա, օրինակ, առվակը։ Դուք կնճռոտվում եք, ձեզ համար այս հոտը տհաճ է և, կարող է պատահել, որ մտաբերում եք Պոդոլինսկու տողերը, եթե միայն դրանք երբևէ կարդացել եք.

Ո՜չ, բուրավետ շիթերից Արևելքի
Զզվելի է այդ նուրբ թույնն ավելի,
Ա՜յ, եթե հուրիները մարգարեի
Իրենց բուրմունքը բերեին։

— Եվ այլն, և այլն... Խոստովանեմ, ինձ նույնպես դուր չի գալիս այդ գարշահոտությունը, զորանոցների լվերը և այս շոգը։ Միայն պետք չէ խևություն անել, Կարաբանով։ Պարտքերը կարելի է վճարել, գինովությունը կանցնի, կարելի է վարժեցնել ձիուն և կնոջ մեջ կիրք արթնացնել։ Այդ բոլորը այն չէ, Կարաբանով, և... Ուզո՞ւմ եք, ես կանխագուշակեմ ձեր վերջը։

— Հապա,— խիստ մռայլվեց Անդրեյը։

— Ձեր վերջը կլինի պատահական ու անհեթեթ։ Եվ ոչ ոք, նույնիսկ ես՝ ձեր խոնարհ ծառան, բանաստեղծություն չի գրի ձեր հիմար մահվան մասին։

— Ես ձեզ զայրացրե՞լ եմ, բարոն։

— Օ՜, ո՜չ։ Ես ձեզ խղճում եմ, Կարաբանով։

Սեղանը գլորվեց հատակին, և գավաթները զրնգոցով փշրվեցին։ Կլյուգենաուն վախեցած վեր թռավ՝ թափ տալով կեղտոտված սերթուկը։

— Կորի՛ր այստեղից,— գոռաց Կարաբանովը։— Գերմանացի երշիկագործը չէ, որ ինձ պիտի սովորեցնի... Ինձ՝ ռուսական տոհմական ազնվականիս։ Կորի՛ր այստեղից, երշիկագործ։

Դուքանի տերը՝ քաղդեացի թե բախտիար, կկոցեց նեղ աչքերը։ Մենակ գյավուրները կարող են այսպես աղմկել, իսկ ուղղահավատը՝ ոչ։ Հրաժեշտ տալով իրեն վիրավորողին, նա շնորհակալություն կհայտներ խելոք զրույցի համար, իսկ տուն գալով կսրեր թուրը...

— Սրա՞ն տես, փտածի մեկը,— ասաց Կարաբանովը և բռունցքի հարվածով ավարտեց սեղանի ջախջախումը։

Դուքանի տերը փսփսաց վարագույրի հետևում կանգնած ինչ-որ մեկին և մոտեցավ ռուս սպային։

— Ինչպիսի՞ն էր հալվան,— հարցրեց նա փաղաքշանքով։— Ձերդ բարեծնությունը նարգիլե չէ՞ր կամենա։ Մե՞կ նարգիլե, երկո՞ւ։

— Բե՛ր,— հրամայեց Անդրեյը,— քանի որ օդի չեք պահում, բարբարոսներ։

Երբ պորուչիկը շշմել էր և արդեն բոլորովին սպիտակած աչքերով նայում էր, թե ինչպես է ջուրը խլթխլթում նարգիլեի մեջ, պարսիկը թե քաղդեացին, սատանան գիտի, նորից մոտեցավ նրան.

— Հանգստացեք, ձերդ ազնվություն,— ասաց նա։— Կանայք չկան, բայց կա մի գաղտնի հաճույք։ Բոլորովին փոքրիկ...

Նա Կարաբանովին տարավ վարագույրի հետևը, և շուտով նրանք հայտնվեցին առանց լուսամուտի մի ցածր սենյակում՝ երեսպատված հաստ գորգերով։ Անկյուններում դրված մի քանի մոմերը հազիվ լուսավորում էին կիսախավարը։ Փոշու և անորսալի ինչ-որ մի բանի հոտ էր գալիս։

Նարգիլեից ապուշ կտրած Կարաբանովի վրա իջնում էր ծանր քունը։ Նստեց լայն թախտին, որն ասես կլանեց նրան, և այդպես, հեղձուցիչ օդի լարվածության մեջ, երկար նստեց պորուչիկը։ Նույնիսկ շատ երկար, ինչպես թվում էր նրան, և, պայքարելով նիրհի դեմ, նա արդեն մտադիր էր վեր կենալ, որ գնա...

Սակայն նրա լսողությանը հասավ մի տարօրինակ ձայն։ Թեթև և տխուր այդ ձայնը գալիս էր դրսից և նման էր պատահական նոտայի։ Անդրեյը թոթափեց թմրությունը.

Նրա առջև կանգնած էր մի աղջիկ՝ բոլորովին մերկ, եթե չհաշվենք նրա մարմինը ծածկող թափանցիկ շղարշը։

— Զիյա՜-Զի՜յ,— շշնջաց աղջիկը և մատով խփեց դափին այնքան զգույշ, ասես վախենում էր արթնացնել մեկին։

— Արի այստեղ,— կանչեց Անդրեյը և թրքուհին, թռչելով նրա ծնկներին, արագորեն համբուրեց նրան և անմիջապես էլ ճարպկորեն դուրս պրծավ նրա գրկից։

— Զիյա՜-Զի՜յ,— կրկնեց աղջիկը և, կլոր կոնքերը խաղացնելով, սահուն շրջապտույտ կատարեց...

Աղջիկն սկսեց պարել՝ համաչափ հարվածելով դափին։ Նրա կուրծքը ծածկված էր բրոնզյա թասիկներով, անթիվ ծամիկները թափվում էին թխավուն, յուղոտ ուսերին։

— Բավակա՞ն է,— ասաց Անդրեյը,— արի ինձ մոտ։

Պարուհին վրայից գցեց շղարշը։ Քարերով զարդարված նրա ճակատակալը փայլփլեց մթության մեջ։

— Զիյա՜-Զի՜յ,— բարձրաձայն գոչեց աղջիկը և թափով խփեց դափին։

Պարը դարձավ սրընթաց։ Քրտինքից փայլող նրա փորը թեթև ցնցվում էր։ Պղնձյա ծանր ապարանջաններով զարդարված թևերը ծռմռվում էին դեպի վեր և նրանցից կախված թերթիկները, Ղուրանից բերված ասույթներով, խշխշում էին՝ առաջացնելով զովություն։

— Դե արի այստեղ, օձի ձագ,— Կարաբանովը բազմոցի վրայից նետվեց դեպի նա, բայց աղջիկը, մի կողմ քաշելով պատից կախված գորգը, վայրկենապես անհետացավ...

Եվ այդ ժամանակ Անդրեյը նկատեց, որ ինքը վաղուց մենակ չէ, երկու թուրք կանգնած էին դռների մեջ մեկը երիտասարդ, մյուսը՝ բոլորովին տարեց, և նրանց կողքին՝ սրճարանի տերը, բախտիար թե քաղդեացի, այժմ բոլորովին միևնույն էր։

Քաղաքավարի գլուխ տալով՝ նրանք նստեցին բազմոցին, նորից գլուխ տվեցին՝ մատների ծայրերը կպցնելով ճակատին։

— Ձերդ ազնվություն,— վերջապես հարցրեց նրանցից մեկը,— գոհ մնացի՞ք... Մեծ ալլահը կնոշն ստեղծել է որպես ծաղիկ, իսկ իմաստագույն Իսակ փաշան Բայազետը կառուցել է որպես ուղղահավատների պսակ...

Կարաբանովը հասկացավ, որ դեպի դուռն անցնել արդեն անհնար է։ Արագությամբ դուրս քաշեց սուրը, և վայրկենապես նրա առջև մերկացան երկու ուրիշ սրեր։ «Եթե որևէ բան պատահի,— անցավ նրա մտքով,— Կլյուգենաուն գիտի իմ տեղը, և կազակները քարուքանդ կանեն այս դուքանը...»։

— Կատակացնեմ, թուրք սրիկա,— գոռաց պորուչիկը, տեսնելով, թե ինչպես կողքից գողեգող մոտենում է դուքանի տերը, որպեսզի պատի վրայից վերցնի կեռ յաթաղանը։

Ճարպկորեն շրջվելով՝ Անդրեյը սրաշեղբով հետևից խփեց նրա ծնկներին, կտրեց ջիլերը, և նա, չկարողացավ բարձրանալ, սկսեց սողալ դորգերի վրայով։ «Այ, եթե երկրորդին էլ խփեմ»,— մտածեց Կարաբանովը։ Նա երբեք իր մեջ չէր զգացել այդպիսի սարսափելի ուժ ու կատաղություն։ Սրաշեղբի մի հարվածով իր առջևից այս ու այն կողմ թոցնելով յաթաղանները՝ նա ճտքակոշիկով հարվածեց երիտասարդ Թուրքի փորին, Թուրքն ընկավ բազմոցի վրա։ Երրորդի ձեռքն արդեն արյունաթաթախ էր։

— Հե՛տ քաշվեք։ Բոլորիդ կսատկացնեմ շան լակոտների պես։

Եվ ինքը հետ ցատկեց։ Պոկեց գորգը։ Այդպես էլ կար՝ նորից մի դուռ, որտեղից անհետացավ Զիյա-Զիյը։ Նահանջեց քարվանսարայի երկար անցումներով՝ կրճտացնելով ատամները, մռնչալով գազանի պես, առանց շուրջը նայելու։

Կայծկլտող պողպատի զրնգոց էր լսվում։ Նեղվածք էր։

— Մո՛տ չգաս, կսպանեմ...

Սուրը մեկնեց առաջ, և հենց այդ պահին, նրա սրի կողքին կապտությամբ փայլփլելով, գիշատչորեն պարզվեց չեչենական Թրի շեղբը։ Անդրեյը շրջվեց և տեսավ Հաջի Ջամալ բեկի անակնջ գլուխը։

— Սուրճ խմիր,— հրամայաբար ասաց լրտեսը,— կարող ես խմել շարբաթ, ուտել ռահատ-լոխում, սակայն ինչո՞ւ ես նեղացնում իմ բարեկամին...

Թուրքերը հետ գնացին.

Անդրեյը կատաղած ներս թռավ սրճարան, բայց այնտեղ արդեն ոչ ոք չկար։ Կույր, անպատասխան կատաղության նոպայի մեջ (այստեղ նա հիշեց Դենիսկային) պորուչիկը ջարդուփշուր էր անում սափորների շարքերը, պարսկական ծաղկավոր գավաթները, սրաշեղբի սուր հարվածներով խաչաձև կտրատում խորասանական գորգերը։

Հետո դուրս թռչելով փողոց՝ վայրենի աղաղակով զինվորներ կանչեց, կարգադրեց շրջապատել դուքանը և ոչ ոքի դուրս չթողնել։

— Եթե փախչեն՝ կրակեք, դրանց մերը...— հրամայեց նա։

Սակայն տարօրինակ էր, ոչ ոքի չգտան, թեև խուզարկեցին ամբողջ քարվանսարան։ Ոչ մի Թուրք։ Եվ այն նեղ աչքերով քաղդեացին, թե բախտիարը ասես գետինը մտավ։ Նույնիսկ Հաջի-Ջամալը չքվեց։ Միայն հեռավոր գաղտնի մի խցիկում Անդրեյը գտավ լքված Զիյա-Զիյին։ Աղջիկը վախից լացակումած կանգնել էր նրա առջև և ձեռքերով ամոթխածորեն ծածկում էր դեմքը։

Կարաբանովը, տեսնելով նրան, հանգստացավ, սուրը դրեց պատյանը։

— Ինձանից վախենալ պետք չէ,— ասաց նա,— մեզ մոտ, Ռուսաստանում, ընդունված է շմարտնչել կանանց հետ, պառկածներին չխփել... Դու էլ, ահա պառկիր...

Եվ ամբողջ օրը Անդրեյը ման էր գալիս ու ժպտում՝ հիշելով այս ու այն մանրամասնությունները, այնպես որ Վատինը նույնիսկ ասաց.

— Այդ ինչի՞ց է, պորուչիկ, անընդհատ աչքերդ կկոցում ես, հա կկոցում, ասես կատուն լիզել է թթվասերի շերեփը, իսկ հիմա էլ հիշում է...

Երեկոյան պատահաբար հանդիպեց Կլյուգենաուին. պրապորշչիկը ինքը մոտեցավ նրան և ասաց.

— Ձեր առջև ես այնքան անհարմար եմ զգում, այնքան ամոթ... Ես գնացի, իսկ դուք մնացիք մենակ, և ես ամբողջ օրը տանջվում եմ. ձեզ մոտ եղած դրամը արդյոք բավարարե՞ց վճարելու այդ ամենի համար։ Մանավանդ, որ դրանից առաջ դուք ասացիք՝ ոչ մի կոպեկ չունեք։

Անդրեյն ամուր գրկեց նրան.

— Թողնենք այդ բոլորը։ Դուք ոսկի մարդ եք։ Եվ հիշեք, որ ես համաձայն եմ ձեզ հետ՝ կյանքը զարմանալի է... Միայն ասացեք ինձ, բարոն, ինչի՞ց է, որ դուք միշտ ուրիշներից լավն եք։

— Չգիտեմ... Իսկ դա հիրավի այդպես է, ապա, երևի նրանից է, որ ես ինձ համարում եմ ուրիշներից վատը։

9

Պապեր, ես ես հիշում եմ ձեզ,
Մինչև վերջը խմոց չերեփնեռով,
Եվ կրակի շուրջը նստած
Կապտակարմիր թթեռով...

Դենիս Դավիդով

Վատնինը նստեց, կաղնե նստարանը ճռճռաց նրա ծանրության տակ։ Իր փթանոց բռունցքները դրեց սեղանին, թափահարեց ձյունի պես սև, ալեխառն մազերը.

— Ա՜խ, ա՜խ...

— Ինչո՞ւ ես ախ քաշում, Նազար Մինաևիչ,— հարցրեց Կարաբանովը։— Աղջկա՞նդ ես հիշել։

— Հիմա Լիզավետայի մասին մտածելու ժամանա՞կն է։ Նրա մասին չէ, որ մտածում եմ։ Գործներս վատ են, պորուչիկ։

— Իսկ ի՞նչ է որ։

— Չար լուրեր են լսվում։

— Ի՞նչ լուրեր։

— Դեհ, հենց հիմա անցնում էի մեյդանի մոտով և ահա լսում եմ՝ ինչ-որ մի սրիկա բղավում է «ուռուս-կորավ... օսման-եկ»։

— Եվ ի՞նչ,— ծիծաղեց Կարաբանովը։

— Դե ոչինչ։ Մի կողմ քաշեցի բղավողին, որ չտեսնեն... և այ քեզ «ինչ»։ Հետո պետք եղավ ձեռքերս լվանալ։ Իսկ օճառ էլ ինքդ գիտես, երկրորդ շաբաթն է Իգդիրից չեն ուղարկում։ Եվ մի՞թե դա լվացվել է։ Ջիբիլ է միայն...

Անդրեյը նրան թեյ առաջարկեց։ Հարյուրապետը հոտ քաշեց գավաթից և պարունակությունը թափեց գետնին։

— Գնա՛ դու քո թեյով... Սա թեյ չէ, այլ ինչ-որ «ջրախաղ»։ Այ, Կլյուգենաուն իսկական կովկասցի է, քո թայը չէ։ Նա, որ թեյ է պատրաստում, իսկապես թեյ է։ Պատահում է, որ խմում ես, Արարատը չես տեսնում։ Իսկ դու ինձ ուղտի մեզ ես տալիս...

Կարաբանովը չվիրավորվեց։ Հարյուրապետը նրա մոտով պարզեց հզոր չանչը, վերցրեց իր սուրը, որ նվեր էր ստացել Գունիբ գյուղի գրավման համար, որտեղ ամրացել էր Շամիլը՝ իր մյուրիդների հետ։ Դա չտեսնված սուր էր՝ Վատնինի բոյին համապատասխան, հատուկ պատվերով պատրաստված, շքեղ կոթը հասնում էր համարյա Կարաբանովի ուսին։

Եվ հարյուրապետն ահա վերցրեց այդ սուրն ու գնաց։ Պորուչիկը նրան ոչ մի բան չհարցրեց, տեսավ միայն, թե ինչպես եսաուլը մտավ հետի մեջ, մի խոշոր ոչխար ընտրեց, դրեց ուսերին և բերեց վրանի մոտ։ Հետո ոչխարին պառկեցրեց իր առջև, ճակատով դեպի ինքը և մի հարվածով...

— Ա՜յ քեզ հարյուրապետ,— լսեց Անդրեյը կաղակների հիացական խոսքերը։— Պռզերից մինչև դմակը։ Հենց միանգամից...

Կանաչների վրա մաքրելով լայն սրաշեղբը՝ Վատնինը վերադարձավ վրան, բարեկամաբար ասաց.

— Թող մեղադրեն, կրտսեր եղբայր... Հիմա հրավերով բանկետ կտանք երկու անձի համար։ Դու և ես՝ վերջ։ Մնացածներին գրողը տանի։ Ավելի ևս, Ելիսեիչ, շուտով դու գնալու ես... Քեզ, զավակս, չափազանց ծանր գործ է վիճակվել։ Միայն ասա՝ հետախուզություն...

Վրանի նեղվածության մեջ Վատնինը արջի նման շուռումուռ էր գալիս, և Կարաբանովը գրեթե հիացմունքով ասաց.

— Հաղթանդամ տղամարդ եք, Նազար Մինաևիչ։ Միայն բռունցքներդ ինչ արժեն...

— Դա ճիշտ է,— համաձայնեց եսաուլը,— աստված չի նեղացրել։ Եվ բռունցքներս էլ պինդ են։ Մի անգամ, Ղրիմի պատերազմի ժամանակ, կանգնած էի հեռադիտակով։ Հիշում եմ՝ այնտեղ մի ինչ-որ բլրակ էր, և ես, ուրեմն, կանգնած էի։ Արշավելով ինձ է մոտենում մի սարդինացի սպայի։ Փսլնքոտի մեկը, բայց լրիվ կորած փետուրների մեջ, ինչպես աքլոր։ Իսկ գլխի փափախը՝ ըհը՛,— Վատնինը ցույց տվեց գլխից մեկ արշին բարձր։— Ահա, այսպիսի փափախ։ Արջի մորթուց։ Եվ սպառնում է գնդակահարել, եթե չընհանձնվեմ։ Դե սուրը չէի հասցնի դուրս քաշել։ Ես էլ նրան՝ բռունցքով։ Այ այստեղ՝ աչքերի մեջտեղը։ Ու նա մեկ էլ՝ ը՛փ։ Եվ վերջ, ուրեմն...

— Ի՞նչը վերջ,— անմիջապես չհասկացավ Կարաբանովը։

— Դե, ես էլ հենց գերեզման փորեցի նրա համար։

Նույնիսկ մի քիչ լաց եղա, աստված վկա։ Ախր փսլնքոտը մեղք էր...

Ոչխարը շուտով շերտ-շերտ կտրտված և լավ խորովված, ծխակալած մսակտորների կույտ էր դարձել սկավառակի մեջ։ Դինին և հոնի օղին Թուրքական փարչերից ուղղակի լցնում էին քասաների մեջ։

— Խմի՛ր, պորուչիկ, քո գործը ծանր է։ Լավ է, որ կին չունես...

Անդրեյը շատ չէր խմում, շոգ էր։ Հետո վրան մտավ շտաբս-կապիտան Նեկրասովը։

— Պարոնա՛յք, շնորհավորում եմ, մեր զորքերը գրոհով վերցրել են Արդահանը և Քուռ գետի ափերով տարածվել դեպի հարավ-արևմուտք։

Նրան նույնպես նստեցրին սեղանի մոտ։ Լցնում էին լիք-լիք։ Սեղանի վրա թափել էին ինչ-որ կար։

Դե կեր ու խմի՛ր։

— Արդահա՞ն, ասում ես,— կրկնեց Վատնինը՝ սրբելով ծնոտը։— Ես էլ եմ եղել այնտեղ, քո Արդահանի մոտ։ Այնտեղի աղջիկները շատ նիհար են։ Եվ ջուր քիչ կա։ Եվ շատ քարեր կան... Խմի՛ր, ահա։

Նեկրասովը ժպտաց և հարգալից ոտքի կանգնեց.

— Ձեր կենացը, պարոնա՛յք։— Եվ խմեց։

Հետո ասաց.

— Համենայն դեպս, լավ էր, որ հրաժարվեցի Լորիս-Մելիքովի շտաբում ծառայելուց։ Մեր զորքերն արդեն անցել են Կարկամեսից այն կողմ, խրվել եղեգնուտների մեջ, և հիմա նրանց օգնության են գնում գրենադյորները։

— Իսկ իմ կարծիքով, պարոն ակադեմիկոսներ,— բարկացած արձագանքեց Վատնինը,— լավ է թեկուզ մինչև ականջները ճահճի մեջ լինել, միայն թե ոչ Բայազետում։ Ես չեմ կարող այստեղ նեխել անգործությունից, քանի որ հենց մեր կազակները Ղարսի մոտ ջարդում են Թուրքերին։ Զգում եմ հոգով, որ հենց այստեղ էլ վերջանում է իմ փառքը։

Կարաբանովը՝ թեթև գինովցած, խփեց հարյուրապետի հզոր թիկունքին.

— Դե սպասիր, Նազար Մինաևիչ, դեռ մի գնդակ չէ, որ կշաչի։ Հրեն, մի լսիր, թե ինչ են ասում հայերը։

— Էհ, ինչ ուզում են ասեն,— հարյուրապետը վեր կացավ, վրան քաշեց կիտելը, մազոտ գազանի նման դուրս պրծավ վրանից։— Հե՛յ, կազակնե՛ր,— ծղրտաց նա։— Դենիսկային այստեղ, երգիչներին կանչեք... Ես ցանկանում եմ զվարճանալ։

Եկավ Դենիսկա Օժոգինը՝ խորամանկորեն փայլեցնելով աչքերը։ Նրա վերնաշապիկը մաքուր էր, առանց կեղտաբծերի։ Նա համեստորեն նստեց վրանի մուտքի մոտ և համբերությամբ սպասեց, թե երբ պետք է մատուցեն։ Նրան մատուցեցին, իհարկե։ Խմեց։ Հետո շրջանաձև նստեցին երգիչները, մատների արանքում սեղմեցին փայտե գդալները։

— Դենիսկա՛,— գոռաց Վատնինը։— Իմ մասին երգիր... Իսկ դուք, պարոնայք, լսեցեք. այս սրիկան սրտի խորքից է երգում...

Չխկչխկացին գդալները։ Դմակները ցնցելով՝ բլուրների վրայից այս ու այն կողմ ցատկոտեցին խրտնած ոչխարները։ Դենիսկան ճտքակոշիկներն իր համար հարմոն դարձրեց, զգացմունքով սկսեց.

Խուլ անտառներից չէ՝
Գալիս են կազակներ,
Հզոր ձեռքերով իրենց
Բերում են պատգարակներ։
Լայնակի դրել են
Սրերը պողպատյա։
Մի պատգարակի վրա,
Արյան ծովի մեջ
Եսաուլն է պառկած։
Բարի ձին նրա,
Գլխավերևում կանգնած,
Արցունք է թափում...

Գդալների արագ շարժումներից Կարաբանովի աչքերը շաղվում էին։ Հետո կազակներն սկսեցին սուլել և թափահարելով չհարդարված մորուքները՝ միանգամից սկսեցին երգել ամբողջ ճամբարով.

Ելի՛ր, եղբայր իմ տեր,
Այս Թուրքական հողից,
Մեր ընկերները բոլոր,
Բոլորը տուն են գնացել։

Իսկ դու, եղբայր, միայն դու,
Պառկած ես թուրքական հողում։
Ելի՛ր, եղբայր իմ տեր,
Նստիր վրաս...

Վատնինը գրկեց Անդրեյին, համբուրեց շրթունքները, ինչպես կնոջն են համբուրում, և արցունքները հոսեցին նրա փոշոտ մորուքի վրայով։

— Սիրելիս,— բղավում էր նա,— չենք կորչի... Թե թուրքը հանդիպի, կոտորի՛ր այդ շներին, ջարդի՛ր։ Բոլորն էլ այնտեղ կլինեն... Դենիսկա՛, դաղի՛ր...

Սակայն Դենիսկային կարծես քամին էր տարել։ Վերցնելով իրենց գդալները և մոռանալով հյուրասիրության մասին՝ ծլկել էին նաև մնացածները։ Վրանի ծայրը հետ բացվեց, ներս մտավ Խվոշչինսկին։

— Բարի օր, պարոնա՛յք։

Բոլորը վեր ցատկեցին՝ շտապ-շտապ կոճկելով համազգեստները։ Վատնինի շապիկը դուրս էր թռել անդրավարտիքից, և նա այդպես էլ սառեց-մնաց։ Կարաբանովը աչքերով նշան էր անում սպասյակին, որ շշերը հեռու տեղ խցկի։

Նեկրասովն իրեն չկորցրեց։

— Խնդրում ենք սեղանի մոտ, Նիկիտա Սեմյոնովիչ։

Խվոշչինսկին, մի կողմ դնելով ձեռնափայտը, որից վերջերս չէր բաժանվում, նստեց սեղանի մոտ և համազգեստի կոճակներն արձակելով՝ մի կողմ գցեց։ Հետո, կնճռոտվելով ցավացող կոշտուկներից, հանեց ճտքակոշիկները և դուրս շպրտեց վրանից։

— Թող մի րիչ հովհարվեն,— գործիմացորեն բացատրեց նա,— թե չէ շոգ է... Դուք էլ նստեք, պարոնա՛յք։ Եթե գինի հյուրասիրեք ծերուկիս, ուրախ կլինեմ։

Վատնինը ուրախությունից այնպես ժպտաց, որ մորուքն ուղիղ երկու անգամ լայնացավ։

— Մենք միշտ էլ պատրաստ ենք...— ասաց նա,— թեկուզ կնոգիշերին արթնացրու մեզ... Կուպան, հապա տուր այստեղ, ինչ ես գինին վերնաշապիկիդ տակ խցկում։ Դա քեզ համար սուրբ խաչ չէ, այլ մեր կազակական արցունքը...

— Լի՞քը լցնեմ,— հարցրեց Նեկրասովը՝ գնդապետի համար լցնելով թասը, որը թաթարը հապճեպ մաքրեց վերնաշապկի փեշով։

— Լիքը լցրեք,— թույլ տվեց Խվոշչինսկին ինչ-որ տխրությամբ,— այսօր հանցանք է չխմելը։

Գինին լցրին։ Մինչև գնդապետի գալը հասցրել էին ուտել ոչխարի միայն կեսը։

— Իսկ հիմա, պարոնա՛յք,— ասաց Խվոշչինսկին,— կարող եմ ձեզ շնորհավորել նոր պետի առթիվ... Նորին բարձրություն Կովկասի փոխարքան իմ պաշտոնի համար ուղարկել է գնդապետ Ադամ Պլատոնովիչ Պացևիչին, ինչպես ասում են, խնդրեմ՝ սիրել և հարգել։ Երևում է ինձ չեն վստահում։ Թիֆլիսում սիրում են ռազմազեկույցներ հաղթանակների մասին, իսկ իմ տագնապալի հաղորդումները ձանձրացրել են նրանց։ Դեհ, ինչ արած... Սակայն երբ ես չեմ լինի ձեզ հետ, պարոնայք, խնդրում եմ չմոռանալ, որ դուք Բայազետ եք մտել իմ հրամանատարությամբ...

Գնդապետը գինին մոտեցրեց շրթունքներին, բայց ձեռքը հանկարծ դողաց, և արցունքի մի կաթիլ դանդաղ սահեց նրա ծերունական թորշոմած այտի վրայով...

Այդ պահին Կարաբանովը ներեց, որ Ագլայան պատկանում է նրան։

10

Ադամ Պլատոնովիչ Պացևիչը, իր խոստովանությամբ, այնպես էր շտապում Բայազետ ընկնել, որ ճանապարհին երեք անգամ վառվել էին նրա սայլակառքի սոնիները։ Երեկոյան կողմ նա ժամանեց բերդ՝ գիշերելու համար կանգ առնելով քարվանսարայում։ Իսկ հաջորդ օրը սկսվեց.

— Ներկե՛լ ռմբարկղերը...

— Կազակներին հանե՛լ ճամբարից։ Ա՛յ թե ձեռքից բաց են թողել։

— Զիասարքերը տանե՛լ կազեմատ...

— Ո՞ր եք խցկվում ձիերով։ Այստեղ հոսպիտալ է...

— Ստավրոպոլյան գո՛ւնդ, դեպի ախոռները...

— Հոսպիտալը տեղափոխե՛լ մզկիթ...

— Մզկիթից դո՛ւրս բերել իրերը...

— Խոպերցիներին նկատողություն՝ մռայլ տեսքի համար...

— Հրանոթները դարձնե՛լ դեպի Աղրիդաղ...

— Կազակներին՝ կոմպլեկտից ավելի փամփուշտները հանձնել...

— Իրերը տանե՛լ նախկին հոսպիտալը...

— Հա, հիմա այստեղ ախո՞ն է։ Ի՞նչ եք ասում, խան։

— Ախոռը տեղափոխե՛լ մզկիթ...

— Հա, մզկիթում հիմա հոսպիտա՞լն է։ Տարօրինակ է...

Սարքելով այդ ամբողջ խառնաշփոթությունը՝ գնդապետ Պացևիչը չէր բարեհաճել նույնիսկ խորհրդակցել սպաների հետ, որոնք արդեն վարժվել էին իրենց պարտականություններին և լավ ուսումնասիրել Բայազետի շրջակայքը։ Այժմ քանդվում ու ավերվում էր այն ամենը, ինչը ժամանակին ստեղծվել էր Խվոշչինսկու կողմից, և Նիկիտա Սեմյոնովիչը, իր հրամանատարության տակ ստանալով միայն հետևակային մասը, մոլորված քայլում էր բերդի միջանցքներով։

— Ես մեղավոր չեմ, պարոնա՛յք,— ասես արդարանալով՝ հաճախ կրկնում էր նա։— Աստված է տեսնում, որ ես դարձել եմ խաղաթղթերի հինգերորդ տուզը... Ինքս ոչինչ չեմ հասկանում, պարոնայք... Պացևիչը ինձանից խորհուրդներ չի հարցնում և ինձ հետ այնպես է վարվում, ասես բերդի ուղեվար լինեմ...

Նոր պետը ծանոթանալու համար սպաներին իր մոտ չէր կանչում. նրա մոտ սկզբից մուտք ուներ միայն համհարզի պաշտոնում նշանակված պրապորշչիկ Լատիշևը։ Այդ պատճառով էլ ամեն անգամ, հենց որ պրապորշչիկը երևում էր բերդում, սպաները կպչում էին նրան իրենց հարցուփորձով.

— Դեհ, ինչպե՞ս է։ Ի՞նչ է ասում։ Եվ ընդհանրապես ինչպիսի՞ն է...

— Կարծես ոչինչ,— հանգստացնում էր նրանց Լատիշևը։— Առայժմ դեռ այնքան էլ շատ չի կշտամբում։ Միայն ես ձեզ ասեմ, ա՛յ թե փչում է հա նրանից... Ինչպես ծակ տակառից, ուժս չի պատում նրա կողքին կանգնել։ Այնպես որ, պարոնայք, խորհուրդ չեմ տալիս խոսելու ժամանակ նրան մոտիկ կանգնել։ Սակայն թվում է, թե բարի ծերուկ է։

Կարաբանովն այդ օրը ճաշից ուշացավ. նա գնացել էր դարբնոց՝ ստուգելու ձիերի պայտումը, և այդ ժամանակ սպայական զորանոցում մի տարօրինակ տեսարան տեղի ունեցավ։

Ճաշից քիչ առաջ գնդապետ Պացևիչը հանկարծ սպաներին ուրախացրեց իր այցելությամբ.

— Աղ ու հաց, պարոնա՛յք։

— Շնորհակալություն,— խառնիճայն պատասխանեցին սպաները, որոնք չէին սպասում նրա երևալուն։

— Դե, ինչու եք կանգնել։ Նստեցե՛ք...

Սպաները նստեցին։ Գնդապետ Պացևիչը շարունակում էր կանգնել, որպեսզի բարձր երևա ստորադրյալների շրջանում։

— Ինչպես տեսնում եմ, փոքրիկ գրադարան ունեք նաև,— ասաց Պացևիչը՝ մոտենալով գրապահարանին։— Դուք չունե՞ք արդյոք գեներալ Բեզակի մի այսպիսի կանաչավուն գրքույկ։

«Կանաչավուն գրքույկը» գրադարանում չհայտնաբերվեց, և գնդապետը նկատելի վշտացավ։

— Հարկավոր է ունենալ, պարոնա՛յք,— խրատական տոնով խորհուրդ տվեց նա։— Յուրաքանչյուր սպա պետք է ունենա։ Ծառայության համար օգտակար գիրք է։ Եվ հեղինակն ինքը շատ հաճելի մարդ է։ Ազնիվ մարդ։ Ուրիշինը չի վերցնի։ Ո՞-ո՞չ, չի վերցնի, պարոնայք։ Եվ դաստիարակությունը, և ամեն ինչ, ընդհանրապես...

Սպաներն ապշած նայում էին գնդապետի բերանին։

— Իսկ դուք, յունկե՛ր,— դիմեց Պացևիչը Եվդոկիմովին,— ես լսել եմ՝ համալսարանում եք սովորել։

— Այո՛, Խարկովի համալսարանում։

— Ես նույնպես,— նկատեց գնդապետը։— Միայն Վիլենյան համալսարանում։ Ձեզ ասեմ, որ չափազանց հետաքրքիր ժամանակ էր... Երիտասարդությո՛ւն։

Հետո նայելով ժամացույցին՝ Պացևիչը համեստորեն նկատեց, որ ինքը վարժվել է «ադմիրալական ժամին»։

— Մենք ևս սովոր ենք,— արձագանքեց Վատնինը և Ադամ Պլատոնովիչի առջև դրեց օղու շիշը, որի մեջ լողում էր կարմիր-կարմիր տաքդեղի մի կտոր։

Խմելով առաջին բաժակը և սպաներին առաջարկելով հետևել իր օրինակին՝ կայազորի նոր պետը տեղին հիշեց մի ոտանավոր։

— Պարոնա՛յք,— ասաց նա,— ահա լսեք.

Այժմ Պետրոսի ժամանակները չեն,
Աղմիրալական ժամը կհնչի,
Իսկ Աստերիայում ոգելից խմիչքներ
Թագավորը չի մատուցի։
Դաշտում քնած է Գլուար Ալեքսեիչը,
Իսկ ժառանգորդների գլուխ նրա
Երոֆեիչի[1] համար պլկում են մեղնից
Վեց ցելկովնի[2] մի դույլի դիմաց...

Սպաները քաղաքավարի ծիծաղեցին բանաստեղծության վրա (ոմանք՝ շատ, ոմանք՝ քիչ), իսկ Վատնինը ամենայն լրջությամբ հետաքրքրվեց, արդյոք կա՞ երաժշտություն այդ վանկավորված ոտանավորի համար, որպեսզի երգեն հեծելակային շարքերում։

— Որովհետև,— բացատրեց նա,— իմ կազակներին այդ երգը դուր կգա։ Վեցը վեց չէ, բայց չորս ցելկովնի պլկում են մի դույլի համար։

Նեկրասովը գնդապետին առաջարկեց տեղական բրինձ պանիր՝ համեմված չամանով։ Պացևիչը խոսելով խմեց երեք բաժակ օղի, կերավ կես գլուխ պանիր և, թողնելով սպաներին եզրափակեց.

— Ժամանակները տագնապալի են։ Լինենք գործնական, պարոնա՛յք։ Ինչպես մրջյունները, ինչպես մեղուները։ Երեկոյան ժամը վեցին, երբ շոգը կմեղմանա, ես նշանակում եմ ամբողջ կայազորի զորատես։ Հիշեցե՛ք, պարոնայք։ Ծառայական ամեն մի վրիպում ես կհամարեմ անձնական վիրավորանք իմ նկատմամբ։ Իսկ գեներալ Բեզակի կանաչավուն գրքույկը պետք է կարդա ձեզանից ամեն մեկը։

Դրանով տեսակցությունն ավարտվեց։ Իսկ զորատեսից առաջ Բայազետի նոր պետն իր մոտ հրավիրեց կայազորի սպաներին։ Նա շոգից թաքնվում էր խանական հանգստարանում, խոր գետնի տակ, և նրա շրջապատը կազմում էին Իսմայիլ խան Նախիջևանսկին, կապիտան Շտոկվիշը և այն նույն պրապորշչիկ Վադիմ Լատիշևը, որը ինչպես երևում էր, տառապում էր իրեն ցույց տրված պատվից։

— Ինձ լուրեր են հասել,— սկսեց Ադամ Պլատոնովիչը,— որ ձեզանից ոմանք դժգոհ են մեր զորքերի ներքին տեղաբաշխման մեջ կատարված այն փոփոխություններից, որ կատարել եմ այսօր... Դե ոչինչ, պարոնայք,— մխիթարում էր գնդապետը սպաներին։— Կազամբը տնկելիս որքան շատ են տեղափոխ անում, այնքան ավելի լավ է աճում։ Այժմ սկսենք շարվել։ Կանոնավո՛ր, կարգի՛ն։ Ինչպես վայել է մարտական ամրոցի կայազորին։ Չէ որ մենք, փառք աստծո, քաղաքացիական մարդուկներ չենք, որոնց գլխում միշտ մի տեսակ խառնաշփոթություն կա։

Կարաբանովը, մի կողմ կանգնած, հետաքրքրությամբ զննում էր նոր պետին։ Վերջին տարիներս Պացևիչը ղեկավարել էր Եկատերինոսլավի օկրուգը, և իր օկրուգը խեղդել այնպիսի ծանր տուրքերով, որպիսին, երևի, չէին նշանակել նույնիսկ նրա ազնվազարմ նախահայրերը՝ «Վռանա-Գոդզովի» գերբի տիրակալները, խռովարար և հայր ճիզվիտները։

«Իսկ ի՞նչ կլինի, եթե հիմա ծուխ փչեմ նրա մռութին»,— որոշեց չարություն անել Անդրեյը, և ծխախոտի թանձր ծխի շիթն ուղղեց գնդապետի հոնքազուրկ գեր դեմքին։

Պացևիչը նայեց նրան։ Շատ ուշադիր նայեց։ Հիշողության մեջ պահենք։ Եվ ոչինչ չասաց։

— Իսկ ահա ես այսպես եմ մտածում,— գվվոցով ասաց հարյուրապետ Վատնինը իր ցավոտ, կենսական, կազակական հոգսերի մասին։— Եթե, ասենք, խոտ կա, ուրեմն լավ է։ Իսկ ա՞յժմ, ի՞նչ անենք, ձիերին ամեն օր արոտավա՞յր քշենք...

«Այ թե բնավորություն ունես,— մտածեց պորուչիկ Կարաբանովը Պացևիչի մասին։— Բայց չգիտեմ միայն ինչպես կուլ կտաս վառոդի ծուխը։ Դա քեզ համար ծխախոտ չէ...»։

Զորքերը շարժվեցին զորատեսի այն ճանապարհի երկայնքով, որը ձգվում էր մեյդանի միջով անցնող առվակի

[1] Երոֆեիչ — դարը գինի կամ օղի՝ խոտերով թուրմացած։
[2] Ցելկովնի — մեկ ռուբլի։

ափով, քաղաքի հրեական՝ ամենաաղքատ և ամենակեղտոտ թաղամասի մոտով։

Գնդապետ Պացևիչը մի պիսակավոր ձիու վրա, խվոշչինսկու և Լատիշևի ուղեկցությամբ, մանրավարդ տնկտնկում էր հետևակի և միլիցիայի շարքերի երկայնքով։ Ժամանակ առ ժամանակ այնտեղից լսվում էր «ուռա՞»-ն։ Միջնաբերդի ճակատամասից ագռավների մի երամ բարձրացավ, պտտվեց տանիքների վրա և նորից սահուն վար իջավ...

Շարքի ամենահեռավոր ծայրում զեկույցով գնդապետին մոտեցավ Նեկրասովը. նրա ձեռքին կայծակի նման փայլեց սուրը, ապա սահուն թեքվեց դեպի ուսը և հենց նույն վայրկյանին էլ տափակ կողմերով կիպ հպվեց ոտքին։ «Ինչ ճարպկորեն է ողջունում մեր ակադեմիկոսը»,— նախանձով մտածեց Կարաբանովը։ Այժմ շտաբս-կապիտանը Պացևիչին զեկույց էր տալիս, նրա ձայնը հասնում էր կազակներին։ Հետո Նեկրասովը հետ քաշվեց տողանի մեջ։

Զորահանդեսի առիթով Կարաբանովը ընդարձակ չիկչիրների փոխարեն այսօր հագել էր հեծելազորային նեղ տաբատ՝ կաշվե լեյաներով։ Հիմա նա տեղ էր գրավել իր համերաշխ հարյուրյակի գլխամասում՝ ձի նստած, սուրը կողքից կախ, խթանի անվակներով կամացուկ ձգելով Լորդին։ Նույնիսկ ձիու բաշն այսօր զարդարել էր ծաղիկներով։

Եվ ահա վերջապես լսվեց կցկտուր, խռպոտ ձայնը.

— Բարև՛, երկրորդ հարյուրյակ։

— Առողջ-ցանկա՞նք, ձերդ բարձր բարեծնությո՞ւն...

Իսկ Դենիսկա Օժոգինի տակ արաբական կրակոտ նժույգ էր, այն նժույգը, որ բաժին էր ընկել նրան սպանված քրդից։ Եվ այդ նժույգը սովոր չէր զորահանդեսների, ծառս էր լինում, ոտքերին կարծես սպիտակ գուլպաներ կային, գունը բարակ էր, կատաղի։

Պացևիչին դուր եկավ արաբական նժույգը։

— Քեզ որտեղի՞ց այս նժույգը։ Մոռութիցդ տեսնում եմ, որ գողացել ես։

— Ո՛չ։ Նորին բարեծնությունն է նվիրել։

— Ո՞վ։

— Պարոն պորուչիկ Կարաբանովը։ Ծառայության համար...

Պացևիչը անշտապ մոտեցավ Անդրեյին։

— Դուք այդքան հարո՞ւստ եք,— հարցրեց։

— Օ՞-օ՞, այո՛, պարոն գնդապետ,— անփույթ պատասխանեց պորուչիկը։

— Ո՞ր նահանգում են, ներեցեք, ձեր կալվածքները։ Քանի՞ հոգի ուներ ձեր հայրը։

— Ինչպես յուրաքանչյուր մարդ, պարոն գնդապետ, մի հոգի։ Այլապես նա և ես անմահ կլինեինք։

Պացևիչի շուրթերին ժպիտ խաղաց.

— Կարաբանո՞վ... Կարաբանո՞վ... Սպասե՛ք, սպասե՛ք, ես ինչ-որ բան եմ լսել... Եվ շատ ուրախ եմ... Միայն ինչո՞ւ է ձեր խելքին փչել ձիու բաշին ծաղիկներ հյուսել։ Հանե՛ք դրանք, դուք օրիորդ չեք։

Կարաբանովը պատասխանեց.

— Բայց, ինչ իմանաս, գնդապետ, գուցե այդ ծաղիկներն աղջիկ է նվիրել։ Եվ ես ուզում եմ մեռնել նրանց բուրմունքը շնչելով...

Այդ ասելուց հետո նա ձախ սրունքով աննկատելի հարվածեց իր Լորդին։ Հովատակը կարծես դրան էր սպասում, սատանայի պես հարձակվեց պիսակավոր զամբիկի վրա։ Պացևիչը շտապեց հետ քաշվել։

Գնդապետը որոշեց Վատնինի հարյուրյակը ստուգել հետևակային շարքում, և կազակները ձիերից իջան ոչ այնքան հաճույքով։ Նախապես իմանալով, որ իր հարյուրյակը առանց ձիերի անշնորհք է երևում, Նազար Մինաևիչը որոշեց պաշտպանել իր հայրենակիցներին.

— Մենք ավելի շատ ձիու վրա ենք լինում,— ասաց նա։— Ոտքով ման գալ հիմարն էլ կարող է...

— Ի՞նչ եք ասում,— բարկացավ Պացևիչը։— Իսկ եթե եկեղեցական հանդես լինի։ Դուք, ի՞նչ է, զամբիկների վրա նստա՞ծ պետք է աղոթեք։ Հարկավոր է, հարյուրապետ, կարդալ Բեզակի կանաչավուն գրքույկը։

— Մենք որտեղի՞ց կարդանք,— պատասխանեց Վատնինը,— այնքան էլ գրագետ չենք։ Մենք ինչ-որ «տելեգենտ» չենք, մենք Քրիստոսին ենք հավատում...

— Դուք, այնուամենայնիվ, կարդացե՛ք, հարյուրապետ, կարդացե՛ք։

— Լավ,— համաձայնեց Վատնինը,— կկարդանք, երբ պատերազմը վերջանա...

Դրա փոխարեն հրետանավորներին հասավ ինչպես պետք է։ Նրանց փետուրները երկինք թռան։ Հին, փորձված զինվորական մայոր Պոտրեսովը մերթ գունատվում էր, մերթ կարմրատակում։ Կանգնել էր նա Կարաբանովից ոչ հեռու, հանդիսակարգի կանոններով սուրը ձեռքում պահած, և դիմացավ այդ ամենին։

Պացևիչը ինչեր միայն չբերեց նրա գլխին։ Սաստիկ նախատեց նշանոցի տեղակայման համար, թաշկինակը մտցրեց հրետանու փողի մեջ, հայհոյելով փորձեց պատառոտել առաջքի ձիասարքերը՝ արդյոք փտած չե՞ն, եթե փտած են, նշանակում է Պոտրեսովը գողանում է։

Հետո մատով սպառնաց հրետաձիգ Պոստնուն.

— Մի այստեղ արի՛, եղբայր... Ինչ տեսք ունես, շրջվիր քամակով...

Կիրյուխան շուռ եկավ։ Նրա տեսքն իսկապես անհրապույր էր։ Ինքը փոքր էր, իսկ շալվարը՝ մեծ, և ոտքերի արանքում կախ էր ընկած լայնածավալ մի ուռկանատոպրակ, ինչպես զապորոժցիների մոտ։ Պացևիչը չհրաժարվեց այդ ուռկանատոպրակն է՛լ ավելի ձգելու հաճույքից։ Ապա գոտկակապի տակից քաշեց դուրս հանեց վերնաշապիկը, գըլխարկն այնպես ճզմեց հրետաձգի գլխին, որ խեղճ տղայի ականջները ցցվեցին, և հեռվից գոռաց Պոտրեսովի վրա.

— Սա տե՞սք է։ Սա զինվորի տե՞սք է, մայոր։ Ինչո՞ւ եք լռում։ Որտեղի՞ց եք գտել այս թոկից փախածին... Եթե զինվորը դուրս է գալիս զորանոցից, ամբողջ փողոցը պետք է այս ու այն կողմ փախչի։ Իսկ սա ինչ է... Սրան նույնիսկ մի գիրուկ հավը կարող է չանչով գետին գլորել...

Երբ գնդապետը շարունակեց իր համայցը, Կարաբանովը, խաղացնելով այտոսկրերի բրոնզագույն մկանները, մոտեցավ Պոտրեսովին.

— Լսե՛ք,— ասաց նա,— դուք ինչպե՞ս կարողացաք համբերել։ Նա ձեզ վիրավորում է, իսկ դուք լռում եք։

— Է՛հ, պորուչի՛կ,— պատասխանեց մայորը՝ զենքը պատյանի մեջ դնելով,— դուք դեռ երիտասարդ եք, չեք հասկանում... Կարծում եք հիմար ծերուկը՝ մայոր Պոտրեսովը, հպարտություն չունի։ Այո՛, ունեցել է, սիրելիս... Իսկ եթե դուք իմ վաթսուն տարիները ունենայիք, ծառայեիք մինչև մայորի աստիճանն ու ահա այստեղից էլ (Պոտրեսովը ձեռքով խփեց իր ջլոտ վզին) կախված լիներ ձեր ընտանիքը։ Ութ բերան և բոլորն էլ աղջիկներ։ Էն էլ սիրուն չեն։ Ոչ ոք չի տանում...

— Ներեցեք ինձ մայոր,— Կարաբանովը հարգալից ողջունեց նրան սրով և մտախոհ վերադարձավ իր տեղը։

Երբ հարցուփորձ էին անում, թե ինչ բողոքներ ու գանգատներ կան, միլիցիայի շարքերից դուրս եկավ մի վրացի՝ Վանո քեռին, ձեռքին տրորված թղթի մի կտոր, որի վրա նա մի կերպ, վայրիվերո բողոք էր գրել, որ իրեն ու իր որդիներին վիրավորանք է հասցնում փոխգնդապետ Իսմայիլ խան Նախիջևանսկին։

— Լա՛վ, քո խնդրանքը քննության կառնեմ անձամբ,— կամավորին խոստացավ Ադամ Պլատոնովիչը։— Իրավացի լինես, կպատժեմ փոխգնդապետին, իսկ թե իրավացի չեղար, կկարգադրեմ վրայիցդ հանել շալվարը, կհրամայեմ որդիներիդ՝ այնպես մտրակահարեն քեզ, որ մինչև պատերազմի վերջը արյունլվիկ ման գաս։

— Տո՛ւր, տո՛ւր,— շարախնդորեն խորհուրդ էր տալիս խանը։ Միլիցիոները խեթ-խեթ նայեց Պացևիչին և վրացերեն կամաց հայհոյելով՝ հետ վերցրեց իր բողոքը...

Իսկ այնուհետև նոր ներկայացում սկսվեց. Ադամ Պլատոնովիչ Պացևիչը հանդիպեց հին գրենադյոր Վասիլի Խրենովին, որն իր բարի մտադրությունների նկատմամբ լիակատար պատասխանատվությամբ, իր մորուքով և խաչերով, դուրս էր եկել առաջին պլան։

— Իսկ դու, ծերուկ, ո՞ր գերեզմանոցից ես եկել,— հարձակվեց նրա վրա գնդապետը,— ինչո՞ւ ես բոբիկ։ Քեզ որտեղի՞ց խաչերը։

Ծերուկը՝ կարծես թե ոչինչ, բայց շատ էր սիրում իր մասին պատմել։ Դա էլ հենց կործանեց նրան։ Սկսեց հանգամանորեն՝ Երմոլովի մոտ ծառայությունից («այդպիսի պետեր,— ավելացրեց նա, հիմա չկան») և հասավ արդեն մինչև այն ճտքակոշիկները, որոնք ինքը դեռ չէր ստացել, իսկ թե ինչո՞ւ չէր ստացել, դրա մասին հիմա կպատմի...

Հենց այստեղ էլ նրան կանգնեցրին.

— Դե կորի՛ր այստեղից, թափառաշրջիկ,— գոռաց Պացևիչը։

Ծերուկը ճոճվեց, բայց դուրս չեկավ շարքից։ Խվոշչինսկին թամբի վրայից ընկնելու չափ թեքվեց դեպի գնդապետը և սկսեց տաք-տաք ինչ-որ բան բացատրել։

Պացևիչը լսեց և ձեռքը թափ տվեց.

— Չէ, չեք համոզի... Դե, ծերուկ, կորի՛ր այստեղից...

Իր երկարամյա կյանքի ընթացքում ծերունին տեսել էր ամեն ինչ։ Եվ վատն էր տեսել, և լավը։ Հրամանատարություն՝ դեռ ոչինչ, ինչ ուզում է լիներ, բայց ծերուկը երիտասարդ հասակից չէր սիրում զինվորական կանոնադրություն, և դրա համար ծեծում էին նրան։ Սակայն... ահա՝ մայր Ռուսաստանը, թեկուզ խռովահույզ, հեռավոր, բայց գորովալից, ինչպես մանկության մասին հուշ,— նա գիտեր հաստատ սրտով, և հենց դրա համար հրացանն այնպես էր դրված ուսին, ասես ձուլված լիներ։

— Ո՛չ,— կտրուկ ասաց նա,— չենք կարող դուրս գալ։ Ես զինվոր եմ։ Հեծյալ։ Առանց դրա չեմ կարող... Երդում եմ տվել։

Այդ ամենը ավարտվեց նրանով, որ Պացևիչը հրամայեց երկու զինվորների շարքից դուրս հանել Խրենովին։ Եվ ծերուկը, սևացած կրունկներով փոցխելով Բայազետի գորշ փոշին, քարշ գալով երկու զինվորների արմունկների միջև, հեռացավ չգիտես ուր։

Շրջագայելով բոլոր զորաշարքերը՝ Պացևիչը կարգադրեց կայազորի սպաներին մոտենալ իրեն և բարկացած հայտարարեց.

— Կազակային հարյուրյակներից բացի մնացած բոլորը վատ են։ Շատ վատ։ Եվ այդ ամենը նրանից է, պարոնայք, որ դուք նախապես չեք մտահոգվել ծանոթանալ գեներալ Բեզակի կանաչավուն գրքույկին...

Երբ զորատեսը վերջացավ, Կարաբանովն ասաց.

— Բայց ափսոս, որ այն ռումբը չի պայթել։

— Ո՞ր։

— Դե, հենց այն, որ Վատնինը կոխեց զորակայանից եկած սրիկայի սայլի մեջ։ Թիֆլիսում նստած գեներալները

ամենայն հավանականությամբ ավելի շատ հավատացել են նրան, քան Խվոշչինսկուն։ Իսկ մեզ մոտ էլ ուղարկել են ահա... այս գրքույկը։

Սակայն արդեն ուշ էր։ Պացևիչը, ինչպես ինքնահաճ ու ահեղ մի գետ, հունի մեջ էր մտել։

11

Վաղը հարկավոր է մեկնել...

Ամբողջ օրն անցկացրեց դարբնոցում, որտեղ պայտում էին ձիերին, հանձնարարեց թրերը սրել, վարսակ գնել, ինչպես հարկն է ստուգել լծասարքերը, փամփուշտներն առանձնացնել ըստ տրամաչափերի և ավելորդ բաները դեն գցել։

Երեկոյան զեկույցով ներկայացավ ուրյադնիկը։

— Ամեն ինչ կարգին է, ձերդ բարեծնություն։ Ձիերն առողջ են։

— Իսկ մարդի՞կ։

— Եվ մարդիկ նույնպես...

— Լսի՛ր, տխմար, քանի անգամ կարելի է կրկնել, որ գլուխդ մտնի՝ սկզբից հարկավոր է մարդկանց մասին ասել, հետո ձիերի։

Ուրյադնիկը նկատելիորեն նեղացավ.

— Ձերդ բարեծնություն, ինչի՞ համար եք բարկանում ինձ վրա։ Ես ծառայությունն ահա այս տեղով գիտեմ...

— Դու այն հետույքով գիտես,— զայրացավ Անդրեյը։

— Հետույքով նույնպես,— համառորեն պաշտպանվեց ուրյադնիկը։— Ես արդեն մի թամբ չէ, որ նրանով մաշել եմ... ուրեմն, եթե կազակը տկարանա, լազարեթ կուղարկենք։ Իսկ ձիու համար փող է վճարված, և եթե ձիու հետ մի բան պատահի, հրամանատարությունը իմ գլխին խիստ նախատինք է թափելու։

— Լավ, հեռացիր այստեղից...

Մտնելով ձիանոց, որտեղ այժմ տեղավորված էր նրա հարյուրյակը, Կարաբանովը կազակներին հանդիպեց տարօրինակ զբաղմունքի պահին։ Համարյա մերկ, փայլփլեցնելով թիկունքները՝ նրանք փնչացնելով իրար մեջքի յուղ էին քսում։ Կրակի վրա կախված կաթսայիկներում եռում էր մի գարշահոտ խառնուք։

— Սա ի՞նչ է,— հարցրեց Անդրեյը։

— Մախորկա ենք եփում,— բացատրեց պեպենոտ Եգորիչը։— Հանեք շորերը, ձերդ բարեծնություն։ Պիտի քսենք։ Դա ցավոտ չէ։ Բայց դրա փոխարեն մամուկները չեն կծի։ Շատ մարդ է դրանցից վարակվել տիֆով ու մահացել։ Այստեղից մի երկու հարյուր վերստ որ հեռանաք, ամբողջ գյուղեր կան դատարկ, մամուկներից են փախել...

Կարաբանովը չգիտեր անգամ, որ լեռնային անապատներում, Պարսկաստանի սահմանի վրա, կարելի է վարակվել տիֆով, բայց նա հավատաց կազակների փորձին և խոնարհաբար հանվեց։ Որպես յուրայինի, նրան չափսոսացին և այնպես տրորեցին, որ նա լրիվ վառվում էր, և մի վերստի վրա ծխախոտի հոտ էր փչում նրանից...

— Դա ոչինչ,— մխիթարում էր Եգորիչը,— հիմա արդեն ոչ մի կնիկ, ոչ մի մամուկ ձերդ բարեծնությանը չի կծի...

«Աստվա՜ծ իմ,— մտածում էր Կարաբանովը,— ինչ լավ է, որ Ագլայան կողքիս չէ, ախր դա սարսափելի է... իսկ ի՞նչ կասեին նորին մեծության գնդում, այնտեղ՝ Պետերգոֆում։ Ասենք,— ծիծաղեց նա,— այնտեղ ինքս դիտավորյալ կգնայի՝ ի հեճուկս բոլորի՝ ահա ես, գրողը ձեզ տանի, հոտ քաշեք, տեսեք, թե ինչ հոտ է գալիս թուրքական պատերազմից»։

Երբ պորուչիկն անցնում էր ձիակապարանի մոտով, ձիերը կասկածելիորեն փքում էին ռունգները։ Անդրեյը նկատեց, որ իր երևալուն պես Դենիսկա Օժոգինը փորձում է խուսափել, և բռնեց նրա ականջից.

— Սպասի՛ր։ Դե խոստովանիր, երեկ գիշեր, դո՞ւ ես ոչխարը հոտի միջից տարել։

— Ո՞վ։ Ե՞ս։

— Դու, շան որդի, էլ ուրիշ ո՞վ։

— Ե՞րբ, ձերդ բարեծնություն,— աչքերը լայն բացելով, զարմացավ Դենիսկան ու ցավից բարձրացավ թաթերի վրա։

Կարաբանովը ծիծաղեց.

— Ահա թե ինչ, ստել չես կարողանում... Դե գնա, ոչխարի մի կող բեր ու կորիր գրողի ծոցը։

Օժոգինն, ականջը քորելով, մտմտաց.

— Այո, կարծեմ այնտեղ դեռ մնացել է։ Շատ քիչ։ Անցած անգամվանից... ինձ ի՞նչ, խնդրեմ, թե որ այդպես է...

Շորի մեջ փաթաթված մի մեծ կտոր միս թևի տակ սեղմած՝ Կարաբանովը մտավ բերդ։ Օգտվելով մթից՝ առաջին գավթի ջրավազանի մոտ մի զինվոր իր բնական կարիքն էր բավարարում։

— Այդ ի՞նչ ես անում, սրիկա, հը՞։

Զինվորը ահաբեկվեց։

— Էնպես, ձերդ... մի՞թե թույլ կտայինք... նա շոր է, դատարկ... գեղեցկության համար է միայն...

— Հիմար, այնտեղ ահա ջուր կլցնենք, և ինքդ էլ կխմես։ Մի անգամ էլ տեսնեմ, այն ժամանակ մարակով կնախշեմ դունչդ...

«Հարկավոր է Շտոկվիչին հիշեցնել ջրավազանի մասին»,— որոշեց նա և գլուխը կախ գնաց երկար, խավար միջանցքներով։ Նեղ որմանցքերից փչում էր ալյուրի խեղդող փոշին. դա տուգանային զինվորներն էին ձեռքի երկանքով աղում փոի համար։ Երկրորդ գավթում, որտեղ կանգնած էին ֆուրգոնները, ռմբարկղերն ու սայլակները, աղմուկ էր։ Զինվորները մաքրում էին հրացանները, թրաշեղբերը սրող միլիցիոներների ձեռքում ճզճզում էին կայծացայտ հեսանները։ Վատնինի հարյուրյակից մի վիրավոր կազակ անցավ՝ հենակները թևերի տակ, և բարևեց պորուչիկին։ Մզկիթի մուտքի մոտ, մի անկյունում, Կլյուգենաուի սակրավոր զինվորները հրետանավորների հետ միասին, գլորելով ապարելի[1] վրա էին բարձրացնում հաստամռուի հաուբիցը։

«Ձեռում է ժողովուրդը»,— քաջալերանքով մտածեց Անդրեյը և իր ճանապարհորդությունն ավարտեց մի նեղլիկ սենյակում, որը ծածկված էր արաբական պաճուճված զարդագրերով։ Պոտրեսովը, նստած փափուկ ու հաստ, երշիկանման լցքապարկերի վրա, փութաջանորեն ինչ-որ բան էր գրում։

— Ես անցողակի մտա,— ասաց նրան պորուչիկը։— Պատահաբար ձեզ միս հարկավոր չէ՞։ Թե չէ իմ թոկից փախածները չափազանց շատ են խժռել։ Իրենց համար պառկել են ու զկոտում։

[1] Ապարել — (Ֆրանս). բերդախրամի զառիկողջ։

— Օ՜յ,— շփոթվեց մայորը,— եթե դա ձեզ վնաս չի պատճառի...

— Դե վերցրե՛ք, ինչ խոսք կարող է լինել...

Կարաբանովն արդեն գիտեր Պոտրեսովի կատարյալ աղքատության մասին, և եթե սկզբում միայն զարմանում էր, որ մայորը, զբաղվելով խոտի մատակարարմամբ, չի գողանում, ապա հիմա նույնիսկ չէր համարձակվում այդպես մտածել։ Եվ ցավալի էր, որ այդ մարդը, քառասուն տարի ազնվաբար ծառայելով, չէր կարողանում կարիքից դուրս գալ...

— Նստե՛ք, պորուչիկ, նստեք,— իրար անցավ Պոտրեսովը։— Գիտեք հենց հիմա նամակ եմ գրում տուն... Ես խիստ ուրախ եմ. իմ Դաշենկայի հետ (նա իմ ամենալավ աղջիկն է) ամուսնանում է մի կարգին մարդ։ Ճիշտ է, նա այրի է, բայց... Եվ ահա նայեք, ես հիմա հաշվեցի։ Տեսնո՞ւմ եք...

Ճշմարիտ էր, որ Պոտրեսովի հետ շփում ունենալը քավության զոհ էր պահանջում. հարկավոր էր լսել մայորի դրամական գործերի կանացիական մանրակրկիտ հաշվետվությունները՝ ո՞ւմ է նա պետք, ինչքա՞ն է ուղարկել տուն, ինչքա՞ն է թողել իր համար, սակայն... դա գլխավորը չէ, մայորը լավ մարդ էր և հիանալի հրետանավոր։

Եվ Անդրեյը բոլորովին էլ անցողակի չէր մտել նրա մոտ, այլ պայմանավորվել Նեկրասովի հետ, որը շուտով եկավ և հետը բերեց ֆոն Կլյուգենաուին։ Պահանջվում էր ինժեների պայծառ ու խելոք գլուխ։ Սկսվեց զրույցը, որ շատ անհրաժեշտ էր բոլորի համար, և մայոր Պոտրեսովը լրիվ մոռացավ Դաշենկայի մասին, վերցրեց իր պարտքերի ցուցակը և թղթի մյուս երեսի վրա սկսեց ուրվագծել տեղանքի պլանը։

— Ահա,— եռանդուն բացատրում էր նա,— հետևի գավթի ապարելը պետք է բարձրացնել, և դա արդեն ձեր գործն է, բարո՛ն. այն ժամանակ ես հաուբիցը կկանգնեցնեմ արևմտյան բերդապարսպի գագաթին և... տեսեք, թե ինչ է ստացվում, պարոնայք։

Մայորի մատիտն ուժգնորեն կտրում էր բերդապատերի անկյունները.

— Նայեցե՛ք այստեղ։ Ես կրակի տակ եմ վերցնում Կարմիր բլուրները՝ դա ինը հարյուր սաժեն է։ Ամբողջ Ներքին քաղաքը կդողա համազարկերից՝ դա երկու հազար սաժեն է. և վերջապես, պարոնա՛յք, ինչը և ամենագլխավորն է, մեյդանը և հայկական թաղամասերը երևում են ինչպես ափի մեջ։ Այնուհետև...

— Այստեղ պատը կարող է չդիմանալ և փլվել,— նկատեց Նեկրասովը։

— Դա վստահեք ինձ,— ասաց Կլյուգենաուն։— Ես այն կամրացնեմ հեռագրասյուներով։

— Իսկ դուք ինչո՞ւ եք լռում, պորուչի՛կ։

Կարաբանովը ոտքի կանգնեց.

— Իմ գործը կազակային է՝ հանկարծակի հարձակումներ գործել թուրքերի և... Պացևիչի վրա։ Միայն գծագրերը պատրաստեք, ինչպես պետքն է, ես նրան կստիպեմ լսել մեզ։

Նրանք ցրվեցին ուշ։ Անդրեյը հրաժեշտ տվեց։ Մայոր Պոտրեսովը երկար սեղմում էր նրա ձեռքը։ Կլյուգենաուն նայում էր աստղերին և ինչ-որ անորոշ մոթմոթում։ Նեկրասովը բռնեց Կարաբանովի թևից։

— Դուք անցած անգամ իզուր երեխայություն արիք,— ասաց նա մեծի խրատական տոնով։— Ծուխ փչել նրա երեսին, դատարկ բան է, իսկ նա կարող է կեղտոտել ձեզ։ Դուք, երևի, արդեն նկատել եք, որ էշը ավելի ցավոտ աքացի է տալիս, քան ձին։ Ասենք լավ.. Դուք վա՞ղն եք գնում։

— Այո՛։

— Ջտաքանաք։ Թուրքերը շատ նենգ զինվորներ են։ Եվ իրենց սպառազինությունում նրանք էլ ունեն մեր բանակում եղած նույն «սնայդերներից»։ Պետերբուրգի կամարների տակ նստած գեներալները, հույսը դնելով սվինի վրա, նշանոցը փոխել են վեց հարյուր քայլի համար, իսկ թուրքական հրացաններն ունեն նշանոց երկու հազար քայլի համար։ Դուք այդ նկատի ունեցեք, Անդրեյ Ելիսեևիչ։

Կարաբանովը մոտեցավ բերդի դարպասներին։

— Հապա մի բացեք։

Բրոնզակուռ ահռելի դարպասները, զարդարված շքահանդեսային առյուծներով, դանդաղորեն բացվեցին՝ նրան

քաղաք թողնելով։ Պորուչիկը մի քիչ շրջեց բերդախրամի ամենաեզրին ընկած ճանապարհով, կանգնեց և նայեց աստղերին... «Ինչի՞ մասին էր արդյոք մոթմոթում Կլյուգենաուն։ Գուցե՝ բարոնի՞ն, որպես բանաստեղծի, ունակություն է տրված տեսնելու այն, ինչն ինքը՝ Կարաբանովը, երբեք չի տեսնելու»։

Աստղերը՝ աստղեր են...

Իսկ վաղն ինքը մեկնում է։ Եվ հանկարծ նրա մեջ ցանկություն։ առաջացավ գոռալ ամբողջ աշխարհով մեկ ինչ-որ բանի մասին, գրկել մեկին, պինդ սեղմել կրծքին։

— Մի՞թե ես նույնպես պիտի մեռնեմ,— ասաց նա և, թևերը լայն բացելով, փլվեց չոր խոտերի վրա, ամբողջ մարմնով սեղմվեց գետնին։

Մթության միջից նրա մոտ վազեց մի զինվոր։

— Ձերդ բարեծնություն, ի՞նչ է պատահել ձեզ։

Կարաբանովը բարձրացրեց գլուխը.

— Ոչինչ, երիտասարդ։ Հենց այնպես։ Ուղղակի ցանկացա պառկել գետնին։ Հոգնած եմ...

Ուշ երեկոյան, երբ ժամանակը մոտենում էր կեսգիշերին, Խվոշչինսկու սենյակում լույսը երկար չէր հանգչում։ Գնդապետը Շտոկվիչի և Նեկրասովի հետ միասին քննարկում էր զորադասավորման այն խառնաշփոթությունը, որ ստեղծվել էր Պացևիչի թելադրանքով։ Նա ասաց.

— Հարկավոր է, որ Պացևիչը հեծյալ պարեկներ ուղարկի մինչև Դիագինի վանքը և, ընդհանրապես, վանականների հետ բարեկամություն ստեղծի։ Նրանք շատ բան գիտեն։ Գեներալ Տեր-Ղուկասովը նույնպես տարօրինակ է վարվում. մեզ թողել է Բայազետում և դրանով իսկ ասես հրաժարվել մեզանից...

Դուռը կամաց ծեծեցին.

— Կարելի է,— թույլ տվեց Խվոշչինսկին։

Մթության միջից դռների արանքում անաղմուկ երևաց Հաջի-Ջամալ բեկը։ Փափուկ տրեխները թաքցնում էին նրա քայլերի ձայնը։

— Ա՜-ա՜, սալամ,— ասաց գնդապետը։

— Սալամ-ալեյքում,— պատասխանեց լրտեսը՝ ճաղատ, կապտավուն գանգի վրայից վիրցնելով փափախը։

— Նե խաբա՞ր։ Ի՞նչ նորություն կա, պատմի՛ր,— և գնդապետը գլխով ցույց տվեց նրան աթոռը։

— Թող ռուսերեն խոսի,— դժգոհությամբ ասաց Շտոկվիչը։

Հաջի-Ջամալ բեկը նստեց աթոռի եզրին և սկսեց ռուսերեն պատմել.

— Քրդերի շեյխեր Ջալալ-Էդդինը և Իբնադուլը իրենց բազմաճամբարները միացրել են։ Կանգնած են Արարատի մոտ՝ երեխաներով, կանանցով և անասուններով։ Ցուրկ փաշան վախենում է քեզանից, սարդար։ Լեռներից վաղն այստեղ, Բայազետ է ուղարկելու մի հրաձգի։ Լավ հրաձիգ է, այստեղից մինչև մեյդան հավի ձուն գնդակով ջարդում է։ Դու, սարդար, սիրում ես առավոտները պահակախումբը շարք կանգնեցնել։ Վաղը նա քեզ կսպանի...

— Նա որտեղի՞ց պետք է կրակի ինձ վրա,— հարցրեց Խվոշչինսկին։

— Չգիտեմ։ Հավանաբար որևէ հյուղակից։ Որպեսզի դու, սարդար, չկարողանաս կախարդել նրա գնդակը, նա վանում գլուխ է գովացել, որ գնդակը ձուլել է պղնձից...

— Բարաքյալլա խաբար, ֆիկիր-էֆենդի,— ասաց գնդապետը և հաճույքով ծիծաղեց, դիմելով սպաներին.— Հիանալի նորություն է, մտածենք...

Բավականաչափ «փեշքեշ»՝ հինգ ոսկի ստանալով՝ լրտեսը կեղտոտ փափախը քաշեց գանգին ու հեռացավ։

— Դուք նրան հավատո՞ւմ եք,— հարցրեց Շտոկվիչը։

— Ես նրան հավատում եմ, քանի դեռ իմ բոի մեջ է։ Ամենագլխավորը՝ նա քեզ բառեր է տալիս, դու նրան՝ դրամ։ Այդ դեպքում լրտեսը մշտապես սանձահարված է, ինչպես ձին... Եվ այսպես, պարոնայք,— շարունակեց Նիկիտա Սեմյոնովիչը,— ինչի՞ վրա մենք կանգ առանք։ Ա՜խ, այո՛։ Շտաբկայանի հետ կապ պաշտպանելու մասին...

— Պարոն գնդապետ,— ընդհատեց նրան Նեկրասովը,— հիմա ավելի կարևոր գործ կա, մի՞թե դուք վաղը դուրս կգաք պահակախմբի հերթափոխման։

— Հապա ինչպես, ծառայությունը պետք է գնա իր կարգով...

Առավոտյան ամբողջ Բայազետն արդեն գիտեր նախապատրաստվող մահափորձի մասին։ Մշնաբերդը հուզված էր և աղմկում էր։ Բերդի շրջակայքում գտնվող տնակներում խուզարկությունները ոչինչ չտվեցին։ Բերեցին միայն մի կույտ ժանգոտված յաթաղաններ և հին ատրճանակներ։

— Դուք իզուր եք անհանգստանում, պարոնայք,— ասաց Խվոշչինսկին՝ ձեռնոցները հագնելով։— Ես արդեն ձեզ ասել եմ, որ պահակափոխումը չի կարող չկայանալ... Կարող եք ինձ ձի բերել։ Երաժշտախմբին հրամայեք այսօր ավելի ուրախ նվագել։

Պահակափոխումն անցնում էր հիանալի։ Զինվորների հանդերձանքն ու զենքերը չտեսնված փայլում էին։ Սպաները պատասխանում էին ընդգծված բարձրաձայնով։ Խորհրդավոր սևին էին տալիս տնակների փակ լուսամուտները, և բոլորն ակամայից սպասում էին շարաբաստիկ կրակոցին։

— Պրապորշչիկ Լատիշև,— հրամայեց Խվոշչինսկին,— ձեր պարտականությունները, որպես պահակախմբի այցելուհսկիչի, ոչ միայն այն են, որ դուք...

Եվ կրակոցը ճայթեց։ Նրա հետևից երկրորդը...

Պահակախմբի շարասյունը խախտվեց, նրա միջից դուրս թռավ մի զինվոր և գնդակից փլվեց Խվոշչինսկու ոտքերի մոտ։ Դա մի երիտասարդ սակրավոր էր, կամավոր զինվորներից՝ Կազանի համալսարանի երեկվա ուսանող։ Նրա նիհար վիզը բարակ ճյուղի նման դուրս էր ձգվել զինվորական համազգեստի կոշտ օձիքից։

— Ձերդ բարձր բարեծնություն,— ասաց նա, սվսվալով,— դա պատրաստվել էր ձեզ համար։ Իսկ ես նախանձից ընդունեցի ինձ վրա։ Հուսով եմ, որ դրա համար խիստ չեք լինի իմ նկատմամբ...

Խվոշչինսկին կռացավ վիրավոր զինվորի վրա, պատռեց նրա վերնաշապիկը. գունատ կրծքի երկայնքով, շտուցերի գնդակից վառ կարմրին էր տալիս արյան զիգզագաձև շիթը։

— Այդ ի՞նչ արեցիր... տղաս։— Եվ գնդապետը լաց եղավ։

Ուսանողին բարձրացրին ու տարան։ Կրակել էին Կարմիր բլուրների բարձունքից, և կազակները մի ակնթարթում սլացելով այնտեղ, գտան միայն անգլիական արտադրության պիտակով մի ծածկոց, որի վրա ոչիլներ էին սողում։

Պահակախմբի հերթափոխությունը ավարտվեց սովորականի պես։

Կամավոր զինվորը մահացավ կեսօրին, և Պատվո բլրի վրա ավելացավ ևս մի գերեզման։

— Նախանձում եմ ձեզ, գնդապետ,— տխուր խոստովանեց Շտոկվիշը,— ինձ, օրինակ, այդպես չէին պաշտպանի գնդակից...

12

Գարշ գայլի նման մոնչում ես դաշտում,
Ձարֆի պես գիշերները թափառում,
Եվ քեզ համար դու փառք ես որոնում,
Իսկ թշնամիներին աճ ու սարսափ բերում...

(Կաղակային երգ, 1877 թ.)

Կարաբանովը արթնացավ. ակնախոռոչներից ուղիղ նրան էր նայում մարդկային մի գանգ՝ մեծ, դեղին ատամները ցցած, իսկ կողքին թափված էին ջարդված սափորի բեկորներ։ Այն ժամանակ նա շուռ եկավ մյուս կողքին, և Դենիսկա Օժոգինը, շրթունքներն ուռցնելով, խզխզոցով նրա վրա փչեց օղու և սոխի սուր հոտը։

Մարմնի սարսափելի բութ ցավերից պորուչիկը վեր կացավ՝ ասես մաս-մաս։ Սկզբում հատակից պոկեց ծոծրակը, թիկունքը, հետո՝ գոտկատեղը։ Վերջապես նստեց։ Հորանջեց։ Մեջքը ցավում էր։ Երեկ, երբ նրանք հասան այդ բարձիթողի քարվանսարան, այնպես մութ էր, որ կարիճի վրա էլ պառկեր, հավանաբար չէր նկատի։

— Կորի՛ր,— կամացուկ ասաց պորուչիկը և խփեց շոր գանգին։

Մի ժամանակ հույսերով, կրքերով ու երազներով լի մարդկային գանգը, քարե հատակի վրա թնդալով, գլորվեց մի անկյուն...

Լուսամուտների նեղ սոֆիտներից արդեն ներս էր թափանցում մառախլապատ լուսաբացը։

— Գիշերելը վերջացնել,— ընդօրինակելով ուրյադնիկին,

գոռաց Կարաբանովը, և հին քարվանսարան աստիճանաբար կենդանացավ։

Տրյոխժոննին, միայն շալվարով, անհատակ ջրհորի խորքից արդեն ջուր էր որսում, իսկ յունկեր Եվդոկիմովը բռնել էր նրա գոտուց, որպեսզի նա չընկներ այդ խոր, սարսափելի դատարկության մեջ։ Մոտեցան կազակները և էրիվանյան միլիցիոներները, ձեռքի հինգ մատներով քորեցին իրենց մազափնջերը և ջրի համար հերթ կանգնեցին։

— Լվացվելն արգելում եմ,— ասաց Կարաբանովը։— Ջուրը միայն խմելու համար։ Լցրեք տափաշշերը...

— Կարծես արդեն ջուր - եմ հանում,— թավ ձայնով կոնչաց ուրյադնիկը։— Պահե՛ք ինձ, պարոն յունկեր։ Աստված մի արասցե, ընկնեմ և չհասցնեմ այս աշխարհում ավարտել բոլոր գործերս...

Դույլը դուրս էր քաշվում շափազանց դանդաղ։ Իսկ երբ հանեցին գետնի խորքից, բոլորը տեսան, թե ինչպես ջրի մեջ վխտում էին փայտոջիլների նման ինչ-որ կարմիր միջատներ, և Անդրեյը ոտքի հարվածով շուռ տվեց դույլը, միջատները սկսեցին ցատկոտել տաք ավազի վրա։

— Թամբել ձիերը,— մռայլագեմ հրամայեց պորուչիկը,— Երեկոյան կլինենք Սաուկ-Սուի մոտ, այնտեղ կուշտ կխմենք։

Հեծյալները թամբում էին ծարավ ձիերին։ Քարվանսարայի քանդված պատշգամբի վրա անապատային մի երկնագույն աղավնի մաքրում էր փետուրները։ Ղունղունում էր, ինչպես ղունղունում են հայրենիքում։ Բարձրանում էր արևը՝ վիթխարի, շիկակարմիր, անիծված։ Հեռավոր մի ժայռի վրա բամբակի բարակ շերտի նման փռված էր գիշերային ամպը։

Արդեն շոգ էր։ Հողը կամաց-կամաց ճաքճքում էր...

Ցունկեր Եվդոկիմովն իր խնդրանքով էր եկել այս հետախուզությանը և ծառայության էր նշանակված միլիցիայի ջոկատում։ Այժմ նա հուզված մոտեցավ պորուչիկին և շշուկով ասաց.

— Անդրեյ Ելիսեևիչ, ինձ այդ բանը, չգիտես ինչու, դուր չի գալիս...

— Ես կարծում եմ,— պատասխանեց Կարաբանովը,— այստեղ դուր գալու ոչինչ չկա։

— Ախր, ո՞չ, լսեցեք... իմ էրիվանցիները երեկոյան ջուր են խմել և հիմա լավ չեն զգում։

— Պետք չէր երեկոյան ջուր խմել։ Նրանք, ինչ է, երեխանե՞ր են։ Իրենք պետք է հասկանան, թե մեզ ուր է բերել սատանան։

— Հենց այդպես, Անդրեյ Ելիսեևիչ, նրանք ձեզ այլ կերպ էլ չեն անվանում, քան «սատանա»... Բանից դուրս է գալիս (իրենք խոստովանեցին), որ նրանք Իսմայիլ խանի հետ անցած հետախուզության ժամանակ Բայազետից հեռու չեն գնացել։ Նրանք արդեն իրենց ձիերին պատկերացնում են սատկած, իսկ իրենց ընտանիքներին՝ որբացած։

— Լավ, յունկեր, ձեր հեծելազորը առանձին շարք կանգնեցրեք։

— Երբ միլիցիայի դասակը շարք էր կանգնել, հաշվեցին՝ երեք մարդ պակաս էր։ Երևում էր ճողոպրել էին դեռ գիշերը։ Մտրակը թափահարելով՝ Կարաբանովն իր նժույգը ծառս արեց շարասյան առջև։

— Վախենում եք մեռնե՞լ։ Որտե՞ղ է ձեր պատիվը։ Շամիլի ժամանակ հո ավելի համարձակ էիք... Մահ ու կենաց կռիվ էիք տալիս։ Կամ գուցե հիմա դուք չգիտե՞ք, թե ինչի համար եք կռվում։ Ուրեմն ես ձեզ կասեմ. թուրքը գա, ավելի վատ կլինի։ Նորից գյուղերը կլողան արյան մեջ... Հիշեցեք,— Կարաբանովը իջեցրեց մտրակը,— այստեղ գերեզման կմտնենք, բայց չենք հեռանա, քանի դեռ հետախուզությունը չենք վերջացրել։ Հասկացեք, ձեր ծնողը...

Հեծյալները շարժվեցին։ Լեռնային անապատ էր ընկած նրանց առջև։ Հովիտներում քամուց խշխշում էին մոշի թփուտները։ Քարափներում վխտում էին շնագայլերը։

— Ջոկա՛տ, վա՛-արգո՛վ,— հրամայեց պորուչիկը։

Ա՜խ, եթե մի ծառ լիներ։ Թվում է, թե այնպես պիտի գրկեր նրան, լսեր, թե ինչ են կանխագուշակում կանաչ տերևները։ Եվ երկնագույն կավը աչք էր ծակում... Սմբակների տակ ղրճղրճում էին ավազները... Հնամենի ավերակները կարծես գերեզմանոց լինեին... Առվակների աղակալած հուներ... Իսկ կազակային նիզակների երկարավուն ստվերները թռչում էին ու թռչում շիկացած օդում։

— Անդրեյ Ելիսեևիչ,— ասաց Եվդոկիմովը, իր ձիու ըն-

թացքը հարմարեցնելով Լորդի հավասարաքայլ վազքին,— գուցե թեքվե՞նք, հրեն այն ձորը։

— Ինչո՞ւ։

— Ձեր քարտեզը ավստրիական է, իսկ իմը՝ բրիտանական գլխավոր շտաբի, մեծ տարբերություններ կան ռելիեֆում և մասշտաբներում։

— Մենք արդեն Պարսկաստանի մոտ ենք,— մտածելով ասաց Կարաբանովը,— Մակինի փաշայությունից ոչ հեռու։ Ինչպես հաղորդել են հետախույզները, հենց այս տեղերում էլ թուրքերը կենտրոնացնում են քրդական ճամբարները։ Գնա՞նք։

Եվ անգլիացիները, և ավստրիացիները ստել էին. քարտեզի վրա նշված փակուղու փոխարեն, ջոկատը մտավ վարդերի և կղզիների բուրմունքով լեցուն մի դովատուն հովիտ։ Հսկայական թիթեռները, թևերը թափահարելով, պտտվում էին ծաղիկների վրա։ Բզզացող մեղուն բոլորովին հարազատ ձայնով, ինչպես հեռավոր ու սիրելի Ռուսաստանում, սլացքով զարկվեց Կարաբանովի դեմքին, և նա ակամայից երջանիկ ծիծաղեց.

— Հավաքվե՛լ, կազակներ։

Արդեն զգացվում էր մարդկային բնակավայրերի մոտիկությունը, անխռով հանգստությունը, արդեն աչքերին երևում էր սառը ջրի բյուրեղապակյա փայլը...

Հեծյալները երկար արշավեցին։ Մեկ ժամ, երկու, երեք։ Եվ հանկարծ երևացին դաշտերի հստակ քառակուսիները, կիսամերկ երեխաները «քրիստոնյա, քրիստոնյա» բղավելով վազեցին ընդառաջ, նիհար հողագործները բրիչները ձեռքերում, թևի տակից նայում էին կազակներին։ Ջոկատը գյուղ մտավ, և Կարաբանովը ակամայից սարսափեց, գյուղը պարսկական էր։

— Գրողը տանի,— շփոթված ասաց նա,— գուցե շտապ հե՞տ դառնանք։

Սակայն Դենիսկան արդեն գոռում էր.— Օբ բա՞ր։ Ջուր ենք ուզում, եղբայրներ... Օբ բա՞ր։

Կազակները, չսպասելով հրամանի, ձիերից իջան, նրանց ուրախ ձայները թաղվեցին խեղդուկ փոշու մեջ։

— Ա՛ չիրին, օբ հեյլի խուբ,— երդվում էր չալման գլուխին բարձրահասակ ծերունին։— Քաղցր ջուր է, լավն է...

— Խուբ, հայրիկ, խուբ արբաբ,— հոհոացին կազակները և իրենց բրեզենտե դույլերով միանգամից դատարկեցին ջրհորի կեսը։

Ջուրը աշխուժացրեց մարդկանց։ Կարաբանովը լավ խմեց, դույլը պարզեց յունկերին.

— Խմե՛ք, աղավնյակս...

Հաճույքից աչքերը փակելով՝ Եվդոկիմովը երկար խմում էր, նրա շրթունքները ծիծաղում էին։ Հետո մաքրեց թաց կզակը և ասաց.

— Օխա՛յ, ինչ լավ է...

Անդրեյը նայեց պատանուն. նա գեղեցիկ էր, վարդագույն, լափավոր քիթ ու աչքեր, ճակատը բարձր, մազերը գանգուր։

— Ձեր մայրը, յունկեր, հավանաբար գեղեցի՞կ է եղել,— անսպասելիորեն դուրս պրծավ Կարաբանովի լեզվից։

— Իսկ ինչո՞ւ «եղել է», պորուչիկ,— ծիծաղեց Եվդոկիմովը։— Նա հիմա էլ գեղեցիկ է։ Ահա՛, նայեք...

Յունկերը հանեց մետաքսե ժապավենով կապկպված դրամապանակը, դուրս քաշեց լուսանկարներ։ Դրանցից մեկի վրայից Կարաբանովին էին նայում խելացի, արտահայտիչ աչքեր, և այդ աչքերն ասես հարցնում էին՝

«Մի՞թե դուք կասկածում էիք...»։

— Այո՛, գեղեցիկ է,— համաձայնեց Անդրեյը և, դույլը վերցնելով, նորից ժլատորեն խմեց։— Իսկ սա՞ ով է, յունկեր։— Նա ոչ այնքան էլ քաղաքավարի, մատով ցույց տվեց մյուս նկարը։

— Իմ հարսնացուն է։

— Ազնվական դասի՞ց է։

— Ո՛չ, հոգևորականի աղջիկ է։ Հիմա նա սովորում է ժնևի համալսարանում։ Երբ վերադառնա, կամուսնանանք։ Այդպես ենք պայմանավորվել...

Լսվեց սմբակների խուլ դոփյուն և, լայն թևքերը թափահարելով՝ գյուղի ծայրին երևաց պարսկական մի արշավող սարբազ։ Դեռ հեռվից, նկատելով կազակներին, նա արագ բարձրացրեց կարճ նիզակը և ինչ-որ բան գոռաց՝ ոչ այն

է զայրալից, ոչ այն է ողջունելով։ Կարաբանովը չարացած հայհոյեց.

— Դե, յունկեր, կարծես փորձանքի մեջ ընկանք։ Այժմ իշխան Գորչակովի համար բավական գործ կլինի։ Հո չե՞ս կարող մեր քարտեզները ցույց տալ Փարիզում և Վիեննայում նստած դիվանագետներին։

— Ձերդ բարեծնություն,— վրա հասավ Դենիսկան,— հարկավոր է պարսիկներից բլիթներ գնել։

— Ես քեզ հիմա այնպիսի բլիթ կտամ... Հիմար, դու արդյոք հասկանո՞ւմ ես, թե մենք ինչ ենք արել։

Դենիսկան ճպճպացրեց աչքերը՝ չհասկացավ. հոտի միջից ոչխար գողանալ կարելի է, իսկ բլիթ գնել, չգիտես ինչու, չի կարելի։ Դե արի ու հասկացիր պարոն սպաներին։

13

Սարբազը քաղաքավարի գտնվեց.

Բարեհամբույր ֆշշացնելով կազակների վրա, որոնք սկսել էին շոշափել նրա ձիու կոնքոսկրերը, նա ձեռքերը սեղմեց կրծքին և քաղցր ժպտաց։ Հետո ասաց, որ նրա շահը՝ տիեզերքի կենտրոնը, խաղաղության և իմաստության ապաստարանը, կցանկանար տեսնել հյուրերին իր տանը, և որ հրաժարվելը կվշտացնի շահին, և ջուրը նրան դառը կթվա, և աստղերը կհանգչեն երկնքում...

— Հարկավոր է գնալ,— անվստահ խորհուրդ տվեց Եվդոկիմովը,— գուցե այդպես ավելի լավ կլինի։

Կարաբանովն իր թեթև, մկանուտ մարմնով նետվեց թամբի վրա և մատների արանքն առավ քրտինքից թրջված սանձը։

— Գնում ենք,— որոշեց նա,— որպեսզի ջուրը շահին դառը չթվա...

Պարզվեց, որ Մակինի շահի ամառային նստավայրը հեռու չէ. այն գտնվում էր խունացած, հին ջրանկարի նման բաց-երկնագույն մի խոր լեռնագոգում, որի հատակով կատաղի քրքջոցով հոսում էր գետը։ Անդրեյը կարգադրեց կազակներին՝ հանգիստ տալ ձիերին, ոչ մի տեղ չցրվել, և շուտով երկու սպաների առջև բացվեցին ծաղկուն այգու դարպասները։

— Իսկ դուք կարո՞ղ եք, պարոն պորուչիկ, խոսակցություն վարել շահի հետ։

— Կարծում եմ, որ խանդոտ կնոջ հետ խոսելն ավելի դժվար է,— ալարելով ժպտաց Անդրեյը. նա հոգնած էր։

— Ի դեպ, դուք, հավանաբար, չգիտեք, որ չի կարելի հարցնել կանանց առողջության մասին։ Արևելքում դա գրեթե վիրավորանք է համարվում։

— Իսկ ես բժիշկ չեմ, յունկեր, որ հարցնեմ առողջության մասին։

— Եվ հարկավոր է անպայման հանել կոշիկները։ Գնալ գուլպաներով։ Օրենքն է այդպես։

Կարաբանովը նույնիսկ սուլոց արձակեց.

— Ա՜յ, դա արդեն վատ է։ Գուլպա չկա։ Իսկ ոտքի փաթաթանները... Ամոթ ու խայտառակություն։ Իսկ հո՞տը...

— Ի՞նչ անենք,— հարցրեց Եվդոկիմովը։

— Ահա թե ինչ,— Կարաբանովը հանեց ճտքակոշիկները և ոտքերը կոխեց առվակի մեջ։— Կգնանք բոբիկ,— ասաց նա։

Այգու խորքում ինչ-որ տեղ հնչեց զանգակը։ Թթենիներն աճել էին շատ խիտ, Ղուրանն ուղղահավատներին արգելում է կտրել երիտասարդ ընձյուղները։

Ապարանքի տանիքի վրա բաց երախներով պտտվում էին թատրոնի հուշարարի խցիկ հիշեցնող հարմարանքներ, որոնք քամի էին հավաքում՝ ապարանքի ներսն ուղարկելով փրկարար զովություն...

Կալմիկի դեմքով մի սերհենգ-գնդապետ եկավ նրանց հետևից։ Սպաները վեր կացան և ճտքակոշիկները ձեռքները վերցնելով՝ բոբիկ ոտքերով մտան ապարանք։ Դիվանխանայի նախադռանը նրանց դիմավորեցին շահի երիտասարդ գեղեցիկ թիկնապահները, որոնք Պարսկաստանում հավաքագրվում էին անվանի ընտանիքների զավակներից։ Նրանք ձեռքերում պահում էին մուգ բրոնզից ձուլված մարտական սակրեր։ Այստեղ, այցադահլիճի շեմի մոտ, ռուսական սպաները թողեցին զենքերը, կոշիկները, մտրակները և ծառա ֆարրաշների ուղեկցությամբ շարժվեցին դեպի ապարանքի ներսը։

— Դո՜ւք, երիտասարդ, ավելի շատ լռեք,— շշնջաց Կա-

բաբանովը յունկերին,— կխոսեմ ես, և մի կերպ դուրս կպրծնենք։

Պարզվեց, որ Մակինի շահը մի բարեկիրթ ծերունի է՝ մոբեգույն ներկված երկար մորուքով, որը իջնում էր մինչև գոտի։ Նրա երիտասարդական աչքերը ներս մտած սպաներին նայում էին խելացի և ուրախ արտահայտությամբ։ Հագել էր մետաքսե կապույտ խալաթ՝ բոլորքը մորթապատված։ Մանր, էժան սուտակներից պատրաստված խոշոր ճարմանդը զարդարում էր նրա շալման. ոսկյա մատնոցները ծածկում էին շահի երկար եղունգները։

— Սալամ ալեյքում, դոստե ազիզ-ման,— հարգալից պատասխանեց Մակինի շահը ողջույնին և, բնականաբար, հարցրեց նրան ուղևորության նպատակի մասին։— Կուջա՞ շումա մերեվիդ։

Կարաբանովն ավելի ուշադիր նայեց շուրջը։ Շահի գլխավերևում կախված էր մի հասարակ (ինչպիսիք Պետերբուրգում վաճառում են կոպեկներով) վանդակ՝ դեղձանիկը մեջը։ Բայց պատուհանի մոտ դրված էր մի թանկարժեք գալվանամեքենա։ Զախ պատը, հակառակ շարիաթի օրենքների, զարդարված էր տիկին Ռեկամյեի դիմանկարով (Դավիթից հանած անհաջող պատճենը), իսկ աջ կողմում կախված էր Նիկոլայ I կայսեր դիմանկարը՝ իր անունով կոչված պրուսական կիրասիրական[1] գնդի համազգեստով։

Եվ սպաները գլուխ տվեցին։

— Ձերդ գերապատիվ բարձրություն,— սկսեց Կարաբանովը, քմծիծաղով նայելով իր ոտքերի չռած մատներին։— Մենք խորապես ներողություն ենք խնդրում, որ անկախ մեր կամքից, միայն պատահականության շնորհիվ ներխուժել ենք ձեր փաշայության հիանալի սահմանները, սակայն...

Շահը ճոճեց դեղձանիկի վանդակը։

— Ես հասկանում եմ, զավակներս,— ասաց նա, և դեղձանիկն սկսեց ծլվլալ նրա գլխավերևում,— դուք այդ արել եք առանց չարամտության... Բայց գուցե ձեզ հետապնդում էին օսմանները։

— Օ՜, ոչ, ամբողջ ուղևորության ընթացքում մենք չենք հանդիպել ոչ մի թուրքական զինվորի։

Շահը շոյեց մորուքը և նայեց մի հայելու մեջ, հետո մյուսի ու ծիծաղեց. ռուսական սարբազը չէր խաբում նրան, երևում էր՝ նա ինքն էր օսմանների հետքեր որոնում անապատում...

Նկատելով Եվդոկիմովի զարմացած հայացքը, որ ուղղված էր գալվանամեքենային՝ շահը անփութորեն ասաց.

— Ես դա գնել եմ, երբ վերջին անգամ եղա Փարիզում։ Իսկ ինչպե՞ս է իմ բարեկամի՝ մեծ իշխան Միխայիլի և նրա տիկնոջ՝ Օլգա Ֆեոդորովնայի առողջությունը։

— Նորին բարձրությունը և նրա պայծառափայլ տիկինը,— դիվանագետի դերի մեջ մտնելով՝ շողոքորթեց Կարաբանովը,— ապրում են գերազանց առողջությամբ և հավասարապես հաստատուն են իրենց կանոնների ու զգացմունքների մեջ. հարգելով և սիրելով ձեր փառքը, երջանիկ կլինեն իմանալ ձեր մշտարթուն իմաստության և առույգության մասին։

Մակինի շահը ճաշկերույթ տվեց, հակառակ պարսկական սովորույթի՝ ճաշել արևամուտին։ Սակայն ուտելիքները համեստ էին. հրեական բաղարջի նման երկու կլոր ու անալի բլիթների վրա լցված էր մի քիչ բրինձ, խառնված ինչ-որ անախորժ քաղցրահամ ու մաթի պես ծորացող նյութի հետ։ Սպաների առաջ առանձին, բյուրեղապակե գրաֆինով, խիրոսական դեղին գինի դրեցին։ Հետո էլ տվեցին մի-մի հատ տապակած նիհար թռչուն, որ երևի լեռնային աղավնիներ էին։ Նուրբ ոսկորները ատամների տակ կրճատացնելով՝ Կարաբանովը շշնջաց Եվդոկիմովին.

— Եթե սրանք նույնիսկ աղավնիներ են, յունկե՛ր, ապա այդ խեղճերին երևի սպանել են, երբ նրանք արդեն ցմքել էին իրար նկատմամբ ունեցած սիրուց։

— Ամբողջը չուտեք, խնդրում եմ ձեզ,— նույնպես շշնջոցով ասաց յունկերը։— Ես մի տեղ կարդացել եմ, որ ասիական կանոնները պահանջում են ամանների մեջ որոշ բան թողնել ձեռք չտված։

Մակինի շահը խոսում էր ռուսերեն, թեև հասկանալի, բայց վատ, և նա ինքն աննկատելիորեն անցավ ֆրանսերենի։ Կարաբանովը ուրախացավ, որ հնարավորություն ստեղծ-

[1] Կիրասիրական — զրահավորված։

վեց խոսելու այն լեզվով, որը նրա համար մանկությունից եղել է գրեթե երկրորդ մայրենի լեզու, և զրույցը իսկույն աշխուժացավ։

— Դուք իմ բարեկամներն եք,— ասաց շահը,— և ես միշտ Ռուսաստանին բարեկամ կմնամ։ Իմ ութերորդ որդին գերի էր ընկել ձեզ մոտ, բայց խան Բարյատինսկին նրան վերադարձրեց ինձ, իմ ժողովուրդը հիվանդ էր և մեռնում էր մի անհասկանալի հիվանդությունից, ձեր վեզիրը Թավրիզից բժիշկ ուղարկեց մեր փաշայությունը, իմ տասնհինգերորդ որդին հիմա սովորում է Պետերբուրգի կադետական կորպուսում և իր համար նույնիսկ ռուսական սայգա[1] է ճարել։

Հետո շահը ծափ տվեց և ինչ-որ բան ասաց։ Ծառաները ներս բերեցին խոնավ ավազով լցված մի լայն արկղ։

— Թո՛ւյլ եմ տալիս ձեզ մոտենալ ինձ, զավակնե՛րս,— հրամայաբար ասաց շահը և թափահարեց ձեռքը, որպեսզի բոլոր ֆարրաշներն ու սպասավորները դուրս գան։

Երբ ծառաները հեռացան, շահը վեր կացավ։

— Նայեք այստեղ, զավակներս,— խորհրդավորությամբ ասաց նա։

Մակինի ֆեոդալի մատները հանկարծ սկսեցին վազել ավազի վրա՝ կամացուկ տրորելով այն։ Նրանք քնքշորեն կսմթում էին ավազը ու խնամքով շփում, և ծերունու դեմքն այնպիսի բավականություն էր արտահայտում, որ կարծես փաղաքշում էր իր ամենաերիտասարդ կնոջը։

Այդ ամենը սկզբից թվում էր զվարճալի, մանկական խաղ, բայց երեք բոպե դեռ չանցած, պորուչիկը և յունկերը տեսան, թե ինչպես շահի մատների տակ բարձրանում էր թուրքական մոտակա սանջալի լեռնային հստակ ռելիեֆը։

Շահը ձեռքերը լվաց և, վերցնելով բարակավիզ սափորը, մի քիչ ջուր լցրեց ավազաբլուրների արանքում եղած խորշերից մեկի մեջ։

— Դա Սաուկ-Սու գետն է, զավակներս,— ասաց շահը և երկչոտությամբ նայեց դռանը։— Ահա այստեղ, Աղա-Ջուկ լեռնանցքի հետևում քրդերի այրուձին է։ Երկու հեծելախումբ

[1] Սայգա — ժամանակավոր կին, այսինքն սիրուհի։

է, թե երեք հեծելախումբ, չգիտեմ։ Թուրքերն այստեղ են... Ձեր զինվորները կռվում են, ինչպես կատաղի հովազներ, բայց ձերոնք ընդամենը երկու հազար են...

Նա փոքր-ինչ սպասեց՝ նայելով Կարաբանովին. պորուչիկը գլխով արեց՝ Բայազետի կայազորում հազարից մի քիչ ավելի էին, սակայն Մակինի շահը թող այդպես էլ անտեղյակ մնա։

— Թուրքերն այստեղ երեսուն հազար են,— շարունակեց շահը։— Եվ բոլորը ձիերի վրա։ Այստեղով կարող են անցնել «զեմբուրեկչիները»՝ ուղտերի սապատների վրա տեղավորված թեթև հրետանին։ Թուրքական հրետանավարները վարժեցված են մեռնել հրանոթների փողերի վրա, բայց չնահանջել։ Վանի ճանապարհով,— շարունակեց շահը,— շարժվում է պաշարման հրետանին։ Հրանոթները գերմանական են, Կրուպպի պողպատից, իսկ դուք ունեք միայն 8 հրանոթ, դրանք էլ բրոնզից են... Այդպե՞ս է։

Նա նորից նայեց պորուչիկին, և Կարաբանովը դարձյալ գլխով արեց (Պոտրեսովն ուներ միայն երեք հրանոթ և երկու հրթիռային հարմարանք)։

— Ես սուրհանդակ եմ ուղարկել գեներալ Տեր-Ղուկասովի մոտ,— տխուր վերջացրեց շահը,— բայց նա չվերադարձավ... Դուք պետք է թողնեք Բայազետը։ Ձեզ մահ է սպասում...

Տիրեց լռություն։ Այգում աղմկում էին ծառերը և քնքշորեն հնչում էին արծաթյա զանգակները։ Դեղձանիկը կտուցով ճտտացնում էր վանդակի ձողիկներին։

Սպաները գլուխ խոնարհեցին.

— Շատ շնորհակալ ենք ձեզանից, ձերդ բարձրություն,— ասաց Կարաբանովը,— սակայն Բայազետից մենք չենք հեռանա։ Որտեղ ռուսական դրոշը բարձրացել է թեկուզ մեկ անգամ, այնտեղ նա արդեն չի իջեցվի այնքան ժամանակ, քանի դեռ մենք ինքներս չենք իջեցրել։

Շահն արագ խառնեց ավազը, հարթեցնելով բոլոր լեռներն ու գետերը, փակեց աչքերը։ Կապույտ խալաթի տակ փուքսի պես տարուբերվում էր նրա փորը, արագորեն շարժվում էին մատները և մատնոցները փայլփլում էին։

Գլուխը տարուբերելով՝ նա ուշքի եկավ և սկսեց նայել

տիկին Ռեկամյեի դիմանկարին։ Սաթիաթ խանումը, որին նա ճանաչեց վերջերս, շատ ավելի լավն էր։ Եվ շահի մեջ ցանկություն առաջացավ տեսնել նրան։ Եվ նայել նրա մանկական աչքերի մեջ։ Եվ լսել, թե ինչպես է նա ծիծաղում։ Եվ մի բան նվիրել նրան։

Եվ շահը տարվեց մտքերով...

Սպաները դուրս եկան։

Կազակներին և միլիցիային, ինչպես պարզվեց, չէին կերակրել։ Երևի Մակինի շահը ժլատություն էր արել։ Նրանց միայն թույլ էին տվել այգում պոկել չհասած, դեռ կանաչ սալորներ։

— Կազակնե՛ր, ձիու վրա,— գոռաց ուլյադնիկը՝ թքելով սալորի կորիզը։

Մինչև սահման նրանց ուղեկցում էր սերհենգ-գնդապետը։ Անխոնջ Լորդի կողքից վազում էր նրա զամբիկը, որի ոտքերը, փորը, պոչը և բաշը ներկված էին հինայով։ Սմբակների դեղնակարմրավուն խնձորակներն այդ զամբիկին դարձնում էին ասես ոչ իսկական, խաղալիքային ձի, ինչպես տուլայական ձևավոր քաղցրաբլիթ։ Սերհենգը, մինչև սահման ուղեկցելով կազակներին, կտրուկ հետ շրջեց իր ձին և թափահարեց ձեռքը.

— Սաուկ-Սուն այնտեղ է... Սեֆերտան բիհաթիր ումիդ վարեմ քե միրաջաեթ շումարա ինշալդա բե սալամաթի զիարեթ կունըմ[1]...

Գնում էին երկար։ Գնում էին առանց դանդանավանդների։ Հանգստացած ձիերը վազում էին կայտառ։ Եվ նորից սկսեցին պտույտներ գործել սարերի ու ձորերի արանքներում, նորից սմբակների տակ սկսեցին խոթխոթալ սրածայր խճաքարերը։

Մի տեղ պորուչիկը կանգ առավ։ Արևակեզ տեղում ընկած էր մի մարդկային կմախք, որն ամբողջությամբ կրծոտել էին շնագայլերը։ Քամին ցրում էր ու ու ավազով ծածկում հագուստի պատառները։ Ո՞վ էր նա՝ ռո՞ւս... պարսի՞կ... թո՞ւրք... իսկ գուցե հենց այն սուրհանդակ՞ն էր, որին շահն ուղարկել էր գեներալ Տեր-Ղուկասովի մոտ։ Դա այժմ ոչ ոք չէր կարող իմանալ։

Եվ կնճռոտվելով թթու սալորից՝ Անդրեյը ձին քշեց առաջ։

[1] Այդ խոսքերը պարսկերեն բարի ճանապարհի մաղթանք և նոր հանդիպման ցանկություն են արտահայտում։

14

Մութն ընկնում էր...

Սուսամբարի և շորացած փետրախոտերի բուրմունքը հեղձուցիչ էր ու դառը։ Վայրի այծերի հոտը լսացավ հեռվում։

— Ձերդ բարեծնություն,— ասաց Եգորիչը, ձեր աչքերն ավելի երիտասարդ են, քրդե՞ր չեն արդյոք այնտեղ։

Անդրեյն արագ վերցրեց հեռադիտակը. այդպես էլ կար՝ ձախից, լեռնաշղթայի լանջի երկայքով արշավում էին մի քսան հեծյալներ։ Ահա նրանք կտրուկ բացազատվեցին և հիմա գալիս են ջոկատի դեմը կտրելու։ Ձիերի ագիները փաթաթվում էին երկար նիզակներին, քամին քաշքշում և ծածանում էր մոմլաթե շրջազգեստները։

— Ձերդ բարեծնություն, թույլ կտա՞ք աչքի ընկնել,— հարցրեց Դենիսկան՝ հրացանի վրայից հանելով ծածկոցը։

— Աչքի ընկիր...

Դենիսկան նետվեց առաջ։ Կտրուկ կանգնեցրեց ձին։ Երևում էր, թե նա ինչպես խնամքով նշան է բռնում. կրակոցը ճայթեց, և մի քուրդ ընկավ ձիուց։ Մնացածները ցրվելով շղթա կազմեցին, մեջքերից հանեցին շարժական անկյունաձև հենակները և դրանք կանգնեցնելով ծնկներին՝ հրացանները դրեցին վրան ու... թրա՜խկ՝ Կարաբանովի գլխարկը գլխից թռավ։

— Բարձրացրո՛ւ,— ասաց նա իր մոտ կանգնած կազակին։

Նա բարձրացրեց։ Անդրեյը ափի մեջ սեղմեց սրի կոթը, բայց քրդերը կատաղի արագությամբ արդեն սլանում էին դեպի լեռները, և շուտով բոլորովին անհետացան տեսադաշտից։

Գնացին առաջ։

Ձախից՝ ժայռեր, աջից փրփրաբաշ առու, որի ջուրը կաթնագույն էր, իսկ առվի մյուս ափին՝ ոչ բարձր զառի-

թափ, դրանից հետո նորից տարածվում էր հարթ, ինչպես ուանդած տախտակ, մշուշապատ հովիտը, և հետո նորից լեռներ, իսկ այդ լեռների հետևում՝ Բայազետը։

— Հիմա կատաղած վրա կպրծնեն,— ասաց Եգորիչը։

Քրդերի հեծյալ պարեկի հետ հանդիպումը տեղի ունեցավ ժամը չորսն անց կեսի մոտ։ Երբ երևաց Թուրքական հեծելախմբի առաջին հարյուրյակը և սկսեց դանդաղ իջնել լեռներից, Կարաբանովը նորից բացեց ժամացույցը՝ ժամը հինգից ութ րոպե էր պակաս։ Առաջին հարյուրյակի հետևից, հարևան կիրճից գոռում-գոչյունով դուրս պրծավ երկրորդ հարյուրյակը։ Հետո ջոկատի դեմ հոծ զանգվածով լեռներից շաժվեցին էլի չորս հարյուրյակներ։

— Դանդաղ վարգո՜վ,— հրամայեց Կարաբանովը և հիշեց Ագլայային. երևի նա ամբողջ ձայնով կգոռա, ինչպես գյուղացի կանայք, երբ իմանա իմ մահվան մասին։

Տրյոխժոննին սալորը գցեց բերանը, ծամծմեց և վախեցածի դեմք ընդունեց.

— Ձերդ բարեծնություն, կարծես կորիզը կուլ տվեցի... ինձ հետ ոչինչ չի՞ պատահի։

— Դատարկ բան է,— հանգստացրեց նրան պորուչիկը,— քեզանից ծառ չի աճի։

Կարաբանովն աչքը չէր հեռացնում Թուրքական այրուձիի մանևրներից։ Հեծելազորային փորձված աչքով նա կռահում էր հակառակորդի թուլություններն ու վրիպումները։ Ինչպես երևում էր, Թուրքերը չունեին հարձակման ոչ մի պլան, և այժմ նրանք հապճեպ հավասարվեցին, հետո թևերը դարձյալ խառնեցին իրար, իսկ երբեմն էլ մի հրոսակախումբը ոտնատակ էր տալիս մյուսին, և այն ժամանակ նրանց շարքերում լիակատար խառնաշփոթություն էր ստեղծվում։

— Բայց ես վախենում եմ,— անհանգստանում էր ուրյադնիկը՝ շոշոփելով փոբը,— ծառ չի աճի, չէ, իսկ եթե, օրինակի համար, աղիներս պատռի... Այն ժամանակ ինչպե՞ս...

Եվ ահա պահը վրա հասավ։

— Հարյուրյակ,— մոլեգնորեն գոռաց Անդրեյը,— թեքվե՛լ դեպի աջ... ճակատո՛վ... ա՜րշ։

Պղտոր դարշնագույն փրփուրների մեջ ջրացայտերի հեղեղ բարձրացնելով՝ ձիերը վարգով նետվեցին առվի մեջ։

Սրընթաց հոսանքը վայր էր գցում նրան և քշում քարերի վրա։ Թրջված ու շնչահեղձ Կարաբանովը դուրս եկավ մյուս ափը։ Նրա թիկունքում բարձրանում էր թփուտներով պատած զառիվայր, զառիվայրից այն կողմ փռված էր հարթավայրը։

— Եվդոկիմով, հոգյակս,— կանչեց նա,— կարգադրեք ձիերը կապել վերևում, այնտեղ թողեք ձիապահներին, միլիցիային հետ բերեք մեզ մոտ։ Գրոհը պետք է ընդունեք այստեղ։

Թուրքերը դեռ շարունակում էին վերադասավորումը, երբ առվի ամբողջ աջ ափն արդեն փշապատված էր վեր ցցված հրացանների սրածայր սվիններով։

— Արա՛գ շարժվիր,— գոռում էր Եվդոկիմովը, մտրակելով ձիերի՝ ջրից փայլող գավակներին։— Գնացե՛ք վեր... Ձիապահներ, քաշեք դրանց... Կոտրատեք թփերը...

Ձիերը, ձգելով մարմինները, ցատկում էին վեր։ Դատարկ ասպանդակներ և բաց թողած սանձեր՝ դրանում ինչ-որ անբնական և խղճալի բան կար։ Ձամբիկները երկչոտորեն սեղմվում էին ձիապահներին։

Եվ երբ ամբողջ երամակը հավաքվեց հարթավայրում, միլիցիայի ամբոխի մեջ թունդ վեճ բռնկվեց. փափախների վրա կախվեց բարձրաձայն հայհոյանքների աղմուկը, ինչ-որ մեկը կրակեց օդի մեջ, և հանկարծ մեկը մյուսի հետևից միլիցիոներները թռան թամբերին, մտրակեցին ձիերին և արշավեցին դեպի հեռվում կապույտին տվող լեռները, որոնց գագաթներից այն կողմ գտնվում էր փրկարար Բայազետը։ Դա դեռ կես դժբախտություն էր. ենթարկվելով իրենց երամակային ընազդին, կազակների կողմից բաց թողնված ձիերը զիլ խրխինջով հանկարծ պոկվեցին և սլացան դեպի հյուսիս՝ միլիցիական դասակի հետևից։

— Կանգնի՛ր... կանգնի՛ր,— բղավեց Եվդոկիմովը, ձեռքերը պարզելով, բայց տեղնուտեղը գետին տապալվեց ձիերի հարվածից և մի երեք անգամ գլխի վրա շուռ գալուց հետո անշարժ թաղվեց հեղձուցիչ փետրախոտերի մեջ։ Նրա մոտից սրընթաց անցնում էին սև, կարմրագորշ և սպիտակ ոտքեր, յունկերի հենց դեմքի մոտ ձիերի սմբակներն ուժեղ թակում էին հողը։ Հետո այդ ամբողջ հեղեղը՝ դղրդյունով ու վրնջո-

ցով, ֆսֆսոցով ու ցնցումով թնդաց ու անցավ առաջ, և միայն այդ ժամանակ Եվդոկիմովը նստեց։

Տնտղեց իրեն։ Կարծես կենդանի էր։

— Աստվա՜ծ իմ,— ասաց յունկերը և հեծկլտաց, նրա քթից արյուն էր գալիս։— Ամեն ինչ կորավ... Եվ խուրջինները, և ձիերը...

Միլիցիայից մնացել էին երեք օսեթներ՝ զինվորական մեծ արժանապատվության տեր մարդիկ, և քեռի Վանո Չիչիաշվիլին՝ մի տարեց վրացի մինչև կրունկները հասնող երկար չեքմենով։ Գզգզված ու սարսափելի, նա օգնեց Եվդոկիմովին ոտքի կանգնելու և դաշույնով սպառնաց փախչողներին։

— Վախկոտ շո՜ւն։ Այնտեղ է և իմ որդին։ Նա ինձ այլևս որդի չէ։ Դու ես իմ որդին, տղա՜ս։ Գնա՜նք, կացո... պիտի կոտորենք, բոլորին պիտի մորթենք... Վա՜խ, պիտի մորթե՜նք։

Երբ նրանք դուրս եկան առվի մոտ, յունկերը նույնիսկ չհասցրեց պատահածի մասին զեկուցել պորուչիկին. ճվճվալով ու կրակելով արդեն ուղիղ նրանց վրա էր սլանում թուրքական վայրենի հորդան։ Փայլփլում էին յաթաղաններն ու սրերը, ձիավորների գլխավերևում այս ու այն կողմ էին թռչում պոչավոր տեգերը, հորդայի կենտրոնում ցցված էր բունչուկը։ Ձիերի բաց երախներ ու թշնամու գոռգոռացող դեմքեր. և այդ ամենը գալիս է քեզ վրա։ Դիմացի՜ր, կազակ, ատաման կդառնաս...

— Տրա՜ք... տրա՜ք...— ճայթեցին առաջին կրակոցները, և վառոդի ծխի սև քուլաները դանդաղորեն ցնդում էին գետի վրա։

— Այն ո՞ւմ համբերությունն է կտրվել,— գոռաց ուրյադնիկը։— Որ տեսնեմ, քիթ ու բերանին կտամ... Հրամանի սպասիր։

Մոտենում են... մոտենում... մոտենում...

— Ալլա՜հ... Ալլա՜հ...

Դենիսկան մաքրեց դեմքի քրտինքը, ոտքով տրորեց ծխախոտի մնացորդը։

— Դուք ինչպես ուզում եք, ձերդ բարեծնություն, իսկ ես կրակում եմ... Տե՛ս ա՜յ էն կարմիր վերնաշապիկավորին։

— Դե, եթե կարմիր է հագած,— անսպասելիորեն ծիծաղեց Կարաբանովը,— ուրեմն խփիր։ Կրակե՛ք բոլորդ, եղբայրներ...

Սկսվեց...

Խփում էին դիմահար, և ձիերը՝ ոտները թափահարելով, դնչով խրվում էին ավազի մեջ։ Խփում, թամբերից ցած էին նետում լրիվ վազքի ժամանակ, իսկ հետևից գրոհում էին նորից, և այն ժամանակ ճարճատում էին տեգերը, օդի մեջ պտտվում էին վեր նետված վահանները։ Իսկ այդ խառնակվում, ուր ոչ մի գնդակ իզուր չէր կորչում, պտույտներ էր գործում կնոջ նման թավամազ թուրքական բունչուկը։ Եվ ահա բոլորովին ընկավ բունչուկը, և այն ժամանակ կազակների կրակոցները խլացան աղմուկի ու վայնասունի մեջ։

Թուրքերն արագ նահանջեցին...

Առվի մեջ մնացին սատկած ձիեր, իսկ մի հանդուգն բաշիբոզուկ ձիու փորի տակ մտած, դեռ խռռացնում էր ու թափահարում յաթաղանը...

Կարաբանովը, լսելով յունկերի պատմածը, ոչինչ չասաց և միայն հայհոյեց։ Իսկ երբ Եվդոկիմովը բարձրացրեց ատրճանակը, որպեսզի սպանի առվի միջի ենիչերիին[1], բռնեց նրա ձեռքը.

— Նա առանց ձեզ էլ յոլա կգնա։ Հարկավոր է խնայել փամփուշտները...

Ջախջախված թուրքական հարյուրյակներն իջան թամբերից և մի կողմ քաշեցին ձիերը։ Կազակները հեռվից դիտում էին, թե ինչպես նրանք ժլատորեն ծծում էին հոտած քաղցուն, ագահորեն ծխում ծխամորճերը, պրկում՝ գոտիները, ձեռքի ափով վզի վրա ցույց տալով բղավում, թե ինչ վերջ է սպասում կազակներին։

Եվդոկիմովն ասաց.

— Պետք է հեռանալ, Անդրեյ Ելիսեևիչ։

---

1 Ենիչերիները, որպես սուլթանական զորքի հատուկ կաստա, համարյա գլխովին կոտորվել են սուլթան Մահմուդ 2-րդի օրոք, դեռ 1826 թ., սակայն դաժան և խարդախ թշնամու նկատմամբ «ենիչերի» բառը շարունակում էր կիրառվել ռուսական բանակում նաև 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ (հեղ.)։

— Իսկ ո՞ւր,— տխուր քմծիծաղ տվեց Կարաբանովը։— Փորձիր տեղից շարժվել, այնտեղ հարթություն է, և նրանք վրա կպրծնեն ամբողջ թափառախմբով։ Չէ որ մենք արդեն ձիեր չունենք... Պետք է սպասել մինչև գիշեր...

— Գուցե Պարսկաստա՞ն գնանք,— զգուշորեն ակնարկեց յունկերը։

— Չի կարելի։ Մեր կաշին կփրկենք, բայց դրա փոխարեն փորձանքի մեջ կգցենք շահին։ Իսկ Ռուսաստանի բարեկամներին հարկավոր է պահել։

— Ես... վախենում եմ,— ազնվորեն խոստովանեց յունկերը։

— Դրանում դուք օրիգինալ չեք. հիմա ես նույնպես չեմ վառվում հերոսության կրակով։

Շուտով թուրքերի կրակն այնքան զգալի և ուժեղ դարձավ, որ զառիթափի թփուտները գրեթե աչքի առաջ արագ նոսրանում էին, ասես ինչ-որ մեկի անտեսանելի ու սուր մկրատը կտրատում էր նրանց ճյուղերը։ Կազակներն ինքնագլուխ, առանց հրամանի, պատասխան կրակ բացեցին։ Կրակոցների ծխով պատած առվի ափով մեկ լսվում էին նրանց ճիչերը.

— Վանյուշկա, որտե՞ղից ես վիրավորվել։

— Ուսս է կարծես...

— Խփիր նրան, իսկ սա իմն է...

— Եղբայրնե՛ր, Պետկա Ուզդենյային սպանեցին, կարծես գլխին է կպել։

— Գցիր այստեղ նրա պայուսակը։ Փամփուշտները գցիր։

— Անտիպկա, ո՞ղջ ես։

— Առայժմ՝ այո։

— Ո՞ւր ես սողում, պատուհաս։

— Խմել եմ ուզում...

Մի քանի համարձակներ, հաշվի չառնելով գնդակները, որպեսզի խնայեն իրենց տափաշշերում եղած ջուրը, փորի վրա սողում էին դեպի առուն, բորբոքված բերանով երկար հպվում ջրին և, կիպ կպչելով գետնին, խեցգետնի նման սողալով, չորեքթաթ նորից հետ էին քաշվում իրենց հրացանների մոտ և նորից նրանց ողորկ կոթերը հարմարեցնում իրենց մազմզոտ այտերին։

Կարաբանովը նկատեց, որ կազակները նշան են բռնում չափազանց երկար ու փութաջան, և անմիջապես հիշեց կապիտան Նեկրասովի նախազգուշացումը, որ թուրքական «անայդերները» հազար չորս հարյուր քայլով ավելի հեռու են նշան բռնում։

Նա վեր կացավ.

— Պառկե՛ք,— ճչաց Եվդոկիմովը։— Ինչի՞ համար է դա։

— Ինձ չեն սպանի,— ասաց Անդրեյը՝ չգիտես ինչու, հիշելով Կլյուգենաուի կանխագուշակությունը։— Համենայն դեպս այսօր...

Հավատալով իր աստղին՝ նա կանգնեց ամբողջ հասակով մեկ ու մոտեցավ Եգորիչին, որը դեպի նա շրջեց ծաղկախտից չեչոտված և վառոդից ծխոտված դեմքը։

— Ո՞ւմ վրա ես կրակում, չեչոտ,— հարցրեց Անդրեյը՝ պառկելով փորձված կազակի կողքին։

— Ա՜յ, հրե՜ն, ձերդ բարեծնություն... Տեսնո՞ւմ ես, պառկած է։ Դեռ հետույքն էլ վեր է ցցել... Հենց նրան էլ խփում եմ...

— Դե, ազնվորեն ասա, ինչքա՞ն փամփուշտ ես վատնել նրա վրա։

Չեչոտը վեր քաշեց ուսերը.

— Է՛հ, մեղքս չեմ թաքցնի՝ մի զույգ բաց եմ թողել։

— Հապա մի հրացանն ինձ տուր...

Հրացանի ծանր կոթը սեղմվեց Անդրեյի ուսին. ստուգեց նշանոցը։ Ամեն ինչ կարգին էր, անրիկը հետ էր քաշված մինչև վերջ (մինչև 600 քայլ), իսկ այնուհետև... Այնուհետև ռազմական մինիստրությունը ենթադրել էր, որ զինվորը վեր կկենա և կգնա թշնամու վրա սվինն առաջ պարզած։

— Սրիկանե՜ր,— հայհոյեց Անդրեյը՝ նրան բռնելով թուրքի վրա,— փչացրել են զենքը։ Այդ սինլքորներին պետք է ուղարկեին այստեղ, թող սվինամարտի գնային...

Սևաներկ նշանահատիկը շոշափեց թուրքի ազդրը։ Մատը սահուն կերպով քաշեց հրահանը, և հրացանի կոթը թափ տվեց՝ խփելով Անդրեյի ուսին։ Այդպես էլ կար՝ վրիպեց։ Թուրքը հասկացավ, որ նշան են բռնել իր վրա, և ոտքը հետ քաշեց։

— Դադարեցնե՛լ կրակը,— գոռաց Անդրեյը վեր կենալով։

Կազակներն առանց առարկության հրացանները հետ քաշեցին, ձեռքերը տարան գրպանները՝ քիսաները հանելու։

Եվ այդ ժամանակ պատահեց այնպիսի մի բան, որ մարդ կարող է տեսնել կյանքում մեկ անգամ. մինչ այդ սև ու անկենդան ժայռերն ու քարերը հանկարծ գունազարդվեցին կարմիր խայտերով, ասես անսպասելիորեն հասունացան արտասովոր պտուղներ։ Դրանք Թուրքերն էին, որ բոլորը միանգամից, ասես ազդանշանով, թաքստոցներից բարձրացրին գլուխները՝ կարմիր չալմաներով ու ֆեսերով...

Անսովոր լռություն տիրեց, և այդ լռության մեջ, խեղդվելով հիմար հիացմունքից, խոզի գոչու նման ճղճղաց Դենիսկան.

— Եղբայրնե՛ր, մորին Թուրքիայում հասել է... Աղջիկներին կանչեք պտուղ հավաքելու...

Թնդաց հոհոռոց։ Կազակներն այնպես էին ցնցվում ծիծաղից, որ փորով վեր-վեր էին թռչում քարերի վրա. Ամեն տեղից լսվում էր ուրախ լրացումներ.

— Մորի... ստանիցայի աղջիկներ... փեշերի մեջ, եղբայրներ, Թուրքերին պիտի հավաքեն... փեշերի մեջ... Դենիսկա, ասա, ասա Թուրքերին...

Թուրքերն էլ դուրս էին գալիս իրենց քարե որջերից, ականջ էին դնում։ Նրանց համար հասկանալի չէր այդ ծիծաղը, եթե գյավուրներն ընդամենը մի հարյուրյակ են, իսկ իրենք՝ վեց հարյուր և բոլորն էլ ձիավորներ. գուցե անհավատները սարսափից խելագարվե՞լ են և հիմա հենց իրենք էլ կմորթեն մեկը մյուսին...

— Դենիսկա,— քրքջում էին կազակները,— ասա՛, ասա՛ Թուրքերին, ինչպես են աղջիկները գնում հատապտուղ հավաքելու։

Սակայն կազակների հանդուգն ծիծաղը վերջապես հասավ Թուրքերի գիտակցությանը։ Եվ այն ժամանակ փոշոտ-բունչուկը նորից դանդաղ սողալով շարժվեց դեպի հովիտը, լսվեց եղջերափողերի զոռոցը, հնչեց ռազմաշունչ վայնասունը. Թուրքական հորդաները նորից շարժվեցին գրոհի։

— Պառկե՛ք, ղբայրներ,— գոռաց ուրյադնիկը,— գոռ[illegible] լիս են...

Կարաբանովը պտտեցրեց ատրճանակի թմբուկը և հաշվեց փամփուշտների դեղին գլխիկները՝ դրանք ընդամենը չորս հատ էին։

Եվ նախապատրաստվելով մահվան՝ նա ասաց.

— Է՜խ, այ թե հիմա սառը շամպայն կխմեի՜։

15

Զինվորները սիրալիր բաց արեցին ուղեփակոցը, և Ագլայան տեսավ Բայազետի առաջին փողոցը, որը լեփ-լեցուն էր ամեն գույնի ու տարիքի շներով։ Պատահած առաջին մուրացկանը նրան ապշեցրեց իր, իրոք, արևելյան հնարամտությամբ։ Դա մի չոր ու դեղնավուն մարդ էր, ատամները մանր՝ ինչպես գարեձավար։ Վրայից կախված էին ոչլոտ ցնցոտիներ, ականջների փոխարեն միայն լսողական անցքեր էին երևում։ Նրա կրծքի վրա դաղված էր տարօրինակ մի նախշ, որը ջնջվել էր վառոդից, իսկ աջ ուսը պահպանել էր սարսափելի վիրահատության հետքերը։ Անդամահատված թևը դրված էր հենց այդտեղ՝ հմտորեն շորացրած և մոմակալի նման հագցված պատվանդանին, չոռած մատներով ձեռքը մի ման էր բռնել՝ ողորմություն հավաքելու համար։

— Ալլահ վերսին,— պատասխանեց այդ այլանդակը, երբ Ագլայան նրա ամանի մեջ գցեց մի պիաստր, և մուրացկանի ուղղահավատ շրթունքները նորից պատվեցին ծխախոտի թմրածխի շիթերով։

Կոծոծներով ու փշերով պատած երկար պոչերը շարժելով՝ ծույլ ավանակները սանիտարական ֆուրգոնները քաշ տալով մտան Բայազետ և շարժվեցին դեպի ամրոց։

Ագլայան ասաց.

— Աստվա՜ծ իմ, ինչ սարսափելի է, և սա բաղա՞ք է։ Ինչպե՞ս են մարդիկ այստեղ ապրում... Նրանք այստեղից ինչպե՞ս չեն փախչում ուր պատահի...

Նրանք դանդաղ անցնում էին կեղտոտ, կավածեփ հյուղակների և գորշ կրպակների մոտով, որոնց վրա կախված էին վաճառքի լաթեր։ Հենց այդտեղ, փողոցի մեջտեղում, հայ առևտրականները խորոված էին պատրաստում, դարբի-

նը պայտում էր ձին, կտակակատարը, նույն ինքը և բժիշկ, աքցանով ատամ էր քաշում։ Ճամփեզրին ցատկոտուկով շորորվում էին փայտի նման չոր, սեազգեստ կանայք (փայլում էին միայն նրանց վախեցած աչքերը)։

Ամենուր փոշի էր, և այդ փոշու մեջ որդերի նման խլրտում էին թուրք մուրացկանները։ Առանց աչքերի, առանց թևերի, սրի հարվածների թողած սարսափելի սպիներն ու վերքերը դեմքերին,— ահա սուլթանի հաղթանակների մղձավանջային հետևանքները։ Եվ նրանցից յուրաքանչյուրը ձեռքը մեկնում էր դեպի Ագլայան, բարբարոսական ֆանատիզմով ֆուրգոնի անիվների տակ կոխում իր ոտքերի ու ձեռքերի կտորները, և ամեն մեկը բղավում նույնը.

— Ցա՜խկ... Օ՜, ճշմարտությո՜ւն.. Օ՜, մարգարե...

Բացելով պայուսակը՝ Ագլայան առատաձեռն ու հաճախակի դրամներ էր նետում։ Հիմա նրա համար մի տեսակ սարսափելի էր, և անգամ հետաքրքրական ոչինչ չկար։ Իսկ երբ ֆուրգոնը մտավ ամրոց, կինը տեղից չշարժվեց, և Խվոշչինսկին ինքը նրան իջեցրեց գետնին՝ ասելով.

— Հը, ի՞նչ է պատահել։ Դու ինչ-որ տարօրինակ ես... Ո՞վ է քեզ այդպես վախեցրել...

Նա համբուրեց կնոջ ճակատը, ինչպես համբուրում են երեխաներին, և Ագլայան կամաց-կամաց հանգստացավ։ Պալատական մզկիթի տաղավարում, ուր բերեց նրան ամուսինը, զով էր, աչքերն ակամայից հանգստանում էին մուսուլմանական խունացած խճանկարից։ Իսկ շշի մեջ դրված էին ծաղիկներ, որ արդեն սպասում էին իրեն. ծաղիկները բոլորովին անծանոթ էին, ոչ ռուսական, նրանք ոչ մի հոտ չունեին։

— Ահա, ահա և դու,— ասաց ամուսինը՝ շփելով ձեռքերը,— ես ուրախ եմ...

Ագլայան թույլ ժպտաց.

— Ներիր, սակայն ես պետք է խնդրեմ քեզ դուրս գալ։ Ուզում եմ լվացվել ճանապարհից հետո... Ես փոշու մեջ կորած եմ։

Գնդապետը դուրս եկավ։ Ագլայան սկսեց լվացվել։ Վզին սափորից ջուր լցնելով՝ նա մեքենայորեն մտածեց, թե ինչի՞ց է, որ մինչև հիմա էլ ամուսնուց աղջկա պես ամաչում է, իսկ Անդրեյի ներկայությամբ չի վախենում իր մերկությունից։

«Ինչի՞ց է այդ ամենը...»։

— Կարող ես ներս գալ,— խստորեն թույլ տվեց նա՝ կոճկելով բլուզը։— Դե ես արդեն ամեն ինչ գիտեմ. քեզ նեղացրել են, շրջանցել. Մի՛ բարկանա քո հիմար կնոջ վրա, բայց դա գուցե այնքան էլ կարևոր չէ։ Դու պաշտոնաթող կարվես միևնույն է գեներալական թոշակով։ Գուցե դա նույնիսկ ավելի լավ է, վերջապես հարկավոր է, որ մի օր խնայես ինքդ քեզ։

— Լավ կլիներ դու այստեղից մեկնեիր, Ագլայոչկա,— անսպասելիորեն ասաց Նիկիտա Սեմյոնովիչը։— Կարմիր խաչը հիմնված է անշահախնդրության վրա, և Սիվիցկին, եթե ես նրա հետ խոսեմ, համոզված եմ, քեզ կթողնի վերադառնալ Իգդիր։

— Ինչո՞ւ,— զարմացած հարցրեց Ագլայան։

— Այստեղ քո տեղը չէ։ Ինչպես նաև այն պատճառով, որ... Չեմ ուզում քեզ վախեցնել, բայց ես հին զինվոր եմ, և ինձ այստեղից ավելի լավ է երևում, քան Թիֆլիսի փոխարքային։ Բայազետին սպասում է մի ինչ-որ սարսափելի բան։ Եվ խնդրում եմ՝ մեկնիր այստեղից։

Ագլայան ծիծաղեց, չբացելով շրթունքները։

— Ո՛չ, սիրելիս, ո՛չ։ Ես ոչ մի տեղ չեմ գնա... Քեզանից չեմ հեռանա...— ավելացրեց նա՝ հանկարծ սթափվելով։— Այստեղ սկսում է նույնիսկ ինձ դուր գալ։ Այս առաստաղը, այս պատերը, այս ծաղիկները... Ո՛չ, ես մնում եմ։

— Անմտություն,— խստորեն ասաց Խվոշչինսկին։— Բոլորն անմտություն է... Քեզ պարզապես շոյում է այն հանգամանքը, որ դու միակ կինն ես ամբողջ կայազորում։ Ասենք,— անսպասելի հնազանդությամբ ավարտեց նա,— դու, միևնույն է, կմնաս... Ես այդ գիտեմ...

Նախքան հոսպիտալ ներկայանալը, Ագլայան դուրս եկավ ամրոցից և ուղղվեց կազակների զորանոցների կողմը, նա արդեն իմացել էր, թե նրանք որտեղ են գտնվում։ Գնում էր՝ ոտքերի տակ չնայելով, և ժպտում. նրա համար տանջալի էր և մի տեսակ հաճելի...

Զորանոցի պատի մոտ, սոսկալի արևկեզ տեղում, քնել

էին կազակները, ասես մեռած կամ հարբած լինեին, նրանց դեմքերը ծածկված էին քրտինքով, բաց բերանների վրա մոլեգնաբար պտտվում էին ճանճերը։ Դռների մոտ, աստիճանների վրա, նստել էր մի տարիքավոր կազակ՝ մինչև գոտկատեղը մերկ, պղնձե ծռված խալը հզոր կրծքին, և գործնական տեսքով կարկատում էր հին թամբը։

— Բարեկամս, որտե՞ղ է երկրորդ հարյուրյակը,— հարցրեց Ագլայան։

Կազակը նախ անշտապ մի կողմ դրեց մախաթը։ Արևից պաշտպանվելով՝ կոշտ ափի տակից ոտից մինչև գլուխ նայեց Ագլայային և պատասխանեց երիտասարդական երգեցիկ ձայնով.

— Իսկ դա, օրիորդ, նույնիսկ ինքը տեր-թագավորն էլ ամենևին չգիտի, թե որտեղ է հիմա երկրորդ հարյուրյակը։ Երեկ չէ մյուս օրը գնացել են, և...— Կազակը մախաթի անցքն անցկացրեց մոմաթելը։— Գնաց և անհետ կորավ։ Երբ վերադառնան կազակները, այն ժամանակ կպատմեն, թե որտեղ են եղել... Իսկ ձեզ ո՞վ է պետք։

— Պորուչիկ Կարաբանովը,— նվաղուն ձայնով պատասխանեց Ագլայան, և ամեն ինչ մեկեն դարձավ մի տեսակ դատարկ ու անհետաքրքիր։

— Նա էլ նրանց հետ է,— ասաց կազակը։— Ուրախ հեծելակ է։ Մի բան այնպես չէ՝ մտրակով է տալիս։ Երբեմն էլ՝ ատամներին։ Սակայն մեծ մասը արդարացի։

— Դե, շնորհակալություն, ներեցեք...

Պտուտակաձև սանդուղքը կնոջը բերեց մի ցածրահարկ կիսախավար շենք՝ նեղ կամարավոր լուսամուտներով։ Պատերը ծածկված էին ոսկեզօծ ալեբաստրով, և նրանց երկայնքով ձգվում էին տախտակամածներ, որոնց վրա վիրավորներ էին պառկած։

Սիվիցկին Ագլայային դիմավորեց փոքր-ինչ չորությամբ։

— Հագեք խալաթը,— ասաց նա ծանոթանալուց հետո։— Եվ ձեր գլխին էլ որևէ բան դցեք։ Լավ կլինի՝ չամբար։

Ագլայան ուսերին գցեց սանիտարական բալախոնը։

— Ես ի՞նչ պետք է անեմ,— հարցրեց նա։

— Նախ պատրաստեք ահա այն անկողինները։ Շուտով

հետախուզությունից կվերադառնա պորուչիկ Կարաբանովի հարյուրյակը և, հավանաբար, վիրավորներ կլինեն։

Ագլայան միանգամից ինչ-որ վախ զգաց։

— Ինչո՞ւ եք կարծում, որ վիրավորներ կլինեն։

— Այն պատճառով, տիկին,— քաղաքավարությամբ պատասխանեց Սիվիցկին,— որ պատերազմի ժամանակ կա մի այսպիսի հիմար սովորություն, երբ մարդիկ կրակում են մեկը մյուսի վրա։

Ագլայան անկողին գցեց մահճակալին։ «Գուցե նրա համար է։ Գուցե և ոչ»։ Թափ տալով տափակ բարձերը՝ հոգոց հանեց. «Միայն թե նրա համար չլինի, միայն թե նա վիրավոր չլինի»։ Հետո անօգնական շուրջը նայեց. էլ ինչ անի, որ միանգամից դուր գա այդ կոպիտ բժշկին։

Սակայն գործ չգտնվեց, և Ագլայան չարաճճի աղջկա պես գոհունակությամբ շփեց ձեռքերը։

— Դե, ինչ եք կանգնել, տիկին,— հարցրեց Սիվիցկին։

— Դուք ինձ ասացեք ինչ պետք է անել, և ես կանեմ։

— Մաքրեք ահա այն մորուքավոր գեներալիսսիմուսի վերքերի թարախը։ Թարմ վիրակապ դրեք վրան։ Հետո շնորհ արեք այն երիտասարդ գեներալ-ֆելդմարշալի տակից դուրս տանել միզամանը։

— Մի՞թե դա էլ ես պետք է անեմ,— զարմացավ Ագլայան՝ վարդագույն մատն ուղղելով իրեն։

— Իսկ ուրիշ ո՞վ պետք է անի։

— Այ, դա արդեն չէի կարծում...

— Իսկ դուք, տիկին,— զայրացավ Սիվիցկին,— կարծում էիք, որ այստեղ ճկությամբ վիրավորված հերոս-պորուչիկների հետ մազուրկա՞ պիտի պարեք։

— Բայց ոչ թե միզամաններ դուրս տանել,— հանկարծ նեղացավ Ագլայան։

— Այո՛, և միզամաններ։ Կանացիական հայրենասիրությունը, որ այնքան հիմա մոդա է դարձել այնտեղ...— Սիվիցկին մատով ցույց տվեց ինչ-որ դևպի վեր,— այստեղ պետք չէ։

— Բայց ես մաքուր սրտով...— Ուզում էր սկսել Ագլայան։

— Հենց այդպես,— խիստ շարունակեց Սիվիցկին։— Եթե

դուք մաքուր սրտով որոշել եք օգնության գալ ռուս զինվորներին, ապա չպետք է վախենաք արյունից ու աղտից։

— Բայց ինչո՞ւ եք այդպես կոպիտ խոսում ինձ հետ։ Ես ձեզ արդելում եմ... Լսո՞ւմ եք։— Եվ նա շրխկացրեց իր գեղեցիկ կոշիկի կրունկով։

— Կիտաևսկի՜,— կանչեց Սիվիցկին իր օրդինատորին։— Բարեկամս, բարի եղեք այս ուռա-հայրենասեր կնոջը տասը կաթիլ վալերիանկա տալ։ Եվ միաժամանակ ցույց տվեք նրան, թե որտեղից եք բռնում միզամանը, երբ պետք է դուրս տանել։

Վիրավոր ֆելդֆեբելը՝ մոտ երեսուն տարեկան մի գեղեցիկ երիտասարդ, որի տակ դրված էր այդ շարաբաստիկ միզամանը, սկսեց տնքոցով ու սողալով իջնել հատակին։

— Ես ինքս, օրիորդ.. Ես ինքս դուրս կտանեմ...

Սակայն Ագլայան արդեն բռնել էր ամանը և, հազիվ լացը զսպելով՝ ասաց.

— Լավ։ Կանեմ, ամեն ինչ կանեմ... Դուք գոնե բացատրեք, թե ուր պետք է տանեմ այս... դե ինչպե՞ս են կոչում՝ վազան...

Օրվա վերջին Բայազետում տագնապ բարձրացրին, Վանի ճանապարհից քաղաք ներխուժեցին միլիցիայի դասակը և Կարաբանովի հարյուրյակի ձիերի երամակը։

Կազակային ձիերը, ծանր փնչացնելով, անմիջապես իջան դեպի առվակը։ Նրանց փրփրակալած կողերը փքվել էին, թամբերը մի կողմ թեքվել, իսկ մի քանիսն էլ ուղղակի իջել էին փորի տակ, ասպանդակները քարշ էին գալիս գետնի վրա...

— Ի՞նչ է պատահել։

Բոլորի հետ միասին Ագլայան էլ դուրս վազեց ամրոցից։ Միլիցիոներները բոլոր հարցերին պատասխանում էին մռայլ լռությամբ։ Սակայն այնպես էլ պարզ է, որ նրանք փախել են մարտադաշտից։ Զինվորները թքում էին նրանց վրա, սարսափելի հայհոյանքներ տալիս։ Ինչ-որ մեկին ձիուց ցած քաշեցին, աղաղակելով գլխին թափեցին ամեն տեսակ լուտանքներ՝ ռուսերեն, հայերեն, թաթարերեն, վրացերեն։

Աներևակայելի աղմուկ էր բարձրացել, որի մեջ Ագլայան հասկացավ միայն մեկի անցողակի բառերը.

— Հրեն կանգնած է Կարաբանովի ձին, այժմ Պացևիչը կվերցնի իրեն։

Ագլայան մոտեցավ ձիուն։ Լորդը խեթ նայեց ուռած աչքերով, նրա ողորկ կաշին ջղաձգորեն ցնցվում էր։ Ագլայան ձեռք տվեց թամբին։ Ահա այստեղ է նստել նա։ Աշխույժ, լավ։ Ոչ այնպիսին, ինչպես բոլորը։ Սիրելի՜։ Ինչ-որ բան ի՞ասել։ Գուցե ծիծաղել է...

Նա արձակեց խուրջինը։ Մի տուփ փամփուշտ էր, չորս խակ սալոր, ջրով լիքը մի տափաշիշ, մի կտոր հաց և հացի վրա՝ ատամի հետքեր։

— Ա՜խ-խ,— մրմնջաց Ագլայան և թուլացած նստեց գետնին։

— Բարձրացրե՛ք նրան,— մռայլորեն կարգադրեց Խվոշչինսկին։— Դա արևահարության հետևանք է։ Շուտով կանցնի...

Եվ հետ չնայելով՝ գնաց ամրոց։ Կլյուգենաուն հավատաց։ որ դա արևահարությունից է և վազեց ջրի, հարկավոր է որքան կարելի է շուտ թրջել թաշկինակը...

Արտաքսման հնարը

Ձերդ գերազանց... շատ մի մեղադրեք ինձ. այնպիսի անտաշ ճիմարներ, ինչպիսին եսամ Վատենինն է, և այնպիսի խորամանկ, ձևացող մարդ, ինչպիսին մեր ակադեմիկոս Ն–ն, փչացնում են իմ ողջ գործը: Սակայն գինվորները սիրում են ինձ և ուրախ են, երբ ես նրամայում եմ նրանց «ուռա՜» գոռալ: Ինչ վերաբերում է Կ–ին, ապա նա ոչնչություն է, Պետերբուրգի հետ նախկին կապերը կորցրել է և արդեն վտանգավոր չէ: Խ–ն նվնվում է և պառում իմ դուդուկի տակ. նրա կինը, ասում են, կապված է կայազորից ինչ-որ մեկի հետ. բայց ո՞ւմ հետ, չգիտեմ, սակայն իրեն ձևացնում է առաքինի: Շուտով ես սպայական ժողով կանցկացնեմ, որպեսզի կայազորը տրամադրեմ փառավոր գործի: Պատրաստվում եմ նշելու նորին բարձրություն փոխարքայի անվանակոչության օրը, ասացեք, կարելի՞ է, արդյոք, կենաց բաժակ բարձրացնել մանառով, քանի որ Բայազետում եղած շամպայնի ամբողջ պաշարը (62 շիշ) վերջերս խմեց այդ նույն պորուչիկ Կարաբանովը: Հիմա նա գնացել է հետախուզության՝ ուզիր է փնտրում վերադարձնելու կորցրած կարիերան...

Գնդապետ Պացևիչի նամակից

Պացևիչը պառկած էր փաշայի մահճակալին: Մահճակալի ոտքերը իսկական բյուրեղապակուց էին: Իսակ փաշան կյանքում, հավանաբար, ամենից շատ վախենում էր ամպրոպից: Գնդապետի առաջ դրված էր մի սափոր՝ նամազից առաջ ծիսակարգային լվացումների համար: Իսկ սափորի մեջ ի՞նչ էր:— Գինի, իհարկե:

Գնդապետի համար լավ էր: Նույնիսկ շատ լավ: Չէ որ նա ինչ-որ մեկը չէր, այլ գնդապետ: Եվ նրան պետք է հնազանդվեին: Եվ հարգեին: Մահճակալը հարմար էր, կայծակն էլ ոչ մի կերպ չէր սպանի, մի քիչ գինի կխմես, իսկ հետո կարող ես ասույթներ կարդալ Ղուրանից: Հրեն, դրանցից ինչքան են խզմզված պատերի վրա: Բայց գնդապետը արաբերեն չգիտեր:

— Հի՜-հի՜-հի՜,— բարակ ձայնով ծիծաղում էր Ադամ Պլատոնովիչը՝ բավականությունից մերթընդմերթ ծվծվալով,— հի՜-հի՜-հի՜... Օ՜յ, չեմ կարող, հի՜-հի՜-հի՜...

Նա հանկարծ նկատել էր, որ առաստաղի վրա արաբական տառերը միահյուսվում են մի զվարճալի պոռնոգրաֆիական հանգույցի մեջ: Իսակ փաշան, երևում է, հիմար չի եղել: Կարծես և՛ Ղուրանի պատվիրանները չեն խախտվել, և՛ միաժամանակ շատ զվարճալի է...

— Օ՜յ, աստվա՜ծ իմ, հի՜-հի՜-հի՜,— ծիծաղում էր գնդապետը, և նրա փորը սորուն մանրահարվածներով ցնցվում էր վերմակի տակ:

Այդ պահին դուռը բացվեց, և ներս մտավ մի մարդ, որին Պացևիչը երբեք չէր տեսել: Կազակային պատված համազգեստով, նիհար, մազոտ դեմքով, իսկ քրքրված ճտքակոշիկների միջից դուրս էին ցցվել չորացած արյունից սևացած, ուռած ոտնամատները:

— Կարաբանո՞վ,— բացականչեց գնդապետը:— Այդ դո՞ւք եք:

— Ես:

— Բայց, սիրելիս, որտեղի՞ց... Ձեզ ի՞նչ է պատահել:

— Ես վերջացրի հետախուզությունը, գնդապետ:

Պացևիչը ձեռներն իրար զարկեց։

— Վերջացրի՞ք։ Աղավնյա՜կս...

— Այո՛, վերջացրի, գնդապետ։ Թուրքերն իսկապես ուժեր են հավաքում Վանի շրջակայքում։ Նրանց թիվը կարող եմ որոշել միայն մոտավորապես։

— Եվ այնտեղ ինչքա՞ն են այդ ավազակները։

— Քսան-երեսուն հազար։ Ոչ պակաս։

— Դե գնացեք, է՜... Որտեղի՞ց այդքան։

— Ոչ պակաս, գնդապետ։ Եվ հրետանի ունեն.. Իսկ ես այդ օրերին կորցրի երեսուներկու մարդ։

— Դուք ինչպե՞ս տեղ հասաք,— հարցրեց Պացևիչը։

Պատասխանի փոխարեն Կարաբանովը հանեց «սմիտ-վեսսոնը» և, հրահանը չխկացնելով՝ գնդապետի առջև պատեցրեց ատրճանակի դատարկ թմբուկը։

— Տեսնո՞ւմ եք։ Միայն անցքեր են... Ահա այսպես էլ տեղ եմ հասել...

— Ձեզ շքանշանի պիտի ներկայացնել, աղավնյակս, շքանշանի,— ասաց Պացևիչը,— վաղը ևեթ Թիֆլիս պի-ի-իտի գրեմ...

— Է՜խ, գնդապետ։ Երեսուներկու «Գեորգիները» նրանց այլևս պետք չեն...

Կարաբանովը շրջվեց դեպի դուռը, բայց Պացևիչը անսպասելի բացականչությամբ կանգնեցրեց նրան։

— Ո՞ւր եք գնում, սիրելիս։ Գոնե համբուրեցեք ինձ։

Պորուչիկի գլխում ամեն ինչ ցնցվում էր, զողանջ էր լսվում, աչքերի առջև դեռ շարժվում էին ավազի փլվածքները՝ ամբողջովին ծածկված դատարկ պարկուճներով։ Նա նույնիսկ չըմբռնեց, թե ինչ են խնդրում իրենից։

— Ո՛չ, ներեցեք գնդապետ։ Ձեզ համբուրել չեմ կարող, վախենում եմ կծել...

Նա չխկացրեց կրունկները և շտապ դուրս եկավ։ Դրսում մեկը գրկեց նրան, գոռաց ուղղակի ականջին.

— Կարաբանո՜վ, շո՛ւտ վազեք, այնտեղ ձեր կազակները սպանում են միլիցիային...

— Էհ, թող սպանեն,— պատասխանեց Անդրեյը։

Որոշեց չխառնվել։ Հետո փոշմանեց։ Առանց շտապելու հասավ մինչև միլիցիական զորանոցները, ոտքով խփեց-

կոտրեց դուռը։ «Սատանան տանի, կարծես, իրոք սպանում են»։ Գազաղած կազակները դասալիքներին մի անկյուն էին քշել և հարվածում էին մտրակներով, սրերի պատյաններով։ Վայրենի տուրուդմփոցից լսվում էին խռխռոցներ, ոռնոց և խուլ ճիչեր։

Անդրեյը գոռաց.

— Հերիք է, հերիք է ասում եմ ձեզ... Նրանք առանց այդ էլ կհիշեն, թե ինչ է նշանակում լքել ընկերներին...

Մոտեցավ Դենիսկան՝ մինչև գոտին պատառոտված շապիկով, ճեղքված շրթունքից կաթում էր արյան շիթը։

— Գոնե սիրտս հանգստացրի, ձերդ բարեծնություն։

— Գնա՛ քնելու։ Բոլորդ գնացեք...

Եվ եկավ գիշերը, և երազ տեսավ. Կարաբանովների կալվածքն ընկած էր անտառի եզրին, իսկ անտառի հետևում, ասում էին, Ռյազանն է, և նա մանուկ հասակում մի անգամ գիշերը փախավ տնից, և նրան գտան գնչուներն ու տուն բերեցին. խնամակալը նրան անկողին դրեց, և նրա համար շատ ուրախալի էր, որ դա իր անկողինն է և այլևս պետք չէ փախչել որևէ տեղ, իսկ առավոտյան արթնացավ, երբ ինչ-որ մեկը շոյում էր իր դեմքը, և արցունքները կաթում էին այտերի վրա. դա մայրն էր շոյում իրեն, մայրն էր լալիս իր գլխավերևում...

Կարաբանովը բացեց աչքերը։ Ագլայան նստած էր նրա դիմաց, շոյում էր նրա դեմքը և լալիս էր կամացուկ՝ կծելով շրթունքները։

Անդրեյը ձեռքը պարզեց նրան.

— Դեհ, ի՞նչ ես անում... պետք չէ...

— Ա՜խ, Անդրե՛յ...

Ագլայան, ընկնելով նրա կրծքին, սկսեց հեկեկալ։ Նա շոյում էր Ագլայայի ցնցվող մեջքը և նայում առաստաղին։ Պարսկական կարմրավուն ուտիճը դուրս սողաց ճեղքից և շարժեց բեղիկները։

— Դե լա՛վ, լա՛վ։— Անդրեյը թեթևակի խփեց Ագլայայի մեջքին։

— Դու ոչինչ չգիտես,— ասաց Ագլայան՝ բարձրացնե-

լով դեմքը։— Դու չգիտես, թե ինչ է կատարվում ինձ հետ... Ահա ա՛ռ, վերցրո՛ւ...

Ագլայան նրա կրծքին դրեց փամփուշտներով լի տուփը, չորս թոշնած սալորը, հացի կողը։ Իրերը թվացին օտար։ Անդրեյը անտարբեր նայեց նրանց վրա։

— Մի՛ լռիր,— խնդրեց Ագլայան։— Լսո՞ւմ ես։

— Լսում եմ...

— Խո՛սիր ինձ հետ։ Փաղաքշի՛ր ինձ... Թեկուզ մի քիչ։ Դե՛հ, ի՞նչ ես լռում, Անդրեյ։

Նա հայացքն ուղղեց Ագլայային։

— Երեսուներկո՛ւ,— ասաց նա ընդհատումներով,— երեսուներկո՛ւ... Եվ ինչ-որ տեղ մայրերն իրենց գլուխները կծածեն, ինչ-որ տեղ աղջիկները կսկսեն լաց ու կոծ դնել, Ագլայա... Ա՜խ, ինչքա՜ն ոսկորներ մնացին այնտեղ...

— Պետք չէ, դրա մասին հետո։

— Ինչքա՜ն ոսկորներ...

— Ասա՛, դու սիրո՞ւմ ես ինձ։

Նա հետ շրջվեց.

— Գնա՛, Ագլայա, հիմա քեզանով զբաղվելու ժամանակը չէ...

— Անդրեյ, սիրելիս, ի՞նչ է պատահել քեզ։

— Թո՛ղ ինձ...

— Ես ամեն ինչ հասկանում եմ, բայց... ինչո՞ւ այդպես։

— Գնա՛, գնա՛։

Ագլայան վեր կացավ, ուղղեց վերնազգեստը.

— Դե, ուրեմն, գնում եմ...

— Լա՛վ։ Գուցե կտեսնվենք երեկոյան։

— Անդրեյ, ես գնացի...

— Գնա՛...

Երեկոյան ամեն ինչի մասին մանրամասն զեկույց հանձնելով Պացևիչին՝ Անդրեյ Կարաբանովը լավ հարբեց։ Ագլայան վախեցավ մտնել նրա մոտ՝ տուն, որտեղից լսվում էին հարբած ձայներ, անզուսպ երգեր և ինչ-որ մեկի ջղաձիգ լացը։ Մոտեցավ լուսամուտին, զգուշությամբ նայեց.

— Աստվա՜ծ իմ,— ասաց նա։— Աստվա՜ծ իմ...

Անդրեյը նստած էր սեղանի մոտ՝ շրջապատված իր կազակներով, միայն մի կեղտոտ վարտիքով, հարբած, թթված։ Սպանվածների հիշատակն էին մեծարում։ Մի ինչ-որ մորուքավոր հսկա հարյուրապետ ատամներով կրծում էր բաժակը և բեկորները թքում հատակին։ Ծխախոտի ծխի մեջ մերթընդմերթ երևում էին գոռգոռացող կազակների կարմրած մռութները։ Եվ ոչխարների պես նստած էին երկու հարյուրանիկ՝ խաչերի ու մեդալների մեջ կորած, քրտնած ճակատները մեկը մյուսին դեմ տված։ Ապակիները կարծես զրնգում էին անզուսպ երգերից։

Խմելով ու պարելով է աչքի ընկնում,
Մեր կայազորը Անդրկովկասյան...

Եվ լուսամուտից մի կողմ քաշվելով՝ վերհիշեց...

Նա վերհիշեց Անդրեյի առաջին հանդիպումը, դեռ այնտեղ՝ ոսկեզօծված շողշողուն հասարակության մեջ, որտեղ նույնիսկ չգիտեին, որ գոյություն ունի ինչ-որ Բայազետ։ Նրանց իրար ներկայացրին, Անդրեյը ճարպիկ էր, ինչպես սատանան, և իր առջև ման էր գալիս, ասես զսպանակների վրա։ Հետո նա այցելություն կատարեց Ագլայայի մորաքրոջը. և մորաքույրը, բարձրացնելով լոռնետը, գլխով հավանության նշան արեց։ Ախ, որքա՜ն հմայիչ էր նա՝ ամբողջովին լի առկայծող փայլով, որքա՜ն հիանալի էր...

Մորաքույրն աչքերով նշաններ էր անում Ագլայային, իսկ Անդրեյն այն ժամանակ խաղում, քեֆ էր անում գնչուների հետ. ասում էին, որ նա ապրում է պարտքերով և կանանց հաշվին։ Սակայն այդ ամենը նա անում էր վայելուչ ձևով. պարտքերը նա ծածուկ էր պահում, քեֆերն անցկացնում էր քաղաքից դուրս, իսկ իր սիրուհիներին կարողանում էր լավ թաքցնել։

Ագլայան սիրում էր նրան... Եվ ահա այդ մարդն այժմ, ինչպես վերջին մուժիկ, միայն մի կեղտոտ վարտիքով, կազակների հետ ծծում էր հացօղին և, հավանաբար (իսկ հավանաբար այդպես էլ կար), նրանց հետ միասին գարշելիորեն անպատկառություն անում։ Ագլայայի համար դա լաց լինելու չափ ցավալի էր։ Եթե միայն նա իմանար, թե ինչպես է Ագլայան սպասել այս հանդիպմանը, ինչպես է նա-

խապատրաստվել դրան՝ տանջվելով ու նվաղելով։ Իսկ նա մոռացել է... չի ուզում... գերադասում է օղին...

Հաջորդ օրը՝ կարմրած ու բորբոքված աչքերով, ուռած ու այլանդակված Կարաբանովը գնաց Ագլայայի մոտ ներողություն խնդրելու։ Նա տարօրինակորեն չվշտացավ, երբ Ագլայան հրաժարվեց ներել։ Մի բիչ կանգնեց ապուշի պես, մտածեց ինչ-որ բանի մասին և գլխարկը քաշելով ճակատին՝ հեռացավ։

Հեռացավ նույնիսկ առանց հոգոց հանելու, երևի քիչ զառնացած։ Ագլայան, ի հեճուկս այդ ամենի, կրկնապատկեց ուշադրությունն ամուսնու նկատմամբ, և ծեր գնդապետն այդ օրերին նորից երջանիկ զգաց իրեն։

Իսկ Պացևիչը մանրամասն զեկուցագիր ուղարկեց կովկասյան փոխարքայի զորակայան։ Նա գրում էր, որ հակառակորդը շարժվում էր դեպի Բայազետ, սակայն իրեն հաջողվեց խելացի մաններով նրա առաջը կտրել քաղաքի մատույցների մոտ և ջախջախել, որ սպաներից ամենից շատ աչքի ընկան պորուչիկ Կարաբանովը և կապիտան Շտոկվիչը (իր մասին Պացևիչը որոշեց համեստորեն լռել) և որ այդ օրհասական մարտում սպանվեցին թշնամու «երկու առաջնորդ...»։

Ընթերցողը կարող է չհավատալ դրան, բայց Պացևիչի ստերով լի այդ փաստաթուղթը պահպանվել է։ Եվ Թիֆլիսում հանդստացան ու խմում էին Բայազետի հերոսների կենացը, իսկ գեներալները գովում էին Ադամ Պլատոնովիչ Պացևիչին.

— Գործիմաց սպա է, պարոնա՛յք։ Վերին աստիճանի գործիմաց։ Դա ձեր անվճռական ծերուկ Խվոշչինսկին չէ, որ կարողանում էր միայն նվնվալ ու բողոքել... Ահա ձեզ... Հակառակորդի ղեմը կտրել է։ Ջախջախե՛լ։ Հաղթե՛լ։ Եվ վե՛րջ...

Այո՛, Պացևիչի համար վատ չէր պառկել բյուրեղապակե ոտքերով խանական մահճակալի վրա և նայել առաստաղին։

— Հի՛-հի՛-հի՛...

2

Թիֆլիսից եկավ փոստը։ Լրագրերի հետ ստացվեց «Կայսերական ռուսական աշխարհագրական ընկերության կովկասյան բաժնի տեղեկագիրը» հերթական համարը։ Պացևիչը մեքենայորեն թերթեց ամսագիրը՝ ինչ-որ բաներ լեռների մասին, ինչ-որ աղյուսակներ, մթնոլորտի ճնշման մասին տեղեկանքներ։

— Մի խոսքով, զատարկ բաներ,— եզրափակեց Պացևիչը և ասաց.— Տվեք Նեկրասովին, բոլոր իմաստակները սիրում են կարդալ տաղտկալի բաների մասին։

Հետո եկավ պրապորշչիկ Լատիշևը և համեստորեն զեկուցեց, որ կայազորի ուղտերը, որոնցից ամեն մի գլխի համար Իգդիրում գանձարանը վճարել էր շուրջ 40 ռուբլի, հրաժարվում են ուտել սիմինդրի այլուրից պատրաստված բլիթները և այժմ սատկում են քաղցից։ Չհրապարակված կարծիքով ուղտերից լավ է հասկանում Իսմայիլ խան Նախիջևանսկին, և նրա հետ խորհրդակցելուց հետո որոշեցին բլիթները տալ կազակներին։ Թե չէ նրանց առանց այն էլ շատ էին խժռել քրդերից հոտը պահպանելիս։

Շտոկվիչն իր մոտ կանչեց Կարաբանովին։ Մնցնելով ձիակապարանների շարքերի մոտով՝ Անդրեյը գետնի՛ն տարածված ճիլոպների և ծածկոցների վրա ինչ-որ սև դուզձեր տեսավ, որ կազակները փռել էին արևի տակ։

— Ծխախո՞տ եք չորացնում,— անցուզակի հարցրեց նա։

— Ո՛չ, կակավու,— չարախնդորեն պատասխանեցին կազակները։

Շտոկվիչը պորուչիկին դիմավորեց այսպես.

— Ասում են երեկ շատ ուժեղ խմե՞լ եք։

— Այդպիսի հանցանք եղել է,— խոստովանեց Անդրեյը։

— Իսկ դուք գլխի չե՞ք ընկնում՝ ինչ եմ ուզում առաջարկել ձեզ։

— Երևի մի բաժակ գինի։ Խումարի համար...

Եֆրեմ Իվանովիչը, չգիտես շոգից, թե տարակուսանքից, պորուչիկին նայեց մի տեսակ խեթ հայացքով։

— Ո՛չ,— լրջորեն պատասխանեց նա։— Արդեն դուրս է գրված ձեզ համար Իգդիր գնալու ճանապարհածախսը և

կայազորի դրամական պահանջների ամփոփագիրը։ Միաժամանակ կթարմանաք Պարսկաստանից հետո։

— Դա ինչ անմտություն է,— բարկացավ Կարաբանովը։— Գնդապետ Պացևիչը խնդրում է, որ ես համբուրեմ իրեն, իսկ դուք հանձնարարում եք ինձ ձեր հաշվապահությունը։ Մի՞թե կայազորում ինձանից բացի ուրիշ ոչ ոք չկա, որ բերի փողի պարկերը։

— Իսկ ուրիշ ո՞ւմ ուղարկեմ, եթե ոչ ձեզ... Վատինը մուժիկ է և մատների վրա է հաշվում, Նեկրասովն ամեն ինչում քաղաքականություն է բանեցնում, Պոտրեսովն ազնիվ է, բայց չի կարողանում պոկել նույնիսկ այն, ինչ պետք է իրեն։ Հո չեմ կարող ուղարկել բարոն Կլյուգենաուին, որը հավանաբար չգիտի նույնիսկ, թե ինչի համար են մարդիկ հայտնագործել դրամը։ Իսկ չէ՞ որ մեր արյուն-քրտինքով վաստակն իսկ մեր բյուրոկրատ աստիճանավորներից դուրս քաշել այնքան էլ հեշտ չէ...

Բայազետն արդեն սկսել էր ձանձրացնել պորուչիկին, երեկվա հարբեցողությունից հետո Ագլայայի հետ խաղաղությունը վերականգնելը հեշտ չէր, և նա, որոշ ժամանակ սնապարծությամբ դիմադրելուց հետո, այնուամենայնիվ, համաձայնեց։

— Ինչքա՞ն է այնտեղ,— հարցրեց Անդրեյը՝ վերցնելով ամփոփագիրը։— Ընդամենը հարյուր տասնվեց հազար և մանրադրամ։ Գրողը տանի, համարյա այդքան գումար մի անգամ ես տարվել եմ թուղթ խաղալիս, որից հետո իմ կալվածքները աճուրդի հանվեցին... Լա՛վ, մեկնում եմ։

Մայոր Պոտրեսովը ուրախացած ուղեկցեց նրան մինչև ուղեփակոցը։

— Դուք այնտեղ շվայտություն չանեք, խնդրում եմ,— սրտառուչ խնդրում էր ծերուկը։— Ես հասկանում եմ՝ երիտասարդություն է, աղջիկներ, ուտել-խմելու ցանկություն և նման բաներ կան... Սակայն ժամանակներն էլ հիմա տագնապալի են. հանկարծ քրդերը վաղը վրա կտան և ես չեմ հասցնի դրամն ուղարկել ընտանիքիս։ Դաշենկային էլ նոր զգեստ է հարկավոր, չէ՞ որ նրա հետ, փառք աստծու, կարգին մարդ է ամուսնանում։

Կարաբանովը, թամբից կախելով դատարկ տիկերը, տխուր ծիծաղեց.

— Այդպես էլ կլինի, մայոր, հանուն ձեր նկատմամբ ունեցած հարգանքի, խոստանում եմ ուտել-խմել միայն իմ փողերով՝ ձեռք չտալով ձեր խարին։

Իգդիրը դիմավորեց նրան փոշով, թիկունքին հատուկ տենդագին իրարանցումով և թեթևաբարո կանանց փնջով, որոնք այստեղ էին եկել տարբեր տեղերից՝ հանուն էկզոտիկայի։ Տների պատերը ճկռել էին ցուցանակներից։ Դուքաններում և մեյդանում զեռում էին զանազան շար ոգիներ։ Այստեղ կային անասնաբույժներ՝ «առանց տեղի» և ձախողված կապալառուներ, հանդուգն ու սպնդաճակատ ինտենդանտներ՝ ուղիղ ու ազնիվ հայացքներով, և պարզապես մանր ու չնչին սրիկաներ, որոնց մասին ծերունի Եգորիչը, որին Կարաբանովը վերցրել էր հետը որպես ուղեկցող, արտահայտվեց այսպես.

— Ազատ մարդիկ են։ Մեզ վրա բահով հող են լցնում, իսկ նրանք բահով փող են դիզում։ Է՜հ, համբավը կազակային է, իսկ կյանքը շնային...

Անդրեյ Կարաբանովը ապշեց, երբ անմիջապես քաղաք մտնելիս կվարտիրմայստերի համազգեստով մի հաստափոր պրապորշչիկ նրան չնչին գնով հուսարական սուր առաջարկեց, որի երախակալի ծոպը հյուսված էր Աննայի շքանշանի ժապավենով։

— Ամաչեք, պրապոր,— զայրացավ Կարաբանովը։— Այդ սրի տերը ռուսական օրդերի կավալեր է եղել, և երախակալի վրա դեռ չի հասցրել չորանալ նրա դաստակի քրտինքը։

— Ախր թանկ էլ չեմ ասում,— չէր ընկճվում սպեկուլյանտը,— ընդամենը երեսուն ռուբլի։ Ուրիշներն ավելի թանկ են վաճառում...

— Եգորիչ,— մոլեգնեց պորուչիկը,— մտրակով մի շրմփացրու սրան... Խփի՛ր, այդպիսիներն ամեն ինչ կհանդուրժեն...

Բանակի դանձատանը թթվում էր վաղուց չսափրված սպաների երկար հերթը։ «Սպասում ենք ահա,— հոգոց էին հանում նրանց,— առայժմ ոչ մի կոպեկ փող չկա»։

— Է՜-է՜, պարոնա՛յք, դուք պարզապես չեք կարողանում խոսել թիկունքային առնետների հետ։— Եվ Կարաբանովը տաքացած ներս խուժեց կառավարչի մոտ։

Իմաստունի բարձր ճակատով, բարեկազմ մի պարոն նստած էր բազկաթոռին և բարձրաձայն կարդում էր մոտ երկու արշին երկարությամբ մի ցուցակ։ Անդրեյը հասցրեց տեսնել նրա կրծքի փոքրիկ դափնեպսակը, որի վրա գրված էր XXXV թիվը։ Դա նշանակում էր, որ այդ պարոնը թիկունքում ուներ անբասիր ծառայության 35 տարիներ։ Այնտեղ էին գտնվում որմզդեղնի՝ ճոճոացող կաշվե անդրավարտիքով մի հուսարական կոռնետ և գվարդիական հրետանու մի գնդապետ. դրանք այն կարգի սպաներից էին, որոնք ասում էին՝ «Մայր-պատերազմ» և շփում ձեռքերը։

— Ի՞նչ եք կամենում, պարոն պորուչիկ,— հարցրեց կառավարիչը թավշյա բարիտոնով։

— Հրամայեցեք անհապաղ վճարել Բայազետի կայազորի փողերը։ Ես ուղղակի մարտագծից եմ գալիս, հերթի սպասել չեմ կարող։

— Ա՜խ, ինչպիսի՜ ջղային ու անհամբեր մարդ եք... Համենայն դեպս,— ավելացրեց աստիճանավորը խորիմաստության որոշ երանգով,— փողերը, իհարկե, դուք կստանաք։ Միայն դուք որոշ... այո, որոշ ջանքեր պետք է գործադրեք դրա համար։

— Ահա և գործադրեցի։— Անդրեյը սրով թխկացրեց հատակին։— Ամբողջ Բայազետից մինչև այստեղ արշավել եմ և բոլորովին կորել կեղտի մեջ՝ ինչպես սատանա, նույնիսկ առանց որևէ բան ուտելու, եկել եմ ուղիղ ձեզ մոտ։ Էլ ի՞նչ է հարկավոր...

Աստիճանավորը մատի նուրբ հարվածով ուղղեց թևքի տակից դուրս եկած թեղանիքը և նորից շուռ եկավ դեպի զրուցակից սպաները.

— Ուրեմն, ասում եք, Լյուբով Գերմանովնան գնացել է Կոչորի ամառանոցնե՞րը։ Ա՜խ, Նարզա՞ն, ջրերի մոտ... Սքանչելի կին է։ Որքան փայլ կա նրա մեջ, ուղղակի հրա՜շք է։ Այստեղ, այս խուլ վայրում, միայն այդպիսի կնոջ հետ կարող ես հանգիստ զգալ...

— Լսե՛ք,— նորից սկսեց Անդրեյը,— չէ՞ որ ես սպասում

եմ։ Մեր կայազորում ուղտերն արդեն սատկում են, ձիերին էլ շատ վատ ենք կերակրում։

Աստիճանավորը տրորեց իր սոկրատյան ճակատը, ոտից մինչև գլուխ զննեց Կարաբանովին (ասես գնահատելով, թե որքանով կարելի է գնել այս երիտասարդին) և բոլորովին անհարմար չզգալով վկաներից, հանկարծ սառնարյուն հարցրեց.

— Իսկ դուք, հոգյակս, քանի՞ տոկոս եք տալիս։

Այդպիսի նահապետական անպատկառություն պորուչիկը ոչ մի կերպ չէր սպասում.

— Չեմ հասկանում, ի՞նչ տոկոս։

Դեռահասներին միշտ հարկավոր է սովորեցնել, այդպես եղել է դեռ անհիշելի ժամանակներից, և կառավարիչը պորուչիկին դիմեց արդեն խստապահանջ դաստիարակի տոնով։

— Երիտասա՛րդ,— ասաց նա,— ինձ սովորաբար վճարում են ընդհանուր գումարի ութ տոկոսի չափով։ Բայց դուք՝ կազակներդ, կամակոր մուժիկներ եք. ձեզանից ես պակաս եմ վերցնում։ Սակայն հինգ տոկոսից ցածր մտադիր չեմ վերցնել...[1]

— Ո՞ւթ,— Անդրեյը նույնիսկ երերաց, ձեռքը մեքենայորեն տարավ դեպի սուրը։— Պարոնայք,— շվարած նետվեց նա դեպի սպաները.— Չէ՞ որ դուք պատվի մարդիկ եք, համաձգնստ եք կրում։ Խնդրում եմ վկայություն տաք, թե ինչ է դուրս տալիս այս շորթիչ պաշտոնյան։

Գնդապետը հաստ ձայնով կոնչաց, իսկ հուսարական կոռնետը շրջվեց մի կողմ։

— Ներեցեք։ Մենք ընտանեկան գործերին չենք խառնվում։

— Լա՜վ ընտանիք է,— բղավեց Կարաբանովը։

— Մի՛ բղավեք, երիտասարդ,— լռեցնելու միտումով նրա վրա գոռաց Սոկրատ կառավարիչը։— Այստեղ պանդոկ չէ և պետք չէ բղավել։ Ես հո աղքատներից չեմ վերցնում։ Այս գործերի մեջ ես արդեն մի խաչ եմ վաստակել և թութք

[1] Այս գլուխը գրելու համար հեղինակն օգտագործել է «Ռուսսկի արխիվում» տպագրված «Ճանապարհորդական հիշողություններից» հոդվածը (հեղ.)։

հիվանդություն, ամեն ինչ գիտեմ... Ձեր գնդապետ Պացեիչը ոչ թե հինգ տոկոս, այլ ռուբլուց ռուբլի ունի...

Կարաբանովը մտածեց մայոր Պոտրեսովի մասին, որը մարտնչում է յուրաքանչյուր կոպեկի համար, հիշեց այն քարացած չուրեկները, որոնց ստանալը զինվորներին ուրախություն է պատճառում, հիշեց ուղտերի սովահար մռնչյունը և կաղնու ճյուղերը կրծող ձիերի թախծոտ աչքերը...

— Իսկ դու այսպես չե՞ս կարողանում,— պորուչիկը կատաղությամբ շարժվեց դեպի սեղանը և, մոռանալով քաղաքավարության մասին, աստիճանավորի քթի առաջ վարպետորեն ծալեց մատները՝ կրկնակի կուկիշ ցույց տալով։

— Է՛, հետո ի՞նչ,— բոլորովին չվիրավորվեց այդ ստորը և նույնիսկ ծիծաղեց։— Մինչև այժմ ես ձեզ հետ խոսում էի գաղտնաբար, ցանկանալով բարին։ Ինչպես մարտական ընկերը մարտական ընկերոջ հետ։ Իսկ հիմա կանցնեմ պաշտոնական դիրքի... Փող չկա՛,— ճչաց աստիճանավորը՝ դեն շպրտելով ամփոփագիրը։— Եվ երբ կլինի, չգիտեմ։ Հավանաբար օգոստոսին։

Կարաբանովը զայրույթի մեջ շրջվեց դեպի սպաները։ Մի քիչ հանգստացրեց իրեն, որպեսզի անսպասելիորեն սկանդալի առաջ չկանգնի, և վշտահար նկատեց.

— Իսկ ձեզ, պարոնայք, բոլորովին չի սազում համազգեստ կրել։

Գվարդիականներն իրար նայեցին։ Գնդապետը լռեց, իսկ կոռնետը, որ երիտասարդ էր, ինչ-որ անհասկանալի բան բարբաջեց ընդհանուր բեռի մասին, որը պետք է կրեն բոլորը՝ առանց տարբերության։

— Դե, կրում եք կրեք,— ձեռքը թափ տվեց Անդրեյը,— ես ևս կրում եմ... Բանն այն է, որ.

Մենք կրում ենք ընդհանուր բեռ,
Միայն ուրիշ է վիճակը մեր,
Դուք պահվում եք հանուն տոհմի,
Ես դատապարտված եմ սպանդի...

Գանձատան ընդունարանում նույն ձևով դեռ տանջվում էին զորագնդերի ընդունիչները։ Անդրեյի հարցին մեկը պատասխանեց, որ մոտ կես ամիս է, ինչ ապրում է Իգդիրում,

մյուսը եկել է ռազմադաշտից արդեն երկրորդ անգամ, երրորդը միայն թափահարեց ձեռքը։

— Պարոնայք,— ասաց նա՝ այդ երրորդը,— ես վերջերս եղա Սևաստոպոլում։ Դուք չեք պատկերացնում, թե այս պատերազմը հայրենասիրության ինչպիսի վերելք է առաջ բերել հասարակության մեջ...Գեներալ Նահանգապետի պալատը տառացիորեն պաշարված էր։ Եվ ինչ եք կարծում, ո՞ւմ կողմից, անբարոյական կանանց։ Այո՛, այդ անառակ կանանց կորպորացիան նույնպես որոշել է ծառայել հայրենիքին՝ Կարմիր խաչի գծով։ Եվ ամենահետաքրքրականն այն է, որ նրանք բոլորը ստորագրություն էին տալիս՝ ամբողջ մի տարի ամուրի կյանք վարել։ Պարոնայք, անբարոյական կանայք անգամ կարողանում են զոհաբերվել հայրենիքի համար։

— Դեհ,— սրբապղծորեն ձայնակցեց Անդրեյը,— բա՞ն գտաք համեմատելու, չէ՞ որ դրանք ռուս անբարոյական կանայք են և ոչ թե ռուսական աստիճանավորներ... Ինչևիցե, ես ո՞ւմ հետևից կարող եմ հերթ զբաղեցնել, պարոնայք։ Լա՛վ, ես կկանգնեմ ձեր հետևից։

Անցավ չորս օր։ Բոլոր փողերը ծախսեցին Իգդիրում։ Եգորիչը վարձակալվեց հարուստ դուխոբորների մոտ խոտ հնձելու և դրանով կերակրում էր իրեն, կերակրում էր նաև իր հարյուրապետին։ Ամեն ինչ զզվելի էր, անազնիվ ու ամոթալի...

Հոգեկան բարությունից ծեր Եգորիչը հաճախ խորհուրդ էր տալիս.

— Ձերդ բարեծնություն, ամբողջ կյանքում մեր կրծքերից հարյուրավոր գողեր են կախված։ Դրանց զիջագին տվեք, թող այստեղ էլ ծծեն... Իսկ երբ Բայազետ վերադառնանք, ես սրբապատկերի առաջ բոլորի ներկայությամբ կերդվեմ, որ դուք մաքուր եք, ինչպես աղավնի...

— Ո՛չ, Եգորիչ,— համառում էր Կարաբանովը,— ավելի լավ է ես այստեղ հերթի սպասելով փտեմ, բայց ինձանից ոչ ոք մի կոպեկ չի ստանա...

Դիշերները չոր էին, շոգ։ Երեկոները կանանց ծիծաղը լսելի էր երևակայությունը։ Ագլայայի մասին հիշողությունն ամուր նստած էր մեջը, ինչպես ցավոտ փուշ։ Եվ,

հակառակի պես, պատից այն կողմ մի խանութպան գիշերներն աղջիկների հետ խելառություններ էր անում՝ կիթառի նվագակցությամբ ամբողջ կոկորդով մեկ երգելով.

Իզուր դուք, սիրելի տիկին,
Ձեզ տալիս ձեր շուրթերը,
Տասնոց կտամ մի համբույրին,
Դեռ, հնգանոցն էլ վրան։

Մինչև լուսաբաց Կարաբանովը շուռումուռ էր գալիս բարձերի վրա, փայտոջիլներ ճզմում, տենչում Ագլայային և մռայլ հայհոյում երաժշտական խանութի տիրոջը։ Առավոտները նա, չսափրված, աղմուկով գնում էր գանձատուն՝ դեռ փողոցից շրթունքները նախապատրաստելով գարշելի մի հարցի.

— Հը՞, ինչպե՞ս է այսօր, պարոնայք։ Տալի՞ս են, թե չէ...

Միայն հիմա նա սկսեց հասկանալ, որ այն բանակը, որի վրա նա մի ժամանակ նայում էր շքախմբի կավալերգարդի նժույգի բարձր թամբից, դեռ բոլորովին էլ բանակ չէ. ցրված կայսրության խուլ հետնախորշերում, աղքատ ու կիսաքաղց, կողոպտված ու ստորացած, Վատինների ու Պոտրեսովների, Եգորիչների ու Դենիսկաների բանակը՝ ահա հենց դա է Ռուսաստանի իսկական հենարանը, և Կարաբանովը մի տեսակ ամաչում էր հիշել իր նախկին սիգախաղերը Մարսովոյե դաշտում, ձիարշավները Կրասնոյե Սելոյում, անհոգ քեֆերը Պոլյուստրովյան ամառանոցներում։

— Այո՛,— ասաց մի անգամ Անդրեյը՝ չգիտես ինչու, հիշելով իր պապին, որ երիտասարդ հասակում ընկերություն էր արել հուսար Դենիս Դավիդովի հետ,— բայց մի ժամանակ, պարոնայք, եղել է «դյուցազունների դար, սակայն սրերը միախառնվեցին, և ճեղքերից դուրս սողացին մժեղները ու բզեզիկները...»։ Գրողը տանի բոլորիդ, վերջապես ե՞րբ կարգ ու կանոն կլինի Ռուսաստանում։

— Մեր ամբողջ սիստեմն այդպիսին է՝ ամբողջությամբ նեխել է...— պատասխանեց այն սպան, որը պատմում էր անբարոյական կանանց հայրենասիրության մասին։

— Ախր ի՞նչ գործ ունի այստեղ սիստեմը,— անկեղծորեն վրդովվեց Կարաբանովը։— Սրիկաներ, հիմարներ, դրամաշորթներ, կաշառակերներ՝ այդ ամենը, այո՛, բայց Պետերբուրգում այդ մասին մի՞թե գիտեն...

Անարդյունք սպասումների ութերորդ օրը գանձատանը լսվեց երիտասարդ քարտուղարի ձայնը, նա ասում էր, որ կաշառք վերցնելը ստորություն է, որ նա ոչ մի բոպե չէր մնա ծառայելու այնտեղ, որտեղ այդպիսի նողկալիություն երևան կգա, որ յուրաքանչյուր ազնվաբարո սպա պետք է թանկ գնահատի խիղճն ու իր համազգեստի պատիվը։

Կարաբանովը, ասես անմահական ջուր խմելով, հանկարծ ներս մտավ քարտուղարի մոտ, ջերմ հույս հայտնելով, որ նրանք, որպես ազնիվ մարդիկ, անկասկած կհասկանան իրար։ Քարտուղարը հենց այդ ժամանակ ճաշում էր և լսելով պորուչիկի երախտագիտական խոսքերը՝ նրան հրավիրեց սեղանի մոտ։ Կրծելով փասխանի թևիկը՝ երիտասարդ ատիճանավորը խոսում էր սաքացած ու կրքոտ, ինչպես Ցիցերոնը, և իր ելույթը ավարտեց նրանով, որ կաշառք վերցնելը հանցագործություն է։

— Այսպես, սոսկ շնորհակալություն... մենք կարող ենք ընդունել,— խոստովանեց նա։— Սակայն, ներեցեք, մի՞թե դա կաշառք է։ Եվ ոչ բոլորն են այս բանին խելացի նայում, ինչպես դուք։ Մեկ ուրիշն էլ գոփում է գանձարանը մինչև վերջին կոպեկը, իսկ ինքը... Ասենք միջոցների մեծացման... ծառայողներին օգնելու... կամ ուղղակի բարեգործական նպատակների համար... Ո՛չ, որտեղից, նա երբեք չի տա։ Եվ դեռ հրեական աղմուկ կհանի։ Հասկանո՞ւմ եք։

— Դե լա՛վ,— մռայլ անձնատուր եղավ Անդրեյը, այդ պահին ղղվելով իր խոսքերից,— ես ձեզ տալիս եմ մեկ տոկոս և այդ մասին ոչ ոք չի իմանա։

— Հոգյակս,— զվարճացավ Իգդիրի Ցիցերոնը,— դուք ինձ տվեք երեք տոկոսը և այդ մասին ասեք ում ուզում եք...

Եգորիչը, որ այդ օրերին մուժիկավարի ծանր ու մռայլ ապրումներ էր ունենում, նրան դիմավորեց հյուրանոցում։

— Երևում է, ստացե՞լ եք,— գլխի ընկավ նա պորուչիկի դեմքից և ուրախությամբ վազեց հոգալու արտահերթ ինքնաեռի մասին։

Մյուս օրը Կարաբանովը երկու դատարկ տիկերով եկավ փողերի հետևից։ Գանձապահը նրան ընդունեց սիրալիր.

— Հա՜-ա՜, Բայազետի հերոսն է... խնդրեմ, նստեցե՛ք։ Հիմա, միայն մեկ րոպե, մինչև հրետանու հետ հաշիվները մաքրեմ...

Մի աչքը կապած, զինվորի շինելը հագին՝ բեղավոր շտաբս-կապիտանը միակ աչքով աչալուրջ նայում էր փողերի վիթխարի կապոցին, որը ճարպկորեն վերահամրում էր գանձապահը։ Նրա հածող աչքի արտահայտությունից երևում էր, որ շտաբս-կապիտանը վաղուց արդեն կորցրել էր հավատը այս աշխարհի արդարության նկատմամբ։ Նայելով մի գաղտնի թղթի՝ գանձապահը թղթադրամների կապոցից հանեց որոշ գումար և բանիմացությամբ ակնարկեց.

— Կարծես ճիշտ է...

Շտաբս-կապիտանը մռայլ գլխով արեց։ Բոլոր այդ հայցքները, փսփսոցներն ու սրիկայական նենգափոխումները Անդրեյի առջև բացահայտեցին կողոպտման պարզունակ մեխանիկան։ Պարզ է, որ խոստացած տոկոսները պահվում էին հենց այստեղ, փողերը տալու ժամանակ։

— Չի՞ կարելի արդյոք գոնե մի քիչ արծաթով ստանալ,— հարցրեց շտաբս-կապիտանը, փողերը լցնելով տոպրակի մեջ։— Թե չէ թղթադրամների վրա, տեսեք, նույնիսկ համարները ջնջվել են։

— Ոչ մի կերպ չի կարելի,— պատասխանեց գանձապահը և, կրկին հաշվելով «եկատերինոկների» թարմ կապոցը, արմունկով իրենից հեռացրեց ժապավենով երիզված հաստափոր մայր մատյանը։

Անդրեյը մեքենայաբար նայեց բացված էջի վրա և տեսավ Բայազետի կայազորի հաշիվը՝ 116118 ռուբլի և 37 կոպեկ։ Գրիչը թաթախելով թանաքամանի մեջ՝ պորուչիկը, բոլորի համար աննկատելի, հոյակապ ու արագ մի շարժումով ստորագրեց ըստ հաշվի փողերի ստացման համար։

Հերթը հասավ և նրան։

— Բայազե՛տ, Ո՞ւր է Բայազետը,— իրար անցավ գանձապահը։— Դե՛հ, եկեք այստեղ, պատվելիս, ուրիշներին էլ ուշացնում...

— Ես էլ կուզենայի մի քիչ արծաթ ստանալ,— գոռոզաբար ասաց Անդրեյը՝ նստելով սեղանի մոտ և անփութորեն փաթաթելով ծխախոտը։

— Չկա՛, չկա՛, չկա՛... Չէ որ մեկին ասվեց, իսկ սրանք շարունակ իրենցն են պնդում։ Ի՞նչ անեմ ես, ձեզ համար արծա՞թ ծնեմ, ի՞նչ է... Դե հաշվեք, արա՛գ...

Կարաբանովն արդեն չէր շտապում։ Նրա բուռը կոխած փողերի կույտից, ինչպես և պետք էր սպասել, պակասում էր ընդհանուր գումարի ուղիղ երեք տոկոսը։ Որոշելով համբերությունից հանել գանձապահին, պորուչիկը յուրաքանչյուր կապոց հաշվում էր երկու անգամ։ Դիտավորյալ այնպես էր անում, որ իբր թե սխալվում է, շփոթվում և վերահամրում էր նորից։

— Ճի՞շտ է կարծես,— աչքով արեց գանձապահը։

— Ո՛չ, ներեցեք... Գործը անսովոր է, բայց սխալվել չեմ կարող՝ ընդամենը պակասում է երեք հազար չորս հարյուր ութսունհինգ ռուբլի և վաթսունհինգ կոպեկ։

— Չի կարող պատահել,— վախեցած ձևացավ գանձապահը։— Ես ճիշտ եմ հաշվել։— Եվ կռանալով՝ սեղանի վրայից փսփսաց Կարաբանովի ականջին։— Իսկ դուք, ի՞նչ է, երեք տոկոսի մասին մոռացե՞լ եք։ Աղմուկ մի բարձրացրեք...

— Ա՜-ա՜,— բղավեց Կարաբանովը։— Դե այդպես էլ ասեիք էլի՛, որ երեք տոկոսը վերցնում եք որպես կաշառք։ Միայն նեղություն կրեք այդ դեպքում ինձ ստորագրություն տալ, որ գանձապահությունը պորուչիկ Կարաբանովից պահել է այսքան-այսքան, իբրև կաշառք։

— Այ թե կատակասերն եք, հա՜,— բոլորովին իրեն կորցրեց գանձապահը։— Բան ասացիք, էլի... Ա՜խ այդ կազակները, նրանք միշտ... Պոտուլո՛վ,— հարձակվեց նա գրագրի վրա,— շուտ փակիր արկղը... Պարոնայք, փող ստացողներին խնդրում եմ դուրս գալ այստեղից...

Վազելով եկավ գանձապահության գրագիրը։

— Դուք ի՞նչ եք այստեղ իմաստակում, պորուչիկ։ Եվ դեռ ազնվաբարո մարդ եք համարվում, լեյբ-գվարդիայում եք ծառայել...

— Ձայներդ, կատվի ձագեր,— ֆշշացրեց Կարաբանովը՝ վերցնելով սուրը։— Դուք դեռ ցանկանում եք ինձ ամոթա՞նք տալ... Կամ ստորագրություն տուր կաշառք վերցնելու համար, կամ էլ կողոպտածը դիր սեղանի վրա։ Ես ուզում եմ մաքուր խղճով նայել իմ զինվորների աչքերին։

— Դուք դա լո՞ւրջ եք ասում,— շշմեց գրագիրը։— Այն ժամանակ, ներողություն, գանձատունը արդեն կնքված է։ Եկեք վաղը։

— Ո՛չ, այսօր։ Քանի որ ես արդեն ստորագրել եմ, որ ստացա։ Ահա,— և Անդրեյը իր մատը դրեց ժապավինյալ գրքի ստորագրության վրա։

Գրագիրը ցավոտ կսմթեց գանձապահին. վերջինս խփեց գրագրի ճակատին. Սոկրատ-կառավարիչը, հավանաբար, մի լավ բաղնիք կսարքի իր գրագիր Ցիցերոնի գլխին։ Սակայն ոչինչ չէր մնում անելու, և փողի մնացածը շպրտեցին պորուչիկի դեմքին։ Անդրեյը փողերը լցրեց տիկերի մեջ, բեռնեց Եգորիչի ուսին և մոտեցավ գանձապահության գրագրին.

— Դուք ազնվակա՞ն եք,— հարցրեց նրան։

— Այո՛,— հպարտությամբ պատասխանեց գրագիրը։— Եվ ձեր թայը չեմ, երկու եռամյակ Ելաբուժի գավառի ազնվականության պարագլուխն եմ եղել։

— Ավելի լավ։ Համենայն դեպս, կարող եք բավարարում պահանջել։ Միշտ պատրաստ եմ։

Եվ, այդ ասելով, նա բռունցքի հարվածով գրագրին «ուղարկեց» հեռավոր մի անկյունում պառկելու, նրա հետևից շպրտելով հաստափոր մայր մատյանը՝ «ելքումուտք» իմաստնագույն բովանդակությամբ։ Եգորիչն էլ ուրիշ կերպ վարվեց՝ մեյդանում գնեց հինգ գրվանքա դրոժ և լցրեց գանձատան արտաքնոցները։

— Հիմա շոգ է, ձերդ բարեծնություն,— ասաց նա պորուչիկին,— հավատացեք ինձ՝ այնպիսի թթվահոտ կբարձրանա, որ ասելը դժվար է...

Երբ նրանք թողնում էին Իգդիրը, «խմորն» արդեն բարձրացել էր, բոլոր անցքերից փողոց էր փչում թթվահոտը՝ գանդաղ ու անկասելի ինչպես չարագուշակ ճակատագիր։ Վերջինը, ինչ հիշողության մեջ պահեց պորուչիկ Կարաբանովը՝ գանձատան մոտով անցնելիս, գրագիրն էր. շալվարը քաշելով՝ նա քարից քար էր թռչում և վերջապես, սայթաքելով, շրմփաց կեղտի մեջ։

Բայազետում հանդիպելով Նեկրասովին՝ պորուչիկն ասաց.

— Դժվար է դատել, բայց դեկաբրիստները գուցե ճիշտ էին։

— Իսկ ձեր երևակայությունը դեկաբրիստներից այն կողմ չի՞ գնում։ Դուք մի՞թե չեք լսել Կարակոզովի կրակոցը։

— Դե, ես չեմ հասկանում, թե ինչ են ուզում նիհիլիստները,— բորբոքված պատասխանեց Անդրեյը։— Սև ակնոցներ կրել, եղունգները չկտրել ու չխուզել մորուքը,— եթե դա այդպես է, ապա խնդրեմ...

— Նիհիլիստները վաղուց արդեն չկան,— առարկեց շտաբս-կապիտանը։— Մնացել են հեղափոխականները։ Բայց դուք չգիտեք, Կարաբանով։ Իսկ ահա մեր նեխած սիստեմը...

— Էլի սիստեմը,— մոթմոթաց Անդրեյը։ Միայն Ագլայայի հետ գժտվելու մասին հիշողությունն այդ օրը հետ պահեց նրան, որ չիմի մինչև գիտակցությունը կորցնելը։

3

Մինչև Կարաբանովի վերադառնալը, նրա ուրյադնիկ Տրյոխժոննին ստացավ վախմիստրի կոչում, որին ուղիղ տասնչորս տարի սպասում էր մուժիկական համբերատարությամբ։ Վատնինը, հանդիպելով պորուչիկին, պատմեց նրան.

— Ա՛յ, հիմա քեֆ կանի՞,— ասաց նա։— Նոր քո Դենիսկա Օժոգինին տեսա. նորելուկ վախմիստրից չի հեռանում, գինու հոտ է զգում սրիկան։ Եվ երկուսով մեյդան տարան մի մեծ սափոր։ Գնում էին այնպես գոհունակ, ժպտում էին։

— Դու նրանց ի՞նչ ասացիր, եսաուլ։

— Իսկ ինչ պիտի ասես այդտեղ։ Ասացի, որ ամբողջը չիմեն և վրայից մի բան ուտեն։

Կարաբանովն այդ օրը ուշ պառկեց քնելու։ Արդեն սկսել էր ննջել, երբ մի ծանր բան փլվեց նախասենյակում, լսվեցին հայհոյանքներ, և Դենիսկան ներս քարշ տվեց սասուիկ հարբած վախմիստր Տրյոխժոննին։

— Ահա՛, ձերդ բարեծնություն,— բացատրեց Օժոգինը,— ուզում է ձեզ զեկուցել։ Հենց այն կարգով, ինչ պահանջվում է։

Դենիսկան Տրյոխժոննուն գերանի նման հենեց պատին և կորավ դռների հետևում՝ հանցանքից հեռու։ Կարաբանովը մի քիչ պտտեցրեց լապտերի պատրույգը, որպեսզի ավելի լավ երևար։

— Լավ ես, եղբայր, լավ,— ասաց Անդրեյը։

— Մարդիկ առողջ են,— հանկարծ բացվեց Տրյոխժոննին։

— Ի՞նչ, ի՞նչ,— զարմացավ Կարաբանովը՝ նույնիսկ մի քիչ բարձրանալով անկողնուց։

— Ասում եմ՝ մարդիկ առողջ են։ Ահա թե ինչ։

— Իսկ ձիե՞րը։

— Եվ ձիերը։ Սկզբից՝ մարդիկ, հետո՝ ձիերը։ Ես բոլորը հիշում եմ...

— Դե լավ, գնա՛,— թույլ տվեց Անդրեյը։

— Իսկ ես էլ հենց կգնամ։ Հո այստեղ չեմ մնա։

— Դե գնա՛։

— Եվ կգնամ,— ահեղ վճռականությամբ պատասխանեց Տրյոխժոննին։

— Ուրեմն գնա, մի՛ կանգնիր։

Կարաբանովի համար հետաքրքիր էր տեսնել, թե Տրյոխժոննին ինչպես պիտի պոկվի պատից։

— Գնա՛, գնա՛, եղբայր,— բորբոքում էր նա՝ նման դեպքեր հիշելով իր կյանքից։

— Կգնամ և շատ հասարակ... Դենիսկա,— գոռաց վախմիստրը։— Որտե՞ղ ես...

Դռների հետևից դուրս թռավ Դենիսկան, բռնեց վախմիստրին և դուրս տարավ սենյակից։ Կարաբանովը երևաժամանակ շնչակտուր ծիծաղում էր, և այս դեպքը բուժեց նրա մռայլ տրամադրությունը, որ ճնշում էր նրան Իգդիրում վերապրած ստորություններից հետո։ Նա իրեն նորից զգաց իբրև իր ընտանիքում, հարազատ և մտերիմ մարդկանց շրջանում։ Դենիսկայի խորամանկությունները և վախմիստրի խրախճանքը՝ այդ ամենը նրա համար շատ հաճելի էր, հարազատ ու հասկանալի։

Մի օր հորիզոնի վրա թեթև ծուխ երևաց, հետո արևը խավարեց, և վրա հասավ աղջամուղջը։ Պարսկաստանի սահմանից դեպի Բայազետ էր շարժվում մորեխը։ Միլիոնավոր թևերի հաճախակի բախյունից թեթև շառաչյուն էր լսվում երկնքում։ Այդ գարշելի արարածներից հենց առաջինը խփեց Կարաբանովի ճակատին, և նա լսեց, թե ինչպես աղաղակեցին կազակները՝ փրկելով խոտի և խարի մնացորդները։ Տեսարանը սոսկալի էր և ամենևին նման չէր այն բոլոր նկարագրություններին, որ պորուչիկը մի ժամանակ կարդացել էր։

— Աստվա՛ծ իմ,— ասաց նա,— մեզ մոտ, Ռուսաստանում, մարդիկ գոնե առու են փորում, կանայք դույլեր են թակում։ Իսկ այս անիծվածները նույնիսկ իրենց ալլահին օգնության չեն կանչում։

Եվ շատ զարմացավ, երբ իմացավ, որ հաջորդ օրը մեյդանում վաճառում են տապակած և սոուսի մեջ խաշած մորեխներ։ Միայն թռչունները, սարյակները, ագռավները և արագիլներն էին, որ անողոքաբար հարձակվում էին մորեխների վրա և, հոգնելով ապադյուն պայքարից, թռչում մտնում էին գետը, որպեսզի թարմանային ջրի մեջ, և այնուհետև նորից անհավասար մարտի նետվեին։

Մորեխը գալիս էր՝ ճանապարհին խժռելով ոչ միայն ամեն կենդանի բան, այլև նույնիսկ եղեգնյա տանիքները և պարուսիևե սթարները։ Հետո ամպերը նոսրացան։ Կայազորում երևան եկան նոր գործեր ու հոգսեր։ Իսկ շուտով շտաբսկապիտան Նեկրասովը, մոտենալով զորանոցին, լսեց մի երգ, որը ծնվել էր Բայազետում.

Վատ կյանք է սկսվել մեզ համար
Հրամանատարի հետ, որ հայր չէ,
Եվ կաշառակեր է աննման,
Եվ հայհոյող մի սրիկա։
Ատելությամբ թողնում է նա,
Որ շուտ սատկենք մենք այստեղ,
Իսկ ինքը լափում է մուրաբա,
Եվ սագեր է սիրում ապա։
Եթե դուք իմանալ եք ուզում,
Ահա ինչից է նա գիրանում...

Նեկրասովը ռումբի նման ներխուժեց զորանոց.

— Դադարեցրե՛ք երգը։ Դուք ի՞նչ է, ցանկանում եք ընկնել բանտարկյալների վա՞շտը...

Պացևիչը այդ բոլոր օրերին դուրս չէր գալիս իր սենյակից։ Նա շտապում էր վերջացնել «Կնոջ սեռական կյանքի» երրորդ հատորի ընթերցումը։ Դա մի կապիտալ աշխատություն էր, շարադրված մասնագիտական ընդարձակ նյութերի հիման վրա. նրա հեղինակն էր իր հայրենիքում և ամբողջ աշխարհի հասարակաց տներում այնքան հարգված հերը պրոֆեսոր ֆոն Շմուտցկեն։ Ճիշտ է, հատորը սկսվում էր միանգամից 213-րդ էջից, նկարները միջից կտրված հանված էին, սակայն գնդապետը հենց այնպես, միայն իմաստով, գլխի էր ընկնում նրա բովանդակությունը։

Այդ գիրքը նա խլել էր պրապորշչիկ Լատիշևի ձեռքից։

— Դուք դեռ երիտասարդ եք, պրապորշչիկ,— ասաց գնդապետը նեղացած։— Ավելի լավ է կարդացեք գեներալ Բեզակի կանաչավուն գրքույկը։ Եվ հետո զինվորները բողոքում են ձեզանից, որ դուք հոգ չեք տանում նրանց կարիքների մասին։ Չէ որ միկիտանների հետ հաշիվները փակելը ձեզ է հանձնարարված։

Պրապորշչիկը մնաց տեղում կանգնած՝ մեռելի պես գունատ։ Սննդամթերքի վիճակը վերջերս իսկապես վատ էր։ Այդ մասին առաջինն սկսեց խոսել շտաբս-կապիտան Նեկրասովը. նա իրադարձությունները կանխագուշակելու ընդունակություններ ուներ։ Առաջին իսկ սպայական ժողովում Յուրի Տիմոֆեևիչը սեղանին դրեց զինվորական անհովար գլխարկը, որի մեջ ինչ-որ անհասկանալի մի բան էր լցված։ Կարաբանովը ճանաչեց հենց այն գուղձերը, որոնք կազակները չորացնում էին ճիլոպների վրա՝ իր Իգղիր գնալուց առաջ։

— Պարոնա՛յք,— սկսեց Նեկրասովը,— ահա այս բոլոր նեխած բաները, որ սկզբից նախատեսված են եղել էրզրումի էշելոնի համար, հետո Իսմայիլ խանի իմաստուն միջամտությամբ տրամադրվել են մեր կայազորի պարենավորմանը...

— Ուրեմն դա ծխախոտ չէ՞,— զարմացավ Կարաբանովը։— Պաքսիմատ է, կարծես թե բլի՞թ... Հետաքրքրական է։ Իսկ ես էլ կարծում էի, թե նրանք ծխախոտ են չորացնում։

— Եվ իսկապես,— շարունակեց Յուրի Տիմոֆեևիչը,— առնվազն տարօրինակ է մեր զինվորի վիճակը։ Բանակի

հրամանով նա պետք է «բական ստանա մի գրվանքա միս, կես գրվանքա աղ դրած միս, մի բաժակ օղի, երեք գրվանքա հաց։ Դեռ չհաշված, պարոնայք, համեմունքները, ձավարեղենը, բազուկը, կաղամբը, աղը և կվասը։ Իսկ նա ի՞նչ է ստանում իրականում...

Սիվիցկին վար քաշեց անհովար գլխարկը։

— Նրանք սա են եփում,— ասաց կապիտանը։— Մանրացնում են և եփում։ Ես տեսել եմ, բայց չեմ իմացել, թե ինչ է։ Մտածել եմ՝ սուրճ է...

Հեղինակավոր կերպով խոսակցության մեջ մտավ Պացևիչը.

— Պարոնա՛յք,— սկսեց նա,— գրասենյակներում ամենից շատ հարգում եմ ծույլ մարդկանց։ Նրանք ալարում են աշխատել և գործերն ավելի արագ են գլխառաջ անում։ Դրա պատճառով էլ ծույլերի մեջ ոչ մի քաշքշուկ չի նկատվում։ Բայց այն, ինչ այստեղ ինձ ցույց տվեցիք,— գնդապետը վար քաշեց անհովար գլխարկը,— գայրացուցիչ է։ Ես հենց այսօր կհրամայեմ դուրս գրել այս զիբիլը։ Բժի՛շկ, իսկույն ևեթ ակտ կազմեք։

— Խորհուրդ չեմ տալիս,— կամաց հուշեց Խվոշչինսկին իր անկյունից։— Բայց ամենևին չմտածեք, որ իմ կոլեգա կապիտան Շտոկվիչի նման ես էլ այն կարծիքին եմ, թե քաղցած զինվորը ավելի կատաղի է կռվում։ Ո՛չ, պարոնայք... Սակայն այսպիսի տագնապալի ժամանակներում զինվորին պետք է թողնել, որ մտածի պատերազմի մասին և ոչ թե նրա ուշադրությունը սրել այդ այլանդակ պաքսիմատների վրա...

Ձայնը բավական ծանրակշիռ էր, ոչ ոք չհամարձակվեց առարկել։ Այդ պաքսիմատները մինչև վերջ կծամեն, ոչինչ չի պատահի։ Դրա փոխարեն ժողովի վերջում բոլորի դժգոհությունն ուղղվեց պրապորշչիկ Լատիշևի վրա, որը շնագայլ-միկիտանների հետ վարում էր կայազորի դրամական հաշիվները։ Պրապորշչիկը համեստորեն լռում էր (նա դաստիարակված երիտասարդ էր) և արդեն կատաղած Նեկրասովը նրա քիթը կոխեց մի թղթի կտոր.

— Ահա ձեզ սնունդ՝ ուղեղի համար,— ասաց նա։— Համեմատեք գների տարբերությունը։ Նույնիսկ այն կոպեկը,

որ զինվորը պահում է սև օրվա համար, չի կարող օգնել նրան՝ տաք կերակուր ունենալու։

Թուղթը ձեռքից ձեռք էր անցնում։ Այն պահպանվել է արխիվներում, և մենք բերում ենք այստեղ ամբողջովին.

	Իգդիր	Բայազետ
Մի գրվանքա ոչխարի միսը —	2 կոպ.	30 կոպ.
Ժուկովի ծխախոտի չորս հատը —	15 կոպ.	2 ռ. 20 կոպ.
Մի գլուխ շաքարը —	7 կոպ.	85 կոպ.
Մի շիշ օղին —	40 կոպ.	1 ռ. 30 կոպ.

Երբ ժողովը վերջացավ, Կլյուգենաուն փողոցում հասավ պրապորշչիկ Լատիշևին և ասաց.

— Իսկ դուք չե՞ք վախենում, որ զինվորները առանց տոնավաճառի ձեր գլխին մի լավ զավեշտախաղ սարքեն այդպիսի էժանության համար։

— Ինչի՞ց պիտի վախենամ,— համեստորեն առարկեց պրապորշչիկը։— Չէ որ ես ամեն ինչ ազնվորեն եմ անում։

— Գովելի է, որ դուք այդպես ազնիվ եք,— շարունակեց բարոնը։— Միայն ժամանակը դեռ չի եկել, որ նրանից ապուր եփեն։

Չնայած այդ բոլոր անախորժություններին, կայազորն ապրում էր ամուր և հաշտ կյանքով։ Անգամ Պացևիչի մասին սպաները շարունակում էին արտահայտվել որոշ հույսերով։

— Ոչինչ,— ասում էին նրանք,— թող մի փոքր մասնակցի պատերազմին, թող ռազմաերթի օրերին մի քիչ ջուր խմի տիկից, այն ժամանակ կփոխվի։

Պացևիչը, որին հասնում էին այդ խոսակցությունները, բարկանում էր։

— Իսկ ես հիմար չեմ,— առարկում էր նա,— որ խմեմ տիկի հոտած ջուրը, երբ մեյդանում այնքան շատ է մաճառը և Կախեթի գինին, որ թեկուզ լողացիր մեջը։

Եվ այդ ասելով, հաճախ ավելացնում էր.

— Սատանան գիտի ուր եմ եկել։ Զինվորները նվաղած են, իսկ սպաները պաշտոնամոլներ ու բամբասկոտներ են, և անընդհատ խարդավանում են մեկը մյուսին...

Մեյդանից հեղձուցիչ հոտ էր փչում։ Բերդի խրամատներում լեշի համար կատաղած գզվռտում էին շները։ «Խա՜շ, խա՜շ, խա՜շ»,— լսվում էին մսավաճառների ճիչերը։ Լուռ ու մռայլ հայուհիները խղճուկ խրճիթների մեջ գործվածք էին անում Պենելոպեի հնագույն եղանակով և երգում անդրբծովյան երջանիկ կյանքի մասին։ Միջնաբերդի բակում խուզ մռնչում էին ուղտերը, որոնց ստամոքսներին զինվորները չէին կարողանում ոչ մի կերպ գոհացում տալ։ Հեծելազորային դարբնոցներից տարածվում էր շոգն ու աղմուկը։ Գետափին սպասյակները ծեծկռտվում էին սպաների թաց սպիտակեղենով։

Եվ անհանգիստ հոգու տեր շտաբս-կապիտան Նեկրասովը հրապարակում սովորեցնում էր երիտասարդ զինվորներին.

— Հրացանի կոթը ամուր սեղմել ուսին։ Զգանը քաշել սահուն։ Զվախենալ կրակոցից։ Սեփական շունը տիրոջը չի կծում։ Ահա, հիմա ես ձեզ ցույց կտամ, ինչպես կրակել նպատակակետին։

Շտաբս-կապիտանը նշանահատիկով շոշափեց նպատակակետը։— «Տեսնո՞ւմ ես,— ասաց,— հարկավոր է հանգիստ ձգել»։— Եվ կրակոցի փոխարեն միայն թույլ չխկաց հրացանը։— «Այս ինչ շար սատանա է»,— ուժեղ ձգեց փակաղակը, ուրիշ փամփուշտ դրեց, և դարձյալ՝ չըխկ, իսկ կրակոց չեղավ։

— Դուք ինձ չեք հավատա,— պատմում էր հետո Նեկրասովը պրապորշչիկ Կլյուգենաուին,— բայց մեղավոր դուրս եկան փամփուշտները։ Կատաղության մեջ ես կարգադրեցի տակնուվրա անել ամբողջ արկղը, և ով գլխի կընկներ, որ վառոդի փոխարեն փամփուշտները լցված են... ցորենով։ Այո՛, այո՛, իսկական լավ ցորենով, որից կարելի էր շիլա պատրաստել։ Դե, դրան ի՞նչ կասեք...

Միլիցիան նույնպես լինում էր հրաձգաադաշտում, բայց այնտեղ ամեն ինչ անհամեմատ ավելի հասարակ էր։ Իսմայիլ խան Նախիջևանսկին նստում էր բլրակի վրա, ձախ կողմում դնում էր մի դույլ ջուր, աջ կողմում՝ մի դույլ գինի։ Միլիցիոները կպավ նպատակակետին՝ խմիր մի բաժակ գի-

նի, չկպավ՝ կուլ տուր մի բաժակ ջուր։ Ասածուն՝ ասուվածա-
յինը, Կեսարին՝ կեսարականը։

— Մոտեցում է հարկավոր,— իմաստնորեն ասում էր Իսմայիլ խանը՝ նստած հրամանատարական բլրակի վրա, երկու դուլլերի միջև։

Մի անգամ Շտոկվիչը չհամբերեց.

— Իսմայիլ խանը,— ասաց նա,— որի լուսավորյալ ուշադրությանը մենք պարտական ենք ռազմական մանկավարժության մեջ արած այս հայտնագործությամբ, իրեն, հավանաբար, երևակայում է որպես նոր Կլաուզեվից։ Սակայն ամենահետաքրքիրն այն է, որ քառասուն տարին դեռ չլրացած, խանը դարձավ փոխգնդապետ, իսկ ես շուտով արդեն կլինեմ հիսուն տարեկան, բայց դեռ կապիտան եմ... Պարոնա՛յք, ի՞նչ օգտակար բան է արել Իսմայիլ խանը։

— Նա հավաքել է մտրակների մի հիանալի կոլեկցիա,— պատասխանեց Կլյուգենաուն։

— Բարո՛ն, ձեր կատակներով կորեք-գնացե՛ք։ Դուք ինձ ձանձրացրել եք։ Ահա թե ինչ...

— Իսկ ես չեմ կատակում, պարոն կապիտան, Իսմայիլ խանը մտրակներ է հավաքում այն պատճառով, որ խելացի չէ։ Իսկ խելացի մարդիկ դրանով չեն զբաղվում։ Եվ դրա համար էլ ցանկացած ազգագիրը կկառուցեր խանի մտրակներից, ինչպես թանկարժեք մի իրից։

Շտոկվիչը ճանապարհին իր հետ վերցրեց Կարաբանովին և անակնկալ մտավ Խվոշչինսկու վրանը։ Կապիտանի համար Իսմայիլ խանի արարքների անհեթեթությունն ապացուցելն առանձին դժվարություն չէր ներկայացնում, ինչպես նաև ընդհանրապես չարժեր նրա պատճառով բողոքելու գնալ ծառայությունից վիրավորված գնդապետի մոտ։

— Հանգիստ թողեք նրան,— խորհուրդ տվեց Նիկիտա Սեմյոնովիչը։— Մենք չենք կարող, պարոնա՛յք, առանձնապես հույս դնել միլիցիայի վրա։ Տեղական հեծելազորը բոլորովին պիտանի չէ լուրջ պատերազմի համար։ Նրանց կթողնենք հետապնդման համար, մի բան, որ դուր է գալիս նրանց։ Իսկ ինչո՞ւ եք, իսկապես, ինձ մոտ եկել, պարոնա՛յք։ Ես արդեն վաղուց է, որ կայազորի հրամանատար չեմ։

Սակայն Խվոշչինսկին միայն ձևացնում էր, որ իբր անտարբեր է ամբոցի բախտի նկատմամբ և, արտաքնապես մնալով Պացևիչի ենթակայության տակ, շարունակում էր գաղտնի կերպով հետևել բոլոր իրադարձություններին։ Բայց մինչև որոշ ժամանակ փորձված մարտիկը գիտակցաբար սպասում էր և միայն մեկ անգամ չհամբերեց ու չկարողացավ չմիջամտել Ադամ Պլատոնովիչի գործողություններին։

Մի անգամ ռուսական սահմանի կողմից Բայազետ մտավ մի ծածկած սայլ, որի վրա դրված էր... դագաղ։ Դա պատվերով պատրաստված դագաղ էր, այն տխուր նմուշներից, ինչպիսին դագաղագործները սիրում են ցուցադրել իրենց արհեստանոցների ցուցանակներում, որպեսզի հպարտանան մահը «գեղեցկացնելու» արվեստով։ Դագաղի կողքերը փայլում էին լաքից, եզրերը պատած էին սև դիպակով, սգո զարդածոպերը ծանր կախված էին թեք կողերից։

Զինվորները նայում էին նրա վրա, ինչպես երեխաները՝ ամանորյա տոնածառին։ Այդ շքեղությունն արժեր տասներեք ռուբլի քառասուներկու կոպեկ։ Այդ հսկայական գումարով գյուղում երեք կով կարելի էր գնել։

— Այդ ո՞ւմ համար է,— մռայլ հարցրեց Շտոկվիչը։

— Դե ամեն ինչ նրանց՝ զինվորիկների համար,— պատասխանեց Պացևիչը։

Եվ իսկապես, հոսպիտալում մահացած առաջին զինվորին դրեցին այդ դագաղի մեջ և ուսերի վրա տարան Պատվո բլուրը սպիտակ թխկենու տակ թաղելու։ Սակայն հենց այդտեղ էլ դիակը հանեցին դագաղից, փաթաթեցին խսիրի մեջ և իջեցրին գերեզմանափոս։ Իսկ դատարկ դագաղը հետ վերադարձրին ամբոցս։ Տասներեք ռուբլի քառասուներկու կոպեկը մաքուր մնաց։ Երկրորդ անգամ կրկնվեց այդ նույն արարողությունը, միայն արդեն ավելի պակաս հանդիսավորությամբ, և այն ժամանակ Շտոկվիչը, խոժոռվելով, հարցրեց.

— Ներողություն, պարոն գնդապետ, իսկ ո՞ւր են գնում այդ փողերը։

— Ներկայացուցչության համար,— պատասխանեց Պա-

ցեիչը,— ներկայացուցչության և տեղացիներին նվերներ տալու համար։

Այս ամենը դեռ ոչինչ, Խվոշչինսկին, հավանաբար, կհանդուրժեր և դա։ Սակայն Ադամ Պլատոնովիչը այնպիսի բաներ էր անում, որ կարելի էր չանել։ Սովորաբար նրա հետ այդպիսի բաներ պատահում էին, երբ նա չէր ցանկանում տիկից ջուր խմել և դա փոխարինում էր մաճառով ու Կախեթի գինով։ Մի օր գնդապետը կարգադրեց դագաղը դնել փաշայի հանգստարանը, որպեսզի... «զինվորը, ինչպես ասաց Պացեիչը, կարողանար իր աչքով տեսնել ու համոզվել, որ նրան չեն խաբում, որ տանը նա իր կնոջ հետ վերնաթախտի վրա այնպես հանգիստ չէր կարող պառկել, ինչպես այս դագաղի մեջ...»։

Իմանալով այդ խեղկատակության մասին՝ Խվոշչինսկին չալարեց իջնել հանգստարան և, հետաքրքրասերներին ապուշներ անվանելով, հրամայեց անհապաղ վերցնել դագաղը։ Հետո գնաց ուղիղ Պացեիչի մոտ։ Ինչ տեղի ունեցավ նրանց միջև այնտեղ, ոչ ոք չիմացավ. սակայն դագաղը շտապ վերցրին ու գցեցին նկուղը։

Երևում է, Պացեիչը ստիպված եղավ Խվոշչինսկուց լսել ոչ քիչ ճշմարտություններ, և երեկոյան նա սկսեց իր կատաղությունը թափել սպասյակի վրա. լսվում էր, թե նա ինչպես էր իր սենյակի դռների հետևում մշակում սպասյակին։

— Այ, ես քո դեմքի վրա Եվրոպա կնկարեմ։

— Այսինքն,— մեկնաբանում էր յունկեր Եվդոկիմովը,— դեմքին պիտի հասցնի...

— Ես այնպես կհասցնեմ հաստ Ասիայիդ...

— Որ ցավից չես կարող նստել,— շարունակեց յունկերը՝ անկեղծ զվարճանալով։— Այնուամենայնիվ, աշխարհագրության ինչպիսի փայլուն գիտակ է մեր գնդապետը։ Ուղղակի հաճելի է ծառայել այդպիսի կրթված պարոնի ենթակայության ներքո։

Այսպես էին անցնում օրերը Բայազետում։

4

Սիվիցկին իզուր չէր կշտամբել Ագլայային. ուզում էր նրան տեսնել որպես իր ջանադիր օգնականի։ Սակայն երբ նրա առջև երևաց խշխշացող կրինոլինով[1] այդ տիկինը՝ մի հարյուր հատ հերակալներ մազերի վրա, նա ստիպված եղավ միանգամից ցույց տալ տիկնոջը, որ այստեղ հարկավոր է ինքնազոհաբերում և ոչ միայն կարեկցանք՝ «խեղճ ռուս զինվորիկի» նկատմամբ։

Ի դեպ, այդ շարաբաստիկ դարձվածքը, որ ռուս զինվորի մասին հնարել են թթու հայրենասերները, Ալեքսանդր Բորիսովիչը չէր կարողանում տանել.

— Գրողը տանի, ի՞նչ «զինվորիկ»։ Հաղթանդամ մի ցուլ է, շքեղան կուշտ կխժռի, մեկ-երկու բաժակ կկոնծի, կքայլի այնպես, որ նույնիսկ երկրագունդը կճռճռա, ամբողջ զորանոցը հոտով կլցնի... Իսկ նրան, «խեղճ» են կոչում։ Այդ ամենը հոգեհիվանդ կանայք են հնարել։

Շուտով տիկին Խվոշչինսկայան հաճելիորեն զարմացրեց նրան. նա աշխատասեր էր, համեստ, միայն նրա՝ որպես կնոջ ներկայությունն արդեն որոշ չափով գեղեցկացնում էր բերդի հոսպիտալի ծանր միջավայրը։

«Ամբուլանսի» նախադռանը աթոռակին նստած էր միշտ կիսահարբած բուժակ Նենյուկովը։ Նրա ենթակայության տակ էին զինվորական վարսավիրներն ու հեքիմները, որոնք կարողանում էին տեղը գցել դուրս ընկած ոսկորները և տախտավանդներ դնել։ Իսկ ինքը՝ բուժակն էլ, քանի դեռ հոսպիտալում հանգիստ էր, բոլոր ճիշտ ու սխալ միջոցներով առիթ էր փնտրում հարբելու, և Սիվիցկին «ամբուլանսից» նրան դուրս էր հանում նախասենյակ։ Նենյուկովը նստում էր այնտեղ, մռայլ կիսախավարում, հիվանդներին գրանցելու համար նախատեսված տետրակի առջև, յուրաքանչյուր զինվորի վախեցնում էր խիստ հարցով։

— Քվո վագի՞ս, ինֆեկցիա,— հարցնում էր նա՝ անմի-

[1] Կրինոլին — կանացի լայն շրջազգեստ՝ բարակ օղակապերով (Թարգմ.)։

չապես աստվածային լատիներենը թարգմանելով ռուսերեն։— Ո՞ւր ես խցկվում, վարակ։

Իսկ վարակը կայազորում արդեն հայտնվել էր։ Բյուրավոր ճանճերը, անմաքրությունը, կենդանիների հետ շփումը, բարձիթողի արված աղբյուրները, օճառի պակասը, այնուամենայնիվ, իրենց գործը տեսան. երևացին ընդմիջվող տենդի, դիզենտերիայի և «փոնչերի փորլուծության» հատուկ տեսակի առաջին նախանշանները։ Երեք հիվանդներ արդեն կոմային վիճակում էին։ Զինվորներն սկսեցին երեկոները խինինի օղի ստանալ, Սիվիցկին սպաներին համառորեն շատ խինին էր խմեցնում։

— Ես ուզում եմ,— ասում էր կապիտանը,— որ իմ հոսպիտալի ճակատին կարելի լիներ գրել այն հինգ բառերը, որոնք գրվել են մի ժամանակ հին աշխարհի հնագույն առողջարանների դռների վրա. «Աստվածների անունով մահվան մուտքն արգելված է»։

Հիվանդությունները սողոսկել էին ոչ միայն զինվորական զորանոցները, այլև սպայական վրանները։ Սիվիցկու «ամբուլանսում» արդեն եղել էին կայազորի բոլոր սպաները, բացառությամբ Կարաբանովի և բարոն Կլյուգենաուի։ Բժիշկը նույնիսկ չէր էլ սպասում, թե վերջինս կգա իր մոտ, խմանալով, որ պրապորշչիկը հազվադեպ է հիվանդանում և նույնիսկ Կոլիմրզայի ճահիճներում վաստակած տենդը բուժում է վայրենի չեչենի պես՝ (մի բուռ աղ և լցնում ջրի մեջ և խմում, որից հետո ման է գալիս լեռներում՝ ինչպես լիակատար ուժասպառությունը)։

Կարաբանովը, բժշկին զարմացնելով իր դիմացկունությամբ, երկար ժամանակ պինդ էր պահում իրեն, բայց, այնուամենայնիվ, չկարողացավ համբերել՝ մի անգամ երեկոյան եկավ։

— Դուք վերջինն եք կայազորում,— հայտարարեց նրան Սիվիցկին,— ի՞նչ է պատահել ձեզ։ Ինչը և բոլորի հե՞տ, հավանաբար։

Շփոթված նայելով Ագլայային՝ որը հենց այդտեղ էր, պորուչիկը ինչ-որ անհասկանալի մի բան էր երկար ծամծմում։

— Դուք ինձ, իհարկե, ներեցեք,— կարմրեց նա։— Ես ինքս էլ ուրախ չեմ... Դա ինձ բազմաթիվ անհարմարություններ ու դառնություններ է պատճառում... Եվ, սակայն, ես ելք չեմ տեսնում... Ասենք, ես կարող եմ գալ մեկ ուրիշ անգամ... Ներեցեք խնդրեմ...

— Ագլայա Եգորովնա՛,— ասաց Սիվիցկին՝ մինչև վերջ լսելով նրան։— Պորուչիկին միքստուրա տվեք այն շշից... Նա ուժեղ լույծ է ընկել...

Կապիտան Սիվիցկին, որ համոզված ամուրի էր և իր ամբողջ կյանքը նվիրել էր ռուսական զինվորին ծառայելուն, երբեմն Ագլայայի հետ վարվում էր զինվորի պես կոպիտ, բորբոքվելով, հետո ինքն էլ մոտենում էր նրան, բարեհոգությամբ խփելով թևին։

— Դե լավ, աղավնյակս։ Խնդրում եմ մի փքվեք դաժան ծերուկիս դեմ։

Խվոշչինսկայան չէր նեղանում։ Ինչո՞ւ... Նա այդ «դաժան մարդու» մեջ, ինչպես ինքը սիրում էր անվանել իրեն, տեսնում էր ոսկի, բարի սիրտ։ Այժմ ավագ բժիշկը հոգ էր տանում կայազորի համար բաղնիք պատրաստելու մասին։ Բայազետի զինվորականները վերջին անգամ լողացել էին դեռ Իգդիրում, իսկ հիմա ման էին գալիս քրտնաթաթախ ու կեղտոտ՝ հեղձուցիչ ու փոշոտ օդում։

Օրդինատոր Կիտաևսկին միայն ձեռքերն էր տարածում։

— Ալեքսանդր Բորիսովիչ,— ասում էր նա,— Թիֆլիսից մեզ մոտ երկու տակառ քլորակիր են ուղարկել, որպեսզի ցանենք դիակների վրա, իսկ օճառ պոկել անկարելի է։ Նենյուկովը մի քիչ գնել է միկիտաններից։ Սակայն ամրոցում վառարաններ չկան, գոլորշի չես կարող ստանալ։ Իսկ տաշտակներ որտեղի՞ց ճարենք։

Օգնության հասավ ծերունի գրենադյոր Խրենովը։ առվի մոտ դրեց երեք վրան, յուրաքանչյուրի մեջ մի-մի հատ քարե վառարան շարեց, շիկացրեց կաս-կարմիր, բարձրացրեց շերմությունը, հանձնարարեց թրջել վրանների պարուսինը, որպեսզի գոլորշին դուրս չգա։ Որոշեցին այսպես՝ զինվորները վրաններում պետք է միայն օճառվեն, իսկ հետո վազեն առու՝ ջրացողվելու։

Եվ ահա սկսվեց զվարճալի մի տեսարան։ Առուն հոսում էր հենց Բայազետի գլխավոր ճանապարհի երկայնքով, որ գալիս էր Դիադինի վանքից, իսկ բաղնիքի վրանների դիմաց

փռված էր աղմկոտ մեյդանը։ Ամեն ինչ խաղաղ էր ու հանգիստ. անհավատ ուռուսները, թող պատժի նրանց մեծ ալլահը, չգիտես ինչու, խփել են երեք սպիտակ վրան։

Եվ հանկարծ հոհոռոցով ու սուլոցներով այդ վրաններից դուրս են թռչում և դեպի առուն վազում սպիտակ փրփուրի մեջ կորած, շոգից քրտնած կազակները։ Ամեն մեկի կրծքին մի խաչ, ուրիշ ոչինչ։

— Դենիսկա,— բղավում է Տրյոխժոննին։— Օձդ գոնե ծածկիր. ի՞նչ է, մուսուլմանուհիները քեզ համար կին չե՞ն...

Մեյդանում սկսվեց խուճապը. շտապ հավաքեցին վրանները, դադարեց առևտուրը, ամուսինները ճիպոտներով ու փայտի կտորներով իրենց կանանց տուն էին քշում՝ արգելելով նայել բերդի կողմը։ Շատ ուտելուց դուրս ցցված փորը ցնցելով՝ թեթև վարգով, կողեկող դեպի առուն վազեց ինքը՝ գնդապետ Պացևիչը, և կատվի պես թաթով վրան ջուր ցանեց։

Մուսուլման-սպասյակները գժտվեցին։

— Հեռացի՛ր ինձնից,— պարծենում էր մեկը Տյապակի մոտ,— ես այսօր նորին պայծառափայլություն Իսմայիլ խանին եմ լողացրել...

— Իսկ իմը՝ ինքը լողացավ,— ջերմորեն պաշտպանվում էր Տյապակը։— Այնքան մաքուր էր, որ լողացնելու բան էլ չկար։

Այդ զվարճությունը տխուր վերջացավ. կեսօրին, երբ Խրենովը բաղնիքի վրանների մեջ մտցրեց էրիվանյան միլիցիայի վերջին խումբը, Բայազետ խուժեց մի հեծելակ՝ արնաշաղախ ձիու վրա։

— Քրդե՛ր,— գոռաց նա։— Քրդերը հոտը փախցրին... Եղբայրնե՛ր, երեք զինվորի սրախողխող արեցին...

Հեծյալին իջեցրին ձիուց, հետաքրքրասերները շրջապատեցին նրան։ Նա գլուխը թափ տվեց, շունչ առավ։

— Դե՛, եղբայրնե՛ր,— ասաց նա,— ես շատ բան տեսա...Նրանք չալմաներով էին, յաթաղաններով ու ճչում էին։ Մեկը սրով որ չխփե՛ց, Տերեշկայի գլուխը թռավ։ Մեկ էլ որ չխփեց, նայեցի, փռվել էր Պանտելեյը։ Մեկ էլ որ խփեց, Ստեփանը գլորվեց ցած... Ոչ մեկին չէր խնայում...

Պարզվում է, որ հակառակորդը հարևան սարերի հետևից

ուշադիր հետևել է Բայազետի շրջակայքին. բավական է թուրքերը նկատեին, որ հոտը պահպանում է միայն մի պահակախումբ, հոտի վրա բաց էին թողնում հեծյալ քրդերին։ Կարճատև հրաձգություն, յաթաղանների փայլփլոց, ապա քրդերի հարայ-հրոց, և հնազանդ ու վախկոտ հոտը սրընթաց քշվում էր լեռները։

Երեք հազար ոչխար՝ Բայազետի կայազորի մսի ամբողջ պաշարը, չաղլիկ դմակները ցնցելով, հիմա իրենք էին վազում թուրքական աղքատ բանակի սոված փորը, և գնդապետ Պացևիչը, սրարշավ գալով դեպքերի վայրը՝ ուրիշ որևէ լավ բան չարեց, բացի նրանից, որ սկսեց ծեծել զինվորներին։

Նա անցնում էր պահակախմբի շարքի երկայնքով, այն պահակախմբի, որը հենց նոր էր փրկվել մահից, և բռունցքով հասցնում էր զինվորների ծնոտներին։ Նրա սաստիկ հիշոցների արձագանքը տարածվում էր կիրճով մեկ։

— Սրիկանե՛ր,— գոռում էր նա։— Դուք զինվորնե՞ր եք։ Չկարողացա՞ք պահպանել հոտը...

Կապիտան Շտոկվիչը, թամբի վրա մինչև վերջ ծխելով գլանակը, դանդաղ մոտեցավ Պացևիչին։

— Ադամ Պլատոնովիչ,— անբարյացակամությամբ ասաց նա,— չնայած ձեր նկատմամբ ունեցած իմ հարգանքին, պետք է ասեմ, սակայն, որ զինվորները ոչնչով մեղավոր չեն... Եթե դուք կազակներին չհրամայեիք հետ քաշվել Թոնդրակի լեռից, ապա նման բան չէր լինի։ Իսկ հոտը փախցնելու պատասխանատվությունն ընկնում է միայն ձեզ վրա։

Կապիտան Եֆրեմ Իվանովիչ Շտոկվիչը՝ չոր ու կարիերիստ մի մարդ, գուցե առաջին անգամ ամբողջ կյանքում որոշեց անկեղծորեն հայտնել իր կարծիքը, և դա սթափեցնող ներգործություն ունեցավ Պացևիչի վրա. նա զզվանքի արտահայտությամբ թաշկինակով սրբեց ձեռքը և ներողություն խնդրեց զինվորներից։

— Ներեցեք, եղբայրնե՛ր։ Ծառայություն է... Ես չէի ուզում, պարզապես տաքացա... այդպես ստացվեց... Մի՛ բարկացեք...

Գնդապետ Պացևիչը չէր ցանկանում վերադառնալ ամրոցի պաշտպանության՝ դեռևս Խվոշչինսկու կողմից մշակ-

ված հին պլանին, որպեսզի չխոստովանի իր նախկին կարգադրությունների անհեթեթությունը։ Կազակների փոխարեն Թոնդրակի լեռան կողմերն ուղարկվեցին ստավրոպոլցիների և զրիմցիների հինգերորդ, վեցերորդ և ութերորդ վաշտերը՝ այդ նույն Խվոշչինսկու ընդհանուր հրամանատարությամբ։

Վերջին պահին շտաբս-կապիտան Նեկրասովը, որի կարծիքի հետ Պացևիչին դժվար էր հաշվի չնստել, վճռականորեն պնդեց, որ հեծյալ պարեկներ ուղարկվեն Վանի և Դիադինի ճանապարհները։

Եվ այդ ամենից հետո, չնայած հոտը փախցնելուն, ամբոցում հանգիստ շունչ քաշեցին։ Բայց արդեն զգացվում էր մսի մեծ պասի հեռանկարը. և միայն այժմ գնդապետ Պացևիչը սթափվեց ու հրամայեց հաշվել կայազորի պարենի պաշարը։ Պարզվեց, որ այնքան էլ առատ չէ. հարյուր քսանվեց փութ գարու ալյուր, երեք արկղ պահածո՝ սպաների համար, երկու պարկ շաքար և տասներեք պարկ պաքսիմատ։

— Մենք արդեն սովից սատկում ենք,— շփոթված ասաց Պացևիչը և մեկեն ուտել ցանկացավ։— Ինչո՞ւ մինչև հիմա ինձ ոչ ոք ոչինչ չի զեկուցել այդ մասին։ Չէ՝ որ ես չեմ կարող հետևել ամեն ինչի...

Կարաբանովին կանչեցին Շտոկվիչի մոտ։

— Պարոն պորուչիկ,— ասաց Շտոկվիչը՝ կատվի մի մոլորված ձագ գրկած, հետ-առաջ անելով սենյակում,— մինչև հիմա ամբոցը մթերքներով մատակարարելու հարցով զբաղվում էր պրապորշչիկ Լատիշևը։ Ես չգիտեմ, ինչի մասին է մտածում այդ պատվական, համեստ գատանին, բայց զինվորները շուտով ուտելիք չեն ունենա։ Ինձ թվում է, որ Լատիշևը չի կարողանում բանակի պարենավաճառների հետ բանակցություններ վարել, այդ պատճառով էլ առաջարկում եմ ձեզ առաջիկա երեք օրվա ընթացքում ապահովել ամբոցի պարենի մատակարարումը։

— Բայց ես,— վայրկենապես բռնկվեց Կարաբանովը,— կազակների հարյուրապետ եմ, իմ ի՞նչ բանն է, թե երբ և ինչպիսի պաքսիմատ պետք է բերեն Իգդիրից։ Ես իմ ամբողջ կյանքում ոչ մի ինտենդանտի ձեռք չեմ մեկնել և համարում եմ, որ մեծ Սուվորովը իրավացի էր, երբ ասում էր, որ տասը տարի ծառայած ուղածդ ինտենդանտին կարելի է դատապարտել առանց դատարանի։

— Ինչ ուզում եք ասեք,— անհոգդոգդ ասաց պարետը,— և ինչ ուզում եք արեք, սակայն բերդը պետք է ապահովեք պարենով...

Կարաբանովը զայրացավ, որ իրեն սեպի նման խցկում են ամեն մի անցք և գնաց Լատիշևի մոտ։

— Ես ձեզ մոտ եմ եկել,— ասաց պորուչիկը՝ հոգոց հանելով։— Ձեր մասին, պրապորշչիկ, բոլորն ասում են, որ ազնիվ-ազնիվ եք։ Որ դուք այսպիսին եք և այն։ Ձեզ գովում են, հա գովում։ Սակայն ամեն ինչից երևում է, որ կայազորում արդեն ձանձրացել են ձեր ազնվությունն ամեն օր հացի վրա քսելուց։ Եվ ահա ինձ են ընտրել։ Դուցե ես ձեզանից ավելի պակաս ազնիվ եմ, սակայն դրա փոխարեն՝ և պակաս համեստ քան դուք... Դե, բաց արեք ձեր պահեստները։

Պրապորշչիկը ձեռքից ցած գցեց ինչ-որ հաշիվներ ու անդորրագրեր։ Անդրեյը տեղն ու տեղը ճմռթեց դրանք և, Լատիշևին խիստ սարսափահար անելով՝ շպրտեց սեղանի տակ։

— Դրանք պետք չեն,— ասաց Կարաբանովը։— Կայազորին հարկավոր է պաքսիմատ, որ ուտեն, և ոչ թե փափուկ թղթեր, որպեսզի... սակայն, պարդոն։ Մեզ մնում է միայն գրոսբուխներ ունենալ... Ո՞վ է Բայազետում գլխավոր մատակարարը։

— Սալախ Աղա-Մամուկովը,— բացատրեց պրապորշչիկը։— Նրան այս ժամին միշտ կարելի է գտնել դուքանում։

— Լա՛վ։ Հիմա կգնամ և արյունլվա կանեմ նրա դունչը։ Դուք գոնե ասացեք, պրապորշչիկ, ինչքա՞ն պետք է կշռի պաքսիմատը։

— Այն պետք է լինի ահա այսքան,— Լատիշևը ցույց տվեց ափը։— Իսկ ինչքան պետք է կշռի՝ չգիտեմ։

— Լսե՛ք, պատանի,— արտասանեց Անդրեյը կշտամբանքով,— չէ՞ որ մենք ձեզ հետ միասին սպաներ ենք, ռոճիկ ենք ստանում, մենք սովից չենք սատկի։ Իսկ զինվորը ապրում է նրանով, ինչ տալիս են իրեն։ Դուք ի՞նչ սպա եք,

Եթե այդպես վատ եք հոգ տանում զինվորի նկատմամբ... Ամոթ է։

Դուռը չրխկացնելով՝ պորուչիկը գնաց։ Կարաբանովն այժմ նույնիսկ ուրախ էր, որ իրեն են վստահել այդ գործը։ Եվ մոտենալով դուքանին՝ ներքնապես վառվելով սարսափելի կատաղությունից՝ նա հանգիստ տեսք ընդունեց և որոշեց վերին աստիճանի քաղաքավարի լինել։

Արևելքում ամենագլխավորը քաղաքավարությունն է, կարելի է ասել և անել ինչ ուզում ենք, բայց՝ քաղաքավարի...

— Իսկ ո՞վ է այստեղ պարոն Սալախ Աղա-Մամուկովը։

5

Զինվորի պատիվը սրբություն է
Իսկ գումակում՝ ոչ մի անիվ...

Գուրկոյի 1877 թ. հրամանը

Աղա-Մամուկովը նստած էր ճոխ բարձի վրա՝ հաստլիկ ոտքերը ծալած։ Նրա քիթը կախ ընկած էր, հետույքը՝ հաստ, ինչպես գիրացած կնոջ հետույք, աչքերը հեզաբարո և դուրս ընկած, ինչպես աչքերը մի լավ կովի, որին քիչ են ծեծում և շատ կերակրում։ Նա անուշաբույր թեյ էր խմում և մոմոում։ Երևում էր, որ տրամադրությունը վատ չէր։

Կարաբանովը նստեց նրա կողքին և թեյ խնդրեց։

— Պարոն Աղա-Մամուկով,— ասաց նա թեթև գլուխ տալով,— դուք կարծեմ պատիվ ունեք լինելու Բայազետի կայազորի գլխավոր մատակարարը։

Շոյված պարենավաճառը սկսեց ղունղունալ, ինչպես կուշտ կերած աղավնին էգ աղավնու առջև։

— Իսկ ես,— շարունակեց Կարաբանովը՝ զարմանալով ինքն իր վրա, որ բռունցքով չի տվել այդ գիրացած դնչին,— պատիվ ունեմ ձեզանից ընդունելու պարենը՝ Բայազետի կայազորի համար։

— Բայց վեհատես Լատիշևը...

— Վեհատես Լատիշևը,— հանգիստ ասեց Կարաբանովը,— Պացևիչի կողմից դատի է տրվում այն բանի համար, որ կաշառք է վերցրել ազնիվ պարենավաճառներից։

... Ա՛յ-ա՛յ-ա՛յ,— վշտացավ Աղա-Մամուկովը,— այդպիսի երիտասարդ ու գեղեցիկ մարդ, բայց արդեն... ո՞վ կարող էր մտածել։

— Այո՛, այդպես,— վճռականորեն ասաց պորուչիկը։— Իսկ հիմա գնանք պահեստ և ստուգենք եղած պարենը։

Այն բանից, թե պարենավաճառը ինչպես էր ձգձգում թեյ խմելը, Անդրեյը գլխի ընկավ, որ նա ուղղակի չի ուզում իրեն պահեստ տանել, որտեղ Լատիշևը ակներևաբար ոչ մի անգամ չէր եղել։ Սակայն պարոն պորուչիկը քաղաքավարի էր, գովում էր այստեղի բարքերի համեստությունը, իր գոհունակությունն էր հայտնում Աղա-Մամուկովի հետ ծանոթանալու համար. կանանց մասին նա խոսում էր, ինչպես ձիերի մասին՝ հանգամանորեն քննարկելով նրանց բոլոր արժանիքները։ Պարենավաճառը նորից մոմոաց. «Երկու հարյուր ռուբլի կվերցնի»,— մտածում էր նա՝ ծթացնելով լեզվով։

Պարզվեց, որ պահեստում կար ընդամենը մի քանի պարկ պաքսիմատ, և ուրիշ ոչինչ։ Կարաբանովի այն հարցին, թե որտեղ են պարենի մնացած պաշարները, Աղա-Մամուկովը չափազանց իմաստալից պատասխանեց, որ մնացածն Իգդիրում է։ Պորուչիկը պատռեց պարկը, վերցրեց մի պաքսիմատ. դա իսկապես, ինչպես ասել էր Լատիշևը, հազիվ ափի մեծության էր։

Որոշելով գործել ենթադրաբար՝ Կարաբանովը պաքսիմատը գցեց կշեռքի թաթին։

— Պարոն Աղա-Մամուկով,— ասաց նա, մատով մոտ կանչելով պարենավաճառին,— եկեք այստեղ... տեսնո՞ւմ եք։

— Պաքսիմատը տեսնում եմ։ Լավ պաքսիմատ է։ Ինքս կուտեի։

— Իսկ դուք տեսնո՞ւմ եք, որ պաքսիմատի քաշը պակաս է։

Պարենավաճառը ծուղակն ընկավ. պաքսիմատը, իսկապես, պահանջվող քաշը չուներ, բայց պարոն Աղա-Մամուկովը փորձված լկտի դուրս եկավ. նա մեկ ուրիշ պաքսիմատից մի կտոր կտրեց և դրեց կշեռքի վրա.

— Հիմա արդեն լավ է,— ասաց նա, ինքն իրեն մտածելով. «Երեք հարյուր պետք է տալ... դրա համար էլ մանրախնդրություն է անում»։

— Իսկ Իգդիրից ե՞րբ կբերվեն պարենի մնացած պաշարները,— հարցրեց Կարաբանովը։

— Էշը հիվանդ է, մի քիչ, բոլորովին մի քիչ։

— Էշերի հետ ես ոչ մի գործ չունեմ,— խիստ տոնով ասաց Անդրեյը, և Աղա-Մամուկովը մտքով էլի հարյուր ռուբլի պարգևեց նրան։— Բանակի հրամանատարությունը ձեզ փող է վճարում, և դուք պետք է ազնվորեն կատարեք ձեր պարտականությունները։ Իսկ հիմա եկեք իմ հետևից։

Ախոռների մոտով անցնելիս՝ Անդրեյը վերցրեց մեխից կախված պարանի փաթեթը, և նրանք մտան ամրոց։

— Իսկ ինչի՞ համար է պարանը,— հետաքրքրվեց Աղա-Մամուկովը, առաջ վազելով, որպեսզի նայի պորուչիկի դեմքին։

Կարաբանովը նրան տարավ միջնաբերդի մի դատարկ սենյակ, որի բարձր առաստաղի տակից ձգվում էր երկաթյա հեծան՝ կեռը վրայից կախ։ Պարանի ծայրը կախելով կեռից, Անդրեյը քաղաքավարի հարցրեց.

— Պարոն Աղա-Մամուկով, դուք կարծեմ ամրոցում էիք, երբ մենք կախեցինք մոլլային, որը փորձ էր արել վնասել մեզ։ Եվ դուք, հավանաբար, հասցրել եք պատմել ձեր կնոջը, թե սուլթանական այդ ստորաքարշ սպասավորը ինչպես էր ծիծաղելիորեն թափահարում ոտքերը...

Անսպասելիորեն պարզվեց, որ Աղա-Մամուկովը ռուսերեն վատ գիտի և ամենևին չի հասկանում, թե ինչ է բացատրում Կարաբանովը։

— Ես ձեզ կբացատրեմ, կհասկանաք,— պարենավաճառին մխիթարում էր Անդրեյը։— Այդ ամենը արվում է շատ հասարակ. սկզբից օղ են կապում, ահա այսպես... հետո օղը գցում են վզին, ահա այսպես... Տեսնո՞ւմ եք, ինչ պարզ է ամենը։ Այնուհետև օղը ձգվում է այսպես... Սակայն ես ձեզ, պարոն Աղա-Մամուկով, որոշել եմ կախել ուրիշ կերպ։ Ահա նայեք, ինչպես է դա լինելու...

Նա պարանի ծայրը գցեց Աղա-Մամուկովի ոտքին և նրան գլխիվայր ձգեց դեպի առաստաղը։ Աղա-Մամուկովը ձեռքերը թափ էր տալիս օդի մեջ, բայց դրանք հատակին չէին հասնում։ Անդրեյը պարանը ամրացրեց և սպասեց՝ նայելով պարենավաճառի կապտած դեմքին։

— Ձեզ այդպես հարմա՞ր է, պարոն Աղա-Մամուկով,— քաղաքավարի հարցրեց Անդրեյը։— Դուք գիտեք, ռուսական զինվորը միշտ չէ, որ պաքսիմատ է ուտում։ Նա այնքան է երբեմն առել, որ երբեմն նաև շիլա է ուզում։ Այո՛... Նա այնքան այլասերվել է ուտելու տեսակետից, որ սննդի մեջ օգտագործում է նույնիսկ սիսեռ ու կաղամբ։ Երբեմն նա դեմ չէ նաև օղի խմելու... Ես դնամ, իսկ դուք առայժմ մտածեք այդ մասին։

Հրաժեշտի պահին պորուչիկը ճոճեց նրան։

— Վո՛ւ-ո՛ւ-ո՛ւյ... վո՛ւ-ո՛ւ-ո՛ւյ,— սկսեց գոռալ ավազակը՝ ժամացույցի ճոճանակի նման մի պատից մյուսը տարուբերվելով։ Սակայն Անդրեյը, ուշադրություն չդարձնելով նրա վայնասունին, հեռացավ և դուռը բանալիով փակեց։

Երբ նա սկսեց ծխախոտը վառել, նրա մատների ծայրերը դայրույթից ու կատաղությունից դողում էին։ Ամրոցի հետնաբակում նրան հանդիպեցին Կլյուգենաուն և Պոտրեսովը։

— Ի՞նչ եք անում այստեղ, պարոնայք,— հարցրեց նա։

Փոշոտված Կլյուգենաուն, որը կարծես այսօր չէր էլ լվացվել, նրա առաջ բացեց ամրոցի դծագիրը, որ իր ձեռքով էր ստեղծել։

— Ահա՛, նայե՛ք, Անդրեյ Ելիսեևիչ, հարավային պատի մոտ հարկավոր է լցնել բերդախրամի զառիթափը, որպեսզի վրան թնդանոթներ դրվեն։ Այն ժամանակ հնարավոր կլինի կրակել այդտեղից, եթե թուրքերը գան Վանի կողմից։ Միայն վատ է, որ հող չկա։

Այո՛, հող գրեթե չկար։ Անդրեյի առաջ կայազորի սակրավորները՝ շինելներով, ձիերի սթարներով, իրենց ծածկոցներով և պարզապես բահերով բերում էին, որտեղից միայն կարող էին, զանազան թափոններ՝ աղբ, խճաքար, մոխիր... Այդ բոլորը խառնելով քարերի և ջնջին քանակությամբ հողի հետ, լցնում էին բերդապատի մոտ, որպեսզի հրանոթները, ինչպես բացատրում էր Պոտրեսովը, կարողանային խփել հողապատնեշի վրայից։

Մայորը Անդրեյից ծխախոտ խնդրեց և հետաքրքրվեց.

— Ինչո՞վ եք մտահոգված, պորուչիկ։

Կարաբանովը թափահարեց ձեռքը.

— Է՛խ, պարո՛ն մայոր, ինչ-որ անհասկանալի բան է կատարվում ամենուր... Չգիտեմ, դուք ինչ կարծիքի եք, իսկ ինձ թվում է, որ մենք հարկադրված կլինենք հատուցել ուրիշների սխալների համար։ Գնդապետ Պացևիչը անգիր սերտել է գեներալ Բեզակի ինչ-որ «կանաչավուն գրքույկ» և այժմ հանգիստ քնած է։ Խոսեք նրա հետ թեկուզ կես ժամ և դուք կհասկանաք, որ նա զորավար է խաղում։ Իսկ մենք, այսպիսով, նրա աղքատիկ պատկերացմամբ պատերազմ ենք խաղում։ Մանկամտություն։

— Դե, ի՞նչ արած։— Տխրությամբ համաձայնեց Կլյուգենաուն։— Ես անձամբ, պարոնայք, արդեն հաշտվել եմ այն մտքի հետ, որ ինձ վիճակված է զոհվել։

Որոշ ժամանակ լռեցին։

— Խվոշչինսկին,— զգուշությամբ ասաց մայոր Պոտրեսովը,— դեռ կարող էր փրկել դրությունը. նա հին մարտական կովկասցի է, նա ելք կգտներ։

— Դե լա՛վ,— Անդրեյը շպրտեց ծխախոտի մնացորդը,— ես գնամ։

— Ո՞ւր եք գնում, պորուչիկ։

— Ես, պարոնայք, վաղուց եմ ուզում խոսել։ Եվ ոչ թե որևէ մեկի, նույնիսկ ոչ ձեզ, այլ հենց Խվոշչինսկու հետ։

Նա այդ պահին կարծես չէր մտածում Ագլայայի մասին և, մտնելով տաղավար, նույնիսկ չնկատեց նրա բացակայությունը։ Ռազմական դիրքերից հենց նոր միայն տուն վերադարձած Խվոշչինսկին զարմացավ Կարաբանովի երևալուց, թեև նրան դիմավորեց սիրալիր։

— Պարոն պորուչիկ,— նա ալարկոտ ժպտաց Անդրեյին,— հավանաբար եկել եք ինձ մոտ, որպեսզի բողոքե՞ք մեկից, որը նեղացրել է ձեր կազակներին։ Ես կարծես չե՞մ սխալվում։

Կարաբանովը գլուխ տվեց շեմից։

— Նիկիտա Սեմյոնովիչ,— ասաց նա,— դուք երևի գիտեք, որ ես ձեզ... չեմ սիրում։

Խվոշչինսկին ձեռքով ցույց տվեց աթոռը՝ առաջարկելով նստել։

— Ես դա չգիտեի, բայց այժմվանից կիմանամ, պորուչիկ,

և շնորհակալություն ձեզ անկեղծության համար։ Թեև ես չեմ կարողանում հասկանալ իմ անձի նկատմամբ ձեր անհանդուրժողության պատճառը, քանի որ ձեր երիտասարդությունը ձեզ երջանկության ավելի շատ իրավունք է տալիս, քան ինձ։

— Եվ այնուամենայնիվ,— շարունակեց Անդրեյը մռայլվելով,— ես չեմ կարող հիմա որևէ ուրիշ մարդու անուն տալ, որի նկատմամբ ես տածեի այնքան հարգանք, որքան ձեր։

— Նստե՛ք, պորուչիկ, մի կանգնեք։ Հիմա թեյ կլինի։

Անդրեյը նստեց։ Սկսեց խոսել։

Գնդապետը ուշադրությամբ լսում էր նրան։ Գլխով էր անում։

Հետո ասաց.

— Դուք մտածում եք գրեթե ինձ նման։ Եվ ինձ համար դա հաճելի է։ Բայց ասացեք, սիրելի Կարաբանով, ես հիմա ի՞նչ կարող եմ անել։ Եթե նույնիսկ բացահայտ պայքար մղեմ գնդապետ Պացևիչի ռազմական «հանճարի» դեմ, ապա Թիֆլիսում անկասկած կգտնվեն մարդիկ, որոնք կասեն, թե Խվոշչինսկին այդպես է վարվել միայն վրիժառության ու նախանձի զգացմունքից դրդված։

— Բա՞յց...

— Ո՛չ, ո՛չ, սպասե՛ք,— անմիջապես ընդհատեց նա Կարաբանովին,— լսեք ինձ մինչև վերջ։ Ես հասկանում եմ. որ այսպիսի պարագաներում, որոնց մեջ մենք ձեզ հետ միասին գտնվում ենք հիմա, հարկավոր է մի կողմ գցել բոլոր անձնական նկատառումները։ Համաձայն եմ ձեզ հետ։ Եվ ես դա արել եմ։ Ես արդեն խոսել եմ Պացևիչի հետ, փորձել եմ նրա վրա ներգործել Շտոկվիչի միջոցով։ Նույնիսկ Իսմայիլ խանի միջոցով։ Սակայն մեր գնդապետը՝ ահա։

Նիկիտա Սեմյոնովիչը մատների կոճերով խփեց կաղնու սեղանի եզրին և տխուր ավարտեց.

— Միայն մի բան կարող եմ ասել, պորուչիկ. շուտով սպայական խորհրդակցություն կլինի և թող նա էլ որոշի այն հարցը, թե հետագայում ինչ է հարկավոր ձեռնարկել կայազորում։

Կարաբանովը երկար լռում էր՝ մտածելով Բայազետի ճակատագրի մասին, հետո հարցրեց.

— Ասացե՛ք, պարոն գնդապետ, մի՞թե մենք միշտ այսպես ենք կռվել։

Խվոշչինսկին մտածմունքի մեջ ընկավ.

— Այո՛, հավանորեն միշտ... Չէ որ ամեն օր պատերազմներ չեն լինում,— շարունակեց նա՝ մի քիչ հապաղելով։— Սկզբից կռվի դաշտ են խցկվում ավելի շատ «յաբախտ», վրիպում վրիպումի հետևից թույլ տալով։ Վերջապես սովորում են։ Թշնամուն խփում են ինչպես հարկն է։ Սակայն նայում ես, պատերազմն էլ արդեն վերջանում է։ Բաց թողած սխալների մասին չանում են լռել։ Պատմաբանները ստում են։ Ռազմական մասնագետները ցանկանում են մոռանալ հին անհաջողությունները և խրվում են մանրունքների ուսումնասիրության մեջ։ Վրա է հասնում նոր պատերազմը, և դարձյալ հին սխալները նոր ձևով են երևան գալիս։ Կամ ընդհակառակը. նոր սխալները՝ հին ձևով։ Ռազմական գործողությունների մասին զեկույցները, պորուչիկ, գրում են խորամանկորեն։ Հիմա ընթերցողն էլ հավատում է... Ես մինչ այդ չեմ ապրի,— ավարտեց Խվոշչինսկին տխրությամբ,— բայց դուք, Կարաբանով, դեռ կկարդաք ճշմարտությունն այս պատերազմի մասին։

Անդրեյի թիկունքում լսվեց Ագլայայի ձայնը.

— Թեյը պատրաստ է։ Ախ, ներեցե՛ք, այստեղ էլի ինչ-որ մարդ կա։

«Ինչ-որ մարդ,— բարկացած մտածեց պորուչիկը։— Կարող էր մեջքիցս էլ գլխի ընկնել ով է...»։

— Գնանք թեյելու,— առաջարկեց Խվոշչինսկին՝ վեր կենալով։— Իմ կինը հրաշալի օղաբլիթներ է պատրաստել։ Ճիշտ է, գարուց, բայց չէ որ ցորենի ալյուր չկա... Դուք ոչ մի տեղ չե՞ք շտապում։

— Չէ՛, ոչ մի տեղ,— համաձայնեց Անդրեյը՝ նայելով ժամացույցին, և մտածեց՝ արդյո՞ք լավ է ամրացրել պարանը։

Սեղանի շուրջ նստած՝ նրանք իրար նայեցին։ Ծանոթ ժպիտը շոշափեց Ագլայայի շուրթերի եզրերը։ Նա տնային զգեստով էր, մինչև արմունկները բաց՝ նրա ձեռքերը թեթև սահում էին սեղանի վրայով, ինչ-որ բան վերցնում, շտապում։ Դա կանացի ձեռքերը, ընտանեկան ջերմությունը և

տնային անդորրը ներկայացնող մի կախարդիչ պատկեր էր, որ Կարաբանովը չէր ճաշակել իր ողջ կյանքում։

— Ահա ջուրը,— շարունակելով իր միտքը՝ ասաց Խվոշչինսկին, երբ Ագլայան նրան պարզեց գավաթը։— Ոչ ոք չի մտածում այն մասին, որ մենք գտնվում ենք օտար քաղաքում։ Որ մի գեղեցիկ օր ջուրը կտրող է թունավորված լինել, և այն ժամանակ...

— Դու միշտ սիրում ես չափազանցել,— ասաց Ագլայան՝ նայելով Անդրեյին, և ժպիտը նորից դիպավ նրա շրթունքներին։

— Իսկապես,— պատասխանեց Անդրեյը՝ օգնության հասնելով գնդապետին։— Եվ ջրի մասին նույնպես ոչ ոք չի մտածում։ Ես մեծ հույսեր եմ կապում այդ ժողովի հետ։ Չէ որ թուրքերը բոլորովին մոտ են։

— Իսկ դուք գիտե՞ք որտեղ են,— հարցրեց Խվոշչինսկին։

— Ես նրանց ռազմաճամբարին հանդիպեցի Վանի մոտակայքում։

— Դա եղել է ոչ այսօր։ Իսկ այսօր եկավ իմ հին լրտես Հաջի Ջամալ բեկը և ասաց, որ քրդերը իրենց ռազմաճամբարը տեղավորել են արդեն Բայազետից երեսունհինգ վերստի վրա...

— Ուրեմն...— ուզում էր սկսել Ագլայան։

— Ուրեմն,— կտրուկ ընդհատեց նրան Խվոշչինսկին,— գնդապետ Պացևիչը կարող է քեֆ անել։ Քրդերը դեռ չեն մտել նրա ննջարանը...

Կարաբանովը դուրս եկավ տաղավարից Ագլայայի հետ միասին։ Նայեցին մեկը մյուսին։ Այդպես նայում են մարդիկ, որոնք լավ գիտեն իրար։ Եվ այդպիսի հայացքները հասկանալի են լինում միայն նրանց։

— Դե,— ասաց Անդրեյը,— ինչո՞ւ էիր ժպտում։

— Այնպես։

— Այնուամենայնի՞վ...

— Չեմ թաքցնում, ես ուրախ եմ...

— Ինչի՞ համար։

— Դու ինքդ էլ գիտես ինչի՝ ուրախ եմ քեզ տեսնելու։

— Արդեն չե՞ս բարկանում։

— Ո՛չ։ Դիտես, ես սեփականատեր եմ դառնում։ Իսկ դա, հավանաբար, լավ չէ... Դրա համար էլ չեմ բարկանում։

— Ագլայա,— Անդրեյը թեթևակի շոշափեց նրա ձեռքը։

— Ի՞նչ է... Ի՞նչ է, սիրելիս։

Անդրեյը ծիծաղեց.

— Մի օր ես արագությամբ կքշեմ իմ Լորդը,— ասաց նա,— և սրընթաց կփախցնեմ քեզ, վայրենի քրդի պես կգցեմ թամբի վրա և կսլանամ հեռո՜ւ-հեռո՜ւ։ Այնտեղ էլ ես կդառնամ քո տերը և կանեմ քեզ հետ ինչ կամենամ։

— Հիմար,— պատասխանեց Ագլայան,— առանց այն էլ դու ես իմ տերը։ Եվ դրա համար բոլորովին պետք չէ քուրդ լինել։ Ես սիրում եմ քեզ... Ի՞նչ արած։ Դե ես գնացի, ինձ սպասում է Սիվլիցկին։

— Սպասի՛ր։ Եվ դու ոչինչ չե՞ս ուզում ասել ինձ։

— Իսկ ի՞նչ կուզենայիր լսել ինձանից։

— Ե՞րբ,— հարցրեց նա՝ գլուխը կախելով։

— Երբ ուզես։ Նա չի լինելու մինչև վաղը։

Երբ Կարաբանովը բացեց դուռը, տեսավ, որ Աղա-Մամուկովն արդեն նստած է հեծանի վրա, հենց առաստաղի տակ՝ ինչ-որ հրաշքով դուրս պրծնելով անհարմար դրությունից,— նստած էր նա այնտեղ սևացած ու զզզված, ինչպես ծերացած ագռավը այրված ոստի վրա։

— Հինգ հարյուր ռուբլի,— նա խզխզոցով վերևից ավելացրեց ևս մի հարյուրանոց։— Ավելին ոչ մի կերպ չեմ կարող... Առանց այն էլ կողոպտել են։ Ոչ ոքի այդքան չեմ վճարել։

Կարաբանովն ահա թե ինչ արեց՝ իր հարյուրյակից երկու կազակ վերցրեց և կարգադրեց պարենավաճառին նստեցնել ձիու վրա, հետո հենց Աղա-Մամուկովի ներկայությամբ հանձնարարեց նրանց.

— Կհասցնեք այս սրիկային Իգդիր, փախուստի դիմի՝ կկրակեք։ Առանց պարենի չվերադառնաք։ Ամեն ինչ հասկանալի՞ է, կազակնե՛ր։

Հաջորդ օրը նրան հանդիպեց Լատիշևը։

— Հե՞, ինչպե՞ս է,— աշխույժ սանձարձակությամբ հարցրեց նա։— Համաձայնության եկա՞ք։

Պրապորշչիկի ձեռքը (զինվորական պաքսիմատի մեծությամբ կախվեց օդում։

— Ես,— սուլոցով ասաց Անդրեյն ատամների արանքից,— կարող եմ հարգել մաքրակյաց աղքատությունը։ Կարող եմ ներել մարդկանց ամենացածր արատները։ Բայց ես չեմ կարող տանել ստորությունը, և հետ քաշեք ձեր կեղտոտ թաթը... Նա ձեզ ինչքա՞ն էր տալիս։ Պատասխանե՛ք։

Լատիշևի դեմքն այլայլվեց, նա տեղնուտեղը, համարյա Անդրեյի աչքի առաջ, մի ակնթարթում կարծես ծերացավ և խղճուկ տեսքով մռթմռթաց.

— Առաջին անգամ է... ազնիվ խոսք։ Առաջին անգամ... կյանքում...

Կարաբանովը շուռ եկավ և հեռացավ։ Հետո կանգ առավ։

«Իսկ ինքն ո՞ւր է գնում...»։

Եվ հանկարծ իրեն բռնեց այն բանում, որ գնում է մայոր Պոտրեսովի մոտ. նա ցանկանում էր տեսնել ազնիվ մարդու։

6

Պրապորշչիկ Լատիշևը կախվեց առաջին հարյուրյակի ախոռում։ Վատնինը լսեց, թե ինչպես էին խրտնած ձիերը ախոռում։ Վատնինը լսեց, թե ինչպես էին խրտնած ձիերը բախվում, վազեց այնտեղ, վայրկենապես քաշեց սուրը բախվում, վազեց այնտեղ, վայրկենապես քաշեց սուրը և մի հարվածով կտրեց պարանը։ Հետո, պրապորշչիկի վրա մի դույլ ջուր լցնելով, նստեց կողքին, շնչելով ասաց պատանու այրվող ականջին.

— Եթե ասենք սիրածդ աղջիկը քեզանից հեռացել է ուրիշի մոտ, սատանան նրա հետ։ Եթե օրինակի համար, թախիծն է հոգիդ ուտում, մարդկանց մոտ գնա, օղի խմիր։ Ինձ մոտ արի, դեսից դենից զրույց կանենք։ Ես, եղբայր, շատ բան եմ տեսել։

— Շնորհակալություն, սակայն դա չէ պատճառը,— ասաց պրապորշչիկը և օրորվելով հեռացավ ախոռից։

Վատնինն իր հարյուրյակով սլացավ դեպի Դիադին, կարճատև բախում ունեցավ քրդերի հեծելազորի հետ, որի ժամանակ գնդակով ծակեցին նրա ձախ ձեռքը՝ արմունկի մոտ։ Քրդերի վրա զայրանալով՝ Վատնինը կազակներին կար-

գադրեց հրացաններն ուսերին գցել և աշխատել միայն սրբրով։

Երեկոյան Ագլայան բինտով փաթաթում էր նրա ձեռքը և, երբ հարյուրապետը գնաց, Ագլայան ասաց Սիվիցկուն.

— Ինչ գվարճալին է, ճիշտ չէ՞։ Այնքան վիթխարի է և տաք՝ ինչպես վառարան։ Ինձ նույնիսկ թվում է, թե նրա կողքին լինելը միշտ էլ շատ հարմարավետ է...

— Վատնինը հիանալի կազակ է,— արձագանքեց Սիվիցկին։— Եվ շատ մաքուր մարդ է։ Գրեթե երեխա։ Կլյուգենաուն և նա՝ ահա այդ երկուսն են կայազորում, որոնց ես շատ եմ սիրում։

— Այդ ի՞նչ Կլյուգենաու է,— հարցրեց Ագլայան։

— Դե այն խանդավառ տարօրինակ մարդը՝ ակնոցով։ Եթե ձեզ մոտենա բոլորովին անծանոթ մի մարդ և հարցնի՝ ինքն արդյոք չի՞ կարող օգտակար լինել ձեզ, իմացեք, որ հենց գա էլ Կլյուգենաուն է։

— Ա՜-ա՜-ա՜,— բացականչեց Ագլայան,— հիշում եմ։ Կարծեմ նա ինժեներական պրապորշչիկ է կամ դրա նման ինչ-որ բան։ Միշտ բզբզում է աղբի մեջ և, երբ ես անցնում եմ մոտով, հեռվից սկսում է ինձ գլուխ տալ։

— Ա՜յ, դա էլ հենց բարոնն է,— ծիծաղեց Սիվիցկին։— Այն տարօրինակ կիսաղքատ բարոնը, որը կշտանում է միայն աստղերի լույսով, իր ռոճիկը ծախսում է զինվորների վրա և երջանիկ է զգում իրեն, եթե դուք պատահմամբ ասեք նրան. «Ֆյոդոր Պետրովիչ, ես ուրախ եմ ձեզ տեսնելու համար...»։

— Լավ է, եթե այդպես է։ Հենց տեսնեմ, կասեմ՝ ես ուրախ եմ ձեզ տեսնելու համար...

Հանդիպումը տեղի ունեցավ պատահաբար։ Կանացիական հետաքրքրասիրությունը, հաղթահարելով վախը, Ագլայային ստիպեց մի անգամ երեկոյան հրել բերդի անցումներից մեկի նեղ դռնակը։ Խոնավության և բորբոսի հոտը փչեց երեսին։ Նա լուցկի վառեց։ Նեղ, ոլորապտույտ սանդուղքը տանում էր դեպի վեր։ Աստիճանները ծածկված էին փոշու հաստ շերտով, որի վրա հստակ երևում էին ինչ-որ մեկի ոտնահետքերը։

— Սարսափելի է,— փշաքաղվեց Ագլայան և, ամբողջ մարմնով դողդողալով, սկսեց բարձրանալ սանդուղքով։ Լուցկու աղոտ լույսը խավարից պոկում էր մի պտույտը մյուսի հետևից։ Նա բարձրանում էր ավելի ու ավելի վեր, հավաքելով զգեստի փեշերը, դողդոջուն և գոհ իր համարձակության գիտակցությունից։

Եվ հանկարծ.

— Է՜, ո՞վ է այստեղ։

Նրա առջև բացվեց մի բոլորաձև գմբեթ և ընդառաջ եկավ մի կերպարանք։ Նեղ սոֆիտներից ներթափանցեց լուսնի լույսը, և փայլեցին ակնոցի ապակիները։

— Մի՛ վախեցեք, տիկի՛ն,— ասաց Կլյուգենաուն։— Այստեղ ինձանից բացի ոչ ոք չկա։

Ազատվելով քարացման զգացողությունից՝ Ագլայան մոտեցավ նրան։

— Ֆյոդոր Պետրովիչ,— ասաց նա՝ շունչ առնելով,— ես... ուրախ եմ... ձեզ տեսնելու...

Պրապորշչիկը խոնարհվեց, պոռթկումով համբուրեց նրա ձեռքը։

— Դա ճի՞շտ է,— հարցրեց նա՝ արդեն երջանիկ զգալով իրեն։

— Դե իհարկե։ Ձեր մասին այնքան լավ բաներ են ասում։

— Մի՛ հավատացեք դրան,— ցավով ասաց նա՝ բաց թողնելով կնոջ ձեռքը։— Մարդը պետք է ինձանից լավ լինի։ Ես դեռ չեմ հասել կատարելության ստվերին անգամ։ Մեզանից յուրաքանչյուրին դժվար չէ իր համար կյանքի Ղուրան ստեղծել, սակայն հաճախ որքան դժվար է կատարել նրա պատվիրանները։ Դուք հիմա ասացիք, որ ուրախ եք ինձ տեսնելու համար։ Ես մարդ եմ և պետք է բարի լինեմ... Հասկանում եմ։ Բայց մի՞թե ես կհամաձայնեմ, որ այդ ուրախությունը հիմա պատկանի ուրիշի...

Ագլայան, կկոցելով աչքերը, հաճույքով կուչ եկավ, ինչպես կատուն կրակի առջև։

— Դուք գիտեք, Ֆյոդոր Պետրովիչ...— ասաց նա,— չգիտեմ ինչու, ես ձեզ հենց այդպիսին էլ պատկերացնում էի... Միայն ասացեք, ի՞նչ եք անում դուք այստեղ։ Մենակ։ Մթության մեջ...

Պրապորշչիկը մինչև շշնջյունի աստիճան ցածրացրեց ձայնը.

— Զզարմանաք, ես ոգիներ եմ կանչում...

— Իսկ մի՞թե այստեղ ոգիներ կան։

Պրապորշչիկը գլխով արեց.

— Դժբախտաբար... երևացել են...

— Իսկ ի՞նչ ոգիներ են դրանք։

Կլյուգենաուն իր կլոր, ճերմակ դեմքը մոտեցրեց նրան, շրթունքները կիսաբաց էին։

— Դա եղել է շատ վաղուց,— դանդաղ ասաց նա։— Այնքան վաղուց, որ դուք չեք կարող պատկերացնել... Այն ժամանակ կիրճերում սուլում էին նետերը, բոցկլտում էին խարույկները, և կանայք լաց էին լինում։ Եվ թխամորթ ստրուկները տաշում էին քարերը։ Բայազետը բարձրացավ գերի ստրուկների ոսկորների վրա, և նայեցեք այստեղ՝ տեսնո՞ւմ եք, թե պատերի վրա ինչպես են գլորվում նրանց աբյան կաթիլները։ Միջնաբերդը լավ հիշում է նրանց տընքոցը...

Կլյուգենաուն ձեռքը պարզեց կիսախավարի մեջ. պատի վրա ինչ-որ մուգ բան էր դանդաղ ծորում։

— Ես վախենում եմ,— ասաց Ագլայան։

— Մի՛ վախեցեք, մարդ պետք է համարձակ լինի, այլապես հարգանք չի ունենա... Հետո,— շարունակեց Կլյուգենաուն մի քիչ լռելով,— Իսկ փաշան մեռավ։ Եվ նրան արդեն չէին ուրախացնում պատերի հեքիաթային խճանկարները, նրա լսողությանն արդեն չէր հասնում շատրվանների շրաշիթերի քչքչոցը։ Սակայն մահից առաջ նա հրամայեց թունավորել իր կանանցից ամենագեղեցիկին։ Հարեմի գեռատի աստղ Զիյա-Զիյին։

— Դա հեքիաթ է,— ժպտաց Ագլայան։— Դուք որտեղի՞ց կարող էիք իմանալ նրա անունը։

Պրապորշչիկը լուրջ պատասխանեց։

— Դուք կարող եք չհավատալ ինձ, բայց ես երեկ շուկայում լսեցի նրա անունը՝ Զիյա-Զիյ... Եվ հիմա նա կգա։ Սակայն նախ մենք կտեսնենք փաշային...

Կլյուգենաուն սեղմեց Ագլայայի ձեռքը, և կինը հանկարծ լսեց ուղահավատներին աղոթքի կանչող մուեզզինի հեռավոր բացականչությունները։ Սպան Ագլայային մոտեցրեց մի ոչ մեծ պատուհանի, մի կողմ քաշեց շրջանակի կապարե ապակեկալը։

—Նայեցե՛ք այնտեղ, ներքև... Դուք որևէ բան տեսնո՞ւմ եք։

Ագլայան, ինչպես իրեն թվաց, սարսափելի բարձրությունից տեսավ մզկիթի ներսը։ Գմբեթից իջնում էին սրի նման կորացած կամարների գունազուրկ սյուները, որ բարակում էին ներքևում։ Նա տեսավ արաբական ոսկեզօծված նախշերի շարքերը, պատերի հախճասալերի խճանկարները և Ղուրանի՝ շրջանակների մեջ վերցրած սուրահները։

— Իսկ այնտեղ ի՞նչ է— հարցրեց Ագլայան։ Նրան անհասկանալի էր պատի մեջ խոր մտցրած պահարանի դերը։

— Դրա մեջ,— շշուկով պատասխանեց պրապորշչիկը,— պահվում են ղուրանները, իսկ կեղծ դուռը բացվում է դեպի Մեքքայի կողմը... Նայեցե՛ր, դուք լույս տեսնո՞ւմ եք։

Մի աղոտ լույս թթթռաց ներքևում, մոլորվեց սյուների արանքում, և խավարի միջից երևաց մինչև կրունկները հասնող երկար խալաթով ու շալմայով մի մարդու կերպարանք։ Ագլայային, չգիտես ինչու, ծանոթ էին թվում և՛ այդ կերպարանքը, և՛ այդ գոռոզ, դանդաղ քայլվածքը։ Այդ մարդը հատակին փռեց փսիաթը և երկար ժամանակ ճակատով սեղմվեց գետնին։ Նա ձեռքերը պարզած աղոթում էր։

Մուեզզինի բացականչությունները կամաց-կամաց մարում էին...

— Գնա՛նք այստեղից,— խնդրեց Ագլայան։

— Կամա՛ց,— շշնջաց Կլյուգենաուն,— հիմա կգա կախարդական Զիյա-Զիյը...

Եվ իսկապես, մթության միջից հանկարծ երևաց կնոջ մի թեթև ստվեր. կամացուկ սահելով մռայլ սյուների միջով՝ նա մոտեցավ փաշային, և փաշան վեր կացավ՝ դանդաղ ու վեհապանծ...

— Դու ինչո՞ւ երեկ չեկար,— խստորեն հարցրեց Իսմայիլ խանը։— Մուեզզինն արդեն գնացել էր քնելու, իսկ ես անընդհատ քեզ էի սպասում։

Աղջիկը տղայի նման ծռմռվեց, նեղ կոնքերի շարժումով

վեր քաշեց ցած իջած անդրավարտիքը, հետո մի փոքր հետ գցեց չադրան։

— Սակայն, մեծ խան,— շշնջաց նա,— Հաջի Ջումալ բեկը երեկ դեռ չէր վերադարձել Վանից։

— Ուրեմն նա վերադարձել է այսօ՞ր,— հարցրեց փոխգնդապետը։

— Այո, մեծ խան, միայն այսօր։

— Նա ի՞նչ է հանձնարարել հաղորդել ինձ։

Զիյա-Զիյը ձեռքը կոխեց հագուստի մեջ և հանեց ճթճթան մի ծրար։ Իսմայիլ խանը բացեց նամակը, թրքուհուն կարգադրեց պահել ճրագը։ Նամակում գրված էր.

Գրչի զարդ թող ծառայի ալլահի
անունը։ Երջանկության ժամանակը թող միանա
գվարճության և ուրախության հետ։
Մեծ է ալլահը։

Թանկագին իմ խան, ճուսով եմ, Դուք չեմ մոռացել Ձեր գեներալին, որ Նիժեգորոդյան դրագոնների փառավոր հաղթանակների էր տանում, երբ Դուք դեռ պորուչիկ էիք։ Եվ Դուք գիտեք, որ ես, ինչպես և Դուք, հավատով և ճշմարտությամբ ծառայում էի Ռուսաստանի գահին, որն ինձ վարձահատույց էր լինում պատիվներով ու հարստությամբ։

Օ՜, դարը մոլորություն... Մենք բոլորս, և ես նույնպես, սպիտակելով Ղուրանի վրա տմենլուց, տեսնում էինք միայն մեռած տառը, իսկ աստվածային խոր նշանակությունը վրիպում էր մեզանից։ Ես երջանիկ եմ այսուհետև, որ շարիաթի խելացի մեկնաբանությունը բաց արեց իմ աչքերը։ Մղելով ինձ անհավատների դեմ պայքարի ուղին՝ ես Ձեզ, իբրև գերիմաստ «Ջիֆրայի» աշակերտի, խորհուրդ եմ տալիս հետևյալ գլուխներից։ 76-րդ գլխի 39-րդ տողում մարգարեն մեզ սովորեցնում է. «Եթե դուք խորամանկություն ունեք անհավատների դեմ, ապա այն իրագործեք»։

Հասկացեք վերջապես, թանկագին խան, որ նրա պատվիրանների տարածումը անիմաստ է, քանի դեռ Իսլամի սուրբ հողի վրա թափառում են կույր անհավատները։ Մուսուլմանի առաջին պարտքն է սրով և համոզմունքով մեկ տարածել իսկական հավատի լույսը, կարելի է անգամ թողնել ընտանիքն ու հայրենիքը, եթե իսլամին վտանգ է սպառնում, և կռվի նյութել անհավատների դեմ։ Իսկ քանի դեռ Դուք ծառայում եք գյավուրներին, մարգարեն մեծում է Ձեր աղոթքները, անհավատների ներկայությունը Ձեր տանը փակել է Ձեր ճանապարհը դեպի ալլահի գահը. աղոթք և խոստովանեք մեղքերդ։

Մեզ հարկավոր է սուրբ պատերազմ՝ զազավաթ, պատրաստվեք դրան՝ պասով ու ապաշխարանքով։ Սափրեք, վերջապես, Ձեր գլուխը, ինչպես վայել է մուսուլմանին։ Երբ Ֆուլիկ փաշան կամ Ղազի Մանման ներխուժեն

Թայգեթա, Ձեզ կճանաչեն սափրված գլխով, և դուք կպանպանեք Ձեր կյանքը։

Անատոլիական ջոկատ
Գրված է Ղարսի ամրոցում,
որը պահպանվում է ալլահի
կողմից։ Մեծ է ալլահը։

Ձեր հավատարիմ բարեկամ
Եվ բարի կամեցող՝ գեներալ
Մուսա փաշա Կունդուխով[1]։

— Եվ սա բոլո՞ր է,— հարցրեց փոխգնդապետը։

— Բոլորը,— պատասխանեց Զիյա-Զիյը։

— Իսկ ի՞նչ են ասում քաղաքում։

— Ասում են, որ Ֆուլիկ փաշան շուտով կկոտորի բոլորիդ...

Իսմայիլ խանը նամակը թաքցրեց։

— Լավ,— ասաց նա,— գնա։ Ես այստեղ կլինեմ յուրաքանչյուր հինգերորդ աղոթքին։

— Մի՞թե դուք չճանաչեցիք մեր Իսմայիլ խանին,— հարցրեց Կլյուգենաուն։— Դա նա էր։ Սակայն, հավատացե՛ք, ես այնպես չէի ուզում, որ դուք գնայիք իմ մոտից, որ դիտամամբ... Հավատացե՛ք, դիտամամբ ձեզ համար հնարեցի այդ հիանալի հեքիաթը։ Դուք չե՞ք բարկանում։

— Օ՜, ո՜չ։ Իսկ հիմա՝ ցտեսություն...

Ագլայան դնաց, իսկ Կլյուգենաուն, երբ լռեցին կնոջ ոտնաձայները, իջավ մզկիթ։ Շրջանցելով պատերը՝ նա կանգ առավ պահարանի առջև։ Հեքիաթասացը և ռոմանտիկը մեռան նրա մեջ՝ նորից ծնվեց ողջամիտ ինժեները, որը պատասխանատու է ամրոցի ճակատագրի համար։ Բաց անելով պահարանի դարակը՝ պրապորշչիկը մի կողմ շպրտեց ձեռագիր Ղուրանների չափազանց հաստափոր աղյուսները։

«Որտեղի՞ց է գալիս այդ սատանայի ճուտը։ Ըհը՜,— զարմացավ նա,— ի՜նչ հրաշք...»

Մեքքայի կողմն ուղղված դուռն անսպասելիորեն սկսեց բացվել, որը մուսուլմանական ճարտարապետության օրենք-

[1] *Հետաքրքիր է, որ այդ նամակի հեղինակը՝ Մուսա փաշա Կունդուխովը, չախջախվել է Բեխլի-Ախմետի մոտ, մայիսի 17-ի լույս 18-ի գիշերը, նույն Նիժեգորոդյան դրագունների կողմից, որոնց հրամանատարն է եղել ինքը մի ժամանակ և, լիովին ընդունելով իր պարտությունը, նամակ է ուղարկել կապիտան Կուսովին, որի մեջ ողբում էր, թե իրեն չախջախել են հենց իր աշակերտները։*

ների կատարյալ խախտում էր։ Սակայն դա եղել է այսպես, դաժան ֆեոդալ Իսակ փաշան, հավանաբար, վախենալով իր հպատակների վրեժխնդրությունից, իր համար փախչելու գաղտնի սողանցք է թողել, որի մասին երբեք գլխի չէր ընկնի ոչ մի ուղղահավատ։

— Փաշան հիմար չի եղել,— նկատեց Կլյուգենաուն՝ խցկվելով նեղ դռնից ներս. ոտքերի տակից ճստճստալով մկներ էին փախչում։ Ուղղաբերձ աստիճանները պրապորշչիկին խավարից անսպասելիորեն դուրս բերեցին սարդոստայնի խիտ ցանցով պատած մի փոքրիկ միջանցք, իսկ այնտեղ, պատի ներքևի մասում, սևին էր տալիս մի անցք, որտեղից լսվում էր գետի խշշոցը։

«Բոլորովին հիմար չէ»,— ինքն իրեն ասաց պրապորշչիկը և երկար մտածմունքի մեջ ընկավ։

Ուշ երեկոյան նա չքաշվեց արթնացնել ամբոցի պարետին և զեկուցել.

— Պարոն կապիտա՛ն, հարավային ճակատամասի որմանցքի մոտ անհրաժեշտ է ժամապահ կանգնեցնել։ Բանն այն է, որ այսպես և այսպես...

Շտոկվիչը լսեց պրապորշչիկի խորհուրդը, և Զիյա-Զիյը շուտով բռնվեց։ Երկու կազակներ բռնել էին. Թրքուհու ձեռքերը, նա օձի պես գալարվում էր նրանց արանքում, կծոտում ձեռքերը. և նրա գեղեցիկ, երիտասարդ դեմքից չադրան սահեց ցած։

Կարաբանովը նույնիսկ սառեց, երբ տեսավ աղջկան, իսկ Զիյա-Զիյը, ինչպես վիրավոր թռչուն, աղիողորմ ճիչով պոկվեց կազակների ձեռքից, նետվեց դեպի պորուչիկը, գրկեց նրա ծնկները և սկսեց արագ ու անհասկանալի ինչ-որ բան բլբլացնել։

— Վե՛ր կաց,— ասաց նրան Անդրեյը։

Սակայն Զիյա-Զիյը չբարձրանալով գետնից՝ համբուրում էր նրա ոտքերը, և այդ ժամանակ Անդրեյը տեսավ Ագլայային, որը, լսելով աղմուկը, մոտենում էր նրան։

— Դե վե՛ր կաց, վերջապես,— գոռաց պորուչիկը՝ իրենից պոկելով փոքրիկ կնոջ կպչուն թաթիկները։

Մինչև հիմա Կարաբանովը լուրջ չէր համարում Զիյա-Զիյի հետ պատահած ամբողջ պատմությունը։ Թրքուհին նրա համար հենց այնպես էր՝ թեթև կիրք, զվարճալի էկզոտիկա։ Իսկ այժմ, երբ Ագլայան կարող էր գլխի ընկնել ամեն ինչի մասին, Անդրեյը վախեցավ։

Բռնեց Թրքուհու ձեռքից և նրան ուշքի գալու հնարավորություն չտալով՝ ամբոցի պարիսպներից արագ դուրս վազեց։

— Փախի՛ր,— ճչաց նա,— փախի՛ր, շո՛ւտ։

Եվ Զիյա-Զիյը, թռչելով քարերի վրայով, արագ անհետացավ հայկական քաղաքի նրբանցքների մթության մեջ։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց Ագլայան, երբ Անդրեյը վերադարձավ։

— Ա՜հ, դատարկ բան,— ձեռքը թափահարեց Կարաբանովը,— ուղղակի մեր հարգարժան Իսմայիլ խան Նախիջևանսկու սիրային արկածներից մեկը...

7

— Իսկ դա եղել է, եղբայրնե՛ր, այնքան վաղուց, երբ տատիկը դեռ աղջիկ էր։ Ապրում էր այստեղ Իսայկա շահը՝ մի այդպիսի սրիկա մարդ, ուղղակի խոց... Եվ, ուրեմն, այստեղ էլ ահա, նա ուներ իր բնակատեղին։ Իսկ ոսկին, զանազան գունագեղ քարերը անչափ շատ էին, ամբողջ սնդուկներ։ Նա առավոտյան հաշվում էր դրանք, երեկոյան նորից էր հաշվում։ Կողպեքի վրա զմուռսի կնիք էր կախում։ Ինչպես մեր մարտկոցների գրագիրները։ Իսկ էդ շատրվանը գինիով է եղել, բակերում՝ լիքը խորտիկներ։ Շուրջը մերկ կանայք մենուետներ են պարել։

— Պոստնի՛,— գոռաց Պոտրեսովը։— Վերջացրու բարբաջանքդ. քեզ նայելով ուրիշներն էլ բան չեն անում։

Զինվորները նորից բահերը վերցրին ձեռքները։ Խրենովը, որ մասնակցում էր այդ աշխատանքներին, որպեսզի ձրի շիլա չուտի, ձեռքերը թքոտեց ու ասաց.

— Լավ կլիներ, որ մեզ մոտ ևս, առաջին բակում, շատրվան ցայտեր։ Այդպես լիներ՝ առավոտյան մաճառ կխմեինք, ճաշին՝ օղի, իսկ գիշերվա կողմը՝ Կախեթի գինի... Ա՜յ թե կյանք կլիներ։

— Է՜խ, ծերո՛ւկ,— առարկեց ինչ-որ մեկը,— այն ժա-

մանակ մենք խմելով Բայազետը բուսուրմաններին կտա-
չինք... Ես արդեն ահա՝ որերորդ շաբաթն է, գինի խմելու
մասին անգամ չեմ էլ մտածում։ Ինձ նախապատրաստում
եմ...

— Իսկ ինչի՞ ես նախապատրաստում,— հարցրեց Պոտա-
նին։

— Ծանր գործի, լակո՛տ, զինվորական գործի համար...
Հո հավիտենապես նստած չենք մնա այստեղ, մի օր էլ գո-
տեմարտի կբռնվենք։

Այդ կոպիտ զինվորի անունը Պոտյոմկին էր. շոգից այն-
քան էր նիհարել, որ ասես մինչև ոսկորները չորացել էր,
աչքերը սպիտակել էին, նույնիսկ բիրերը չէին երևում։ Փորձ-
ված մարտիկը խնայում էր պետական ճտքակոշիկները, ման
էր գալիս թուրքական կոշիկներով. մկրատով մի կերպ խու-
զած գլխի վրա վարդագույն էր դարձել պարսկական սրից
ստացած կոպիտ սպին։

— Ա՛յ, հենց դու էլ ինձ մոտ արի,— կանչեց նրան շտաբս-
կապիտան Նեկրասովը։

— Ուժ ունե՞ս։

— Հա, շաբաթ օրը միս եմ կերել, ձերդ բարեծնություն։

— Իսկ այսօր միայն հինգշաբթի է։ Նշանակում է դեռ
ուժ պետք է լինի։

Շտաբս-կապիտանը Պոտյոմկինին ստիպեց վերցնել
միայն սուրը, ձեռքը տվեց պարանով կեռչանը և հրամայեց
իջնել միջնաբերդի ձախ ճակատամասից ներքև, գրեթե ուղիղ
առվակի մոտ։ Ինքը բարձրացավ տանիքի վրա. նրան ան-
միջապես շրջապատեցին հետաքրքրասերները։

— Սկսի՛ր,— նայելով ժամացույցին՝ գոռաց Նեկրասո-
վը։

Զինվորը նետվեց դեպի վեր։ Ձեռքը գցելով նոսր մացառ-
ներին՝ նա վազում էր սարնիվեր, մագլցում քարերի վրա-
յով։ Ահա նա թափով շպրտեց պարանը, բայց կեռչանը միայն
քերծեց պատի ելուստը։ Եվս մի նետում, և պարանը ցնցվե-
լով ձգվեց. Պոտյոմկինն արդեն բարձրանում էր վեր։ Շու-
տով երևաց նրա գլուխը, որի վրայի սպին լարվածությու-
նից ավելի էր կարմրել։

— Ձեռք տվե՛ք, եղբայրնե՛ր... որևէ մեկդ...— խռպոտ ձայ-

նով ասաց նա և, սուրը, նրա թևի տակից դուրս սահելով,
զրնգաց ներքևում՝ կպչելով քարին։

Պոտյոմկինին վեր քաշեցին տանիքի վրա։ Նա քրտինքի
մեջ կորած էր և շնչում էր ծանր։ Թաց վերնաշապիկը կպել
էր ոսկրոտ գեղջկական կրծքին։

— Համարյա երկու բոպե,— հաշվեց Նեկրասովը։— Այդ
ընթացքում, հարգելի Պոտյոմկին, մենք քեզ տասն անգամ
արդեն հրացանով կսպանեինք, իսկ հետո էլ ցած կգլորեինք...
Դու հասկացա՞ր, արդյոք, ինչի համար քեզ ստիպեցի կա-
տարել այդ փորձը։

— Նրանք դեռ պետք է հաշիշ ծխեն, ձերդ բարեծնու-
թյուն,— կշռադատեց Պոտյոմկինը,— որպեսզի մագլցելով
մեյդանից այստեղ բարձրանան։ Ահա թե որտեղ մեծագույն
սարսափ կլինի, ահա թե ամենից շատ խաչեր ու գնդակներ
ում բաժին կընկնեն։— Պոտյոմկինը մատնացույց արեց
մարտկոցի զինվորներին, նրանց հրանոթների առջև փռված
էր քաղաքը։

Ծուխ էր բարձրանում ծխնելույզներից, տանիքների վրա
թափառում էին այծերը, որոտում էին պղնձագործները, և
մի դարբին՝ կիսամերկ հսկա մի թուրք, ռուսների աչքի
առաջ, նրանց դեմ կռվելու համար կիսալուսնի նման յաթա-
ղան էր կռում։ Եվ մայոր Պոտրեսովը մտածմունքի մեջ ըն-
կավ.

— Իսկ դու, եղբա՛յր, ճիշտ ես. մեր մարտկոցը միայն
այստեղից կարող է գործել։ Սակայն... հապա այս կողմը
նայիր։ Մեզ կհարվածեն, ով գիտե, և՛ մոտակա բլուրներից,
և՛ գերեզմանոցից։ Անգամ մեյդանից, եթե լավ նշան բռնեն...
Այստեղ մենք անուժ ենք։

Կարաբանովը, խոսակցության միայն վերջին հասնելով,
սպաներին մի կողմ քաշեց և ծիծաղելով հաղորդեց.

— Պարոնա՛յք, մինչ դուք այդքան իմաստուն դատողու-
թյուն եք անում պաշտպանության մասին, ամբոցում երկու
զարմանալի իրադարձություն է եղել՝ բարոն Կլյուգենաուն
կարծես սիրահարվել է, իսկ Իսմայիլ խանը սափրել է գլուխը։

Իսկապես, հետևելով Մուսա փաշա Կունդուխովի խոր-
հրդին, փոխգնդապետ Իսմայիլ խան Նախիջևանսկին սպաս-
յակին կարգադրեց սափրել իր պայծառափայլ գանգը։

Նա դեռ երեկ Պացևիչին հայտնեց, որ վաղուց աղոթքի չի գնացել, և այժմ, դերվիշ ձևանալով, շարունակ գերիմաստ «զիքրաներ» է երգում։ Կողքից թվում էր, թե երկրային գործերն արդեն ոչնչով չեն հետաքրքրում խանին, նա հեզ է և ամբողջովին կլանված աղոթքով, սակայն իր մասին զեկույց ներկայացնելով, թե հիվանդ է, փոխգնդապետը դրանով իսկ իրավունք էր ձեռք բերում սպայական սեղանից ստանալու առանձին տեսակի ճաշ՝ հավով ապուր։

Իսմայիլ խանին վերաբերող նորությունը քչերին հետաքրքրեց, բայց Կլյուգենաուի սիրահարվելու մասին հաղորդումը զվարճացրեց սպաներին։

— Գուցե բարոնը վաճառել է այն վերջինը, ինչ մնացել է նրա մոտ՝ իր տիտղոսը, և դրանով կաշառել մի որևէ ներքինիի, որպեսզի հարեմ հաճախի։ Որովհետև ես,— ասաց Նեկրասովը,— միայն մի կին գիտեմ կայազորում, բայց նա այնքան խստաբարո է, որ ոչ մի տղամարդ չի հանդգնի մոտենալ նրան։

— «Եթե ճանաչեիր նրան»,— ինքնագոհ մտածեց Անդրեյը և պատասխանեց առանց ժպտալու, հարգանքով.

— Այո՛, տիկին Խվոշչինսկայան հիանալի բարոյականության տեր կին է։ Եթե բոլորն այնպես լինեին, ինչպես նա է։

Վազելով մոտեցավ հուզված Եվդոկիմովը.

— Պարոնա՛յք, այստեղ ինչ-որ անախորժություն է եղել... գնդապետ Պացևիչը... խնդրում է սպաներին իր մոտ գալ։

Այո՛, անախորժություն էր եղել. մի թուրք կորցրել էր իր գոմեշը և բողոքի էր եկել ամրոցի պարետի մոտ. «Ձեր զինվորները, ապացուցում էր նա, գողացել են իմ գոմեշը»։ Եվ երբ սպաները հավաքվեցին, Պացևիչը՝ արդեն կատաղած, սենյակի մի անկյունից մյուսն էր վազում, իսկ վառոդնին անդրավարտիքով թուրքը ոտքերը չռած, եվրոպական ձևով նստած էր աթոռի վրա և ծծում էր կավե ծխամորճը։ Կարաբանովն ուշադրություն դարձրեց, որ նրա բաճկոնի պղնձե կոճակները պոկված էին ռուսական գրենադյորների շինելներից։

— Եվ այսպես, պարոնա՛յք,— միանգամից պոռթկաց Պացևիչը,— մեր զինվորները գողացել են ահա այս բնակչի գոմեշը։ Խնդրում եմ ձեզ անհապաղ պատասխան տալ՝ ո՞վ է դրանում մեղավոր։

Սպաները լռում էին։

— Ո՞վ է գողացել գոմեշը, հարցնում եմ,— գոռաց Պացևիչը։

Կայազորի քահանա տեր Գերասիմը, որը վերջերս էր եկել Բայազետ և փութաջան ու խիստ մարդ էր, որոշեց պաշտպան կանգնել իր հոտին.

— Դա այդպես չէ,— գնչուի մազերի նման սև մորուքի միջից ասաց նա։— Կարող է քրդե՞րն են վաղուց կերել գոմեշը, իսկ դուք զինվորների վրա եք մեղքը գցում։ Մի՞թե այդպես կարելի է։

— Դուք, տեր հա՛յր, լռեք— միջամտեց Շտոկվիչը։— Ապացույցի համար գոմեշի տերը՝ ահա բերել է նույնիսկ մի ոսկոր, որը գտել է Կարաբանովի հարյուրյակի կազակների զորանոցի մոտից։ Դե, ի՞նչ կասեք։

Եվ պարետին ցույց տվեց մի վիթխարի ազդրոսկր, որի վրա դեռ կախված էին եփած մսի մնացորդները։

— Իմ գոմե՛շը,— համառորեն գլխով արեց թուրքը։

— Պորուչիկ Կարաբանո՛վ, ինչո՞ւ եք լռում,— հարցրեց Պացևիչը։— Այդ դո՞ւք եք գողացել գոմեշը։

Անդրեյը ձեռքը դրեց սրի երախակալին։

— Պարո՛ն գնդապետ,— զուսպ ասաց նա,— մի՛ մոռացեք, որ ես զինված եմ։

Պացևիչը հետ թռավ, ինչպես եռման ջրից։ Ազդրոսկրը անջնում էր ձեռքից ձեռք։ Բոլորը կարծես ամոթ էին զգում։

— Դա ոչխարի ոսկոր է,— ասաց Նեկրասովը։

— Ավելի շուտ, պարոնա՛յք, էշի է։

— Ո՛չ, ձիու է։

— Մարդու ոսկոր է,— փրկելով գնդի պատիվը՝ հանկարծ բղավեց Վատնինը և վերցնելով ազդրոսկրը, այն չափեց իր կոնքի վրա։— Տեսնո՞ւմ եք։

Թուրքը ծծեց ծխամորճը, աչքերը փակվեցին։

— Այդ դեպքում ես կգնամ,— ասաց նա երգաձայն։— Գյավուրն այնքան աղքատ է, որ մարդ է ուտում։

Գրպանից դուրս քաշելով քսակը՝ Պացևիչը նորից գոռաց.

— Այսպես, ուրեմն, ոչ ոք չի՞ գողացել գոմեշը։ Ոչ...

Դե, ուրեմն իմացեք, այդ ես եմ գողացել։ Գնացի և գողացա։ Ես, ես ինքս՝ գնդապետս։ Իսկ հիմա, հե՛յ, դո՛ւ, բռնի՛ր երեք տասանոց և կորիր այստեղից քո ոսկորի հետ... Միայն լռիր և աղմուկ չհանես մեյդանում, թե քեզանից բան ենք գողացել...

Սպաները լուռ դուրս գնացին և այնպես, որ ասես թքել էին նրանց երեսին։ Եթե նույնիսկ բայազետցիները, պաքսիմատը խրթխրթացնելուց ձանձրացած, իսկապես գողացել էին գոմեշը, ապա այդ արարքը ենթակա էր դատապարտման ներքին իշխանության կողմից, Պացևիչին բոլորովին էլ պետք չէր, այդպես գոռգոռալ և իրեն ջարդել այդ թուրքի առաջ։

— Այո՛, պարոնա՛յք,— հոգոց հանեց Նեկրասովը,— վիճակը հետզհետե ծանրանում է, Խվոշչինսկին, իհարկե, օտարի ներկայությամբ երբեք նման արարմունք թույլ չէր տա։

Խվոշչինսկին չէր մասնակցում այդ ամոթալի ներկայացմանը, որ սարքեց Պացևիչը. իր գումարտակի հետ միասին գտնվելով մոտակա լեռների գագաթներին և լավ հասկանալով, որ շուտով, ինչպես ինքը սիրում էր ասել, գործ կլինի, Նիկիտա Սեմյոնովիչը որոշեց այդ օրը կայազորի սպաների համար ընթրիք տալ։ Բիվակային ընթրիք՝ մետաքսյա վրանի տակ, որի վերևում փայլփլում էին օտար աստղերը. ընթրիք՝ գնդի փողհարների և թմբկահարների նվագախմբով, գինու տակառով, մինչև լուսաբաց տևող խոսակցություններով, հրանոթների կրակոցներով ու բաժակաճառերով։

— Անկեղծ ասած,— խոստովանեց Կարաբանովը,— այսպիսի շոգին այսօր չեմ ուզում գնալ և խմել, բայց քանի որ Պացևիչը և Շտոկվիչը արհամարհում են Նիկիտա Սեմյոնովիչի հրավերը, ես, պարոնա՛յք, կգնամ...

Անդրեյն ինքը թամբեց Լորդը. նա սիրում էր այդ զբաղմունքը և հազվադեպ էր վստահում կազակներին. այդպես էլ՝ ի՛նամախոսներն են սիրում պսակադրության համար զարդարել իրենց ուզած աղջկան։ Ձամբիկի մեջքին գցելով թամբատակի սպիտակ թաղիքը՝ Կարաբանովը վրայից փռեց գորգե սթար։ Մեջքի վրա զգալով թամբի սովորական ծանրությունը՝ Լորդն անհամբերությամբ շրթունքներով բռնեց պորուչիկի արմունկից՝ իբր, շուտ արա, ինչ ես մզմզում։

— Դե կանգնի՛ր, սատանա,— բարկացավ Անդրեյը,— թե չէ նորից ախոռ կքշեմ...

Ուժեղ ձգեց թամբակալը, հարմարեցրեց ասպանդակափոկը. մի քիչ մտմտաց և վերևից գցեց կապույտ թավշից տապճակը. «Լավ,— որոշեց,— կներկայանամ լրիվ տոնական ձևով...»։ Թեև կազակային սպաներին կոշկախթաններ չեն թույլատրում (նրանց փոխարինում է մտրակը), բայց Անդրեյը, նախկին կավալերգարդյան սովորության համաձայն, հագավ իր հին, դեռևս պապենական կոշկախթաններն ու թռավ թամբի վրա։

— Սլացի՛ր, պառլամենտ,— ծիծաղեց նա, և Լորդը տարավ նրան սպայական գինարբուքի։

Պորուչիկ Կլյուգենաուին հասավ երկրորդ վերստի վրա։ Պրապորշչիկը գնում էր դանդաղ՝ նստած իր երերուն ձին, որ վերջերս քուռակ էր ծնել։ Բարոնը մի տեղից վայրի թրթնջուկ էր քաղել ու դեռ հեռվից մի փունջ պարզեց Անդրեյին.

— Ուզո՞ւմ եք, պորուչի՛կ։

Անդրեյը վերցրեց, ինքն էլ սկսեց ծամել թրթնջուկը։ Երկար ժամանակ նրանք գնում էին լուռ։ Պլեբեյական զամբիկը սիրախաղ էր անում ազնվացեղ Լորդի հետ, որն արիստոկրատական նրբազգացողությամբ չէր մերժում նրա ուշադրությունը, սակայն ոչնչով էլ չէր հուսադրում։

— Դե՛, բարո՛ն,— սկսեց Կարաբանովը՝ ձանձրանալով լռելուց,— ես ձեզ լսում եմ... Դուք այսօր առավոտյան ինձ խոստովանեցիք, որ կարծես սիրահարված եք։ Ասացեք, ո՞ր կողքի վրա եք պառկում, որ այդպիսի հրաշալի երազներ եք տեսնում։

Կլյուգենաուն ժպտաց.

— Իսկ դուք մի՛ ծիծաղեք... Ես ձեզ չեմ ասել, թե սիրահարված եմ, բայց մաքուր կնոջ կերպարը իմ մեջ ցանկություն է առաջացրել զոհաբերություններ անել նրա համար։ Երեխան խնայատուփի մեջ կոպեկներ է գցում և լսում, թե նրանք ինչպես են այնտեղ զրնգում։ Մի օր նա այնտեղից կհանի խղճուկ ռուբլիներ։ Իսկ ես ուզում եմ կնոջ ոտքերի տակ գցել ոչ թե կոպեկներ, այլ բանականությունը, կիրքը, արիությունը, երկարատև համբերությունը, հույսը և, վերջա-

պես, ինքս ինձ։ Մի՞թե, Կարաբանով, այդ զգացմունքները կարող են թնդալ նրա սրտում, ինչպես կոպեկները խնայատուփում։

Անդրեյը մի քիչ մտորեց.

— Այդ բոլորը բառեր են, բարոն,— ասաց նա անփութորեն,— դուք վատ գիտեք կանանց։ Տեսնո՞ւմ եք, ձեր զամբիկը ինչպես է հպվում իմ Լորդին։ Այդպես էլ կինն է... Մերկ ֆիզիոլոգիա է, և ուրիշ ոչինչ։

Կլյուգենաուն մտրակով հարվածեց իր ձիուն.

— Զարմանում եմ ձեզ վրա, Կարաբանով, դուք ինչպես եք կարողանում ապրել այդպիսի հայացքներով։ Ձեզ միայն ցույց տուր որևէ սուրբ բան, և դուք անմիջապես կսկսեք տեղնուտեղը պղծել... Ո՞վ է եղել այն առաջին (ներեցեք ինձ) անարգ կինը, որ կարողացել է այդպես այլանդակել ձեր բարի սիրտը։

— Ես արդեն մոռացել եմ,— պատասխանեց Անդրեյը և անսպասելիորեն հիշեց Ագլայայի դեմքը լուսաբացին. նա այնքան հանգիստ էր ու խաղաղ, որ նրա համար կարծես արդեն լուծված էին կյանքի բոլոր հարցերը։

Եվ հանկարծ նա անտանելի տխրություն զգաց։ Հեռվում ալեծփվում էին փետրախոտերը, կիրճի վրա ճախրում էր արծիվը, ճամփեզերին աճած խոտերի միջից համեստ նայում էր մի միայնակ ծաղիկ։

«Բոլորը բառեր են, բառեր, բառեր,— մտածեց նա։— Իսկ եթե բառեր չլինե՞ն։ Գուցե այն ժամանակ ավելի լա՞վ լիներ...»։

— Հասե՛ք ինձ, բարոն,— բղավեց նա և թամբի վրա օրորվելով, խթաններով հարվածեց Լորդի կողերին, իսկ խթանները երկար էին, հին ձևով, որոնցով իր պապը դեռ Աուստերլիցի ճակատամարտում խթանում էր ձիուն։

Կարաբանովը նույնիսկ ուրախ սեղանի շուրջ նստած էլի տխուր էր, և Վատնինը, հացից գնդիկ կոլոլելով, շպրտեց պորուչիկի ճակատին.

— Է՛յ, Ելիսեիչ։ Գլուխդ բարձր պահիր... Կոտորիր դրանց, ջարդի՛ր...

8

Դա ամոթ է, բայց այդպես է. որոշ զորամասերում դեռ ծեծկռտվում են...

Մ. Ի. Դրագոմիրով

Մինչ սպաներն ընթրում էին Խվոշչինսկու մոտ, լեռներում, Բայազետի ամրոցում տեղի ունեցավ այդ օրվա երկրորդ այլանդակ ներկայացումը, որը վերջնականապես խաթարեց կայազորի վստահությունը Պացևիչի նկատմամբ։

Դրա պատճառը պետք է փնտրել Պացևիչի սպասյալի անճարակության մեջ, որն այդ օրը կոտրել էր գրաֆինը։ Սակայն հենց անմիջապես գտնելով մեկ ուրիշ, ավելի մեծ գրաֆին, նա գինի էր լցրել և ընթրիքի ժամանակ մատուցել Ադամ Պլատոնովիչին։ Իսկ գնդապետը սովորություն ուներ խմել այնքան, քանի դեռ սեղանի վրա գինի կա։ Բայց քանի որ գրաֆինն այս անգամ սովորականից ավելի մեծ էր, ապա Պացևիչը ուժեղ հարբեց։

Այստեղ նրա հարբած գլխում միտք է ծագում, որ ինքը «հայր հրամանատար է», և եթե որևէ մեկը դրանում կասկածում է, ապա ինքը հիմա կապացուցի։ Գիշերային ոտնամանները բոբիկ ոտներին դուրս է վազում բակ և սկսում համբուրել առաջին պատահած զինվորներին։ Հետո իր վեհանձնության քաղցր գիտակցությունից և մոտիկ մարդկանց նկատմամբ տածած սիրուց Ադամ Պլատոնովիչն սկսում է դառը լաց լինել, քանի որ, ինչպես նրան այդ պահին թվում էր, ինքը շատ լավ մարդ է, բայց իրեն չեն հասկանում։

Իսկ որպեսզի իրեն լավ հասկանան, նա որոշեց բացատրություն տալ։

— Եղբայրնե՛ր,— գոռում էր նա ամբողջ միջնաբերդով մեկ՝ հավաքելով հետաքրքրասերներին,— ես ձեզ սիրում եմ... Դուք իմ երեխաներն եք, ես ձեր հարազատ հայրը... Միասին կմեռնենք, բայց... Ահա ես ձեր առջև լաց եմ լինում... Կմեռնենք, եղբայրներ, միայն թե... Ներեցեք ինձ...

Ռուս զինվորը հիմար չէր, և նա լավ հասկանում էր, որ իրեն համբուրում էր ոչ թե գնդապետ Պացևիչը, այլ այն խմիչքը, որ կուլ էր տվել գնդապետ Պացևիչը։ Մինչդեռ ի՞նչ է զինվորը։ Զինվորը «մի անձ է, որը նախատեսված է ար-

տիկուլով», և այդ պատճառով էլ ձգված կանգնելով, զինվորը հնազանդորեն ընդունում էր հրամանատարության համբույրներն ու արցունքները։

— Ու-ռա՜,— գոռում էր գնդապետը, և մեկը նրա ոտքին էր հագցնում կորցրած ոտնամանը։

Հետո Ադամ Պլատոնովիչի գլուխը մտավ (անհասկանալի էր, թե ինչո՞ւ) զինվորներին շարք կանգնեցնել, ինչը և նա սկսեց իրագործել։ Ի դժբախտություն նրա, միջնաբակից երևաց տեր Գերասիմը, որը սուրբ հաղորդության պարագաներն էր տանում։ Այդ հոգևորականը, որը կարդացած ու խելացի մարդ էր և սիրում էր մի քիչ սեթևեթել իր հասարակ ծագումով, այժմ գնում էր հոսպիտալ՝ մահացող մարդուց խոստովանություն առնելու։

Ներկա լինել մարդու վախճանվելուն՝ այնքան էլ հաճելի պարտականություն չէ, և տեր Գերասիմը խոստովանանքի էր գնում լուրջ ու մտախոհ։ Տեսնելով քահանային՝ Պացևիչը նրան բաշեց շարքի մեջ, աջ թևը։ Տեր Գերասիմը հասկանալով, որ ավելի լավ կլինի հարբած մարդու հետ գործ չունենալ, շատ կամացուկ խնդրեց.

— Պարոն գնդապետ, թողեք ինձ... մարդ է մահանում։

Սակայն գնդապետը նրան բաց չէր թողնում, և այդ ժամանակ տեր Գերասիմն սկսեց զիմադրել։ Իսկ քանի որ նա երկու (գուցե և երեք) անգամ ավելի ուժեղ էր Պացևիչից, ապա Ադամ Պլատոնովիչը զայրացավ, համարելով, որ նա չի ենթարկվում իր իշխանությանը։

— Դո՜ւ, երկարափեշ սատանա,— գոռաց նա։— Լսի՛ր ինչ եմ ասում... Կանգնի՛ր այստեղ... Քարացի՛ր։

Տեր Գերասիմը շատ համբերատար մարդ էր։ Նա մի անգամ ևս ասաց գնդապետին.

— Ադամ Պլատոնովիչ, հասկացեք, աստվածային հոգի է վախճանվում... Ինձ սպասում են այստեղ։ Խնդրում եմ, բաց թողեք ինձ խաղաղությամբ...

Սակայն «հայր հրամանատարն» արդեն գազանացել էր՝ ցանկանալով քահանային անպայման շարք կանգնեցնել։ Այդ ժամանակ կայազորի քահանան, երկար չմտածելով, սուրբ հաղորդության պարագաները դրեց գետնին և քշտեց փարաջայի թևքերը։ Երևում էր, որ նա վերհիշել էր բուրսակային զվարճալի տեսարանները և առանց խոսելու շրմփացրեց Պացևիչի ականջին ու այնպես շրմփացրեց, որ Պացևիչը բակի կեսը փորի վրա սողալով անցավ, իսկ նրա գրպաններից թափվեցին տարբեր բանալիներ, գրքույկներ ու մատիտներ։

— Տե՛ր իմ, մի՛ մեղադրիր,— ասաց քահանան՝ վերցնելով սուրբ հաղորդության պարագաները։— Այդպես կարելի է ուղածդ մարդուն համբերությունից հանել...

Այդ պահին արագ դուրս վազեց Շտոկվիչը, որը, հավանաբար, ինչ-որ տեղից վազուց արդեն հետևում էր այդ բոլոր իրադարձություններին։ Կապիտանը բարձրացրեց Ադամ Պլատոնովիչին և զինվորների օգնությամբ քաշ տվեց՝ քնեցնելու Իսակ փաշայի բյուրեղապակե ոտքերով մահճակալի վրա։

Այդ արարքով տեր Գերասիմը վաստակեց զինվորների հարգանքը, բայց այն տրամադրությունը, որ նա ուներ սկզբում, վերջնականապես փչացավ։ Հոսպիտալի շեմին նա կամացուկ բուշ-որ բան շշնջաց, մի քիչ կանգնեց մթության մեջ, հառաչեց և, հարդարելով գլխի գզուզ մազերը, մտավ հիվանդասենյակ։

Վիրավորներն ու հիվանդները պառկած էին կոպիտ ոանդած տախտակամածների վրա, մեծամասնությունը՝ հատակին, իսկ ամենահանգիստ տեղը տախտակամածների տակն էր։ Շենքի կենտրոնում կամաց գվվոցով վառվում էին թուրքական մանղալները. նրանց թեժ բովարաններում ինչ-որ ուտելիքներ էին տաքացվում։

— Խաղաղություն ձե՛զ, քրիստոսասեր զինվորականություն,— ասաց քահանան՝ մատները պտղունց անելով և խաչակնքելով եռացող ամանները։

Մեռնում էր մի տարեց զինվոր, որը վիրավորվել էր քրդերի հետ ունեցած կատաղի փոխհրաձգության ժամանակ։ Նա մեռնում էր շատ ծանր, արդեն որերորդ օրը. աչքերից երևում էր, որ մարդն ուզում է ապրել, իրենից հեռացնում էր աներես մահը, բայց ամեն ինչին սահման կա, նա այսօր զգաց այդ բանը և մարդ ուղարկեց քահանայի հետևից։

Նրանից ոչ հեռու պառկած էր եֆրեյտոր Յակով Ուչաստկինը, որը լեռնային ճանապարհին վիրավորվել էր ոտքից,

իսկ այժմ նախապատրաստվում էր դուրս գրվելու։ Թուրքական շարաբաստիկ գնդակը, ոսկրին չկպչելով, միայն փորփրել էր զինվորի միսը և շարունակել իր թռիչքը՝ պատճառելով ցավ ու զայրույթ։

Լսում էր Ուշաստկինը քահանայի կամացուկ խոսքը, նայում էր տախտակամածի շարքերին, որոնցից դուրս էին ցցվել վիրավորների գորշ կրունկները, և նրա հոգին դառնում էր թախծոտ ու մռայլ։ Խանգարում էին նաև փորից վիրավորված զինվորի տնքոցները. Սիվիցկին ասում էր, որ նա կմեռնի այս գիշեր, երբ սկսվեն փսխումները։

Տեր Գերասիմը շուտով գնաց, և Ուշաստկինը, մի քիչ բարձրանալով տեղից, նայեց մեռնողին։ Նա ձգվել էր, ձեռքերը խաչել կրծքին, քիթը դարձել էր նիհար չոփ։

— Կարծես պրծավ տանջանքից,— շշնջաց եֆրեյտորը հարևաններին։— Եվ դեմքն էլ սպիտակեց...

Մոտեցավ օրդինատոր Կիտաևսկին, բռնեց հին զինվորի դաստակը, և նա բաց արեց աչքերը.

— Դաշտ լիներ, հա՜...— կամացուկ ասաց նա։— Քար ճմեի՛ր...

— Դե լավ, ծերո՛ւկ։ Պառկի՛ր... Դուցե թե՞յ ես ուզում։

— Կենդանի է,— ուրախացավ Ուշաստկինը,— այդ ծերունիներն այդպես պինդ են...

Ագլայան դեռ վախենում էր մոտենալ մեռնողներին և, իմանալով այդ, նրան չէին ստիպում։ Հեռվից դիտելով մարդկանց, որոնք անցնում էին հավիտենականության գիրկը, կինը միշտ ինչ-որ ահ ու դող էր զգում մահվան առջև, որը նախկինում, չգիտես ինչու, նրան թվում էր վեհասքանչ ու հանդիսավոր։ Այժմ մահը նրա առջև կանգնում էր իր սովորական, չլաճուճված պարզության մեջ, և նա արդեն չէր զարմանում, երբ մեռնողը հանձնարարում էր, թե իր մահից հետո ում տալ կաթսայիկը, ում՝ սրբիչը, իսկ ում՝ ոտի նոր փաթաթանները։

— Դուցե նրան թե՞յ խմեցնեք,— խնդրեց Կիտաևսկին։— Շատ քաղցր արեք։

Հաղթահարելով վախը՝ Ագլայան նստեց զինվորի կողքին, սկսեց խմեցնել նրան գդալով։

— Այսօր ի՞նչ օր է,— անսպասելիորեն հարցրեց զինվորը։— Չորեքշաբթի՞ է, թե հինգշաբթի։

— Ուրբաթ է,— պատասխանեց կինը՝ զարմանալով, թե դա նրա ինչին է պետք։

Ուշաստկինին այցելության էին եկել ընկերները՝ երկու զինվոր։ Ագլայան տեսավ, թե նրանք ինչպես Ուշաստկինի բարձի տակ կոխեցին մի-մի հատ խաշխաշով շուրեկ, գրպաններից հանեցին հալվայի կպչուն կտորներ։

— Շուրեկները հիմա ի՞նչ արժեն,— նորից հարցրեց մեռնողը։

— Է՛հ, մի պիաստր են պոկում առևտրականները։

— Թանկ է,— հոգոց հանելով ասաց ծերուկը։

«Բայց նա ինչո՞ւ է ուզում այդ իմանալ»,— զարձյալ զարմացավ Ագլայան և ականջ դրեց զինվորների կամացուկ խոսակցությանը։

— Ի՞նչ նորություններ կան,— հարցրեց Ուշաստկինը։

— Կարծես նորություններ չկան։ Հիմա խաղաղ ենք ապրում։ Միայն նորին բարձր բարեծնություն Պացևիչը վշտից սկսել է հարբեցողությամբ զբաղվել։

— Պահո՜,— զարմացավ եֆրեյտորը։

— Այ քեզ պահո՜... Լսե՞լ ես, Թուրքից գոմեշ է գողացել։ Եվ Թուրքն էլ բոլորի ներկայությամբ ապացուցել է։ Գնդապետը՝ թե չէ, որ չէ։ Չեմ գողացել իբր։ Եվ այդտեղ պորուչիկ Կարաբանովը, ուրեմն, սուրը քաշում է՝ խոստովանիր, ճչում է, թե չէ հիմա գլուխդ կթոցնեմ...

— Կարաբանովն այդպիսին է,— նորից հոգոց հանեց մեռնողը,— շատ տաքարյուն է...

— Իսկ գնդապե՞տն ինչ,— հետաքրքրվեց Ուշաստկինը։

— Դե ինչ, խոստովանեց։ Ինքը լաց էր լինում։ «Ներեցեք, ասում էր, պարոնա՛յք։ Ուղղակի չգիտեմ, թե ինչպես պատահեց, որ գոմեշը գողացա»։ Եվ մեր ամբողջ գրամը տվել է այդ Թուրքին։ Որպեսզի լռի, ուրեմն։

— Ինչպիսի՜ մեղք,— վշտացավ Ուշաստկինը։— Ախր, նա իրեն ինչպե՞ս թույլ տվեց։ Չէ որ գնդապետ է, ազնվական...

— Եվ խիղճը նրան ուտում է,— շարունակեց պատմողը։—

Հարբած մարդ էր գալիս ամրոցում, լաց լինում, համբուրվում մեզ հետ։ «Ներեցեք, գոռում էր, մեռնել եմ ուզում...»։

Սիվիցկին եկավ կեսգիշերին։

— Այդքան վա՞ղ,— զարմացավ Ագլայան։

— Հետո, աղավնյակս,— պատասխանեց կապիտանը,— պարզապես սկսվեց հարբեցողությունը։ Կամ էլ, ինչպես գրում են թերթերում «բարեկամական զրույցը տևեց մինչև կեսգիշերն անց...»։ Իսմայիլ խանը վաղուց արդեն պառկած է սեղանի տակ։ Կարաբանովն ու ես խմել չէինք ուզում, վերադարձանք...

Սիվիցկու գալուց դեռ կես ժամ էլ չէր անցել, երբ դուռը բացվեց, և հոսպիտալի շեմին երևաց Եգորիչը։ Նրա պեպենոտ դեմքը ամբողջովին կորել էր կապտուկների և արյան սարսափելի լճացումների մեջ, աչքերը նեղացել էին։ Կազակն ուսով թեթև հենվեց կողափայտին, թքեց ձեռքի մեջ և ափը մաքրեց անդրավարտիքով։

— Ձերդ բարեծնություն,— ասաց նա բժշկին,— կարգավորեք ինձ... թե չէ ինքս ինձ չեմ տեսնում...

Նրան պառկեցրին սեղանին։ Սիվիցկին զննեց ումանցու ջարդոտված դեմքը և կոպիտ ասաց.

— Տեղն է քեզ, եղբա՛յր։ Սրանից հետո Բայազետում գիշերով է՛լ չես թափառի։ Դեռ քիչ են քեզ տվել թուրքերը...

— Չէ, թուրքերը չեն։

— Իսկ ո՞վ։

— Մերոնք։

— Ուրեմն ո՞վ։

— Նորին բարեծնություն... եկավ...

—Ո՞վ։

— Պարոն Կարաբանովը...

— Գվարդիական բարքեր,— մոթմոթաց Սիվիցկին, իսկ Ագլայան վախվորած դուրս թռավ հիվանդասենյակից։

Անդրեյը պատրաստվում էր քնելու։ Սեղանի վրա թափված թերթերի կույտի մեջ դրված էին սրակապը և սուրը։ Համազգեստն արդեն հանել էր, մետաքսյա տաբատակալները պիրկ գրկում էին կուրծքը։ Նա միայն թեթև հարբած էր, և Ագլայային դիմավորեց ժպիտով։

— Շնորհակալություն, որ եկար,— ասաց։— Քեզ Սիվիցկի՞ն ասաց, որ եկել եմ։

— Այդ ի՞նչ եք արել,— կամացուկ հարցրեց Ագլայան։

Անդրեյը զարմացավ այդ վերաբերմունքից։ Ուսերը թոթվեց, ճտտացրեց տաբատակալներով։ Սակայն Ագլայան իր զայրույթի մեջ այնքան լավն էր, այնպես փայլում էին աչքերը, կիսաբաց բերանն այնքան քնքուշ էր ու գայթակղիչ, որ Անդրեյը պարզեց նրան իր ձեռքերը։

— Դու այդ պեպենոտի մասի՞ն ես ասում,— ծիծաղեց։— Բայց նա երեկ խմիչքի է տվել մի ամբողջ արկղ պայտամեխ։

— Դուք ի՞նչ եք արել, պարո՛ն,— նորից հարցրեց Ագլայան։

— Դե վերջ տուր...

Եվ հանկարծ ապտակի շառաչուն հարվածը խլացրեց նրան։ Նա չհասցրեց ուշքի գալ, երբ հասավ արդեն երկրորդ հարվածը։

Էլի, էլի, էլի...

— Ուշքի՛ եկ,— գոռաց Կարաբանովը և, նահանջելով դեպի պատը սկսեց ծածկվել ձեռքերով։

Ագլայան դաղարեց։

— Չհամարձակվե՛ք պաշտպանվել,— ասաց նա։— Ինչպե՞ս չեք ամաչում։ Եվ դեռ տղամարդ եք կոչվում...

Այդ ժամանակ նա հնազանդորեն իջեցրեց ձեռքերը, և Ագլայան շարունակեց հարվածներ հասցնել նրա դեմքին՝ ձախից աջ։ Պորուչիկի գլուխը ճոճվում էր մի կողմից մյուսը։ Աչքերը հանգած էին, խղճալի։ Նրա քթից սկսեց արյուն հոսել, որն աստիճանաբար սառեցրեց Ագլայայի զայրույթը։

— Այդպես էլ պետք է ձեզ,— ասաց նա։— Դուք սրիկա եք։

Անդրեյը թևքով մաքրեց դեմքը, կամաց ու չարագուժորեն հարցրեց.

— Գիտե՞ք, արդյոք, տիկին, ինչ արեցիք հիմա... Դրանից հետո ինձ մնում է միայն մի բան՝ ինքնասպան լինել։

— Էհ, եղեք... սատանան ձեզ հետ, պարոն,— ասաց Ագլայան և դուրս եկավ։

Նրա հետևից կրակոց չեղավ։

Այդ գիշեր մի քանի հայ ընտանիքներ, թողնելով իրենց տունուտեղը, իրենց այգիներն ու վարելահողերը, բռնել էին տարագրության ողբալի ուղին։ Նրանք իրենց հետ վերցրել էին միայն ամենաթանկագին բաները, ճանապարհի համար ամենաանհրաժեշտը, և Բայազետի դարպասների մոտ կանգնած ժամապահները տեսան, թե ինչպես մթության մեջ սահելով, հեռանում էին երդաձայն սայլերը, ինչպես մայրերը ձեռքերի վրա տանում էին իրենց երեխաներին, ինչպես հետ էին շրջվում ծերունիները, որպեսզի վերջին անգամ նայեն իրենց դատարկ կացարաններին։

Այդ գիշեր հերթապահ պարեկը յունկեր Եվդոկիմովն էր և, այցելելով պահակախմբերին, նա կանգնեցրեց վտարանդիների այդ երթը։

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց յունկերը,— երեխաներով ու իրերով այս գիշերին։

Հայերի ավագը ցույց տվեց ճանապարհից այն կողմ։

— Մենք ավելի անվտանգ ապաստարան ենք գտնում, տղաս։ Մակինի շահը բարի մարդ է, նա մեզ ապաստարան կտա։

— Բայց ինչո՞ւ։

— Վախենում ենք մնալ Բայազետում,— ուղղակի պատասխանեց ծերունին։

— Ինչո՞ւ եք վախենում,— չհասկացավ պատանին։— Չէ՞ որ մենք դեռ այստեղից ոչ մի տեղ չենք գնում։

— Դուք չեք գնում, բայց օսմաններն են գալիս։ Նրանք մեզ բոլորիս կկոտորեն, ինչպես դա արդեն արել են մի քանի անգամ։ Եվ մենք չենք ուզում, որ նրանք խայտառակեն մեր աղջիկներին ու կանանց հենց մեր օջախներում... Իսկ դուք, ռուսներդ,— ավարտեց ծերունին,— շատ երջանիկ մարդիկ եք. դուք թուրքերի դեմ կռվում եք, բայց նրանց հետ երբեք չեք ապրում...

— Հայերին բա՛ց թողնել քաղաքից,— հրամայեց Եվդոկիմովը զինվորներին և հանկարծ սարսափ զգաց։

Տարագիրների սայլերը սև գիշերին ծղրտում էին երկչոտ ու աղեկտուր, ինչպես մարգարեական թռչուններ։

9

Կարաբանովն այժմ զգում էր, թե ինքն ինչպես է աստիճանաբար խճճվում։ Զիյա-Զիյ. կազակներն իզուր չէին բռնել նրան, և ինքը բաց թողեց՝ վախենալով Ագլայայի խանդից. հարգում էր գնդապետ Խվոշչինսկուն, նրա երեսին հարգանքի խոսքեր էր ասում, իսկ հետո գալիս էր դողդողացող Ագլայան՝ այդ մարդու կինը, և նրա առջև պարծենում էր իր սիրային ավյունով. ծեծել էր այդ պեպենոտ Եգորիչին և, ինչպես թվում էր, ծեծել էր գործի համար, բայց հարյուրյակն այժմ նրանից երես էր թեքել. Ագլայան վիրավորել էր նրան ապտակներով. նույնիսկ սպասյակ Տյապաևը նրա վրա նայում էր խղճահարությամբ։

— Իսկ ի՞նչ անել։ Ի՞նչ անել,— բռնում էր գլուխը և ոչ մի ելք չէր կարողանում գտնել. երբ Ագլայան նրա մոտից գնաց, նա իսկապես մոտ էր ինքնասպանության. ատրճանակի փողը դրել էր բերանի մեջ, բայց... սեփական ձեռքից մահ ստանալը նրան ավելի սարսափելի թվաց, քան թուրքական յաթաղանը։

Նա վատ էր զգում, և այդ պատճառով էլ, երբ մի անգամ հանդիպեց Լատիշևին, այսպես ասաց նրան.

— Հը, ի՞նչ է, պրապորշչիկ, վա՞տ եք զգում։

— Վատ եմ,— համաձայնեց նա։

— Ա՛յ, ես նույնպես նողկալի եմ զգում ինձ,— ամփոփեց Կարաբանովը։— Մեզանից յուրաքանչյուրը սրիկա է, միայն տարբեր ձևով...

Անդրեյը միկիտանների մոտից օղի էր գնում և խմեցնում իր ամբողջ հարյուրյակը։ Կազակները՝ ոչինչ, խմում էին, չէին հրաժարվում, անգամ Եգորիչն էր խմում, սակայն նրանց հարաբերություններում արդեն չկար այն աննշմարելի մտերմությունը, գրեթե բարեկամականը, ինչ զգում էր առաջ։ Եվ հիմա արդեն Դենիսկա Օժոգինը, հավանաբար, հոգեկան բարությունից խուրջինը չի լցնի սալորներով. թեկուզ գլխիդ մազերը պոկիր, ոչ ոք քեզ հետ չի կիսի գողացած միսը...

— Բավական է, ապրեցինք,— մի անգամ ասաց Անդրեյը։— Միայն ոչ այնպես, որ մոռանան, այլ կռվի մեջ. կմըտ-

նեմ թշնամու կույտի մեջ, գոնե մի հինգ հոգի կգլորեմ, իսկ հետո էլ՝ ինձ...

Այսպիսի որոշում ընդունելով՝ Կարաբանովն ինչ-որ շուտ վհատվեց։ Դադարեց իրեն հետևելուց։ Մի անգամ նա նեզացրեց Վատնինին, և եսաուլը նրան մայր հայհոյեց։ Այժմ երեկոները Անդրեյը լռակյաց ու մենակ օդի էր ծծում։ Հետո հարբելով հանում էր սուրը, դեպի առաստաղ էր նետում «Թիֆլիսյան տեղեկագրերը» և օդի մեջ կտրատում «Մենք՝ աստծո ողորմածությամբ Ալեքսանդր Երկրորդս, ամբողջ Ռուսիայի՝ Մեծ և Փոքր...» հրամանագրերը...

Սիվցկին, իմանալով Կարաբանովի վիճակը, ամեն անգամ հանդիպելով նրան, որտեղ էլ որ դա լիներ, հոգածու դաստիարակի համառությամբ պնդում էր միևնույն բանը.

— Դադարե՛ք խմելուց, Կարաբանո՛վ։ Դուք կվատվեք այդ դժոխային հնոցում... Ես հիշում եմ մի խորունչի[1], որը սկսել էր հարբել անապատում։ Նրա գլխում ինչ-որ բան էր ճղփում, ինչպես շշի մեջ, և նա սատկեց սարսափելի ջղաձգությունների մեջ... Թողե՛ք խմելը, Կարաբանո՛վ։

— Մի՛ անհանգստացեք, բժի՛շկ,— բթահայաց լսելով խորհուրդները՝ խոսքահաչ էր տալիս Անդրեյը,— դա ինձ հետ չի պատահի։ Կկոտրատեն ձեթի առաջին իսկ կճուճը և սատանի գիրկը կուղարկեն ահա այս հիմար ձիթհանքի հետ միասին...

Շտոկվիշը մի անգամ սկսեց սփոփել նրան.

— Գվարդիոնուս, իզուր են այդ ապրումները։ Ավելի լավ է մի բաժակ գինի խմեք։ Մեղքս ինչ թաքցնեմ, ես էլ սուրբ չեմ... Մի՞թե ես քարոզ պիտի կարդամ այդ անասունին։ Շխկացրել եք դնչին, և թող իրենք էլ մտածեն, թե ինչի համար։ Այդ սրիկաներից վախենալ պետք չէ, միայն ձեռքերդ են հոգնում նրանց ծեծելուց...

Նեկրասովն ուրիշ կերպ ասաց.

— Դուք հիմար մարդ չեք, Կարաբանո՛վ. ձեր մեջ ինձ շատ բան է դուր գալիս։ Սակայն թողեք գվարդիական այդ բարքերը... Այստեղ մարդիկ տոնահանդես չեն անում, այլ կռվում են։ Երբեմն կարող են մեղք գործել, բայց հենց վաղն

[1] Խորունչի — *կազակային զորքերի կրտսեր սպա։*

էլ կարող են զոհվել։ Իսկ դուք ինչ-որ շուտ եք մտադրվել Պատվո բլուրը գնալ...

— Հայրենիքի համար մեռնելը,— պատասխանեց Անդրեյը,— երբեք շուտ չէ։ Այդ մտքին ինձ ընտելացրել են դեռ մանկությունից...

Տրյոխժոննին երբեմն գալիս էր, մոայլ նայում պորուչիկին և զեկուցում, որ հարյուրյակում ամեն ինչ չէ, որ կարգին է. երկու կազակներ տուրուդմփոց են սարքել գարին բաժանելիս, մի կազակ կորցրել է հրացանը, դարբնոցն ուշացնում է ձիերի պայտելը և նման բաներ։ Կարաբանովը շարք էր կանգնեցնում իր հարյուրյակը, Լորդի վրա նստած դուրս էր գալիս շարքի առաջ, ահարեկում մտրակով և հարբած գոռում.

— Սանձարձակ եք դարձել, ես ձեր մերը... Ա՛յ, սպասեք, ես կթողնեմ խմելը և այնպե՛ս կզբաղվեմ ձեզանով, սրիկաներ...

Մի անգամ, լույսը տեսնելով, անցողակի ներս մտավ Կլյուգենաուն, և պորուչիկն անմիջապես զգաստացավ։ Երբ նա հանդիպում էր բարոնին, ակամայից ձգվում էր. իսկ երբ բաժանվում էր, թվում էր, թե ինչ-որ անկարելի գործ է ավարտել։

— Բարև ձեզ, պորուչիկ։ Դուք ինչո՞ւ եք ինձ այնպես նայում, ինչպես օրիորդը քառասունոտանու վրա։

Ակնոցի տակից թարթելով գթաշարժ աչքերը՝ Կլյուգենաուն ասաց.

— Աստված իմ, ինչպե՛ս եք փոխվել։ Ձեզ չեմ ճանաչում։ Դուք միշտ եղել եք այնպես մաքրակյաց, իսկ հիմա...

— Eh, mon cher,— ցինիկորեն ծիծաղեց Կարաբանովը որպես պատասխան,— c'est parce que le militaire comporte la cochonnerie...[1] Նստե՛ք բարոն։

Կլյուգենաուն նստեց։

— Ես զգում եմ,— ասաց նա,— հիմա ձեզ համար ծանր է... Ես ձեր տեղը լինեի, ավելի վատ կլիներ։ Կուզենայի

[1] Է՛խ, սիրելիս, դա նրանից է, որ զինվորական կոչման մեջ թույլ է տրվում խոչութիւն (ֆրանս.)։

օգնել ձեզ, բայց չգիտեմ ինչպես։ Կարող եմ միայն հիշեցնել այն մխիթարիչ դարձվածքը, որ փորագրված է եղել Սողոմոն թագավորի մատանու վրա. «Եվ դա կանցնի...»։

— Դա երբեք չի անցնի,— մորմոքով հոգոց հանեց Կարաբանովը և իր համար օղի լցրեց։ «Չխմեցնե՞մ սրան, հը՞»,— ծուլորեն մտածեց նա։

— Ուզո՞ւմ եք խմել, բարոն։

— Ո՛չ։

— Իսկ եթե խնդրե՞մ։ Գուցե ես թեթև զգամ, եթե դուք խմեք ինձ հետ։

Կլյուգենաուն մոտեցրեց բաժակը։

— Լա՛վ,— ասաց նա։— Որպեսզի դուք թեթև զգաք...

Մի կում օղի խմելով՝ պրապորշչիկը նորից սկսեց խոսել.

— Մարդկային հասարակության մեջ տիրապետում են երեք տեսակի անձեր՝ փողի անձը, ծառայական անձը և սեփական արժանիքների անձը։ Առաջիններն ամեն ինչի հասնում են, երկրորդները՝ շարշարվում, երրորդները վատ են վերջացնում կյանքը։ Լսեք ինձ, Կարաբանո՛վ, ինձ թվում է, դուք պատկանում եք երրորդ՝ մարդկանց ամենադժբախտ կատեգորիային, և ձեր արժանիքները դեռ իրավունք չեն տալիս ձեզ դաժան լինել մարդկանց հետ, որոնք չեն մտնում այդ երեք խմբերից ոչ մեկի մեջ...

— Բավական են բառերը,— ընդհատեց նրան Անդրեյը։— Խմե՛ք մինչև վերջ, պետք չէ նազուտուզ անել։

Պրապորշչիկն անվարժ կուլ տվեց օղին մինչև վերջ և շուտ հարբեց։

— Ձեզ հարկավոր է սիրել մի կնոջ,— խորհուրդ տվեց նա։— Սերը մաքրում է մարդուն և ավելի լավ դարձնում նրան։ Շատ բաներ, որ թվում են անորոշ ու աղոտ, որոշակի տեսք են ձեռք բերում։

— Դատարկ բան,— պատասխանեց Կարաբանովը,— երբ կինը մտնում է մարդու կյանքի մեջ, սկսվում են կազմալուծումն ու քաոսը։ Կինն իր բնույթով ստեղծող չէ. նա քայքայիչ է։ Եթե ուզում եք իմանալ, նա նույն վայրենի քուրդն է...

— Կինը վերակենդանացնում է,— ասաց Կլյուգենաուն։

— Կործանում է,— պատասխանեց Անդրեյը։

— Կինը կյանքի աղբյուր է,— ասաց Կլյուգենաուն։

— Եվ կործանման,— ավարտեց Անդրեյը։

Դրա վրա նրանք կանգ առան։ Կարաբանովը նորից օղի լցրեց, և պրապորշչիկը խմեց։ Միշտ շիտակ Կլյուգենաուն այժմ բոլորովին բացեց հոգին։

— Նա հրաշալի է,— արտասանեց զգացմունքով։— Դուք մի տեսնեիք, թե ինչպիսի խոր աչքեր ունի։ Եվ ինձ հետ հանդիպելիս նա միշտ ասում է, որ շատ ուրախ է ինձ տեսնելու համար։ Ես նույնիսկ բանաստեղծություն եմ գրել...

— Հետաքրքիր է,— ասաց Անդրեյը՝ փորելով ականջը։— Գուցե տաք կարդա՞մ։

Կլյուգենաուն արձակեց համազգեստը, գաղտնի գրպանից հանեց թղթի մի կտոր։

— Ահա,— ասաց նա,— սա ես գրել եմ երեկ...

Ամրոցի այդ հին ուրվականը լեռնածիգ,
Գորշ ծխի հետ գյուղերի՝ հասնում է երկինք։
Լոկ սիրել՝ աննպատակ ու անպատասխան,
Ա՜խ, ես նույնիսկ դրան եմ համաձայն։
Յար, հրաշքների աշխարհում երևացիր
Ահա. և ես հարություն առա։

— Հը՞,— հարցրեց Կլյուգենաուն։

Կարաբանովը մի կողմ շպրտեց բանաստեղծությունը.

— Եթե դուք, բարոն, այդ բանը ոչ մեկից չեք թոցրել, ապա դա այնքան էլ վատը չէ։ Միայն թույլ տվեք մի բոպե լինել Բելինսկու դերում։

— Է՛, ի՞նչ եք ասում, պորուչիկ,— շփոթվեց Կլյուգենաուն,— չարժե... Դա գրված է պատահական... էքսպրոմտով։

— Ես հուսով եմ,— շարունակեց Կարաբանովը,— որ ձեր բանաստեղծությունները ավելի լավ կստացվեն, եթե դուք, բարոն, դրանք գրելիս սահմանափակված չլինեք որոշակի շրջանակներում։

— Ի՞նչ շրջանակներ։

— Դեհ, դուք հո չե՞ք կարող պնդել,— սպանում էր նրան

Կարաբանովը,— որ այս զուգադիպությունը նույնպես պատահական է... Հապա տվեք այստեղ ձեր էքսպրոմտիկը։

Նա եղունգով ընդգծեց բանաստեղծության տողերի սկզբնատառերը.

— Կարդացեք վերևից ներքև, բարոն,— ասաց նա։— Ի՞նչ է ստացվում։

— Իսկ ի՞նչ է որ,— անմիջապես կարմրեց Կլյուգենաուն։

Կարաբանովը քմծիծաղ տվեց։

— Ագլայա,— ասաց նա։— Ես ինչ-որ տեղ լսել եմ այդ կնոջ անունը... դուք անբարոյական մարդ եք, բարոն, ձեզ թույլ եք տվել սիրահարվել ամուսնացած կնոջը...

Թողնելով Կարաբանովին՝ բարոն Կլյուգենաուն կանգ առավ դռների մեջ.

— Ես ձեզանից երկու խնդրանք ունեմ, Անդրեյ Ելիսեևիչ. առաջինը՝ երբեք չկպչեք իմ սիրային զգացմունքներին և երկրորդը՝ այլևս օղի չխմեք. չէ՞ որ վաղը մեզ մոտ սպայական ժողով է...

Գիշերները, երբ լուսավորում էր թուրքական լուսինը, Բայազետի բերդն իր ճակատամասերի սուր ծայրով կորչում էր հեղձուցիչ մթության մեջ և այն ժամանակ նա նմանվում էր մի նավի, որը լողում էր դեպի անհուն անհայտությունը։

Բալկաններում հարձակումը ծավալվում էր հաջողությամբ, և ռուս հերոս զինվորն արդեն թուրքերին քշել էր, ինչպես ասում էին բուլղարացիները, «Սմայլովի դուպկան»։ Սակայն Կովկասում բախտը դավաճանեց ռուսական զենքի հաջողությանը, և թուրքերն սկսեցին հայերի կատաղի կոտորածը, տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ, այդ թվում նաև կրծքի երեխաներ, կոտորվեցին գլխովին։ Այսպիսով, Տեր-Ղուկասովը հարկադրված եղավ անհավասար մարտերում հոգնատանջ եղած իր միավորումներով կանգնեցնել հակառակորդի գրոհը և փրկել հայերին, որոնց նա դեպի ռուսական սահմանն էր ուղարկում լեռնային սարսափելի արահետներով (ավելի լավ ճանապարհներ չկային), ուր վխտում էին միայն վայրի կատուներն ու եղնիկները։ Եվ այդ անասելի ծանր ճանապարհը մնացել է հայ ժողովրդի հիշողության մեջ հավիտենապես։

Սակայն այդ ամենի մասին Բայազետում դեռ ոչինչ չգիտեին, իսկ խորհրդակցությունը, որտեղ պետք է լուծվեր միայնակ կայազորի ճակատագիրը, սկսվեց ինչ-որ տարօրինակ ձևով։

— Պարոնա՛յք,— ասաց Շտոկվիչը,— սկսենք, ինչպես ընդունված է՝ կրտսերների կարծիքը լսելուց։ Խնդրեմ, պարոն յունկեր։

Եվդոկիմովը միանգամից սկսեց խոսել այն մասին, որ շատրվանի ավազանը հարկավոր է լցնել ջրով, բայց Պացեկիչը անմիջապես կոպտորեն նստեցրեց նրան իր տեղը.

— Է՛, յունկե՛ր, մենք հավաքվել ենք լուրջ հարցեր քննարկելու, իսկ դուք այստեղ ջրի մասին եք դուրս տալիս... նստեցե՛ք։

Բարձրացավ Կլյուգենաուն։

— Ես նույնպես,— ասաց նա,— ուզում էի սկսել ամրոցի ջրամատակարարման հարցից, սակայն, չցանկանալով ընկնել պարոն յունկերի վիճակը, կսկսեմ ուրիշ բանից։ Ես արդեն մի քիչ ծանոթացել եմ ամրոցին. այստեղ կա այն ամենը, ինչ հարկավոր է շահի պալատի համար՝ ջրավազան, ապարանք, մզկիթ, ախոռ և պալատական սենյակներ։

— Դե ինչ եք դուք էլ անընդհատ կրկնում՝ պալատ հապալատ,— դժգոհությամբ նկատեց Շտոկվիչը։— Բայազետը պալատ չէ, այլ բերդ։

— Ուրեմն այսպես,— հանգիստ շարունակեց Կլյուգենաուն,— այդ պալատում չկա գլխավորը, ինչը անհրաժեշտ է բերդի համար։— Գլխի թեթև շարժումով ցույց տվեց Շտոկվիչի կողմը։— Չկա աշխուժություն ու մարտունակություն։ Վերջապես, պարոնա՛յք, ուղղակի չկա բերդ, որպես ամրության մի տեսակ։ Բերդը կառուցել է արվեստագետը, բայց ոչ թե ամրաշինարարը։ Բայազետից նահանջելու հարցը ինքնըստինքյան վերանում է, քանի որ այդպիսի ուղիներ չկան։ Ինչ վերաբերվում է զորքերի դեբուշիրացմանը[1], ապա դա նույնպես անհնար է։ Բերդի դարպասներն այնքան նեղ են, որ զորքերը միջնաբերդից դուրս վազելով կընկնեն բեր-

[1] Դեբուշիրացում — զորքերը փոքր հրապարակից ավելի մեծը ապակենտրոնացնելու տակտիկական մաներ։

դախրամի և ժայռերի միջև եղած նեղ հողակտորը։ Այնուհետև,— ասաց Կլյուգենաուն,— Բայազետը կարող է դիմանալ բրոնզե հրանոթների կրակոցներին, բայց Կրուպպի հրանոթների դիմահար զարկերը կջնջեն նրան երկրի երեսից...

— Ի՞նչ եք առաջարկում բարոն,— հարցրեց Պացևիչը հետաքրքրությամբ։

— Ես առաջարկում եմ, պարոն գնդապետ, խնդրանքով թուրքերին նամակ գրել, որ նրանք մեր դեմ Կրուպպի հրանոթներ չօգտագործեն։

— Այստեղ կատակի ժամանակ չէ, բարոն... Ո՞վ է հաջորդը։

— Լատիշևը լռում է,— նկատեց Շտոկվիչը։— Գովելի համեստություն։ Ինչ արած, այդ դեպքում լսենք հարյուրապետներին... Կարաբանո՛վ, կխոսե՞ք։

— Իսկ ի՞նչ խոսեմ,— դեմքի մռայլ արտահայտությամբ պատասխանեց Անդրեյը։— Իմ գործը կազակային է. ինչ հրամայեն, ես էլ կկատարեմ։ Տրամադրություն չունեմ այսօր խոսելու, երբ... Ջուրը սակայն,— անսպասելիորեն պոռթկաց նա,— դա ճիշտ է, հարկավոր է պահեստավորել։ Պարենն էլ դեռ Իգդիրից չի եկել։ Ջորանոցներում սարսափելի շոգ է, իսկ սառցագործական ապարատը դեռ ընկած է Թիֆլիսում... Սակայն, ներեցեք ինձ, պարոնայք, իսկապես ավելի լավ կլինի ես լսեմ...

Խվոշչինսկին զարմանքով ու հանդիմանությամբ նայեց պորուչիկին, բայց Անդրեյը շուտ եկավ և սրի ծայրով սկսեց քչփորել հատակի փոսը։

— Այդպես չի կարելի, պարոնա՛յք,— զայրացավ Շտոկվիչը և հավանաբար անկեղծորեն։— Մեկը սկսում է դատարկ բաներից, երկրորդը՝ խեղկատակում է, իսկ մյուսներն էլ բոլորովին հրաժարվում են խոսելուց։ Այդ դեպքում թույլ տվեք ինձ արտահայտվելու։

Պահանջվեց քարտեզ։

— Այնտեղ է, դարակում,— հուշեց Պացևիչը։— Նեկրասով, դուք բոլորից մոտիկ եք, հանեք քարտեզը։

Յուրի Տիմոֆեևիչը հապաղեց՝ թղթերի, ծխախոտի դատարկ տուփերի և գարշահոտ դեղորայքների սրվակների կույտի մեջ փնտրելով քարտեզը։

— Գլխավոր շտաբը սա է,— հետևից կծեց նրան Իսմայիլ խանը,— բայց չի կարող անգամ քարտեզը գտնել։

Ոչ ոք ուշադրություն չէր դարձնի խանի այդ չարախոսությանը, գիտենալով նրա բնավորությունը, բայց Պացևիչը հանկարծ անսպասելի կատաղությամբ հարձակվեց փոխգնդապետի վրա.

— Ձե-բրդ պայ-ծա-ռա-փայլություն,— ասաց նա՝ կատաղությունից կմկմալով։— Նեկրասովը քարտեզը չի գտնի, բայց դրա փոխարեն, ինչ որ պետք է, կգտնի քարտեզի վրա։ Իսկ դուք ի՞նչ եք... Ձեր սուր խելքը սեղմեք ազդրերի արանքում և լսեք, թե ինչ են ասում հասուն մարդիկ։

Քարտեզը գտան։ Բաց արեցին։ Պացևիչը հանգստացավ։

— Պարեմ, կարող եք շարունակել,— թույլատրեց նա։

Շտոկվիչը ամենևին էլ հիմար մարդ չէր և նա լավ հասկանում էր, որ Պացևիչի շուրջն արդեն դատարկություն է առաջացել։ Սակայն չարժեր փչացնել հարաբերությունները նրա հետ, և դրա համար էլ, չնայած բորբոքված ներածականին, Եֆրեմ Իվանովիչն սկսեց բավականին զգույշ։

— Ինձ թվում է,— խորիմաստ հայտարարեց նա՝ մի բոպե տխուր դեմք ընդունելով,— որ վերջին օրերի դաղը փորձը, այնուամենայնիվ, պետք է զիտել դրականապես, քանի որ այն հնարավորություն տվեց տեսնելու մեր վրիպումները։ Սակայն ոչինչ ձեռք չբերելով՝ մենք արդեն սկսել ենք կորցնել։ Պահանջվում է, պարոնայք, ինչպես սիրում է կրկնել Խվոշչինսկին, գործ։ Եվ առաջինը, ինչ անհրաժեշտ է, ծավալուն հետախուզությունն է Բայազետի շրջակայքում։ Հարկավոր է վերջապես պարզել հակառակորդի ճշգրիտ քանակը, և դրանում ես կարող եմ համաձայնել Ադամ Պլատոնովիչի հետ։

Վերջացնելով իր դիվանագիտությունը՝ նա նստեց։ Եվ այդ ժամանակ բարձրացավ Վատնինը. գլուխը թեքեց ինչպես ցուլ, սեղանին դրեց վիթխարի ձեռքերը։

— Ես,— ասաց Վատնինը,— ակադեմիա չեմ ավարտել... ես,— ասաց Վատնինը,— դիրք կարդալ չեմ սիրում... Ես,— ասաց Վատնինը,— գուցե հիմար եմ... Սակայն կքորեմ այն տեղը, որտեղ քոր է գալիս։

Մի քանիսը ծիծաղեցին, բայց Վատնինը շարունակեց նույն ոգով։

— Իսկ քոր է գալիս, պարոնայք ժողով, իմ ամբողջ մարմինը։ Գեղեցիկ խոսել բոլորն էլ կարող են։ Իսկ ահա իրերի կույտը, որ բերդ ես մտնում, խանգարո՞ւմ է։ Խանգարո՛ւմ է։ Հավաքել պե՞տք է։ Պե՛տք է... Ներեցեք, պարոնայք ժողով. մենք ձեզ հետ միասին արտաքնոց ենք գնում, որտեղ գնացել են և շահերը։ Իսկ զինվորը ո՞ւր է վազում, դուք մտածե՞լ եք։ Թփուտների մե՞ջ... Իսկ եթե վաղը քրդերը մեզ Բայազետում փակե՞ն։ Այն ժամանակ ինչպե՞ս. «դիզինտերստվո» կսկսվի, կսատկենք...

Իսմայիլ խան Նախիջևանսկին ծիծաղեց, բայց այս անգամ նրան ոչ ոք չձայնակցեց։ Վատնինն ուղղակի ասաց ճշմարտությունը, որ տհաճություն պատճառեց շատերին։

— Դե՛հ,— հարցրեց եսաուլը,— այն ժամանակ ի՞նչ պիտի անենք...

— Ճիշտ է, Վատնին,— հավանություն տվեց Նեկրասովը։— Ապրե՛ս։

— Եվ դա դեռ բոլորը չէ, պարոնայք ժողով... Հարկավոր է Բայազետի բոստանների բերքը հավաքել, տերերին հատուցել։ Թող որոշ բաներ հասած չլինեն, բայց բոլորը մերը կլինի։ Հարկավոր է գնել հենց արմատների վրա։ Եվ բերդ բերել։ Թուրքերի խրճիթներում համատարած խուզարկություն անցկացնել։ Ձեռքներից վերցնել բոլոր հրացանները, բոլոր ատրճանակները, բոլոր յաթաղանները։ Մեյդանը պետք է ցրել գրողի ծոցը։ Որպեսզի ոչ մի հռետոր, ոչ մի քաղաքականություն, ոչ մի բամբասանք չլինի... Եթե թուրքերին լսես, ապա մենք՝ ռուսներս, և՛ կեղտոտ ենք, և՛ հարբեցող, իսկ իրենք խոզերից վատ են ապրում, ժլատությունից կըխեղդվեն մի կոպեկի համար...

Նա մի փոքր դադար տվեց և վերջացրեց ահեղ ուժով.

— Ռուս զինվորը եկել է, ուրեմն եկել է ռուսական իշխանությունը։ Եվ ուրիշ ոչինչ։ Չպետք է նրանց՝ այդ շներին, հնարավորություն տալ հայհոյելու ու վատաբանելու մեր Ռուսաստանը և ռուս մարդուն... Ներեցեք, պարոնայք ժողով, եթե ինչ-որ բան այնպես չեմ ասել։ Մենք անկիրթ մարդիկ ենք...

Եվ նա նստեց։ Ժողովն աշխուժացավ։ Նեկրասովը խոսք վերցրեց.

— Հարգելի կոլեգաներ,— վստահորեն սկսեց շտաբսկապիտանը,— Պետրոս Մեծը մի առիթով ասել է. «Խանդավառությունը չեն հանձնարարում և խորհուրդ չեն տալիս, բայց փող վերցնել և չծառայել՝ ամոթ է...»։ Այսպես, ուրեմն, այստեղ բացի հարյուրապետ Վատնինի գործնական եզրակացություններից, հայտարարված է կապիտան Շտոկվիչի գործնական առաջարկությունը՝ հետախուզություն անցկացնելու մասին։ Ես համաձայն եմ, դա պետք է։ Սակայն, պարոնայք, դա ոչ մի դեպքում մասսայական չպիտի լինի։ Միայն հեծելազորային։ Դրա համար հարկավոր է գիշերը երկու հարյուրյակ ուղարկել Վանի ճանապարհը։ Թող կազակները թուչեն ժայռերի գագաթները, ֆալշֆեյերներով սրագ լուսավորեն թշնամու ռազմաճամբարը և առանց իրարանցման վերադառնան Բայազետ։

Կազակային հարյուրապետները տագնապալից իրար նայեցին։

— Այդպես,— թեև ոչ անմիջապես հավանություն տվեց Վատնինը։

Կարաբանովը թեթև գլխով արեց։

— Իսկ ի՞նչ կասի կապիտան Սիվիցկին,— հարցրեց Պացևիչը, որը մեծ ուշադրությամբ լսում էր սպաների բոլոր ելույթները։

Սիվիցկին հաշիվ տվեց իր գործերի մասին։

— Իմ ասպարեզի համար ես հանգիստ եմ։ Երեկ ստացել ենք քլորոֆորմի և վիրակապության պարագաները։ Անկողնային սպիտակեղենը լրացված է։ Գործիքներն ու դեղորայքը կարգին են։ Տասնհինգ հոգի վիրավոր են, նրանցից մեկը երեկոյան կմահանա։ Ութ հոգի հիվանդ են։ Կայազորում վարակը, եթե այն կա, չի համարձակվի գլուխ բարձրացնել։ Ինչ վերաբերում է Վատնինի կշտամբանքներին, ապա թող նա դրանցով դիմի բարոն Կլյուգենաուին։ Ֆյոդոր Պետրովիչը զուգարաններում հրաձգության համար հրակնատներ է սարքել։

Կլյուգենաուն տարածեց իր փոքրիկ, երեխայական ձեռները.

— Պարոնայք, չէ՞ որ կրակել նույնպես պետք է։

— Այո, քիչ էր մնում մոռանայի,— հանկարծ սթափվեց բժիշկը։— Հարկավոր է մեկն ու մեկին շտապ ուղարկել Թիֆլիս, արագացնել սառցագործական մեքենայի առաքումը։ Ինչպես նաև՝ լազարեթի համար կարբոլային օճառ է հարկավոր։

— Էլ ի՞նչ կուզեք,— բարկացավ Շտոկվիչը։— Գուցե նրանք լաֆի՞տ կամ տուալետի քացա՞խ կցանկանան։

— Լաֆիտը զինվորին հարկավոր չէ,— առանց փոքրինչ ժպտալու պատասխանեց Սիվիցկին,— իսկ զուգարանի քացախի համար շնորհակալություն, որ հիշեցրիք։ Եվ հետո, բարի եղեք նշել, որ պահանջվում են ռազմաերթային գոնե հուսարական ամորձակալներ՝ աճուկային իջեցվածքից խուսափելու համար։

— Դուք կփչացնեք մեր զինվորներին։

— Մի՛ վիճեք, կապիտա՛ն,— հրամայեց Պացևիչը պարետին,— և նշեք, ինչ ասում է Ալեքսանդր Բորիսովիչը։

Արտահայտվելու հերթը հասավ մայոր Պոտրեսովին. իր առջև բացելով Բայազետի շրջակայքի դծագրերի փաթեթը՝ հրետանավորն անսպասելիորեն ասաց.

— Թույլ տվեք արտահայտվել հին զինվորին, որը պատիվ ունի լինելու հրամանատարն այն մարդկանց, որոնք դատապարտված են մահվան... Այո՛, այո՛, պարոնա՛յք։ Ավազի պարկերը՝ լավ, բայց հրետանավորներին հարկավոր է նաև վազել հասնել մինչև թնդանոթները։ Իսկ բակերի, և հատկապես հետնաբակի տարածությունները կարող են գրնդակոծվել ցանկացած բլրակից։ Եվ դա դեռ բոլորը չէ... Բերդի հիմար հատակագիծը գործելու հնարավորություն է տալիս միայն մեր երկու թնդանոթներին։ Այսպիսով՝ մզկիթի և ահա այս շենքի պատճառով, մենք հսկայական մեռյալ անկյուն ունենք։ Բայազետի հատակագիծը ամբողջովին ստեղծվել է ռուսական սահմանի կողմից հարձակումները հետ մղելու հաշվով։ Այժմ, հարգելի ժողովականնե՛ր, մեր առջև խնդիր է դրված՝ գրոհին դիմանալ հենց հակառակ բարձունքից, և այսպիսով...

— Պարզ է,— ձեռքը թափ տվեց Իսմայիլ խանն ու վեր կացավ,— այժմ ես կասեմ։ Ոչինչ պետք չէ։ Հարկավոր է հրդեհել քաղաքը և հետ գնալ Իղդիր... Հարկավոր է Բայազետում կոտորել բոլորին, ինչպես շան լակոտների, և գնալ Իղդիր։ Ես բոլորին լսեցի։ Գոնե մեկը ինչ-որ լավ բան ասա՞ց։ Ոչ ոք չասաց... Ամեն ինչ վատ է։ Ես, Իսմայիլ խան Նախիջևանսկիս, ասում եմ ձեզ՝ հարկավոր է գնալ միանալու գեներալ Տեր-Ղուկասովի զորքերին... Եվ վերջ... Բայազետը թող այրվի...

— Մենք ապրում ենք 19-րդ դարում, խա՛ն,— միջամտեց Նեկրասովը։

— Հասկանում եմ,— փշաքաղվեց խանը՝ փայլեցնելով իր սափրած գանգը։— Դուք այստեղ շատ եք, իսկ ես՝ մենակ։ Ես լռում եմ...

— Եվ լավ կլինի, խան,— ասաց Պացևիչը, շրջվելով դեպի գնդապետ Խվոշչինսկին։— Նիկիտա Սեմյոնովիչ, ինձ թվում է, պետք էր սկսել ոչ թե յունկեր Եվդոկիմովից, այլ ուղղակի ձեզանից։ Մենք սպասում ենք...

Խվոշչինսկին դանդաղ վեր կացավ։

— Պարոնայք,— ասաց նա՝ նայելով Կարաբանովին,— ես զգում եմ, որ այստեղ կամաց-կամաց, աննկատելիորեն հասունացել է հետախուզություն անցկացնելու կարևոր հարցը։ Սակայն տարօրինակ է, որ բոլորը շրջանցում են այն, վախենում դրանից... նախապես զգուշացնելով, որ ես կենթարկվեմ մեծամասնության կարծիքին, ուզում եմ սակայն նշել, որ կտրականապես դեմ եմ նման միջոցառումներին։ Անցկացնել հեծելազորային մարտարշավ, լուսավորել հովիտը... Սակայն, ի սեր աստծո, ինչի՞ համար դաշտ դուրս բերել ամբողջ կայազորը։ Ոչ ոք չի գնա սատկած էշ փնտրելու, որպեսզի նրանից հանի պայտերը. ավելի հեշտ է նոր պայտեր սարքել. այնպես էլ մենք հակառակորդի մասին կարող ենք իմանալ այն ամենը, ինչ պետք է՝ դուրս չգալով բերդից։ Ո՛չ, ո՛չ, ինչպես ցանկանում եք, բայց ես այստեղ համաձայն չեմ պարոն Շտոկվիչի հետ...

— Դուք վերջացրի՞ք,— հարցրեց Պացևիչը։

— Դեհ, ես արդեն կարծես խոսելիք էլ չունեմ։

— Լա՛վ։— Պացևիչը ծանրորեն բարձրացավ սեղանի հետևից։— Խոսքն ինձ է պատկանում... Ես դժգոհ եմ ձեզանից, պարոնայք,— խիստ ասաց նա սպաներին։— Ոչ ոք ձեզանից

շեշտը չդրեց գլխավորի՝ ռուս զինվորի հերոսության վրա։ Իսկ այդ մասին շատ լավ ասված է հենց գեներալ Բեզակի կանաչ գրքույկում...

— Իմ կարծիքով,— մոթմոթաց Սիվիցկին, մերթ ընդ մերթ բաց թողնելով գլանակի ծուխը,— դա բոլորի կողմից նկատի էր առնված և առանց կանաչ գրքույկի...

— Մեր առջև, պարոնայք,— համառորեն շարունակեց գնդապետը,— քրդերի վայրենի և անկազմակերպ հորդաներ են։ Տիծաղելի է ասել, թե պետք է նստել բերդում։ Եթե հետախուզության ժամանակ, որից դուք բոլորդ այդպես վախենում եք (և ես չեմ կարող հասկանալ, թե ինչու), հակառակորդն անգամ հանդիպի մեզ, ապա դա նույնիսկ լավ է։ Զինվորները միայն ուրախ կլինեն։ Եվ ինչպես ասում են՝ գնդակը հիմար է, կեցցե սվինը։

Նեկրասովը դժգոհ մոթմոթաց քթի տակ.

— Եվ գնդակն է հիմար, և սվինն էլ ավելի խելացի չէ...

— Դուք ի՞նչ ասացիք, շտաբս-կապիտան։

— Ներեցեք, պարո՛ն գնդապետ, ես թույլ տվեցի ինձ նշել, որ սվինը գնդակից խելացի չէ։

— Տարօրինակ է,— կեղծ ժպտաց Շտոկվիչը։

— Ուրեմն այսպես,— համառորեն, ասես մեխը մինչև գլխիկը խփելով, Պացևիչը պնդացրեց խոսակցությունը։— Հետախուզություն, պարոնա՛յք, ինչ էլ ասելու լինեք, միևնույն է կանցկացվի։ Վաղն ևեթ... Հարկավոր է զինվորին թափ տալ, նա երկար ժամանակ նստած մնացել է ամրոցում։ Թիֆլիսը մեզանից գործեր է սպասում... Ես կարող էի, իհարկե, օգտվելով ինձ տրված իշխանությունից, ուղղակի հրամայել։ Բայց չեմ ցանկանում խախտել սպայական ժողովների ավանդույթը և այդ պատճառով էլ հետախուզության հարցը դնում եմ բաց քվեարկության...

Բոլոր սպաներն ակամայից կուչ եկան։

— Եվ այսպես, սկսե՛նք, պարոնա՛յք,— ասաց Շտոկվիչը։— Ով համաձայն է հետախուզություն անցկացնելու, խնդրում եմ ձեռք բարձրացնել։

Ձեռք բարձրացրին գնդապետ Պացևիչը, շտաբս-կապիտան Նեկրասովը, պրապորշչիկ Լատիշևը, կապիտան Շտոկվիչը և

բոլորովին անսպասելի՝ փոխգնդապետ Իսմայիլ խան Նախիչևանսկին։

— Հինգ հոգի,— հաշվեց Բայազետի պարետը։

Նեկրասովը ձեռքն իջեցնելով, ավելացրեց.

— Ես կողմ եմ հետախուզության, բայց պայմանով, որ կազակները, ժայռերից հովիտը լուսավորելուց հետո, անմիջապես հետ դառնան։

— Հի՛նգ հոգի, շա՛տ լավ է,— ասաց Շտոկվիչը։

— Ո՞վ է դեմ, պարոնա՛յք։

Ձեռք բարձրացրին գնդապետ Խվոշչինսկին, յունկեր Եվդոկիմովը, պրապորշչիկ Կլյուգենաուն, մայոր Պոտրեսովը և եսաուլ Վատնինը։

— Նույնպես հինգ հոգի,— զարմացավ Շտոկվիչը։— Եվ բոլորը, հավանաբար, մի-մի բաժակ լաֆիտ են ուզում...

Հարցը, այսպիսով, մնում էր չլուծված՝ հինգը հնգի դեմ։ Սակայն մեկը դեռ մնացել էր՝ Կարաբանովը, և Բայազետի պարետը դիմեց նրան.

— Իսկ դուք ինչո՞ւ եք լռում, պորուչի՛կ։

Կարաբանովը դանդաղ բարձրացրեց ձեռքը։

— Ես,— ասաց նա դժվարությամբ,— հետախուզության... կողմ եմ...

— Ապրե՛ս,— խրախուսեց նրան Պացևիչը։— Եվ այսպես, պարոնա՛յք, կազակները թող պատրաստեն ձիերը, զինվորները թող պաքսիմատ ու փամփուշտներ ստանան։ Գիշերը տիկերը լցնել թարմ ջրով։ Գործը կսկսվի վաղը...

Երբ սպաները դուրս էին գալիս փողոց, Անդրեյի թևը բռնեց գնդապետ Խվոշչինսկին.

— Ես զարմացած եմ, պարոն Կարաբանով... Դուք ինքներդ, հիշո՞ւմ եք, եկաք ինձ մոտ և այնպես ճիշտ էիք դատում... Դուք նույնիսկ նշեցիք այն ժամանակ, որ հույսներդ դրել եք այդ խորհրդակցության վրա։ Եվ հանկարծ, ձեր սանձը տվեցիք Պացևիչի ձեռքը։

— Ինձ ամեն ինչ ձանձրացրել է,— ասաց Կարաբանովը։— Ամպերն արդեն կուտակվել են, թող որոտա ամպրոպը։

— Ես ձեզ չեմ հասկանում...

— Ախր ինչ կա այստեղ չհասկանալու։ Ինձ համար իսկա-

պես միևնույն է։ Եվ գրողը տանի նրանց բոլորին... Որքան շուտ, այնքան նույնիսկ լավ...

— Այդ դեպքում ներեցեք,— ասաց Խվոշչինսկին։— Պարզվում է, որ ես սխալվել եմ ձեր հարցում... Ո՛ղջ եղեք։ Մինչև վաղը...

Ջարդված ու ճմլված, ասես նրա վրա գցել էին ուժից վեր մի ծանրություն, Անդրեյն ամբողջ օրն անընպատակ թափառում էր մեյդանում։

10

Աչքերը փակելով և դեպի երկինք թեքելով իրենց գեղջկական միամիտ դեմքերը՝ փողհարները փչեցին կանչը.

«Վե՛ր կաց, վե՛ր կաց, վե՛ր կաց։ Ճանապարհների թախիծը, գիշերային խարույկները, ուղեկալների շշուկները, սրերի զրնգոցը և սվինների շառաչը. վե՛ր կաց, զինվոր, դրանք սպասում են քեզ»։

Թմբուկների վրա կախվեցին թեթև, արագաշարժ փայտիկները և ապա դիպան ձգված, զրնգուն մորթիներին՝ տրա՛-տա՛-տրա՛։

«Գնա՛, զինվոր, արդյոք որևէ բան չե՞ս մոռացել զորանոցում։ Գնա՛, դու առաջինը չես, և ոչ էլ վերջինը, ում վիճակված է մեռնել Ռուսաստանի համար... Ուրեմն, գնա՛, զինվոր. մենք քեզ համար թմբկահարում ենք ամենաուրախ ազդանշանը՝ արշավի ազդանշանը»։

— Ղրիմի գնդի յոթերորդ վաշտ... ա՛ռջ։

— Ստավրոպոլի գնդի գումարտակ... ա՛ռջ։

— Ելիզավետոպոլցիներ, էրիվանցիներ... ա՛ռջ։

Ճոճվեցին սվինների շարքերը, զրնգացին գոտկակապերից կախված մետաղյա տափաշշերը, զինվորական վերնաշապիկների սպիտակ ալիքը հանկարծ շուռ եկավ քրտնած մեջքերով, և արդեն գնա՛ց, գնա՛ց, գնա՛ց. երիտասարդ և հասակավոր, ոյազանցի և տամբովցի, պիտերցի և յարոսլավցի, ամուսնացած և ամուրի, ուրախներ և տխուրներ՝ գնացի՛ն, գնացի՛ն, գնացի՛ն. և ահա նրանք արդեն դուրս են գալիս Բայազետի դարպասներից, նրանք գնում են, իսկ նրանց

հետևից թմբուկները բոմբյուն են հանում, իսկ նրանց հետևից շեփորները հնչում բարձրաձայն...

— Գնացինք,— ասաց Վատնինը։— Երևում է ինչ-որ մեկը թիֆլիսում ցանկություն ունի պարծենալ խաչով... Խաչեր կլինեն, իժային հոգիներ...

Վարգով վազանցելով հետևակին՝ առաջին հարյուրյակը առաջ պոկվեց։ Քամին լայն բացեց կազակային չերքեզկաները, մերթընդմերթ փայլատակում էին փամփշտակալները, լսվում էր ասպանդակների զրնգոցը, ձիերի խոխոջն ու փնչոցը, և այդ ամենը սլացքով անցնում ու հեռանում էր չգիտես ուր...

— Կարաբանով,— բղավեց Շտոկվիչը։— Դուրս բերեք ձեր հարյուրյակը... Դուք կգնաք ձախից...

— Դուրս կբերեմ,— կոպիտ պատասխանեց պորուչիկը։— Մինչև գիշեր կհասցնենք... Բոլորս այնտեղ կլինենք։

Նա առանց պատճառի հարվածեց իր Լորդի ատամներին, դժկամությամբ բարձրացավ թամբի վրա։ Նույն դժկամությամբ էլ կանգնելով շարասյան առջևում՝ հարյուրյակը դուրս բերեց բերդից, շարեց բերդախրամի երկայնքով և դանդաղ շրջայց կատարեց՝ ուշադիր նայելով կազակների դեմքերին։

— Ձգե՛ք ասպանդակները... Ջուրը չե՞ք մոռացել։ Փակի՛ր խարապարկը... Նիզա՛կը դեպի վեր... Ի՞նչ ես ծիծաղում, հիմար...

Եվ այդ պահին նա տեսավ, թե ինչպես Բայազետի բաց դարպասներից, իր երկարոտն ձիու վրա նստած, դուրս եկավ գնդապետ Խվոշչինսկին։ Ագլայան քայլում էր նրա կողքից, սպիտակ, գեղեցիկ շրջազգեստով, որի ուսին կարմիր վարդ էր կպցրած, նա կարծես գնում էր պսակի և ձեռքով բռնել էր ասպանդակից։

— Հար-յուր-յա՛կ...— հրամայեց Անդրեյը, սակայն կոկորդում հանկարծ ինչ-որ մի բան սեղմվեց, և նա լռեց...

Խվոշչինսկին կախվեց թամբից և Կարաբանովի աչքի առաջ երկար համբուրեց իր կնոջը։ Նրանք ինչ-որ բան ասացին միմյանց։ Եվ գնդապետը ծիծաղեց։

— Լա՛վ,— հասավ Անդրեյի ականջին,— ես կսպասեմ...

Հետո Ագլայան վազեց առաջ և, բռնելով ձիու սանձից, տարավ իր հետևից։ Գնդապետը, նայելով ինչ-որ հեռու-հեռու, լուռ օրորվում էր թամբի վրա, իսկ կինը գնում էր առջևից և տանում նրա ձին։

Եվ չդիմանալով՝ Անդրեյը շուռ եկավ.

— Իմ հետևից՝ հարյուրյակ, վարգո՛վ... մա՛րշ...

Հարթաղանների տակ

Ես այն ժամանակ երիտասարդ էի և, ինչպես ինձ թվում է, շատ բան չէի հասկանում։ Մենք արյունով փոխհատուցեցինք ուրիշների սխալները, բայց... Եթե դուք տեսնեիք, թե մենք ինչպես էինք մեռնում։ Ես չգիտեմ, ինչպիսի երեչային ծաղիկներ կարող են աճել այն հողի վրա, որ մենք ոռոգել ենք մեր արյունով։ Սակայն ես տեսել եմ իմ սեփական աչքերով, թե ինչպես անապատում օձերը կպչում էին սպանվածների վերքերին և խմում նրանց արյունը՝ ուշելով այդ արյունից։ Եվ դա սարսափելի չէր մեզ համար, մենք գիտեինք, թե ինչի համար էինք մարտնչում և մենք բարձր էինք պահում ռուս զինվորի հեղինակությունը...

Ցունկեր Ա. Ն. Եվդոկիմով

1

Եվ ահա՝ լեռները։ Եվ ահա՝ լայնարձակ տարածությունը։ Եվ ահա՝ գիշերը։

«Եվ ահա ես՝ պորուչիկ Անդրեյ Կարաբանովս։ Ի՞նչ եմ ուզում այս կյանքից։ Ի՞նչ է պակասում ինձ... Ամեն ինչ կարծես արդեն եղել է՝ և՛ սեր, և՛ արատներ, և՛ հպարտություն, և՛ ստորացում, և՛, այնուամենայնիվ, ինչ-որ բան դեռ մնացել է... Եթե իմանայի՝ ես ի՞նչ եմ ուզում»։

Կարաբանովը թամբի վրա շուռ եկավ դեպի մի կազակ։

— Լսի՛ր, դու հիմա որևէ բան ուզո՞ւմ ես։

— Մորս մոտ կուզենայի գնալ,— նա տխուր հոգոց հանեց։— Ծեր է արդեն... Տանիքը կվերանորոգեի, ստանիցայի աղջիկներին կտնտղեի։ Հետո նորից էլի՛ կարելի էր ձի նստել...

— Ես նախանձում եմ քեզ,— ասաց պորուչիկը։— Ձեր մոտ ամեն բան ինչ հեշտ է ստացվում։

Մթության մեջ ոչ ոք չտեսավ, թե ինչպես Անդրեյը, հպվելով Լորդի քնքուշ բաշին, իր նկատմամբ խղճահարությունից կամաց լաց էր լինում՝ կծելով շրթունքները, և այդ պահը նրա համար շատ դառն էր, ու այդ դառնությունից նա նույնիսկ անսովոր լավ էր զգում իրեն։

«Մարդի՛կ,— հարցնում էր նա մթությանը,— դուք ինչո՞ւ եք մոռացել ինձ... Մարդի՛կ, դուք առանց ինձ արդյո՞ք ավելի լավ եք զգում... Մարդի՛կ, ես ուզում եմ ձեզ հետ լինել... Մարդի՛կ, ցույց տվեք ինձ դեպի ձեզ տանող ճանապարհը... Մարդի՛կ, խղճացեք ինձ...»։

Խոր գիշերին, սարսռեցնող, զարհուրելի խավարում, Կարաբանովի կազակները, ձիերի սանձերից քաշելով, այծային արահետներով խարխափումով շրջանցեցին լեռները և, իջնելով հովիտ, միացան առաջին հարյուրյակին։

— Ինչ տարօրինակ են ոռնում շնագայլերը,— ասաց Կարաբանովը։— Այդպես լաց են լինում, հավանաբար, երեխաները կամ նեղացած կանայք։

Խարույկները չվառեցին։ Թշնամու մոտիկությունը թույլ չէր տալիս արածեցնելու ձիերին։ Նրանց վրայից նույնիսկ չէին վերցրել թամբերը և զգուշության համար պահում էին սանձված։ Կոշտ եղեգները խավարի մեջ ոչ թե խշխշում էին, այլ շաչում դանակների պես։ Մարդիկ տանջվում էին անքուն՝ սպասելով լուսաբացին։

— Արդեն ժամը հինգն անց է,— տխուր ասաց Վատնինը։— Գոնե շուտ հասներ հետևակային էշելոնը։ Այսպիսի գիշերից վատ բան չկա։

— Այնտեղ ահա կրակ է վառվում,— դեպի գիշերվա սևությունը ցույց տվեց վախմիստրը։— Երևում է, քուրդն է խարույկի մոտ տաքանում։

Լուսադեմին կազակները դուրս եկան Վանի ճանապարհը, և շուտով լեռներից իջան հետևակային շարասյունները։ Առջևից ձիերի վրա գնում էին գնդապետներ Պացևիչը և Խվոշչինսկին։ Հարյուրյակներն ուրախացան՝ հետևակի, զինվորները՝ կազակների համար։

— Դուք հանկարծ չլքեք մեզ,— լսվում էր շարասյունից։— Մենք էլ ձեզ կօգնենք։

Ջորքերի շարժման կարգը մշակել էր Խվոշչինսկին, և Պացևիչը հնազանդորեն համաձայնեց նրա հետ։ Գնդակի Պացևիչը հնազանդորեն համաձայնեց նրա հետ։ Գնդակի թռիչքի տարածության չափ առաջ էր ուղարկվել խոպերցիների դասակը. Կարաբանովի հարյուրյակը, անցնելով քարակույտերի միջով, շարասյունը պաշտպանում էր ձախ թևից. Վատնինի հարյուրյակը վարգով սլացավ աղուտների միջով դեպի հետևակի աջ կողմը. շարասյունից մի քիչ հետ մնալով՝ գալիս էր Ելիզավետոպոլի և Էրիվանի խայտաբղետ միլիցիան։

Ծագում էր արևը։ Սկսվում էր շոգը։ Զինվորների գլուխները ծածկված էին հակաարեգակնային սպիտակ սաղավարտներով։ Ավելի ու ավելի հաճախակի էին զնգում ձեռքից ձեռք փոխանցվող զինվորական տափաշշերը։ Չնայած գիշերային հոգնեցուցիչ անցումին, մարդիկ առույգ էին, նույնիսկ ուրախ։ Մեկ-մեկ ճանապարհի եզրերին հանդիպում էին մուսուլմանական գերեզմանաքարեր։

Մի տեղ շարքը խախտվեց։

— Եղբայրներ,— ճչաց ինչ-որ մեկը,— աղջկա ծամեր...

Թուրքական մի գերեզմանի վրա իսկապես դրված էր կանացի մազերի հաստ ու երկար մի հյուսակ՝ ծղոտի գույնի։ Ինչի համար էր այն դրված այստեղ, ոչ ոք չգիտեր։ Սակայն,

մի քիչ առաջ գնալով, խոպերցիները հանկարծ հանդիպեցին մի ռուս կնոջ կիսամերկ մարմնի. վզից դուրս էր ցցված մետաղի կորաձև մի կտոր, նրա ոտքերն արդեն հոշոտել էին շնագայլերը։ Ո՞վ էր նա, ինչպե՞ս էր ընկել այստեղ, ի՞նչ տանջանքների էր դիմացել— դա բոլորի համար գաղտնիք էր...

Պացևիչը առաջինը հագավ գլխարկը։

— Նշանակում է,— ասաց նա,— Թուրքերը մոտակայքում են։ Մենք արդեն տեսնում ենք նրանց հետքերը... Եղբայրնե՛ր, քրիստոնեական ձևով թաղեք այս նահատակին...

Շարասյունը շարժվեց առաջ։ Արևն այրում էր զինվորների թիկունքները։ Ատելի Թուրքիան, անծանոթ լեռները, երկրնքի չոր կապույտը, մուգ կարմրագույն ավազները, կիրճերում խոզերի խռնչյուն արձակող քամիները, պղտոր գետերը. այս ամենը տարածվում էր զինվորների հայացքի առջև։ Եվ կարող է պատահել, որ հենց այդ ճանապարհով արդեն անցել են հազարավոր ռուս մարդիկ, որպեսզի մեկընդմիշտ ոչնչանան ստրկության մեջ՝ գալերաներում[1] ու տաժանավայրերում, հարեմներում ու հանքահորերում...

Շարասյան թիկունքում չոր ճարճատեցին կրակոցներ։ Ռեդիֆների բանդան թուքստոցներից հարձակվել էր հետ մնացողների վրա։ Բայց շարասյան զինվորները գլուխները չկորցրին։ Զինվորները միլիցիայի հետ համերաշխ խմբով հարձակվեցին թուրքերի վրա։ Ռեդիֆներն սկսեցին հետ փախչել, բայց Կարաբանովը կիսահարյուրյակի հետ արդեն արշավում էր՝ բանդայի դեմը կտրելու։ Կարճատև կրակոցներ, սրերի զիլ շաչյուններ՝ քառասուն ռեդիֆ ընկան մարտադաշտում։ Նրանց պետին մահից փրկեց լայնափողք շալվարը, որի մեջ նա խճճվեց ոտքերով, ընկավ ու մնաց կենդանի։

Շարասյան զինվորները մեկեն ուրախացան։ Ճիշտ է, շատերը խելացնորի տեսք ունեին, հատկապես երիտասարդ զինվորները, որոնք մի տեսակ բութ, չափից դուրս ուշադիր հայացքով նայում էին արյունաշաղախ սվիններին ծայրերին։ Ամեն կողմից լսվում էին ձայներ.

[1] Գալերա — թիանավ։

— Իսկ ես նրան հրացանի կոթով, աստված վկա։ Այն էլ ասամներին։

— Իմ հակառակորդը դիմացկուն էր... ինչպես գազան։

— Զգիտեմ, երևի նա հաշիշ էր ծխել մահից առաջ...

Էշելոնի վերջում, ջրի տիկերով բեռնված ուղտերից անմիջապես հետո, դողդողալով շարժվում էր սանիտարական կիսաֆուրգոնը՝ դեղատնային երկանիվ սայլակի հետ։ Բուժակ Նենյուկովը եզրափակում էր շարասյունը, որպեսզի ուժասպառ եղածներից վերցներ պայուսակները, ճանապարհին հավաքեր ուշագնացներին, թեթևակի թթվացներ տաքաղչի ջուրը, եթե որևէ զինվոր խնդրեր։

Սակայն դեռ մինչև երթադադարը Նենյուկովն սկսեց սպիտ ծծել դեղատնային արկղից և շուտով իրեն հազիվ էր պահում երկանիվ սայլակի վրա։ Խվոշչինսկին, դեղագործին հարբած տեսնելով, պատյանից դուրս քաշեց սուրը. ոչ ոք գնդապետին այդքան սաստիկ կատաղության մեջ դեռ չէր տեսել։

— Կտոր-կտոր կանեմ այս շանը,— գոռաց նա՝ տափակ կողմով հարվածելով դեղագործի ուսերին ու գլխին, իսկ գնդապետի՝ շոգից սպիտակած շրթունքների վրա սկսեց եռալ կատաղության փրփուրը։— Ուշքի՛ արի, շո՛ւտ, ստո՛ր։ Կեղտո՛տ խոզ, սրիկա՛...

Շուտով երթադադար տրվեց։ Մի քարի նստելով՝ Խվոշչինսկին ծնկների վրա բացեց երթային տետրը և երկար ինչ-որ բան էր գրում՝ երբեմն նայելով շուրջը։ Պացևիչը, թմբուկին նստած, ծամում էր անանուխաբլիթը և, հավանաբար, իրեն Նապոլեոն պատկերացնում։

Կազակները նախկինի պես սիգարշավում էին հեռվում, իսկ հետևակը ցրվել էր ջուր և պտուղներ որոնելու։ Վազում էին ինչ-որ առվակից ջուր բերելու։ Խմում էին։ Մի քանիսը երեսներն էին լվանում և գեղջկական ձևով սրբում վերնաշապկի փեշով։ Չոր երնջակի գուղձիկներ էին հավաքում, խարույկ վառում։

Իսկ ծերունի գրենադյոր Խրենովը, զինվորների հետևից երթի պոչին կպչելով, նույնիսկ կաթսայիկով թեյ էր դրել։ Մի երիտասարդ զինվոր նայեց նրան, նայեց և հանկարծ հարցրեց.

— Քեռի՛, իսկ ինչպե՞ս պիտի թեյը խմեք։ Կաթսայիկի՞ց պետք է լակեք, ինչ է։ Թե՞ տափաշշից։

Կավալերի մազոտ ունքերն ահեղ վեր քաշվեցին.

— Կորի՛ր այստեղից, կատվի ձագ։ Լակո՞տ...

Ծերունին խոտերի չոր ցողուններ պոկեց։ Այդ խողովակներից մի-մի հատ տվեց ընկերներին և ինքը փորի վրա պառկեց խարույկի մոտ.

— Լակե՛ք, փսլնքոտներ... Մտցրու կաթսայիկի մեջ և ծծիր, ինչպես կոմս։ Ի՞նչ է, չգիտեք, թե ինչպես մի կաթսայիկից կարելի է ամբողջ վաշտով թեյ խմել։ Միայն մի պայման կա՝ ով կաթսայիկի մեջ պղպջակ թողնի, ուրեմն նրա համար թեյն արդեն վերջացավ...

Եվ թեյ էին խմում։ Եվ արևն էր կախված։ Եվ խոտերն էին օրորվում։

Այդ ժամանակ Պացևիչը, վերջացնելով բլիթ ուտելը, ման էր գալիս զինվորների մեջ մի խարույկից մյուսը, հրամայում էր «ուռա՜» գոռալ և, բռունցքով իր ճարպոտ կուրծքը ծեծելով, երդվում.

— Եղբայրնե՛ր, եթե բուսուրման հանդիպի, նահանջ չսպասեք, չի լինելու։ Եթե շեփորահարը նահանջի շեփոր զարկի, չհավատաք նրան. նա դավաճան է։ Եթե ես հրամայեմ նահանջել, ինձ սվինահար արեք, եղբայրնե՛ր։ Խոցեք, չվախենաք, ուղղակի փորս խոցեք...

Եվ երբ, անհամ խոսքերից հետո, նա գնում էր զինվորների մեկ ուրիշ խմբի մոտ, շատերն ասում էին.

— Իսկ ի՞նչ կլինի իսկապես խոցենք։ Ա՜յ թե ճարպ դուրս կհոսի՞...

Վատնինը սրարշավ մոտեցավ Կարաբանովին։ Առանց որևէ գործի։ Հենց այնպես, զրուցելու։ Մտրակը թափահարեց հեռու մի կողմ և անհանգստացած ասաց.

— Ամեն ինչից երևում է, որ եթե հարձակվեն, ահա թե որտեղից, պորուչի՛կ... Կոտորել՝ լա՜վ, կկոտորենք, չէ որ մեր առջև դելիբաշներ չեն։ Դելիբաշը վարձկաններից ամենաճարպիկն է։ Փողի և շապաուլի համար է կռվում։ Իսկ այս բաշիբոզուկներին ասում եմ՝ ա՛յ թե կկոտրեինք։ Սակայն, է՜խ, եղբա՛յր, ձեռքներս ու ոտքներս կապված են։ Չէ որ հետևակին չես կարող թողնել։ Մեր տղաներն են... Նեկրասովը հո գլխով մարդ է. ճիշտ ասաց՝ թոիր վերև, լուսավորիր, թրխկացրու գլխին և վերադարձիր տուն... էն էլ ոչ հիմա, այլ գիշերը...

Կարաբանովը լռում էր։ Կազակներն շտապ ինչ-որ տեղ ջրի գնացին։ Վերադարձան լիքը տափաշշերով։ Բայց իրեն չառաջարկեցին։ Խնդրել նա չէր ուզում։

— Մարդի՛կ, մարդի՛կ,— հառաչեց նա,— արդյոք դուք լա՞վ եք զգում առանց ինձ...

2

Երբ ջոկատը, անցնելով ժայռոտ զառիվերը, սկսեց իջնել հարևան հովիտը, հակառակորդի ուժեղ պարեկները երևացին։ Նրանք կպել էին շարասյան ձախ թևին, բայց Կարաբանովը, ցանկանալով խնայել ձիերին, հետևներից հետաք

— Անթիվ, անհամար մի բազմություն է գալիս։
— Որտեղի՞ց է գալիս։
— Կարծես ձախ կողմից։
— Զինվորնե՞ր են, թե՞ հետևակ։
— Շեյթանը գիտի։ Միայն դղրդյունն է լսվում։
— Լա՜վ, եղբայր։ Շնորհակալություն։

Հակառակորդն սկսել էր բարձրանալ լեռները։ Երբեմն քրդերը ինչ-որ բան էին բղավում կազակների կողմը՝ թափահարելով վահանները։ Ժայռերը գորշ էին, ակոսված ճեղքվածքներով, որոշ տեղերում կանաչին էին տալիս թփերը։ Աբարատի շաքարանման գլուխները հեռվում մխրճված էին կապույտի մեջ։ Սակայն այդ գեղեցկությունները հիմա չէին կարող հաճույք պատճառել Կարաբանովին...

Արշավելով նրան մոտեցավ Եվդոկիմովը։

— Անդրեյ Ելիսեևիչ,— շնչահեղձ լինելով՝ հաղորդեց յունկերը,— գնդապետ Պացևիչը հրամայում է մարտի բռնվել և կրնկակոխ հետևել քրդերին։ Առաջին հարյուրյակն արդեն գալիս է ձեզ մոտ... Հետևակը վերադասավորվում է...

— Ինչո՞ւ,— հարցրեց Կարաբանովը։

— Այսինքն,— չհասկացավ յունկերը,— ինչպե՞ս թե ինչու։

— Իսկ գնդապետ Պացևիչին ինչի՞ համար է պետք խցկվել այդ լեռները։ Այստեղ նրա համար Շվեյցարիա չէ, և մենք էլ անգլիացի տուրիստներ չենք։ Ես որտեղի՞ց իմանամ, թե ի՞նչ կա այդ ժայռերի հետևում... Գուցե այնտեղ նույնպիսի հեշտությամբ կկտրեն իմ գլուխը, ինչպիսի հեշտությամբ ես հանում եմ գլխարկս...

Սակայն փետրախոտի նման օրորվելով քամուց՝ հեռվում արդեն բացազատվում էր առաջին հարյուրյակը, քարերի մեջ արդեն վազվզում էին զինվորները, և կատաղած Կարաբանովը պատյանից դուրս քաշեց սուսերը.

— Իմ հետևի՜ց... վար-գո՜վ...

Լեռնալանջը զառիկող էր, այն հաղթահարեցին մի թափով։ Հետո ձիերի սմբակները սկսեցին վիժել զառիթափից։ Կազակները թամբերի վրայից վերցրին հրացանները, յուրաքանչյուրը մտրակով հարվածեց իր ձիուն, որպեսզի նա վազի ներքև։

Եվ սկսվեց սովորական փոխհրաձգություն։

— Ինչպիսի հիմարություն,— զայրանում էր Կարաբանովը։— Խվոշչինսկին էլ կատարյալ հիմար է, ո՞ւմ է պետք այս ամենը։

Աբրամ[illegible]կից կրակելով՝ նա կազակների հետ բարձրանում էր ժայռակատարը։ Թուրքերը պատասխանում էին անմիաբան, նույնիսկ ինչ-որ դժկամությամբ։ Բայց ահա, ի մի հավաքելով ձիերը, թշնամիները հասան մինչև լեռնանցքը, և անմիջապես սկսվեցին հոծ համազարկերը։

Կազակները հայհոյելով պառկեցին։

— Նրանց հնարավորություն չտա՜ք ներքև իջնելու,— գոռաց Կարաբանովը և, թռչելով զինվորների վրայից, վազեց հասավ Խվոշչինսկուն, որը, կողքի վրա պառկած, թաշկինակով սրբում էր վիթխարի հեռադիտակի ոսպնյակները։

— Ես չեմ հասկանում՝ ի՞նչ է կատարվում,— ջղայնացած բղավեց Անդրեյը, գնդակների սուլոցի տակ պառկելով գնդապետի կողքին։— Չէ՞ որ թուրքերին պարտադրելով այս մարտը, մենք չենք կարող նահանջել առանց մարտի։ Պարզ է, ինչպես երկու անգամ երկու... Դրա համար բոլորովին էլ պետք չէ Սուվորով լինել։

— Կարաբանո՜վ,— անվրդով պատասխանեց Նիկիտա Սեմյոնովիչը,— դուք առանձնապես շատ մի ջղայնացեք. հարկավոր է մեռնել միշտ հանգիստ...

Անդրեյը ցնցվեց վիրավորանքից.

— Ես վախկոտ չեմ, դուք այդ գիտեք։

— Միայն համազգեստը մարդուն դեռ քաջ չի դարձնում։

Կարաբանովը վեր թռավ, վերադարձավ իր կազակների մոտ։ Վազեվազ, ճտքակոշիկները որոտաձայն զարկելով քարերին, կրակելով ծնկի վրայից, մեկ-մեկ մոտենում էին ստավրոպոլցիները։ Միլիցիան սկսեց շրջանցել ժայռի ելուստը։ Սպանվածները միանգամից շրմփալով ընկնում էին երեսնիվեր, զառիթափով գլորվում ցած, թաղվում թփուտների ու ծերպերի մեջ...

— Ա՜խ... ա՜խ... ա՜խ...— ցավից տնքում էր մեկը։

Պրապորշչիկ Լատիշևը սողալով մոտեցավ Անդրեյին՝ հետևից քարշ տալով քարերին զարկվելուց ծնգծնգացող սուրը։

— Պարոն պորուչիկ, ներեցեք, ես ձեզ խնդրանք ունեմ...

— Այդքան քաղաքավարի մի եղեք։ Ի՞նչ է պետք։

— Մի ծխախոտ տվեք։ Իմը վերջացել է...

Կարաբանովը գրպանից շպրտեց ծխախոտատուփը։ Պրապորշչիկը սկսեց ագահորեն ծխել։ Նրա ձեռքերը դողում էին։ Համազգեստի ծալվածքի վրայից վերցնելով միջատը՝ բաց թողեց կանաչի մեջ և ծխախոտի ծուխը փչեց վրան։

— Հիմա,— ասաց նա ոչ անմիջապես,— Պացևիչը կանչեց կամավոր-առաջամարտիկներին, և ես նրանց պիտի տանեմ այնտեղ... Դուք ազնիվ մարդ եք, Կարաբանով։ Շնորհակալություն, որ իմ ստորությունը չհրապարակեցիք։ Եվ ես չեմ կարող գնալ՝ չսեղմելով ձեր ձեռքը... Մնաք բարո՛վ։

Անդրեյը սեղմեց պրապորշչիկի նեղ, խոնավ ափը, որ զինվորական պաքսիմատի մեծություն ուներ.

— Թողնենք այդ, Լատիշև...

— Ես ուզում եմ վերջում էլի մի բան ասել. խորհուրդ չեմ տա բարեկամություն անել Նեկրասովի հետ...

— Իսկ ինչո՞ւ։

— Ես չեմ կարող ասել... թեև, ո՛չ, իմացեք, նրան վազուց արդեն հետևում է գաղտնի ոստիկանությունը...

Ինչ-որ մեկը խփեց Կարաբանովի չոռած ոտքերի ներբաններին։ Անդրեյը շուռ եկավ. գետնին քիփ կպած Պացևիչը շշնջաց նրան.

— Պորուչի՛կ, բարձրացրեք կազակներին։

«Դե՛, այդ էր պակաս»,— որոշեց Կարաբանովը։

— Ես կազակներին չեմ բարձրացնի։ Թող գնան ցանկացողները։ Իսկ կազակները կմնան այստեղ... Հետևակը կոչնչանա առանց հեծելազորի...

Գնդապետը նորից թխկթխկացրեց նրա կրունկներին։ Այս անգամ ինչ-որ ծանր բանով։ Անդրեյը նորից նայեց և Պացևիչի ձեռքում տեսավ «բուլդոգ» սիստեմի վիթխարի ատրճանակը։

— Դուք հրաժարվո՞ւմ եք,— հարցրեց Պացևիչը։— Լատի՛շև, աղավնյակս, ձերբակալեք նրան... Կարաբանո՛վ, հանձնեք զենքը։

— Զենքը չեմ տա,— պատասխանեց Անդրեյը և սողաց մի կողմ, որպեսզի իր մարմնով գնդապետին չպաշտպանի գնդակներից։— Ես ավելի շուտ կմնամ առանց անդրավարտիքի,— ավելացրեց նա զայրացած,— բայց զենքը չեմ տա. ես դեռ պետք է կռվեմ...

— Բայազետում կխոսենք,— սպառնաց նրան Պացևիչը։

— Հապա ինչպես չէ,— պատասխանեց պորուչիկը։— Մի՞թե դուք դեռ հույս ունեք այստեղից դուրս պրծնել...

Կամավորների ժայռակատար ելնելը սարսափելի էր։ Ցաքաղանների և սրերի խուզող խաշաձևումների, դաժան վայնասունների և փականների չխկչխկոցների ներքո լատիշը, այնուամենայնիվ, մարդկանց ժայռակատար հասցրեց։ Կուրծք-կրծքի, գնդակ-գնդակի, «բաշ առ բաշ», դեմ առ դեմ ելան։ Սկսվեց կոտորածը... Իսկ այնտեղ մի կավածեփ պատ կար, ալյահից էլ հին։ Արյունահեղությունից արդեն գազազած, կամավորներն ինչ-որ հրաշքով մի թափով թռան անցան նաև այդ պատը, վերևից միահամուռ հարձակվեցին թուրքերի վրա և... նրանցից ոչ ոք հետ չվերադարձավ։

— Օ՞-օ՞-օ՞,— սկսեց տնքալ Պացևիչը՝ լսելով սպանվողների բացականչությունները, և ձեռքերով փակեց դեմքը։

Կարաբանովն արդեն սլանում էր դեպի բարձունքը։ Կազակներն արագ տարածվում էին պատի երկայնքով, հրացանները կոխում հրակնատների մեջ։ Անպետք վառոդի գազերից ծանր էր շնչել։ Վատինը նստեց՝ մեջքը հենելով հինավուրց պատին, եսաուլի հաստ, փոշոտ շրթունքներն ամրոջովին կեղապատվել էին, մորուքը կարծես ճերմակել էր։

— Աղյո՞ւս է սա, թե... հենց էնպես,— ասաց նա՝ ձեռք տալով պատին։— Է՛, լա՛վ, առայժմ նստած ենք։ Իսկ հետո ի՞նչ պիտի անենք։

Կողքին մի կազակ սպանվեց։ Հրակնատի միջից։ Ուղիղ ճակատին։

— Հետո ի՞նչ է լինելու,— հարցրեց Կարաբանովը շնչահեղձ։

Նա վերցրեց սպանվածի հարցանը, խոթեց քարերի արանքը։ Թուրքական գնդակը, բութ մատի նման խրվեց նրա առջևի կավի մեջ՝ վրան լցնելով հեղձուցիչ փոշին։ Վատինը նրան ուժով հետ քաշեց հրակնատից.

— Նայի՛ր, պորուչի՛կ... Դե թո՛ղ գա... Նայի՛ր հապա...

— Հա՜,— ասաց Անդրեյը՝ հրացանը գցելով,— դա արդեն պատերազմ չէ։ Այ թե գարշելի օր է այսօր, հա՜։

Լեռնաշղթայի հետևից, Բայազետի ջոկատից մի չորս վերստ հեռավորության վրա, սայթաքելով ձորն էին իջնում միանգամից մի քանի հարյուր թուրքական հեծյալներ։ Պարսկաստանի կողմերից, նիզակները ցցած, փոշու մեջ կորած, վիթխարի հրեշի նման հեծյալ քրդերի մի հեղեղ էր շարժվում։ Իսկ ավելի ներքև, նեղ, կանաչ հեղեղատի երկայնքով, օձի նման ձգվում էր հետևակ ռեդիֆների երկար շարքը. նրանք իրենց ուսերին կրում էին հրացաններ, յաթաղաններ և երկար նիզակներ։

Աչքաչափով կարելի էր որոշել թշնամիների թիվը՝ հինգ հազար մարդ։ Սակայն թշնամու հեծյալների առաջին ալիքն արդեն անցել էր, և այդ ժամանակ հորդեց երկրորդը, հետո՝ երրորդը։

— Փրկվե՛ք...

— Կանգնի՛ր...

— Փախի՛ր...

— Ո՞ւր ես խցկվում, անպիտան։

— Եղբայրնե՛ր...

— Կանգնեցե՛ք, սրիկանե՛ր...

Իսկ շեփորներն արդեն ազդարարել էին նահանջ։ Հետո նահանջը կարծես դանակով կտրեցին, և ժայռերի վրա կախվեց հավաքի տխրագին ազդանշանը։

Վազքի ընթացքում կրակելով ատրճանակից՝ Կարաբանովը, ինչպես վերջին նապաստակ, փախուստի նետվեց դեպի հովիտ։

Պատը, որի հետևում սպանվել էին կամավորները, արդեն թուրքերի ձեռքում էր։ Շրմփալով՝ ուղղաբերձ թեքության վրայով դեպի հովիտ էին գլորվում սպանվածներն ու վիրավորները...

— Բայց դուք արագ եք վազում, Կարաբանով,— դիմավորեց նրան Խվոշչինսկին։— Նույնիսկ Դենիսկային անցաք։

— Ներքև վազելը վեր բարձրանալ չէ,— խոսքահաչ տվեց Կարաբանովը,— միշտ ավելի հեշտ է...

Եվ այստեղ եղավ այն, ինչ պիտի լիներ։

Թուրքական հորդաների առջև առաջին սարսափն արդեն անցավ, և մարդիկ սկսեցին արագ դասավորվել քառանկյան ձևով։ Նորից լցնում էին հրացանները, կապում էին վերքերը, ջուր էին խմում, փնտրում իրենց ընկերներին։

Կազակներն արդեն թռել էին թամբերի վրա և ախորժանքով խնչում էին աջ ու ձախ։

— Ոչինչ,— ասում էին տարիքավորները,— կդիմանանք...

Պացևիչը մոտեցավ Խվոշչինսկուն։

— Իսկ դուք ինչո՞ւ եք լռում, գնդապետ,— ասաց նա։— Ես գիտեմ, որ զինվորները պատրաստ են ձեզ համար աղոթել աստծուն... Ուրեմն և հրամայեք նրանց, որ կանգնեն պատի նման։

— Այո՛,— տխուր պատասխանեց Խվոշչինսկին,— ես գիտեմ, նրանք կհավատան։ Բայց պատկերացրեք, որ հանկարծ ինձ սպանել են... Այն ժամանակ ինչպե՞ս։

Մի պատահական գնդակ սուլեց Պացևիչի գլխավերևում։ Նա պառկեց ձիու բաշի վրա, խոստովանեց.

— Նիկիտա Սեմյոնովիչ, թանկագինս... Ես չգիտեմ ինչ անել... Խորհուրդ տվեք։

Խվոշչինսկին երկար ժամանակ զինվորների գլխի վրայից նայում էր դեպի փոշեպատ երկինքը։

— Հրամայե՛ք շտապ նահանջել դեպի Բայազետ... Այս ամենը անիմաստ է ու անհեթեթ։ Պետք չէ ձու խաչելու համար սեփական տունը վառել։ Հակառակորդի քանակը մենք կարող էինք իմանալ նաև լրտեսների միջոցով, առանց դուրս գալու բերդից... Նահանջի ազդանշան տվեք։

— Բայց ես ի՞նչ անեմ,— խեղճացած բացականչեց Պացևիչը։— Թիֆլիսն էր մեզանից գործեր պահանջում։

— Փրկեցե՛ք մարդկանց, գնդապե՛տ... Եթե Թիֆլիսում շտաբային համհարզները նոր խաչով կանանց դուր գալու համար ծարավ էին մեր արյան, ապա արյունն արդեն թափվել է։ Նրանց խաչերն ապահովված են...

Շարասյունները շարժվեցին։ Գնում էին արագ։ Կազակային հարյուրյակներն առաջվա նման արշավում էին թևերից։ Մարդիկ հաճախ հետ էին նայում, ուր մորեխի նման կուտակվում էր թուրքական հեծելազորը, և շուտով արդեն ոչ թե քայլում, այլ վազում էին։

Կարաբանովը, ուշքի գալով և հաշվելով սպանվածներին, հասավ Խվոշչինսկուն։

— Հրամայեք որևէ բան։ Հրամայեցեք հենց դուք, անձամբ... Չէ որ այդպես անհնար է։

— Այդ մասին, պորուչիկ, դուք պետք է մտածեիք դեռ երեկ, սպայական ժողովում, որի հետ դուք այնքան հույսեր էիք կապում։

— Դե լավ,— մեղքը խոստովանեց Անդրեյը, ձեռքից գցելով սանձափոկերը։— Թող որ ես սրիկա եմ։ Թող որ ես ոչնչություն եմ։ Բայց գոնե դուք ցույց տվեք ինձ տեղը։

— Ռուս սպան միշտ էլ պատվով կգտնի իր տեղը մարտում...

Եվ նրանք բաժանվեցին։

3

Այդ օրն Ագլայան արթնացավ մտախոհ ու տխուր։ Նրան անհանգստացնում էին հղիության դեռևս ոչ պարզ նշանները։ Ճիշտ է, կանացիական իր անփորձությամբ նա նույնիսկ միամտորեն զվարճանում էր վախի վրա։ Սակայն Բայազետում չկար մի կին, որի հետ կարողանար խորհրդակցել, և այդ պատճառով Ագլայան ուղղակի վախեցավ։ «Հավանաբար, այդպես էլ կա,— մտածում էր նա դեռ անկողնում պառկած։— Աստված իմ, ի՞նչ կլինի, հը։ Եվ եթե ստել, ապա ո՞ւմ՝ նրա՞ն, թե՞ Անդրեյին... Իսկ նա այստեղ ինչ անի...»։ «Նա»-ն արդեն երեխան էր՝ դեռ անորոշ ու խորհրդավոր մի բան։

Բայց ո՞վ է նրա հայրը։ Դրանում կասկած չկար՝ Անդրեյը, ամենաօտար և ամենամոտիկ մարդը։ Ագլայան ակամայից հիշեց նրա միշտ շտապողական փաղաքշանքները և, վարդագույն շրթունքը կծելով, կամացուկ լաց եղավ։ Տաղավարի լուսամուտներից արևի ճառագայթներն արդեն ներս էին թափանցել, ժամանակն էր վեր կենալու...

Մայոր Պոտրեսովը այդ գիշեր վատ քնեց։ Նա վերջին օրերին խիստ հոգնել էր և իրեն վատ էր զգում։ Սպասյակը խղճում էր բարի ծերուկին, հաճախ թաց լաթեր էր դնում մայորի կրծքին։ Պոտրեսովը պառկած էր հեղձուկ մթության

մեջ, հիշում էր հանգուցյալ կնոջը՝ Գլաշային, առաջին մանկան լացը, որ լսվեց իրենց տան մեջ, իսկ հետո բաց արած ութ բերաններ, ինչպես ագռավի բնում... Շուտով լույսը սկսեց բացվել, նա վեր կացավ և ականջ դրեց սրտի տրոփյունին։ «Հալից ընկել ես, ծերուկ թաղամավոր»,— ասաց մայորը և գնաց մասնակցելու բերդի աշխատանքներին։ Ամբողջ կյանքում Պոտրեսովը պատվի և պարտքի մարդ է եղել։

Կլյուգենաուն այդ գիշեր ամենևին չէր պառկել։ Իրիկվանից մնացել էր հետևելու իր սակրավորների աշխատանքին, հետո նրանցից մեկը հին աղբակույտի միջից բահով դուրս հանեց Սաադիի արաբերեն հատորյակը և տվեց սպային։ Կլյուգենաուն արաբերեն գիտեր ինքնուսուցմամբ, սակայն բանաստեղծությունների իմաստը լավ էր հասկանում։ «Գեղեցիկ շատ կանայք են թաքնվում չադրայի տակ, բայց երբ չադրան մի կողմ նետես, այն ժամանակ կտեսնես մորդ մորը...»։ Երազող ու թափառաշրջիկ պրապորշչիկը չէր կարողանում գնահատել արժեքները։ Լուսնի լույսի տակ նա կարդաց այդ տողերը, հետո պոկեց էջն ու վառեց, որպեսզի կարդա մյուսը։ Բրնձից պատրաստված թուղթը թշշալով վառվում էր ձեռքի մեջ, բայց Կլյուգենաուն հասցրեց կարդալ մյուս բանաստեղծությունը, որպեսզի երկրորդ էջը վառեր երրորդը լուսավորելու համար։ Հետո լույսը բացվեց, և եկավ մայոր Պոտրեսովը։

— Ես նախանձում եմ հնադարյան մարդկանց իմաստությանը,— ասաց Կլյուգենաուն՝ իրենից հեռու շպրտելով գրքի դատարկ կազմը։— Ամեն ինչ որքան պարզ է ու հասարակ։ Հետ քաշիր չադրան, և դու կտեսնես մորդ մորը։ Դրա համար էլ մենք պետք է հարգենք բոլոր կանանց, որպեսզի նրա մեջ չնեղացնենք մեր մորը։

Ամրոցն արթնանում էր։ Զինվորները բակերի միջով ձիերին քշեցին ջուր խմելու։ Քնաթաթախ տեր Գերասիմը, վզին փաթաթած գյուղական սրբիչը, որի վրա աքլորներ ու շոգեքարշներ էին ասեղնագործված, գնում էր լվացվելու։ Գթասիրտ խոհարարը, դուրս քաշելով սպայական սեղանի համար մորթելու դատապարտված ոչխարը, աղեկտուր խընդրում էր սրան-նրան, որ մորթեն։ Իսմայիլ խանը ախոռից բորիկ դուրս եկավ շատրվանի մոտ, սպասյակը օճառում էր

նրա մազոտ ոտքերը, այլապես խանը չէր կարող հագնել իր առանց ներբանի պճնազարդ ճտքակոշիկները։

— Այսօր ամսի քանի՞սն է,— հետաքրքրվեց խանը։

— Վեցը,— պատասխանեցին նրան։— Հազար ութ հարյուր յոթանասունյոթ թվականի հունիսի վեցը։

Իսմայիլ խանը խոստացավ հիշել։ Հետո եֆրեյտոր Ուչաստկինը, որը միայն երեկ էր դուրս գրվել հոսպիտալից, մի քիչ կաղալով, զորանոցից դուրս հանեց և բակում շարք կանգնեցրեց դասակի կեսը։

— Ինչո՞ւ զենքերով,— հարցրեց նրան Պոտրեսովը։

— Նորին բարեծնություն կապիտան Շտոկվիչն է հրամայել։ Մի հրեա էր եկել, ասաց, որ մեյդանում թուրքերը մեր տղաներից երեք հոգու սպանել են...

Երևաց և Շտոկվիչը՝ ընթացքի ժամանակ սուրն ամրացնելով գոտկակապին։ Մոայլորեն մի-մի բաժակ լաֆիտ առաջարկելով սպաներին, նա զինվորներին հրամայեց սվիններն ամրացնել հրացաններին և տարավ իր հետևից։

Կլյուգենաուն զրոցեց գլուխը.

— Ա՜յ թե գործեր են, հա՜, պարոն մայոր... Ճշմարիտ է, երեք զինվորներ երեկ իմ ներկայությամբ պատրաստվում էին մեյդան գնալ։ Իրենց խմբի համար միս գնելու։ Մեկն այնքան հիմար էր, որ ոչ մի կերպ չէր կարողանում փողերը հաշվել։ Վախենում էր, որ չրավարարի։ Խեղճի աչքերը կապո՜ւյտ-կապո՜ւյտ էին, ասես տերեփուկ...

Իսկ մեյդանն աղմկում էր։ Քրդերի սուր դեմքերի միջից մեկ-մեկ երևում էին նաև պարսիկների գիրգ կերպարանքներ, խալաթների բազմության մեջ փողփողում էին գնչուհիների վառվռուն ցնցոտիները։ Պտտվում էին մրոտված շամփուրները, զնգում էր պղինձը, զինագործներն անուշադրով լցված բաղյայի մեջ էին մտցնում թշշացող սրերը, ոռնում էին սոված մուրացկանները։ Զարմանալի գեղեցիկ, բայց պակասամիտ մի երիտասարդ այծի նման մկկում էր, և դրա համար նրան դրամ էին տալիս։ Հեռվից եկած ուղտերը, պառկելով գետնին, մռնչում էին հակերի ծանրության տակ, և կիսամերկ ուղտապանները, որպեսզի աշխուժացնեին հոգնած կենդանիներին, ձեթ էին լցնում նրան ռունգները։

— Կա՜նգ ա՜ռ,— հրամայեց Ուչաստկինը։

Պապանվածներին դուրս բերեցին քարվանսարայից։ Երեք դիակներ դրվեցին սսկված մեյդանի մեջտեղը, ինչպես երեք սարսափելի կարմիր կոճղեր. միայն մեկի մոտ, ասես զարմանքից, բաց էին մնացել կապույտ աչքերը և ունայնորեն նայում էին փոշուց դեղնակապույտ դարձած թուրքական երկնքին։

— Տանջել են գարշելիները,— ասաց Շտոկվիչը, փակելով այդ կապույտ աչքերը, որոնք ապրելու էին Ռյազանի աղջիկներին գերելու համար, նա հանեց գլխարկը, ջղաձգաբար խաչակնքեց մի քանի անգամ։

— Ուռուս-վատ, խփիր գյավուրներին,— կոկոաց ինչ-որ մեկը և մի մեծ քարով հարվածեց կապիտանի ուսին։ Նա ցավից նստեց.

— Ա՜-ա՜-ա՜յդ-պե՜-ե՜ս...

Շտոկվիչը դաժան էր, բայց վախկոտ չէր և որոշեց պատասխան տալ այդ հարվածին։ Պատյանից հանելով սուրը՝ կապիտանը բարձրաձայն գոռաց ամբոխին.

— Հե՜յ, դո՜ւք, կույրե՜ր... Ես՝ Բայազետի պարեսս ասում եմ ձեզ. Ռուսաստանը Կահիրե չէ և ոչ էլ Թավրիզ։ Եթե պետք լինի, նա կճզմի ձեզ, ինչպես կեղտը ոտքերի տակ։ Կստիպենք ձեզ խոզի ականջներ ուտել։

Խոզի անունը տալու ժամանակ, որի միսը ալլահը խորհուրդ չի տալիս ուտելու ուղղափառներին, մեյդանը սկսեց թքել, թափահարել խալաթների փեշերը։

— Ուչաստկի՜ն,— կամացուկ կարգադրեց կապիտանը,— հրամայիր մի-մի փամփուշտ լցնել։ Ո՞վ է սպանել այս զինվորներին,— նորից գոռաց ամբոխին կապիտանը։— Մի՞թե նրանք նեղացրել են ձեզ։ Կամ կողոպտե՞լ են՝ չվճարելով մսի համար։

Ամբոխը հետ քաշվեց, բայց քարերը թռչում էին ամեն կողմից։ Նրանց հարվածներից խուսափելու համար կեռմաններ տալով Շտոկվիչը, չնայելով արգելքներին, ուղղակի շարժվեց մեյդանի ամբոխախիտ տեղը։ Եվ այդ կարճահասակ, պինդ ու դաժան մարդը, ամբոխի միջից դուրս պոկեց երկու կովարարների՝ մի հաստափոր ղազիի, որը քարեր էր շպրտում, և մի կատաղած քրդի, որի աչքի վրա դեղին հատ կար։

— Արի՛, արի՛ այստեղ։ Կեղտոտնե՛ր... Ես ձեզ հիմա մի-մի բաժակ լաֆիտ կտամ...

Մի սատանայական պառավ կպել էր նրա ուսադիրներից։ Գեղեցիկ պակասամիտը, որը նման էր երիտասարդ Հիսուս Քրիստոսին, դաղարեց այծի նման մկկալուց և գոտկի տակից հանեց դանակը։ Կապիտանի գլխարկը խփել գցել էին գլխից, և հիմա փորձում էին նրան գետին գլորել։ Բայց Եֆրեմ Իվանովիչը ավելի կտրուկ դուրս եկավ, նա կատաղի ուժով իր զոհերին դուրս պոկեց ֆանատիկների այդ ոռնացող ոհմակի միջից...

Սրբելով դեմքի արյունը և շոշափելով այդ խառնակովի ժամանակ կոտրած ատամը՝ կապիտանն ասաց Ուչաստկինին.

— Կանգնեցրո՛ւ պատի մոտ... Հենց այստեղ։ Ուղղակի քարվանսարայի մոտ։ Թող տեսնեն, որ մենք չենք վախենում։ Եկել է ռուս զինվորը,— անսպասելիորեն հիշեց նա Վատնինի խոսքերը,— ուրեմն եկել է ռուսական իշխանությունը։

Աղմուկով չխկչխկացին հրացանների փականները։ Եվ քուրդը կրճտացրեց ատամները, հարուստ դատավորը սկսեց ոռնալ։ Ամբոխը հանկարծ խաղաղվեց, ծնկների վրա սողաց դեպի Շտոկվիչը։ Մոլլան ձեռքը գցում էր սպայի համազգեստի փեշերին, պառավը համբույրներով էր ծածկում նրա ճտքակոշիկները։

— Համազարկո՛վ,— հրամայեց Շտոկվիչը՝ ոտքով հարվածելով մոլլայի ատամներին։— Պատրա՛ստ... կլաց-պլի՛։

Լսվեց որոտը, և հրացանները ծուխ արձակեցին։

— Եվ դա ճիշտ է,— ասացին զինվորները։— Ի՞նչ է, մեր արյունը նրանցից վա՞տն է։ Թող իմանան...

Շտոկվիչն ամրոց վերադարձավ շարացած ու աղմկոտ։ Ընթացքի ժամանակ վերջացնելով սիմինդրի բլիթ ծամելը և անմիջապես վառելով ծխախոտի գլանակը՝ կապիտանը միանգամից հարձակվեց Կլյուգենաուի վրա.

— Պրապորշչիկ, սատանան գիտի, թե որտեղ եք դուք բանաստեղծացել։ Ո՞ւր են հեռագրասյունները, որ բերվել են Իգդիրից։

— Բայց գնդապետ Պացևիչը...

— Կարևորը հեռագրասյուներն են, և ոչ թե գնդապետը։ Ես եմ պարետը և ես հրամայում եմ՝ ամբողջ գույքը մի տեղ բերել, պահեստները տեղափոխել կազակների զորանոցների մոտ։ Ձիերը թող տանեն արածացնելու գերեզմանոցում։

Գույքը, իսկապես, ցրված էր ամբողջ Բայազետով մեկ։ Սակայն երբ առաջին սայլերը փորձում էին բերդ մտնել, Շտոկվիչը նորից կատաղեց.

— Թափե՛ք այնտեղ, մուտքի մոտ։ Այստեղ շուկա չէ, որ քավորկնոջ հետ շրջեք ու հիանաք։ Ամրոցում պետք է կարգ ու կանոն լինի, գույքը ներս կբերենք հերթականությամբ։

Կայազորն աշխատեց մինչև ճաշ։ Հեղձուցիչ, անտանելի շոգի մեջ Կլյուգենաուն և Նեկրասովը խոպոտել էին իրենց հայհոյանքից և խլացել ուրիշների հայհոյանքից։ Բերդի մուտքի մոտ աճում էր իրերի մի աներևակայելի կույտ, և երկու թուրքեր արդեն բռնվել էին գողության մեջ։ Իսմայիլ խանը հենց տեղնուտեղը մտրակով լավ ծեծեց նրանց և կարեկցեց հրաժեշտի ժամանակ.

— Գողությունը վատ բան է. մի անգամ գողացար, երկրորդ անգամ, բայց երրորդ անգամ մեկ էլ բռնվեցիր... Կդնգստեն։

Կլյուգենաուն Նեկրասովից խնդրեց տափաշիշը.

— Առավոտվանից չեմ կարողանում ծարավս կոտրել։ Խմում եմ, հա՛ խմում։

— Այնպիսի ապուշային օր է այսօր,— պատասխանեց շտաբս-կապիտանը։— Մենք դեռ ոչինչ, այսպես թե այնպես, իսկ ինչպե՞ս է նրանց վիճակը, ովքեր հետախուզության են գնացել։

Սպաներին մոտենալով՝ Իսմայիլ խանը նկատեց.

— Լավ չէ գերեզմանոցում ձիեր արածացնել...

4

Եվ մանուկներին նրա անունով էին
Վախեցնում վայրենի լեռների կանայք...

Վ. Վ. Խլեբով

Բայազետի մոտ, Վանի ճանապարհի հովտում հավաքված թուրքական զորքերի հրամանատարներն էին երկու մարդ՝ դա-

ժան, վավաշոտ Ֆուիկ փաշան և նշանավոր Շամիլի ավագ որդին՝ Ղազի Մահոմա Շամիլը[1]։

Ղազի Մահոմա Շամիլը ծնվել էր Շամիլի սիրած կնոջ՝ դեռատի հայուհի Շուանետից, որը Մոզդոկի վաճառական Ուլուխանովի դուստրն էր։ Կոտորածներում կոփված այդ խստաբարո աբրեկը, որ կարող էր քնել մերկ հողի վրա և կշտանալ մի կտոր չուրեկով, ատում էր Ֆուիկ փաշային՝ նրա կանացիական թեթևամտության և խորամանկ դավերի համար։ Սակայն հիմա նրանց միավորում էր մի բան։ Երկուսն էլ մինչև կուրություն, մինչև ատամները կրճտացնելը ատում էին այդ սպիտակ վերնաշապիկներով համառ զինվորներին, որոնք այսօր իրենք էին ընկել թակարդի մեջ. իսկ թակարդի ատամներն արդեն սեղմվել էին, հետաքրքիր է, զոհն ինչպե՞ս կպահի իրեն...

— Նրանց հետ գալիս է Խվոշչին փաշան,— նախազգուշացնում էր Ֆուիկ փաշան։— Իսկ նա խելացի է, ինչպես ծեր աղվես։

— Ինչ արած,— պատասխանեց Ղազի Մահոման,— խելացի աղվեսը հիմար աղվես չէ, նա եթե թակարդ ընկնի, ապա երկու ոտքով միանգամից...

Այդ օրը Շամիլի որդին դիտավորյալ գրգռում էր իր հիշողությունները կնոջ՝ Կարիմատի մասին, որը Դանիել բեկի աղջիկն էր և սաստիկ ատելով ամուսնուն՝ նրան չէր թողնում մոտենալ ամուսնական անկողնուն։ Վերջապես, Կալուգայում մի անգամ ռուս կանայք լողանում էին գետում և ուժեղ ծեծել էին նրան եղնջակով, երբ նա թփուտների հետևից աչք էր տնկել նրանց վրա։

Հիմա արդեն նա կհագեցնի իր ազնիվ վրեժի ծարավը. Բայազետից հետո ճանապարհը գնում էր դեպի Էրիվան, որը պաշտպանում են ռուսական զինվորների ընդամենը երկու վաշտ, իսկ այն կողմը չեչեններն են ու Դաղստանը։ Միայն թե անցնի Արաքսի այն կողմը, և նորից կգա երջանիկ ժամանակը. պառավները ռուսներին բռունցք ցույց կտան, կանայք կոկսեն թքել նրանց երեսին, իսկ երեխաները քարեր կգցեն գյավուրների վրա։

Ականջ դնելով կրակոցներին՝ Ղազի Մահոման ասաց.

— Օձ են կոխ տվել, և նա հիմա խայթում է...

Նրանք նստած էին նուրբ կանաչ մետաքսից պատրաստված վրանի տակ, որի միջով թափանցում էր ցերեկային լույսը։ Փորքահասակ, հեռատես Ֆուիկ փաշան, որի գլուխին խաչաձևաձև չալմա էր փաթաթված, պառկած էր գորգերի կույտին՝ շրջապատված անթիվ մութաքաներով։ Մութաքաներից մեկի վրա նույնիսկ Ֆուիկ փաշայի երեսի և քթի ձևով կաղապար էր մգդակված, որպեսզի նա նեղություն չկրեր դեմքով սեղմելու բարձը... Ինչպիսի՞ կատարյալ նրբաճաշակություն։ Նրան սպասարկում էր, նարգիլե և քաղցրավենիքներ մատուցում քաղդեացի մի գեղեցիկ աղջիկ, որը տղայի հագուստ էր հագել, բայց փորը մերկ էր և մեջքին էլ կլոր վահան էր կրում։

— Ես այսօր վրանում չեմ ընթրելու,— ասաց Ֆուիկ փաշան՝ շերբեթ ավելացնելով Ղուրանի կողմից արգելված խաղողի հյութի վրա. փաշան հարբեցող էր և բանաստեղծ։ Իր գինարբուքի մասին նա նույնիսկ այսպիսի բանաստեղծություն էր գրել.

Ես աչքեր ունեմ նման սուտակի,
Քիթն իմ նման է թանկարժեք քարի,
Այտերն իմ կարծես բոց են կրակի։
Ա՜խ, որքան թեթև ու լավ է քայլվածքն իմ,
Երբ ես լցնում եմ ներսս հյութը խաղողի...

— Այսօր ես արդեն Բայազետում կընթրեմ,— ավարտեց Ֆուիկ փաշան ժպտալով և աղջկան վերադարձրեց դատարկ գավաթը։

— Վա՜ղը,— կարճ պատասխանեց Ղազի Մահոման գոմռալով և նույնիսկ չթեքեց գլուխը։

Իմամի որդին նստած էր գետնին՝ ծնկներին հենելով սև

[1] Երկրպագության համար Մեքքա բաց Ըողնված Շամիլը 1871 թ. հունվարի 14-ին արդեն Մեդինայից գրում էր իշխան Բարյատինսկուն, թե ինքը միշտ շնորհակալ կլինի Ռուսաստանին, որ Ղազի Մահոմային բաց է թողել գերությունից և... «Ես կաղաչել եմ,— երդվում էր Շամիլը նամակում,— իմ կանանց ու որդիներին՝ չմոռանալ ձեր գթասիրությունը և երախտապարտ մնալ Ռուսաստանին, քանի դեռ նրանք կենդանի կլինեն աշխարհիս երեսին» (ճեղ.)։

մորուքը։ Նրա գեղեցիկ, թախծոտ ու խոնավ աչքերը վառվում էին միայն մի զգացմունքից՝ չարությունից և միայն չարությունից։

— Ո՛չ, այսո՛ր, հարգելի Ղազի,— պատասխանեց Ֆուիկ փաշան՝ հեռվից հիանալով մանկամարդ սպասուհու անհամաչափ շարժումներով։

Վրանում նրանց առջև գցեցին պրապորշչիկ Վադիմ Լատիշևի գլուխը։ Ղազի Մահման մազերից բռնած բարձրացրեց գլուխը, մատներով բացեց ռուս սպայի ծանր իջած կոպերը, նայեց նրա պայծառ, բայց քիչ պղտորված աչքերին։

— Այդ ամենը դեռ իմ ուզածը չէ,— ասաց նա և գուխը գցեց մի անկյուն։— Ինձ հարկավոր է Պացևիչ Նաիբի հիմար գլուխը։ Գյավուրների վրա բաց թողեք իմ ռեդիֆներից էլի չորս հարյուրյակ։ Եվ թող նրանք պարաններ պատրաստեն. մենք նրանց ձիերի նման կկապենք իրար։

— Պատվարժան Ղազի,— նախանձախնդրությամբ ասաց Ֆուիկ փաշան,— ես արդեն կապից բաց եմ թողել իմ ստահակներից ութ հարյուրյակ։

— Բայց թալանը պետք է և իմ ռեդիֆներին,— գետնից չբարձրանալով՝ զայրացած վեր ձգվեց Ղազի Մահման։— Նրանց էլ են պետք սպիտակ վերնաշապիկներ իրենց կանանց համար, կազակային թամբեր են պետք և ռուսական կաշվից ճտքակոշիկներ։ Չորս հարյուրյակ։ Թող բունչուկ բարձրացնեն։ Ես ինքս նրանց կտանեմ գյավուրների վրա։ Ավելի՛ շատ պարաններ։

Շամիլի որդին, պատանու նման թեթև ու արագաշարժ, վեր թռավ գետնից, հանեց սուրը և սեղմելով ձեռքի մեջ՝ սրընթաց դուրս եկավ վրանից։

Զորքը նրան դիմավորեց ուրախության բացականչություններով։

— Ջապաո՜ւլ... ալլա՜հ... չապաո՜ւլ,— գոռում էին չորս կողմից՝ ողջունելով երիտասարդ զորավարին և ճարպկորեն թռչում ձիերի մեջքերին։

— Խմել եմ ուզում,— ասաց Պացևիչը և, հետ պտուտակելով տափաշշի գլխիկը, կում արեց մեկ անգամ, կում արեց երկրորդ անգամ։ Տաք քամին Եվդոկիմովին հասցրեց օղու սուր հոտը, բայց յունկերը ցույց տվեց, թե իբր չի հասկացել գնդապետի այդ «ծարավը»։

— Կազակներն իջան ձիերից,— զեկուցեց նա։— Երկրորդ հարյուրյակն արդեն փոխհրաձգության մեջ է։

— Տեսնում եմ...

Եղավ այն, ինչ հեռուստ կանխատեսում էր Վատինը. կազակներն ստիպված եղան իջնել ձիերից և կռվել հետևակային շարքում՝ զինվորների հետ համահավասար («դրժվար է բացատրել,— նկատել էր մի հետազոտող,— թե ինչու Պացևիչը վերցրել էր հետևակը։ Չէ՞ որ հենց այդ պատճառով էլ մեր հեծելազորը օգտագործվեց հետևակային շարքում»)։

— Խփի՛ր ում ուզում ես, ով որ մոտ է,— գոռում էր Կարաբանովը, և հենց այդ պահին, արմունկի և կրծքի արանքով մի պոչավոր նիզակ անցավ։

Կողքից վրա պրծած քուրդը յաթաղանով կիսեց ստավրոպոլցու գլուխը և հռհռաց՝ բավականությունից կրճտացնելով ատամները։ Դենիսկան դիպուկ կրակոցով նրան ցած գլորեց թամբից և, գրպաններում որոնելով նոր փամշտապահունակ, վազեց առաջ։ Իսկ նրա կողքին, գոռալով և դիակներին կպչելով ու ընկնելով, բայազետցիները սվիններով ու կրակոցներով ձգտում էին կասեցնել թուրքական շղթայաշարերը...

— Ձիերը պահպանե՛ք... Թշնամու ձիերն էլ բաց չթողնեք,— բղավում էր վախմիստր Տրյոխժոննին՝ խլելով քրդի տակի հովատակը։

Եվ ամեն ինչ վազքով, վազքով։
Իսկ գլուխը շրջված դեպի հետ, դեպի հետ։
Խփում էին կողքից։
Ընկնում էին ծնկների վրա։
Թափով։
Ընթացքից։
Տարբեր ձևերով։

Միայն թե կասեցնել...

Օ՜, ինչ սարսափելի են շաչում յաթաղանները՝ շերտատելով կենդանի գոռացող միսը։

— Նիզակները գործի՛ դրեք,— ճչաց Կարաբանովը։— Ինչո՞ւ եք միայն կրակում...

Թուրքական հեծյալներն աննահանջ պարում էին ռուսական շրթայաշարերի ճնշումից։ Մերթ մեկը, մերթ մյուսը դուրս էին պրծնում առաջ՝ սուրը շեղությամբ թափահարելով։ Եվ ահա՝ ևս մի անհավատ թրմփում է ավազի մեջ՝ ներկելով այն անհավատի իր արյունով...

Կողքից կատաղորեն հայհոյում էր Դենիսկան.

— Ա՜հ, շնե՛ր... Անտեղի չեմ մեռնի... Բկովդ չի անցնի...

Կարաբանովը տաքացած վերցրեց նրա հրացանը։ Կոշը քրտնած էր, լպրծուն։ Չիկացնելով փականը՝ դուրս գցեց պահունակը։ Դե, իհարկե, շտաբի խելացիներն են «սնայդերների» վրա ավելացրել «հենրիմարտինի» հրացանի փամփուշտները։

— Փախի՛ր... սրախողխող կանեն,— գոռաց պորուչիկը կազակին։— Վերցրու սպանվածներից... Երևում է, մեզ դեռ քիչ են խփում... Դագաղագործներ են մեզ մոտ և ոչ թե գեներալներ...

Եվ դարձյալ՝ վազքով, վազքով...

Միայն հազվադեպ ես կանգնում։

— Տրա՛ք, տրա՛ք, և վազիր առաջ...

Ոտքերիդ տակ մեկ սորուն ավազ է, մեկ խոշոր քարեր, հետո թփուտներն են բռնում ոտքերդ և խճճում քեզ, ասես գերի են վերցնում։

— Մոտիկ մի՛ թողնիր,— աղեկտուր բղավում էր Տրյոխժոննին։

Զրնգոցով դուրս էին թռչում դատարկ պարկուճները։ Կոտրվում էին նիզակները և ճարճատում, ինչպես կեչին թեժ կրակի մեջ։ Իսկ դառը փոշին, ինչպես լեղի, կախվում էր օդի մեջ... Եվ ինչ-որ մեկն ընկավ ընկածի վրա... Եվ թուրքերը ճվճվում էին...

— Տրա՛ք.. տրա՛ք...

Արևը, արևը, անիծված արևը, նա այսօր որքա՜ն անխիղճ է...

— Մի քիչ ջուր տուր, միայն մի կում...

— Փախի՛ր, ժամանակ գտար խմելու...

— Ալլա՜հ... ալլա՜հ....

— Եղբայրնե՛ր...ա՜յ, ա՜յ...

Ա՛յ քեզ պատերազմ, և միայն այն ժամանակ ես իմանում, երբ քեզ են խփում։ Դա քեզ գեներալ Բեզակի «կանաչավուն գրքույկը» չէ։ Եվ պորուչիկ Կարաբանովը, ինչպես շարքային կազակ, փախչում էր հիմա նոսրացած շղթայաշարանում... Նա փախչում էր։ Ո՞վ կարող էր մտածել։ Եվ ո՜չ հպարտություն։ Եվ ո՜չ խայտառակություն։ Եվ ո՜չ մեռնելու ցանկություն։ Եվ ո՜չ ապրելու ցանկություն։ Այդ ամենը նա թողել էր դեռ այնտեղ՝ կավածեփ պատի մոտ...

Ուղղակի փախչում էր։ Եթե կարողանար, թվում է, թե կթռչեր։

— Տրա՛ք։ Ո՛չ, այս անդամ պրծավ...

Վատնինը՝ խնայելով իր հարյուրյակը, նրան տարավ հետևակազորի թիկունքը։ Բայց շուտով տեսավ, որ զինվորները կոտրվում են, անկարող են հակառակորդի առաջն առնել, և այն ժամանակ նա կազակներին նորից առաջ ուղարկեց՝ հրամայելով դասավորվել աջ թևում։

— Եղբայրնե՛ր,— սպառնալից հրամայեց նա,— որպեսզի վիրավորներ չլինեն, պահպանե՛ք ձեզ, կազակնե՛ր...

Կտրուկ շրջանցելով ռուսական շարասյան թևը, մի վազքաչափ հեռավորության վրա, երևաց թուրքական հեծելազորի մի ջոկատ։ Ալլա՜հ-ալլահ բղավող հորդայի կենտրոնում բարձր ծածանվում էր Ղազի Մահոմա Շամիլի բունչուկը, և Վատնինը հասկացավ՝ բունչուկը իզուր չէր, հիմա կհարվածեն թևին, սրերով և ոռնոցով կսկսեն ուժասպառ անել կողքից...

— Ո՞ւր է գնդապետը,— խռպոտ ձայնով հարցրեց նա Եվդոկիմովին։

Յունկերը նրա կողմը շրջեց ծերացած դեմքը. այնտեղ, ուր վարգագույն այտերի վրա առաջ խաղում էին հաճելի փոսիկները, այժմ շեղորեն ակոսում էին անողորմ կնճիռները։

— Գնդապե՞տը։— Յունկերը մաքրեց ատրճանակի քըր-

տինքից թրջված կոթը։— Չգիտեմ։ Հավանորեն հետևազորային շարքի մեջ է...

Պացևիչը, ձեռքերը համազգեստի գրպանները կոխած, լայն մեջքը կորացրած, քայլում էր ջոկատի հենց կենտրոնում։ Այստեղ թռած պատահական գնդակներն անգթորեն ցած էին գլորում նրա կողքի զինվորներին ու միլիցիային, իսկ նա ասես չէր էլ տեսնում. ձեռքերը գրպաններում, գլուխարկը ճակատին, աչքերը գետնին հառած՝ այդպես էր քայլում նա՝ այդ սրիկան...

— Ի՞նչ եք ուզում, հարյուրապետ,— հարցրեց նա՝ վերցնելով տափաշիշը։— Ինձ ասացին, որ ձեզ արդեն սպանել են...

— Պարոն գնդապետ,— զեկուցեց Նազար Մինաևիչը,— աջից շարժվում է բունչուկը... ա՛յ, եթե այն փոքրիկ լեռնաճյուղը չգրավենք,— և հարյուրապետը ցույց տվեց արևի հակառակ կողմը,— թուրքերը կշրջանցեն մեզ։ Հրամայեք կազակներին ձի նստել, որ մենք գրավենք այն։

Պացևիչը ցատկով անցավ մի զինվորի վրայով, որն ընկել էր նրա առաջ և ցնցվում էր սարսափելի ջղաձգությունից։

— Է՜խ, դրա,— խղճահարվեց գնդապետը։— Ասենք ոչ. մենք մինչև Բայազետ այսպես էլ կհասնենք, թող հարյուրյակները մնան հետևազորային շարքում։

Արյունաքամ լինելով՝ շարասյունը դանդաղորեն հետ էր քաշվում դեպի Բայազետ։ Սակայն ինչքան էլ քայլերդ արագացնես, արդեն չես կարող պոկվել վրա հասած հեծելազորից։ Ղազի Մահոմայի բունչուկի տակ գտնվող ռեդիֆների ջոկատը թևից շրջափակեց Բայազետի զորամասը, և գլուխը կորցրած Պացևիչը նույնիսկ չուզեց լսել Եվդոկիմովի զեկույցը։

— Ձեռք քաշեք ինձանից,— ճչաց նա։— Ես ի՞նչ անեմ։ Դիմեք Խվոշչինսկուն։

— Ո՛չ,— պնդեց յունկերը։— Դուք պետք է իմանաք, որ մենք հիմա շրջապատված ենք երեք կողմից։ Ես հիմա կգնամ, գնդապե՛տ, որպեսզի մեռնեմ, բայց հիշեք՝ այս կոտորածը ձեր սարքած գործն է... Մենք բարով...

Շարասյունն այժմ գնդակոծվում էր երեք կողմից՝ թիկունքից, որը արդեն դարձել էր ճակատ, և թևերից։ Զինվորական շարանները, կանգնելով մեջքերը դեպի կենտրոն, կատաղաբար պաշտպանվում էին։ Բացի դրանից, նրանք պետք է նաև առաջ շարժվեին. Բայազետը, հավանաբար հեռու չէր։ Իրենց սուր գագաթներով զովից արդեն կապույտին էին տալիս Վասպուրականի լեռները...

Սակայն նիզակների և յաթաղանների հաճախակի հարվածների տակ առաջամարտիկներն ու կազակները աստիճանաբար ընկնում էին սպանված. սվինները դեպի առաջ պարզած՝ երկրորդ և երրորդ շարանները փոխարինում էին ընկածներին, և շարակարգը սկսեց խախտվել։

Շարասյուներն այժմ անկազմակերպ բազմություն էին դարձել։ Մարդկանց քայլերն արագացան՝ ժամանակ առ ժամանակ վերածվելով ամոթալի փախուստի։ Կրակոցները դարձան անկանոն։ Նշան էին բռնում գլուխների վրայից։

Քրդերն արդեն թափանցել էին շարասյան մեջ։ Շատ վիրավորներ, ինչպես նաև հոգնածությունից ու ծարավից ուժասպառ եղած մարդիկ, սկսեցին հետ մնալ։ Ճիշտ է, նրանք դեռ պաշտպանվում էին, բայց փամփուշտները վերջացնելուց հետո, երբեմն իրենք էին պառկում գետնի վրա...

Ականատեսը վկայում է.

«...քրտնահար լինելով՝ ընկնում էին ուշաթափ. ոմանք, տեսնելով մոտեցող հեծյալին, ուժասպառ լինելով, միայն բացականչում էին՝ մնաք բարով, եղբայրնե՛ր...— Եվ հենց տեղնուտեղը ընկնում անիծված թուրքական նիզակից։ Քրդերը, օգտվելով այն բանից, որ իրենց առջև եղած շարքը ինքնաբերաբար գոյացել էր հետ մնացողներից և թեթև վիրավորներից, խցկվում էին նրա մեջ՝ անպատիժ կոտորելով թուլացած, բայց չհանձնվող զինվորներին»։

Վրա հասավ կրիտիկական պահը։

Անկազմակերպ բազմությունը, եթե նույնիսկ նա չի հանձնվում, այնուամենայնիվ, բազմություն է, և ոչ թե զորք։ Դա հասկանալի էր յուրաքանչյուր սպայի։

Դա հասկացավ նաև գնդապետ Պացևիչը։

Երբ վախմիստր Տրյոխժոննին, ճեղքելով բազմությունը, գոռաց նրա վրա.

— Եթե մեռնելու ենք, ապա հրամայեք կանգ առնել։

Մեռնենք այստեղ, միայն թե չփախչենք։— Այն ժամանակ գնդապետն սկսեց մտածել։

Սկզբից նայեց երկնքին, որտեղից հեղեղի նման թափվում էր հեղձուցիչ տոթը, ապա սրբեց թաց ճակատը։ Պղտոր հայացքով նայելով վախմիստրին, Ադամ Պլատոնովիչը շրթունքներին մոտեցրեց տափաշիշը։ Սակայն հենց նույն պահին, թուրքական գնդակը խփեց՝ նրա մատների արանքից գցեց տափաշիշը։

— Ես... հիվանդ եմ։ Այո՛, ճշմարիտ,— ասաց նա։— Իմ տարիքում չէ, որ կարելի է այսպիսի բան տանել... Հաղորդեք Խվոշչինսկուն, որ իր վրա վերցնի հրամանատարությունը։

Եվ ձեռքերը նորից գրպանները կոխելով՝ գնդապետը մտավ զորքի խորքը, այն հիանալի զորքի, որին նա անիմաստ մի հոտ դարձրեց...

6

— Լա՛վ,— համաձայնեց Խվոշչինսկին, և նրա այտը ջղաձգվեց։— Լա՛վ։ Ես ընդունում եմ հրամանատարությունը... Հայտարարեք զինվորներին, որ այսուհետև ես եմ նրանց հրամանատարը։ Վիրավորներին մեջտեղից տարեք, գործի դրեք նիզակներն ու սվինները։

Նա լայն բացեց ձեռքերը, ասես փորձում էր կանգնեցնել նահանջողներին և, դադարի հազվադեպ պահին, բղավեց.

— Եղբայրնե՛ր իմ, թշնամուն հնարավորություն մի՛ տվեք մոտենալ նիզակի չափով... Ռեզերվ չի՛ լինելու. դու խփի՛ր և ոչ թե պաշտպանվիր...

— Վերջապե՛ս,— ուրախացան զինվորները։— Այսպիսի՛ բաներ են անցել մեր գլխով։ Ծերուկը մեզ հուսախաբ չի անի, հետ կմղենք...

Նրա կորացած թիկունքում, որ պիրկ գրկել էր զինվորական նույն սպիտակ վերնաշապիկը, ռուսական բանակի փառավոր շատ գործեր են եկել ու անցել. ռազմաարշավները դեպի Սամարղանդ և Խիվա, Ինկերմանի ձորակում կրած պարտության դառնությունը, խռովարար Բուխարայի հնազանդեցումը, սարսափելի մարտերը՝ ժայռերի մեջ Շամիլի

ժյուրիդների դեմ և, վերջապես, անիծված Բայաքլաները նույնպես նրան է վիճակվել...

— Կազակային հարյուրապետներն ի՞նձ մոտ։ Արա՛գ...

Վատնինն ու Կարաբանովը ձիերի վրա արդեն պատվում էին նրա առջև, երկուսն էլ առանց գլխարկի, որ կորցրել էին ապշության ժամանակ, փոշուց կեղտոտված, հայհոյանքներից խռպոտված ու գազազած։

— Պարոնա՛յք,— ասաց նրանց Խվոշչինսկին՝ շոշափելով ձիու բաշի մեջ խրված գնդակը։— Խոսքը հիմա կազակներինն է... Հետևակը ես առայժմ կշարժեմ։ Գետանցի մոտ վերադասավորում կկատարենք։ Իսկ դո՛ւք, հարյուրապետնե՛ր, այդ ավազակներին խփեք թևերից... Օսմանները պետք է կանգնեցվեն թեկուզ հրաշքով։ Ինչպես ուզում եք, պարոնա՛յք, դա արդեն ձեր գործն է...

Վատնինը նայեց զինվորական գլուխների ալեկոծ ծովին, որտեղ մեկ-մեկ բրդոտ փափախներ էին երևում։

— Հավաքելը հեշտ չէ,— նկատեց եսաուլը։— Հարյուրյակը մաս-մաս է եղել, ամեն մեկն իր ձեռքով է կռվում...

— Իսկ դուք, Կարաբանո՛վ,— ավելացրեց Խվոշչինսկին,— ձեր հարյուրյակը առանց այն էլ հյուծված է, վերցրեք նաև միլիցիան և խոպերցիներին... Դե, պարոնա՛յք, ես ձեզ չեմ համբուրի, դուք պետք է վերադառնաք կենդանի... Աստված ձեզ հետ...

Ճիշտ է, անմիջապես չհաջողվեց կազակներին ի մի բերել, մի կերպ պոկել մարտից, ձի նստեցնել, հեռացնել ճակատամարտի թունդ տեղից, որպեսզի նրանք մի քիչ հանգստանան։ Իրենց նորից թամբերի վրա տեսնելով, հավասարեցնելով ձիերն ու նիզակները՝ մարդիկ մի քիչ աշխուժացան։

Կարաբանովն անշտապ անցավ շարքի երկայնքով, նայեց կազակների դեմքերին և... իր կյանքի տակ վերջին կարմիր գիծը քաշեց։ Նա հիմա պիտի հանդիպի մահին, և թող արդեն ուրիշները նրա փոխարեն հաշվեն. պարտքատերերը հիշեն պարտքերը, իսկ կանայք՝ փաղաքշանքները, թշնամիները՝ արատները, բարեկամները՝ երեկոյան խաղաղ զրույցները։

Իսկ ընդհանուրը եղել է պարզապես կյանք...

Եվ այդ պահին նա սարսափ զգաց։ Այդպիսի սարսափ նա դեռ երբեք չէր զգացել։ Մեջքը ցնցվում էր, հանկարծ կափկափեցին ատամները և մանրադողոցք սկսվեց ոսկորների մեջ։ Թվում էր, թե կողոսկրը կողոսկրին էր կպչում...

— Դողո՞ւմ ես, անիծված կմախք,— ասաց Կարաբանովը՝ պատյանից քաշելով սուրը։— Սպասի՛ր, դեռ այդպես չէ, որ դու պիտի դողաս, երբ իմանաս, թե հիմա ուր եմ քեզ տանելու...

Մարդիկ աղմկեցին միանգամից։ Հայ-հույ արեցին, շվվացրեցին։ Ձիերի սմբակների միահամուռ հարվածի տակ հողը ցնցվեց։ Փոշին ասես սարսափից վար իջավ։ Վազքի ընթացքում ձգվեցին կազակների կատաղած ձիերը։

Եվ քարերի վրայով՝ թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ։

Եվ աղուտներով՝ տո՛պ, տո՛պ, տո՛պ։

Եվ խոտերի միջով՝ շո՛ւխ, շո՛ւխ, շո՛ւխ։

— Խփի՛ր աջ ու ձախ, սպանիր դրանց,— բղավում էր Վատնինը (նրա հարյուրյակն ընթանում էր աջից)։

Իսկ առջևում խելակորույս վրա էր տալիս պորուչիկի հովատակը՝ աչքերը ինչպես երկու խնձոր, դունչը՝ կատաղությունից փրփրակալած։ Նրա սմբակները սաժեններով էին դիպչում գետնին՝ մե՛կ, երկո՛ւ, երե՛ք...

«Եվ դեռ ինչքան կշարունակվի այդ հաշիվը...»։

Ձին լավ էր, և թուրն էլ՝ սուր. շնորհակալություն Դենիսկային, լավ էր սրել։

— Ա-ա՛-ա՛-ա՛-ա՛,— հասնում էր պորուչիկին։

Արդեն սարսափելի չէր։ Մեռնել, ուրեմն մեռնել։ Ճակատագիր է։ Ինչպե՞ս էր ասում Նեկրասովը. «Թքենք ճակատագրի երկար, գարշելի մորուքին»։

Ավելի մոտիկ, մոտիկ, մոտիկ էին գալիս...

— Նիզակներով հարվածեք, տղանե՛ր,— գոռաց Կարաբանովը։

Թը՛խկ-թը՛խկ-թը՛խկ...

Տո՛պ-տո՛պ-տո՛պ...

Շո՛ւխ-շո՛ւխ-շո՛ւխ...

Ահա կբախվեն միմյանց, պտույտներ կգործեն ափսիթի դառը հոտերում, և ձիերի դոփյունը կկորչի արյուն ծորացող պողպատի շաչյունների մեջ։

Կարաբանովը փակեց աչքերը։

Բացեց։

— Ա՛յ, այն աշխատին,— որոշեց միանգամից...

Բախվեցին։

Լորդը մի փոքր փռնչաց, խաչաձևվեցին երկու սրեր։ Միայն զնգոց ու մի խրթոց լսվեց, քուրդը թամբից ցած կախվեց և նրանից շեղությամբ ցայտեց արյունը։

— Ալլա՛հ... Ալլա՛հ...

— Ջարդե՛ք դրանց, կազակնե՛ր...

— Սուվորովականնե՛ր, ձեզ տեսնեմ...

— Լյա՛-իլ-լյադա՛-իլ-ալլա՛հ...

— Խաչի՛ր դրանց...

— Ո՞ւր ես խցկվում, գարշելի։ Սատկի՛ր...

— Լռի՛ր, սրիկա՛...

— Դենիսկա՛, հասցրու դրան...

Գործը սովորական էր, գործը՝ հանդուգն։ Կռվել են նրանց հայրերը, կռվել են պապերը։ Դեռ ապուպապերը վառարանի վրայից գլուխ էին գովում բասուրմանների դեմ մղած ճակատամարտերի մասին։

— Կոտորի՛ր դրանց,— լսվում էր Վատնինի ձայնը, և Կարաբանովն արդեն մարդ չէր, այլ ուժի և ջղերի մի կծիկ, և գիտեր միայն մի բան՝

...Աջ ու ձախ...

...մեկ-երկու...

...տակից-վերևից...

...ամեն կերպ...

Շառաչ ու տնքոց էր կախված հորդայի վրա։ Թուրքական մուրթների փոխարեն, ցավից ճչացող մի համատարած բերան էր։

Այդ շիլաշփոթի մեջ ամեն ինչ խառնվել էր իրար։ Ինչ-որ ատամներ, պատառոտված մեջքեր... Որտե՞ղ է այժմ Բայազետը, ի՞նչ գործ ունի այստեղ Ագլայան, ես ինչո՞ւ եմ Կարաբանովը, երբ ամենուրեք մի բան կա միայն՝

Ա՛-ա՛-ա՛-ա՛-ա՛...

Եվ՝ շառաչ։ Եվ՝ արյուն։ Եվ՝ ամեն ինչ...

Սակայն ահա ինչ-որ մի բան խփեց կողքին, դա արդեն նրա արյունն էր։ Նրա մոր արյունը, հոր արյունը։ Կարա-

բանովների արյունը։ Ժայթքում էր այն ձախ ուսի մոտ։ Պորուչիկը միայն այդ ժամանակ նայեց շուրջն ու հասկացավ, որ հնարավոր չէ հեռանալ։ Ինչպես մշուշի մեջ, մերթընդմերթ աղոտ երևում էին գազազած քրդերը՝ օդում խաչաձևելով յաթաղանները։

— Դենիսկա՛, Դենիսկա՛... Sauvez-nous la vie!...— օգնություն էր խնդրում Կարաբանովը՝ հետ մղելով հարվածները, և արդեն չէր զգում, որ բղավում էր ֆրանսերեն։

Եվ այդ միջոցին տենդն անհետացավ։ Անդրեյը հասկացավ, որ մենակ է։ Եվ նա՝ այն պեպենոտը, որ մեխերը խմիչքի էր տվել, պիտի ապրի։ Եվ վաղը իր ձին խմիչքի կտա։ Եվ չի մեռնի։ Իսկ ինքն ահա ծեծել է նրան, և հարյուրյակն իրենից երես է թեքել, ոչ ոք օգնության չի գա։

Եվ դա արդեն վերջ էր, դա արդեն մահ էր...

«...Մարդի՛կ, մարդի՛կ, ինչո՞ւ եք ինձ մոռացել... Մարդի՛կ, արդյոք լա՞վ է առանց ինձ... Մարդի՛կ, ես ուզում եմ ձեզ հետ լինել.. Մարդի՛կ, ցույց տվեք ինձ դեպի ձեզ տանող ճանապարհը... Մարդի՛կ, խղճացեք ինձ...»։

Եվ այն պեպենոտ Եգորիչը, որ մի արկղ մեխ էր տվել խմիչքի, ճեղքեց եկավ, իսկ նրա հետևից՝ ուրիշները, և, սրերով դես ու դեն շպրտելով յաթաղանները, նրանք իրեն ազատեցին անխուսափելի և անողոք մահից...

Թուրքական հորդաները որոշ ժամանակ հետ մղվեցին։ Ի՞նչ նստեց դա ումանցիների և խոպերցիների վրա, գիտեն միայն չոր քամիները, որոնք գիշերները լեռներից սահում են դեպի կանաչ հովիտները. դա հիշում են անապատային արծիվները, որոնք կտցահարում էին ռուսական ջինջ աչքերը, և շատ երկար-երկար, մինչև գերեզման, չեն մոռանա նրանց մայրերը՝ Դոնից, Կուբանից ու Թերեքից...

Հետևակն արդեն մոտենում էր գետանցին։ Խվոշչինսկին ճիշտ էր հաշվի առել կազակների ցասումը. այն հավելյալով բավարարեց պաշտպանելու զինվորների նահանջը։ Պոկվելով քրդերից՝ հեծյալները վարգով հետ էին դառնում. շարասյուններն արագ քայլերով կենտրոնանում էին գետի մոտ։

Այստեղ պատրաստվում էին վերադասավորման։

Մինչև գոտին արդեն ջրի մեջ՝ Խվոշչինսկին ահեղ, սպառնալից բղավոցով կարգուկանոն էր մտցնում.

— Էրիվանցինե՛ր, հետ քաշվել դեպի աջ... Շա՛րք կանգնել... Ձե՛նքը ուսերին... Մոտեցրե՛ք վիրավորներին... Վիրավորներին առաջ... Ո՞վ է խցկվում կույտերով... Եվդոկիմո՛վ, հետևեք շարքին։

Եվ յունկեր Եվդոկիմովը սկզբից չէր կարողանում հասկանալ՝ դա ինչի՞ էր պետք գնդապետին։ Սակայն եթե նա լավ իմանար ռուսական պատերազմների պատմությունը, ապա, հավանաբար, կհիշեր, թե ինչ է ասել Կուտուզովը Սմոլենսկին. «Կարե՝[1] ընդդեմ մուսուլմանների,— կտակել է զորավարը սերունդներին։— Սակայն թշնամու գերակշռության պայմաններում կարեն պետք է վերածվի ջարասյուների...»։

Եվ Բայազետի զինվորները դուրս էին գալիս մյուս ափ, ասես լվացված անմահական ջրով՝ կանոնավոր շարքերով, վաշտ վաշտի հետևից։ Խվոշչինսկին մերթընդմերթ բղավում էր՝ իր մոտից առաջ մղելով զինվորներին։

— Ավելի՛ ուրախ, տղանե՛ր... Պայուսակը մի՛ թրջեր... Պահպանի՛ր փամփուշտները... Յուրաքանչյուրդ նայեք ձեր շուրջը... Այնքան էլ ուրախ չէ... Բայց այնքան էլ սարսափելի չէ...

Եվ հանկարծ ընկավ, ձեռքերը ճղփացրեց։ Ջրի վրա իսկույն տարածվեց կարմիր բիծը՝ բարակ շիթով վազելով հոսանքի ուղղությամբ։ Գնդապետին բարձրացրին, դուրս բերեցին ափ։ Սանիտարները նրա մոտ պատգարակ բերեցին, տակը թաղիք փռեցին։

— Կարծես վիրավորված եմ... այո՞,— հարցրեց Խվոշչինսկին և, դեղնած ատամների արանքից դժվարությամբ առաջին տնքոցը հանելով, ձեռքերը ամուր սեղմեց փորին։

7

Երբ կազակները միացան շարասյանը, Խվոշչինսկին արդեն պառկած էր պատգարակի վրա. ափով սեղմելով փորատակի վերքը՝ նա լողում էր մարդկանց գլխավերևով և հրամաններ տալիս.

[1] Կարե — (ֆրանս.) ռազմական շարք, երբ մարտի ժամանակ հետևակը շարժվում է քառակուսի կամ բոլորաձև, դեմքերը դեպի դուրս։

— Ավելի բա՛րձր, բա՛րձր, սատանան տանի, բարձրացրեք ինձ... Մի՛ վախեցեք։ Ես պետք է ամեն ինչ տեսնեմ...

Կարաբանովն ու Վատնինը, հոգնած օրորվելով թամբերի վրա, մոտեցան նրան, լուռ կանգնեցին։

— Ես միշտ գիտեի,— ասաց գնդապետը՝ հաղթահարելով սարսափելի ցավը,— այո՛, գիտեի և հավատում էի, որ կարելի է հույս դնել ձեզ վրա։ Իսկ դուք, Կարաբանո՛վ, վիրավորվա՞ծ եք։

Անդրեյը շարժեց ծանր կախված ձեռքը, մատների ծայրերից կոշիկի ճտքի վրա էին գլորվում արյան մուգ կաթիլները։

— Ուրիշ ի՞նչ կհրամայեք,— հարցրեց պորուչիկը՝ նայելով ուղիղ իր առջև։— Իմ հարյուրյակը կանի ամեն ինչ։

Ցավը Խվոշչինսկուն գցեց պատգարակին, նրա սուր ծնկները ձգվեցին դեպի վեր։ Նա արդեն միայն հայացքով ավելի մոտ կանչեց հարյուրապետներին և ասաց ընդհատումներով.

— Հետևե՛ք թևերին... Ղազի Մահմայի բունչուկը դարձյալ բարձրանում է լեռները, ես նրան տեսնում եմ այստեղից... Լեռնանցքի վրա, պարոնա՛յք, հարկավոր է գրավել լեռնաճյուղերը, այլապես մենք դեպի Բայազետ չենք անցնի... Պահպանե՛ք, պարոնայք, թևերը... Թևերը... Անպայման թևերը...

Նա լռեց, և Կարաբանովն ու Վատնինը տագնապալից իրար նայեցին. բայց մի փոքր հապաղելով, Խվոշչինսկին նորից սկսեց բարձրանալ արմունկի վրա։

— Ո՞ւր է Պացևիչը... Կանչե՛ք գնդապետին...

Ադամ Պլատոնովիչը, պատգարակավորների կողքից մանրաքայլ շարժվելով, ուղղեց Խվոշչինսկու տակի ճմոթված, արյան և փոշու մեջ կորած թաղիքը։

— Այո՛, ես ձեզ լսում եմ...

— Պարոն գնդապետ,— կարգադրեց Խվոշչինսկին,— իմ կողմից ձեզանից ընդունված իշխանության իրավունքով հրամայում եմ... վերցնել ձիապաններին, հավաքել վիրավորներին և, լեռնանցքից անմիջապես հետո, ճեղքել-անցնել դեպի Բայազետ։ Ես մնում եմ ջոկատի հետ մինչև վերջ... Հաղորդեք Շտոկվիչին, որ շտապ օգնություն ուղարկի... Լավ կլինի ոչ թե միլիցիան, այլ Ղրիմի գումարտակը...

Ջոկատն արդեն բարձրանում էր լեռները։ Հովտում այդպես ողբերգորեն ծավալված ճակատամարտն աստիճանաբար փոխադրվում էր բարձունքները։ Անտանելի շոգ էր, և արևից շիկացած ժայռերից հեղձուցիչ տոթ էր փչում։ Գնդապետի պատգարակը վազքով տանող ստավրոպոլցիների շունչը կտրվում էր, շնչառությունն այրում էր կուրծքը, ուժերն սպառվում էին...

— Պահե՛ք, եղբայրներ,— գոռաց նրանցից մեկը՝ հոգնածությունից ընկնելով ցած։

Ինչ որ մեկը բռնեց պատգարակը, բայց հենց նույն պահին սպանվեց թշնամու գնդակից։ Ձիավորները սկսեցին շրջապատել Խվոշչինսկուն, որպեսզի ուզած ժամանակ օգնության հասնեն։ Նրա պատգարակը տանողներից ընդամենը սպանվել են քսաներկու մարդ (դա ոչ թե հեղինակի հնարածն է, այլ ճշգրիտ թիվ)։

Խվոշչինսկին տեսնելով, որ իր պատճառով անխուսափելի զոհեր են լինում, պատգարակի վրայից ասաց.

— Շնորհակալություն ձեզ, տղանե՛ր։ Ինչպես դուք եք ինձ՝ ծերուկիս պահպանում, այնպես էլ մի օր ձեզ կպահպանեն... իսկ հիմա՝ բարձր։ Բարձրացրեք ինձ ավելի վեր,— խնդրեց գնդապետը։— Ես պետք է ամեն ինչ տես...

Խոսքը չվերջացած՝ գնդապետը փլվեց պատգարակին։ Երկրորդ գնդակը կպավ դարձյալ որովայնին և, որքան էլ դա տարօրինակ լինի, կպավ ուղիղ նախկին վերքին։ Մահը վրա հասավ վայրկենապես...

Պացևիչը պատգարակը տանող զինվորներին հրամայեց պոկվել առաջ և վազել դեպի Բայազետ՝ առանց կանգ առնելու։ Վիրավորներին կապելով թամբերին՝ ձիապանները նույնպես սլացան առաջ։ Հետևակը և կազակները շարունակում էին մարտը, սակայն Ղազի Մահմայի բունչուկն արդեն ծածանվում էր Բայազետի ճանապարհի բարձունքների վրա. թուրքական հեծելազորը կտրում էր նահանջի ուղիները։

— Դե՛, պորուչիկ,— ասաց Վատնինը խաչակնքելով,— նորից արիշտա պետք է կտրենք։

Եվ հարյուրյակները շարժվեցին...

Կարմրագորշ ավազի և կավահողի փլվածքների մեջ սեղմված մի ոչ խոր ձորում Կարաբանովը կանգնեցրեց իր կազակներին, գոռաց Վատնինին.

— Նազար Մինաևիչ, գնա՛, աստված քեզ հետ, ես կհասնեմ...

Եվ այստեղ, բարձր խոտերի խշշոցի, ժայռերի վրա ճախրող արծիվների կոնչյունի տակ, ձիերի խոխոջի և ասպանդակների զրնգոցի տակ Անդրեյն ասաց.

— Պարոնա՛յք կազակներ,— նա այդպես էլ ասաց,— պարոնա՛յք կազակներ, ընկերներ իմ... ես մեղավոր եմ ձեր առաջ, իսկ ինչո՞վ եմ մեղավոր, դուք արդեն ինքներդ գիտեք։ Եվ ձեզանից ներողություն եմ խնդրում...

Հետո իր Լորդը քշեց պերլենոտ Եգորիչի մոտ, դիմեց նրան առանձին.

— Իսկ քեզանից ներողություն էլ չեմ կարող խնդրել. վախենում եմ. դու դեռ չես սառել, չես ներիր...

Սակայն կազակը թամբից թեքվեց, լայն ժպիտից նույնիսկ հարթվեցին նրա դեմքի ծաղկատեղերը։

— Դե, ձերդ բարեծնություն, ինչ ասես չի պատահում։ Գուցե ինձ հենց այդպես էլ պետք էր. չէ՞ որ մեխերը ես խմիչքի էի տվել... Չէ՞ որ դա ճիշտ է։ Դե հետո էլ, քո հրամանատարությամբ հաճելի է խփել սուլթանին, քո վարվելակերպն էլ յուրային է, ոչ թե Պացևիչի նման... Դու էլ ինձ ներիր։

Կարաբանովը գրկեց կազակին, նրանք բոլորի ներկայությամբ համբուրվեցին, և սրտերը թեթևացան. երկուսն էլ ծիծաղեցին՝ երիտասարդը և տարեցը։

— Այժմ գնացինք... վար-գո՛վ։ Քշե՛ք ձիերը...

Առաջին հարյուրյակին հասան արդեն զառիվերը բարձրանալիս։ Դուրս ցցվելով քարերի հետևից՝ Ղազի Մահոմայի բունչուկը թռչկոտում էր ինչ-որ տեղ, հեռվում, բայց բաշիբոզուկների հեծյալ պարեկները էժան՝ արյունից հարբած, արդեն բարձրանում էին սարնիվեր՝ քաշելով ձիերի սանձերից։ Ուղղաբերձ զառիթափով շրջապատված մի բարձրավանդակում, թուրքերը պատրաստվում էին դիմավորել ռուսներին, որպեսզի ոչ մի շարասյուն չկարողանար ճեղքել-

անցնել դեպի Բայազետ, որպեսզի հարուստ ու անկասկած լիներ թալանը։

— Նազար Մինաևիչ,— Կարաբանովը քաշեց իր Լորդի ականջները, որպեսզի գրոհից առաջ ձին ավելի կատաղած լինի։— Դու ինձանից փորձված ես։ Ասա՛, ի՞նչ անենք... ես կլսեմ։

Վատնինը պատասխանեց.

— Եթե առաջին բախումից հետո, քանի դեռ ձերդ քոր է գալիս, անմիջապես երկրորդը լինի, այն ժամանակ լավ է... Իսկ հիմա լավ չէ. կազակները հոգնած են, ձիերն էլ արդեն այն չեն, ուժասպառ են եղել։ Սակայն կփորձենք...

Հարյուրապետն աչքաչափով որոշեց մինչև բունչուկը եղած տարածությունը, նայեց աջ, հետո ձախ, հետ շրջվեց։

— Ա՛յ թե անխելք ենք հա՛, պորուչի՛կ,— հանկարծ ծիծաղեց նա՝ շոյելով մորուքը։— Հիմար թուրքերին մենք ցույց կտանք մեր ստրատագեմը... Քո հարյուրյակը շուռ տուր այն ժայռերի հետևը, իսկ ես բունչուկի թիկունքը կանցնեմ... Որքան հնարավոր է, Ելիսեիչ, ուժեղ կհարվածես։ Եթե միանգամից հարձակվես, լավ կլինի։ Թուրքերը քարերից ցած կգլորվեն, ինչպես ջուրը մոմլաթի վրայից... Հասկացա՞ր իմ ասածը...

Գրոհից առաջ բացազատելով հարյուրյակը՝ Կարաբանովը կոահեց Վատնինի «ստրատագեմը». նա վախմիստրին կարգադրեց սրի կոթը փոկով կապել դաստակին և ասաց կազակներին.

— Միայն միանգամից, եղբայրներ... Գիտեմ՝ հոգնել եք։ Գիտեմ՝ դժվար է հիմա։ Սակայն՝ միանգամից միայն, եղբայրներ։ Իսկ այնուհետև՝ վերջ. հետևակը մեր հետևից սրընթաց առաջ կանցնի...

Երկրորդ գրոհը նկարագրել իմաստ չունի։ Ձիերն արշավելիս անգամ թույլ էին վազում, հոգնածությունից սայթաքում էին։ Կազակները կռթնել էին թամբակեռին՝ լարված ու լուռ։ Շատերի նիզակներն արդեն կոտրվել էին, սուր ծայրերից ցցվել էին թարմ ծեղերը։

Սակայն հեծյալներն աստիճանաբար ոգևորվեցին, շլացին մտրակներն ու սրերը, և արդեն ոչինչ չէր կարող կանգնեցնել զայրույթից հայ-հո՛ւյ անող ու գոռացող այդ հեղեղը։

— Հի՛-հի՛-հի՛,— գոռում էին կազակները,— հի՛, հի՛...

Նորից սկսվեց աշխատանքը։ Կարճ, կարմիր, զնգացող։ Այստեղ վախկոտների տեղը չէր։ Այստեղ արդեն խնայելու մասին խոսք չէր կարող լինել, և թուրքերը ընկրկելով, հետ քաշվեցին անդունդի եզրը։

— Ալլեման, Ալի՜, Մահոմա՜...

— Ցած գցեք։ Կոտորեցեք, կազակնե՛ր...

— Ուռուս, մի խփե... Ուռուս— ապրի լավ...

Սակայն ահա վերջին թուրքին նետեցին անդունդը։ Այն ժամանակ Դենիսկան մոտեցավ անդունդի եզրին, նայեց ցած ու ժպտաց։

— Մաքուր գործ,— աչքով արեց կազակներին՝ սուրը մաքրելով տաբատի վրա։— Եղբայրներ, հետևակի յուրաքանչյուր դասակից մի-մի դույլ գինի կվերցնեք։ Թող տան, քանի որ մենք նրանց նկատմամբ այդպես բարի ենք...

Եվ այսպես, հարյուրյակները գնացին։

Պացևիչը ձեռքով բռնեց սիրտը, ասաց, որ շնչակտուր է լինում և չի կարող տեղ հասնել։ Իսկ Խվոշչինսկի՞ն. նրա ձեռքերը ծալել էին կրծքին, և նա լողում էր որբացած մարդկանց գլխավերևում, ինչպես դրոշ։ Թմբկահարները հոգնած մարդկանց ոգևորելու համար անվերջ թմբուկ էին զարկում, նրանց զվարթ մանրազարկերը խլացնում էին գնդակների սուլոցն ու մարդկային ճիչերը...

Եվ մնացել էր մենակ նա՝ յունկեր Ալյոշա Եվդոկիմովը, դեղնաբերան այդ ձագուկը։ Ոչ գեներալ էր, ոչ գնդապետ, նույնիսկ ոչ էլ պրապորշչիկ, ուղղակի յունկեր։ Դուրս բերել մարդկանց, ինչ գնով ուզում է լինի, նրանց հետ ճեղքելանցնել կապանների միջով, և նա իր վրա վերցրեց հրամանատարությունը, իսկ մարդիկ մեկեն հավատացին նրան։

— Ահա այսպես պետք է կռվել,— ասաց Պոտյոմկինը, երբ ժայռերի արանքից երևաց Բայազետը։

8

Ասես զգալով Բայազետի վրա կախված իրադարձությունների ծանրությունը՝ այդ օրը սպաները միասին ճաշի հավաքվեցին կապիտան Շտոկվիչի սեղանի մոտ։ Բոլորն այնքան հոգնած էին, որ այս անգամ որոշեցին չխոսել կայազորի գործերից և զրուցում էին զանազան դատարկ բաների մասին։

— Պարոնա՛յք, պարոնա՛յք,— ծիծաղում էր Նեկրասովը՝ դանակը խփելով ափսեին,— Օլեանի նշանավոր կույս ծաննա դ'Արկը, որն անգլիացիների կողմից խարույկի վրա բարձրացվեց կախարդության համար, կարծեմ չի այրվել։ Դա դեռ բոլորը չէ, նա նաև կույս չի եղել։ Իր «մահից» հինգ տարի հետո նա ամուսնացել է Շեվալյե դես Արմուազի հետ։ Այդ մասին Մետցում փաստաթղթեր են գտնվել, որոնց հավաստիությունը հաստատված է նոտարի կողմից։

— Չեմ կարծում, կապիտան, որ Վոլտերը կարող էր սխալվել,— ժպտաց Շտոկվիչը՝ գունաթափ շրթունքներով ծծելով յուղոտ ոսկորը.— ավելի շուտ դրանում սխալվել է կավալեր Շեվալյե դես Արմուազը, որն ինքնակոչուհուն իրեն կին է վերցրել։ Ի՞նչ կասի բարոնը։

Կլյուգենաուն ջուր խմեց, ձեռքերի մեջ պտտեցրեց բաժակը։

— Ես ուրիշ բանի մասին եմ մտածում, պարոնայք... Որքան էլ հնում կախարդուհիներին շատ էին այրում, նրանք, այնուամենայնիվ, չէին դադարում գոյություն ունենալ։ Դրա փոխարեն, երբ դադարեցին այրել, նրանց մասին բան չի լսվում։ Դրանից ես եզրակացնում եմ, որ կախարդուհիները նույնիսկ սիրել են, որ խորովեն իրենց։

Բոլորն ակամայից ծիծաղեցին։ Շտոկվիչը նորից ձգվեց դեպի գինու գրաֆինը։ Իսմայիլ խանը տեր Գերասիմի ականջին պատմում էր, որ մի անգամ, երբ իր գունդը կանգնած էր Վիլնայում, ինքը մնացել էր գիշերելու մի հասարակ պանդոկում, իսկ առավոտյան,— ինչ սոսկալի բան,— սեղանի վրա գտել էր...

Տեր Գերասիմը փոթկացրեց և սպաներին շշմեցրեց բանաստեղծությամբ.

— Պարոնայք, խանի բախտը բերել է.

> Առավոտյան աղջիկն այնքան շուտ սլացավ
> Հեռավոր, դժվարին մի ճանապարհ,
> Որ սեղանի վրա նա մոռացավ
> Թաշկինակը, ձեռնոցները, ատամները, կուրծքը...

Բաց լուսամուտներից լսվեցին զինվորների աղմուկը, ձիերի դոփյունն ու տաքնալուկի ձայները։ Ճաշը թողնելով՝ սպաները նետվեցին դեպի դուռը, ընթացքում հապճեպ վերց-

նելով հեռադիտակները, ատրճանակներն ու սրերը։ Ամրոցում արդեն տագնապի ազդանշան էին տվել, զինվորները, վազելով մութ, ծուռումուռ աստիճաններով, բարձրանում էին պատերի վրա, մագլցում բերդի տանիքը։

Ինչ-որ հեռու տեղից Բայազետի վրա տարածվում էր մի ծանր, ընդհատուն որոտ։

— Պարոնա՛յք, ի՞նչ է պատահել...

— Եղբայրնե՛ր, կարծես մերոնց են խփում...

Կլյուգենաուն բոլորի հետ բարձրացավ բերդապարսպի ճակատամասի տանիքը։ Լեռնային անապատների տաք քամին թևթևակի տարուբերեց նրա բաց գույնի նոսր մազերը։ Նա մտախոհ նայեց հեռուն, ուր սրածայր սև ժայռերի արանքներով ոլորապտույտ ձգվում էր Վանի ճանապարհը, ուր տոթակեզ հողմապտույտների մեջ կորչում անհետանում էր Արարատյան դաշտավայրի ուրվագիծը։

— Ի՞նչ կասեք, կապիտա՛ն,— դիմեց նա Նեկրասովին։— Դրանք կրակոցներ են առանց հրամանների...

— Նայե՛ք, ով է գալիս,— Յուրի Տիմոֆեևիչը ցույց տվեց ներքև, բակի խորքը. այնտեղ, սայլերի ու ձիերի միջով հեշտությամբ կեռմաններ տալով, վազում էր Հաջի Ջամալ բեկը։

Տեսնելով նրան՝ ամրոցի պարետը դեռ հեռվից բղավեց.

— Ի՞նչ է ծնվել, աղջի՞կ, թե՞ տղա։

— Աղջիկ, սարդար, հիվանդ աղջիկ,— պատասխանեց լրտեսը։— Մեյդանն արդեն գիտի, որ ձերոնց ջարդել են։ Քաղաքում դերձակները՝ նունիսկ իրենց մկրատներից նիզակներ են պատրաստում ձեզ խոցելու համար... Ֆուիկ փաշան և Ղազի Մահոման հիմա կլինեն այստեղ։ Պետք է թողնեք Բայազետը։ Արդեն սկսել են կոտորել հայերին...

Շտոկվիչը՝ չպատասխանելով լրտեսին, դուրս եկավ երրորդ գավիթ, ձեռքը դրեց Պոտրեսովի նիհար ուսին.

— Պարո՛ն մայոր,— ասաց նա,— ձեր հեռադիտակն ուժեղ է, դուք որևէ բան տեսնո՞ւմ եք։

— Ես առայժմ միայն փոշի եմ տեսնում ճանապարհից քիչ հեռու։ Իմ ծառայության անձնակազմը պատրաստ է գործելու։ Բայց ինձ թվում է, որ ժամանակն է օգնության ուղարկել Ղրիմի գումարտակը։

Ճակատամարտի որոտը լսվում էր դեռ հեռվից, լեռների հետևից. շտապ-շտապ լցնելով կարաբինները և ձգելով ճոքակոշիկները՝ հարվածայինների թարմ գումարտակը շարք էր կանգնում ամրոցում։

— Գալիս են... գալիս,— գոռաց մեկը վերևից։

Այո՛, նրանք գալիս էին...

Այժմ արդեն երևում էր և առանց հեռադիտակի, թե ինչպես ձգվելով լեռնային կիրճերով՝ դանդաղ շարժվում էր զինվորների՝ կտրտված ժապավենի նման շարասյունը, և նրանց գլխավերևում կախվել էին խառնացրիվ համազարկերի գորշ ալիքները։ Հետո նրանից որոշ հեռավորության վրա երևացին հեծյալները։ Հատուկենտ վիրավորներ բնդիոների պես քարշ էին գալիս Վանի ճանապարհով։

— Պարո՛ն մայոր,— ճչաց Շտոկվիչը,— ձեր մարտկոցները ինչո՞ւ են լռում։

— Ես չեմ կարող կրակել,— պատասխանեց Պոտրեսովը ներքին հուզմունքով։— Դուք ինքներդ էլ տեսնում եք, որ մեր շարասյան և հակառակորդի միջև բոլորովին տարածություն չկա։ Քրդերը նստած են նրանց ուսերին... Իսկ կարտեչը կատակ չէ, ես կարող եմ ոչնչացնել հենց մեր մարդկանց։

— Այդ դեպքում փորձեք խփել հրթիռային սարքերից,— խորհուրդ տվեց Եֆրեմ Իվանովիչը։— Ասիական հեծելազորը, որպես կանոն, փախչում է մեր հրթիռներից, ինչպես սատանան խնկից։

Պոտրեսովը թոթվեց ուսերը։

— Այդ էլ չեմ կարող... Հրթիռները դեռ հեռու են կատարելությունից, կապիտա՛ն։ Նրանք թռիչքի ժամանակ մեծ տատանում են տալիս...

Հանդուգն սվինամարտերով և խիզախ ու կայտառ երգերով փառաբանված Ղրիմյան գումարտակը դեռ շարք էր կանգնած բակում. զինվորները, մեկը մյուսի մեջքի պայուսակներն ուղղելով, սպասում էին թե ինչ կհրամայեն սպաները։

Կանգնած էին նրանք իրար կողքի (արևից վառված նրանց դեմքերը անժպիտ էին, բեղերը ոլորած դեպի վեր), հենված «սնայդերների» փողերին՝ պատրաստ մեռնելու, պատրաստ

ամեն ինչի, այդ փորձված զինվորները, որոնք դեռ ոչ մի անգամ չէին նահանջել։

Կամաց խոսում էին իրար հետ.

— Արևը կիզիչ է...

— Այո, այսօր վառում է...

— Իսկ ես այդպես էլ չվերջացրի շիլա ուտելը...

— Ճտքակոշիկներիդ կրունկները, ա՛յ, արդեն պոկվում են...

— Վերանորոգելու տեղ չկա...

— Իսկ ինչո՞ւ ենք սպասում, հը՞...

Վերջապես ձիերի հետ սլացքով եկան ձիապանները, և դեռ չսառած ապրած սարսափներից՝ շնչակտուր պատմեցին, թե ինչ է պատահել զորախմբի հետ։ Ամրոցում պարզ դարձավ նահանջողների վիճակը, և Շտոկվիչը հրամայեց.

— Իջե՛ք բերդապարսպի ճակատամասից։ Գործի անցե՛ք...

— Անձրևից հետո սթափվեցին խումարից,— փնթփնթաց Կլյուգենաուն և տեսնելով, որ ոչ ոք արդեն հրամանների կարիք չի զգում, ինքը բռնեց ռմբասայլի քեղիներից ու գոռաց,— ապա մի օգնե՛ք։— Եվ սայլը, քարերի վրա չխկչխկալով, գլորվեց միջնաբերդ։

Այն ամբողջ կույտը, որ բերդի դարպասներից դուրս էր, աստիճանաբար տեղափոխվում էր բերդի առաջին գավիթը. ցցվում էին սայլերի քեղերը, խրխնջում էին ձիերը, գլորվում էին տակառներ, ինչ-որ կաթսաներ, դերաններ, ռմբարկղեր, խոտի մամլած հակեր, շինելների փաթեթներ, նվագախմբի շեփորներ, երթային խոհանոցներ։

— Արա՛գ, արա՛գ,— գոռում էին զինվորները։

Սլանալով եկան կազակային հարյուրյակները, և, տանջահար ձիերին հապճեպ կապելով գերեզմանոցային բլուրի վրա, նորից նետվեցին արդեն մոտեցող փոխհրաձգության շփոթի մեջ։ Զրիմի գումարտակն այդպես էլ մնաց բակում՝ ղենքները ձեռքներին կանգնած, իսկ նրա փոխարեն Շտոկվիչը մարտի նետեց միլիցիայի ջոկատները։ Կրակոցների ոլորտը մոտենում էր, և արձագանքը տարածվում էր մերձակա կիրճերը, սավառնում շիկացած երկնքում։

Նեկրասովը բռնեց օրդինատոր Կիտաևսկու թևից, որը

արյունից կարմրած բժշկական ունելին ձեռքին վազում էր ինչ-որ տեղ, և նրան մի կողմ քաշեց.

— Լսե՛ք, բժիշկ, մի սարսափելի լուր... Ես նույնիսկ չեմ ուզում հավատալ. Խվոշչինսկին վիրավորված է և կարծեմ՝ մահացու։ Հիմա նրան կբերեն...

Նրանց մոտեցավ շփոթված Կլյուգենաուն, նրա բերանը կիսաբաց էր, աչքերը՝ խղճալի։

— Ես չգիտեմ ինչ անել,— ասաց նա։— Ավելի լավ կլիներ ինձ կամ ձեզ, պարոն Նեկրասով... Խվոշչինսկին սպանված է։ Եվ տեսնել կնոջ տառապանքները...

— Վիրավոր է,— ուղղեց Կիտաևսկին։

— Ո՛չ, արդեն սպանված է։ Այդպես ասացին կազակները...

— Առայժմ ոչինչ մի ասեք Ագլայա Եգորովնային,— խորհուրդ տվեց Նեկրասովը։— Հիմա մեզ համար մխիթարանքով զբաղվելու ժամանակը չէ...

Իսկ թուրքերն այդ ժամանակ ավելի էին մոտեցել, և ահա հասավ ցանկալի պահը։

— Առաջի՛ն, կարտեչո՛վ,— գոռաց Պոտրեսովը՝ թափահարելով ձեռքը և թնդանոթը՝ բարբեթի վրա վեր ցատկելով, հուր ու կրակ ժայթքեց...

Հազար ութ հարյուր սաժեն հեռավորությունը շատ մեծ էր, և առաջին արկը չհասավ։

Կիրյուխա Պոստնին հանցավորի նման թարթեց աչքերը։

— Նշանակետը բարձրացնե՛լ։ Երկրո՛րդ...

Գազերը ֆշշացին, ծուխ ու կրակ դուրս թռան, անձնակազմը մի կողմ նետվեց և երկրորդ արկը ոռնոցով մխրճվեց թուրքական ոհմակի ամենախիտ տեղը։

Պոտրեսովը իջեցնելով հեռադիտակը, հանկարծ ուրախ ծիծաղեց.

— Է՛խ, վայ-ռազմիկներ... Ձեզ վրա կարտեչ բաց թողնելն անգամ ափսոս է, դուք միայն մահակն եք հասկանում...

— Հոսպիտալցինե՛ր,— բղավեց մեկը բակում։— Ընդունե՛ք վիրավորներին...

Նրանք գալիս էին և՛ մեկ-մեկ, և՛ խմբերով. որը հրացանին էր հենված, որը օրորում էր յաթաղանով ճեղքված ձեռքը՝ ինչպես մայրը երեխային։ Ոմանք դանդաղ քարշ էին

գալիս առանց օգնության, մյուսներին բերում էին սանիտարները։ Բոլոր հարցերին վիրավորները պատասխանում էին մռայլ լռությամբ և խնդրում էին միայն մի բան.

— Ջո՛ւր, եղբայրներ... Ջո՛ւր տվեք մեզ... Օ՜յ, չեմ կարող, հոգիս մի օրվա մեջ խանձվել է...

Երբ երևաց պատգարակը՝ Խվոշչինսկու դիակը վրան, շտաբս-կապիտան Նեկրասովը ինքը վազեց ընդառաջ, զինվորներին հրամայեց հանգուցյալին ծածկել թաղիքով և անկատելի ներս տանել բերդը, որպեսզի ավելորդ հետաքրքրություն չբորբոքել։

Իսկ Բայազետի փողոցներով և բերդի շրջակայքում սոսկալի տառապանքներով թափառում էին վիրավոր և անտեր ձիերը։ Նրանք երբեմն հավաքվում էին իրար մոտ՝ բոլորաձև, գլուխ-գլխի տված, զրնգացնելով դատարկ ասպանդակները, ասես, իրար հետ կիսելով մարդկանց համար անհասկանալի իրենց կենդանական դժբախտությունը...

9

Կապիտան Շտոկվիչը այնպես կնճռոտվեց, որ դեմքն ասես խաշած խնձոր լիներ։ Հետո անշտապ մոտեցավ շատրվանի ծորակին և ճտտացրեց երկար ժամանակ ջրի շիթին կառչած զինվորի ճակատին։

— Մի քիչ հանգստացիր,— շինծու հոգատարությամբ ասաց նա,— թե չէ շունչդ չի բավի... Դա քեզ համար մի բաժակ լաֆիտ չէ։ Եվ ծորակը չփակես, թող ջուրը հավաքվի ավազանի մեջ։

Յունկեր Եվդոկիմովը իր ջոկատով մտավ քաղաքի ծայրամասը։ Սակայն զինվորները դեռ նոր էին երևացել փողոցներում, երբ Բայազետի հետնախորշերի բոլոր լուսամուտները սկսեցին ծխալ կրակոցներից, քաղաքի մուսուլման բնակիչները բացահայտ անցան Ֆուիկ փաշայի և Ղազի Մահմայի կողմը. խրճիթների մեջ սեղմված նեղ, գարշահոտ փողոցները՝ իրենց վրա կախված պատշգամբներով, շատերի համար կործանիչ ծուղակ դարձան։

«Դեպքեր են եղել,— հիշում է իրադարձությունների մասնակիցներից մեկը,— երբ զինվորը, թաքնվելով պատի կամ քարակույտերի հետևը, սպանվում էր ոչ թե մարտական թշնամու կրակոցից, այլ հետևից գաղտագողի մոտեցած ինչ-որ մի լակոտից...»։

Սակայն կապիտան Շտոկվիչը, շուտ գլխի ընկնելով, ժամանակին մարդիկ ուղարկեց քարվանսարան և քաղաքային գանձատունը գրավելու։ Դա օգնեց ջոկատին ճեղքել-անցնել ամրոց։

Տանջահար Կարաբանովին կազակներն իջեցրին ձիուց. նա նախ պառկեց գետնին, հետո տնքալով նստեց և անհնազանդ մատներով ուղղեց ճակատամարտի թունդ ժամանակ պոկված ուսադիրը։

— Մղձավանջ էր... Այդ ի՞նչ բան էր, յունկեր,— օտարոտի ձայնով հարցրեց նա։

— Ջարդ էր,— պատասխանեց Եվդոկիմովը՝ ընկնելով նրա կողքին, շոր խոտերի վրա։— Գնդապետ Պացևիչի... ջարդը։

— Լիակատար ջախջախման հոտ է գալիս,— տխուր գուշակեց Շտոկվիչը։— Ջախջախման կամ պաշարման։ Ես հիմա կարգադրեցի թաքցնել Խվոշչինսկու դիակը և առայժմ չասել նրա մահվան մասին... Թուրքերն արդեն շրջապատել են մեզ, և եթե...

— Դատարկ բան,— արձագանքեց Վատնինը՝ թեթև թոչելով թամբից ցած և ձին կապելով կազակների ձիերի կողքին։— Ավելի վատ բաներ են եղել, պարոնայք սպաներ... Կդիմանանք...

Առաջին գավթում արդեն լսվում էր Պացևիչի ականջ ծակող հայհոյանքը.

— Հետո դարձեք։ Ո՞ւր եք խցկվում, սրիկաներ... Հերթ կանգնեք... Պահակախո՜ւմբ։ Ո՞ւր է պահակախումբը... Կկրակեմ, խարդախներ...

Սակայն որքան էլ նա ճիգ գործադրեց, մի օրվա ընթացքում յոթանասուն վերստ սարսափելի մարտարշավ կատարած մարդկանց արդեն անհնարին էր պոկել ծորակից։ Զինվորներն ու կազակները մեկ մարդու պես նետվեցին դեպի ջուրը՝ խմե՛լ, խմե՛լ, խմե՛լ։

Ադամ Պլատոնովիչը, աքացի և ուժեղ ապտակներ հասցրնելով, հերոսաբար առաջ նետվեց դեպի ծորակը ձգվող մարդ-

կանց դեմը կտրելու, բայց նրան տեղնուտեղը խցանահանի նման պատեցրին քրտնախաշ և տաք մարմինների վայրենի կույտի մեջ և խցանի պես դուրս թռցրին։

— Երկրորդ անգամ թույլ չտալ...

— Եղբայրնե՛ր, դրան մի՛ թողեք...

— Ո՞ւր ես խցկվում...

— Ո՞տքս, օ՜յ, թո՛ղ ոտքս...

— Հետ քաշվիր, եթե խմել ես...

Մարդկանց աղմկոտ գլուխների վրայից դեպի այդ խղճուկ ջրածորակն էին պարզվում ծոմոված գավաթներ, մետաղե մրոտված տափաշշեր և ուղղակի փոշոտ ափեր։ Երջանիկ մարդիկ հազիվ էին հասցնում մի կում խմել, երբ նրանց անմիջապես հետ էին քաշում ծորակից, և նրանց տեղը դեպի ջուրն էին ձգվում ծարավից բորբոքված տասնյակ ու հարյուրավոր բերաններ։ Ավելի թույլ մարդիկ, որոնք հույս չունեին այդ ոսկրաջարդ հրմշտուքի մեջ իրենց համար ջուր ձեռք բերել, թափառում էին ամրոցի մի անկյունից մյուսը, ամեն անգամ տափաշիշ տեսնելիս ողորմություն աղերսելով։

Իսկ բերդի պատերից դուրս դեռ որոտում էին կրակոցները. արագ վազվզելուց քրտնածոր սանիտարները սպանվածներ ու վիրավորներ էին կրում։ Եվ կարծես լրացնելով այդ պատկերն ու փրկարար ստվեր որոնելով, միջանցքներում և նկուղներում, բակերի քարե սալերի վրա լուռ պառկած ու նստած էին քրտնաթաթախ, տեսածներից հոգեկան ցնցում ստացած մարդիկ. նրանց հիմա նույնիսկ ջուր էլ պետք չէր՝ հարկավոր էր ստվեր, լռություն ու հանգիստ։

Եվդոկիմովին ասացին, որ հրետանավորների մոտ, երկրորդ բակում ջուր կա։ Յունկերը գնաց մարտկոցների մոտ, վառոդի գոգաթիով տակառից ջուր հանեցին և տվեցին նրան կուշտ խմելու։

— Դուք արդեն գիտե՞ք,— հարցրեց նա։

— Գիտեմ,— տխուր պատասխանեց Պոտրեսովը։— Ինչպես՞ է Ազլայա Եգորովնան։

— Որոշել են առայժմ նրան չասել այդ մասին։

— Է՜, հիմար բան են որոշել, ավելի լավ է միանգամից...

— Կարող է,— համաձայնեց յունկերը և ոտքով գլորեց գետնին ընկած շրապնելի բթամռութ արկը։

— Սատանան գիտե, թե ինչ է կատարվում,— ասաց մայոր Պոտրեսովը՝ հրամայելով հրանոթներն ուղղել Կարմիր սարերը։— Նշանակետի բարձրությունը՝ յոթ հարյուր,— գոռաց նա հրետաձիգներին։— Ո՛չ, դրեք միանգամից ութ հարյուրի վրա...

Կարմիր սարերը, որ արևից անկենդան, կարմրագորշ ժայռեր էին, հետզհետե ծածկվում էին թուրքական հեծելազորի առաջացրած ամպերով։ Արդեն պարզ էր, որ բերդի պաշարումն սկսվել է, և Բայազետի վզին գցած օղակն սկսեց դանդաղ սեղմվել...

— Հետ ցատկիր,— գոռացին հրետանու ենթասպաները, և թնդանոթները, վախեցած կնոջ նման հետույքով նստելով բարբեթներին[1], հրաշեկ կարտեշներ ժայթքեցին։

— Մե՛կ... երկո՛ւ... երե՛ք...— Պոտրեսովը հաշվեց վայրկյանները, և շորսի վրա բռնկումով դուրս թռավ մի թարմ ամպ, ասես երկնքում հովանոց բացեցին, և շրապնելը առատորեն թափվեց թուրքական հեծելազորի վրա։

— Լցրո՛ւ... փակի՛ր... հե՛տ ցատկիր...

Իսկ ներքևում, բերդի դարպասների մոտ, որտեղ առանց այն էլ նեղվածք էր, ինչ-որ անհասկանալի մի բան էր կատարվում։ Կատարելով Պացևիչի հրամանը՝ Շտոկվիչը ներս էր թողնում ջրելատեղից վերադարձող հրետանային ձիերին և փակել էր միլիցիայի ճանապարհը։

— Առանց ձիերի՝ կթողնեմ,— գոռում էր նա,— թողե՛ք ձիերը... կապեք կազակների ձիերի հետ...

Եվ կարծես դիտավորյալ, ծաղրանքի համար, Բայազետի մուտքի մոտ, մահակների հարվածների տակ սկսեցին զոռալ պարենավաճառ Աղա Մամուկովի էշերը, որոնք միայն հիմա էին պաքսիմատ ու գարի բերում կայազորի համար։

— Դենիսկա՛, սիրելիս,— կանչեց Կարաբանովն իր սիրեցյալին,— ուժ չի մնացել, եղբայր... Տեսնո՞ւմ ես, հրե՛ն, այն հաստաքթին։— Պորուչիկը ցույց տվեց պարենավաճառին։— Գնա և իմ փոխարեն հասցրու նրա դնչին։ Տե՛ս, ինչ-

[1] Բարբեթ — հողաթումբ թնդանոթը կանգնեցնելու համար։

պես հարկն է ծեծիր, Դենիսկա...

— Ինչի՞ համար, ձերդ բարեծնություն,— հարցրեց կազակը։

— Ասա՛, որ ես եմ հանձնարարել։ Իսկ ինչի համար, նա՝ այդ ստորը, ինքը գլխի կընկնի...

Տրյոխժոննին օգնեց պորուչիկին վեր կենալ, տարավ նրան կազակային հարյուրյակի զորանոցը։

— Անդրեյ Լիսեիչ,— սրտանց խորհուրդ տվեց նա,— ձեզ հարկավոր է բժշկի մոտ գնալ։ Լավ կլինի գնաք հոսպիտալ։ Թեև ոսկրին չի կպել, բայց էլի կենդանի միս է...

— Ո՛չ,— կտրուկ առարկեց Կարաբանովը՝ հիշելով Ագլայային,— նրա մոտ չեմ գնա... Սատանան տանի ամեն ինչ։ Թող վերքն առողջանա, ինչպես մի քոսոտ շան վրա... Հոսպիտալ չեմ գնա...

Վախմիստրը սպայի վրայից հանեց համազգեստը, պատռեց նրա երկնագույն վերնաշապիկը։ Սկզբից թքոտեց պորուչիկի վերքը, փամփուշտի միջից ատամներով հանեց գընդակը, վառոդը պարկուճից դատարկեց ափի մեջ։

— Ինչո՞ւ ես թքոտում,— հարցրեց Կարաբանովը։

— Դիմացիր, բարեծնունդ,— ճչաց վախմիստրը։— Այ թե հիմա կտանջի, հա՞...

Նա վառոդը առատորեն ցանեց վերքի վրա, և Կարաբանովը կրճտացրեց ատամները։ Ճարպկորեն վիրակապելով ուսը՝ Տրյոխժոննին ինքն իրեն ասում էր.

— Այ, եթե հետն էլ կովի յուղ լիներ... Եվ ավելի լավ կլիներ ոչ թե վառոդով, այլ աղով։ Դա արդեն ես ձեզ խղճացի, իսկ կաղապիներն ավելի շատ աղ են ցանում...

Վախմիստրը գնաց։ Կարաբանովը երեսնիվայր ընկավ մահճակալին, սկսեց ոտքերն իրար քսել՝ հարմոնի նման հավաքելով տակին փռված թաղիքը։ Ցավում էր վերքը, բայց նրա մեջ ավելի ուժեղ էր սրտի ցավը, և իր նկատմամբ ունեցած սարսափելի զայրույթն այդ պահին խեղդում էր նրան։ Ցավ էր զգում, որ ինքը մեղավոր է մարդկանց առջև, ցավ, որ կյանքում ամեն ինչ այնպես չէ, ինչպես ուզում ես, ցավ, որ Ագլայան հիմա արդեն հավանաբար կոտրատում է ձեռքերը, և վերջապես՝ ուղղակի ցավ...

Դուռը ոտքի հարվածով բացվեց։ Կլյուգենաուն ջնջասլաքաասաց.

— Ես այլևս այսպես չեմ կարող... Նոր նա ինձ հարցրեց՝ որտե՞ղ է գնդապետը։ Համարձակությունս չբավարարեց նրան ասելու ճշմարտությունը...

— Ըհը՛,— չարախնդորեն ծիծաղեց Կարաբանովը։— Ուրեմն չբավարարե՞ց, ասում եք։

— Լսե՛ք, պորուչիկ, դուք վաղուց եք բարեկամություն անում տիկին Խվոշչինսկայայի հետ. դա ձե՛ր պարտքն է՝ հայտնել նրան ամուսնու զոհվելու մասին։ Դուք պարտավոր եք այդ անելու...

— Գնա գրողի ծոցը, բարոն,— գոռաց Անդրեյը և, քաշելով ատրճանակը, պահեց Կլյուգենաուի վրա։

Պրապորշչիկն ուղղեց ակնոցը և հանգիստ շրջվեց դեպի դուռը։

— Դուք խելագարվել եք,— ասաց նա,— ձեզ համար վնասակար է պատերազմելը...

Այդ ժամանակ Պացևիչը հասցրեց քրտինքից թրջված սպիտակեղենը փոխարինել չորով։ Ականջ դնելով նեղ լուսամուտների միջով փողոցից լսվող կրակոցների որոտին՝ գնդապետը լցրեց իր տափաշիշը։ Խվոշչինսկին արդեն չկար, նա նորից դառնում էր Բայազետի տերը և հարկավոր էր գործել։ Շտոկվիչը զեկուցեց, որ ամեն ինչ ձախողվում է, և ժամանակն է արդեն դադարեցնել անիմաստ ջարդը։ «Ավելի լավ է նստել պատերի հետևում,— ավելացրեց կապիտանը,— քան սպասել, մինչև քեզ մորթեն ճանապարհի վրա...»։

— Իմ ժամացույցը ջարդվել է,— մեղավորի նման խոստովանեց Պացևիչը,— հիմա ժամը քանի՞սն է։

— Հինգն անց է։

— Լավ, ես հիմա կգամ...

Նկարագրելով գնդապետի վարքագիծը կայազորի հրամար այդ ծանր պահին՝ ականատեսներից մեկն ավելացնում է այսպիսի մանրամասնություն. հրամաններ տալու ժամանակ Պացևիչը... «շտապ թեյ էր կոնծում»։ Սակայն մենք արդեն չենք հավատում դրան, ոչ թե թեյ էր կոնծում Ադամ Պլատոնովիչը, այլ՝ օղի...

Երեկոյան վեցն անց կեսի մոտ նեկրասովը եկավ հրա-

Հաշտ տալու Պոտրեսովին և Կլյուգենաուին. նրա գլխարկի ծածկոցը թարմ էր, ճտքակոշիկները լավ մաքրված, համազգեստը պրկված տոնական գոտկակապով։

— Ինչո՞ւ եք այդպես հանդիսավոր,— զարմացավ Կլյուգենաուն։

— Ես գնում եմ...

— Բա՛րձր ասեք, ես ոչինչ չեմ լսում,— բղավեց կրակոցներից և աղմուկից խլացած Պոտրեսովը։

— Ես հիմա պետք է տանեմ հարվածային գումարտակը, որպեսզի մեկ անգամ ևս փորձենք թուրքերին հետ քշել Բայազետից։ Այդպիսին է Պացևիչի հրամանը... Մնաք բարո՛վ, պարոնայք։

Կլյուգենաուն զայրացավ։

— Ի՞նչ կարելի է անել մի գումարտակով։ Թեկուզ նույնիսկ հարվածային... Պետք չէ ոչ մի տեղ գնալ։ Դա կործանում է։ Մահ է... Պացևիչը երևի նորից հարբած է, բայց դուք հո լուրջ եք... Եթե դուք ցանկանում եք մեզ զարմացնել ձեր քաջագործությամբ, ապա դա Բայազետում ոչ ոքի չի զարմացնի...

— Այդ բանում ես ձեզ հետ համաձայն չեմ, բարո՛ն,— անվրդով առարկեց Նեկրասովը՝ հագնելով սպիտակ ձեռնոցները։— Թուրքերին մենք չենք կարող կանգնեցնել, դա ճշմարիտ է, բայց... նայեք հեռադիտակով, բարոն, դուք հո տեսնում եք ինչքան մարդ ենք կորցնում միայն մի տեղից մյուսն անցնելու ժամանակ։ Մենք թուրքերին չենք կարող կանգնեցնել, պարոնայք,— կրկնեց նա,— բայց ես հույս ունեմ ժամանակ շահել, որպեսզի մեր մարդիկ հասցնեն հավաքվել բերդը... Դե, մեկ անգամ ևս մնաք բարով, իմ փառավոր ընկերներ...

Նա պինդ համբուրեց բոլորին և Կլյուգենաուն նկատեց, որ շտաբս-կապիտանի բեղերը օծված են անուշաբույրով. նա մահվան էր գնում, ինչպես տոնի գնար, և նրա օսլայած սպիտակ կիտելը նույնիսկ մի քիչ ճթճթում էր վրան, ուսակապը մեկ-մեկ թեթևակի ճռռում էր։

— Եթե տեսնեք Կարաբանովին,— բղավեց Նեկրասովն արդեն հեռվից,— հաղորդեք նրան, որ ես, անկախ ամեն ինչից, սիրում էի նրան...— թեթև բռնելով սուսերը՝ Յուրի

Տիմոֆեևիչը վազեց ապարելի տակի զառիվայրով, ախոռների կողքով, փնչփնչացող ձիերի միջով, դուրս եկավ երկրորդ գավիթ, որտեղ շարք էին կանգնած Ղրիմի հարվածային գումարտակի զինվորները։

— Որտե՞ղ եք քարշ գալիս, կապիտան,— դիմավորեց նրան Պացևիչը։— Ժամանակն է մարդկանց դուրս բերել բերդից։

— Ես պատրաստ եմ,— ուղղակի պատասխանեց Նեկրասովը։

Նրանց մոտից պատգարակի վրա տարան մի ծանր վիրավոր զինվորի. տեր Գերասիմը, իր համար ուրիշ գործ չգտնելով, արդեն փոխարինում էր սանիտարին։

Նկատելով նրան՝ Ադամ Պլատոնովիչը որոշեց հաշիվ մաքրել անսաստ տեր-հոր հետ։

— Հայր-սուրբ, քո գործը չէ մեռելներ տեղափոխել,— ասաց նա։— Ավելի լավ է, դու արի գնա հարվածայինների հետ... Գուցե աստվածային խոսքն օգնի ընկճելու բասուրմաններին...

Տեր Գերասիմը հասկացավ, որ դա վրեժ է, բայց չվիճեց և վազելով գնաց բերեց խաչը, որ ամրացված էր Գեորգիևյան ժապավենի վրա, հնազանդորեն կանգնեց շարասյան գլխամասում, շտաբս-կապիտանի կողքը։

— Յուրի Տիմոֆեևիչ, հրաման տվեք,— խոնջանքով թույլատրեց գնդապետը՝ թաշկինակը թափահարելով, և գումարտակը շարժվեց դեպի ամրոցի ելքը։

Երկու դեռահաս թմբկահարներ, դեռ բոլորովին մանուկ, կանգնելով ծածանվող դրոշի ներքո, նայեցին մեկը մյուսի երեսին և ներդաշնակ թնդյուններով մարդկանց ստիպեցին ճամփա տալ հարվածային գումարտակին։ Տեր Գերասիմի բաց մանուշակագույն փարաջան ծածանվում էր քամուց։ Նեկրասովը քայլում էր առջևից՝ հանգիստ և նույնիսկ զվարթիկ։

— Մե՛կ-երկո՛ւ... Մե՛կ-երկո՛ւ...— ասաց նա ավելի շուտ իր համար։

Թռչող արկերի փայլատակումից լուսավորվող հակերի բարիկադի, սայլերի ու արկղերի կույտի միջով քայլում էին հարվածայինները՝ ճոճելով գնդուն սվինների ծայրերը։ Նրանք

գիտեին, որ գնում են դաժան մահվան, ինչպես այդ գիտեին և նրանք, ովքեր մնում էին բերդում։

Թմբուկների մանր հարվածները երբեմն-երբեմն չոր ճթճթում էին. մարդիկ հետ էին քաշվում, կոխկրտելով հետևում կանգնածների ոտքերը, ի նշան հրաժեշտի, օդի մեջ վեր թռցնում զինվորական անհովար գլխարկները։

— Մնաք բարո՛վ, եղբայրնե՛ր...

— Եվ դու ներիր,— լսվում էր շարքերից։

— Ռուսաստանին՝ ողջույն։

— Խոնարհվեք... Մինչև գետին...

— Լա՛վ, կխոնարհվենք...

— Մի՛ տխրիր, հայրենակից...

— Վասկա, տափաշիշն ախր չես վերցրել։

— Թող մնա քեզ...

— Ջմոռանաք մեզ, եղբայրներ...

— Հանցագործություն է մոռանալ...

— Մնաք բարով, բոլորդ...

Սակայն նահանջող ջոկատները դեռ չէին հասցրել հետ քաշվել դեպի բերդը, երբ սկսեցին հավաքվել հայերն ու հրեաները։ Թուրքերի սարսափը նրանց ստիպել էր փրկություն որոնել ամրոցում։

— Ներս թողեք մեզ,— գոռում էին մարդիկ՝ հետևներից քարշ տալով մկկացող այծերին ու տնային կահ-կարասիների խճճված կապոցները։ Սարսափից խելացնոր հրեաները լացող երեխաներին դեմ էին տալիս քթներին, հայ պառավները պատռում էին իրենց վրայի հագուստը, որպեսզի ցույց տան խաչը։

— Մենք օսմաններ չենք,— հեկեկում էին կանայք՝ ծնկների վրա ընկնելով գնդապետի առաջ,— բարի սարդար, ներս թող մեզ... Փրկի՛ր մեր երեխաներին...

— Հայերին կարելի է թողնել,— կարգադրություն արեց Պացևիչը՝ ակամայից հետ քաշվելով...

Այստեղ նրան մոտեցավ Կարաբանովը, գունատ և զարհուրելի, խելագարի աչքերով նայեց գնդապետին, ասաց չարախնդությամբ.

— Ա-ա՜, ահա թե որտեղ եք դուք... Դուք կարծեմ, խոստացաք ինձ հետ խոսել Բայազետում... Ես լսում եմ։

Պացևիչը, փախչելով նրանից, թափահարեց ձեռքը.

— Գնացե՛ք գրողի ծոցը, պորուչիկ, վերջապես ձեռք քաշեք ինձանից։ Հիմա ձեզ հետ խոսելու տրամադրություն չունեմ...

Հայերին ներս թողին, և ծերերի, կանանց ու երեխաների այդ ամբողջ բազմությունը, շնորհակալությամբ աղմկելով, կապոցներն ու երեխաներին ցնցելով, ներս հոսեց ամրոցի դարպասներից։

Հին, մաշված խալաթով մի տարեց հրեա մոտեցավ Շտոկվիչին, նրա դեմքի վրա արցունքներ էին գլորվում։

— Մենք օգնել ենք ձեզ,— կամացուկ և խղճալի ասաց նա,— մեզ թուրքերը կկոտորեն, ինչպես և հայերին... Մենք խեղճ մարդիկ ենք...

— Կորի՛ր այստեղից,— գոռաց մեկը։

— Լռի՛ր,— բարկացավ Շտոկվիչը։— Նա քեզ ի՞նչ վատություն է արել։ Հը՞... Ներս արի, Մոյշա... Որտե՞ղ է քո Սառան... Ներս բեր քո լակոտներին...

— Ճիշտ է,— վրա բերեց Խրենովը, օգնելով հրեաներից մեկին տանելու իրերը։ Ջհուդները մեյդանում իրենց չուրեկը, հակառակ ուրիշների, պարտքով էին տալիս... Եվ էն էլ խաշխաշով։

Օգտվելով դարպասների մոտի խառնաշփոթությունից՝ միլիցիան նորից փորձեց ճեղքել և ամրոց մտնել ձիերով, բայց Շտոկվիչը լավ կերբերոս էր։ Նա դարձյալ հետ քշեց նրանց։ Դարպասների հետևում կանգնած միլիցիոներները դեռ երկար ժամանակ քննարկում էին Պացևիչի կարգադրությունը, հետո ցրվեցին ով՝ որտեղ։ Նրանց հետագա ճակատագիրը սարսափելի էր, և դրա համար մեղքը դարձյալ ընկնում էր գնդապետ Պացևիչի վրա, որը այդ ամբողջ ժամանակ, չնայած պաշարման մոտալուտ վտանգին, «փութկոտությամբ թեյ էր կոնծում»։

Շուտով երևացին և նահանջողները։ Նրանք խմբովին ներս խուժեցին բերդի դարպասներից։ Հոծ բազմությունը նեղ մուտքի մեջ զինվորներին հրմշտոցով քշում, պտտեցնում էր, ինչպես տաշեղները խառնարանի մեջ. գազանացած մարդկանց հեղձուցիչ խռխռոցները լցրեցին բերդի գավիթները։

— Վե՞րջ,— հարցրեց Շտոկվիչը, երբ ամբոխը հորդեց ներս։

— Կարծես վերջ։

— Փակիր դարպասները։

Դարպասները փակում էին, երբ մեկը բռունցքով սկսեց հարվածել, գազազած բղավելով։

— Ո՞ւր եք փակում, ձեր մերը... Սրիկաներ.... Կորչում ենք...

Ներս թողեցին և դրանց։ Սպասեցին մինչև հավաքվեն մնացածները։ Ոմանք դեռ բերում էին վիրավորներին ու սպանվածներին։

— Վե՞րջ,— հարցրեց Շտոկվիչը, երբ գնդակներն արդեն սկսել էին սուլել կամարների տակ՝ քերելով հախճասալերը։

— Կարելի է փակել,— պատասխանեցին զինվորները,— մնացածները դեռ շատ են, բայց թող հրակնատներից ներս խցկվեն։

Բերդի ներսից դարպասների մոտ քաշեցին սայլերը, սկսեցին նրանց վրա քարերի կույտեր լցնել, դրա համար քանդելով ավազանի պատերը։ Ինչ-որ մեկը երկար ծեծում էր դարպասները, հայհոյում, աղաչում, լաց լինում, բայց դարպասներն այդպես էլ չբացեցին։

— Տո տխմա՛ր,— գոռում էր Շտոկվիչը,— վազիր բերդախրամի միջով։ Հրակնատը դեռ բաց է, այնտեղ քեզ մի բաժակ լաֆիտ կտան..

Միայն այդ ժամանակ շատերը հասկացան իրենց վիճակի ամբողջ ահավորությունը։ Բայց ջուրը դեռ հոսում էր ծորակից. թուրքերը հավանաբար դեռ չէին հասցրել գրավել այն կիրճը, որտեղից ջուրը հոսում էր դեպի քաղաք կամ դեռ փնտրում էին ջրատարի ակունքը, որ փակեն խողովակները։

Այժմ ծորակի մոտ երկու ժամապահ էին կանգնում։ Ջուրը կամաց լցվում էր հոսպիտալային տակառի մեջ, և ժամապահները սվինով վախեցնում էին յուրաքանչյուրին, ով ցանկանում էր ջրի շիթի տակ կոխել իր տափաշիշը.

— Հետ դարձեք։

— Ինձ ահա, այսքան... Դոնե մի կաթիլ, հա՞։

— Հե՛տ...

10

Վիրավորները գալիս էին մեկը մյուսի հետևից, աստիճանների վրա նստած սպասում հերթի. հատակի վրա և պատերի երկայնքով պառկած էին մահամերձները, սանիտարների ոտքերը սայթում էին արյան մեջ։ Հենց այդտեղ էլ, երկու բարձր սեղանների վրա, Կիտաևսկին և Սիվիցկին վիրահատում էին մարդկանց, այդ օրն 58 գնդակ էր հանվել վերքերից. վիրավորներն ականջները փակում էին, որ չլսեն, թե վիրաբուժական սղոցը ինչպես է նրբորեն խզխզում՝ անվերջ հետ ու առաջ անելով մարդկային կենդանի ոսկորի վրա։

— Դուք ո՞ւր, Ագլայա Եգորովնա։

— Հիմա կվերադառնամ։

— Ո՛չ, ո՛չ, աղավնյակս, ժամանակ չկա...

Խվոշչինսկայան քացախի և կիսրոնաթթվի հետ խառնած ջուր էր խմեցնում հիվանդներին. հերթի սպասող զինվորները իրենք, անհրաժեշտության դրդմամբ, վիրակապում էին իրենց վերքերը։ Վերջապես հոսպիտալ հասավ լուրը, թե բերդի դարպասներն արդեն բարիկադի են վերածվել, կայազորն արդեն պաշարողական դրության է անցել։

Այժմ արդեն հորդան գտնվում էր հենց բերդի պատերի տակ, և գնդակները, ներթափանցելով լուսամուտներից, սուլում էին հոսպիտալի հիվանդասենյակներում՝ սպանելով զինվորներին։ Սիսվեց իրարանցում, ջարդ ու փշուր էին լինում ամանեղենն ու կահ-կարասին, խոխոռացնում էին մահամերձները, միջանցուկ տաք քամիները հանգցնում էին թրթռացող մոմերը։

— Հատակի՛ն, բոլորդ պառկեք հատակին,— գոռաց Սիվիցկին, և վիրավորները բժիշկների հետ միասին ընկան դեմքին՝ ելք փնտրելով դեպի անվտանգ սենյակները։

Խառնաշփոթության այդ պահին, երբ մարդիկ դեռ չէին հասցրել հաշտվել այն մտքի հետ, որ իրենք պաշարված են փակ ամրոցում, լսվեց մեկի ձայնը.

— Պատերի վրա, եղբայրնե՛ր...

Այստեղ արդեն չկային ո՛չ հրամաններ, ո՛չ խորհրդատուներ, ո՛չ կարգ ու կանոնի նախանձախնդիրներ, յուրաքանչյուրը մյուսի համար ընկնվոր էր, յուրաքանչյուրն իր համար՝

գեներալ։ Սոֆիտների և պատուհանների մոտ ինչ-որ բուռն քաշկռտուկ էր, պատի մեջ եղած ամեն մի ճեղքի մոտ մարդիկ էին բզբզում. ճեղքվածքը մեծ է, քարեր էին լցնում, փոքր էր թվում, քանդում էին լինգերով ու հրացանների կոթերով։

— Հիմարնե՛ր,—ճչաց Կարաբա՝ վը իր կազակների վրա՝ բարձրանալով բերդի ճակատամասի տանիքը։— Պառկել են այստեղ, ինչպես հովեկներ, իսկ այնտեղ, իսկ այնտեղ «Կրուպպն» արդեն ավազանն է ջարդում... Գնացե՛ք քարեր բերելու։

Ուժերի լարումից ծղրտալով, կրակոցների որոտի ներքո, բաց բերաններով փոշի կուլ տալով՝ քարեր էին կրում տանիքի վրա։ Դրանք շարում էին շուրջը, գործարար տեսքով հաշվում փամփուշտները, կոշտուկավոր մատների արանքում պտտեցնում ծխախոտի գլանակները, տպավորություններ հաղորդում։

— Այսպես դեռ ոչինչ... Առայժմ ծխախոտ կա...

Թուրքերը նկատելիորեն թուլացրել էին կրակը՝ շարունակելով բերդի պաշարումը, թեև ամեն մի նոր գրված դիրքից շտապում էին փորձնական կրակոցներով անմիջապես ստուգել նշանառությունը։ Իսկ ամրոցի գույքը, որ չէին հասցրել ներս բերել, դեռ կույտերով մնացել էր դարպասների մոտ. և հենց այստեղ էլ, փախչելու ուժ չունենալով, գլուխները կախ կանգնած էին կազակների կապկպված ձիերը՝ կարծես կշտամբելով իրենց տերերին, որ լքել են իրենց։

— Դենի՛սկա,— մռայլադեմ ասաց վախմիստրը,— գնա՛, այնտեղ քո Բեսը վիրավորվել է... Տանջվում է հովատակը...

Երկու հարյուրյակների ձիերը պինդ կապկպված էին իրար՝ պոչ-գլուխ, գլուխ-պոչ, մեկի սանձը անցկացված էր մյուսի ագեփոկի տակ, և եթե մեկը գնդակից ընկնում էր, ապա խեղճը թպրտում էր կապկպված՝ իր հետևից քաշելով հարևանին, և այն ժամանակ սկսում էին աղիողորմ վրնջալ բոլոր ձիերը միասին, գլուխները վեր ձգելով, ասես դիմում էին կազակներին՝ տեսնո՞ւմ եք ինչքան վատ դրության մեջ ենք մենք...

Դենիսկան հետ վերադարձավ և, երեխայի պես հեկեկալով ասաց Կարաբանովին։

— Շնորհակալություն, ձերդ բարեծնություն։ Շատ լավ ձի էր... Այդպիսին այլևս չի լինի...

Վատնինը Պացևիչին գտավ շահի հանգստարանում. Իսակ փաշայի կնոջ դամբարանին նստած՝ Ադամ Պլատոնովիչը եղուգներն էր կտրում և խոսում Կլյուգենաուի հետ.

— Հարկավոր է փորձել, Ֆյոդոր Պետրովիչ. չի կարող պատահել, որ բոլորովին ջուր չլինի։ Հինգ մետր, տասը մետր, քսան, միևնույն է, կարելի է փորել հասնել մինչև ջուրը...

— Ի՞նչ եք ուզում, հարյուրապետ,— գոռաց գնդապետը՝ տեսնելով Վատնինին, և ներքնատան մութ անցուղիներում դեռ երկար թափառում էր արձագանքը՝... ապետ... ապետ... ապետ...

— Ձիերը կոտորվում են,— ասաց Վատնինը,— գույքն ընկած է այնտեղ։ Հո չպիտի մնա կորչի։ Հարկավոր է ամրոց բերել։

— Դուք գժվե՞լ եք, ի՞նչ է, եղբայր։ Ո՛չ, ո՛չ, ո՛չ մի դեպքում։

— Գիշերը,— շշուկով ասաց Վատնինը,— երբ մութն ընկնի։ Որպեսզի կամավորները՝ մեկ-երկու, և դարպասներից ներս բերեն։ Մի՞թե ափսոս չէ այդ ամենը։ Ախր ծիծաղելի է ասել, բայց կազակների կաթսայիկներն անգամ մնացել են զորանոցներում... Չգի՛տենք ինչով ուտել և խմել։

— Գիշերը կարելի է,— հարյուրապետին պաշտպանեց Կլյուգենաուն։— Կազակները ճարպիկ ժողովուրդ են. նրանք սատանային քավարանից կհանեն, և չար ոգիները միանգամից չեն նկատի։

— Դե լա՛վ,— համաձայնեց Պացևիչը՝ անդրավարտիքի վրայից թափ տալով կտրված եղունգները,— գիշերը, պարոնայք, թույլատրում եմ...

Քաջալերված այդ համաձայնությունից՝ Վատնինը յուրաքանչյուր հարյուրյակից կանչեց քսանական կամավոր, խընդրեց արտագրոհի գնալ նաև զինվոր Պոտյոմկինը։

— Իսկ դու ինչի՞ համար։

— Իմ հրացանը կարգին չէ,— բացատրեց Պոտյոմկինը։— Հարկավոր է մի հատ թուրքական «սնայդեր» գտնել, որպեսզի ավելի հեռու կրակեմ, և մեկ էլ, գուցե թուրքերից

մի ոչխար բերենք, թե չէ երկար ժամանակ է միս չենք կերել։

Եվ ահա իջավ աղջամուրջը։ Թշնամին նույնպես հոգնել էր և, ինչպես երևում էր, ուզում էր հարմարվել իրադրությանը. կրակոցները քիչ-քիչ դադարում էին։ Վատնինը կարգադրեց կամավորներին՝ հավաքվել առաջին բակում, արտագրոհը պաշտպանելու համար նշանակեցին խոպերցիներին։ Սպասում էին, որ բոլորովին մթնի, որպեսզի նետվեն դարպասներից դուրս, սակայն իրադարձությունները դասավորվեցին այլ կերպ։

— Կարծես մեկը ծեծում է դարպասը,— ասաց Պոտյոմկինը։

Ականջ դրեցին։ Այո՛, մեկը ծեծում էր դարպասը։

— Դենիսկա, մի գնա լսիր...

Կազակը բարձրացավ դարպասների դեմը փակող քարերի կույտի վրա, ականջը կպցրեց հնամենի զարդանկարավոր բրոնզին։

— Հե՛յ, ո՞վ է այդտեղ,— բղավեց նա։— Եթե ողորմություն եք ուզում, ապա մենք շաբաթ օրերին ենք տալիս... Շաբաթ օրն արի։

— Ես քեզ, անօրենիդ, ցույց կտամ,— լսվեց տեր Գերասիմի ձայնը,— ճանաչում եմ գարշելի ձայնիցդ... Բա՛ց արա, Դենիսկա՛, թե չէ դուռը կկոտրեմ... Ես այստեղ մենակ չեմ, միլիցիայի հետ եմ... Մենք շատ ենք։

Վատնինը նույնպես հպվեց դարպասին։

— Է՛յ, տեր-հայր,— խորհուրդ տվեց նա,— վերջացրո՛ւ հայհոյանք թափելը. սողոսկիր ճեղքից ներս։ Միայն կամաց... Այդ ես եմ ասում, Վատնինը, լսո՞ւմ ես ինձ։

Կարաբանովը պառկած էր տանիքին, որը դանդաղ հովանում էր ցերեկվա տապից։ Շինելի վրա պառկած՝ նայում էր, թե անհուն կապույտի մեջ ինչպես էին վառվում ջինջ աստղերը։ Կազակները քաշեցին նրա շալվարից. պորուչիկը, հենվելով ցավից, շուռ եկավ փորի վրա, սողալով մոտեցավ բերդապատի եզրին և նայեց ներքև.

— Միայն թե օսմանները չնկատեն,— անհանգստացավ նա,— թե չէ, եղբայր, վատ կլինի նրանց համար...

Բարձրությունից մարդիկ գրեթե չէին երևում, միայն

գետնի վրա համրորեն սահում էին նրանց թեքությամբ փրված ստվերները. ահա մեկը սուզվեց հրակնատի մեջ, ահա մյուսը, ահա և տեր Գերասիմը, լուսնի լույսի տակ փայլեցնելով խաչը, քամակը դուրս ցցած, խցկվեց հրակնատի մեջ։

Դեռ գալիս են ու գալիս...

— Կարծես նրանց մեջ Նեկրասովը չի երևում,— ասաց մեկը ուշադիր դիտելով։— Ափսո՞ս, բարի մարդ էր...

Եվ հանկարծ.

— Տրա՛ք-տա՛ք-տա՛ք-տա՛ք-տա՛-տա՛... Ֆյուտ-ֆի՛տ-ֆի՛տ...

Թուրքերը, մթության միջից դաղտագողի մոտենալով, միլիցիայի վրա ուժեղ համազարկ բացեցին։ Էրիվանցիները նետվեցին հետ, և Վատնինն այդ պահին մոռացավ Թշնամու մոտիկության մասին։

— Լրիվ բացել դարպասները,— գոռաց նա։— Հո անտեղի չե՞ն կորչելու...

Միլիցիային օգնության հասնելու ցանկությունը կազակներին ստիպեց հետ քաշել քարե անցկալը. փթանոց քարերը գնդակների նման ձեռքից ձեռք էին թռչում, կամավորները դղրդյունով հետ քաշեցին քառանիվ սայլը, և դարպասները լայն բացվեցին։

— Ներս եկե՛ք, եղբայրներ...

Մի քանի մարդ հասցրին ներս վազել ամրոց, բայց բերդապարսպի ճակատամասի վերևից հրաձիգները սաստիկ գոռգոռացին.

— Փակի՛ր դարպասները... Շուտ ծածկի՛ր... Թուրքերը։

Թուրքական ջոկատը՝ մոտ հազար ռեդիֆներ, կարծես ծլեց գետնի տակից և ճիչ ու աղաղակով նետվեց դեպի դարպասները։ Կարաբանովի հարյուրյակը միահամուռ համազարկով հարվածեց նրանց. փայլփլելով անդունդը թափվեցին պարպված անթիվ պարկուճները, դարպասները հասցրին փակել. սկզբում դրանք սեղմեցին սայլով, և Վատնինը, հոգնած պպզելով, մաքրեց քրտինքը։

— Այո՛,— խոստովանեց նա,— կարծես չենք կարող դուրս գալ...

Մութն ընկավ։ Երկինքը նստեց գետնի վրա՝ լցվելով ասիական սև գիշերվա ծանրությամբ։ Բայազետի ծայրամա-

սում թուրքերը հրդեհեցին հեռագրասյուների պահեստը, և երերուն բոցը քամու հարվածների տակ տարածվեց տափակ խրճիթների վրա։ Մի տեսակ խաղաղ էր ու սարսափելի։ Սակայն ահա ճայթեցին առանձին կրակոցներ, որոնք նման էին ազդանշանների, և այն ժամանակ մերձակայքի լեռները, բոլոր փողոցները և մեյդանի հրապարակը հանկարծ սկսեցին շարժվել բազում կրակներից։

Հարյուրավոր և հազարավոր լապտերներ սկսեցին շարժվել անկարգ շարքերով. հողագնդի վրա տարածվում էր մարդկային ամբոխի դոփյունների միալար դղրդյունը, ձայների խուլ աղմուկը կախված էր երկնակամարի տակ՝ մի շատ ցածր նեռայի վրա։ Դա օրվա ընթացքում հոգնած թուրքերն էին սկսել տեղափոխվել գիշերելու, և բայազետցիներն ակամայից սարսափեցին, թե ինչքան շատ են նրանք։

— Օսմաններն իրենց տարօրինակ են պահում,— նկատեց Շտոկվիչը։

Այո՛, թուրքերն իրենց տարօրինակ էին պահում. այդ առաջին գիշերը նրանք չէին կատարում իրենց սովորական վայրագությունները, միայն հայկական քաղաքի ցածրադիր մասից երբեմն ամրոց էին հասնում կոտրատվող դռների ճարճատյունն ու մարդկանց երկարաձիգ վայնասունը։ Սակայն դրա փոխարեն, կեսգիշերից հետո, թշնամիները ոհմակներով պտտվում էին տագնապահույզ բերդի շուրջը։

Վիրավոր ձիերը բերդի պատերի տակ դեռ թպրտում էին հոգեվարքի ջղաձգումների մեջ։ Քրդերը կամաց, գաղտագողի մոտենում էին կազակների իրերին և կտրելով սանձերը՝ տանում առողջ ձիերին։ Գիշատչության մոլուցքով տարված նրանք հաճախ ընկնում էին դիպուկ կրակոցների տակ...

— Ես դրանց վաղուց գիտեմ,— ասաց Խրենովը՝ մոտենալով կազակներին ծխախոտ խնդրելու։— Թուրքը չդողանա, չի կարող ապրել... Ինձ պատմել են, որ նրանք նույնիսկ Շամիլին են կողոպտել...

Կարաբանովը չդիմացավ, Դենիսկային ուղարկեց Կլյուդենաուի մոտ, որպեսզի նավթ բերի մի քանի զինվորական շինել թրջելու համար։ Նավթի մեջ թաթախված շինելները վառեցին և բոցավառ ջահերի պես բերդի ճակատամասերից ցած գցեցին։

Լուսավորվեց, և պորուչիկը գոռաց.

— Խփե՛ք, տղանե՛ր... Որպեսզի դրանց ձեռքը չընկնի... Խփե՛ք։

Կրակոցներն սկսեցին հաճախանալ։ Որքան էլ ցավալի էր կազակների համար, նրանք, այնուամենայնիվ, սպանեցին իրենց ձիերին և հետո երկար ժամանակ նստած էին լուռ՝ ցանալով չնայել ներքև, որտեղ ընկած էին նրանց մարտական ընկերները, որոնց հիշում էին, երբ նրանք դեռ ժիր քուռակներ էին իրենց ստանիցաներում, որոնք այնպես քնքշաբար ու գուրգուրանքով, աղմկալի փնչոցներով ափերի միջից վերցնում էին շաքարի կտորները։

— Կարծես կնոջս են սպանել,— ասաց վախմիստրը։— Իսկ ի՞նչ լավ բան է տեսել ինձանից։ Լեռներով ու տափաստաններով եմ վազեցրել նրան։ Հենց մի բան էլ այնպես չի եղել՝ հասցրել եմ մտրակով։

— Սկսեցիր մղկտալ,— խոսքահաշ տվեց Եգորիչը,— մարդու հոգի մի՛ հանիր...

Երբ իրադրությունը մի քիչ լիցքաթափվեց, Շտոկվիչը իր մոտ հավաքեց կայազորի սպաներին։ Իր սովորության համաձայն նա խաղում էր կատվի ձագի հետ, բայց նրա դեմքը մռայլ էր։

— Պարոնայք,— հայտարարեց կապիտանը,— ես ձեզ հրավիրել եմ, որպեսզի իմանամ՝ ո՞վ համարձակություն կունենա տիկին Խվոշչինսկայային հայտնելու ամուսնու զոհվելու մասին և նրան հանձնի ահա այս նամակը։

Սպաները գլխահակ լռում էին։ Կատվի ձագն ամբողջ ուժով կծեց մատը։ Շտոկվիչը սիրալիր խփեց նրա քամակին և ձեռքերի մեջ տրորեց ծրարը, որի վրա չորացած արյան հետքեր կային։

— Հավանաբար ոչ ոք կամովին իր վրա չի՞ վերցնի... Այդ դեպքում, պարոնայք, ստիպված կլինենք վիճակահանություն անցկացնել...

Սիվիցկին ասաց.

— Միանգամայն տեղյակ եմ պահում, որ ես հրաժարվում եմ վիճակահանությունից։ Եվ ոչ թե սեփական թուլությունից, պարոնայք։ Ո՛չ... Ուղղակի հանգուցյալ Նիկիտա Սեմյոնովիչից ունեմ շատ ավելի սարսափելի մի պարտակա-

նություն նրա կնոջ նկատմամբ, քան միայն այն, որ հայտնեմ նրան ամուսնու մահվան մասին...

— Պարոնայք,— բժշկից անմիջապես հետո կամացուկ խոստովանեց Կլյուգենաուն,— ես նույնպես հրաժարվում եմ վիճակահանությունից։ Ներեցեք ինձ, սակայն ես չեմ կարող... Հավատացեք՝ չեմ կարող։

— Բայց դա անազնվություն է, բարոն,— դիտողություն արեց Եվդոկիմովը։— Եվ... ներեցեք, բոլորովին ձեզ նման չէ։

— Այո՛, ես ընդունում եմ, որ դա անազնվություն է։— Կլյուգենաուն գլուխը կախեց. նա առանց գլխարկի էր, և Կարաբանովը նրա նոսր մազերի միջից նկատեց վարդագույն ճաղատությունը։— Ես ամբողջ կյանքում,— շարունակեց բարոնը,— ջանացել եմ լինել ազնիվ։ Թույլ տվեք ինձ, պարոնայք, գոնե մեկ անգամ կյանքում սինլքոր լինել։ Սակայն այդ կնոջ շեմին դժբախտության լուրը տանելը իմ ուժերից վեր է։ Դուք ինչպես ուզում եք...

Կլյուգենաուն, գլուխը չբարձրացնելով, լռությամբ նահանջեց ստվերի մեջ։ Շտոկվիչը ափերով գլանեց վիճակահանման թղթիկները, գցեց իր քրտնած գլխարկի մեջ։

— Ո՞վ է առաջինը, պարոնայք,— հարցրեց նա։— Դուք չեք ուզո՞ւմ արդյոք, Կարաբանով, մի բաժակ լաֆիտ...

Այդպիսի դեպքերում առաջինի բախտը միշտ բերում է, և Կարաբանովը, երկար չմտածելով, ձեռքը կոխեց թղթերի կույտի մեջ։ Բաց արեց իր թուղթը, կամացուկ ասաց.

— Այլևս կարող եք չհանել.... Ինչ երջանիկն եք դուք բոլորդ, պարոնայք...

11

Պահպանվել է այդ տարիների մի նկար. կրակոցների ճնշով պատված Բայազետի բերդը վեհորեն բարձրանում է անառիկ ժայռի գագաթին. Միջնաբերդի աշտարակների վրա ծածանվում է ռուսական դրոշը. զինվորները կանգնած են բերդապարսպի ճակատամասի երկայնքով՝ «ուռա՜» գոռալու դիրքին, բերանները բաց, իսկ թուրքական հորդաները զարհուրելիորեն սարսափահար ցած են գլորվում՝ գցելով զենքերը։

Այդ ամենը շատ գեղեցիկ է, բայց ճիշտ չէ...

Ի՞նչ էր Բայազետը։ Նրա մասին ճշգրիտ պատկերացումը ոչ թե նկարները, այլ նրա հատակագծերը։ Հարկավոր է անմիջապես մի կողմ նետել վերամբարձ կամուրջներով պաշտպանված միջնադարյան ամրոցների ասպետական ռոմանտիկան։ Շենքերով շրջապատված երկու աղրոտված նեղ գավիթներ և մեկ էլ ոեղուտը շրջապատող երրորդ գավիթը. այս ամենը գոտևորված էր քարե պատով, խճճված նեղ անցումներով, ապահովված գետնանցքերով և ներքնատներով. ահա թե ինչ էր Բայազետը։

Մենք գիտենք, որ բերդի դարպասներն արդեն փակ են։ Թող ընթերցողը ների մեզ, որ չենք կարողանում գունազարդել, բայց այժմ Բայազետից դուրս գալու միակ ելքը արտաքնոցի անցքն էր՝ հյուսիսային կողմից։ Դա լավ հոտ չի արձակում, սակայն ճշմարտություն է։ Այսուհետև, որպեսզի խնայենք ընթերցողին, այդ ելքը մենք կկոչենք որմնանցք։

— Կապիտա՛ն,— հրամայեց Պացեիչը,— ես գնում եմ հիմա մի քիչ քնելու, իսկ դուք հետևեք, որ ոչ ոք բերդից դուրս չգա։ Առանց այն էլ մենք այսօր կայազորի կեսից ավելին կորցրել ենք։

— Լա՛վ,— հնազանդությամբ համաձայնեց Շտոկվիչը, որպեսզի չվիճի գնդապետի հետ և, խրախուսելով խիզախներին, սկսեց մատների արանքով նայել առանձին զինվորների արտագրոհներին՝ ասես չնկատելով հրամանի որևէ խախտում։

Կազակները վերևից տեսնում էին, թե զինվորները բերդ մտնելուց առաջ ինչպես էին սողում, երեք տակ ծալվելով վազվզում՝ իրերի մեջ որոնելով իրենց համար պետքական որևէ բան։ Եվ կազակները կամաց բղավում էին վերևից ներքև։

— Ա՛ջ գնա, ա՛ջ... Այնտեղ պարկեր կան, մեջը ինչ-որ բան է լցված... Հրեն, այն կույտի հետևը ինչ-որ բան է պպզում... Պարանը վերցրու, պետք կգա..

Գողաբարո քրդերը նույնպես սողում էին թափթփված իրերի մեջ, և գիշերները հաճախ բռնկվում էին կարճատև գոտեմարտեր, հատուկենտ կրակոցներ, հետո նորից ամեն ինչ խաղաղվում էր։ Փամփուշտներ հավաքելով, զինվորները

վերադառնում էին ամրոց։ Փոխարինելով նրանց, որմնանցքի մթության մեջ սողոսկում էին ուրիշները՝ որոշելով փորձել իրենց բախտը։

Պոտյոմկինը տնքալով ուսին մի մորթված ոչխար բերեց, նրա գլխի սպին ուժերի լարումից դարձել էր մուգ մանուշակագույն։ Ոչխարի միսը որմնանցքից ներս հրելով զինվորը մեկին հայհոյեց.

— Ո՞ւր եք խցկվում դանակներով։ Ոնց ուզում ես, բայց ոչխարի կեսը հրետանավորներինն է... Գնա այնտեղ ինքդ գողացիր։ Գիտեք ինչքան սարսափ եմ կրել, մինչև քարշ եմ տվել այստեղ ...

Իսկ խեղճ Պոտրեսովն արդեն կանգնած տեղը ննջում էր. երկու անքուն գիշերները և դառն ապրումները տարեց մայորին հալից գցել էին։ Սակայն հիմա նրան մտահոգում էր բերդապարսպի հյուսիսային մասի պաշտպանությունը և, բռնելով անիվների ճաղերից, նա օգնում էր հրետաձիգներին՝ հրանոթը տեղափոխելու նոր տեղ։

— Հնդգ բարեծնություն,— շշնջաց մեկը մթության մեջ,— այստեղ միս են խորովում, հիմա կբերեն։ Հանգստացեք...

Հրետանու ենթասպաները դեռ ցերեկը, մինչև ջոկատների գալը, հասցրել էին մի ամբողջ տակառ ջուր պահեստավորել։ Սակայն Սիվիցկին, իմանալով այդ մասին, պարետի միջոցով կարգադրեց ջուրը հոսպիտալին տալ։ Հետո մի ինչոր հիմար բերդում լուր տարածեց, թե իբր սաստիկ ժլատ Պոտրեսովը էլի մի քանի տակառ ջուր է թաքցնում։ Եվ ահա պրծում չկար աներեսներից՝ աղաչում էին, պաղատում, խոստանում էին հեղ կրել, ինչ ուզես անել, միայն թե նրանց ջուր տային խմելու։ Հրետաձիգները վատնեցին ջրի մնացորդները, և այժմ նրանց մոտ ընդամենը քառորդ դույլ էր մնացել...

Երբ ոչխարի միսը խորովված էր, հրետաձիգները և ենթասպաները մեջտեղ դրեցին դույլով ջուրը։ Շուտով նրանց շուրջը, մթության մեջ ֆսֆսացող և նախանձից ախ ու վիշ անող մարդկանց մի ամբողջ խումբ գոյացավ։ Նրանք ջուր չէին խնդրում, միայն ցույց էին տալիս, որ այ, տեսեք՝ մենք այստեղ ենք, մենք էլ ենք ուզում...

— Նրանց էլ տվեք,— թույլ տվեց Պոտրեսովը,— թող աչք

չտնկեն բերաններիս... Հարկավոր է մի կերպ նրանց էլ բաժին հանել։

Ինչ-որ տեղից մթության մեջ երևաց հրետանային մի ահռելի ձի՝ ներքին ծնոտը պոկված, պոչը թափ տալով և պետական ձիասարքը մեջքին, և նույնպես մոտեցավ կրակին։ Նրա վրայից տեղնուտեղը հանեցին ձիասարքը, շոյեցին դժբախտ մտրուկին, խղճացին։

— Անասուն է,— լացակումած ասաց Կիրյուխա Պոստնին,— բայց ահա, տեսնում եք, ոնց որ մարդ, ուզում է մարդկանց մոտ մտնել...

Այդ գիշեր ոչ ոք չպառկեց քնելու։ Ինքնապահպանման զգացումը հաղթում էր հոգնածությանը։ Նոր հարձակման սպասելը, խարդախ թշնամու մտադրությունների անհայտ լինելը, տանիքների և պատերի վրա պառկած հրաձիգների շարքերը համալրելու անհնարինությունը. այս ամենը կարգապահ էր դարձնում մարդկանց։

Իրենց համար տեղ չգտած մարդիկ ամբողջ գիշեր թափառում էին բերդում՝ կանգ առնելով յուրաքանչյուր խրամատի մոտ։

— Եղբայրնե՛ր,— աղերսում էին նրանք,— գուցե մի կերպ ինձ էլ տեղ կտաք։

— Գնա՛, առանց քեզ էլ արդեն երեք հոգի ենք։

— Իսկ դուք խտացեք, եղբայրներ։ Ես լավ եմ կրակում։

— Որ այդպես է, դե արի կանգնիր...

Շտոկվիչն իր հանգստությամբ և բանականությամբ այդ գիշեր դուր եկավ Կլյուգենաուին։

— Գիտե՞ք, բարո՛ն,— ասաց կապիտանը՝ սովորության համաձայն շոյելով կատվի ձագին,— ես արդեն ամրոցի պարետը չեմ։ Դա ծիծաղելի է, իհարկե, բայց հիմա մենք բոլորս պարետներ ենք։ Մեզ՝ սպաներիս, մի բան է մնացել՝ վստահել կայազորի արիությանը...

Գիշերվա կեսին, երբ մարդիկ արդեն մի քիչ հանգստացել էին, բռնկվեց ուժեղ հրաձգություն՝ իրար հաջորդող համազարկերով։ Պացևիչին արթնացրին. նա բոլորի հետ միասին վազեց վերև։ Միայն հասցրեց նկատել, թե ինչպես Իսմայիլ խանը, չգիտես ինչու, ձի հեծած, այս ու այն կողմ է

նետվում և աստիճաններով արագ բարձրացավ բերդի ճակատամասի տանիքը։

— Վատնի՞ն,— հարցրեց նա մթության մեջ,— թե՞ Կարաբանով... Ո՞վ է այստեղ, կազակնե՛ր։ Ի՞նչ է կատարվում այստեղ...

Բերդից որոշ հեռավորության վրա կրակոցները սաստկացան, և դա տարօրինակ թվաց, կազակներն անմիջապես թողեցին քար կրելը և զենք վերցրին։ Շուտով պարզվեց նաև հրաձգության պատճառը. թուրքերը, ավար որոնելու համար թափառելով բերդի շրջակայքում, պատահաբար հանդիպել էին միլիցիայի ջոկատներին, որոնք թաքնվել էին կազակների՝ լքյալ զորանոցների մոտ, և մարտը բորբոքվեց պաշարվածների աչքի առաջ։

— Ձերդ բարեծնություն,— լսվեցին ճիչեր։— Հրամայեցեք բացել դարպասները... Ախր կկոտորեն միլիցիային...

— Վատնի՛ն, սիրելիս,— հարյուրապետին դիմեց Պացեևիչը,— ասացեք՝ կարելի՞ է արդյոք բացել դարպասները։

Նազար Մինաևիչը կանգնեց տանիքի վրա, կապարե երեսարկը ճթճթում էր նրա ծանր քայլերի տակ։

— Եվ թող գոռան,— ասաց նա։— Հիմա չի կարելի, Ագամ Պլատոնովիչ... Եթե ճեղքեն անցնեն մեզ մոտ, այդ դեպքում ուրիշ բան է։ Բայց դարպասները, իմ կարծիքով, էլի չպետք է բացել...

Պոտրեսովը հրթիռով լուսավորեց երկինքը, և թրթռացող աղոտ լույսը մթության միջից պոկեց ախոռների ցածր, գորշ շենքերը, որտեղ թաքնվել էին միլիցիոներները։ Էրիվանցիներին օգնելու բուռն ցանկությունը հարկադրեց կազակներին պատասխան կրակ բաց անել։

— Խփե՛ք, տղանե՛ր, քանի դեռ չի հանգել,— բղավում էր վախմիստրը,— ճիշտ նշան բռնեք։

Հրթիռները, ֆշշացնելով և չորս կողմ կայծեր ցրելով, շուտով հանգան, և այն ժամանակ խավարի միջից լսվեց մարդկային ձայների թնդյունը։ Սկսվեց ձեռնամարտը. այժմ Բայազետի բերդ էին հասնում խաչաձևվող սրերի զրնգոցները, խուլ վայնասունը, գոտեմարտի ճիչերը և ատրճանակների՝ ծափի նման բութ հատուկենտ կրակոցները։

— Իսկ ես կգնայի,— հայտարարեց Եվդոկիմովը։— Կարելի էր կամավորներ հավաքել...

— Բոլորս կգնանք, բոլորս,— նորից բղավեցին կազակները, բայց Վատնինը ընդհատեց նրանց.

— Ուշ է գնալը։ Նստեք տեղներդ, քանի դեռ ողջ եք...

Գոտեմարտի բռնված մարդկանց ճիչերն աստիճանաբար մարում էին հեռվում, մոտենում էր ձեռնամարտի օրհասը։ Ինչ-որ մեկի վերջին ճիչը, բարձր նոտայի վրա սառչելով, կախվեց ժայռերի գլխին և լռություն տիրեց...

— Դե՛, վե՛րջ։ Տանջանքից պրծան,— խաչակնքեց Պացեևիչը և, բռնելով մեջքից, զառամյալ ծերունու պես կիսակոր՝ իջավ տանիքից։

Լուսաբացից քիչ առաջ Շտոկվիչն իր մոտ կանչեց Եվդոկիմովին, մի բաժակ գինի տվեց նրան։

— Խմե՛ք, յունկեր... Ինձ թվում է թուրքական զորախմբերը հետ են քաշվել լեռները։ Հիմա վերցրեք ցանկացողներին և փորձեք թափանցել կազակային զորանոցները։ Վերցրեք ամեն բան, ինչ կարելի է փրկել...

Կամավորները հավաքվեցին բերդի արևելյան ճակատամասի երկրորդ հարկի սենյակում։ Ջահ բերեցին։ Եվդոկիմովը ուշադիր դիտեց մարդկանց։

— Վիրավորներին չեմ վերցնի,— ասաց նա։— Եվ դու, Ուշաստկին, մի կողմ քաշվիր, դու դեռ կաղում ես... Հանգցրո՛ւ ջահը...

Կամաց բացեցին գետնանցքը։ Շղթա կազմած, մեկը մյուսի հետևից, իջան ստորգետնյա սրահը, որտեղից ամբողջ երկարությամբ լավ գնդակոծվում էր բերդախրամը։ Հախճասալերով պատված նեղ միջանցքով գնացին դեպի որմնանցքը։

— Ես առաջինը կանցնեմ,— ասաց Եվդոկիմովը,— և առաջին քսան հոգին կգան ինձ հետ։ Մնացածները զենք ու փամփուշտներ կհավաքեն։

Յունկերը որմնանցքի միջով դուրս սահեց։ Պպզեց։ Անդորր էր։ Շարժվեց պատի երկայնքով, առանց մտածելու թռավ խրամի մեջ, սայթաքեց։ Ընկնելիս բնազդորեն ձեռքերը պարզեց առաջ։ Աջ ձեռքը դեմ առավ ինչ-որ լպրծուն մի բանի, և պատանին զզվանքով ձեռքը հետ քաշեց։

— Գալի՞ս եք,— շշնջաց նա։

Կամավորների կեսն արդեն ձեռնամուխ էր եղել զենք հավաքելուն։ Բերդապարիսպների բարձրությունից կազակներն աչալուրջ հետևում էին նրանց, սակայն հրաձիգների հովանավորությունը ասես Եվդոկիմովի համար չէր, նա իր մարդկանց առաջ տարավ դեպի անթափանց խորհրդավոր խավարը։

Զգուշությամբ անցան մուսուլմանական գերեզմանոցի ցանկապատի վրայով։ Գերեզմանների արանքում պառկած, մի վիրավոր ձի ի տես նրանց բարձրացրեց գլուխը և սկսեց խրխնջալ։ Հեռվից լսվեց ինչ-որ մեկի տնքոցը։

— Հե՛տ չմնաք, տղաներ,— խնդրեց Եվդոկիմովը,— այստեղ կարող է և դարան լինել...

Մոտեցան ախոռներին։ Շուրջը ոչ մի ձայն։ Ուսի ճնշման տակ կամաց բացվեցին դռները։ Կամավորները ներս մտան։

— Է՛յ,— կանչեց վախմիստրը,— ո՞վ կա այստեղ...

— Չկա՛,— պատասխանեց յունկերը։

Եվդոկիմովը շոշափելով, պատի երկայնքով հասավ կցաշենքը, որտեղ տեղավորվում էին հարյուրապետները։ Մթության մեջ որոտով դիպավ սեղանին։ Այստեղ, կարծեմ, Կարաբանովն էր ապրում, ահա այստեղ միշտ նրա լրագրերն էին դրվում։

— Մի լուցկի վառեք,— խորհուրդ տվեց Տրյոխժոննին։

Յունկերը վառեց «Թիֆլիսյան տեղեկագրերի» մի համար և վերադարձավ ախոռ։ Պայծառ բոցը լուսավորեց ախոռի պատերը։ Գրեթե մինչև առաստաղը իրար վրա թափված էին գցանված միլիցիոներների դիակները։ Թուրքերը հանել էին սպանվածների հագուստները մինչև վերջին թելը, և կազակները միանգամից ախ քաշեցին։

— Աստվա՜ծ իմ, ա՜յ քեզ գազաննե՜ր...

Լրագրի թերթը մինչև վերջ վառվեց յունկերի ձեռքում, և ծանր խավարը նորից ծածկեց մահվան այդ պատկերը։

Վերջացավ արյունով հագեցված օրը։ Եվ այդ օրվանից, որ կորավ վառոդի ծխի, տնքոցների և սրերի զրնգոցների մեջ, բացվում էր ռուսական զինորական փառքի նոր էջը։

Վաղն արդեն պետք է սկսվեր Բայազետի փառապանծ պաշտպանությունը։

Վերջ առաջին մասի։

Մասն երկրորդ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տագնապ

...Իսկ երեկոները քո մասին նեմ խոսում: Հայրիկդ հիմա չի խմում, փառք աստծո, իսկ Միտենկան այս ամիս տուն բերեց 7 ռ.: Լիկան, այնուամենայնիվ, համաձայնություն տվեց Վալերի Պետրովիչին, բայց հարսանիքը կհետաձգեն մինչև քո վերադարձը: Մեր ամբողջ ընտանիքն այնպես հպարտանում է քեզանով, մեր սիրելի Վադա, մեր բոլոր մտածմունքները միայն քո մասին են: Պահպանիր քեզ և ավելի հաճախ գրիր մեզ: Հարսանիքից հետո Լիկան մեր մոտից կգնա, և այն ժամանակ անկյունի սենյակը կազատվի քեզ համար: Երեկ մեզ մոտ էր Տանյուշա Ցիճնսկայան, նա բոլորովին օրիորդ է դարձել, դուք իրար հետ շատ լավ զույգ կլինեիք...

Պրապորշչիկ Լատիշևին ուղղված նամակից, որ գրել էր նրա մայրը հունիսի 8-ին, Վոլոկոլամսկից, որդու զոհվելուց երկու օր հետո։

1

Արդեն գիշերվա վերջին հոգնածությունն, այնուամենայնիվ, հաղթում էր մարդկանց, և նրանք տենդային քնի մեջ մեկը մյուսի հետևից վայր էին ընկնում։ Զինվորների և կազակների՝ հապճեպ փաթաթված կապոցների նման մարմինները լցրել էին մռայլ անցումներն ու աստիճանավանդակները. Բայազետի ռազմիկները պառկած էին գավիթների հրապարակներում և բերդաշենքի տափակ տանիքների վրա։ Աստղերը դեռ չէին հասցրել հանգչել երկնքի սև թանձրության մեջ, երբ Բայազետի բերդի ծակոծուկերում սկսեցին շրջագայել լռակյաց սանիտարները. թևքերը քշտած, կոպիտ ու գործնական տեսքով նրանք քանդում էին ոչ մի բանի չնմանվող այդ մարդկային կապոցները և, բանի տեղ չդնելով աքացիները, համբերատարությամբ լսում էին զառանցական անկապ խոսքերը։ Նրանք փնտրում էին սպանվածների, և Սիվիցկին նույնպես չծուլացավ բարձրանալ բերդի տանիքը՝ ամենուր համոզմունքով կրկնելով նույն բանը.

— Հավաքեցե՛ք դիակները, այլապես համաճարակ կլինի։ Եղբայրնե՛ր, դիակները պատերից ցած գցեք, գցեք թուրքերին, այլապես մենք կխեղդվենք, այլապես կկործանվենք...

Կլյուգենաուն ափով շփեց դեմքը, թափ տվեց իրեն։ Նրա առաջ դանդաղ բարձրանում էր գիշերվա ծանր վարագույրը։ Երեկվա ճակատամարտի նկարիչը հրեշավոր երևակայության տեր էր։ Հետին պլանի դեկորացիաները դեռ թաղված էին թանձր մթության մեջ, իսկ հանդիսատեսի առջև արդեն անմոռանալի պատկեր էր բացվում։

— Թյո՛ւ, թյո՛ւ,— ասաց Կլյուգենաուն և, քաշելով Կարաբանովի թևից, ցույց տվեց ներքև։— Մեր սայլախմբի մնացորդները՝ թյո՛ւ, թյո՛ւ։

Զինվորական իրերի խոշոր, քառասային կույտը, որը ջոկչկել էին կամավորները և գողացել քրդերը, գիշերն անհետացել էր։ Միայն մնացել էին հեծելասարքերի մեջ խճճված, սմբակները վեր ցցած սատկած ձիերը, որոշ տեղերում սպիտակին էին տալիս հրաձիգների վերնաշապիկները և

սպանված թուրքերի խալաթները։ Քամին խշխշացնում էր թղթերը, ավազով ծածկում զինվորական պաքսիմատներն ու վիրակապերի կտորտանքը, շրշյունով զառիվայր գլորում կրակված դատարկ պարկուճները։

— Մաքուր է,— զարմացավ Կարաբանովը։— Եվ զարմանալի խաղաղ, նույնիսկ հավատս չի գալիս... Բայց ահա այստեղ, այս հիանալի բնանկարում, ինչ-որ նոր բան եմ տեսնում։

Կլյուգենաուն կարճատեսորեն կկոցեց աչքերը։ Գիշերվա վարագույրը բացվեց ավելի լայն, և սկսեցին երևալ շրջակայքի լեռնաճյուղերը, որոնք ծածկված էին զինվորների և ձիերի դիակներով. Վանի ճանապարհի երկայնքով պարզ երևում էին գիշերը փորված խրամատների թարմ հողաթմբերը, որոնց հետևից երկու բունչուկներ ու սարդարների խայտաբղետ նշաններ էին դուրս ցցվել։ Ներքևում, մեկդանից այն կողմ արդեն արթնանում էր թշնամու կողմից գրավված քաղաքը, և սպիտակ ձկնկուլը առաջվա պես խաղաղ նստած էր քարվանսարայի տանիքին։

— Ի՞նչ արած,— ասաց Կլյուգենաուն, կեղտոտ թաշկինակով մաքրելով ակնոցը։— Իմ պապը սիրում էր ասել այսպես. "Morgenstunde hat Gold im Munde..."[1]:

—Իսկ ի՞նչ եք կարծում, բարոն, հետո ի՞նչ է լինելու,— հարցրեց Կարաբանովը և կնճռոտվելով ուղղեց վիրակապը։

— Հետո՞,— ժպտաց պրապորշչիկը։— Ժամանակն է գիտենալ, պարոն պորուչիկ. հետո, ինչպես միշտ, ցերեկ կլինի։ Համարեք, որ ոչինչ չի փոխվել...

Ինչ-որ տեղից նրանց մոտեցավ Սիվիցկին. թվում էր, թե նրա չսափրված գորշ-հողագույն դեմքը փքված է և ուռած. բժշկի ձայնը ցածր խզխզոցով կտրվում էր։

— Հավաքեցե՛ք...— հրահանգեց նա սպաներին։— Հավաքեցեք ինքներդ և հետևեք, որ հավաքեն զինվորները։ Այլապես՝ համաճարակ է։

— Լա՛վ,— լրջորեն պատասխանեց Կլյուգենաուն,— դա

[1] Տառացիորեն՝ առավոտյան ժամերը բերանում ոսկի ունեն. այստեղ այն իմաստով է, թե առավոտը լավ խորհրդատու է։

արդեն չենք մոռանա... Մի՛ անհանգստացեք, թանկագին Ալեքսանդր Բորիսովիչ...

Օրն սկսվեց ջուր բաժանելով։ Աշխատանքը կայազորում դադարեցվեց, բոլորը ուղղվեցին երկրորդ գավիթ, որտեղ ջրի տակառի մոտ երկու անհերթափոխ ժամապահներ էին կանգնած։ Սակայն եթե գիշերը ջրի պահանջն այնքան զգալի չէր (իսկ մի քանի ավելի ժլատ զինվորներ իրենց տափաշշերի մեջ կարողացել էին նույնիսկ մեկ-երկու բաղձալի կում ջուր պահել,) ապա այժմ, տոթակեզ նոր օրը վրա հասնելուն պես, ծարավը մեկեն համակեց բոլորին, ինչպես համատարած սարսափելի մի աղետ։

Ներունի գրենադյոր Խրենովը, իր հետևից քարշ տալով թուրքական երկարափողանի պատրույգավոր հրացանը[1], որոշեց կատակով ծաղրել ծարավներին.

— Դուք ոնց որ փայտերի միջից գտնված կատվի ծագեր լինեք,— ասաց նա։— Կանգնել եք այստեղ, հիմարներ, իսկ այնտեղ ջուրը հենց այնպես հոսում է ծորակից։

— Ճի՞շտ, ծերուկ,— միամտորեն հավատաց հրետաձիգ Պոստնին։

— Պառավն էր սուտ ասում, նա էլ մեռավ... Վազի՛ր, անխելք, հայդա։ Եվ ավելի մեծ ման վերցրու հետդ։

Ծորակի մոտ իսկապես զինվորներ էին կանգնած, որոնք դեռ չէին կորցրել հավատը, որ ջուրը չի կարող այդքան երկար անհետանալ,— նրանց թվում էր, թե քաղցը խոսքով դեռ կարելի է ջուրը կանչել, քամել-հանել, քաշել-մոտեցնել։

— Դե հոսի՛ր, հոսի՛ր մեր կողմը, անուշիկս,— ասում էր գթասիրտ տարեց խոհարարը։— Դե փայլփլիր թեկուզ մի կաթիլ...

— Մ՛թե վերջ,— հարցրեց Կիրյուխան։

— Կարծես վերջացավ,— պատասխանեց խստաբարո Պոտյոմկինը և, թևերը լայն բացելով, հավատով խաչակնքեց, ինչպես մեռելի վրա։— Ծծիր, տղաս, գուցե մի կում դուրս քաշես։

[1] Բայազետը պաշարած թուրքական զորքերի մեջ, որքան էլ տարօրինակ է, հանդիպում էին հրաձգային զենքի նույնիսկ անգրագիտության տեսակներ, այդ թվում՝ նաև միտրալիեզներ։

Հրետաձիգը, շրթունքները հպելով ծորակին, ծծեց խողովակի մեջ ինչ-որ հեռվում փնթփնթացող դատարկությունը և ձեռքը թափ տալով, նորից վազեց երկրորդ գավիթ...

Ջանը համեմատաբար մեծ էր և մինչև պռունկը լցված ջրով։ Շտոկվիչը ինքն էր ջրի բաժանման կարգադրություններն անում, այնպես որ անկարգություն լինել չէր կարող, երկրորդ անգամ մոտենալ ոչ ոք չէր համարձակվի։ Հերթը շարժվում էր դանդաղ, հետևի կանգնածներն անհամբերությամբ հրում էին առաջիններին։ Սակայն որքան մեծ էր լինում զարմանքը, երբ շոգ ու կրակի տակ հերթ կանգնած զինվորը ջուր էր ստանում միայն այնքան, որքան կարող էր տեղավորվել փամփուշտի պարկուճի մեջ։

— Այսքան քի՞չ,— անվստահ հարցրեց Տրյոխժոննին։— Տո իմ քրտինքի հետ ավելի շատ ջուր դուրս եկավ, մինչև հերթս հասավ։

— Լակի՛ր և հետ քաշվիր, ծակ փիլիսոփա... Ո՞վ է հաջորդը։ Դո՞ւ։ Կռացիր տակառի վրա։

Կազակները ծիծաղով դիմավորեցին Տրյոխժոննուն.

— Հը՞, ինչպե՞ս էր, վախմիստր, սիրտդ թեթևացրի՞ր։

— Այո՛, փորս քսեցի տակառին,— շփոթված ասաց նա։

Երբ արդեն ջրի բաժանումը վերջացավ, չանի մեջ դեռ ջրի կեսը մնացել էր, և Շտոկվիչը գոհունակությամբ ասաց.

— Շատ լավ է։ Երեկոյան մի անգամ էլ կխմեն։

Ինչ-որ տեղից վազելով մոտեցավ Իսմայիլ խանի սպասյակը, որը չափազանց ինքնավստահ մի տղա էր, և բաժակը լրիվ մտցրեց չանի մեջ։ Բաժակն այդպես էլ մնաց չանի հատակում, իսկ սպասյակը պարետի բռունցքի ուժեղ հարվածից թռավ մի կողմ։ Շտոկվիչը կարող էր շուտ գազազել. նա երկար ժամանակ զինվորին հարվածում էր պայտած ծանր ճտքակոշիկներով, հետո հոգնած ասաց.

— Հաղորդի՛ր քո խանին, որ այսօրվանից հավասարեցվում է Բայազետի կայազորի սպաների և ցածր աստիճանավորների պարենավորումը։ Եթե նորին պայծառափայլությունը գա, ապա ես նրա համար էլ ջուրը պարկուճի մեջ կլցնեմ և ոչ ավելին...

Եֆրեմ Իվանովիչը քշտեց համազգեստի թևքը, մազոտ

ձեռքով երկար որոնեց չանի հատակում և դուրս հանեց ջրով լիքը բաժակը։

— Հե՛յ, Օժոգին,— կանչեց նա կազակին։— Ահա այս բաժակը պահիր և չթափես, կտանես տիկին Խվոշչինսկայային։ Հասկացա՞ր, մոլորյալ, ում պիտի տանես։

— Հասկացա,— գլխով արեց Դենիսկան և ճապարանքով, կարծես երկյուղով, լիզեց շրթունքները։

«Ջո՛ւր...»

Պացևիչն արթնացավ շատ վատ տրամադրությամբ։ Ամբողջ գիշերը խառնաշփոթ երազներ էր տեսել. սկզբից խրվեց կեղտի մեջ (դա լավ էր. մի բան կստանա), իսկ հետո լողացավ՝ խոր սուզվելով պղտոր ջրի մեջ (դա արդեն վատ էր. աղետ կլինի)։

— Տե՛ր իմ, պահպանիր ինձ և ներիր,— վախեցած ասաց Ադամ Պլատոնովիչը և թափահարեց գրաֆինը. դատարկ էր։

Գնդապետը վերցրեց ճտքակոշիկը ու խփեց դռանը և սպասյակը, որ ընտելացել էր անմիջապես արձագանքելու, հայտնվեց նրա առաջ։

— Ի՞նչ է,— հարցրեց Պացևիչը,— արդեն մաճա՞ռ էլ չկա։

— Ամենևին ոչ։ Երեկ վերջինը բարեհաճեցիք խմել։

— Տխմա՛ր։ Իսկ ի՞նչ պիտի խմենք այսօր։ Դմբո՛, ես քեզ ասել էի, որ նախապես մեյդան գնայիր։

— Ասել էիք, բայց սարսափելի էր գնալ,— ազնվորեն խոստովանեց սպասյակը։— Հրե՛ն,— հիշեց նա,— մերոնցից երեք հոգու ինչպես սպանեցին։

— «Սարսափելի էր»... Դրա համար էլ դու զինվոր ես, որպեսզի մահից չվախենաս։ Իսկ ես քո այդ սարսափների պատճառով հիմա անգամ խումարաթողի բան չունեմ։ Կո՛ր այստեղից, տխմար...

Երբ մոտեցավ կեսօրը, զինվորները կրծում էին կարծրացած պաքսիմատը։ Այդ օրը ճաշ չէին պատրաստել, և Շտոկվիչը խոհարարներին ուղարկեց հոսպիտալ՝ սանիտարներին օգնելու։ Թուրքերն այդ օրն արթնացան շատ ուշ, թեև մուեզզինները երկու անգամ արդեն ուղղահավատներին աղոթքի էին կանչում։ Քաղաքի վրա կախված էր վառարանների ծուխը, սովորականի նման սկսել էր աղմկել մեյդանը,

քարվանսարայի կողմից լսվում էր դհոլ-զուռնայի ձայնը, քրդերն սկսել էին խարույկների շուրջը պարել իրենց վայրենի պարը։

Հրաձգություն չկար։ Սկզբից կազակները փորձում էին կրակել միայն բերդի պարիսպներին անմիջապես մոտեցող ռեդիֆների վրա, բայց Վատնինը հետո խորհուրդ չտվեց։

— Թողե՛ք դրանց, տղաներ,— ասաց նասուլը։— Առանց այն էլ այս օրերին ականջներս խլացել են։ Դեհ, գրողը տանի դրանց, իզուր փամփուշտ եք վատնում։ Դրանք այնքան շատ են, որ թնդանոթով անգամ չես կոտորի...

Պատմաբաններին հայտնի չէ, թե ինչ ճաշ էր կերել այսօր Պացևիչը, սակայն ցերեկվա ժամը մեկից հետո նա իր մոտ հավաքեց սպաներին. տրամադրությունը շատ վատ էր։ Գնդապետի զբաղեցրած սենյակում տարածվել էր ամուրիական բնակարանի հեղձուկ հոտը. անլվա ամանեղենի բուրմունքը չէր կարող հաղթահարել կեղտոտ հագուստեղենի թթվահոտը։ Պացևիչի դեմքը հոգնած էր, աչքերի տակ ծերունական այտուցներ էին կախված, ճակատի սկլերոզային անոթները լցվում էին կապույտ արյունով, մատների ծայրերը դողում էին։

«Ալկոհոլիզմ պլյուս նյարդերի ֆունկցիոնալ խանգարում»,— մեքենայորեն ախտորոշեց Սիվիցկին և դժվարությամբ իր համար նստելու տեղ գտավ։

Գնդապետը սպաներին ընդունում էր այն սենյակում, որ ընտրել էր իր պարապմունքների համար՝ հրետանային բակից որքան հնարավոր էր հեռու։ Պատերի վրա խզբզած էին խայտաբղետ անճաշակ բնանկարներ, արաբանախշերի գունավոր պորփյուրի մեջ այդ կոպիտ նկարներն իրենց անճոռնիությամբ ռուսական խուլ գավառի պանդոկի զարդարանքների էին նմանվում։

— Պարոնա՛յք,— խաղաղությամբ սկսեց Ադամ Պլատոնովիչը,— մենք պետք է քաջություն ունենանք, որպեսզի մեզ համար մինչև վերջ պարզենք մեր վիճակի ամբողջ ծանրությունը։ Եթե ես կարողանամ նույնիսկ մեզանից որևէ մեկի վրա քար շպրտել, ապա այդ առաջին քարը կթռչի իմ կողմը... Դժբախտաբար, ես կուզ գնացի գոռոզ երիտասարդությանը. մեր հետախուզության արդյունքները ձեզ բոլորիդ քաջ հայտնի են։ Այժմ ինչ եմ առաջարկում (և հուսով եմ,— ավելացրեց նա,— դուք կհամաձայնեք ինձ հետ), հարկավոր է բարձրացնել կայազորի մարտական ոգին։

Նա լռեց։ Նկատելով ձեռքերի դողը՝ դրանք իրար միացրեց։

Հետո, մատով անելով Եվդոկիմովին՝ ասաց.

— Դո՛ւք, երիտասարդ, երեկ չէ մյուս օրը գործնական բան էիք ասում։ Ջրի և այն մասին, որ հարկավոր է նախապես լցնել ավազանը։ Սակայն մի՞թե մեզանից որևէ մեկը մտածում էր, որ ամեն ինչ այսպես կլինի։

Կլյուգենաուն, դիտելով առաստաղի գմբեթը, թոթվեց ուսերը։

— Ի՞նչ եք կոտրատվում օրիորդի պես,— դժգոհությամբ նկատեց գնդապետը։— Եթե ձեզ դուր չի գալիս իմ անկեղծությունը, ապա էլ ձեզ չեմ պահում, կարող եք գնալ։

Եղավ անսպասելին. Կլյուգենաուն կտրուկ շուռ եկավ, աջ ոտքի կրունկը ուժգին խփեց ձախ ոտքի կրունկին և, սպաներին պատիվ տալով, հեռացավ սենյակից։

— Ախ այդ բանաստեղծները,— մորմոքալից հոգոց հանեց Ադամ Պլատոնովիչը։— Ոնց էլ չի ամաչում նեղացնել ինձ, ծերուկիս... Ուրեմն այսպես, պարոնայք,— շարունակեց Պացևիչը կարճատև լռությունից հետո,— ինչի՞ մասին էի խոսում... Ա՜խ, այո՛, հիշեցի, մեզ հարկավոր է բարձրացնել կայազորի մարտական ոգին։ Դրա համար առաջարկում եմ (և ինձ թվում է, որ դա կարժանանա ձեր համաձայնությանը) այսօր բերդում կախել բոլոր գերիներին։ Նրանց հետ միասին կարելի է պարանի վրա բարձրացնել և մի երկու ղհուդի, որոնք, չնայած արգելքին, այնուամենայնիվ, թափանցել են ամրոց։ Շտոկվիշն արդեն կախել է մարդկանց և չի հրաժարվի կախել մի անգամ ևս։

Վերջին բառերն ասաց ամենաբարեհոգի տոնով, իբր՝ փրկիր մեզ նեղ տեղից, աղավնյակս։ Եֆրեմ Իվանովիչը դանդաղ կաս-կարմիր կտրեց։ Նույնիսկ նրա հոնքերը լցվեցին արյունով, հայացքը դարձավ ծանր և սկսեց սահել ցած՝ վեր չբարձրանալով սպաների գոտկատեղերից։

— Այս անգամ, պարո՛ն գնդապետ,— լարված ասաց նա,— այդ պատիվը ես հաճույքով ձեզ եմ վստահում։

— Բայց դուք պարետ եք,— ասաց Պացևիչը։

— Այո՛, բայց ոչ դահիճ,— կտրեց Շտոկվիչը։

— Թույլ տվեք,— հանկարծ սկսեց խոսել Պոտրեսովը՝ վճռականորեն առաջ գալով։— Ո՞վ ասաց ձեզ, որ Բայազետի կայազորի ոգին ընկել է։ Դուք նայեք զինվորներին. նրանք երբևէ այդպես ոգևորված չեն եղել, ինչպես երեկ և այսօր։ Հոգնել են, դա ճիշտ է, բայց նրանց մարտական ոգուն կարելի է նախանձել։

— Դո՛ւք մայոր, ոչինչ չգիտեք, բացի ձեր թնդանոթներից,— մեկեն զայրացավ Պացևիչը՝ դիմադրության հանդիպելով այդ հնազանդ մարդու կողմից, որի մեջքի վրա, ինչպես միշտ թվում էր իրեն, կարելի էր ջուր կրել։

— Ինչ արած,— թեթև գլուխ տվեց տարեց սպան,— այդ դեպքում մեծահոգաբար ներեցեք ինձ։ Եթե արդեն ես... ես՝ մայոր Պոտրեսովս, քառասուն տարի ռուսական բանակում ծառայելով, չգիտեմ ռուս զինվորին, ապա ո՞վ ավելի լավ գիտի նրան։

— Եվ հետո,— մռայլ, անժպիտ ավելացրեց Կարաբանովը,— եթե ոգու մասին խոսենք, ապա իմ ոգին չի բարձրանա այն բանից, որ բակում քայլելիս գլխով պիտի կպչեմ կախաղան հանվածների ոտքերին։

— Եվ հոտ կլինի,— ասաց Վատնինը։— Արևը հիմա հո կիզիչ է, ճանճեր և վարակ ինչքա՞ն ասես... շա՞տ ուժեղ հոտ կլինի՞։

Սիվիցկին վեր կացավ և անշտապ ուղղվեց դեպի դուռը։

— Իսկ դուք ո՞ւր, կապիտան,— հարցրեց Պացևիչը։

— Գնում եմ զինվորների մոտ,— պատասխանեց բժիշկը։— Նրանք, որքան էլ տարօրինակ լինի, ավելի խելացի են մեզանից՝ սպաներից։ Ամոթ է, բայց ի՞նչ արած...

— Չի կարելի գերիներին կախաղան հանել,— հանկարծ ճիշով պայթեց կապիտան Շտոկվիչը։— Մենք բոլորս գիտենք, որ եսաուլ Վատնինը իր կյանքում մի հարյուր մարդ այն աշխարհն է ուղարկել, բայց բացահայտ մարտերում։ Առաքինի և ազնիվ մարտերում։ Հարցրեք նրան՝ նա արդյոք ձեռք տվե՞լ է գերիներին։

— Ո՛չ,— գլուխը տարուբերեց Վատնինը։— Այդպիսի բան

ինձ հետ չի պատահել։ Ես ամեն ինչ արել եմ առաքինությամբ...

— Եվ ես, որպես կայազորի ավագ բժիշկ,— ավելացրեց Սիվիցկին շեմի վրայից,— իմ բողոքն եմ հայտնում նման միջոցների դեմ։ Գերիներին կախելը միայն կբարոյալքի զինվորական մասսաներին։ Եթե դուք, Աղամ Պլատոնովիչ, ուզում եք կախել հրեաներին, ապա կախեք նրանց ահա այստեղ՝ ձեզ մոտ։ Լուսամփոփի փոխարեն։

Պացևիչը հավանորեն հասկացավ, որ տաքացած՝ ինչ-որ անհարմար բան է բերանից թոցրել, բայց չգիտեր, ինչպես դուրս գա այդ անհարմար վիճակից։

— Կապիտան Սիվիցկի, բավական է ինձ կոպտեք։ Այլապես կհրամայեմ ձերբակալել ձեզ։

— Է՛հ, գնդապետ։ Ձերբակալվածներին բերդ են նստեցնում։ Եվ եթե դա այդպես է, ապա ես արդեն վաղուց ձերբակալված եմ։ Եվ ինձ հետ միասին նստած են էլի հարյուրավոր մարդիկ, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում հասկանալ, թե ինչ ծանր մեղքերի համար է նրանց վիճակվել այսպիսի... վերակացու։

— Դուք այդ խոսքերի համար կհատուցեք, բժիշկ։ Միայն սպասեք այստեղից դուրս պրծնեմ։

— Իսկ դուք, գնդապետ, նախ դուրս պրծեք...

Երբ սպաները գնացին, Պացևիչը երկար նստեց լուռ, հետո բռունցքներով խփեց սեղանին, վճռաբար վեր կացավ։

— Գրողը տանի այդ սպաներին։ Գնամ զինվորների մոտ։

Նա քայլում էր բերդի գավիթներով, և հանդիպած զինվորները նրա առջև կանգնում էին ձգված։ Նկատելով մի զինվորի, որը հրացանի վրա հենվելով ու կաղալով գնում էր հոսպիտալի կողմը, Պացևիչը բարեկամաբար ձայն տվեց նրան.

— Որտեղի՞ց ես վիրավորված, զինվո՛ր։

— Դե որտեղի՞ց։ Պարզ բան է՝ ոտքից, ձերդ բարեծնություն։

— Այդ ե՞րբ։

— Հենց նոր կպավ... Կանգնած կարգուկանոնին էի հետևում։ Հանկարծ որտեղից-որտեղ, մեկ էլ մի գնդակ՝ թը՛րխկ, և պատրաստ է։

— Գնդա՞կ։

— Ըհը... Գոնե լավը լիներ, ախր թուրքական ինքնաշեն գնդակներից էր. մեխի նման, կարծես կարթով բռնեցին։

— Ա՜յ-յա՜-յա՜,— ցավակցեց գնդապետը։— Այդ ինչպե՞ս եղավ։ Բախտդ չի բերել, եղբայր։

— Բոլորիս բախտը չի բերել, ձերդ բարձր բարեծնունդ,— ոչ այն է հիմարաբար, ոչ այն է դիտավորյալ պատասխանեց զինվորը և ոտքը քաշ տալով շարունակեց ճամփան։

Պացևիչը վերադարձավ իր կացարանը, ծանր փլվեց փոս ընկած մահճակալի վրա։

— Ինձ չեն սիրում,— ջղաձգորեն, հեծկլտալով ասաց նա դատարկության մեջ։— Չեն սիրում... ոչ ոք չի սիրում։ Իսկ ինչո՞ւ։ Ի՞նչ վատ բան եմ արել նրանց։

Եվ նա սկսեց հիստերիկորեն, բարձրաձայն լաց լինել։

2

Հայհոյանքներ շշնջալով՝ Շտոկվիչը երկար ընտրություն էր կատարում շահի հարեմի բանալիների ծլնգացող կապոցում, որ հագցված էր մի վիթխարի օղի վրա։ Օղագոտու վրա Ղուրանից ասույթներ էին փորագրված կանանց ստորության ու անհավատարմության մասին, որի պատճառով էլ նրանց անհրաժեշտ էր պահել փակի տակ։

Այժմ Իսակ փաշայի նախկին հարեմում փակված էին գերիները, և Շտոկվիչը բաց անելով ծանր դռները, որոնց վրա գրված էր «Բու Ջանեթ» (սա դրախտ է), գոռաց մգլած մթության մեջ.

— Հե՜յ, ուղղահավատնե՛ր, դուրս եկեք, գործ կա։

Նա թուրքերին և քրդերին հին, ծռմռված բահեր հանձնեց, գերիներին դուրս բերեց բակի մեջտեղը, ոտքով խփեց արևից ճաքճքած պինդ գետնին։

— Ահա հենց այստեղ էլ փորեք,— կարգադրեց նա։

Գերիները հանկարծ միանգամից ծնկների վրա ընկան նրա առաջ՝ աղաչելով խնայել իրենց։ Բռնելով Շտոկվիչի հաստ ազդրերից և կպչելով կարճափեշ սերթուկի քղանցքներից՝ գետնի վրա քաշ էին գալիս նրա հետևից։ Պարետը հազիվ էր կարողանում հետ մղել նրանց։

— Յո՛խ, յո՛խ, ալայսեն տարիխ-տուգուլ-— աղազակում էր մի բարձրահասակ ծերունի։— Սարդար, բարիշ։

Հայտնվելով բակում՝ Կլյուգենաուն հանկարծ թուրքերեն կտրուկ ինչ-որ բան գոռաց, և գերիները միանգամից հանգստացան, միահամուռ վերցրին բահերը։

— Այդպես չի կարելի, պարոն պարետ,— բացատրեց բարոնը։— Չէ՞ որ այս խեղճերը կարծել են, որ դուք ստիպում եք նրանց գերեզման փորել։ Իսկ դուք, հավանաբար, որոշել եք ջրհոր փորել։ Ես ձեզ ճի՞շտ եմ հասկանում։

— Դե իհարկե՛, բարոն։ Չէ՞ որ հարկավոր է որևէ բան մտածել ջրի մասին։

Գերիները բահերը միահամուռ խրում էին հողի մեջ։ Ծնկների խորությամբ փոսը նրանք զարմանալի արագ փորեցին, իրար հետ հուզված փսփսալով ինչ-որ բանի մասին։

— Բայց, այնուամենայնիվ, Եֆրեմ Իվանովիչ, դա իզուր է,— ասաց Կլյուգենաուն։— Բերդը կանգնած է հենց ժայռակատարին, միևնույն է, ջուր չի լինի։

Շտոկվիչը մտախոհ ծնկեց և երկար ժամանակ դեմքով հպվեց փոշոտ ցանցավանդակի ճաղերին, ուշադիր նայեց գետնահարկի խորքը։ Շահի հանգստարանի կիսախավարում նա տեսավ խոնարհված դրոշները, պահակների թույլ փայլփլող սվիները և գետնին հակված մի կնոջ։

— Նա... դեռ այնտե՞ղ է,— զգուշությամբ հարցրեց Կլյուգենաուն։

— Այո՛,— պատասխանեց Շտոկվիչը՝ վեր կենալով։— Եվ չի հեռանում երեկվանից։ Եթե կայազորում կին չլիներ, ամեն ինչ կարծես ավելի դյուրին կլիներ։

— Թաղել է հարկավոր,— նկատեց պրապորշչիկը։— Ժամանակն է...

— Հարկավոր է,— համաձայնեց Շտոկվիչը՝ մաքրելով ծնկները։— Սակայն թույլ չի տալիս թաղել նրան։ Թող մնա։ Մեռելները երբեք և ոչ մեկին չեն խանգարում...

Գերիների ձեռքի բահերը ծանր ճռնչալով դիպան պինդ քարի։ Սկսվում էր ժայռերի խիտ շերտը, և պարետը համոզվեց, որ ջրհոր փորելը անիմաստ է։

— Ուշաստկի՛ն,— հրամայեց նա եֆրեյտորին,— հա-

վաքիր բոլոր բահերը և այդ ձրիակերներին հետ քշիր իրենց տեղը։

Արևն սկսում էր կիզել։ Կլյուգենաուն նստեց մի քարի, ոտքից հանեց ճտքակոշիկը, սկսեց դիտել պատռված ներբանը։ Սրբելով ճաղատ գլխից առատորեն հոսող քրտինքը՝ նրա կողքին նստեց պարետը։ Խփեց իր գրպաններին՝ փնտրելով ծխախոտատուփը։

— Բարո՛ն,— հարցրեց կապիտանը, ծխախոտ վառելով,— Ասացեք խնդրեմ, դա ճշմարի՞տ է, որ դուք բարոն եք։

Կլյուգենաուն մատով քշփորեց ներբանի ծակը.

— Կարող եք ստուգել բոհեմյան մատրիկուլներով,— պատասխանեց նա՝ ոտին փաթաթելով քրտինքից դեղնած փաթաթանը.— Յոզեֆշտադտի շրջակայքում դեռ կան մեր տոհմական Կլյուկի դեր Կլյուգենաու դղյակի ավերակները։ Իսկ իմ՝ դեռ Ելիզավետայի ժամանակ Ռուսաստան եկած նախահորը, ինչպես երևում է, անհանգստացրել է Ռուսաստանի կանցլեր դարձած տգետ Օստերմանի շլված կարիերան։ Ցանկացած գերմանացի, ինչպես ասել է ֆինանսների մինիստր Կանկրինը, միշտ նման է կաղամբի, որպեսզի նրանից բան ստացվի, հարկավոր է սածիլել մեկ ուրիշ հողում։ Գուցե դուք արդեն նկատել եք, որ ես այստեղ վատ չեմ պատվաստվել, թեև չեմ ծաղկում։

Կլյուգենաուն ճտքակոշիկը տնքոցով քաշեց ոտքին և հարցրեց.

— Իսկ դա ինչո՞ւ է ձեզ այդքան հետաքրքրում։

Շտոկվիչը անկեղծորեն խոստովանեց։

— Ներեցեք, բայց ես ձեզ այնքան էլ չեմ սիրում, բարոն։

— Ես նույնպես ձեր նկատմամբ քնքշություն չեմ տածում,— հաճույքով պատասխանեց պրապորշչիկը։— Սակայն հիմա մեզ բոլորովին պետք չէ պարզել մեկը մյուսի նկատմամբ ունեցած զգացմունքի ուժը։ Մենք երեկ միանգամից երկու մարդ կորցրինք, որոնց վրա պահպանվում էր ամբողջ կայազորը։ Մենք, իհարկե, արդեն չենք կարող վերադարձնել Նեկրասովի ոսկի գլուխը, բայց...

— Ես ձեզ հասկացա, բարոն,— պատասխանեց Շտոկվիչը՝ ձեռքը դնելով ինժեների ճմռթված ուսադրի վրա։—

Աստված մեզ նեղացրել է ղեկավարության առումով, և այսուհետև ամեն ինչ կախված է մեր փոխադարձ հարաբերությունից։

— Դեռ կա... Վատնինը,— անսպասելիորեն ասաց Կլյուգենաուն։

— Դուք կարծում եք, որ հենց նա էլ պիտի լինի՞։

— Բայց,— ակնարկեց պրապորշչիկը,— հո դո՞ւք չեք լինելու։

— Այո՛, ոչ ես։— Եվ շրթունքը կծելով՝ Շտոկվիչը ծանր մտածմունքի մեջ ընկավ։

Կլյուգենաուն հանկարծ սկսեց գեղգեղանքով ծիծաղել։

— Ինչո՞ւ ես ծիծաղում,— զարմացավ պարետը։

— Մենք բոլորովին մոռացել ենք մեր հարգարժան փոխգնդապետ Իսմայիլ խանին, չէ որ նրա կոչումը... Եթե որևէ բան պատահի Պացևիչին... Ես, իհարկե, նրան վատ բան չեմ ցանկանում, բայց դուք ինքներդ եք հասկանում, թե ինչ կլինի այն ժամանակ։

— Հա՞, ահա նրան,— զայրույթով ասաց Շտոկվիչը և կուկիշ ցույց տվեց։— Այն ժամանակ ավելի լավ է հարյուրապետը։

Այդպես էլ նրանք բաժանվեցին իրարից։ Ինչ-որ մի բան մնաց չասված, սակայն Կլյուգենաուն իր մտքում նկատեց Շտոկվիչի թաքուն տագնապը։ Իզուր չէր, որ կապիտանն սկսեց խոսակցությունը։ Երևում էր, որ կարիերայի ապահովագրության մեջ ինչպես հարկն է դաբաղված նրա մորթին արդեն մի վատ բան էր զգում։ «Համենայն դեպս,— հանգիստ դատում էր Կլյուգենաուն,— Շտոկվիչը ոչիսկ չի անի իր վրա վերցնել կայազորի հրամանատարությունը և, հավանաբար, կցանկանա մնալ սոսկ որպես պարետ...»

Պացևիչը, իբր թե պատահաբար, մտավ Իսմայիլ խանի խցիկը, որի պատերին սաջատներ էին կախկխված։ Խանն այդ պահին սափրում էր իր մազոտ ոտքերը։

— Ներողություն, խան, որ ձեզ այցելում եմ հարդարանքի ժամանակ,— ասաց Պացևիչը՝ սեղանի վրա դնելով արևից խանձված գդակը։— Ձեր մասին ասում են,— շողոմեց նա,— որ դուք ցանկանում եք ծառայության մտնել նորին մեծության շքախմբում։

— Նորին մեծության ուղեկցորդ պահակախմբում,— ուղղեց խանը։

— Դե, դա միևնույն է։ Ես կարող եմ աջակցել։

Պացևիչը նայեց հատակին ընկած սաջատների փողոտ ծոպերիզներին և, հանկարծակի գունատվելով ու սուր կերպարանք ընդունելով, ընդհատ շշուկով հարցրեց.

— Անգելիկա... կա՞։

— Չկա,— կտրեց Իսմայիլ խանը, և Ադամ Պլատոնովիչը, ասես սարսափահար, նույնիսկ հետ քաշվեց դեպի պատը։

— Անգելիկա չկա, բայց գինի կա,— աշխուժորեն վերջացրեց խանը, և Պացևիչի դեմքը նորից կենդանի գույն ստացավ։

— Օ՜հ, սիրելի՜ս,— ասաց նա՝ շփելով ճարպոտ վիզը։— Մի՞թե կարելի է այդպես վախեցնել մարդու։

Առաջին բաժակը նա կոնծեց մեծ-մեծ կումերով։ Ձյութի նման մուգ գինին նրա բերանի անկյուններից երկու շիթերով վազեց մսոտ ծնոտի վրայով։

— Օհ, ինչ լա՜վ է,— կոնչաց նա, և Իսմայիլ խանի անդողդոջ ձեռքը նորից լցրեց բաժակը։— Նույնիսկ շատ լավ,— կրկնեց Պացևիչը,— ուղղակի հանճարեղ է եղել այն մարդը, որը հնարել է այս գինին։

Պացևիչը հրաժարվեց սակայն հետը մի շիշ գինի վերցնելուց։

— Ավելի լավ է երեկոյան անցնեմ ու էլի խմեմ։ Թե չէ, աստված մի արասցե, զինվորները կկարծեն, որ ես ջուր եմ տանում... Առանց այն էլ շնորհակալ եմ ձեզանից, պայծառափայլ խան։ Եվ չկասկածեք, որ ձեր արժանիքներով դուք անպայման կլինեք Նորին մեծության շքախմբում։

— Պահակախմբում,— նորից ուղղեց նրան Իսմայիլ խանը։

— Դե, միևնույն է։— Ադամ Պլատոնովիչը դուրս եկավ գավիթ, որտեղ հանդիպեց Եվդոկիմովին։— Հե՜յ, պատանի՜, դուք պատահաբար չե՞ք տեսել Հայկ Ջամալ բեկին։

— Ո՜չ, պարոն գնդապետ, այսօր չեմ տեսել, հավանաբար նա արդեն ամրոցից դուրս է եկել քաղաք։

Պատահական մի գնդակ, շենքի պատը տաշելով, հենց

Պացևիչի գլխավերևում ջարդուփշուր արեց գույնզգույն նախշերով ապակին, և գնդապետն անհանգստացած ասաց.

— Ո՜ւ, գրողը տանի։ Չլինի՞ թե մեյդանից ինձ վրա են նշան բռնել։

Այդ պահին Պացևիչի ուշադրությունը գրավեց գավթում հայտնված քահանան։ Տեր Գերասիմը փարաջան դեռ երեկ էր հանել վրայից, փոխարենը հագել զինվորական վերնաշապիկ։ Թեթևության համար հանել էր ճտքակոշիկները, բոբիկ նա ավելի շարժուն էր դարձել։ Ահա այսպիսի տեսքով էլ, խաչը կրծքին պահած, նա երևաց Ադամ Պլատոնովիչի աչքին։

— Ըհը՜, աստվածային մարդ,— ասես ուրախացավ Պացևիչը,— այդ ինչպե՞ս է, որ երեկ քո սուրբ հոգով գումարտակից հետ ընկար։

Տեր Գերասիմը կանգ առավ, նրա գեղջկական խելացի, կոշտ ու լայն դեմքին ինչ-որ ներքին արժանապատվություն և նույնիսկ հպարտություն կար։

— Ոչ թե սուրբ հոգով, պարոն գնդապետ,— հանգիստ պատասխանեց նա։— Եթե ճշմարիտ ասեմ, ապա ոտքերով փրկվեցի։ Եվ ինձ հետ էլ դեռ մի հինգ մարդ փրկեցի կործանումից։ Իսկ գումարտակի համար ես պատասխանատու չեմ։

— Դե լա՜վ, լա՜վ, գնա՜, բարեպաշտ։

— Իսկ ես չեմ գնա,— հանկարծ համառեց տեր Գերասիմը։— Կնստեմ ահա այստեղ և կմնամ նստած։ Թող թուրքերն իրենց փամփուշտներն ինձ վրա վատնեն։

— Դու հիմար ես, տեր հայր,— զայրացավ Պացևիչը։

— Ախր ում կովն ուզում է բառաչի, քոնն ավելի լավ է լռի։

Մայոր Պոտրեսովը, հեռվից դիտելով այդ պատկերը որը քիչ էր մնացել վերածվեր հայհոյանքի, կամ դրանից էլ ավելի՝ բռնցքային տուրուդմփոցի, մոտեցավ քահանային և, նրա մեջքին հրելով, ստիպեց հեռանալ բակից.

— Տեր Գերասիմ, գնացե՛ք խաղաղությամբ։ Այդպես լավ չի ստացվում։ Առանց ձեր սկանդալների էլ անտանելի է... Գնացեք ձեր ճանապարհով։

Քահանան լսեց հրետանավորին և, այլևս չառարկելով, իջավ հանգստարանի ներքնատունը։

— Տանջվո՞ւմ է,— շշուկով հարցրեց նա ժամապահներին։

Նրանք գլխով արեցին.

— Լռում է այդ կինը։ Կարծես քարացել է...

Բայազետի ներքնատնում, քարե սալերի վրա, բարձրանում էր գնդի գրասենյակի վրանը, որի ներսում երևում էր մի աղոտ լույս. նրա մոտ պահակության մեջ քարացել էին խոպերցի զինվորները։ Տեր Գերասիմը, բոբիկ կրունկներով անլսելի քայլելով խոնավ հատակի վրա, մոտեցավ ու նայեց։

— Հանգստացել է, խեղճը...

Խվոշչինսկին պառկած էր զինվորական շինելի վրա, նրա ծոծրակի տակ դրված էր մի լիքը պայուսակ։ Մեռելի ջլուտ ձեռքերի մեջ վառվում էր մի բարակ մոմ՝ հալվածքը թափելով գունատ մատներին։ Խվոշչինսկայան նստած էր դիակի մոտ՝ հին շալի ծայրերը ձեռքով կրծքին քաշած։

Լաց չէր լինում։

— Իսկ դու նաև լաց եղիր,— խորհուրդ տվեց տեր Գերասիմը։— Չէ որ դա բնական բան է...

Վճռականորեն բռնելով ուսերից՝ քահանան բարձրացրեց Ագլայային, բարեսրտությամբ ասաց.

— Դե հեռացի՛ր այստեղից։ Հո հարյուր տարի չես նստի...

Բարի մուժիկը նրան տարավ տաղավար, որտեղ սեղանի վրա դրված էր մի բաժակ ջուր, որ բերել էր Դենիսկա Օժոգինը։

— Ահա, ա՛ռ, ավելի լավ է խմիր...

Ագլայան ագահորեն խմեց ջուրը, մոտեցավ թախտին և դեմքով թաղվեց բարձերի մեջ։

— Ի՞նչ անեմ,— ասաց նա,— ինձ համար հիմա էլ ի՞նչ...

Նրա ուսերը հանկարծ սկսեցին դողալ։

— Ա՛յ, այդպես,— ասաց տեր Գերասիմը հանգստացած,— լաց եղիր, աղջիկս։ Դա մեղք չէ, արցունքները թեթևացնում են ցավը...

Մի քիչ նստելուց և հոգոց հանելուց հետո քահանան գնաց։ Ագլայան ձայն տվեց սպասավորին.

— Ջո՛ւր բեր լվացվելու։

Զինվորը նայեց նրան խելագարի աչքերով։

— Հա-ա՛-ա՛, հիմա հասկանում եմ,— գլխի ընկավ

Խվոշչինսկայան։— Դեհ, ինչ արած։ Այդ դեպքում ինձ մոտ կանչիր բարոն Կլյուգենաուին։ Կամ ո՛չ, ո՛չ, սպասի՛ր, կանչիր պորուչիկ Կարաբանովին։ Ասա, որ խնդրում եմ ինձ մոտ գալ։

Անդրեյը շուտով եկավ՝ փոշուց գորշացած, այդ օրերի ընթացքում ծերացած։ Նրա աչքերը հոգնածությունից արցունքակալել էին։

— Ահա,— ասաց նա և պարզեց նամակը։

Ագլայան ծրարը դրեց սեղանին՝ առանց ձեռք տալու։

— Դու, իհարկե, կարդացե՞լ ես այն։

— Ո՛չ։

— Իսկ եթե ճի՞շտը։

— Այո՛...

— Այդ դեպքում գնա՛,— թույլ տվեց նա։

Կարաբանովը մնաց։

— Ես մխիթարել չգիտեմ։ Սակայն...

— Նա քեզանից լավն էր,— հառաչեց Ագլայան։

— Ցմոռանաս, որ նա քեզանից նույնպես լավն էր։

— Այդ մասին կարելի է միայն հիշել...

Անդրեյը շփոթված քաշքշում էր սուսերի երախակալի ծոպը.

— Ասա, դու հիմա ինչի համար ես ինձ ատում։

— Սպանության համար։ Մի՞թե դու գլխի չես ընկնում։

— Ո՞ւմ... սպանության։

— Իմ ամուսնու։ Գնդապետ Խվոշչինսկու։

— Ե՛ս չեմ սպանել նրան։

— Դու սպանել ես ոչ միայն նրան։ Ես հիմա հեռու եմ միամտությունից։

— Այդ ի՞նչ է նշանակում։

— Երեկ այդ հիմար հետախուզությունը չէր լինի, եթե միայն դու մի կողմ նետեիր քո հպարտությունը։ Սակայն ո՛-ո՛չ, դա քեզ ի՞նչ էր հետաքրքրում։

Կարաբանովը շուռ եկավ դեպի դուռը։

— Երևի իսկապես լավ է հեռանամ...

Խվոշչինսկին գրել էր կնոջը.

...ես այն ժամանակ ստանում էի 20 ռ. ռոճիկ և դրա կեսը տալիս զինվորներին, ինչպես և վայել է ռուս սպային, եթե պատվի հարցերը նրա համար ավելի բանկ են, քան իր անձը: Ներիր, Ագլայուշկա, որ այստեղ ես խոսում եմ իմ առաջին կնոջ մասին, բայց հիմա, մարտի նախօրեին, ինձ ամեն ինչ թույլատրելի է: Մենք կայազորի հետ բախառում էինք Գոդոլիսայի և Վոլինի հրեական ազգաբնակավայրերում: Կեղտոտ տնակներում նա ինձ համար երեխաներ էր ծնում, և նրանք, խեղճերը, մեռնում էին, ինչպես գնչուական երեխաները սայլերի վրա՝ ում չունենալով կենդանի մնալու: Ես սիրում էի իմ առաջին կնոջը, բեև, ինչպես ինձ թվում է, մեզ անարժանաբար ավելի շատ եմ սիրում:

Ինձ միշտ էլ մխիթարել է այն միտքը, որ ես կարող եմ մեզ տալ եթե ոչ առաջին կիրքը, ապա այն ամենը, ինչը չէի կարող տալ իմ առաջին կնոջը: Ես հույս ունեի այս պատերազմից հետո պաշտոնաթող լինել, գեներալական համազգեստ ստանալ թոշակի հետ միասին, և ինձ թվում էր, որ մենք որեէ տեղ մի ազարակ կգնենք, կապրենք հանգիստ ու բարեկեցիկ: Սակայն նա, այդ պարոնը, որի մասին դու ինքդ խոստովանեցիր ինձ մեր հարսանիքի նախօրեին, նորից երևաց քո բախտի ճանապարհին: Ես գիտեմ, դու նրան նորից սիրում ես և շնորհակալ եմ մեզ թեկուզ այն բանի համար, որ դուք երկուսդ էլ իմ հերմակած գլխին բամբասանքներ թափվելուց վտանգազերծեցիք ինձ: Ես մեզ ոչ մի վատ բան չեմ կարող ասել այդ պարոնի մասին, որի ամբողջ երջանկությունը լոկ այն է, որ նա ինձանից երիտասարդ է, բայց աղաչում եմ մեզ, եթե ես չլինեմ, հանուն բոլոր սրբերի, մի՛ դարձիր նրա կինը...

— Այդ բանը արդեն չի լինի:— Եվ տիկին Խվոշչինսկայան նամակը ծալեց նույն ծալքերով, ինչպես ծալված էր եղել, երբ նա դեռ ողջ էր ու սիրում էր, հետախուզության այդ սարսափելի օրը:

3

Հավանաբար թուրքերը որոշել էին սպասել մինչև անցնի կեսօրվա տապը: Սակայն ահա լեռների գագաթներից իջավ «սուրբ Գրիգոր Լուսավորչի» քամին (քմահաճ, բայց բարեբեր քամի), և Արարատյան դաշտի վրա սկսեց փչել հազիվ զգալի զովություն:

Ներունի Խրենովը ճաղատ գլխից հանեց ճմռթված գդակը, կոշտ մատները դրեց ճակատին, որ խաչակնքի.

— Փա՜ռք քեզ, տե՛ր...

Սակայն օդը ցնցվեց ճղճղան ռոնոցից՝ թուրդ զինվորները սկսեցին փողհարել գամեշների եղջյուրներով, մինարեթներից վայնասուն բարձրացրին ֆանատիկ շեյխերը, և ծերունի գրենադյորը հազիվ հասցրեց վազել մինչև թաքստոցը. Բայազետի ամրոցի վրա տեղաց կրակե թաթառը:

— Պարոն գնդապե՛տ,— զեկուցեց Շտոկվիչը,— թուրքերը կրակ են բացել բոլոր կողմերից... Նույնիսկ պառավ կանայք են կրակում քաղաքից:

Պացևիչը ձեռքը կոխեց համազգեստի ծալվածքի տակ, բայց երկար ժամանակ չէր կարողանում շոշափել սրտի զարկերը:

— Դեհ, իսկ ես ինչ կարող եմ անել,— խռպոտ հարցրեց նա:— Ասացեք զինվորներին, որ ճակատները դեմ չտան գնդակներին: Դա միակ բանն է, որ կարող եմ նրանց խորհուրդ տալ:

Շտոկվիչն ուսերը թոթվելով գնաց: Գնդապետը պատյանից հանեց հսկայական «ընտանեկան բուլդոգը», ինչպես կոչում էր բարեհոգության պահերին, և մատով պտտեցրեց ծանր թմբուկը՝ հաշվելով փամփուշտների գլխիկները: Տասներեք հատ էին դրանք, և այդ գարշելի թվից նա իրեն վատ զգաց:

Շտոկվիչը դեռ գնդապետի մոտ էր ուզում թքել, բայց այնտեղ չհամարձակվեց և թքեց միայն բակում:

— Թյո՜ւ,— ասաց նա,— փալասի մեկը: Հարբեցող: Նորից լակել է մի տեղ:

Կողքից մեկը թափով հարձակվեց նրա վրա, գրկեց և ներս քաշեց կամարի տակ: Դա Կարաբանովն էր:

— Դուք... Ի՞նչ է,— ասաց նա շնչասպառ,— մի՞թե չեք տեսնում ինչ կրակ է: Ձեզ կարող են սպանել...

Թուրքերն ուժեղացրին հրաձգությունը, և վիրավորների տնքոցները կորան կրակոցների թմբուկային թրրխկ-թրրխկոցների, գնդակների ականջ ծակող սուլոցների մեջ: Բերդի սպիտակ-վարդագույն պատերը գրեթե մարդկանց աչքերի առաջ հարյուրավոր ու հազարավոր գնդակների հարվածներից արագ ծածկվում էին ծաղկաշեղով: Ձիանոցում խրխնջում էին խրտնած ձիերը, այս ու այն կողմ թռչում լուսամուտների քիվերը, զրնգում ապակիները, օդում ավազի ալրանման փոշին էր կախվում:

— Դե որ այդպես է, շնորհակալություն ձեզ,— պատասխանեց Շտոկվիչը։

Նորից սկսեցին ձայնել եղջյուրները, և հրաձգության որոտն անսպասելիորեն կտրվեց։ Կազակները միանգամից սկսեցին խոսել աշխուժորեն՝ դուրս ցցվելով թաքստոցներից, որպեսզի դիտեն շրջակայքը՝ իրենց դեմ արդյոք որևէ ստորություն չի՞ նյութվում։ Վատնինը նույնպես կանգնեց իր հզոր հասակով մեկ, անցավ անդունդի վերևում ձգվող պատի երկայնքով, հարցնելով.

— Խոստովանե՛ք, կազակներ, ձեզանից ո՞վ է խաբվել։ Ո՞ւմ և որ տեղը...

Կազակներն արդեն վարժվել էին թաքնվել գնդակներից և նրանց մեջ վիրավորներ չկային։ Այդ բանից գոհ՝ Նազար Մինաևիչն այնպես ձգվեց, որ ոսկորները ճտճտացին և բերդապարսպի վրայից ճտքակոշիկի հարվածով ցած գցեց գնդակներից ծակծկված դույլը։

— Ա՛յ, լավ կլիներ, եղբայրներ, հիմա մեզ մեր ստանիցայի գարեջրից տային,— երազելով ասաց նա։— Մի տակառիկ, հա՞։ Հը՞... Կամ թեկուզ հաղարջի կվաս։

Թքոտելով ծխախոտագլանակը՝ Եգորիչը կնճռոտեց պեպենոտ դեմքը.

— Դու այդ ի՞նչի համար ես ասում, հարյուրապետ։

— Դե հենց այնպես,— շփոթվեց եսաուլը,— խոսքի օրինակ...

Վատնինը աչքերին մոտեցրեց մեյդանում երկու փութ հաճարով փոխանակած ֆրանսիական հին հեռադիտակը։ Բերդապարսպից երևում էր, թե բրիտանական հրահանգիչների կողմից վարժեցված ռեդիֆները ինչպես էին խրամատ փորում. նրանց բահերից հողը թռչում էր վեր, պատնեշի վրա, և շտուցերային կրակը սպառնում էր ավելի խիտ և վտանգավոր դառնալ։

— Թուրքերը նույնպես փլավ չեն ուտում,— մոթմոթաց Վատնինը՝ իջեցնելով հեռադիտակը։— Բոլոր կանոններով խրամատներ են փորում...

Դենիսկան դիպուկ կրակ բաց արեց թուրքերի վրա և զվարճանալով՝ հրացանը դրեց կողքը՝ համբուրելով կոթը.

— Ախ, դու իմ անուշիկ։ Ամեն ինչով լավն ես, սիրելիս, միայն թե քեզ հետ քնել չի լինի, ինչպես աղջկա հետ։

Եգորիչը նորից ծխեց, մինչև որ գլանակն սկսեց վառել մատները, և այն ժամանակ մնացորդը տվեց Դենիսկային.

— Ա՛ռ, ծխի՛ր... Գլուխդ ուսերիդ չես կարողանում պահել, տղա։ Ջափից ավելի շարաճճի ես, քեզ հետ և ոչ մի աղջիկ չի ամուսնանա։ Իսկ թուրքին իզուր, անտեղի մի գրգռիր։ Այլապես նա քեզ հանգիստ չի տա։

— Է՛հ,— քրթմնջաց Դենիսկան։— Իսկ նա ինձ համար ո՞վ է, ընկե՞ր է, ինչ է։ Ես այդ արնախումի հետ մի մարգագետնում բնական պահանջով նույնիսկ չեմ նստի։ Եվ նրա հետ երեխա չեմ կնքելու։

— Ահա և կնքահայրն է գալիս,— հանկարծ սկսեց ծիծաղել վախմիստր Տրյոխժոննին։— Ապա մի նայեցեք, կազակներ, թուրքերը մեր պարենավաճառ Մամուկին առաջ գցած բերում են։

Իսկապես, Վանի ճանապարհի կողմից մի տարօրինակ երթ երևաց, որի առջևից մի սպիտակ շոր թափահարելով քայլում էր Սալախ Աղա Մամուկովը։ Նրան ուղեկցում էին կարմիր վերնաշապիկներով երկու հաղթանդամ քրդեր և երկարափեշ սերթուկով մի նիհար անգլիացի՝ կարմիր կիսալուսնի ժապավենը թևքին։

— Սպասե՛ք, մի՛ կրակեք,— նախազգուշացրեց Վատնինը։— Հե՛յ, դու, ապա մի վազիր նորին բարձր բարեծնության մոտ։ Ասա պատգամավորներ են շնորհ բերում։

Բանագնացներին նայելու համար բերդի ճակատամասի պատի վրա քիչ զինվորներ չէին բարձրացել։ Շուտով վազելով եկավ շարացած ու հուզված Շտոկվիչը։

—Հե՛յ,— ընթացքից գոռաց նա,— կորե՛ք այդտեղից գրողի ծոցը... դուք կոտորել եք մեր վիրավորներին, այդ պատճառով էլ մենք ձեզ հետ այժմ ոչ մի խոսելիք չունենք։ Եվ ձեր առաջարկությունները, ինչպիսին էլ դրանք լինեն, մենք չենք ընդունում։

Ներքևից լսվեց Աղա Մամուկովի ձայնը. Ֆուիկ փաշայի անունից ռուսական կայազորին առաջարկում էր զենքերը ցած դնել և բնակություն հաստատել քաղաքի որևէ թաղա-

մասում, որը հատուկ կազատվի բերդի կայազորը տեղավորելու համար։

Ի պատասխան դրան զինվորներն ու կազակները համերաշխ քրքիջով գոչեցին.

— Հե՜յ, դո՜ւ, շուկայի քիշմիշ։ Մոտ արի այստեղ, մենք քո պատկերը պիտի հանենք։ Ինչպիսին դու կաս, շրջանակի մեջ կկախենք...

— Ի՞նց, ի՞նց,— լսվեց ներքևից։— Ես բոլորովին հիվանդ, ոց մի բան ցի լսում...

— Իսկ դու ահա արի այս կողմ, սուլթանական տականք։ Մենք քեզ պաքսիմատ կհիշեցնենք, շան որդի կուրկուլ։

Քրդերից մեկը հանկարծ վազելով մոտեցավ բերդի հենց դարպասներին և, թափահարելով լայն յաթաղանը, զայրույթով գոռաց, որ ինքը վաղն իսկ կլինի ամրոցի ներսում և ահա այսպես (նա ցույց տվեց՝ ինչպես) կկտրի Նազար փաշայի գլուխը։

— Սեկիմ, գյավուր, սեկիմ,— գոռաց նա, ոտները պար ածելով և յաթաղանը պարզելով Վատնինի կողմը, որն իր հսկա մարմնով խիստ առանձնանում էր բոլորի մեջ։

Այդ ժամանակ Դենիսկա Օժոգինը չհամբերեց և, արձակելով գոտին, բնական պահանջը կատարեց՝ բարձրից թափելով ուղիղ բանագնացների վրա։ «Բանակցությունները» (եթե միայն այդ սկանդալային փոխադարձ հայհոյանքները կարելի է բանակցություններ անվանել) արդեն ավարտվել էին, երբ Պացևիչը շտապ բարձրացավ ճակատամասի պատի վրա։

— Դո՜ւք, պատվելիս,— գնդապետը լացակումած հարձակվեց Շտոկվիչի վրա։— Այդ ի՞նչ արեցիք, աղավնյակս... Առանց դանակի բոլորին մորթում եք։ Չէ որ հարկավոր էր պատվիրակությանը դիմավորել համաձայն հանդիսակարգի, օրինական բոլոր կանոններով, ինչպես ցույց է տրված...

— Գեներալ Բեզակի կանաչավուն գրքույկո՞ւմ,— ընդհատեց նրան մռայլ Շտոկվիչը։— Դուք կարող եք ատել ինձ, գնդապետ, բայց ես սիրում եմ սև գույնի կազմերը։ Ես ձեզ ինչո՞վ եմ մորթել։

— Տե՜ր իմ։ Ախր հարկավոր էր իմանալ պայմանների մասին,— հուշեց նրան Ադամ Պլատոնովիչը՝ նայելով շուրջը։

— Պայմանների՞ մասին... ի՞նչ պայմաններ,— հարցրեց Շտոկվիչը՝ դիտավորյալ բարձրացնելով ձայնը, որպեսզի նրան կարողանային լսել զինվորները։— Պայմաններ կարող են լինել միայն բերդը հաղթողի ողորմածությանը հանձնելու դեպքում։ Եվ քանի որ մենք մտադրություն չունենք բերդը հանձնել, ապա և ոչ մի պայմանի մասին, իմ կարծիքով խոսք լինել չի կարող։

— Այո՜։ Բոլորն այդպես է... Սակայն ես կարծում էի, որ... Դե, դուք ևս, իհարկե, չեք առարկի։ Ասենք...— Պացևիչը վերջնականապես խճճվեց բառերի մեջ և, անհուսալիորեն թքելով, դանդաղ հետ գնաց դեպի սանդուղքները։

Կամարի նեղ անցատեղում, շատրվանի մոտ, նա պատահեց Կարաբանովին և, բռնելով նրա կոճակից, հաղորդեց զգացմունքով.

— Հիմա երևի միայն դուք ինձ հասկանաք, պորուչիկ։ Դա պաշարված ամրոցի կայազոր չէ, այլ... ներեցեք, ինչ-որ պանդոկ։

— Ինչ կա որ,— պատասխանեց Անդրեյը՝ ծուլորեն ու անտարբեր։— Պանդոկները նույնպես լավն են լինում։ Ամեն ինչ կախված է միայն պանդոկապանից։

Կարաբանովը դուրս թռավ կամարի տակից։ Ուզում էր ուղղվել դեպի ախոռ, որպեսզի գոնե շոյեր իր սիրելի Լորդի դունչը, որին երեկվանից ջուր չէր խմեցրել, սակայն այդ պահին լսվեց բարակ նվաղող սուլոց, հետո թշշոց, և մի կլոր բան, պարուրված գորշակապույտ և գարշահոտ ծխով, ծանր թրմփաց նրա կողքին և, կատաղի պտտվելով ու վեր-վեր թռչելով, զնգզնգոցով գլորվեց գետնին։

— Ռմբագո՜ւնդ,— ճչաց մեկը նրա կողքին, և հենց այդ պահին երկրորդ արկը ջարդուփշուր արեց փամփուշտների արկղը, երրորդն ընկավ առաջնագավթում, որտեղից լսվեց գրեթե ուրախալի բացականչություն՝ Պացևիչին սպանե՞ց...

Որոշ ժամանակ սպասելով մինչև հրաձգության կարճատև դադարը՝ Կարաբանովը նետվեց շատրվանով բակը։

— Որտե՞ղ է։ Ի՞նչ է պատահել գնդապետին։

Ադամ Պլատոնովիչն այդտեղ էր, կամարի տակ։ Նա պպզել էր, և նրա անդրավարտիքի հետևի մասը թեթև ծխում

էր։ Կարաբանովն սկսեց համոզել Պացևիչին հոսպիտալ գնալ.

— Չէ՞ որ դուք վիրավորված եք... Ինչի՞ համար է այդ անձնազոհությունը։

Շփոթված ու գունատված Պացևիչը շալվարի վրայից թափ տվեց կայծերը։

— Դուք կարծում եք՝ ես վիրավորվա՞ծ եմ,— ապշահար հարցրեց նա։

Ինչ-որ տեղից նրա կողքին երևաց պատգարակը, անսովոր հոգատարությամբ Պացևիչին դրեցին կեղտոտ, արյան ցայտերով ծածկված պարուսինի մի կտորի վրա։

— Զգույշ տարեք,— ասաց Կարաբանովը սանիտարներին։

Սակայն գնդապետը հավանաբար հասկացավ, որ ուղղակի ուզում են պրծնել իրենից, և ինչպես հարկն է շոշափելով իրեն, հանկարծ պոռթկումով սկսեց անպատկառ հայհոյանքներ տեղալ։

— Գնացե՛ք բոլորդ... Ձեզ միայն... Կորե՛ք, ռա՛դ եղեք։

Թուրքերը նորից սկսեցին ամրոցի ռմբակոծումը։ Տեղից տեղ շարժվելը դարձավ չափազանց վտանգավոր։ Հատկապես դժվար էր մի բակից մյուս բակը վազել անցնելը, և Բայազետի հոսպիտալը պաշարման հենց առաջին օրը զգալիորեն լցվեց վիրավորներով։ Սիվիցկին բուժակ Նենյուկովին հանձնարարել էր միայն վերքերից հեռացնել գնդակները, և աշխատանքի մի քանի ժամվա ընթացքում նա դուրս հանեց արդեն երեսունչորս գնդակ՝ սկսած փամփուշտային գնդակներից և վերջացրած ուղղակի կացնով կտրված կապարի կտորներով։

Կիտաևսկին մեծ մասամբ զբաղվում էր կտրված վերքերի բուժմամբ, ինչպես նաև փտախտային վերջավորությունների անդամահատմամբ։ Իսկ ամենալուրջ վիրահատությունները կատարում էր կապիտան Սիվիցկին։ Արյունաթաթախ խալաթը հագին, թևքերը քշտած, հրամաններից ու հայհոյանքներից խռպոտած, հոգնածությունից հազիվ վայր չընկնելով՝ կապիտանը հիմա կատարում էր այդ օրվա տասնչորսերորդ՝ ամենասարսափելի վիրահատությունը։ Նրա սեղանի վրա, երկու ամրակազմ սանիտարների կողմից սեղմված,

պառկած էր մի երիտասարդ վրացի միլիցիոներ. գնդակն անցել էր նրա ծնոտների միջով, և նա այժմ չէր կարողանում փակել բերանը, որտեղից դուրս էր ցցվել ուռած, այլանդակված լեզուն։

Երբ վիրահատությունն ավարտվեց, ցավից և սարսափից ուշքացող վրացուն մի կողմ քաշեցին, իսկ Սիվիցկուն վիճակվեց հանգստի առաջին րոպեն. Ալեքսանդր Բորիսովիչը դուրս եկավ մաքուր օդ շնչելու, սակայն Կլյուգենաուն, ինչպես միշտ, երևալով ժամանակին, թույլ չտվեց բժշկին դուրս գալ գնդակոծվող բակը։ Նա գրեթե ուժով բժշկին նորից հրեց լազարեթի հեղձուցիչ դարպասամուտքը։

— Ինձ կարելի է,— ասաց բարոնը,— և մյուս բոլորին կարելի է, իսկ ահա ձեզ, չի կարելի։ Դուք հիմա պետք եք կայազորին, ավելի քան երբեք։ Եվ խնդրում եմ ձեզ՝ մի՛ վիճեք...

— Գրողը տանի ձեզ, բանաստեղծներիդ,— համաձայնեց բժիշկը՝ նստելով աստիճաններին։— Ահա ինձ մոտ վերջին գլանակն է։ Հիմա կծխեմ-կվերջացնեմ և չգիտեմ, ինչ պետք է անել հետո։ Թեկուզ տրաքեմ, առանց ծխախոտի չեմ կարող յոլա գնա։

Նրանք նստել էին աստիճաններին՝ լուռ ականջ դնելով գնդակոծության սաստկացող որոտին։

— Պատերը կդիմանա՞ն,— հարցրեց Սիվիցկին։

— Թուրքական հրետանուն կդիմանան,— պատասխանեց Կլյուգենաուն։— Բայց ասում են, որ Թուրքերը ուղտերով հիմա այստեղ են քաշում Կրուպպի թնդանոթները։ Իսկ պարոն Ալֆրեդ Կրուպպը կատակ անել չի սիրում։

Նրանց մոտով հոսպիտալ էին քարշ տալիս հենց նոր միայն վիրավորված ձիապանին։ Սիվիցկին շոշափեց նրա գարկերակը, նայեց տղայի կիսաբաց բերանին և թափահարեց ձեռքը.

— Ոչ թե ինձ մոտ բերեք, այլ տարեք հուղարկավորման արարողություն կատարելու։ Նա արդեն կենդանի չէ...

Մի քիչ լռելով՝ Սիվիցկին ասաց.

— Մենք դատապարտված ենք հրաշքներ գործելու։ Մենք նույնիսկ ջուր չունենք։ Ես չեմ կարող լվանալ վերքերը։ Ես վերքի միջից գնդակի հետ միասին քրտնքոտ ու կեղտոտ

լաթի կտորներ եմ դուրս հանում։ Ես գիտեմ, որ այդ անիծ-
ված ոսկրախտն արդեն այնտեղ է, արդեն նստած է մարմնի
մեջ։ Իսկ ես անուժ եմ...

— Գիշերը ձեզ մոտ ջուր կլինի,— մտածելով ասաց
Կլյուգենաուն։

— Շնորհակալություն։ Չլինի՞ թե մտադիր եք դիմել
միսիս Ուորենի ողորմածությանը, որ երեսուն մահճակալ է
բացել թուրքերի համար։

— Ո՛չ,— պատասխանեց Կլյուգենաուն,— ես բոլորովին
չեմ կարողանում խոսել կանանց հետ։ Բայց դուք ջուր
կունենաք։ Հենց այսօր, գիշերը։ Երկու-երեք դույլ ես ձեզ
խոսք եմ տալիս։

— Լա՜վ,— Սիվիցկին գլանակը ծխեց վերջացրեց և վեր
կացավ։— Ես լսում եմ՝ ինչ-որ մեկը բղավում է։ Հավանա-
բար, նա հիմա իրեն վատ է զգում, ես պիտի գնամ այդ
խեղճի մոտ...

4

Կեսօրից հետո Սիվիցկին մի-մի կտոր շաքար բաժանեց
սպաներին՝ ամեն մի կտորի վրա անանուխի էլիքսիր կաթեց-
նելով։

— Պարոնա՜յք,— մռայլորեն ասաց նա,— դուք կարող
եք ամեն երեկո ինձանից ստանալ ահա այսպիսի մի կտոր
շաքար, և դա թերևս միակ բանն է, որով պետք է ձեր պարե-
նավորումը տարբերվի զինվորների պարենավորումից։

Ամրոցի պարսպի հետևում աղմկում էր գետը, որ մտածել
էր տալիս սառը ջրի մասին։ Մեյդանից լսվում էր իշապան-
ների գոռոցը՝ «հայդա՜, հայդա՜»։ Արևը երեկոյան դեմ
մարմրելով բոսորանում էր հրակնատի խոռոչում։ Բարձր
լուսամուտներից հաճախ ներս էին թռչում գնդակները և,
պատին զարկվելով, տափակելով ուժասպառ ընկնում կավե
հատակին։ Կլյուգենաուն երեխայի պես չպպացնելով, ախոր-
ժակով ծծեց վերջացրեց իր շաքարը և, մեքենայորեն նա-
յելով հրակնատի մեջ, ասաց.

— Այժմ, հարգելի կոլեգաներ, մեզ թույլատրվում է մի
քիչ վախենալ։ Ես այստեղից տեսնում եմ ևս մեկ ռազմա-
ճակատ։ Դա էշիրաթներն են, որ օգնության են եկել Ֆուիկ
փաշային...

Քուրդստանում թափառող էշիրաթների վայրենի ցեղն
ապրում էր միայն ավազակությամբ և թալանում հենց իր
ցեղակիցներին՝ նստակյաց քրդերին, նույնպիսի բարբարոսու-
թյամբ, ինչպես և անհավատ գյավուրներին։ Հիմա էշիրաթ-
ները, անկասկած, հարստացման հոտն առնելով, մոտեցել
էին պաշարված Բայազետի պարիսպներին և իրենց սև
վրանները խփել կանաչապատ լեռնաձորակներում։ Շուտով
վրանները խփել կանաչապատ լեռնաձորակներում։ Շուտով
նրանց կանայք՝ մետաքսե վառ կարմիր գլխաշորերով, երե-
խաները մեջքներին կապած, արդեն դեռ ու դեռ էին նետվում
մեյդանի հոծ բազմության մեջ՝ խլելով իրենց համար ավելի
շքեղ շորեր, ավելի խոր կժեր, ավելի խայտաբղետ ապա-
ռանջաններ, ավելի տաք թաղիքներ։ Եվ տեղական առևտը-
րականները, չէին համարձակվում վիճել այդ ամբարտավան
և գոռոզ կանանց հետ, քանի որ նրանց ահեղ ամուսին-
ներն իրենց կողքին էին, և առևտուրը մեյդանում սկսեց
արագ անհետանալ։

— Երևում է նրանք եկել են հեռվից և քաղցած են։ Դրա
համար էլ անհամբեր են,— նկատեց Կլյուգենաուն։— Նրանց
ձիերը չեն ցանկանում սպասել, մինչև մենք ծարավից
մեռնենք, վաղը Ֆուիկ փաշան հավանաբար կորոշի, օգ-
տագործել նրանց խանդավառությունը...

— Իսկ մեր դեմ ընդամենն ինչքա՞ն են,— հարցրեց Կա-
րաբանովը։

— Մի տասներկու հազար, կարող է և ավելի շատ,— ոչ
անմիջապես պատասխանեց Շտոկվիչը։— Սակայն ամանք
թալանելով հեռանում են, մյուսները քաղաք են մտնում գա-
տարկ սայլերով։

— Պարոնա՜յք,— հարցրեց Եվդոկիմովը՝ անտարբեր
ձևանալով,— ի՞նչ եք կարծում, մենք դեռ քանի՞ օր կարող
ենք դիմանալ։

— Քանի՞ օր,— կրկին հարցրեց Կարաբանովը և անմի-
ջապես էլ պատասխանեց։— Վախենում եմ, որ շատ երկար։
Տեր-Ղուկասովը հիմա մեզանից հեռու է, իսկ Թիֆլիսում
մտածում են, որ մենք այստեղ գինի ենք խմում և մեյդա-
նում վերավաճառքով զբաղվում։

— Բայց, այնուամենայնիվ,— պնդեց յունկերը,— քանի՞ օր՝ մե՞կ, երկո՞ւ կամ երե՞ք։

— Տասն օր,— ճչաց Կլյուգենաուն՝ անսպասելիորեն չարացած,— քսան, երեսուն, քառասուն... Ինչքան հարկավոր է։ Բավական է մեկ անգամ նայել քարտեզին, որ հասկանաս՝ Բայազետը Վանի ամբողջ սանջակի բանալին է, և Տուիկ փաշան չի համարձակվի Ադրի-դաղից այն կողմ անցնել, մինչև մենք չատակենք և չհանձնենք Բայազետը։ Թեկուզ մի բոպե թուլացիր, և այն ժամանակ այդ ամբողջ հորդան, որ հիմա դոփդոփում է մեր առջև, անզուսպ հեղեղի նման կհորդի Հայաստան, և էշիրաթները արյունով կներկեն ոչ միայն տանիքները...

— Ես... պատրաստ եմ,— պատասխանեց Եվդոկիմովը։— Միայն թե ինչո՞ւ եք այդպես գոռում ինձ վրա։ Քսան օր, թե քառասուն՝ թող լինի, դուք ինձանից բողոք չեք լսի...

Բերդի պարիսպները հանկարծ խուլ դղրդացին, հրակնատից մարդկանց վրա փչեց ցերեկային տաք, բոցախառն օդը, վերևից սվաղի կտորներ թափվեցին։

— Հեռացե՛ք պատուհաններից,— կարգադրում էին բակից։— Մեր մարտկոցը հիմա հենց պատի երկայնքով է ռումբեր նետում։ Հեռո՛ւ կացեք, եղբայրներ, արդեն պատշգամբի կեսը քանդվել, գետն է թափվել...

Շտոկվիչը զգույշ դուրս նայեց և զարմացավ Պոտրեսովի հնարամտությունից.

— Ա՜յ թե կեցցե մեր ծերուկը,— գովեց նա մայորին։— Հրանոթը հանել է ուղիղ ռեգուտի պատի վրա և միանգամից կրճատել մեոյալ անկյունը։ Արկն իսկապես պոկել է պատշգամբի կեսը, սակայն նայեցեք, թուրքերը փախչում են խրամատներից...

Շտոկվիչը կանգնեցրեց մի զինվորի, մարտկոց ուղարկեց.

— Հարցրու՝ ո՞վ է նշանառուն։ Ասա, որ այդպիսի կրակոցների համար «Գեորգը» ապահովված է։

Զինվորը շուտով վերադարձավ՝ դեռ հեռվից ժպտալով.

— Ձերդ բարեձնություն, ինձ ուղարկելու անհրաժեշտություն էլ չկար։ Կայազորում բոլորն էլ գիտեն, որ Կիրյուխա Պոստնիից լավ հրետաձիգ չկա...

Այո՛, դա ճշմարիտ էր, Կիրյուխան լուսանի դեղնավուն բիբերով տգեղ, բայց սրաթափանց աչքեր ուներ. նա հատկապես լավ էր տեսնում աջ՝ մարտական աչքով։ Եվ կյանքում ամենից շատ նա սիրում էր երկու բան՝ բոքոն հացի խրոթխրոթացող կոշտ կողերը և ահա այսպիսի տաք պահեր, երբ սպասարկող ամբողջ անձնակազմը ենթարկվում էր նրա բացականչություններին.

— Հենոցը ավելի աջ... հարվածել աջ։ Նորի՛ց, նորի՛ց...

— Հե՛տ քաշվել,— գոռում էր հրետանու ենթասպան։

Կիրյուխայի սիրտը, այդ գեղջուկ պատանու առողջ սիրտը, համաչափ թխկթխկոցներով հաշվում էր արկի թռիչքի համար պահանջվող ժամանակը։ Ժամացույց, իհարկե Կիրյուխան մինչև կյանքի վերջն էլ չունեցավ և վայրկյանները հաշվում էր միայն սրտի զարկերով։

— Վե՛ց,— ասում էր Կիրյուխան,— եկ, սանամեր, զմայլվելու։

Ինչ-որ մեկը բերդում լուր տարածեց, թե գերազանց հրաձգության համար Պացևիչը մարտկոցների համար առանձնացրել է կես դույլ ջուր, և յունկեր Եվդոկիմովը, ծարավից տանջվելով, դանդաղաքայլ գնաց հետևի գավիթը։

Զիապանները մոլորված թափառում էին ձիանոցի երկայնքով, ջանում հավաքել բոլոր դույլերը, որոնց միայն տեսքը կենդանիների մեջ անկարագրելի կատաղություն էր առաջացնում։ Նրանք սմբակներով խփում էին պինդ գետնին, կամաց խրխնջում՝ ջանալով շրթունքներով բռնել մարդկանց ջորերից, որպեսզի հիշեցնեն իրենց գոյությունը, չէ՞ որ նրանք ոչինչ չգիտեին պաշարման մասին, և այդ խեղճերին, հավանաբար, թվում էր, թե իրենց ուղղակի մոռացել են այդ երկոտանի տիրակալները, որոնց համար-իրենք այդպես փառավոր կերպով չարչարվել են...

— Ո՞ւր է մայոր Պոտրեսովը,— հարցրեց յունկերը։

— Հրեն, մարտկոցի մոտ...

Եվդոկիմովը զարմանքով հետևում էր, թե այսօր իրեն որքան տարօրինակ է պահում հրետանավորը։ Տարեց սպան, սովորաբար այնքան համեստ և զինվորականին հատուկ զգուշավորությամբ, հիմա կարծես որոշել էր խաղալ մահվան հետ, որը պտտվում էր նրա շուրջը։

Մի հիմար գնդակից պատահաբար ընկնելու վտանգին հիմելով՝ Եվդոկիմովը դուրս թռավ բակի մեջտեղը, բռնեց տարեց սպայի արմունկից.

— Նիկոլայ Սերգեևիչ, չէ՞ որ դա ոչ ոքի պետք չէ։ Մենք առանց այդ էլ գիտենք ձեր համարձակության մասին։ Հեռանա՛նք այստեղից, հեռանա՛նք...

Պոտրեսովը շուռ եկավ, և նրա դեմքն այդ պահին մի տեսակ անդրշիրիմային էր, ասես, նա արդեն եղել էր այնտեղ, որտեղից ոչ ոք չի վերադառնում։ Միանգամից կուչ գալով և խիստ գունաթափվելով՝ Պոտրեսովը հնազանդորեն թույլ տվեց յունկերին իրեն թաքստոց տանել։ Նրանք գնացին դատարկ խոհանոց, որը ծածկված էր ջարդոտված ամանեղենի փշուրներով, և պպզեցին խարխլված կեղտոտ պատի մոտ։

— Ինչի՞ համար է դա,— ավելացրեց Եվդոկիմովը՝ խղճալով տարեց սպային իր փոքր-ինչ միամիտ հոգու սուր կարեկցանքով։

Մայորը աղեկտուր հեծկլտաց, նրա բարի աչքերում արցունքներ երևացին.

— Ես արդեն հիմար ծերուկ եմ։ Դուք դա չեք հասկանա։ Միայն դժբախտությունն այն է, որ գնդակներն ինձ չեն կրչում, ձեռք չեն տալիս... Իսկ ինձ՝ պետք է։ Գոնե մի հատ... Աղաչում եմ աստծուն, որ միայն որովայնիս չկպչի, որովհետև այդ դեպքում կենդանի չեմ մնա։ Դա ինձ համար չէ, այլ հարկավոր է ծառայական հաշվեցուցակների համար։ Այն ժամանակ իմ թոշակը, սիրելիս, կբարձրանա։ Գոնե ծերության տարիներին մի կտոր հաց կունենամ...

Եվդոկիմովը, որի հոգում սուր խղճահարությունը հիմա կռվում էր քամահրանքի հետ, դանդաղորեն վեր կացավ՝ մեջքը քսելով կեղտոտ պատին։

— Ես ձեզ համար... հիմա զզվելի եմ, այո՞,— ընկճված հարցրեց Պոտրեսովը։

Ներս վազեց հրետանու զզզված, արյունաշաղախ ենթասպան։

— Ձերդ բարեծնություն։ Կիրյուխային... մեր Կիրյուխային։

— Ի՞նչ է պատահել։

— Կիրյուխան, ասում եմ, վիրավորվեց։

— Նա կենդանի՞ է։

— Նրա ահա այստեղից,— շրթունքներով չպպացրեց ենթասպան,— հենց ուղիղ այստեղից պաչեց թրքուհին...

Վիրավոր հրետանագին ներս քաշեցին թաքստոց։ Կիրյուխայի դեմքը արյունլվիկ էր, նա ինչ-որ բան էր մոթմոթում, չպչպացնում։ Արյունը էրբեցին. տղան համեմատաբար թեթև էր պրծել. գնդակն անցել էր հենց քթի տակից՝ ուժեղ պատռելով դեռ անբեղ, բոլորովին պատանեկան վերին շրթունքը։

— Է՜խ, հարազատս,— կարեկցեց նրան Պոտրեսովը,— քեզ չպահպանեցիր...

Հրետանագը մոթմոթոցով և շարժումներով ցույց տվեց, որ աչքերը չփաթաթեն. նա հոսպիտալ չի գնա սատկելու, կմնա մարտկոցում։ Աչքերը նրան պետք կգան՝ հենոցը աջ՝ հենոցը ձախ, նա դեռ կարող է այդ անել...

Ճշմարի՞տ էր արդյոք մարտկոցի զինվորներին կես դույլ ջուր տալու մասին խոսակցությունը, այդպես էլ յունկեր Եվդոկիմովը չիմացավ, սակայն ամաչեց մի կում ջուր խնդրել և որոշեց սպասել գիշերվան։

— Գիշերը, պարոն յունկեր, մենք կուշտ ջուր կխմենք,— խոստանում էր նրան զինվոր Պոտյոմկինը։— Միայն թե ավելի մութ գիշեր լինի, իսկ այնտեղ արդեն մենք ճանապարհը կգտնենք։

5

Տվերի նահանգի Կորչևսկի գավառի Նիժնիե Սոլցի գյուղացի, հարբեցողությունից բթացած տիրացուի ութերորդ որդին էր նա. ինչ սարսափելի էր հիմա նրա համար։ Եվ նա հասկանում էր քննողների արհամարհական սառնությունը. չէ՞ որ ինքը հիմա նրանց աչքին ծիծաղելի ու չափն անցկացրած մի բախտախնդրի մեկն էր, որը գեղջկական խրճիթի շեմից համարձակվում էր ճակատով բացել գլխավոր շտաբի ակադեմիական ոսկեզօծ դռները։

— Թեյլորի և Մակլոնների թեորեմները,— ասում են նրան։— Կա երկու լուծում՝ մեկն առաջարկված Բունյակովսկու, մյուսը ակադեմիկ Օստրոգրադսկու կողմից։

Միաչքանի ակադեմիկոսը ծանրորեն շրջվում է բազկաթոռի մեջ։ Նրա առջև հաճկատարությամբ դնում են ջրով լի բաժակ, և հարգարժան համաշխարհային լուսատուն նրա մեջ ընկղմում է ծխախոտից դեղնած մատները՝ լվանալով դատարկ ակնախոռոչի արցունքաթոր խոցը։

— Հարցը բարդ չէ,— ասում է ակադեմիկոսը։— Երկու թեորեմների լուծման համար տասը բոպե եմ տալիս ձեզ։

Այո՛, հարցը ձեզ համար բարդ չէ, պարոնայք։ Բայց որքան բարդ է նրա համար, ով վազում էր հարևան գյուղը՝ պաշտոնաթող զինվորի մոտ այբուբեն սովորելու։ Ժամանակը թռչում էր արագ, վարդագույն կավիճը փշրվում էր մատների արանքում, քննողի առջևի բաժակի մեջ արդեն ինչ-որ զզվելի մրուր էր լողում։

Ես չեմ կարող... օգնե՛ք ինձ։ Օգնե՛ք...

— Օգնե՛ք ինձ։ Օգնե՛ք...

Նեկրասովն ուշքի եկավ սեփական տնքոցից և դժվարությամբ բացեց կպած կոպերը։ Նրա գլխավերևում տարածվում էր բարձր երկինքը, և մի քանի քրդեր՝ ուղտի բրդից պատրաստված հագուստով, բաշլուղները գլխներին, օղակաձև նստած էին քիչ հեռվում։

— Օ՜-օ՜-օ՜,— ակամայից դուրս թռավ տնքոցը, և քրդերը տարածելով լայն թևքերը՝ օդ բարձրացան ու անհետացան։ Դրանք ոչ թե քրդեր էին, այլ շիկագույն փետուրներով հաղթանդամ կորճեր, որոնք ծարավ էին մարդկային արյան։

Ուշագնացությունը ընդմիջում էր զառանցանքի հետ, և ջերմային զառանցանքի մեջ նա Պետերբուրգի Ագլիական ծովափից տեղափոխվում էր գնդապետ Խվոշչինսկու բարձր վրանը, գնդապետը ծիծաղելով նրան գինի էր լցնում գավաթի մեջ։

— Ի՞նչ է կատարվում ինձ հետ,— ասաց շտաբս-կապիտանը և միայն հիմա նկատեց, որ բոլորովին մերկ պառկած է գետնին։ Դիակապուտները, նրան մեռածի տեղ դնելով, հանել էին նույնիսկ վարտիքը։ Այդ մերկության մեջ ինչ-որ ողորմելի և ստորացուցիչ բան կար։

— Ի՞նչ ստորներն են... Աստվա՜ծ իմ, ի՞նչ ստորներ։

Նեկրասովը սեղմեց ծնոտները, սակայն մարդ կոչվածների պատճառած վիրավորանքը և սարսափելի ցավը, որ

բռնկվեց միանգամից մարմնի երեք տեղերում, առաջ բերեցին ակամա հեկեկանք։ Այն ժամանակ նա հասկացավ, որ ավելի լավ է չզսպել իրեն, և լիակատար ազատություն տվեց արցունքներին, մեջքի վրա պառկած՝ նայելով փոշոտ երկընքին։ Հետո, երբ արցունքները թեթևացրին բարկությունը, Յուրի Տիմոֆեևիչը փոքր-ինչ բարձրացավ արմունկի վրա, և ուշադիր դիտեց շուրջը։

Նրա չորս կողմը թափված էին զարհուրելիորեն այլանդակված դիակներ։ Նրանք, ինչպես և ինքը, գիշերը կողոպտվել էին մերկության աստիճան, ըստ որում կողոպտված էին նույնիսկ թուրքերն ու քրդերը (մուսուլմաններին նեկրասովը տարբերում էր նրանց դաստակներին կապված կարմիր ու կանաչ քուղերով. դրանք սուրբ հուշագրեր էին, որ իրենց կանայք ու մայրերը կապել էին նրանց ձեռքերին)։

— Մի՞թե ես մենակ եմ մնացել...

Տկլորների ու մեռածների մեջ մերկ ու կենդանի շտաբս-կապիտանը երկար ժամանակ չորեքթաթ էր տալիս դիակների արանքում՝ սպանված զինվորների մեջ որոնելով գոնե մեկին, որը կենդանության նշան ցույց տար։ Սակայն ո՛չ, երևում էր, որ կատաղի ճակատամարտում միայն իր բախտն էր բերել. Ղրիմի գումարտակի զինվորները, հավատարիմ իրենց փառավոր ավանդույթներին, ընկան յաթաղանից, բայց թշնամուն կանգնեցրին ամրոցի մատույցներում։

— Ուրեմն մենակ եմ...

Մոտեցավ թափառական մի շուն, լիզեց նրա ոտքերի ներբանները։ Նեկրասովը նրան չէր վռնդում։ Այդպիսի շներ շատ կային. գեղեցիկ քերծե կամ թավամազ վզով խոշոր գայլախեղդ շներ. նրանք մոլորված թափառում էին թուրքերի դիակների մեջ՝ որոնելով սպանված տերերին։ Եվ երբ ցտնում էին, պառկում էին կողքին՝ ասես պահպանելով նրան։

Ինչ-որ տեղից լսվեցին մարդկային ձայներ, սայլի անիվների ճռռոց և գոմեշների բառաչ։ Յուրի Տիմոֆեևիչը բարձրացրեց գետնին ընկած մի երկարավուն, ճաղանման դաշույն՝ երախակալին փոխարինող արծաթապատ կլոր գլխիկով, և օկսեց դանդաղ սողալ Վանի ճանապարհի կողմը։ Ճանապարհի եզրերին աճել էին վիթխարի կռատուկներ։ Թաքնվեց նրանց հետևում, դիտելով, թե ինչպես է փոշու մեջ դանդա-

զ՝ բեն քարշ գալիս լծասայլը։ Բարձրակող սայլը լցված էր ինչ-որ պարկերով, և պարկերի վրա նստած էր մի գեղջուկ՝ ռուսական կանեփե վերնաշապիկով, իսկ նրա հետևում իր խայտաբղետ սարաֆանով ծաղկում էր հաղթանդամ մի աղջիկ՝ զամբյուղը դրած ծնկներին։ Ճիշտ ինչպես Ռուսաստանում։ Եվ սպան ոչ անմիջապես գլխի ընկավ, որ դրանք տեղական մոլոկաններն են Բայազետի մոտով գնում գյուղ։

— Բարի մարդիկ,— կանչեց նրանց Նեկրասովը,— օգնեցեք ինձ...

Մուժիկը կանգնեցրեց գոմեշներին, որոնք անմիջապես նստեցին փափուկ փոշու մեջ, անշտապ իջավ սայլից և հետ ծալեց կռատուկները, որոնց տակ պառկած էր Նեկրասովը։

— Կարծես թագավորական մա՞րդ է,— հարցրեց նա անվստահ։— Սպա՞ ես, թե հենց այնպես, հարկադրվածներից։

— Սպա եմ... իմ զինվորներն այնտեղ... մի մարդու պես...

— Գցի՛ր դանակը,— խստորեն ասաց մուժիկը։— Թե՞ Քրիստոսի առաջ մեղքեր գործելուց դեռ չես հոգնել։

Նեկրասովը դաշույնը խրեց փափուկ հողի մեջ, ամաչեց իր մերկությունից։

— Նյուշկա,— բղավեց մոլոկանը,— մի լաթ գցիր այստեղ։ Թագավորական մարդը ոչինչ չունի ամոթը ծածկելու համար...

Նեկրասովին պառկեցրին սայլի մեջ, ինչ-որ բանով լցված պարկերի արանքում և աղջիկը, զանգի նման բացելով լայն սարաֆանը, նրանով ծածկեց Նեկրասովին։ Սայլը շարժվեց, սաստիկ չխկչխկալով խանդակներում, և Յուրի Տիմոֆեևիչը, նայելով ներքևից վերև, տեսնում էր միայն երիտասարդ կնոջ ձգված քիթը, նրա պինդ, արևավառ այտոսկրերը և դուրս ցցված վարդագույն շրթունքները, որոնց վրա արևածաղկի կճեպներ էին կախված։

— Հեռո՞ւ է,— հարցրեց նա՝ ջանալով չտնքալ։

— Խուտո՞րը։

— Դե, ես արդեն չգիտեմ խուտո՞ր է, թե՞ գյուղ, ուր ինձ տանում եք։

— Հը՞,— աղջիկը դեպի նա շրջեց դեմքը, որն ուներ ռուսական գեղջկուհուն հատուկ մարմնեղ գեղեցկություն։— Ապին ձեզ կթաքցնի խուտորում։

— Քո անունն ի՞նչ է,— հարցրեց Նեկրասովը։

— Աննա է անունս։ Ապին ինձ Նյուշկա է կոչում։

Սայլը բարձրացավ սարնիվեր։ Նեկրասովը վիզը ձգեց՝ նայելով քաղաքի կողմը։ Բայազետի ամրոցը կանգնած էր հեռվում, ծխով ու փոշով պատած, իսկ մինարեթի աշտարակի վրա ծածանվում էր կայազորի դրոշը։

— Պառկի՛ր գոնե, պառկի՛ր,— նրա վրա բղավեց մուժիկը։— Առանց այն էլ վրադ հալ չի մնացել, բայց սպանությունը քեզ հա քաշում է։

Սուլթանական զինվորները մոլոկանի սայլին ձեռք չտվեցին և հանդիպեցին ընդամենը մեկ անգամ. ուղեկցում էին երկու ճռճռան սայլերի, որոնցով մի աստիճանավորի հարեմ էին տեղափոխում։ Թուրք կանայք մինչև աչքերը ծածկված էին չադրայով, սակայն չադրաներն այնքան թափանցիկ էին, որ Նեկրասովը նկատեց և այտերի վարդագույնը, և գեղուհիների թանձր սուրմայած հոնքերը։

Երբ քաղցրավենիներ կրծող այդ շքերթը ծիծաղելով ու փսփսալով անցավ Նեկրասովի մոտով, մոլոկանները թեքվեցին մի կողմ, և շուտով գոմեշները սայլը հասցրին մի խուտոր, որը հարմար տեղավորվել էր մի ոչ խոր լեռնահովտում։ Հինգպատանի ամուր խրճիթները պատուհաններով նայում էին դեպի կիրճը, ցանկապատերի ցցերի վրա կախված էին խեցամաններ ու լաթեր, տների տանիքներին հանգիստ ու վեհորեն շրջում էին արագիլները։

Եկան մուժիկները, այնպես մաքուր ու հաղթանդամ, ինչպես Նեկրասովին բերող Սավելիչը։ Իրար համբուրելով, կամացուկ աղոթքներով ու ասացվածքներով նրանք շտաբսկապիտանին տարան զով վերնասենյակը։ Պառկեցրին թախտին. պատի երկայնքով շարված էին երկաթապատ հսկայական սնդուկներ՝ լցված բարիքներով։ Տանը սրբապատկերներ չկային, նրանց փոխարեն Հին Կտակարանի սրբազան տեսքով գրասալիկներ էին կախված։

— Լա՛վ, նրան կողքի սենյակում կպահեմ,— ասաց Սավելիչը՝ նորից համբուրվելով մուժիկների հետ։— Ինձ համար դա մեղք չի լինի, թեև նա երդվյալ մարդ է։ Մինչև կաղդուրվելը թող օգտվի մեր բարիքներից։ Իսկ երեկոյան

հարկավոր է բերել պառավ Եպիֆանիային, որպեսզի նրան արագ բժշկի։

Նեկրասովին թաքցրին խրճիթի կցաշենքի մի փոքրիկ խցիկում, որտեղ պահվում էին չափից ավելի հասած, ճաքճքած դդումներ. Առաստաղի տակ չորացվում էին կանաչեղենի տրցակներ, որոնցից փչում էր շշմեցուցիչ ու քաղցր թմրահոտը։ Աննուշկան սպայի համար փայտե գավաթով բերեց բաց գույնի մեղր և եգիպտացորենի մի կտոր անթթխմոր հաց։

Շտաբս-կապիտանը բռնեց նրա խոշոր, խոնավ ձեռքը, սեղմեց տառապանքներից չորացած իր շրթունքներին։

— Շնորհակալություն,— ասաց նա և նկատեց, թե ինչպես երիտասարդ աղանդավորուհին վախեցած նայեց դեպի դուռը։— Ես ձեզանից այնքան շնորհակալ եմ... Թե չէ, ո՞ւր պիտի գնայի։ Ուղղակի բախտ էր։

Աղջիկը բռունցքի ուժեղ հարվածներով փափկեցրեց նրա գլխատակի տաք բարձերը։ Սրբիչը թափահարելով՝ դռնից դուրս քաշեց միակ ճանճը։ Հետո շեմից գլուխ տվեց նրան ու հեռացավ՝ շառագունած ու հպարտ։ Նեկրասովը հազիվ էր մեղրի համը տեսել, երբ իրեն ներշնչելով մոռանալ ցավի մասին, թեթև քուն մտավ, և միայն ուշ երեկոյան արթնացրին նրան։

Պայծառ լուսավորում էր նավթի լապտերը։ Նրա առջև, անատամ ժպտալով, նստած էր սարսափելի կորաքիթ մի պառավ հույն կին, այնպիսի զարմանալի գեղեցիկ աչքերով, որպիսին Նեկրասովը չէր հանդիպել նույնիսկ աղջիկների մոտ։ Շտաբս-կապիտանը գլխի ընկավ, որ իր առջև այն նույն պառավ Եպիֆանիան է, որի մասին ասում էր Սավելիչը, և նա սկսեց վեր քաշել վրայի շապիկը, որպեսզի ցույց տա վերքերը։

— Օհո՞,— ասաց հեքիմ կինը,— անիծված օսմանները չի հաջողվել սպանել պան սպային։

Եպիֆանիան խոսում էր ռուսերեն, բայց լեհական առոգանությամբ, և խոսակցության ժամանակ պարզվեց, որ պառավն իր երիտասարդությունն անցկացրել է Պուլավայում, որտեղ նա իշխան Չարտորիժսկիների պալատում փայլել է իր գեղեցկությամբ և դեռ լավ հիշում է կայսր Ալեքսանդր Պավլովիչին։ Ինչպես էր ճակատագիրը նրան բերել այստեղ՝ Արարատի տոթակեզ հովիտները, շտաբս-կապիտանը չհարցրեց և հնազանդորեն նրա առաջ բաց արեց իր սարսափելի կտրվածքները։

— Պանի արյունը երիտասարդ է, շուտ կլավանա,— ասաց հույն կինը և ծերությունից կեռված ոսկրոտ մատների համար զարմանալի զգուշությամբ սկսեց երկար ժամանակ գրեթե աննկատ տրորելով, հոտավետ մի քսուք ներմերսել վերքերի մեջ,— Ես երկար եմ ապրել ռուսների մեջ,— ասաց պառավը։— Եվ ես գիտեմ ինչքան համբերատար են նրանք։ Պանը երկար չի պառկի, վաղը նրա վերքերն արդեն մաքուր կլինեն։ —Օ-օ՜, ես կարողանում եմ բուժել։

Երբ պիտի թողներ Նեկրասովին, պառավը հանկարծ կիպ կռացավ սպայի ականջին և տաք շշնջաց.

— Ես ատում եմ նրանց... սուլթանական այդ շներին, որոնք կործանեցին իմ կյանքը։ Ես ատում եմ նրանց դեմքերն ու ադաթները, նրանց երեխաներին ու կանանց, ես կայրեի նրանց ամբողջ երկիրը։ Իմ երիտասարդության տարիներին հույներն ու ռուսները եղբայրներ էին, և ես երջանիկ եմ այժմ... Օ-օ՜, միայն աստված գիտի, թե ինչպես եմ ուրախանում, երբ տեսնում եմ ձեզ այստեղ, Բայազետում, և ձեր դրոշները աշտարակների վրա։

Նեկրասովը նայեց պառավի գեղեցիկ, չոր աչքերին և նրանց մեջ տեսավ ատելության այնպիսի կրակ, որ նույնիսկ ինքը սարսափեց։

— Եպիֆանիա մայրիկ,— ասաց նա,— ես ձեզ ոչ մի բան չեմ հարցնում։ Ճանապարհը Պուլավի դղյակից մինչև Բայազետ շատ հեռու է, և ես գլխի եմ ընկնում, թե ձեր ճակատագիրը որքան սարսափելի է եղել։

— Որդիս, սարսափելի բառը այն չէ։ Հպարտ ֆանարիոտուհուց, Բայրոնի և իշխան Իպսիլանտի բարեկամուհուց ինձ այստեղ դարձրին... ստրկուհի։

Նա գնաց։ Քանի՞ տարեկան է նա, եթե ճանաչել է դեռ Բայրոնին և եղել է Հունաստանի նշանավոր հերոս, ազատասեր ապստամբ Իպսիլանտի բարեկամուհին։ Նեկրասովի համար օդը դարձավ հեղձուցիչ, մեջքը կարծես խանձեցին կրակով, բայց այդ կրակը նրա համար նույնիսկ հաճելի էր։

ցավն արդեն հաղթված, դանդաղորեն նահանջում էր, և նա նորից քնեց, որ արթնանա կրակոցների հաճախակի ճայթոցներից։

Շտաբս-կապիտանն ընդլայնորեն ձգվեց դեպի լուսամուտը, նայեց մոայլ գիշերվա մեջ։ Բայաշևի ամրոցը հեռվում լուսավորվում էր հրաձգությունների փայլատակումներից, և կրակների շղթան ուրվագծվում էր գետի երկայնքով։

Նախասրահում ինչպես քայլերի ձայն լսվեց, ներս մտավ Աննուշկան։

— Դուք մի՛ վախեցեք,— ասաց ապշիկը։— Ձեր կազակներն են կրակում։ Նրանք խմել են ուզում, գետը շատ պետք է նրանց։

Աննուշկան իջեցրեց պատրույգը և վազեց լապտերը.

— Քնե՛ք...

6

Շտոկվիչը ջրի մնացորդը երեկոյան բաժանեց կայազորին և զայրույթով մի կողմ հրեց դղրդյունով գլորվող տակառը։

— Ջրի վրայից պահակությունը հանե՛լ,— կարգադրեց նա Ուլաստկինին։— Խմելու բան չկա։ Կարող եք լիզել հատակը, եթե ուզում եք...

Դա ասվեց կոպիտ կատակի ձևով։ Սակայն մի զինվոր իսկապես գլխով մտավ տակառի մեջ, լիզելով նրա բորբոսնած, խոնավ պատերը։ Այժմ ծարավը բռնել էր բոլորին, և այդ զինվորի վրա ոչ ոք չէր նայում որպես խելագարի։

Կարաբանովը, առանց սպայական սերթուկի, տաբատակալով գոտևորված, մի շապիկով միայն մոտեցավ Շտոկվիչին։

— Ահա, նայեցեք ու հիացեք,— ասաց պարետը՝ ցույց տալով տակառից դուրս ցցված զինվորի հետույքը։— Արդյոք դուք ևս մի բաժակ լաֆիտ չեի՞ք ցանկանա։

— Ես գալիս եմ ախոռներից,— ասաց Անդրեյը։— Ձիերը մարդկանց պատառոտում են ատամներով, հասկացնելով, որ ուզում են ջուր խմել։ Չգիտեմ ում համար ինչպես, բայց ինձ համար ավելի ծանր է նայել նրանց, քան մարդկանց տառապանքին։ Չէ որ նրանք չեն կարող հասկանալ, թե հանուն ինչի ենք մենք զոհաբերում։

— Հասկանում եմ,— պատասխանեց պարետը,— ձեր լորդը գին չունի, և իհարկե, նժույգն ափսոս է։ Սակայն մինչև որոշ ժամանակ ձիերն ուզած-չուզած պետք է համբերեն։

Նրանք կանգնած էին բերդապարսպի մոտ, որն առատորեն արձակում էր օրվա ընթացքում կլանած ջերմությունը, և սպաներն ակամայից, իրար հետ չպայմանավորվելով, հետ քաշվեցին պատից։

— Մինչև ե՞րբ,— հարցրեց Կարաբանովը։— Եվ ինչի՞ վրա եք հույս դնում։

Շտոկվիչը նայեց պորուչիկին պղտոր, վատ հայացքով։

— Ձիերին... կուտենք,— ուղղակի ասաց նա։— Եվ ձեր լորդին՝ նույնպես։ Սպայական ձիերին՝ առաջին հերթին։ Մենք գարի ունենք, բայց այն չոր-չոր ծամել չես կարող։ Ալյուրի պաշար կա, բայց որպեսզի նրանից բլիթներ թխենք, ջուր չկա խմոր անելու։ Ձիու միսը՝ ահա ինչը կփրկի մեզ։ Եվ ձեր լորդից էլ հենց կսկսենք...

— Դա արդեն ոչ,— ծաղրանքով առարկեց Կարաբանովը։— Ես առաջարկում եմ այդ ճոխ կերուխումն սկսել ձեր սիրելի կատվի ձագից։ Կատվի միսը, կարծում եմ, դեռ չի ձանձրացրել։

Կարաբանովը մտածեց, որ պարետը կարող է նեղանալ, բայց Շտոկվիչը նույնիսկ աչք չթարթեց և պատասխանեց նույն ոգով։

— Եվ կատվի ձագը կուտենք,— համաձայնեց նա։— Եվ կոշիկների ներբանները կտապակենք։ Եվ մեկս մյուսի արմունկները կկրծենք, բայց... Միայն թե դիմանանք։ Ես դեռ չեմ կորցրել Տեր-Ղուկասովից օգնություն ստանալու հավատս։

Կարաբանովը պատյանից մի քիչ դուրս քաշեց սուրը, մտախոհ նայեց սառը շեղբին և զարկով հետ գցեց տեղը։

— Լա՛վ,— ասաց նա։— Իմ գլխի՞ պես գլուխներ են կորչում...

Կապիտանը և պորուչիկը հեռացան տարբեր կողմեր։ Իրար հետ խոսեցին որպես սպաներ, սակայն որպես մարդ, նրանք քիչ էին հետաքրքրվում մեկը մյուսով։ Շտոկվիչը այդ պահին հիշեց գաղթականների մասին։ Մտածեց, որ, այնուամենայնիվ, նրանց իզուր է ներս թողել ամրոց։ Իրենք խմելու-ուտելու ոչինչ չունեն։

Ջրդերի ու թուրքերի ցասումից փրկված գաղթականներն ղրաղեցնում էին երկրորդ բակի շինությունները, և Եֆրեմ Իվանովիչին դեռ աստիճանների վրա խլացրեց կանացի աղմուկը, որն ստեղծվում էր խառնիխուռն խոսակցությունից, սոված երեխաների ճիչերից, պառավների փնթփնթոցներից և հայկական թախծոտ, լացակումած աղոթքներից։ Գաղթականները տեղավորվում էին գիշերելու. ինչ-որ տեղից արդեն խոտ էին գողացել տակները փռելու համար։ Խղճուկ կահ-կարասիքի փաթեթներով վրացուհիներն իրենց երեխաներին անջատում էին հրեաներից, հրեաները օսեթներից ու հայերից, թեև, թվում էր, որ հիմա բոլորը հավասար էին իրենց սարսափելի դժբախտության մեջ։

— Հապա մի լռե՛ք,— գոռաց Շտոկվիչը։— Լռե՛ք, թե չէ բոլորիդ դարպասից դուրս եմ հանելու, որ այստեղ ձեզ հետ դուր գլուխ չդնենք։

Հետո, սպասելով մինչև լռություն տիրի, պարետը հարցրեց, թե արդյոք նրանք գարի ստացե՞լ են, որ նա կարգադրել էր բերել խոհանոցից։ Այո՛, նրանք գարու համար շատ շնորհակալ էին ռուս սարդարին, ա՛յ, թե կարգադրեր մի քիչ աղ տային։

— Աղ էլ կտամ,— կտրուկ պատասխանեց Շտոկվիչը։

Կամարների տակ պահպանվում էր մի վիթխարի քարե սանդ, որի մեջ հարկ էր լինում երեք փթանոց սանդաթակով ծեծել ղադիի կամ մուֆտիի սուրբ անձը, եթե նա նահանջած լիներ հավատից։ Հիմա հենց այդ սանդի մեջ էլ լցված էր գարին, և երկու քրտնած, հաստամարմին հրեուհիներ ռազմաավարային հրացանների կոթերով ջանասիրությամբ մանրում էին այն։

— Իսկ ջուր չկա,— ասաց Շտոկվիչը։— Համբերեք։ Կաղակները գիշերը գուցե մի ելք գտնեն, և այն ժամանակ կարելի կլինի երեխաներին ջուր տալ։

Մի մութ անկյունից, վախեցած գազանիկի նման, նայում էր յոթ-ութ տարեկան մի աղջիկ։ Շտոկվիչը արդեն նկատել էր, որ բավական էր այդ աղջիկը դուրս գար այնտեղից, որպեսզի կանայք թքելով ու հայհոյելով հեռացնեն նրան իրենց երեխաներից։ Աղջիկը նայում էր ամրոցի պարետին, և ծամերի մեջ հյուսված մանր պիաստրները աղում

փայլում էին մթության մեջ։ Կապիտանը գլխի ընկավ, որ նա որբ է, թուրքի երեխա, հետևաբար և թշվառ երեխա. այստեղ նրան չեն տա ո՛չ մի կտոր շուրեկ և ոչ էլ մի կում ջուր։

Շտոկվիչն անկյունից դուրս քաշեց երեխային, ձեռքերի վրա առավ։

— Դու ինչպե՞ս ես ընկել այստեղ,— փաղաքշանքով հարցրեց նա։

Փոքրիկ թրքուհին հանկարծ թաթիկներով ամուր գրկեց պարետի հաստ, բոսորագույն վիզը և նրա բոլոր հարցերին թոթովում էր միայն մի բան.

— Ամա՛ն, ուռո՛ւս, ամա՛ն, ուռո՛ւս... ամա՛ն, ամա՛ն...

Շտոկվիչը աղջկա պստիկ տաք մարմինը սեղմեց կրծքին և հանկարծ կատաղաբար գոռաց կանանց վրա.

— Բոլորիդ կքշեմ գրողի ծոցը։ Սա ինչո՞վ է մեղավոր ձեր առաջ... Հրացանները տվեք այստեղ։ Այս հաստաքամակները այ թե գտել են հա, ինչով գարի ծեծել։ Այդպես էլ կխժռեք...

Մի ձեռքում բռնելով հրացանները, մյուսում՝ աղջկան, կապիտանը դուրս եկավ բակ, գնաց զորանոցները։

— Տղաներ,— ասաց Շտոկվիչը՝ դիմելով զինվորներին։— Ահա այս փսլնքոտը մերը չէ... Նա, ինչ էլ ուզում է ասես, թրքուհի է։ Հայերը և հրեաները չարանում են։ Թուրքերը նրանց շատ են դաղել։ Իսկ փոքրիկ աղջկա համար չէ՞ որ միևնույն է, թե ով է ինքը՝ թրքուհի, թե ռուս։ Դե, ուրեմն այսպես՝ վերցրեք նրան։ Կանանց ես երեխաներ չեմ վստահում...

Զինվորները խոժոռադեմ նայում էին պարետին, որի վզին փաթաթված էին մանկական թույլ ձեռքերը։ Շտոկվիչը հրացանները գցեց գետնին։

— Ի՞նչ եք լռում։

Պոտյոմկինն ուժեղ շփեց գլխի մուգ սպին, որ մնացել էր սրի հարվածից։

— Եթե նրան մենակ ինձ տաք,— ասաց նա,— ապա ես համաձայն եմ։ Աստված ինձ սեփական երեխաներ չի տվել։ Մինչ ես այստեղ կորչում եմ, կինս փեշը լրիվ մաշել է։ Իսկ չէ՞ որ ինձ երեխա է պետք։ Դե, ինչպե՞ս է անունդ... Արի այստեղ, սևամազ։ Ես քեզ համար, ինչ էլ լինի, ջուր կճարեմ...

Զինվորը ձեռքերը պարզեց աղջկան, բայց նա հանկարծ ատամիկներով դիպուկ ճանկեց նրա մատը։ Շտոկվիշը երեխային պոկեց վզից.

— Գնա՛, դե գնա, հիմա՛ր... Զինվորները չեն կծում։

Ծերունի գրենադյոր Խրենովը լռելյայն ձեռքը խոթեց ծոցը։ Հանեց ծաղկավոր մի քսակ, որը կախ էր ընկած խաչի կողքին հումամշակ կաշվե փոկից։ Ատամներով թուղթը պինդ հանգույցը և զինվորական աղբատիկ իրերի մեջ երկար որոնում էր ինչ-որ բան։

Վերջապես հանեց մի կտոր էժանագին սառնաշաքար, պարզեց աղջկան։

— Ահա, տես ինչ համեղ բան է։ Դեռ Թիֆլիսից եմ պահել քեզ համար։ Ծծիր, հարազատս։ Թթվաշ է...

Շտոկվիշը բացեց կաշվե քրտնած դրամապանակը։ Հանելով ոսկե «լոբանչիկը»[1], տվեց ծերունի գրենադյորին.

— Վերցրու, բավթառ։ Վերցրու, քանի չեմ փոշմանել։

— Իսկ ինձ ինչի՞ համար,— զարմացավ ծերուկը։

— Ծառայության համար...

Խրենովը վերցրեց «լոբանչիկը» և խոստացավ անմիջապես խմիչքի տալ, հենց որ դուրս պրծնի Բայազետից։

— Իսկ այժմ,— ասաց Շտոկվիշը՝ նայելով ժամացույցին,— այժմ դուք չպակոեք քնելու։ Եվ պատրաստեք տիկերը, հարկավոր է ջուր ճարել։ Վիրավորների համար է պետք։ Կանանց համար է պետք։ Մեզ համար նույնպես պետք է...

Խիզախներ, որոնք ցանկանում էին գնալ հանդուգն արտագրոհի, այդ գիշեր շատ չհավաքվեցին։ Ասենք շատ հարկավոր էլ չէր, գործը վտանգավոր էր և իրարանցում չէր կարող հանդուրժել։ Արտաքնոցից, որի հնդուկաթափ անցքի միջով պետք է դուրս գային ամրոցից, թանձր ու ծանր հոտ էր գալիս։ Գետնահարկի սրահների մթության մեջ զնգզնգում էին զենքերն ու սափորները, զինվորներն օդը դուրս էին մղում տիկերից, որպեսզի դրանք ավելի հարմար ծալվեն։

[1] Լոբանչիկ — Հոլանդիայի ոսկե տարանոցի ժողովրդական անունն է, որը գաղափարի հատվում էր Ռուսաստանում՝ 1735-ից մինչև 1868 թ. և պատերազմների ժամանակ դրանցով վճարվում էր Կովկասում և Կենտրոնական Ասիայում կռվող ռուսական զորքերի ոռճիկը (հեղ.)։

— Ո՞վ է գնում,— հարցրեց Շտոկվիշը։— Ասե՛ք անունները։

— Պյանկով... Մոչիդլորեր... Սահակյան... Ուշաստկին... Գերիլչուկ... Պողոսյան... Ցիսիձե... Պետյոմկին... Նեմնիուշի... Օժոգին... Նեսիրով... Փափազյան... Յագարաև... Աղամյուկ... Տրյոխժոնենի...

— Վե՞րջ,— Շտոկվիշը լապտերը բարձրացրեց գլխից վեր՝ նայելով կամավորներին։— Իսկ այդ ո՞վ է այնտեղ։ Ջինի՞ թե դուք եք, Կարաբանով։ Իսկ դուք ինչո՞ւ չեք ուզում նստել ամրոցում։

Անդրեյն ուղղեց գոտուց կապված փայտյա պատյանով չեչենական դաշույնը, այս անգամ նա առանց ուսադիրների էր, միմիայն զինվորական վերնաշապիկով, գլխին մաշված, վերևից ճզմած կազակային փափախ էր։

— Ուզում եմ մի քիչ թարմանալ,— պատասխանեց նա։

— Այդպիսի թարմացումը ձեզ վրա կարող է թանկ նստել։

— Կարծում եմ, որ ջրից թանկ չի լինի,— պատասխանեց Կարաբանովը։

— Լա՛վ, այդ դեպքում դուք եղեք ավագը։

Մթության միջից անսպասելիորեն երևաց կանացի մի նուրբ կերպարանք։ Ագլայա Խվոշչինսկայան մուգ հագուստով էր, ինչպես միանձնուհի, բայց Շտոկվիշը գլխի ընկավ, որ այդ զգեստը հազիվ թե սգի նշան լիներ։ Ավելի շուտ Սիվկինն էր ստիպել նրան սև համազգեստ հագնել, որպեսզի չգրավեր թուրքական հրաձիգների ուշադրությունը։

— Եվ դո՞ւք, տիկին,— զարմացավ Շտոկվիշը, լապտերը ավելի բարձրացնելով, որպեսզի տեսնի կնոջ դեմքի արտահայտությունը։

— Ես ևս կուզենայի իջնել գետափ։ Հոսպիտալում վիրակապերը չեն բավարարում։ Ես հները կլվանամ։

— Այդ արդեն ոչ,— պատասխանեց Կարաբանովը՝ կնոջ ձեռքից խլելով արյունից և քսուքներից չորացած վիրակապերի փաթեթը։— Դա ձեզ վայել չէ։ Թույլ տվեք ինքս անեմ։

Կամավորները խաչակնքելով ու հայհոյելով դուրս եկան զարշահոտ անցքով և դիտելով չորս կողմը՝ շղթայաձև ձգվեցին մթության մեջ։ Շուրջը տագնապալի էր, սոսկալի, ինչպես տեղ հաչում էին շները, մերթընդմերթ սուլում էին գն-

գակները։ Եֆրեյտոր Ուլաստկինի ձեռքի սափորը, քարին կպչելով, զրնգաց, և վախմիստր Տրյոխժոննին, ավազի իրավունքով, հետևից բռունցքով խփեց վզակոթին։

— Փնթի՛,— շշնջաց նա,— դե փորձիր մեկ էլ թրխկացնել քո ինքնաեռով...

Կարաբանովը կեղտոտ վիրակապերի փաթեթը, իհարկե, տեղնուտեղը հանձնեց զինվորներին, իսկ ինքը, դաշույնն առաջ պահած, գաղտագողի գնում էր կամավորների առջևից՝ իրարից հեռացնելով խաղողի կպչուն ճյուղերը։ Զորակի ուղղաբերձ զառիթափից նա սահեց մեջքի վրա՝ ոտները հերթով բարձրացնելով ու դնելով քարերին։ Նրա հետևից, ավազի աղմկալից փլվածքներ առաջացնելով, ներքև գլորվեցին և մյուսները։ Կրակոցների իրար հաջորդող համազարկերը խախտեցին լռությունը, շտուցերային գնդակներն սկսեցին ծանրորեն թրմփալ ավազի մեջ։

Կամավորները պպզեցին։

— Չեն քնել սրիկաները,— ասաց Ուլաստկինը։— Չեն ուզում մեզ ջուր տալ...

Ափ դուրս գալով՝ Կարաբանովն անմիջապես կպավ փրփրաբաշ գետին՝ ագահորեն ու երկար կլանելով մուգ, սառը հեղուկը։ Նրա կողքին, գրեթե աղոթելու կեցվածքով ջուր էին ծծում կազակներն ու զինվորները։ Մյուս ափին սկսեցին տալիս խրճիթները, առկայծում էին խավար լույսերը, քամու շունչը բերում էր վառարանների քաղցր ծուխը։

Կլկլացնելով և պղպջակներ արձակելով, տիկերն արդեն ջուր էին խմում՝ լցվելով աննման հեղուկով։ Որպեսզի լցնի երկար սափորը, Դենիսկան, մինչև ծնկները ջրի մեջ, դանդաղ գնաց գետի մեջտեղը։ Սիրտ առնելով՝ վերադարձավ՝ ցցված ամբողջ հասակով մեկ։

— Ձերդ բարեծնություն,— դիմեց նա Անդրեյին,— հիմա նոր միայն գլխի ընկա։ Թույլ տվեք մի քիչ հեռանալ։

— Իսկ ո՞ւր։

— Դե՛ այստեղ, ոչ հեռու։ Ախր հարկավոր է ծխելու մի բան ճարել։

Կարաբանովը ծարավն արդեն հագեցրել էր, այստեղ մնալը ձանձրացրել էր, և նա առաջարկեց.

— Լա՛վ։ Գնանք միասին...

Ճեղքելով ջրի մածուցիկ սևությունը՝ ծանծաղուտով անցան մյուս ափ։ Անհետանալով ցանկապատերի ստվերներում՝ արագությամբ անցան ճանապարհը, մի քիչ նստեցին կծռուքի թփերի մեջ։ Շուրջը խաղաղ էր։ Միայն հայկական քաղաքից միահամուռ ծիծաղի պոռթկումներ էին լսվում։ Կարաբանովի ականջին երբեմն ինչ-որ թրխկոց էր հասնում, ասես հարբած մարդիկ ծեծում էին փակ դուռը։

— Ա՛յ թե մի ոչխար լիներ,— երազելով ասաց Դենիսկան։— Խոզը, իհարկե, նույնպես վատ չէ։ Բայց դժբախտությունն այն է, որ անիծվածը կճղճղա։ Ես խոզերի հարցում քիչ փորձ ունեմ։ Ասում են ճարպիկ մարդիկ մի տեսակ ոլորում են խոզի պոչը, որ գողանալու ժամանակ չաղմկի։

Մտան մի նեղ բակ։ Նրանց առջև սկսին էր տալիս կիսաքանդ մի խրճիթ։ Դենիսկան հրեց դուռը, բացվեց։ Որոշեցին ներս մտնել։ Լիակատար մթության մեջ շոշափելով սնդուկներ ու դարակներ որոնեցին։ Այստեղից տաք արյան թարմ հոտ էր գալիս, կարծես տանտերերը քիչ առաջ անասուն էին մորթել։ Պորուչիկի մատները, սահելով պատի երկայնքով, քերծում էին կավե անողորկ ծեփը։ Դենիսկան, կպչելով ինչ-որ բանի, սայթաքեց, ընկավ և հանկարծ վախեցած գոռաց.

— Օ՜յ, մի լույս վառիր, ձերդ բարեծնություն, լուցկի՛ վառիր։

Կարաբանովը վառեց լուցկին և անմիջապես հանգցրեց.

— Շո՛ւտ գնանք այստեղից։ Քեզ պես հիմարի հետ գործ լինի, ինքդ էլ ուրախ չես լինի։

Դուրս եկան խրճիթից, դուռը հետևից ամուր փակելով, ասես ուզում էին իրենց հիշողության մեջ հավիտենապես փակել տեսած պատկերը։

— Իսկ ինչո՞ւ ես ճչում, հիմա՛ր,— կշտամբում էր Կարաբանովը՝ հայհոյանքով թաքցնելով վախը։— Է՛ նրանք ընկած են այնտեղ։ Երևի երկու օր առաջ են սպանել։ Իսկ գոռալդ ինչի՞ համար է։ Մեզ կարող էին լսել...

Դենիսկան արդարանում էր...

— Ես որ ընկա, հարյուրապետ, ուրեմն, ձեռքս առաջ կարզեցի։ Եվ ուղիղ նրա դեմքին։ Ափով հենց... Ձեռքիս տակ քիթ եմ զգում, մարդկային շրթունքներ։ Ինձ վատ զգացի։ Կարծես վատ երազ եմ տեսնում։ Իսկ այդտեղ էլ երեխաներն

են սեղմված կողքին։ Սարսափելի՜ է, ի՜նչ են անում նրանք հայերի գլխին...

Կարաբանովը սեղմեց կազակի ձեռքը, որպեսզի նա լռի։

— Սո՜ւս, սպասի՜ր... Ռեդիֆներ են գալիս...

Դալարվելով անասունների համար պատրաստած հյուսածանցերի և ցանկապատերի միջև՝ նրանց մոտով երկու թուրքական զինվոր անցան։ Նրանցից մեկն ուսի վրա տանում էր մի շատ հին պատրույգավոր հրացան՝ լայնաբերան փողով։ Երկրորդ թուրքը հարբած էր։ Կարաբանովի թիկունքում խղճալի ու բարակ ձայնով զրնգաց պատյանից ազատված դաշույնը։

— Ո՞ւր,— հարցրեց նա։

— Հարկավոր է ծխախոտ ձեռք բերել,— պատասխանեց Դենիսկան և, կատվի նման մեջքը ճկելով, աբրեկի անաղմուկ վարժությամբ ցատկեց ցանկապատի վրայով։

Կարաբանովը պտտեցրեց ատրճանակի թմբուկը։ Պատրաստվեց անհրաժեշտության դեպքում օգնության գնալ։ Սակայն շուտով երկու նվաղ բացականչություն, ասես երկու ճողփյուն, հասան նրա ականջին, և Օժոգինը հետ վերադարձավ, ձեռքին երկու քիսա.

— Սա լաթակիական է։ Աղայական ծխախոտ։ Սա պիտի ծխել միայն բարակ թղթով։ Գուցե դուք ինձ մի գիրք տաք, որ արդեն կարդացել եք...

7

> Երբ բժիշկ Սիվիցկին, դիմավորելով նեռս մտած խվաշինսկայային և ցույց տալով ատրճանակը, ասաց, որ իրեն հանձնարարված է ամրացում բուրեր երևալու դեպքում գնդակահարել նրան, եթե նա չցանկանա ընկնել բուրերի ձեռքը, ապա այդ առաջարկությանը Ագլայան պատասխանեց լիակատար համաձայնությամբ...
>
> Կ. Հեյնս

Օրը վերջացավ։ Այն նշանավոր էր նրանով, որ ամբողջ օրը կայազորում ոչ մի էական հրաման չէր արձակվել։ Սպաները կարծես հասկանում էին, որ հրամանները հիմա անօգուտ են և պաշարված ամրոցի բախտը համարձակորեն

վստահել էին շարքային զինվորների արիությանն ու տոկունությանը։

Սակայն գիշերը հրաձգությունը դադարեցնելու հնարավորություն էր տալիս, և այդ դադարը չէր կարելի նվիրել միայն ցերեկվա լարվածությունից հանգստանալուն։ Անհրաժեշտ էր քար ջարդել, որպեսզի պատուհանները վերածեն մարտական հրակնատների, ավելի անվտանգ տեղ փոխադրել գումակային և հրետանային բեռնասայլերը։

Վերջապես պրապորշչիկ Կլյուգենաուն, որը ղեկավարում էր այդ աշխատանքները, պարտավոր էր նաև ապացուցել հարբած Պացևիչին, որ այն ամենը, ինչ հիմա կատարվում է կայազորում, արվում է այնպես, ինչպես գրված է այդ մասին գեներալ Բեկալի «կանոչ գրքույկում»։

— Հավատացե՛ք, պարոն գնդապետ,— համոզում էր նրան ինժեները,— մարդիկ ամեն ինչ կատարում են խելացիորեն։

— Իսկ ինձ բոլորովին պետք չէ, որ նրանք... կատարեն։ Ես չեմ կարող հրամանատարություն անել, եթե կարգուկանոն չլինի։

— Հենց բանն էլ այն է, պարոն գնդապետ, որ հիմա ոչ ոք հրամանների կարիք չի զգում։

— Դե ի՞նչ եք այստեղ ցիցերոնություն անում, պրապոր,— նորից բարոնի վրա հարձակվեց Պացևիչը։— Դուք ինչ գերմանացի եք, սատանան տանի, եթե չեք ուզում կարգուկանոն լինի։

— Ի՞նչ արած,— պատասխանեց ֆոն Կլյուգենաուն,— չեմ ուզում վիճել։ Ինձանից, ուղղակի ասենք, վատ գերմանացի է ստացվել։ Բայց որպես ռուսական սպա, ես վերջինը չեմ և այդ պատճառով էլ երիտասարդ հասակից սովորել եմ վստահել ռուս զինվորի հնարամտությանն ու քաջությանը։

— Այո՜, նրանք քեզանից խելացի են,— ցույց տվեց Պացևիչը զինվորներին։

Կլյուգենաուն բաղաքավարի խոնարհվեց. լավ է, որ խոնարհվելը մեջք չի կոտրում։

— Եվ, այնուամենայնիվ, չեմ համարձակվում վիճել,— ասաց նա։— Մեզ մոտ, Ռուսաստանում, վաղուց այնպես է ընդունված, որ սուրբգրյալները իրենց պետերից միշտ էլ ավելի խելացի են։

Դրանով խոսակցությունն ավարտվեց, և Պացևիչը, ոտքերը քարշ տալով, գնաց Իսմայիլ խան Նախիջևանսկու խցիկը։ «Խմում են սրիկաները»,— մտածեց Կլյուգենաուն, բայց ժամանակ չուներ դրանից եզրակացություններ հանելու։ Մայոր Պոտրեսովը կանչեց նրան իրենց բակը, որպեսզի քննարկի մարտկոցաթմբի բարձրացման հարցը։

— Հարկավոր է թեքել մարտկոցաթումբը,— խորհուրդ տվեց Կլյուգենաուն։— Այդ դեպքում հրանոթը կարող է խփել հողապատնեշի վրայով, և առավոտյան Ֆուլիկ փաշան հաճելիորեն կզարմանա ձեր հնարամտությունից։

Պոտրեսովը գլխարկը հրեց ծոծրակի վրա, քորեց քրտնած ճակատը։

— Եթե միայն իմանայի, թե ո՞ր կովանոցում է նա թաքնվում։ Եվ, հավատացեք, իմ Կիրյուխա Պոստնին նրան կթրխկացներ այնտեղ, իր հարեմի հետ միասին...

Կլյուգենաուն հոգնած նստեց գետնին, տրորեց ծնկները.

— Տնքում են անիծվածները... մայոր։ Դուք պատահաբար չե՞ք տեսել, այնտեղ ընկած է Եկատերինա Մեծի թագավորության ժամանակվա մի հին հրանոթ՝ «միաեղջյուրը»։

— Տեսել եմ,— պատասխանեց Պոտրեսովը։— Հենոցն արդեն փտել է։ Ամբողջովին փշրունք է։ Դրան ավելացրած նաև փչուկները։

— Դատարկ բան է։ Հենոցը կարելի է սարքել։ Ես մտածում եմ այսպես, Նիկոլայ Սերգեևիչ, եթե կարիքն ստիպի, վատ չի լինի այդ «միաեղջյուրը» գործի դնել։

— Վախենում եմ տրաքի։ Վառոդները հիմա ուրիշ են, ուժեղ են։

— Իսկ երևի,— անրջելով ասաց Կլյուգենաուն,— այդ «միաեղջյուրը» փառավոր երիտասարդություն է ունեցել։ Ո՞վ է բերել այստեղ։

— Կարծեմ իշխան Ճավճավաձեն։ Նա նույնպես բանաստեղծություններ էր գրում...

Պրապորշչիկը երկար ժամանակ չէր արձագանքում։ Նրա դեմքը մթության մեջ չէր երևում. հանկարծ նա ասաց.

— Տարօրինակ է։ Նա բոլորովին լուրջ չի վերաբերվում ինձ հետ։ Նրա աչքին ես միշտ տարօրինակ եմ և ոչ ավելի։ Իսկ ահա Կարաբանովը, ուրիշ է։ Զվարճալի մարդ է, և

...Նրա մեջ մի խրթին բան կա,
որ խելոքություն է անում հիմար ձևով,
իսկ հիմարություն՝ խելոք ձևով։

Թեև կայազորում շատերն այդ բանը չեն հասկանում։ Նույնիսկ Ագլայան...

— Ինչո՞ւ եք այդպես ասում,— զարմացավ մայորը։

— Դա ես Ագլայա Եգորովնայի մասին եմ ասում,— ազնվորեն խոստովանեց Ֆյոդոր Պետրովիչը։— Հիմա ես վախենում եմ երևալ նրա աչքին։ Ասում են նա ամբողջ գիշերը անցկացրել է այնտեղ,— բարոնը ցույց տվեց գետինը։— Սիվիցկին անընդհատ քնաբեր դեղեր է տվել խեղճին, բայց նա այդպես էլ ամբողջ գիշերը չի քնել։

— Մեղք է այդ կինը,— համաձայնեց Պոտրեսովը։— Նույնիսկ շատ։ Ուղղակի սիրտդ տակնուվրա է լինում, երբ մտածում ես։ Բայց առանց նրա մեզ համար, թվում է, ավելի վատ կլինի։ Ինչ էլ ասեք, մենք, այնուամենայնիվ, մեր բնույթով աքլորներ ենք։ Երբ կինը նայում է մեր կողմը, մենք միշտ էլ ուզում ենք հերոս լինել...

Ջնայած ուշ ժամին, Սիվիցկին դեռ չէր պառկում քնելու։ Նա նստած էր իր անկյունում, որը դեղատնից անջատված էր երկու սավանով։ Նրա արմունկի մոտ, մի քիչ կծած շուրեկի կողքին, դրված էր մի նոր ատրճանակ՝ սադափե կոթով։ Բժշկի առջև սեղանին թափված էին խաղաթղթեր, որոնցից կապիտանը կանացի «Ամազոնկա» պասյանս էր դասավորում։

— Եկա՞ք,— ասաց նա։— Դե լա՛վ։

Կլյուգենաուն նստեց դիմացը.

— Դուք ջուր ստացա՞ք։

— Երկու դույլ։ Շնորհակալություն կամավորներին։

Լռեցին։

— Տարօրինակ ատրճանակ է,— ասաց բարոնը։— Ես բոլորովին ծանոթ չեմ նման սիստեմի։

— Դա «լե-ֆոշե» է։ Զգույշ։ Լցված է։

— Ձե՞րն է,— հարցրեց Կլյուգենաուն։

Սիվիցկին առաջին անգամ անջատվեց պասյանսից և մոայլ նայեց պրապորշչիկի աչքերի մեջ։

— Այո՛,— պատասխանեց նա բազմանշանակ։— Դա ինձ նվիրել է հանգուցյալ Նիկիտա Սեմյոնովիչը։

Կլյուգենաուն իրեն մոտեցրեց ատրճանակը, զարմացավ.

— Օ՜հո, ինչ հազվագյուտ բան է։ Գնդակները մելքիորից են։

— Այո՛, այո՛,— ասես մեղավորի նման քմծիծաղեց Սիվիցկին,— հենց մելքիորից են։ Թեև, դրանից մահը ավելի գեղեցիկ չի դառնում... Ձեր արմունկը հետ քաշեք, բարոն, դուք ինձ խանգարում եք։

— Ա՜խ, ներեցե՛ք, կապիտա՛ն։ Ես պատահաբար դիպա ձեր խաղաթղթին։

Սիվիցկին հանկարծ անսպասելիորեն բորբոքվեց և, ցիրուցան անելով պասյանսը, խաղաթղթերը հարվածով սեղանից թափեց ցած։

— Գրողի ծոցը ամեն ինչ,— զայրացած ասաց նա։— Եթե դուք հիմա չգայիք, ես ինքս կգայի ձեր հետևից։

Բարոնի կարճատես աչքերը նայում էին բժշկին զննող հայացքով.

— Ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ։

— Ինչո՞վ,— Սիվիցկին վեր կացավ և, ձեռքերը կոխելով կեղտոտ սերթուկի կախ ընկած գրպանները, հետ-առաջ քայլեց նեղ սենյակում։— Դուք ինչո՞վ կարող եք ծառայել ինձ,— կրկին հարցրեց նա։— Ահա, լսե՛ք...

...Զորախմբի հետ Արարատյան հովիտը գնալու ժամանակ գնդապետ Խվոշչինսկին իր կնոջը թողել էր կապիտան Սիվիցկու խնամքին։ Որպես փորձված սպա, նա համոզված չէր հետախուզության հաջող ելքի մեջ, և հեռուստ կանխատեսում էր, որ Բայազետին սպասում է պաշարում, որի վերացումը հեշտ չէր լինելու։ Ի՞նչ կարող էր հանձնարարել Նիկիտա Սեմյոնովիչը իր հին բարեկամին՝ իր զոհվելու նախօրեին։

— Այն ժամանակ մենք երկար զրուցեցինք,— պատմում էր Սիվիցկին, չնայելով պրապորշչիկին։— Արդեն գիշեր էր... Գինի կար։ Այո՛։ Բայց դա չէր խանգարում։ Ես, իհարկե, չէի համաձայնում։ Եվ ահա այդ ատրճանակը։ Հիմարություն։ Ես այդպես էլ ասացի նրան՝ հիմարություն։ Սակայն նա համառ էր։ Նա ինձանից հեռու էր տեսնում... Դուք, բարոն, հասկանում եք, այստեղ նրան կպղծեն ու կվանեն։ Ինչպես մի պարկ ընկույզ։ Նրանց Ղուրանի մեջ այդպես էլ գրված է՝ կինը—ինչպես մի պարկ ընկույզ։ Եվ նա վախենում էր դրանից։ Նա չէր կարող նրան այդպես թողնել։

Կլյուգենաուն հանգիստ տեսք ուներ, միայն ակնոցի տակից հաճախակի թարթում էր աչքերը։

— Իսկ դո՞ւք։ Դո՞ւք ինչ ասացիք,— հարցրեց նա։

— Իսկ ես՝ ի՞նչ... Ես ասում էի՝ ո՛չ, հիմարություն է... Ահեղեղություն։ Նա ինձ համոզեց։ Եվ վերցրի... Ես վերցրի... ահա, սա,— Սիվիցկին ցույց տվեց ատրճանակը։— «Լեֆոշե» սիստեմի։ Յոթ փամփուշտ ունի։ Գնդակները մելքիորից են։ Չէ՞ որ ես բժիշկ եմ։ Եվ գիտեմ՝ որտեղին պետք է կրակել։ Մի գնդակն էլ բավական է։ Տեղն ու տեղը կսպանի... Դուք կարծում եք ինձ համար հե՞շտ էր խոսք տալ նրան։

— Չեմ կարծում։

— Բայց ահա հիմա ավելի ծանր է։ Բաշիբոզուկները ոռնում են պատի հետևում։ Սոսկալի է... Եթե նրանք խուժեն այստեղ, ես գիտեմ, թե դա ինչով կվերջանա։ Մենք այն ժամանակ երկար խոսեցինք։ Միայն մի վերապահում կար. «Եթե նա համաձայնի այդ բանին»։

— Եվ նա... համաձայնե՞ց,— հարցրեց Կլյուգենաուն։

— Ի՞նչ համաձայնել,— բռնկվեց բժիշկը։— Ես դեռ խելքս չեմ կորցրել, որ կնոջը հարցնեմ այդ մասին։ Ամբողջ կյանքումս ես բուժել եմ մարդկանց և ոչ թե սպանել...

Սիվիցկին ատրճանակը սեղանի վրայով վճռականորեն հրեց դեպի պրապորշչիկ Կլյուգենաուն։

— Ահա և բոլորը,— հոգնած ասաց նա։— Հուսով եմ, որ դուք չեք մերժի ինձ։ Ես գիտեմ, որ ձեր հարաբերությունը նրա հետ շատ ավելի բարդ է, քան շատերը կարծում են։ Եվ դուք ինքներդ չեք ցանկանա, որ նա ընկնի ինչ-որ մեկի կեղտոտ ճանկը։

Կլյուգենաուն ատրճանակը իրենից հեռացրեց դեպի սեղանի մեջտեղը։ Այժմ այն դրված էր նրանց միջև, փայլելով իր արջնած փողով և գրեթե գեղեցիկ՝ իր կոտրված գծերի երկաթյա այլանդակության մեջ։

— Դուք... սխալվել եք,— եզրակացրեց Կլյուգենաուն։— Իմ ձեռքը ձերից ավելի ուժեղ չէ։ Ես կարող եմ սպանել ինձ։

Կարող եմ, վերջապես, սպանել և ձեզ։ Բայց կրակել կնոջ վրա, որն ինձ համար դարձել է... Ո՛չ, պարոն կապիտան։ Դուք իմ ազնվությունը, հավանաբար, շփոթել եք ինչ-որ խիստ մեծացված արշինով։

Սիվիցկին, դանդաղորեն, համարյա ջանք գործադրելով, ասաց.

— Սակայն ես գիտեմ ձեր ոգու ուժը, բարոն... Դուք չեք համարձակվի մերժել ինձ։ Ես մեկ առ մեկ աչքի եմ անցկացրել կայազորի բոլոր մարդկանց, ով կարող էր ընդունակ լինել դրան։ Ո՛չ, միայն դուք անհրաժեշտ պահին չեք վարանի։ Չէ՞ որ դուք բանաստեղծ չեք, այլ զինվոր, Կլյուգենաու։ Դուք ի ծնե զինվոր եք...

— Ո՛չ,— նորից կրկնեց Կլյուգենաուն։

Սիվիցկին, հենց միանգամից ուսերը կախելով, ընկավ աթոռին։

— Աստված իմ, այդ դեպքում ես ինչո՞ւ պատմեցի ձեզ այս բոլորը։ Չէ որ այդպիսի բանը ոչ մեկին չեն ասում... Ես ուղղակի շատ հիմար եմ։

— Ո՛չ,— հատու ասաց Կլյուգենաուն՝ վեր կենալով։

Բժիշկը բարձրացրեց գլուխը։

— Իսկ եթե ես ձեզ խնդրե՞մ։ Աղաչե՞մ։ Հասկացեք, որ ես այլ կերպ չեմ կարող...

— Ո՛չ, պետք չէ աղաչել ինձ։ Dixi.— վերջացրեց բարոնը լատիներեն, և բժիշկը նրան հասկացավ։

Կլյուգենաուն գնաց։ Սիվիցկին հանկարծ ծռեց հաստ, անմաքուր բերանը, նրա ճմռթված դեմքը հանկարծ ծերունական ձևով թորշոմեց, և նա խռոցով իրենից դուրս մղեց առաջին հեկեկոցը։ Հետո շարունակելով լացը՝ կապիտանը հասավ իր անկողնուն, այս ու այն կողմ գցեց սերթուկը, շալվարը և ճտքակոշիկները։ Նրա հեկեկոցը ցավոտ էր, գրեթե տանջալի, բայց բժիշկը անկարող էր զսպել իրեն և, հրաշը հանգցնելով, շարունակեց լաց լինել մթության մեջ։

— Անիծված ճակատագիր,— փնթփնթում էր նա՝ վերհիշելով իր անհրապուրյ, ամուրիի կյանքի բոլոր անհաջողությունները։— Ոչ մի ուրախություն... Շնից վատ է։ Իսկ այդտեղ նաև սա...

Դուռը բացվեց, և մեկը ներս մտավ։

— Ով կա այստեղ,— հարցրեց բժիշկը։— Այդ դո՞ւ ես, Նենյուկով։

— Ո՛չ, ես եմ... Կլյուգենաուն։

Սիվիցկին երկար լռեց մթության մեջ։

— Ձեզ ի՞նչ է հարկավոր, բարոն։

Ֆյոդոր Պետրովիչն ասաց.

— Գիտեք ինչ, ես, ինչպես պետքն է, մտածեցի։ Դուք չինեք, ես կլինեմ... Որևէ մեկը դա պետք է կատարի։ Իսկ դուք, վախենում եմ, չկարողանաք։ Սակայն կնոջը հանձնել անարգման, դա... սպանությունից ավելի վատ է։ Եվ ահա ես եկա ասելու ձեզ՝ տվեք ինձ ատրճանակը...

— Կարող եք վերցնել։ Այնտեղ է, սեղանի վրա։

Կլյուգենաուն խավարի մեջ երկար ափլփում էր սեղանը՝ որոնելով ատրճանակը։

— Թմբուկը լի՞ք է,— հարցրեց նա։

— Այո՛, յոթ փամփուշտ։

— Լա՛վ, ես գնում եմ։ Բարի գիշեր, կապիտան։

— Շնորհակալություն։ Այժմ ես հանգիստ եմ, բարոն։

8

Վաղ առավոտյան քաղաքի բոլոր մինարեթներում մուեզզիններ երևացին։ Բռնելով ականջաբլթակներից կամ ձեռքերը այտերին դիմահար տալով, ինչպես վշտի ժամանակ անում են ռուս կնիկները, մուեզզինները երանությամբ փակեցին աչքերը և վայրենաբար, բայց համերաշխ սկսեցին մի ներդաշնակ մեղեդի.

— Լյա իլաքե իլ ալլա՞հ։— Այդ հրեշավոր վայնասունի մեջ լսվում էր ինչ-որ վայրագ ու ահեղ բան, որը կարծես սարսափելի շարագործության կոչ լիներ...

Թուրքական պահնորդները բաց էին անում սաջաթները և տեղնուտեղը, պահակության ժամին, սկսում կատարել սուրբ «իթիկաֆը»։

Մեյդանի մուրացկանները թողնում էին իրենց ցնցոտիներում եղած միջատների մոլեգին որսը, միջատներ, որ շրջահայաց ալլահը, լվացման ծիսակատարության հետ միասին, նախատեսել էր ուղղահավատների համար, և նույնպես կռանում ծունր դնելու։ Դարբինները վայր էին դնում

մուրճերը, նստում աղոթքի, ինչպես ուտիճները դարբնոցների գարշահոտ ճեղքերում, և ապագա յաթաղանների շիկացած երկաթը դանդաղորեն հանգչում էր զնդանների վրա։ Միայն մուսուլման կանայք էին մնացել անգործ, ամենազոր ալլահը նրանց հետ էր մղել կրոնից, և նրան կարդին տեղ չէր տրվում ընդամենը այն աշխարհում, որտեղ ապրում են նրա մրցակիցները՝ տգեղ հուրիները...

— Ջո՛ւր բերեք,— կարգադրեց Ֆուիկ փաշան։

Փաշան ողողեց ձեռքերը արծաթե կլոր գավաթի մեջ, որի հատակին լողում էր օճառի մի կտոր։ Հավատարիմ նեգր ծառան անուշաբույրով օծեց նրա միրուքը։ Ջիբուխչին նրան նարգիլն մատուցեց և զորապետի ոտքերին գցեց վարդագույն կերպասե խալաթը։ Ֆուիկ փաշայի զգեստը եզրափակում էր կանաչ գույնի շալման, որը մատնում էր նրա՝ Մահմեդի սերնդին ուղղակի պատկանելը։

— Ուտելիքնե՛ր բերեք,— կարգադրեց նա։

Ռամազանին[1] արգելված է ուտելն ու խմելը, քանի դեռ կարելի է տարբերել սպիտակ թելը սևից։ Սակայն պատերազմի և ճանապարհորդության ժամանակ մարգարեն այդ բոլորը թույլ է տալիս, և դրա համար էլ ապուրը հետևում էր մուրաբային, տապակած միսը՝ խուրուշին. փաշան շարքի մեջ գինի էր լցնում, մոտ քառասուն տեսակի կերակուրներ հաջորդում էին մեկը մյուսին։ Եվ հազիվ Ֆուիկ փաշան առնում էր մի պտղունց, երբ ուտելիքը իսկույն ևթ վերցնում էին՝ տեղ ազատելով նոր կերակրատեսակի համար։ Եթե Ֆուիկ փաշան Սերվանտես կարդացած լիներ, հավանաբար, կհիշեր կերակրատեսակների նման հերթափոխությունը Բիրատարիա կղզում՝ Սանչո Պանսայի ճաշկերույթին։

— Կանչե՛ր կարդացողին,— կարգադրեց Ֆուիկ փաշան՝ շատ ուտելուց դկոտալով։

Կարդացողը գլուխ խոնարհեց և ռենաձայն կարդաց նրան կիզլյար-աղայի նամակը։ Նամակում սկզբից խոսքը գնում էր գլխավոր հարցի՝ կանանց մասին։ Ավագ ներքինին տիրակալին հաղորդում էր, որ Պիրջան խանումի ամսականն

[1] Ռամազան — մուսուլմանական լուսնային օրացույցի իններորդ ամիսը։

ուղացել էր ութ օրով, իսկ «հարեմի աստղը»՝ փոքրիկ Սյույդան, այդ բոլոր օրերին գնդակ էր խաղում։ Այնուհետև նամակում խոսվում էր դատարկ բաների՝ մեծ կնոջ մահվան, կալվածքում բռնկված հրդեհի, գյուղացիների տուրուզմփոցի մասին...։

— Բավական է,— կարդացողին ընդհատեց Ֆուիկ փաշան։— Դրանք հետաքրքիր չեն։

Փողոցից, պատուհաններին փորագրված փայտե վարագույրների արանքներից կրակոտ երաժշտություն էր լսվում. դա ամրոցի ներսում կայազորի նվագախումբն էր մարտական օրը դիմավորում «Ռիգոլետտո» օպերայի նախերգանքով։ Եվ զարմանալով ասիական լսողության համար անսովոր երաժշտության վրա՝ Ֆուիկ փաշան զայրացած հրամայեց փակել պատուհանները։

— Գյավուրները կորցրել են բանականության մնացորդները,— ասաց նա՝ կուշտ լինելուց ընդարմանալով։— Պացիկ փաշան կինարմատից տխմար է։ Օ-օ՜, մեծ ալլա՜հ։ Դու վճռել ես նրան վայր գցել շան պոչի տակից, որպեսզի այսօր հաճույք պատճառես ինձ՝ նվիրելով մեզ նրա հիմար գլուխը։ Հե՜յ, ծառաներ, դե ուրեմն փողոց դուրս բերեք բունչուկները։ Այսօր կեսօրվա մոտ ես չեմ զսպի իմ հովազների ցասումը...

Ֆուիկ փաշան իր առջև բաց արեց սնդուսած թղթի մի կտոր։ Վաղեմի ծույլը, որ հոգնում էր նույնիսկ սպասելուց, հիմա էլ որոշեց մինչև կեսօր իրեն զբաղեցնել զվարճալի բառախաղով։ Նրա գրչի տակից դուրս էին վազում ոտանավորների հավասարաչափ տողերը, որոնք նվիրված էին իր բոլոր կանանցից ամենափոքրին՝ ինը տարեկան Սյույդային, որը բաժանված լինելով նրանից, գիտեր միայն մի զվարճալիք՝ գնդակ խաղալ։

Ոտանավորն սկսվում էր այսպես.

Երբ թավոում ես դու գնդակի հետևից,
Քո մարմնի բոլոր մասերը լարվում են,
Եվ ես տեսնում եմ, ինչպես են լուսավորվում քո
թափանցիկ ոսկրիկները։
Օ՜, իմ հոգու մարգարիտ, կրքի պսակ,
Թռչկոտիր գնդակի հետևից, բայց բռնիր իմ սիրտը...

Նրա ոգևորությունն ընդհատվեց քրդական տոհմավագների գալուստով։ Նրանք եկել էին շեյխերի հետ։ Այդ գոռող, հանդուգն մարդիկ լիարյուն ապրում էին միայն այն ժամանակ, երբ հնարավորություն էր լինում սպանել ու թալանել։

— Ղազի Մահմայի հեծելազորը վերադարձել է Դիարբեքիրից և ռազմաճամբար զարկել մոտակա լեռների ստորոտում,— զեկուցեցին նրան։— Զինվորները կուշտ են և այժմ պատրաստ են կրծել ժանգոտ երկաթը։ Միայն հրամայիր, մեծ փաշա, և մենք ջրի պես կթափենք անհավատների արյունը։

Ֆուիկ փաշան ափը խփեց ափին։

— Այսօր կեսօրին,— ասաց նա։— Կարող եք գնալ։ Ես արդեն բունչուկները դուրս եմ հանել...

Հաջի Ջամալ բեկը զբոսնում էր...

Սկզբից նա մտավ քարվանսարա և մի քանի պիաստրով հարբելու աստիճան հաշիշ ծխեց։ Տրամադրությունը բարձրացավ, և նա հաշվեց մնացած դրամները։ Խվոշչինսկին լրտեսին լավ էր վարձատրում՝ միանգամից վճարելով մաքուր ոսկով։ Իսկ նոր տերը՝ գնդապետ Պացևիչը, դրամի փոխարեն ինչ-որ թղթեր էր տալիս։ Իզուր էր չերքեզը համոզում նրան, որ ինքը դեռ մայրական կաթի հետ ռուսների նկատմամբ սեր էր ներծծել և պատրաստ էր տասը դինարով իրեն ծախել արևածագից մինչև արևամուտ։ Ո՛չ, գնդապետը լրտեսին ստացականներ էր տալիս.

«Այսօր, Թիֆլիսի քաղաքացի Հաջի Ջամալ բեկից ստանալով չստուգված տեղեկություններ, սույնով հավաստում եմ, որ նա...»։

Լրտեսը դուրս եկավ քարվանսարայից և դանդաղ քայլեց մի նեղ փողոցով, բարձրաձայն երգելով քրդական մի երգ. նրա գլխում դեռ գործում էր հաշիշը.

Պառավը գորտ դարձավ
Եվ գետի հատակը իջավ։
Ոսկե ավազ էր հավաքում,
Գայլաձուկն էլ նրան երեք ձկնկիթ էր վաճառում...

Մեյդանում Հաջի Ջամալ բեկը որոշեց նոր սուր գնել։

— Սրանից լավը,— ցույց տվեց լրտեսը աղդրի մոտ կախված իր հին սուրը և ափին խփեց դրամների քսակը։

Զինավաճառը՝ շիկակարմիր մորուքով դանդաղաշարժ ու ջղեցիկ մի պարսիկ, ձեռքով վեհորեն ցույց տվեց իր շուրջը՝ առաջարկելով լավ նայել։ Նրա կրպակում սպանության միջոցների ընտրությունը հարուստ էր. կախված էին շեղբավոր, կիսալուսնի նման սակրատեգեր, անկյունում մռայլորեն փայլփլում էին յաթաղանները։ Վաճառքի համար ցուցադրված էին խոշտանգման նպատակով հատուկ պատրաստված կեռավոր այլանդակ ունելիներ։

— Բույուր (համեցեք),— ասաց պարսիկը՝ պատից իջեցնելով դամասկոսյան պողպատից պատրաստված, ուռենու ճյուղի պես բարակ ու ճկուն սուրը։

Հաջի Ջամալ բեկը աջ ուսից դեն նետեց բաճկոնակը, ժողովրդին ասաց, որ մի կողմ քաշվեն, և սուրը շաչեցրեց վերևից ներքև ու աջ։ Ճեղքված օդը բարակ ձայնով երգեց, և այդ ժամանակ լրտեսը գետնից բարձրացրեց ժանգոտ մի մեխ ու դրեց իր առջևի սախտակի վրա։

— Ես պետք է ստուգեմ նաև կովվաճքը,— ասաց նա։

— Ինչո՞ւ ինձ չես հավատում,— կարծես նեղացավ զինավաճառը։— Կարելի է չհավատալ կնոջը, ծովայինին և հարբեցողին։ Կինը՝ կստի, ծովայինը՝ ջրասույզ կլինի, իսկ հարբեցողը՝ ոչինչ չի հիշի։ Ես շարբաթի վրա ավելացնում եմ ընդամենը երեք կաթիլ գինի։ Ես դեռ խելքս չեմ թոցրել, որ նավարկության գնամ։ Եվ վերջապես, փա՞ռք ալլահին, ես կին չեմ։ Ասա, քեզ մոտ ութ դինար կգտնվի՞, երբ այս մեխը կիսվի երկու մասի, հենց որ դու այս ընտիր սրով թեթև դիպչես նրան։

Հաջի Ջամալ բեկը թափով իջեցրեց սուրը, և մեխի երկու կտորները թռան տարբեր կողմեր։

— Հինգ դինար,— ասաց լրտեսը և գնեց սուրը։

Նա զվարթացավ.

Եվ գետի հատակից պառավը վերադարձավ։
Նմբողջ գյուղը անառակ կնոջ վրա զարմացավ...

Քրդական Նիզակի ծայրը դեմ առավ Հաջի Ջամալ բեկի ուղիղ կրծքին, և լրտեսն իր առջև տեսավ հարուստ հեծյալ էշիրաթին, որը թեթև ծակեց նրան նիզակով։

— Դո՞ւ չէիր արդյոք,— ասաց քուրդը,— դո՞ւ չէիր, կեղտոտ շուն, վերջերս Թիֆլիսում, փողոցում նստած, չխրտմա ու խաշ վաճառում... Ես քեզ ճանաչում եմ, շուն, գյավուրների կողմն ես փախել, որպեսզի անուշ անես նրանց թերմացքները։

Նիզակի ծայրը պատռեց լրտեսի վերնաշապիկը, անցավ կողքից և նորից հետ թռավ՝ պատրաստ վերջին հարվածի համար։ Հաջի Ջամալ բեկը ձեռքով բռնեց նիզակը, գոռաց քրդի վրա.

— Ինչո՞ւ ոչ թե խոսում, այլ բառեր ես փսխում։ Հարցրու ուզածդ մարդուն և քեզ կասեն, որտեղ եմ անցկացրել այս գիշեր։ Դու ինքդ, հոտած շուն, վեր էիր ընկել թաղիքներին, աստղերի տակ, իսկ ես գրգվում էի քո ամենազոր շեյխի՝ Ջալալ Էդդինի վրանում։ Հեռացրո՛ւ նիզակդ...

Նրան բաց թողեցին, և նա գնաց առաջ։ Իսկ շուրջը մեյդանն էր զեռում հարստություններով։ Այն ամենը, ինչ կոտակված էր հայերի ու հրեաների սերունդների կողմից, հիմա ձեռքից ձեռք էր անցնում, փոխանակվում և ուժեղի կողմից ուղղակի խլվում թույլից։ Ամբոխի մեջ ճեպով թափառում էին արագաշարժ քրդերը, փողով պարում էին գլենչուական վարձովի «մուտրիբները», և հենց այդտեղ էլ մուրճով զինված տեղական դաղին մեծ մեխերով ականջներից սյունին էր գամում մի վաճառականի, որն անազնվորեն էր վաճառել իր ապրանքը։ Վաճառականն աղեկտուր ճչում էր, դաղին գործնական տեսքով թխկացնում էր մուրճով, վաճառականի ականջներից արյուն էր հոսում...

Նայելով այդ բաբելոնին, թարգմանչի և թիկնապահների ուղեկցությամբ այստեղ թափառաշրջում էին անգլիական Բղթակիցները՝ նշան բռնելով Համադանի, Արդեբիլի և Խորասանի գորգերի վրա։ Ցեխի մեջ շրմփացնելով, կժերն ուսերին քայլում էին տեղական կանայք՝ ատամներով բռնելով թափանցիկ շադրաների ծայրերը։ Իսկ մի քիչ հեռու կանգնած էին «գաղտնիները»,— այդ ծախու գեղեցկուհիները, ֆրանսուհիներից սկսած ու վերջացրած նեգրուհիներով, և նրանց դեմքերը անառակորեն բաց էին, ձեռքերին՝ դեղին լայքայե[1] ձեռնոցներ, դաստակների վրա փայլում էին ապարանջանները։ Ուշադրություն գրավող ճարճատյունով նրանք փակում էին և բացում գունավոր փետուրներից պատրաստված վիթխարի հովհարները։ Եվ հաճախ որևէ թուրք իր կնոջը կարգադրում էր սպասել, մինչև ինքն առանձնանար «գաղտնիներից» մեկի հետ, և գնումներով ծանրաբեռնված կինը հնազանդորեն սպասում էր իր տիրակալին։

Մեյդանի այդ թանձր ժխորի մեջ Հաջի Ջամալ բեկը հանդիպեց Վլադիկավկազի իր ծանոթներից մեկին՝ միաչքանի ուզդենին[2], որը փախել էր Օսեթիայից գեներալ Կունդուխովի հետ։

— Բարի օր, Հաջի։

— Դա ասա երեկոյան, Գիգո։

Միաչքանի ուզդենը զբաղված էր. լայն կացնով կապարե և պղնձե ձողիկներից կոտորակներ էր կտրատում, կտրված գնդակները թափելով պարկի մեջ, դրանք վաճառում էր երեք չափսերով՝ բռով, լայն թասով և, վերջապես, գլխարկով։ Այդ սարսափելի ապրանքը հեշտությամբ էր վաճառվում։

Ժամանակը պատերազմական էր, ամեն մեկին էլ պետք էր լինում կրակել, իսկ մետաղյա կոտորակները փամփուշտավոր գնդակներից շատ ավելի էժան էին։

— Ավելի մանր կտրիր, Գիգո։

— Զգույշ քայլիր, Հաջի։

Հաջի Ջամալ բեկն ուղղվեց ամրոցի կողմը։ Մոտենալով թուրքական պահակությանը՝ նա քսակում մնացած դրամները լցրեց ափի մեջ և տվեց սպային։ Վերջինս լռությամբ փողերը թաքցրեց իր գոտկահետևը, և լրտեսի վրա ոչ ոք չկրակեց, մինչև նա գաղտագողի ամրոց թափանցեց։

Առաջին հերթին նա մտավ Իսմայիլ խան Նախիջևանսկու խցիկը։

— Այսօր կեսօրին,— ասաց լրտեսը՝ ցույց տալով իր

[1] Լայքա — փափուկ, նուրբ կաշվի տեսակ։

[2] Ուզդեն — Կաբարդինայի կամ Դաղստանի ազնվական։

կտրված ականջը։— Թեև դու այդ չարժես, բայց ես ճիշտն իմացա՝ քեզ ձեռք չեն տա, այդպես ասացին...

Նրան ի պատասխան միայն փայլփլեց խանի մաքուր սափրած գլուխը։

9

Օրվա գալուստը նշող առաջին կրակոցի հետ Շտոկվիչը երաժիշտներին դուրս արեց գավիթ, կարգադրեց նվագել միայն ուրախ բաներ։ Սկսեցին աղաղակել գնդի շեփորները, աշխույժ ձայներով նրանց կանչին արձագանքեցին ֆլեյտաները, թմբուկների կաշին այդ օրերին չորացել էր, նրանք տագնապ էին զարկում համառ ու թնդաձայն՝ «բոմ-բոմ, բոմ-բոմ»։

Այդ առավոտ կայազորը բոլորովին ջուր չէր ստացել, և երաժիշտների կոկորդը քերծվում էր ու մրմռում դառը փոշուց։ Գործիքների թթու մուշտուկները կպչում էին բորբոքված շուրթերին։ Շտոկվիչը թույլ չէր տալիս ծուլություն անել՝ պահանջելով միայն ուրախ և մաքուր ձայներ։ Պարետը կայազորին չէր կարող ջուր տալ, օրգանիզմի կենսական պահանջը փոխարինում էր երաժշտությամբ, որը պաշարված ամրոցից ուղիղ դուրս էր թռչում արևից և փոշուց դեղնած երկինք։ Վտիտ կապելմեյստերը, կես ժամ կանգնելով դժոխային շոգին, աչքերը բաց, ուշաթափ ընկավ գետնին։ Մի մոլոր գնդակ տեղնուտեղը սպանեց փողհարին, իսկ թմբուկներն անընդհատ զարկում էին, և ֆլեյտաները ձայնակցում էին նրանց։

Հրաձգությունն ուժեղացավ։ Բերդի ճակատամասից երևում էր, թե Բալիկ-չայի հովտից ինչպես էին դանդաղորեն դեպի բաղաք շարժվում թարմ զորախմբեր։ Հեծելաջոկատները կանգնած էին ցից-ցից նիզակներով, ուղտերի սապատների տակ օրորվում էին կանայք. սև վրաններն այժմ արդեն խիտ ցանցով գոտևորել էին պաշարված բերդը։ Տեղ հասած ցեղերը անմիջապես խլխլում էին զենքերը և հազիվ հասցնելով շուրջը նայել՝ շտապում էին Բայազետի պատերի տակ, որտեղ մի գնդակ արձակեն անիծված գյավուրների ուղղությամբ։

— Լավ օր չի լինելու,— ասաց (Վատնինը՝ չ' գտես ինչու, նայելով երկնքին։— Կազակնե՛ր, ձեզ պահպանեք ծառայության համար։

Նա սկսեց քայլել՝ կապարե տանիքի վրայով սահելով դեպի սանդուղքը։

— Ո՞ւր ես գնում, հարյուրապետ,— ձայն տվեց Տրյոխժոննին։

— Ո՞ւր,— եսաուլը կանգ առավ և հանկարծ ուրախ ու խորամանկորեն աչքով արեց,— գնամ ձեզ համար ինքնաեռ դնեմ։ Թեյ խմելու տրամադրություն ունեմ...

Նազար Մինասիչն իջավ ներքև, իրերի և սայլերի կույտի միջով դժվարությամբ անցավ մզկիթի մութ խորդանոցը, որտեղ բնակվում էր կայազորի քահանան։ Տեր Գերասիմը դեռ չհագնված, միայն մի շապիկով, բոբիկ ոտքերը տակը ծալած, նստած էր բաց անկողնու վրա և կարդում էր «Երեք հրացանակիրները»։

— Իսկ ես սպասում եմ,— ասաց նա։— Դուռը ծածկիր, որպեսզի ոչ մի սատանա պատահաբար ներս չմտնի։

Տեր Գերասիմը սիրում էր հիմար ձևանալ և դա անում էր նույնիսկ համ ու հոտով, բայց Վատնինի մոտ չարժեր հիմարություն անել. նրանք միանգամից ճանաչել էին մեկը մյուսին։

— Աման բեր,— ասաց տեր Գերասիմը և կռանալով մահճակալի տակից հանեց օղու մի մեծ, պղտոր շիշ։

— Քիչ-քիչ լցրու,— կանխեց նրան Վատնինը։— Այսօր, զգում եմ, պատասխանատու օր է լինելու։ Խմիչքը չպետք է գործին վնասի։ Արդեն ինձ բավական է, տեր հայր։ Հիմա քեզ լցրու։

Նրանք բաժակներն իրար մոտեցրին.

— Պացևիչի կենացը, որպեսզի նա...

— ...սատկի,— շարունակեց քահանան,— և մեզ՝ մեղավորներիս ազատի իր խելքից։

Խմեցին։ Բերանները սրբեցին։ Կնճռոտվեցին։

— Հո՜ւխ,— ասաց Վատնինը՝ տարուբերելով մորուքը։

— Վրայից ուտելու բան էլ չկա,— պատասխանեց տեր Գերասիմը։— Այ թե պատերազմեցինք, հա՞, դրանց բոլորի մերը... դեսը, դենը։ Պետեր են կոչվում։

— Դե լավ։ Շնորհակալություն,— ասաց Վատնինը՝ վեր կենալով։— Ես գնամ։ Եթե կրակել ուզենաս, տեր հայր, բարձրացիր իմ կողմը։ Ես քեզ համար լավ հրացան կգտնեմ։

Նա շեմից դուրս եկավ հենց այն պահին, երբ Թուրքերն սկսել էին ամրոցը ռմբակոծել թնդանոթներից։ Անմարդ բակում քարերին էին զարկվում սուլթանական ռմբագնդերը։ «Է՜խ, տխմարնե՛ր, նշանոցն էլ չեն փոխում»,— հայհոյեց Վատնինը Թուրքերին։ Եվ այդ ժամանակ, կրակոցների դղրդյունի ու գնդակների սուլոցների տակ, կայազորի մարդիկ նորից տարօրինակ խաղի մեջ էին մտել Պացևիչի հետ։ Բոլորն էլ արդեն վաղուց ուզում էին աղատվել նրանից, և բավական էր, որ գնդապետի մոտակայքում պայթեր թշնամու ռմբագունդը, երբ ամեն կողմից սկսում էին բղավել.

— Ձերդ բարեծնություն, չլինի՞ թե վիրավորված եք։ Սանիտարնե՛ր, ո՞ւր եք նայում, վերցրեք գնդապետին...

Դժվար է ասել՝ արդյոք իր կամքով, բայց Սիվիցկին[1] նույնպես մասնակցեց գնդապետի վրա կատարվող այդ որսին և այցելեց նրան կարծես անկեղծ կարեկցությամբ։

— Ես լսել եմ, որ դուք վիրավորվա՞ծ եք,— հարցրեց նա։

— Դե, ոչ,— խույս տվեց Պացևիչը։— Երեկ մի քիչ այրեց, պարդոն, ուղղակի հետույքս։ Եվ վերջ...

— Ապա մի բաց արեք... տեսնենք,— ասաց նրան կապիտանը։

Պացևիչը անտրամադիր արձակեց շալվարը։

— Թողե՛ք ինձ,— ասաց նա։— Ես ձեր ինչի՞ն եմ պետք։ Էհ, կսպանեն, թող սպանեն։

Սիվիցկին իբր թե զարմացավ.

— Ախր դուք ուժեղ կոնտուզիա՛ եք ստացել։ Ամեն ինչ նույնիսկ կապտել է։ Ինչպես ուզում եք, իսկ ես, ավագ բժշկի իրավունքով, պնդում եմ, որ դուք պետք է պառկեք հոսպիտալում։ Եվ սնհապաղ։

Պացևիչը կոճկում էր շալվարը։

— Ինչո՞ւ եք ծաղրում ինձ,— հանկարծ հստակ ասաց նա։— Չէ՞ որ ես լավ գիտեմ, որ ոչ մի կոնտուզիա էլ չունեմ։ Ուղղակի հարկավոր է, որ ձեզ ազատեմ իմ տհաճ անձնավորությունից։ Այդպես չէ՞։

Սիվիցկին նայեց նրա դողացող մատներին։

— Սակայն, պարո՛ն գնդապետ,— առարկեց նա,— դուք ոչ մի կերպ չեք կարող տեսնել, թե ինչ է կատարվում ձեզ հետ, հետևից։

Պացևիչը տխուր ժպտաց.

— Ստացվում է, որ դուք էլ ինձ հիմար եք համարում։ Բայց ես այնքան խելք ունեցա, որ հայելու մեջ նայեցի և լավ տեսա, թե ինչ է կատարվում ինձ հետ հետևից։ Պետք չէ ինձ շանտաժի ենթարկել։ Թիֆլիսն ինձ կայազորի հրամանատար է նշանակել, Թիֆլիսն էլ ինձ կհանի, եթե ես անպետք լինեմ։

Երբ բժիշկը գնաց, Պացևիչը երկար նստեց՝ ինչ-որ բանի մասին ծանր խորհելով։ Նա իրեն շատ վատ էր զգում։ «Ծաղրում են սրիկաները»,— ծուլորեն հայհոյեց և ձայն տվեց իր սպասյակին։ Տղան վայրկենապես կանգնեց դռների մեջ՝ ուշադրություն գրավելով աչքի տակի ահագին կապուտակով։

— Ի՞նչ կցանկանաք։

— Ինչո՞ւ առավոտյան չեկար,— հարցրեց նրան Պացևիչը։

— Ես կարծում էի, թե դեռ քնած եք։

Պացևիչը զայրացավ.

— Սպաները չեն քնում, այլ հանգստանում են։ Այդ դուք եք, անասուն, խոմփացնում այնտեղ, որտեղ ձեզ պառկեցնեն։ Իսկ ես հանգստանում եմ... Կապտուկը ո՞վ է նկարել աչքիդ տակ։

— Դա հո դուք եք արել, Ադամ Պլատոնովիչ,— նեղացավ սպասյակը։— Խմած էիք, դրա համար էլ չեք հիշում։

Գնդապետը խոժոռված երեսը շուռ տվեց։

— Գնա՛,— ասաց նա կամացուկ,— Իսմայիլ խանի մոտ գնա... Թող մի շիշ լցնի... Ես գիտեմ, նրա մոտ դեռ կա։

[1] Նման տրագիկոմեդիա խաղացվել է 1854 թ. մայիսի վերջերին Սիլիստրիայի մոտ, երբ բանակին հարկավոր էր ազատվել կոմս Էրիվանսկու անշնորհք հրամանատարությունից։ Սիվիցկին կարող էր լավ իմանալ այդ մասին բժիշկ Պավլուցկուց, որը գրառումներ է թողել Պասկևիչի կեղծ վիրավորվելու մասին, ինչը և բացատրում է տվյալ դեպքում Ալեքսանդր Բորիսովիչի վարքունքը (հեղ.)։

Մինչև սպասյակի գալը կայազորի հրամանատարը փոխեց գլխարկի ծածկը։

Թքելով հովարի վրա՝ սերթուկի թևքով մաքրեց մինչև փայլելը։ Սուրը վրայից արձակեց և շպրտեց անկյուն։ Փոխարենը գոտուց կախեց ատրճանակը։

— Էլ ի՞նչ է պետք,— մտացիր շուրջը նայեց նա։

Այդ ժամանակ սպասյակը նրա առաջ դրեց գինով լի շիշը։ Պացևիչը բաժակի միջից քշեց կանաչ ճանճը։ Եվ շուտով թանձր, ծորուն գինին ամբողջովին, մինչև վերջին կաթիլը, շշից տեղափոխվեց գնդապետի ներսը։ Պացևիչի տրամադրությունը բարձրացավ, բայց որպես փորձված գինեմոլ, նրան թվում էր, որ լիակատար երջանկության համար չի բավականացնում էլի մի քիչ։ Մի բաժակ հավանաբար պետք էլ չէ։ Սակայն կես բաժակ կխմեր հաճույքով։

Այդ տրամադրությամբ էլ նա այցելեց խանին։

— Ջափազանց կպարտավորեցնեք, պայծառափայլ խան,— ասաց նա,— եթե մի անգամ էլ ինձ խմելու բան տաք։ Մի բարկացեք ծերուկիս վրա, ինքներդ եք հասկանում... ո՛չ, ո՛չ, ուր եք լցնում։ Բավական է։ Ինձ միայն մի քիչ է պետք։ Սա, կարծես, եգիպտացորենի՞ օղի է։

— Արմավօղի է,— պատասխանեց խանը։

— Դե, ինչ կա, որ։ Ջուրը, ինչպես ասել է մեծ գրող Մարլինսկին, գոյություն ունի ձկների ու խեցգետինների համար, գինին՝ երեխաների ու կանանց համար, իսկ օղին՝ տղամարդկանց ու զինվորների համար։ Ձեր կենացը, խա՛ն։

«Տղամարդն ու զինվորը» զդաց, ինչպես պղտոր ու տաք արաղը շարժվեց սկզբից քթի կողմը, բռնեց շնչառությունը, հետո միանգամից զարկեց գլխին.

— Ուժեղ է,— ասաց Պացևիչը։

Նա գնաց երկրորդ դարպասի կամարի տակ։ Հենվեց պատին, որպեսզի չմատնի խմած լինելը։ Խոսում էր միանդամայն ողջամտորեն, և նրան քիչ ճանաչող մարդուն կթվար, որ գնդապետը նույնիսկ բոլորովին խմած չէ։ Այստեղ նա հանդիպեց Հաջի Ջամալ բեկին, մանրամասն հարցրեց քաղաքի իրադարձություններից ու բամբասանքներից։

— Մեզ ի՞նչ թաղամաս է առաջարկում Ֆուիկ փաշան, եկե՞ համաձայնենք հանձնվել։

— Գետի այն կողմը, սարդար։ Որտեղ հայն է ապրել։

— Դե, դատարկ բան ես դուրս տալիս, կացո։

Շուտով կամարի տակ հավաքվեցին սպաները՝ Շտոկվիչը, Կարաբանովը, Կլյուգենաուն և Եվդոկիմովը։ Սկզբից խոսակցությունը գնում էր մեծ մասամբ մանրուքների շուրջ։ Այն մասին, թե ռեֆորմից հետո ինչպես է փոխվել զինվորը, այն մասին, որ արևելքում քաղցրեղեն շատ են ուտում, բայց բոլորի ատամները լավ են։ Ընդ որում խոսում էին մի տեսակ ծուլորեն և ոչ լիովին խելացի, բոլորն ասես բթացել էին այդ օրերին։

Եվ հանկարծ միանգամից՝ տրա՛ք, տրա՛ք. այս ու այն կողմ թռան փլված քարերը։ Մետաղյա կոտորակները կպչեցին գետաքարերին, թռչկոտում էին ծղրիդների պես։ Դոմեշների եղջյուրների խզխզոցները, ռմբագնդերի խուլ հարվածները պատերին, քանդված սվաղի կտորները և պայթյունների բարձրացրած ավազափոշու ամպերը. այս ամենը միանգամից սկսեցին պտտվել աներևակայելի քաոսում, որի մեջ մարդը խղճուկ ու դատապարտված էր թվում։

— Աստվա՛ծ իմ,— ճչաց Պացևիչը՝ նետվելով կամարի խորքը։— Պարոնա՛յք, եկեք այստեղ...

Մի գունատված զինվոր, ճեղքված այտով, ցատկեց մտավ թաքստոցի տակ և, տեղնուտեղը վիրավորվելով գնդակից, սկսեց պար գալ մի ոտքի վրա։

— Ա՛յ-ա՛յ-ա՛յ... Տեր իմ, ինչ բազմություն է թափվում։ Ձերդ բարեծնություն, ա՛յ-ա՛յ... հարկավոր է փախչել։

Շտոկվիչը զինվորին թափով սեղմեց պատին, նրա քթին դեմ տվեց իր ամուր բռունցքը.

— Դե, հիմարություն մի արա,— բղավեց նա։— Ի՞նչ է այնտեղ։ Թուրքե՞րն են։ Շա՞տ են։

— Անթիվ-անհամար,— պատասխանեց զինվորը։

Շտոկվիչը ուզեց վազել մինչև մոտակա հրակնատը և հետ վերադարձավ ցնցված։

— Պարոնայք,— ասաց նա,— հարկավոր է մի բան որոշել։ Դուք այստեղից չեք կարող տեսնել, թե ինչ տեսարան է։ Պարզ է մի բան՝ թուրքերը որոշել են գրոհի անցնել...

Այստեղ մենք կանգ առնենք, որպեսզի խոսքը վերապահենք հետազոտողին, որն այդ պահի մասին տառացիորեն գրում է հետևյալը.

Պացևիչը, կապիտան Շտոկվիչը և մյուս սպաները, որ մինչև այդ բոպեն հանգիստ նստած էին երկրորդ դարպասի կամարի տակ, երբ հանկարծ թնդաց ցնցող որոտը և պայթեցին արկերը, մտահոգվեցին ուրիշներից ոչ պակաս. նրանք տագնապով մտքեր փոխանակեցին և տասը-տասնհինգ վայրկյանում ինչ-որ որոշում ընդունեցին...

Հետազոտողը հենց այստեղ ծանոթագրություն է անում, որը չափազանց էական է մեզ համար։ Նա ուղղակի հայտարարում է.

Ինչ խոսվեց պետերի համար կարևոր այդ պահին, ես չկարողացա իմանալ.

Եվ եթե այդ հարցը չի կարողացել լուծել հետազոտողը, որը հանդիպել է Բայազետի փառավոր պաշտպանության դեռ կենդանի մասնակիցներին, մենք նույնպես ենթադրություն չենք անի։ Մեզ համար հիմա կարևոր է մի բան՝ հենց այստեղից, երկրորդ դարպասի կամարի տակից, որտեղ կանգնած էին Պացևիչը և Շտոկվիչը, հանկարծ տարածվեց հրաման՝

— Ձկրակե՛լ...

Այդ հրամանը փոխանցեցին կազեմատներին.

— Դադարեցնե՛լ հրաձգությունը։ Ձպատասխանե՛լ կրակոցներին...

— Դրան չհավատաք,— գոռաց Վատնինը։— կազակնե՛ր, շարունակեք խփել...

Այդ պահին նա նկատեց մի զինվորի, որը բարձրացել էր բերդի ճակատամասի տանիքը, իսկ նրա հրացանի ծռված սվինի ծայրին տարուբերվում էր սպիտակ լաթի մի կտոր։

— Իսկ դու ո՞ւր ես խցկվում, ստոր,— հարցրեց նրան հարյուրապետը։

— Ահա,— պատասխանեց զինվորը, ցույց տալով լաթի կտորը։— Իմ գործը ծառայական է։ Ինձ այդպես են կարգադրել։

— Ո՞վ է կարգադրել։

— Նորին բարձր բարեծնություն... պարոն Պացևիչն է հրամայել։

10

...«Ռուսսկայա ստարինա» բազմահատորանոց հանդեսի հրատարակիչ Մ. Ի. Սեմևսկին, Կրասնոյե Սելոյի մոտ տեղի ունեցած հեծելազորային մանևրների ամենաեռուն ժամանակ, «Բիրժեվին վեդոմոստի»-ից իմացել էր, որ երեկ կայսրին ներկայացված զինվորական ավաղանիների թվում եղել է նաև փոխգնդապետ Ն. Մ. Վատնինը։ Իր հանդեսում բազմիցս նյութեր հրապարակելով ռուս-թուրքական վերջին պատերազմի մասին՝ Սեմևսկին ցանկացավ հանդիպել Բայազետի փորձված պաշտպանին և դրա համար, ամառային մի շոգ օր, Նազար Մինաևիչին հրավիրեց խմբագրություն։

Նշանակված ժամին Սեմևսկին արդեն սպասում էր իր հետաքրքիր հյուրին Տրուտի տանը, Նադեժդինյան փողոցի վրա. լակեյին հրամայված էր, հենց որ Վատնինը դա, թեյ տալ, քարտուղարը պատրաստ էր գրելու պատմածները։ Վատնինը խմբագրություն ներկայացավ ծոպերիզավոր ուսադիրներով կազակային համազգեստը հագին, համեստորեն նստեց առաջարկված բազկաթոռին և ծնկների միջև կանգնեցրեց հսկայական սուրը։

Հյուրին թեյ առաջարկելով՝ հրատարակիչը շատ հմտորեն սկսեց իրեն հարկավոր խոսակցությունը, որի ժամանակ ուղղակի հարց տվեց.

— Հարգելի Նազար Մինաևիչ, մեր խմբագրությանը մինչև այժմ լրիվ պարզ չէ Բայազետի պաշարման այն նուրբ պահը, երբ Պացևիչը ուզում էր կայազորը հանձնել թուրքերի հոշոտմանը։ Պատմեցե՛ք, խնդրեմ, ավելի հանգամանորեն։

Վատնինը մի կում թեյ խմեց, փոքրիկ թխվածքաբլիթը փշրվեց նրա կոշտ մատների արանքում, և նա, ամաչելով իր անճարպկությունից, այլևս սեղանին եղած ոչ մի բանի ձեռք չտվեց։

— Դա եղել է, պարոնա՛յք հորինողներ,— սկսեց նա՝ խուսափելով նայել դրքային խմաստությունների կույտերին,—

ջա եղել է իննին... Այո՛, կարծես չեմ խաբում։ Հենց հազար ութ հարյուր յոթանասունյոթ թվականի հունիսի իններին։

Սեմևսկին գլխով արեց քարտուղարին, և նա, սուսկ մկան նման տեղավորվելով Բայազետի պաշտպանի վիթխարի թիկունքում, փետրագրչով սկսեց ջանասիրությամբ գրել.

— Ես, ուրեմն, գալիս եմ,— ասաց Վատնինը բամբ ձայնով՝ ցույց տալով, թե ինչպես էր գալիս,— գալիս եմ ձախ բերդապարսպից։ Իսկ իմ դիմացից մի զինվոր է առաջ խցկվում՝ սվինից կախած լաթի մի կտոր։ Ես նրան, իհարկե հարցուփորձ եմ անում ամբողջ խստությամբ. Ո՞ւր ես խցկվում, տավարի ցավ, և ինչո՞ւ քո սվինի ծայրին սպիտակ լաթ է կախված... Քը՜ղ... քը՜ղ... Դուք արդեն մի բարկացեք ինձ վրա, պարոն հորինողներ, եթե ես որևէ բառ այնպես չասեմ։

— Ի սեր աստծո,— ընդհատեց նրան Սեմևսկին։— Ես ինքս վեց տարի ծառայել եմ Պավլովյան լեյբ-գվարդիայում և խոսակցության մեջ հեռու եմ սուրբ լինելուց։

— Դե, ուրեմն, լավ,— քաջալերվեց Վատնինը, բայց այդ պահին լսեց գրչի ճռռոցը և շուռ եկավ դեպի քարտուղարը։— Չլինի՞ թե իմ խոսակցությունն են գրում։

Այո, հարյուրապետի պատմածը գրի էր առնվել, և հարթված սղագրության մեջ դա մի քիչ ուրիշ կերպ էր ստացվել. «... չվստահելով զինվորի խոսքին,— ասվում էր գրառումներում,— ես հրամայեցի նրան հեռանալ և զեկուցել Պացևիչին, թե ոչ մի ծայրահեղ անհրաժեշտություն չկա, որ ստիպի ամբոցը հանձնել թշնամու ողորմածությանը։ Դրանից հետո զինվորը գնաց միջին դարպասները, և շուտով հնչեց նոր հրաման.

— Բացել սավանը...»։

Վատնինը համեստ մարդ էր, և որպեսզի ցուցամոլ չերևար, ակամայից սքողեց իրադրության ամբողջ լարվածությունը։ Իսկ ուրիշ փաստաթղթերի հիման վրա իրադարձությունները ծավալվում էին բոլորովին էլ ոչ հանգիստ. այդ իրադարձությունների տագնապալի, համարյա խուճապային տարերայնության մեջ մի սոսկալի, դավաճանական սև բան կար։

— Ո՞վ է կարգադրել,— հարցրեց Վատնինը։

— Նորին բարձր բարեծնությունը... պարոն Պացևիչն է հրամայել։

— Ապա մի, կորիր այստեղից,— գոռաց եսաուլը և բռունցքի հարվածով պատգամաբերին տանիքից գցեց սանդուղքի վրա։— Հաղորդիր նրանց բոլորին, այդ նողկալիներին,— գոռաց նա զինվորի հետևից,— մեզ մի օրն էլ չի բավարարի, որպեսզի թշնամուն հետ մղենք...

Կազակների ականջները պատռվում էին թշնամու աղմուկից, որի մեջ ալլահի անունն ու կեղտոտ հայհոյանքները հաջորդում էին իրար։ Սպանվածների և վիրավորների տակից ծորում էր կազակային արյունը և հոսում թեք տանիքի վրայով։ Վատնինը սայթաքելով քիչ էր մնում ընկներ քիվի վրայից։ Ինչ-որ մեկի բաց փակաղակով հրացանը, չըխկչըխկալով, նրա մոտից գլորվեց անդունդը։

— Կսպանեն, հարյուրապետ,— բղավեց Դենիսկան, և եսաուլը պառկեց գնդակների տակ, սողալով հասավ բերդապարսպի կտրվածքին, մի կերպ ավելի հարմար տեղավորվեց, որպեսզի տեսնի շուրջբոլորը։

— Մա՜յր իմ հարազատ,— ակամայից բացականչեց եսաուլը։— Այսպիսի բան, հավանաբար, իմ պապն անգամ չի տեսել...

Նույնիսկ Վատնինի նյարդերը, որքան էլ ամուր էին, ցնցվեցին ինչպես հարկն է, երբ զննեց շուրջը։ Հարևան գերեզմանատան շիրմաքարերի միջև վխտում էին ռազմասեր չալմայավոր էշիրաթները։ Թշնամիները ներքին քաղաքի գարշահոտ ավերակներից մագլցում էին սարնիվեր և, տեսնելով վառոդը, առայժմ չէին կրակում։ Իսկ գետի միջով խուռներամ գալիս էին ռեդիֆները և աղմուկով ցայտեցնելով ջուրը՝ մի ամբողջ վերստի վրա պղտորել էին հոսանքը։

— Ես չեմ տեսնում սպիտակ դրոշը,— ասաց Պացևիչը։— Այս ինչ գժանաց է... Ի՞նչ է կատարվում այնտեղ, ո՞վ կպատասխանի ինձ։

Կամաց ոռնալով սեփական անզորությունից՝ Պացևիչը վազեց մտավ զով մզկիթը, մի պահ նայեց թշնամու հոծ

հեղեղին և իսկույն ևեթ սարսափած նորից դուրս վազեց բակ։

— Ես ում ասացի՝ չկրակել,— գոռաց նա զինվորների վրա, որոնք սեղմվել էին հրակնատներին։— Պարոնա՛յք սպաներ, ահա և ձեր անգործունեության պտուղները։ Դադարեցրե՛ք այդ հիմար հրաձգությունը։ Հիմա ևեթ... Կարաբանո՛վ, դուք ինձ լսո՞ւմ եք։

Անդրեյը կանգնել էր գլուխը կորցրած. այս ամենը նրան զառանցանք, հիմար երազ էր թվում։ Նրան պտտեցնում էր ինչ-որ մի մրրիկ, և նրա աչքերի առջևից արագ անցնում էին զինվորների ու կազակների գոռգոռացող դեմքեր, ձիերի ոտներ ու դրոշներ. մեկը կրակում էր, մյուսը հրացանն էր թաղում հողի մեջ։

— Կարաբանո՛վ,— համառորեն կրկնեց Պացևիչը,— մի՛ ցցվեք կռճղի պես... Դուք ախր համարձակ մարդ եք։

Այս անգամ ներգործեց։ Անդրեյը թափ տվեց ուսերին նստած փոշին ու սվաղի փշուրները, հանկարծ շարացած բղավեց Պացևիչի՝ ինչպես շնիկի վրա.

— Ի՞նչ եք ուզում ինձանից։ Ես ոչ մի տեղ չեմ գնա... Եվ թող ինձ հարյուր կտոր անեն, բայց ես դավաճան չեմ...

— Դու այդ ի՞նձ ես ասում, սրիկա՛...

Պացևիչի դեմքին այդպիսի արտահայտություն դեռ ոչ ոք չէր տեսել. նրա հոնքերը, ինչպես երկու թավ ծածկույթ, իջան ներքև և գրեթե փակեցին աչքերը։ Գնդապետը կռացավ, ձեռքով շոշափեց ծանր, չեչոտ մի գնտաքար։

— Դա, ուրեմն, ի՞նձ ես ասում,— նորից խզխզոցով հարցրեց նա՝ դանդաղ մոտենալով պորուչիկին։— Ի՞նձ... Ախ դո՛ւ, գվարդիական պոռնիկ։ Դու այդ ի՞նձ ես ասում... ինձ, որ հիմա ճաշակում է ձեր ամբողջ անառակության արդյունքները։

Կարաբանովը մի կողմ ցատկեց.

— Գցե՛ք քարը։

Հաջի Ջամալ բեկը բռնեց գնդապետի ձեռքը։

— Հարկավոր չէ կնոջ նման լինել,— ասաց նա։— Թուրքեր կկրակեն, սարդար, որովհետև զինվոր չի լսել քեզ. տեսնում ես դրոշ չկա։

Ադամ Պլատոնովիչը քարը ձեռքից գցեց։

— Հենց դու էլ ինձ պետք ես,— պատասխանեց նա ինչպես։— Նրանք բոլորը կխաբեն, այնպես չեն անի, իսկ դու կարող ես... Վազիր պատի վրա... Վազիր վերև և ասա թուրքերին՝ եթե նրանք մեզ դրոշներով ու զենքերով ամբողջից դուրս թողեն, մենք համաձայն ենք նրանց տալ ամբողջ քաղաքը։ Թող նա այրվի։ Իսկ մենք կհեռանանք։ Կհեռանանք այստեղից գրողի ծոցը։ Լսո՞ւմ ես։

Միջնաբերդի բակում երևաց արտասվադեմ Ագլայան, նրան իսկույն ևեթ հրմշտեցին, սկսեցին պտույտ տալ անիմաստ հրհրոցի ու խառնաշփոթության մեջ։

— Եղբայրներ,— լսվում էր չորս կողմից,— ո՞ւր գնանք։

— Ասում են՝ շարք կանգնել։

— Իսկ թուրքը ախր չի ների։

— Դավաճանել են...

Խվոշչինսկայան ձեռքերը տարածեց առաջ։

— Կանգնե՛ք... Դե կանգնե՛ք վերջապես։ Աստվա՛ծ իմ, հանուն ինչի՞,— ճչաց նա զայրացած։— Խելքի եկեք, մարդիկ։ Չէ որ արդեն այնքան զոհեր են եղել... Եվ այս ամենը հիմա հանձնե՞լ անտեղի։— Նա գետնի վրայից բարձրացրեց ինչ-որ մեկի գցած հրացանը, զոռով խցկեց մի երիտասարդ զինվորի ձեռքը.— Ամաչի՛ր, ամաչի՛ր, որ ե՛ս պիտի խընդրեմ քեզ այդ բանը։ Ախր ես չեմ կարող կրակել, ես կին եմ...

Կարաբանովը՝ այդ իրարանցման մեջ գտավ իր թաթար սպասյակին՝ Տյապաևին, որն արդեն նրա համար թամբում էր Լորդը, և նրան քաշ տվեց իր հետևից։

— Ոչ ոքի չեմ հավատում այժմ,— ասաց պորուչիկը։— Դու, տղա, լսիր ինչ կգոռա հիմա Հաջի բեկը... Հաղորդիր ինձ... Իսկ եթե հաղորդես ոչ այնպես, ուրեմն, ես քեզ, շըլդիկիդ, հենց այստեղ էլ կթաղեմ։

Հաջի Ջամալ բեկը բարձրացավ բերդապարսպի վրա և, ձեռքերը թափահարելով, գոռաց ղովռացող ամբոխի կողմը, որպեսզի լսեն իրեն։ Լրտեսը ոչ անմիջապես հասավ այն բանին, որ լռեն, սակայն նրա վրա ոչ մի կրակոց չեղավ։

— Թոխտա, թոխտա,— ուրախալից հաղորդեց նա։

Հաջի Ջամալ բեկի խոսքերից անմիջապես հետո պաշարողների բազմության միջից լսվեց ցնծալի դղրդյուն։

— Ի՞նչ ասաց նա,— հարցրեց Կարաբանովը։

— Գոռում են՝ ուռուսներ հանձնվում են։ Ուռուս հոգնել է կռվել, ուզում է տուն գնալ... Հիմա, ասում է, Պացևիչ փաշան դարպասները կբացի ձեր առաջ։

Ամբոխի միջից դուրս թռավ մի վիթխարի հաղթանդամ դարբին՝ դիպակե վերնաշապիկով, դրոշը ձեռքին։ Թևքերը քշտելով և ջերիդի շեղբը վեր բարձրացնելով՝ նա ինչ-որ բան գոռաց, և Կարաբանովը նկատեց, թե ինչպես նրա թաթար սպասավորը սարսափահար հետ քաշվեց՝ հասկացավ։

— Նրա բառերը թթու են,— թարգմանեց նա պորուչիկին։— Մենք նրանց ամրոց թողնել, իսկ նրանք մեզ պիտի մորթեն։ Գլուխները, դարբինն ասաց, հրեն այնտեղ պիտի կույտ դարսեն...

Կարաբանովը հանեց ատրճանակը, նշան բռնեց։

— Ահա հենց այդ գլխից էլ մենք կսկսենք,— ասաց նա, թնդաց կրակոցը, և կարմիր վերնաշապիկով դարբինը վայր գլորվեց, բաց չթողնելով ջերիդը։

Այդ ժամանակ Պացևիչը ներխուժեց կազեմատ, որի պատերի երկայնքով կորացել էին հրացաններից թուրքերի վրա կրակող զինվորների քրտնած մեջքերը։

— Դուք լսեցի՞ք հրամանը։ Թողնե՛լ հրաձգությունը,— գնդապետը հրակնատներից հետ էր քաշում զինվորներին, նրանց ձեռքերից խփում դուրս գցում զենքերը։

Կազեմատում դադարեց հրաձգությունը, և գնդապետը նետվեց հարևան բակը, որտեղ զինվորները, խվոշչինսկայայից ամոթահար լինելով, նորից համերաշխ համազարկերով խփում էին թուրքերին։ Թշնամին արդեն քիփ շրջապատել էր բերդը, իսկ համառ էշիրաթները, չնայելով գնդակներին, գերեզմանատան կողմից զոռով խցկվում էին ուղիղ դեպի դարպասները։

— Ո՞ւր ես խփում, զզվելի արարած,— Պացևիչը կանգ առավ եֆրեյտոր Ուչաստկինի դիմաց։

Ուչաստկինը նրա կողմը շուռ տվեց կեղտոտ, քրտնքի շիթերով ակոսված դեմքը, խռպոտ ձայնով ասաց.

— Ձենք դիմանում... Հա խցկվում են, ձերդ բարձր բարեծ...

Պացևիչը՝ շրրֆ եֆրեյտորի ականջին, շրրփ՝ երկրորդ ականջին։

— Հասկացա՞ր հիմա, թե ինչ է նշանակում հրամանը։

Նա եֆրեյտորի ձեռքից խլեց հրացանը, վրայից հանեց փակաղակը և շպրտեց.

— Եվ դեռ եֆրեյտոր է,— ասաց գնդապետը։— Պատրաստվիր բերդից դուրս գալ՝ քո բոլոր անպետքությունների հետ միասին... Կարգադրի՛ր զինվորներին շարք կանգնել։

Պացևիչը արագ անհետացավ։ Եֆրեյտորը բարձրացրեց ալանդակված զենքը, լացակումած դիմեց զինվորներին.

— Նա ինձ ախր ինչի՞ համար այդպես, հը՞... Թե՞ ես լատ զինվոր եմ։ Թող ես դրա համար պատասխան տամ, կրակե՛ք տղաներ, կրակե՛ք դրանց վրա...

Պացևիչին հաջողվեց բարձրացնել միայն երկու սպիտակ դրոշ՝ մեկը մինարեթի, մյուսը խոհանոցի աշտարակի վրա։ Կեղտոտ լաթերը, որոնք ցուցադրված էին ի խայտառակություն կայազորի, գարշելիորեն բացվում էին քամուց ծափ տալով, և թուրքերը, դրանց տեսքից քաջալերված, ուժեղացրին իրենց գրոհը։

Հիմա թշնամիներին օգնում էր և այն, որ ռուսների կրակոցները, արագ մեջընդմիջվելով բերդապարիսպների երկայնքով, նկատելիորեն թուլանում էին. ահա այն դադարեց այն անկյունում (ուրեմն Պացևիչն արդեն այստեղ էր), հետո հանկարծ ուժեղացավ (ուրեմն, Պացևիչը այստեղից վազեց ուրիշ կազեմատ)։

— Սողոսկում են,— աղաղակում էր մեկը վերևից։— Օգնեցե՛ք ինձ, եղբայրնե՛ր... սողոսկում են բուսուրմանները...

Պարանների ծայրերին կապած մի քանի գրոհային ճարմանդներ վեր թռչելով ճանկռոտեցին լուսամուտների քիվերը։ Պաշարողների ոռնոցն ուժեղացավ, բերդի պատուհանները, որոնց վրա ոչ մի ապակի չէր մնացել, ասես գայթակղում էին նրանց բերդի մութ անցումների խորքը։

Խթանելով դեղնաշխետ հովատակը՝ Իսմայիլ խան Նախիջևանսկին սիդաճեմելով դուրս թռավ բակ։

— Ճանապարհ տուր,— մերթ-մերթ բղավում էր նա,— թող անցնեմ...

Նա ո՞ւր էր պատրաստվում գնալ, ոչ ոք չգիտեր (և իհարկե, ոչ ոք նրան այդ մասին չէր հարցնում)։ Ձիու դունչը

տաք շնչառությամբ խաշեց Պացևիչի ծոծրակը, և գնդապետը բռնեց սանձափոկերից։

— Աղավնյակս,— ասաց նա խանին,— ձեր պարտությունները քարշ են գալիս առանց գործի... Կարգադրեցեք նրանց՝ բացել դարպասները։ Գործեք ձեր իշխանությամբ։ Թող ջարդեն սայլերը և մի կողմ շուռ տան քարերը։ Օգնի՛ր, աղավնյակս, խան, իսկ ես կարգ ու կանոն կհաստատեմ...

Եվ գնդապետը նորից սկսեց վազվզել ամրոցում։ Հուզմունքից քրտնած, սերթուկը պատառոտված, նրա բերանի անկյունը թքոտ կախվել էր մի կողքի վրա։ Իսկ աչքերը դարձել էին կատաղած, նրանց բիբերը լողում էին ինչ-որ մի պղտորության մեջ, և շատերն այժմ սկսեցին վախենալ Պացևիչից։ Շուրջը սարսափելի խառնաշփոթություն էր, թոհուբոհի մեջ նա կթխկացնի քեզ իր «ընտանեկան» բովդոգից, հետո գնա պարզիր՝ թե ինչի համար...

— Ո՞ւր է Շտոկվիչը,— գոռում էր գնդապետը և զինվորներին հրում շարքի մեջ, որն իսկույն ետ ցրվում էր, հենց որ նա շուռ էր գալիս։— Ախ, դո՛ւ, հին հափշտակիչ, թփուտների մեջ ես մտել.. Բոլորը պաշտպանում են իրենց կաշին, խղճուկ տականքներ։ Միայն ես եմ հատուցում բոլորի փոխարեն... Գտե՛ք Շտոկվիչին՝ կենդանի թե մեռած...

Պարոն պարետը, իհարկե, լսում էր իր հասցեին հնչող այդ աղաղակը, բայց որոշեց սպասել մինչև իր կարիերայի վտանգավոր պահն անցնի։ Հիմա նրան ավելի շատ բավարարում էր իր սիրելի կատվի ձագի, բայց ոչ Պացևիչի ընկերակցությունը։

Կապիտանը հրեց դուռը։ Նրա սենյակում արդեն կանգնած էր ատամները ցցած ու դաշույնը առաջ պարզած մի վտիտ արաբստանցի՝ բուռնուսը հագին, իսկ պատուհանից երևում է ռեդիֆի հետույքը։ Տրա՛ք,— կրակեց Շտոկվիչը, և նորից՝ տրա՛ք,— ուղիղ թուրքական շալվարին... Վիրավորված թուրքը, լռվելով պատուհանում, թափահարում էր ոտքերը։ Շտոկվիչը ներս քաշեց սենյակ և երկաթյա բռունցքների հարվածներով սպանեց նրան։

— Բոլորովին խելագարվել են այդ պարոնայք թուրքերը,— ասաց պարետը՝ պատուհանի քիվից ցած նետելով գլուխային ճարմանդները։

Երբ գրոհն սկսվեց, տեր Գերասիմը դեռ հագնված չէր։ Մեծ բան զգալով՝ քահանան համարձակության համար արագորեն արաղ կոնծեց, մի շապիկով դուրս թռավ բակ՝ հասցնելով միայն վզին հագցնել խաչը։ Այդ խաչը կախված էր Գեորգիևյան ժապավենի ուսափոկի վրա, որը նա ստացել էր Բալակլավայի գրոհին մասնակցելու համար։

— Ի՞նչ եք դեռ ու դեն ընկել,— խրատում էր նա անհասկացող զինվորներին։— Դու մի՛ պատվիր, ինչպես թուքը թավայի մեջ։ Թե չէ կարող եմ մոռթիդ հասցնել։ Դու մի՛ նայիր, որ ես սրբության մեջ եմ կենում։ Պետք լինի՝ մեզք էլ կգործեմ...

Նրա ձայնը խլացավ քարերի դղրդյունից, որոնք միլիցիան հետ էր գլորում դարպասների մոտից։ Եվ այդ դղրդյունը թվում էր շատ ավելի սարսափելի, քան ռմբաձիգների պայթյունը։ Մերունի գրենադյոր Խրենովը նույնիսկ սկսեց լաց լինել, հեկեկանքի միջից փնթփնթալով.

— Ի՞նչ է լինելու, հը՞։ Դեռ Լյակսեյ Պետրովիչի[1] և Բաշկևիչ-Արիվանսկու հետ ռազմարշավներ ենք կատարել։ Եվ երբեք էսպիսի խայտառակություն չի եղել, ինչպես էսօր։ Ծախում են մեզ, զավակներս... քաղցր գինով և քնքուշ կանանց համար ծախում են բոլորիս։ Մեզ ածելիներով կկնդեն և իրենց գարշելի հավատին կդարձնեն...

Լուրն այն մասին, որ միլիցիան բաց է անում դարպասները, արագորեն տարածվեց բերդի բոլոր անկյուններում, և այդ ժամանակ լիակատար խառնաշփոթություն սկսվեց։ Զինվոր Պոտյոմկինը, կրծքին սեղմելով գտնված փոքրիկ թրքուհուն, մզկիթի մոտ հավաքում էր խիզախ մարդկանց, համոզելով նրանց ճեղքել-անցնել ներքին քաղաքով, խրճիթների ավերակների միջով։

— Մի՛ վախեցեք, եղբայրներ իմ,— համոզում էր նա զինվորներին։— Գործն այստեղ այնպես է, որ տասից գոնե մեկը հո կենդանի դուրս կպրծնի։

Զինվորների մեջ, ստվերի պես թափառում էր Ագլայա

---

1 Մերունի կավալերը այստեղ նկատի ունի կովկասյան հայտնի գեներալ Ալեքսեյ Պետրովիչ Երմոլովին։

Եվդոշչինսկայան. նա հազիվ թե հասկանում էր՝ ինչ է կատարվում։

— Ձլսեք, զինվորներ,— կանչում էր նա։— Ձեզ խաբում են... Ձպետք է հանձնվել։ Ձէ՞ որ դուք ռուս մարդիկ եք։

Պացևիչը բռնեց նրա արմունկից։

— Ո՞վ է այստեղ հրամանատարը, տիկին։ Դո՞ւք, թե՞ ես։

— Իսկ ես հրաման չեմ տալիս... Ես խնդրում եմ, աղաչում... Հանուն այն զոհերի, որ արդեն եղել են...

— Հապա մի կորիր այստեղից, հիստերիկ կին,— գոռաց նրա վրա Ադամ Պլատոնովիչը։

Եվ պրապորշչիկ Կլյուգենաուն այդ բոլորը տեսավ ու լսեց։ Վիճել չէր ցանկանում։ Հիմա բարոնը, ասես անտարբեր այն ամենի նկատմամբ, ինչ կատարվում էր շուրջը, կանգնած էր արաբական կայթող ձիու վրա նստած Իսմայիլ խան Նախիջևանսկու առջև և ասում էր.

— Հրաշալի է ձեր նժույգը, խան։ Դուք նրանով հեռու կարշավեք, եթե հիմա բացեն դարպասները։

— Նախանձո՞ւմ ես։— Եվ խանը շոյեց ձիու բաշը։

— Ո՛չ, խան... Սակայն եթե դարպասները բացեն, գիտե՞ք, թե ում վրա եմ արձակելու առաջին գնդակը։

— Հավանաբար ինքներդ ձեզ վրա,— ենթադրեց Իսմայիլ խանը։

— Սխալվում եք, խան։ Ինձ վրա կկրակեմ երրորդ գնդակը... Ասենք, դուք արժանի չեք այն բանին, որ իմանաք, թե ում համար է նախատեսված երկրորդ գնդակը։ Իսկ ահա առաջին գնդակը ես կարձակեմ ուղիղ ձեր ազնվազարմ ճակատին։

Խանը հանկարծ ծիծաղեց, նա պրապորշչիկի խոսքերն ընդունեց կատակի տեղ ընդունեց, և Կլյուգենաուն չուզեց զարհամոզել նրան այդ բանում։ Բայց դա կատակ չէր։ Կլյուգենաուն արդեն գլխի էր ընկնում, որ խանն արժանի էր այն բանին, որ իր վրա արձակվի առաջին գնդակը...

— Ալլա՜հ, ալլա՜հ,— պատերի հետևից գոռում էին թուրքերը, և նրանց ամեն մի գոռոցի հետ բերդի դարպասներին դմփում էր ինչ-որ ծանր մի բան։ Եվդոկիմովը վերևից տեսնում էր, թե ինչպես թշնամիները՝ մոտ մի հիսուն մարդ, տարուբերում էին շղթաներից կախված մի վիթխարի, երկաթապատ հին կաղնու գերան, և խոյահարման յուրաքանչյուր հարվածից տնքում ու ճկվում էին բերդի դարպասները։

Վատնինը սողալով մոտեցավ յունկերին, նրա գլուխը սեղմեց իր փոշոտված, վառոդի հոտով ներծծված մորուքին։

— Դե պաչիր... պաչիր ինձ, տղաս։ Ուժեղ պաչիր, կարող է էլ չտեսնվենք։ Իսկ դու մի վախեցիր,— ասաց նա։— Քեզ համար սարսափելի՞ է, հա՞։ Դու ինձ հետ եղիր։ Ես խորամանկ մարդ եմ, միասին չենք կորչի...

Եսաուլը, որի հագին կազակային շալվար էր, պարզեց ոտքը, գրպանից հանեց մի պտղունց ծխախոտ, սկսեց պլանակ փաթաթել՝ ատամներով կծելով թուղթը։

— Տեսնո՞ւմ ես,— ասաց նա՝ գլխով ցույց տալով բակը, որտեղ իրար էր անցել Պացևիչը։— Տեսնո՞ւմ ես, ասում եմ, ինչպես է ջանում։ Միայն թե այդ հիմարից ոչինչ չի ստացվի... Հե՜յ, կազակնե՛ր,— գոռաց նա,— կրակեք ավելի հաճախակի։

Պացևիչը բարձրացավ տանիքի վրա, որտեղ պառկած էին Վատնինի և Կարաբանովի հարյուրյակների կազակները։ «Ընտանեկան» բուլդոգը ձեռքում պահած՝ նա կարգադրեց իսկույն ևեթ դադարեցնել հրաձգությունը, այլապես...

— Այլապես բոլորին կսատկացնեմ ճանճի պես,— հայտարարեց նա։— Ամեն մեկին, ով կհանդգնի հակառակել ինձ։ Լսեցի՞ք, լամպասավորներ։

Սպանված կազակներն ընկած էին հենց այդտեղ, տանիքի վրա, ծածկված հենց այն սավանով, որը Պացևիչը կարգադրել էր բարձրացնել բերդի ճակատին։

— Եսաուլ Վատնին,— ասաց Պացևիչը՝ ցույց տալով սպանվածներին,— այս զոհերի համար դուք պատասխան կտաք Թիֆլիսում, զինվորական դատախազի առաջ։

Վատնինը տեղից վեր թռավ.

— Ի՞նչ։ Ե՞ս։

— Հենց դուք։ Այս զոհերը չէին լինի, եթե դուք, ա... կարգներ, լսեիք իմ հրամանները։

Դենիսկա Օժոգինը զրեթե կախվեց քիվի վրա։ Կրակվա... պարկուճները փայլփլում էին նրա հրացանի փակաղակի տակից։ Կազակը ջանասիրությամբ զատարկում էր պահունակը, և վերջին փամփուշտը հանելիս Պացևիչը ծանր ճտքակոշիկով կրկ տվեց նրա փափուկ հետույքը։

— Վե՛ր ջ տուր... Դու հրամանը լսե՞լ ես։

— Լսել եմ, ձերդ բարձր բարեձնություն։ Բայց չէ՞ որ ես երդում եմ տվել...

— Ես քեզ համար հիմա և երդում եմ, և հարազատ հայր։ Հասկացա՞ր։

Տրյոխժոննին մռայլորեն հրացանն իրեն քաշեց։ Հրացանը նորից լցնելով՝ իբր պատահաբար, նա փողն ուղղեց Պացևիչի վրա.

— Իսկ երդման մեջ,— ակնարկեց նա՝ գույնը խիստ գցելով,— ինչպե՞ս է ասված.. Հանուն Հայրենիքի, եթե անհրաժեշտությունը պահանջի, և հարազատ հորը կարելի է շպպացնել...

— Հեռացրո՛ւ հրացանը,— բղավեց Պացևիչը՝ հետ քաշվելով։— Ես հիմա քեզ, քոսոտի մեկը...

Այստեղ նրան կանգնեցրեց Վատնինը։

— Չհամարձակվե՛ք ձեռք տալ կազակին։

— Իսկ քեզ, մուժիկիդ, բոլորից շա՞տ է պետք։— Պացևիչը «բուլդոգը» թափահարեց եսաուլի քթի առաջ։— Սպասիր, դու քո ծառայությամբ դեռ կոմս կդառնաս... կովային կոմս։

Վատնինը նայեց ատրճանակի սև անցքին և հայացքը փոխադրեց գնդապետի դեմքին. Պացևիչի շրթունքները դողում էին, աչքերը բոլորովին լուծվել էին ինչ-որ դեղնության մեջ։ Այո՞-ո՞, հիմա նրա համար ոչինչ նշանակություն չուներ, այդպիսինը կգնդակահարի...

— Անհապաղ,— ֆշշացրեց նրա վրա Պացևիչը,— կարգադրիր քո ավազակներին դադարեցնել հրաձգությունը... Բարեկամաբար եմ ասում, եսաուլ։ Հասկացի՛ր։

Եվ այդ ասելով՝ Ասում Պլատոնովիչը հանկարծ զգաց,

թե ինչպես կամաց, համարյա քնքշորեն ուղիղ իր փորին դիպավ Վատնինի ատրճանակի փողը։

— Տանիքից ցած կգցենք,— կամաց ասաց Վատնինը։— Իսկ այստեղ բարձր է... բախաներդ մի փորձեք, պարոն գընդապետ։ Ցած կգցենք և հետո կասենք, որ դուք ինքներդ եք ընկել։ Մենք բոլորս համերաշխ ենք, ոչ ոք չի մատնի... Իսկ զինվորական երդումից մենք հետ չենք կանգնի։

Պացևիչը ուժասպառված հետ քաշվեց եսաուլից.

— Ի՞նչ ես անում։ Ի՞նչ ես անում...— ասելիքն սպառեց նա,— դե, կրակի՛ր ինձ վրա։ Կարող ես սպանել, հին մարդասպան։

Եվ եսաուլը խնդությամբ գոռաց.

— Կազակնե՛ր, լսեցի՞ք։ Գնդապետը թույլ է տալիս կրակել թուրքերի վրա... Խփե՛ք դրանց, հայրենակիցներ։ Կոտորե՛ք աջ ու ձախ։

Բայազետի բերդի ճակատամասում նորից հահախակի դարձան կրակոցները, և գնդապետն իջավ գավիթ՝ փորձանքից որքան կարելի է հեռու։ «Սատանան նրանց հետ, այդ կազակների,— որոշեց նա մեքենայաբար,— միայն թե դարպասները շուտ բացեն, որպեսզի կարելի լինի հեռանալ այստեղից...»։

Բակում Իսմայիլ խան Նախիջևանսկին հաշվում էր քարերը.

— ... Երեսուն և ութ,— դարպասի մոտից հետ էին գլորում գրանիտի մի մեծ բեկոր,— երեսուն և ինը... քառասուն... Այսպես, մեկ սայլ կա, սկսիր մյուսից... քառասուն և էլի մեկ...

Քառասունմեկերորդ քարը՝ մի վիթխարի կլոր ժայռ, որը դեռ երեկ այնպես թեթև էր թվում, հիմա ոչ մի կերպ չէր շարժվում տեղից։ Միլիցիոներների դեմքերը կապտել էին լարվածությունից։

— Դե, օգնեցե՛ք,— բղավեց Իսմայիլ խանը զինվորներին։

Ոչ ոք տեղից չշարժվեց։ Մարդիկ կանգնած էին գլխահակ՝ հրացանները խաչմերուկ դրած։ Սակայն բերդը դեռ պաշտպանվում էր։ Ինչ-որ սողանցքներից, որոնց տեղը սպաները չգիտեին, թշնամու վրա էին թռչում դիպուկ գընդ-

դակները։ Պատերազմների պատմության մեջ մի չլսված բան էր կատարվում. բերդի վրա վաղուց արդեն սպիտակ դրոշներ էին բարձրացվել, իսկ բերդը բոլորովին չէր էլ մտածում հանձնվելու մասին, ընդհակառակը, շարունակում էր մարտը...

Շտոկվիչը մոտեցավ Պացևիչին, դժկամորեն պատիվ տվեց.

— Կայազորը շարված է։ Դուք այդպես էիք կարգադրել։

— Թող շուտ բացեն դարպասները։ Խելագարները դեռ կրակում են, բայց մենք նրանց համար պատասխանատու չենք... Պարոնայ՛ք,— Պացևիչը խիստ տոնով դիմեց սպաներին,— ավելորդ արյուն թափելու համար մեղքը թող ընկնի ձեր համազգեստների վրա։ Ես լվանում եմ ձեռքերս... բավական է, որ ես երեսս շրջեմ, դուք իսկույն հրահրում եք զինվորներին՝ շարունակելու այս ջարդը... Եվ հիմա էլ այս դիվոտ Նիկիտա ծիսամոլը, որի տեղը գծանոցն է։— Գնդապետը ցույց տվեց տեր Գերասիմին և իր խոսքն ավարտեց այսպես.— Ես մատս մատիս չեմ խփի,— ասաց նա,— եթե այս տերտերին թուրքերը կտրատեն հենց իմ աչքի առաջ...

Սիվիցկին երևաց հոսպիտալի դռների մեջ։

— Իսկ երբ սկսեն կտրատել իմ վիրավորներին,— բարձրաձայն ասաց բժիշկը,— ապա սովորեցրեք ինձ, խնդրում եմ, ինչպես պետք է մատը մատին խփել։ Դուք, հավանաբար, դա կարող եք անել...

— Վիրավորներին կտանենք,— տաքացած ասաց Շտոկվիչը։

— Ո՞ւր կտանեք։ Մինչև առաջին փո՞սը.. Ո՛չ, պարոնայք։ Դուք կովողներ չեք... Եվ եթե չեք կարող պաշտպանել մեզ, գոնե նվիրեք մեզ ձեր զենքերը։ Ես մնում եմ հոսպիտալում, և մենք կկռվենք... Մնաք բարով։

Միլիցիոներները վերջապես հետ քաշեցին բառասունմեկերորդ քարը։ Թուրքերը հարկադրում էին արագացնել գործը. դարպասների խոյահարումներն այժմ լսվում էին ավելի մոտիկ տեղից։ Ձիապաններն արդեն սկսել էին ձիերը հանել ախոռներից և լծել գումակային սայլերին։

— Դրոշները հանե՛ք աջ թևը,— կարգադրեց Ադամ Պլատոնովիչը։— Նրանք, ովքեր ավելի մաքուր են, թող անցնեն

առաջին շարքը։ Մենք հո բարբարոսներ չենք, պարոնա՛յք։ Իսկ բերդից դուրս գալու ժամանակ մեզ հավանաբար կդիմավորեն անգլիական թղթակիցները։ Նույնիսկ կարող է լուսանկարեն։

Կարաբանովն արձակեց պատյանը և հանեց ատրճանակը։

— Հիմարությունը ևս սահման ունի,— գոռաց նա։

Շտոկվիչը հասավ վերջին վայրկյանին, և գնդակը, որ Կարաբանովը ուղղել էր իր քունքին, թռավ երկինք։

— Հեռացի՛ր... Մի՛ խանգարիր...

Պարետը պորուչիկի ձեռքից ուժով ոլորեց-հանեց ատրճանակը։

— Որոշել եք պահպանել վեհանձնությո՞ւնը,— ասաց նա՝ շարացած տնքալով։— Մենք գիտենք պալատական այդ օձինները... Ո՛չ, սիրելիս, չի ստացվի։ Մեր խայտառակության համար կապատասխանենք միասին...

— Ապուշներ,— ասաց զինաթափված Կարաբանովը։— Դուք բոլորդ ապուշներ եք, և ձեզ ոչ մի արդարացում չկա...

Եվ այդ պահին բոլորովին անսպասելի մի այնպիսի բան պատահեց, որի մասին գեներալ Բեզակը մոռացել էր գրել իր «կանաչավուն գրքույկում»։ Մտածելով, որ հիմա պիտի թողնեն բերդը, Խվոշչինսկու աճյունի մոտ կանգնած պահակները գետնատնից դուրս բերեցին մեռած գնդապետի դիակը։

Դա հաճելի տեսարաններից չէր։ Հանգուցյալի գլուխն ընկել էր մի կողքի վրա, ցած կախված կոպերի տակից նրա աչքերը նայում էին խայտառակության դատապարտված կայազորին, նայում էին կարծես թշնամաբար ու տխուր։

— Ճանապարհ՛,— մերթընդմերթ գոռում էին պատգարակավորները։— Եղբայրնե՛ր, թուրքերն անգամ հարգում էին նրան... Ահա հենց նրան էլ առաջինը դուրս կբերենք քաղաք։ Նա արդեն խայտառակությունը չի զգում...

— Դավաճանությո՛ւն,— հանկարծ սկսեց ձայնել Ուշաստկինը։

— Ծախե՛լ են,— հստակ պատասխանեց Պոտյոմկինը։

Շտոկվիչը ուսերով երկատեց շարքը։

— Ապա մեկ էլ բղավիր,— կոպիտ ասաց նա։— Պե՞տք է ինձ զբաղվել քեզ պես հիմարին վաճառելով... Եվ ո՞ւմ ես դու պետք՝ քո խոզային մռութով։

Եվ այդ պահին բոլորը լսեցին մի չոր դղրդյուն՝ մայոր Պոտրեսովը գլորելով բակ դուրս բերեց իր թնդանոթներից մեկը։ Հրետանավորները, ամբողջ ուժով կոթնելով ձգափոկերին և բռնելով անիվների ճաղերից, լուռ, առանց բացատրությունների սկսեցին շրջադարձել թնդանոթը՝ նշան բռնելով ուղիղ դարպասների վրա։

Պացևիչը սարսափահար նետվեց դեպի Պոտրեսովը.

— Էլի ի՞նչ եք մտածել, մայո՛ր։

Նիկոլայ Սերգևիչը թափահարեց ձեռքը.

— Հրանոթը պատրաստել մարտի՛, կարտեչո՛վ...

— Կորե՛ք այստեղից, Պոտրեսով,— մայորի վրա գոռաց Պացևիչը։

— Կորե՛ք ինքներդ,— հանգիստ պատասխանեց Պոտրեսովը։— Եվ մի՛ խանգարեք ինձ մեռնել, ինչպես վայել է ռուս սպային։

Պացևիչը թքեց և հետ քաշվեց։

— Դե, ուրեմն, սատկեք, եթե բոլորդ խելագարվել եք։

— Ես կմեռնեմ,— պատասխանեց Պոտրեսովը։— Սակայն իմ խելագարությունը թուրքերի վրա ավելի թանկ կնստի, քան ձեր խելացիությունը։ Հենց որ դուք բացեք դարպասները, ես նրանց իսկույն կարտեչով կընդունեմ... Տղանե՛ր, ուղղեք հենոցները։ Լի՛-ի՛ցը՝ կո՛-ողքի՛ց։

Կարաբանովը մոտենալով մայորին, համբուրեց նրա ուսը։

— Թույլ տվեք ինձ մեռնել ձեզ հետ,— խնդրեց նա։

Մայորը սեղմեց նրա ձեռքը.

— Շնորհակալություն, պորուչի՛կ։ Ես դա գնահատում եմ... Ռումբեր կբերեք թնդանոթի մոտ։

Կարտեչի հետ այդպիսի խաղը բոլորովին դուր չէր գալիս Իսմայիլ խան Նախիջևանսկուն, մեկ էլ տեսար չհասցրիր հետ փախչել։

— Իսկ ես ի՞նչ պիտի անեմ,— հարցրեց նա։

Պացևիչը գուրս ցցեց ուսերը (կարճ մտորմունքի մեջ, գրեթե փայտացած), ապա ուսերը կտրուկ կախվեցին, ելքը գտնված էր։

— Դուք ուշադրություն մի՛ դարձրեք,— մխիթարեց նա խանին։— Մենք նրանց կկապենք։ Շտապեք ազատել դարպասները...

Պոտրեսովը վեր բարձրացրեց վառվող պայթաքուղը։

— Ես կարող եմ օգնել ձեզ այդ խայտառակ գործում։ Մի համազարկ միայն և դարպասները դուրս կթռչեն ծխնիներից... Նայեք...

Միանգամայն գունաթափվելով քաթանի պես՝ հրետանավորը պայթաքուղը մոտեցրեց բռնկիչին, բայց Շտոկվիչը արագ որսաց նրա ձեռքը.

— Մի՛ արագացրեք իրադարձությունները, մայո՛ր... Հո դուք երեխա չեք։

Ջինվորները, ով ինչպես գիտեր, վազքով ցրիվ եկան ժամանակին։ Թուրքերն արդեն գրոհում էին պարսիպները։ Սկսվեց եռուն աշխատանքը՝ պարսիպներից հետ հրել գրոհային սանդուղքները, որոնց վրա ոդկույզների նման կախված էին ոռնացող թուրքերն ու քրդերը։ Ընկնելու ժամանակ նրանց ընդառաջ էին սլանում վեր ցցված նիզակների ցանկապատերը և քարերի սրածայր ատամները...

Իսկ գրոհի օրհասական պահն արդեն վրա էր հասել։ Կամ-կամ։ Հիմա, կամ երբեք։ Պացևիչը նույնպես դա հասկացավ։ Ըստ էության, բոլոր պաշարվածներից միայն նա էր խստագույն կատարողն այն հրամանի, որը ծնվել էր հենց իր գլխում. և նա ի կատար էր ածում իր սեփական հրամանը այնպիսի համառությամբ, որ նրանից ոչ ոք չէր սպասում։

— Ո՞ւր եք գնում, գնդապե՛տ,— կանգնեցրեց նրան Շտոկվիչը։

Պացևիչը վազելով թափահարեց ձեռքը.

— Հո չպիտի կանգնեմ... Հարկավոր է հանգստացնել թուրքերին։ Նրանց ասեմ, որ մենք հենց հիմա դուրս ենք գալիս բերդից։

Փոշուց շնչահեղձ լինելով, պատերի ավազը քերծող խև գնդակների չոր չրխկոցների տակ, Ադամ Պլատոնովիչը նորից բարձրացավ տանիքը, որտեղից նա լավ երևում էր, նույնիսկ հեռվում։

Ձեռքերը տարածելով գլխավերևում, որպեսզի գրավի թուրքերի ուշադրությունը, գնդապետը բարձրաձայն գոռաց.

— Թոխտա, թոխտա։ Բարիշ-հաշտություն... Յավաշ, յավաշ...

Գնդակի հարվածից նրա ուսադիրը հանկարծ ցցվեց վեր և մի կոճակի վրա կախվեց թիկունքին։ Պացևիչը զիլ ճչաց ցավից և, ծնկների վրա նստելով, սկսեց դանդաղ շուռ գալ։

Թուրքերի ամբոխը ճանաչեց, որ դա «Պացևիչ-փաշան» էր, և թշնամու հրճվանքի աղմուկը երկար ժամանակ չէր լռում։

— Ալլա՜հ, ալլա՜հ...— գոռում էին թուրքերը։

Սակայն այդ ժամանակ շատերը տեսան, թե ինչպես երկրորդ գնդակը հարվածեց Պացևիչի ձախ թիակի տակ, և գնդապետը դանդաղ նստեց տանիքին։ Վազելով նրան մոտեցավ յունկեր Եվդոկիմովը՝ ջանալով գնդապետին մի կողմ քաշել։ Ադամ Պլատոնովիչը գիտակցությունը չէր կորցրել և, շուտով ոտքի կանգնելով, ինքն ուղղվեց դեպի սանդուղքը։

Անցնելով Վատնինի մոտով՝ նա միայն ասաց.

— Ես վիրավորված եմ։ Եվ կարծես ուժեղ... Այժմ դուք կարող եք անել այն ամենը, ինչ ուզում եք։ Դա արդեն ինձ չի վերաբերում։

Վիրավորվելուց հետո Պացևիչի այդ առաջին խոսքերը հեղինակի կողմից հաղորդվում են բառացիորեն՝ հենց այդ ձևով էլ նրանք հասել են մեզ։ Իսկ թույլատվությունը՝ անել «այն ամենը, ինչ ցանկանում եք», անմիջապես արձակեց Բայազետի կայազորի ձեռքերը...

12

Սպիտակ դրոշներն իսկույնևեթ պոկվեցին։ Կարծես կենարար քամի անցավ բերդապարսպի դիմամասերով և կազեմատներով։ Նորից ծխապատվելով՝ բերդը մեկեն սկսեց խոսել իր ուժի ամբողջ հզորությամբ՝ կրակով ու ծիծաղով, ոմբաձգությամբ ու սուլոցներով, հայհոյանքներով ու գընդակներով, հրթիռներով ու վայնասունով։

— Պատերի վրա, եղբայրներ։ Խփե՛ք դրանց...

Կլյուգենաուն հանգիստ դիտում էր, թե ինչպես Պացևիչին իջեցրին տանիքից և, տարօրինակ ձևով «հրմ» անելով, բարոնը «լե-ֆոշեն» դրեց գրպանը։ Անշտապ իջնելով գավիթը՝ ինժեներն անմիջապես ուղղվեց դեպի դարպասները, որ դրանք նորից ամրացնի։

— Իսկ ո՞վ է հիմա հրամանատարը,— հետաքրքրվեց Իսմայիլ խանը (հավանաբար նկատի ունենալով իրեն)։

— Առայժմ ես եմ,— անփութորեն ասաց Կլյուգենաուն։— Դուք, պատվարժան խան, չափից ավելի ջանասիրությամբ քարուքանդ արեցիք իմ բարիկադները։ Եվ թույլ տվեք ինձ զբաղվել դրանց՝ երկրորդ անգամ ստեղծելու գործով։

Խան Նախիջևանսկին ձիուց իջավ, երկար ժամանակ ականջով հպվեց փոշոտ գետնին, հետո ակնհայտ տարակուսանքով ասաց.

— Աստծու կամքն է։ Նրանք փախուստի դիմեցին, և շուտով մեր ընտանիքում երկու գեներալ կլինի...

Բայազետը շրջապատված էր փայլփլուն գոտով, բերդը դանդաղորեն լցվում էր վառոդի գազով, որը չէին հասցնում դուրս քաշել միջանցուկ քամիները։ Երբ Իսմայիլ խանը ականջով սեղմվեց գետնին, քրդերի ու թուրքերի հոծ զանգվածը սկսել էր խուճապահար փախչել, և հոսպիտալում կապիտան Սիվիցկին կորնցանգն ձեռքում ակամայից հապաղեց։

— Չեմ կարող վիրահատել,— ասաց նա։— Սարսափելի փոշի է, ծուխ, աղմուկ... Թող թուրքերը կորչեն հեռու։ Ամբողջը դողում է...

Կարաբանովը հրաձգությանը չէր մասնակցում, նա բարձրացավ բերդի դիմամասը և, պպզելով տանիքի եզրին, ընդարմացած դիտում էր թշնամու ջարդը։ Դարչնագույն քարերն արյունից աստիճանաբար կարմրում էին, հողապատնեշների վրայով դանդաղ հոսում էր արյունը՝ թանձր շիթերով մակարդվելով փոշու մեջ...

— Բարև, ծույլ,— նրան մոտեցավ ուրախ Վատնինը։— Իսկ դու ինչո՞ւ չես կրակում։ Ձեռքերդ վարժեցրու, պետք կգա։

— Առանց ինձ էլ բավական է,— պատասխանեց պորուչիկը։

Հրաձգությունը դանդաղորեն դադարում էր, բախտ ունեցող և ոտքից թեթև թուրքերը հասցրին փախչել հեռու։ Վատնինը նստեց շիկացած տանիքին, Կարաբանովի կողքին։

— Քո մասին, Ելիսեիչ, այստեղ տարբեր բաներ են ասում,— սկսեց նա։— Ասում են, որ դու այսօր քիչ էր մնում... էն էլի։ Ուզել ես բո՞ւխ-բա՞խ անել ինքդ քեզ։— Եվ եսաուլը, մատը դնելով քունքին, արտահայտիչ կերպով ճտտացրեց լեզվով։— Չգիտեմ, դա ճի՞շտ է, թե՞ մարդիկ ստում են։

— Դուցե և ճիշտ է,— համաձայնեց Կարաբանովը։

Վատնինը լռեց և հանկարծ շշնջաց նրա ականջին.

— Լսիր, ինչ եմ քեզ ասելու... Մեր Պացևիչին օգնեցին ազատվել մեղք գործելուց։

— Ինչպե՞ս թե,— չհասկացավ Կարաբանովը։

— Այնպես։ Ես հո այստեղ էի, ոչ մի տեղ չեմ գնացել, այնպես որ ամեն ինչ տեսա... Առաջին գնդակը կպավ նրա ուսին։ Իսկ երկրորդն արդեն խոցեց մեջքը։ Բերդի ներսից, ուրեմն... Եվ ահա ես մտածում եմ, արդյոք դո՞ւ չէիր, Ելիսեիչ։

Կարաբանովը ցնցված վեր կացավ.

— Գնա գրողի ծոցը, եսաուլ։ Ինքդ ես հավանաբար թխկացրել նրան, իսկ այժմ օյին ես թափում։

Վատնինը շփոթվեց։

— Այո՛, իհարկե,— ասաց նա։— Դուք բոլորդ ազնիվ եք։ Մի՞թե կարելի է ձեզանից ճշմարտություն իմանալ...

Կարաբանովը գնաց։ Դեռ քիչ առաջ մռայլ հուսահատության մեջ ընկղմված ամրոցում այժմ թագավորում էր բուռն ուրախությունը։

Դիմամասի բարձունքից համերաշխ երգում էին կազակները.

Դու, Ռուսաստան, Ռուսաստան,
Մայր հող ռուսական,
Իմ, այսինքն կազակիս,
Մազերը գանգուր են...

Կազեմատներից լսվում էր շարային երգը.

Սև համազգեստ հագնել,
Զինավարժության մեկնել,
Զինավարժությունը տանջանք չէ,
Բայց, իմիջիայլոց, ծանր է...

Այն ժամանակ, քանի դեռ կայազորը զբաղված էր երգելով, իսկ սպաներն իրենց վրա էին վերցրել պաշտպանության հոգսերը, Իսմայիլ խան Նախիջևանսկին կամաց սողոսկեց Պացևիչի կաբինետը և սիենդ նստեց կայազորի պետի քրքրված աթոռին։ Այդ ուզուրպատորական որոշումը Իսմայիլ խանի գլուխը մտավ միանգամից, նրա խղճուկ ուղեղի գալարների գրեթե մի ջղաձգային կծկումով։ Կլյուգենաուի հետ խոսակցությունից հետո խանը մոտավոր հաշիվներով ուղղակի «աստիճանացուցակի» կշեռքի վրա դրեց փոխգնդապետի իր կոչումը, և վերջինս ծանր թրխկոցով ընկնելով նժարի վրա, գերակշռեց կայազորում եղած բոլոր մնացածներին, ինչը և որոշեց Իսմայիլ խանի հետագա վարքագիծը։

Որոնելով-գտնելով գնդի կնիքները՝ փոխգնդապետը դրանք թաքցրեց իր մոտ։ Պետին բնորոշում է նրա առաջին կարգադրությունը, և այդ գործը խանի մոտ նույնպես ոչ մի բանի դեմ չառավ։ Առաջին կարգադրությունն իսկույնևեթ արվեց՝ հանձնարարվեց բռնել և կախաղան բարձրացնել Հաջի Ջամալ բեկին, որից փոխգնդապետը երկյուղ կրելու հիմք ուներ, բայց լրտեսն արդեն ամրոցում չէր։ Այնուհետև ջարդելով դրամարկղի կնիքները՝ Իսմայիլ խանը մեծապես վշտացավ՝ այնտեղ դրամ չհայտնաբերելով, բայց դրա փոխարեն այնտեղից սեղանին թափվեցին մոտ հիսուն հատ Գեորգիևյան նոր խաչեր, որոնք նախատեսված էին զինվորների համար։ Ամեն ինչից երևում էր, որ Պացևիչը խրախուսանքների կողմնակից չէր և այդ խաչերը իզուր տեղն էր պահում իր մոտ...

Յունկեր Եվդոկիմովը հուզված՝ վազելով եկավ Շտոկվիչի մոտ, որտեղ հավաքված էին սպաները, և դեռ շեմից հաղորդեց.

— Պարոնայք, դուք տեսեք, թե ինչ է անում Իսմայիլ խանը։

— Իսկ ի՞նչ։

— Նա խաչեր է բաժանում։ Հիացեք, պարոնայք,— պատանին ցույց տվեց բռունցքի մեջ սեղմած խաչը,— ես նույնպես ստացա։

Կարաբանովը նյարդայնորեն ծիծաղեց։ Նրա հետևից հրոհրոաց Վատնինը, և միայն Շտոկվիչը մնաց լուրջ։

— Մնաք բարով, Բայազետի սուրբ բոպեներ,— հանդիսավոր ասաց բարոն Կլյուգենաուն։— Այսօր քո անշահախնդիր պաշտպանության վերջին օրն է։

Շտոկվիչը բռունցքով խփեց սեղանին.

— Գրո՜ղը տանի։ Ի՞նչ խաչեր։ Եվ ինչո՞ւ հենց Իսմայիլ խանն է դրանք բաժանում կայազորին։

Յունկերն իր պարգևը խնամքով դրեց սեղանին, պարետի առջև.

— Դե, ինչպես չեք հասկանում,— պատասխանեց նա,— Նախիջևանի խանը իշխանության վրա է պրծել և այժմ...

— Ի՜-ի՜--նչ,— բերանը բաց արեց Շտոկվիչը։— Ի՞նչ իշխանություն։

Եվդոկիմովը թոթվեց ուսերը։

— Բայց դուք հո չե՞ք կարող ժխտել, պարոն պարետ, որ Իսմայիլ խանն իր կոչումով հաջորդում է շարքից դուրս եկած գնդապետ Պացևիչին։

Շտոկվիչն ատելությունից ատամները կրճատացրեց.

— Ա՜խ, ահա թե ինչ։ Հիմքերը օրինական են... Մեկից նոր միայն ազատվեցինք, հիմա արդեն երկրորդը... Ի՞նչ եք քրքջում, Կլյուգենաու։

Պրապորշչիկը չէր թաքցնում ծիծաղը.

— Պարոն պարետ, ես հո պարտավոր չեմ լաց լինել, երբ գտնվում եմ խեղկատականոցում։ Ճիշտ է, այս խեղկատականոցը մտնելու համար որոշ մարդիկ վճարում են իրենց արյամբ։ Սակայն ծիծաղելին միշտ մնում է ծիծաղելի...

Վատնինը սուրը թրմփոցով խփեց հատակին, ափով ներքևից վերև խճճեց մորուքը։

— Օ՜խ, օ՜խ-խո՜,— հոգոց հանեց նա։— Կոչման դեմ չես գնա, նա, ինչ էլ մենք անենք, այնուամենայնիվ, փոխգնդապետ է...

Եվ կապիտան Շտոկվիչը, ինչպես հարկն է մտածելով, ասաց.

— Պարոնա՜յք, մենք այստեղ բոլորս յուրայիններ ենք, ես կխոսեմ անկեղծորեն։ Հարկավոր է ինչ-որ մի բան հնարել, որպեսզի կայազորը ազատվի Իսմայիլ խանի զորավարական հանճարից։

— Բայց կնիքներն արդեն նրա ձեռքում են,— հեգնանքով ասաց Կարաբանովը։

— Կնիքը պատիվ չէ։ Այն կարելի է տալ խանին՝ մի քիչ պահելու, իսկ հետո ձեռքից կվերցնենք,— պատասխանեց Շտոկվիչը, և այդ պահին նրան զեկուցեցին, որ Սիվիցկին ավարտել է Պացևիչի վիրահատությունը...

Սիվիցկին Կիտաևսկուն հանձնարարեց վիրահատված օջախներից հանել տուրնիկետները և հետևել, թե գնդապետը երբ կսկսի փսխել։ Նայելով Պացևիչի գունատված, ճակատին կպած մազափնջերով դեմքին, մտախոհ կապիտանը չոր սրբիչով մաքրում էր արյունոտ ձեռքերը. ջուր չկար։ Հետո սպիրտով ափերը շփելով՝ նա հանկարծ ասաց.

— Տարօրինակ է։

Կիտաևսկին թուլացրեց դաշտային տուրնիկետների պտուտակները՝ ազատելով արյան շրջանառությունը.

— Ներեցե՛ք, կապիտան, դուք ի՞նչ ասացիք։

Սիվիցկին, մի կողմ շպրտելով սրբիչը, շարժվեց դեպի սեղանը, որի վրա պառկած էր ցավատանջ և քլորոֆորմի ազդեցության տակ անշարժացած Պացևիչը։

— Տնայնագործական եղանակով պատրաստված «կոտորակներով» անրակի ջախջախումը,— ասաց բժիշկը,— ինձ հասկանալի է։ Բայց երկրորդ վերքը տարօրինակ է երևում։ Ձեզ մոտ, Վասիլի Լեոնտևիչ, այնպիսի կասկած չկա՞, որ գնդապետը ներսից է ստացել գնդակը...

— Ներսի՞ց... Ներեցեք, չեմ հասկանում ձեզ։

— Կրակոցը կատարվել է բերդից,— եզրափակեց Սիվիցկին։— Որտե՞ղ է այն գնդակը, որ դուք հանեցիք վերքից։

— Նայեք լագանի մեջ, եթե ցանկանում եք...

Սիվիցկին անցավ վիրահատման սենյակ, կռացավ լագանի վրա։ Բամբակի արյունաթաթախ կնձիկների, կտրատված երկաթի ժանգոտած կոտորակների և ոսկորների միջից հան-

ված տափակ գնդակների մեջ հանկարծ պսպղաց հեսանած էրեսակով մի բան։

— Հենց այդպես էլ կա,— ասաց Սիվիցկին։— Գնդակը մելքիորից է։ Եվ տրամաչափն էլ նույնն է... Ա՜յ-ա՜յ, բարոն։

Նա գնդակը կոխեց գրպանը, և Կիտաևսկին ձայն տվեց նրան.

— Ալեքսանդր Բորիսովիչ, մի բոպեով...

Պացևիչը դանդաղ ուշքի էր գալիս։

— Կոկռալով փորձանք բերեցին,— արեց նա առաջին նկատողությունը։— Դուք բոլորդ շատ էիք ուզում, որ ես հոսպիտալ ընկնեմ։ Դե, այժմ ահա զբաղվեք... Գոնե ասացեք, ի՞նչ է կատարվում ինձ հետ։

— Բոլորովին դատարկ բան,— հանգստացրեց նրան Սիվիցկին։— Անրակը մի քիչ կցավի, մնացածը... Ընդհանուր առմամբ, դատարկ բան է։

— Խմել եմ ուզում,— պահանջեց Պացևիչը։— Ջուր տվեք։

Սիվիցկին և Կիտաևսկին իրար նայեցին։

— Երկու գդալ,— հանձնարարեց բժիշկը։— Տվե՛ք...

Սպաները երեկոյան համոզեցին Խվոշչինսկայային հողին հանձնել հանգուցյալ ամուսնու դին։ Նիկիտա Սեմյոնովիչին դագաղի մեջ չդրին՝ պինդ փաթաթեցին զինվորական շինելի մեջ, որի վրա ձյութված թելով կարեցին պատվոնշանները։ Մինչև խոր գետնատան պատի մեջ դամբարանի նման գերեզման կփորեին, կայազորին թույլատրված էր հրաժեշտ տալ սիրելի պետին։

Ագլայան կանգնած էր հանգուցյալի սնարի մոտ, լռախոհ սպաների կողքին. դրոշները խոնարհված էին մինչև գետին։ Թմբուկները ժամանակ առ ժամանակ խփում էին համաչափ կոտորակներ՝ մարդկանց մեջ տագնապ ու սարսուռ առաջացնելով։ Դիակի մոտով հանդիսավոր անցնում էին Բայազետի շարքային պաշտպանները՝ դեռ հեռվից հանելով գլխարկները։ Նրանցից ոմանք համբուրում էին գնդապետի կրծքին ծալած ձեռքերը, մյուսները բռունցքով մաքրում էին արցունքները։

Խվոշչինսկին պառկած էր տախտակների վրա՝ ձգված և հին ճոքակոշիկների թաթերը չոած, ասես դեռ երթային շարքում լիներ։ Շատ տարիներ առաջ, որպես կանտոնիստ[1]-մանուկ Ֆլեյտան ձեռքին քայլելով զորքերի առջևից, նա մտավ այն փառավոր աշխարհը, որը կոչվում է ռուսական բանակ, իսկ այժմ հեռանում էր այդ աշխարհից որպես ծերունի գնդապետ։ Նրա համար վերջացավ ռուսական ռազմիկի դժվարին կյանքը, որոտացին անցան վաղեմի ճակատամարտերը, այլևս չեն ցավում հին վերքերը, և մարտական դրոշներն էլ երբեք չեն ծածանվի նրա սպիտակահեր գլխի վերև։

Բոլորը-բոլորը, ինչ նա մի ժամանակ տեսել էր Սամարղանդի և Խիվայի կուրացնող ավազուտներում, մռայլ Դաղստանի լեռնային գահավանդներում, պանծալի Մալախով Կուրգանի մոտ և սոսկալի Գյոկ-Թեփեի պատերի տակ,— այժմ այդ բոլորը նա տանում էր իր հետ՝ մարդկանց թողնելով միայն հիշատակ իր մասին։ Նա հայրենիքին ծառայեց աղնվաբար ու անկեղծորեն, և հենց դրանից էլ երևի այդպես հանգիստ ու վսեմ էր հիմա նրա հասարակ զինվորական դեմքը...

Տեր Գերասիմը նրա վրա ասաց վերջին դամբանական խոսքը՝ այն ավարտելով Մատթեոսի տասներեքերորդ գլխից մեջբերումով.

— Ոչ մի տեղ,— ձայնը բարձրացրեց քահանան, ակնարկելով վերջին իրադարձությունները,— ոչ մի տեղ մարգարեն այնքան քիչ պատիվ չունի, որքան իր Հայրենիքում և իր տանը...

Նորից հնչեցին թմբուկները։ Թնդաց հրացանային համազարկը։ Ագլայան կամաց ճչաց, և մեկը սեղմեց նրա արմունկը։ Սպաները, մերկացնելով սրերը պատվի առան։ Գնդապետ Խվոշչինսկու դին զգուշությամբ մտցրին որմնախորշը, գերեզմանը փակեցին աղյուսով և սվաղեցին կավով։

Իսկ երբ բարձրացան վերև, տեսան, որ Բայազետի վրա դանդաղորեն շառագունում էր հրդեհների ցոլքը...

---

[1] Կանտոնիստ — հնում զինվորի զինապարտ որդի (ծննդյան օրից)։



Ագլայայի լրագրերեն

Ինչ նրաշք է այդ դրաման, ճիշտ չէ՞... Ընթերցմանը ներկա էին Նելյուբոխտիեը, Մաճուկովը և ճոգեճատոր Գրեսերը: Ես ճամեստորեն երեացի այնտեղ սպիտակ մետաքսից կարած շրջազգեստով, և տղամարդիկ միաձայն ինձ ամենահետաքրքիր կինը ճամարեցին: Իսկ երեկ մեճ՝ բոլոր ազնվակիրթ տիկնայք, այցելեցին սպայական ճոսպիտալ, այնտեղ տեսան ազնվազարմ ընտանիքներից երիտասարդ շատ մարդկանց և նույնիսկ մի իշխանի: Այնքան ճաճելի էր նա՝ այդ սիրասուճ իշխանը, և անընդճատ ինձ նշանեեր էր անում: Իսկ իմ զզվելի ամուսինը մետաքսե ժանյակեեռով ճոր շրջազգեստի ճամար փող չտվեց, որքան էլ ես լաց եղա նրա առաջ, և դրա ճամար էլ, ma chère Ագլայա, այս անգամ ես չկարողացա այնքան ճետաքրքիր լինել...

Ագլայա Եվգրաֆինսկայային ուղղված նամակից, որը սպասում էր նրան Իգդիրի փոստում։

Զարմանալի լռություն էր այդ տանը։ Նեկրասովին երբեմն թվում էր, թե այն ինչ-որ բանով նման է կաթնահունց խմորի։ Քթուն բարձրանալով առատ խմորիչից՝ այդ լռությունն ասես սողալով տարածվում էր սենյակներով մեկ՝ ծորալով և սահուն անցնելով դռների շեմքերից։ Եվ միայն երբեմն Յուրի Տիմոֆեևիչը նախասրահից լսում էր թեթև քայլերի ձայն, մոլոկանների ճռռոց, անվրդով խոսակցություններ, մուժիկների և կնիկների համբույրների հաճախակի չպչոցներ, փաղաքշական խոսքեր.

— Քույրիկ Պելագեյուշկա, սիրելիս, աղ դրած վարունգ չե՞ս ուզում, արդյոք։

— Իմ բարի եղբայրիկ,— լսվում էր պատասխանը,— շնորհակալություն քո սիրալիր վերաբերմունքի համար, քաղցր լոռաբլիթից հետո վարունգ ուտելու ցանկություն չունեմ։

Նեկրասովի մոտ՝ կցասենյակ, հաճախ գալիս էին մինչև ծնկները սպիտակ վերնաշապիկներով մուժիկներ։ Ոչ մի բան չէին հարցնում, իրենք էլ ոչինչ չէին պատմում։ Եվ նրա մոտով նայում էին կարծես մի ուրիշ կողմ։ Խաղալով փարթամ մորուքների հետ և համբուրելով մագաղաթապատ գույնզգույն քարասալիկները՝ գնալուց առաջ ասում էին.

— Մե՛ղք, ինչպիսի՜ մեղք... Աստվա՜ծ իմ։

Կերակրում էին, սակայն կարծես մորթելու համար։ Պառավ Եպիֆանիան էլի մի քանի անգամ եկավ նրա մոտ, վերքերին ինչ-որ քսուքներ դրեց, խորհուրդ տվեց որքան հնարավոր է շատ մեղր ուտել, և շտաբս-կապիտանն ուժերի արագ վերականգնում էր զգում։ Սակայն անգործության դատարկությունն սկսում էր ճնշել նրան, և դրա համար էլ, երբ մի անգամ Աննուշկան եկավ նրա սենյակը, Նեկրասովը նրան պահեց իր մոտ։

— Ձեր խուտորում, երևի, գրագետ մարդիկ քիչ չկան,— ասաց նա։— Ա՜յ, եթե ինձ համար մի որևէ գիրք գտնեիք։ Փնտրի՛ր, աղավնյակս, հը՞։

— Իսկ մենք գրքեր չենք պահում,— պատասխանեց աղջիկը՝ ինչ-որ բանից երկյուղ կրելով։— Ապին ասում է, որ տառը սպանում է ոգին։ Բազմախոսության մեջ փրկություն չկա...

Արտաառոց ու տարօրինակ էր այդ ամենը լսել գեղեցիկ ու առողջ աղջկանից, բայց համոզել նրան հակառակը, Նեկրասովին անտեղի թվաց, և շտաբս-կապիտանը հարցրեց ուրիշ բանի մասին.

— Իսկ քաղաքում ի՞նչ կա։ Մերոնք ինչպե՞ս են այնտեղ։ Այսօր գիշերը ես վատ եմ քնել, անընդհատ կրակոցներ էի լսում... Պաշտպանվո՞ւմ են դեռ։

— Այո՛, անընդհատ մեղք են գործում,— հանգիստ պատասխանեց Աննուշկան։— Ձեր թագավորը չարագործ է, նա սատանային արյունով է զվարճացնում։

Նեկրասովը զայրացավ։

— Հիմարություն ես դուրս տալիս,— ասաց նա։— Այդ դուք եք թագավորին հեռվից հայհոյում, իսկ թուրքական սուլթանին կանոնավոր հարկ վճարում։ Ահա թե ո՛րն է մեղքը։

Աննուշկան հոնքերը կիտեց, թավ թարթիչներով կիսախուփ աչքերը խելացիորեն տխրեցին։

— Ախր, ինձ համար էլ հաճելի չէ,— խոստովանեց նա։— Հրեն, ապին ինձ համար քանի սնդուկ օժիտ է կուտակել։ Բայց ինձ հագնելու ոչ մի բան չեն տալիս... Մի տղա կար խուտորում, էն էլ էրզրումում կորավ, և վերջ։

— Քո տարիքին...— երազեց Յուրի Տիմոֆեևիչը։— Է՛խ, դու հիմար ես, ոչինչ չգիտես։ Թքեիր ամեն ինչի վրա և գնայիր տուն՝ Ռուսաստան գնայիր... Այնտեղ լավ է։

Աննուշկան գնաց վշտացած, և Նեկրասովը շուտով լսեց ինչ-որ մեկի անհոգ երգը։ Դուրս նայեց լուսամուտից՝ տեսավ թուրքական ռեդիֆին, որը հրացանը անկտիի նման դրել էր ուսին։ Ցանկապատի մոտ, որի հետևում տարածվում էր մոլոկանների խիտ այգին, ռեդիֆը կանգ առավ և ծիծաղելով փլցրեց ցանկապատը։

Սավելիչը մոտեցավ նրան՝ փորձելով խղճմտանք հարուցել։

— Միայն ասա, մենք քեզ թեկուզ ամբողջ մի սայլաբեռ խնձոր կտանք։

Թուրքը պատասխանեց, որ իրեն միայն մի խնձոր է հարկավոր։ Միայն մի։ Ո՛չ, նրան օգնել պետք չէ, նա ինքը խընձոր կընտրի իր համար, իր ճաշակով։ Եվ այդում սկսվեց բարբարոսությունը, որից Նեկրասովի համբերությունը հատավ, նա ուզեց վեր կենալ և ջարդել թուրքի մուրը։

Քիչ էր մնում Սավելիչը լաց լիներ։

— Աստվա՜ծ իմ, գոնե մի ծառ փրկիր...

Զինվորը գազազած ջարդում էր բերքատու ճյուղերը, ճաքճատում էին մատաղ շիվերը. նա մագլցում էր ծառերի կատարները, դանակով կտրում ոստերը, ոչնչացնում ինչ-որ անհասկանալի մոլուցքով։ Վերջապես իր ճաշակով խընձոր ընտրեց, պինդ խրթոցով կծեց խնձորը և գնաց՝ իր հետևից թողնելով այլանդակված այգին ու փլված ցանկապատը։

— Ահա այսպես է միշտ,— վշտացած Սավելիչն ասաց Նեկրասովին։— Գալիս են ջուր խմելու, ամբողջ ջրհորը լցնում են թքով, մի գլուխ սոխ են ուզում՝ տակնուվրա են անում ամբողջ բոստանը... Եվ այս բոլորը մենք համբերում ենք ձեր պատճառով,— զայրույթով ավելացրեց մուժիկը։— Դուք, երդվյալ մարդիկ, այստեղ արշավանքներ եք կատարում, իսկ ձեզանից միայն խառնակչություն է գալիս...

Նեկրասովը նայեց մուժիկին, և այդ ծերուկը հանկարծ նողկալի թվաց նրան։

— Ձեմ ուզում մեղավոր լինել,— հանգիստ ասաց սպան։— Եթե համարում ես, որ մենք ենք քո թշնամիները, ապա, ուրեմն, ես քո տանը մնալ չեմ կարող... իսկ աղուհացի համար շնորհակալություն։

Սավելիչը մռայլվեց։

— Մեզ մի՛ նեղացրու,— ասաց նա։— Դու արդեն հաղորդակից ես դարձել վերին օգնությանը։ Ոգին կենդանություն է տալիս քեզ։ Մի՛ կշտամբիր, որ խնդրում ենք մեր կաթն ուտել...

Նեկրասովը նախասենյակում վաղուց արդեն նկատել էր տնայնագործական շուգունե մամլիչը։ Նա ճզմիչի տակ մի կտոր կաշի դրեց, լծակը ձգեց իր կողմը և կաշվի վրա պար-

զորոշ դրոշմվեց ռուսական տասանոցի մի երեսի ռելիեֆը։

— Ահա,— ասաց սպան՝ նույնիսկ չզարմանալով,— ահա թե ինչումն է ձեր վերին օգնությունը... Շրխկացրու, հա շրխկացրու։ Դրա համար թուրքական սուլթանը քեզ կամշատկա չի աքսորի։

Սավելիչն աներկյուղ նայեց Նեկրասովին։

— Գաղտնի արարքը՝ գաղտնի էլ կդատապարտվի։ Այդ բարիքից իմ ամբարում լիքն է։ Ուզո՞ւմ ես, քեզ համար էլ միանգամից մի երեք պարկ զանազան դրամներ լցնեմ։

— Ո՛չ, ինձ պետք չէ,— պատասխանեց շտաբս-կապիտանը։— Ես չեմ կարողանում ապրել պաշարով...

Այդ օրը խուտոր եկավ Բայազետի մյուլթեզիմը, որը սուլթանի հպատակների վրա հարկեր էր դնում, և մոլոկաններին պարտավորեցրեց մինչև երեկո յուրաքանչյուր ծխից երեքական եզ հանձնել, քաղաք տանել տասը սայլ ալյուր, իրենց թողնել մեկական ոչխար ու մեկական հավ, մնացած ամբողջը պետք է մտնի ռեդիֆների կաթսան։

Նեկրասովը զարմանքով նկատեց, թե մոլոկաններն ինչպես հնազանդորեն համաձայնվեցին ամեն ինչին։ Միայն երբ մյուլթեզիմը գնաց խուտորից, նրանք սկսեցին լաց լինել և վշտից համբուրվել։ Անկյուններում կամացուկ հեկեկում էին կնանիք, ծերունիները գոմերից հանում էին ծխագույն եզները, ցորենը լցնում սայլերի մեջ, բռնում թռչուններին։

Սակայն այդ պահին ձայների դղրդյուն և փոխհրաձգության ճարճատյուն հասավ խուտոր։ Յուրի Տիմոֆեևիչը դուրս եկավ սանդղամուտք, որտեղից երևում էր ամրոցը, և սարսափով տեսավ, որ թուրքերը գրոհի գնացին։ Հենց այստեղ էլ մոլոկանները նրան գտան ուշաթափ պառկած։ Շտաբս-կապիտանը կորցրեց գիտակցությունը, երբ տեսավ Բայազետի վրա բարձրացված սպիտակ դրոշները։

Նրան տարան «կցասենյակ», և նա սկսեց ծանր զառանցել։

— Նիկոլայ Սերգեևիչին ինձ մոտ... կանչե՛ք,— ճչաց նա։

— Սուրբ գործ է,— վախեցան մոլոկանները։— Վերին ներշնչումն սկսեց խոսել նրա մեջ։ Երանության մասին հիշեց...

Նրա մոտ բերեցին զառամյալ մի ծերունու, որին տարօրինակ պատահականությամբ կոչում էին Նիկոլայ Սերգեյի որդի։ Սերուկը «կցասենյակ» մտավ, վարդագույն ափը սեղմեց սպիտակ մազերով քունքին։

— Դու ինձ կանչե՞լ ես,— հարցրեց նա։

Յուրի Տիմոֆեևիչը պղտոր հայացքով նայեց ծերունուն և ասաց.

— Այդ դո՞ւք եք, Պոտրեսով... Շո՛ւտ, շո՛ւտ, պայթեցրեք վառոդի նկուղները։ Նրանք արդեն բարձրանում են պարիսպների վրա...

Մոլոկաններն այստեղ սկսեցին թքել, գնացին՝ դռների մեջ իրար հրմշտելով և նրան թողնելով մենակ։ Սակայն շուտով Բայազետի պատերի տակ թուրքերի ծանր ջախջախման մասին լուրը հասավ խուտոր, և աղանդավորները ցորենն ու անասուններն այլևս քաղաք չտարան. նրանք կարծես զգում էին, որ թուրքերը հիմա նրանցով զբաղվելու ժամանակ չունեն։

Նեկրասովն ուշքի եկավ, և անվրդով, ժպտադեմ Սավելիչը նրան դիմավորեց այս խոսքերով.

— Իսկ ես շնորհավորանքով եմ եկել քեզ մոտ։ Խիզախ գործեր են կատարում հայրենակիցներդ։ Եվ չուզես էլ, սիրտդ ուրախանում է... Քո երդվյալները հետ են մղել փաշայի հարձակումը, հիմա էլ բզավոցով երգում են։ Հլա լսի՛ր։ Ջեն էլ մտածում շնորհակալություն հայտնել աստծուն իրենց հոգևոր միաբանությամբ. որտեղի՞ց, կնիկների ու սպանությունների մասին են կոկորդները պատռում։

2

Տիկին Խվոշչինսկայան պատմում էր մեզ, թե ինչ սարսափելի է եղել նայել խարույկին, ուր հրդեհը նետում էին ամեն տարիքի կանանց ու երեխաների, որոնք օգնություն էին խնդրում, զոռալով ամրոցի կողմը՝ ամա՜ն, ուռռ՜ա...

Ա. Խան-Աղով, 1878 թ.

Այդ օրն այլևս երգեր չէին հնչում։ Ծարավը նորից հիշեցնել տվեց իրեն, և ուրախանալու տրամադրություն չկար։

Մարդկանց մարմինները կարծես չորացել էին կիզիչ արևի տակ, որը նրանց միջից քամել էր ամբողջ խոնավությունը։ Մարմնական տանջանքներին ավելացավ նաև սարսափելի ուժասպառությունը. գրոհի օրը էժան չնստեց։

Մարդիկ սկսվել էին։ Գիշերը նրանք ցրվեցին անկյունները՝ փրկիչ զովություն որոնելով։ Ծարավ ձիերը աղիողորմ խրխնջում էին ձիանոցներում, սմբակներով խփում պատերին։ Նեղ սոֆիտներից, որոնք մարմրող լույս էին սփռում լազարեթի ներսը, բերդով մեկ տարածվում էին վիրավորների տանջալի ճիչերը։ Սպանվածների համար հիմա հեշտ էր. նրանք պառկած էին հանգիստ ու խաղաղ, նրանց այլևս ոչինչ չէր տանջում։ Սակայն ինչ-որ տեղ լաց էին լինում երեխաները, և այդ լացը դառնում էր անտանելի...

— Հեռացրե՛ք երեխաներին,— ճչաց Պացևիչը՝ վրայից գցելով ծածկոցը։— Ո՞վ է երեխաներին ներս թողել բերդ։

Կիտաևսկին նրա խոնավ դաստակի վրա շոշափեց թույլ զարկերակը։

— Հանգստացե՛ք, գնդապետ։ Այստեղ երեխաներ չկան։ Դա ձեզ թվում է...

Պացևիչը ծուլորեն գլուխն իջեցրեց քրտնքից թրջված բարձին, որի վրա դրված էր տասնմեկերորդ շարժական հոսպիտալի թավ դրոշմը։

— Է՛խ... է՛-է՛-է՛խ,— ծանր տնքաց նա։— Պետական խորհրդական, ինչո՞ւ եք ինձ խաբում։ Չէ՞ որ ես լսում եմ երեխաներին... Գնացեք նրանց մոտ, որպեսզի նրանք ոչինչ չզարդեն... Այժմյան երեխաներն այնպես վատ են դաստիարակված։

— Ի՞նչ է պատահել նրան,— հարցրեց Սիվիցկին՝ մոտենալով օրդինատորին։

— Նա կարծես ընկնում է կոմային վիճակի մեջ։ Նրա համար դա վտանգավոր է։

Սիվիցկին կռացավ վիրավորի վրա՝ մատներով բռնելով հաստ կզակից, պահանջկոտորեն ցնցեց նրան։

— Պարոն գնդապե՛տ,— կտրուկ հրամայեց բժիշկը։— Նայե՛ք այստեղ... ուղիղ նայեք... Դուք հիմա որտե՞ղ եք գտնվում։

Պացևիչը դանդաղորեն բացեց աչքերը, որոնք քնած հավի աչքերի պես պատած էին կաթնագույն թաղանթով։

— Ձենք վիճում,— ասաց նա հստակ,— չէ որ ես ստույգ գիտեմ, որ Վլադիմիրյան շքանշանը կրում են սև երիզներով կարմիր ժապավենի վրա...

— Արդեն պատրաստ է,— ասաց Սիվիցկին և ձեռքը հեռացրեց լպրծուն կզակից։

Մոմերի և ուղղակի նավթի մեջ թաթախված լաթերի թրթռուն բոցը լուսավորում էր Բայազետի լազարեթի մռայլ վիճակը։ Վիրավորները պառկած էին հատակին՝ մեկը մյուսիպ կիպ կպած։ Ամեն կողմից լսվում էին տնքոցներ, ոռնաձայն կանչեր, բողոք, խնդրանք և խուլ հառաչանքներ։ Դռների մեջ հայտնված Կլյուգենաուն երկար ժամանակ դիտում էր այդ ծանր պատկերը։

— Դուք ինձ մո՞տ եք եկել, բարոն,— հարցրեց նրան Սիվիցկին։

— Այո՛։ Արդյոք ձեզ հիմա պետք չէ՞ իմ օգնությունը։

Գոգավոր ակնոցի տակից բժշկին էին նայում պրապորշչիկի հանգիստ, ջինջ աչքերը։ Լռությունը նրանց միջև երկարեց։

— Շնորհակալություն ձեզ, բարոն,— պատասխանեց կապիտանը։— Այն ամենը, ինչ դուք կարող էիք, արդեն կատարել եք։

Կլյուգենաուն գրպանից հանեց ատրճանակը։

— Վերադարձնում եմ,— ասաց նա։— Ատրճանակն իսկապես լավն է։ Ես, ճիշտ է, միայն մի անգամ եմ այն օգտագործել։ Այն էլ պատահաբար։

— Թող մնա՛ ձեզ,— թույլ տվեց Սիվիցկին։— Թող մնա որպես հիշատակ։ Նման պատահականությունների հարցում ես ձեզանից ավելի քիչ երջանիկ եմ...

Կլյուգենաուն միանգամայն հանգիստ էր և ուշադիր նայելով կիսամեռ գնդապետ Պացևիչին՝ ատրճանակը պահեց գրպանում։

— Այսպիսի նվերից ես չեմ հրաժարվի,— ասաց նա։

Մութ բակում նրան համակեց կպչուն տոթը։ Լիակատար խավարի մեջ միջնաբերդի պատերն անսպասելիորեն սկսեցին լուսավորվել հեռավոր հրդեհների գունատ ցոլքերից։ Կլյուգե-

նաև բարձրացավ դիմամասի պատի վրա, որտեղ արդեն հավաքվել էին կայազորի գրեթե բոլոր սպաները։ Այստեղից լավ երևում էր, թե ինչպես քաղաքի ծայրամասերում բոցավառվում էին հրդեհները։ Սակայն շուտով հրկիզվեցին նաև մոտակա թաղամասերը, Բայազետի վրա արագ վեր ելան կրակի բոցե լեզուները։

— Ի՞նչ կասեք, բարոն,— հարցրեց նրան Շտոկվիչը։

— Դա ինձ հիշեցնում է «Հուգենոտներ» օպերայի չորրորդ գործողությունը... Վրեժ են լուծում,— ավելացրեց նա։— Վրեժ են լուծում սրիկաները։

— Չարություն են թափում,— նրան ուղղեց Պոտրեսովը։— Ողորմելի է այն երկիրը, որտեղ օրենքներ չկան, կան միայն ադաթներ։

Իսմայիլ խան Նախիջևանսկին այդ գիշեր չպառկեց քնելու։ Շտոկվիչը նրա սենյակի պատուհանում լույս տեսավ և ներս մտավ առանց դուռը ծեծելու։ Փոխգնդապետն աջոր ոտքով մոտեցրեց պարետին։

— Թույլ եմ տալիս,— ասաց նա։

Շտոկվիչը նստեց, ոտքը պարզեց առաջ, ձեռքերը խաչեց կրծքի վրա։

— Հիմարների համար օրենք չի գրված,— խոսեց նա։

— Դա ճիշտ է,— համաձայնեց խանը, փոքր-ինչ սպասելով։

— Հրամանատարի պաշտոն ստանձնելը...— սկսեց կապիտանը։

— Արդեն ստանձնել եմ,— շտապեց Իսմայիլ խանը։

— Ձևականություններից չի կախված,— ավարտեց Շտոկվիչը։

— Ես էլ եմ այդպես մտածում,— հավանություն տվեց փոխգնդապետը։

— Եվ դրա համար էլ լավ կլինի...

— Ես այժմ հանգիստ եմ,— գլխով արեց խանը։

— Կայազորի հանգստության համար...

— Ոչ ոքի չարթնացնել,— գլխի ընկավ խանը։

Շտոկվիչը ապշած նայեց խանին։

— Այո,— ասաց նա։— Դուք միանգամայն իրավացի եք... Ասենք՝ ես հասկանում եմ, որ ձեզ հետ խոսելն անօգուտ է։ Ցավոք, այստեղ հիվանդանոց չէ, իսկ ես էլ, ավա՜ղ, պրոֆեսոր Բալինսկին[1] չեմ։

Խանին բարի գիշեր ցանկանալով՝ պարետը գնաց վատ տրամադրությամբ։ «Արդյոք չկապկպե՞լ նրան,— մտածում էր նա՝ քայլելով բերդի երկար միջանցքներով։— Թե՞ ուղղակի ուշադրություն չդարձնել նրա վրա և ամեն ինչ անել իր ուզածի պես։ Շատ հեռու է իմաստուն լինելուց, բայց գլխի է ընկել զավթել կնիքները...»։

Նրան հանդիպեց սանիտարը.

— Պարոն կապիտան, նորին բարձր բարեծնությունը ուշքի են եկել։ Խնդրում են, եթե դուք քնած չեք, այցելել նրան։

Շտոկվիչը շրջվեց դեպի հոսպիտալը։ Պացևիչը դիմավորեց նրան մեղավորի թույլ ժպիտով, որը նման էր հիվանդագին ծամածռության։

— Ահա թե ինչպես... ինձ,— կամացուկ ասաց նա։— Ես ուզում էի տեսնել ձեզ, որպեսզի հարցնեմ... ի՞նչ կա կայազորում։

Շտոկվիչը նստեց մահճակալի եզրին, ձիգ օձիքի մեջ այս ու այն կողմ շուռ տվեց քրտնած վիզը։

Ամեն ինչ բարեհաջող է, Ադամ Պլատոնովիչ։

— Դուք այնտեղ... նայեք,— հուշեց Պացևիչը։— Դա շատ պատասխանատու բան է... հատկապես հիմա։

— Մի՛ անհանգստացեք,— պատասխանեց պարետը։— Մեր Իսմայիլ խանը արծվի աչք ունի։ Նա հեռու է տեսնում։

— Իսկ մի՞թե... մի՞թե նա։

— Այո՛։

Պացևիչը շուռ եկավ պատի կողմը։

— Վզակոթին տալով վոնդեք նրան,— ասաց նա։— Խաների համար միլիցիան էլ բավական է։ Իսկ դուք... Ես արդեն վեր չեմ կենալու։ Վերցրեք ձեզ վրա...

— Շնորհակալություն վստահության համար,— ինչպես հարկն է կշռադատեց Շտոկվիչը։— Բայց ես մնում եմ որպես պարետ։ Միայն պարետ, և ոչ ավելին։ Ես ուրիշի կեղտերը խփշտել չգիտեմ։

Պացևիչը ոչինչ չպատասխանեց և փակեց աչքերը։

---

[1] Ի. Մ. Բալինսկի — նշանավոր հոգեբույժ։

Շտոկվիչը գնաց իր սենյակը, սերթուկի գրպանները կոխկխեց կաշվե երեք տոուզ քսակներ։ Հետո գնաց կազմատ, որտեղ տեղավորված էին փախստականները և միլիցիայի մնացորդները։ Ոչ մի բառ չասելով՝ պարետն արձակեց քսակներից մեկը, և սեղանի վրա ծանր զնգոցով թափվեցին տասանոց ոսկիները։

— Ահա,— ասաց նա՝ ոսկին կույտ անելով,— հարկավոր է դուրս պրծնել Բայազետից, կապվել գեներալ Տեր-Ղուկասովի հետ և պատմել նրան այս ամենի մասին... Ո՞վ կհամարձակվի գնալ։

Մարդիկ լռում էին, և Շտոկվիչը հայհոյելով բացեց երկրորդ քսակը։ Այժմ նրա առջև ոսկու մի ամբողջ բլուր էր։

— Նորից եմ հարցնում, ո՞վ է աղքատ և համարձակ։

Մթության միջից դուրս եկավ խիստ դեմքով, կորաքիթ մի երիտասարդ լեռնցի՝ ձեռքերի ափերը երկար դաշույնի վրա դրած։

— Ես Պետրոսյանի որդին եմ՝ Սամսոն Պետրոսովը։ Թուրքերը սպանել են իմ մորը և հրկիզել իմ տունը։ Ինձ մնացել են միայն կինս և ահա այս դաշույնը։ Թույլ տուր, ռուս հրամանատար, և ես կգնամ Սուրբ Հովհաննես, նույնիսկ չվերցնելով այդ փեշքեշը։

Շտոկվիչը ոսկին նորից լցրեց քսակները և պարզեց հայ երիտասարդին.

— Վերցրո՛ւ,— ասաց պարետը։— Պատերազմից հետո քեզ պետք կգա։ Նոր եզներ կգնես և նոր տուն կկառուցես։ Բայց հիմա դրամը թող կնոջդ մոտ... բերդից կիջնես պարանով, որպեսզի քեզ ոչ ոք չնկատի։ Կհագնվես քրդի պես։ Ես քեզ գրություն կտամ ուղղված Արզաս Արտեմևիչին։ Եվ մենք քեզ համար կաղոթենք աստծուն...

«Իմ գլխին[1],— պատմում է Սամսոն Պետրոսովը,— թաղիքե քոլոզ հագցրին, փաթաթեցին լաթերով, քրդի նման զուգեցին։ Սպասելով մինչև լուսություն տիրի և դաղարի փոխհրաձգությունը, ինձ իջեցրին պատից, որը մի սաժեն բարձրություն ուներ։ Ես ընկա այստեղ ու այնտեղ թափված դիակների վրա։

[1] Ս. Պետրոսովի պատմածը տպագրված է ռուսերեն, 1878 թվականին, և այստեղ բերվում է կրճատումներով (հեղ.)։

Զզվելի հոտը և նրանց այլանդակ տեսքն իմ մեջ սարսափ առաջացրին։ Շրջակայքի թափառական շները հաչոց բարձրացրին։ Քրդերը գլխի ընկան, որ բերդից մարդ է դուրս եկել։ Սկսվեց հրաձգությունը, բայց ոչ մի գնդակ ինձ չկպավ։ Ես շարունակեցի սողալ դիակների միջով և արդեն գտնվում էի ժայռի եզրին, երբ հանկարծ տեսա քրդերին, որոնք գալիս էին իմ կողմը։ Ես այն ժամանակ ժայռից ինձ կիրճը գցեցի, որի պատճառով էլ վնասեցի ոտքս։

Գարզվեց, որ կիրճից դուրս գալը դժվար է. հողը փխրուն էր, և անընդհատ սահում էր վար։ Այդպես տանջվեցի ամբողջ գիշերը և միայն լուսադեմին ոտքերիս տակ շոշափեցի արահետը։ Կոշիկներս հանեցի և այդ արահետով մի կերպ դուրս եկա կիրճից։ Այդտեղ անսպասելիորեն հանդիպեցի թուրքական ուղեկալների։ Որպեսզի կասկածները հեռացնեի ինձանից, ես ինքս նետվեցի նրանց կողմը, դեռ հեռվից բղավելով.

— Փրկեցե՛ք, ռուսները դուրս են գալիս բերդից...

Տագնապ բարձրացավ։ Քրդերը մի ակնթարթում հայտնվեցին ձիերի վրա և սլացան տարբեր կողմեր։ Սակայն շուտով ինձ նոր սոսկում պատեց. մի երկու հարյուր քուրդ երևացին ինձանից ոչ հեռու։ Կորա, մտածեցի ես, և ինձ գցեցի ջրով լցված փոսի մեջ։ Ափիս մեջ մի քիչ հող վերցրի և ջուր լցրի վրան։ Դա, որոշեցի ես, կլինի իմ հաղորդությունը, եթե տեսնեմ, որ հարկավոր է բաժանվել կյանքից։ Բայց քրդերն անցան կողքովս՝ չնկատելով ինձ։

Ես ուղղվեցի դեպի հայկական Արցին գյուղը, որպեսզի որևէ հայից նժույգ վերցնեմ և արագ սլանամ՝ փնտրելու Երիվանի ռազմաջոկատը։ Սակայն, ավա՜ղ, ինչ տեսան իմ աչքերը հենց գյուղի մուտքի մոտ... Բնակիչները դուրս էին գալիս տներից։ Նրանց ձեռքերը պարաններով կապված էին կրծքերին ու մեջքերին։ Ես տեսա և շատ հայերի՝ քնած հավերժական քնով։ Երբեմն մի ամբողջ ընտանիք, որի հյուրասիրությունից հաճախ էի օգտվում, այժմ տեսնում էի կոտորված։ Իսկ նրանք, ովքեր կապված էին, ման էին գալիս իրենց տների մոտ, քրդերն էլ թալանում էին նրանց ունեց-

վածքը։ Մեկը յուղն էր հանում տնից, մեկը պանիրը, մեկը՝ սնդուկները։

Ի՞նչ էր մնում ինձ անելու։ Եվ ահա ես, քուրդ ձևանալով, մտա տներից մեկը, վերցրի մի մեծ պարկ և սկսեցի նրա մեջ բուրդ լցնել։ Երկու քրդեր, որոնք տնօրինություն էին անում այդ տանը, նայեցին ինձ և դուրս եկան։ Շուտով վերադարձան ուրիշ քրդերի հետ։ Ես այնքան վախեցա, որ քիչ էր մնում ինձ մատնեի։ Հարկավոր էր լռել և թալանել, իսկ ես սարսափից սկսեցի խնդրել.

— Մի բարկացեք, եթե ես էլ ինձ համար բուրդ վերցնեմ։

Այստեղ նրանք ինձ բռնեցին և սկսեցին ծեծել, գոռալով.

— Մենք քեզ տեսել ենք Բայազետում... դու լրտես ես, ծախվել ես ռուսներին... Ասա ո՞վ ես դու և որտեղի՞ց։

Ես քրդերեն խոսում էի շատ վատ, և դրա համար նրանց պատասխանեցի թաթարերենով.

— Խնայեք ինձ։ Ես Մուստաֆա-օղլու (Մուստաֆա-օղլուն Բայազետում բոլորը գիտեին) ծառան եմ... Ես ընդամենը Խոյի աղքատ թաթարներից եմ և իմ տերը թույլ է տվել ինձ որևէ բան ձեռք բերել իմ ընտանիքի համար... Բաց թողեք ինձ, բարի և ազնիվ բեկեր։

Քրդերը, լսելով իմ ճիչն ու աղաղակը, ինձ լրիվ մերկացրին և սկսեցին թափ տալ հագուստս, որպեսզի ապացույց գտնեն իրենց կասկածների համար՝ նամակ կամ ոսկի։ Սակայն պարոն Շտոկվիչի տված գրությունը ես վաղուց արդեն կուլ էի տվել, դեռ այն քրդերին տեսնելու ժամանակ, երբ պառկած էի փոսի մեջ։ Քրքրելով իմ ցնցոտիները և կասկածելի ոչ մի բան չգտնելով՝ քրդերն ինձ բաց թողեցին։ Ես վերցրի բրդով լցված պարկը և կաղալով սկսեցի որքան հնարավոր է արագ դուրս գալ գյուղից։ Ես լաց էի լինում՝ տեսնելով իմ հայրենակիցների աղետները։ Երբ արդեն դուրս եկա Արցինի շրջապարիսպից, ես այդ պարկը գցեցի և շարժվեցի առաջ։

Ճանապարհին մի քիչ պառկեցի հանգստանալու, որպեսզի խնայեմ ցավող ոտքս։ Կողքից արշավելով մի քուրդ անցավ և նկատեց ինձ։ Նրա հարց ու փորձին պատասխանեցի նույն ձևով, ինչ որ առաջ։ Սակայն այս քուրդը նորից տկլորացրեց ինձ և նկատեց, որ իմ շապիկը քրդական չէր։ Նա նիզակի սուր ծայրը դեմ տվեց կրծքիս, որպեսզի միանգամից վերջ տա ինձ։ Այն ժամանակ ես ծնկի եկա նրա առջև, լաց եղա և խնդրեցի, որ չսպանեն ինձ։ Քուրդը ծիծաղեց իմ արցունքների վրա, ինձ անվանեց հիմար կին և, վերցնելով շապիկը, որը ինչ-որ բանով դուր էր եկել նրան, նորից ձի նստեց ու սլացավ...

Ես շատ ուրախացա և շարունակեցի ճանապարհս։ Ինձ թվում էր, թե ես մոտենում եմ Ղարաքիլիսին, երբ հեռվում վրաններ և կարմիր հագուստով հեծյալներ երևացին։ Ես հիմարաբար որոշեցի, որ դրանք ռուսներ են, և ինքս վազեցի նրանց ընդառաջ։ Սակայն պարզվեց, որ դրանք դարձյալ քրդեր են, և ինձ քարշ տվեցին ուղիղ շեյխի (նրանց մոտ շեյխը, ինչպես հայերիս մոտ՝ նահապետը) վրանը։ Այստեղ ես, Ջելալ Էդդինի առջև կանգնած, նորից անվանվեցի Մուստաֆա-օղլու ծառան։ Ես լաց եղա և ասացի, որ չամիչ էի բերում այստեղ վաճառելու, բայց քո քրդերը, լուսափայլ շեյխ, ճանապարհին կողոպտեցին ինձ և խլեցին նույնիսկ էշս։

Այն ժամանակ Ջելալ Էդդինը զայրացած գոռաց ինձ վրա.

— Դու ինքդ ես մեղավոր։ Հիմա մարդիկ մարդկանց արյուն են ջրի պես թափում, և ոչ ոք դրա մասին չի բողոքում։ Իսկ դու, հիմար ոչխար, ափսոսում ես քո էշին... Հե՜յ, ծառանե՛ր, մտրակներով մի լավ քոթակեք դրան և թող սողալով կորչի գնա՝ լիզելու իր վիրավորանքը։

Ինձ մտրակներով մի լավ ծեծեցին և բաց թողեցին։ Եվ այդպես ահա ես վերջապես հասա մինչև Սուրբ Հովհաննես։ Այստեղ ինձ լավ դիմավորեցին ռուսները, բայց մի մայոր ենթադրեց, որ ես քուրդ եմ և Ֆուիկ փաշայի լրտեսը։ Ես լեզուր էի նրան հակառակը համոզում, նա կարգադրեց իր կազակներին՝ ինձ դուրս բերել բակ և գնդակահարել։

— Մի՞թե քուրդը կարող է ռուսերեն այնպես լավ խոսել, ինչպես ես,— ասացի մայորին։

Մայորն ինձ լսել անգամ չուզեց։ Կազակները ձեր դժբախտ Սամսոն Պետրոսովին դուրս բերեցին և կապեցին պատին։ Սակայն այդ պահին սմբակների թփթփոց լսվեց, մոտեցավ մի ուրիշ ռուս սպա։ Նա կարողանում էր խոսել հայերեն

և, տեսնելով իմ արցունքները, համբերատարությամբ լսեց ինձ։ Ապա այդ սպան սկսեց հայհոյել մայորին և կտրեց իմ ձեռքերի պարանները։ Հետո, բոլորի ներկայությամբ, նա սկսեց համբուրել դեմքս, աչքերս, ուսերս։ Նա կազակներին և այն մայորին ասաց, որ ես արժանի եմ ոչ թե գնդակահարության, այլ մեծ պարգևի։

Ինձ անմիջապես կերակրեցին, փոխեցին հագուստս ու ձի տվեցին։ Կազակային պահակախմբի ուղեկցությամբ մենք սլանում էինք ամբողջ թափով, սլանում էինք ամբողջ գիշերը և ամբողջ հաջորդ օրը։ Միայն երեկոյան մենք հասանք խեղճ Դամցտոխ գյուղը, որտեղ կանգ էր առել Էրիվանյան զորաջոկատը։ Գեներալ Տեր-Ղուկասովը անմիջապես ինձ ընդունեց իր վրանում և ապշեց պաշարման մասին իմ պատմածից։ Բանակում դեռ ոչ ոք չգիտեր, թե հիմա ինչ է կատարվում Բայազետում։

Ա. Ա. Տեր-Ղուկասովը կարդացել էր Պացևիչի զեկույցները և կարծել, թե թուրքերը վաղուց ջախջախված են Գլիխովին։ Գեներալ-նահանգապետ Ռոսլավլևը բայազետցիներին ոչ մի օգնություն խոստանալ չէր կարող։ Միայն հիմա բոլորը հասկացան, որ Բայազետը զսպում էր թուրքերին՝ Էրիվանը ջախջախելուց և քրդական հեծելազորին՝ Թիֆլիսի վրա արշավելուց, որովհետև Կովկասի ներսում գրեթե բոլորովին զորքեր չէին մնացել...»։

Մենք մեզանից ավելացնենք, որ հայորդի Սամսոն Պետրոսովը հենց այդ ժամանակ էլ ստացավ Գեորգիևյան ոսկե խաչ, հարյուր քսան կիսամպերիալ և, դառնալով ռուսական բանակի սպա, ոռճիկից բացի, իր սխրագործության համար ամեն ամիս ստանում էր ևս հարյուր քսան ռուբլի։ Դա բոլորն է, ինչ մենք գիտենք նրա մասին։

Սակայն Բայազետը այնպես էլ մնում էր պաշարման մեջ։

3

Հովտում նոր օրը վրա հասավ համազարկով, և յունկեր Եվգոկիմովը շփեց գունատ ճակատը, ասես չէր կարողանում հիշել մի շատ կարևոր բան.

— Այսօր ի՞նչ օր է... Աստվա՜ծ իմ, ինչպես է գվվում գլուխս։ Եվ ես չեմ կարողանում հիշել՝ արդեն ո՞րերորդ օրն է, որ մենք այստեղ ենք։

— Սատանան գիտի,— ասաց Կարաբանովը և սկսեց կասկածելիորեն հոտոտել իր ափերը, գլխարկը, սերթուկի քրքրված փեշերը։— Չեմ կարողանում հասկանալ, այս ի՞նչ գարշահոտություն է,— ասաց նա՝ զզվանքով կնճռոտելով դեմքը։— Ինչ-որ լեշահոտ եմ առնում և ոչ մի կերպ չեմ կարողանում ազատվել այդ նողկալի ժանտահոտությունից։

Նրանց մոտեցավ Պոտրեսովը, գլխով ցույց տվեց ներքև.

— Եվ չեք էլ ազատվի, պորուչիկ։ Կարող եք նայել. չորս կողմը դիակներ են և ստիպված պետք է ընտելանալ այդ բուրմունքին, քանի դեռ Տեր-Ղուկասովը մեզ չի փրկել այստեղից։

Այո՛։ Բերդի պարիսպները շրջապատված էին դիակույտերով, և ամրությունների քարերի վրայով ծորալով, թրթռուն տաք օդի հետ դեպի վեր էր բարձրանում նեխած, հեղձուցիչ գարշահոտությունը։

— Թյո՛ւ,— թքեց Կարաբանովը և, հետ քաշվելով ավելի հեռու, հարցրեց Շտոկվիչին.— պարո՛ն կապիտան, ճի՞շտ էր արդյոք, որ դուք բերդից բաց թողեցիք մի հայի՝ գրությամբ։

— Այո՛։— Շտոկվիչը ցած իջեցրեց հեռադիտակը։— Թեև համոզված չեմ հաջողության մեջ... Հերիք է կնճռոտվես, Կարաբանով, ամենաթանկ օծանելիքը երբեմն նույնպես գարշահոտություն է արձակում։ Ավելի լավ է, սիրելի Անդրեյ Լեոնիսեևիչ, ապահովեք դիպուկ հրաձգություն հրեն, այն լեռների վրա։ Տեսնո՞ւմ եք, այնտեղ թուրքական քարավաններ են խցկվում...

Գալարվելով շրջակա ժայռերի միջև՝ լեռնային զառիթափ արահետներով, Բայազետից Թուրքիա էին ձգվում հակերով բեռնված ավանակների երկար շարանները։ Պարզ էր, օսմանները մտադրվել էին դուրս տանել քաղաքում կողոպտած հարստությունը։

Կարաբանովը չխկացրեց կրունկները, բայց կրակոտ «չխկոց» չլսվեց, քարերի մեջ ջարդոտված ճաքակոշիկները նեղացած շան լակոտների նման միայն խուլ «հափ» արեցին։

— Հրամանը ի կատար կածվի, պարոն կապիտան,— պատասխանեց Անդրեյը միտումնավոր հստակությամբ, ասես ուզում էր ձայնով լրացնել ճտքակոշիկների թերին։

Սկսելով իր ցերեկային ճանապարհը՝ արևն արդեն կախվել էր Արարատի գագաթների վրա, և մարդիկ զգում էին, թե ինչպես միջօրեին շոգը նրանցից դուրս է ծծում խոնավության վերջին մնացորդները։ Անտանելի ծարավն այրում ու կրծում էր ներսը, մարդիկ սկսում էին կորցնել գիտակցությունը և երեսնիվայր ընկնել տաք քարերի վրա։

— Թող ձեր բոլորի աչքերը դուրս գան,— անիծեց ծերունի գրենադյոր Խրենովը։— Ուր գնում ես, ամենուր միայն մի բան ես լսում՝ խմել հա խմել... Խումարաթողի՞ց է, ի՞նչ է։ Հրեն ինքս՝ Գերոգիևյան կավալերս։ Ինձ հարցնեն՝ թեկուզ ջուր լինի, թեկուզ չլինի։ Ինձ համար մի բան է։ Բայց ահա թեյը արդեն ուրիշ բան է...

Օրը ցերեկով, շնայելով գնդակներին, մեկը չհամբերեց։ Տեսան, թե ինչպես նա թռավ պարսպից և վազեց դեպի գետը։ Նա նույնիսկ չէր էլ վազում՝ դա ինչ-որ մի պոռթկում էր, համարյա խելագարություն։ Նրա մոտ ոչ դույլ, ոչ գավաթ կար։ Միայն մի բերան էր, որ փափագում էր որքան հնարավոր է շուտ հպվել ջրին։ Նրան հարյուրավոր աչքեր էին հետևում։ Հուզվում էին նրա համար, վիճում էին՝ կհասցնի՞ վազել մինչև գետը, թե ոչ։ Եվ նա հասավ։ Հասավ, և բերդում լսվեց մեկի ուրախ ճիչը.

— Եղբայրնե՛ր, խմո՛ւմ է, խմո՛ւմ...

Փախստականը գնդակների սուլոցի տակ ջուր խմեց։ Սկսեց ոտքերից հանել ճտքակոշիկները։ Բերդը պատասխանում էր նրան խորհուրդների պոռթկումով, խրախուսական ճիչերով։ Նա արդեն ճտքակոշիկները ջուր լցրեց և նետվեց դեպի հետ։ Սակայն հենց տեղնուտեղը, գնդակից խոցված, ընկավ, և այն ժամանակ բոլորը տեսան, թե ինչպես նա հետ սողաց դեպի գետը։

Եվ այնտեղ՝ գետափին, դարձյալ գնդակների տակ, արդեն մեռնելով, նա դեռ խմում ու խմում էր այդ անիծված ջուրը։ Խմում էր՝ մինչև հերթական գնդակը վերջնականապես սպանեց նրան։ Եվ Բայազետի պաշտպանների մեջ հավասարապես կային այնպիսիները, ովքեր խիստ նախանձում էին խիզախին։ Իզուր չէր, որ Ուլասուկինն ասաց.

— Սպանվեց, բայց գոնե կուշտ խմեց մահից առաջ...

Պացևիչը նույնպես սարսափելի տանջվում էր ծարավից՝ առավոտյան ստանալով ընդամենը երեք գդալ ջուր, և կեսօրվա մոտ նա Կիտաևսկուն հանձնարարեց տիկին Խվոշչինսկայայից իր համար խնդրել եթե ոչ ջուր, գոնե գինի։

— Ի՞նչ եք ասում,— զարմացավ օրդինատորը,— նրա մոտ որտեղի՞ց կարող է գինի լինել։

— Նրա մոտ կա... ես գիտեմ... Երկու շիշ... դուք չհամարձակվեք ինձ մերժել այդ բանում...

Կիտաևսկին գնդապետի խնդրանքը հաղորդեց Ագլայա Եգորովնային։ Թե այսպես ու այսպես։ Կայազորի միակ կնոջից այդպիսի բան խնդրելը արտառոց էր և բոլորովին անտեղի։ Սակայն խնդրանքը խնդրանք էր, և օրդինատոր Կիտաևսկին խնդրում էր Ագլայային այս դեպքում վարվել այնպես, ինչպես ինքը հարմար կգտնի։

Խվոշչինսկայան մինչև վերջ լսեց անվրդով։ Արցունքներից ու փոշուց կարմրած նրա աչքերը արդեն մի քանի գիշեր չէին փակվել։ Սիվիցկին փակուղու մեջ էր ընկնում՝ չգիտենալով այնպիսի քնաբեր հաբ, որը կարողանար անկողին գցել այդ կնոջը։ Խվոշչինսկայան մի քանի գիշեր չէր քնում և այժմ նա արդեն նախկին Ագլայայի լոկ ստվերն էր։

— Այո՛,— պատասխանեց Ագլայան։— Ինձ մոտ երկու շիշ գինի կա։ Բայց նա որտեղի՞ց գիտի այդ մասին։ Ինչո՞ւ նա չասաց մեկ շիշ կամ չորս շիշ, այլ ուղղակի՝ երկու։

Կիտաևսկին թոթվեց ուսերը։

— Նա կարծում է,— շարունակեց Ագլայան,— որ այժմ ինձ ոչինչ արդեն պետք չէ։ Բայց ես դեռ կենդանի եմ... Նա ինչպես չի ամաչում այդպիսի բան խնդրել, լավ գիտենալով, որ ես՝ որպես գթության քույր, չեմ կարող մերժել վիրավորին։ Ավելի ևս տարօրինակ է, որ Ադամ Պլատոնովիչի հետ ո՛չ ես, ո՛չ իմ հանգուցյալ ամուսինը կապված չենք եղել բարեկամական հարաբերություններով...

Կիտաևսկին ուզում էր գնալ, բայց Ագլայան կանգնեցրեց նրան.

— Սպասե՛ք... Ես չեմ ուզում, որ գնդապետը սխալվի իմ

նկատմամբ, եթե նա դիմել է միայն իմ գթությանը։ Ես կտամ գինին, քանի որ նա, ըստ երևույթին, հիմա ավելի վատ է զգում իրեն, քան մեզանից որևէ մեկը...[1]։

Կիտաևսկին, տանջալից ամոթ զգալով՝ ասես ինչ-որ ստրություն էր արել, վերցրեց իրեն պարզած գինու շշերը, և շուտով ամբողջ ամբոցը միահամուռ դատապարտում էր Պացևիչին.

— Հերոս է կոչվում։ Այրու մոտից վերցրեց վերջին շշերը... Մեկ ուրիշ տղամարդ լիներ, իր կաշին կպոկեր, որ փրկեր թույլ սեռին, իսկ այդ քավթառը... Հիմարությունից գնդակի դեմ ընկավ, դե գոնե էն աշխարհ գնար՝ ոչ ոքի չխանգարեր։ Ի՞նչ է, նա քի՞չ է իր կյանքում գինի կոնծել, ով գիտի քանի տակառ։ Երևում է հիմա, «Կոնդրատի Կասյանիչի» հետ է ուզում վերջին անգամ բաժակ խփել...

Այդ ընթացքում Կլյուգենաուի գլխում մի միտք ծագեց՝ որպեսզի պակասեցնի մի բակից մյուսը անցնելու վտանգը, նա որոշեց մզկիթը մյուս շենքերից բաժանող պատի մեջ անցք բացել, և մտավ յունկեր Եվդոկիմովի խղճուկ սենյակը։

— Սիբելի պատանի,— ասաց բարոնը,— դուք հարկադրված կլինեք ուրիշ հյուրանոցում սենյակ փնտրել։ Հիմա կսկսենք քանդել պատը, և ձեր սենյակի միջով, որտեղից հոյակապ տեսարան է բացվում, կսկսեն ճախրել Բայազետի սիլֆիդները՝ չիբանները ծոծրակներին...

Ցունկերը նստել էր մութ սենյակի անկյունում և ոտքով փորձում էր Կլյուգենաուի հայացքից հեռացնել զինվորական գավաթը։

— Լա՜վ,— պատասխանեց նա՝ հոգնաբեկ վեր կենալով,— ես հիմա կտեղափոխվեմ ուրիշ տեղ։

Կլյուգենաուն կռացավ, բարձրացրեց գավաթը, հոտոտեց այն հեռվից և նորից դրեց հատակին։

— Դուք իզուր եք ամաչում ինձանից,— ասաց ինժեներ։— Խմելու ձեր ցանկությունը միանգամայն բնական է, և դուք բոլորովին էլ օրիգինալ չեք ծարավը հագեցնելու մեջ։ Ես ուզում եմ ասել, թե դուք միակը չեք կայազորում, որ տանջվում է։ Եվ դուք առաջինը չեք, որ այդ եղանակին եք դիմում, որպեսզի խլացնեք ծարավը։ Սակայն, հավատացեք ինձ, թանկագին և խելացի պատանի, պետք է կարողանալ ոգին այնքան բարձր պահել, որ միշտ նա որոշի մարմնի արարքները։

— Ես միայն փորձեցի,— կամացուկ ասաց պատանին։— Խոստանում եմ ձեզ, որ է՛լ չեմ անի...

— Պետք չէ խոստում տալ,— առարկեց նրան Կլյուգենաուն։— Եթե ոչ այսօր, ապա վաղը մենք նույնպես, հավանաբար, կդիմենք այդպիսի եղանակի։ Միայն թե դուք շատ շուտ եք դիմել ձեր օրգանիզմը այդ նպատակների համար օգտագործելու հնարավորությանը... Եկեք օգնեմ ձեզ իրերը հավաքելու...

Վերևից ինչ-որ աղմուկ լսվեց, և երբ Կլյուգենաուն դուրս եկավ գավիթ, Վատնինի կազակները ամբոցի պարսպի վրա էին բարձրացնում վառ կարմիր համազգեստով, խիստ այտոսկրոտ մի անծանոթ սպայի։

— Կլյուգենաու,— վազելով ասաց Շտոկվիչը։— Ֆուիկ փաշան մեզ մոտ պատգամախոս է ուղարկել։ Ես նրա հետ կխոսեմ, իսկ դուք պահեք Իսմայիլ խանին, որպեսզի նա իր մասնակցությամբ ոչինչ չփչացնի։

Այդ սպան կալմիկական խաներից էր. նրա եղբայրները ձկնարդյունաբերական գրասենյակ էին պահում Աստրախանում, իսկ ինքը սովորել էր Նովգորոդում՝ կոմս Արակչեևի անվան կադետական կորպուսում։ Եվ եթե չլինեին կրոնական գժտությունները, որոնք նրան ներքաշեցին վտարանդիության և դավաճանության ճահճուտը, նա գուցե հիմա կմարտնչեր Բայազետի պաշտպանների շարքում։ Իսկ հիմա նա կրում էր սուլթանի պոչանքի ուսակապերը, և միայն թեթև թախիծն էր կալմիկի աչքերում, երբ նա նայում էր ռուսական զինվորներին, մատնում նրա իսկական, անուրախ տրամադրությունը։

Վատնինը պատգամախոսին տարավ գյուլխանե բնակատունը, որտեղից տեսարան էր բացվում տրորված, խղճուկ

[1] Վկայություն է պահպանվել, որ Բայազետի պաշտպանության հերոսուհին, գինու պաշարը Պացևիչին տալով, ասել է տառացիորեն հետևյալը. «Ես տալիս եմ վերջինը, այժմ ինձ վիճակված է մեռնել ծարավից...» (Հեղ.)։

ծաղկանոցի վրա, որի խորքից Իսակ փաշան դիտել է, թե ինչպես են իր կանայք լողացել մարմարե լողափոսերում։ Հիմա այդ լողափոսերը ապականված էին խոհանոցային թափուկներով, հրետանային մենամարտի ժամանակ նրանց պատերից թափվել էին խճանկարների սալիկները։

— Եվ այսպես,— ասաց Շտոկվիչը, տուզ քամակով նստելով բարձրության վրա, որտեղից տեսավ ոչ թե հարճերի, այլ զինվորների քրտնած ու կեղտոտ դեմքեր, որոնք հետաքրքրասիրությամբ նայում էին կալմիկին։

— Եվ այսպես,— կրկնեց նա,— դուք կլինեք վերջին պատգամախոսը, որ այստեղից ողջ դուրս կգա։ Մեր կայազորը մտադիր չէ ընդունելու թուրքական հրամանատարության և ոչ մի առաջարկություն։ Եվ մենք կախաղան կբարձրացնենք բոլոր պատվիրակներին, ինչի մասին էլ հենց ես խնդրում եմ հաղորդել ձեր տիրակալին՝ Ֆուիկ փաշային, որի իմաստությունը հայտնի է ողջ աշխարհին։

Կալմիկ խանը, որը թուրքական սպայի ուսապանակ էր կրում, պատասխանեց մաքուր-ռուսերենով.

— Եֆրեմ Իվանովիչ, ես ձեզ լավ հասկացա և շնորհակալ եմ անկեղծության համար... Ի՞նչ կարող եմ ասել ձեզ։ Թույլ տվեք օգտվել այն երջանիկ իրադրությունից, որ իմ հետևում ոչ մի լրտես չի կանգնած, և պատասխանել ձեզ նույնպիսի անկեղծությամբ...

Շտոկվիչը գլխով նշան արեց նրան, կալմիկը շարունակեց.

— Սկզբից ես պարտավոր եմ կատարել պարտքս, որպեսզի ձեր ականջին հասցնեմ իմ պետի կամքը։ Ֆուիկ փաշան երկրորդ անգամ առաջարկում է կայազորին զենքերը ցած դնել և...

— Ո՛չ,— ճչաց Շտոկվիչը՝ դանդաղ կարմրելով։

Կալմիկը գլուխը խոնարհեց։

— Ես այդպես էլ գիտեի,— պատասխանեց նա՝ բեղերի մեջ թաքցնելով ժպիտը։— Այդպիսի դեպքի համար Ֆուիկ փաշան հանձնարարեց ինձ (ճիշտ է, ոչ անմիջապես) հայտնել, որ նա այժմ համաձայն է նաև ձեզ մոտ թողնելու զենքերը։ Բաց դրոշներով դուք կարող եք գնալ տեղավորվելու այն թաղամասում, որը ինքներդ հարմար կգտնեք ընտրել

ձեզ համար։ Ինձ հանձնարարված է նաև հիշեցնել ձեզ, որ Հայրենիքում կգնահատեն ձեր անօրինակ սխրագործությունը և բերդի հանձնումը ձեզ համար ոչ մի անպատվություն չի լինի, քանզի դուք արել եք այն ամենը, ինչ կարող էիք...

— Վե՞րջ,— կոպտորեն հարցրեց Շտոկվիչը։

Կալմիկն ավելի մոտ եկավ սյարետին։

— Դուք սպասում եք Տեր-Ղուկասովի՞ն,— հարցրեց նա։ —Իզո՛ւր... Դուք գիտե՞ք, որ Իգդիրը հիմա պաշտպանվում է Ղրիմի գնդի միայն մի վաշտով։ Էրիվանի նահանգապետ Ռոսլավլևը ձեզ օգնելու համար կարող է ուղարկել միայն Կալբուլայ խանի հեծելազորը... Իսկ դուք վաղուց արդեն ջուր չունեք։

— Ձեր խոսքերը միանգամայն խելամիտ են,— ընդհատեց նրան Շտոկվիչը։— Բայց անխելք են ձեր արարքները։ Եթե դուք գիտեք, որ ճանապարհը դեպի Էրիվան փակում են միայն պահպանաջոկատները, ապա ինչո՞ւ դուք չեք գնում Էրիվան... Հ՞ը,— սպառնաց նա կալմիկին հաստ, անլվա մատով,— ձեզ պետք է սկզբից Բայազետը։ Սակայն կարող եք հաղորդել ձեր փաշային, որ Բայազետը նա չի տեսնի...

Մինչ բանակցություններ էին գնում պատգամախոսի հետ, Կլյուգենաուն խոսակցությամբ զբաղեցնում էր Իսմայիլ խան Նախիջևանսկուն։ Մաքուր արաբերենով նա խանին պատմում էր այնպիսի ազնիվ և խելոք մարդու կարիերայի բոլոր դժվարությունները, ինչպիսին էր, անկասկած, խանը, և այնուհետև սկսեց խոսել այն միամիտ պատկերավորությամբ, որոնցով այնքան հարուստ են արևելյան լեզուները։

— Ձերդ պայծառափայլություն, շիտակության ձեռքով նպատակի երեսից դեն շպրտեք գեղեցկուհու շղարշը... բանականությանը չի կարելի թույլ տալ հավիտենապես մոլորվել, ինչպես վաղեկ ձկնկուլը լոտոսի թփուտներում... Դու ինչո՞ւ, շան որդի, դավաճանեցիր երդմանը,— հանկարծ հարցրեց նա ռուսերեն՝ արթնացնելով ննջացող խանին։

Իսմայիլ խանը վեր թռավ և գոռաց, որ ինքը մեղավոր չէ, եթե Մուսա փաշա Կունդուխովը՝ օսեթական այդ վիժվածքը, գրում է իրեն։ Հետո մեկեն ձայնը կտրեց և, պրապորշչի-

կի կոկորդից բռնելով, սկսեց թեթևակի խեղդել նրան իր մկանուտ մատներով։

— Դու ի՞նչ գիտես,— հարցրեց նրան խանը։

— Միայն այն, որ դուք վերջերս կերակրել եք մեյդանի տասը աղքատի... Հիշե՛ք։

Իսմայիլ խանը բաց թողեց Կլյուգենաուին և հիշեց. Ղուրանի հինգերորդ գլխի իններորդ տունը՝ դավաճանությունից մաքրում էր մարդուն, եթե նա կերակրի տասը աղքատի, բանտից փրկագնով ազատի մի կալանավորի կամ երեք օր անընդհատ ծոմ պահի։

— Բայց դու խելացի ես, հա՞,— հարգանքով նկատեց խանը,— քո գլխին նույնիսկ մազ չի մնացել։

Կլյուգենաուն ափով տրորեց սեղմված վիզը.

— Ի դեպ, գլխի մասին... Դուք վատ եք գնահատում ձեր գլուխը, խան։ Ինչո՞ւ դո՛ւք լինեք այս հիմար ամրոցի պետը, եթե արդեն պարետ կա։

— Իսկ ի՞նչ [illegible]ել։

Կլյուգենաուն նայեց դռանը և ընդհատումներով շշնջաց Իսմայիլ խանի մազոտ ականջին.

— Ձեր դեմ դավադրություն կա... Ջորս կողմը բանսարկություններ են... Լռե՛ք... Ինձ հայտնի է, որ դուք իրավունք ունեք Պացևիչից անմիջապես հետո դառնալ Բայազետի ամբողջ փաշայության զորքերի հրամանատարը։ Հասկացա՞ք։ Իսկ դուք այստեղ հիմարություն եք անում, և այժմ կայազորում նույնիսկ զինվորներն են ծիծաղում ձեզ վրա...

Կես ժամից հետո Շտոկվիչը հանդիպում ունեցավ Կլյուգենաուի հետ.

— Դե՛, ի՞նչ էր ասում պատգամախոսը, պարոն կապիտան։

— Ես նրան գրողի ծոցը ուղարկեցի... իսկ ի՞նչ էր ասում մեր խանը։

Կլյուգենաուն գրպանից հանեց շարժական գրասենյակի բանալիների կապոցը և պարետի առաջ դրեց կայազորի կնիքները։

— Դուք, ի՞նչ է... գողացե՞լ եք,— շփոթված ասաց Շտոկվիչը։

— Ինչո՞ւ։ Նորին պայծառափայլությունն ինքը դրանք

վերադարձրեց ինձ։ Այժմ նա թղթերի վրա կնիքի փոխարեն կդնի սեփական մատը։

— Ուրեմն... դուրս է գալիս, որ խանը...

— Այո՛, խանը այս խաղից դուրս է գալիս։ Նա կարող է խաղալ միայն փաշայության գոյություն չունեցող պետի դերը, փաշայություն, որ զավթել են թուրքերը։ Իսկ որպեսզի նոր պաշտոնին անցնի, նրան անհրաժեշտ է նաև Ֆուիկ փաշայից կովով խլել այդ պոստը։

Շտոկվիչը շտապ գրպանները կոխեց բանալիներն ու կնիքները.

— Գիտեք, բարոն, ինչ-որ բանով դուք սկսում եք ինձ դուր գալ։

Կլյուգենաուն գլուխ տվեց։

4

Վատնինը հանեց ճտքակոշիկները, շարժեց մատները, բավականությունից կկոցեց աչքերը։ Նայելով քաղաքի ավերակներին, որի ծխացող փլատակներից ցիրուցան ճարճատում էին պատահական կրակոցները, եսաուլն ասաց մտախոհ.

— Հիմա, Ելիսեիչ, գրոհի գնալու իսկական ժամանակն է։

— Թուրքերի՞ համար,— զարմացավ Անդրեյը։

— Է՛, քո գլխում էլ միայն թուրքերն են... Ոչ թե թուրքերին,— բացատրեց Վատնինը,— այլ մե՛զ է պետք գրոհը։

— Իսկ դա ինչի՞ համար է,— նորից չհասկացավ Կարաբանովը։— Որպեսզի ճեղքենք անցնեք դեպի Իգդի՞ր։

— Ա՜յ թե հիմարացել ես, եղբա՛յր,— ասաց Վատնինը։— Դու «Իխդիրի» կողմը մի՛ նայիր։ Դու բուն արմատի տակ նայիր... Հասկացա՞ր։

— Դու ինքդ մտիր արմատի տակ,— նեղացավ Կարաբանովը։—Ես քեզանից հիմար չեմ. մենք հենց գլուխներս հանենք ամրոցից, թուրքերը քեզ «Իխդիրի» կողմը նայել ցույց կտան։ Դագաղի կափարիչի միջից հեռու է երևում...

Սիվիցկին հենց այնպես բարձրացավ վեր, բարձրության վրա զովություն շնչելու, տնքոցներից և արյունից հանգստանալու, կազակներից ծխախոտ խնդրելու։

— Վատ չի լինի արտագրոհ կատարել,— շարունակեց Վատ-

նինը։— Մեկ-երկու, և թուրքի գլուխը նորից կցավա։ Հատատ բան է, լավ գործ է... Մենք նաև բավականին ջուր կվերցնենք, շիլա կեփենք։ Եվ էդպես մեկ էլ տեսար կյանքն ուրախ դարձավ...

Նա արմունկով թեթևակի հրեց Կարաբանովի կողքին, վարակիչ ծիծաղեց՝ քիսայից մի լավ բաժին ծխախոտ լցնելով Սիվիցկուն։

— Վերջին ծխախոտն է, Ալեքսանդր Բորիսիչ... ժլատությունից չէ, որ այդպես եմ ասում, այլ ձեզ խղճալով։ Դուք չափից ավելի շատ եք սիրում խեժաթորել։ Ահա կփակենք քիսան, կսկսենք դարման ծխել։ Լավ է օգտագործված թելը։ Բայց, ցավոք սրտի, ոչ ոք թեյ չի խմում...

Գնդակը շրմփաց նրանց միջև և թռչկոտելով գլորվեց տանիքի վրայով։

— Հե՜յ, ցոան դմակ,— գոռաց Վատնինը մթության մեջ։— Դեռ չե՞ս ձանձրացել կրակելուց։ Թող մարդիկ մաքուր օդում զրուցեն ինչպես հարկն է...

— Ինչպե՞ս հարկն է,— նրա տնազն արեց բակում կանգնած Շտոկվիչը։— Զեռքից բաց ես թողել քո կազակներին։ Ինչ ուզում՝ անում են... Գրասենյակի սեղանները ջարդոտել՝ վառելափայտ են դարձրել, մետաքսը գողացել՝ ոտի փաթաթան են դարձրել։ Գողանում են՝ ինչ պատահի... Է՜յ-է՜յ, աղավնյակս, այդ ո՞ւր ես սափորով խցկվում։

Եգորիչը կանգ առավ, սափորը իջեցրեց գետնին, ասեց.

— Դե, ձերդ բարեձնություն... անընդհատ մտածում եմ։

— Ի՞նչ ես մտածում։

— Ա՜յ եթե կարաբինցա լիներ, հա՜։

— Քո ինչի՞ն է պետք կերոսինը, հիմա՜ր։

— Իսկ ուրիշ ո՞նց կլինի։ Տնտեսության մեջ պետք կգա։ Եվ բացի դրանից, մեկ-մեկ էլ կլուսավորի...

Շտոկվիչը նայեց սափորի մեջ և ասաց.

— Ստել չես կարողանում։ Գնա՝ ուր պիտի գնայիր... Հասկացա՞ր։

— Իսկ ի՞նչ կա չհասկանալու։ Մենք, կազակներս, ընտելացել ենք...

Եֆրեմ Իվանովիչը հանեց մատիտը և հուշատետրը։ Աստղերի լույսի տակ, հետամտելով հրակնատի միջով ծլկած

Եգորիչին, նա մաքուր էջի վրա գրեց. «№ 1։ Պեպենոտ ու ծեր։ Կարծեմ, Վատնինի հարյուրյակից»։ Հետո պարետը տեղավորվեց որմնանցքից որոշ հեռավորության վրա, և մեկ ժամում նրա առջևից քառասուներեք մարդ ջրի գնացին գետի կողմը։ Մատիտը թքոտելով՝ կապիտանը լսում էր թուրքական ուղեկալների կրակոցները։ Եվ վերադարձան ընդամենը քսանութ մարդ, մնացածները սպանվեցին թշնամու գնդակներից։ Շտոկվիչը ցուցակից անմիջապես ջնջեց նրանց անունները։

— Դե լա՜վ, կամավորներ,— ասաց պարետը՝ ավարտելով հետամտումը,— վաղը ես ձեզ ցույց կտամ։

Դրանից հետո հրակնատի անցքը ամրոցի պաշտոնական մուտքն ու ելքն էր համարվում։ Ոչինչ, որ նա անցնում էր արտաքնոցներով, որմնանցքը կարծես շքամուտք լիներ։ Եվ ահա հենց այդ որմնանցքի միջով, ամեն վայրկյան կտրվելու պատրաստ, բարակ շիթով ամրոց էր հոսում կենարար ջուրը։ Ձորս կողմ նայելով և թունդ հայհոյելով՝ գնդակներից փրկված կամավորները գետից ջրով լցված սափորներ, տիկեր, թեյնիկներ և մետաղե տափաշշեր էին բերում։

— «Կարաբինցա» ճարեցի՞ր,— հարցրեց Շտոկվիչը, երբ որմնանցքի մեջ փայլեց Եգորիչի ճաղատ գլուխը։— Հապա մի արի այստեղ, ծեր սատանա։ Դու գիտե՞ս, որ առանց թույլտվության ոչ ոքի չի կարելի դուրս գալ ամրոցից։

— Մի՞թե,— շինծու զարմացավ կազակը։

— Ահա և քեզ «մի՞թե»։ Մի կուշտ խմիր,— կարգադրեց պարետը,— դու արժանի ես դրան։ Եվ հետո կգնաս իմ հետևից և ջուրը կհանձնես հոսպիտալին։ Ես ձեր մաքսանենգությանը վերջ կտամ, ցմփոր ջրկուլներ։

Այդ գիշեր դժբախտություն պատահեց. ծերունաբար խնայող գրենադյոր Խրենովի տափաշշի հատակում դեռ երկու կում ջուր էր պահպանվել։ Երբ ծերուկը պառկեց մի քիչ քնելու, հոժարակամ ջրի գնացած զինվորներից մեկը՝ ոմն Զավարզին, Մասալյան գավառի ազնվականներից, տանջվելով ծարավից և իր մեջ համարձակություն չգտնելով գետը վազելու, Խրենովի գոտուց ծածուկ արձակեց տափաշիշը։ Գողին տեղն ու տեղը բռնեցին, սկսեցին դաժանորեն ու կատաղի ծեծել։ Թվում էր, որ եթե նա ոսկի գողանար, ոչ ոք նրան անգամ չէր էլ դատապարտի՝ գրողը տանի ոսկին։

Սակայն դա ընդամենը երկու կում ջուր էր, որի գինը՝ ինքը կյանքն էր, և այդ պատճառով էլ, երբ ծերունի Խրենովը սկսեց պաշտպանել ծեծվողին, նրան կոպիտ ձևով մի կողմ հրեցին.

— Գնա՛, բանիդ, ծերո՛ւկ, քանի քեզ բաժին չի հասել։

Աղմուկից անհանգստացած՝ Ագլայա Եգորովնան դուրս եկավ բակ։ Իմանալով պատահածը, կատաղի գոռգոռոցներից սաստիկ վախեցած նա դիմեց Շտոկվիչին.

— Եֆրեմ Իվանովիչ, ինչո՞ւ եք կանգնել։

— Իսկ ի՞նչ պիտի անեմ, ձեր կարծիքով։

— Ախր կսպանեն նրան։

— Եվ ճիշտ կանեն։ Ուրիշների համար այսուհետև դաս կլինի։

— Լավ չէ... Աստված իմ, չէ որ նա, այնուամենայնիվ, ազնվական է...

— Դժբախտաբար, տիկին, ազնվականների և մուժիկների ստամոքսները միատեսակ են կառուցված։ Խորհուրդ չեմ տալիս միջամտել...

Սակայն Խվոշչինսկայան միջամտեց։ Կամավոր զինվորը, որի շրթունքների վրա արդեն պայթում էին արյան պղպջակները, ի պատասխան Ագլայայի կարեկցության, խռպոտ ձայնով հազիվ կարողացավ ասել.

— Տիկի՛ն, մի՛ մեղադրեք նրանց... Նրանք իրավացի են...

Նա վախճանվեց սանիտարների ձեռքերի վրա, երբ նրան տանում էին հոսպիտալ։ Կարաբանովն այդ պատմության մասին լսեց միայն հաջորդ օրվա առավոտյան, և նա իրեն մի տեսակ վատ զգաց։

— Իսկ քեզ, Վատնին, երբևէ ծեծե՞լ են,— հարցրեց նա։

— Օ՜յ, ծեծել են, պորուչիկ... Օ՜յ, ծեծել են։ Աստված չտա, ինչպե՞ս են ծեծել։ Հիմա չեն էլ կարողանում այդպես ծեծել...

— Դեռ կազա՞կ էիք,— հարցրեց Անդրեյը։

— Այո՛, մի անգամ, երբ դեռ կազակ էի, իսկ մյուս անգամ, երբ արդեն ուրյադնիկ էի դարձել։ Այդ հիմարին, որ տափաշշով էր գայթակղվել, գործի համար ծեծեցին։ Իհարկե, մարդը մեղք էր։ Բայց ահա ինձ...

Վատնինը հանկարծ վախվխելով շուրջը նայեց՝ արդյոք մարդ չկա՞ մոտակայքում և շշնջաց պորուչիկի ականջին.

— Ինձ ախր,— ասաց նա,— ինպերատորի պատճառով են ծեծել... Օ՜յ, ո՞նց են ծեծել...

Կարաբանովը, որին կյանքում միայն մեկ անգամ էին ծեծել և որի մասին նա երբեք չէր սիրում հիշել, սկսեց ծիծաղել։

— Ինչպե՞ս պատահեց,— հարցրեց նա։

— Դե սպասի՛ր, հիմա կպատմեմ...

Վատնինը գլանակ փաթաթեց, երկար թքոտեց երեխայի լեզվի նման վարգագույն ու մաքուր լեզվով։

— Ծիծաղո՞ւմ ես,— ասաց հարյուրապետը։— Ի՞նչ արած, քեզ կարելի է ծիծաղել... դու ազնվական ես, քաղցր բուլկի ես կերել և կանանց մոտ հաճախել։ Իսկ ես մուժիկ եմ, ահա հենց այս տեղով էլ մարդ եմ դարձել։

— Ոչինչ,— ծիծաղեց Անդրեյը,— քո այդ տեղը այնպիսին է, որ դրանով կարելի է նաև գեներալ դառնալ։

— Եվ կդառնամ,— պատասխանեց Վատնինը։— Հիմա Ռուսաստանի վրա թարմ քամի է փչում։ Մարդիկ ավելի խելացի են դարձել... Եվդոկիմովը՝ հանգուցյալ Նիկոլայ Իվանովիչը, զինվորականի երեխաներից էր։ Ամբողջ Կապկասը իր ձեռքի տակ էր առել, գեներալ և կոմս դարձավ։ Շատ խելացի մարդ էր։ Իսկ դու ծիծաղում ես...

— Լավ,— ձայնը կտրեց Անդրեյը։— Էլ չեմ ծիծաղի... Պատմի՛ր, ինչի՞ համար են քեզ ծեծել։

— Ինձ, Ելիսեիչ, սիրելի իմ բարեկամ,— մռայլվեց Վատնինը,— բոլորովին անմեղ տեղը ծեծեցին։ Դարձյալ ինպերատորի պատճառով, միայն ես նրան երբեք կյաքումս չեմ տեսել։ Ասացին ինձ, որ երեկոյան թագավորը կանցնի մեր պահպանաջոկատի մոտով։ Եվ որպեսզի ես, ուրեմն, նրա անձը պահպանելու համար հինգ հոգի իմ կազակներից առանձնացնեմ։ Ժամանակները վատ էին, չեչենները շարություն էին անում։ Ինպերատորը իսկի իր կազակներին էլ չէր վստահում։ Նրանք խաչերն անգամ ստանում էին ալելույաների և պերճամոլության համար։ Եվ ահա, նա խնդրեց, ուրեմն, որպեսզի նրան գծից կազակներ տային։ Ես, ինչպես ասվեց, էնպես էլ հինգ հոգի ուղարկեցի։ Ով առաջինն աչքիս

ընկավ, նրան էլ ուղարկեցի։ Նրանք շքախումբ եկան։ Լավ։ Ինչ-որ տեղ գնացին։ Լավ։ Խոսքը խոսք է բերում։ «Իսկ ինչպե՞ս է քո ազգանունը»,— հարցնում է թագավորը։— «Կրասնոգլազով»,— պատասխանում է։— «Իսկ քո՞նը»,— «Սիվոլոբով»։— «Իսկ դու ո՞վ ես»,— «Զերնոզուբով»։— «Իսկ դո՞ւ, սինլքոր»,— «Սինեուսով»։— «Իսկ դո՞ւ, սրիկա։— «Իսկ ես, ձերդ մեծություն, Ժելտոռոտով»։

Վատնինը մի կողմ շպրտեց մինչև վերջ ծծած ծխախոտի մնացորդը։

— Դարձյալ ծիծաղում ես։ Դե կորի՛ր, Ելիսեիչ։ Ես նրա համար հո դիտավորյալ չէի ընտրել այդ այլանդակներին։ Առաջին հանդիպածներին հենց էնպես ընտրել էի։ Նրանց ազգանունները, ճիշտ է, անդուր էին...

Այդ օրը կայազորում վերջացավ պաքսիմատը։ Շտոկվիչը կարգադրեց գաղթական կանանց գարի աղալ, ստիպելով գերի թուրքերին պտտեցնել ինքնաշեն ձավարաղացը։ Գարի դեռ շատ կար, մայոր Պոտրեսովը, հող չինելու պատճառով, նույնիսկ իր հրանոթները շրջապատել էր գարով լցված պարկերով, որպեսզի հրետաձիգներին պաշտպանի կրակից։ Գնդակները պատռում էին պարկերը, գարին դանդաղ շիթերով թափվում էր գետնին, և լեռնային վայրի աղավնիները, չվախենալով կրակոցներից, խուռներամներով պտտվում էին ամրոցի վրա...

— Դե լավ,— ասաց Կարաբանովը,— գարին կանայք աղացին։ Իսկ հետո ի՞նչ։

— Հետո՞... Հետո հարկավոր է գարին բերանը կոխել և կուլ տալ՝ հետևից մի բաժակ լաֆիտ խմելով,— ասաց Շտոկվիչը։— Մի՛ ձևացեք, պորուչիկ, իբր դուք չեք հասկանում։

— Ի՞նչ նրբաճաշակ, համադամասեր մարդ եք, Եֆրեմ Իվանովիչ։ Ձեր հորինած ճաշատեսակը, անկասկած, կմտնի համաշխարհային որկրամոլության պատմության մեջ «à la Շտոկվիչ» անունով։

— Ինչ կա որ,— պարեսը պղտոր հայացքով նայեց նրան։— Եթե դուք գոհ չեք, կարող եք հորինել ձեր ճաշատեսակը։

— Հարկադրված եմ,— պատասխանեց պորուչիկը։

Կարաբանովը գնաց ախոռ։ Լորդը, տեսնելով տիրոջը, ուրախ խրխնջաց՝ դեռ հեռվից նրան ընդառաջ պարզելով խելացի երկարավուն մռութը։ Կարաբանովը նրան ազատեց կապանքից, երկար ժամանակ գլխով սեղմվեց ձիու տաք, թավշանման կաշվին, շոյեց փափկամազ բաշը։ Լորդը տիրոջը քաշում էր իր հետևից, անհամբեր ձայներ հանում, նրան ջրելատեղ կանչում։ Հրետանային բիտյուգները[1], նժույգին պատասխանելով նույնպիսի հոգնատանջ խրխինջով, այս ու այն կողմ էին զարկվում վանդակների մեջ։

— Գնա՛նք,— ասաց Կարաբանովը։— Գնա՛նք, սիրելի բարեկամ։ Դու մի՛ լացիր։ Ես չեմ կարող օգնել քեզ... Իսկ այսպես ավելի լավ կլինի։

Նա ձին դուրս հանեց բակ, ատրճանակի փողը դրեց ջղաձգորեն ցնցվող ականջի մեջ, և աչքերը փակելով, կրակեց։

— Բաժանե՛ք... բաժանե՛ք բոլորին,— ասաց պորուչիկը և, մի կողմ քաշվելով, սկսեց լաց լինել։

Երեկոյան կողմ, երբ մոտակա լեռներից սկսեցին դեպի հովիտ սողալ աղջամուղջային երկար ստվերները, Շտոկվիչը կարգադրեց փողհարին նվագել «լսեք բոլորդ» ազդանշանը և ըստ ցուցակի կանչեց քսանութ կամավորներին, որոնց բռնել էր երեկ և անունները գրել։ Թաքնվելու տեղ չկար. խիստ հրամանին չհնազանդվողներին շարք կանգնեցրին բակում։

— Դուք շատ եք անկարգացել,— ասաց Շտոկվիչը, դանդաղ հետ-առաջ քայլելով շարքի երկայնությամբ։— Նայեցեք, թե ում եք նման... Դուք Վանկա-անկարգներ եք, և ոչ թե զինվորներ։ Կարծում եք, ես մոռացե՞լ եմ, թե որտեղ է գտնվում ձեր ցուգունդերը[2]։ Ո՛չ, ես հիշում եմ և թափ կտամ յուրաքանչյուրին... Իսկ այսօր նորից կգնաք ջրի։ Այս անգամ կազմակերպված։

Նա ամեն մեկին մի-մի հատ տիկ տվեց և վերջացրեց.

— Գետից կարող եք խմել ինչքան տեղավորվի։ Միայն թե փորներդ չտրաքի։ Իսկ եթե տրաքի էլ, թքած վրան, շապկի

---

1 Բիտյուգ — ծանրաքաշ ձի։

2 Ցուգունդեր — օձիք։

տակ չի երևա։ Այստեղ արդեն, կայազորի դասավորության տեղում, ձեզ համար ոչ մի ընկեր-բարեկամ չպետք է լինի։ Ջուրը կհանձնեք այսպես՝ կեսն անմիջապես հոսպիտալի կարիքների համար, մնացած ջուրը՝ ձեր ընկերներին։ Մաքսանենգությունը ես կհետապնդեմ, և այսուհետև ոչ մեկը չհամարձակվի ամրոց վերադառնալ շրջանցելով հասարակական չանը։ Ոչ մի ուրիշ բան.. հասկացա՞ք։

Կամավորները սողալով մտան որմնանցքը, և հետ վերադարձան միայն տասնմեկ մարդ։ Ջուրը, որով հոսպիտալի համար գիշերը մսով ապուր եփեցին, թանկ նստեց կայազորի վրա և վճարվեց մարդկային արյունով, սակայն ուրիշ ելք չկար, և Շտոկվիչն ասաց.

— Ես գիտեմ, խաչերով հիմա ոչ ոքի չես հրապուրի։ Բայց չէ՞ որ աչքի ընկածներին նույնպես պետք է պարգևատրել։ Ուրեմն թող նրանք, ովքեր իրենց ցույց են տվել որպես հերոսներ, երեկոները գան ինձ մոտ, և ես նրանց բոլորին կպարգևատրեմ թագավորական ձևով... Ես նրանց թույլ կտամ գետի մոտ վազել, որպեսզի լավ ջուր խմեն...

5

Շրջանաձև խմբվեցին զինվորները, նրանց մոտեցան կազակները։

— Է՛խ, եղբայրնե՛ր,— տխրությամբ ասաց եֆրեյտոր Ուչաստկինը,— իմկ Բուլղարիայում հիմա, երևի, ա՜յ թե լավ է, հա՞։ Մեր եղբայրները քայլում են փափլիկ հողի վրա, սլավոնական կնանիք սրբիչների վրա նրանց աղ ու հաց են մատուցում, աղբյուրից ջուր են տալիս խմելու։ Այնտեղ քեզ համար և՛ գետակներ կան, և՛ խոսակցությունն է հասկանալի, և՛ ձմերուկներն են սարի պես թափված... Տե՛ր իմ, որ մտածում ես, այնտեղ ոչ թե պատերազմ է, այլ ուղղակի դրախտ։

— Իսկ իմ կարծիքով,— նկատեց անկյունից Դենիսկա Օժոգինը,— ավելի լավ, քան մեզ մոտ Բայազետում է, չկա։ Դեռ ոչ մի տեղ ինձ այսպես չեն հյուրասիրել...

— Դատարկախոսն ես դու,— կոպտեց նրան զինվոր Պոտյոմկինը։— Ավելի վատ, քան այս Բայազետում, ջունն

անգամ երազում չի տեսնի։ Միայն ահա, եղբայրներ, նրանք Բուլղարիայում դեռ պիտի ոտքեն հա դոփեն, մինչև սուլթանին հասնեն, իսկ մենք, փա՜ռք աստծո, արդեն նրա հողի վրա ենք քայլում։ Եվ ոչ մի սատանա մեզ այս ծակից դուրս չի քշի։

Մոտեցավ հրետաձիգ Կիրյուխա Պոստնին, պպզեց։ Այն բանից հետո, երբ «թրքուհին համբուրեց» նրան, տղան սկսեց ուժեղ կակազել։

— Կո՜-կո՜-կո՜-կո՜...— խոսակցության մեջ մտավ նա։

— Ի՞նչ,— հարցրեց Դենիսկան։

— Կո՜-կո՜-կո՜-կո՜...

Խրենովը գրկեց տղային՝ շոյելով նրա մազերը։

— Կոթկոթա, սիրելիս,— ասաց նա։— Գուցե և ձու ածես։ Մեզ համար միանգամայն տեղին կլիներ...

— Երբ մտածում եմ,— հանկարծ միանգամից ասաց Կիրյուխան,— ա՜ռ-ա՜ռ-ա՜ռդեն ինքս էլ եմ վախենում... Սլա-սլա-սլավոնները չէ՞ որ նույնիսկ չգիտեն էլ, թե նրանց համար ինչպի-սի տա-տանջանքներ ենք մենք այստեղ կրում։

— Այ թե իմանայի՜նք,— խորհրդածեց Պոտյոմկինը,— նրանք արդյոք հեռո՞ւ են գնացել։ Մինչ մենք այստեղ նստած ենք, գուցե նրանց Աբդուլկա Համիդով սուլթանն արդեն հաշտություն է խնդրում։

— Իսկ ահա ես լսել եմ,— սկսեց Դենիսկան,— որ իբր այդ Աբդուլկան բոլորովին կնիկ չի սիրում։ Տղամարդկանց մոտ է գնում։

Պոտյոմկինը թքեց անկյունում.

— Դա դժոխային մեղք է, որ Բաբելոնից է սկսվել։ Մեզ՝ ռուս մարդկանց համար այդ մասին խոսելն անգամ անվայել է... Իսկ այդ ի՞նչ բան է, եղբայրներ, ես վաղուց եմ նկատել, մեր բարոնչիկը գիշերներն անընդհատ բարձրանում է բերդի դիմամասը և ման գալիս, հա ման գալիս։ Գլուխը կախ է գցում, ձեռքերն ահա այսպես խաչում հետևում, և... թուրքերը կսպանեն նրան։

— Նա առաջին կարգի սպա է,— արձագանքեց Ուչաստկինը։— Թեև նա ազնվազարմ է, բայց եթե շատ լինեին այդպիսիները, ինչպես նա է, ա՜յ թե լավ կլիներ։ Նրանից զինվորները ոչ մի վատ բառ չեն լսել։ Նրա սերթուկի մր-

ջով արդեն լույս է թափանցում, իսկ ինքն անընդհատ իր ոտիկը, մինչև վերջին կոպեկը, զինվորական կաթսային է տալիս։ Եվ որքան հաճելի էր լսել, թե ինչպես նա կպավ Պացևիչին...

Խրենովը շշուկով ավելացրեց.

— Մարդիկ ասում են, որ Պացևիչին, դե այնպես... Մերոնցից մեկը նշանոցի վրա է վերցրել։ Միայն թե չգիտեն՝ ո՞վ։ Կարաբանովի վրա են կասկածում։

— Ես տեսա,— ասաց Ուշաստկինը,— առաջին գնդակը թուրքերի կողմից եկավ, նույնիսկ նրա ուսադիրը պոկեց։ Իսկ երկրորդը...

Պոտյոմկինն ափով փակեց նրա բերանը.

— Խոսեցինք, և վերջ։ Մեր գործը չէ, իրենց գործն է։ Եվ եթե նրան վերացրել են մեջտեղից, ուրեմն նրանք գիտեն ինչի համար...

Տանիքի վրա Կլյուգենաուի ոտքերի տակ թեթև ճռթճռթում էր կապարե ծածկը։ Թուրքական ուղեկալները պատերի վրա մանր կոտորակներ էին շաղ տվել, և Պոտյոմկինը սոֆիտի հրակնատից դուրս նայեց։

— Ձերդ բարեծնություն, Ֆյոդոր Պետրովիչ,— կանչեց նա Կլյուգենաուին։— Արդեն ուշ է, գուցե գնայիք այստեղից...

Կլյուգենաուն սանդուղքներով իջավ հոսպիտալի կցաշենքը, որտեղ հավաքվել էին սպաները՝ սպասելով Սիվիցկուն։ Վատնինն էլ այստեղ էր. մթության մեջ մերթ ընդ մերթ շնչակշխկացնելով սրի պատյանով՝ նա պատմում էր իր դստեր մասին.

— Պապա, ասում է աղջիկս ինձ, այդպես պետք է, և դու ինձ մի հակառակվի։ Դե, լավ։ Ախր հարազատ զավակս է, նրանից բացի ես ոչ ոք չունեմ։ Ի՞նչ կարող ես անել։ Թողեցի նրան. Հետո ամբողջ երկու տարի նամակներ էի ստանում նրանից։ Էնպիսի գեղեցիկ ծրարներով։ Պատահում էր, ձանձրույթից ես նրա բոլոր նամակները դարսում էի սեղանի վրա։ Ման էի գալիս ու հիանում։

— Ես հարսնացու ունեմ,— կամացուկ ասաց Եվդոկիմովը։— Նա սովորում է Ժնևում... Աստվա՜ծ իմ, նա երբևիցե կիմանա՞ արդյոք, թե մենք ինչ օր ենք քաշել այստեղ, պարոնա՜յք։

— Իսկ նրա ինչի՞ն է պետք այդ բոլորը,— մռայլ արձագանքեց Կարաբանովը։— Եվ ոչ ոք էլ մեզանով չի հետաքրքրվում։ Ուղղակի մեզ մոռացել են...

Եկավ Սիվիցկին, յուրաքանչյուր սպայի տվեց շաքարի ամենօրյա բաժինը՝ անանուխի կաթիլներով։ Այդ օրը նա ավելի բարի գտնվեց և որոշեց սպաներին լրացուցիչ բաժին հանել նաև քառորդ բաժակ ջուր՝ հոսպիտալի պաշարներից։

— Մի քիչ ջուր էլ լցնեմ տիկին Խվոշչինսկայային,— ասաց բժիշկը։— Պարոնայք, ձեզանից ո՞վ ջուր կտանի նրան։

Կլյուգենաուն նրան մոտեցրեց գավաթը.

— Լցրե՛ք։ Ես կտանեմ։

— Իսկ դուք գիտե՞ք, պարոնայք,— շարունակեց բժիշկը,— այսօր գնդապետ Պացևիչն իրեն անհամեմատ ավելի լավ էր զգում։

Կլյուգենաուն ուշադիր նայեց Սիվիցկուն։

— Ես ուրախ եմ,— ասաց նա։

Սպաները, զնգզնգացնելով բաժակները, ձգվում էին դեպի Սիվիցկին։ Հենց տեղնուտեղը, մի կողմ չքաշվելով, ագահորեն ծծում էին ջուրը, իրար ասում.

— Որքան հաճելի է, պարոնայք։

— Հրաշալի է։

— Ի՜նչ երջանկություն է ջուրը։

— Այսպես կխմեի, հա կխմեի՜, ինձ թվում է...

— Կլյուգենաու, իսկ դուք ինչո՞ւ չեք խմում։

Պրապորշչիկը կանգնած էր լիքը գավաթով.

— Ես հետո, պարոնայք...

Նա այդպես էլ ջրի համը չտեսավ։ Գնաց բերդի երկար ու մութ միջանցքի երկայնքով, մերթ ընդ մերթ բացականչելով զինվորներին.

— Ձգույշ, չհրես... Չհրես ինձ, եղբայր։

Ագլայա Եգորովնան նրան դիմավորեց մի տեսակ օտարոտի։

— Դա ինձ համա՞ր է,— հարցրեց նա։

Գավաթի մեջ փայլփլող ջուրը տեսնելով՝ Կլյուգենաուն իրեն գրեթե վատ էր զգում, և նա ստիպեց կնոջը որքան կարելի է շուտ խմել ջուրը, որպեսզի ծարավը այլևս չկարողանար տանջել իրեն։

— Ահա այդպես,— ասաց նա, թուքը կուլ տալով։— Վաղը նորից կբերեմ...

— Իսկ դուք խմե՞լ եք,— հարցրեց Ագլայան։

— Իհարկե,— ստեց Կլյուգենաուն։— Սիվիցկին այսօր այնքան սիրալիր էր, որ ջրարբեցում էր կազմակերպել բոլորիս համար՝ առանց աստիճանը հաշվի առնելու։

Խվոշչինսկայան լռեց։

— Բժիշկները հազվադեպ են բարի լինում,— նորից սկսեց խոսել Կլյուգենաուն, որին անհարմար թվաց միանգամից հեռանալ։— Իսկ հիմա մենք բոլորս ենք մի քիչ դաժանացել։ Այսօր ես տեսա, թե ինչպես մի կապիտանարմուս խնդրում էր մի քիչ ջուր վաճառել իրեն[1]։ Նա ջրի համար առաջարկեց դրամով լիքը մի քսակ, բայց... Ներեցեք, ես երևի խանգարո՞ւմ եմ ձեզ։

Ագլայան այնպես նայեց պրապորշչիկին, որ ասես նա միայն հիմա էր ներս մտել։

— Լսե՛ք,— ասաց կինը,— ամրոցում ինչ-որ լուրեր են պտտվում Կարաբանովի մասին... Բայց դա սուտ է։ Ես հո գիտեմ, որ դա արել եք դուք։ Ես տեսա, թե դուք ինչպես դա արեցիք...

Կլյուգենաուն հանեց ակնոցը և սերթուկի փեշով մաքրեց ապակիները։

— Տիկին,— քաղաքավարի պատասխանեց նա,— գուցե և դուք տեսել եք ինձ։ Սակայն գնդակը դուք հո չէի՞ք կարող տեսնել։

Նա գրեց ակնոցը, որի տակից նրա աչքերը նայում էին առաջվա պես անվրդով ու պարզ։

— Տարօրինակ է,— ասաց Ագլայան,— այդ ամենը չափազանց տարօրինակ է։ Եվ բոլորովին, ներեցեք, նման չէ ձեզ։

— Իսկ հատկապես ի՞նչը։

— Ես կարծում էի դուք ինձ հետ մինչև վերջ անկեղծ կլինեք։ Ինձ թվում էր, թե մենք կարող ենք հասկանալ իրար։

[1] Բայազետի պաշարման ընթացքում ջուրը փողով վաճառելու միայն մի դեպք է եղել (հեղ.)։

— Տիկին, դժբախտաբար ես չեմ կարող պատասխան տալ յուրաքանչյուր գնդակի համար...

— Ֆյոդոր Պետրովիչ,— ընդհատեց նրան Ագլայան։— Եթե դուք իմանայիք միայն, թե ինչպես ձեզ չի սազում այդ խորամանկելը։ Դուք որքան մաքուր ու հիանալի եք, երբ ազնիվ եք լինում։ Ավելի լավ է բոլորովին լռեք, միայն թե պետք չէ ստել։ Հավատացե՛ք, ես հիմա արժանի եմ այն բանին, որ մարդկանցից լսեմ միայն ճշմարտությունը...

Կլյուգենաուն մոտեցավ նրան և խոնարհվելով համբուրեց նրա նուրբ, այդ օրերի ընթացքում նիհարած ձեռքը։

— Ես համաձայն եմ,— կցկտուր ասաց բարոնը։— Ես բոլորովին չեմ ուզում ձեզ հետ դաժան լինել, սակայն ստիպված եմ...

Սենյակի անկյունում թրթռալով ցնցվում էր սարդոստայնը։ Նայելով այդ անկյանը՝ Կլյուգենաուն ասաց.

— Գիտեք, տիկին, եթե ես չկրակեի այդ մարդու վրա, նա անպայման բերդի դարպասները կբացեր թուրքերի առաջ, և այն ժամանակ...

— Ինչի՞ մասին եք ասում։

Կլյուգենաուն ներս ձգեց թմբլիկ շրթունքները, բերանը պառավի նման փոս ընկավ, և նա ամբողջովին նմանվեց կուրտ դրամափոխի։

— Լավ,— ոչ անմիջապես համաձայնեց նա,— ես կլինեմ անկեղծ։ Այդ ժամանակ ես հարկադրված կլինեի կրակել արդեն ձեզ վրա։

— Ի՞նձ վրա,— ապշեց Ագլայան։

— Այո, տիկին։ Հենց ձեզ վրա, և դուք չե՞ք առարկի, որ տվյալ դեպքում մահը ձեզ համար կլիներ միայն բարերարություն։ Կամ դուք այսօր արդեն կլինեիք մեյդանում որպես վաճառվող մի բան, ինչպես... ինչպես, ներեցեք, մի պարկ ընկույզ։

— Աստվա՞ծ իմ,— Ագլայան սարսափած նայեց նրան,— և դուք կհամարձակվեիք սպանե՞լ ինձ։

— Ձեզ փրկելով ստրկությունից,— պատասխանեց Կլյուգենաուն,— լոկ կկատարեի այն մարդու կամքը, որին ես սիրում էի ու հարգում։ Դա ձեր հանգուցյալ ամուսնու վերջին ցանկությունն էր։

Ագլայան բռնեց նրա ձեռքից և նստեցրեց իր կողքին։

— Ի՞նչ մարդ եք դուք։ Ես նույնիսկ չգիտեմ ինչ։ Բայց դուք զարմանալի եք։ Որտե՞ղ եք եղել դուք այս ամբողջ ժամանակ։

Կամացուկ հեծկլտալով՝ Կլյուգենաուն գլուխը հպեց կնոջ ուսին և երկար ժամանակ լռեց՝ հավատով ու հնազանդորեն։ Եվ մինչ նրանք այդպես նստած էին անխոս, իրար սեղմված, գիշերը Բայազետի վրա, պաշարման մռայլ գիշերը, ալեկոծվում էր հեռվում կրակների բռնկումներից, ճեղքվում կրակոցների ճայթյուններից և մայոր Պոտրեսովը, հրետասայլի վրա նստած, ծամում էր մի բուռ չոր գարի՝ հիշելով ապրած դառն օրերը.

— Իմ հորը,— պատմում էր նա Եվդոկիմովին,— Ստարայա Ռուսիայում ծեծելով սպանել են։ Խոլերային խռովությունից շատ ժամանակ չանցած։ Նա արակչեևականներից էր։ Ես որբ եմ մնացել։ Ո՞ւր պիտի գնայի։ Սկսեցի կանտոնիստից։ Մանկուց թմբուկների տակ։ Սովորեցի հրետանային գծով։ Սոսկալի է, երբ հիշում եմ... Երեխա եմ դեռ, ձիերը չեն հնազանդվում, ձիասարքերը խճճվում են, ամեն կողմից ապտակներ։ Ահա այդպես էլ կամաց-կամաց հասակ առա։ Հետո էլ պատերազմներ։ Ազնվատոհմ մարդկանց համար շատ հաճելի էր. նրանց համար ինչ կար որ, հենց մի բան պատահեց, անմիջապես հրետանային երկանիվ սայլի վրա էին դնում և հեռացնում դաշտից։ Իսկ մեզ նմանների համար այդպես չէր։ Թուրքերն արդեն սպասավորակազմը թրակոտոր էին անում, իսկ իմ «հրասանդիկը» անընդհատ զոռ էր տալիս։ Այդպես էլ ահա սպա դարձա։ Այնպես որ, ոսկորներս ճրթճրթում են, երբ հիշում եմ։ Հետո էլ ահա ժապավենով Վլադիմիր ստացա։ Միացա ազնվականությանը։ «Ո՞ր նահանգի»,— հարցնում են ինձ։ Իսկ ես ինքս էլ չգիտեմ, որ նահանգի։ «Գրեցեք, ասում եմ, Թիֆլիսի նահանգի»,— մանավանդ, մտածում եմ ես, որ իմ աղջիկները այնտեղ են ապրում։ Ահա այսպես էլ, իմ սիրելի յունկեր, ամբողջ կյանքս կրակելով անցկացրի...

Ցից-ցից կանգնած ուսադիրներով, սմքած ու անճոռնի մայոր Պոտրեսովը նստած էր պատանու առջև, և նրա ծնոտները միապաղաղ վեր ու վար էին շարժվում. նա շինելի գրպանից բռով հանում էր գարին և ջանասիրությամբ ծամում։

Եվ նրա գլխավերևում սկսեցին շողշողալ պայծառ, մաքուր աստղերը։

6

Արթնացրեց Վատնինը։

— Ելիսեևիչ,— ցնցեց նա պորուչիկին,— ուշքի եկ, արդեն առավոտ է... Հապա մի նայիր, մուշտակը կենդանացավ։

— Ի՞նչ մուշտակ,— դժգոհությամբ ճմլկոտեց Կարաբանովը։

Այո՛, արդեն լուսաբաց էր։ Երկու մորտուս[1]-զինվորներ կազեմատից բակ էին դուրս բերել մի մեռած թուրքի, և երևում էր, թե մեռածի վրա ինչպես էր շարժվում բրդոտ երեսը դեպի դուրս շուռ տված մուշտակը։

— Շիկահերներն են վխտում,— զզվանքով իրեն թափ տվեց Վատնինը։— Տերը ոչ անի, եթե կազակների վրա անցնեն... Տիֆ կլինի։

Կարաբանովը ցնցվեց.

— Ինչ գարշելի բան է։ Թող մորտուսներն այրեն նրան մորթու հետ միասին... Արժե՞ր, եսաուլ, արթնացնել ինձ։ Թյո՛ւ...

Ամրոցի պարիսպների հետևից զանգուլակների ղողանջ լսվեց։ Դա առաջին շարքաթ վաճառողներն էին, որ արթնանալով քնից, արդեն դուրս էին վազել փողոց։ Հետո մեյդան դուրս եկան թափառաշրջիկ շեյխերը, որոնք ավելի շատ ավազակների էին նման։ Դժվարությամբ բարձրանալով լուսիններով պսակված մինբարների վրա՝ նրանք մերկացնում էին սրերը և հազար ու մի ոռնոցով սկսում իրենց արյունռուշտ քարոզները։

— Չկրակե՞լ, հը՞,— հարցրեց քնաթաթախ Ուչաստկինը։

---

[1] Մորտուս — ծառայողներ, որոնք դատապարտված են ժանտախտի ժամանակ հետևելու դիակներին։

Եվ, ի պատասխան նրա առաջին կրակոցի՝ շրջակայքի կիրճերը ու ձորակներն անմիջապես պատվեցին ծխաշիթերով։

Կարաբանովը հայհոյելով վեր կացավ տեղից։ Նայեց շուրջը։ Քաղաքի ավերակներից դուրս եկավ մի սայլ, որի վրա մի քանի թրքուհիներ թմբուկներ էին խփում, որ նման էին մեջտեղից կիսված ձմերուկի։ Սայլի վրա անշարժ նստած էր ծածկոցի մեջ փաթաթված հարսնացուն։ Փայլաթիթեղով և ծոպերով զարդարված եզները հարսանեկան արարողության սայլը քաշում էին սարի ստորոտով, իսկ հարսանիքին ընդառաջ էին վազում քրդերը՝ շտապելով գերեզմանոց տանել հարուստ ննջեցյալին, և քրքրված հագուստներով վարձու գնչու եղերամայրերը վայում էին ու կոծում։ Երկու ծիսախմբերը՝ հարսանեկան և թաղման, հավասարվեցին, և այդ ժամանակ հարսնացուի ընկերուհիները սկսեցին ավելի ուժեղ զարկել թմբուկներին, իսկ եղերամայրերը՝ ավելի մոլեգնաբար ոռնալ։

Մոտեցավ Շտոկվիչը։

— Շնորհավորում եմ,— ասաց նա սպաներին։— Նոր օրն արդեն սկսվեց, պարոնա՛յք, ձեզ ցանկանում եմ քաջարի մնալ։

— Կաշխատենք,— ծուլորեն պատասխանեց Կարաբանովը։

Շտոկվիչը անսպասելիորեն տաքացավ.

— Պորուչի՛կ, կարող էիք նաև ձեռքով պատվի առնել, երբ խոսում եք ավագների հետ։ Կարծես այնքան էլ դժվար բան չէ։

— Ջեմ համարձակվում ձեզ զրկել այդպիսի սիրալիրությունից։— Կարաբանովը ցուցադրաբար պատվի առավ։— Թույլ տվեք ձեզ ևս ցանկանալ քաջարի մնալ։

— Ինձ ոչ մեկը չի կարող կշտամբել հակառակ բանում...

Ասենք Բայազետի կայազորը նման բարեմաղթությունների անհրաժեշտություն չէր զգում. բոլորը սովորել էին արհամարհել մահը և դա անում էին նույնիսկ որոշ անհոգությամբ։ Մահն այդ օրերին կորցրել էր իր սրությունը, ընտելացել էին նրան, սակայն ավելի ու ավելի սաստկանում էր ծարավը՝ անողոք, մորմոքիչ, անիծված ծարավը։

— Քանի տարի է ապրում եմ,— խոստովանեց Խրենովը,— միշտ մտածել եմ, որ ավելի հաճելի բան չկա, քան ջորել այն տեղը, որտեղ քոր է գալիս։ Իսկ հիմա մտածում եմ, որ աշխարհում ամենաքաղցր բանը ջուր խմելն է։ Լավ կլիներ սառը ջուր։

Նրա վրա բղավեցին.

— Սկսեցիր նվալ, ծերուկ։ Առանց քեզ էլ անտանելի է...

Իսկ այդ օրը հատկապես շոգ էր։ Մարդիկ շնչահեղձ էին լինում շիկացած քարե պարկերի մեջ, հրաձիգները հաճախ հետ էին քաշվում իրենց հրակնատներից, պառկում գետնին։ Ծարավը հաղթում էր։ Աչքերին ջուր էր երևում, ականջներում ջրի խշշոց էր լսվում, ոտքերի տակ ջուր էր ճողփում։

Մարդիկ կեսօրվա մոտ սկսեցին ուշագնաց լինել. քայլում էր զինվորը, քայլում էր և, ձեռքերը թափահարելով, թուլացած ընկնում քարերի վրա։ Մոտենում են նրան, սկսում են ցնցել, բայց զինվորի մարմինն արդեն թոշնել էր ինչպես մաշված լաթի կտոր, և նա ոչ անմիջապես բացում էր աչքերը, որպեսզի գթաշարժորեն խնդրեր.

— Թեկուզ մի կաթիլ... Մի՞թե չկա։

Անհաջող գրոհից հետո թուրքերը խրամատներով շրջապատել էին ամրոցը։ Կրակոցների ճարճատյունը, գարշահոտ ծխի քուլաները, գնդակների թրմփոցները, կապարի հարվածի տակ ընկած մարդկանց սուր ճիչերը, բակերի սալերի վրա արագ մակարդվող արյան լճակները, զրնգոցով այս ու այն կողմ թռչող գնդերը,— այս բոլորը տեսնելն այնքան սովորական էին դարձել ու սաստիկ զզվեցրել Բայազետի պաշտպաններին, որ նրանք նույնիսկ դադարել էին սոսկալուց։

— Ջուր լիներ։ Թեկուզ մի՛ կաթիլ...— ահա, թերևս, ամենագլխավորը, որ տանջում էր ուժասպառ եղած մարդկանց։

Քահանան այցելեց Խվոշչինսկու այրուն, նրա առջև սեղանին նվեր դրեց՝ երկու հատ եկեղեցական մոմ և նշխարք։

— Տամիր,— ասաց նա բարեհաճությամբ։— Ինչ էլ ասես, այնուամենայնիվ, ցորենից է։ Դե, մոմերն էլ երբեմն կվառես։ Գուցե կրակի հետ այնքան տխուր չլինի...

— Շնորհակալություն, տեր հայր,— պատասխանեց կինը։

Տեր Գերասիմը մատով մոտ կանչեց նրան։

— Լսի՛ր հապա,— ասաց նա մտերմաբար։— Կազակները հիմա մեծախոսում են, որ իբր Վատնինը խոստացել է իր աղջկան՝ նրա ամբողջ օժիտով, տալ այն քաջին, որը կբացի ամրոցի ջուրը։ Կաղ լինի թե կույր՝ միևնույն է, միայն կայազորին ջուր տա խմելու։

— Ինչպե՞ս թե,— զարմացավ Ագլայան։

— Ահա այսպես... ով կարողանա Թուրքերի քթի տակից ջուրը նորից ամրոց բերել, նա էլ կստանա աղջիկը՝ օժիտի հետ միասին։ Չգիտեմ, ճիշտ է դա, թե մարդիկ ստում են...

— Ուղղակի զառանցում են,— խոնջանքով արձագանքեց կինը՝ հազիվ ժպտալով։— Ասենք, ով է հասկանում այդ կազակներին... Չէ որ կոմս Պլատովը երդվել էր, որ աղջկան կտա ցանկացած կազակին, ով Նապոլեոնին օղապարանով կենդանի կբերի իր մոտ։

Ագլայան գլխին սպիտակ թաշկինակ կապեց, գոտկատեղին գուտապերչե գոգնոց ձգեց՝ պատրաստվելով գնալ հոսպիտալ։ Շեմի մոտ նա խիստ օրորվեց թուլությունից, և տեր Գերասիմը բռնեց նրան արմունկից։

— Իսկ դու մի ընկիր,— ազդու ասաց նա Ագլայային։— Նայելով քեզ, ամբողջ կայազորը հիմա՝ ահա այսպես, առամները սեղմել է։ Դու պինդ կաց, աղջիկս։ Որ աստված չտվեց, խոզն իսկ ուտելու բան չի ունենա...

Հոսպիտալում ինչ-որ թթված նեխահոտ կար։ Մի քանի առաջամարտիկներ, շնայելով վիրավորների տնքոցներին, հարմարվել էին հենց այդտեղ, լուսամուտների մոտ։ Հրաձգությունը, ինչպես երևում էր, չէր խանգարում Սիվիցկուն, և նա ավարտում էր հերթական վիրահատությունը։

— Հանգիստ պառկի՛ր, ցավ,— գոռաց կապիտանը դանակի տակ շուռումուռ եկող զինվորի վրա։— Պառկի՛ր, թե չէ կմորթեմ, սատանան տանի... Շատ լավ է, որ դուք եկաք,— ասաց նա Ագլայային և անմիջապես հրամայեց նրան,— Tupfen! Abar zum Tupfen!...

Վիրահատվողը աղիողորմ նվում էր՝ աղերսող աչքերով նայում կնոջը։ Երբ նրան վերցնում էին սեղանի վրայից, Սիվիցկին ասաց.

— Այսօր չորս երիտասարդ եկան բազմագլուխ չիբանով։

Եվ գա հասկանալի է՝ չորս կողմը կեղտ է։ Կարծեմ հերոսներից մի քանիսն էլ արդեն «շիկահերներ» են ձեռք բերել։ Իսկ ոջիլներն այսպիսի պայմաններում ոչ այնքան հաճելի բնակակցուհիներ են։

— Մահացածներ այսօր շա՞տ կան,— հարցրեց կինը։

— Բանը այդ չէ,— բարկացած պատասխանեց կապիտանը։— Ես ձեզ այսպես կասեմ, սիրելի տիկին. եթե մեր աշխատանքին նայենք առանց պարծենկոտության և կանացիական խանդաղատանքի, ապա մենք, հավատացեք վատ չենք բուժում։ Սակայն նայեցեք, թե ճամբարի վրա ինչպես են կախվում գարշահոտ գոլորշիները...

Պացևիչը կնոջը խնդրեց մոտենալ իրեն։ Գնդապետը պառկած էր զինվորներից սավաններով անջատված մի անկյունում։ Ռետինե փչովի ներքնակը նրա ծանր մարմնի տակ մերթ ընդ մերթ կամաց շվացնում էր՝ բաց թողնելով օդը։

— Աստվա՜ծ իմ,— ասաց Ադամ Պլատոնովիչը,— ինձ, ծերուկիս համար անտանելի է այս ամենը... դուք նայեցեք ճանճերին, ինչ երջանիկն են նրանք, որ կարող են դուրս թռչել այս դժոխքից։

Գնդապետի դեմքը սեղմվեց գորշ կնճիռների մեջ, և ծերունական պղտոր արցունքները ցայտեցին աչքերից՝ հոսելով քունքերի վրա։

— Իսկ ինչո՞վ կարող եմ օգնել ձեզ,— ասաց Ագլայան։

— Բայց չէ՞ որ ես եղել եմ... եղել եմ,— հանկարծ խրոխրոցով ասաց գնդապետը։— Ախր եղել եմ ես, հիշում եմ՝ երիտասարդ և առողջ... Իմ ճակատագրում չպատահեր այս անիծված Բայազետը, ես հիմա Օրենբուրգում արդեն նահանգապետի պաշտոն ստացած կլինեի։ Ես հասկանում եմ, այլևս փրկություն չկա, ամեն ինչ վերջացած է... Ինձ մի բան է մնում՝ նախանձել ամեն մի կեղտոտ ճանճի, ամեն մի նեպուկի, որ սողում է զինվորական արտաքնոցում։ Չէ՞ որ ես կմեռնեմ, իսկ նա պիտի ապրի։ Եվ ես նախանձում եմ նույնիսկ նեպուկին, որովհետև նա կմնա, և նրա համար այդ կեղտի մեջ նույնպես լավ կլինի, ինչպես ինձ համար լավ կլիներ նահանգապետի պաշտոնում...

Կինը մի տեսակ ներքին ցավ զգաց այդպիսի սարսափելի, գրեթե ոչ մարդկային խոստովանություններից։

— Դուք ինչպես կարող եք այդպես խոսել,— ասաց Ագլայան կշտամբանքով։

— Ես հիմա կարող եմ ամեն ինչ ասել։ Եվ ամեն ինչ կարող եմ պահանջել... Որովհետև ես մեռնում եմ, և դուք չեք կարող ինձ մերժել և... թող ինձ ատեն, բայց ես ուզում եմ... խմել։

— Լավ,— համաձայնեց Ագլայան,— ես կհաղորդեմ...

Սիվիցկին արդեն օգնում էր սեղանի վրա դնելու հերթական վիրավորին։

— Ես ջրհան մեքենա չեմ,— կոպտորեն պատասխանեց նա Պացևիչի խնդրանքին։— Եվ եթե ինձ մոտ ջուր էլ լիներ, ապա ես կգտնեի նրա օգտագործման ավելի լավ ձև, քան այն լցնել գնդապետի որովայնը։ Կարող եք հենց այդպես էլ հաղորդել նրան... Ինձ ասեղ տվեք,— հրամայեց նա Նենյուկովին, և նրա ձեռքի մեջ պսպղաց երկար ասեղը։

Գիշերը, ինչպես միշտ, ցանկացողները գնացին ջուր բերելու։ Այս անգամ նրանք վերադարձան գոհ՝ բերելով մեծ ավար։ Հենց այդտեղ ստորանցքի մթության մեջ, մեկը սափորից առատորեն մի լիքը գավաթ սառը ջուր լցրեց Կարաբանովին։

— Խմեք,— ասաց կամավորականը,— մենք այսօր առատաձեռն ենք։

Անդրեյը ագահորեն ջուրը քամեց սեղմած ատամների միջով և հանկարծ թքեց։

— Դու այս ի՞նչ ես տվել,— հարցրեց նա։— Ինչ-որ գարշելի հոտ է փչում... Քո սափորը, եղբայր, կեղտոտ է...

Այսպես պաշարված ամրոցի կայազորի վրա կուտակվեց ևս մի սարսափելի աղետ. Ֆուիկ փաշան կարգադրել էր գետը լցնել մարդկանց և ձիերի դիակները, և ջուրն արդեն սկսել էր արձակել այն զզվելի սպանիչ դիահոտը, որով թունավորված էր օդը։ Վարակված ջուրը, իհարկե, խմում էին, չէ որ դա, այնուամենայնիվ, ջուր էր, և Սիվիցկին այս դեպքում ոչինչ չէր կարող անել։

— Համաձարակ կսկսվի,— զեկուցեց նա Շտոկվիչին։— Սակայն մարդկանց բոլորովին չես արգելի, անհնար է։ Եվ ոչ մի շիբ ու ոչ մի թթու այստեղ արդեն չեն օգնի։ Տեսնում եք,

պարոն սպարետ, թուրքերն այսօր նույնիսկ չգնդակոծեցին կամավորներին։ Նրանք ճիշտ հաշիվ են արել...

— Լավ,— մռայլորեն պատասխանեց Շտոկվիչը,— թող խմեն։ Մեզանից որևէ մեկը գոնե կենդանի կմնա, հո բոլորս չպիտի սատկենք։ Իսկ ամրոցը հիմա կանգնած է անսասան, ինչպես երբեք...

Գիշերվա կեսին, երբ հոգնածությունը մարդկանց ծանր քնի մեջ էր գցել, յունկեր Եվդոկիմովը բարձրագոչ ճիչերով ոտքի հանեց ամրոցը.

— Ուռա՜,— գոռում էր նա՝ վազելով կազեմատից կազեմատ, և քաշքշելով քնած սպաներին։— Ուռա՜... Մենք փրկված ենք։ Վեր կացեք, ընկերներ, մենք փրկված ենք...

— Կանչեցեք Սիվիցկուն,— հրամայեց Շտոկվիչը։— Թող նրան տանի իր մոտ։ Մեկն արդեն խելագարվել է...

— Դե ոչ, է՜։ Դուք լսեցեք ինձ... Մենք փրկված ենք։

— Մի՞թե մոտենում է Տեր-Ղուկասովը,— հարցրեց Կլյուգենաուն։

— Ո՜չ,— գոչեց պատանին։— Պարսիկները...

Բակի խորքում իսկապես կանգնած էին երեք պարսիկ, որոնց Պոտրեսովի հրետաձիգները հենց նոր էին ամրոց բարձրացրել բերդապարսպի վրայով։ Նրանցից մեկը զառամյալ ծերունի էր՝ սուսնիի շալմայով, մյուս երկուսը՝ ավելի երիտասարդ էին։ Գլուխ տալով սպաներին՝ պարսիկները բացատրեցին, որ Մակինի շահը, հիշելով ռուսական համբավի մասին, իրենց ուղարկել է այստեղ, շահը տեղյակ է այն բազմօրյա ծարավի մասին, որից տանջվում են ռուսական հովազները։ Իրենք ջրհորներ փորելու մեծ փորձ ունեն և, ժամանակ չկորցնելով, հենց այսօր սեթ կսկսեն ջուր հայթայթել։

— Ոչինչ չի ստացվի,— մռթմռթաց Շտոկվիչը հորանջելով,— մենք արդեն փորձել ենք փորել։ Այստեղ համատարած քարաշերտեր են։

Մայոր Պոտրեսովը պաշտպանեց պարսիկներին։

— Դուք չգիտեք,— ասաց նա,— թե այդ պարսիկները ինչ հրաշքներ են գործում։ Նրանք հռչակված են ամբողջ Արևելքում և կարող են նույնիսկ անապատում, չոր քարի միջից ջուր հանել։

— Լա՛վ։ Բարոն Կլյուգենաու, թարգմանեցեք պարսիկնե-րին, որ եթե նրանք ջուր հայթայթեն, ռուսական հրամանա-տարությունը նրանց շատ ոսկի կտա։

Կլյուգենաուն առաջ եկավ։

— Ինչքա՞ն ոսկի խոստանալ նրանց։ Հազա՞ր։

— Երկու... Միայն թե ջուր լինի։

Դժվարությամբ պտտեցնելով չորությունից ճաքճքած լե-զուն՝ Կլյուգենաուն ասաց.

— Մըն գուման միքոնըմ քե դու հեզար քաֆիստ... Ջե-դան բեշոմա միգուեմ։ Մերա միֆեհմի...[1]

Պարսիկները, սակայն, քաղաքավարի պատասխանեցին, որ իրենց աշխատանքի համար կվերցնեն այնքան, ինչքան վերցնում են բոլոր պատվիրատուներից, ռուսական տասը կոպեկանոցի չափ ջրի հոսանքի համար կվերցնեն երեք հարյուր աբասի, դինարի մեծությամբ ջրի հոսանքի համար՝ հինգ հարյուր աբասի։

— Նրանք ազնիվ մարդիկ են,— ասաց Կարաբանովը։— Մակինի շահը, որի մոտ ես հյուր եղա անցած ամիս, հարգում է Ռուսաստանը, և դա նկատելի է նրա հպատակների հա-մեստությունից։

Պարսիկները հենց այդ գիշեր էլ սկսեցին աշխատել։ Իրենց վարպետության գաղտնիքները նրանք չէին ցանկանում բացահայտել, և Շտոկվիչը կարգադրեց ապագա ջրհորի ներ-հատման տեղում վրան խփել։ Ջրհոր փորելու գործիքները վարպետները բերել էին իրենց հետ, և շուտով վրանի տա-կից լսվեցին բահերի զրնգոց ու շաղափի կամացուկ կարկաչ։

Դա ուրախալի աղմուկն էր այդ աշխատանքի, որը հու-սադրում էր յուրաքանչյուրին, և կյանքն ամրոցում անմի-ջապես դարձավ ավելի զվարթ։ Սակայն թույլ չէին տալիս նայել վրանի ներսը, և վարպետներին պահպանելու համար կանգնած ժամապահը հեռացնում էր հետաքրքրասերներին.

— Հետ քաշվիր, ի՞նչ ես նայում, շուտով ջուր կխմես...

[1] Դուք կստանաք երկու հազար ոսկի... Միանգամայն ճշգրիտ խոս-տում է։ Դուք հասկացա՞ք ինձ (պարսկ.)։

Կազակներն, այնուամենայնիվ, չհամբերեցին։ Մենք չգի-տենք, որքանով ճիշտ էր այդ լուրը, որ իբր Վատնինը խոս-տացել էր իր աղջկան՝ հարուստ օժիտով տալ ցանկացած խիզախին, որը կարող էր խողովակներով ջուրը բաց թող-նել ամրոց։ Սակայն կազակների առաջին հարյուրյակում վիճակ էին հանել, և կազակներից մեկը (նրա անունը մեզ հայտնի չէ) իսկապես երեկոյան դուրս եկավ ամրոցից։ Այդ հանդուգն փորձի լուրը արագ տարածվեց Բայազետի բոլոր անկյուններում, և փոշոտ բակում, շատրվանների վիթխարի ավազանի շուրջը, սպասումով հավաքվել էին զինվորներն ու կազակները։

Դենիսկա Օժոգինն անկեղծորեն նսխանձում էր։

— Թղթախաղում և վիճակ հանելու մեջ ես բախտ չու-նեմ,— ասում էր նա։— Բայց՝ ափսոս։ Իսկ հարյուրապետի աղջիկն էլ, եղբայրներ, նշանավոր գեղեցկուհի է։ Մի անգամ եկել էր ստանիցա, և ես տեսա նրան։ Փողոցով անցնելիս՝ միայն փսփսոցներ էին լսվում։ Վատնինը նրան մետաքսով ու թավշով է զուգում։ Ջափազանց կարգին օրիորդ է...

Հարյուրավոր բորբոքված աչքեր հիմա նայում էին ծո-րակի ժանգոտված անցքին. մարդիկ անհամբերությամբ սպասում էին ջրին՝ ասես հրաշքի։

Շտոկվիչը այս ու այն կողմ հրեց մարդկանց, դուրս եկավ մեջտեղ.

— Այս ի՞նչ հավաքույթ է։ Ցրվեցեք...— լսելով ի՞նչ է պատահել, կապիտանը հայհոյեց.— Է՛խ, դո՛ւք, քրծենի տրեխներ։ Այսուհետև ինքնագլխության համար դնչներիդ պիտի խփեմ... Նստե՛ք պատերի հետևը, սրիկանե՛ր։

Ինչ-որ մի տեղ, քաղաքի ծայրամասում, լսվեց ժամա-պահների աղաղակը, լռությունը խզվեց ուժեղ համազարկով, իսկ ծորակի մեջ հանկարծ սկսեց ֆշշալ, կլթկլթալ և խողո-վակներից դուրս փչել հեղձուցիչ օդը։

— Հարյուրապետ,— գոռաց Դենիսկան Վատնինին։— Քեզ պապիկ հաշվիր։ Ես էլ, տես հա՛, կնքահայր եմ գրվում։

Մռայլ ու անշարժ Վատնինը աչքի տակով նայում էր փոշոտ գլուխների վրայից։ Եվ ահա ծորակից դուրս շփեց

ժանգոտված ջուրը, դեպի ծորակը պարզվեցին զինվորական տափաշշերն ու կազակային կաթսայիկները. առաձգական մղումներով ջուրը դուրս ցայտեց ծորակից։

— Ա՜յ-յա՜-յա՜յ,— հուզվում էր ամբոխի վերջը հետ մղված ծերունի գրենադյոր Խրենովը։— Պահեք ջուրը, սիրելիներս, մի՛ թողեք թափվի...

— Ջուրը եկավ մոտ երկու բոպե՝ միայն քչերի ծարավը հագեցնելով։ Հետո այն կտրվեց, և ջրի հետ միասին վերջացան քաղաքի ծայրամասի կրակոցներն ու իրարանցումը։

Ամեն ինչ պարզ էր։ Դենիսկան լիզեց շրթունքները, ասաց Վատենինին.

— Այժմ ես գնամ։ Կարելի՞ է։

— Թող օրիորդական վիճակում խամրի,— պատասխանեց Վատենինը,— բայց ոչնչանալ իզուր տեղը, միայն հանուն քաջության, ոչ ոքի թույլ չեմ տա։ Ցրվեցեք տեղներդ, եղբայրնե՛ր...

Պոտրեսովը, իմանալով դեպքի մասին, հարցրեց Կլյուգենաուին.

— Չգիտե՞ք, բարոն, նա երիտասա՞րդ էր։

— Չգիտեմ։ Հավանաբար ոչ տարիքավոր...

Գերի թուրքերը, հրետաձիգների հսկողության տակ, նկուղից դուրս էին քաշում Եկատերինայի ժամանակվա հնադույն հրանոթը։ Հրանոթն առայժմ դրեցին ցած, և նա հաստափոր խոզի գոճու պես ընկել էր գետնին։ Կիրյուխա Պոստնին կակազելով հանկարծ ասաց.

— Հա-հա-հար-կա-կավոր է տ-տ-տուն։

— Բոլորին է հարկավոր,— պատասխանեց Պոտրեսովը։

— Հը- հը-հրա...

— Ի՞նչ ես ասում,— հարցրեց Պոտրեսովը։

Կիրյուխա Պոստինին մի կերպ բացատրեց իր մտադրությունը՝ մի հրանոթ ներս տանել երկրորդ հարկ և դնել լուսամուտի մոտ, որպեսզի ուղիղ նշանառությամբ ճնշի թուրքական մարտկոցների կրակը։ Իսկ այդ հրանոթի ազատվող տեղը դնել այս հին թնդանոթը։

— Սա հա-ա-ա...

— Դու Տոտլեբենն ես,— գովեց նրան մայորը։— Ի՞նչ գլուխ ունես, է՞։

— ...հաստ է,— վրա բերեց Կիրյուխան։— Այն կարող է լպայթել։

Այն միտքը, որ թուրքական մարտկոցների դեմ առ դեմ հարկավոր է հակադրել գոնե մեկ թնդանոթ, վաղուց արդեն ծագել էր Պոտրեսովի գլխում, բայց իրագործել անհնարին էր թվում. խանգարում էին պալատական կցակառույցների կույտերը և մզկիթի մինարեթները։

— Իսկ ինչ կա որ,— մտածմունքի մեջ ընկավ Պոտրեսովը։— Գնանք այնտեղ, բարոն։

Նրանք բարձրացան վերև։ Կլյուգենաուն հրացանի կոթով խփեց հանեց լուսամուտի շրջանակը, մի քանի անգամ վերվեր թռչելով փորձեց հատակի ամրությունը։

— Ֆուիկ փաշան,— ասաց նա,— ուղղակի պարտավոր է «Մեջիդիե» շքանշանով պարգևատրել Կիրյուխային։ Միայն թե համոզված չեմ՝ կրակելիս արդյո՞ք հատակը կդիմանա հրանոթի տակ։

Երկու սպան կանգնած էին իրար կողքի, մեկը մյուսին մոտիկ, գրեթե քթի-քթի. գեր ու կարճլիկ Կլյուգենաուն և շատ նիհար, կարծես մեջտեղից երկու կես արված մայոր Պոտրեսովը։

— Կդիմանա՞։

— Համոզված չեմ։ Չէ որ բացի կշռից հետագլորք էլ կա...

— Իսկ եթե չդիմանա, այն ժամանակ...

— Այն ժամանակ վերջ, Նիկոլայ Սերգեևիչ։

— Բայց ի՞նչ հրաշալի տեսարան է։

— Ճշմարիտ եք ասում, ափսոս է այստեղից հեռանալ։

— Մտածեք, աղավնյակս, ինչ կարելի է անել։

— Գուցե, գերաններո՞վ։

— Մի բան արեք, բարոն, չէ որ այստեղից մենք նրանց ջարդուփշուր կանենք։

— Կաշխատեմ, մայոր...

Ամբողջ գիշեր աշխատում էին։ Գերի թուրքերը, համեբաշխ ճչալով, ծանր հրանոթը դժվարությամբ քարշ էին տալիս ծուռումուռ սանդուղքներով։ Կլյուգենաուն պատրաստեց նոր, ավելի թեթև հրետասայլ։ Պատուհանը ծածկեցին քարերով։ Բայազետը ստանում էր կրակի նոր կետ, որը

սարսափելի էր Թուրքերի համար, որոնք չէին ենթադրում, թե ռուսական հրետանին կարող է հարվածել այդ կողմից։

Աշխատանքի ամենաեռուն ժամանակ, երբ Կլյուգենաուն առաջին հարկի առաստաղի տակ սյուներ էր դնում, հրետանավորների մոտ եկավ Շտոկվիչը.

— Պարոնայք, ծանր լուր... Հենց նոր սպանվեց մեր պատանին՝ յունկեր Եվդոկիմովը։

Կլյուգենաուն ձեռքից բաց թողեց կացինը։ Պոտրեսովը թուլացած նստեց մի անկյունում, դեմքը ծածկեց ձեռքերով։

— Աստված իմ, ավելի լավ կլիներ ինձ սպանեին,— հեծկլտաց մայորը։— Խեղճ, նա դեռ բոլորովին կյանք չէր տեսել։

— Ի՞նչ պատահեց նրան,— հարցրեց Կլյուգենաուն։

— Նա գնաց կամավորների հետ, տասնվեց մարդ մնացին այնտեղ... քաղաքում։ Նրանց սպանել են...

— Այստեղից մինչև Ժնև որքան հեռու է,— ասաց Կլյուգենաուն և, կռանալով, նորից ձեռքը վերցրեց կացինը։— Մնաս բարով, փառավոր երիտասարդ։ Դու սովորում էիր համալսարանում, բայց հայրենասիրությունը հարկադրեց քեզ յունկերի քննություն հաձնել։ Դու նույնիսկ հասցրիր քո կյանքում մի հոդված տպագրել։ Սունկի և ջրիմուռի համակեցության մասին։ Ստացվում է, որ դու ավելի երջանիկ ես շատերից, քեզնից հետո գոնե ինչ-որ մի բան կմնա այս աշխարհում։

— Լակո՛տ,— չարացած գոռաց Շտոկվիչը։— Ես ասացի նրան, որ նա չհեռանա ամրոցից։ Մինչև գետակը և հետ։ Եվ վերջ։ Իսկ նա երևի լսել է այդ ստահակ Դենիսկային... Ահա և խմեց մի բաժակ լաֆիտ...

Դենիսկան մորթեց երեսունվեցերորդ ոչխարը։ Երեսունհինգ ոչխար արդեն ընկած էին խուճուճ բրդով, կտրված վզերով, և կազակը վեր քաշեց երեսունվեցերորդի գլուխը։

— Մի՛ բղավիր, հիմար,— Դենիսկան շշուկով ահաբեկում էր ոչխարին, որը դանակի տակ սարսափից մայում էր։

Անասունների արյունը լուսնի լույսի տակ թանձր սև էր թվում։ Այն չփչփում էր կազակի ոտքերի տակ, լպրծուն դանակը դուրս էր սահում մատների արանքից։ Ոչխարները մեկը մյուսի հետևից իրենց հնազանդորեն զոհ էին բերում ռուսական կայազորին։ Միսն ուսերին դնելով՝ մարդիկ դեռ տաք ավարը քարշ տվեցին ամրոց։

— Բավական է մորթես,— շշնջաց Ուշաստկինը կազակին,— հնարավոր չէ բոլորը տանել։

— Էլի մարդ կանչիր,— պատասխանեց Դենիսկան՝ տարերքի մեջ մտնելով։— Այ թե խորտիկներ եմ նախապատրաստել ձեզ համար, միայն ափսոս, որ գինի չի երևում...

Եվդոկիմովը հետևից բռունցքով խփեց նրան, նախազգուշացրեց.

— Կամա՛ց։ Կամրջի տակ ուղեկալ է նստած, կլսեն։

Անսպասելիորեն շրխկաց հարևան խրճիթի դուռը, և ոչխարների տերը, նայելով հյուսված ցանկապատի ճեղքերից, տագնապալի գոռգոռոց բարձրացրեց։ Գետնից վերցնելով ծանր քարերը՝ սկսեց շպրտել կազակների վրա։ Մի գլաքարով նա հաջողացրեց հասցնել Դենիսկայի ականջին և ամբողջ կոկորդով բղավեց՝ օգնություն կանչելով Թուրքերին.

— Ա՛յ, օսմա՛ն, ուռո՛ւս... Ա՛յ, օսմա՛ն, ուռո՛ւս գյալդի...

Դենիսկան ցած գցեց բեռը, բարձրացրեց հրացանը.

— Առ, շուն,— տրաքեց կրակոցը, և, ի պատասխան, ամեն կողմից լսվեցին ուղեկալորդ ռեդիֆների ճիչերը։

— Բոլորս միասին,— հրաման տվեց յունկերը։— Փախչենք...

Նետվեցին հետ՝ դեպի գետը, սակայն կամրջի կողմից նրանց դիմավորեցին կրակոցներով, և մի զինվոր տնքոցով գլորվեց ձորը։ Եվդոկիմովը մարդկանց շրջեց ուրիշ ուղղությամբ՝ պտույտ գործելով լքված խրճիթների արանքներով, նրանց տարավ դեպի մեյդան։ Անցողակի նկատեց, որ ոչ բոլորն են գցել ոչխարները և վազում են բեռով, որը ծանրացել է նրանց կորացած մեջքին։

— Դեն գցեք դրանք գրողի ծոցը,— գոռաց նա։

Մեյդանի շարքերի երկայնքով դարձյալ նրանց դիմավորեցին կրակոցներով։ Կտրուկ թեքվեցին դեպի հայկական քաղաքի ավերակները՝ ամենամութ վայրը։ Առանց պայմանավորվելու մտան մի խրճիթ։ Դենիսկա Օժոգինը պտույտ կատարեց նրա պատերի երկայնքով՝ թափահարելով դաշույնը։

— Ոչ ոք չկա,— շնչահեղձ ասաց նա։— Անկյունում եղեգ

է թափված... Դուռը մի՛ փակիր, պարսկական օշոշ,— ֆշշացրեց նա Ուչաստկինի վրա։— Թող բաց մնա, որպեսզի թուրքը անմիջապես գլխի չընկնի, թե որտեղ ենք թաքնվել։

Դուռը թողեցին լայն բացված։ Եվդոկիմովը կամավորներին կարգադրեց թաքնվել խրճիթի հետին կցաշենքում, իսկ եղեգը փռել հենց մուտքի մոտ, շեմի առաջ։

— Եթե հանկարծ մտնեն այստեղ,— բացատրեց նա,— մենք կլսենք, հենց որ եղեգը խշխշա... Քանի՞ հոգի ենք այստեղ։

Հաշվեցին։ Դուրս եկավ տասներեք մարդ։

— Իսկ քանի՞ հոգի էինք,— հարցրեց Եվդոկիմովը։

— Հիմա դրա ժամանակը չէ, ձերդ բարեծնություն... Կարծես ինչ-որ մեկն արդեն գալիս է,— ականջ դրեց վախմիստրը։

Դռան մոտ սկսեց խշխշալ եղեգը, խրճիթի մթության մեջ տրաքեց ստուգիչ կրակոցը, և յունկերի կողքին գնդակի հարվածից ճչաց մի զինվոր։ Թուրքը բարձրաձայն կանչեց յուրայիններին և տեղնուտեղը սպանվեց սվիններով։ Նրան, ոտքերից բռնած մի կողմ քաշեցին, որպեսզի չխանգարի, փայտերով պինդ փակեցին դուռը։

— Կորա՞նք...— ասաց վախմիստրը։

Գնդակներով ծակծկված դռներից սրածայր տաշեղներ էին թռչում, ճեղքված անցքերից նշմարվում էր երկինքը։ Հետո սկսեցին ծանր քարերով հարվածել դռներին։

— Կողքի քաշվեք, եղբայրներ,— կարգադրեց Եվդոկիմովը։— Կողքի կանգնեք, որպեսզի չկպչի ձեզ...

Դռան հետևից լսվեց մի ձայն.

— Բա՛ց արա, ուռո՛ւս։ Մենք օսման չէ, մենք լավ չերքեզ կլինի... Մենք երեկ խոզի միս կերել.

Յունկերի ձեռքում մի անգամ (տնտեսման համար) ճայթեց ատրճանակը։

— Մորթապաշտներ,— ասաց նա։— Շամիլյան վիժվածքներ...

Դենիսկա Օժոգինը կրակեց դռների վրա և պպզեց՝ տնտղելով մեռած թուրքի գրպանները։

— Հեռացիր լեշի մոտից,— ասաց նրան վախմիստրը։

— Գործը զինվորական է,— պատասխանեց Դենիսկան՝ ծխախոտի քիսան իր գոտկի տակ կոխելով։— Եվ այս բանում ես ամոթ էլ չունեմ, եթե ծխել եմ ուզում... Ինքդ էլ հետո կխնդրես...

Դուռն սկսեց ճարճատել քարերի և կոտորակների հարվածների տակ։ Հետո թուրքերը սկսեցին քանդել խրճիթի պատը, որպեսզի ներս թափանցեն։

— Կսպանեն մեզ,— տխուր ասաց Տրյոխժոննին։— Սիրտս վկայում է, որ սա մեր վերջին գիշերն է... Դե լավ։ Դենիսկա, մի քիչ ինձ ծխախոտ լցրու։ Իսկ ես էլ քեզ համար կայծքարով կրակ կանեմ...

Լուսաբացը մոտենում էր՝ հանգիստ ու պարզ։ Նրա բարակ շողերը ծակում անցնում էին փոշոտ ծերպերի միջից։ Թուրքերը մերթ սկսում էին հուսահատ թակել դռները, պատահականորեն կրակելով դեպի խրճիթի ներսը, մերթ հանգստանում էին՝ հայհոյելով ու բորբոքված վիճելով ինչ-որ բանի մասին։ Սակայն ահա նախասենյակում սկսեց չոր խշշալ եղեգը։

— Տղանե՛ր, խփե՛ք,— գոչեց Եվդոկիմովը։

Պատասխանը եղավ ընկնող մարմինների թրմփոցներն ու խուլ տնքոցները։ Ճեղքերի միջից սկսեց առկայծել կրակը։

— Պիտի խորովեն մեզ,— ասաց Դենիսկան։— Դա թերևս ամենից վատն է։

— Խփեք,— նորից գոռաց յունկերը, և կրակը հանգավ...

Այդպես նրանք նստեցին մինչև լուսաբաց, մինչև ամրոցի դիմամասից դիպուկ կրակոցները թուրքերին ստիպեցին նահանջել քաղաքի ավերակների խորքը։ Թաքնվելով գնդակներից, կամավորները դժվարությամբ դուրս եկան գետի մոտ, բայց բերդի ներսը թափանցել հնարավոր չէր. ուղեկալները խստորեն հետևում էին բոլոր արահետներին։ Որոշեցին ամբողջ օրն անցկացնել ջրի մոտ, առափնյա ձորի խորքում, և սրտի ցավով դիտում էին, թե ինչպես թուրքերը դիակներով բեռնված սայլերը հանում էին կամուրջի վրա և դիակները թափում գետը։

Մութն ընկնելուն պես կամավորները վերադարձան ամրոց՝ կարծես լինելով այն աշխարհում, և յունկեր Եվդոկիմովն ասաց.

— Նաղար Մինաևիչ Վատնինը, ինչպես միշտ, իրավացի է. ամրոցի շրջափակումը այնքան էլ սերտ չէ, և լիովին հնարավոր է ամրոցից դուրս գալ ու գրոհել թշնամու վրա։

8

Այստեղ դեռ ձյուն կար։ Իսկ ձյան վրա հետքեր կային, և՛ վայրի հովազը, և՛ լեռնային այծն էր թափառում այնտեղ, որտեղ հիմա մարդիկ էին շարժվում...

Արզաս Արտեմևիչը այծենակաճի փեշը փեշի վրա բերեց, կանչեց համհարզին։

— Հոգյակս,— ասաց գեներալը,— գումակին հրամայիր շարդել սայլերը։ Թող մայրերը խարույկներ վառեն և տաքացնեն երեխաներին։ Արշավի ժամանակ զինվորներին կարգադրիր երեխաներին վերցնել, որպեսզի կանայք և ծերունիները հանգստանան... Այդպես արա՛, հոգյակս։

Տեր-Ղուկասովն առանց գլխարկի էր, և քամին շարժում էր նրա ճերմակած մազերը՝ առաջին ճերմակությունը, որ նա ձեռք էր բերել այդ սարսափելի արշավանքի ժամանակ։

Բագրատիոնյան վիթխարի քիթը, որ ցրտից մռայլ ու բաց մանուշակագույն էր դարձել, գեներալի դեմքին տալիս էր մի քիչ ծիծաղելի և բոլորովին ոչ մարտական արտահայտություն։

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ,— ծոր տալով ասում էր Արզաս Արտեմևիչը։

Այո՛, գեներալի կարիերան խաթարված էր։ Թող նույնիսկ պաշտոնաթող լիներ։ Նա իր պարտքը հայրենիքի հանդեպ կատարել էր և կյանքի մնացած կեսը հանգիստ խղճով կարող էր անցկացնել իր կալվածքում։ Թո՜ղ։ Այո՛, թո՜ղ... Եվ ինչ, խաղող ճզմել ու բրդոտ ոչխարներ խուզել, դա նրան ծանոթ էր դեռ մանկությունից։

— Վա՜յ, վա՜յ, վա՜յ,— ասաց գեներալը։— Մենք՝ հայերս, ինչ խեղճ մարդիկ ենք, բոլորս...

Կովկասյան ճակատի բոլոր զորավարներից հեծելազորի գեներալ Արզաս Արտեմևիչ Տեր-Ղուկասովը ամենահամեստն էր և ամենատաղանդավորը։ Այդ նա էր, որ արշավանքից դեռ շատ առաջ առաջարկեց բանակը շարժել ուղիղ Էրզրումի վրա, որը և միակ ճիշտ որոշումն էր։ Սակայն նրան չլսեցին, բանակը բաժանեցին երեք զորասյունի, և այժմ նրա Էրիվանյան էշելոնը հնամաշ ու ջախջախված ճոքակոշիկներով քարշ է գալիս հովազի և լեռնային եղջերուի հետքերով...

Վերջին հրամանում նրան գրել էին. «Զվարանեք այն մեծ կորուստներից, որ կարող եք ունենալ...»։ Սակայն Արզաս Արտեմևիչը պոչը թակարդից դուրս քաշելու բավականաչափ հմտություն ուներ։ Իսկ նրա պոչը հիմա մեծ էր. մի քանի հազար հայկական ընտանիքներ։ Իմաստուն պառավներ, խաղաղ երեխաներ, վշտահար կանայք։ Որպեսզի նրանց փրկեր թուրքական կոտորածներից, նա էշակ-էլսիի ճակատամարտի ժամանակ մարտի ուղարկեց սպասյակներին ու երաժիշտներին։

— Դուք մի՛ վախեցեք,— ասաց գեներալը,— մեռնելը բոլորովին սարսափելի չէ...

Եվ ահա Բայազետը պաշարման մեջ է, նրա զորասյունը շրջապատման մեջ, իսկ ինքը սպիտակել է։ Բարակ շիթերով երկինք էր բարձրանում ծուխը. վառում էին գումակային սայլերը։ Երեխաներին (նա հասկանում էր այդ) շիլա էր հարկավոր։ Երբ երեխաները լաց չէին լինում, այդ պահին չէին լալիս նաև մայրերը։ Իսկ երբ կանայք լաց էին լինում, գեներալը փաթաթվում էր այծենակաճի մեջ և նույնպես լաց լինում խղճահարությունից՝ իր խելացի և բարի ժողովրդի նկատմամբ, որը դժբախտություն ունի ապրելու թուրքերի հարևանությամբ...

— Արզաս Արտեմևիչ,— նրան մոտեցավ համհարզը։— Իշխան Ամիլախվարիի կազակները բռնել են իգդիրյան մի լրտեսի։ Բայազետը դեռ դիմանում է։

— Շնորհակալություն, հոգյակս։ Բայազետը իր բանալիները նետել է ծովը, և թուրքերին, ես տեսնում եմ, ոչ մի կերպ չի հաջողվում փականները բացելու համապատասխան ագռավուկ գտնել։ Հեծյալ պարեկ ուղարկեք մեր հետքերով, որպեսզի կազակները ճանապարհից վերցնեն հիվանդներին ու հետ մնացողներին։

Բարձր լեռներում, էջմիածնի վանքին պատկանող մի ճգնավորական վանատնից Էրիվանյան զորաջոկատի շարասյանը դիմավորեցին զինված գրիգորյան-վանականները։

Նրանց մեջ էր Տեր-Ղուկասովի հին բարեկամ, երբեմնի խիզախ հեծելազորային գվարդիական իշխան Վաշնաձեն, որը հասարակությունից թաքնվում էր կիրճերում պետերբուրգյան մի գեղեցկուհու ադամանդների հետ կապված ամոթալի պատմությունից հետո։ Վանականները զինվորներին ու գաղթականներին դիմավորեցին գինով ու մեղրով, բոլորը միասին ձիեր նստած սլացան անդունդի հենց եզրով՝ հրացաններից կրակելով օդի մեջ։ Կիրճից փչող քամու ոռնոցի տակ պորուչիկ Վաշնաձեն, իսկ ներկայումս հեզ ծերունի Իոսիֆը, ձայնեց գեներալին.

— Այսուհետև էլ ճանապարհն ազատ է, Արզաս։ Ձորի լեռնանցքը չբարձրանաս, գումակը քաշիր դեպի Քարվանսարայի պահակախումբը։ Մենք արդեն երկրորդ շաբաթն է այս ճանապարհը պահպանում ենք քեզ համար։

— Տեր-Ղուկասովը գրկեց վանական-ռազմիկին, և նախկին խելառ գվարդիականի կրծքից կախված երկաթե սուր շղթաները ճգնավորի կոշտ փարաջայի տակից ծակեցին նրան։

— Թույլ տուր, հոգյակս, ես քո վանատանը թողնեմ հիվանդներին ու թույլերին։ Արդյոք կարո՞ղ ես պաշտպանել նրանց սուլթանական «բաշ-յաղմաջիների» կոտորածներից։

— Առաջ ես ծառայում էի ոչ միայն աստծուն,— համեստորեն պատասխանեց Վաշնաձեն։— Ո՞ւր ես շտապում այդպիսի գումակով։ Քեզ սպասում են Բայազետում։

— Ո՛չ, հոգյակս,— գեներալը մտրակը թափահարեց կապույտին տվող լեռների կողմը։— Թող Բայազետը համբերի, մինչև ես այս դժբախտներին հասցնեմ ռուսական պահակախմբերին։

Իգդիրը դեռ ապրում էր երջանիկ անտեղյակության մեջ։ Պացևիչի զեկույցներից հանգստացած՝ սահմանամերձ քաղաքը կարծես տոնում էր ուրիշի հաղթանակները. շամպայնի և կոկոտկաների[1] գինն արագորեն բարձրանում էր։ Սակայն նպարավաճառների ու լրտեսների միջոցով հասավ առաջին լուրը՝ Եփրատի հովտում Պացևիչի ջոկատի ջախջախման և

[1] Կոկոտկա — տղամարդկանց հաշվին ապրող թեթևաբարո կին։

Բայազետի ամրոցի մեջ փակված կայազորի պաշարման մասին։

— Թուրքերը գալիս են։ Գալիս են բաշիբոզուկները և կոտորում բոլորին...

Հեռագրասարքերը գիշեր ու ցերեկ թխկթխկացնելով հաղորդում էին տագնապալի լուրերը։ Թիֆլիսը մեկ չէր պատասխանում, մեկ անհասկանալի ու խճճված խորհուրդներ էր տալիս։ Ինտենդանտներն շտապում էին թոցնել այն ամենը, ինչը դեռ չէր գողացված, և փախուստի էին դիմում՝ Թիֆլիսում քեֆերը շարունակելու, մինչև վերջնական պատերազմը։

Ղազի Մահմայի ներխուժման սպառնալիքից խուճապի մատնված Իգդիրն արագորեն դատարկվում էր։ Փախչում էին աստիճանավորներն ու պոռնիկները, վեղարակիր ճարտասանները ու աննշան ժուռնալիստները. բարձրանում էին ձիերի, եղների գները և, վերջապես, սայլի առջևում եղած մի տեղը վաճառվում էր արդեն քսան ռուբլով։

Բայց կայազորը մնում էր իր դիրքում։ Եվ լուսաբացին նույն ձևով որոտում էր թմբուկը- առավոտները երգում էին ոսկեկոկորդ շեփորները, և քաղաքի հողե տանիքների վրա, խշխշացնելով մետաքսը, լողալով արևին ընդառաջ էր դուրս գալիս ռուսական բանակի դրոշը։

Նրանք բոլորովին քիչ էին, այն մարդիկ, որոնք արիաբար պատրաստվում էին իրենց դնել երեսունհազարանոց թուրքական հորդայի հարվածի տակ, եթե նա լեռնանցքների վրայով, ոռնոցով ու շառաչյունով խցկվի անպաշտպան Հայաստան։

Ահա նրանք՝ այդ հերոսները՝

Ղրիմի գնդի վաշտը՝ 184 մարդ,
Կորդոնային խումբ՝ 32 մարդ,
Գծային կազակներ՝ 13 մարդ,
Ապաշարային ծառայության՝ 45 մարդ։

Եթե նույնիսկ նրանք տասն անգամ ավելի շատ լինեին, միևնույն է, չէին կարող կանգնեցնել անզուսպ հեղեղի ուժեղ ճնշումը։ Սակայն այդպիսին է ռուս մարդը՝ հարկավոր է, ասում են նրան, և նա հանգիստ ու մտածված պատրաստվում է կատարելու անհնարին։

— Հարկավոր է։— Եվ Իգդիրի կայազորը զենքը ձեռքին ոտքի ելավ։

Գնդապետ Պրեոբրաժենսկին հրամայեց բարիկադավորել քաղաքի փողոցները, զենք բաժանել բոլոր տղամարդկանց՝ առանց հասակի տարբերության։ Ավելին, նա կայազորի կեսը նույնիսկ դուրս բերեց առաջ, հենց կորդոնների մոտ, որպեսզի այդ ավանգարդը իր մեջ ներծծեր զինվորականության բոլոր մնացորդները, որոնք ցրվել էին կայարաններում, պահակակետերում և գաղտնաջոկատներում։

Պրեոբրաժենսկին մի գիշեր նորից փորձեց կապվել Թիֆլիսի հետ, և հեռագրիչը, նստած դաշնամուրի նմանվող յուզ[1] ապարատի մոտ, տագնապ նվագեց՝ ստեղների վրա մի բոպեում երեսուն բառ արագությամբ։ Հեռագրասարքը երկարլոում էր, և միայն առավոտյան կողմը սկսեցին պտտվել ատամնանիվները, շարժվել ծանրաքարերը, ճթճթալ կպչուկները՝ տպելով խոշոր տառերը։

— Ի՞նչ կա,— հարցրեց գնդապետը։

Հեռագրիչը թոթվեց ուսերը.

— Ձերդ բարձր բարեծնություն, Թիֆլիսը հարցնում է՝ մեզ մոտ մեյդանում ի՞նչ արժե ձմերուկը։

Կովկասյան փոխարքա, նորին բարձրություն մեծ իշխան և գեներալ-ֆելդցեյխմայստեր Միխայիլ Նիկոլաևիչը՝ Նիկոլայ I կայսեր որդին և թագավորող կայսեր Ալեքսանդր II-ի հարազատ եղբայրը, վատ չգիտեր հրետանային գործը։ Նա գնահատում և հասկանում էր ռուսական զինվորին՝ նրան համարելով ամենաքաջ և խելացի զինվորը աշխարհում, սակայն որպես զորավար, Միխայիլ Նիկոլաևիչը չափազանց թույլ էր և անհեռատես...

Ձմերուկի մասին նա, իհարկե, չէր կարող հարցնել Իգդիրի կայազորին, բայց Բայազետի ճակատագրով քիչ էր հետաքրքրվում՝ ամբողջովին կլանված լինելով Ղարսի մոտ և Զիվինի բարձունքների վրա տեղի ունեցած վերջին իրադարձություններով։ Դրա համար էլ նրա մերձավոր օգնական գեներալ-համհարզ իշխան Սվյատոպոլկ-Միրսկին չէր էլ

[1] Յուզ — հեռագրային ապարատի տեսակ։

լսում զեկուցել այն վիճակի մասին, որի մեջ ընկել էր Բայազետի կայազորը։

Իր շտաբի խորհրդակցություններից մեկում, Իգդիրից ստացված զեկույցը ձեռքերի մեջ շուռումուռ տալով, փոխարքայի օգնականը կասկածանքով ու հեգնանքով ասաց.

— Պարոնայք, ո՞վ է այսպես անգրագետ գրում։ Ոչինչ չեմ հասկանում... Ահա, բարեհաճեցեք նայել վերջին հաղորդումը՝ Վանի ճանապարհի վրա հակառակորդի հեծելազորային անկանոն զորախմբի լիակատար ջախջախման մասին։ Չէ՞ որ ես իրավունք ունեմ հավատալ այս փաստաթղթին, որ գրված է առանց որևէ սխալի, որի տակ դրված է հենց իր՝ գնդապետ Պացևիչի ստորագրությունը։ Եվ հանկարծ...

Մասնակցելով իրադարձությունների քննարկմանը՝ նրա առջև նստած էին երեք խորհրդականներ՝ Ռեդիգերը, Ռեբինդերը և Ռիբոպյերը՝ ռուսական ազնվազարմ տոհմերի ազնվականները։

— Ես այսպես եմ մտածում, Դիմիտրի Իվանիչ,— ասաց նրանցից մեկը խիստ զգուշությամբ,— որ դուք չեք առարկի, սիրելի Դիմիտրի Իվանիչ, եթե ես և իմ կոլեգաները... Ասենք, ներեցեք ինձ, Դիմիտրի Իվանիչ, քանզի ես նույնպես չեմ...

Իշխան Սվյատոպոլկ-Միրսկին որոշեց չներել.

— Դե ի՞նչ եք անընդհատ կրկնում Դմիտրի Իվանիչ, հա Դմիտրի Իվանիչ։ Ինձ ուղղակի կոչեք մտերմական ձևով՝ ձերդ բարձր գերազանցություն։ Դուք, պարոնա՛յք, միայն մտածում եք, իսկ Բայազետի մասին նորին կայսերական բարձրությանը ե՛ս պիտի զեկուցեմ։

Այդ տարի Թիֆլիսում ամառը հեղձուցիչ էր, արտասովոր փոշոտ. Գոլովինյան պողոտայի երկայնքով քամին դեսուդեն էր քշում աղբը, վեր բարձրացնում ավանակների պոչերը։ Նույնիսկ Սոլոլակում, խաղաղ այգիների մեջ, շոգից շնչելու օդ չկար, և մեծ իշխանը փրկվում էր Կոչորիի ամառանոցներում։ Նրա տունը, որն ավելի շատ կրկեսաբեմի էր նման՝ լուսավորված հարյուրավոր լապտերներով, որոնց համար օգտագործում էր ձիթապտղի լավագույն յուղ, միշտ լցված էր ինչ-որ տարօրինակ, խորհրդավոր մարդկանցով։ Այստեղ քիչ էին խոսում, ավելի շատ փսփսում էին իրար ականջի։

Կարող էին փոխարքայի մոտ նստել շաբաթներով, հետո անսպասելիորեն պոկվում էին տեղից և սլանում ինչ-որ տեղ՝ իրենց մասին հանկարծ լուրեր ուղարկելով Աստրախանից կամ աբխազական գյուղերից։

Միխայիլ Նիկոլաևիչը Սվյատոպոլկ-Միրսկուն ընդունեց կաբինետում։ Նա հագել էր Տենգինյան հետևազորային գնդի սպայի համեստ սերթուկ, և նրա արտաքինը ուշագրավ ոչինչ չուներ, բացի ռոմանովյան մաստոդոնտությունից[1]։ Չորս տարի առաջ պարսկական շահ Նասր-էդդինը՝ աշխարհում միակ «ադամանդային» համազգեստի տերը, իր օրագրում մեծ իշխանի մասին թողել է հետևյալ բնութագիրը. «Իսկ արքայազնը հիանալի է, երկու այտերին էլ մորուք ունի, բայց կզակը սափրում է, աչքերը երկնագույն են, ինքը բարձրահասակ է, հաճելի հատկություններով...»։

— Դարձյա՞լ Զիվինի դեպքերի մասին,— ասաց փոխարքան։— Ոչ մի խոսք դրանց մասին... Ապաշնորհնե՛ր և բթամիտնե՛ր։ Ցանկացած զինվորը ավելի խելացի կլիներ։

Իշխան Սվյատոպոլկ-Միրսկին հարգալից գլուխ տվեց.

— Դուք սխալվեցիք, ձերդ կայսերական բարձրություն, այս անգամ ես համարձակվում եմ խոսել Բայազետի գործերի մասին, որոնք ձեզ չպետք է անհանգստացնեն։

Սվյատոպոլկ-Միրսկու կարիերիան հաջող էր այն պատճառով, որ նա երիտասարդ հասակից կարողանում էր զեկավարությանը զեկուցել ծառայական տհաճությունների, որպես այնպիսի բաների մասին, որոնց համար արժեր, ընդհակառակը, ուրախանալ։ Եվ դրա համար էլ պաշարված Բայազետի մասին զեկուցելիս իշխանն իր դեմքին զմայլանքի ուրախ արտահայտություն տվեց։

— Ի՞նչ երջանկություն,— ասաց նա։— Դա նույնիսկ գերազանց է, որ թուրքերը նրանց փակել են ամրոցում։ Թէ չէ տեղական բնակչության հետ շփման դեպքում մեր կայազորը, անկասկած, դարձյալ կենթարկվեր տեղական նեխիչ տենդերին, որոնց սեզոնն արդեն՝ վրա է հասել, ինչպես հաստատում է ձեր լեյբ-բժիշկ Բուասսյեն։

[1] Մաստոդոնտ — փղանման վիթխարի կենդանի։

— Ասացե՛ք, իշխան,— լրջորեն հարցրեց փոխարքան,— մանկության հասակում ձեզ հաճա՞խ են ծեծել։

— Ծեծել են, ձերդ բարեծնություն,— խոստովանեց գեներալ-համհարզը։

— Եվ թո՞ւնդ։

— Չափազանց, ձերդ կայսերական բարձրություն...

— Հը՛մմ... Ինձ ևս ծեծել են,— ասաց փոխարքան, ահնզորեն ու դանդաղ մոտենալով իր օգնականին։— Վասիլի Անդրեևիչ Ժուկովսկին չէր ծեծում, նա զգայուն էր։ Բայց դրա փոխարեն, բարոն Կորֆը և Ֆիլոսոֆովը, դրանք՝ այո՛, ծեծում էին... Եվ հիմա, մեծահոգաբար ներեցեք ինձ, իշխան, իմ մեջ ցանկություն ծագեց ծեծել ձեզ, որպեսզի դուք այդպես անկեղծորեն անձնատուր չլինեք հրճվանքին։ Ես այսօր մտադիր չեմ կիսել ձեր հրճվանքը...

Սվյատոպոլկ-Միրսկին գլուխ տվեց.

— Կամքը ձերն է։

— Ավելի ցածր, ավելի ցածր խոնարհվեք,— կարգադրեց փոխարքան և զորեղ ձեռքով կռացրեց գեներալ-համհարզի ճարպոտ պարանոցը։— Ավելի ցածր խոնարհվեք,— կրկնեց նա։— Չէ որ դուք ոչ թե ինձ եք խոնարհվում, այլ այն խեղճուս զինվորներին, որոնք նստած են հիմա Բայազետում և չեն կարողանում հասկանալ, թե դա ինչ երջանկություն է նրանց համար, որ նեխիչ տենդերը չեն սպառնում իրենց։

Փոխարքան անցավ դահլիճի մեջտեղը և ցույց տվեց դուռը։

— Կորի՛ր,— կտրուկ ու բարձրաձայն հրամայեց նա։

Սվյատոպոլկ-Միրսկին, ձիերը ուժասպառ անելով, քառորդ ժամում սրընթաց հասավ Թիֆլիս և կարգադրություն արեց.

— Հրամայված է օգնության հասնել... Հրաման տվեք Կալբուլայ խանի հեծելազորին շարժվել դեպի Բայազետ։ Ի դեպ, Բայազետում նստած է նրա եղբայրը՝ Իսմայիլ խանը, ահա և նրանք էլ թող հետո համատեղ դուրս պրծնեն Վանի փաշայությունից։

Այդպիսի կարգադրություն ստանալով՝ գեներալ Կալբուլայ խան Նախիջևանսկին հարցրեց համհարզին.

— Այսօր ամսի քանի՞ն է։

Նրան պատասխանեցին, և խանը գոհ մնաց.

— Շատ լավ ամսաթիվ է։ Վաղը մենք դուրս ենք գալիս...։

Նա իր եղբոր իսկական եղբայրն էր։

9

Եկատերինայի ժամանակների հին հրանոթը լցրին երկաթե չարդված քով, և Պոտրեսովը որոշեց ինքն այն փորձի գործողության մեջ։ Կդիմանա՞, թե՞ կպայթի,— ահա խնդիրը։ Իզուր էին ենթասպաները համոզում ռիսկի չդիմել, մայորը որոշել էր ինքը վառել բռնկիչը և, որքան հնարավոր էր, հեռու քշեց հետաքրքրասերներին։

— Գնացեք գրողի ծոցը,— գոռաց նա, վառելով պայթքուղը։— Ես արդեն ծերացած եմ, իսկ դուք բոլորդ գնացեք գրողի ծոցը...

Ինչ-որ մի բան ֆշշաց, որոտընդոստ ճայթեց և միայն ծուխ, ծուխ ու ծուխ, ո՛չ մայորը, ո՛չ հրանոթը և ո՛չ էլ հողապատնեշը չէին երևում։ Երբ ծուխը մի կողմ քաշվեց, բոլորը տեսան Պոտրեսովին, որը ժպտում էր մրից սևացած դեմքով։

— Կարելի է,— թույլ տվեց նա։— Կդիմանա...

Թուրքերը հարվածեցին ֆալկոնետներից[1]։ Պոտրեսովը խնայողաբար պատասխանեց երեք մարտական հրթիռներով՝ յուրաքանչյուրը երեք գրվանքա։ Թուրքերը մարտի մեջ մտցրին լեռնային թնդանոթները, և երկինքը մեկեն լցվեց ոռնոցով։ Արկերից մեկը, գարշահոտ ծուխ արձակելով, գլորվեց գետնին, և Կիրյուխա Պոստնին ոտքով կանգնեցրեց այն։

— Կարտեչագունդ է,— գոռաց նա։— Մերն է... Հի-հի-հի... մարներ։

— Իհարկե, հիմարներ են,— հաստատեց Պոտրեսովը։

Բանն այն էր, որ շատ կարտեչագնդեր, որոնք ամրոցի հրանոթներից բաց էին թողնում թուրքերի վրա, չէին պայթում, միայն այրվում էին ներսից։ Ահա հենց այդ գնդերն էլ թուրքական վայ-հրետանավորներն ընդունում էին իսկական արկերի տեղ և, դրանցով լցնելով իրենց հրանոթները, նորի հետ էին ուղարկում ամրոց։ Դատարկ կարտեչագնդերը թռիչքի ժամանակ զզվելի խլացուցիչ ոռնոց էին հանում, որին շուտով բոլորն ընտելացան։

— Ավելի՛ աշխույժ, տղանե՛ր,— ասում էր Պոտրեսովը։— Մի դույլ ջուր կտամ բոլորիդ, մի լավ երգ ասեք...

Հրաձգությունն աշխույժ, թեժ աշխատանք է։ Եվ պաշարման տանջանքների մեջ ծնված երգը գնաց թափառելու կազեմատից կազեմատ, հարմարվելով առաջամարտիկի ուսի մոտ, սահելով տարածվեց ձեղնահարկերի և տանիքների վրա, որտեղ պառկած էին կազակային հարյուրյակները։

Ահա այդ երգը.

Է՜խ, կովկասյան զինվորները
Քայլում են կարիքի տակ կքած,
Շատ ու շատ են նրանց վշտերը,
Որ կրում են մեջքներին կպած։
Աղի փոխարեն մենք ցանում ենք
Փամփուշտներից ինչ-որ փոշի,
Խոտով ծխամորճերը ծխում ենք՝
Ջտեսնելով երեսը ծխախոտի։
Մենք ճիլոպ ենք հագել
Ցափնչու և թիկնոցի փոխարեն,
Ոտքներս կաշու մեջ փաթաթել,
Եվ սատկած ձիու միս կերել...

— Ի դեպ,— ասաց Կարաբանովը՝ հանդիպելով Կլյուգենաուին,— դա, պատահաբար, ձեր ստեղծագործությունը չէ՞, որ այդպես հաջող երգում են։

— Ո՛չ,— պատասխանեց բարոնը,— ես այդպես լավ չեմ կարող գրել։ Եվ այդպիսի երգերը չեն գրվում մի մարդու կողմից...

Պորուչիկն օրորվելով հեռացավ ինժեներից։ Նա փնտրում էր մի ստվերոտ ծածկ, որպեսզի տակը պառկեր, ննջեր, որպեսզի մոռանար ջրի մասին։ Եվ բացելով ինչ-որ խցիկի ծանր դուռը՝ նա հանդիպեց... ինքն իրեն։ Կարաբանովը նայում էր Կարաբանովին մի չարդված հայելու պղտոր բեկորի միջից, որ կախված էր դռան դիմաց, և նրա դեմքը բոլորովին ծանոթ չէր պորուչիկին։

Անդրեյն առաջ շարժվեց, հայելու վրայից թևքով թափ

1 Ֆալկոնետ— փոքր տրամաչափի թնդանոթ։

տվեց գորշ փոշու շերտը։ Դատարկության միջից նրան էր նայում օտար ու սարսափելի, կոշտ մազերով պատած և ջրահեղձի պես ուռած մի դեմք. բորբոքված աչքերը նայում էին մի տեսակ բութ ու վայրենի հայացքով։

— Ա՜-ա՜, այդ դարձյալ դո՞ւք եք, Կարաբանով։

Անդրեյը ձեռքը մոտեցրեց գլխարկի կոտրված հովարին և, հազիվ շարժելով լեզուն, որը չէր տեղավորվում բերանում, ասաց.

— Պատիվ ունեմ ներկայանալու՝ նորին կայսերական մեծության արքայահամհարզ Անդրեյ Կարաբանով։

Նա հանկարծ սկսեց բարձրաձայն ծիծաղել, որը նման էր հիստերիկ լացի։ Մի՞թե այդ ամենը մի ժամանակ եղել է, մտածում էր նա այդ պահին, և՛ շքախմբային ուսակապերը, և՛ շքեղ դրոշները՝ կայսրության գիշատիչ արծվի պատկերով. ինքը եղել է բոլորովին էլ ոչ այնպիսին, ինչպիսին հիմա նայում է հայելու միջից... Անցյալն այժմ ներկայանում էր նրան որպես մի վատ և ամոթալի բան, որպես գաղտնի անառակություն։

Գետնի տակից լսվող ինչ-որ ձայներ ստիպեցին լարել ուշադրությունը։ Ձայներից մեկը տղամարդու էր, մի քիչ ծվծվան, մյուսը՝ կանացի, շնչեղ, որը դեռ վերջերս շարունակ սիրո խոսքեր էր կրկնում նրան։

— Կլյուգենաո՞ւ,— զարմացավ նա և երկար ժամանակ ականջը կպցրեց հատակին։

Ձայներ.

— ... և եթե ես, և եթե ինձ...

— Պետք չէ, մի՛ ասեք։ Դուք սուրբ եք...

— Ինձ համար այնպես ծանր է հիմա...

— Ապավինեցեք ինձ...

Կարաբանովը վեր կացավ չոքած տեղից, մեքենայաբար փոշին թափ տվեց տաբատի վրայից։ Ահա թե ինչ, Կլյուգենաուն և ոչ թե ինքն է այժմ լսում նրան։ Ինչ արած, հավանաբար Ագլայան իրավացի է։ Եվ ինքն ի՞նչ է ներկայացնում իրենից։ Եկավ որպես ավազակ, որպես Վանկա-մառանապետ, կողմնակի խոսակցություններով մոլորեցրեց նրան, ցույց տվեց իր անառակությունն ու տղամարդու կոպիտությունը և նորից գնաց, հրաժեշտի պահին կարծես ասելով՝ ճանաչիր մերոնց, ահա մենք այսպիսի քաջակորով երիտասարդներ ենք։

— Եվ ինչո՞ւ եմ ես այդպիսի...— ուզում էր ասել «հիմար», բայց փոշմանեց և ասաց ուրիշ բան՝ անդադրում։

Կարաբանովը կուշտ քնեց իր հավաբնում և դուրս եկավ գավիթ։ Մահվան գերանդին, նորից շարժման մեջ մտնելով՝ շարագուշակորեն պտտվում էր բայազետցիների գլխավերևում։ Գնդակներն ու կոտորակները ակոսում էին օդը, բզկտում նրան թռիչքի ընթացքում, շերտատում, կտրատում, օդն ամբողջովին մտրակահարված էր, ինչպես զինվորի մեջքը դալար ճիպոտով ծեծելուց հետո։

— Ահա,— ասաց յունկեր Եվդոկիմովը՝ մատիտը դնելով գրպանը,— ես հիմա հաշվեցի, որ այս հոյակապ Բայազետում յուրաքանչյուր մարդու համար սպանվելու վտանգը կազմում է երեք հազար չորս հարյուր ութսուներկու անգամ։ Դա այն պայմանով, որ թուրքերը միջին հաշվով ամեն ժամ արձակում են... Գիտե՞ք ինչքան գնդակ։

— Թողե՛ք դա, յունկեր։ Տրամադրություն ունեք մեռելային հաշվապահությամբ զբաղվելու։

Շտոկվիշը երեկոյան սպայական խորհրդակցություն հրավիրեց։

— Եվ ահա թե ինչ հարցով, պարոնայք,— ասաց նա՝ ըստ սովորության շոյելով իր սիրելի կատվի ձագին։— Կայազորի որոշ մարդկանց մոտ ես նկատում եմ ամրոցի դարպասները բաց անելու մտադրություն, որպեսզի հատուկ ջոկատի արտագրոհ անցկացվի... Եթե դա այդպես է, խնդրում եմ ուղղակի ասել։

Նա լռեց և մռայլորեն եզրափակեց.

— Ես այսօր կայազորում մարդկանց կողմից ծարավը մեղով հագեցնելու մի քանի փորձեր եմ նկատել։ Նրանք, հասկանալի է, ամաչում են խոստովանել ինձ այդ բանը, բայց չէ որ ես հիմար չեմ և հասկանում եմ։ Դրա համար նրանց մեղադրել չի կարելի։ Մարդիկ թուլացել են և վայր են ընկնում։ Ոջիլներ, կեղտ, չիբաններ... Ես ձեզ եմ հարցնում, պարոնա՛յք սպաներ, այս վիճակում կարելի՞ է արդյոք իրականացնել արտագրոհի այդ վտանգավոր մտադրությունը։

— Կարելի է,— ասաց Վատնինը և սուսերով թեթևակի խփեց գետնին։

— Լիովին,— ավելացրեց Պոտրեսովը։

— Անհրաժեշտ է,— հուշեց Կլյուգենաուն։

— Եվ հարկավոր է հենց վաղը,— ավարտեց Վատնինը։— Քանի դեռ մարդկանց մեջ մի քիչ ուժ է մնացել։

— Երկրորդ հարցը,— ասաց Շտոկվիչը։— Մենք ինչպե՞ս պիտի կատարենք արտագրոհի համար մարդկանց ընտրությունը՝ նշանակելո՞վ, թե՞ կամովին։

— Զորով սպանվել ոչ ոք չի ուզում,— բոլորի փոխարեն պատասխանեց Վատնինը։— Թող մարդիկ իրենք իրենց կամքը հայտնեն։ Միայն թե նրանց ավելի հստակ պիտի բացատրենք իրենց խնդիրը՝ ինչի համար և ինչպես պետք է վարվեն...

— Լավ,— համաձայնեց Շտոկվիչը՝ մատը տալով կատվի ձագին՝ կծելու։— Կուզենայի, որ ամբողջ փաշայության նորին պայծառափայլությունն պարոն զինվորական պետը ևս մեզ հայտներ իր բարձր կարծիքը։

Իսմայիլ խան Նախիջևանսկին տխրեց.

— Բույուր,— համաձայնեց նա։— Ես շատ եմ մտածել։ Երեկ մտածեցի, այսօր մտածեցի։ Եթե նրանք դուրս պրծնեն ամրոցից, ինչի՞ համար են նորից հետ վերադառնալու ամրոց։

— Ձերդ պայծառափայլություն, մի՛ տանջեք մեզ։ Մենք այնքան շատ չենք մտածել, ինչքան դուք, և մեզ դժվար է գլխի ընկնել։

— Ցուցակագրել,— բղավեց Իսմայիլ խանը։— Բոլորիս ցուցակագրել, և այն ժամանակ նրանք չեն համարձակվի փախչել... Ես շատ եմ մտածել։

— Շնորհակալ եմ ձեզանից, խա՛ն,— լրջորեն պատասխանեց պարետը։— Դուք, ինչպես միշտ, իրավացի եք, և մենք հաշվի կառնենք ձեր ցանկությունը... Եվ այսպես, պարոնայք, հուսով եմ, որ ամեն ինչ պա՞րզ է։ Շատ լավ։

Իսմայիլ խանը փաղաքշական հայացքը չէր հեռացնում կատվի ձագից։

— Սիրում եմ կատվի ձագերին,— ասաց Շտոկվիչը։— Այնպիսի քնքուշիկն են...

Սակայն պարետը սառնորեն հրաժեշտ տվեց՝ իրեն նեղություն չտալով հասկանալու ակնարկը, որ գալիս էր ստիպել խան Նախիջևանսկու պայծառափայլ ստամոքսից։

Կլյուգենաուն դուրս եկավ բակ և անմիջապես սուզվեց հարավային գիշերվա սև մթության մեջ։ Ինչ-որ տեղից դեռ մեկ-մեկ կրակում էին, բայց արդեն թույլ։ Կամարաձև միջանցքում նա կպավ մի զինվորի, որը, հրացանը գրկած և մեջքով պատին սեղմված, պպզել էր։

Բարոնը ձեռքով խփեց նրա ուսին.

— Էյ, եղբայր, մի քնի՛ր... Այստեղ տեղը չէ։

Զինվորը շարթնացավ, և Կլյուգենաուն զարմանքով նկատեց, որ նա մեռած է. ոչ սպանված է և ոչ էլ վիրավորված, այլ ուղղակի մեռած՝ հավանաբար արդեն ուժ չունենալով դիմանալու պայքարի, սովի և ծարավի լարվածությանը։ Կլյուգենաուն լուցկով լուսավորեց նրան և նկատելով մեռելի հագուստի վրա սողացող անթիվ ոջիլները՝ զզվանքով բաց թողեց նրա ուսը։ Պրապորշչիկն ուղղվեց դեպի իր սենյակը՝ ամբողջ ճանապարհին մտածելով այն մասին, որ զինվորը ոչ սպանված է և ոչ էլ վիրավորված, այլ ուղղակի մեռած, և այդ մահը յաթաղանից և գնդակից ավելի սարսափելի թվաց։

— Մարդիկ սկսում են մեռնել,— ասաց նա Սիվիցկուն։— Ջուրը օր օրի ավելի զզվելի ու վարակիչ է դառնում։ Սիրելի Ալեքսանդր Բորիսովիչ, պատրաստվեք դիմափորելու կանաչ գեղեցկուհուն, որը սիրում է ճանապարհորդել զորքերի հետ և ունի այսպիսի հնչեղ անուն՝ դիզենտերիա...

— Գնացեք գրողի ծոցը, մարգարե,— հայհոյեց Սիվիցկին։— Գեղեցկուհին արդեն ամրոցում է, իսկ մարդիկ դեռ ամաչում են իրենց հիվանդությունից, և այդ պատճառով էլ համաճարակն առայժմ անկյուններում է թաքնվում։

Գիշերվա կեսին միջնաբերդը թնդաց մի անմարդկային վայրենի գոռոցից, որից կարծես ցնցվեցին Բայազետի հնամենի անողոք պատերը.

— Խմե՛-ե՛լ եմ ուզո՛-ո՛ւմ... Ջո՛ւր տվեք, գոնե մի կաթիլ։ Մեռնո՛ւմ-ո՛ւմ եմ...

Դրան ի պատասխան միջնաբերդը լռում էր։ Միայն մի մեռնող աստղ իր սրընթաց անկումով շեղորեն խաչեց երկինքը։

10

Նեկրասովը հասկացավ, որ եկել է այդտեղից հեռանալու ժամանակը։ Ոչ ոք նրան դուրս չէր անում, բայց սկսել էին ավելի վատ կերակրել՝ մածնաթան էին տալիս և հայկական մի չոր բան, որը եփում էին կորեկի բլիթների մեջ։ Հիմա թերևս միմիայն Աննուշկան էր այցելում նրան. շտաբս-կապիտանը հասկանում էր նրա հուզմունքը և վախենում էր նայել նրա աչքերին։

Մոլոկան մուժիկները երեկոներն ինչ-որ տեղ էին գնում և վերադառնում միայն լուսադեմին՝ մեջքներին բերելով տոզած պարկեր, որոնք լցված էին լինում խորհրդավոր գանձերով։ Նեկրասովը մի անգամ անակնկալ բռնացրեց նրանց այդ պարկերով, երբ նրանք բաժանում էին իրենց գիշերային ավարը՝ սվիններով պատառոտված զինվորական վերնաշապիկներ, արյան և կեղտի մեջ կորած գունավոր ալունքներով ասեղնագործված թուրքական բաճկոններ, աստիճանավորների համազգեստներ և ռուսական կաշվից ճաքակոշիկներ։

— Իսկ մենք... ահա,— չշփոթվեց Սավելիչը։— Քիչ-միչ բան ենք ձեռք բերել... Ոմանք հացի են տալիս, ոմանք՝ վարունգի, ոմանք էլ հենց այնպես, մեղա՜ քեզ, տե՛ր...

Նեկրասովը զզվանք զգաց և դուրս եկավ նստեց տան առջևի հողանստարանին։ Մինչ նա տաքանում էր արևի տակ, գյուղի մոտ ձիերից մի քանի հեծյալներ իջան։ Նրանցից մեկը, որ երիտասարդ անգլիացի էր և կարմիր համազգեստի վրա կրում էր «Մեջիդիյե» շքանշան, հագել էր գորշ թաղիքից բարձրաճիտք կոշիկներ, առանց շտապելու իջավ ձիուց։ Մուսուլմանական սովորույթի համաձայն նա մեջքին լայնագոտի էր կապել և այնքան լայն, որ Նեկրասովը անմիջապես գլխի ընկավ՝ «ինգիլեզը» չափազանց մեծ հարգանք է վայելում թուրքերի մեջ։

Անգլիացին ուշադիր հայացքով երկար ուսումնասիրում

էր Նեկրասովին։ Հետո «ինգիլեզը» խնդրեց հենց ջրհորի մի-ջից ջուր տալ իրեն։ Շիկակարմիր մորուքը վեր ցցած, անգլիացին ագահորեն խմում էր սափորից, որ տվել էր նրան Նեկրասովը, և ջրի ջինջ շիթերը պոկվում էին նրա բերանի անկյուններից։ Շնորհակալությամբ վերադարձնելով սափորը՝ նա հանկարծ ասաց.

— Մենք պատիվ ունել։ Դու ծառա չէ լինել ռուս մորմոն[1]... Ի՞նչպես է դա՝ այղանդավոր...

Նեկրասովը հասկացավ, որ մոլոկան ձևանալը հիմարություն է, և լիակատար անկեղծությամբ պատասխանեց անգլերեն.

— Դուք չեք սխալվել, սը՛ր։ Ես իսկապես աղանդավոր լեմ, և ուրախ եմ հանդիպելու քաղաքակրթված մարդու։

— Դուք հասարակ զինվոր չեք,— գլխի ընկավ անգլիացին։— Ի՞նչ կոչում ունեք և ի՞նչ է պատահել ձեզ։

— Շտաբս-կապիտան։ Ես սրահարված եմ եղել յաթաղաններով...

Անգլիացին նայեց իր չերքեզ-սպասավորներին, նայեց հեռվում երևացող Բայազետի ավերակներին և մտրակի կոթով բարեկամաբար թխկացրեց Նեկրասովի ուսին.

— Անձնվեր հակառակորդներ ունենալը միշտ էլ հաճելի է, և ես կուզենայի օգնել ձեզ։ Սակայն թագուհու կամքով ես ծառայում եմ մարգարեի կանաչ դրոշի ներքո և հիմա կարող եմ ձեզ օգտակար լինել միայն մի բանում՝ արտահայտել ձեր նկատմամբ իմ հարգանքը։

— Ես ընդունում եմ դա,— պատասխանեց Նեկրասովը,— և հուսով եմ, որ դուք անհրաժեշտություն չեք զգա ձերբակալել ինձ։

Անգլիացին նորից նայեց սպասավորներին։

— Ես,— կամացուկ ասաց նա,— լավ չեմ հասկանում ձեզ՝ ռուսներիդ։ Այն, ինչ դուք կատարում եք այստեղ, Բայազետում, անօրինակ սխրագործություն է, թեև չի արժանանա պատմության գնահատանքին։ Սակայն հոգեբանության ո՞ր ոլորտին դուք կհրամայեք վերագրել ձեր սխրագործությունը՝ բարձր արիությա՞ն, թե՞ բթացած հուսահատության։

[1] Մորմոն — ամերիկյան կրոնական աղանդի անդամ։

— Ես վատ եմ տիրապետում ձեր լեզվին,— բացատրեց Նեկրասովը,— և չեմ կարող հիմա գտնել անհրաժեշտ բառը։ Բայց ռուսերեն դա կկոչվի այսպես՝ «անձնազոհություն»։ Դա շատ դժվար բառ է, սը՛ր, և մի ջանացեք կրկնել այն։

Անգլիացին աշխույժ ծիծաղեց՝ պարզելով ձեռքը.

— Մնաք բարո՛վ։ Հիմա հնարավոր է միայն երկու հրաշք՝ կամ Ֆուիկ փաշան կներխուժի Բայազետ, կամ էլ ես կկարողանամ արտասանել ռուսական այդ սոսկալի բառը։

Այդ օրը, ծանր թնդանոթներով թաղվելով լեռներում, թուրքերը մոլոկաններին հրամայեցին հրետասայլերին լծել իրենց գոմեշները, որոնք, ի տարբերություն թուրքական անասունների, լավ էին պահված և ուժեղ էին, և թնդանոթները տանել պաշարված ամրոցի մոտ։ Լսելով այդ մասին, Նեկրասովը լվացվեց, նախապես թրջեց տրեխները, որպեսզի հետո լավ նստեին ոտքերին։

— Կարծես թե մտադիր ես հեռանալ,— հարցրեց Սավելիչը։

— Այո՛, գնում եմ։

— Նորից սպանությունները ձգո՞ւմ են։

— Կարող է և այդպես,— համաձայնեց Նեկրասովը։— Ես հո չեմ նայելու պատուհանից, թե դուք ինչպես եք մահաբեր զենքը քարշ տալիս տանում հենց ձեր հայրենակիցների վրա։

— Մեր հավատը հնազանդություն է սովորեցնում։ Գլուխդ կախ պահիր, իսկ սիրտդ հնազանդ, և մեղք չի լինի։

— Իսկ դու երկա՞ր ես փնտրել այդ հավատը, Սավելիչ,— զարմացավ Նեկրասովը։— Ավելի լավ չի՞ լինի միանգամից չալմա կապես ճաղատ գլխիդ։ Այն ժամանակ քո գոմեշները գոնե ձրի չեն աշխատի, սուլթանից դինար կստանաս։

Սավելիչը խստացավ դեմքով ու ձայնով.

— Իսկ դու, սիրելի մարդ, դատարկ բառերով այստեղ մի՛ աղտոտի մեր երանությունը։ Քո խելքի հետ մեր հավատը չի հարմարվի և գնա ուր ուզում ես։ Ինչ հագուստ կամենաս՝ վերցրու, որպեսզի խայտառակությունդ ծածկես, և գնա թափառիր։

Եկավ նաև Աննուշկայի լաց լինելու ժամանակը. օ՛յ, ինչպե՞ս էր գոռում աղջիկը, լացուկոծ անում, արցունք թափում ռուսական ձևով, կանացիաբար.

— Օ՛յ, այս ինչ փորձանք եկավ... Ախր առանց քեզ ես վաղն ինչպես հաց կտրեմ... Գոնե քեզնից մի փոքրիկ հիշատակ թող։

Սավելիչը բռնեց նրա ծամերից, քարշ տվեց նախասենյակ.

— Ձայնդ կտրի՛ր, հիմա՛ր... Իսկ դու, սիրելիս, որ խնդրես էլ, չեմ թողնի մնաս։ Որպեսզի իմ աղջկա գլխին փորձանք լգա։ Ընտրիր ինչ-որ վրայովդ կլինի, ուզում ես մոսկովյան ռանտով ճոճոան ճտքակոշիկներ, միայն թե շառդ քաշիր այստեղից, հարազատս։

Նա սնդուկները բաց արեց Նեկրասովի առաջ։ Այո՛-ո՛, քիչ բան չէր թալանված...

— Սավելիչ, կարո՞ղ է իմ վրայի սերթուկն էլ քեզ մոտ լինել,— հարցրեց Նեկրասովը։

Հիմա նա մահվան մասին չէր մտածում։ Թուրքերի, բոշաների և քրդերի ահռելի ամբոխը շրջապատեց Նեկրասովին, երբ նա մտավ Բայազետի փողոցները, և նրա մեջ մի անխոհեմ ու հարբած ցանկություն առաջացավ՝ այդ դեմքերին ռուսական մի ինչ-որ խենթ բան գոռալ, ինչպես ասենք.

Սոխակ,սոխակ,
Թռչ-նիկ,
Դեղձա-նիկ,
Ա՜խ, երգում է լալագին,
Երգում լալագին...

Սակայն նրան շրջապատեցին յաթաղանների օղակով և բերեցին քարվանսարա։

Ֆուիկ փաշան թեթևամիտ մարդ էր խաղացկոտ երևակայությամբ, ինչը պատշաճ է բանաստեղծին։ Ոտք դնելով Բայազետի փողոցները՝ նա սուլթան Աբդուլ Համիդից սպասում էր եթե ոչ եկամտաբեր պաշտոն, ապա համենայն դեպս Պայծառափայլ Դռան հանգիստը պահպանող Սեյֆ-ուլ-Մուլկ պատվավոր տիտղոսը։

Սակայն ամրոցը գերադասում էր դիմանալ պաշարմանը։ Անհաջող գրոհից հետո Ֆուիկ փաշան վշտից դադարել էր մորուքը ներկելուց, իսկ հետո ղզլար աղային ուղղված նամակներում, ողջույն հղելով կանանց, իր ստորագրությանը ավելացրել էր երկու բառ՝ «անմխիթար ծերուկ...»։ Այժմ նա սուլթանից սպասում էր վերջին նվերը՝ ոսկեգույն թելերից գեղեցիկ հյուսված մետաքսե օղ, որից կախվելը նույնքան տհաճ էր լինելու, որքան կոշտ պարանից...

Այսօր Ֆուիկ փաշան առավոտվանից զբաղված էր այն բանով, որ գաղտնի նկարվելու կեցվածք էր ընդունել մի հրեայի առաջ, որը հոնորարի փոխարեն ցանկացել էր մեյդանում մի փոքրիկ խանութ բացելու թույլտվություն ստանալ։ Իսկ գաղտնի էր նկարվում այն պատճառով, որ գայթակղությունից խուսափելու համար ալլահը ուղղահավատներին արգելում էր ունենալ իր պատկերը։ Հրեան անշնորհք գուրս եկավ իր արվեստի մեջ, և նրան տեղնուտեղը կախաղան բարձրացրին։ Հետո փաշայի մոտ բերեցին բայազետցի աղջիկների, որոնց ծնողները սպանվել էին։ Նրան դուր եկավ մի լեվանտացի թե գնչու աղջիկ, դա փաշայի համար միևնույն էր, ընդամենը տասներեք տարեկան։ Նա աղջկա բերանը մի կտոր հալվա դրեց և կարգադրեց նախապատրաստել նրան այս գիշերվա համար։

Այնուհետև նա ուշադիր դիտեց իր կոշիկների վերջավորությունները, բայց այդ զբաղմունքն էլ շուտով ձանձրացրեց նրան. այն ժամանակ փաշան սկսեց բացահայտորեն տխրել։ Նրան մի քիչ զվարճացրեց Ղազի Մահոմայի գալը, որը պատմեց, թե Ռուսաստանում վառելափայտի ինչպիսի առասպելական էժանություն է, թե ինչ տպավորություն են գործում ռուսական գերեզմանոցները և այն մասին, որ ռուս կանայք չեն վախենում օրը ցերեկով լողանալ գետում։

Իմանալով քաղաքի փողոցներում ռուս սպային բռնելու մասին՝ Ֆուիկ փաշան մտածեց, թե ինչ օգուտ կարելի է ստանալ, եթե նրան կախի՝ ոչ մի։ Բայց որպեսզի մոտեցնի ամրոցի հանձնումը, ապագայի համար կարելի է այդ սպային բաց թողնել որպես գթասրտության նշան... Եվ ամրապնդելով այդ մտադրությունը՝ Ֆուիկ փաշան հրամայեց բերել ձերբակալված Նեկրասովին։

— Մինչև այնքան ժամանակ,— սկսեց Ֆուիկ փաշան, գլուխ տալով,— քանի գոյություն ունի արևը, և նրա ոսկյա գրոշը լուսավորում է երկնային կացարանը, մինչև այդքան ժամանակ ձեր մեծաշուքությունը կզարդարվի հզորությամբ։ Եվ թող լցվի ձեր հոգու թասը ուրախության և զվարճանքի գինով։

Թարգմանիչը թարգմանեց, իսկ Ղազի Մահոման հանկարծ գոռաց ռուսերեն.

— Ամաչե՛ք։ Դուք, որ տիրապետում եք ամբողջ աշխարհի քառորդ մասին, որտե՞ղ են ձեր գովաբանված հարստությունները, եթե դուք խցկվել եք մեր փաշայությունը և կառչում եք ամեն մի վերշոկ հողին, երբ չեք հասցնում վարել նույնիսկ ձեր հողը։ Ձեր ժլատությունն այնքան մեծ է, որ շուտով շներն անգամ կթքեն ձեր հետևից։ Եկեք այստեղ թեկուզ հարյուրավոր գումարտակներով, միևնույն է, մենք ձեզ չենք հարգի...

Նեկրասովն ստացավ խոսակցության առաջին առիթը և որոշեց Կալուգայի սպեկուլյանտին սեղմել պատին։ Նա ասաց.

— Տարօրինակ է... լինելով Կալուգայում, հարգարժան Ղազի, դո՞ւք չէիք արդյոք աղաչում մեր թագավորին՝ թույլ տալ ձեզ գոնե որպես պրապորշչիկ ծառայելու ռուսական բանակում։

Ղազի Մահոման թափով հետ քաշվեց, անցնելով պատի երկայնքով, փափուկ մուճակների թաթերի վրա՝ կարծես պարելուց առաջ ընդարմացած անելով ոտքերը։

— Դա ճիշտ չէ,— շփոթվեց նա։

Իմամի որդին արդեն բռի մեջ էր, այժմ հարկավոր էր միայն ճզմել նրան, և Նեկրասովը քաղաքավարի վերջացրեց.

— Եթե այդ մասին դեռ չգիտի ձեր սուլթանը, որի շքախմբում ծառայելու պատիվ ունեք դուք, ապա Ռուսաստանում ռուս գեներալներին ուղղված ձեր բոլոր նամակները երախտագիտության արտահայտություններով թարգմանված են ռուսերեն և ընթերցանության չափազանց հետաքրքրական նյութ են ներկայացնում։

Այդպիսի տեղեկությունից Ֆուիկ փաշայի առանց այն էլ կարմիր, ծաղկասպիներով ծածկված դեմքը բոսորագույն

գարձավ։ Դա լավ կոզիր էր նրա ձեռքում, բայց, բոլորը ինչպես հարկն է հիշողության մեջ պահելով, նա հանդարտ ասաց.

— Մի կաթսայի մեջ չենք եփի և՛ քաղցր շարբաթը, և՛ սոխով ապուրը։

Ջղային և արագաշարժ Ղազի Մահոման ճկուն մատները դրեց դաշույնի կոթին և նորից գոռաց.

— Հիմարնե՛ր, մի՞թե դուք շարունակում եք մտածել, որ մենք ոտքի տակ տալով Իգդիրը, ձիերը կերակրելով Թիֆլիսում և գիշերելով Օսեթիայի հովիտներում, հանկարծ կանգ կառնենք ծովի մոտ։ Ո՛չ, մեր սուլթանը, թող ալլահը երկար պահի նրան, դեռ շատ փառավոր գործեր ունի։ Եվ միայն Նևայի ափերին նա թույլ կտա մեզ ձիերից իջեցնել թամբերը։

Նեկրասովը նույնիսկ չզարմացավ, դիմանալով արևելյան պարծենկոտության այդ բուռն հեղեղին, և Ֆուիկ փաշան փաղաքշորեն ավելացրեց.

— Ձեր բանականության մոլորությունների նկատմամբ մեր ողորմածության մեջ մենք այնքան մեծահոգի ենք, որ դուք կարող եք ձեզ մոտ պահել զենքերն ու դրոշները՝ մեզ թողնելով միայն ձեր հրանոթները։

Յուրի Տիմոֆեևիչը ժպտաց.

— Եվ ահա այստեղ մենք չեն վիճի։ Ինչի՞ համար... Մտադրություն ունենալով շուտով լինելու Սանկտ-Պետերբուրգում՝ հարգարժան Ղազին դեռ մինչև Կալուգա հասնելը հարյուրավոր և հազարավոր հրանոթներ կհավաքի։ Ուրեմն արժե՞ հիմա գժտվել ընդամենը երեք հրանոթի համար։

— Չորս,— ասաց Ղազի Մահոման։

— Երեք,— ուղղեց նրան Նեկրասովը։

Շամիլի զայրացած որդին գլխից դեն նետեց փափախը։

— Օ՜-օ՜, խոզի միս ուտողների ստորություն։ Ախր դեռ երեկ միայն մենք տեսանք, թե ինչպես դուք չորրորդ հրանդի փողը երկրորդ հարկի պատուհանից դուրս հանեցիք...

Եվ նրան բաց թողեցին...

11

Նեկրասովը պատրաստ էր ամրոցի ներսում հանդիպելու ամեն ինչի, բայց ոչ այդ բանին... Չորացած սև կմախքներ՝ մինչև ոսկորները արևից վառված, խոպոտ ձայնով ու գզգզված մազերով, պատած չիբաններով ու ոջիլներով, պղտոր աչքերով, շարժվեցին դեպի Նեկրասովը՝ շոյելով ու համբուրելով նրան, և շտաբս-կապիտանը այդ մարդկանց մեջ, գրեթե սոսկումով, հազիվ ճանաչում էր իր հավատարիմ ընկերներին։

— Սիրելիներս,— ասաց նա։— Դուք այստեղ որքան եք կծկվել։

Նեկրասովը չդիմացավ, սկսեց լաց լինել։ Այդ ժամանակ բայազետցիներն սկսեցին մխիթարել նրան, և նա լսեց նրանց ծիծաղը, նույնիսկ կատակները, որոնք հիմա նրա ականջին հնչում էին որպես ոսկորների ճռճռոց։ Դա ապշեցրեց Նեկրասովին. նրանք մնացել էին նույնը, դրսից ամեն ինչ վառվել էր, բայց ներսում դեռ ապրում էին նրանց ամուր ոգիները, գրողը տանի...

Շտաբս-կապիտանի վերադարձը իրար խառնեց խաղաթղթերը այն հաջող պասյանսում, որը դասավորել էր պարեռ Շտոկվիչը, և ավելի գրագետ, զինվորների կողմից ավելի սիրված սպայի մրցակցությունը հանկարծ ստիպեց Եֆրեմ Իվանովիչին իր տուզը տեղափոխել խաղաթղթերի մեկ ուրիշ կապուկի մեջ։

Երբ նրանք մենակ մնացին, կապիտանը միանգամայն անկեղծորեն մի տեսակ կաշառող ժպիտով ասաց Նեկրասովին.

— Սատանան ձեզ հետ բերեց։ Ինչո՞ւ դուք տիտիկ չարեցիք գյուղում... Մի՛ բարկացեք. այստեղ առանց ձեզ էլ յուրաքանչյուր վանդակում մի-մի լավ դամա կա։ Թագավորին,— ասաց նա Իսմայիլ խանի մասին,— մենք հենց նոր ենք պետքարան նստեցրել...

— Եֆրեմ Իվանիչ,— պատասխանեց Նեկրասովը չնեղանալով,— բարձր աստիճանները մեր ժամանակներում նման են եգիպտական բուրգերի։ Նրանց սուր գագաթներին կարող են հասնել կենդանի էակների միայն երկու տեսակ՝ արծիվ-

ները և սողունները։ Ես մտադիր չեմ սավառնել, բայց հրաժարվում եմ նաև սողալ։ Եվ այդ պատճառով էլ...

Իրենց գալուստով նրանց խանգարեցին Վատնինն ու Կլյուգենաուն, և դրա համար էլ Նեկրասովը որոշեց օգտվել նրանց ներկայությունից, որ միանգամից վերջակետ դնի։

— Հիմա,— ասաց նա,— կարևոր է գործը, ինչպես ասում էր հանգուցյալ Նիկիտա Սեմյոնովիչը, և թույլ տվեք ինձ, պարոնա՛յք, կայազորի ճակատագիրը հավասար կիսել բոլորի հետ։ Եվ եթե ձեզ հաճելի է, սիրելի Եֆրեմ Իվանովիչ, ես համաձայն եմ ենթարկվել ձեր հրամաններին։ Գործի համար եմ եկել և փառք չեմ փնտրում...

Շտոկվիչը ձգվեց, լարվեց, հայացքն սկսեց սահեցնել հատակի վրայով։

— Ես մնում եմ միայն որպես պարետ,— պատասխանեց նա։

— Նորից գնդակը նույն անկյանն են խփում,— ծիծաղեց Վատնինը։— Որքա՜ն դժվար է ժառանգություն բաժանել։

— Պարդոն, իսկ ո՞վ պիտի իշխանություն ունենա մեր մարմինների ու հոգիների վրա,— հարցրեց Կլյուգենաուն։

— Միայն պարետ,— հաստատակամորեն վերջացրեց Շտոկվիչը։

— Ստիպված... ես պիտի վերցնեմ ինձ վրա,— ասաց Վատնինը և շաչեցրեց մտրակը։— Դե, այն ժամանակ դիմացեք...

Վատնինը կլինի թե Վատնինը չի լինի, սակայն Շտոկվիչի հաշիվը խաղաթղթերի այս կապուկում ևս ճիշտ դուրս եկավ։ Այդ կապիտանի մոտ ինչ-որ հատուկ հոտառություն կար բոլոր շրջադարձերի համար։ Եվ նույնիսկ հիմա, շատ տարիներ անց, դեռ գտնվում են պատմաբաններ, որոնք Բայազետի պաշտպանության մեջ գլխավոր դերը վերագրում են Շտոկվիչին։ Հավանաբար, այդպես է ստացվում այն պատճառով, որ փորձելով գտնել կայազորի իսկական պետին, պատմաբանները նրան չեն գտնում, և դրա համար էլ նրանց մնում է մի բան՝ հրամանատարության բոլոր ծառայությունները վերագրել ամրոցի պարետին։

— Քանդե՛ք,— հրամայեց Վատնինը, և էրիվանցիներն սկսեցին ամրոցի դարպասների մոտից գլորելով հեռացնել քարերը, ազատել ելքը։

Օգտվելով որոշ անդորրությունից՝ մարդիկ հավաքվել էին բակը։ Եկան սպաները, կամաբների տակ տեղավորվեցին երաժիշտները։ Մարդիկ վաղուց արդեն չէին հավաքվել միատեղ, դրա համար էլ կարծես ուրախացել էին հրմշտոցից, ամենուրեք զնգում էին զենքերը, փամփուշտներ էին փոխանակվում միմյանց, լսվում էին ձայներ.

— Վանյո՛ւկ, ինչո՞ւ ես այդպես նվաղել։

— Շիկահերն է ուտում...

— Մի՛ հրմշտիր, քոսո՛տ։

— Եղբայրնե՛ր, ինչո՞ւ ենք խռնվել։

— Հրաման կլինի, երևի...

— Նրանք արժանի են համարել հրաման գրել։

— Հապա մի նայիր, Նեկրասովն է գալիս։

— Նրա հետ ավելի աշխույժ է...

— Կը՞ռ-կը՞ռ, կռունկն է թռչում.

— Նա ազատ թռչուն է...

— Լռե՛ք, եղբայրնե՛ր, պիտի խոսեն...

Վատնինը դուրս եկավ մեջտեղ, բոլորին խլացրեց իր բամբ ձայնով։

— Լսի՛ր իմ հրամանը,— բարձրաձայն գոչեց նա,— հիմա ամեն մեկը թող իր բերանը ավելի լայն բաց անի, որպեսզի լեզուն երևա, և թող մտածի իր մասին առանց խղճահարության... Պա՞րզ է, եղբայրներ։ Դե բացեք ձեր ռեխները...

Ճնճղճնգացնելով վիթխարի սուրը, որը խփվում էր նրա ոտքերին, եսաուլը արագ վազքով շրջանցեց ծարավից չորացած լեզուները բերաններից դուրս ցցած մարդկանց շարքերը և նորից վերադարձավ բակի մեջտեղը։

— Փակե՛ք ռեխներդ։ Բժշկական զննումն ավարտվեց։ Եզրակացությունն այսպիսին է՝ բոլորն առողջ են։

Ամրոցը թնդաց ծիծաղից, և, Վատնինը, գլուխը կողքի վրա թեքելով, կարծես մտածմունքի մեջ ընկավ.

— Իսկ գործը բոլորովին էլ ծիծաղելի չէ, տղաներ։ Պահանջվում է արտագրոհ կատարել, որպեսզի մի քիչ վախեցնենք թուրքերին... Ես ձեզ պիտի ասեմ, որ աշխարհում խե-

լացի շատ մարդիկ են ապրում։ Եվ այնպիսի խելացիներ, որ նրանց ուսերին ասես միանգամից հարյուր գլուխ են դրել։ Եվ եթե մեր վիճակը նկատի ունենաք, ապա մեզանից ավելի խելացի հիմա ոչ ոք չկա այստեղ։ Այդ պատճառով էլ ես ուղղակի կասեմ ճշմարտությունը, միևնույն է, գիտեմ, որ ձեզ խաբել չի լինի...

Ձայները կտրեցին։

— Այստեղ հարկավոր է աղնվորեն ասել։ Ում համար կյանքը ծանր է, անգամ մի քոռ կոպեկ չարժե, ով ո՛չ մայր, ո՛չ հայր, ո՛չ տեղ և ո՛չ տուն ունի, թող դուրս գա առաջին հերթին... Ո՛չ ոքի չենք հարկադրի, կովելու ենք կամովին։

Մարդիկ լռում էին.

— Ապրեք, որ չեք թռչկոտում,— գովեց նրանց Վատենին։— Ձեզ հիմա, հարազատներս, լռել է պետք, որպեսզի մտածեք։ Չէ որ ոչ բոլորը հետ կվերադառնան, կտեսնեն Հայրենիքը։ Այսպիսի գործում շտապողականություն պետք չէ։

Մարդիկ քարացել էին. պատերի ներսում վատ էր, պատերից դուրս՝ ավելի վատ։ Իսկ քարերը դարպասների մոտից արդեն մի կողմ էին թռչում. Կլյուգենաուի ղեկավարությամբ դրանցից հավասարաշար պատնեշ էին սարքում։

— Ես... կգնամ,— հանկարծ որոշեց Անդրեյ Կարաբանովը։— Թող ցանկացողները շարվեն իմ կողքին, և ես նրանց կտանեմ թեկուզ սատանայի ծոցը...

Մահվան գնալու պատրաստակամություն հայտնեցին ընդամենը հարյուր քսանութ մարդ, ներառյալ նաև երկու սպա՝ Եվդոկիմովն ու Կարաբանովը։ Բակ դուրս բերեցին երկու մեծ կաթսա՝ ձիու շոգեխաշ մսով, տվեցին կամավորներին՝ վերջին անգամ կուշտ ուտելու։ Ջուրն ամրոցի պարըսպի հետևում էր, և արտագրոհի նպատակներից մեկն էլ հենց այն էր, որ թուրքերին գետի մոտից հետ շպրտեն մեյդանից այն կողմ և անհրաժեշտ քանակությամբ ջրի պաշար ձեռք բերեն։

Շտոկվիչը նույնպես մի կտոր ձիու միս վերցրեց։ Ատամներով կտրելով բուրավետ միսը՝ նա ասաց.

— Խիզախ գործ է տղանե՛ր։ Երբ թմբուկներն սկսեն զարկել, միանգամից դուրս թռեք։ Մի հիսուն մարդ հարձակվեք կամրջի վրա, առանց մտածելու կոտորեք բոլոր շնչավորներին, մնացածները Վանի ճանապարհով թող քշեն թուրքերին՝ պոչին ու գլխին տալով, մինչև հին ռեդուտը։ Մենակ մի մնացեք, բռնեք իրար ուսից։ Հրետանին կօգնի ձեզ...

Բակից հեռացրին ավելորդ մարդկանց, որ չխանգարեն ամրոցից դուրս վազելու համար զորախմբի նախապատրաստմանը... Զինվորների բազմությանը միախառնված սպաները յուրաքանչյուրին համբերատար բացատրում էին ինչ անել, եթե պատահի այս կամ այն դեպքը, ինչպես նահանջել, ում լսել, որտեղ ավելի լավ կլինի կանգ առնել, որ չկորցնեն գլուխները։ Արտագրոհի պլանի մեջ շատ բաներ հենց տեղնուտեղը փոխվում է, որպես բոլորովին անընդունելի, ակնհայտորեն կործանարար կամավորների համար։

Մոտեցավ Կլյուգենաուն, թևքով մաքրեց դեմքի քրտինքը։

— Պատրաստ է,— ասաց նա։— Դարպասներն ազատ են...

Եվ բոլորը նայեցին բրոնզից ձուլված առյուծներին, որոնք պահում էին դարպասները. քարերն արդեն մի կողմ էին տարել, կազմելով ռեդուտ, որի միջաթմբի հետևում տեղավորվել էին հրաձիգները, իսկ կամարի արանքից երևում էր երկինքը, և տոիպահամ գարշահոտությունը դանդաղորեն սավառնում էր ամրոցի փեղկերի հետևում։

— Թմբկահարնե՛ր, այստե՛ղ,— հրամայեց Շտոկվիչը։

Տեր Գերասիմը բուրավետ խունկ ցանեց կամավորների վրա, աղոթք կարդաց, բայց սուրբ ջրով ոչ ոքի չցողեց, ինչպես պահաջվում էր նման դեպքերում, և Դենիսկա Օժոգինը գոչեց.

— Ջուրը երևի խմե՞լ ես, տեր հայր։

— Թեկուզ և այդպես,— չշփոթվեց հոգևորականը...

— Դե, պատրաստվե՛ք, բարի մարդիկ,— ասաց Վատենին և լայն խաչակնքեց։

Թմբկահարները վեր բարձրացրին թեթև փայտիկները։ Ջիկչխկացին սնայդերների փակաղակները, լսվեցին աղոթքներ, հրաժեշտի բացականչություններ, հայհոյանքներ։

— Հաղորդեք Պոտրեսովին,— կարգադրեց Շտոկվիչը,— որ նա, ինչպես պայմանավորվել ենք, հենց անմիջապես գործի դնի կարտեշը։ Երկու-երեք անվրեպ համազարկ՝ «փնջով»։ Նա գիտի...

Դարպասի կամարի մոտ սերտ խմբվեցին սվիններն առաջ պարզած կամավորները, որոնք պատրաստ էին նետվելու ճեղքման։ Բակի երկայնքով, դարպասների մոտից շեղակի բարձրանում էր ռեդուտի ամուր պատը, որի միջից բիզ-բիզ դուրս էին ցցված հրացանների փողերը՝ կրակելու, եթե թուրքերը համարձակվեին ներխուժել ամրոց։

— Թող մտնեն,— ասաց Վատնինը։— Այժմ նրանց համար ավելի հեշտ է ոզնի ծնել փշերի հակառակ ուղղությամբ, քան դեպի դարպասները խցկվել...

Շտոկվիչը թափահարեց ձեռքը.

— Թմբուկնե՛ր։

Թմբուկների որոտի, Պոտրեսովի թնդանոթներից թուրքերի գլխին ցիրուցան թռչող կարտեշների վնգվնգոցների ներքո դարպասներն սկսեցին բացվել, և կամավորների դեմքին փչեց նեխած դիակների տաք գարշահոտությունը։ Թթված ու թոշնած, ճանճերով ու ճիճուներով պատած դիակների կույտը շարժվեց տեղից և դանդաղ սահեց բացված դարպասների մեջ։

Այդ բանը ոչ ոք հաշվի չէր առել։

Իսկ թմբուկները զարկում էին։ Եվ թուրքերն արդեն տեսնում էին, որ դարպասները բաց են։ Հարկավոր է հարձակվել։

Ո՞վ է առաջինը...

— Գնացե՛ք,— գոռաց Դենիսկան։— Օճառ բերելու...

Կատաղի հայհոյելով ցատկեցին-անցան այդ նողկալի պատնեշի վրայով, «ուռա՜» բղավելով նետվեցին ամրոցից դուրս։ Հեղձուցիչ գարշահոտության մեջ, բերանը ափով փակելով, Կարաբանովը դուրս թռավ ճանապարհի վրա, ատրճանակը թափահարելով Եվդոկիմովի կողմը.

— Մնա՛ք բարով, պատանի, մենք գնացինք քաղաք...

Կազակներն առաջապահ ուղեկալներին սվիններով գլորեցին գետին, տրորեցին ոտքերի տակ և հողին խառնեցին։

Մոնչոցներով ու գոռգոռոցներով, սվինների ու սրերի զրնգոցներով խլացվող հրացանային կրակը միաձուլվում էր մի համաչափ աղմուկի մեջ։ Կարաբանովը կամավորներին դուրս բերեց ծուռումուռ փոքրիկ փողոցների խճճվածքի մեջ, և սկսվեց մարտը...

— Խուսափեք հյուղերից... Ո՞րտեղ է հրապարակը։

Սկսվեց կոտորածը։ Քուրդն ուժեղ էր ու ճարպիկ։ Խալաթը ցած էր գցում, քշտում թևքերը, միայն մի վերնաշապիկով ու փափախով հյուղերի լուսամուտներից դուրս էր թռչում թեզ վրա.

— Ալլա՜հ... ալլա՜հ...— գլխավերևում շաչում էր նրա սուրը։

Իսկ այստեղ էլ պատշգամբներից կազակների գլխին ինչ-որ մեկը տաշտով կեղտաջուր է թափում։ Դուրս են վազում լակոտներ՝ քարեր շպրտելով քեզ վրա։ Դե ի՞նչ, հարվածե՞լ այդ լակոտին, թե ոչ... Վայրենի հորդան, որ մոռացել էր տանել վաչերը, որոշ ժամանակ եղել է այստեղ, թողնելով ելուզակների ապականությունը. ահա այս քաղաքում էլ, որտեղ հոտավետ նուշը ծաղկում էր ուղղակի աղբանոցներում, կովում էին ռուս մարդիկ։

Դենիսկան դուրս թռավ մի խանութից։ Նրա սրի ծայրից արյուն էր կաթում, ծակ գրպանից թափվում էին թուզն ու կոնֆետները.

— Քաղցր բան ուզեցի,— ասաց նա և նորից խուժեց խառնակովի մեջ՝ թափահարելով երգաշառաչ սուսերը։

Երբ վեր սլացավ ազդանշանային հրթիռը, Կարաբանովը գոռաց.

— Նահանջեցե՛ք, եղբայրներ, ով կենդանի է... Հետ քաշվեք։

Եկավ ժամանակը վճարելու յուրաքանչյուր սաժենի համար։ Վիրավորվածները գոռում էին՝ խնդրելով սպանել իրենց։ Ինչ-որ կպչուն և դառնահամ բան հոսեց Կարաբանովի դեմքի վրայով։ Բուժակ Նենյուկովը սպանվեց նրա աչքերի առաջ, կտոր-կտոր արված, երբ թխսամոր նման վերջին բոպեին իրենով ծածկում էր վիրավորին։

— Անարգ բարբարոսներ,— գոռում էր Տրյոխժոննին, և պորուչիկը տեսավ, որ նա կովում էր լաց լինելով, ծերուկը լաց էր լինում և կոտորում...

Դուրս եկան շատրվանի մոտ։ Սկսեցին հաշել շները։ Թռան-անցան բրուտագործների շարքերի վրայով, ջարդելով կճուճների կույտերը։ Խեցափշուրների մեջ դրամներ և փամփուշտներ էին թափված։ Ո՞ւր է ատրճանակը, հայտնի չէ

Ինչո՞ւ ձեռքումս հրացան է, նույնպես չգիտեմ։ Վիրավորվա՞ծ եմ ես թե ինչ, հետո կհասկանանք...

— Նահանջե՛ք, տղանե՛ր,— հրաման տվեց Կարաբանովը։— Միայն դրանց մոտիկ չթողնեք...

Յունկեր Եվդոկիմովն այդ ժամանակ իր ջոկատը հետ էր քաշում կամրջից։ Ամենադժվար վիճակի մեջ ընկան, երբ սկսեցին անցնել հրեական թաղամասերով, տախտակներից և շիվերից պատրաստված հյուղակների այդ մռայլ կոյանոցով, որտեղ խալաթները թափահարելով վազվզում էին թուրքական սուլթանի սարսափահար շեյլոկները։ Վիրավորները կրակի տակ ընկնում էին և խրվում գոմաղբի ջրիկ շիլայի մեջ։ Նրանք անմիջապես խեղդվում էին, ոչ ոք նույնիսկ չէր փորձում փրկել նրանց.

— Ինչպե՞ս է ջուրը,— հարցրեց յունկեր Եվդոկիմովը։

— Թեկուզ բաղնիք վառիր,— պատասխանեց նրան Պոտյոմկինը,— միայն թե խմել չի կարելի, ճիճուներն արգեն...

Ջորի միջից թուրքերը եփած կուպրի նման նրանց գլխին թափեցին զրնգուն կոտորակներ, որոնք քառատված էին՝ ավելի շատ վերքեր հասցնելու համար։ Վիրավորները շոգեհարված ձիերի նման խռխռացնում էին ցավից, իսկ հրացանային կոտորակները բոով ցանած սիսեռի պես սուրում էին նրանց գլխավերևում։

— Հոգյակս,— ասաց Շտոկվիչը մայոր Պոտրեսովին,— ժամանակն է պաշտպանել կամավորներին։ Թուրքերի գլխին շաղ տվեք մի որևէ ավելի ուժեղ բան, որպեսզի զսպեք նրանց եռանդը։

— Լսո՛ւմ եմ, պարոն պարետ,— պատասխանեց Պոտրեսովը՝ աչքաչափով որոշելով հեռավորությունը։— Ինչքա՞ն շրապնել թույլ կտրվի բաց թողնել, եթե իմ շարժապահեստում մնացել է ընդամենը հարյուր տասնհինգ կրակոց։

— Որոշեք ինքներդ,— թույլ տվեց Շտոկվիչը։ Նա իջավ զինվորների մոտ, պատյանից դուրս քաշեց սուրը։

— Քաջերին հարկավոր է պաշտպանել,— ասաց կապիտանը։— Ո՞վ կգնա ինձ հետ։ Դե, շուտ, ոիսկ արեք...

Այս անգամ ցանկացողները չափազանց շատ էին, և նորից բացվեցին ամրոցի դարպասները։ Սակայն թուրքերն այժմ չէին ննջում. գնդակների և ֆալկոնետային կոտորակների ամբողջ ամպեր վնգվնգոցով ու ֆշշոցով խուժեցին կամարի տակ, կոտորելով ամեն կենդանի բան, և Շտոկվիչը կամավորներին տարավ սպանվածների դիակների վրայով։ Արտագրոհն ավարտվում էր, այն թշնամուն ցույց տվեց կայազորի կենսունակ տոկունությունը։ Ջրով լիքը տիկերը պետք է հագեցնեին մարդկանց ծարավը։ Իսկ թուրքերը, սրընթաց հարձակումից շշմած, նույնիսկ չհանդգնեցին հարձակվել դարպասների վրա։

Թուրքերը որոշեցին վրեժ լուծել իրենց լեռնային թնդանոթների կրակոցով, որոնց տեղափոխեցին ինչ-որ քերծի հետևը, որպեսզի ռուսների պատասխան կրակը չկարողանար անմիջապես գտնել նրանց։

— Ձերդ բարեծնություն,— ասաց Կիրյուխա Պոստնին,— թույլ տվեք բարձրանալ մինարեթի վրա։

Մարտով հափշտակված հրետաձիգը նունիսկ չէր կակազում՝ ամբողջապես լարված, ամբողջապես մտախոհ և ուշադիր։ Պոտրեսովը թողեց նրան բարձրից ուշադիր զննելու նպատակակետը, և զինվորը մութ, ծուռումուռ սանդուղքով արագ բարձրացավ մինարեթի պատշգամբը։ Այստեղ նա ձեռքերով բռնեց փորը և միայն ասաց.

— Օ՜յ... Չլինի թե ինձ էլ, տե՛ր աստված...

Երբ եկան նրա հետևից, Կիրյուխան բերանքսիվայր պառկած էր փոշու և կոտրատված սվաղի բեկորների մեջ, ցավից մատներով կամաց քերծում էր շրշակայքի աղրը և բոլոր հարցերին մի պատասխան տալիս.

— Տե՛ր աստված... Տե՛ր աստված...

Նա ծանր վիրավորված էր փորից։ Եվ բոլորը ափսոսում էին նրան. ո՞վ գիտի, այդ տղան իր հրանոթի կրակով գուցե հարյուրավոր մարդկանց կյանք էր փրկել։

Պոտրեսովը գիշերը նրան տեսության եկավ։ Կրծքի վրայից հանեց խաչը, և այն ամրացրեց Կիրյուխայի վերնաշապկին։

— Շնորհակալությո՛ւն, տղա՛ս,— ասաց նա և, սրբելով վառոդի հոտով տոգորված բեղերը, համբուրեց զինվորի շորացած, տառապա՛նքից կոշտացած շուրթերը։

Ի պատասխան՝ Կիրյուխան բացեց աչքերը, կամացուկ շշնջաց.

— Տե՞ր աստված... Մորս մոտ եմ ուզում... Մեր գյուղն եմ ուզում...

12

Պարսիկները շարունակում էին իրենց աշխատանքը, չհետաքրքրվելով ուրիշ ոչ մի բանով, ոչինչ չպահանջելով։ Նրանց վրանում նույնիսկ գիշերները չէր լռում աղմուկն ու քարերը երկաթով քերելու ձայնը։ Սակայն երբ նրանց ջուր առաջարկեցին, որը ձեռք էին բերել գետի մոտ կատարած արտագորհի ժամանակ, նրանք զզվանքով հրաժարվեցին. այդ օրերին պղտոր-դեղնավուն դարձած ջրի մեջ արդեն ճիճուներ էին երևում...

Սիվիցկին հանձնարարեց այդ ջուրը քամել մառլյայով, թորել ավազով լցված արկղի միջով, հետո խառնել շիր, քացախաթթու, սպիրտ, անուշադիր, ինչ ուզում է լինի, միայն թե այն չխմել եղած վիճակում։ Դա կատարվում էր, իհարկե, հոսպիտալի սահմաններում, բայց պաշարված ամրոցն ուներ իր օրենքները՝ անզուսպ, խելակորույս ծարավի օրենքները, և այդ ջուրը շատերը խմում էին ինչպես որ կար։

— Պարոն պարետ,— դիմեց բժիշկը Շտոկվիչին,— չցանկանալով վախեցնել ձեզ, համենայն դեպս, առաջարկում եմ ստորերկրյա ներքնատանն սկսել եղբայրական մեծ գերեզման փորելը, շուտով շատ մեռելներ կլինեն։ Այստեղ մենք ձեզ հետ անզոր ենք...

Գիշերվա ժամը երեքին մոտ Սիվիցկին վերջապես կարողացավ ուղղել մեջքը և մի կողմ նետել արնաթաթախ կորնցանգը։

— Թյո՞ւ,— ասաց նա,— ձեր այդ արտագրոհով ինձ համար գործ ստեղծեցիք։

Բայց սանիտարները շուտով ներս բերեցին արտագրոհի մասնակից ևս մի զինվորի։ Յաթաղաններով թունդ կտրատված այդ զինվորը հրաշքով էր փրկվել և, սպասելով մութն ընկնելուն, ինքը սողալով հասել էր ամրոց։

— Այ թե տաշել են քեզ, հա՞, եղբա՛յր,— ասաց Սիվիցկին՝ զինվորի մեջքից պոկելով շապիկի կտորտանքը։

Արևելյան ճակատներում իր աշխատանքի ընթացքում կապիտանն առաջին անգամ չէր, որ հանդիպում էր գրեթե ուղիղ և խոր կտրած այդպիսի վերքերի, որոնք հասցվում են դաժանության մոլուցքի մեջ։

Ագլայան չդիմացավ և երեսը շուռ տվեց.

— Ինչ սոսկալի է։

— Իսկ դուք մի կնճռոտվեք,— պատասխանեց Սիվիցկին։— Սարսափելի է միայն նայելը։ Յաթաղանը ռուսական սվինի համեմատությամբ չափազանց թույլ զենք է, և վերքերը շատ շուտ կլավանան։ Իսկ, դու եղբայր,— դիմեց նա զինվորին,— երևում է խուտուտից ծիծաղել ես, երբ քեզ վրա այսպիսի նախշեր են նկարել։

— Ոչ, ձերդ բարեծնություն,— շփոթվեց հերոսը,— եթե խղճով ասեմ, ես մեռած ձևացա։ Այլապես բանս բուրդ էր։ Իսկ մեզ, պառկածներիս,— պատմում էր նա, կնճռոտվելով յոդից,— թուրքերը կաղամբի նման կտրատում էին, միայն աղ չէին դնում տակառում։ Բասուրմանը կարծես չի էլ զայրանում, բայց հենց այնպես, կոտորում է հա կոտորում, քանի դեռ բոլորին չի կտրել պլախտայի[1] նման։

— Դա նրանք կարողանում են, ո՛չ հաց տուր, ո՛չ ջուր, միայն թե կոտորեն,— ասաց Սիվիցկին՝ մաքրելով վերքերը։— Իսկ դու քո կամքո՞վ գնացիր պատերազմ, թե՞ տարել են։

— Ինչպես չէ, ձերդ բարեծնություն։ Մենք յասնոպոլյանցիներ ենք, Տուլայի նահանգի մեջ ենք մտնում։ Մեր աղա կոմս Տոլստոյը, որքան էլ խաղաղ մարդ էր, բայց նույնիսկ Սերբիա էր ուզում գնալ։ «Ամբողջ Ռուսաստանը, ասում էր, հիմա այնտեղ է, դե ուրեմն ես էլ պետք է տառապեմ...»։

— Յավո՞ւմ է,— հարցրեց Սիվիցկին։

— Այնքան էլ չէ... Արդեն ընտելացել եմ։

Սիվիցկին վերցրեց վիրահատական ասեղը, զինվորին կարգադրեց շուռ գալ.

—Հանգիստ պառկիր։ Ես հիմա հետևդ այնպես կկարկատեմ, որ պատերազմից տուն գնաս, կինդ չի իմանա։

[1] Պլախտա — կտորեղենի մի տեսակ Ուկրաինայում։

Զինվորի սուր թիակները թեթև դողում էին։

— Օ՜յ, մի ծիծաղեցրեք ինձ, ձերդ բարեծնություն։ Հենց ծիծաղում եմ, [illegible]ում է...

Կիտաևսկին մոտեցավ սեղանին.

— Ալեքսանդր Բորիսովիչ, ես կավարտեմ զինվորի վիրահատությունը, իսկ դուք անցեք Պացևիչի մոտ, նա վատ է զգում... Թվում է...

— Ի՞նչ է ձեզ թվում։

— Վերջ, կարծես...

Սիվիցկին սկզբից անցավ իր խցիկը, փնտրեց-գտավ գլանակի մնացորդը և ժլատությամբ մինչև վերջ ծծեց այն։ Ինչ կա որ, նրանց միջև ծառայության գծով կարող էին ընդհարումներ լինել, նրանք կարող էին չսիրել մեկը մյուսին, բայց հիմա, որպես բժիշկ, նա ամեն ինչ արեց գնդապետի կյանքը փրկելու համար։

Այո՜, գնդապետը մեռնում էր։

— Դուք որևէ բան ուզո՞ւմ եք,— հարցրեց նրան Սիվիցկին։

— Ո՜չ,— պարզորոշ պատասխանեց Պացևիչը։— Ես հիմա լավ եմ... Ես արդեն մոտ եմ ճշմարտությանը։

— Բայց ես Պիղատոսը չեմ, իսկ դուք էլ՝ Քրիստոսը,— ժպտաց բժիշկը։

— Ես... Արժանի եմ ատելության,— ասաց Պացևիչը։— Այդպես չէ՞։

— Ես ատելություն չունեմ այն մարդկանց նկատմամբ, որոնց բուժում եմ,— պատասխանեց Ալեքսանդր Բորիսովիչը և հոգատարությամբ ուղղեց գնդապետի վրայի վերմակը։

Պացևիչը լռեց՝ աչքերը փակ ժպտալով։

— Դուք,— անսպասելիորեն հարցրեց նա,— երբևէ եղե՞լ եք Վոլինում։

— Եղել եմ։ Այո՜, եղել։

— Ուրեմն դուք գիտեք... այս բանը.

Հոսիր, Վիսլա, հոսիր
Լեհական երկրով,
Եվ մինչև վերջ հոսիր...

— Այո՜, ես հիշում եմ,— ասաց բժիշկը,— «Լեհաստանը մեջքը չի ծռի...»։ Ես հիշում եմ, դեռ երիտասարդ էի, թեև այն ժամանակ համազգեստը ինձ վրա նստում էր պարկի նման։ Եվ ես հիշում եմ ձեթի ճրագները փողոցներում, պարերը նեղ սրճարաններում և երիտասարդ լեհուհիների երգերը... Այդ ամենը եղել է վաղուց, և այն ժամանակ ես սիրահարված էի։ Երևի կյանքումս միակ անգամ։

Նա սեղմեց Պացևիչի ծանր ձեռքը և թողեց նրան։

Մահը արևածագին պահակ էր կանգնել գնդապետի սնարի մոտ, արագացնելով ժամանակի ընթացքը։ Դեռ վաղ ժամ էր, և դիշերվա ընթացքում չհովացած ամրոցը հանդիսավոր լռում էր։ Ադամ Պլատոնովիչը ցանկացավ տեսնել իր սպաներին, և նրանք, դեռ քնաթաթախ, կեղտոտ, ժանտախտով հիվանդ, հավաքվեցին մեռնողի շուրջը, հանեցին գլխարկները։

— Դուք է՞լ, Նեկրասով,— զարմացավ Պացևիչը։

— Ես էլ...

Արևի առաջին ճառագայթները լուսավորեցին անկյունների սարդոստյանը։ Ինչ-որ տեղ, պատուհանի հետևում, ուրախանալով օրվա գալուստից, ճռվողեց մի թռչուն։

— Ահա և վերջ,— ասաց Պացևիչը։

Սպաները գլուխները կախեցին։ Վատնինը դոտկատեղից արձակեց տափաշիշը, մոտեցրեց գնդապետի շրթունքներին.

— Ձերդ բարձր բարեծնություն, խմեք ճանապարհվելուց առաջ...

— Հարկավոր չէ,— նրա ձեռքը հեռացրեց գնդապետը։— Ճիճուներ կան։

— Դա ջուր չէ, ձերդ բարձր բարեծնություն։ Ես այստեղ մի քիչ ձեռք եմ բերել ծանոթության կարգով։ Խմե՛ք տակի մնացածը։

Ադամ Պլատոնովիչը խմեց եգիպտացորենի արաղը, պարզորոշ ասաց.

— Շնորհակալություն, հարյուրապետ, դու բարի մարդ ես։ Եվ դու հասկացար ինձ... Երբ սկսեք ընտրել իմ իրերը, որևէ բան վերցրու քեզ որպես հիշատակ։

Շտոկվիչը լայն հորանջեց՝ ափով փակելով բերանը.

— Դուք մեր սպայական ժողովին որևէ հանձնարարություն չունե՞ք արդյոք, պարոն գնդապետ։ Մեր մեջ կաթոլիկներ չկան, և կտակը կազմելու համար կարելի է հրավիրել հույն հոգևորականին։

Պացևիչը վերմակի վրայից ձեռքով նշան արեց, որ պետք չէ։

— Պարոնայք,— կամացուկ ասաց նա և բաց արեց աչքերը, որոնք նայում էին սպաներին արդեն այն աշխարհից։— Պարոնայք, ես կանչել եմ ձեզ, որպեսզի ասեմ իմ վերջին խոսքը... Ես գիտեմ, որ ձեզ համար ես սիրելի մարդ չեմ եղել, սակայն խնդրում եմ իմ հոգու վրայից հանեք մեղքը... Հավատացե՛ք, ամրոցը հանձնելու մտադրության մեջ ես մեղավոր չեմ։ Ո՛չ, մեղավոր չեմ...

— Է, շատ լավ,— ասաց Վատնինը։— Հիմա դա ձեր ինչի՞ն է պետք։

Պացևիչը շարունակեց՝ հանգիստ և պարզ.

— Ինձ թվում էր, որ ես կարող եմ փրկել կայազորը։ Մի մեղադրեք ինձ, ես արդեն պատժված եմ... Կարող է պատահել, որ իմ կործանման մեջ էլ հենց ձեր փրկությունն էր։ Չգիտեմ.. Ես գիտեմ միայն մի բան՝ մեղավոր չեմ և չեմ ցանկանում մեռնել մեղավորի վիճակում։ Դուք ինձ չեք կարող հանդիմանել նաև վախկոտության մեջ։ Այդ դեպքում ես չէի բարձրանա բերդապարսպի վրա, որտեղ վիրավորեցին ինձ... Չէ որ կամարի տակ ապահով էր... Եվ ներեցեք, պարոնայք, եթե ես նեղացրել եմ ձեզանից որևէ մեկին...

Կարաբանովը կծեց շրթունքը, շոշափեց երեկ ջարդված գլուխը։

— Կկորչես,— հանկարծ հստակորեն ասաց նրան գնդապետը։

— Ե՞ս։

Ադամ Պլատոնովիչը երեսը շուռ տվեց.

— Ինձ չհամբուրեք, պարոնայք։ Եվ մնաք բարով։ Մնաք բարով ընդմիշտ։ Եվ վերջ...

Նա այլևս ոչ մի բառ չասաց և շուտով անցավ հավիտենության գիրկը։ Նրա կյանքի վերջին դրսևորումը եղավ խոր և տխուր հառաչանքը։ Շտոկվիչը նրա ձեռքերը ծալեց կրծքին։

Ձեռքի մեծ մատներով ըստ սովորության փակեց մեռելի աչքերը։

— Մեռելները չենք կուտակի,— մռայլորեն ազդարարեց կապիտանը սպաներին։— Այդ պատճառով էլ նրան կթաղենք հենց այսօր...

Նկուղից հանեցին մի դագաղ, հենց այն տիպային դագաղը, որն արժեր տասներեք ռուբլի քառասուներկու կոպեկ։ Պացևիչին դրեցին այդ դագաղի մեջ, նոր համազգեստ հագցրին, գլխի տակ դրեցին զինվորական շինելի փաթեթապանը։

— Ո՞ւմ հայտնել,— հարցրեց Պոտրեսովը։

— Հանգուցյալը կարծեմ իր հարազատներից ոչ մեկի հետ նամակագրություն չի ունեցել,— պատասխանեց Շտոկվիչը։— Թող հարազատները նրա մահվան մասին հետո իմանան լրագրային ռազմազեկույցներից։

— Գուցե հանգուցյալը խնայողություններ ունի։

Շտոկվիչը դառնությամբ պատասխանեց.

— Դժբախտաբար ոչ մի խնայողություն չի հայտնաբերված։

Գերեզմանի վրա համազարկ տվեցին, բայց դրոշները ամրոցի վրայից չիջեցրին, որպեսզի շփոթության մեջ չգցեին թուրքերին։

— Ցրվե՛լ,— հրամայեց Շտոկվիչը, և գնդապետ Պացևիչի մասին գործը հանձնվեց արխիվ։

Վերադառնանք Պացևիչին ևս մեկ անգամ, որպեսզի այդ մարդու կերպարը նկարագրենք մինչև վերջ։

Իհարկե, մահը գնդապետին փրկեց հետագա խայտառակությունից, եթե ոչ զինվորական դատարանի, ապա ամբողջ Ռուսաստանի հասարակայնության առջև։ Գնդապետը բացարձակապես անկեղծ էր ամրոցը թշնամուն հանձնելու իր մտադրության մեջ։ Սակայն նա հավասարապես անկեղծ էր և իր մահվան օրը, երբ ասում էր սպաներին, որ ամրոցը հանձնելու մտադրության մեջ ինքը մեղավոր չէր։ Այստեղ մենք չպետք է զարմանանք այդպիսի անհարիրությունից։ Պացևիչի վարմունքը միշտ եղել է հակասություններով լի

Այդպես էլ այս դեպքում. ցանկանալով ամրոցը թշնամու ոգորմածությանը հանձնելու միջոցով փրկել կայազորի մարդկանց կյանքը, Ադամ Պլատոնովիչը բոլորովին հաշվի չէր առել այն հանգամանքը, որ իր բարի մտադրությունները կհասցնեին ռուսական կայազորի գլխովին ոչնչացմանը։

Ելնելով դրանից (և հավանաբար, միայն դրանից), որոշ պատմաբաններ, ծափահարելով Շտոկվիչին (որը, նշենք, նույնպես կողմնակից էր ամրոցը թշնամուն հանձնելուն), Պացևիչին ուղղակի անվանում են մի վատ բառով՝ դ ա վ ա ճ ա ն։

Մենք չենք ցանկանում պաշտպանել Պացևիչին, որի ոսկորները վաղուց արդեն փտել են Բայազետի բերդի տակ, սակայն հանուն արդարության անհրաժեշտ ենք համարում հանդես գալ այն մարդկանց պիտակներ կպցնելու դեմ, որոնք չեն կարող արդարանալ։ Պացևիչը, իհարկե, երբեք դավաճան չի եղել։ Ուրիշ բան է, որ նա անտանելի էր իր ապաշնորհ ինքնավստահության, ռուսական զինվորին և 1877 թ. ամռանը Արարատյան տոթակեզ հովիտներում ծագած բարդ իրադրությունը լիովին չհասկանալու մեջ...

Թվում է, թե այդ ամենի մեջ կար մի ոչ պակաս կարևոր պատճառ ևս, որը Պացևիչին բազմիցս հասցնում էր ոչ մի վերլուծման չենթարկվող արարքների։ Մենք այստեղ խոսում ենք Պացևիչի հարբեցողության մասին, և հետազոտողներից մեկը չափազանց մոտիկ է ճշմարտությանը, երբ գնդապետի մասին այսպիսի կարծիք է հայտնում. «... արարքների անտրամաբանականությունը ակամայից հարկադրում է ասել այն թուլության մասին, որն ուներ Պացևիչը և որը խանգարում էր նրան ո ղ ջ ա մ տ ո ր ե ն նայելու իր շուրջը կատարվող իրադարձություններին...»։

Դրանով էլ մենք ավարտենք գնդապետ Պացևիչի հետ կապված բոլոր աշխարհիկ գործերը, իսկ ինչ վերաբերում է հոգևոր գործերին, ապա մենք չենք փորձի կտրել Հոմի պապի հացը, որի տնօրինության տակ էլ հիմա գտնվում է մեր հերոս Ադամ Պլատոնովիչի հոգին։

Անտանելի կայազորը

Հունիսը անձրևոտ էր։ Խանիկովը բարևում է, նա փեսացու է և օժիտ է վերցնում մերձմոսկովյան ամառանոցը։ Հարսնացուն է Ռ. Նադինան, դու նրան գիտես։ Բորնովոլոկովը և իշխանուհին նույնպես բարևում են։ Շտոֆրեգենը ասում է, որ ռազմագետներում հանդիպել է քո անվանը։ Մենք խմեցինք քո կենացը։ Գնչուները հիմա գտնվում են «միեերաշկայում», Ի. Իգլերի մոտ։ Դեղագործական փողոցի վրայի «Շատոդե-Ֆլերում» կանկան է պարում քո Անյուտա Ռիզոլբոշը։ Մարիլդան Բորգեգի մոտ արդեն չի պարում։ Յուսուպովը թողել է նրան։ Վերջերս Յուզեֆովիչի մոտ նրան մատուցեցին ոսկե սկուտեղի վրա, բոլորովին մերկ։ Ես նրան հիշեցրի քո մասին։ Նա դեռ չի մոռացել և նույնիսկ մի հիշ լաց եղավ։ Իսկ մազուրկա հիմա արդեն չեն պարում, գտնելով, որ այն չափից ավելի ուրախ է պատերազմական ժամանակի համար...

Ս. Պետերբուրգից Կարաբանովին

1

Պացևիչի մնացած թղթերը ջոկելու համար սպաները վիճակ հանելով ընտրեցին երկու հոգու՝ Վատնինին և Կլյուգենաուին։ Եսաուլը ինժեների հետ առավոտից երկար նստեցին սենյակում՝ ոչ ոքի չթողնելով իրենց մոտ։ Ինչ-որ հարկավոր էր, վերցնում էին, իսկ ամբողջ խլամը տեղնուտեղն այրում բուխարիկում։

— Լրտեսների հաշվետվությունները բոլորովին բացակայում են,— նկատեց բծախնդիր Կլյուգենաուն։

— Սատանան դրանց հետ,— ասաց Վատնինը,— շարունակիր գործդ...

Կեղտոտ սպիտակեղենի և դատարկ շշերի մեջ թաղված ճամպրուկի միջից քանդեցին հանեցին և գեներալ Բեզակի կանաչավուն գրքույկը, որն արդեն առասպելական էր դարձել։ Պացևիչը չէր ստում, պարզվեց, որ գրքույկի կազմը իսկապես կանաչ գույնի էր, ըստ որում նրա տիտղոսաթղթերի վրա նույնիսկ կար հենց իր՝ հեղինակի ընծայագիրը. «Պան Պացևիչին՝ ի նշան այն ստերլետի[1] հիշատակի, որ կերանք 1869 թ. օգոստոսի 23-ին Բուզուլուկ կայարանում՝ նորին բարձր գերազանցության սենատոր Կ. Ի. Վլախոպուլովի ներկայությամբ։ Հյուրասիրության համար երախտապարտ հեղինակ»։

Վատնինը վերցրեց գրքույկը.

— Չկարդա՞լ, հը՞։ Հանգուցյալը շատ էր գովում...

Կլյուգենաուն քիչ էր մնում ճչար. նրա ձեռքն ընկավ Թիֆլիսից ստացված հրամանը փոխգնդապետ Իսմայիլ խան Նախիջևանսկուն գնդապետի կոչում տալու մասին։ Հրամանը թվագրված էր վաղուցվա թվով, բայց արդեն Խվոշչինսկուն կայազորի հրամանատարի պաշտոնից հեռացնելուց հետո։ Եվ պետք էր ենթադրել, որ Պացևիչը, բավականաչափ համոզված լինելով խանի տկարամտության մեջ, ուղղակի որոշել էր հրամանը «մահուդի տակ» կոխել։

— Ի՞նչ անել,— շփոթվեց բարոնը։

Վատնինը աչքերով ցույց տվեց բուխարիկում բորբոքված կրակը, և դա Կլյուգենաուին հիշեցրեց նման մի դեպք

[1] Ստերլետ — չուքա (ձուկ Կասպից ծովում)։

Ջմեռային պալատում, 1796 թ. նոյեմբերի 16-ի գիշերը, երբ կանցլեր Բեզբորոդկոն, նույն ձևով, միայն աչքերով, ցույց տվեց Պավելին՝ ինչ անել այն թղթերը, որոնք կարող են վտանգավոր լինել...

— Լավ է վառվում,— ասաց Վատնինը։— Կարծես դժոխքում։

Ձեռքն ընկավ «գաղտնի» մակագրությամբ մի համեստ թղթապանակ։

— Սպասի՛ր, սպասի՛ր... Սա ո՞ւմ ձեռագիրը կարող է լինել։

— Իսկ ի՞նչ կա այդտեղ,— անտարբեր հարցրեց Վատնինը։

Կլյուգենաուն անմիջապես մի տեսակ սմքեց, և հանկարծ նրա լեզվից դուրս թռավ այնպիսի հայհոյանք, որը չես լսի անգամ հարբած կազակից.

— Դա պրապորշչիկ Լատիշևն է... Ափսոս, որ մեռածների մասին ընդունված չէ վատ բան ասել։

— Ախր ի՞նչ կա այդտեղ,— զարմացավ Վատնինը։— Գոնե բացատրիր...

Դա շտաբս-կապիտան Նեկրասովի նկատմամբ քաղաքական լրտեսություն սահմանելու դոսյեն էր. թղթապանակը պահպանում էր նրա ելույթներն ու արարքները հսկողության տակ պահելու հետքերը, փաստաթղթերում հիշատակվում էր գնդապետ Վասիլև-Բեշենցևը՝ ամբողջ կովկասյան օկրուգի ժանդարմական վարչության պետը։

Վատնինը քրտնեց և նույնիսկ վախեցավ։

— Դու կամաց, կամաց,— ասաց նա։— Սա էլ գցիր այնտեղ, գնդապետի հետևից... Տեսնում ես, ինչ կլյաուզային գործ է։ Իսկ ես էլ այդ ստորին դեռ տաքացնում էի ինձ մոտ, գլուխն էի շոյում։

— Այդպես չի կարելի,— պատասխանեց բարոնը՝ ծածկելով թղթապանակը։— Այս բոլորը հարկավոր է ծածուկ տալ Յուրի Տիմոֆեևիչին, որպեսզի այդ Վասիլև-Բեշենցևը բոլորովին անակնկալ չհայտնվի նրա կյանքում։

Երբ բավականաչափ մթնել էր, Վատնինը այցելեց Նեկրասովին։

— Իսկ ես նույնիսկ չգիտեի,— ասաց հարյուրապետը,—

որ քո մասին ղեկավարությունը գրքեր է գրում... Հրեն, կարդա։

Նեկրասովը կարդաց դռսյեում կարված մի քանի մատնագրեր և առանձնապես չվշտացավ։

— Կեղտոտություն է, իհարկե,— ասաց նա։— Սակայն ես արդեն ընտելացել եմ այն բանին, որ իմ պարտեզը երբեմն օտար դնչեր են մտնում։

Վատնինը սրտանց խորհուրդ տվեց.

— Ես, իհարկե, չգիտեմ ինչպես են քո գործերը։ Միայն կասեմ, Յուրի Տիմոֆեևիչ, դու թող այդ ամենը... Իշխանությունը, ինչպիսին էլ լինի, իշխանություն է, և հակառակվել նրան չես կարող, կոկորդդ կկտրեն։ Եվ իմ աղջկա հետ նույնպես հաճախ վիճում էի...

Նեկրասովը ձեռքով խփեց հարյուրապետի ծնկին.

— Թանկագին Նազար Մինաևիչ, շնորհակալություն։ Եվ այն բանի համար, որ ինձ փրկում եք նեղ տեղից, և... սրտից բխող բարի խորհրդի համար։ Բայց չարժե այդ թեմայի շուրջը վիճել ինձ հետ։ Եթե, համենայն դեպս, ուզում եք իմանալ ճշմարտությունը, ապա ես ինքս էլ պատրաստ եմ կրծելու նրանց կոկորդը։

Վատնինը խորհրդածեց՝ ինչո՞վ կարող է օգնել այդ լավ մարդուն։ Բայց հարցը նրա համար չափազանց բարդ էր, և նա որոշեց, որ դա իր խելքի բանը չէ։

— Լավ, Տիմոֆեևիչ, դու մի՛ բարկացիր, որ խառնվում եմ քո գործին։ Ավելի լավ է ես գնամ։ Հանգստացիր խաղաղությամբ...

Նա գավիթ դուրս եկավ և կտրուկ շուռ եկավ գեպի ստորերկրյա սրահները, որտեղից նրա ուշադրությունը գրավեց ինչ-որ աղմուկ։ Ինչպես պարզվեց, Եգորիչը գնացել էր ջրի, բայց ջուր չէր ճարել և ամրոց էր քարշ տվել բերանը խծուծ կոխած մի գերու, որ հագել էր մուսուլմանական կիսալուսնի ժապավենով Թուրքական համազգեստ։

— Սա ի՞նչ սագ է,— մոտեցավ Վատնինը։

— Դե, հրեն,— բացատրեց Եգորիչը,— օծանելիքի հոտ է գալիս, ոնց որ անառակ կին լինի։ Իսկ նրա տափաշշում եղած գինին վատն է։ Աստված չտա ջորուն տաս խմի, քացի կտա անգամ նահանգապետին։

— Կանգնեցրու նրան,— հրամայեց Վատնինը և ձեռքը հետ տարավ։

Կազակը գերուն ոտքի կանգնեցրեց, և եսաուլը, լավ չտարբերելով խաչերի և կիսալուսինների խորհրդանշանները, տեղնուտեղը հասցրեց օտարականի ատամներին։ Եվ այնպես հաջող ստացվեց, որ թռչելով մի անկյուն, հանկարծ սկսեց հորանջել, կարծես արդեն երեկոն վրա է հասել, իսկ անկողինն էլ վաղուց պատրաստ է։

— Ման են գալիս այստեղ,— մոթմոթաց Վատնինը,— ամեն ոք... Օդը փչացնում։

Պատահաբար վրա հասավ Կարաբանովը. վառեց լուցկին։

— Դա թուրքական սուլթանի կարմիր խաչն է։ Իսկ նա ինքը, ավելի շուտ, լուսավորյալ ծովագնաց է... Լսեք, սը՛ր,— հարցրեց պորուչիկը գերուն,— ի՞նչն է ձեզ բերել այստեղ։

«Staffort-Hause» ընկերության ներկայացուցիչը նայեց ստորերկրյա մռայլ կամարներին, որի պատերի վրա վազվզում էին լպրծուն նեպուկները, երկար ժամանակ հայացքը հառեց Կարաբանովի նիհար ու մազակալած դեմքին։

— Դուք սխալվել եք,— պատասխանեց նա անգլերեն,— ես ընդամենը մի դիտորդ եմ, որ ուղարկված եմ այստեղ լոնդոնյան թերթերից մեկի խմբագրության կողմից... Օգնեք ինձ բարձրանալու։

Կարաբանովը ձեռքը տվեց նրան.

— Ուրեմն, դուք անգլիացի՞ եք։

— Ո՛չ, ես ֆրանսիացի եմ։

Ստուգեցին փաստաթղթերով՝ Համբուրգի բնակիչ էր։

— Դու ջուր մի պղտորիր,— և Վատնինը բռունցք ցույց տվեց։

Այդ սպառնալիքի տակ ստիպված եղավ խոստովանել կեղծիքը։

— Գիտեք ինչ, ես... իսպանացի եմ,— պատասխանեց հանկարծ գերմանացին ռուսերեն, բայց ինչ-որ առոգանությամբ։— Ծնվել եմ Կրակովում, երկար ժամանակ ապրել Վիբորգում, որից հետո գնացել եմ կռվելու Մեքսիկայում։

— Իսկ դա որտե՞ղ է,— հարցրեց Վատնինը, դուրս քաշելով ատրճանակը, և ազդու կերպով չխկացրեց հրահանը։

Գերին ընկավ ծնկների վրա։

— Ես ասացի ճշմարտությունը,— ճչաց նա Կարաբանովին։— Պահպանեք իմ կյանքը, և ես խոստանում եմ գցել այս համազգեստը։ Ես այսօր ևթ կմեկնեմ Եգիպտոս, որտեղ ինձ սպասում է հարսնացուս Ալժիրի հրեաների մի հարուստ ընտանիքից։

Կարաբանովը բռնեց եսաուլի ձեռքի ատրճանակը։

— Ներեցեք,— ասաց նա,— բայց ես այդպես էլ չհասկացա, ի՞նչ ազգության պիտի պատկանեն ձեր երեխաները։

— Հավանաբար հույն, քանի որ իմ քույրը ամուսնացած է ֆանարիոտի[1] հետ և ինձ կանչում է հարսանիքից հետո ապրելու Աթենքում։

— Իսկ դա որտե՞ղ է,— հարցրեց Վատնինը։

— Դա արդեն Հունաստանում է, հարյուրապետ,— բացատրեց Կարաբանովը։— Ինչպես երևում է բոլորովին խճճվել է այդ տղան։ Սատանան նրա հետ, մենք նրա ծախու կաշվից տրեխ չենք կարի.. թող ուզի՝ ուր ուզում է։ Ես գնում եմ քնելու...

Կարաբանովը գնաց, և տիեզերքի մարդը, որի գլխավերևում փոթորկվել են այդքան դրոշներ, արագ ծլկեց որմնանցքի միջով՝ աճապարանքով թաքնվելով գիշերվա մթության մեջ։ Եգորիչը, որ մինչև այդ պահ լռում էր, հրացանով նշան բռնեց նրա սարսափից կորացած մեջքին, և կրակոցի արձագանքը մոլորվեց ստորերկրյա ներքնատանը։

— Ի՞նչ է, իզո՞ւր եմ ես նրան քարշ տվել այստեղ,— ասաց կազակը, և Վատնինը նրա հետ համաձայնեց։

— Այդպես երևի ճիշտ կլինի...— ասաց նա։

Եսաուլը գնաց իր խցիկը, վառեց ճրագը։

Ճտքակոշիկները չհանեց, ոտքերի տակ դրեց ձիու սթաբը։ Հին մահճակալը սկսեց ճռճռալ նրա մարմնի ծանրության տակ։

— Մի քիչ կարդանք...

Ձեռքը գցեց, իսկ գրքույկն արդեն չկար. երևում է՝ արդեն ծխում են գարշելի արարածները։ Վատնինը հայհոյելով բարձրացավ բերդապարսպի վրա։ Անկյունի թույլ լուսավորված կազեմատում երևում էր ինչ-որ մեկի գլանակի կրակը։

— Դո՞ւ ես, Դենիսկա,— հարցրեց Վատնինը։

— Ես եմ, հարյուրապետ...

Վատնինը կազակի ատամների արանքից դուրս քաշեց սիգարը։ Ծխախոտը թափեց, բաց արեց վառված թուղթը։ Կարդաց՝ «...աչքերով նայիր ուրախ, պատասխանիր աշխույժ...» Շուռ տվեց թուղթը մյուս կողմից՝ «...ոտքդ պինդ դիր, կրունկներին չափսոսալով...»։

Վատնինը թուղթը կոխեց Դենիսկայի քիթը.

— Այն գրքո՞ւյկն է։

— Մեղքս ինչ թաքցնեմ,— խոստովանեց կազակը։— Ծխախոտը փաթաթելու բան չկար։ Իսկ կազմը չենք ծխել։ Ահա, ձերդ բարեծնություն, կանաչավուն է։

Վատնինը գրքի կազմով թրխկացրեց Դենիսկայի գլխին.

— Բայց ինչքան... անհանգիստն ես դո՞ւ։

...պաշարման տասնմեկերորդ օրն է։ Քարվանսարայի սև պատուհանի հետևում գեռում էր բարբարոսությամբ և շահամոլությամբ խոցոտված, ստուկներով ու տիրակալներով, շեռով ու մուրացկաններով բնակեցված ավազակարջը։ Բայազետը գտնվում էր Ռուսաստանի, Պարսկաստանի, Թուրքիայի սահմանային տարանցիկ ուղիների խաչավորման տեղում, և այդ կոյանոցին, յուրահանչյուր խլրտման ժամանակ, միախառնվում էին երեք պետությունների եղկալի տականքները։ Ռուսաստանը այստեղ ազատվել էր Շամիլի ելուզակների վիժվածքներից, արաբների և նաղիրների ոճրագործությունները Արարատյան դաշտավայր էին թափել աղանդավորական գժտությունների զզվելի ֆանատիզմը։ Ինչպես գիշերվանոցային ճիճուներ, այդ ամբողջ աղտեղությունը վխտում էր Բարձր Դռան վերջնականապես նեխող դիակի վրա, և այլևս մի հարցրեք, թե որտեղից է ծագում ժանտախտը։ Անա այդպիսի հետնախորշերից էլ նա սողալով տարածվում է քարավանների հետ, որպեսզի այնուհետև նավերով սփռվի Եվրոպայով մեկ։

Ռուսները վերջերս նորից ցույց տվեցին իրենց խիզախությունը՝ կատարելով հանդուգն արտագրոհ, որից Ֆուիկ փաշան. ինչպես հայտնի է դարձել, երկար ժամանակ ընկել է ուշագնացության՝ «զուլմաթի» մեջ, որը նման է եղել լեթարգիայի՝ այլանճնությամբ ականջներից ու քթից։ Մենք չենք ուզում հեղություն պատճառել մեր ուրախ լրագրի ընթերցողներին այն խոշտանգումների նկարագրությամբ, երբ թուրքերը դաշտնեռ ռուսական հերոսների մեջքից կաշվի շրջանակներ էին կտրում, կտրկտոր էին անում այն վիրավորներին, որոնք թեքերի վրա ունեին ոսկյա հեծանակներ՝ գերազանց հրազգության համար։ Ո՛չ, պարոնա՛յք, մի կողմ հետաքրքրասիրությունից վեպերը։ Մենք արդեն չենք հավատում

[1] Ֆանարիոտ — հույն հոգևորական կամ հարուստ մարդ, որ ապրում է օսմանյան Թուրքիայում։

Եղեմին՝ այդ կրոնական հասարակաց տանը, որտեղ մուտք գործելու համար վճարում են մարդկային գլուխներով, ինչպես չեմ հավատում նաև սմանշելի հուրի-փերիների՝ այլանի այդ անշահախնդիր պառնիկների, երբին-պանուսագեղ զգվանքներին, այլան՝ հանուն որի Թուրքիան վայրենազույն ոճրագործություններ է կատարում...

Ֆրանսիական ութ լրագրերի ճարպիկ թղթակից Շառլ Դելաֆոնը, որին յուրաքանչյուր տողի համար վճարում էին մեկ ֆրանկ, գրիչը մի կողմ գցեց և վեր կացավ։

— Ձանձրացել եմ գրել այդ մասին,— ասաց նա։— Արևելքը նման է ճոխ կազմով վատ գրքի։ Ռուսները մեզանից ավելի համարձակ դուրս եկան. այս պատերազմի ազնիվ սայրով նրանք կտրում են այն վերջին էջերը, որոնց վրա ամբողջ աշխարհը սարսափով փակում էր աչքերը։

Շառլ Դելաֆոնը սառցարանից հանեց թափանցիկ սառույցի մի բարակ շերտ, խրթխրթացնելով կրծեց առողջ ատամներով։

— Բուդրին դարձյալ չափչփո՞ւմ է ամրոցի պարիսպների մոտ,— հարցրեց նա։

— Ես չգիտեմ՝ նա որտեղ է չափչփում, բայց գիտեմ մի ուրիշ բան՝ ծառայելով մամուլին, չի կարելի միաժամանակ և լրտես լինել,— պատասխանեց նրան շիկավուն մորուքով Դիեգո Խուարեցը՝ իսպանացի նկարիչ, հռետոր, լրագրող, գարիբալդիական ու դեմոկրատ, անցյալում թեյակիր կլիպերի նավաստի։

Միսսիս Ուորենը, որի սաղարթի մեջ «բուկլ դ'ամուրները, չնայած դժոխային շոգին, պահպանվում էին խիստ կարգին վիճակում, որոշեց պաշտպանել կոմս դե Բուդրին.

— Այդ խեղճը այնքան շատ է կորցրել թուրքական ոսկու լիգատուրայի վրա, որ Ֆուիկ փաշայի օգտին փոքրիկ հետաքրքրասիրությունը լիովին ներելի է։ Ինչպես կամենում եք, պարոնայք, բայց ես ամբողջովին թուրքերի կողմն եմ, որոնց սահմանադրություն է նվիրվել, իսկ ռուսները շարունակում են մնալ բարբարոսներ։ Նրանք նվաճողներ են մնում, ինչպես շամպինիոնները գոմաղբի տակ. Գուրկոների, Սերնյաևների և Սկոբելևների բոնապարտիզմը սպառնում է Արևելքի հնագույն կուլտուրային, և լորդ Գլադստոնը, իհարկե, չգիտեր, թե ինչի կհասցնեն «Բուլղարական սարսափները...» մասին նրա պամֆլետները...

— Դա ճիշտ է, միսիս,— մռայլորեն համաձայնեց Դիեգո Խուարեցը,— նրանք սահմանադրություն չունեն։ Եվ ժողովրդի հոգին չի կախված կառավարման ձևից։ Թող որ նրանք անգլիացիներից ավելի քիչ են կրթված, բայց դրա փոխարեն ռուս զինվորները չեն պատռում երեխաների փոքրերը, ինչպես դա անում են սուլթանի նորաստեղծ սահմանադրության հովանու տակ ապրող թուրքերը։

— Դուք հակված եք պարադոքսների,— նկատեց միսիս Ուորենը։

— Ավելի շուտ ճշմարտության,— եզրափակեց նկարիչը։

Ներս մտավ եվրոպական գաղութի ևս մեկ անդամ՝ մեծագլուխ մի անգլիացի, որը ծառայում էր Կարմիր կիսալուսնի լազարեթում որպես բժիշկ։ Ափով շփելով վարդագույն ճաղատը՝ բժիշկն իր համար ռոմ լցրեց։

— Թույլ տվեք ինձ, միսիս Ուորեն, այս անգամ խմել իմ ռուս կոլեգաների կենացը, որոնք հիմա նստած են ամրոցում։ Ես հաճախ մտածում եմ, որ նրանց դժվարությունները պատկերացնել նույնքան բարդ է, որքան իմ ճաղատությունից որոշել, թե ինչպիսին եմ եղել ես երիտասարդ ժամանակ՝ թխահե՞ր, թե շիկահեր։

Նա նստեց սեղանի մոտ, մի կում գինի խմեց։

— Թուրք բժիշկները,— ասաց նա,— զարմանալի են... Իմ օգնականներից մեկը էրզրումում դարբնոց էր պահում, իսկ մյուսը զբաղվում էր մաքսանենգությամբ։ Սահմանադրության ժառանգությունը առկա է. նրանց «ընտրել են» էսկուլապների պաշտոնում, և կարող եք լսել, թե ինչպես է հիմա նրանց դանակի տակ ճչում մի ինչ-որ ուղղահավատ...

2

Շտոկվիչը մորտուսների հետ շրջագայեց ամրոցի ծակուծուկերը. վերցրին չորս մեռել, որոնցից մեկը գերեզման տանելու ճանապարհին հանկարծ խոսեց.

— Եղբայրնե՛ր, օ՜յ, թողեք ինձ... պետք չէ ինձ տանել, եղբայրնե՛ր...

— Սպասիր,— Շտոկվիչը հարություն առած զինվորին հենեց պատին։— Կարո՞ղ ես կանգնել, փշրված,— հարցրեց նա։

— Կարող եմ,— պատասխանեց զինվորը։— Զորությունից է դա, ներող եղեք գլխացավանքի համար։ Սկզբից աչքերիս մեջ անընդհատ շրջանակներ հա շրջանակներ երևացին, իսկ հետո հողը ոտքերիս տակից գվվոցով գնաց։ Սկսեցի գլոտալ։ Ոչինչ չեմ հիշում...

Շտոկվիչը զինվորի շրթունքներին մոտեցրեց տափաշիշը.

— Մի կում... Սպասիր, խոլերա, ո՞ւր ես լակում։ Ատամներդ բաց թող... Այ թե ծծակի վրա ես պրծել։ Այժմ կորիր գրողի ծոցը...

Կապիտանը շրջվեց դեպի իրենց պարտականություններից բթացած մորտուսները, մոմլաթապատ թիկնոցներով այդ դևերը, որոնցից քլորի հոտ էր փչում։

— Իսկ դրանք,— ցույց տվեց նա դիակները,— տարեք և անմիջապես թաղեք։ Վրան քլորակիր լցրեք, որպեսզի ոչ մի վարակ չտարածվի...

Նա իր մոտ կանչեց Կլյուգենաուին.

— Լսեք, բարոն, դուք այնքան առատաձեռն եք տիկին Խվոշչինսկայայի նկատմամբ, որ ես խորհուրդ եմ տալիս ձեզ նախապես տեղ փնտրել ձեր գերեզմանի համար։ Ասում են, որ դուք նրան եք տալիս ձեր ջուրը, ձեր շաքարը... Ես հասկանում եմ ձեզ, դուք ազնիվ մարդ եք։ Բայց կիսեք մեկ անգամ, կիսեք երկրորդ անգամ։ Հո չեք կործանելու ինքներդ ձեզ...

— Դուք ինձ ինչո՞ւ եք կանչել,— հարցրեց Կլյուգենաուն։

Շտոկվիչը նայեց ինժեներին և նրա դեմքի արտահայտությունից հասկացավ, որ կպավ հենց այն լարին, որը երգում է սիրո մասին։

— Ներեցեք ինձ, բարոն,— ասաց Եֆրեմ Իվանովիչը,— Կարծեմ, դա իմ գործը չէ... Իսկ ես ձեզ կանչել եմ, որպեսզի խորհրդակցեմ։ Եվ ահա ինչի մասին... Իմ հրամանը՝ ջրի համար արտագրոհներ կատարելու կարգի մասին, հազիվ թե կատարվի. դուք ինքներդ եք հասկանում, մարդիկ խմել են ուզում, իսկ իմ հրամանի վրա նրանք նույնիսկ թքելու բան էլ չունեն։ Թաքուն կերպով ամրոց ջուր բերելը շարունակվում է, չնայած սարսափելի կորուստներին։ Մարդկանց պարաններով իջեցնում են բերդապարիսպներից։ Գետի մոտ են խցկվում բոլոր անցքերից։ Ցուրաքանչյուրն ուզում է ունենալ իր մի բաժակ լաֆիտը... Ուրեմն այսպես, բարոն, հարկավոր է ինչ-որ բան մտածել, որպեսզի մարդկանց խնայենք արտագրոհների ժամանակ։

Կլյուգենաուն վեր ձգեց իր կճատ քիթը, ուժեղ փռշտաց.

— Փոշին շատ է,— նկատեց նա, խնամքով բաց անելով հսկայական թաշկինակը՝ Եվրոպայի աշխարհագրական քարտեզը վրան դաջած (այդպիսի թաշկինակներ այն ժամանակ թողարկվում էին աղքատ ճանապարհորդների համար)։— Կարելի է մտածել, գուցե որևէ բան ստացվի,— ավելացրեց բարոնը՝ խնչելով Գերմանիայի մեջ...

Սերթուկը հանելով՝ բարոնը սակրավոր զինվորների հետ ամբողջ գիշեր հող էր քանդում ամրաշինական կարճ բահերով։ Թուրքական կայազորում ինչ-որ անհասկանալի տեղաշարժ էր նկատվում, լապտերային լույսերի ցրոնները, ինչպես խոտերի մեջ բռով ցանած լուսատտիկներ, շարժվում էին հեռվում, և ամրոց էր հասնում բազմաձայն աղմուկը՝ ձիերի վրնջոցը, անիվների ճռճռոցն ու գոմեշների մռնչյունը։ Հետո լուսաբացից շատ առաջ պաշարման օղակն ավելի սեղմվեց Բայազետի շուրջը, ճարճատեցին ֆալկոնետներն ու հրացանները, սակրավորները ստիպված եղան շտապ թողնել խրամատը։

Ինչպես երևում էր, Շտոկվիչն այդ գիշեր բոլորովին չէր պառկել քնելու. նրա դեմքը ճմռթված էր ու գորշ, ուռած ու հաստ այտերը կախվել էին համազգեստի կոշտ օձիքի վրա։

— Ի՞նչ է պատահել,— հարցրեց նա Կլյուգենաուին։

— Ինչ-որ տագնապ է,— պատասխանեց պրապորշչիկը։— Թուրքերն ուղեկալները տեղաշարժում են դեպի ամրոց, մոտակա խրճիթներից հարվածում են կոտորակներով։ Սպասեք։ Կարող է լուսադեմին հանդարտվեն...

Այդ գիշեր ջուրը ամրոցի ներսը հոսեց բարակ, խղճուկ շիթով, բայց դրա փոխարեն քիչ մարդկային արյուն չթափվեց այդ ջրի համար։ Խուսափելով որմնանցքերի մոտ կանգնած ժամապահներից՝ կամավորները (ավելի հաճախ լազակները կամ հրետանավորները) պարաններով իջնում էին բերդի պարիսպներից, և հազվադեպ երջանիկներն էին միայն կարողանում հետ վերադառնալ։ Բայց չէ որ կայազորում կային նաև այնպիսի մարդիկ, որոնց չէր բավականացնում

վտանգի դիմելու համարձակությունը, և այդ մարդիկ բոլորովին ջուր չունեին՝ մեկ, երկու, կամ նույնիսկ ամբողջ երեք օր։

Նրանցից ոմանք աղերսում էին իրենց տալ թեկուզ մի կաթիլ։

— Դե տուր, երբայր, միայն լեզուս թրջեմ... Աստված վկա, չեմ խմի, միայն կլիզեմ...

Մյուսները մռայլ նստած էին կազեմատներում։ Ոմանք կամացուկ լալիս էին։ Մի քանի օր արդեն ջուր չտեսած մարդկանց մեջ ժամանակի ընթացքում այնպիսի խիզախություն էր հայտնվում, որ հասնում էր խելագարության։ Ծարավից բթացման նոպայի մեջ նրանք երբեմն պոկվում էին բերդի պարիսպներից, և նրանց համար արդեն գոյություն չունեին ո՛չ գնդակներ, ո՛չ յաթաղաններ, նրանք տեսնում էին միայն ջուր, որ ուզում էին խմել հա խմել...

Շտոկվիչը մատներով սեղմեց Կլյուգենաուի ուսը, շշնջաց.

— Էլի հինգ մարդ... Մի գիշերվա մեջ։ Հասկացա՞ք։

Ֆյոդոր Պետրովիչը լռելյայն գլխով արեց, և պարետն ավելացրեց.

— Այլևս այդպես չի կարելի։ Արտագրոհի գնալու համար հարկավոր է հավաքել ցանկացողներին, որպեսզի ջուր ճարեն։

Խումբը կազմվեց արագ։ Շտոկվիչը նրանց միջից դուրս հանեց հրետանու մի ենթասպայի և եֆրեյտոր Ուչաստկինին։

— Գնա այստեղից,— ասաց կապիտանը,— դու շարքային չես։

— Ձերդ բարեծնություն, թույլ տվեք։

— Թույլ չեմ տա։ Առանց այն էլ բոլոր ունտերներն շարքից դուրս են եկել։

— Ստացվում է, որ ունտերները խմել չե՞ն կարող։

— Ուրիշները կբերեն, կխմես։

— Այո՛, նրանք կբերեն։ Դույլի տակը։ Սպասիր մինչև բերեն...

Լուսանում էր։ Շտոկվիչը հեռադիտակով դիտում էր շրջակայքը։

— Կարծես խաղաղ է,— ասաց նա։— Կարելի է շարժվել...

Պատահական գնդակների սուլոցի ներքո կամավորներն իջան գետի մոտ։ Նախանձից շլացած հարյուրավոր աչքեր դիտում էին, թե ինչպես նրանք սկզբից լալ խմեցին, հետո ջուրը լցրին տիկերն ու սափորները։ Պոտյոմկինը խրատ էր տալիս երիտասարդ մի զինվորի.

— Սափորը թեքիր, որ չբխկբխկացնի...

Սակայն այդ գիշեր թուրքերը հատկապես զգաստ էին. հազիվ էին կամավորները շարժվել գետի մոտից, երբ մոտակա ավերակներից և փոսերից նրանց խփեցին համազարկերով։ Երիտասարդ մի զինվոր, որը սափորը ձեռքին քայլում էր Պոտյոմկինի առջևից, գնդակոծված գլխով գլորվեց քարերի վրայով, և նրա հետևից թափվեցին ջարդված սափորի խեցեփշուրները։

— Օ՛յ-օ՛յ,— ասաց Պոտյոմկինը, և ինչ-որ մեկը հրեց նրան հետևից.

— Քո հերթն է։— Դա Դենիսկա Օժոգինն էր։ Պոտյոմկինը հետ նայելով՝ նրան թողեց առաջ անցնի.

— Ինքդ արշավիր, իսկ ես հիմար չեմ...

Այս անգամ Դենիսկան կասկածելիորեն երկար էր խաչակնքում, չափ ու ձև անում առաջ նետվելու։

— Օգնիր տիկը վեր բարձրացնելու,— խնդրեց նա և կիպ կռանալով գետնի վրա, ասես պպզուկի պարելով, գնդակների ոռնոցի տակ անհետացավ հյուղակների արանքում։

— Բախտ ունի սատանան,— նախանձեց նրան մեկ ուրիշ, ավելի տարիքավոր կազակ, մի աչքը շորով կապած, և հասցրեց միայն մի քանի քայլ առաջ վազել։

— Տեղնուտեղը,— սկսեց շնչել ինչ-որ մեկը Պոտյոմկինի ծոծրակին։— Մի կողմ շարժվիր, քեռի, այժմ ես փորձեմ բախտս...

Պոտյոմկինը, հնազանդվելով նախազգացմանը, դուրս ցատկեց լեռնագոգից։ Այդ պահին նրա գլխավերևում մի բան այնպես ճայթեց, որ նրա ուսին դրված սափորը ջարդուփշուր եղավ։ Շապիկը և վարտիքը անմիջապես կպան մարմնից, իսկ բերդից նրան գոռում էին.

— Ջո՛ւրը։ Ջո՛ւրը չգցե՛ս... Տիկը հետդ վերցրու...

Պառկած էր աչքը կապած կազակը՝ երեխայի նման կրծքին սեղմած ջրով լի տիկը։ Պոտյոմկինը վազելով տիկը թափով ձգեց դեպի իրեն, շտվեց։ Ձգեց երկրորդ անգամ, մեռելը պահում էր։

— Քաշի՛ր, քաշի՛ր,— գոռում էին բերդապարիսպներից։

Այդ պահին արդեն գնդակներին էլ չէր նայում, սուլում են, թող սուլեն։

— Դե բաց թող վերջապես,— բղավեց Պոտյոմկինը, և մեռելը արձակեց մատները, որոնք սարսափելի ուժով սեղմել էին թանկագին բեռը։

Մեկ-երկու, մեկ-երկու, Պոտյոմկինը ոչ թե քայլեր, այլ ամբողջ սաժեններ էր չափում գետնի վրա՝ թռչելով բարձունքն ի վեր, և նա Դենիսկա Օժոգինից հետո եղավ ջուր բերող երկրորդ երջանիկ մարդը, երկրորդը և վերջինը։

Բերդապարիսպներից իզուր բղավում էին.

— Վազի՛ր, վազի՛ր... Ջուրը մի՛ գցիր... Ա՜խ, ընկավ... սողալով շարժվի՛ր, եղբայր... Գոնե մի կերպ։

Կամավորներից ուրիշ ոչ ոք չվերադարձավ ամրոց, և կապիտան Շտոկվիչը կարգադրեց ջրով լցված տիկերը հոսպիտալ տանել։

Դժգոհության աղմուկ բարձրացավ։

— Ահա և կուշտ խմեցի,— ասաց եֆրեյտոր Ուշաստկինը։

— Լռություն,— գոռգոռացող զինվորներին հրամայաբար լռեցրեց Եֆրեմ Իվանովիչը։— Ով ցանկանում է ջուր բերել, թող գնա...

Եվ ոչ ոք չգնաց, իհարկե, բացի մի հիմար ձիավարից։ Այդ ձիավարի ազգանունը Սինյուխին էր, անունը՝ Իվան, իսկ հայրանունը Պետրովիչ. ինքը քաղքենիների դասից էր, Լիպեցկ քաղաքից, որտեղ նրա հայրը կառապանային փոխադրամիջոցներ էր պահում։

Նրա մասին ավելին ոչինչ չգիտենք, իմանալ էլ պետք չէ։

Թող նստեր տեղում, գլուխը դուրս չհաներ...

Պաշարված Բայազետին օգնության գնացող իր ջոկատի զորակացքի համար Կալբուլայ խանը ընտրեց Ջինգիլի լեռների գագաթները, որտեղից մարդկանց առջև բացվում էր լայն հարթավայր, որի խորքում, ինչ-որ տեղ, տոթակեզ մշուշի մեջ, թաքնված էր Բայազետը։

Սպասում էին։

— Ի՞նչ ենք սպասում,— տաքանում էին սպաները։

Պարզվում է, որ խանը պարենի համար մարդ էր ուղարկել Իգդիր։

Պարենը բերեցին։ Զորաջոկատին միացավ և միլիցիայի՝ վաթսուն մարդուց բաղկացած գումակային պահակախումբը։

— Գնացինք,— հրամայեց Կալբուլայ խանը։

Ուրախացան, որ կարելի է գնալ։ Լրտեսները հաղորդեցին Բայազետի կայազորի անօրինակ տառապանքների մասին։ Սակայն հասան մինչև թուրքերի կողմից թողած Ղարաբուլաղ գյուղը և նորից կանգ առան։

Դարձյալ սպասեցին։

— Ինչո՞ւ ենք սպասում,— հարցնում էին սպաները։

Պարզվում էր, որ այդպես է որոշված՝ սպասել մինչև Ալեքսանդրապոլի մոտից օգնության հասնի հեծելազորային ջոկատը՝ Կարսի ռազմաճակատի հրամանատարի հարազատ եղբայր, գեներալ-մայոր Լորիս Մելիքովի հրամանատարությամբ։

Սպասում էին, սպասում...

— Ջոկատը չկա,— ասում էին սպաները,— հարկավոր է գնալ առանց նրա։

Երկու երիտասարդ յունկերներ գնացել էին լեռները թարմանալու։ Սրարշավ հետ վերադարձան, ուրախ-ուրախ ճչալով.

— Գալիս է, գալիս... Գալի՞-ի՞ս է՞, պարոնայք։

— Ի՞նչն է գալիս։

— Փոշին է գալիս։

Ստուգեցին. հեռադիտակներով լավ երևում էր, թե ինչպես Բայազետի ուղղությամբ, քուլա-քուլա բարձրանալով և մայրամուտի ծիրանագույն լույսից գույներ արձակելով, տափաստանային հովտի միջով դանդաղ շարժվում էր փոշու շերտը։

— Ահա և Լորիս-Մելիքովը,— ուրախացան սպաները։— Նույնիսկ եկել մեզնից անցել է, այնքան շտապեցնում է իր հեծելազորին։

Կալբուլայ խանն իր շարասյունը նույնպես շարժեց Բայազետի կողմը, և դա թուրքերին հայտնի դարձավ գիշերվա կեսին։ Հենց այդ ժամանակ էլ քաղաքում սկսվեցին թուրքերի տարօրինակ տեղաշարժերը, որը նկատել էր Կլյու-

դեմառուն։ Մոտեցող օգնության մասին ամրոցում ոչինչ չգիտեին և բոլորովին չէին հասկանում, թե ինչ է կատարվում քաղաքում։ Առավոտյան ժամը ութին մոտ հնչեց ազդանշանային շեփորների աղաղակը, և սկսվեց ամրոցի ռմբակոծությունը...

Ռմբագնդերից մեկը թափով խփեց ուղիղ հրետասայլի անիվին՝ մանր տաշեղներով ցիրուցան անելով չոր փայտեղենը, և անդրադարձ թռիչք կատարեց, որպիսին Պոտրեսովը դեռ երբեք չէր տեսել իր կյանքում։ Գունդն սկսեց ուղղաձիգ վեր բարձրանալ, արագ փոքրանալով չափսերում, հետո ոռնոցով սկսեց իջնել անկման նույն կետի վրա։ Պոտրեսովը ժամանակին մի կողմ ցատկեց, ինչ-որ մի տաք բան հարվածեց նրա մեջքին, և մայորը երեսնիվայր խրվեց հողի մեջ։

Շուրջը միանգամից ճիչեր լսվեցին։

— Մայորը սպանվեց... եղբայրներ, մեր ծերուկը։

Պոտրեսովը վեր կացավ, ծիծաղելով թափ տվեց ձեռքերը,

— Ո՛չ, ո՛չ, միայն աքացի ստացա քամակիս... Նոր անիվ բերեք, հրետասայլը պիտի բարձրացնենք...

Քաղաքում ահեղ թնդում էին թմբուկները, ճղճղաձայն ոռնում շեփորները, շարունակվում էր թուրքական և քրդական վաշկախմբերի տեղաշարժը։ Բերդապարիսպների վրայից լավ երևում էր, թե Վանի ճանապարհով ինչպես քշումտանում էին անասունների նախիրները, քարշ էին գալիս սայլերին լծված ուղտերի և գոմեշների երկար քարավանները, կանայք ու երեխաները քայլում էին անորոշ ուղղությամբ։

Ծերունի Խրենովն սկսեց խաչակնքել.

— Չլինի՞ թե թուրքը զղջացել է, գնում է աղոթելու...

Վատնինը, ուղղելով լայն ռունգները, կանգնել էր բերդապարսպի հենց եզրին՝ ուշադիր դիտելով քաղաքի անսովոր իրարանցումը։ Եսաուլի շուրջը դժժում էին թուրքական գնդակները, և Տրյոխժոննին գոռաց.

— Իջի՛ր ցած, հարյուրապետ։ Կրակում են...

— Ես ինքս էլ տեսնում եմ,— պատասխանեց Վատնինը,— բայց ալարում եմ իջնել։

— Բայց չէ՞ որ գնդակներով են կրակում։

— Իհարկե, ոչ վարունգներով...— եսաուլը մինչև վերջ

հանգիստ դիտեց թշնամու բանակում տեղի ունեցող խառնաշփոթության այդ տեսարանը, իջավ կազեմատ։— Դե, կաղալնե՛ր։ Մի տակառ գինի եմ դնում, եթե սխալվեմ... Բայց ամեն ինչից երևում է, որ թուրքերի մեջ մեծ տագնապ է։ Հավանաբար օգնություն է գալիս...

Ամրոցի գնդակոծումն անսպասելիորեն դադարեց, և սանիտարները մորտուսների հետ միասին, ըստ կանոնի, հերթական զոհերին տարան իրենց տեղերը. վիրավորներին վիրակապելու, սպանվածներին՝ թաղելու։ Մոտենում էր կեսօրը, շոգն ուժեղանում էր, քարերը կրակ էին շնչում։ Հողը ճաքճքում էր արևի ճառագայթների տակ, և մարդիկ զարմանում էին պարսիկների վրա։

— Ա՜յ քեզ ժողովո՜ւրդ։ Բզզացնում են իրենց համար, և նույնիսկ խմելու ջուր չեն խնդրում։

Կարաբանովը բակում հանդիպեց Շտոկվիչին, որը հայհոյում էր ձիավարներին։

— Երևակայեք,— ասաց նա պորուչիկին,— բոլորովին երես են առել... Քնել են և չեն լսել, թե ինչպես են իրենց ձին մորթել։ Թրխկացրել են հենց վզերակին և, իհարկե, արյունը խմել։ Ես ներս մտա, տեսնեմ ձին ընկած է, ոնց որ փալաս։

Կարաբանովը՝ ձեռքը մոտեցնելով գլխարկին, պատվի առավ.

— Այսօր ի՞նչ կարգադրություններ ունեք։

— Միայն մի կարգադրություն՝ դիմանալ։

— Կաշխատեմ, կապիտան...

Նա շրջվեց, որպեսզի գնա իր հարյուրյակի մոտ, և այդ պահին, երկար ու հանդիսավոր, բղավեցին մինարեթից.

— Մե-երո՜-ո՜նք... գալի՜-ի՜ս են...

3

Նեղ անցումներում հրմշտելով իրար, երջանկությունից ծիծաղելով ու լաց լինելով՝ Բայազետի պաշտպանները նետվեցին հյուսիսային հրակնատների մոտ, որպեսզի նայեն, գոնե մի աչքով տեսնեն։

— Մերոնք, եղբայրներ, մերոնք գալիս են...

Վատնինը գրկեց քահանային.

— Տեր հայր, մերոնք են, սիրտս զգում էր։

Տեր Գերասիմը կոպիտ ու բորբոքված հայհոյեց.

— Չեմ հավատում... Դա միայն սատանայական տեսիլք է, որպիսին լինում է անապատներում։ Դուք բոլորդ զառանցում եք։

Եվ զինվոր Պոտյոմկինը նույնպես կշտամբում էր.

— Քյալլագյոզներ եք դուք։ Հա՛ էլի՛, ուրախացա՛ք... Ոնց կարող են մերոնք լինել։ Տեր-Ղուկասովը, ինքներդ գիտեք, հայերին տարել է լեռները...

Իսմայիլ խանը նորից երևաց բակի մեջ իր զարաբաղին նստած, և նյարդայնացած հովատակը, տաքանալով, պոչի տակից փութկոտությամբ կոլոլակներ էր դուրս գլորում։ Շտոկվիչը պատռում էր փողհարի օձիքը։

— Նվագի՛ր,— բղավում էր նա,— շեփորի՛ր ցայգանվագը։

Փողհարը հուզմունքից չէր կարողանում շունչ քաշել.

— ... մա...մա... հի...մա... Օ՛յ, չեմ կարող։

Պարետը մոլուցքի մեջ սկսեց ցնցել նրան տանձի ծառի պես։

— Նվագի՛ր, գարշանք... Ազդանշան զարկիր։

Կյլուգենաուն փողհարի ձեռքից վերցրեց շեփորը.

— Թողե՛ք տղային։ Մի ժամանակ ես ֆլեյտա վատ չէի նվագում...

Բարոնը շեփորը մոտեցրեց շրթունքներին, և մարդկանց գլխավերևում, ճեղքելով անցնելով բերդապարիսպների վրայից, համազարկերի միջից տարածվեց բերկրալի ցայգանվագը։

— Այդպե՞ս է պետք,— հարցրեց Կյլուգենաուն՝ վերադարձնելով շեփորը։

— Շատ լավ է, ձերդ բարեծնություն։ Հենց այդպես։

Անցավ որոշ ժամանակ, և ահա լեռների հետևից, լողանցելով թշնամու բանակի պոչավոր բունչուկների և քրդական ուղեկալների վրայով, վերադարձավ և պատասխան ցայգանվագը։

Այլևս կասկածներ չկային։

— Մերոնք են,— ասաց Պոտյոմկինը։

Եվ քահանան լաց եղավ.

— Տե՛ր իմ, մեղավոր եմ ես... ինչքան հուլիներ կործանեցի...

Իսկ հրակնատների և պատուհանների մոտով անհնարին էր անցնել։ Կարաբանովը, նստելով ինչ-որ մեկի ուսերին, զննում էր հեռավոր լեռնաճյուղերը, որոնց վրայով, փոշու և դղրդյունի մեջ, իջնում էր ռուսական զորաջոկատի շարասյունը։ Ինչ-որ մեկը ուղիղ նրա ոտքերի արանքից խցկվեց պատուհանի մոտ։ Սակայն թուրքերն ուշքի եկան, և կողքին կանգնած տղան հետ թռավ՝ ձեռքերով բռնելով այլանդակված դեմքը։

— Վա՛յ, մայրի՛կ... վա՛յ, դժբախտությո՛ւն։

Սակայն ուրախությունն ուրախություն էր, և ոչինչ չէր կարող փչացնել այն։

— Ի՞նչ եք կարծում,— աչքերը փայլեցնելով՝ յունկեր Եվդոկիմովը հարցրեց պարետին,— ինչքա՞ն ժամանակ է պետք նրանց, որ ամրոց հասնեն։

— Կարծում եմ մի ժամից նրանք այստեղ կլինեն։

— Ուրեմն եկեք բացենք դարպասները։ Գնանք դիմավորելու։

— Զգեք ձեր գոտին,— պատասխանեց Շտոկվիչը։— Ո՞ւր են ձեր ուսադիրները, յունկե՛ր։ Եթե կարելու բան չունեք, ապա դրանք բռնեք ատամներով... Եվ հիմարություններ դուրս մի՛ տվեք. ձեզ կսկսեն խփել ա՛յ այստեղից, և այն ժամանակ կերածդ վոդկը քթիցդ դուրս կգա։

Տեսնելով ռուսների մոտեցումը՝ թուրքերը հոծ խմբերով արագ կուտակվում էին և, հեռվից փայլեցնելով զենքերը, շտապում մարտին ընդառաջ։ Ամեն կողմից արշավում էին հեծյալները, կիրճերի միջից լսվում էր քրդական նվագախմբերի աղմուկը, ռազմախումբ ռազմախմբի հետևից ստվարանում էր հին ռեդուտի մոտ։ Ֆուլիկ փաշան պատրաստվում էր տալ գլխավոր ճակատամարտը։

— Շատ լավ է,— ասաց Պոտրեսովը Շտոկվիչին։— Հուլիսի վեցից սկսած մենք դեռ ավելի հաջող նշանակետ չենք տեսել... Արկեր քիչ ունենք, բայց կփորձենք։

— Ո՞ւր, մայոր։

— Հազար երեք հարյուր սաժեն,— պատասխանեց Պոտ-

բեսովը։— Կհարվածենք ուղիղ ռեդուտին և միաժամանակ կստուգենք՝ արդյոք փուլ չի՞ գա շենքի տանիքը։

Շտոկվիչն ափերը փողաձև բերանին դրեց և գոռաց հրաձգության դղրդյունի մեջ.

— Քառորդ դույլ եմ դնում,— խոստացավ նա։

— Ռեդուտի՛ն, ռեդուտի՛ն,— լսվեցին ձայներ։

— Լսո՞ւմ եք,— կրկնեց Շտոկվիչը,— քառորդ դո՞ւյլ։

— Ծղբայրնե՛ր, ուրախության առիթով մի լավ կհարբենք։

Շտոկվիչն ուրախ քրքջաց.

— Հիմարներ, քառորդ դույլ... ջուր և ոչ թե օղի։

Պոտրեսովը բարձրացավ սանդուղքներով։ Մտավ սենյակ, որտեղ ցածր հրետասայլի վրա ցցված էր թնդանոթը։ Գլորելով մոտեցրին արկերը, բոլոր դեպքերում, փարտոցով մաքրեցին փողը և լցրին։

— Է՛խ, Կիրյուխա Պոստնին չկա,— սաստիկ ափսոսաց ենթասպան։

— Նշան բռնել,— պատասխանեց մայորը, և ինչ-որ մեկը դիպավ նրա արմունկին։— Հեռացեք, բարոն, հեռացեք այստեղից։

Կլյուգենաուն օգնեց տեղաշարժել հենոցը.

— Ինձ պետք չէ հեռացնել։ Կընկնենք միասին...

— Պատրաստ է,— գոռաց ենթասպան։

— Հե՛տ քաշվիր...— Պոտրեսովը դեն նետեց գլխարկը, մանր ու արագ խաչակնքեց թնդանոթի առատամը։— Կարելի է,— ասաց,— կրակի՛ր...

Կրակոցի ծխի մեջ, արգելակման կեռերով հատակի տախտակամածը ծռելով, օրորվելով հետ քաշվեց թնդանոթի առատամը։ Վառոդի գարշահոտության մեջ սկսեցին նշմարվել հրետաձիգների դեմքերը, ինչ-որ մի բան ճաքեց, ինչ-որ մի բան երերաց։ Սակայն շինությունը դիմացավ, և թնդանոթը կամաց թշշալով արդեն կլանում էր երկրորդ լիցքը։

— Կարծես նշանին խփեցինք,— ասաց ենթասպան։

— Կրակի՛ր,— պատասխանեց Պոտրեսովը, և հին ռեդուտի վրա նորից կրակ ու ծուխ բարձրացավ. թուրքերի բազմությունը թավալգլոր հետ քաշվեց։

Կլյուգենաուն վազեց ներքև, նայեց, թե գերաններն ինչպես են կանգնած հատակի տակ, և վերադարձավ գոհ։

— Ճթճթում են, բայց կպահեն,— ասաց նա։— Կյանքում առաջին անգամ հաշվարկների մեջ ռիսկի դիմեցի և հաճույք զգացի...

Շտոկվիչը հոսպիտալում այցելեց Սիվիցկին, վերջինս առանց վիճելու քառորդ դույլ քամած ջուր լցրեց, քանզի այսօր բոլորն արդեն հույս ունեին թողնել ամրոցը։ Գարեն ը չալարեց իր ձեռքով ջուրը բերել հրետանավորների մոտ, և այն տեղնուտեղը խմեցին՝ շղադարեցնելով հրաձգությունը։

— Հենց նոր միայն Իսմայիլ խանը, ի դեմս սպիտակ ձիավորի ճանաչեց իր եղբորը,— պատմեց Շտոկվիչը մայորին։— Դուք, մայոր, պատահաբար չխփեք խանի ազգականին, թե չէ, ինքներդ գիտեք, Ռուսաստանը աղքատ է գեներալներով...

Թուրքերի պլանների մեջ չէր մտնում ռուսական զորքերին թույլ տալ մտնելու քաղաքի փողոցները, և այդ պատճառով էլ թշնամական զորքերի երկար շարքերը, որ ցիրուցան էին լինում ռումբերի պայթյուններից, հենց նույն պահին էլ միանում էին, որպեսզի դեռ քաղաքի մատույցներում կտրեին Կալբուլայ խանի զորաջոկատի ճանապարհը։

— Իսկ թուրքերը շատ են,— նկատեց Սիվիցկին։

— Այո՛,— համաձայնեց Կիտանևսկին,— թուրքերը քիչ չեն, իսկ մեր զորքերն էլ, չգիտես ինչու, շատ չեն։ Եվ ահա ես մտածում եմ...

Գնդակը չրխկալով կպավ պատուհանի շրջանակին, և Սիվիցկին հետ քաշվեց։

— Գիտեմ դուք ինչ կարող եք մտածել,— ասաց նա,— իզուր չէ՞ր արդյոք, որ մենք հրետանավորներին քառորդ դույլ ջուր տվեցինք։ Եթե ուզում եք իմանալ իմ կարծիքը, ապա ես կասեմ ազնվորեն՝ իզուր։

— Դուք չե՞ք հավատում,— հարցրեց Ագլայան։

— Աղավնյակս, եթե դա ճիշտ է, որ Իսմայիլ խանը, ի դեմս շարասյան հրամանատարի, ճանաչել է իր գեներալ եղբորը, ապա... չէ՞ որ դուք ինքներդ էլ հասկանում եք՝ եղբայրներն այն պատճառով են եղբայրներ, որ չափազանց նման են մեկը մյուսին։

— Իսկ ես հավատում եմ,— ասաց կինը։— Նրանք չեն

կարող չիմանալ, թե ինչ է կատարվում այստեղ, և նրանք ճեղքելով կանցնեն դեպի ամրոցի դարպասները։

— Կարող է,— տխուր պատասխանեց Սիվիցկին։— Հավանաբար պատահում է և այնպես, որ մի ճյուղից երկու տարբեր համի խնձորներ են լինում։ Սակայն չշեղվենք գործից, պարոնա՛յք...

Կալբուլայ խան Նախիջևանսկու նոր ժամանած զորաջոկատը ընդհարման մեջ մտավ Ֆուիկ փաշայի զորքերի հետ, և թունդ հրաձգությունը, որին աջակցում էին ամրոցից, տևեց մի ամբողջ օր, շարունակվեց երեկոյան, և ահա Բայազետի վրա նստեց ասիական սև գիշերը։

Վհատություն երևաց։

— Ինչ արած,— ասաց Կարաբանովը,— նրանց նույնիսկ չի կարելի մեղադրել։ Եթե նրանք հանդգնեին անգամ պատերի և հյուղակների այդ սարսափելի լաբիրինթոսի միջով թափանցել մեզ մոտ, նրանցից քանի՞ հոգի կհասնեին... պարոնայք, մենք մեր փորձով գիտենք դա, երբ հետախուզությունից հետո ներս էինք քաշվում ամրոց։

— Այո՛,— մոթմոթաց Շտոկվիչը,— մի հարյուր մարդ կհասներ։

— Ավելի պակաս։ Մի հիսուն մարդ։

— Ոչ ոք չէր հասնի, պարոնայք,— խոսակցությունը ավարտեց շտաբս-կապիտան Նեկրասովը, և անվճռական առարկություններից հետո ստիպված եղան համաձայնել նրա հետ։

— Այստեղ բանակ է պետք,— ասաց յունկեր Եվդոկիմովը։

— Կամ էլ զորավար,— խայթեց բարոն Կլյուգենաուն։

Եվ դանդաղ ծորաց գիշերը։

— Մեզ կփրկեն այստեղից,— ասում էին զինվորները։— Երևում է օգնության ոչ բոլոր ուժերն էին հավաքվել։ Սպասենք մինչև առավոտ, համբերենք...

Այդ գիշեր հնարավոր չէր քնել։ Փրկությունը մոտիկ էր, և ուրախալի էր գիտակցել, որ խավարի մեջ հիմա կանգնած էր ռուսական զորքը։ Ամրոցում հնչում էր ծիծաղը, մարդիկ ոկսել էին կատակի տալ իրենց աղետները։

Վատնինը երազում էր.

— Առաջին հերթին, եղբայրներ, բաղնիս կգնանք։ Շիկահերներին թափ կտանք մեր այլևայլությունների միջից, մազերս կկնդենք, կշոգեհարվենք։

— Իսկ ես անմիջապես մեյդան կգնամ,— գլուխ գովեց Դենիսկան։— Մի երկու հատ ձմերուկ կգողանամ, ստվերում կնստեմ ու կխժռեմ, անգամ կաթեպը չի մնա։

Վախմիստր Տյոխժոննին պատենցնում էր մտրակը։

— Ես այդպես չեմ անի,— ասաց նա,— ես աղայական կերակուրներ կփորձեմ։ Ոչ մի կոպեկ տուն չեմ ուղարկի, բոլորը կծախսեմ քաղցր ուտելիքների վրա։

— Ա՛յ թե հիմարն ես։ Մի՞թե մեր հացից, այն էլ աղի հետ, ավելի քաղցր բան կա։ Ա՛յ, ինձ տային բոքոնի կողը, եղբայրներ...

— Բա որ վարունգ էլ լիներ,— երազներին անձնատուր եղավ Վատնինը։

Կարաբանովը լռում էր՝ բարակ շրթունքներով ժպտալով։ Դենիսկան գլանակը ծխեց մինչև կեսը, հետո պարզեց պորուչիկին.

— Ձեր հերթն է, ձերդ բարեծնություն։

— Շնորհակալություն, եղբայր։

— Ասում են,— նորից սկսեց Տրյոխժոննին,— իբր կա մի դրախտային միրգ, որ անանաս է կոչվում։ Ա՛յ, պարո՛ն պորուչիկ, դուք ազնվական ծագում ունեք, այդպիսի բան կհրե՞լ եք։

Անդրեյն ուզեց պպզել անկյունում, բայց նրան պահեցին.

— Չի կարելի, այստեղ վարակով է ապականված...

Կարաբանովը թափահարեց ձեռքը.

— Կերել եմ, կերել, ես ձեր «դրախտային միրգը»... Մի ժամանակ Պետերբուրգում կար այնպիսի մի ընկերություն, որտեղ հավաքվում էին շատակերները։ Ձեզ նման չէին, իհարկե, փողերը քամուն էին տալիս։ Ես մի ձվածեղ հնարեցի, որի մի թավան արժեր ինը ռուբլի, և նույնպես ընդունվեցի այդ ընկերության մեջ։ Այն ամենը, ինչ ուտելի է աշխարհում, բոլորը փորձել ենք։ Ո՛չ ծովերի խորությունը, ո՛չ լեռների բարձրությունը, ոչինչ չէր խանգարում. ինչ ուտելիք ասես պատվիրում էինք։ Եվ վերջապես վրա հասավ այն-

պիսի մի պահ, երբ մենք հանկարծ հասկացանք, որ այլևս ուտելու ոչինչ չկա։ Բոլորովին ոչինչ։

— Ինչպե՞ս թե,— չհասկացավ Դենիսկան։— Խժռել եք, խժռել, և հանկարծ ոչինչ չկա՞ր։

— Հենց այդպես, ամեն ինչ արդեն համտես էինք արել։ Եվ այդ ժամանակ, եղբայրներ, ինչ-որ մեկը մեզանից գլխի ընկավ, որ մենք չենք տեսել կնկա կաթի համը...

Կազակները բոնկումով սկսեցին հռհռալ, քիչ էր մնում ատամները բերանից դուրս թռչեին.

— Հա՜-հա՜-հա՜... Այ քեզ ախորժանք։ Ուղղակի ծիծիկից...

— Եվ մեզ համար, եղբայրներ, անչափ մեծ գումարներով կանացի կաթի սերից պաղպաղակ պատրաստեցին։ Մենք, իհարկե, կերանք։ Առանձնապես ոչինչ չկար։ Իսկ դու, վախմիստր, ասում ես՝ անանաս։

Այդ պատմությունը չզվարճացրեց Վատնինին։

— Շփացած ես դու,— ասաց նա հանդիմանությամբ։

Այդ գիշեր քիչ ջուր ճարեցին։ Այն չէր կարող մեղմել տանջալից և դաժան շոգը, շիկացած կայազորի վրա ընդամենը ջրի մի քանի խղճուկ կաթիլ ցայտեց միայն։ Սակայն հիմա մարդիկ համաձայն էին տառապանք կրել, մոտալուտ փրկության հույսով, և Շտոկվիչը, որպեսզի քաջալերեր զինվորներին, հրամայեց հրթիռ արձակել մութ երկինք։

Պոտրեսովը կրակեց հրթիռը՝ աղմկոտ և ծիածանագույն, ինչպես ինքը՝ մարդկային ուրախությունը և, ի պատասխան, ինչ-որ լեռների հետևից դեպի վեր ձգվեց կրակի պոչավոր ժապավեն։

— Այստեղ են,— ուրախացան զինվորները։— Դեռ կանգնած են մեր հարազատները...

Ժամանակ առ ժամանակ հեռվում լսվում էին հրաձգություն և ինչ-որ մարդկային ձայների խուլ թնդյուն, մեկ՝ ողորմաձայն, մեկ՝ հաղթաձայն, և Պոտրեսովը որոշեց հրդեհել մի քանի շենքեր, որպեսզի լուսավորի գիշերային քաղաքը։

— Պատրաստել ռումբերը,— հրամայեց նա։

Երբ վրա հասավ լուսաբացը, բոլորը նորից նետվեցին գնդի պատուհանները, սակայն նրանց դաժան հուսախաբություն էր սպասում. քաղաքի պատերի տակ ռուսական ռազմաճամբարի փոխարեն նրանք տեսան այն նույն մոայլ հարթավայրը, որը անմարդաբնակ տարածվում էր մինչև Ջինգիլյան լեռնաշղթայի ստորոտը, և բլուրների միջև ճոճվում էին միայն թուրքական բունչուկներն ու նիզակները, տափաստանում նորից բարձրացել էին քրդական վրանները...

— Չի կարող պատահել,— ասաց Շտոկվիչը,— նրանք երևի իջել են ձորը... Պոտրեսո՛վ, մի հրթիռ արձակեք։

Շեփորահարն իզուր էր բերդապարսպի առաջամասի վրայից խոպոտված նվագում խռովահույզ «ցայգանվագը»։

— Բա՛ձր,— բղավում էր նրա վրա Շտոկվիչը։— Բարձր նվագիր...

Սակայն Բայազետի շրջակայքը չէր արձագանքում աղերսական կանչին։

Իսմայիլ խանն իր հովատակը տարավ ախոռ։

— Նը էտսիմ (ինչ արած),— ասաց նա։— Ալլահի կամքն է։

Ամրոցում սկսվեց հուսալքություն, մարդիկ ջղայնացած, մոայլորեն հայհոյում էին նահանջած զորաջոկատին։

— Իրենց կաշին են փրկել... Ստորները միայն գրգռեցին։ Հարկավոր էր նրանց, ա՛յ, այստեղ բերեին, մեր տեղը։ Մի օրից հետո կփտեին...

Երբ սպաները հավաքվեցին կարճ խորհրդակցության, որպեսզի քննարկեն վիճակը, Նեկրասովն ասաց.

— Դա շատ լավ է, պարոնայք, որ Կալբուլայ խանը չի ցցվել մնացել ամրոցի մոտ և գնացել է լեռնանցքի հետևը։ Ուղղակի հիանալի է։— Նրա վրա նայեցին որպես խելագարի, բայց նա չվեհերեց և շարունակեց.— Այո՛, հավատացե՛ք, դա լավ է... Քանի զորաջոկատը կանգնած էր պարիսպների տակ, մենք հարբած էինք։ Մենք նույնիսկ թուլացրինք թշնամուն դիմադրելը։ Մեզ բախտի քմահաճույքին թողած զորաջոկատի նահանջը կսթափեցնի բոլորիս։

— Ի՞նչ անենք այժմ,— ընկճված ասաց յունկերը։

— Իսկ դուք մի վշտացեք, պատանի։ Մենք պետք է կռվենք։

— Դեռ ինչքա՞ն կարելի է կռվել։

— Ինչքա՞ն... Շաբաթը յոթ օր, օրական քսանչորս ժամ...

— Դրանով էլ հենց ավարտենք մեր խոսակցությունը,— որոշեց կապիտան Շտոկվիչը։

4

Ինչպես պարզվեց հետո, փոշու այն վիթխարի ամպը, որ գլորվում էր Բայազետի կողմը, ուղեկցում էր ոչ թե գեներալ-մայոր Լորիս-Մելիքովի հեծելազորին, այլ ընդամենը ոչխարների բազմահազարանոց մի հոտի, որ Ցուիկ փաշայի հրամանով բշում-բերում էին հեռվից՝ կերակրելու նրա ահեղ ռազմաճամբարի որբևամոլներին։ Սիսայը պարզվեց միայն քաղաքի պատերի տակ, և Կալբուլայ խանին ոչինչ չէր մնում անելու, բացի նրանից, որ դիմանալով հրացանային մարտին, հետո օգտվելով գիշերային խավարից, նորից նահանջի դեպի Իգդիր։

Թուրքերի մեջ սկսվեց ցնծությունը, իսկ բայազետցիներն ընկճված էին պատահածով։ Մարդիկ հաճախ բարձրանում էին մինարեթի աշտարակների վրա, որտեղից նրանց երևում էր Ռուսաստան տանող ճանապարհի գորշ, երկար ժապավենը, և կարծես հավիտյանս հրաժեշտ էին տալիս։

— Էլ չենք քայլի այդ ճանապարհով,— ասում էին նրանք։— Աստվա՜ծ իմ, որքա՞ն լավ է, որքա՞ն քաղցր ապրել հայրենի հողի վրա...

Սարսափելի հուսախաբությունից ցնցված՝ մարդիկ թուլացրին իրենց կամքը, և մորտուսների համար դարձյալ սև աշխատանք գտնվեց՝ մեռելներ էին կրում, նրանց հավաքելով բակերում ու կազեմատներում։ Ջուր բոլորովին չկար, ծարավից ստանձնապես տանջվում էին վիրավորները, և նորից, սրտի թալկացումով, զինվորներն ականջ էին դնում ջրհոր փորող պարսիկների աշխատանքին։

— Քանդում են, եղբայրներ, քերում են... գոնե նրանք շուտ ջուր գտնեին մեզ համար։ Համբերություն չի մնացել...

Ցուիկ փաշան ճիշտ հաշվի առավ ռուսական կայազորի տրամադրության մեջ կատարված բեկումը և նորից պատվիրակ ուղարկեց բանակցությունների համար։ Թափահարելով սպիտակ դրոշակը, թուրք սպան, Նեշեթի արաբական հրաշալի նժույգի վրա նստած, արշավելով մոտեցավ ամրոցի դարպասներին՝ առաջ բերելով կազակների նախանձոտ հոգոցները։ Նրա տակինը հո ձի չէր, այլ արևելյան հեքիաթներից լավագույնը՝ բարակոտն էր ու կրակոտ, ինչպես քամին լեռներում, ջինջ, խելացի աչքեր ուներ, նուրբ հպարտ քայլվածք։

Պարզվեց, որ բանակցությունների համար ուղարկված այդ սպան նույն աստրախանցի կալմիկն էր, որն արդեն եղել էր ամրոցում։

Դիմավորեց նրան Շտոկվիչը։

— Դարձյալ դո՞ւք եք, բարեկամս։

Կալմիկը քաղաքավարի գլուխ տվեց՝ ձեռքերը սեղմելով կրծքին.

— Այո՛։ Դժբախտաբար նորից ես եմ...

Բանագնացը հաղորդեց իր տիրակալի կամքը։ Ինչպես և պետք էր սպասել, Ցուիկ փաշան վշտացած էր ռուսների խելահեղությունից, որոնք, ալլահն է տեսնում, այսօր կարողացան համոզվել, որ իրենք ոչ մի տեղից այլևս օգնություն չեն կարող սպասել։ Կալմիկ խանը իր հիացմունքն արտահայտեց ռուսների խիզախության առթիվ և կրկնեց նախկին առաջարկությունները, որ ռուսական կայազորը թողնի ամրոցը՝ պահպանելով դրոշներն ու զենքերը։ Որպես բարի համաձայնության նշան, փաշան կայազորի պետ Իսմայիլ խան Նախիջևանսկուն է նվիրում Նեշեթի այս նժույգը, որով հենց նոր միայն եկել է ինքը՝ բանագնացը։ Այդ բառերը արտասանելիս Վատնինի հարյուրյակից որոտաց կրակոցը, և գեղեցիկ նժույգը փլվեց գնդակի հարվածից։ Կալմիկը նայեց, թե թանկարժեք նժույգը հոգեվարքի մեջ ինչպես է թպրտում՝ սմբակներով հարվածելով քարերին, և գրեթե անտարբերությամբ ավարտեց իր խոսքը.

— Ցուիկ փաշան նմանապես ցանկանում է հիշեցնել ձերդ վեհատեսությանը, որ ձեր մեջ է գտնվում մի կին՝ աղնվաբարո խվոշչին փաշայի այրին, և հարցնում է, հանուն ալլահի մղվող պատերազմի սյուքի տակ արդյոք նա չի՞ թոշնել, ինչպես վարդը փոշու մեջ։

— Ո՛չ, դեռ չի թոշնել,— պատասխանեց Շտոկվիչը։— Մեր կանայք ձեր կանանցից չեն, և նրանք այդքան շուտ չեն

թոշնում, ինչպես վարդը։ Նրանք, ինչպես մագարիկոն, դիմանում են և՛ շոգին, և՛ քամուն։

— Գրողը ձեզ տանի,— գոռաց նրա վրա Եֆրեմ Իվանովիչը,— արդյոք ձեզ չէ՞ր, որ անցած անգամ խոստացա կախել յուրաքանչյուրին, ով այստեղ գա ամրոցի բանալիներն ուզելու։

— Ինձ էր,— մեղքը խոստովանեց կալմիկը։

— Ուրեմն ինչո՞ւ եք նորից եկել այստեղ։

Կալմիկ խանը մեկեն ձգվեց։

— Ես ռուս սպա եմ եղել,— տխուր ասաց նա։— Եվ ես գիտեի, որ դուք ձեր խոստման տերը կլինեք։ Սակայն եթե ես չգայի ձեզ մոտ, ինձ կկախեր իմ տիրակալը։ Ի՞նչ տարբերություն...

— Եվ կկախենք,— բղավեց Շտոկվիչը՝ դուրս գալով իրենից։

Նրանց մոտեցավ Իսմայիլ խանը.

— Բարեկամին չի կարելի կախել, նա հյուր է իմ տանը... Շտոկվիչը գազազեց.

— Բոլորդ կորե՛ք գրողի ծոցը։ Դուք ինձ ցուցումներ մի՛ տվեք, քանի որ դուք Վանի փաշայության հրամանատարն եք։ Ես եմ այստեղ պարետը և ես բոլորին կկախեմ, ինչպես կատվի ձագերի...

Նրան մոտենալը սարսափելի էր՝ աչքերը սպիտակեցին, բերանի անկյուններում փրփուր հավաքվեց։ Եվ այդ պահին կալմիկը խանին ինչ-որ բան շշնջաց, ծածուկ մի ծրար դցեց նրան։ Շտոկվիչը կոպտաբար խլեց նամակը և կոխեց գրպանը։

— Մի նոր բան կլինի,— ասաց նա։

— Տո՛ւր ինձ,— գոռաց Իսմայիլ խանը,— դա ինձ համար է։

— Ինձ համար է,— գոռոաց Շտոկվիչը։

— Ինչո՞ւ քեզ համար, երբ բոլորովին էլ քեզ համար չէ։

— Որովհետև ռուսական կայսրության ամրոցում կա կայազորային ծառայության կանոնադրություն, և այնտեղ պարզ ասված է. «Ամբողջ նամակագրությունը գնում է ամրոցի պարետի ձեռքով, հատկապես երբ այդպիսին գտնվում

է պաշարման վիճակում, որը հավասարեցվում է արտակարգ դրության...»։ Կորե՛ք այստեղից, ովքեր ավելորդ են։

Կալմիկ խանին իսկապես կախեցին բերդապարսպի ճակատամասին ամրացված քեղերի վրա, որպեսզի թուրքերին հեռվից երևար, թե ինչ պատասխան է տալիս ռուսական կայազորը։ Սակայն մահապատժից առաջ, չգիտես մահվան նկատմամբ անտարբերությունից, թե ընդհակառակը՝ իրեն փրկելու ցանկությունից, կալմիկ փախստական խանը սպառնաց Շտոկվիչին։

— Դուք իզուր եք համառում,— ասաց նա՝ գլուխը մտցնելով օղակի մեջ։— Հենց այսօր երեկոյան ամրոցի պատերը կփլվեն, և Ֆուիկ փաշան այլևս ոչ ոքի չի խնայի...

Կլյուգենաուն, որ հեռվից դիտում էր այդ տեսարանը, մոտեցավ Շտոկվիչին և ասաց.

— Ես չէի կարծում, որ դուք կարող եք այդպիսի սարսափելի մարդ լինել... Իսմայիլ խանը խիստ վախեցավ, որ կարող է հանկարծ իրեն էլ սանձեիք կալմիկի կողքին։

— Իսկ դուք կարծում եք ինձ համար հե՞շտ է,— հարցրեց Շտոկվիչը։— Այ, ջուր չեմ խմում, բայց նույնիսկ քըրտինք եկավ վրաս... Մի փախստական դավաճան ծառայում է Համիդի մոտ, մյուսը՝ տխմարի մեկը, պատրաստ է այս բոպեիս թշնամու կողմը փախչելու... Դա հեշտ չէ, աղավնյակս։

Նրանք մի կողմ գնացին, և Շտոկվիչը հանեց նամակը.

— Արաբերեն է կարծես.. Կարդացե՛ք։

Կլյուգենաուն կարդաց.

— Ոչ մի նորություն։ Կալմիկն ասաց համարյա նույնը։ Սակայն Ֆուիկ փաշան, այնուամենայնիվ, չափազանց համառ է իր պահանջների մեջ։ Նա այստեղ ուղղակի Իսմայիլ խանին հանդիմանում է ամրոցի հանձնումը ձգձգելու համար։

— Խանը պետք է հիվանդանա,— որոշեց Շտոկվիչը։— Ես հիմա կզբաղվեմ իմ գործերով, իսկ դուք, բարոն, հաղորդեք փոխգնդապետին, որ ցանկալի է նրան տեսնել հիվանդ վիճակում... Բավական է արդեն այդ հիմարի հետ չինական արարողություններ կատարել։

— Դուք այնքան էլ չեք կատարում, Եֆրեմ Իվանովիչ։

— Ժամանակ չկա,— պատասխանեց Շտոկվիչը։

Կալմիկ խանը ճոճվում էր օղակի մեջ, բայց նրա սպառ-

նալիքը ճիշտ դուրս եկավ։ Ամրոց թափանցեց լրտես Հայի Ջամալ բեկը և ասաց, որ գերմանական թնդանոթ են բերել Բայազետ։ Շուտով երկնքում ինչ-որ աղմուկ լսվեց, ինչ-որ երկարաձիգ ֆշշոցով սլացավ անցավ ամրոցի վրայով և պայթեց հայկական խրճիթների ավերակների մեջ։

Պոտրեսովը մռայլվեց։

— Բարև ձեզ, պարոն Կրուպպ,— ասաց նա։— Ահա և դուք, ձեր սեփական անձով...

Պայթյունից հետո, որը խլացման իր ուժով նման չէր նախորդներին, մարդիկ ակամայից կորցրին գլուխները։ Ֆշշոցը երկնքում, խլացուցիչ որոտը, բեկորների թաթաղը այս ամենը ինչ-որ նոր բան էր նրանց դրության մեջ։

— Որտեղի՞ց է դա,— հարցրեց գրենադյոր Խրենովը՝ տարուբերելով գլուխը։

Այդ միջոցին թուրքերի մեջ գրեթե տոնական տրամադրություն էր տիրում։ Նրանք իրենց ընտանիքների հետ, վերցնելով երեխաներին ու ծերերին, ալարկոտ նստել էին ամրոցից քիչ հեռու, ինչպես հետաքրքրաշարժ հանդեսից առաջ։

— Հաճելի է խաղալ դերդ, երբ քո առջև տեսնում ես այսպիսի փորձված հանդիսատեսների,— ասաց Կարաբանովը։

Նեկրասովը ձեռքը դրեց հարյուրապետի ուսին.

— Ես ուզում եմ ձեզ առաջարկել շուրեկի կեսը։

— Որտեղի՞ց եք ճարել այդպիսի ճոխություն։

— Օ՜, մի հարցրեք, Կարաբանով. պարզվում է, որ մեր զինվորներից մեկը այս գիշեր եղել է մեյդանում։

Նրանք ծամում էին համեղ շուրեկը։

Նայում էին հրակնատի մեջ։

Թուրքերը նայում էին նրանց։

— Հետաքրքիր է,— ասաց Անդրեյը։

— Ի՞նչը,— հարցրեց Նեկրասովը։

— Ահա... այս ամենը...

Գրեթե ինչպես փլվածք, ինչպես աշխարհի վերջ, հարդագույն դառն ծխի մեջ, դղրդյունի և բոցերի մեջ պայթեց առաջին արկը, և ամրոցի պատերը՝ այդ հնամենի պատերը, գորշագույն գրանիտից, վարդագույն մարմարից կառուցված այդ պատերը հանկարծ երերացին...

Կարաբանովը կանգնել էր պատի մոտ և տեսավ, թե ինչպես դանդաղ ցած իջնող փոշու միջից աստիճանաբար սկսում էր երևալ Նեկրասովի ուրվանկարը։

— Դուք ո՞ղջ եք,— հարցրեց նրան շտաբս-կապիտանը։

— Առայժմ այո՜... բայց թվում է, որ սա վերջին շուրեկն է, որ ես ուտում եմ իմ մեղսագործ կյանքում։

— Է՜, ճակատագիր է,— ասաց Նեկրասովը։

— Ճշմարիտ է։ Իսկ ճակատագիրն ունի երկար, ճերմակ մորուք, և դուք ինձ սովորեցնում էիք ամեն անգամ թրել նրա այդ մորուքին...

Բակում, վերևից փլված քարերի և պատերի բեկորների տակից, սանիտարները քաշում հանում էին ցավից ու սարսափից տնքացող վիրավորներին։ Ամրոցի պարիսպների հետևում հնչում էր թշնամու ծիծաղի որոտը. թուրքերը ցնծություն էին ապրում, որ առաջին կրակոցը հասել էր նպատակին։

Կլյուգենաուն կատաղությունից կրճտացրեց ատամները.

— Ո՜ւ-ո՜ւխ, անիծվածնե՛ր։

— Թուրքե՞րը, ձերդ բարեծնություն,— հարցրեց մի զինվոր։

— Ի՞նչ թուրքեր։ Գերմանացիները...

Պոտրեսովը զեկուցեց Շտոկվիչին.

— Երրորդ հրանոթը՝ ահա նրանց գլխավոր նպատակը, ինչպես ինձ թվում է։ Ես արդեն հրամայել եմ այն ծածկել պարկերով, որպեսզի թաքցնեն մետաղի փայլը, այլապես նրանց համար հարմար է նշան բռնել... Սակայն ես ինքս չեմ կարողանում գտնել, որտեղից են կրակում։

— Փնտրե՛ք, մայոր, փնտրե՛ք...

Պարոն Ալֆրեդ ֆոն Կրուպպը գիտեր ինչի համար է դրամ վերցնում, երբ վաճառում է իր թնդանոթները «սերբակուլներին», ինչպես ուրախ պահին նա կոչում էր թուրքերին։ Այո՜, միջազգային արդյունաբերական ցուցահանդեսները իզուր չէին նշում գերմանական կուռքի բարձր որակը։ Եվ մեկ կրակոց, և մզկիթի պատը նստեց։

— Անիծված գերմանուհի,— հայհոյում էր Կլյուգենաուն։— Նրանից հենց միայն ստորություն սպասիր...

— Գտա՜նք,— բղավեցին մինարեթից։

Ինչ-որ հեռվում, հսկայական տարածության վրա, հեծյալների փոթորկված ծովի մեջ ժայթքեց ծուխը։

Նորից պայթյուն, և վեր բարձրացած հողն ու կտորտանքը դեռ չէին նստել, երբ Պոտրեսովը հրամայեց շրջել թնդանոթը։ Սանիտարները հոսպիտալից բերեցին մի պատգարակ, որի վրա պառկած էր Կիրյուխա Պոստնին։

— Ապա թույլ տվեք ինձ...— ասաց հրետաձիգը։

Եվ թափահարեցին ձեռքով.

— Թույլ ենք տալիս...

Մի կողմ քաշվեցին, որպեսզի չխանգարեն հրետանավորներին։ Կիրյուխան, մի քիչ բարձրանալով պատգարակի վրա, տնքոցով նստեց նշանոցի մոտ։ Թնդանոթի առատամը ցնցվեց, և ամրոցի պարիսպների հետևում նորից պոռթկաց թուրքերի ծիծաղը։

— Թող ծիծաղեն,— ասաց Կիրյուխան,— ես իմ գործը գիտեմ...

— Միայն թե դիպչես,— աղերսելով ասաց Շտոկվիչը,— և Գեորգիևյան խաչը քեզ համար ապահովված է։ Սպայի կոչում կտանք։ Մարդ կդառնաս։

Պարիսպների հետևում լռեցին և թուրքերը։

— Կրա՛կ։

Արկը սլացավ, և քամին բերեց պայթյունի արձագանքը։

— Վրիպեց,— ասաց Պոտրեսովը։

Կիրյուխան ցավից ջղաձգվեց, իսկ թուրքերը հանկարծ նորից սկսեցին քրքջալ, բայց այժմ նրանք ծիծաղում էին արդեն նրա վրա։

— Թող, թող ծիծաղեն,— ասաց հրետաձիգը,— նրանք ինձ չեն կարող խանգարել... Նշանոցի բարձրությունը ես լավ եմ վերցրել...

Շտոկվիչը իջեցրեց հեռադիտակը.

— Ճշմարիտ է, չի բավականացնում միայն շեղությունը։

Հեռավորությունը երկու հազար հարյուր հիսուն սաժեն՝ փոքր հեռավորություն չէ, և դա բոլորը հասկանում էին։ Հրետաձգի լուսանային աչքերը շոշափեցին հեռուն։ Կիրյուխան հանձնարարեց ոչնչացնել հակառակորդի թնդանոթը՝ մեկ էլ խփիր, մի քիչ դեպի աջ, այդպես...

— Ծղբայրնե՛ր... կրա՛կ։

Կրակելու ժամանակ նրան հարվածով հետ շպրտեց, և նա երեսնիվայր խրվեց պատգարակի մեջ։ Նրան չէին տանում։ Սպասում էին։

— Կպավ,— գոռացին մինարեթից։

Կրուպպի թնդանոթը ջարդուփշուր արվեց, և թուրքերը իրենց երեխաներին, կանանց ու պառավներին շտապեցնելով, սկսեցին ամրոցի մոտից այս ու այն կողմ ցրվել։ Ներկայացումը նրանց համար անհաջող վերջացավ։

— Էլի երկու ռումբ արձակեք,— հրամայեց Պոտրեսովը,— և բավական է։

— Տարե՛ք ինձ, եղբայրներ...— Կիրյուխան փակեց աչքերը։— Տարե՛ք։

Շտոկվիչը խզոցով արտաշնչեց։

— Ա՜յ թե տվեց,— ասաց նա։— Ինչո՞վ կվերջանար այս ամենը, չգիտեմ, բայց բարոն Կրուպպը այնքան էլ սիրալիր մարդ չէ, ինչպես գրում են նրա մասին մայրաքաղաքի գերմանացիները։

Նա շրջվեց և իր մոտ կանչեց Հաջի Ջամալ բեկին.

— Ի՞նչ կա քաղաքում։

— Լավ է,— պատասխանեց լրտեսը։— Մեյդանում թռչուն կաթ շատ կա։ Ռուս օրիորդ ման էր գալիս...

— Պատրաստվիր,— խստորեն հրահանգեց նրան Շտոկվիչը։— Վաղը ես Տեր-Ղուկասովի մոտ պիտի ուղարկեմ ես մի մարդու, և դու նրան կանցկացնես մինչև Զինգիլի լեռնանցքը։

— Իսկ դուք ո՞ւմ եք ուզում ուղարկել,— հարցրեց Նեկրասովը։

— Դեռ չեմ որոշել։ Կազակներից որևէ մեկին...

5

Նեկրասովը լսեց և զայրացավ.

— Ինչ չգիտես, մի՛ դուրս տուր, ոչլոտ։

Պատմողը շփոթվեց.

— Ձերդ բարեծնություն, ինչ գնել եմ, այն էլ վաճառում եմ։ Ինձ այդպես մի վաճառական ասաց շուկայում...

— Իսկ դու ամեն բան, որ վաճառում են շուկայում, մի՛

գնիր,— խստորեն ասաց Յուրի Տիմոֆեևիչը,— Առավել ևս մեր վաճառականներից։ Նրանք Զամոսկվորեչիեում և Պլյուշչիխայում փոր են գցում և չեն կարող իմանալ, թե ինչ հրաշալի ժողովուրդ է ապրում Բուլղարիայում։

Խրենովը, երկար չմտածելով, պատմողին մի ուժեղ ապտակ տվեց։

— Հասկացա՞ր,— ասաց ծերուկը։— Ինչի մասին ես խոսում...

Զինվորը հանգիստ ուղղեց գլխարկը, սրբվեց և նույնիսկ չնեղացավ.

— Դե, իհարկե... Որտեղի՞ց պիտի նրանք իմանան։ Ես ինքս նույնպես համարյա վաճառականների դասից եմ։ Փերեզակային գործով եմ զբաղվել։ Սակայն մինչև Բուլղարիա հեռու է, ես այնտեղ չեմ հասել... Իսկ իմանալ հետաքրքիր է։

Նեկրասովը հասկացավ, որ հիմա չի կարելի շուռ գալ ու գնալ, ավելի լավ է խոսակցությունը մինչև վերջ հասցնել։

— Ա՛յ մենք,— ասաց նա,— համբերում ենք այստեղ։ Սոված, կեղտոտ, գոնջոտված։ Չհասկացողները մեր մեջ քիչ են. յուրաքանչյուրը գիտի ինչի համար։ Այս անգամ ծեծելով չէ, որ կռվի ենք գնացել... Սակայն, կարող է պատահել, կան և այնպիսիները, որոնք մտածում են՝ գրողի ծոցը գնա այդ Բուլղարիան, ի՞նչ օգուտ ունեմ նրանից, եթե ես սատկում եմ այստեղ... Կա՞ն ձեր մեջ այդպիսիները։

Զինվորները լռեցին։ Եգորիչը բոլորի փոխարեն պատասխանեց.

— Այդպիսիները չկան։ Բայց ահա ոջլոտներ և գոնջոտներ, դա ճիշտ է, կան։ Ինչքան ուզես... Սակայն սլավոններին չենք դավաճանի։

Դռներից լսվեց Շտոկվիչի ձայնը.

— Հաճույքով լսեցի։ Զափազանց հետաքրքիր զրույց է։ Միայն, պարոն շտաբս-կապիտան, ինձ թվում է, որ ձեր ունկնդիրների հայրենասիրությունը հիմնված է ջրապատվանդանի վրա... Դուք հիմա զբաղված չե՞ք, որ օգնեք ինձ,— հարցրեց պարետը։

— Ամենևին,— համաձայնեց Նեկրասովը։

Նրանք գնացին Շտոկվիչի սենյակը։

— Դուք լավ գրիչ ունեք,— ասաց նա։— Ես այդպես չեմ կարող գրել։ Բայց հարկավոր է վերջապես հասկացնել մեր հանիբալներին, որ էլի մեկ կամ երկու օր, և թոշակը կստանան մեր հարազատները։ Մի նամակ գրեք կայազորին բաժին ընկած բոլոր աղետների մասին։ Նույնիսկ մի քիչ ծաղկեցրեք, դա չի խանգարի։ Այնպես, որ թափանցի մինչև լարդը։ Ուղարկենք կազակի հետ...

— Հաճույքով կօգնեմ,— պատասխանեց շտաբս-կապիտանը,— բայց մեր վիճակը ծաղկեցնելու պատճառ չեմ գտնում։ Առանց այն էլ նա բավականին նողկալի է։

— Ինչպես ուզում եք,— համաձայնեց Շտոկվիչը։— Միայն աշխատեք գրել որքան հնարավոր է սեղմ, որպեսզի հնարավոր լինի թուղթը փաթաթել սիսեռահատիկի չափ և կոխել կազակի ականջը։

Նեկրասովը ջրեց։ Շտոկվիչը հավանություն տվեց։

— Կստորագրե՞ք,— հարցրեց նա։

— Եթե ցանկանում եք։— Եվ Յուրի Տիմոֆեևիչը դրեց ստորագրությունը։

— Ես էլ եմ ստորագրում,— ասաց Շտոկվիչը։

— Հարկավոր է նաև, որ խանը ստորագրի,— զգուշությամբ ակնարկեց Նեկրասովը։

— Նույնիսկ պարտադիր է,— համաձայնեց Շտոկվիչը։

Նա փչեց իր ստորագրության վրա, կոշիկով ծեծեց պատը։

Ներկայացավ սպասավորը։

— Ի՞նչ կհրամայեք։

Շտոկվիչը նրան մոտեցրեց ռազմաղեկույցը.

— Ստորագրի՛ր։ Ահա այստեղ...

Սպասավորը դրեց իր անգրագետ խճճագիրը։

— Այժմ կորի՛ր,— կարգադրեց Շտոկվիչը։

— Դա խանի փոխարե՞ն,— ծիծաղեց Նեկրասովը։

— Այնտեղ չեն հասկանա,— բացատրեց Շտոկվիչը։— Ինչ խաչը, ինչ խճճագիրը՝ հավասարապես անգրագիտություն են։ Ոչ մի տարբերություն...

— Սակայն խանը մուխուր[1] ունի։

— Այստեղ, լեռներում, ամեն մի իշխան մուխուր ունի։

[1] Մուխուր — անձնական կնիք։

Իսկ իշխաններն այս վայրերում ավելի շատ են, քան ոչխարները։ Մուխուրը ֆաքսիմիլե չէ...

Կարաբանովն այդ ժամանակ թափառում էր ամրոցում, ինչպես ուրվական։ Նա այսօր տարօրինակ վիճակում էր։ Կանգնում էր, ուզում էր նստել։ Նստում էր, անմիջապես ուզում էր պառկել։ Պառկում էր և այդ ժամանակ ամեն ինչ պտտվում էր, արյունն աղմկում էր գլխում։

— Պիտի թրև գամ։— Եվ նա որոշեց ման գալ, դիտել, լսել, միայն թե դիմանալ, միայն թե չհանձնվել մահին։

Գնդակնե՞րը... Նրանք հիմա քչերին էին անհանգստացնում, ընտելացել էին նրանց, որոշել էին այն ուղիներն ու ճանապարհները, որոնցով ման գալն առավել անվտանգ էր։

Ամրոցի վրա կոկոում էին ագռավները՝ ճարպոտ, զզվելի։ Նրանք խուտներում պտույտներ էին տալիս, խմբերով թռչում, հավաքվում լեշերի վրա, և եթե հարցնես նրանց, թե ուր են թռչում, ագռավները միշտ պատասխանում են.

— Կրռ-կրռ-կրռ...

Նեղ միջանցքում Կարաբանովը պատահաբար հանդիպեց Ագլայային։ Այդ բոլոր օրերին նրանք խուսափում էին մեկը մյուսից, և հիմա շփոթված նայում էին մեկը մյուսին՝ կարծես չճանաչելով իրար։

— Իսկ դու... Իսկ դուք...— մոթմոթաց Անդրեյը։

— Ավելի լավ կլինի՝ «դուք»։

— Ես... ուրախ եմ,— ասաց Անդրեյը։

— Իսկ ես շտապում եմ,— պատասխանեց կինը, և Անդրեյը զիջեց նրան ճանապարհը, անգամ հետևից չնայելով։ Թը՛խկ-թը՛խկ-թը՛խկ, թխկթխկացնում էին սալաքարերին նրա կոշիկները։

Եվ Կարաբանովն ակամայից կրկնեց.

— Թը՛խկ... թը՛խկ...

Նրան դուր եկավ.

— Թը՛խկ... թը՛խկ...

Եվ գանգում արձագանքեց.

— Թը՛խկ-թը՛խկ... թը՛խկ-թը՛խկ...

Կազեմատի պատը հանկարծ շարժվեց ուղիղ նրա վրա։ Նա մատները սահեցրեց պատի վրայով, և գետինը նետվեց նրան ընդառաջ՝ կենարար, փայլկտացող ջրի ջատրվաններ

ցայտելով ուղիղ նրա դեմքին։ Նա խմում ու խմում էր այդ ջուրը, խեղդվելով նրա մեջ, զգալով, թե ինչպես է այն հոսում մերկ կրծքի վրա։

— Շատրվա՛ն,— գոռաց Կարաբանովը։— Եկե՛ք այստեղ... Շատրվա՛ն։

Ապտակի ուժեղ հարվածը ուշքի բերեց նրան։

— Մի՛ բղավեք, դուք Պետերգոֆում չեք,— ասաց Սիվիցկին և պորուչիկի շրթունքներից խլեց գավաթը։— Դե՛հ, չի կարելի այդպես թթվել, սիրելի ռազմիկ։ Սատանան գիտի, թե որտեղ եք ման գալիս։ Կարող էին և չգտնել ձեզ...

Կարաբանովը վեր կացավ.

— Շնորհակալություն, բժիշկ։ Կաշխատեմ շրջել միայն նեակի պողոտայով։ Բայց դուք դնչիս լավ հասցրիք։ Դա ինչ-որ նոր բան է բժշկության մեջ...

— Կարո՞ղ եք ինքներդ տեղ հասնել,— հարցրեց Կիտասկին։

— Կհասնեմ...

Նա դուրս եկավ հոսպիտալից և թարմ օդում իրեն ավելի թեթև զգաց։ Ի՞նչ էր պատահել իրեն՝ նա այդպես էլ չհասկացավ։ Ուշագնացություն, երևի։ Ինչպե՞ս էր ընկել հոսպիտալ՝ նույնպես չէր հիշում։ Գործերս վատ են, որոշեց նա, և նոր միայն նկատեց, որ արդեն մոտեցել էր երեկոն, և մուեզզինները սկսել էին ձգել իրենց տաղտկալի «ազամը»։

— Ազա՛-ա՛մ... ազա՛-ա՛մ,— գոչում էին մուեզզինները, և այդ աղաղակի տակ Իսմայիլ խանը աղոթելով՝ հերթով շարժում էր վարդարանի ոսկրե հատիկները։ Ընդամենը ինսուն հատիկ էր՝ ճիշտ այնքան, ինչքան հոգեկան և մարմնական արժանիքներ ուներ մարգարեն։

— Բարի, գթասիրտ, հիանալի,— տեսակավորում էր փոխգնդապետը մարգարեի հոգին,— ամենահաս, առաքինի, առատաձեռն...

Կա՛ց։ Այժմ ալլահի անունն արտասանելիս կաչվե հատիկրն է ամբողջ աղոթքի պսակը, բայց այդ պահին դուռը ծեծեցին։ Խանը թաքցրեց վարդարանը և այնպիսի տեսք ընդունեց, որ իբր մտածում է։ Ներս մտավ բարոն Կլյուգենաուն։ «Հարկավոր է նրան հարգանք ցույց տալ»,— որո-

շեց Իսմայիլ խանը և չալարեց կանգնել իր սենյակի մեջտեղը՝ դրանով իսկ հարգանք ցույց տալով հյուրին։

— Դու ինչո՞ւ ուրախ չես,— հարցրեց խանը։

— Իմ բարեկամը հիվանդ է,— պատասխանեց ինժեները։— Ասա, ես կարո՞ղ եմ ուրախ լինել։

— Ասա ինձ նրա անունը։

— Վախենում եմ,— կարծես մրսելով կուչ եկավ Կլյուգենաուն։— Մարգարեն սովորեցնում է զգուշանալ մեռնողի անունը տալուց։

— Դու որտեղի՞ց գիտես,— զարմացավ Իսմայիլ խանը։

— Ես այդ մասին կարդացել եմ Ղուրանում։

— Օ՜, խե՜ղճ Ղուրան,— տրտմեց խանը։— Այն կարդում են և անհավատները։ Գուցե դու գիտես, թե ինչի՞ց է մեր ալլահի գահի պատվանդանը։

— Բյուրեղապակուց,— լրջորեն պատասխանեց Կլյուգենաուն։

— Ճիշտ է... դու է՛լ ի՞նչ ես կարդացել մեր գրքերից։

— Շատ բան՝ «Խադիսը» և Ժորժ Զանդ, «Ղուրանը» և Գոնկուր եղբայրներ, «Սուններթը» և Վալտեր Սկոտ, «Հրաշքի մախաղը» և Դեկամերոնը։

— Տես, է՜,— զարմացավ խանը,— դու ինձանից շատ գիտես։ Միայն չեմ հասկանում, քեզ ի՞նչ է հարկավոր։ Մաքրիր վարդի վրայից անբարյացակամության փոշին,— ավելացրեց նա պարսկերեն։

— Մաքրում եմ,— պատասխանեց բարոնը և խանի առաջ գրեց մի թղթի կտոր, որի վրա նախապես գրված էր հետևյալ զեկույցը.

Ես, փոխգնդապետ Իսմայիլ խան Նախիջևանսկիս, հեղձուցիչ օդից առաջացած հիվանդության պատճառով թողնելով ինձ հեծյալ-անկանոն միլիցիայի պետի պաշտոնը, հրամանատարությունը հանձնում եմ սպայական ժողովի հայեցողությանը՝ չառարկելով կապիտան Շտոկվիչին ամրոցի պարետի պաշտոնում թողնելու դեմ։

— Ասլա՞ն,— կանչեց խանը իր սպասյակին։

Կլյուգենաուն գրիչը պարզեց նրան։

— Պետք չէ գոռալ,— հանգիստ ասաց նա։— Ձեր Ասլանը Շտոկվիչի կողմից պատժախուց է նստեցվել այն բանի համար, որ ջուր է գողացել հոսպիտալից։

Սակայն հիվանդանալն Իսմայիլ խանի պլանի մեջ չէր մտնում, և նա բոլոր ուժերով փորձեց դուրս պրծնել այդ վիճակից։

— Լսի՛ր,— ասում էր նա,— բայց եթե ես հիվանդ եմ, ուրեմն ինձ հարկավոր է ամեն օր հավ ուտել։ Որտեղի՞ց հավ կճարես, հիմար։

— Հավը կփոխարինենք ագռավով։

— Ա՜յ, լավ չէ, լավ չէ։ Քեզանից ես այդպիսի բան չէի սպասում... Ի՞նչ ես ձեռքս խոթում այդ գրիչը։

— Հարկավոր է ստորագրել։

— Իսկ հետո՞։

— Դե, ես որտեղից իմանամ, ինչ կլինի հետո։ Ինքը Ղազի Մահոման չգիտի, որ Ֆուիկ փաշան նրանից գաղտնի ձեզ նամակներ է գրում...

— Պետք չէ այդպես խոսել։

Իսմայիլ խանը շտապ բաց արեց թաշկինակը, որ հանգուցված էր, մուխուրով շպպացրեց թղթի վրա՝ «Թող հոսանն օրերը ցանկությամբ իմ»։ Դրա մեջ ինչ-որ ծիծաղելի բան կար, և դուրս գալով խանի մոտից՝ Կլյուգենաուն անկեղծորեն քրքջաց։

Շտոկվիչը պրապորշչիկին շնորհավորեց հաջողության համար և հրահանգեց.

— Պարանասանդուղք պատրաստել, բարո՛ն։ Այս գիշեր պետք է պարսպից մի կամավորի քաղաք իջեցնել՝ Տեր-Ղուկասովի մոտ գնալու համար։

Երբ առաջարկեցին կամավորի ընտրություն կատարել, կազակները միաձայն ընտրեցին Օժոգինին, որը չէր հրաժարվում այդ վտանգավոր ուղևորությունից։

— Իսկ խաչ կստանա՞մ,— հարցրեց նա։

— Այդ մասին չգիտեմ,— պատասխանեց Շտոկվիչը։— Բայց մի բաժակ ջուր կստանաս անմիջապես։

Պարետը նրա գլխին մի ամբողջ քարոզ կարդաց՝ ինչպե՛ս թաքնվել թշնամիներից, ո՛ւմ այցելել Իգդիրում, ի՛նչ ասել Տեր-Ղուկասովին, որտե՛ղ պահել գրությունը, ե՛րբ բաժանվել լրտեսից։

— Կհագնվես քրդի նման,— եզրափակեց Շտոկվիչը։

Այնուհետև մենք խոսքը վերավստահում ենք պատմաբանին.

«Թշնամու հողով հաջողությամբ անցնելու համար,— գրում է նա,— նրան կարգադրվեց հագնել գերիներից մեկի զգեստը։ Նրան քրդի պես կերպափոխելով՝ ընկերներն ուզում էին ձեռնամուխ լինել գլուխը սափրելուն, բայց պարզվեց, որ այդ գործողության համար թանկարժեք հեղուկից ոչ ոք մի կաթիլ անգամ չէր տալիս։ Կազակներին չլքող հնարամտությունը փրկեց և այս դրությունից։ Կամավորին նստեցրին և դիմեցին շրջապատող մարդկանց, որ նրանք, ում բեքանում դեռ թուք կա, թքեին նրա գլխին։ Ասացին ու արեցին. մի կերպ գլուխը թրջեցին ու սափրեցին...»։

Մենք այստեղ դիտավորյալ բերեցինք այս քաղվածքը, որը գրված է Բայազետի հերոսամարտերի տաք հետքերով, բայց բոլորովին էլ ոչ այն պատճառով, որ չէինք կարող ռեփական բառեր գտնել գլուխը սափրելու նկարագրության համար։ Ո՛չ, մենք վախենում ենք, որ ընթերցողը չի հավատա մեզ, թե որքան թանկ է եղել ջրի կաթիլը, որ նույնիսկ այդ դեպքում ստիպված էին ջուրը փոխարինել այդպիսի տարօրինակ եղանակով։

Շտոկվիչը արձակեց Դենիսկայի բեշմեթը։

— Խա՞շ.— ասաց նա։— Հանե՛լ... Իսկ սա ի՞նչ է,— պարետը շոշափեց կազակի կրծքից կախված աղակալված մի փոքրիկ տոպրակ։

— Թողեք, ձերդ բարեծնություն,— սկսեց աղերսել Դենիսկան։— Դա իմ հարազատ հողից է։ Մայրս է դեռ կախել։

— Լավ,— Շտոկվիչը ծածկեց բեշմեթը։— Հողը թող մնա...

Կարաբանովը մոտեցավ իր սիրելի կազակին և գրկեց նրան։

— Շան որդի,— ասաց նա։— Եթե դու իմանայիր, թե ինձ համար որքան ծանր է բաժանվել քեզանից։ Գնաս բարո՛վ, եղբայր, գնաս բարով։

Հին կազակները ծանրաբարո գլուխ տվեցին Դենիսկային.

— Դե, դու, հարազատս, հուսախաբ մի՛ արա... Ծառայի՛ր հասարակությանը։

Խոր գիշերին, ամրոցի պարիսպներից՝ հենց դրոշաձողի դիմաց, աննկատելիորեն սահելով քաղաք իջան երկու մութ կերպարանքներ՝ Դենիսկա Օժոգինը և նրան ուղեկցող Հաջի Ջամալ բեկը։ Պարանները նորից հետ քաշեցին պարսպի վրա, և Շտոկվիչը ասաց.

— Հիմա կարող եմ հանգիստ քնել։ Դենիսկան այնպիսի կազակ է, որ մեզ հուսախաբ չի անի...

6

— Սպասի՛ր,— շշնջաց Դենիսկան,— նորից մուճակս ընկնում է։ Երևում է անսովորությունից է...

Հաջի Ջամալ բեկը համբերատար սպասում էր կազակին և հետո, նույնպես անլսելի կերպով, ժրաշարժ մողեսի նման շարունակում էր սահել ձորակի փապարի մթության մեջ, ճարպկորեն իրարից հեռացնելով առջևի ալոճենու մացառուտները։ Ճկուն, խոնավ ճյուղերը հարվածում էին Դենիսկայի երեսին, նա շրթունքների վրայից ժլատորեն լիզում էր գիշերային ցողի քաղցրահամ կաթիլները։

Կամրջի տակ լրտեսները մի քիչ նստեցին, մինչև դադարեցին մոտակա կրակոցները։ Կազակը մի քանի անգամ ջուր խմեց։ Ջուրն ափից քշել և գետի մեջտեղ էր տարել մի փրքված դիակ, փորը վեր ցցած, և Դենիսկան թքեց.

— Լցրել են այստեղ... և՛ իրենցը, և՛ մերը։

— Պետք է գնալ,— ասաց Հաջի Ջամալ բեկը, և նրանք շարժվեցին առաջ։

Ծուռումուռ նրբանցքներից մեկում նրանց հանդիպեց մի ձիավոր քուրդ, որը թամբի վրա գցած մի կին էր տանում։ Ձեռքով խփելով իր ավարի հետույքին, քուրդը ցցեց մթության մեջ պսպղացող ատամները։

— Լավ կնիկ,— ասաց նա, և Հաջի Ջամալ բեկը ճանապարհը զիջեց նրան։

— Կինը ռո՞ւս է, ինչ է,— հարցրեց Դենիսկան։

— Այ,— ձեռքը թափ տվեց լրտեսը,— ամենավատ կին, գերմանացի կին։ Շատ ուտում։

Եվ կազակը հիշեց, որ ինչ-որ տեղ, Բայազետից մի քանի վերստ հեռավորության վրա, գերմանական գաղութարնակների մի հարուստ գյուղ կա։ Նա իրեն շատ վատ զգաց ուրիշի դժբախտությունից և տխրեց.

— Տե՛ր իմ, գոնե դուրս պրծնենք...

Ծարավը վաղուց այրում էր ներսը։ Նորից խմել էր ուզում։ Փողոցներից մեկում կարկաչում էր մի փոքրիկ ցայտաղբյուր, որը թափվում էր քարե գոի մեջ։ Դենիսկան հանեց փափախը, կուշտ խմեց։

— Սպասիր,— խնդրեց նա լրտեսին,— երեսս թրջեմ։

Նա հաճույքով վիզը պահեց սառը ջրի շիթի տակ և նույնիսկ տնքտնքում էր երիտասարդական բավականությունից։ Հաջի Ջամալ բեկը հետևից մոտեցավ նրան, կազակի ձեռքերը վերցրեց պինդ կողպեքի մեջ և ատամներով կառչեց նրա բեշմեթի օձիքից։

Դենիսկան ամբողջ ուժով թափ տվեց.

— Ինչ ես անում, սատանա։ Թո-ո-ող...

— Այ՜-ա՜յ-ա՜յ, բաշչավուշ-բաշչավուշ,— սկսեց երգել լրտեսը օտարոտի ձայնով, և ինչ-որ մեկի ուժեղ ձեռքերը Դենիսկային արագ կապկպեցին պարանով, գցեցին թամբի վրա և ոտքերը կապեցին ձիու փորի տակ։

— Տո քած շուն, քած շուն,— հայհոյում էր նա՝ գլուխը կորցրած, ոչինչ չհասկանալով, թե ինչ է կատարվում։

Մտրակը շվաց և ճեղքեց նրա ականջը։ Քրքիջ։

Նրան տարան, և նա օրորվում էր թամբի մեջ։

Հենց ասպանդակի մոտ քայլում էր Հաջի Ջամալ բեկը և ատամներն էր ցույց տալիս կազակին.

— Հյուր կլինես.. Հյուր լավ կլինես...

Քարվանսարայի մոտ արձակեցին նրա կապանքները, և դեռ նախասենյակում Դենիսկային խլացրեց քյամանչայի ճզզոցն ու դափ-դահիրաների խուլ բոմբյունը։ Օժոգինին հրեցին մի լուսավորված դռնից ներս, ուժեղ հրոցից նա առաջ թռավ և, ծիծաղ առաջացնելով, փռվեց հատակի վրա, Ղազի Մահոմայի առջև։

Իմամի որդին՝ մուրացկանի ցնցոտու պես կեղտոտ ու պատառոտված չերքեզկան հագին, մագարիկոնը խիտ մուրի մեջ, ոտքով հարվածեց մարջան-զուրգելով լցված ծխսեին։ Զրնգացին ջարդված ամանները, և նա ցատկեց գորգի մեջտեղը, որի վրա հանգստացող առյուծ էր պատկերված։

— Տո՛ւր այստեղ,— ասաց նա՝ առաջ պարզելով նիհար, ուժեղ ձեռքը։

Հաջի Ջամալ բեկը, խոնարհվելով և քաղաքավարի շշալով, մատը կոխեց Դենիսկայի ականջը և այնտեղից հանեց թաքցրած գրությունը։ Թղթի կտորը բացելով՝ նա տվեց մեկի, և նա ոռնաձայն կարդաց ռուսերեն, որից հետո Դենիսկան սկսեց լաց լինել։

— Սպասիր,— ասաց նա լրտեսին,— դեռ քո դատաստանն էլ կտեսնենք...

Ղազի Մահոման ձեռքը դրեց նրա ուսին։

— Ես ապրել եմ Ռուսատանում,— ասաց նա,— և գիտեմ, որ գյավուրները սիրում են լաց լինել։ Ձեզ մոտ նույնիսկ տներ են կառուցում, որտեղ տղամարդիկ հավաքվում են գինի խմելու և լաց լինելու։ Այդ տների վրա գրում են միայն մի բառ՝ պանդոկ։

Նա արձակեց Դենիսկայի բեշմեթը և ծիծաղելով սկսեց վրայից հանել նրա գոտին։

— Այսպիսի գոտի քո ինչին է պետք,— ասաց նա։— Գյավուրին բարակ գոտի է պետք, որ հազալու ժամանակ միանգամից հարյուր կտոր լինի։

Դենիսկան վրայից գցեց բեշմեթը, հեծկլտաց։ Նայելով պատուհանին՝ մեքենայորեն մտածեց. «Նեղ է... չես կարող դուրս թռչել»։ Նրան մոտեցավ յուղի և քաղցրավենիքի կեղտաբծերով ծածկված մորեգույն խալաթով միաչքանի մի թուրք, սկսեց ծաղր ու ծանակի ենթարկել՝ հաճկատարություն անելով Ղազի Մահոմայի առաջ.

— Ահա քեզ շարբաթ, ահա քեզ լավ հալվա, իսկ գինի չկա։ Մենք ուղղահավատներս, գինի չենք խմում և դրա համար էլ այդպես հարուստ ենք։ Այդ դուք եք՝ կեղտոտ խոզի միս ուտողներդ, հարբեցնում ձեզ, տուրուդմփոց սարքում և զազրախոսում...

Եվ այնպիսի թախիծ նստեց Դենիսկայի սրտին, որ նա ակամայից սկսեց կամաց ու աղիողորմ ոռնալ ատամների

տրանքից։ Հիշեց նա, թե ինչպես պատերազմ մեկնելուց մեկ օր առաջ եղավ իր հարուստ քեռիների մոտ, և հարբած կովտուքի մեջ քեռիները ջարդեցին իր առջևի երկու ատամները։ Իսկ հաջորդ օրը, երբ նա եկել էր հոր գերեզմանի մոտ, որպեսզի օրհներ իր ձին և սուրը, քեռիները նրան ոսկե տասանոց նվիրեցին, և նա խմիչքի տվեց այն Վլադիկավկազում, որտեղից էլ խմած ու չարացած սլացավ սահմանագծում ծառայելու...

Դենիսկան լեզվով շոշափեց այն տեղը, որտեղ պակասում էին երկու ատամները, և ասաց Թուրքին, կարծես խորհրդելով.

— Հետո ինչ, որ դուք խոզ չեք ուտում։ Դուք ինքներդ խոզերից վատն եք։ Իսկ քեզ, միաշքանի քսու, շունն անգամ չի ուտի։ Եվ հետ քաշվիր ինձանից, գարշահոտություն մի հանիր քո շնչառությամբ..

Ինչ-որ մեկի սուր դաշույնը, հեշտությամբ և գրեթե առանց ցավի հետևից կտրեց նրա ականջները։ Դենիսկան տեսավ Ղազի-Մահմայի ոտքերի մոտ գցած ականջները, և սոսկաց այն մտքից, որ դա դեռ միայն սկիզբն է...

— Դե լավ,— սրտապնդվեց նա իր հուսահատության մեջ,— կկտրատեք ինձ, ես այդ գիտեմ։ Զեզ հաց մի տուր, միայն թե մարդ տուր կտոր-կտոր անելու... Բայց ձեզ՝ թուրքական շներիդ համար էլ քաղցր չի լինի, երբ մենք սկսենք ջախջախել ձեր գանգերը։

Անկյունից դուրս եկավ մի հսկա փուչոտ շուն, փորի վրա սողալով մոտեցավ Ղազի Մահմային՝ իր տիրոջը և ատամներով բռնած տարավ Դենիսկայի ականջը։ Թուրքերը ծիծաղեցին։

Իմամի որդին կարդացողի ձեռքից խլեց կապիտան Շտոկվիչի նամակը, նրա մեջ փաթաթեց մյուս ականջը, և թուրքերի զվարճանքին սահման չկար. նրանք թավալգլոր էին տալիս գորգերի վրա, ինչպես չարաճճի երեխաներ, մեկը մյուսին նետելով փարթամ, մարգարտով ասեղնագործված մութաքաները։

— Շտոկվիչ փաշան,— ասաց Ղազի Մահման,— այստեղ չի խաբում։ Ինչու պիտի խաբի... Ջուր չկա։ Ուտելիք չկա։ Եվ մի կին բոլորի համար։ Ե՜ղճ կին։

Նա վեր կացավ ամբողջ հասակով մեկ, և նրա չերքեզկա-ի թևքերը շրմփացին Դենիսկայի դեմքին։ Շամիլի որդին երկու անգամ ծափ տվեց, և կազակը լսեց, թե ինչպես իր հետևում երկու մարդ կանգնեցին։ Նա շրջվեց. դրանք դահիճներ էին՝ սև մետաքսե զգեստով, մեկը սափրած գլխով մկանոտ մի գնչու, մյուսը՝ կապույտ, կախ շրթունքներով մի տարեց նեգր։

Եվ իմամի որդին հրամայեց նրանց.

— Ցցի ծայրը պետք է դուրս գա լեզվի ծայրից։ Ինձ հաճույք պատճառեք։

Դենիսկային խփելով տապալեցին գետին և նստեցրին պզած։ Նա դանդաղ ծածկվում էր թանձր քրտինքով։

— Իսկ դու ի՞նչ ես սպասում,— հարցրեց Ղազի Մահման լրտեսին։

— Իմամի մեծ որդի,— շան նման նրա ոտքերն ընկավ Հաջի Ջամալ բեկը,— գանձապետին հրամայիր այդ նամակի համար ինձ կարգին փեշքեշ տա։

— Ես կկարգադրեմ քեզ կախել գանձապետի կողքին...

Դենիսկան զգաց, թե ինչպես մի սուր բան դեմ առավ իրեն, և այդ ժամանակ նա սկսեց ճչալ, վայրենաբար ու սարսափելի, այդ ճիչի մեջ ներդնելով իր ամբողջ սոսկումը, ամբողջ վախն իր առողջ մարմնի համար...

Առաջին հարվածը հասավ նրան անսպասելի, և նա բարձրացրեց դեմքը.

— Օ՜յ, օ՜յ, օ՜յ... ի՞նչ ես անում։

Հարված երկրորդ և հարված երրորդ։

Վարտիքն արագորեն լցվում էր տաք արյունով, և նա արդեն չէր պահում իր ճիչը, սոսկալի ցավից ջղաձգվող մարդկային մարմնի սարսափելի, գրեթե գազանային ոռնոցը լցնում էր քարվանսարայի մռայլ անցումները։ Նեգրը բազմափորձ ձեռքով ուղղում էր ցցի սուր ծայրը, իսկ սափրած գլխով գնչուն աշխատում էր որպես մուրճահար։

— Ա-ա՜-ա՜-ա՜-ա՜-ա՜,— ոռնում էր Դենիսկան միևնույն չընդհատվող նոտայի վրա և ցնցվում էր ամբողջ մարմնով, կարծես խեղճն ուզում էր պոկվել խոշտանգման այդ սարսափելի գործիքից...

Նա գլուխը խփում էր հատակին, ատամներով կրծոտում գորգը, բայց շուտով հանդարտվեց՝ աչքերը չռած և բարձրաձայն զկոտալով։ Հոր գերեզմանից վերցրած ռուսական հարազատ հողով լցված քսակը կախ ընկավ շապիկի տակից, և Ղազի Մահմայի աչքերն ագահորեն փայլեցին.

— Ոսկի։

Նրբաքուղը կտոր-կտոր եղավ դաշույնի տակ, և իմամի որդու ձեռքի մեջ թափվեց ինչ-որ հատիկավոր բան՝ ոսկի։ Սակայն հիասթափությունը նորից վերածնվեց կատակի, և քսակը պարզեց Հաջի Ջամալ բեկին.

— Ահա քեզ պարգևը, վերցրու...

Դավաճանը ափի մեջ լցրեց գորշ, թախծոտ հողի մի բուռ և հասկացավ, որ ապրուստի միջոց վաստակելն իր համար դժվար է։

— Հիմար ուռուս,— գոչեց նա և այդ հողը կոխեց Դենիսկայի ծռված բերանը։

Պատի հետևում որոտացին թմբուկները, ոռնացին ջութակները, հնչեցին փողերը։ Դենիսկային բարձրացրին ցցի վրա և դուրս բերեցին փողոց։ Այդպես էլ նրան ման էին ածում քաղաքում՝ հպարտանալով իրենց հաղթանակով, իսկ նրանց առջև, ավերակների ու հրդեհների մեջ, փռված էր հրի ու մոխրի դատապարտված Բայազետը, և ինչ-որ տեղ հեռվում, ահեղորեն բարձրանալով ժայռերի վրա՝ հանդիսավոր կանգնած էր ամրոցը։

Սակայն Դենիսկայի աչքերն արդեն ոչինչ չէին տեսնում, և նրա համար Բայազետն այլևս գոյություն չուներ։

7

Պոտյոմկինի պատսպարած թուրք աղջիկը խաղաղ հանգչում էր զինվորի ձեռքերի վրա։ Սիվիցկին չէր կարող օգնել. դիզենտերիայի համաճարակը արդեն դառնում էր ընդհանուր՝ հնձելով նույնիսկ հաղթանդամներին։

Եվ մինչև վերջին րոպեն.

— Ամա՜ն, ուռո՛ւս... ամա՜ն, ուռո՛ւս,— շշնջում էր աղջիկը բոլորին հասկանալի բառերը, և օգնության այդ սրտամաշիկ աղերսանքներով էլ (իսկ աղջիկը հավատում էր, որ իրեն օգնություն ցույց կտան), նա մահացավ։

— Ամա՜ն, ուռո՛ւս... ամա՜ն, ուռո՛ւս,— համառորեն օգնություն էին կանչում գաղթական մայրերը՝ ջրի դիմաց առաջարկելով մարգարտաշար թելեր, իրենց վզերից պոկելով ուլունքները և ականջներից հանելով հնամենի գինդերը։

— Ամա՜-ա՜ն, ուռու-ու-ո՜ւս...— բանտախցի դռների հետևից տնքում էին գերի քրդերն ու թուրքերը, որոնց ընդհանրապես ջուր չէին տալիս, և նրանց տնքոցները տարածվում էին ամրոցով մեկ, ինչպես հենց իրենց՝ Բայազետի պաշտպանների խուլ ողբի արձագանքը...[1]

«Ճշմարիտն ասած,— հետո պատմում էին ողջ մնացածները,— այն ժամանակ չկային ոչ բարեկամներ, ոչ եղբայրներ. յուրաքանչյուրն իր համար ջրի կաթիլը գնում էր սեփական կյանքի գնով։ Ջուրը չէին զիջում ոչ մի գումարով, (հայտնի է միայն մի դեպք, որպես բացառություն), թեև ավելի երջանիկ գիշերները ջրի ավելցուկը «հոժարակամությամբ ձրի բաժանում էին ընկերներին...»

Միջանցուկ քամին ամրոցի վրա դանդաղ տարածում էր անուշաբույր, համեղ ծուխը. երկաթե տապակների վրա, որոնց տակ խարույկներ էին վառված, զինվորները բովում էին երկանքով աղացած գարին։ Խեղճ լծկան ձիերը, բոլորովին հրաժարվելով իրեն բաժին գարուց, այն լրիվ տվել էին մարդկանց, և Շտոկվիչն այժմ ամեն օր յուրաքանչյուր վաշտին մեկուկես փութ գարի էր տալիս։ Պաքսիմատը և չուրեկը հիմա չտեսնված քաղցրավենիքներ էին թվում։

Իսակ փաշայի՝ Բայազետի այդ գոռոզ տիրակալի նախկին հանգստարանն արդեն ամբողջովին ծածկված էր զինվորական գերեզմանների թմբերով, և Սիվիցկին կարգադրեց ընդլայնել գերեզմանոցը բակի հաշվին։ Տեր Գերասիմը, քահանայի պարտականությամբ ներկա լինելով յուրաքան-

---

1 Փաստաթղթային տվյալներ. Բայազետում ձիերն սկսեցին սատկել տասնյոթերորդ օրը, պաշարման վերջում գերիներից ողջ էր մնացել միայն մի մարդ։ Երեխաների և կանանց մեջ ծարավից մեռնելու դեպքերի մասին ոչ մի տեղ չի հիշատակվում. նրանց մատակարարումը ջրով, այնուամենայնիվ, շատ թե քիչ, կանոնավոր է եղել։

չյուր թաղմանը, կատարում էր նաև սանիտարի պարտականություն։

— Այժմ կիր ածեք վրան,— չէր մոռանում հիշեցնել նա հանգուցյալների հուղարկավորության ծեսը կատարելուց հետո, և մորտուսները գործի էին անցնում...

Համաճարակից հետո մարդկանց գլխին թափվեց ևս երկու դժբախտություն՝ զինվորների հյուծված և կեղտոտ մարմինները ծածկվում էին հիվանդագին Թարախապալարներով, իսկ հոսպիտալում արդեն մի քանի մարդ պառկած էին կարմիր քամու բորբոքման բացահայտ նշաններով։ Շտոկվիչը որոշեց, որ մեղավոր են բժիշկները, և ցանկացավ անպատվել նրանց։

Հոսպիտալ գալով՝ նա սկսեց այսպես.

— Բարև ձեզ, սիրելի Պիրոգովներ։

— Դեհ մինչև Պիրոգովները, պատվելիս, գիտեք, մենք դեռ...— Սիվիցկին չափազանց լկտիաբար բնորոշեց իր և Պիրոգովի միջև եղած տարբերությունը։— Սակայն ինչքան կարողանում ենք, բուժում ենք։

— Ես չէի ուզենա բուժվել ձեզ մոտ,— շարունակեց Շտոկվիչը,— դեռ մեծն Սուվորովը լազարեթները «գերեզմանատան նախադուռ» էր անվանում...։

— Այո՞,— զայրացավ Սիվիցկին։— Բայց նա հենց ինքը չէ՞ր արդյոք, որ բուժում էր զինվորներին։ Կվասով, ժուխուկով, աղով և օղիով... Դուք եկել եք այստեղ, պարոն պարետ, երևի մեզ նկատողությո՞ւն անելու։

— Ես ձանձրացել եմ մեռածների ցուցակներ կազմելուց։

— Սպանվածների՞,— ճշտեց Կիտաևսկին,— թե՞ մեռածների։

— Դա միևնույն է, դիակը դիակ է... բայց ես հիմա խոսում եմ ոչ թե սպանվածների մասին։ Ի՞նչ եք անում դուք, որպեսզի փրկեք մարդկանց։

Սիվիցկին ցույց տվեց պարետի գոտուց կախված տակդիրը։

— Ի՞նչ կարող եմ անել,— հարցրեց նա,— որպեսզի դուք բոլորովին ջուր չխմեք։

— Գուցե շնչե՞լ էլ չի կարելի։

— Բանն էլ հենց այն է, որ չի կարելի... Իսկ մարդիկ

խմում են այդ վարակը և սատկում։ Մարդիկ շնչում են այդ վարակը և սատկում։ Ես պատասխանատու եմ նրանց համար, ով ընկել է իմ դանակի տակ կամ եկել ինձ մոտ բուժվելու։ Սակայն ես չեմ կարող փոխարինել օդը, ինչպես և չեմ կարող նրանց մաքուր աղբյուր տալ։

Մոտեցավ ջղայնացած Խվոշչինսկայան և Շտոկվիչի առաջ սեղանին շպպացրեց հոսպիտալի օրամատյանը՝ բաց վիճակում։

— Ահա,— ասաց նա,— կարող եք ստուգել։ Մենք այստեղ կառչում ենք յուրաքանչյուր կյանքից։ Մենք մարդկանց մազերից բռնած գերեզմանից ենք դուրս քաշում։ Եվ... Նայե՛ք այստեղ, քսանյոթ զինվոր լազարեթից գնացել են նույնիսկ առողջ։ Իսկ ահա սրանով զբաղվում եմ ինքս...

Կինը սեղանի տակից դուրս հրեց օգտագործված վիրակապերով լցված զամբյուղը և ավարտեց.

— Ահա այս նողկանքը, որ հանված է մի վերքի վրայից, դրվում է մյուս վերքի վրա։ Փայտի ձեթ և կարբոլաթթու՝ ահա այն ամենը, ինչ կա մեր տրամադրության տակ։ Սակայն ոսկրախտը այստեղ չի իշխում։ Եվ հավատացեք, որ անգամ Պիրոգովը գլուխը կկորցներ՝ տեսնելով մեր դրությունը...

Շտոկվիչը թոթվեց ուսերը, շուռ եկավ դեպի ելքը։

— Ներեցեք ինձ, պարոնայք,— ասաց նա։— Ես չէի կարծում, որ ձեզ մոտ նույնիսկ վիրակապեր չկան... Իսկ ձեզ մոտ օրական քանի՞ մարդ է ընդունվում բուժման։

— Կես դասակը ձեզ չի՞ վախեցնի։

— Խելագարվել կարելի է...

Եվ պարետը գնաց՝ հիշողության մեջ լավ պահելով իր տափաշշին նայող մարդկային աչքերի արտահայտությունը։ Արյան և թարախի մեջ կարծրացած լաթերով լիքը լցված զամբյուղը դեռ երկար ժամանակ չէր հեռանում նրա մտքից։

«Ո՞վ է մեղավոր»,— խորհում էր Եֆրեմ Իվանովիչը և չէր կարողանում գտնել մեղավորին, թեև լազարեթի այդ աղետալի վիճակի համար մեղավորներից մեկն էլ հենց ինքն էր, որպես ամրոցի պարետ։

Նեղ, անձուկ միջանցքում նրան հանդիպեց մի զինվոր։ Նկատելով կապիտանին՝ նա սեղմեց մի տեսակ պպզեց, հե-

տո ծնկների վրա դանդաղ ընկավ նրա առջև և սկսեց համբույրներով ծածկել ճտքակոշիկները։

— Տո՛ւր, տո՛ւր,— աղաչում էր նա,— տո՛ւր, հարազատս, տո՛ւր...

Շտոկվիչը նրան հետ հրեց իրենից։

— Կորի՛ր։ Խելագարվե՞լ եք դուք այստեղ, ինչ է։

Այն ժամանակ զինվորը կառչեց նրա տափաշշից, և ոռնալով սկսեց Շտոկվիչի գոտուց պոկել ամանը։ Եֆրեմ Իվանովիչը զինվորի միջից բռունցքի հարվածով դուրս քշեց գիտակցությունը, հետո երկար ժամանակ կանգնեց նրա գլխավերևում՝ անսպասելի հարձակումից գրեթե ապշահար։

— Այդպես և սպանել կարող են,— ասաց ինքն իրեն։

Բաց անելով տափաշիշը՝ պարետը բարձրացրեց զինվորի գլուխը և նրա բերանը լցրեց ջրի մնացորդը։ Դատարկ տափաշիշը զնգզնգացնելով գլորվեց միջանցքի սալաքարերի վրա։

— Կշտացա՞ր,— հարցրեց Շտոկվիչը։

— Հայր հարազատ,— հեկեկաց զինվորը,— դու իմ հայրն ես...

— Կսպանեմ,— ասաց Շտոկվիչը։

Այդ օրը ջարդվեց վերջին սափորը։ Կազակներից մեկը հանդգնեց պարանով իջնել բերդապարսպից, և թուրքերը նրան սպանեցին, երբ սափորը ձեռքին կախված էր մի քանի սաժեն բարձրության վրա։ Արտագրոհների ժամանակ օգտագործվող տիկերը ծակծկված էին գնդակներից և այնքան էլ պիտանի չէին, ու Շտոկվիչը մի երևացող տեղում փակցրել էր հայտարարություն, որ ամրոցի կարիքների համար պահանջվում են մարդիկ, որոնք գիտեն կոշկակարի արհեստը։ Կոշկակարներին օրական մի գավաթ ջուր տալու խոստումը ոչ քիչ թվով վարպետներ հավաքեց, և ամրոցում սկսեց գործել կոշկակարական արհեստանոցը։

— Դա ճի՞շտ է,— հարցրեց Կլյուգենաուն Շտոկվիչին։

— Այո՛, դա ճիշտ է։ Հիմա ջուրը կբերեն ճտքակոշիկներով։

Եվ իսկապես, այդ եղանակը արդարացրեց իրեն. «ամանը» միշտ քեզ մոտ է, նրա մեջ բավականին ջուր է տեղավորվում, նա քարերին կպչելիս չի ջարդվում, իսկ թուրքերը մթության մեջ

այլևս չեն լսում կաթսայիկների զրնգոցը, տիկերի լիկլիկոցը կամ սափորների չիկոցը։

Եվ վերջապես, վրա հասավ մի այնպիսի օր, երբ թուրքերը հանկարծ նենգալի մեծահոգություն ցուցաբերեցին. նրանք ռուսների համար անարգել ելք բացեցին դեպի գետը, Ֆուիկ փաշան որոշեց այլևս այրող ծարավով չտանջել Բայազետի պաշտպաններին այն իմաստուն հիման վրա, որ գետի ջուրը այժմ նրանց համար ավելի վտանգավոր էր դարձել, քան նրա լիակատար բացակայությունը։

Պատահաբար իմանալով գետին մոտենալու ազատ ճանապարհների մասին՝ կամավորները այդ ուրախ լուրը բերեցին ամրոց։

— Խաբա՞ր, խաբա՞ր,— գոռում էին նրանք։— Վազե՛ք ջրի, եղբայրնե՛ր։

Մարդիկ նետվեցին ջուր բերելու, թեև գետը... արդեն այնքան էր լցված դիակներով, որ ջուր կարելի էր լցնել ոչ այլ կերպ, քան որևէ դիակի մոտից։ Սակայն ծարավից մեռնող մարդկանց համար այդ անհարմարությունները նշանակություն չունեին. «Դիշերը, որ խանգարում էր տեսնելու նեխման ամբողջ գարշելիությունը, և ջրի թարմացնող սառնությունը օգնում էին,— գրում է հետազոտողը,— ծարավը հաճույքով հագեցնելու նույնիսկ դիաթույնով։ Մեզը խմող մարդկանց չէր խանգարում օգտագործել բերած ջուրը և հաջորդ օրը, երբ նրանց աչքերի առջև ներկայանում էր արդեն ոչ թե ջուր, այլ թանձր, պղտոր-դեղնավուն, գարշահոտ մի հեղուկ՝ լեփ-լեցուն դիաճիճուներով։ Այդ խմիչքը ձեռք բերողներն այն պահպանում էին որպես գանձ...»։

Նեկրասովը, մարտկոցում այցելելով Պոտրեսովին, ասաց.

— Ձեմ ուզում վերամբարձ լինել։ Սակայն ես կարծում եմ, որ կայազորը խիզախության լեռնաշղթայից արդեն անցել է այն հոյակապ հովիտը, որ կրում է Անմահություն անունը։ Եվ դեռ երբեք, կարծում եմ, Բայազետը կանգնած չի եղել այնպես ամուր ու անսասան, ինչպես այժմ...

Եֆրեյտոր Ուշաստկինը կրակեց մթության մեջ, և հրացանի կոթը, խփելով զինվորի ուսին, նրան շպրտեց հատակին։

— Այս ի՞նչ է կատարվում ինձ հետ,— զարմացավ նա վեր կենալով։

Բայց շուտով նկատեց, որ ոչ միայն ինքը, այլև մյուս զինվորներն էլ կրակոցից հետո ընկնում էին։ Եվ եթե սկզբից շատերը դեռ ամաչում էին իրենց թուլությունից, ապա հետո այդպիսի դեպքերը դարձան սովորական, և հրաձիգների շարանը, որ ձգվում էր հրակնատների շարքի երկայնքով, անընդհատ կոտրվում էր։ Մարդիկ սկսել էին իրենց նեցուկ դարձնել զանազան տախտակներ ու իշոտնուկներ, իսկ որոշ կազեմատներում սակրավորները զորանոցային տախտամածներ էին սարքել, և հրաձիգներն այժմ թշնամուն խփում էին պառկած։

— Շոգ է... ա՜յ թե բաղնի՞ք է,— բողոքում էին մարդիկ՝ սողալով տախտամածների վրա, և հենց տեղնուտեղն էլ ուտում իրենց բաժին գարին, հենց տեղնուտեղն էլ խմում, ինչ տալիս էին խմելու, հենց տեղնուտեղն էլ մի կողմ քաշվելով՝ բավարարում բնական պահանջը։

Ամոթի զգացումն արդեն մի տեսակ բթացել էր, և Բայազետի պաշտպանները ապրում էին այժմ միայն մի բանով.

— Դիմանալ, եղբայրներ։ Միայն թե չպարտվել Թուրքից...

— Իսկ օգնություն գալի՞ս է,— հարցնում էր մյուսը։

— Չի լինելու,— բարկանում էր Պոտյոմկինը։— Քեզ պատրաստիր մահացու վախճանի, իսկ օգնություն մի՛ սպասիր, փսլնքոտ։

— Դե՜հ, ուրախացիր...

— Ճիշտ այդպես,— պատասխանեց Ուշաստկինը։— Պատերազմը սարսափելի գազան է. մենք այստեղից կենդանի դուրս չենք գա, բայց Թուրքին Էրիվան չենք թողնի։

— Եղբայրնե՛ր, մեզ այսպես փամփուշտներն էլ չեն բավականացնի։

— Փամփուշտներ կճարենք։ Մի անգամ էլ արտագրոհի կգնանք...

— Դե, իհարկե, դա զինվորական պարտականություն է։

Իսկ պորուչիկ Կարաբանովը մեռնում էր։ Դեռ երեկ, խրոնճալով իր խելացնոր պարոնին, սպասյակ Տյապաևը նրա համար մի կերպ հոսպիտալային ապուր ճարեց։ Եփած էր ձիու

անլվա մսից, և կաթսայիկից այնպիսի գարշահոտություն էր փչում, որ Անդրեյը փակեց քիթը։ Իսկ երբ կերավ, բերանում այնպիսի նողկալի համ մնաց, որ պորուչիկը իրեն վատ զգաց. նա նորից ուշաթափվեց։ Առաջինը, ինչ նա լսեց ուշքի գալով, սպասյակի խնդրանքն էր՝ ուտել-վերջացնել ապուրի մնացորդը։

— Դու, իմ սիրելի,— ասաց պորուչիկը,— դու, վայրենի այլանդակություն, այ սպասիր, եթե այստեղից դուրս պրծնեմ, ես... ես քեզ կհարստացնեմ ոսկով։

— Ինձ պետք չէ հարստացնել,— պատասխանեց Տյապաևը։— Ավելի լավ է դու այլևս չհարվածես իմ դնչին...

Եվ այդ խնդրանքից Կարաբանովն ավելի շատ դառնություն զգաց։ Սպասյակը գնաց, և ծարավը որովայնը ոլորեց գրեթե սուր ցավով։ Զզվանքը թույլ չէր տալիս Անդրեյին խմելու թարախաջուրը, և նա չգիտեր ինչով հանգստացնել մարմնի այրուցքը։ Կարաբանովը հասկանում էր, որ կա ևս մի եղանակ։ Եվ այդ եղանակին շատերն են դիմում։ Բայց նա դեռ չէր փորձել։ Իսկ հիմա կփորձի։

Սենյակում ոչ ոք չկար։ Սակայն նա մտավ մի անկյուն՝ ասես ամաչելով ինչ-որ աներևույթ մեկից։ Այդ կեղտոտությունը խմել շատ դժվար էր։ Կարաբանովը որոշեց վերջացնել մի կումով և անմիջապես հասկացավ, որ այդ եղանակով հնարավոր չէ հագեցնել ծարավը։

Եվ նա դեն շպրտեց կեղտոտված գավաթը։

Դուրս եկավ։ Թուլությունից սիրտը խառնում էր։

— Ինչպիսի՜ նողկանք,— տնքաց նա թքելով։

Հանդիպեց Խրենովին. գալիս էր ծերուկը՝ ձեռքին ռազմաավարային հեռահար հրացանը, թափառական ուխտավորի պես ուսին քաթանե տոպրակ, իսկ տոպրակում՝ պահեստային փամփուշտներ։

— Իսկ դու դեռ չե՞ս սատկել, ծերուկ,— հարցրեց Կարաբանովը։

— Ինչո՞ւ շտապել, ձերդ բարեծնություն։ Ա՛յ, գոտկատեղս է գվվում, թե չէ էնպես, ինձ ոչինչ չկա։ Նույնիսկ շիկահերը ինձ չի կծում։ Ուրիշներից ձավարի նման հա թափվում է ու թափվում։ Իսկ ինձ վրա՝ ոչ մի հատ։ Երբեմն

ափսոսում ես, երբ անելիք չի լինում... Ինչ ուզում ես ասա, բայց էլի գործ է...

— Է՜խ, ծերո՜ւկ, ծերո՜ւկ... Քեզ ի՞նչ նյութից են քանդակել։

Կարաբանովն անցավ վրանի կողքով, որի տակ աշխատում էին պարսիկները, հարցրեց ժամապահին.

— Մի բան կստացվի՞։ Ե՞րբ կլինի ջուրը։

— Գիշերը բզբզում էին։ Երևում է հիմա պառկել են քնելու։ Լռել են։

Կարաբանովը բացեց վրանի վարագույրը։ Այդպես էլ կարցիրուցան թափված գործիքների մեջ պառկած էին մեռած պարսիկները։ Նրանց կողքին, ահագին խորությամբ, սկսել էր տալիս անջուր հորանցքը։

— Գնա այստեղից,— ասաց Կարաբանովը։— Այլևս քեզ այստեղ անելիք չունես... Գնա՛։

Իշխան Պոտյոմկին-Տավրիչեսկու հետ ունեցած բարեկամությամբ հպարտացող Կարաբանովների ցեղի մեջ Պուգաչևյան ժամանակներից կար մի այսպիսի ամոթալի ավանդություն... Անդրեյի նախատատը, որը արտակարգ գեղեցկության տեր կին էր, դուր էր եկել մի մուժիկ-ատամանի, և երկու տարի նա կնոջը ման է ածել տափաստաններում ու գետավազաններում։ Եվ իբր թե այդ կինը նրա համար որդի է ծնել, և այդ որդին եղել է Անդրեյ Ելիսեևիչ Կարաբանովի հարազատ պապը։ Ազգականներն այդ բանը թաքցրել են նրանից. նա տեսել է միայն դիմանկարը իր գեղեցկուհի նախատատի, որին գազանաբար այլանդակել է խանդոտ նախապապը, բայց այդ պատմությունը մի անգամ չէ, որ լսել էր ճորտ գյուղացիներից, և մինչև հիմա էլ, մինչև Բայազետի պաշտպանությունը, նա անհարմար էր զգում իր երակների մեջ եղած գեղջկական արյան համար։ Եվ միայն հիմա նա հանկարծ ցանկացավ մտնել որևէ մի Ուշաստկինի կամ Եգորիչի մաշկի մեջ, որպեսզի ահա նույնպիսի անվեհերությամբ ու տոկունությամբ, ինչպես նրանք, տաներ պաշարման բոլոր տանջանքները...

Բակում, ավազանի շուրջը օղակաձև կանգնած էր մարդկանց երկար տողանը։

— Ինչո՞ւ եք հավաքվել այստեղ,— հարցրեց նա։

— Հերթ է, ձերդ բարեծնություն։

— Ինչի՞ համար է հերթը։

— Քամիչի համար...

— Ինչի՞,— չհասկացավ Անդրեյը։

— Դեհ,— բացատրեցին նրան,— մեր անզգաները ասում են, մի-մի գավաթ մաքուր ջուր պիտի տան։

— Ո՞վ է վերջինը,— հարցրեց Կարաբանովը։

— Եկե՛ք, լավ... մենք ձեզ առաջ կթողնենք։

— Ո՛չ,— պատասխանեց Անդրեյը,— ես կկանգնեմ ձեզ հետ միասին...

8

Նրանք կանգնած էին պատի մոտ։

— Իմ մեջ դեռ այն ժամանակ միտք ծագեց,— ասաց Նեկրասովը,— սինուսը փոխարինել նրա երևակայական արտահայտությամբ։ Ա՛յ, այսպես... Այդ դեպքում կարելի է պատկերացնել, որ ենթաինտեգրալ մեծությունը առաջանում է b-ի հայտնի ֆունկցիայի ինտեգրացումից, որը տալիս է ահա այսպիսի արդյունք...

— Ես ձեզ հասկացա,— պատասխանեց Կլյուգենաուն և լտաբս-կապիտանի մատների արանքից խլեց վարգագույն ծեփի կտորը։— Այդ դեպքում՝ մինուս bx, բաժանած x-ի, պլյուս a-ից մինչև մինուս b-ի սահմանների միջև... Այստեղ ես գրում եմ այսպես։ Դիֆերենցելով, մենք կստանանք...

Վատնինը տանիքից ձայն տվեց նրանց.

— Դուք, ի՞նչ է, չե՞ք լսում։ Թուրքերը կսպանեն ձեզ, խելքի տոպրակներ...

Նրանց մոտեցավ Սիվիցկին։

— Ծխելու բան չունե՞ք, պարոնա՛յք։

— Չկա, Ալեքսանդր Բորիսովիչ։ Հարցրեք կազակներին։

— Նրանց մոտ էլ չկա։ Այ քեզ դժբախտությո՛ւն...

— Գուցե մեր խանի մոտ կա։

— Դա արդեն ոչ։ Շնորհակալ եմ խոնարհաբար։ Ավելի լավ է ոտքի փաթաթանը ծխախոտ դարձնեմ ու ծխեմ...

Ստվերի նման օրորվելով բժշկին մոտեցավ մի զինվոր։

— Ը՜-ը՜,— ասաց նա՝ ցույց տալով սպիտակ լեզուն։

— Մեծ թիակ է։ Գնա՛, եղբայր։

Սակայն զինվորը չէր գնում։

— Ը՜-ը՜,— ասում էր նա։

— Դե, ինչ ես ուզում։

— Ը՜...

— Դե լավ։ Թող այդպես էլ լինի։ Ասա, որ ես եմ կարգադրել։ Թող երեք գդալ շուր տա տիկին Խվոշչինսկայան։

Զինվորը գնաց։

— Ամբողջ ժամանակ ահա այդպես է... Հե՜յ, հե՜յ,— կանչեց բժիշկը մի զինվորի։— Քեզ մոտ ծխելու բան չի՞ գտնվի։

— Որտեղի՞ց,— պատասխանեց զինվորը։

— Հա՛, ծանր է...

Տեր Գերասիմը՝ բոբիկ, զինվորական պատառոտված վերնաշապիկով, վազելով անցավ կողքից՝ ձեռքում տանելով մի կտոր կարմիր միս։

— Որտեղի՞ց եք ճարել, տեր հայր,— հարցրեց Նեկրասովը։

— Ձիերը,— պատասխանեց քահանան, գողի պես նայելով շուրջը։— Ձիերը սկսել են սատկել։

— Այսօր ո՞րերորդ օրն է։

— Տասնյոթերորդ, պարոնա՛յք։ Տասնյոթերորդ...

Լռեցին։ Յուրաքանչյուրն իր մտքով էր տարված։

— Շտոկվիշն ասում է, որ իբր նրա կատվի ձագը փախել է։

Նեկրասովը, գլխի ընկնելով, ժպտաց։

— Պարետի ստամոքսից այն կողմ փախչելու տեղ չկա։

— Ես էլ այդպես եմ կարծում,— համաձայնեց Կլյուգենաուն։

— Որտեղի՞ց ծխելու բան ճարենք,— հարցրեց Սիվիցկին։

— Դենիսկան չկա, նա կճարեր։

— Դենիսկան այժմ հեռու է...

Նորից լռեցին։ Խոսելը դժվար էր։ Լեզուները ծարավից հազիվ էին պտտվում բերաններում։

— Դե լավ։ Հարկավոր է գնալ,— ասաց Սիվիցկին և գնաց։

— Լավ մարդ է,— մտորեց Նեկրասովը։

Նրանց մոտեցավ մի գնչուհի, քրջոտ ու սարսափելի, սակայն դեռ երիտասարդ։ Նրա վտիտ ոտքերը զգուշորեն շարժվում էին շիկացած քարերի վրայով։

— Իմ զավակի համար...— ասաց նա և պարզեց ձեռքի ափը։

— Ի՞նչ տամ քեզ,— հարցրեց Կլյուգենաուն։

— Տո՛ւր,— պատասխանեց գնչուհին։

— Ինձ մոտ ոչինչ չկա։

— Քեզ մոտ չկա, բարի սարդար... Այդ դեպքում ես որտեղի՞ց վերցնեմ։

— Գնա ախոռը։ Կարող է միս ստանաս։

Նա շուտով լաց լինելով հետ վերադարձավ.

— Բան չտվեցին... դո՛ւ տուր։

— Իսկ ինչո՞ւ հենց ե՛ս պիտի տամ,— հարցրեց Կլյուգենաուն։

— Իսկ ես տեսնում եմ... աչքերիցդ եմ տեսնում, որ քեզ ոչ մի բան պետք չէ։ Դու կտաս... Իմ զավակի համար։

Գնչուհուց հազիվ ազատվեցին, և Կլյուգենաուն տխրեց. նա խղճաց այդ մորը և կնոջը։

— Լավ չստացվեց,— ասաց նա։

Պոտրեսովը դուրս եկավ կամարի տակից՝ թարթելով կարմրած աչքերը։

— Ձեզ ի՞նչ է պատահել, մայոր։

Հրետանավորը դեմքը ծռմռելով հեծկլտաց.

— Գիտե՞ք, այնպես մեղք էին, այնպես մեղք էին... խեղճ ձիերը։

— Իսկ շա՞տ են սատկել։

— Երեկ Տագանրոգը, այնպիսի կովարար ձի էր։ Հետո Ֆատե հեծկան զամբիկը և կողքից լծվող երկու ձի՝ Մինսկը և Տիխվինը... Ես մտա այդ խեղճերի մոտ, իսկ նրանք ընկած էին... Եվ գլուխները մարդկանց պես դրել էին իրար վրա։ Որքան եմ խղճում նրանց, պարոնայք։ Չէ՞ որ նրանք դեռ քուռակ էին, երբ ինձ մոտ մարտկոց բերվեցին։ Այնպես ծիծաղելի էին, հաճելի...

— Տասնվեց օր առանց ջրի՝ ձիու համար վերջին սահմանն է,— նկատեց Կլյուգենաուն։— Չգիտեմ, այժմ կիմա-

նամ... Մարդկային կրքերի այս վեճում այդ անմեղ կենդանիները արժանի են հուշարձանի...

Կլյուգենաուն բացեց ախոռի դարպասները։ Ձիերը գլուխներն անմիջապես թեքեցին ներս մտած մարդու կողմը և խրխնջացին։ Սակայն, կարծես հասկանալով, որ ջուր չեն բերել, նրանք գլուխները նորից կախեցին, և պրապորշչիկն առաջին անգամ լսեց, թե ինչպես են տնքում կենդանիները՝ համարյա մարդկանց պես...

— Միշտ էլ այդպես է,— բացատրեց ձիավար զինվորը,— նրանց վրա նայելով՝ սիրտս մղկտում է, ձերդ բարեծնություն։

Կլյուգենաուն շարժվեց ձիանոցի երկայնքով, և ձիերը ատամներով քաշում էին նրա թևքերից՝ ասես մի բան պահանջելով։

— Զգո՛ւյշ, ձերդ բարեծնություն,— հուշեց ձիավարը։— Կարող են և կծել... Նրանց դույլ ցույց տուր, ատամներով կպոկեն։ Ամբողջ ման-չամանը փչացրել են։ Կամ էլ սկսում են մեկը մյուսի վրա հարձակվել։ Տեսնում եք, միմյանց ականջները կրծոտել են։ Վատ է մեր տառապյալների վիճակը...

Ձիերից մի քանիսը սմբակներով մոլեգնորեն փորում էին գետինը, ամեն րոպե հոտոտելով փոսը՝ կարծես սպասելով հողի միջից ջրի հայտնվելուն։ Հատկապես ուժասպառ եղած ձիերը այնքան չոր էին թվում, որ ասես ամեն տեսակ խոնավություն գոլորշիացել էր նրանց միջից։

Այո՛, դա սոսկալի տեսարան էր, և բարոնը իրեն շատ վատ զգաց։ Վերադառնալով իր խցիկը՝ նա երկար ժամանակ զբաղմունք չէր գտնում, հետո որոշեց փոխել ոտների փաթաթանները։ Բացեց ճամպրուկը իր ամուրիական իրերով, որոնք աներևակայելի խառնիփնթոր վիճակում էին, և նա երկար ժամանակ զանազան հնոտիների մեջ մաքուր փաթաթաններ էր որոնում։ Սպիտակեղենի կույտի մեջ կողքով փայլեց մի թիթեղատուփ, և Կլյուգենաուն անվստահ դուրս հանեց սպայական պահածոյի վաղուց մոռացված տուփը։

— «Նրբերշիկ սիսեռով,— կարդաց նա,— Մոսկվա, Լանին եղբայրներ, Ապպերի եղանակով։ Կե՛ր, մի տարակուսիր»։

Բարոնը նստեց հատակին, տակնուվրա արված ճամպրուկի առջև, և շշմածի պես երկար նայում էր պահածոյի տուփին։ Հետո վեր կացավ և, գլխարկը քաշելով, դուրս եկավ։ Նույնիսկ նրա ներբաններն էին վառվում, այնպես էր ճանապարհը երկատվում նրա առջև՝ գնա՞լ գնչուհու մոտ, որը «զավակ» ուներ, թե՞ Ագլայայի մոտ, որը ավելի մոտ էր ու հարազատ։

Նա ցցվել էր բակի մեջ, ինչպես դյուցազն ուղեբաժանի առջև, թիթեղատուփի բոլորակի վրա եղած աչքի զարնող մակագրությունը «Կեր, մի տարակուսիր», արդեն սկսել էր իր կողմը գրավել տառապյալներին։

Կլյուգենաուն շրջապատվում էր հետաքրքրասերների օղակով։

— Դա ի՞նչ բան է,— հարցրեց խրենովը։

— Պահածո է... Դա գերմանացին է հնարել։

— Դու մի՛ հայհոյիր նորին բարեծնության ներկայությամբ։

— Իսկ ես չեմ հայհոյում։ Դա այդպես գերմանացին է անվանել։

— Եփո՞ւմ են դա, թե հում-հում են ուտում։

— Է՛խ դու, գորշությո՛ւն։ Հարկավոր է սկզբից սպանել նրան։

— Չէ հա, մի՞թե։

— Այ քեզ չէ հա...

Կլյուգենաուն ձեռքերը լայն թափահարեց և բարձրացրեց տուփը։

— Ահա թե ինչ, եղբայրնե՛ր. կե՛ր, մի տարակուսիր։

Թուրքերի բոլոր հաշիվներով Բայազետն արդեն պետք է հանձնվեր և, բացելով դարպասները, հնարավորություն տար մուսուլմաններին դրսևորելու իրենց զայրույթը։ Ֆուիկ փաշան շտապում էր նետվել Չիգիլի լեռնանցքի մյուս կողմը, որպեսզի քրդական այրուձին սրընթաց շարժեր դեպի հյուսիս՝ ոտնատակ տալով Հայաստանի և Վրաստանի արգավանդ հողերը։ Ղազի Մահման անհամբերությամբ Կովկասի զանազան վայրերն էր ուղարկում իր լրտես-իլիմներին, և ահա բերեցին ուրախալի լուրը՝ Չեչենիայից և Դաղստանից հարված են հասցրել ռուսական բանակի թիկունքին։ Արյու-

նահեղ խռովություն էր սկսվել այն մարզերում, որտեղ մյուրիդները ժամանակին Ղազի Մահոմային ձեռքից բռնած խնամքով ման էին ածում։ Որքան հնարավոր էր շուտ ընկնել Չեչենիայի նեղ կիրճերը և ժայռերի վրա բարձրացնել մարգարեի կանաչ դրոշը։ Պատանդներով ու թոկերով, քարոզներով ու հարկերով խճճել, մարդկանց ձեռքերն ու ոտքերը կապկպել, որպեսզի նոր Իմամի իշխանությունն սկսի շողշողալ հզորության և փառքի պսակով։

Եվ գործին խանգարում էր միայն մի փոքր բան՝ Բայազետը...

— Ի՞նչ կա Բայազետից,— հարցնում էր ամեն առավոտ Ղազի Մահոման։

— Անհավատների խելագարություն,— պատասխանում էին նրան։

— Ես չեմ տեսնում դրոշները։ Այսօր միայն փայտերն են ցցված։

— Օ՜, մեծ մուդիր։ Այսօր քամի չկա, և անհավատների դրոշները կախվել են փայտերից, ինչպես ցնցոտիները սոված մուրացկանների վրա...

Եվ այն ժամանակ Ֆուիկ փաշան կարգադրեց նորից փակել ռուսների՝ դեպի ջուրը տանող ճանապարհները։ Այստեղ նա մասամբ թեթևակի հաղթանակ տարավ Բայազետի պաշտպանների նկատմամբ. զինվորներից շատերն այնքան համարձակ էին դարձել, որ իրենց հետ զենք չէին վերցնում, և թուրքերը մի գիշեր շատ կամավորներ կոտորեցին։ Այդ ջարդի ժամանակ բոլորից քիչ տուժեցին կազակները, դաշույնները և սրերը միշտ նրանց մոտ էին, և դա նրանց փրկեց կոտորածից։

Հետո նրանց փրկեց նաև այնպիսի փորձված հրամանատարի ներկայությունը, ինչպիսին եսաուլ Վատնինն էր, որը թմբազերծվելու համար, ինչպես ինքն էր ասում, նույնպես մասնակցեց ջրարշավին։ Նրանք մի կերպ դուրս եկան ամրոցից, թափանցեցին գետի այն կողմը գտնվող մեյդանը, իրենց համար պարենի որոշ պաշար ձեռք բերեցին։ Կազակներն առանձնապես նրբանկատություն չէին ցուցաբերում,

լարդում էին կողպեքները, խփում դուրս գցում դռները, մթության մեջ փնտրում, ինչ կարելի էր ատամի տակ դնել։

Այն մասին, թե որքան սոված են եղել մարդիկ, կարելի է դատել Բայազետի պաշտպանությունից հետո Թամանյան գնդում որպես խորունժի ծառայող, ականատես Զարեցկու պատմածից, որը հասել է մեզ։

«Հազիվ էինք մենք խրճիթ մտել,— պատմել է նա,— որտեղ երեք հորթ էր կանգնած, երբ իմ ընկերը անմիջապես նետվեց նրանցից մեկի վրա և դաշույնով կտրեց կոկորդը։ Անասունը դեռ չէր հասցրել ընկնել, երբ նա կտրեց անասունի լեզուն. հենց այդտեղ էլ իսկույն կրակ արեց հատակի վրա և, դեռ ինչպես հարկն է միսը չխորոված, կերավ»։

Վատնինը առաջնորդում էր մարդկանց, նրա մերկացրած ու պատրաստ պահած երկար սուրը սառը պսպղում էր լուսնի տակ։

— Կոյ թյուֆիեկ,— ծղրտաց նա մթության մեջ և ինչ-որ մեկի ճկուն կերպարանքը նետվեց մի կողմ, բղավելով.

— Կարդա՜շ, կարդա՜շ...

Վատնինը մի թռիչքով հասնելով զոհին՝ քիչ էր մնացել կտրեր գլուխը, երբ նկատեց ուսադիրները։ Զինվորը սարսափից դողում էր և չխկչխկացնում ատամները։

— Այդ ի՞նչ է, դու ինձ թուրքերե՞ն ես բղավում։

— Իսկ դուք, ձերդ բարեծնություն, ինչո՞ւ եք թուրքերեն հարցնում։

— Շատ ուժեղ ես տկտկացնում... Ատամներդ խնայիր։

Կազակները ամրոցից հեռու էին գնացել, երբ թուրքերը հարձակվեցին ջուր բերող զինվորների խմբի վրա։ Վատնինը չէր կարող օգնել նրանց, և այդ պահին կազակները հենց իրենք ստիպված եղան թաքնվել մի հսկայական դատարկ «գոմում»։ Նկատել էին նրանց, թե պատահաբար, խրճիթի շուրջը անմիջապես կուտակվեցին զինվորական տարազով մեծաքանակ թուրքեր՝ հրացաններին կցած յաթաղաններով։

— Վատ բան ստացվեց,— ասաց Վատնինը՝ մատով շոշափելով ատրճանակի թմբուկի մեջ եղած փամփուշտների գլխիկները։— Կարծես ընդամենը չորս հատ է... Դե լավ, հո հարյուր տարի չեմ կռվելու։ Չորսն էլ բավական է...

Նա բացեց դուռը և դուրս եկավ։ Մթության մեջ երևում

էր, թե ինչպես իրենից ոչ հեռու, մի հսկայական տափակ քարի վրա նստել էին մոտ հիսուն ռեդիֆ։

Վատնինը նույնպես նստեց մի քարի։

— Հարյուրապետ, ցնդե՞լ ես, ինչ է,— շշնջացին կազակները։— Եկ այստեղ, ծածկի տակ...

— Ես այստեղից ավելի հեռուն եմ տեսնում,— պատասխանեց Վատնինը։

Թուրքերը վեր կացան։ Փայլփլեցին յաթաղանները։

Վատնինը նույնպես վեր կացավ։

— Եղբայրնե՛ր, միայն միասին, համատեղ,— ասաց նա։— Առանց վառոդի։ Միայն սրերով...

Միանգամից նետվեցին նրանց վրա։ Նետվեցին լուռ, առանց ճիչերի։

Սրերը մթության մեջ երկնագույն կայծակներ էին արձակում։

— Ի՜-ի՜-ի՜... ի՜-ի՜-ի՜...— ճվճվում էին ուղահավատները։

Մի բոպեից ամեն ինչ վերջացավ։ Ձենքերն ու ծխախոտը դարձան մերը։ Մի սպանված կազակի որոշեցին չթողնել, այլ տանել ամրոց։ Այդպես էլ արեցին։ Սպանված շատ կամավորներ էին ընկած թերթաքարային սորուն դարալանջերի վրա։ Ամեն մի մեռելի մոտ ընկած էին նրա ճտքակոշիկները, որոնց միջի ջուրը թափվել էր։ Վատնինը անցողակի, առանց կանգնելու, շուռ էր տալիս ջրաբեր զինվորներին, որոնում կյանքի նշաններ ցույց տվող մարդկանց։ Նրանցից երկուսը միայն վիրավորված էին, նրանց բերեցին ամրոց։

Եսաուլը դժգոհությամբ ասաց Շտոկվիչին.

— Պետք չէ մարդկանց դուրս թողնել այսպես՝ դատարկ ձեռքերով։ Այդ ջրի համար մարդիկ բոլորովին գժվել են... Իսկ դուք պետք է հետևեք նաև, թե կամավորներն ինչպե՞ս են զինված։ Եվ ահա թե ինչ սրիկայություն ստացվեց. թուրքը միանգամից կես դասակ կոտորեց...

Շտոկվիչը գլուխը հետ գցած լռում էր, նոսր մազափնջերը ընկնում էին գորշ ճակատի վրա։ Թույլ տնքոց հանելով՝ պարետն արձակեց համազգեստի կոճակները, սկսեց հետ քաշել գոտու ճարմանդը։

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց Վատնինը։

— Ես նույնպես... եղել եմ այնտեղ... գետի մոտ,— պատասխանեց Շտոկվիչը։

— Վիրավորվա՞ծ եք։

— Ո՛չ։ Բայց ես, կարծես, չափից շատ եմ խմել այդ թույնից...

Վատնինը պարետին տարավ նրա՝ աղբով լցված խուցը, կապիտանի ոտքերից հանեց ճտքակոշիկները, փափկացրեց պառավական վտիտ բարձը։

— Այ թե օղի լինե՛ր,— ասաց նա։

Շտոկվիչը արձակեց անդրավարտիքը՝ թեթևացնելով փորը։

— Այսպես գուցե ավելի թեթև լինի,— ասաց նա։— Ես հո գիտեմ, որ դա մահ է... Մենք, եսաուլ, պտտվում ենք կախարդական կարուսելում։ Ջուր չենք խմում՝ սատկում ենք ծարավից, խմում ենք՝ նույնպես սատկում ենք... Ո՞րտեղ է փրկությունը։

— Ուղիղ մեջտեղը,— պատասխանեց Վատնինը։

9

Դարձյալ հրաձգություն։ Դարձյալ ոչ մի բոպե հանգիստ։ Դարձյալ թափվում է ռուսական արյունը։ Դարձյալ մեռնում են ծարավից։

— Մինչև ե՞րբ, աստվա՞ծ իմ,— հարցնում էին զինվորները։

Շտոկվիչը գաղթականներին առաջարկեց թողնել ամրոցը։

— Մենք ձեզ չենք վոնդում,— ասաց նա,— սակայն այլևս չենք կարող ոչ ջուր տալ ձեզ, որ հաց։ Մենք կմնանք այստեղ մեր պարտքը կատարելու, իսկ դուք գնացեք... Երեկոյան մենք ձեզ պարիսպներից կիջեցնենք քաղաք։ Մի՞թե թուրքերը չեն գթա ձեր երեխաներին։

Վրա հասավ երեկոն, բայց գոնե որևէ մի գաղթական համարձակվեր թողնել ամրոցը. ինչպես երևում էր, սովից ու ծարավից մեռնելը նրանց թվում էր ավելի լավ, քան սուլթանի զորքերի արյունալի մոլեգնությունը։

— Գրողը տանի դրանց,— համաձայնեց Շտոկվիչը,— այդ դեպքում թող համբերեն...

Բակում ականակիր լծկաններից մորթեցին մի հաղթամարմին քեղաձի՝ խոպեր մականունով։ Միսը բաժանեցին։ Ոմանք խորովում էին իրենց բաժինը, իսկ ոմանք էլ հենց այնպես...

— Ինչպե՞ս թե,— հարցրեց Նեկրասովը։

— Հենց այնպես,— պատասխանեց Ուչաստկինը,— ավելի արագ է...

Գիշերն ինչ-որ բան դղրդաց հեռվում՝ չոր ու հստակ։

Բայազետը լարեց ուշադրությունը։

— Կարող է նորից «գերմա՞ն» են բերել այստեղ,— հարցրեց Խրենովը։

Վերևում մի բան ճեղքվեց կենարար ճարճատյունով, ասես պարուսինի կտոր պատռեցին երկնքում, և մարդիկ հանկարծ դարձան երջանիկ։

— Ամպրո՞պ է, եղբայրնե՛ր... ամպրո՞պ։

Արթնացրին Շտոկվիչին.

— Ամպրո՞պ, ձերդ բարեծնություն...

— Հետո ի՞նչ։

— Չէ որ ամպրոպ է։

— Իսկ ի՞նչ օգուտ դրանից։ Ա՜յ եթե անձրև լիներ։

— Ուրեմն և անձրև կլինի։

— Դե դա հարց է։ Ամպերը կարող են շրջանցել...

Այդ գիշեր ամրոց եկավ Հաջի Ջամալ բեկը, նա կարողանում էր հայտնվել հանկարծակի, կարծես գետնի տակից՝ իր ճարպկությամբ և համարձակությամբ միշտ առաջ բերելով Բայազետի պաշտպանների զարմանքը։ Լրտեսին անմիջապես տարան Շտոկվիչի մոտ, և պարետը հարցրեց նրան.

— Դենիսկային հասցրի՞ր։

— Հասցրի,— պատասխանեց լրտեսը։

— Բարեհաջո՞ղ։

— Ամեն ինչ՝ յախշի...

Շտոկվիչը տնքտնքալով անկողնու վրայից ոտքերը իջեցրեց ցած։

— Քեզ այնտեղ մեծ փեշքյաշ է լինելու,— ասաց նա։— Միայն ոչ հիմա... Մենք գնահատում ենք քո ծառայությունը։ Քեզ «Գեորգիի» կներկայացնեմ։ Մուսուլմանական, իհարկե...

Մուսուլմանական «Գեորգիի» վրա պատկերված էր կայսերական արծիվը, և ոչ թե յոթգլխանի հրեշին հաղթող Գեորգի-Գորեդոնոսեցը, և դա առիթ տվեց նեղանալու։

— Ինչի՞ս է պետք ճնճղուկը,— զայրացավ լրտեսը։— Ջիավոր չիգիթին տուր... Չիգիթին եմ ուզում։ Ճնճղուկը ինքդ կրիր...

— Անցիր ուղղափառության,— ժպտաց Շտոկվիչը,— և չիգիթ կստանաս։ Չվիճենք այդ մասին... Ավելի լավ է ասա՝ ի՞նչ նորություններ կան քաղաքում։

Հաջի Ջամալ բեկն սկսեց թափընդհատ շնչել պարետի ականջին.

— Կալմիկ խանին ինչո՞ւ ես կախել։ Լավ խան էր, հասկանում էր ձիերից... Վաղը մի նետի սպասիր։ Քեզ մի նետ կուղարկեն, և նետի հետ նամակ կստանաս...

— Իսկ ի՞նչ կա նամակում։

— Քեզ կհայհոյեն։ Հիմար կանվանեն։ Ինչո՞ւ ես մարդկանց տանջում... Օսմանը հոգնել է։ Այլևս չապաուլ չկա։ Քրդերն սկսել են օսմանից խլել։ Օսմանը բարկացած է... Նրան հարկավոր է Ջեչենիա գնալ։

— Լա՛վ,— ասաց Շտոկվիչը՝ բաց թողնելով լրտեսին,— վաղը գնա մեյդան և ինչպես հարկն է տարածիր, թե իբր մենք ջրհոր ենք փորում, և արդեն հասել ենք ջրին։

Հաջի Ջամալ բեկը, թողնելով պարետին, երկար ժամանակ ծեծում էր Իսայմիլ խանի սենյակի դուռը. փոխգնդապետը երևի խորը քնած էր մանկական անխոով քնով, և բոլորովին անժամանակ այդ թխկթխկոցների վրա մթության միջից հանկարծ հայտնվեց Կլյուգենաուի կլոր դեմքը։

— Խոշ գյալդի,— արժանապատվությամբ գլուխ տվեց լրտեսը։— Բիս միլլյա։

— Սաղոլ, սաղոլ,— պատասխանեց Կլյուգենաուն և հարցրեց նրա ու նրա ընտանիքի առողջության մասին.— Նիչի՞կ սրն։ Քյուֆեթ նիչի՞կ դուր։

— Ջոխ յախշի մրն, չոխ յախշի բիս...

Ինչպես երևում էր, լրտեսը բավականություն էր ստանում ռուսական սպայի հետ իր մայրենի լեզվով խոսելուց, սակայն Կլյուգենաուն անցավ ռուսերենին և քաղաքավարի, բայց համառորեն լրտեսին հետ մղեց Իսմայիլ խանի դռներից.

— Խանը հոգնած է... Նա շատ է մտածել։ Պետք չէ խանգարել...

Սիվիցկին հենց նոր ավարտեց վիրավորների գիշերային բուժզննումը, ստուգեց՝ մեռածների տեղերն այսօր արդյոք ազատվա՞ծ են և անցավ դեղատնային պալատը, որտեղ ոպիրտ խմեց։ Վերջին օրերի լարվածությունն այքան մեծ էր, որ նա իրեն սովորեցրել էր յոլա գնալ գրեթե առանց քնելու, և հիմա նույնիսկ չէր ուզում քնել։

Սպիրտը թեթևակի մթագնեց նրան։ Արյունն սկսեց ավելի արագ հոսել։

— Այդպես, այդպես,— ասաց նա՝ տկտկացնելով հաստ մատներով։

Մի քիչ նստեց։ Խորհեց զանազան բաների մասին։

— Այո՜-ո՜...— հառաչեց բժիշկը։— Չէր խանգարի մի հատ ծխել։

Ասես կախարդանքով վերևից իջավ Լաթաքիայի անուշաբույր ծխախոտով լցված ծխամորճը և կպավ նրա շուրթերին։

— Ծխիր,— ասաց Հաջի Ջամալ բեկը։

Սիվիցկին բարկացավ.

— Քեզ քանի՞ անգամ կարելի է ասել, որ ման գաս նորմալ ձևով և ոչ թե գողեգող, ինչպես գազան։ Այստեղ քեզ համար լեռներ չեն...

— Ծխի՛ր,— լրտեսը մոմը մոտեցրեց նրան։

— Իսկ ծխախոտի համար սրտանց շնորհակալություն,— ասաց բժիշկը և հաճույքով պարուրվեց դուրեկան ծխի քուլաներով։

Հաջի Ջամալ բեկը նստեց դիմացը։ Ատամները ցցեց անհասկանալի քմծիծաղով.

— Դու լավ մարդ ես։

— Ըհը՛,— պատասխանեց Սիվիցկին, հափշտակված ծխելով։

— Բոլորը քեզ հարգում են։

— Ըհը՛,— պատասխանեց Սիվիցկին։

— Ինչպես երկնքում լուսին կա, այնպես էլ դու միակն ես երկրի վրա։

— Չափն անցկացրիր, եղբա՛յր,— պատասխանեց Սիվիցկին՝ ներծծելով ծխամորճը։

Բոցկլտացող կրակը լուսավորում էր նրա թոշնած, ճարպոտ կզակը և լմփոշ, փքված ռունգները՝ դուրս ցցված մազափնջիկներով։

Հաջի Ջամալ բեկը ժպտում էր.

— Ծխի՛ր, էլի կտամ...

Նա ձեռքը կոխեց բեշմեթի գրպանը և բժշկի առջև թափեց ոսկեգույն, մեղրաբույր ծխախոտի մի ամբողջ բլրիկ։

— Ես հարգում եմ քեզ,— ասաց նա։— Ֆուիկ փաշան նույնպես հարգում է քեզ... Դու լավ դոստ ես։ Ֆուիկ փաշան քեզ համար դոստ կլինի։ Ուղղահավատը բարեկամին չի նեղացնի... Ինգլիզը փախել է լազարեթից։ Ինգլիզը վախենում էր... Դու արի։ Դոստիդ կբուժես, փող կստանաս։ Շատ կնիկ կպահես։

— Այդ ամենը չափազանց հրապուրիչ է,— հանգիստ պատասխանեց Սիվիցկին։— Ես լսել եմ միսսիս Ուորենի հոսպիտալի մասին. այն հիանալի կահավորված է, ընդամենը երեսուն մահճակալ... Դրան ավելացրած և կանայք, ինչպես դու ես ասում։ Իմ հասակում այդ ամենը գայթակղիչ է։ Սակայն... Հետո ի՞նչ,— հանկարծ սկսեց հետաքրքրվել նա։— Ձեր մարդկանցից շա՞տ են սատկում Բայազետում։

— Շա՜տ։ Իսկ հիմա էլ ինգլիզն է փախել։ Բոլորովին հիվանդ վիճակում է օսմանը... Եկ բուժելու։ Մեծ մարդ կլինես։ Քեզ համար տխուր չի լինի։ Ֆրանկ կա, գերման կա...

— Դե ես դրա մասին չէ, որ անհանգստանում եմ,— շարունակեց Սիվիցկին,— ես մենակ չեմ կարող գլուխ հանել։ Իսկ թե իմ օրդինատորը կհամաձայնվի ինձ հետ գնալ, չգիտեմ։

— Կգնա, —ծիծաղեց լրտեսը։— Ինչո՞ւ չի գնա։

— Հարկավոր է հարցնել...

— Դե գնա հարցրու։

— Սպասի՛ր մի քիչ, շտապելու բան չկա...

Սիվիցկին մի քիչ էլ նստեց, ծխեց վերջացրեց ծխամորճը, հետո բղավեց.

— Հե՛յ, մորտուսնե՛ր։

Ներս մտան Վոլոգդայի նահանգում ծնված երկու հաղթանդամ երիտասարդ զինվորներ։

— Կապկպե՛ք սրան,— կարգադրեց Սիվիցկին։

Լրտեսին սկզբից ծեծում էր Շտոկվիչը, հետո հոգնեց և

հանձնեց Վատնինին, որը ձգտում էր միայն մի բանի՝ իմանալ՝ ի՞նչ է կատարվել Դենիսկայի հետ։ Հաջի Ջամալ բեկը նույնիսկ ծպտուն չէր հանում, շարունակում էր հավատացնել, որ ինքը Դենիսկայից բաժանվել է լեռնանցքում։

Վատնինը գազազեց և հանեց դանակը, բայց նրան մի կողմ քաշեցին, և Նեկրասովը, որ սովոր չէր այդպիսի տեսարանների, ասաց.

— Լսե՛ք, պարոններ, գուցե կապիտան Սիվիցկուն արած այդ բոլոր առաջարկությունները պետք է դիտել որպես կատա՞կ։

Եկավ Շտոկվիչի կատաղելու պահը, և նա այնպես գոռաց շտաբս-կապիտանի վրա, օգտվելով ամրոցի պարետի իրավունքներից, որ Յուրի Տիմոֆեևիչը հավատաց, որ այստեղ կատակի բան չկա։

— Սատանան ձեզ հետ,— ասաց նա,— արեք նրան ինչ ուզում եք, ես չեմ խառնվի...

Նեկրասովը գնաց։ Վատնինն ասաց.

— Սպանենք այս կեղտոտին։

— Յոխ, յոխ, ալայսեն թարիխ-թուգուլ,— ընթություն հայցեց լրտեսը։

— Վալլա՛, վալլա՛,— մերժեց նրան Վատնինը։

Սիվիցկին՝ կորացած ու ծերացած, վեր կացավ։

— Ամբողջ կյանքում,— ասաց նա,— ես բուժել եմ մարդկանց։ Երբեք ցանկություն չեմ ունեցել մարդուն ցավ պատճառել, իսկ ավելի ևս սպանել նրան։ Եվ զենքը միշտ իմ ձեռքերի մեջ քոր է առաջացրել... Եվ հիմա էլ ես զենք չեմ վերցնի ձեռքս։ Գնանք, ստորի մեկը, և ես քեզ կիջեցնեմ քո եղբայրակիցների մոտ։ Դուք բոլորդ մի բան եք...

Բժիշկը նրան հանեց տանիքը։ Արդեն լուսանում էր։

— Նայի՛ր ներքև,— կարգադրեց Սիվիցկին,— այնտեղ նեխում են քո ընկերները... Ցատկի՛ր նրանց մոտ, ուզիղ հուրիների գիրկը։

— Իմ ծխախոտը ծխեցիր,— ասաց լրտեսը։

— Եվ կծխեմ մինչև վերջ։ Չեմ գցի։ Այն ինձ պետք է։

Բժիշկը դավաճանին ոտքի հարվածով նետեց անդունդ։

— Ա՜-ա՜-ա՜-ա՜...— ներքևում մարեց ճիչը, և լսվեց մարմինը քարերին կպչելու թմփոցը...

Բայազետցիների՝ մեզ հասած ցուցմունքներում ասվում է, որ Հաջի Ջամալ բեկը մինչև վերջ չէր ջարդվել և դեռ երկար ժամանակ ջղաձգորեն շարժվում էր ներքևում, ինչպես վիրավոր իժ։ Այնժամ «սպաներից մեկը, զուտ մարդասիրական նկատառումներով, մի կրակոցով վերջ դրեց նրա տառապանքներին»։ Այդ սպայի անունը մենք չգիտենք։

Հաջի Ջամալ բեկը ճիշտ ասաց. թռչելով ամրոց եկավ մի նետ, ծածանելով պոչին կապած երկար ժապավենը, և թրթռալով խրվեց պատի մեջ։ Նրա գիշատիչ մարմնի շուրջը փաթաթված էր Ֆուիկ փաշայի առաջարկությունը պարունակող գրությունը՝ կայազորը հաղթողի ողորմածությանը հանձնելու մասին։

— Աստվա՜ծ իմ,— կշտամբանքով հոգոց հանեց Շտոկվիչը,— որքա՜ն անօրիգինալ ժողովուրդ են այդ օսմանլիները.. Մայոր Պոտրեսով, անհապաղ պատասխանեք նրան։

Թնդանոթները կարտեչ ժայթքեցին թուրքերի կողմը։ Երկրորդ նամակը թռչելով եկավ կեսօրվա մոտ։ Սպաները զբաղված էին մի նրբապահանջ և տհաճ հարցով, որի քննարկմանը ստիպված եղավ մասնակցելու նաև գնդապետ Խվոշինսկու այրին։

— Ագլայա Եգորովնա, որքան էլ դա ցավալի լինի, բայց այս դեպքում շոշափվում է ձեր հանգուցյալ ամուսնու պատիվը։ Միայն մի նեղացեք... Մեր կողմից մահապատժի ենթարկված Հաջի Ջամալ բեկին,— շարունակեց Շտոկվիչը,— ես պատիվ չեմ ունեցել մոտիկից ճանաչելու, սակայն Նիկիտա Սեմյոնովիչը իմ ներկայությամբ նրան երաշխավորեց գնդապետ Պացևիչին, և երաշխավորեց բավականին հիացական արտահայտություններով։ Ասացեք, խնդրում եմ, ձեր ամուսինը իրո՞ք միշտ վճարում էր լրտեսին։

— Որքան ես հիշում եմ,— ասաց Ագլայան,— նա գրեթե յուրաքանչյուր անգամ լրտեսի հետ հանդիպելիս նրան դրամ էր տալիս։ Մի անգամ նա չուզեց բացել գանձարկղը, և մի քանի ոսկի խնդրեց ընտանեկան խնայողություններից։ Եթե պետք է, ես կարող եմ Նիկիտա Սեմյոնովիչի թղթերի մեջ փնտրել այդ վճարումների որևէ հաստատում։

— Այդ հարցով հաշվետվությունը,— խոսակցության մեջ մտավ Կլյուգենաուն,— Պացևիչի թղթերի մեջ բոլորովին բացակայում է և նույնիսկ ակնարկ չկա լրտեսի հետ դրամական հարաբերությունների վերաբերյալ։

— Սատանան գիտի, թե ինչ է կատարվել,— զայրացավ Նեկրասովը։— Ինչ-որ վանկա-կայենություն է այստեղ, և ոչ թե կայազորային ծառայություն... Եկեք, պարոնայք, չթաղվենք այդ հարցի մեջ,— առաջարկեց շտաբս-կապիտանը։— Հանգուցյալներին արատավորել չարժե, նույնիսկ այն դեպքում, եթե այստեղ Պացևիչը մեղավոր է։ Ավելի շուտ Հալի Ջամալ բեկին ձանձրացրել էր ձրի ծառայելը, և որպես մուսուլման, նրան ավելի հարմար էր թվացել ծառայել հենց մուսուլմանությանը...

Դրանով ավարտվեց վեճը, և Շտոկվիչը նկատեց ներս մտած Պոտրեսովին.

— Ի՞նչ եք ուզում, մայոր։

— Նորից նետ, պարոն պարետ։

— Ուրեմն պատասխանեք։ Դուք գլուխ ունեք ձեր ուսերին։

Եվ Բայազետի հրանոթները պատասխանեցին։

10

Պարսկաստանի կողմերից, անցնելով Արարատյան բարձունքները, լողում էին դանդաղաշարժ և մռայլ ամպերը՝ եզրերը երանգավորելով կապարային ծանր փայլով։ «Սուրբ Գրիգոր Լուսավորչի» քամին, որ կեսօրից հետո փչում էր դեպի հովիտը, իր հետ բերում էր երկար սպասված թարմությունը։ Արևախաշ եղած մարդկանց տանջանքները վերջացան և այդ օրերին առաջին անգամ փչեց զովաշունչ քամին։

— Երկինքն սկսում է մեզ հովանավորել,— ասաց Կլյուգենաուն։— Միայն թե քամին չքշի հեռացնի այդ ամպերը։

Նեկրասովն այցելեց Շտոկվիչին, որը տանջվում էր ստամոքսի ցավերից, և ասաց նրան։

— Այն բանից հետո, ինչ մենք իմացանք լրտեսից, ինձ թվում է, ձեր կողմից ուղարկված Դենիսկա Օժոգինը կարող էր և տեղ չհասնել...

— Ես էլ եմ այդպես կարծում,— պատասխանեց Շտոկվիչը՝ շուռումուռ գալով պարանի պես պինդ ոլորած սավանների վրա։

— Բայց սովն ու ծարավն ավելի ու ավելի չարագուշակ են դառնում,— շարունակեց Նեկրասովը։

— Ավելի պարզ ասեք,— արձագանքեց Շտոկվիչը բորբոքված։— Առանց այն էլ արդեն պարզ է, որ մեկ-երկու օր էլ՝ և մենք կքայլենք դիակների վրայով։

— Այո՛,— ավարտեց Յուրի Տիմոֆեևիչը,— և ինձ թվում է, որ Թիֆլիսում մեր վիճակը չիմանալուց է միայն հետաձգվում Իգդիրից մեզ օգնություն ուղարկելը... Ես կարծում եմ, որ արժեր մի անգամ էլ կամավոր ուղարկել կորդոններից այն կողմ։

— Չեն հասկանա,— պատասխանեց Շտոկվիչը,— կուշտը սոված երբեք չի հասկանա։ Ասենք... Թող գնա ով ուզում է, մի ավելորդ բերան կկտրենք կաթսայից...

Այս անգամ գնալու ցանկություն հայտնեց Եգորիչը, իսկ նրա հետ էլի երկու հայրենակիցներ, միևնույն Պրոխլադնայա ստանիցայից, և ամբողջ օրը կազակը պառկած անցկացրեց պատշգամբում, փորձված որսորդի սրատես աչքերով, ուշադիր զննելով, թե ինչպես ավելի լավ կլինի դուրս պրծնել քաղաքից, որպեսզի հանկարծ թուրքերը չհանդիպեն։

Վատինը չալարեց բարձրանալ նրա մոտ, նստել գնդակների տակ։

— Տեսնո՞ւմ ես այն հեղեղատը,— ցույց տվեց նա։— Աշխատիր գաղտագողի անցնել նրա երկայնքով։ Եթե հանկարծ որևէ բան պատահի, մտիր խրճիթները, մի քիչ սպասիր, հետո հետնաբակերով շարժվիր առաջ...

— Նայի՛ր,— ասաց նրան Եգորիչը,— թուրքը կարծես հազարականների նշաններ է ցուցադրում։ Նրանց ռազմաճամբարները դարձյալ փոխում են տեղերը։

Այո՛, այդ ամբողջ օրը թշնամին նորից զբաղվում էր իր զորքերի ինչ-որ տարօրինակ տեղափոխություններով։ Ինչ-որ մի բան թուրքերի մեջ տագնապ էր առաջացրել, և նրանց ջոկատները, աղմուկով հավաքվելով հրապարակներում, շտապում էին դեպի հյուսիս. անասունների նախիրները նորից քշում էին Վանի ճանապարհով։

Վատնինն այդ մասին զեկուցեց Շտոկվիչին, և վերջինս վախեցավ։

— Աստվա՜ծ իմ,— ասաց կապիտանը,— մի՞թե մենք այստեղ իզուր տառապեցինք։ Մի՞թե նրանք թքելու են Բայազետի վրա, և մեզ թիկունքում թողնելով, այնուամենայնիվ, շարժվելու են դեպի Կովկաս...

— Չեմ կարծում այդպես լինի,— պատասխանեց հարյուրապետը։— Կայազորում այնպիսի լուր է տարածվել, որ իբր գնդապետ Շիպչեն արդեն գրավել է Քարվանսարայի լեռնանցքը, և այժմ թուրքական տասներկու հազար զինվորներ թաղվել-մնացել են Թեբերիզի մոտ։

— Շիրին-սյոզլյար,— մռայլորեն ժպտաց Շտոկվիչը,— մեղրաբույր են քո խոսքերը, կազակային իմաստության լուսատու...

Վատնինը նեղացավ.

— Դե գնացեք բոլորդ... Դա հո ես չեմ հնարել։ Լուրն է այդպիսին...

Շտոկվիչը անմիջապես դուրս եկավ եսաուլի հետևից, նայեց երկնքին։

— Գուցե և գիշերվա կողմերը անձրև թափվի,— մտածեց նա։— Լավ կլիներ...

Նրան հանդիպեց յունկեր Եվդոկիմովը, որն այդ օրերին ծերացել էր։ Պատանու երբեմնի մաքուր և վարդագույն շրթունքների մոտ այժմ խոր կնճիռ էր դրոշմվել, և թվում էր, թե այդ խորշոմն իր մեջ չորացած կեղտից սեպվել էր յունկերի դեմքի մեջ։

— Մեր Ապոլոնը ծերացել է,— բարեկամաբար կատակեց Շտոկվիչը։— Բարեկամս, չէի՞ք ցանկանա, արդյոք, հայտնվել հիմա Ժնևում։

— Գրողի ծոցը գնա Ժնևը,— կոպիտ պատասխանեց յունկերը։— Եթե միայն կենդանի մնամ, հարսնացուիս կբերեմ այստեղ, այս սրբազան ավերակները։

— Սրանք, իրո՞ք, այնպես սրբազան են, ինչպես ձեզ թվում է,— կասկածանքով ասաց Շտոկվիչը և հանկարծ ընկնելով քարերի վրա, սկսեց հոլի պես պտտվել՝ ոտքը վեր քաշելով։

— Ի՞նչ պատահեց ձեզ։

— Օ՜,— պատասխանեց Շտոկվիչը։

— Դուք վիրավորվա՞ծ եք։

— Օ՜յ...

— Եֆրեմ Իվանիչ, կանգնեցեք։

— Օ՜յ, օ՜յ...

Միայն այդ պահին Եվդոկիմովը նկատեց, որ պարետի ձախ ոտքի ճտքակոշիկի կրունկից մինչև թաթը կտոր-կտոր է արված թուրքական գնդակով, և Շտոկվիչը մեկեն սկսեց հստակորեն խոսել.

— Ես դրանց բոլորի այս ու այնը... ո՜ւհ, ո՜ւհ, ավաղակնե՜ր...

Յունկերը թեթևացած շունչ քաշեց.

— Փա՜ռք աստծո, հայհոյեցիք։ Թե չէ ես վախեցա...

Վազելով մոտեցան զինվորները, կարեկցելով սպային, նրան տարան հոսպիտալ, որտեղ Սիվիցկին պարետին դիմավորեց գրեթե ուրախությամբ։

— Ա՜-ա՜,— ասաց նա, նայելով ճտքակոշիկին։— Վերջապես և դուք բարեհաճեցիք ինձ մոտ գալ։ Բոլորին արդեն բերել տարել են, միայն դուք էիք համեստություն անում։ Տեսնենք ինչ է պատահել ձեզ... Ագլայա Եգորովնա՜, պատրաստեք պրավատցը և տվեք ինձ հրեն՝ այն կորնցանգը։

Պարզվեց, որ թուրքական գնդակը կրունկը պատռելով անցել է ամբողջ ոտնաթաթի երկայնքով և մնացել մեծ մատի ոսկրի մոտ։

— Դա ցավոտ է,— համաձայնեց Սիվիցկին և փորփրելով հանեց գնդակը։— Բայց, այնուամենայնիվ, ավելի լավ է թաթին կպչի, քան գլխին... Պարոն կապիտան, ստիպված կլինեք պառկել մեր միջավայրում։

— Այդ էր պակաս,— պատասխանեց Շտոկվիչը։— Ամբողջ կայազորը հիմա իմ հույսին է մնացել...

Սիվիցկին մկրատով կտրեց պատռված անպետք հյուսվածքը, որպեսզի վերքը վտանգազերծի ոսկրախտից, դուրս հանեց փշրված մատոսկրի բեկորները։

— Ա-ա՜-ա՜-ա՜,— ցավից սկսեց գոռալ Շտոկվիչը, կորանալով սեղանի վրա՝ փորը վեր ցցած։

— Դուք ինչ-որ բա՞ն եք ուզում ասել,— հարցրեց Սիվիցկին։

— Այո՛,— ասաց Շտոկվիչը նվաղելով։— Ես ուզում ։։ շնորհակալություն հայտնել ձեզ և խնդրել, որ դուք ինձ հենակ տաք։

Նա իսկապես բանի տեղ չդրեց լազարեթում պառկելու վերաբերյալ բժիշկների խորհուրդները և գնաց՝ անհմուտ առաջ գցելով հենակը, իսկ վիրավորվելուց հետո դարձավ ավելի շար, ավելի անտանելի։

Զինվորները, սակայն, գթում էին նրան։

— Այդ շունը, ախր,— ասում էր Պոտյոմկինը,— սիրելու բան չէ։ Բայց շատ պինդ մուժիկ է, գործը գիտի։ Միայն թե, եղբայրներ, ես այնպես եմ կարծում, որ նա այժմ ոչ միայն բռունցքով, այլև հենակով կսկսի ծեծել մեզ...

Եվ, իրոք, շուտով հենակը գործի դրեց. առաջինը նրա հարվածների տակ ընկավ ինչ-որ զինվոր, որը ախոռում ձիու կողքից (դեռ կենդանի ձիու) մի կտոր միս էր կտրում։

Նեկրասովը, հավանություն չտալով զինվորի արարքին, այնուամենայնիվ, նրան պաշտպանության տակ առավ։

— Սարսափելի է նայել ձեզ, պարոն պարետ,— ասաց նա՝ բռնելով հենակը։— Բաց թողեք այդ կացոյին... Մենք չգիտենք, թե մարդկային հուսալքության ինչ չափանիշ կարող է լինել։ Իսկ ձիերին հարկավոր է մորթել, և ոչ թե լեշ դարձնել։

— Ձեզ միայն խժռելիք տուր,— դժգոհ պատասխանեց Շտոկվիչը։— Իսկ սատկած ձիերի համար Թիֆլիսում ե՛ս պիտի պատասխան տամ և ոչ թե մեկ ուրիշը։ Թող մորթեն միայն այն ձիերին, որոնք սատկելու վրա են...

Նրանց գլխավերևում հանկարծ որոտաց ամպրոպը։

Երկուսն էլ նայեցին երկնքին.

— Իմաստուն Իլյան ինչ-որ տեղ գնաց իր գործերով։

— Լավ կլիներ,— պատասխանեց Նեկրասովը,— որ նա իր բեռնակառքը կանգնեցներ հենց մեր ամրոցի վերևում։

— Եվ ցայտեր,— ասաց Վատինը՝ մոտենալով նրանց։— Թեկուզ օշարակ կամ կվաս...

Ալեկոծված ամպերը, քուլա-քուլա բարձրանալով հեռվում, հագենում էին անձրևային ծանրությամբ, և այժմ ամեն ինչ կախված էր քամու պոռթկումից։

— Հը, ի՞նչ կա այնտեղ,— հարցրեց Շտոկվիչը եսաուլին։— Կազակները պատրաստ են գնալու։

— Կգնան, հենց որ մթնի,— պատասխանեց Վատինը։

— Կհասնե՞ն արդյոք,— սկսեց կասկածել Նեկրասովը։

— Կհասնե՛ն,— հավատացրեց նրան եսաուլը։— Եգորիչը, գիտես, նույնիսկ մի ռուբլի պարտք վերցրեց ինձանից։ Ասում է՝ հենց որ Իգդիր հասնեմ, պիտի խմեմ... Ես նրան տվեցի, թող խմի սոված փորին։

Երեկոն այդ օրը, ամպամած երկնքի պատճառով, վրա հասավ սովորականից շուտ, և հենց առաջին մթության հետ մարդկային բոլոր ցանկությունները, ջրի և կյանքը փրկելու վերաբերյալ բոլոր խոհերը հանկարծ սկսեցին երևան գալ ավելի սուր, ավելի անկեղծորեն։ Կազեմատները լցված էին ջրի մասին մոթմոթացող, ջրի մասին երազող հիվանդ զինվորների տենդային ծանր զառանցանքներով։

— Գիշերը պարիսպներից ցած գցեք սատկած ձիերին,— հրամայեց Շտոկվիչը։— Հրեք նրանց որքան կարելի է հեռու, որ վարակն ավելի քիչ լինի։

«Մութ գիշերներին,— պահպանվել է այսպիսի մի վկայություն,— դա հասարկ բան էր, սակայն լուսնյակ գիշերները վրա հասնելուն պես, երբ յուրաքանչյուր շարժում կործանիչ կրակ էր առաջ բերում, ստիպված էին լինում երկուերեք օր սպասել հարմար պահի։ Չնայած խիստ արգելքին, զինվորները սողալով մոտենում էին արդեն նեխող ձիերին, որպեսզի կամ մի կտոր միս կտրեն, կամ էլ պատռելով ձիու փորը, հագեցնեն ծարավը... Ընտելացած լեշերի գարշահոտությանը, որով հագեցված էր նրանց շնչած օդը և նրանց խմած ջուրը, նրանք չէին կարող ինչ-որ վանող բան գտնել նաև քայքայվող անասունների մսի մեջ...»։

Կարաբանովը մի անգամ այդ զբաղմունքի մեջ բռնեց իր սպասյակին՝ Տյապաևին և, օձիքից բռնած հետ քաշելով լեշից, չգիտեր ինչ անել՝ մի լավ ծեծե՞ր, թե խղճար։

— Դու ինչպե՞ս կարող ես,— զզվանքով հարցրեց նա զինվորին։

Զինվորը կանգնել էր նրա առջև հնազանդ ու հանգիստ։

— Դու էլ կարող ես,— պատասխանեց նա սպային։— Իսկ ինչո՞ւ այդպես չես անում։ Մեռնել պետք չէ...

Ամրոցից հեռանալուց առաջ Եգորիչը մտավ Կարաբանովի մոտ հրաժեշտ տալու, երկու մատով պորուչիկի առաջ խնամքով դրեց թանկագին քարով մի մատանի։

— Դենիսկան է ինձ հանձնարարել պահպանել այն,— բացատրեց նա։— Իսկ դա չէ որ ձերն է, ես հիշում եմ։ Վերցրե՛ք...

Կարաբանովը ակամայից հիշեց մութ ճանապարհը և ձիու արագ վազքը, հիշեց, թե ինչպես ինքը մատից հանեց այդ մատանին՝ փոխանակելով ձիու հետ, և Ագլայային հիշեց, նրա շնչառությունը կառքի խավարի մեջ, իր շրթունքների վրա զգաց նրա շրթունքների համը։

— Պետք չէ, Եգորի՛չ,— պատասխանեց նա,— վերցրու քեզ։ Ողջ կմնաս, նվիրիր այն քո կնոջը։ Նա կապշի այդպիսի նվերից։ Չէ որ կնոջդ, հավանաբար, դու ոչինչ չես նվիրել։

— Է՜, ի՞նչ նվեր... Եղել է, երբ ես նրա վերջին շրջազգեստը ձեռքից առել խմիչքի եմ տվել։ Նա ինձանից ոչ մի նվեր չի տեսել։ Դրա փոխարեն ես էլ, բացի հայհոյանքներից և եղանակովից նրանից ոչինչ չեմ տեսել։

— Ահա և նվիրիր նրան,— ասաց Կարաբանովը։— Հետո էլ չեն լինելու ո՛չ հայհոյանքներ և ո՛չ էլ եղանակով... Իսկ հիմա գնաս բարո՛վ, եղբա՛յր։ Ների՛ր, եթե նեղացրել եմ։ Ծառայությունը ծառայություն է, և այն էլ այնպիսիների հետ, ինչպիսին դուք եք՝ առանց նեղացնելու յոլա չես գնա։ Դու զննե՞լ ես, ինչպես ավելի լավ կլինի անցնել...

Այո՛, Եգորիչը լավ էր զննել. դեռ երեկոյան նկատեց, որ թուրքերի մոտավորապես մի վաշտ իջավ դեպի Արարատի լանջերը, և նա այդ ճանապարհը անմիջապես մի կողմ գցեց, ուրիշ ճանապարհով տարավ կամավորներին։ Թաքնվելով ուղեկալներից՝ կազակներն աննկատելի անցան գետի մոտից, արմունկների վրա սողալով դուրս եկան մյուս ափը։ Նրանցից մեկը սկսեց զկոտալ։

— Միտյայ, սատկես դու,— բարկացավ Եգորիչը։

— Մի կոկոա...— պատասխանեց Միտյայը։

Կազակների փորերի մեջ՝ ինչպես տիկերում, լղլղում էր ջուրը։ Ջրի միջով անցնել ու ջուր չխմել, հիմարություն կլիներ, և հատկապես նրանց վիճակում։ Այդ պատճառով էլ նրանք ուզածի չափ կուշտ ջուր խմեցին և ուրախ կլինեին ավելին չխմել, բայց ոչ մի կերպ չէին կարողանում։ Ջուրն անմիջապես իրեն զգացնել տվեց, և կազակներից մեկը շուտով, բոլորովին անպատեհ ժամանակ, նստեց ցանկապատի մոտ։

— Կամաց,— ասաց Եգորիչը,— կարծես ֆալկոնետից են կրակում։

— Այս դեպքում չես կարող հրամայել,— պատասխանեց կազակը։

Շարժվեցին առաջ։ Քաղաքից հենց դուրս գալու ժամանակ, որպեսզի շրջանցեին թուրքական ուղեկալների խարույկները, կազակները գաղտագողի անցան խոր ձորակի եզրով։ Ներքևում գահավեժ զառիթափ էր, որը փլվում էր ամեն քայլափոխում, սրերի պատյանները կախ էին ընկել ոտքերի միջև և ցատկելիս խանգարում էին։ Վերջապես կողքից ձգվեց մի հյուսված ցանկապատ, և ձորակի անձուկ եզրը խիստ նեղացավ։

Եգորիչը գնում էր վերջից։

— Ապա մի օգնի՛ր,— ասաց նա։

Նա բռնեց ցանկապատից դուրս ցցված ճիպոտից, բայց ճիպոտը պոկվեց, և փորձված կազակը գլորվեց ներքև։ Միայն հաջողեց կծկվել և գլուխը ծածկել ձեռքերով։ Վար գցեց նրան՝ մեկ, մեջքին խփեց՝ երկու, շուռ տվեց, ինչ-որ բանով թրմփացրեց վերևից, և նա ծոծրակով մխրճվեց մի ինչ-որ բանի մեջ։ Կազակը նայեց վեր՝ նրա վրա բարձր երկնքի նեղ ծերպն էր։ Հայրենակից-ընկերները ձորակի ներքևից չէին երևում։ Եվ այդ պահին էլ ահա ջարդված գլխից սկսեց արյուն հոսել։ Սուրը ձգեց, ուղղեց դաշույնը, ուզեց վեր կենալ։

— Կարդաշ... կարդաշ...— լսվեց վերևից, և դրան հետևեցին կրակոցները, փայլատակեց կրակը, իսկ հետո հեղեղի նման աղմուկով փլվեց ավազը, և երկու սպանված կազակները գլորվեցին Եգորիչի մոտ։

— Միտյա՛յ, Միտյա՛յ,— թափահարեց նա մեկին. լռում էր։— Ֆեդյունկա՛, ա՛յ Ֆե՛դ, Ֆե՛դ, Ֆե՛դ,— և մյուսն էր լռում։— Սպանել են, ստորները...

Եվ ահա այդպես էլ փրկվեց Եգորիչը. եթե նա չընկներ այդ ձորակը, հիմա նույնպես պառկած կլիներ հայրենակիցների կողքին՝ թուրքական գնդակներով ծակծկված։ Եղինջի թփուտները ծակում էին կազակի ձեռքերը։ Նա պոկոտեց թփուտները, ձորակի հատակին դաշույնով ու ձեռքերով գերեզման փորեց։ Նրա մեջ գլորեց հայրենակիցների դիակները, նրանց վրա աղոթք կարդաց և ծածկեց հողով։

— Ննջեք խաղաղությամբ։ Դուք զոհվեցիք ռուսական հողի և մեր կազակային մեծահռչակ համբավի համար...

Արշալույսը վրա հասավ, երբ Եգորիչը արդեն լեռներում էր։ Նա խուսափում էր թուրքական մեծ ճանապարհներից, ավելի շատ գաղտագողի գնում էր հեղեղատների եզերքներով։ Խիտ կանաչների միջով առվակներ էին վազում, և նա կպչում էր դրանց դառը շրթունքներով։ Ջուր խմելու ցանկությունը գրեթե հիվանդագին էր, և որքան շատ էր խմում, այնքան ավելի ուժեղ էր ուզում խմել։ Իսկ որովայնի սոսկալի ծակոցները հաճախ նրան վայր էին գցում խոտերի մեջ, կազակը մռնչում էր ցավերից, բարձրանում դժվարությամբ։

Մի տեղ քրդական կոշիկ գտավ և սկսեց վախենալ։ Իսկ լեռներն արդեն վերջանում էին. առջևում բացվում էին Հայաստանի հովիտները, այգիների կանաչի մեջ ծխում էին գյուղերը, կանաչ լեռնալանջերի վրա ցրված էին ոչխարի՝ խոշոր ողկույզների նմանվող հոտերը։ Գողի պես շուրջը նայելով՝ Եգորիչը դուրս եկավ ճանապարհի վրա, փորձված ականջը կպցրեց նրան. լսում էր «սակման»։

— Կարծես թե խաղաղ է,— եզրակացրեց նա և հենց այդտեղ ձիու թարմ հետքեր նկատեց։— Մե՛րն է, կազակային է...

Ներուկն արտասվեց՝ ծունկի իջած ձիու սմբակի դրոշմահետքի առջև։ Պայտը նոր էր, իսկ և իսկ ռուսական զորքերում օգտագործվողներից, և նայելով դրան՝ մեղք չէր և լաց լինել։

—Մե՛րն է, կազակային,— հոսում էին արցունքները Եգորիչի դեմքի վրայով...

Կապիտան Շտոկվիչը կամավորներին կարող էր և այս անգամ չուղարկել Տեր-Ղուկասովի մոտ, քանի որ հենց այդ գիշեր, երբ Եգորիչը թողեց ամրոցը, բերդի ներսը թափանցեց Իգդիրի լրտեսներից մեկը։ Դա օսեթական ուրյադնիկ էր՝ մեծ արժանապատվության տեր մի մարդ, ինչպես և օսեթներից շատերը։ Գլխի փոշոտ փափախն այնքան երկար ու խուճուճ բուրդ ուներ, որ ոչ ոք չէր կարողանում նայել նրա աչքերին։

— Ի՞նչ եք բերել,— հարցրեց Շտոկվիչը, երբ լրտեսին խուզարկեցին։— Ասեք կամ հանեք ցույց տվեք։ Ձեր ցնցոտիների մեջ ինչ ուզեք կարելի է թաքցնել, բայց գտնելը՝ չես գտնի։

Օսեթը ձեռքը դրեց ազդրի վրա։

— Այստեղ խաբար,— ասաց նա։— Գեներալ գրում է քեզ... Ինձ հարկավոր է կտրել։ Կտրիր ինձ... Խաբար կլինի։

Թեթև կաղալով նա գնաց հոսպիտալ, և Սիվիցկին լրտեսին պառկեցրեց վիրահատման սեղանի վրա։ Օսեթը հանգիստ պառկած էր մի քանի լապտերների լույսի տակ և օգնում էր բժշկին շալվարը ցած քաշելու։ Եվ նրանից ոչ մի տնքոց չլսեցին, երբ բժիշկը սկսեց ճեղքել շտապ կարված դեռ թարմ սպին։

— Ճանապարհ վատ է,— պատմում է օսեթը՝ ժպտալով և նայելով Ագլայային։— Քուրդ ման գա, գնչու ման գա, ջհուդ ման գա։ Իսկ ինձ չեն թողնի ման գա։ Ութ քուրդ սպանել եմ, մինչև խաբար բերել...

Լրտեսի ազդրից Սիվիցկին հանեց սպիի ճեղքվածքի մեջ թաքցրած ատրճանակային մի փամփուշտ, և այդ փամփուշտը տարան ամրոցի պարետի մոտ։ Շտոկվիչը պարկուճից հանեց փոքրիկ խողովակի նման փաթաթված գրությունը, կարդաց և ուրախ քրքջալով, ասաց.

— Պարոնայք, այժմ մենք փրկված ենք... Լսեցե՛ք, թե ինչ է գրում մեզ Արզաս Արտեմիչը.

Մի ոտքս այստեղ, մյուս ոտքս այնտեղ,
Իգդիրից եմ ես հարձակվում ահեղ,
Այդ պորտաբույծներին շարդելու հավասով՝
Միշտ ձեզ հավատարիմ Ա. Ա. Տեր-Ղուկասով։

Ֆուիկ փաշայի հերթական ուղերձով մի նետ կպավ հենց կալմիկ խանին, որի դիակը, Շտոկվիչի հրամանով, կախաղանից չէին իջեցրել. խանը օդակի միջից նայում էր իր ռազմաճամբարին, որպես սարսափելի սպառնալիք այն բոլորի համար, ով մեկ անգամ ևս կհամարձակվի կայազորին առաջարկել զենքը ցած դնել։

Սակայն Ֆուիկ փաշան համարձակվեց դա անել։ Եվ նրա այդ չափազանց հաճախակի առաջարկությունների մեջ ինչ-որ շփոթվածություն ու շտապողականություն էր զգացվում։ Այժմ Ֆուիկ փաշայի շփոթվածությունը լիովին հասկանալի էր. ռուսներին օգնության էր գալիս ինքը բնությունը, և երկինքը խոստանում էր ամրոցի վրա թափել փրկարար անձրևի հեհեղը։ Շտապողականությունը նույնպես կարելի էր հեշտությամբ բացատրել. գեներալ Տեր-Ղուկասովի ռազմաջոկատն արդեն դուրս էր եկել Իգդիրից, և Ֆուիկ փաշան մաքուր ռուսական ձևով քորեց ծոծրակը, ինչպես դա անում են նաև գյավուրները՝ դժվարին դեպքերում։

Շտոկվիչը, հենակով թխկացնելով տանիքի երեսարկին, մոտեցավ կախաղանին և խանի կրծքից դուրս քաշեց նետը։

— Էլի նույն բանն է,— բաց արեց նա թղթագլանը։— Դատարկ է...

Սակայն ամրոցի շրջափակումն այժմ այնքան էր սեղմված, որ թուրքերի առաջավոր ուղեկալները նստած էին համարյա թե բերդի հենց պարիսպների տակ։ Հրաձգությունը չէր լռում, և հրաձիգները, հրակնատների մոտ պառկած, ամբողջ օրը շնչում էին վառոդի ծուխը։ Ժամանակ առ ժամանակ թնդում էին հրանոթային կրակոցները, բայց Պոտրեսովը դարձել էր մի քիչ ժլատ՝ մեկ-երկու նռնակ, և հերիք է։

— Ռումբերը վերջացել են,— ասում էր նա։— Մանրագնդակի արկեր դեռ կան, բայց դրանք նույնպես հարկավոր է խնայել...

Իսկ ամպրոպաբեր թուխպը կախված էր ծարավից պապակած հարյուրավոր բերանների վրա, ինչպես կենարար ջրով լցված մի հսկայական տիկ, և հարյուրավոր գլուխներ բոպեն մեկ կարոտով նայում էին դեպի երկինք.

— Տե՛ր աստված, գոնե կաթեցրու։

— Փչի՛ր, քամի՛, փչի՛ր։

— Բա-աղձալի՛ դու, մեր...

Սակայն տանջված կայազորի վրա կախված ամպը կարծես գրգռում էր մարդկանց՝ իր ամպրոպի որոտը ալիք-ալիք տարածելով կիրճերի մեջ։ Այդ դղրդյունը չոր էր, գրեթե առանց խոնավության, և Կլյուգենաուն դառնացավ.

— Տարօրինակ է, պարոնայք,— ասաց նա,— չկան այնպիսի գիտելիքներ, որոնք պետք չգան կյանքում... Ա՛յ, ես հիմա ափսոսում եմ, որ երբեք չեմ զբաղվել օդերևութաբանությամբ և չեմ կարող ճշտությամբ կանխագուշակել՝ փոթորկություն կգա՞ թե ոչ։ Իսկ եթե գա, ապա ե՞րբ։

— Գիշերը կգա,— խոպոտ ձայնով ասաց Խրենովը։— Սպասեք գիշերվան։

— Իսկ դու որտեղի՞ց գիտես, ծերուկ։

— Ես չգիտեմ, ոսկորներս գիտեն։ Դուք՝ երիտասարդներդ, այդ բանը չեք հասկանա։ Իսկ իմ նախանշանը ստուգ է...

— Իսկ դու ի՞նչ ես զգում։

— Իսկ ես, ձերդ բարեձնություն, ողնաշարիս գվվոցից միշտ ուզում եմ խմել։ Ինքս էլ խմող չեմ, ինձ դեռ երիտասարդ հասակում հարբեցողությունից բուժել են «կանաչ փոզոցում»։ Բայց երբ ոսկորներս սկսում են գվվալ, էնպես ուզում եմ խմել...

Երեկոյան անձրև չեկավ, և հոգնածությունից ու սպասումից ուժասպառ կայազորը ցրվեց ամրոցի անկյունները, որպեսզի իրեն հագիստ տա։ Սակայն ոջիլները վերջին օրերին մի սարսափելի աղետ էին դարձել, և այդ գարշելի, ագահ միջատները խլում էին մարդկանց քունը, կարծես թուրքերի հետ պայմանավորված լինեին բոլորովին անտանելի դարձնել Բայազետի պաշտպանների կյանքը։

Որոշ տեղերում սկսեցին խարույկներ ծխալ։ Մինչև գոտին մերկացած զինվորները կրակի վրա ախտահանում էին իրենց հագուստը, «շիկահերներին» սպանում կրակով։

— Ճտճտում են, անպետքները,— հայհոյում էր Ուշաստկինը։— Եվ այդ կենդանին ինչի՞ց է այդպես։ Երբ մարդու կյանքում ամեն ինչ լավ է, կուշտ ու երջանիկ, այդ անիծ-

վածները չկան։ Հենց որ մի դժբախտություն է պատահում, դրանք անմիջապես հայտնվում են։

— «Շիկահերները» մարդու համար վերևից ուղարկված պատիժ են։ Այդպես էլ ասված է սուրբ գրքում,— վրա բերեց խելացիներից մեկը։

Տեր Գերասիմը կրակի վրա թափահարում էր իր վարտիքը, նրա մերկ փորի վրա կախված էր փայլփլող խաչը։

— Հապա դու մեկ էլ փչիր, հիմար,— սպառնաց նա։

— Ես կարդացել եմ, տեր հայր...

— Ոչիները, հիմար ոչխար, դեռ մինչև սուրբ գիրքը արդեն մտել էին երկրագնդի կենդանական աշխարհի կազմի մեջ, և նրանց մնացորդները, ինչպես դա լիովին ապացուցված է գիտության կողմից, հայտնաբերված են դեռ փարավոնների ժամանակվա եգիպտական մումիաների վրա։ Եվ ոչ մի պատիժ... Ուղղակի այդ անիծված «շիկահերները» սիրում են պատերազմել։ Նրանց համար խաղաղ մարդ պետք չէ, միայն հնարավորություն տուր զինվորին ծծելու։ Վախեցեք դրանցից, ուղղափառներ։

Կայազորը խաղաղվեց, դատարկությունը լցրեց ամրոցի կազեմատները, թնդաձայն արձագանքը անցումներում դարձավ ավելի հստակ ու ավելի բարձրագոչ։ Տնքոցները, խռմփոցները և անկապ-անկապ ճիչերը թափառում էին մթության մեջ՝ սավառնելով քնածների վրա...

Կարաբանովը, սպասելով անձրևին, բարձրացավ տանիք՝ քնելու։ Տակը փռեց բրդոտ այծենակաճը, նայեց հանդարտված խորհրդավոր քաղաքին՝ քարվանսարայի հեռվում սևին տվող աշտարակներով, և, չգիտես ինչու, հանկարծ խղճաց ոչ թե իրեն, այլ նույնիսկ թուրքերին, ավելի ճիշտ՝ թուրք կանանց։

— Ինչ սոսկալի բան է,— ասաց նա,— ամբողջ կյանքում նստած մնալ փակի տակ։ Անասուններին անգամ էլի դուրս են թողնում արածելու։ Իսկ հարեմում... Աստվա՜ծ իմ։ Իսկ եթե կինը մինչ այդ իմացել է ինչ բան է ազատությունը, կարդացել, մտածել։ Խե՜ղճ կին, նույնիսկ սիրեկան էլ չի կարող պահել...

Վատնինն իր թաղիքը քաշելով մոտեցրեց պորուչիկին,

գրկեց նրան տաք, շապիկի միջից այրող ձեռքով և անսպասելիորեն խոստովանեց.

— Իսկ ես գնացել եմ դրանց հարեմները։ Երիտասարդ էի, ինքս էլ՝ տեսքով։ Պատահել է, թամբին նստած գնում ես, նիզակը բռնած, ինքդ թիկն տված բեղերդ ես ոլորում։ Ամեն բան պատահել է... դա հո ինձ համար ներելի է։ Իսկ կանայք էլ հո նկատում են։ Կարծեմ մենք այն ժամանակ կարսի մոտ էինք։ Եվ ահա ինձ մոտ է գալիս մի հրեա։ Ահա այսպես և այնպես, բացատրում է։ Մի թողեք սիրակարոտ վառվի մենակության մեջ։ Կանանց մերժում չկա։ Մի քիչ դողդողացի վախից, բայց և որոշեցի գնալ... Պատմե՞մ շարունակությունը, թե չէ։ Քնա՞ծ ես։

— Ոչ,— արձագանքեց պորուչիկը։— Լսում եմ...

— Ուրեմն այսպես,— շարունակեց եսաուլը։— Ամբողջովին սև հագած մի պառավ ինձ թաքուն անցկացրեց այգով։ Եթե դատենք խոսվածքից, ապա այդ պառավը խոխոլուհի էր... Դե լավ։ Մութ էր։ Սարսափելի։ Հետո ինձ տարավ մի դահլիճ, հանձնարարեց ճտքակոշիկները ձեռքերի վրա տանել։ Որպեսզի թխկոց չլիներ, ես այդպես եմ ենթադրում։ Գնում ենք։ Իսկ դահլիճում, մա՜յր իմ, սափորնե՜ր, սափորնե՜ր... Ուղղակի հատակի վրա։ Եվ ինչ-որ քաղցրքաղցր հոտ է փչում, ուղղակի սիրտ թափել ես ուզում։ Երևում էր, որ այդ թուրքը, որի տանը ես մտադիր էի գիշերը քնելու, հարուստ էր։ Ես այդ սափորները հավիտյանս հավերժ մոռանա... Դեհ, առաջ անցնենք։ Դռներ են։ Շատ դռներ։ Կարծես խցեր են։ Նրանց մեջ երկու անցք է արված, և կանանց ոտքեր են դուրս ցցված։ Ուռած, ծեծված ոտքեր էին։ Դրանք, բացատրեց պառավը, պատժված կանայք են։ Ներքինիները անցնել-դառնալով փայտերով խփում են նրանց ոտքերին։ Եվ այդ պահին, Ելիսեիչ, ես լսում եմ մեկի ծիծաղը։ Իսկ ես արդեն անառակության տրամադրություն էլ չունեմ։ Չէ՞ որ սարսափելի էր...

Կարաբանովը վեր թռավ այծենակաճի վրայից։

— Ծպասի՛ր,— ասաց նա,— կարծես սկսում է։

Ամրոցի վրայից որոտով անցավ ինչ-որ մի բան՝ ծանր ու զիլ, փափուկ թխկոցով տանիքի վրա ընկան առաջին կաթիլները։

— Անձրև,— խաչ հանեց Վատնինը։

Եվ բակի սև սանարդի մեջ մի անտեսանելի մարդ սկսեց գոռալ ամբողջ ամրոցով մեկ.

— Վեր կացե՛ք, եղբայրնե՛ր, սկս-ս-վո՛ւմ է...

Մթության մեջ սկսեցին դղրդալ դռները, բազմաթիվ ոտքերի դոփյունից ցնցվում էին սանդուղքների հենամեջերը, ավելի երիտասարդներն ու ավելի անհամբերները դուրս էին թռչում ուղղակի պատուհաններից, բղավելով.

— Արի՛, արի՛...

Անձրևն սկսվեց մեկեն, գրեթե մի թափով, ասես ամպերը շուռ եկան բերդի վրա՝ նրա բակերի մեջ թափելով իրենց ջրի ամբողջ պաշարը։ Թուրքերը փութագոր հրաձգություն սկսեցին, բայց դա արդեն չէր կարող սարսափեցնել մարդկանց։ Ջուրը տկտկացնում էր մետաղե տափաշշերի և դույլերի հատակը, կուտակվում ճտքակոշիկների և գլխարկների մեջ, այն հավաքում էին բրեզենտների ձագարափոսերում և ձիերի ծածկոցների մեջ։ Եվ, վերջապես, կենարար ջրի հոսանքի տակ պահում էին ուղղակի ափերը, որոնց մեջ ուժգնորեն պարում էին ծանր ցայտերը...

— Արի՛,— գոռում էին շուրջը,— արի՛, արի։

Եվ ամպերը չէին դադարում մարդկանց վրա թափելու իրենց առատությունը։ Ամեն մի լճակի վրա ճակատներով իրար էին դիպչում զինվորներն ու կազակները։ Ջրահոսքերն արդեն գրոհի էին ենթարկվում սանիտարների կողմից. տանիքից թափվելով, ջուրն իր շառաչուն, երկար ժանիքները խրում էր հոսպիտալի տակառների մեջ։ Մարդիկ ուղղակի կանգնած էին ամրոցի պատերի տակ, և նրանց ամանների մեջ թափվում էր ջուրը ճակատամասերից լվանալով լեռնային անապատի գորշ փոշին ու վառոդի մուրը։

— Արի՛, արի՛...

Վիրավորներին անհնար էր պահել հոսպիտալում. հեծելով ու տնքալով՝ նրանք դուրս էին սողում անձրևի տակ, չվախենալով, որ կարող են ոտնատակ տրվել այդ բերկրալի խառնակությունում։ Նրանք դեպի սև երկինք էին բարձրացնում իրենց հոգնատանջ դեմքերը և, բերանները բացելով, շնչահեղձ էին լինում ոչ թե ջրի առատությունից, այլ երջանկությունից։ Մարդկանց ձայները սկսեցին հնչել ավելի թարմ,

ասես լվացվելով անձրևից, և վիրավորները նույնպես սկսեցին բղավել.

— Արի՛, եղբայր, արի՛։ Թակիր մեզ, անձրևիկ...

Եվ միայն ժամապահները, «ճնշվելով իրենց պարտականություններից», ինչպես բացատրում է ականատեսը, չկարողացան մասնակցել այդ տոնական հանդիսություններին։ Դիրքերը չթողնելով՝ նրանք ծծում էին իրենց վերնաշապիկները, հրացանների սվինների վրայից լիզում անձրևի կաթիլները...

Անձրևը շարունակվեց մինչև առավոտ, և առավոտյան Շտոկվիչը նորից սկսեց հենակով ման գալ ամրոցում՝ ճակատին սեղմելով պղնձե հինգկոպեկանոցը։

— Ի՞նչ է պատահել ձեզ,— հարցրեց նրան Սիվիցկին։

— Դեհ, հասկանում եք, կապիտան. լճակից ջուր էի խմում, ինչպես հարկն է։ Հանկարծ մթության մեջ ինչ-որ մեկը կողքից թռչելով մոտ եկավ և... ինչպես տեսնում եք, փորձանքը չարջանցեց ինձ։ Թե կիմանայի՝ ով էր։

Սիվիցկին պատասխանի փոխարեն ծուլորեն ծպտաց.

— Դուք ինչ-որ բանից վշտացա՞ծ եք, բժիշկ։

— Վշտացած եմ... անձրևից,— պատասխանեց բժիշկը։— Դիշերը տասնութ վիրավոր ավելացավ հոսպիտալում։ Բացի դրանից, այդ ջուրը, ինքներդ կհամոզվեք, քթներից դուրս կգա...

Արշալույսն արդեն բացվում էր։ Բայց մարդիկ, մոռանալով մահացու վտանգը, դեռ չափչփում էին բակերում՝ փորձելով թերթաքարերի խոռոչներում անձրևաջրի մնացորդներ գտնել։ Շուտով տասնութ վիրավորների վրա ավելացան ևս մի քանիսը։ «Ընկերներից շատերը,— գրում է ականատեսը,— գնդակների հարվածներից հետո միայն օխ անելով, ջղաձգորեն փովում էին անկենդան, իսկ մյուսները նրանց դիակների մոտ շարունակում էին ջրի մնացորդներ հավաքել»։

— Եֆրեմ Իվանիչ,— ասում էր Սիվիցկին,— արգելեք այդ բանը։

Շտոկվիչը կարգադրություն արեց, և Բայազետի կյանքը սկսեց աստիճանաբար սովորական հունի մեջ մտնել։ Այդ օրն ամրոցում սկսվեց ոչ այնքան սովորական ձևով. ամե-

նուրբ եփվում էր ձիու միս, կաթսայիկներում բզկբզկում էր գարու շիլան (իհարկե, պինդ), որոշ տեղերում քլթքլթում էին դասակային ինքնաեռները, որոնք դեռ ռազմաերթից առաջ հանգանակությամբ գնել էին զինվորները։

Սակայն զուր չէր Սիվիցկու երկյուղը. չափից ավելի ջուրը, թեկուզ և մաքուր, ուժեղացրել էր ստամոքսային հիվանդությունները. համաճարակն այդ օրը գետին տապալեց կայազորը, և անհնարին էր մարդկանց փրկել հիվանդությունից։

Իսկ թուրքերն ուժեղացրին իրենց ճնշումը՝ ամրոցը ռմբակոծելով արկերով և մանրագնդակի ռումբերով։ Հետագա օրերին դեպի գետը տանող ճանապարհը կայազորի համար լրիվ փակված էր։

— Անհնար է անցնել,— այսպիսին էր եզրակացությունը բազմաթիվ անհաջող փորձերից հետո։

— Դեհ, գորդը տանի դրանց,— որոշեց Շտոկվիչը։— Այլևս պետք էլ չէ ռիսկի դիմել։ Սկսենք սատկել չորուցամաք...

12

Եվ վրա հասավ պաշարման քսաներեքերորդ օրը...

Ավելի քան երեք շաբաթ, գրեթե ամբողջ մեկ ամիս, օր օրի, ժամ ժամի հետևից, գնդակների և սրերի տակ, քրտինքի և արյան մեջ, Արարատյան հնոցում ծարավից մեռնելով, դիմանում էին միայն մի բանով.

— Տ ո կ ա լ...

Եվ տոկացին, ինչպես նաև տառապեցին բոլոր քսաներեք օրերին։ Բայց հիմա կայազորը դանդաղ մեռնում էր։ Կպչուն ու թանձր ժանտահոտ մեզը՝ թեթևակի թրթռացնելով թափանցիկ շիթերը, կախվել էր մեռած բերդի վրա, միջանցուկ տաք քամիները կազեմատներից դուրս էին հանում մգլած գարշահոտությունը։

Հազվադեպ, շատ հազվադեպ էր Բայազետի պաշտպաններից որևէ մեկը անցնում բակի միջով՝ բռնելով պատերից,— մարդ չէր, այլ միայն մարդու խղճուկ ստվեր,— և նորից տիրում էր լռությունը, միայն լեռնային աղավնիներն

էին, որ կամաց ղուղունալով, ամրոցի մեռած, դատարկ բակերում դեռ մի բան էին գտնում կտցահարելու համար...

Մեռածները լռում էին, ողջերն արդեն չէին կարողանում խոսել. ամեն ինչ ասված էր, և միայն մեկ-մեկ անկենդան բերդը իր հրակնաներից կրակ էր տեղում։ Գլուխը բարձրացնելով գետնից, ասես մահվանից առաջ ինչ-որ կարևոր բան հիշելով՝ զինվորը դեպի իրեն էր ձգում հրացանը, կրակում և նորից կպչում գետնին։

Մարդիկ դեռ տնտնում էին կազեմատներում՝ դատարկ պարկերի պես թուլացած, նիհարությունից և կեղտից զարհուրելի, անջրությունից, չիբաններից և դիզենտերիայից սաստիկ հյուծված։ Դիակներն արդեն չէին հավաքում, և նրանք երբեմն ընկած էին հենց այդտեղ, կենդանի մարդկանց մեջ՝ զարմանալիորեն նման ողջերին, միայն ճանճերի հրոսակախմբերն էին բույն դնում նրանց ակնախոռոչների մեջ։

— Ձեռքդ տուր,— խնդրեց Կարաբանովը խոպոտ ձայնով։

Նրան ձեռք տվեցին, և նա մի կերպ ոտքի կանգնեց։ Իր կազակներին նա ասաց.

— Ինչո՞ւ եք լռում։ Կրակե՛ք...

Թուրքերն արդեն հանձնվելու առաջարկություն չէին ուղարկում։ Հարևան լեռներից դիտելով, թե ինչ է կատարվում ամրոցի ներսում, նրանք համբերատար սպասում էին ռուսական կայազորի մահվանը։

— Այսօր կարծես ուրբաթ է,— ասաց Վատնինը։

— Չգիտեմ,— պատասխանեց Կարաբանովը։— Միևնույն է...

Պորուչիկը հանեց ճտքակոշիկները և հանկարծ նրան թվաց, որ դրանք պետք չեն իրեն. նա ճտքակոշիկները ցած նետեց ամրոցի տանիքից։ Հետո հանեց նաև սերթուկը և նույնպես գցեց։

— Ձիքչի՞րդ էլ պիտի հանես,— հարցրեց Վատնինը՝ ուշադիր նայելով հարյուրապետին։

— Կհանեի նաև չիքչիրս,— պատասխանեց Կարաբանովը,— բայց ամոթս չեմ կարող պաշտպանել... Ասասուլ, օգնիր ինձ լցնել ատրճանակիս թմբուկը, թե չէ մատներս ինձ չեն ենթարկվում։

Վատնինը վերցրեց պորուչիկի ատրճանակը, թմբուկը

պտտեցնելով անցքերի մեջ խոթեց նոր փամփուշտներ։ Ջգեց հրահանը, օդի մեջ փորձնական կրակեց, վերադարձրեց զենքը.

— Լա՛վ է,— ասաց։

Ատրճանակը տեղը դնելով՝ Կարաբանովը ուզեց իջնել տանիքից, բայց Վատնինը պահեց նրան.

— Ավելի լավ է նստիր այստեղ։

— Իսկ ի՞նչ է որ։

— Նստի՛ր, ասում եմ...

Կարաբանովը ձեռքը դրեց գլխին.

— Գլուխս պայթում է... Քո ինչի՞ն եմ պետք, եսաուլ։

— Այնպես,— պատասխանեց Վատնինը։— Այսօր դու չափից ավելի անտրամադիր ես։ Ես քեզ մենակ չեմ թողնի... Մինչև մեղք գործելը հեռու չէ։

— Դե, սատանան քեզ հետ,— պատասխանեց Կարաբանովը, բայց վիճել չհամարձակվեց և նորից մեկնվեց իր ոչլոտ այծենակաճի վրա...

Շուտով տանիք բարձրացավ շտաբս-կապիտան Նեկրասովը, սկսեց սրբել հեռադիտակի ոսպնյակները՝ նայելով ինչ-որ տեղ։

— Դուք ոչինչ չե՞ք լսել,— հարցրեց նա։

— Դարձյալ խաբա՞ր կա,— ձեռքը թափ տվեց Վատնինը։

— Ո՛չ,— առարկեց Նեկրասովը,— նորություններ չկան։ Բայց ահա մինարեթի ժամապահները հավատացնում են, որ իբր թե հեռավոր համազարկեր են լսում։

— Որտեղի՞ց,— վեր կացավ Կարաբանովը։

— Ջինգիլի լեռնանցքի կողմից... ահա այնտեղից։

Կարաբանովը Նեկրասովի ձեռքից վերցրեց հեռադիտակը։

— Ոչինչ չկա,— ասաց նա։— Ասենք իմ աչքերի մեջ շրջանակներ են երևում, ես նույնիսկ ձեզ եմ վատ տեսնում...

Ոտքի կանգնեց Վատնինը։

— Հապա մի տուր,— հեռադիտակը դրեց աչքերին, ամրության համար ոտքերը լայն չռելով, երկար կանգնեց լուռ՝ լարված նայելով դեպի հյուսիս, ուր անհետանում էին բարձրավանդակի հեղեղատային ցածրավայրերը։

...Դե ի՞նչ,— հարցրեց Նեկրասովը։

Վատնինը թափով իջեցրեց հեռադիտակը։

— Պատրաստ է,— պատասխանեց նա։

— Գալի՞ս են։

— Եկել են,— ասաց հարյուրապետը։— Կարծես նախիրներ են արածում, այդպես թվաց ինձ սկզբից։ Բայց լավ նայեցի, տեսա, որ վրաններ են խփած դաշտում։ Սուխ է երևում...

Նեկրասովը խորհուրդ տվեց.

— Նազար Մինաևիչ, սիրելիս, հարյուրյակներին կարգադրեք միահամուռ համազարկ տան, որպեսզի կայազորը վեր կենա։ Իսկ ես վազեմ Շտոկվիչի մոտ։

Շտոկվիչը մատներով սեղմում էր դեմքը, և գորշ թշերի վրա մատներից փոսիկներ էին մնում։ Նեկրասովի տեղեկությունը նա ընդունեց հանգիստ։

— Դատարկ բան է,— պատասխանեց նա,— ես արդեն ոչ մի բանի չեմ հավատում։ Իսկ ահա ֆոկուս՝ կարող եմ ցույց տալ...— Նա ձեռքը կոխեց իր բերանը և, տարուբերելով ատամը, այն հանեց լնդի միջից։— Տեսնո՞ւմ եք,— հարցրեց նա թքելով։— Սա արդեն ութերորդն է։ Շուտով նյամ-նյամ անելու բան էլ չի մնա... Լնդախտ է լինելու շուտով, սիրելիս։

— Ախր լսեք մի,— գոռաց Նեկրասովը։— Վատնինը նույնիսկ վրաններն է տեսել։ Նա ասում էր, որ դա հեռու չէ։ Այստեղից մի տասը վերստ։ Նրանք արդեն իջել են լեռնանցքից։

— Բարձրանամ մինարեթի վրա,— որոշեց Շտոկվիչը։

Սանդուղքի վրա նա հաճախ մի փոքր նստում էր։ Աստիճանները կեղտոտված էին ժամապահների կողմից, որոնք իրենց նեղություն չէին տվել բակ իջնել։ Շտոկվիչի համար զզվելու ժամանակ չկար, կապիտանը յուրաքանչյուր աստիճանից հետո շնչակտուր էր լինում, ոլորապտույտ սանդուղքը նրա ոտքերի տակ սաստիկ երերում էր։

— Ի՞նչ կա այստեղ,— հարցրեց նա ժամապահներին՝ աշտարակի բարձրությունից նայելով Բայազետին։

—Ոչինչ, ձերդ բարեծնություն։

— Ասում են, որ Տեր-Ղուկասովը ռազմաճամբար է զարկել ինչ-որ մոտիկ տեղ։ Դուք չե՞ք տեսել։

— Ո՛չ, ձերդ բարեծնություն։ Դա նախիրներ են քշում։

— Թյո՛ւ, գրողը տանի,— հայհոյեց Շտոկվիչը՝ անիծելով Նեկրասովին, որ հարկադրել էր իրեն բարձրանալ աշտարակի վրա։— Այդ խելացիները միշտ իրենց երևակայության մեջ հեռու են գնում։

Իջնելով ներքև՝ պարետը Պոտրեսովին հանձնարարեց ազդանշանային կրակ տալ փուրծի հետ միասին։ Մերուն մայորը փուչ լիցքը ինքը դրեց հրանոթի մեջ, հրելով նրան մոտեցրեց փուրծը, հրամայեց.

— Կրա՛կ։

Հրանոթը որոտաց, և մարդիկ հիասթափվեցին. պատասխան ազդանշանը չհետևեց։

Շտոկվիչը կծկվեց նորից.

— Ես այդպես էլ գիտեի... Լսե՛ք, մայոր, որտե՞ղ է ձեր... այդ...

— Ի՞նչը, պարոն կապիտան։

— Դե մի՞թե դժվար է հասկանալ։ Որտեղ կարելի է ձեզ մոտ...

— Ը՞-ը՞,— գլխի ընկավ Պոտրեսովը,— գնացեք պատի հետևը։ Այնտեղ...— Հետո պարետը Նեկրասովին մի լավ հայհոյեց։

— Ջառանցո՞ւմ եք,— ասաց նա դժգոհությամբ։— Մարդկանց մտքերն եք պղտորում։

Այնուամենայնիվ, կայազորի տրամադրության մեջ հանկարծ ինչ-որ բան խիստ փոխվեց։ Դեռ քիչ առաջ միայն անկյուններում անկենդան պառկած զինվորները հիմա սկսեցին շարժվել. վեճեր լսվեցին, ուժեղացավ կրակը թուրքերի վրա։

— Նույնիսկ այսպես,— պատասխանեց շտաբս-կապիտանը Շտոկվիչին,— արդեն ավելի լավ է։ Ավելի աշխույժ է...

Այժմ ամեն կողմից լսվում էին բացականչություններ, մեկ այս, մեկ այն զինվորը հեռվում մոտեցող զորքերի նախանշաններ էր նկատում։ Շատերը հավատացնում էին, որ տեսնում են նույնիսկ բազմաքանակ հեծելազորի շարժումը։

— Լավ,— համաձայնեց Շտոկվիչը և կարգադրեց նվագողներին կանչել վերև։

Խե՜ղճ նվագողներ։ Ինչի՞ նման էին նրանք այդ օրերին՝ սոված, տանջված. թուլությունից երերալով նրանք հավաքվեցին ապարեզի արկի տակ՝ աղեկտուր ղնգղնգացնելով գործիքները։

— Նվագե՛ք,— կարգադրեց Շտոկվիչը։

Եվ այդ ժամանակ պատահեց անսպասելին. նվագողները չէին կարողանում կրծքից դուրս սեղմել շունչը, որպեսզի գործիքներով գոնե մի բան նվագեին։ Խեղճերը ջանասիրությամբ փչում էին շեփորների մեջ, մատներով փութաջանորեն խփում կափյուրներին, սակայն գործիքներից միայն խզխզան ֆշշոց էր դուրս գալիս։

Շտոկվիչը այնքան ապշած էր դրանով, որ նույնիսկ չհամարձակվեց հանդիմանել։

— Ո՞վ կարող է,— ասաց նա՝ շեփորը ձեռքը վերցնելով։— Հինգ ռուբլի կտամ, ով հնչեցնի «ցայգանվաղը»։

— Տա՛սը,— ասաց Կարաբանովը։

— Քսա՛ն,— ավելացրեց Նեկրասովը։

— Մի ռուբլի,— եզրափակեց տեր Գերասիմը,— պետք չէ մարդուն երես տալ։ Միևնույն է, խմիչքի վրա է վատնելու...

Առաջ եկավ զինվոր Պոտյոմկինը.

— Մի ժամանակ ես կարողանում էի...

Միայն որքան չարչարվեց, ճիգ թափեց, ոչինչ չստացվեց, և այդ պահին վերևից լսվեց ժամապահի ուրախ ճիչը.

— Եղբայրնե՛ր, սկսեցին շարժվել։

Բոլորը բարձրացան ամրոցի պարիսպների վրա, որտեղից ավելի հեռու էր երևում, և մարդկանց հայացքի առջև բացվեց հանդիսավոր, անմոռանալի մի պատկեր՝ «զորաշարվածք մարտից առաջ». այդպես էր կոչվում այդ պատկերը։

— Հոյակա՛պ է,— բացականչեց Նեկրասովը։— Ինչպիսի հստակությո՛ւն։

Բայազետի մատույցներում փռված հովիտը կարծես շաղ-

մատային քառակուսիների էր բաժանված։ Եվ ահա ինչ-որ մեկի անտեսանելի, բայց փորձված ձեռքը, հեշտ ու գրեթե խաղացկուն, հանկարծ այդ քառակուսիների մեջ դասավորեց դասակների, վաշտերի և գումարտակների ֆիգուրները։ Կազակային հարյուրյակները շեշտակի վազքով շրջանաձև լայն անցում կատարեցին՝ իրենց հետևից քարշ տալով գորշ փոշու երկար պոչը, և ահա կանգ առան ոլորանում՝ շրջափակելով ապագա ճակատամարտի թևերը։ Մտածված և առանց իրարանցման զորքերն սկսել էին տեղաշարժվել լեռնային հարթության վրա՝ քայլ քայլի հետևից, հանգրվան հանգրվանի հետևից, խուսափելով խոշընդոտներից, նախապատրաստելով թշնամու պարտությունը։

— Պարոնայ՛ք,— ոգևորվեց Շտոկվիչը,— ճանաչո՞ւմ եք արդյոք Տեր-Ղուկասովի ձեռքը։ Դա անպայման նա է գալիս այստեղ, մեզ մոտ...

Եվդոկիմովը բաց արեց բերանը, և նրա կոկորդում ինչ-որ բան սկսեց խռխռալ.

— Ի՞նչ պատահեց ձեզ։

— Ես ուզում էի բղավել «ուռա՞»,— ամաչելով խոստովանեց պատանին...

Թուրքերը պատասխանեցին կրակով, թնդանոթները, ֆալկոնետները, հրացանները, բոլոր տեսակի զենքերը գործի դրվեցին, և Շտոկվիչը հանձնարարեց Կարաբանովին գնալ Պոտրեսովի մոտ.

— Ասեք, որ համեստություն չանի։ Թող ծախսի բոլորը, մինչև վերջին լիցքը։ Իսկ դուք, Կլյուգենաո՛ւ, կարող եք ձեռնամուխ լինել դարպասները բացելուն...

Երբ Կարաբանովն անցնում էր բակի միջով, թուրքական մանրագնդակ արկերը, զարկվելով պատերին, արդեն պայթում էին բեկորացրիվ։ Ամբողջ բակի երկայնքով, քարշ տալով ջարդված ոտքերը, հոսպիտալի ուղղությամբ սողում էր հերթական վիրավորը։ Պոտրեսովն իր մարտկոցի մոտ էր, որի միակ թնդանոթը դնչով դուրս էր նայում երկրորդ հարկի պատուհանից։

— Գիտե՛մ, գիտեմ,— ձեռքը թափահարեց մայորը։— Մենք ինքներս էլ հիմար չենք։ Արդեն գլխի ենք ընկել...

Հրետաձիգներն աշխատում էին դանդաղ, խուսափում էին

ավելորդ շարժումներ կատարելուց, լիցքերը մոտեցնում էին երկուսով, ենթասպան նշան էր բռնում։ Յուրաքանչյուր կրակոցից հետո կազեմատը լցվում էր վառոդի գազով, հատակի տախտակածը ճթճթում էր և ցնցվում՝ նստելով ցած։

— Ձե՞ք վախենում,— հարցրեց Կարաբանովը։

Պոտրեսովը մոտեցավ լիցքապարկերի կույտին, հնարավորին չափ հարմար նստեց։

— Իսկ ինչի՞ց պիտի վախենամ,— պատասխանեց նա,— եթե ես կախարդված եմ։ Ամեն երեկո ես իմ այլևայլ բաներից դուրս եմ թափում գնդակները, իսկ ինձ՝ թեկուզ մեկը կպչեր։

Ամրոցի պարիսպներից այն կողմ, արյունալի փրփրակալելով և վայնասունի պայթյուններ արձակելով, արդեն եռում էր ճակատամարտը՝ պաշարումը վերացնելու համար, և Կարաբանովն ասաց.

— Այո՛, պարոն մայոր, անկեղծ ասած, ես չէի մտածում, թե կենդանի կմնամ։

— Ձեզ ինչ կա,— պատասխանեց Նիկոլայ Սերգեևիչը,— դուք երիտասարդ եք, դուք երկար կապրեք։ Եվ ձեր հոգսերը էլ չեն ավելանա։ Իսկ ահա իմը...

Հրետանավորը հառաչեց և, կրակոցների դադարի ժամանակ իր առջևից ցրելով ծխի կապույտ քուլաները, ավարտեց խոսքը.

— Այնտեղ ինչպե՞ս են ապրում իմ դուստրերը առանց հոր։ Երևի քիչ նամակներ չեն կուտակվել ինձ համար։ Ախր իմ դուստրերը, Անդրեյ Ելիսեևիչ, լավն են,— արտասանեց նա հաճույքով։— Հոգի աղջիկներ են...

Փայլատակեց կրակը, մի ծանր բան սկսեց դմբդմբացնել Կարաբանովի ուսերին ու գլխին։ Դղրդյունի և երկարաձիգ զնգոցի մեջ նստում էր փոշին։ Մայոր Պոտրեսովը բռնեց Կարաբանովի ուսից, և ցած սահելով լիցքապարկերի վրայից, պորուչիկին կռացրեց մինչև գետին։

— Պոտրեսո՛վ, դե... թողե՛ք,— գոռաց Անդրեյը։

Ցրված ծխի միջից նշմարվեց հրետասայլի ջարդված կմախքը, շուրջն ընկած էին մեռած հրետաձիգները, Պոտ-

բեսովը սահելով ավելի ու ավելի էր իջնում լիցքապարկերի վրայից՝ բաց չթողնելով պորուչիկի ուսը։

— Պարոն մայո՛ր... դե վեր կացե՛ք։

Եվ միայն հիմա Կարաբանովը հանկարծ հասկացավ, որ Պոտրեսովը տեղն ու տեղը սպանվել էր փայտի բեկորով, որը սուր դաշույնի նման խրվել էր նրա կրծքի մեջ։ Նա դուրս քաշեց փայտը, ականջը կպցրեց մայորի կրծքին, որպեսզի արյա սրտի տրոփյունը, սակայն դա անօգուտ էր։

Հին զինվորի սիրտը լռում էր։

— Աստվա՜ծ իմ,— հեծկլտաց Կարաբանովը, շոշափելով իրեն, և մայորի նկատմամբ այնպիսի սարսափելի խղճահարություն խեղդեց նրան, որպիսին նա դեռ երբեք չէր զգացել իր կյանքում ոչ կնոջ, ոչ երեխայի և ոչ էլ ինքն իր նկատմամբ։

«Լավն են...»,— հիշեց պորուչիկը, և եթե կարողանար այդ ժամանակ իրեն ութ կտոր անել, ապա յուրաքանչյուր կտորով հավիտյանս կմիանար Պոտրեսովի դուստրերին, և նրանք հավանաբար աշխարհում ամենաերջանիկը կլինեին...

Դուրս եկավ բակ՝ շարունակելով լացը։

— Օգնեք դուրս բերել,— ասաց Անդրեյը զինվորներին։— Մայորը սպանվել է այնտեղ...

Կլյուգենաուն այդ մասին ոչինչ չլսեց, նրա սակրավորները դարպասների մոտից մի կողմ էին գլորում քարերը, հետ էին քաշում սայլերը։ Շտոկվիշն արդեն մարդկանց շարք էր կանգնեցնում բակում զենքով ու իրերով, որպեսզի իսկույն դուրս գային ամրոցից։ Ճակատամարտը անկասելի արագությամբ մոտենում էր բերդի պարիսպներին, և թուրքական զորքը, փախչելիս կորցնելով թալանածը, ճողոպրում էր Վանի ճանապարհով։

Ներունի գրենագյոր Խրենովը նույնպես մոտեցավ դարպասներին, խնամքով հրացանը իշոտնուկ արեց։ Թեթև շոշափումով ստուգեց իր մախաղը, թափահարեց ձեռքը։

— Կարծեմ ինձ մոտ պետական ոչինչ չի եղել,— ասաց նա։

Կլյուգենաուն ակնոցի տակից նայեց ծերունուն։

— Հայրի՛կ, չլինի՞ թե ուզում ես առաջինը դուրս գալ։

Հին մարտիկը մախաղը գցեց մեջքին.

— Դեհ, անկեղծորեն պիտի ասեմ՝ կարծես այդ ամենը սկզբից ոչինչ, բայց վերջում արդեն... զզվեցրել էր։

Կլյուգենաուն համբուրեց ծերունու այտերը։

— Բայց դու գեղեցիկ ծերուկ ես,— ասաց նրան պորուչիկը։— Ես միայն հիմա նկատեցի, թե որքան գեղեցիկ ես դու...

Բայազետի դարպասները ծանր ճռինչով բացվում էին նրանց առաջ։



Փոսիկներ և շեյթաններ

Ամեն ինչ նրա համար ավարտվեց մի կրակոցով, որը նա պարտք էր մնացել Պետերբուրգում: Բայազետը մեզ համար գորդյան հանգույց էր, և մենք կարողացանք այն կտրել արիաբար: Այն ժամանակ մենք բոլորս միասնական էինք, ինչպես պինդ սեղմված բռունցքի մատներ: Սակայն մեզանից յուրաքանչյուր հոգու մեջ կային խճճված հանգույցներ, և Անդրեյ Կարաբանովը չկարողացավ իր մենակության մեջ կտրել այն: Ես խղճում եմ այդ մարդուն, որ այնքան էլ վատը չէր, ինչպես ընդունված է մտածել նրա մասին...

Ֆոն Կլյուգենաուի կարծիքը

1

Կարաբանովը դողացնում էր տենդից: Դողացնում էր ոչ ժամանակին՝ ծառայության մեջ, կորդոնում: Նա տենդը ձեռք էր բերել քաջության համար տրված Գեորգիևյան խաչի հետ միասին՝ Բայազետի փառավոր պաշտպանության ժամանակ:

Դա ընդամենը երկու ամիս առաջ էր:

Մի՞թե երկու...

Պատի հետևում խխում էին չարացած ուղտերը: Անդրեյը պառկած էր ցածր թախտի վրա, հին սուսերը կախ էր ընկել հողե հատակին: Պարսկական խորամանկ փայտոջիլները ցած էին ընկնում առաստաղից:

— Եգորի՛չ...— կանչեց նա:— Դոնե որևէ մեկդ եկեք:

Նրան նորից կծկեց, սկզբից գցեց կողքի վրա, կպցրեց պատին: Հետո սկսեց աղեղնաձև կորացնել ընկնավորի նման, և պորուչիկը ցնցվելով արագ-արագ չխկչխկացրեց ատամները:

— Մեռ-նու-ո՛ւ-ո՛ւմ եմ...

Մտավ Եգորիչը, ոչ մի խոսք չասելով, կեղտոտ բաժակի մեջ կլկլացրեց քինաքինայից դեղնած օղին: Պորուչիկի չխկչխկացող ատամների արանքից օղին լցրեց բերանը:

— Հանգիստ պառկեք,— ասաց կազակը:— Գուցե թեթևանա...

Կարաբանովը հանդարտվեց բեշմեթի տակ: Արցունքի մի խոշոր կաթիլ դուրս գլորվեց նրա պինդ փակված կոպերի տակից: Մեկը, մյուսը, երրորդը...

— Դե, իհարկե,— հոգոց հանեց Եգորիչը՝ իրեն ևս օղի լցնելով:— Դուք առաջավոր գծում ծառայելու փորձ չունեք... ուղղակի պիտի ասեմ, որ այստեղ սատկելը շատ հեշտ է:

Նեղ պատուհանը հանկարծ փակեց քնձոտ, կոատուկի գլխիկներով և կեղանքներով պատած մի ուղտ, որն սկսեց, պահակատան պատին բսվելով, քորել իրեն:

— Քշի՛ր դրան,— խռպոտ ձայնով ասաց Կարաբանովը,— այդ սարսափավոր ասիացին կարող է կոտրել ապակին...

Եգորիչը, քիթը մաքրելով անկյունում, դուրս եկավ: Կա-

բաբանովը նորից փակեց աչքերը, և իսկույն նրան երևացին դոներ՝ բարձր, սպիտակ դոներ, փորագրազարդերով ու պերճափայլ ոսկով պատած, այդ դռները լայն բացվեցին նրա առաջ։ «Ձերդ կայսերական մեծություն,— ասաց Անդրեյը՝ շողոքորթությամբ խոնարհվելով լուսամուտի մոտ կանգնած անշարժ ստվերին,— պատիվ ունեմ զեկուցելու ձեզ, որ ես, բոլորի կողմից լքված ու մոռացված, սատկում եմ սահմանապահային պահակատանը, որտեղ ամեն ինչ բարեհաջող է...»

Եգորիչը կոպտորեն բութթեց պորուչիկի կողքը։

— Դե գնա, է՛,— ասաց նա։— Ի՞նչ ես ինքդ քեզ խոսում... գուցե մի քի՞չ էլ լցնեմ թունդ խմիչքից։

— Մի քիչ տուր,— խնդրեց Կարաբանովը։— Եվ մոտեցրու թանաքը։

Նրան և գրիչ տվեցին ,և մոտեցրին թանաքը։

«Իսկ ո՞ւմ,— ակամայից սարսափով մտածեց Անդրեյը։— Ես ո՞ւմ գրեմ։ Հիմա ես ոչ ոքի պետք չեմ...»։

— Սրիկանե՛ր,— հայհոյեց նա, գրիչը մի կողմ նետելով։— Շատ լավ քշեցին ինձ։ Բոլոր կանոններով... Մի քիչ էլ լցրու, Եգորի՛չ։

Պորուչիկը խմեց օղին, ուժեղ արտաշնչեց հոտը։ Եգորիչը քրքրեց գրպանները, նրան մեկնեց դեղնած, թոշնած մի վարունգ։

— Կեր վրայից։

Կարաբանովն առանց որևէ բավականության կծեց վարունգը։ Դեն գցելով բեշմեթը, ոտքերն իջեցրեց հատակին։

— Դողում են անիծվածները։ Այդ Բայազետը դեռ ձայն կտա մեզ...

Վերադառնալով ուղեփակոցի մոտից՝ պահականոց խցկվեց հերթապահ կազակը։ Ծուլորեն պատվի առավ։

— Ձերդ բարեծնություն,— զեկուցեց նա,— գումակ է գալիս...

Կարաբանովը, գլխարկը դնելով, դուրս եկավ։ Հրետանային սայլերի երկար շարքը կանգնել մնացել էր ուղեփակոցի մոտ։ Գումակը գլխավորում էր ռազմաերթից հյուծված մի կապիտան՝ զինվորի շինելով, աչքերը կապած սև ժապավենով։

— Իսկ մենք ձեզ հետ ծանոթ ենք,— ասաց նրան Կարաբանովը։— Հիշո՞ւմ եք, փողի համար միասին հերթ էինք կանգնած Իգդիրի գանձատանը։

— Հիշում եմ,— պատասխանեց կապիտանը՝ պորուչիկին մեկնելով չոր, կեղտից սևացած ձեռքը։— Դուք կարծեմ Բայազետի՞ց եք։

— Այո՛, բախտ եմ ունեցել...

— Ձե՞ք ցանկանա մի բաժակ լաֆիտ խմել,— առաջարկեց կապիտանը։

— Ի՞նչ,— վախեցավ Կարաբանովը։

— Ճիշտ եմ ասում,— պատասխանեց սպան։— Իմ տափաշշի մեջ դեռ մնացել է... Լավ լաֆիտ է, պարոն պորուչիկ։ Իմ մտերիմներից մեկն է բերել Փոթիից, այնտեղ գնել է հույն մաքսանենգներից։

Կարաբանովը, քմծիծաղով հիշելով Շտոկվիչին, մի կում խմեց հրետանավորի տափաշշից։

— Այդ Բայազետով այ թե աղմուկ հանեցիք ամբողջ Ռուսաստանով մեկ,— ասաց միականանի մարտիկը՝ խցանելով տափաշիշը։— Այժմ բոլոր լրագրերը կամաց-կամաց ձեզ սուրբ են դարձնում։ «Նոր Սիրակուզա». այդպես էլ գրում են ամեն տեղ...

— Ոչ ամենուր,— պատասխանեց Կարաբանովը։— Օրինակ, պարոն Կատկովին այնքան էլ դուր չի գալիս, որ մենք չենք խժռել բոլոր ձիերին։ Այնպես որ «Նոր Սիրակուզան» մեծ կասկածանքի տակ է...

Կարաբանովն առանց ստուգման ենթարկելու, թույլ տվեց սիրալիր կապիտանի գումակին անցնել ուղեփակոցից. երկար ու բարակ զբաղվելու ուժ չկար։

— Բարձրացրո՛ւ անցակալը,— միայն բղավեց կազակին, և դանդաղաքայլ եզների, ճռճռացող սայլերի, հեծյալ ուղեկցորդների և ճարճատուն ոմբակիր գծակառքերի բազմությունը ծանրորեն անցավ պորուչիկի մոտից սարնիվայր, և Անդրեյը նորից վերադարձավ պահականոց։

Գրիչը թաթախելով թանաքի մեջ՝ կորդոնի օրագրում անփութորեն գրեց վագենբուրգի անցնելու ժամանակը, հետո Եգորիչին դրամ տվեց, որպեսզի նա գնա գյուղ և հավ գնի։

— Գնա, եղբայր իմ, հնար չկա դիմանալու... Իսկ ես առայժմ կրակ կանեմ և ջուր կդնեմ։ Գոնե մի բան ուտենք։

Եգորիչը խոնարհաբար պատրաստվեց գնալու։ Մոտակայքում վառելափայտ չկար, և կազակները ինչ-որ տեղից բերում էին գերեզմանոցային կիսափտած խաչեր։ Փայտի կտորները կրակի մեջ խցկելով՝ Կարաբանովը այդ բանում սրբապղծություն չէր զգում։ Է, խաչեր են, խաչեր, ո՞ւմ են պետք նրանք այստեղ, լեռներում, բայց այսպիսի խուլ վայրում մի կերպ կերակուր պատրաստել հարկավոր է...

Գուլ կացնով Կարաբանովը շեմի վրա խաչերը երկու կես էր անում։ Նրանցից մեկը բոլորովին փտած էր և հեշտությամբ ջարդվեց ծնկի վրա։ Անդրեյն այն նետեց կրակի մեջ, և բոցե լեզուները ֆշշոցով սկսեցին սողալ փտած փայտի վրայով։ Կարաբանովի աչքերը զարմանքից լայնացան. թեժ կրակի մեջ, խաչի կտորի վրա հանկարծ երևաց ժամանակից և անձրևներից եղծված մի վիմագրություն.

...ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԷՐ ԿԱՐԱԲԱՆՈՎ ԴԱՆԻԼՈՆ՝ ԻԳՆԱՏԻ ՈՐԴԻՆ։

Մերկ ձեռքերով Անդրեյը կրակի միջից հանեց այրվող փայտը, ցավից ու վատ նախազգացումից ճիչ արձակեց։ Պահականոցը լցվեց դառը, խեղդող ծխով։ Ո՞վ էր նա՝ այդ Դանիլո Իգնատիչը, Կարաբանովը չգիտեր. համազգանո՞ւն էր, թե՞ ուղղակի իրենց տոհմում արդեն մոռացված նախահայր։ Դե ասենք, միևնույն չէ՞ր արդյոք, միայն թե հիմա սարսափելի էր Անդրեյի համար։

— Ա-ա... ա-աքսորել են, սրիկաները,— ոռնում էր նա։— Ա-ա-ա... այս անկյունում են... թաղել։

Եգորիչը շնչակտուր ներս ընկավ պահականոց, թափով սեղանին շպրտեց դրամները։

— Կորդոնը,— ասաց նա,— հարկավոր է կարգի բերել... Հիմա տեսա բլրակի վրա... Գալիս են։

— Ո՞վ է գալիս.

— Չգիտեմ ով։ Միայն տեսա, որ գալիս են...

Լայն բացելով լուսամուտները, պահականոցն արագ մաքրեցին ծխից։ Եգորիչը կեղտոտված ու մաշված մի ավելով շեմից դուրս թափեց աղբը։ Կարաբանովը դիտավորյալ, ծառայական ցուցամոլության համար բաց արեց կորդոնային

օրագիրը, ուղղեց թախտի վրա թեք կախված փորագրանկարը՝ գեներալ Դիոմիդ Պասսեկի գեղեցիկ պատկերով։

— Օղին վերցրո՛ւ,— կարգադրեց Կարաբանովը կազակին։— Թեկուզ թախտի տակ կոխիր... Եվ շալվարդ կոճկի՛ր, ղմած...

Երկուսն էլ դուրս եկան՝ բոլոր կոճակները կոճկելով, սրերը ձգելով։ Բարձունքից երևում էր ներքևում գալարվող ճանապարհի ժապավենը, որի վրայով անցնում էր կրակների շղթան։ Մոտեցող գիշերվա մութը ծանրորեն իջնում էր լեռների հետևից, և կրակները կայծկլտալով դողդողում էին կիրճի կիսախավարի մեջ։

— Երևում է թիկնապահների հետ են գալիս,— սովորականի պես որոշեց Եգորիչը։— Զգում եմ, պահակախումբը մեծ է...

Շուտով ճամփի ոլորանի հետևից երևացին ձիավորները՝ շքեղազարդ չերքեզկաներով, ձիերը վազքով կուտակվեցին ուղեփակոցի մոտ։ Դա Կովկասի փոխարքայի տեղացիներից կազմված պահակախումբն էր, որով նա այնպես հպարտանում էր. դրանք մյուրիդների որդիներն ու թոռներն էին, որոնք այժմ պահպանում էին նորին բարձրության անձը։

Պատանի լեզգի-թիկնապահը, որը դեռ բոլորովին երեխա էր, մի տասնհինգ տարեկան, անհամբերությունից շաչեցրեց մտրակը Կարաբանովի գլխավերևում։ (Չէ որ նա համեստ սպայիկ էր, նրան ինչ հաշվի առնես)։

— Ի՞նչ ես կանգնել,— բղավեց նա զայրագին։— Ինչո՞ւ դերան չես թողնում։ Մեծ իշխան գալիս է...

Կարաբանովը բռնելով ուզդենի ոտից, պոկեց թամբից, ատրճանակի կոթը դեմ տվեց քթին, մեկ անգամ, երկրորդ անգամ՝ աչքը վախեցնելու համար։

— Ախ դու փսլնքոտ,— ասաց։— Կորի՛ր խայտաբղետ հագուստովդ, թե չէ հիմա զառիթափից կգլորեմ քո զամբիկի հետ միասին։

Ուզդենը բաց արեց խոշոր և մաքուր ատամները, ամեն մեկը մի եղունգի չափ։ Սակայն ավագ ջիգիթը՝ վառ-մորեգույն մորուքով թոքախտավոր մի մարդ, ինչ-որ բան գոռաց

նրան բարձր նոտայով, և պատանին հնազանդորեն, արյունը մաքրելով, իր զամբիկը հեռացրեց Կարաբանովից։

— Այդպես արդեն ավելի հանգիստ է,— ասաց Անդրեյը գրգռված։

Ճանապարհին հեծյալ կազակներ երևացին՝ ջահերը ձեռքներին, ուղեկցելով փոխարքայի կառաշարը։ Վիթխարի կառքը՝ ոսկեզօծված գերբերը դռների վրա, փափուկ զսպանակով, մոտեցավ կորդոնի ուղեփակոցին։ Եգորիչը շտապ բաց արեց սանդղիկը, թափով դեպի իրեն ձգեց դռնակը, և Միխայիլ Նիկոլաևիչը, քնաթաթախ աչքերը կկոցելով, նայեց դուրս։

— Այս որտե՞ղ ենք,— հարցրեց մեծ իշխանը՝ ուշադիր նայելով լեռներին։

Կարաբանովը, պատյանից դուրս քաշելով սուրը, օրորվելով, արդեն դրոշմում էր քայլը քայլի հետևից՝ պատրաստվելով զեկույցի։

— Առանց արարողության,— սաստաձայն ասաց նրան փոխարքան։— Ուղղակի ասե՛ք, ձեզ մոտ ամեն ինչ խաղաղ է ու հանգի՞ստ։

Անդրեյը կանգ առավ՝ թեթևակի փայլեցնելով սուրը։

— Ճի՛շտ այդպես,— պատասխանեց նա։

— Եթե չեմ սխալվում,— ասաց փոխարքան, ուշադիր զննելով նրան,— իմ առջև ծանոթ դեմք է... Սուրն իջեցրու, Կարաբանով, ես ճանաչեցի քեզ։

— Ճիշտ այդպես, ձերդ բարձրություն։

— Հուսով եմ, որ խաչը վաստակել ես ո՞չ ձիամարզարանում,— փոխարքան ցույց տվեց պորուչիկի շինելի վրայից կախված «Գեորգին»։

— Այստեղ, ձերդ բարձրություն, Արարատի մոտ։

— Ինչի՞ համար։

Կարաբանովը վեր քաշեց ուսերը.

— Դժվարանում եմ պատասխանել։ Հավանաբար Բայազետի պաշտպանության համար։

— Ապրես,— գովեց նրան փոխարքան և, թևքից քաշելով-մոտեցնելով իրեն, համբուրեց ճակատը։— Դու պիտերյան փասիանից այժմ իսկական շեյթան ես դարձել... Սիրում եմ, սիրում։

Կառքից դուրս եկավ նա՝ ամրակազմ ու բարձրահասակ մի մարդ, որին իսկ և իսկ հարմար կլիներ ծառայելու որպես աջթևյան։ Կարաբանովի ձեռքից վերցնելով սուսերը՝ փոխարքան մատով ստուգեց սայրը և սուրը խնամքով դրեց պորուչիկի պատյանի մեջ։

— Ահա այսպես,— ասաց Միխայիլ Նիկոլաևիչը։— Լավ էր, եղբայր, որ դու ինձ հանդիպեցիր։ Ու-ու-ուրախ եմ... Ես որոշ բաներ եմ լսել,— ավելացրեց նա զգուշորեն, նայելով պորուչիկի հենց աչքերի մեջ,— բայց ստույգ չգիտեմ... Բամբասանքներ չեմ սիրում։ Սակայն քեզ ի՞նչ էր պատահել այնտեղ՝ Պետերբուրգում։ Հը՞...

Կարաբանովը համեստ ձևացավ, հինը փորփրել չէր ուզում։

— Չեմ համարձակվում ծանրաբեռնել ձեր ուշադրությունը։ Այդ պատմությունը երկար արմատներ ունի և հազիվ թե ձեզ բավականություն պատճառի իր մանրամասնություններով...

— Դու հիմար ես,— ասաց փոխարքան զինվորի կարճուկտրուկությամբ։— Արգելագծից գնդակը կմխրճեիր այդ «փասիանի» ազդրի մեջ և վերջ... Դա ինչ էր որ։

Միխայիլ Նիկոլաևիչը Կարաբանովի գլխի վրայից նայեց վախեցած Եգորիչին.

— Քո ուրյադնի՞կն է... Ա՛յ քեզ մոութ, կարծես Պուգաչովինը լինի... Նրան քո փոխարեն թող կորդոնում։ Դու կգաս ինձ հետ։ Ճանապարհին կպատմես... Դե թռի՛ր...

Անդրեյը պոռթկումով և ջերմորեն գրկեց Եգորիչին, ցատկեց կառքի մեջ և հենց անմիջապես էլ թաղվեց փափկափետուր մութաքաների կույտի մեջ։ Փոխարքան, նստելով դիմացը, բացեց թուրքական բուրավետ ծխախոտով լցված պորտսիգարը.

— Մաքսանենգային են, բայց շատ լավն են,— առաջարկեց նա սպային։— Վերցրո՛ւ... Իսկ առաջավոր գիծը քեզ համար չէ։ Այնպիսի սպաներ, ինչպիսին դու ես, Կարաբանով, ինձ պետք են... Անկեղծ ասեմ. պետք են թեկուզ նրա համար, որպեսզի ես ձեր օգնությամբ անուշաբույրով օծված բոլոր փասիաններին հետ քշեմ Պիտեր։ Թող այնտեղ պարեն ինչքան կուզեն...

Եգորիչը ձեռքը տխուր թափահարեց պատուհանի առաջ։ Ձիերը շարժվեցին։

Եվ ճանապարհը, որով Անդրեյը եկել էր այդ վայրերը, սկսեց հետ շրջվել նրա առջև, ոլորապտույտ ու խճճված, ինչպես և իրեն՝ Ումանի կազակային գնդի երկրորդ հարյուրյակի պորուչիկ, նախկին ֆլիգելադյուտանտ Անդրեյ Կարաբանովի կյանքը։

2

Նեկրասովը որոշ ժամանակ մնաց Թիֆլիսում, Բայազետի պաշտպանությունից հետո երեք շաբաթ պառկեց լազարեթում՝ ապաքինվելու համար, հետո անցավ մի հանգիստ պաշտոնի կվարտիրմեյստերության գծով, որի պետը՝ բարեսիրտ գեներալ-մայոր Պոլզակովը, սրտանց ուրախացավ այն բանի համար, որ Յուրի Տիմոֆեևիչը բնածին ռուս էր, և ոչ թե, ասված փրկե, գերմանացի։

— Ախր խեղդել են այդ երշիկագործները,— վշտանում էր գեներալը։— Ծառայությունը եկամտաբեր է, պարգևներ խոստացող, ուրեմն նրանք այստեղ են, անիծվածները, և քանի որ բոլորի համար սեղանները չէին բավարարում, անգամ լուսամուտագոգերին էին տեղավորվում։ Առաջին անգամ եկա այստեղ, և դուք, սիրելիս, չեք հավատա։

— Ի՞նչ է ձեր անունը,— հարցնում եմ։— Բագգովուտ։

— Իսկ նրա՞նը։— Դիստերլու։

— Է, իսկ մյուսի՞նը։— Դիդերիխս։

— Իսկ նա ո՞վ է։— Յակոբսոն։

Նեկրասովը սրտանց ծիծաղեց։

— Հարկավոր է լաց լինել,— փնչացրեց նրա վրա բարկացած գեներալը։— Պետք է խոշոր և սուրբ արցունքներով ողողես սեփական կուրծքդ, երբ տեսնում ես երշիկագործների ճնշումը։

Գեներալը վռնդեց բոլոր գերմանացիներին, և այժմ կվարտիրմեյստերական վարչությունում ծառայող մարդկանց թիվը ակնհայտորեն չէր բավարարում։ Յուրի Տիմոֆեևիչը զորանոցային զենքերի վերանորոգման գծով ինժեների պաշտոնի համար միամտաբար երաշխավորեց բարոն ֆոն Կլյուգենաուին և դրանով մեկընդմիշտ փչացրեց իր կարիերան գեներալ Պոլզակովի մոտ։

— Իմ ինչի՞ն է պետք ձեր այդ Կլյու... Կլյու...ն,— լրջորեն նեղացավ գեներալը։— Ինձ հարկավոր է Կլյուշկին, Պլյուշկին, Մատյուշկին և Վանյուշկին։

Սակայն այդ բոլորը կյանքի ցավալի մանրուքներն էին, և Նեկրասովին քիչ էր անհանգստացնում նման ճղճիմությունը։ Շտաբս-կապիտանը հստակ ու բարեխղճորեն, բայց և գրասենյակայնության նկատմամբ առանց սիրո զգացման, գծագրում էր զորամասերի գիշերօթելու գրաֆիկները, պլանավորում օկրուգային կայազորների տեղաբաշխումը։ Իսկ երեկոները, երբ Թիֆլիսը լցվում էր հեղձուցիչ մթնշաղով, գնում էր իր իշևանատուն, որտեղ նա մի փոքրիկ սենյակ էր վարձել ձեղնահարկում, և մինչև ուշ գիշեր սպան թանկարժեք մոմեր էր վառում, անհագ և ագահորեն կարդալով գրքեր, որոնց կարոտը քաշում էր Բայազետում։ Լրագրերից, որքան էլ դա տարօրինակ է, Նեկրասովը ամենից ավելի ուշադրությամբ հետևում էր «Բրաչնի լիստոկ»-ին, շաբաթը մի անգամ կարդում աղմկոտ հայտնությունների ամբողջ գոռհկությունը...

Շուտով պատից այն կողմ բնակություն հաստատեց բարձրահասակ, վտիտ մի պարոն։ Պարոնը պատվական ու ազնիվ տեսք ուներ, նրա պրոֆիլը հին տիրակալների դեմք էր հիշեցնում, որպիսին դրոշմվում էին հռոմեական դրամների վրա։

Ծանոթանալու ժամանակ, որից անհնարին էր խուսափել, հարևանը ներկայացրեց իրեն.

— Կոմս Պլյուշչիկ-Կրաշևսկի... չափազանց շոյված եմ։

— Շատ հաճելի է,— մրցահրավերով պատասխանեց Նեկրասովը։— Հերցոգ լե-Բանդրե-դյու-Պլյուսսի... Ինչպես տեսնում եք հին ծառի մի բեկոր։ Չէի՞ք ցանկանա արդյոք ինքնաեռ դնել։

«Կոմսը» չուզեց պարծենալ իր տոհմածառով, այլ ուղղակի հեռացավ բակից հենց հաջորդ օրը։ Սակայն երկնագույն համազգեստները որոշել էին «պտույտ գալ (ինչպես ասում էր դեռ Արակչեևը) մշտական գործունեության մեջ», պատից այն կողմ բնակություն հաստատեց մի նոր հարևան,

բայց արդեն ուրիշ՝ մարդկային շահադիտությունից և նախանձից տուժած պաշտոնաթող գնդապետ, անկեղծ մարդու դերում։

Սա գործում էր ավելի հասարակ ձևով. իր մոտ աղջիկներ էր բերում, շատ էժան գնած տիկից կում-կում գինի էր խմում, ամեն րոպե անցողակի մտնում էր Նեկրասովի սենյակը՝ գայթակղելով նրան իր մոտ.

— Մի րոպեով, մի րոպեով,— աղաչում էր նա։— Անմոռանալի պատկեր է։ Երեք աղջիկներ իրենց շնիկներ են ձևացնում, ես նրանց համար գինով լցված թասեր եմ դրել անկյուններում, նրանք չորեքթաթ են տալիս... Մի՞թե ձեզ հետաքրքիր չէ տեսնել։ Չէ որ աղջիկները մերկ են։

Մի օր Նեկրասովը «Բրաչնի լիստոկ»-ում կարդաց.

Արդեն չեմ սպասում, սակայն այնքան ծանր է բաժանվել ճարմարակեցությանս մասին երազանքից։ Ուզում եմ գտնել կարեկից մի տղամարդու։ Գեղեցկությունը բոլորովին էլ պարտադիր չէ։ բայց ցանկալի է։ Խաժ աչքերով, պերճանյուս, շիկահեր կին եմ, որին տղամարդիկ ճամարում են նմայիչ, ծանոթ եմ խոնարհական արվեստին, նկատի ունեմ ճանապարհորդություն կատարել Վոլգայով։ Ամուսնությունը՝ փոխադարձ ճամակրանքի գեպքում։ Երջանկություն կտամ, միայն արձագանքիր...

Նեկրասովը մտախոհությամբ լրագիրը մի կողմ դրեց։

— Վոլգայով... աշնանը,— ասաց նա՝ նայելով առաստաղին։— Չեմ կարծում, որ ստացվի...

Նա գնաց փոստատուն, դրամապանակից հանեց մի հին հեռագրի քրքրված անդորրագիրը։

— Ասացեք, խնդրեմ,— դիմեց Նեկրասովը մի աստիճանավորի,— արդյոք նամակ չի՞ ստացվել անդորրագրի այս համարով՝ զրո հազար վեց հարյուր երեսունութ։

Աստիճանավորը հաճույքով ստուգեց երկար ժամանակ մնացած փոստը՝ չկա, ոչինչ չհայտնաբերվեց։ Այն ժամանակ շտաբս-կապիտանը նստեց սեղանի մոտ և հենց տեղնուտեղը «Բրաչնի լիստոկ»-ի համար կազմեց հետևյալ հայտարարությունը.

Կնոջ անցյալը ինձ չի հետաքրքրում, արկածախնդրությունիներին խնդրվում է չնուզվել։ Անձամբ ճանդիպել չեմ կարող, կաշկանդված եմ ծառայությամբ։ Ինքս գեղեցիկ եմ, սիրում եմ երաժշտություն, կարողանում եմ

լավ զալ կանանց։ Կրոնը և դասային նախապաշարմունքները խանգարել չեն կարող։ Պատասխանների որոնան կարելի է ԱՐԱԳ. փոստային անդորրագիր՝ № 01638, Թիֆլիս։

Նա վերադառնում էր տուն, երբ Քուռի կամուրջի վրա նրան հասավ երկտեղանոց մի կառք, որից դուրս թռավ մի անծանոթ պրապորշչիկ և, երկյուղածությամբ շուրջը նայելով, Նեկրասովի ձեռքերի մեջ կոխեց մի խոշոր ու ծանր փաթեթ։

— Ինչպիսի՜ երջանկություն, որ հանդիպեցի ձեզ,— ասաց պրապորշչիկը։— Աստվա՜ծ իմ, փրկեցե՛ք ինձ... Դուք ինձ չեք կարող ճանաչել, բայց դա հիմա նշանակություն չունի։ Ես պրապորշչիկ Նիկոլոխրիստոն եմ, Տենգենի գումարտակից... Ձեր մասին ինձ ասել է Տրիգոնին դեռ Օդեսայում։

Նեկրասովին թողնելով կապոցը ձեռքին՝ պրապորշչիկը նույն արագությամբ էլ անհետացավ, և շտաբս-կապիտանը ուշադիր նայեց շուրջը։ Բարեբախտաբար, կամրջի վրա մարդ չկար։ Յուրի Տիմոֆեևիչը պատռեց փաթեթի շապիկը, որի մեջ, ինչպես և պետք էր սպասել, դրված էր անլեգալ գրականության մի կապ։

— Այ քեզ հիմարնե՜ր,— հայհոյեց Նեկրասովը և կապոցը թափով շպրտեց կամրջի տակ խշշացող գետի հորձանքի մեջ։

Կամրջից նա թեքվեց մի ծուռումուռ, փոքրիկ փողոց, երկար ծեծեց մի տան դուռ, մինչև բաց արին։

— Այդ դո՞ւք եք,— հարցրեց Կլյուգենաուն։

— Լսե՛ք, բարոն։— Նեկրասովը պրապորշչիկին մի կողմ տարավ տնից, և նրանց ամբողջ խոսակցությունն անցավ նեղ փողոցի մեջտեղում։— Ասացե՛ք, բացի Լատիշևի մատնություններից, դուք Պացևիչի թղթերում ուրիշ ոչինչ չե՞ք հայտնաբերել։

Կլյուգենաուն ըմբռնողաբար գլխով արեց.

— Հավատացե՛ք ինձ... Լատիշևը սպանվեց այն հետախուզության ժամանակ, և դրանով էլ սառավ դոսյեն։ Ես չեմ կարծում, որ Շտոկվիչը կամ... Ասենք, երաշխավորել չեմ կարող... Մի՞թե ձեր գլխի վրա արդեն սկսել են ամպեր կուտակվել։

Նեկրասովը, չպատասխանելով այդ հարցին, ամուր սեղմեց բարոնի կանացիական փոքր, թմբլիկ ձեռքը.

— Մնաք բարո՛վ։ Ես միշտ հավատացել եմ ձեզ...

Նեկրասովը հենց այդ օրն էլ ձերբակալվեց։ Եկան երկու չափազանց քաղաքավարի ոստիկանական սպաներ և, հարգալից ներողություն խնդրելով, տակնուվրա արեցին շտաբս-կապիտանի ոչ հարուստ ունեցվածքը։

Խուզարկման ժամանակ անընդհատ լսվում էր.

— Թույլ տվե՛ք անհանգստացնել... Ներեցե՛ք հետաքրքրքրության համար... Ներողություն եմ խնդրում, իսկ այստեղ ի՞նչ կա...

Փնտրում էին երկար։ Ամեն ինչ քրքրեցին։ Եվ գեմքերի վրա հանկարծ երևաց բութ շփոթվածություն։

— Չկա,— ասաց մեկը։

— Պետք է լինի,— պատասխանեց մյուսը։

Նեկրասովը հորանջեց։

— Պարոնա՛յք,— ասաց նա,— դուք ինձ շփոթել եք ինչ-որ մեկի հետ։ Ես մաքսանենգությամբ չեմ զբաղվում, և ո՛չ քիմմանական շալեր, ո՛չ հաշիշ, ո՛չ թուրքական լաթակիա չեք գտնի ինձ մոտ։

— Կգտնենք,— պատասխանեց ոստիկանական պորուչիկը։— Դուք այսօր Օդեսայից արգելված գրականություն եք ստացել, և մեզ հայտնի է այդ մասին։ Այնպես որ, պարոն Նեկրասով, ձեզ կույս մի ձևացրեք։

Ոստիկանները, մի քանի ժամ ապարդյուն որոնելով այն փաթեթը, որը հիմա պտտվում էր Քուռի փրփրակոհակների մեջ, անձնատուր եղան։

— Լա՛վ։ Ձեր կողմից հիմարություն կլիներ, իհարկե, պարոն Նեկրասով, եթե մենք որևէ բան գտնեինք...

Գիշերը նա անցկացրեց սպայական հաուպտվախտի մաքուր ու ընդարձակ սենյակում։ Պահակապետը, որը երկրամյա ծառայությամբ զինվորից հասել էր մայորի կոչման, պատրաստակամ մարդ էր։ Անձամբ սենյակ բերեց հինգգծանոց լապտերը, օգնեց թարմ սպիտակեղեն գցելու մահճի վրա։ Այնուհետև, բացելով ծոցատետրը և մուժիկավարի լեզվի վրա թեթևակի թքոտելով մատիտը՝ սկսեց ավանդական հարցեր տալ։

— Ի՞նչ ծխախոտ եք ծխում... Ձեր սիրած գինի՞ն։ Արդյոք

հատուկ սովորություններ չունե՞ք... Հարկավոր չէ՞, արդյոք, քահանա։

— Շնորհակալ եմ, պարոն մայոր։ Մի կտոր կարգին օճառ և մաքուր սրբիչ։ Ուրիշ ոչ մի բանի կարիք չունեմ։ Հատուկ սովորություններ չունեմ, միայն չեմ կարող տանել փայտոջիլներին... Ի դեպ, ահա նրանցից մեկը արդեն դուրս է սողում՝ ինձ հետ ծանոթանալու համար։

Պահակապետը մատով ճզմեց փայտոջիլը։

— Պստլիկ է։ Սա ձագուկ է դեռ։ Այդպիսին ձեզ չի ուտի... Հանգիստ քնեք, պարոն կապիտան։ Ցանկանում եմ առանց տրտունջի կրեք ձեր խաչը։ Դուք չլինեք, ես պիտի լինեմ. ռուս մարդկանցից որևէ մեկը, միևնույն է, պիտի նստի։ Առանց դրա չի լինի...

Մյուս օրը հնարավորություն տվեցին ուզածի չափ քնել։ Լավ նախաճաշ մատուցեցին սենյակում՝ գինով և մրգերով, որից հետո Նեկրասովը պետք է կանգներ հենց իր՝ գնդապետ Վասիլև-Բեշենցևի վճիռ հայացքի առջև։ Ճանապարհին շտաբս-կապիտանը մտածում էր. «Հանգուցիկը, ըստ երևույթին, ամուր է կապված... Դեռ Բայազետից։ Այնտեղ ևս անուշադրության չեն մատնել»։

Վասիլև-Բեշենցևը փորձված ոստիկան էր, ինչ-որ բանով հիշեցնում էր գոգոլյան Նոզդրևին, միայն արդեն սաստիկ ծերացած։ Նա Նեկրասովին դիմավորեց ֆիկուսների չափերով զբաղեցրած սենյակում, շապիկի վրայից հագած բուխարական խալաթով, թուրքական կոշիկները բոբիկ ոտքերին։ Նրա ձեռքում ծխում էր չիբուխը, որ ասես հագցված էր կնոջ փոքրիկ շրջազգեստի մեջ։ Պատշգամբի բաց դռնից փողոցի անցորդների վրա հաչում էր ցեղական արջորս շունը՝ բրոնզե երկու մեդալները վզից կախ։

— Աղավնյա՛կս,— գոչեց գնդապետը, բերկրանքով ընդառաջ նետվելով Նեկրասովին։— Չեմ հավատում, չեմ հավատում... ո՛չ, ո՛չ։ Ինձ բամբասանքներով չի կարելի խաբել։ Չի կարող պատահել, որ դուք և... Ո՛չ, ես արդեն գեներալ-նահանգապետին ձեր մասին լավագույն արտահայտություններով հեռագիր եմ տվել... Նստեցե՛ք, սիրելիս, նստեցեք։

Նեկրասովը նստեց։ Նրա գլխավերևում սկսեց ծվվալ գեղձանիկը։

— Լավն է, լավը,— գովեց գնդապետը թոշնակին։— Գիտե՞ք, թե նրա կոկորդում ինչպիսի բյուրեղապակու կտոր կա... Իմիջիայլոց, վերջերս այստեղ հիվանդացավ։— Վասիլև-Բեշենցևը մտերմաբար կռացավ Նեկրասովի ականջին.— պարդոն, ջրիկ էր կաթեցնում... Երևի այն չէր կերել, ինչ պետք է... Բուժե՞լ։ Բայց թռչունը հո մարդ չէ։ Եվ ես, հավատացեք, բուժեցի։ Ես, ես ինքս... Եվ գիտե՞ք ինչպես։

Հետևեց երկար պատմություն այն մասին, թե ինչպես է բուժվում թռչունի լույծը։ Նեկրասովը համբերությամբ լսում էր, պատասխանում միանգամայն հարգալից.

— Զվարճալի է։ Զափազանց զվարճալի...

— Խնդրեմ,— գնդապետը նրան սիգարներ մոտեցրեց։

Յուրի Տիմոֆեևիչը, փոքրիկ ունելի չգտնելով՝ սիգարի ծայրը կծեց և նայեց շուրջը, թե որտեղ կարելի է թքել։

— Թքիր հատակին,— լոթիաբար թույլ տվեց գնդապետը։

Նեկրասովը ծխախոտը թքեց հատակին։ «Այ թե խորամանկ անասունն ես, հա՜»,— մտածեց նա ոստիկանի մասին, որը լուցկին մոտեցնելով Նեկրասովին՝ անվերջ խոսում էր.

— Ինքս չեմ հավատում։ Եվ ուրիշներին էլ թույլ չեմ տա։ Այդպես էլ հեռագրով հաղորդել եմ նորին բարձր գերազանցությանը։ Սակայն ծառայական պարտականություն է... Ինձ վրա մի՛ բարկացեք, ինչ արած։

— Ես հասկանում եմ,— պատասխանեց Նեկրասովը՝ օգնության հասնելով ամաչկոտ ոստիկանին։— Դե ձեր պարտքն է և կատարեք այն։ Իսկ իմ պարտքն էլ այն է, որ ապացուցեմ ձեզ...

— Է՜, վերջ տվեք,— խաղացկոտ խույս տվեց Վասիլև-Բեշենցևը։— Լինենք ավելի պարզ։ Յուրի Տիմոֆեևիչ, գիտե՞ք արդյոք, որ այս ծառայությունն ինձ ահա այստեղ է հասցրել...— Նա ձեռքով խփեց իր ծոծրակին, որը երեք տակ ծալված էր։— Իսկ հիմա էլ ռեֆորմները սկսվեցին։ Նիկոլայ Պավլիչի ժամանակ, աստված հոգին լուսավորի, լավ էր։ Հասարակ։ Մեկնում եմ ես, հասկանո՞ւմ եք, Պերմ։ «Ի՞նչ հրահանգներ ունեք, թագավոր»,— հետաքրքրվում եմ։ Իսկ նա հանում է թաշկինակը, տալիս է ինձ և ասում. «Ահա և

քեզ իմ հրահանգը. մաքրիր բոլոր նվաստացյալների և անարգյալների արցունքները...» Նրա մոտ ծառայելը լավ էր։ Հասարա՜կ, պա՜րզ։

Նեկրասովը ծխում էր։ Լսում։ Ժպտում։

— Հիմա այն չէ։ Բոլորովին այն չէ,— բողոքում էր գնդապետը։— Ես ունեմ կին, երեխաներ։ Երաժշտությամբ եմ զբաղվում։ Այո... Եվ այդ ժամանակ էլ դու տուն ես գալիս, հարկավոր է իրավաբանություն ուսումնասիրել։ Պահանջում են։ Ասում են՝ պետք է... Ի դեպ,— նա մատով մոտ կանչեց Նեկրասովին, շարաճճիորեն աչքով անելով նրան.— դուք չե՞ք լսել այսպիսի բան։

Եվ գնդապետը հրճվանքով ու ախորժակով կարդաց.

Շեղթայակամուրջի մոտ ես տեսա զվարճալի մի տեսարան.
Փորը բռնած, ծիծաղից մեռնում էր սատանան.
«Տեր իմ, մեզս չի գալիս, մեռնում եմ իրոք։
Սովորում են իրավունք բաժնում երրորդ։
Իրավունք՝ հանդեպ անօրինությա՞ն։ Եղբայրներ, այսպիսով
Ես պետք է աստվածաբանությամբ զբաղվեմ շուտով...»։

— Ինչպե՞ս է։ Շատ լավն է, չէ՞,— հարցրեց Վասիլև-Բեշենցևը։— Ձեր բարեկամներն ազատամիտներն ու գահակործաններն են։ Իսկ նրանց ոճը հաճախ հիանալի է։ Եվ կատակում են սրամտորեն։

Նա մեջքով հենվեց բազկաթոռի թիկնակին և, ակնապիշ նայելով շտաբս-կապիտանին, նորից նետվեց վիճաբանության՝ երևակայական հակառակորդի հետ.

— Սակայն դուք ինչ գործ ունեք այդ պատերազմի հետ, որը վարում է մայր Ռուսաստանը ի սարսափ թշնամիների... Լռո՞ւմ եք։ Եվ ճիշտ եք անում, որ լռում եք։ Որովհետև դուք ինչպե՞ս կարող եք ձեր վեցանոցով կտրել իմ կոզրի մեկանեցը... Եվ դեռ քողարկվում են, իրենց համար անուններ են հնարում... Ինչպես ասենք՝ Արման Ռոսս։

Յուրի Տիմոֆեևիչն զգաց, որ այդ անունը լսելիս իր դեմքը կարող էր փոխվել, և իսկույն քողարկվեց ծխախոտի ծխի քուլաներով։ Բայց գնդապետը հիմար չէր. նա ձեռքով շատ արագ ցրեց ծուխը և մեկեն տոնը փոխեց.

— Արման Ռոսս, իսկ այլ կերպ՝ քաղքենի Սաժին։ Այն նույնը, որը անցյալ տարի հրավիրում էր ձեզ Չերնոգորիա՝

միանալու բալկանյան ապստամբներին։ Դուք գիտե՞ք, թե որտեղ է նա հիմա։

— Դա ճիշտ է միայն մասամբ,— հանգիստ առարկեց Յուրի Տիմոֆեևիչը։— Անցյալ տարի ես ցանկացա լինել կամավոր, բայց հետևեցի լոկ գեներալ Չերնյաևին, որն այն ժամանակ փախավ Մոսկվայից՝ թողնելով իր նոտարական գրասենյակը։ Իսկ քաղքենի Սաժինին, որի մասին դուք ինձ հարցնում եք, ես չգիտեմ...

— Չերնյաևը,— նույնպես շատ հանգիստ առարկեց Վասիլև-Բեշենցևը,— ընդամենը փառքի սիրահար է միայն, որը նախանձում է Սկոբելևի համբավին։ Թագավորը նրա հետ թեՔևակի ընդհարվել է, թագավորն էլ նրա հետ կհաշտվի։ Իսկ ձեր բաբեկամ Սաժինը վտանգավոր հանցագործ է, որը զանցառել է կայսրության օրենքները... Ինձ համար շատ ցավալի է, պարոն շտաբս-կապիտան, բայց դուք ինձ չասացիք ճշմարտությունը, և ես համառորեն չեմ պնդի ձեր խոստովանության վրա։ Թույլ տվեք ևս մի հարց...

— Խնդրեմ։

Գնդապետը անփութորեն նրա առաջ նետեց Վերոչկա Ֆիգների լուսանկարը, որը աշխարհին էր նայում երիտասարդ աղջկա հարցախույզ հայացքով։

— Դա Վերա Ֆիգներն է,— ասաց գնդապետը։— Ես ձեզ օգնում եմ նրա անունը տալ այն պատճառով, պարոն կապիտան, որպեսզի դուք հիմար վիճակի մեջ չընկնեք, եթե հրաժարվեք նրան ճանաչել որպես ձեր ծանոթի։ Հետերբուրգի երիտասարդությունից շատերն են նրան ճանաչում։ Եվ դուք նույնպես։

— Տարօրինակ է,— զարմացավ Նեկրասովը,— դուք իմ վզին փաթաթում եք ծանոթություններ, որոնք ես գուցե և չէի ցանկանա ունենալ։ Այդ աղջիկը բոլորովին իմ ճաշակով չէ։ Ես հակված եմ հրապուրվելու ավելի շատ թխահեր կանանցով։ Եվ ոչ թե նիհարներով...

— Ենթադրենք,— համաձայնեց գնդապետը։— Սակայն այդ համագույն խաղաթղթերում մի կոզիր չէ, որ ես ունեմ։ Դուք ինչո՞վ կկտրեք սա։

Գարձյալ մի լավ, հստակ լուսանկար՝ հաստ ստվարաթղթի վրա։ Նրա վրա պատկերված էր Ժելյաբովի մերձավորը, որի մականունը «Մարկիզ» էր, իսկ նրա իսկական անունը Նեկրասովը իրոք չգիտեր։ Հանդիպել էին նրանք միայն մեկ անգամ՝ Լիզոգուբի բնակարանում։

— Այս դեպքում էլ,— պատասխանեց Նեկրասովը,— ձեզ, դժբախտաբար, օգնել չեմ կարող։

— Ես առանց այն էլ բավականաչափ օգնականներ ունեմ,— հիմնավորապես ասաց Վասիլև-Բեշենցևը։— Եվ օգնություն չէ, որ ես ձեզանից խնդրում եմ, պարոն շտաբս-կապիտան։ Դուք գիտե՞ք «Մարկիզին», թե ոչ։

— Ո՛չ։

Վասիլև-Բեշենցևը մատով թխկթխկացրեց լուսանկարին.

— Ինչ-ինչ, բայց այս պարոնին դուք անպայման պետք է ճանաչեք։

— Թույլ տվեք ավելի մոտիկից նայել։

— Խնդրե՛մ... Հիշեցի՞ք։

«Ի՞նչ է պատահել,— համառորեն թխկթխկացնում էր ուղեղում։— Մի՞թե ձախողում է...»։ Շունչ քաշելով՝ նա լուսանկարը մի կողմ դրեց.

— Ո՛չ։ Չգիտեմ նաև այս պարոնին...

Վասիլև-Բեշենցևը վեր կացավ։ Քայլելով սենյակում՝ նա խնամքով ուղղում էր ֆիկուսների լայն տերևները։ Կանգ առավ Նեկրասովի թիկունքում և ավազակաբար ասաց նրան թիկունքից, ասես դանակով կտրեց.

— Դուք մեղադրվում եք «Զեմլյա ի Վոլյա» շարամիտ կազմակերպությանը պատկանելու մեջ, և ձեր ձերբակալման կարգադրությունն ստացվել է ուղիղ Պետերբուրգից... Որպես նորին մեծության գլխավոր շտաբի սպայի ձեզ առանձնապես ծանր պատիժ է սպառնում։ Միակ բանը, որ դեռ կարող է փրկել ձեզ, դա այն է...

— ... Փախչել,— ժանդարմի փոխարեն շարունակեց Նեկրասովը։— Ես այդ մասին առանց ձեզ էլ գլխի եմ ընկնում։ Շնորհակալություն մասնակցության համար...

Այդ օրը նրան սպայական հաուպտվախտից տեղափոխեցին Անդրկովկասյան օկրուգի գաղտնի բանտը՝ նստեցնելով մենախցի բարձր, բայց նեղ դամբանի մեջ։ Պատերը միա-

կերպ էին և չափազանց հարթ, միայն մի անկյունում մեխով փորագրված էր կայտառություն ներշնչող մի նախադասություն՝

Ա՛յ, լյուլի, ա՛յ, լյուլի,
Կհարցնեն՝ լռի՛ր։

Այդ միջոցին, որպես իր ենթակաների բարեսիրտ պետ, գեներալ կվարտիրմայստեր Պոլզակովը չէր կարող չայցելել Նեկրասովին, որը դժբախտության մեջ էր ընկել։ Հին ռազմիկը մարդկային հարաբերությունները հասկանում էր պարզ կերպով՝ «դնչվածքով» խոնարհվել մարդու առաջ՝ ստորություն է, դժբախտության մեջ մարդուց երես թեքել՝ նույնպես ստորություն է։

Եվ դրա համար էլ նա բանտում հանկարծ երևաց սուրն ու բոլոր շքանշանները կախած, իսկ կրծքին քիչ շքանշաններ չէին կուտակվել հիսուն տարվա ծառայության ընթացքում։ Պոլզակովին, իհարկե, սկզբից թույլ չէին տալիս տեսակցել քաղաքական հանցագործի հետ։ Սակայն այդ պահին պարզվեց, որ հերթապահ ոստիկանը մի սպա էր՝ դժբախտաբար ոչ բոլորովին ռուսական ազգանունով՝ Կամպենգաուզեն-Բրոուն, և այժմ գեներալին ինչ էլ բացատրեիր, միևնույն է, ոչ ոքի չէր լսում.

— Ը-հը՛,— մռնչում էր նա՝ մերկացնելով սուրը,— մի շայկա է... Ձեզ բոլորին ջարդել է պետք, ձեր մայրիկը... գարշելի պրուսակներ։

Գեներալը հասավ իր նպատակին՝ նրան թույլ տվեցին մտնել Նեկրասովի մոտ, որին նախապես տեղափոխեցին գրասենյակ։ Պոլզակովը, քիթը վեր քաշելով և աչքերը սրբելով, շտաբս-կապիտանի ձեռքը կոխեց հարյուր ռուբլի «ճանապարհի համար», և Յուրի Տիմոֆեևիչը այն վերցրեց ծերուկից, որպեսզի նրա սիրտը չկոտրի։

Սակայն նրան նույնպես բաժին հասավ անսաստ գեներալից։

— Բոլորը գերմանացիներն են,— ասաց նա։— Բոլորը դրանք են անում, անիծվածները... Քաղաքականությունն էլ դրանք են հնարել։ Ես քեզ ասում էի չէ՞, որ հեռու մնաս

դրանցից։ Իսկ դու՝ ոչ, դեռ ուզում էիր մեկին խցկել իմ ենթակայության տակ։

Հրաժեշտի պահին նրանք համբուրվեցին։

Եվ հոսում էին օրերը։

3

— Թող հոսեն օրերը ցանկությամբ իմ...

Մի անգամ այդպես ասաց Կարաբանովը՝ հիշելով Իսմայիլ խան Նախիջևանսկուն, և զարմացավ այն բանից, որ վրա հասնող յուրաքանչյուր օր նրա համար այժմ ցանկալի է, ինչպես տոն։ Եվ հոսում է օրն այդ, ծորուն ու հաճելի, ինչպես ժամանակը արևելյան քեֆում՝ նաբգիլեի կլկլոցի տակ, աղջկա նուրբ մատներից թրթռացող երաժշտալարերի նվագի տակ։

Ամենից ավելի դժվար էր նորից շոշափել մանրահատակի լաքած փայտիկները, որոնք մի ժամանակ անհետացել էին ոտքերի տակից։ Հեշտ չէր նորից ընտելանալ կիսապալատական շքախմբի սպայի արծաթագույն ուսապանակին։

— Ինչպե՞ս անեմ,— հաճախ էր խորհում Կարաբանովը։— Գուցե ավելի լավ է հանձնվել հոսանքի կամքի՞ն...

Սակայն այդպես էլ ոչինչ չորոշեց։ Շարունակ տատանվում էր։ Հավասարակշռություն էր պահպանում։ Արքայահամհարզի ուսակապերը կախված էին Կարաբանովի առջև սարսափելի բարձրության վրա, ինչպես կրկեսային երերուն ճոճաձող. թռչել անդունդի վրայով, որպեսզի պինդ կառչել նրանցից և բաց չթողնել, դրա համար հարկավոր էր հմտություն, որը Անդրեյին հավանաբար, չէր բավականացնում։

— Թող հոսեն օրերը ցանկությամբ իմ... Թող հոսեն։

Կարաբանովին հանգստի համար ազատ սենյակներ էին հատկացվել փոխարքայի պալատում, որը գտնվում էր Բորժոմի կիրճում, հենց սրընթաց և երգաձայն Քուռի ափին։ Քամուց տավիղի ձայն հանող սոճիների անտառով պատած լեռների մեջ էր այդ մավրիտանական ոճի շքեղ դղյակը, որն ամբողջովին թափանցված լինելով ապակու փայլով ու տաղավարների սառը ճերմակությամբ, այդտեղ ապրող բնակիչներին (որոնք ապրում էին երկպառակություններով և ար-

յունալի գժտությունների տագնապի մեջ) հիշեցնում էր եվրոպական լավագույն առողջարանները։

Սակայն փոխարքայի ապարանքը ներսից ավելի շուտ նման էր մի ժխորի, գրեթե բաբելոնյան խառնաշփոթության, լեվանտական[1] մեյդանի նման տարազգի և այլալեզու մարդիկ էին բնակեցված նրա սենյակներում, պատշգամբներում և աշտարակներում։ Կարաբանովը չգիտեր ինչ լեզվով խոսել ապարանքի բնակիչների հետ։ Ռուսներ էին միայն աղախիններն ու կազակային պահակախումբը։ Բադենից բերված ֆրեյլինները՝ մեծ իշխանուհու ընկերուհիները, խոսում էին միայն բարի Ֆատերլանդի լեզվով։ Բժիշկները պատասխանում էին անգլերեն, իսկ այգեպանները՝ հոլանդերեն։ Մանկահասակ մեծ իշխանների դաստիարակուհիները ճոպտում էին ֆրանսերեն, իսկ Կովկասի լավագույն տոհմերից աղքատության պատճառով ձրիակյաց աղջիկները գիտեին միայն հայրենի լեռների լեզուն։ Ծառաներն ու խոհարարներն ամբողջ օրը իրար կոկորդ էին կրծում թուրքերեն։ Իսկ փայտահատ զինվորները ճանաչում էին միայն մի լեզու՝ մայր հայհոյելը, որին խստորեն հավատարիմ էին։

Կարաբանովը մի անգամ չէ, որ դուրս կախվելով լուսամուտից, վերևից սպառնում էր նրանց.

— Է՛յ, դո՛ւք... ղգո՛ւյշ։

— Ոչ մի կերպ չի կարելի, ձերդ բարեծնություն. ծղանը հո ծանր է... Դե դուք մի անհանգստացեք, այստեղ, միևնույն է, ոչ ոք ռուսերեն չի հասկանում...

Բորժոմում իր հանգստի առաջին օրերին Կարաբանովը ձգտում էր ավելի շատ քնել, ընդունում էր բժիշկների խորհուրդները, ընդհանուր սեղանի մոտ էր գալիս հազվադեպ, ծուլորեն զննում էր դեռատի և հիմար ֆրեյլիններին։ Իսկ ինքը՝ Օլգա Ֆեդորովնան, Բադենի արքայադուստր Յեցիլիան, որը դեռ չահելատես կին էր, անտանելի ձանձրալի էր գերմանական առաքինությունների առատությունից, օրինակելի ու բազմածին մայր էր, նորերս էր ծնել յոթերորդ երեխային՝

[1] Լեվանտ — Միջերկրական ծովի արևելյան ափի և Մերձավոր արևելքի երկրների համար նախկինում գործածվող ընդհանուր անվանումը։

Ալեքսեյին, որը դեռ բարուրում էր հետևակային գնդի շեֆը դարձավ։

Կարաբանովին խանգարում էին քնել այդ գնդի չափից ավելի ջանասեր զինվորները։ Երբ նրանք ուզում էին խմել, իսկ խմիչքի համար փող չկար, ապարանքի լուսամուտների տակ այնպիսի «ուռա՜» էին գոռում ի պատիվ իրենց հովանավորի, որ Օլգա Ֆեոդորովնան շտապում էր դուրս գալ պատշգամբ պղնձյա դրամների տոպրակով՝ միայն թե այդ աղմկարարները չարթնացնեին փոքրահասակ շեֆին։ Կարաբանովը զայրանում էր, բայց հո չէ՞ր կարող կռիվ անել բանովը խմելու սիրահարների հետ, այստեղ քեզ համար հո Բայազետը չէ, որտեղ ամեն ինչ արվում էր սրտանց, անհրաժեշտության սահմաններում։

Երբեմն հանպատրաստի կարճատև այցելություններով, գործից ազատ ժամանակ, ապարանքում երևում էր և ինքը գործից ազատ ժամանակ, ապարանքում երևում էր և ինքը՝ Կովկասի փոխարքան, մեծ իշխանը, ծերացող գեղեցիկ տղամարդը։ Միխայիլ Նիկոլաևիչը շտապով համբուրում էր երեխաների ճակատը, շրթունքներով չպպացնում կնոջ ձեռքը և հենց նույն պահին հայտարարում, որ ինքը մեկնում է հետ։ Օտարազգի ձրիակյացները՝ ծվոցով, վախեցած առնետների նման նրանից դես ու դեն էին փախչում, վազելով մտնում ժանյակներով և ձեռագործներով զարդարված իրենց բները։ Փոխարքան ռումբի նման սրընթաց անցնում էր սենյակների երկար շարքերի միջով, ոտքի հարվածներով իր առջև բացում դռները, ներխուժում իր առանձնասենյակը, չխկացնում կողպեքը, և ապարանքում անսովոր լռություն էր տիրում։

Փոխարքան Կարաբանովին կանչում էր իր մոտ՝ տալով նրան աննշան հանձնարարություններ։ Մի անգամ՝ ստուգել տեղական գանձապետի ինքնասպանության պատճառը, մյուս անգամ՝ բռնել ապարանքում եղած կատուներին և խեղդել Քռում՝ հաշվի չառնելով ֆրեյլինների արցունքները։ Երբեմն հանձնարարություններն այնքան ինտիմ բնույթ ունեին, որ Անդրեյը նույնիսկ վախենում էր վերջիվերջո դառնալ պաշտոնական կավատ։ Միխայիլ Նիկոլաևիչը դեռ ուժ ուներ. նրան միայն կինը չէր բավարարում։ Մեծ իշխանի ճաշակը փոքր-ինչ այլասերված էր. նա շատ էր սիրում այն պտուղ-

ները, որոնք արդեն կտցահարված էին չվող թռչունների կողմից, և Կարաբանովը զուգընթացաբար նույնպես կտցահարում էր նրանց։

Իր կարճատև այցելությունների մեկի ժամանակ Միխայիլ Նիկոլաևիչն ասաց.

— Պետք է խաղաղեցնել այստեղից ոչ հեռու գտնվող երկու տուլ։ Վերցրու կազակային երկու հարյուրյակ, կայարանում կնախապատրաստվեն վագոնները։ Հարկավոր է լեռնիներին վերաբնակեցնել հարթության վրա։ Դե, գործի անցիր...

Կարաբանովը գիշերը հարձակվեց քնած աուլների վրա։ Կարգադրեց բնակիչներին՝ վերցնել միայն անհրաժեշտ իրերը, հրկիզեց խրճիթները, ձիերով ոտնակոխ տվեց ցանքերը, կտրատեց խաղողի այգիները և խռովարար լեռնցիներին տարավ մի խաղաղ հարթավայր, որտեղ նրանք չէին կարող ազատ գործել։ Կազակային մի գյուղի հարևանությամբ, Վլադիկավկազի և Ալագիրի միջև ընկած ճանապարհի կողքին տարածվեց նոր գյուղը։ Երևում էր լեռնցիները ոսկի ունեին, շրջակայքի հողերը լավն էին, և «խաղաղեցվածները» այնքան էլ չէին հուսահատվել։

Այդ արշավի համար, որի ընթացքում Անդրեյը պատժիչի դեր խաղաց, մեծ իշխանը նրան պարգևատրեց Վլադիմիրի շքանշանով, և Կարաբանովն ակամայից զարմացավ, թե ինքն ինչ հեշտությամբ ձեռք բերեց այդ բարձր շքանշանը։

Բայազետն այժմ հեռու է, այնտեղ շքանշանների մասին չէին էլ մտածում...

«Իսկ այստեղ Բորժոմն է՝ նրին մեծության նստավայրը,— ծուլորեն խորհում էր Կարաբանովը։— Գայլի մոտ ապրես, գայլի նման էլ կոռնաս...»։

Բայազետի պաշարման ժամանակ խիստ քայքայված առողջությունը, չնայած մեծ իշխանի բժիշկների ծառայությանը, վերադառնում էր դժվարությամբ։ Կարաբանովը հաճախ նայում էր իրեն հայելու մեջ. գունաթափ կապտությամբ այտերը փոս էին ընկել, մեծ, խոնավ աչքերում տենդային փայլ կար, իսկ տառապանքներից նրբացած քթի ռունգները դարձել էին ուռուցիկ, խիստ փքված, ինչը հենց իրեն չափազանց տհաճ թվաց։

Անդրեյը երեկոները բացում էր այգու կողմի լուսամուտը և նստում ճոճաթոռին՝ երկնքի աստղային քառակուսու առջև։ Այդին դանդաղորեն կենդանություն էր ստանում։ Թփուտների մթության մեջ մերթ ընդ մերթ ֆրեյլինների և աղախինների զգեստներ էին երևում։ Անզգույշ սիրեկանների բուռն գրոհի տակ ճարճատում էին ցանկապատերը։ Կարաբանովը համհարզային հանգստյան սենյակի լուսամուտից նայում էր ուրիշների սիրային կապերին հանգիստ ու անտարբեր, ինչպես իմաստուն, ամեն ինչ տեսած ծերունի՝ բոլորովին չհուզվելով և ամենևին առանց նախանձի։

Հիմա նրան անհանգստացնում էր ուրիշ՝ գրեթե համլետյան մի բան.

— Լինե՞լ, թե չլինել։ Եթե լինել, ապա ինչո՞ւ է մինչև հիմա լռում փոխարքան։ Ես հո չեմ կարող ինքս նրա վզին փաթաթել իմ ցանկությունները...

Վատնինը հայտնվեց հանկարծ, բոլորովին անժամանակ։ Սակայն Անդրեյը ուրախացավ նրա գալուն։

— Հա՜, եսաուլ, դու իմ շատ սիրելի մորուք։ Բարև, Նազար Մինաևիչ, բարև թանկագինս...

Նրանք երեք անգամ համբուրվեցին, իրար պինդ գրկած կանգնեցին լուռ՝ հիշելով ծանր անցյալը։ Հետո հարյուրապետը, փաղաքշանքով պորուչիկին հրելով, հեռացրեց իրենից ու նկատեց Վլադիմիրյան շքանշանը։

— Ա՜յ քեզ սատանայի բան,— ասաց առանց նախանձի։— Այդ ինչի՞ համար են քեզ պարգևատրել։

— Դատարկ բան է, եսաուլ,— ամաչեց Կարաբանովը։— Ա՜յ, Բայազետի համար ստացած այս խաչը իր տեղում է կարված։ Իսկ այս նշանը... ստացվել է հիմարաբար։ Հիմարների բախտը բերում է...

— Դե, այդպես մի՛ ասա,— երկարացնելով ասաց Վատնինը։— Քեզ հո չե՞ս կարող հիմար անվանել։ Դու ամեն դատարկ բան մեղադրանքի պատճառ կդարձնես։ Եկել եմ ահա, հարկավոր է խորհրդակցել քեզ հետ։

Նրանք կանգնած էին այգու մուտքի մոտ։

— Ներս անցնենք,— առաջարկեց Կարաբանովը։

— Չէ՜-է՜,— Վատնինը տարուբերեց մորուքը,— ես սովոր չեմ այսպիսի պալատներ մտնել։

— Իսկ դու թքիր դրա վրա։ Այստեղ միայն ոջիլներ չկան,

բայց ապրում են ավելի կեղտոտ, քան Իգդիրի զորանոցներում։ Ես արդեն ուշադրությամբ զննել եմ...

Նա Վատնինին տարավ իր սենյակները, գինի հյուրասիրեց։

— Դե պատմիր, ի՞նչ է պատահել։

— Նեկրասովին ձերբակալել են,— երեսը շուռ տալով՝ պատասխանեց եսաուլը։— Մի անգամ կայարանում հանդիպեցի Շտոկվիչին։ Ասում էր, որ մեր ակադեմիկոսին կախաղան կհանեն...

Կարաբանովը մոտեցավ դռներին և ավելի կիպ ծածկեց։

— Ափսո՜ս,— ասաց պորուչիկը, և նա իսկապես հիմա շատ ու շատ ափսոսում էր այդ խելացի, լավ մարդուն,— Բայց ախր, եսաուլ... Ես ինչո՞վ կարող եմ օգնել։

— Բայց չէ՞ որ դու կարող ես,— աղերսանքով նրան նայեց Վատնինը։

— Ինչո՞վ։

— Չգիտեմ ինչով։ Բայց կարող ես...

— Ինչպե՞ս։

— Չէ՞ որ մեծ իշխանի մոտ ես ծառայում։ Աքսելբանտներ կրող ուղածդ մարդը գեներալից ավելի ուժեղ է։ Մտածի՛ր...

Կարաբանովը հարյուրապետին գինի լցրեց.

— Ես գիտեմ... ինձ երկու անգամ նախազգուշացրել են։ Դեռ այնտեղ... Բայազետում։ Սկզբից Շտոկվիչը, հետո այդ պզուկոտ Լատիշևը... Եվ պետք էլ չէր, որ նա քիթը կոխեր քաղաքականության մեջ։ Ինչպես ապրել են մարդիկ հարյուր, երկու հարյուր տարի առաջ, այնպես էլ կապրեն հիմա։ Խոսքերով և գնդակներով այստեղ ոչինչ չես կարող շտկել։ Ժողովուրդը սրիկա է։ Արժե՞, արդյոք, նրա համար զոհաբերել իրեն...

— Աստված այդ ժողովրդի հետ,— տխրությամբ պատասխանեց Վատնինը։— Իմ խելքի բանը չէ ժողովրդի մասին դատողություններ անել։ Իսկ ահա Յուրի Տիմոֆեևիչը ճիշտ մարդ է։ Հարկավոր է օգնել նրան։ Հը՞...

Կարաբանովը լռում էր։

— Մի՛ լռիր,— խնդրեց եսաուլը։

— Իսկ ի՞նչ անեմ։

— Նորին բարձրության հետ խոսիր։ Ասա՝ այսպես ու այնպես, որ ես այդ Նեկրասովին ինչպես ինքս ինձ գիտեմ... Հը՞...

«Դա արդեն ոչ, խոնարհաբար շնորհակալ եմ,— մտածեց Կարաբանովը գրեթե վախեցած։— Նորից վերադառնալ Եգորիչի մոտ կորդոն, փայտե խաչերով վառարան տաքացնել... Ո՛չ, առաջավոր գծում ծառայելը իմ բանը չէ...»։

— Դժվե՞լ ես, ի՞նչ է,— ասաց Կարաբանովը վեր կենալով։— Չհամարձակվես անգամ մտածել փոխարքային անհանգստացնելու մասին... Լա՛վ,— համաձայնեց նա ակամայից՝ ամոթ զգալով։— Թող այդպես էլ լինի, կմտածեմ։

Վատնինը վեր կացավ՝ ձիու պես աղմկոտ շունչ քաշելով։

— Քո գինին թեև լավ պղպջակներ է արձակում, բայց ես բան չեմ զգում։ Դե ես գնամ, Անդրեյ Ելիսեիչ, վատ չհիշեք ինձ։

Նրանք չհամբուրվեցին։

Հաջորդ օրը պալատում հայտնի դարձավ, որ երեկ հայկական ռեստորաններից մեկում կազակային մի վիթխարահասակ հարյուրապետ, հարբած վիճակում, տուրուդմփոց է սարքել տեղական համբարակների հետ և միանգամից տասներկու մարդ խեղանդամ դարձրել։ Նրան փակել են դռների հետևում, բայց նա ջարդել է ռեստորանի սպասը և դնացել, հրաժեշտի պահին կոտրատելով երեք հարյուր տասնվեց ռուբլու և մի քանի կոպեկի ամանեղեն։ Այդ գուլիվերյան գինարբուքի մեջ Կարաբանովը կռահեց Վատնինի ուժը և ճիշտ որոշեց, որ հարյուրապետը մոլեգնել է վշտից...

Ընթրիքից առաջ Կարաբանովին նամակ բերեցին։ Շատ համառոտ էր բովանդակությամբ.

Ես կանգ եմ առել «Կավալերսկայա» հյուրանոցում։ Հուսով եմ, որ բոլոր սխրագործություններից հետո էլ դուք մնացել եք իմ նախկին ասպետը։ Եթե ցանկանում եք, կարող եք հանդիպել ինձ Երեկոյան ժամը ութին Եկատերինայի աղբյուրի մոտ։ Միշա ձերը։

— Տարօրինակ են կանայք,— ասաց Կարաբանովը։— Ինձ թվում էր, թե ամեն ինչ արդեն վերջացած է... Սակայն նա արագ ուշքի է եկել իր ցնցումներից...

Երեկոյան Անդրեյը կազակային սպայի համեստ հա-

մազգեստ հագավ, ձեռքերին մաքուր ձեռնոցներ քաշեց և պատահած դիլիժանսով հասավ մինչև հանքային լոգարանները։ Սաստիկ փոշեպատ և զանազան տեղերից հավաքված հասարակությամբ լեցուն Բորժոմը թաղված էր զինվորական նվագախմբերի երաժշտության, զբոսնող բազում ոտքերի քրստքրստոցների և կանանց ծիծաղի մեջ։ Լեռան վրա տարածված Վորոնցովյան այգուց արդեն փչում էր երեկոյան զովը։

Կարաբանովը որոշեց սպասել տաղավարի մուտքի մոտ, որի պատերը խզմզել էին հանքային ջրերի օգտագործմամբ ազեշնչված լուսնոտ բանաստեղծները։ Բանաստեղծական բազմաթիվ գոհարներ խզմզված էին գրանիտի վրա։ «Սիրում եմ քեզ, բնության զավակ, քո խիզախ գործերի և բուժիչ ջրերի համար, որ ես խմում եմ քեզ հետ...»։

— Պարոն,— ասաց Կարաբանովը դատարկամոլներից մեկին,— իսկ դուք չե՞ք ամաչում՝ կեղտոտելով պատերը։

Զառամյալ աստիճանավորի սափրած կերպարանքը դանդաղ շրջվեց դեպի Անդրեյը, կրծքին սեղմելով փոքրիկ ծաղկեփունջը։ Այդ բյուրոկրատի վավաշոտությամբ կախ ընկած շրթունքը գորշակապույտ էր։

Ջխկացնելով դնովի ծնոտը՝ սափրվածը ցույց տվեց սեպերը.

— Ա՜խ, ինչպիսի՜ սքանչելի կնոջ եմ տանում այս ծաղիկները,— ասաց նա՝ թարթելով լացակումած աչքերը։— Դուք պատահմամբ չգիտե՞ք «արև» բառին համապատասխան որևէ հանգ։ Ինձ մոտ առաջին տողը ստացվում է այսպես.

«Եկ արագ դու ինձ մոտ, իմ արև...» Չգիտե՞ք։

— Դիտեմ,— պատասխանեց Կարաբանովը։— Կարող եք գրել... «Եկ արագ դու ինձ մոտ, իմ արև, վերցրու արագ իմ տասնոցներ...»։

—Ներողություն,— նեղացավ դիականման մարդը,— բայց սքանչելի կինը անշահախնդիր սիրահարված է ինձ...

Մեկը անլսելի մոտենալով հետևից՝ քնքուշ, անուշահոտ ափերով փակեց Կարաբանովի աչքերը։ Թիկունքում կնոջ ծիծաղն ու շնչառությունն զգալը միշտ էլ հուզիչ է։

— Ագլա՜յա,— ասաց Կարաբանովը, և ափերն ընկան նրա աչքերի վրայից։

Հետ շրջվեց։ Նրա առջև կանգնած էր իր զարմուհին՝ բոլոր

ազգականներից միակը, որին սիրում էր, կանգնած էր այնքան հրաշալի տեսքով, որ կարծես հյուսված էր թեթև շղարշից, մեղմ ժպիտը մանրիկ շրթունքների վրա։

— Աստվա՜ծ իմ,— շփոթվեց Անդրեյը՝ բռնելով նրա ձեռքերը և ստեպ-ստեպ համբուրելով։— Աստվա՜ծ իմ, որքա՜ն ուրախ եմ, իշխանուհի... Իմ սիրելի, հիանալի մարդ։ Վաղո՞ւց եք այստեղ։ Ինչպե՞ս եք իմացել իմ մասին։ Իմ սիրելի, Դո՜լլի։

Զբոսահովանոցի ծայրով կինը խփեց նրա ուսին։

— Անդրե,— ասաց նա փայլող աչքերով,— ես նույնպես ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ։ Ո՞ւր գնանք, որ մի քիչ խոսենք։

— Կարելի է գնալ «Մարսել»,— առաջարկեց Կարաբանովը, հիշելով, որ երեկվա ջարդից հետո հայկական ռեստորանում, հավանաբար, մատուցում են վատ ամանեղենով։

— Ո՜չ։ Այնտեղ ծանոթ մարդիկ շատ են լինում... Մի՞թե ավելի հարմար տեղ չկա։

— Իսկ եթե գնանք Շավի-Ցխալի՞։ Այնտեղ շատ քիչ մարդ է լինում, բայց չափազանց հասարակ է։ Եվ պետք է նստել գորգերին՝ ոտքերը ծալած։

— Հրաշալի է, Անդրե։ Գնա՜նք...

Նրանց խոսակցությունը պարզ էր և հասարակ։ Շատ սրբտաբաց։ Ինչպես և պետք է լիներ մոտիկ ազգականների միջև։ Դոլլին հմայիչ էր, պարզամիտ, նրա ժպտուն շրթունքները գինուց վարդագույն էին դարձել։

— Ես այնքա՜ն ուրախ եմ, այնքա՜ն ուրախ,— շարունակ կրկնում էր Կարաբանովը։

— Այդ ի՞նչ Ագլայա է, որին դուք սպասում էիք։

Անդրեյը պատմեց։ Նույնիսկ մանրամասնություններով։

— Զբարկանաք ինձ վրա, Անդրե,— պատասխանեց իշխանուհին,— բայց ես հասկանում եմ այդ կնոջը։ Նա, երևի, ձեզանից ավելի լավն է։ Եվ երբ սիրեկանի դերը ավարտվել էր, դուք այլևս այդ կնոջ մոտ ոչ մի անելիք չունեիք...

Ոտաբոբիկ մատուցողը, սրբիչը գլխին փաթաթած, նրանց համար բերեց շամփուրներով խորոված ու պոմիդոր և անուշաբույր խինկալի՝ կծոխուրը վրան ցանած։

— Չգիտեմ ինչ բան է սա,— սիրալիր ծիծաղեց իշխանուհին,— բայց սքանչելի է։ Իմ մորաքույրները Մոսկվայում կսոսկան...

Կարաբանովը՝ հանդիպման և գինու ազդեցության տակ, Դոլլիի առաջ շռայլորեն բացեց իր խաղաթղթերը։

— Հերիք եղավ,— վերջացրեց նա իր պատմությունը։— Ես ճաշակել եմ այդ դառը պտուղից և մի աչքով կուրացել։ Թող մնացածն էլ ուտեն ուրիշները։

Իշխանուհին մտածմունքի մեջ ընկավ։

— Ես դեռ երիտասարդ կին եմ,— պատասխանեց նա ոչ իսկույն,— բայց արդեն բավականաչափ փորձ ունեմ։ Ճիշտ է, իմ փորձը նույնպես դառն է։ Սակայն դա, հավանաբար, անհրաժեշտ է մեր շրջապատի մարդկանց համար։ Ես ձեզ ասեմ, Անդրե, մի քանի բաներ, որոնք դուք երբեք հույս չեք ունեցել լսել ձեր Դոլլիից...

Կարաբանովը նորից ստեպ-ստեպ համբուրեց նրա ձեռքերը։

— Լսե՛ք, Անդրե... Մի՛ փնտրեք նորից այն, ինչ կորցրել եք։ Այդ կազակային համազգեստով դուք միշտ ավելի լավ և ավելի վեհ կլինեք։ Մի՛ կառչեք աքսելբանտներից, որքան էլ դրանք դիպչեն ձեր բթին։ Հավատացեք ինձ, այդպես ավելի լավ կլինի։ Կանանց համար ավելի դժվար է դուրս պրծնել այդ շրջապատից։ Ուրեմն տղամարդ եղեք, իմ թանկագին զարմիկ։

Եվ նրանք դեռ երկար-երկար զրուցում էին՝ թափահարելով իրենց սաստիկ նիհարած տոհմաբանական ծառը։ Եվ երբ նրանից ընկնում էր իրենց ազգակից պտուղը, նրանք կարծես աչքաչափով որոշում էին՝ այսօր ի՞նչ կշիռ ունի այն հասարակության մեջ։

— Ես ի՞նչ անեմ,— հարցրեց Կարաբանովը։— Հո չե՞մ կարող հավիտյանս ման գալ այս չիկչիրներով։

— Պաշտոնաթող եղեք, Անդրե... Վերադարձե՛ք Ռյազանի նահանգ։ Հիմա խիստ փոխվել են կյանքի պայմանները, Անդրե, և կարելի է ընտրությամբ որևէ գործի տեղավորվել ու լավ կարիերա ստեղծել։ Ձեզ համար բոլորովին էլ պարտադիր չէ փայլել զենք կրելով...

— Լինել գավառային դատավո՞ր,— քմծիծաղեց Կարաբանովը անվստահորեն։— Մուժիկներից ապառքներ գանձե՞լ։ Աղքատ խրճիթից վաճառքի հանել վերջին ինքնա՞եռը։ Թե՞ դատարանում տքնել, քննելով հավերժական վեճը՝ ով է արդար, ով՝ մեղավոր։ Ո՞-ո՞չ, սիրելի իշխանուհի, դա էլ իմ սրտով չէ...

Նրանք քաղաք վերադարձան վերջին դիլիժանսով։

— Դուք հիանալի եք, Անդրե,— խոստովանեց իշխանուհին։— Սակայն ես սարսափում եմ ձեր համար։ Եվ շատ ու շատ անհանգստացած եմ։ Հատկապես մեր խոսակցությունից հետո...

Բորժոմում ամենալավ հյուրանոցի՝ «Կավալերսկայա» հյուրանոցի ամայի մուտքի մոտ հրաժեշտ տալով, իշխանուհին ասաց.

— Դե գնացեք, Անդրե... Եկեք համբուրեմ ձեզ հրաժեշտի պահին։

Նա Անդրեյի շրթունքներին հպեց իր փոքրիկ, տաք շրթունքները, որոնք Կարաբանովին հիշեցրին Ագլայայի համբույրները, և նա ագահորեն գրկեց զարմուհուն։ Դոլլին պոկվեց նրանից, ջղաձգորեն շունչ քաշեց՝ բերանը փակելով ձեռքի երեսով։

— Դա արդեն եղբոր համբույր չէ։

— Թանկագին իշխանուհի, հավատացեք, որ ես հույս էլ չունեի այսօր հանդիպելու քրոջս...

Այդ գիշերը նրանք միասին անցկացրին։ Առավոտյան նա չէր ուզում խորհրդածել՝ ո՞վ է մեղավոր, նա՝ կինը, թե՞ ինքը՝ տղամարդը։ Սակայն արթնացումը վրա հասավ, թեև նրանք երկուսն էլ անհարմարության և ամոթի բնական զգացումը չապրեցին։ Ընդհակառակը, նրանց հարաբերությունների մեջ աննկատելի ներս սողաց ինչ-որ նուրբ քնքշություն՝ մեկը մյուսի նկատմամբ։

Կարաբանովը հանկարծ հասկացավ, որ հիմա իր համար չկա ավելի հարազատ և ավելի մոտիկ մարդ, քան այդ փոքրիկ իշխանուհին։

4

Հարևան սեղանի շուրջը «ռամս»[1] էին խաղում։ Մեծ խաղումարներ էին դնում՝ առանց հետ նայելու։ Կլյուգենաուն, լուցկու հատիկով փորփրելով ատամները, վճարեց համեստ ճաշի համար։ Թեյափող չտվեց։

— Ներիր, եղբայր,— ասաց նա մատուցողին,— բայց թեյափողը նվաստացնում է մարդկային արժանապատվությունը։— Մատուցողը համաձայն էր նվաստացնել իր արժանապատվությունը, սակայն Կլյուգենաուն ցույց տվեց նրան վերջին տասանոցը.— Տեսնո՞ւմ ես։ Սա բոլորն է, ինչ մնացել է ինձ մոտ ժառանգված մայրատից...

— Է՛, գնացեք խեղդամահ եղեք, ձերդ պայծառափայլություն,— ոչ այնքան քաղաքավարի խորհուրդ տվեց նրան մատուցողը։

Իսկ թուղթ խաղացողներով շրջապատված սեղանի մոտից լսվում էին խուլ ձայներ.

— Վեցանոց... խփված է... շտոս[2]։

Գրապորշչիկը ուշադիր նայեց խաղացողներին։ Նրանցից մեկը վաղուց արդեն պահեստային գծերի վրա քշած զինվորական գնացքի պետն էր, և մեքենավարը սպասում էր, թե երբ պետը կվատնի բոլոր պետական փողերը, որպեսզի շարունակեն առաջ գնալ մաքուր խղճով։ Երկրորդ խաղացողը, վեհասքանչ մի պարոն՝ ընտիր շարժուձևով, Կլյուգենաուին ծանոթ թվաց դեռ Իգդիրից, որտեղ նա, կարծեմ, տնօրինում էր գանձատունը։ Երրորդը՝ վրացական իշխան էր, հագնված Թիֆլիսի վերջին նորաձևությամբ, այն է՝ շալվարի մի փողքը ճտքակոշիկի մեջ էր դրված, իսկ մյուսը՝ կախ էր ընկել ճտքի վրայից։

Կլյուգենաուն վեր կացավ և մոտեցավ թուղթ խաղացողներին.

— Թույլ տվեք խաղալ, պարոնա՛յք, ես այնքան էլ հարուստ չեմ և խաղագումար կդնեմ մեկ անգամ...

Խաղի մոլուցքի մեջ նրան թույլ տվեցին։ Սեղանի վրա

[1] Ռամս — թղթախաղի մի տեսակ։

[2] Շտոս — բացականչություն մոլեգին թղթախաղի ժամանակ, երբ քանկը տանում են։

շատ դրամ կար։ Գուցե հազար ռուբլի։ Գուցե և ավելի շատ։ Բարոնի խղճուկ տասանոցը կորավ թղթադրամների և վարկատոմսերի կույտի մեջ։

Սկսվեց բանկ բռնելու ժամանակը։ Խաղաթղթերը բաժանում էին ճարպկորեն։

— Փոսիկի աղջիկ։

Կլյուգենաուն բացեց իր խաղաթղթերը.

— Ես շահել եմ, պարոնայք...

Նա սեղանի վրայից հավաքեց շահած դրամները և կոխկրտեց գրպանները։ Խաղացողները փոխեցին թղթերի կապուկը։ Դրամների նոր կույտ աճեց նրանց առջև։ Ինչպես երևում էր, այդ պարոնների համար մի մեծ խաղագումարի կորուստն այնքան էլ զգալի չէր։ Նրանց ձեռքերը լավ տաքացել էին Ռուսաստանի վարած այդ սրբազան պատերազմի կատաղի բոցերի վրա։

Գնացքի պետն ափսոսում էր բաց թողնել բարոնին.

— Հիմա դուք կարող եք խաղագումար դնել։ Սիրելիս, մի տես ինչպես եք ուռել։

— Շնորհակալություն սիրալիրության համար,— քաղաքավարի պատասխանեց Կլյուգենաուն։— Բայց ճակատագիրը սովորություն ունի ինձ երես տալ միայն մեկ անգամ։

Փողոցում բարոնը երկար ժամանակ սակարկում էր կառապանի հետ, որը մինչև Կոչորի ամառանոցները պահանջում էր տաս ու կես ռուբլուց ոչ պակաս, սակայն համաձայնեցին ութ ռուբլով և գնացին։ Սուրը ծնկների արանքը դրած, Կլյուգենաուն կառքով շրջում էր աղմկոտ փողոցներով՝ գլուխ տալով կանանց և պատվի առնելով սպաներին։ Բարոնի փոքրիկ ձեռքերը սիրով գրկում էին դաստապանը։ Ցընցումների ժամանակ ակնոցը հաճախ ընկնում էր քթի վրայից, և Ֆյոդոր Պետրովիչը թեթևակի բռնում էր այն։

Երկու անգամ պատվիրեց կանգնեցնել ձիերին։ Առաջին անգամ զինվորական նահանգապետի տան առջև, ուր նա բարձրագույնի անունով խնդրանք էր ներկայացրել պաշտոնաթողության մասին՝ «ընտանեական հանգամանքներով, որոնք դասավորվում էին այնքան անհարմար, որ կարող էին վնաս հասցնել ծառայությանը»։

— Ո՞ւր է ձեր պարտավորագիրը,— հարցրեց աստիճանավորը։

— Խնդրեմ,— պատասխանեց Կլյուգենաուն և նույն վայրկյանին նստելով սեղանի մոտ, շտապ գրեց պարտավորագիր այն մասին, որ նա՝ «սույնը ներկայացնողը, պարտավորվում է այսուհետև պետական խնամակալության հարցով այլևս ոչ մի տեղ չդիմել՝ իր համար ապրուստի միջոցներ գտնելով սեփական ուղիներով»։

Երկրորդ անգամ նա կառքը կանգնեցրեց քաղաքային վարչության մոտ, որտեղ պայմանագիր էր կնքել քաղաքային բաղնիքներ կառուցելու և փողոցներից մեկը «հուդայական մաստաքով» ծածկելու մասին։ Ասֆալտը դեռ նոր էր մոդայի մեջ մտնում, և աշխատանքը խոստանում էր լինել հետաքրքիր ու բավականաչափ շահութաբեր։

— Իսկ այժմ,— ասաց Կլյուգենաուն, նորից կառք նստելով,— տար ուղիղ Կոջոր, դուքանների մոտ չկանգնես։

Շուտով երևաց և Կոջորը՝ իշխան Բարատինսկու կուսակալության անհաջող պսակը, Բարատինսկու, որը երազում էր այդ բլուրների վրա տարածել նոր Պետերբուրգի փառահեղ զովությունը։ Կլյուգենաուն պատվիրեց իրեն տանել դեպ Մոնկալի ամառանոցը, որտեղ սկզբից տեղավորված էր ազնվաբարո կույսերի ապաստարանը, իսկ այժմ հիմնավորվել էր հայտնի ավազակաորջը։

— Պը՛ռ-ռը՛-ռը՛,— կառապանը քաշեց ձիերի սանձերը՝ կառքը կանգնեցնելով հասարակաց տան կարմիր լապտերների տակ։

— Սպասի՛ր ինձ այստեղ, եղբայր,— ասաց Կլյուգենաուն։— Ես քեզ երկար չեմ պահի, շուտ կվերջացնեմ...

Պրապորշչիկը մտավ կիսամութ դահլիճ, որի պատերի վրա կախված էին փոշոտ ու մաշված փալասներ։ Կանանցից մեկը բարոնի մասին ինչ-որ մեկին ասաց.

— Տկարավուն պարոնիկ է։

Կլյուգենաուն դիմեց քնաթաթախ հույնին, որը կարդում էր առաջիկա աճուրդի մասին «Թիֆլիսի տեղեկագրերի» հավելվածը։

— Հարգելիս, արդյոք կարո՞ղ եմ տեսնել պարոն Շտոկվիչին։

— Խնդրեմ,— պատասխանեց նա։— Չորրորդ օրն է ծարմանդով պակված է։ Սատ լավ կին է պատահել։ Նրա մոտից տուրս գալ չի ուզում...

Երեսը մաքուր սափրած մի երիտասարդ թաթար Կլյուգենաուին տարավ դեպ Մոնկալի ամառանոցի երկրորդ հարկը և ցույց տվեց Քրիստինայի սենյակը, որտեղ «չորրորդ օրն է» փակված է Բայազետի ամրոցի նախկին պարետը։

Ֆյոդոր Պետրովիչը երկար ժամանակ ծեծում էր դուռը.

— Եֆրեմ Իվանի՛չ... Պարոն կապիտա՛ն, ես եմ... Բա՞ց արեք։

Դուռը բացեց ինքը Քրիստինան՝ գեղահասակ ու բարձրակուրծք մի գերմանուհի, առանց խալաթի, նեղ կորսետով, մանուշակագույն գուլպաներով և առանց կոշիկների։ Շտոկվիչը սոկալի հարբած էր և ամենաանհարմար դիրքով, որը հնարավոր չէ նույնիսկ երևակայել, փռված էր կեղտոտ, յուղոտված թախտի վրա։

Կլյուգենաուն փորձեց տեղից շարժել նրան, բայց Քրիստինան խորհուրդ չտվեց։

— Արդեն քանի օր է խմում է,— ասաց Քրիստինան։— Լռում է ու խմում խոզի պես։ Թողեք նրան։ Թե չէ կսկսի հետ տալ...

Սարսափելի էր նայել կապիտանին, դեմքը գորշակապտագույն էր, աչքերը փոս ընկած, ամբողջ մարմինը կպչուն քրտինքի մեջ, մազերը գզգղված ու սոսկալի։ Կլյուգենաուն մի քիչ կանգնեց նրա կողքին, զզվանքից ցնցվելով, հետո Քրիստինային մի տասանոց տվեց ու պատվիրեց Շտոկվիչին ուշքի բերել։

— Կփորձեմ...

Նա Շտոկվիչին հոտ քաշելու ինչ-որ դեղափոշի տվեց, և վերջինս սկսեց գլուխը ճոճել, շարժել ոտքերը, աքացի տալ.

— Օ՜յ, օ՜յ, օ՜յ... չեմ ուզում, չեմ ուզում... ես ասացի հետո։

Կլյուգենաուն, կապիտանի ուսից բռնելով, ուժեղ թափ տվեց։

— Բայազետը այրվում է, պարե՛տ,— ասաց նա։

Շտոկվիչը աչքերը բացեց.

— Թյո՞ւ, սատանա, Այդ դո՞ւք եք, բարոն... Կարծեմ կարող էիք և ինձ չհիշեցնել Բայազետի մասին... Թյո՞ւ, թյո՞ւ Մի բան տվեք խմեմ, չեմ կարող...

Կլյուգենաուն արգելեց Քրիստինային.

— Օղի պետք չէ։ Պատվիրեք շամպայն բերել։

Քրիստինան Շտոկվիչի գանգին մի սափոր սառը ջուր լցրեց, կապիտանը ագահորեն դատարկեց շամպայնի բաժակը։ Կարծես սկսեց ուշքի գալ։ Ափով խփեց Քրիստինայի հետույքին, կարգադրեց հեռանալ գրողի ծոցը, որից հետո ասաց.

— Իսկ դուք, բարոն, ինչո՞ւ եք խցկվել այստեղ։ Դա նման չէ ձեզ...

— Ես պարտքեր չեմ սիրում,— պատասխանեց Ֆյոդոր Պետրովիչը։— Իմացա, որ դուք կորչում եք այստեղ, և ահա... տասնհինգ ռուբլին, որ վերցրել էի ձեզանից. շնորհակալություն դրա համար։ Խնդրե՛մ...

Շտոկվիչը դրամը շպրտեց հատակին.

— Այդպես էլ հավատացի։ Թողե՛ք կոտրատվելը, բարոն, և անկեղծորեն ասեք, ի՞նչ եք ուզում ինձանից։

— Իմանալ,— պատասխանեց Կլյուգենաուն։— Իմանալ, թե ո՞վ է օգնել ոստիկաններին՝ Նեկրասովին բանտ կոխելու։

Շտոկվիչը սեղանի վրայով պարզեց մազոտ թաթը և բռնեց ծանր շշի բերանը, ինչպես մարդու կոկորդից։

— Դե կորի՛ր այստեղից, կեղտոտ գերմանացի,— ասաց նա։

Կլյուգենաուն, քաղաքավարի ժպտալով, ձեռքերը վերցրեց ծնկների վրայից և, Շտոկվիչի համար բոլորովին աննկատելի, սեղանի կողքից բռնելով, մի փոքր բարձրացրեց.

— Պարո՞ն կապիտան, դեռ ոչ ոքի չի հաջողվել ինձ հարվածել,— ասաց նա։— Ավելի ևս այսպիսի անառակ վայրում։

— Կորի՛ր,— գոռաց Շտոկվիչը՝ ձեռքը բարձրացնելով, որ խփի։

Սեղանի վրա սաստիկ խառնափնթորություն էր՝ շշեր, վարտիք, ափսեներ, սափորիկներ։ Ձեռքերի մի շարժում

դեպի վեր, և սեղանը, դղրդյունով ու զնգոցով շուռ գալով, թռավ Շտոկվիչի վրա՝ նրա գլխին թափելով սամանեղենի բեկորները։

— Տակա՛նք,— ասաց Կլյուգենաուն։

Հանգիստ թափ տալով համազգեստը, նա վար իջավ, և երբ Շտոկվիչը ատրճանակը ձեռքին դուրս նետվեց սանդուղքների վրա, բարոնի կառքն արդեն փոշի էր բարձրացնում Թիֆլիսի ճանապարհին։

— Սրիկա՛,— Շտոկվիչը կրճատացրեց ատամները։— Կեղտոտ գերմանացի...

Նա կառապանի հետ հաշիվները փակեց քաղաքի ծայրամասում, Սոլոլակից այն կողմ, այգու մեջ թաղված մի ոչ մեծ կավածեփ խրճիթի մոտ։ Օրվա շահած գումարից ութ հարյուր ռուբլի հաշվելով՝ Կլյուգենաուն այդ փողերը դրեց առանձին գրպանի մեջ։ Երկար ժամանակ քաշում էր զանգի լարը, որը ձգվում էր դեպի խրճիթը, և զանգի ձայնից հուսահատ բարձրաձայն հաչում էր մի քոսոտ շնիկ։

Դռնակը բացելու համար դուրս եկավ մի աղջիկ՝ խայտաբղետ սարաֆանով, բոբիկ ոտքերով և արևակեզ սրճագույն մաշկով։

— Ո՞ւմ եք ուզում։

— Ես ձեր հոր՝ մայոր Նիկոլայ Սերգեևիչ Պոտրեսովի ընկերն եմ,— ասաց պրապորշչիկը։

Նրան տուն տարան. մաքուր ու հարմարավետ տուն էր, որտեղ ապրում էին մաքուր ու հարմարավետ մարդիկ։ Կլյուգենաուին հաճելի էր դիտել սպիտակ պատերը, քայլել ճրոճրան տախտակների վրայով, պատի վրա տեսնել Բայազետի հրետանու պետի դիմանկարը, որը շրջահյուսված էր սև երիզով և զարդարված անթառամ ծաղիկների փնջիկներով։

Նա զննեց շուրջը.

— Ի՞նչ լավ է այստեղ։ Այստեղից ոչ մի տեղ էլ չէի գնա...

Հանգուցյալ մայորի դուստրերը եկան պարտեզից, որտեղ նրանք փորփրում էին մարգերը, ձեռքները լվացին՝ մեկը մյուսին փոխանցելով սրբիչը, նստեցին հյուրի առաջ՝ նստարանին, այդ հաճելի ու սիրելի ռուս աղջիկները։

Նրանցից ավագը՝ Դաշենկան, սեղան էր պատրաստում։

Փափուկ հացը կտրում առատորեն՝ հաստ կտորներով, ինչպես նրանց, հավանաբար, սովորեցրել էր դեռ հայրը.— չէ՞ որ նա զինվոր էր։ Գրաֆինի միջի գինին, որը քաշել էին իրենց այգու խաղողից, սառն էր։

— Անո՛ւշ արեք,— ասաց Դաշենկան։

Նա Պոտրեսովների մոտ մնաց մինչև մութն ընկնելը՝ պատմելով Բայազետի պաշարման մանրամասնությունները։ Նրանք նստել էին Կլյուգենաուի առջև լուռ ու մտախոհ, միատեսակ շալերով, զարմանալիորեն նման մեկը մյուսին։ Նրան հաճելի էին այդ պարզ հայացքները, և հեռանալ չէր ուզում։

Նա թուղթ ու մատիտ խնդրեց։

— Ես ձեզ կնկարեմ Բայազետը,— ասաց բարոնը և գրաֆիտի մի քանի շարժումներով նկարեց ամրոցի ուրվագիծը.— Թող սա ձեզ համար հիշատակ լինի ձեր հոր մասին, որին ես սիրում էի, և իմ մասին նույնպես... Ես ուզում եմ խմել, աղջիկներ, այն բանի կենացը, որ ձեր տունը միշտ լինի մաքուր ու հարմարավետ, որ այնտեղ մտնեն միայն հավատարիմ բարեկամները։

Կլյուգենաուն վեր կացավ հրաժեշտ տալու։

— Մի րոպե,— ասաց նա։— Ես դեռ վաղուց մտադիր էի այցելել ձեզ, բայց... Ահա ութ հարյուր ռուբլի, որը մի անգամ օգնության կարգով տվել էր ինձ ձեր հայրը։ Մեծագույն շնորհակալությամբ այս դրամը վերադարձնում եմ ձեզ, որպես մայոր Պոտրեսովի դուստրերի։

— Օ՜յ,— ասաց Դաշենկան,— մեր հայրը որտեղի՞ց կարող էր այդպիսի մեծ գումար ունենալ։ Ախր մենք միշտ այնքան կարիքի մեջ ենք եղել։

— Չգիտեմ։ Գուցե այդ փողերը հենց ձեր համար էլ նա հավաքել էր...

Հաջորդ օրը պրապորշչիկը արդեն ձեռք էր բերել նոր հագուստ՝ քաղաքացիական կյանքի համար։ Թեթևակի փայլփլեցնելով ձյունափայլ կրծքակալը, որը երբեմն դուրս էր թռչում սերթուկի տակից, նա ուղղվեց տիկին Խլոշչինսկայայի մոտ։ Գնդապետի այրին դեռ մնում էր Թիֆլիսում, սպասելով պատերազմի ավարտին, որ հետո ամուսնու ամյունը Բայազետից տեղափոխի Ռուսաստան։

Ագլայա Եգորովնան հիմա խոր սգի մեջ էր, և այդ օրերին նրան այցելելու իրավունք ուներ միմիայն բարոն Կլյուգենաուն։

— Բարև ձեզ, իմ բարեկամ,— ասաց կինը։— Երեկ ինչո՞վ էիք զբաղված, որ նույնիսկ չայցելեցիք ինձ։

Կլյուգենաուն, ձեռքերը տրորելով, թեթևակի գլուխ տվեց.

— Օ՜, տիկին, երեկ ես շարունակում էի կատարելագործել ինձ, որքանով դա հնարավոր է մեր խառնաշփոթ դարի պայմաններում...

Կրծքակալը ճթճթոցով նորից դուրս թռավ սերթուկի տակից, և Ագլայան թեթևակի ժպտաց։

5

«Զքնաղ և լուսաշյա» շիկահերուհին, ինչպես ասված էր «Բրաչնի լիստոկի» հայտարարության մեջ, իրոք չքնաղ էր և լուսաշյա։ Բարձրահասակ երիտասարդ կինը, որը հպարտությամբ գեղեցիկ հագուստներ էր կրում, իրեն պահում էր խստաբարո, գրեթե անհասանելի, և տղամարդիկ վախենում էին առաջինը խոսակցություն սկսել նրա հետ...

Գնացքը մեկնեց Մինեբալնիե Վոդի կայարանից, կառամատույցին թափելով անբանների պարապ ամբոխը, և անմիջապես սուզվեց նախալեռնային հարթավայրերի տոթաթեզ մշուշի մեջ։ Վագոնի պատուհանի հետևում, լողալով անցնում էին հեղձուցիչ փոշու մեջ թաղված կազակային հարուստ ստանիցաները՝ Վինոգրադնայա, Ապոլլոնսկայա, Սոլդատսկայա և Պրոխլադնայա։ Մոտենում էր Վլադիկավկազը։ Կայարանների կառամատույցները աղտոտված էին ձմերուկի կճեպներով, արևածաղկի կեղևներով, կեղտոտ խոզերը թափառում էին մուսուլմանական գերեզմանների և ուղղափառական խաչերի միջև, որոնք ցրված էին ամեն տեղ...

Առաջին կարգի վագոնում, որտեղ և գտնվում էր մեր «լուսաշյա շիկահերուհին», կեսը զբաղեցնում էին շքախմբի՝ Պետերբուրգից եկող պերճասիրտ սպաները, որոնք, ամենևին չքաշվելով հարևաններից, բարձրաձայն քննարկում էին աչքի ընկնելու բոլոր հնարավորությունները։

Դրանք այսպես կոչված «մոնշերներն» էին, մայրաքաղաքի տիտղոսավորված դատարկապորտների՝ բանակում ամենաչսիրված դասը, որոնց ժամանակ առ ժամանակ գործուղում էին մարտադաշտ, ուր նրանք իրենք պետք է փնտրեին սխրագործությունները ցուցաբերելու եղանակները։

Ահա նման «մոնշերներից» մեկը, այսինքն՝ իշխան Ունգերն-Վիտգենշտեյնը, և համարձակվեց ճանապարհին քարշ գալ խստաբարո շիկահերուհու հետևից։ Իշխանը երիտասարդ էր և նույնիսկ գեղեցիկ, այն հատուկ լկտի սենտիմենտալությամբ, որը հատկանշական էր ժամանակի գեղեցիկ տղամարդկանցից շատերի համար և որը, բացի ժառանգական հատկանիշներից, թվում էր, թե էլի շատ բան էր ընդօրինակել նիկոլայևյան վախտպարաղների խիստ ու առնական ձգվածությունից։ Ջյունափայլ կոլետը հագին, խթանների, սրի և ոսկեզօծ հագուստի շարժումից նուրբ զնգզնգոցներ հանելով՝ իշխան Ունգերն-Վիտգենշտեյնը քաղաքավարությամբ հարցրեց.

— Նե՛ցեք, մադամ, հանդգնությանս համա՝։ Սակայն հեռաքքի՞ է իմանալ հեռո՞ւ եք այդչոք գնում։

— Միայն մինչև Թիֆլիս։

— Օ, ինչ հիյնալի է։ Մենք նույնպես ճանապա՛հ ենք բ՛յնել մինչև Թիֆլիս։ Իհա՛պե, հետո... հետո կշա՛ունակենք։ Դեպի ճակատ, դեպի ճակատ... Մի զ՛կեք ձեյ սի՛ալի՛ությունից և թույլ տվեք ուղեկցել՝ ձեզ լե՛նե՛ը անցնելիս։ Թե չէ ասում են, այդ չե՛կեսնե՛ը... ավելի վատ են Փա՛իզի ապաշնե՛ից[1]։

— Մի՛ անհանգստացեք,— վախեցրեց նրան ուղեկցուհին,— ինձ դիմավորում է հայրս։ Իսկ նրա հետ ես ոչ մի չեչենից չեմ վախենում։

Վլադիկավկազը հարմարավետ, լավ ու մաքուր քաղաք էր։ Արևից փայլփլեցնելով իր սպիտակ քարերը՝ նա փռված էր խիտ այգիների մեջ, ափերի փլվածքները ողողող պղտորափրփուր Թերեքի աղմուկի տակ։ Այստեղից սկսվում էր հնադարյան ուղին։ Դարյալի կիրճով, լեռների միջով, հեքիաթային առասպելների միջով, որտեղ ճանապարհորդը չէր կարող խուսափել սարսափներից ու վտանգից...

Լեռներն արդեն մոտենում, սեղմում էին ուղևորներին՝ նրանց առջև բաց անելով ջրերից որոտացող հեղեղատների երախները։ Կանաչ բուսականությունը նահանջում էր՝ պարտվելով բիրտ քարից, և միայն փոշեպատ կոթուկներն էին ցայտեցնում սպիտակ հյութը՝ ճզմվելով անիվների տակ։

— Ձեզ չդիմավորեցի՞ն,— Ունգերն-Վիտգենշտեյնը ձին պահեց ճամփեզրին՝ թույլ տալով անցնելու իր ճանապարհային ուղեկցուհու կառքը։

— Երևի հայրս որոշել է դուրս չգալ կարանտինից այն կողմ։

Եվ ահա կարանտինը. մի քանի զինվորներ դուրս են վազում պահականոցից։ Երկու օսեթներ՝ չերքեզական կեղտոտ քղամիդներով, նստած էին փոշու մեջ՝ ճանապարհի կողքին, կկոցելով երազկոտ աչքերը և օրորվելով։ Այստեղ ուղևորներն անցնում էին վերջին ստուգումը, որից հետո Կովկասը նրանց համար դառնում էր մատչելի, որպես բոլոր զորականների, վաճառականների, բանաստեղծների և արկածախնդիրների մշտնջենական երանավայր։

Սպան կարդում է ուղեգիրը.

— Ձեր իրե՞ը, տիկին։

— Միայն ուղեսնդուկն է։

— Ի՞նչ ունեք մետաղյա առարկաներից։

— Միայն ականջօղեր։

— Կարող եք գնալ, տիկին...

Նազար Մինաևիչը իր դստերը սպասում էր կարանտինի մյուս կողմում՝ խոշոր, հաստատուն ձիու սանձից բռնած։ Տեսնելով դստերը, Վատինը հեծկլտաց և, բռունցքով սրբելով արցունքները, գնաց ընդառաջ։

— Հայրի՛կ։— Աղջիկը երկար ժամանակ փարվեց նրան, ետաուլի ծանր ձեռքը քնքշորեն շոյում էր նրա սպիտակ, կաթնագույն ծոծրակը...

— Դե-դե, Լիզավետա,— ասաց Վատինը,— դեռ ժամանակ կունենաս։

— Հայրի՛կ։ Սիրելի հայրի՛կ...

Վատինը աղջկան պոկեց իրենից, անվերջ համբուրելով

[1] Ապաշ — խուլիգան, գող, խուժան Ֆրանսիայում։

նրա արտասվաթաց երջանիկ դեմքը, աչքերը, այտերը, ճակատը, շրթունքները։ Այդ պճնված երիտասարդ տիկինը, որը համբուրվում էր կազակի համազգեստով մորուքավոր մուժիկի հետ, կողքից զվարճալի էր թվում։ Կարանտինում լսվեց պերճափայլ «մոնշերների» ծիծաղը։

— Դե, գրողը տանի դրանց,— ասաց Վատնինը ամոթխածորեն։— Գնա՛նք, Լիզավետա...

Եվ նրանք գնացին սիրալիր զրուցելով։ Երմոլովի քարից հետո նրանց վրա սկսեցին կախվել դինամիտային պայթյուններից ծակծկված բազմաթիվ «Փրկիր մեզ, տեր իմ», և յուրաքանչյուր այդպիսի սարսափի հետևում Վատնինը, որպես իսկական կովկասցի, քարերի միջից գինի ու դրամատուփ էր գտնում։

— Կատարեք պատգամը,— ասում էր նա՝ օդի խմելով, աղջկան գինի տալով խմելու և դրամներ գցելով ոչ ոքի կողմից չպահանջվող խնայատուփի մեջ։

Վատնինը իր դստերը պատմում էր Բայազետի պաշարման մասին։ Կանաչագույն մեծ մողեսները ճանապարհի մի կողմից մյուսն էին վազում։ Անցան Թամար թագուհու դղյակի ավերակների մոտով, սակայն երկուսն էլ մնացին միանգամայն անտարբեր։ Մոտակա աուլների կանայք զամբյուղները ձեռքներին ձիու թրիք էին հավաքում վառելիքի համար։ Նախնադարյան հինավուրց ջրաղացները չխկչխկացնում էին գետափի ժայռերի մեջ։

Երեկոյան նրանք եկան Կազբեգի գյուղը, բայց իջևանատանը նրանց մերժեցին գիշերօթևան տալ. սպասում էին շքախմբի սպաների գալուն, նրանց համար նույնիսկ հատուկ «թագավորական սենյակներ» էին պատրաստում։ Վատնինները դուրս եկան փողոց։ Հեռվից, լեռնաձորի ինչ-որ ցածրադիր տեղից, հնչեց զանգի զարկը, դա ծերունի վանականն էր ազդարարում բնակիչներին, որ ինքը, չնայած իր հարյուր վաթսուն տարիներին, այսօր էլ դեռ չի մահացել։

Վատնինն ասաց.

— Գնանք իմ ծանոթի մոտ։ Դա հեռու չէ այստեղից՝ Ստեփան-Ցմինդայում է, ձեռքդ պարզես՝ կհասնի... Մեծ մարդ է իմ բարեկամը, և դու կարող ես նրա հետ ֆրանսերեն խոսել։

Խրճիթների արանքում բարձրանում էր գրանիտե սանդուղքներով սյունազարդ մի տուն, որի բակում երեխաները խաղում էին ոչխարի երկար աղիներով։ Նրանք աղիները փաթաթում էին մեկը մյուսի վրա, գցում գետնին և կեղտոտվում ոչխարի թարմ արյունից։ Իշխան Կազբեգին սենյակներ առանձնացրեց հյուրերի հանգստի համար. այդ տարօրինակ մարդը ավելի շատ նման էր վայրենի մի հովվի, քան իշխանի և գրողի։ Ամբողջ գիշերը տանը լսվում էր նրա ոտնաձայնը. իշխան Կազբեգին շրջում էր սենյակներում՝ զրուցելով ինչ-որ մեկի հետ։

Վատնինը շշուկով պատմեց.

— Մեր բարեկամը մեծ մարդ է։ Միայն նա չի սիրում...

— Ո՞ւմ չի սիրում,— հարցրեց դուստրը։

— Մեր թագավորին,— պատասխանեց Վատնինը։— Տեսնո՞ւմ ես ինչպես է ման գալիս։ Նա մտածում է՝ ինչպես դանակ սրել։ Իսկ առայժմ թագավորին կտրատում է իր խոսքերով։ Դե, ես ինքս չեմ կարդացել, կրթված պարոնայք են ինձ ասել...

Ամայի, մութ լուսամուտներից լսվում էր ծիծաղ՝ իշխան Կազբեգի հրճվալից, գրեթե աննորմալ ծիծաղը. ոգեշնչումը կամ սրտի ցավը գիշերները այցելում էին տանտիրոջը, և Վատնինը, լայն բացելով ձեռքը, խաչակնքեց։

— Աստված օգնի քեզ,— ասաց նա։

Հաջորդ օրը իշխանը դուրս եկավ առավոտյան սեղանի մոտ՝ սիրալիր և ուրախ։ Անքուն գիշերը բոլորովին չէր անդրադարձել նրա դեմքի վրա, որը թարմ էր ու հանգիստ։ Եսաուլի հետ նա խոսում էր թաթարերեն, Ելիզավետայի հետ՝ ֆրանսերեն։ Եթե չլիներ պատառոտված բեշմեթը՝ հրացանի փամփուշտներով լցված փամփշտակալով, եթե չլինեին բեշմեթի տակից դուրս եկած այդ նիհար, կեղտոտ ոտքերը, եթե չլինեին միսը ճարպկորեն պատառ-պատառ անող այդ կպչուն մատները՝ եղուգների տակի սևությամբ, իշխան Կազբեգին լիովին նրբակիրթ մարդու տեղ կդրվեր, այնքան խելացի, պատկերավոր ու հյութեղ էր նրա լեզուն, նրա ծիծաղելի և նուրբ խոսելը։

— Pas mal. Եթե այդ ժայռի վրա, դեկորատիվ լուսնի ներքո, նստեցնեն նաև Սալվիոնին, ինչպես Մարինյան թատ-

բոնում... Օ՜, սուրբ Գեորգի, որքան հիմար են այդ մարդիկ։

Այդպես նա ծաղրում էր «մոնշերներին», որոնք կանգ էին առել նրա բնակավայրում և նրա հայրենի լեռների բնանկարը գնահատել էին լոկ բալետային օթյակի մշտական հաճախորդների տեսանկյունից։ Հրաժեշտի պահին Վատնինը իր դաշույնը փոխանակեց իշխանի դաշույնի հետ և դստեր հետ շարունակեց իր ճանապարհը։

Գյուղը դեռ չէր անհետացել տեսադաշտից, երբ Ելիզավետան, ինչ-որ բանի մասին լարված մտածելով, հանկարծ հարցրեց հորը.

— Հայրիկ, ի՞նչ է, շտաբս-կապիտան Նեկրասովը քեզ ծանոթ չէ՞։

Եսաուլը զարմացավ.

— Միասին ենք կռվել...

— Իսկ ես չե՞մ կարող տեսնվել նրա հետ։ Նա ինձ պետք է։

Վատնինը ձին կանգնեցրեց.

— Լռիր, աղջիկս. նա ձերբակալված է։ Պետք չէ, որ դու հետաքրքրվես նրանով, քանի որ նրան քաղաքականության համար են վերցրել... Իսկ դու որտեղի՞ց գիտես նրա մասին։

Աղջիկը չպատասխանեց և, հարվածելով ձիուն, սլացավ առաջ։

«Նեկրասով Յուրի Տիմոֆեյի որդի, ծագումով հոգևորականներից, երեսուներկու տարեկան, հունա-ռուսական ուղղափառական դավանանքի, վերջին սուրբ հաղորդություն եմ առել չորս տարի առաջ, դատի և քրեական հետաքննության տակ չեմ եղել, անշարժ կայք չունեմ, դրամական կապիտալներ նույնպես...»։

Այսօր բանտ ուղարկված հարցակետերը՝ թղթերի այդ ամբողջ պատկառելի կապոցը, Նեկրասովը պետք է լրացներ մինչև երեկո, թղթեր, որոնց ձախ կողմում գրված էին հարցեր, ինչպես օրինակ՝ «Շարադրեք կոմունիստների և սոցիալիստների գլխավոր սիստեմները իրենց համառոտ, բայց սուր հատկանիշներով»։ Կամ թե այսպիսի հարց՝ «Ինչո՞ւ մարդը, ձեր հասկացությամբ, պետք է ձգտի կազմելու ոչ թե առանձին հասարակություններ, այլ մի ամբողջություն,

որը միավորեր մարդկային ամբողջ ցեղը։ Տվեք բացատրություն...»։

Ժանդարմներին լուսավորելը ուրախ աշխատանք չէ, ընդ որում գրոտել թղթերի մի ամբողջ կույտ՝ ուղղակի հոգնեցուցիչ է, և դրա համար էլ Նեկրասովը նույնիսկ ուրախացավ, երբ-զրնգացին դռների փականները և նրա մոտ բանտախուց մտավ մաքուր, աշխույժ և անուշաբույրով օծված Կարաբանովը։

— Մի՛ վախեցեք,— ասաց Անդրեյը,— սա բարեկամական այց է և ոչ պաշտոնական։

— Շնորհակալություն, բարեկամս,— պատասխանեց Նեկրասովը,— բայց դուք ինչպե՞ս եք կարողացել ինձ հետ տեսակցելու թույլտվություն ստանալ։

Այդ պահին նա նկատեց պորուչիկի ուսից կախված ոսկյա ակսելբանտը։ Համազգեստի մերակի միջով անցկացված ծոպավոր քուղի ծայրը կախվել էր պշրանքով։

— Ա՜-ա՜-ա՜,— գլխի ընկավ Յուրի Տիմոֆեևիչը,— ես այժմ արդեն կարծես հասկացա, թե ինչպես եք ամենազոր դարձել։ Ինչ կա որ, շնորհավորում եմ ձեր հաջողությունները։ Փոխարքայի մո՞տ եք։

Կարաբանովը մատ առ մատ քաշեց հանեց գունաթափ կաշվե ձեռնոցները, դրեց գլխարկի մեջ, իսկ գլխարկը դցեց սեղանի վրա։

— Ո՛չ, սիրելի Նեկրասով,— ծիծաղեց նա՝ ուշադիր նայելով մռայլ պատերին։— Այս անգամ դուք այնքան էլ ճիշտ չկռահեցիք... Այս բանը,— նա քաշքշեց ակսելբանտը,— ինձ բարձրացրել է միայն ժանդարմների աչքերում, բայց ես դեռ իրավունք չունեմ այն կրելու։ Սակայն այս լծասարքը կարելի է գնել ուղածդ խանութում, ինչը և ես արել եմ, որ թափանցեմ ձեզ մոտ։ Ա՜յ, ա՜յ, շտաբս-կապիտան, երեք ռուբլին հետո կտաք ինձ։ Ես համաձայն չեմ վատնել փողերս...

— Դուք հրաշալի տեսք ունեք,— ժպտաց Նեկրասովը՝ ուրախանալով մարտական ընկերոջ համար։— Եվ դուք զվարթ եք... Նստեցե՛ք, խնդրում եմ։

Կարաբանովը նստեց և սկսեց այսպես.

— Ես հակված չեմ ձանձրացնել տաղտկալի հարցերով

այն մասին, թե ինչի համար են ձեզ գիշերային շարագործի նման բանտ նետել և...

— Պետք չէ,— ավելացրեց Նեկրասովը։

— Այո՛։ Եվ այդ պատճառով ես ուզում եմ հարցնել միայն մի բան՝ դա ճշմարիտ է, որ դուք հեղափոխական եք, ինչպես ասում են ձեր մասին։

— Խոստովանում եմ,— պատասխանեց Յուրի Տիմոֆեևիչը։— Ես հավատում եմ, և ոչ ոք փայտով էլ չի կարող հանել հավատն իմ միջից, որ Ռուսաստանին հարկավոր է մի լավ հեղափոխական ցնցում...

Կարաբանովը անորոշ «հըմ» արեց։

— Կասկածո՞ւմ եք։

— Ո՛չ, դրանում ես ձեզ հետ համաձայն եմ։ Ցնցում իսկապես պետք է... Սակայն դա կարող եմ հասկանալ ես, կհասկանա յունկեր Եվդոկիմովը... կարող է, Վատինը։ Բայց դուք հեղափոխության մասին ասեք մուժիկին, և նա ձեր ձեռքերը կոլորի, ինքն էլ ձեզ կտանի գավառամասի պետի մոտ։ Ո՞ւմ համար։ Հանուն այդպիսի անասունի՞ զոհաբերես քեզ... Ներեցեք, այդ դեպքում ինձ համար այսպես էլ լավ է։

Նեկրասովը կանգ առավ նրա առջև, ափերը թաքցնելով թևքերի մեջ, ասես մրսեց.

— Կարաբանով, դուք ճանաչո՞ւմ եք գնդապետ Վասիլև-Թեշենցևին։

— Լսել եմ։ Ժանդարմական օկրուգի պետն է։

— Այո, հենց այդպես է... Ահա նա մի անգամ ասաց ինձ ճիշտ նույն բառերը, ինչ որ դուք հիմա։

Կարաբանովը կծկվեց, բայց ծիծաղեց անհոգ.

— Հավատացե՛ք, ես նրա հետ չեմ պայմանավորվել։ Դուք ինձ ասում եք ձեր համոզմունքների մասին։ Իսկ ես իմ հերթին նույնպես անկեղծորեն հայտնեցի ձեզ իմ համոզմունքները... Եկեք չբարկանանք։

Յուրի Տիմոֆեևիչը քաշեց նրա ակսելբանտից.

— Սիրելի պորուչիկ, չէ որ ես չեմ բարկանում։ Ընդհակառակը, ես ափսոսում եմ, որ խոսակցությունը ծագեց այստեղ, այս պատերի մեջ, իսկ առաջ մեզ չհաջողվեց խոսել... Իսկ ինձ թվում է, որ հետաքրքիր կլիներ։

Կարաբանովը գրպանից դուրս քաշեց դրամապանակը, միջից փող հանեց։

— Ես հիմա...— Մի բոպեից վերադարձավ։— Այդ շնագայլին ես քսանհինգ ռուբլիանոց խոթեցի, որպեսզի նա չկանգնի զոնների մոտ և ականջ չդնի... Եկե՛ք, Նեկրասով, այժմ լինենք անկեղծ։

— Ես առանց այն էլ անկեղծ եմ ձեզ հետ, պորուչիկ։

— Դե, ուրեմն հիանալի է...

Կարաբանովը պատմեց Վատինի հետ հանդիպման մասին, որից և իմացել է ձերբակալման լուրը։ Խոստովանեց, որ ինքը ցանկանում է օգնել նրան։

— Մի Բայազետից ընկնել մյուսը,— ավարտեց նա,— սարսափելի է։ Դարձյալ կազեմատ, միայն թե ամեն ինչ կարող է վերջանալ շատ ավելի ողբերգական ձևով...

— Կոմիկական ձևով,— ուղղեց նրան Նեկրասովը։

— Դուք ի՞նչ եք հասկանում կոմեդիայի տակ։

— Դատը,— պատասխանեց շտաբս-կապիտանը։

— Ձեզ պիտի դատեն այստե՞ղ։

— Ո՛չ, կտանեն Պետերբուրգ։

— Կարելի է լավ փաստաբան վարձել։

— Դուք միամիտ մարդ եք,— նորից ծիծաղեց Նեկրասովը։— Թող պաշտպանի ինձ թեկուզ Զարուդնին կամ Արսենևը, ի՞նչ տարբերություն։ Չէ՞ որ դատարանի որոշումը նախապես պատրաստված է...

— Եվ դուք ի՞նչ եք սպասում։

Նեկրասովը եղունգով քերծեց իր վիզը։

— Ահա այսպես։ Կկախեն։ Եվ ապա դահիճը, պարանի կտորները իր համար մեծ շահով կվաճառի սնոտիապաշտ տիրուհիներին։

Կարաբանովը ցնցվեց.

— Դուք ինչպե՞ս կարող եք այդպես կատակել։

— Ուզածդ կատակերգության մեջ միշտ էլ ինչ-որ ծիծաղելի բան կա,— պատասխանեց Նեկրասովը։— Նույնիսկ ամենավատ կատակերգության մեջ, Կարաբանով։

Անդրեյը գլխարկի միջից հանեց ձեռնոցները, մտախոհությամբ պինդ ոլորեց և շպպացրեց սեղանի եզրին.

— Յուրի Տիմոֆեևիչ, ես կուզենայի օգնել ձեզ։ Ինչպե՞ս

դա անել, չգիտեմ։ Սակայն կարող եմ ճշգրիտ պարզել, թե ե՞րբ են ձեզ տանելու լեռնանցքով։ Կրկնում եմ, անձամբ ինքս ձեզ օգնել չեմ կարող։ Բայց ահա լսեցե՛ք...

Նեկրասովը ձեռքերը դրեց պորուչիկի ուսերին, հայացքով իր վրա հրավիրեց նրա պատասխան հայացքը։

— Պետք չէ, Կարաբանով,— ասաց նա։

— Ի՞նչը պետք չէ։

— Դե այդ բոլորը։

— Իսկ ինչո՞ւ,— նեղացավ Անդրեյը։— Դուք ինձ չե՞ք վստահում։

— Վստահում եմ։ Բայց այդպիսի վտանգավոր ձեռնարկման մեջ ձեզանից օգնություն ստանալ չեմ ցանկանում...

— Հատկապես ինձանի՞ց։

Նեկրասովը մի քիչ սպասեց։ Գլխով արեց.

— Այո՛։ Ձեզանից...

— Տարօրինակ է,— խորհրդածեց Անդրեյը։— Նույնիսկ շատ...

— Ես կբացատրեմ։

— Բարի եղեք։

— Գիտեք ինչ, Կարաբանով,— սկսեց Նեկրասովը՝ լարված ճոճանակի նման մի պատից մյուս պատը գնալ-գալով պորուչիկի առջև։— Գիտեք ինչ, դուք ինձ օգնության եք եկել առանց հարկ եղածի չափ մտածելու։ Գուցե և իսկապես ձեր աչքում ես արժանի եմ հարգանքի։ Գուցե դուք իմ մեջ այնպիսի հատկություններ եք գտել, որոնց համար սիրում եք ինձ...

— Այդ բոլորն այդպես է,— հաստատեց Կարաբանովը։

— Բայց դուք մոռանում եք մի բան, պորուչիկ,— շարունակեց շտաբս-կապիտանը։— Դուք մոռանում եք, որ ես ձեր թշնամին եմ։

— Դո՞ւք։

— Այո՛։ Հենց ես... Հիմա դուք մի քիչ դժգոհ եք ձեր քախտից, եթե չասենք ավելի ճիշտ՝ կարիերայից... Այդպես չէ՞։

Կարաբանովը լռեց։

— Դե մի՛ լռեք։ Քաջություն ունեցեք պատասխանելու՝ այդպե՞ս է։

— Ընդունենք, որ դժգոհ եմ,— ոչ անմիջապես համաձայնեց Անդրեյը։

— Ահա այդ պատճառով էլ,— ավարտեց Նեկրասովը,— դուք ինձ հետ խոսում եք «ցնցման» մասին։ Սակայն հենց որ Ռուսաստանում հեղափոխություն լինի, այդպիսիները, ինչպիսին դուք եք, Կարաբանո՛վ, կճզմեն հեղափոխությունը... Կարող եք բարկանալ. ես արդեն տեսնում եմ ձեզ՝ որպես ծեծող, կոտորող, սպանող և կախաղան բարձրացնող։ Ո՛-ո՛-ո՛չ, Կարաբանո՛վ, այն ժամանակ դուք արդեն ինձ մոտ բանտախուց չեք գա, որպեսզի առաջարկեք ձեր օգնությունը։ Դուք ինքներդ պարանը կգցեք իմ վիզը։

Կարաբանովը, զայրույթից շնչահեղձ լինելով, վեր կացավ։

— Դո՛ւք, սիրելի բանտարկյալ, բավականաչափ անկեղծ եք, որի համար ես շնորհակալ եմ ձեզանից...

Նեկրասովը ձեռքը մեկնեց նրան, և Անդրեյը սեղմեց այն։

— Պահպանեցե՛ք ձեր գլուխը, Կարաբանով,— ասաց նրան Յուրի Տիմոֆեևիչը,— իսկ ես կմտահոգվեմ իմ գլխի մասին...

Տարօրինակ է, որ այդ խոսակցությունից հետո, հայտնվելով նորից քաղաքի խայտաբղետ ու աղմկոտ փողոցներում, պորուչիկը իր մեջ դառնություն չնկատեց։ Նա իջավ կայարանի դուքանի նկուղը։ Իր առջև լայն բացելով փալասե վարագույրները՝ մտավ մի առանձին սենյակ, որտեղ նրան սպասում էր Եվդոկիմովը։

— Այդպես արա՞գ,— հարցրեց յունկերը։

— Ինչպես տեսնում եք։

— Ի՞նչ ենք խմելու։

— Ինչ ուզում ես, միայն ոչ ջուր...

Նրանք նստեցին բազմոցի վրա։ Պաշարումից հետո Եվդոկիմովը անճանաչելիորեն փոխվել էր։ Արդեն ոչ թե համազգեստ, այլ կեղտոտ քրքրված չերքեզկա էր կախված նրա ուսերից։ Ճտքակոշիկների փոխարեն տակից սեպեր խփած մուճակներ էին։ Փամփշտակալները լիքը լցված էին «սնայդերի» փամփուշտներով։ Գոտուց կախված էր թանկարժեք

գերազանց պողպատից պատրաստված մի դաշույն, որից չէր խորշի և ուղածդ լեռնային ավատատերը։

Բանն այն է, որ յունկերը կամավորների ջոկատ էր գրվել, որտեղ ծաղկում էին սեփական սովորությունները, սեփական օրենքները։ Այդ ջոկատը գնում էին միայն հոժարակամորեն, սկսած աստիճանազրկված սպաներից և վերջացրած անտուն ցնցոտիավորներով, որոնց բանտ էր սպառնում։ Կամավորները զինվորական կոչումներ չէին ճանաչում։ Դրամը, խաչերը և կաթսան՝ ամեն ինչ ընդհանուր էր։

— Եվ միայն մի պահանջ,— պատմում էր յունկերը,— որքան հնարավոր է շատ վայրենանալ, որպեսզի ոչ մի բանով չտարբերվել բնիկներից։ Ուղարկում են մեզ այսպես. եթե տասից մեկը վերադառնա, ուրեմն լավ է։ Ես արդեն երկու անգամ ողջ եմ պրծել, չգիտեմ ինչպե՞ս կլինի երրորդ անգամ... Դիվոտել եմ՝ դա ճիշտ է, նույնիսկ լրագիր չեմ կարդում,— խոստովանեց նա առանց ամաչելու։

Նրանց համար գինի և ուտելիք բերեցին։ Երկար ժամանակ անխոս ուտում ու խմում էին։ Վերջապես յունկերն սկսեց շշնջալ.

— Այնտեղ մի ծուռումուռ զառիվայր կա։ Նեղ է... ժանդարմներին կարելի է կտրել ծածկակառքից։ Այն հետ շրջել պետք չէ։ Ուղղակի զառիվայրից դեպի վեր է ձգվում մի արահետ։ Աչքի համար բոլորովին աննկատելի։ Եթե Նեկրասովը նույնիսկ կապանքներով լինի, ապա...

Կարաբանովը կտրուկ ընդհատեց նրան.

— Պետք չէ։ Ոչինչ արդեն պետք չէ... Նեկրասովը հրաժարվեց մեր օգնությունից։ Նա խելքը թռցրել է... Այլևս ոչ մի խոսք չենք ասի նրա մասին։ Մի գավաթ լցրու, պատանի՛։

Յունկերի ձեռքը, ցնցվելով, գինի էր լցնում հաստափոր սափորից։

— Ափսո՞ս,— ասաց նա,— շա՞տ ափսոս... Դուք ուղղակի չեք կարողացել համոզել նրան։ Իսկ Ռուսաստանում այդ բանն անել շատ ավելի դժվար կլինի...

Երեկոյան Կարաբանովը կիսահարբած վերադարձավ Բորժոմ և այստեղ հանդիպեց այն մարդուն, որի մասին երբեք

չէր մոռանում և որին համարում էր իր դժբախտությունների համարյա գլխավոր պատճառը...

Իշխան Ունգերն-Վիտգենշտեյնը առաջինը ուշքի եկավ անակնկալից և առաջինը հաշտության քայլ արեց.

— Ա՜-ա՜-ա՜, ահա և դուք, Կայաբանով,— ասաց նա։— Շատ ուրախ եմ ձեզ տեսնել... Այստեղ ասում են, որ դուք հեյոս եք։ Գուցե դուք և ինձ սովորեցնեք, թե ինչպե՞ս ավելի այագ փասիանից շեյթան դայնալ։

Կարաբանովը պատասխանեց բարևին.

— Դա շատ հասարակ բան է, իշխան։ Բայց դրա համար պետք է նախ գվարդիայից կայազոր տեղափոխվել։

6

Փոխարքայի ընդունարանը ողողված էր գազի լապտերների լույսով, այրվող գազը ֆշշացնում ու երբեմն-երբեմն թեթևակի ճարճատում էր։ Միխայիլ Նիկոլաևիչը բռնեց Կարաբանովի արմունկից և թեթևակի հրեց դեպի ելքը.

— Դուրս գանք պարտեզ և մի քիչ խոսենք...

Արդեն բավական ժամանակ էր անցել, ինչ պորուչիկը հաստատվել էր մեծ իշխանի պալատում։ Սակայն մինչև այժմ նա հետաքրքրությամբ, գրեթե զննելով տնտղում էր փոխարքային։ Անդրեյը շատ էր լսել, որ Միխայիլ Նիկոլաևիչը չի սիրում Պետերբուրգը, հեռու է թագավորական ընտանիքից, չարությամբ ծաղրում է պալատական էթիկետն ու բարքերը։ Երեկ, նոր ժամանած «մոնշերների» մասին խոսակցության ժամանակ ևս, նրանց հասցեին նա բաց թողեց մի այնպիսի բառ, որ նույնիսկ Կարաբանովը ստիպված եղավ կարմրել։

Այդ ամենն արվում էր սրտանց, զինվորի շիտակությամբ. շատ բան էր անկեղծորեն գովաբանվում և դատապարտվում փոխարքայի կողմից։ Եվ միայն մի բան չէր հասկանում Կարաբանովը՝ իր վիճակը փոխարքայի մոտ։ Սակայն պետերբուրգյան «մոնշերների» հայտնվելը պալատում հավանաբար պետք է արագացներ հանգույցի լուծումը, և Կարաբանովը շտապվեց։

Նրանք իջան պարտեզ։ Փոխարքան գլխարկով իրեն հով-

հարեց։ Գրպանից շոկոլադի հատիկներով կեղտոտում էր շուրջը՝ կերակրելով պալատի սիրամարգերին, որոնք զզվելիորեն ճչում էին ագահությունից։ Քուռի ափին ճտքակոշիկներով մտավ շուրն ու մի քիչ կանգնեց. ինչո՞ւ։ Կարաբանովը չհասկացավ, բայց որոշեց, որ երևի հենց այնպես, վիճակի անսովորությունից։

— Ջուր չեն անցկացնում,— ասաց փոխարքան՝ դուրս գալով ափ։— Թե չէ այդ սրիկա կոշկակարները շրփ-շրփ են անում ու թողնում...

Խոսակցությունը, այն խոսակցությունը, որին այնպես անհամբեր սպասում էր Կարաբանովը, սկսվեց հիշողություններից։

— Քո հանգուցյալ հայրը,— ասաց փոխարքան,— հին կոփվածքի մարդ էր։ Ես երիտասարդ էի, մի անգամ չափն անցկացրի։ Կանանց ներկայությամբ, իհարկե։ «Ասացեք, գեներալ, ձեր քիթն ինչի՞ց է այդքան կարմիր»,— ասում եմ ես։— «Նրանից է, ձերդ բարձրություն,— պատասխանում է նա,— որ ստիպված ես լինում ծերության հասակում ամեն մի լակոտից պլեթրակ ստանալ քթիդ...»։

— Մի՞թե, ձերդ բարձրություն,— սարսափով ասաց Կարաբանովը, իբր չհամարձակվելով հավատալ դրան, թեև այդ անեկդոտը նրան վաղուց հայտնի էր և շշուկով փոխանցվում էր նրանց ընտանիքում, իհարկե միայն ֆրանսերեն, «լակոտ» բառը փոխարինելով «կախականջ» բառով, որն ընդհանրապես նույն բանն է։

Կարաբանովը կողքից նայեց մեծ իշխանի ականջին. այն մեծ էր, խոռոչի ցեղական կտրվածքը հստակ էր, ինչպես փորագրությունը փայտի վրա, և բոլորովին էլ կախականջ չթվաց։

— Մերուկը պարզ մարդ էր,— ասաց փոխարքան։— Իսկ դու խորամանկում ես, Էդբայր, խորամանկում։

— Ձերդ բարձրություն։

— Լռի՛ր։ Ես ինքս գիտեմ՝ ամաչում ես խնդրել։ Եվ մի՛ խնդրիր։ Դատիր ինքդ, սիրելիս, կարո՞ղ եմ, արդյոք, քեզ նշանակել ինձ մոտ, եթե քո հետքերը մնացել են դեռ Պետերբուրգում...

Կարաբանովը ձեռքը սեղմեց այն տեղին, որտեղ անատոմիայի բոլոր կանոններով պետք է գտնվեր սիրտը.

— Ձերդ բարձրություն...

— Լռի՛ր։ Ուղղակի ձեռնտու է ինձ մոտ ունենալ քե՛զ և ոչ թե այն բեթեամիտներից որևէ մեկին, որ ուղարկել են մնալու այստեղ, իմ նախասենյակում։ Սակայն... Եվ դու մի՛ համառիր, Կարաբանո՛վ,— հանկարծ ձայնով սաստեց նրան փոխարքան։— Բայազետից հետո մի անգամ արգելագծի մոտ կանգնելը դժվար չէ։ Հասկանում եմ՝ հիմարություն է։ Ինքս եմ դատապարտում։ Բայց ի՞նչ կարող ես անել, աղավնյակս... Ջինվորական պատիվը ճանաչվում է բոլորի կողմից, բայց նրա էությունը անըմբռնելի է։ Ոչ ոք չգիտի, թե դա ինչ բան է։ Սակայն նրա համար վարձահատույց են լինում։

Կարաբանովը համաչափ քայլում էր ծառուղիներով, փոխարքայի կողքին՝ ուս ուսի և խորհում դարձյալ նույն հիմար հարցի շուրջը՝ լինե՞լ, թե չլինել։ Եվ իսկապես, ի՞նչ է ուզում նա։ Ի՞նչ է պետք նրան այդ պարտեզում։

Մյուս կողմից Անդրեյը հասկանում էր, որ փոխարքան նրան վատ չէր կամենում։ Բայց համաձայնել մենամարտի, որ հետաձգված էր այդքան ժամանակ, Կարաբանովն արդեն անկարող էր։ Բայազետը նախկին փխրուն շինվածքներից շատ բան էր խորտակել նրա հոգում։

— Իմ պատիվը,— դանդաղորեն ասաց Անդրեյը,— եթե նույնիսկ այն շոշափվել է Սանկտ-Պետերբուրգում, ապա, իմ կարծիքով, ես հավելյալով վերականգնել եմ Բայազետում։

— Դա Բայազետն էր,— գրեթե անփութորեն ձեռքը թափահարեց փոխարքան։

— Սակայն, ձերդ բարձրություն, ես չեմ ցանկանում մենամարտել իշխանի հետ։ Եվ այս անգամ արդեն ուրիշ պատճառով։ Այժմ բավական է, որ հայտնվեմ արգելագծի մոտ, և կսպանեմ նրան։

— Հիմարություն,— առարկեց Միխայիլ Նիկոլաևիչը։— Կարելի է ամեն ինչ վերջացնել ալլոկացիայով[1] կամ էլ

[1] Ալլոկացիա — հաշտեցում։

ատրճանակները պարպել օդի մեջ... Ուրիշ ոչինչ չեմ կարող խորհուրդ տալ քեզ։ Մնաս բարով։

Կովկասի փոխարքան նորին բարձրություն և մեծ իշխան, ռուսական բանակի գեներալ-ֆելդցեյխմեյստերը ոչինչ ավելին չէր կարող խորհուրդ տալ Կարաբանովին և շրջվեց դեպի պալատը, զգացնել տալով, որ պարտադիր չէ ուղեկցել իրեն։

Եվ այն ժամանակ, նայելով նրա կուզիկ մեջքին, պորուչիկ Կարաբանովը ակամայից թեթևացած շունչ քաշեց՝ թեթևվացած, որովհետև իր վրա կախված հարցը այլևս չի տանջի իրեն...

«Շուտ՝ նրա մոտ։ Նա խելացի, սիրալիր կին է, նրա ձեռքերն այնքան հաճելի են և ձայնն այնքան մաքուր... Հարկավոր է շուտ պատմել նրան, որ այլևս ոչ մի սարսափ չկա...»։

Իմանալով համազգեստը դեն նետելու վերաբերյալ Կարաբանովի որոշման մասին՝ Դոլլին նորից թափ տվեց իրենց տոհմական ծառը, և մոսկովյան մորաքույրները օգնության եկան։ Մի հանդիպման ժամանակ Դոլլին Անդրեյին մեկնեց թափուր սինեկուրների[1] մի կարճ ցուցակ։

— Նայեցեք այս սևագրությանը,— ասաց նա։

Առաջին առաջարկությունը՝ Կոպենհագենում ռուսական դիվանագիտական ներկայացուցչության երկրորդ քարտուղարի տեղն էր, որը խոստանում էր ժամանակի ընթացքում, գիտելիքների որոշ կատարելագործման դեպքում, արագ առաջխաղացում՝ ծառայական սանդուղքներով։

— Հազիվ թե սա հնարավոր լինի, սիրելի Դոլլի,— մեկնաբանում էր Կարաբանովը։— Ներկայացուցչություններում ծառայելու համար հարկավոր են լավ և զուսպ բնավորության տեր մարդիկ։ Իսկ ես չեմ կարող պարծենալ այդպիսի արժանիքներով և ընդունակ եմ ոչ այնքան բարձրանալու ծառայական սանդուղքներով, որքան ցած գլորվելու՝ ցավոտ հարվածներ ստանալով...

Երկրորդ առաջարկությունը՝ բարոն դե Մոլվոյին պատկանող շաքարի գործարաններում կառավարչի տեղն էր, որն

[1] Սինեկուրա — լավ վարձատրվող թեթև պաշտոն։

այնքան բացահայտ շահ էր բերելու, որ կարելի էր մեկ-երկու տարի հետո և սեփական արտադրություն սկսել։

— Սա կարող էր և հարմար լինել,— մտահոգվեց Կարաբանովը,— սակայն բարոն դե Մոլվոն ինձ հրապուրում է եկամուտներով, նախապես իմանալով, որ ես պիտի գողանամ։ Իսկ եթե չգողանամ, ապա, միևնույն է, նա չի հավատա, և այդ պատճառով թողնենք այդ քաղցր տեղը...

Երրորդ առաջարկությունը՝ Մոսկվայում, Պլյուշչիխայում թաղամասային հսկիչի տեղն էր, որը հնարավորություն էր տալիս հասարակության մեջ օգտվելու որոշ դիրքից։

Կարաբանովը անկեղծորեն քա՜հ-քա՜հ ծիծաղեց.

— Հա՜-հա՜-հա՜... Դոլլի, արդյոք դուք չե՞ք մտածում, որ ես գոգոլյան քաղաքապետի նման պիտի վաճառականներից շաքարի գլուխներ և տաշեղներով լցված զամբյուղների մեջ ճղճղացող խոճկորներ ընդունեմ։

Իշխանուհի Դոլլին կծեց շրթունքը.

— Ուրեմն ի՞նչ եք ուզում։

— Ա՛յ, հենց ես էլ կուզենայի իմանալ, թե ի՞նչ եմ ուզում...

Խոսակցությունը կախվեց օդում, և այդ օրը Կարաբանովը ներգրավվեց իրադարձությունների հորձանուտի մեջ, որոնք նրա համար ճակատագրական եղան։ Ֆլիգել-ադյուտանտ և Պաժերի կորպուսի գծով Կարաբանովի ուսումնակից Միշկա Ուվարովը Անդրեյին համոզեց գնալ քեֆ անելու մի ինչ-որ տեղ, ջհանդամի ծայրը՝ Տիմոտի-Սուբանից այն կողմ։

— Իսկ իշխանիկը կլինի՞,— հարցրեց Կարաբանովը։

— Է՛հ, թքիր դու իշխանիկի վրա... ուղղակի կհարբենք խոզի պես, մեզ ուրիշ ոչինչ պետք չէ։ Կգա՞ս։

Գնացին...

Ունգերն-Վիտգենշտեյնը նստած էր Կարաբանովի հետ մի կառքի մեջ՝ ծնկների արանքում պահելով շամպայնների արկղը։ Փոշու քուլաների մեջ կորած՝ հետևից սլանում էին չորս սայլակառքեր՝ աղջիկները վրան, որոնց վերցրել էին ժամանակավոր օգտագործման համար, մինչև առավոտ։ Միշկա Ուվարովը հիմարություններ էր անում՝ զորակոչիկ ձևանալով.

Մնաք բարով, աղջիկներ, մնաք բարով, կկտիք,
Մեկնում եմ ես ձեր մոտից
Այն նույն, բազմիցս նզովյալ,
Կործանարար Կապկազ.
Այն նույն հեռավոր Կապկազում
Կկտրեն գլուխն իմ,
Է՜խ, այ թե կկտրեն գլուխն իմ...

Խմում էին ինչ-որ լեռնային պանդոկում, որը նախկինում լայն ու ընդարձակ գոմ էր եղել։ Կարաբանովն առաջվա պես գինարբուքի մեջ ընկղմվեց՝ ինքնամոռաց ու անհոգ։ Նա շուտ հարբեց, գինին նրան ծալեց երկու տակ դեռ սեղանի մոտ։ Հիշողության մեջ լավ պահեց միայն, թե ինչպես Միշկա Ուվարովը գոռում էր մեկին.

— Երգիչներին բերե՛ք այստեղ։

Ներս մտան կազակներ։ Հաղթանդամ, մռայլ։ Մազերը վերակացուների պես կլորաձև խուզած։ Պետական շիլայով լիքը լցված նրանց որովայնները դուրս էին ցցվել գոտու տակից։ Նրանք միանգամայն լայն բացեցին իրենց մազոտ երախները և սկսեցին համերաշխ երգել.

Այ թե եղել է հա՜, այ թե թողել է հա՜
Սիրելի իր ընկերոջը՝ իրեն համբուրել,
Իսկ հիմա այն չէ, և արդեն անցել է նրա
Լեյբ-գվարդիական զունդը
Մեր փողոցով...

Աղջիկները ճվճվում էին լկտիախոսությունից, բայց կազակներն իրենց գործը լավ գիտեին, երգը մինչև վերջ երգեցին և, բոլորը միաժամանակ շրջվելով, համերաշխորեն թփթփացնելով ճտքակոշիկներով, մարշով ուղղվեցին դեպի զորանոցները։ Նրանց ուռուցիկ կրծքերի վրա պսպղում էին «ալելույի» համար ստացած մեդալները։ Այդպիսի կազակներ պորուչիկ Կարաբանովը Բայազետում չէր տեսել։

Մի ակնթարթ նրա սիրտը մի քիչ խառնեց։ Բայց Միշկա Ուվարովը, ստորը, հենց այդ պահին նրան ինչ-որ բան լցրեց, և Կարաբանովը, ասես գորշակապույտ ծխի մեջ, տեսավ դեպի վեր թռչող կանացիական ոտքեր, լսեց կնոջ երգի ձայն.

Իսկ ես սիրում եմ զինվորականներին, զինվորականներին,
Զինվորականնե՛ր-խիզախների՜ն...

Վերջին բանը, որ այդ գինարբուքից մնաց նրա հիշողության մեջ, այն քնքշաբարո և պոչավոր սատանան էր, որին նա տվեց իր բոլոր փողերը, և հետո քուն մտավ ինչ-որ վիրավորանքից թթված և լաց լինող այդ սատանայի տաք ուսի վրա...

Առավոտյան Կարաբանովը արթնացավ և տեսավ, որ պառկած է մոտ քառասուն տարեկան, շիկակարմիր և գռեհիկ մի սատանայի կողքին։ Սատանան իսկապես պոչ ուներ, որ կցակարված էր շանտանային երգչուհու արծաթագույն ռեյտուզի հետևի մասին։

Անդրեյը, վատ ըմբռնելով եղելությունը, նայեց շուրջը, սակայն չկարողացավ հասկանալ՝ որտե՞ղ է ինքը, և բռունցքով կոպտորեն հրեց սատանայի թմբլիկ կողը։

— Հե՜յ,— ասաց նա,— ի՞նչ է անունդ... Արթնացի՛ր։

Կինը բաց արեց կպած աչքերը, պղտոր հայացքով նայեց Կարաբանովին։

— Աստված իմ,— ասաց նա,— չլինի՞ թե եկել ենք...

Կինը անկողնու վրայից իջավ, սենյակում հետ-առաջ քայլեց։ Սատանայի ծոպիկավոր վերջավորությամբ պոչը զուգընթացաբար խփում էր կահույքի անկյուններին, մտրակում աջ ու ձախ, և Կարաբանովը չդիմացավ, ծիծաղեց.

— Գոնե ասա անունդ ի՞նչ է։

— Բարև ձեզ, իմ սիրելի,— մոթմոթաց կինը։— Երեկ ինձ հրավիրում էիք գնալ Կոպենհագեն՝ դիվանագետների մոտ, իսկ այսօր անունս էլ չեք կարողանում հիշել։ Եվ հետո ձեր ինչի՞ն է պետք իմ անունը։ Չլինի՞ թե ուզում եք ինձ նամակ գրել։ Դե ես այնքան անուն ունեմ, որ ձեր բոլորին կբավականացնի. այսօր մեկը, իսկ վաղը՝ մի ուրիշը...

Նա վերցրեց ջարդված բերանով սափորը, ագահորեն երկար կլկլացրեց կոկորդով։

— Կտրաքես,— ասաց նրան Կարաբանովը։— Դագաթիր...

Կինը գոռաց կատվի վրա.

— Կորի՛ր, անպետք,— և մատներով քորեց գլուխը։—

Այնպիսի կավալերներ,— ասաց նա,— ինչպիսին դու ես, աստված չտա... Կոշկակարից ավելի վատ ծեծկռտվեցիր, հետո սպառնում էիր գնդակահարել բոլորին։

Կարաբանովը ակամայից սարսուռ զգաց՝ ինչ-որ բան վերհիշելով։

— Չի՛ կարող,— ասաց նա։

— Իսկ կազակներն ինչպե՞ս էին քեզ քարշ տալիս կառքի մեջ,— անտարբեր ասաց կինը։— Նույնպե՞ս չես հիշում։ Ահա, իրարանցման մեջ ես նույնիսկ զգեստս եմ այնտեղ թողել և սատանայի նման այսպես ամբողջ քաղաքի միջով, երկրպագուներիս մոտ խայտառակ լինելով, եկել հասել այստեղ։

— Ոչինչ չեմ հիշում,— ասաց Կարաբանովը՝ շոշափելով սրտի տրոփյունը. իսկ սիրտը խփում էր դանդաղ ու անտարբեր։

Այն միտքը, որ ինքը ամբողջ քաղաքի միջով անցել է այդ շիկահեր սատանայի հետ գրկախառնված, նրան թվաց արտառոց, և նա ձեռքը թափահարեց։

— Լա՛վ,— ասաց Անդրեյը, վեր կենալով։— Դու փող վերցրե՞լ ես։

— Ինքներդ եք տվել։ Մենք այնպիսի կանանցից չենք, որ դրպաններ մտնենք...

Վերադառնալով տուն՝ Կարաբանովը սենյակում տեսավ Միշկա Ուվարովին՝ էլի այնպես թարմ, որ կարծես երեկվա գինարբուքը չէր էլ եղել։

— Կարաբանչիկ, դու կարանչիկ[1],— ասաց նա։

— Գնա՛ գրողի ծոցը,— հայհոյեց Անդրեյը։

— Իսկ ես չեմ գնա, Կարաբանչիկ... երեկ դու այնպիսի բան արեցիր, որ հիմա միայն ալլոկացիայով արդեն չես պրծնի։

— Ի՞նչ,— շփոթված հարցրեց Կարաբանովը։

— Իշխանիկը քեզ մոտ մարտավկա կուղարկի։ Նախապատրաստիր քոնը, որին վստահում ես... Օդե դը Սիոնը կամ ես հավանաբար պիտի դատենք իշխանի կողմից։ Այս անգամ

[1] Կարանչիկ — փոքրիկ վարազ։ Այստեղ օգտագործված է բառախաղի համար։

առանց արյուն թափելու գործը չի վերջանա, քանի որ վիրավորանքը հասցված է գործողությամբ։

— Ե՞ս եմ հասցրել,— հարցրեց Անդրեյը։

— Դե դու թքած ունեցիր, Կարաբանչիկ,— հանգստացրեց նրան Ուվարովը։— Դու հո գիտես, որ իշխանը վախկոտ է։ Նա արդեն առավոտվանից վերցրել է ատրճանակները և գընդակ-գնդակի հետևից կրակում է շշերին։ Քեզանից վախենում է...

Սպասավորը նամակ տվեց։

«Դուք ի՞նչ հիմարություններ եք թույլ տվել, խելագար,— գրում էր իշխանուհի Դոլլին,— հենց հիմա, այս գրությունն ստանալուն պես, ներկայացեք ինձ»։

Կարաբանովը, որ ասես ներքաշված էր ինչ-որ հրեշավոր ջրաղացքարի պտույտների մեջ, որը ցնցում ու աղում էր նրան, ներկայացավ իր զարմուհուն։

Դոլլին նրան դիմավորեց այսպիսի բառերով.

— Իմ սիրելի բարեկամ, ես չափազանց շնորհակալ եմ, որ դուք երեկ պաշտպանել եք իմ պատիվը։ Բայց ես լիակատար ինքնուրույն եմ իմ արարքներում և կարող եմ յոլա գնալ առանց ձեր անխելք պաշպանության։

— Թույլ տվեք, իշխանուհի։ Ես զգում եմ, որ երեկ ինչ-որ բան է տեղի ունեցել, որտեղ շոշափվել է նաև ձեր անունը... Բայց ես ի՞նչ առնչություն ունեմ դրա հետ։

Իշխանուհի Դոլլին զզվանքով թափ տվեց շորերը.

— Սեսենք դուք այնքան հարբած էիք... Յո՛ւհ։ Իսկ ինչ վերաբերում է իշխան Վիտգենշտեյնի հետ իմ սիրային կապերին, ապա թույլ տվեք ինձ այդ հարցը ինքս լուծեմ... Այո՛, ես եղել եմ նրա սիրուհին։ Սակայն դուք ի՞նչ գործ ունեք դրա հետ։

«Իսկ երեկ ես այնտեղ ի՞նչ եմ արել»,— տանջալից մտածում էր Կարաբանովը, իսկ ջրաղացքարը պտտվում էր ավելի ու ավելի արագ՝ նրան ներքաշելով իր աշխատանքի մեջ, տրորելով ու փոշի դարձնելով...

Նա նայեց իր զարմուհուն. վերջինս սրընթաց շարժվում էր սենյակում, նրա ձեռքերի փոքրիկ ափերը, որոնք միշտ այնպես հուզում էին Անդրեյին, շարությամբ բռունցքներ էին դարձել։

Վերջապես Դոլլին նստեց նրա առջև։

— Եկե՛ք մտածենք,— ասաց նա։

— Ինչի մասին։

— Ձեր մասին, իմ բարեկամ։ Չէ՞ որ մենք օտար մարդիկ չենք...

Հեշտ է ասել՝ մտածենք, երբ գլխումդ ոչ մի միտք չկա, միայն հուսահատություն է, ասես կանգնած ես մի շատ բարձր պատի առաջ և գիտես, որ հնարավոր չէ անցնել նրա տակից, իսկ ավելի ևս՝ նրա վրայից։

— Ասացե՛ք,— գթաշարժորեն խնդրեց Անդրեյը,— մի՞թե այդ բոլորը ճիշտ է։

— Ի՞նչը։

— Այն, որ դուք... և իշխանը...

— Դե ինչի մասին եք խոսում,— գոռաց Դոլլին։— Խոսքը գնում է ձեր կյանքի մասին, իսկ դուք՝ իշխանի։ Չէ՞ որ դուք ինձ չեք կարող խանդել նրա նկատմամբ... Մտածե՛ք, Անդրե, մտածե՛ք...

Անդրեյը փակեց աչքերը և օրորվեց։

— Ես կուզենայի վերադառնալ Բայազետ,— ասաց նա։— Ինչ լավ էր այնտեղ...

— Հարկավոր է վերադառնալ Պետերբուրգ,— իշխանուհին ոտքը խփեց հատակին։— Միայն թե թույլ չտալ, որ մենամարտը տեղի ունենա...

— Ինչո՞ւ,— բթությամբ հարցրեց Կարաբանովը։

— Դե հո չեք մենամարտի։

Կարաբանովը նախ նստեց Դոլլիի առջև, հետո դանդաղորեն իջավ բազկաթոռից և սողալով մոտեցավ Դոլլիին։ Գլուխը գցելով նրա տաք ծնկներին՝ լաց եղավ։

— Կմենամարտե՛մ... կմենամարտե՛մ,— գոռում էր նա գլուխը տարուբերելով։— Դուք ինչպե՞ս չեք հասկանում, որ կմենամարտեմ... ես այժմ չեմ կարող...

Դոլլին բարձրացրեց նրա գլուխը, համբուրեց ճակատը։

— Դուք... տղամարդիկդ,— ասաց նա քամահրանքով։— Ինչքան թույլ արարածներ եք... Պատերազմի ժամանակ հեշտ է լինել համարձակ, բայց փորձեք համարձակ լինել առօրյա կյանքում։ Ո՛չ, դուք հպարտանում եք հիմար կոտորածնե-

ում ստացած ձեր խծապներով ու սպիներով, բայց երբ մի աղետ է լինում, դուք ծնկաչոք սողում եք մեզ մոտ... Ինչո՞ւ։

Կարաբանովը վեր կացավ։

— Ես պիտի մենամարտե՛մ,— ասաց նա։— Եվ ես կտեսնեմ դեռ, թե ինչպես է ձեր սիրեկանը ծնկաչոք ինձ մոտ սողում՝ խնդրելով խնայել իրեն... Բայազետից հետո ինձ համար մարդ սպանելը հավասար է մի անգամ թքելուն։ Մնաք բարով, իշխանուհի։ Դուք զարմանալի կին եք...

Կարաբանովը հենց այդ պահին գնաց փոստ և ճանապարհին երկար ժամանակ հիշողության մեջ հաջորդաբար թվարկում էր այն մարդկանց անունները, որոնց վրա նա կարող էր վստահ լինել։ Եվ պարզվեց, որ նա գիտի միայն մի այդպիսի մարդու՝ բարոն Կլյուգենաուին, որին և հեռագիր ուղարկեց հետևյալ բովանդակությամբ.

«Դուք սիրում եք դիտել կյանքը։ Շուտ եկեք, և դուք մի արտասովոր տեսարանի վկա կդառնաք։ Միշտ ձեր Անդրեյ Կարաբանով»։

Շուտով Կլյուգենաուն եկավ։ Մինչև վերջ լսելով մանրամասնությունները՝ նա ոչ միանգամից համաձայնեց մարտավկայի դեր խաղալ։

— Ես վաղուց նախանձում եմ հին մարդկանց իմաստությանը,— ասաց նա։— Ամեն ինչ որքան լավ ու հասարակ է եղել։ Հայտնի ցինիկ Կրատոսը մի անգամ ապտակ է ստանում։ Դուրս գալով ղբոսնելու՝ նա կապտուկի տեղը կախեց փոքրիկ տախտակ, որի վրա գրված էր. «Իմ այս տեղին հարվածել է Նիկոդրոմոսը»։

Եվ բոլոր աթենացիները ցինիկի կողմն էին՝ զայրանալով Նիկոդրոմոսի արարքից։ Լավ կլիներ, որ ձեր իշխանն էլ սահմանափակվեր՝ մի փոքրիկ տախտակ կախելով։

— Առանց նենգաբար իմաստակելու, բարոն։ Նա ստիպված կլիներ հիմա կախել մի քանի տախտակներ։

Կլյուգենաուն մտածմունքի մեջ ընկավ.

— Այո՞-ո՞, դա շատ ցավալի է։ Անկեղծ ասած, ես չէի ուզենա ձեզ դադարի մեջ տեսնել, Կարաբանով... Սակայն ես իմ կողմից բոլոր ջանքերը կգործադրեմ, որպեսզի ձեզ համար, ինչպես գրել է Պուշկինը, «հաճելի լինի նշան բռնել գունատ ճակատին...»։

7

Հեռավոր մանկության տարիներին կարդացած և արդեն հասունացած հասակում նորից հանդիպած գրքերում, ինչպես առաջին սիրո մեջ, միշտ էլ ինչ-որ քնքուշ թովչանք կա։ Կարաբանովը մինչև կեսգիշեր ընթերցում-վերընթերցում էր Երշովի բանաստեղծությունները և նախանձում հիմար Իվանին. նրա համար լավ էր իր Գորբունոկի վրա նստած արշավել հեքիաթային թագավորության մեջ։

Սակայն ժամանակն արդեն մոտենում էր լուսաբացին, և ուժ չկար բանաստեղծությունների ալբոմը մինչև վերջ կարդալու։ Անդրեյը թերթեց վերջին էջերը և կարդաց.

Թշնամիները լռեցին՝ փա՜ռք քեզ, աստված։
Բարեկամները գնացին՝ բարի ճանապա՜րհ.
Մնացել է կյանքը, բայց կամա՜ց-կամա՜ց
Նրա հախից էլ մի կերպ կգամ...

Դա նրան դուր եկավ, եղունգով ընդգծեց բանաստեղծությունը և, դեմքը շուռ տալով դեպի պատը, ասաց.

— Ոչինչ... Հախից կգամ։

Նրան արթնացրեց Կլյուգենաուն.

— Վե՛ր կացեք, Կարաբանո՛վ, ժամանակն է...

Անդրեյն արագ լվացվեց թարմ ջրով, ոչինչ չկերավ, նկատի ունենալով, որ հանկարծ կարող է փորից վիրավորվել (Բայազետը նրան շատ բան էր սովորեցրել), և նրանք իջան ներքև, որտեղ սպասում էր կառքը։

— Չե՞նք ուշանա,— հարցրեց Անդրեյը։

Նրան անհանգստացնում էր ժամանակը. բավական էր նրանք ուշանային ընդամենը տասը րոպե, և մենամարտը կարող էր տանուլ տրված համարվել, քանի որ ժամանակին չներկայացողը վախկոտ էր համարվում։

Կլյուգենաուն անուշ հորանջում էր ափի մեջ.

— Ժամանակին կհասնենք...

Ճանապարհը ամայի էր։ Խոտերի վրա նստած էր արծաթագույն ցողը, հովիտներում, բարակ թելերի նման, սողալով տարածվում էր մեզը։ Ճամփաոլորանից այն կողմ սկսվում էր խոր ձոր, որը ծածկված էր սոճիներով։ Շուտով նրանք հասան այն կառքին, որով գնում էր բժիշկը։

— Պետք չէ շտապել,— ասաց բժիշկը,— մենք ճիշտ ժամանակին կհասնենք։ Իսկ ձեզ էլ, պարոն պորուչիկ, անհանգստանալ չարժե։ Ես մոռացել եմ, թե երբ եմ վերջին անգամ բուժել մարդկանց. հավատացեք, շուտով կլրանա երեսուներկու տարի, որ ես նորից գնում եմ մենամարտի վայրը։ Գնդակները ես դուրս եմ հանում նույնպիսի հեշտությամբ, ինչպիսի դյուրությամբ դուք դրանք մխում եք մեկդ մյուսի մարմնի մեջ։

Անտառով շրջապատված մի կանաչ ու հարթ բացատում սպասում էին նրան։ Ունգերն-Վիտգենշտեյնը լուռ գլուխ տվեց Կարաբանովին և մի կողմ քաշվեց։ Նրա մարտավկա Օդե դե Սիոնն անմիջապես սկսեց ստուգել Կլյուգենաուի արկղի ատրճանակները։

Միշկա Ուվարովը նույնպես այստեղ էր. կառքի մեջ նստած եղունգներն էր կծում, կասկածամտորեն նայում բոլորին։

— Գուցե դու գնայիր այստեղից,— ասաց նրան Կարաբանովը։— Թե չէ, որպես վկա, եկեղեցական ապաշխարանքի տակ կընկնես։

— Պատահական վկան չի ընկնում,— պատասխանեց Միշկան, որը, ինչպես երևում էր, ծանոթ էր մենամարտի վերաբերյալ ռուսական կայսրության օրենքներին։

Կլյուգենաուն, որի բոլոր կոճակները կոճկված էին, ժամացույցը ձեռքին մոտեցավ Անդրեյին, պպզեց՝ հանելով ատրճանակները։

— Վիճակահանությամբ,— ասաց նա դժկամորեն։— Պետք է կրակեք վիճակահանությամբ... Սկզբից ուզում էինք սպայագոտու վրայից, բայց ոչիսկ չարեցինք։ Ձես հասցնի նույնիսկ ձգել, արդեն գնդակը կթռչի քեզ վրա։ Տարածությունը փոքր է, և հետո վառոդն էլ այն չէ, ինչ որ հին ժամանակներում...

Ատրճանակները նրա ձեռքերում պսպղացին սառը կապտությամբ։

— Պատրաստվե՛ք, Կարաբանով, հիմա կսկսենք... Իմ կոլեգան արդեն ինչ-որ բան է բացատրում ձեր հակառակորդին։ Կարծեմ հեռավորությունն է որոշում...

Մենամարտային վարքականոնը Ռուսաստանում միշտ կատարելագործվում էր տարերային արագությամբ, և նրա

չգրված կանոններից մեկը վերաբերում էր այն մարտավկաների ոտքերին, որոնք չափում էին մենամարտողների միջև ընկած տարածությունը։ Խորհուրդ էր տրվում այդ բանի համար ընտրել մեծ քայլերով մարտավկայի, բայց և Կլյուգենաուն, և նրա կոլեգա Օդե դե Սիոնը, հակառակի պես, ցածրահասակ մարդիկ էին, և այդ պատճառով դիմեցին Ուվարովին։

— Միշկա, քայլերով չափիր... Քեզ ոչինչ չի լինի։ Դու պատահական մարդ ես։

Կարաբանովը ցույց տվեց բացատը.

— Այստեղ կարծես թեք է։ Ես պետք է կանգնեմ ավելի ցա՞ծ։

Կլյուգենաուն կարճատեսորեն աչքերը կկոցեց և հանգստացրեց նրան.

— Ո՛չ։ Դա խոտն է տարուբերվում...

Բարձրասրունք Միշկա Ուվարովը համաչափ քայլերով անցավ բացատի երկայնքով՝ ոտքերը լայն չռելով։

— Ահա՛,— գոռաց նա հեռվից։— Ահա այստեղից...

— Նա ինչքա՞ն հաշվեց,— անհանգստացավ Կարաբանովը։

Կլյուգենաուն սկսեց քաշել հրահանը.

— Տասնհինգ...

— Այդքան քի՞չ։

— Վիրավորանք գործողությամբ,— բացատրեց բարոնը։— Սպասեք, դեռ վիճակահանություն պետք է լինի...

Օդե դե Սիոնը իր մոտ կանչեց Կլյուգենաուին։ Իշխանը հանգիստ զրուցում էր բժշկի հետ մեսմերիզմի[1] օգնությամբ հիստերիան բուժելու մասին։ Միշկան նորից վերադարձավ կառք, աչքով անելով Կարաբանովին.

— Կարաբանչիկ, առ մի բաժակ։

Անդրեյը մի կում գինի խմեց, բերանը սրբեց և գոռաց.

— Շո՛ւտ արեք...

Խճճվելով բարձր, թաց խոտերի մեջ՝ մոտեցան մարտավկաները։

[1] Մեսմերիզմ — ուսմունք կենդանական մագնիսականության մասին։

— Վիճակը հանված է,— ասաց Օդե դե Սիոնը։— Առաջին կրակոցը պատկանում է ձեզ, պորուչիկ Կարաբանով։

Լռություն տիրեց։ Ունգերն-Վիտգենշտեյնը հեռացավ բժշկից։

Կլյուգենաուն, շնչահեղձ լինելով, ասաց.

— Պարոնայք ախոյաններ, խնդրում ենք մոտենալ արգելագծին...

Ոչ, տեղն այստեղ հարթ էր։ Կարաբանովը հասկացավ միայն հիմա, երբ կանգնեց արգելագծի մոտ։ Իշխանը դեռ շարունակում էր գնալ իր տեղը, և Անդրեյը թափահարեց ձեռքը՝ թմրազերծելով այն։

Արգելագիծը նշված էր գլխարկներով։

Ճնկճնկացնելով երգը, օդում կախվեց փոքրիկ մի արտույտ։

— Մենամարտի պայմանները,— հայտարարեց Կլյուգենաուն,— կրակել մոտենալով... Հեռավորությունը՝ տասնհինգ քայլ...

— Քսա՞-ան,— բղավեց հեռվից Օդե դե Սիոնը։

Կլյուգենաուն հայհոյեց.

— Սա ինչ սատանա է։

Նա վազեց բացատի մյուս կողմը և վերադարձավ՝ ասես ուրախանալով.

— Քսան քայլ... որոշել են վերջին րոպեին։ Կարաբանով, կարող եք հետ քաշվել հինգ քայլ։ Գլխարկները նույնպես կտեղաշարժենք։

Անդրեյը լռությամբ հինգ քայլ հետ քաշվեց։

— Այսպե՞ս։

— Այո՛, այդպես...

Կարաբանովը ատրճանակը տեղափոխեց մյուս ձեռքը, թաշկինակով սրբեց կոթը։

— Մինչև երկո՞ւ անգամ,— հարցրեց նա։

Միշկա Ուվարովը հետևից բղավեց.

— Հանձնվո՞ւմ ես, գլադիատոր։

— Լռի՛ր, ոչիլ...

Մարտավիկները գրավեցին իրենց տեղերը, հայտարարեցին ալլոկացիա.

— Պարոնա՛յք, ձեր վերջին խոսքը։

Կարաբանովը նայեց իր առջև ձգված գորշ դեմքով մարդու կերպարանքին, և հանկարծ նրան ապշեցրեց այն միտքը, որ իշխանը իրեն ոչ մի վատ բան չի արել։

— Դե խոսե՛ք, պարոնա՛յք։

Կարաբանովը բարձրաձայն ասաց.

— Ես ամենևին վիրավորված չեմ իշխանից...

Հրապարակի մյուս կողմից լսվեց պատասխանը.

— Ջանձ՛ացել եմ սպասելուց։ Սկսեք մենամա՛տը...

Օդե դե Սիոնը հիշեցրեց.

— Նկատի ունեցեք, պարոնայք, որ հապճեպ կրակոցը մինչև արգելագիծ հասնելը վկայում է անփութության մասին... Եղե՛ք բարեկիրթ, պարոնա՛յք։

Վերջին պահին Անդրեյը վրայից դեն գցեց համազգեստը, մնաց միայն մի սպիտակ վերնաշապիկով։ Կլյուգենաուն հետևից մոտեցավ նրան և կրծքի վրայից մեջքին գցեց վլադիմիրյան շքանշանը, որը ժապավենից կախված տարուբերվում էր։

— Ջտաքանա՛ք,— շշնջաց նա։

Կարաբանովի համար զվարճալի էր դառնում։

— Մոտեցե՛ք իրար։

Ախոյանները փոքրիկ քայլերով, ատրճանակները բարձրացնելով մոտենում էին իրար բարձր խոտերի մեջ։

Արտույտը լողում էր նրանց գլխավերևում, երկնքի անհատակ կապույտի մեջ։

— Ձե՛ռքդ,— գոռացին Կարաբանովին հետևից։— Ձե՛ռքդ։

Անդրեյը հասկացավ՝ մոռացել էր ձախ ձեռքի մասին։ Այն ժամանակ նա թևը արմունկից ծալեց և դեպի առաջ ուղղեց, արմունկը սեղմելով կրծքին և մատները շռելով՝ կարծես պատրաստվելով խնձոր բռնելու։

Իշխանի դեմքը դանդաղ լողալով մոտենում էր նրան՝ երերալով ինչ-որ մշուշի մեջ, և այն ժամանակ Կարաբանովը սկսեց նշանահատիկով հեռվից շոշափել այդ դեմքը։

Արգելագիծ։

Ծանր ատրճանակը հապաղում է։

Կարաբանովը լայնաբաց ժպտում էր։

— Ինչո՞ւ չեք կրակում։

— Եվ չեմ կրակելու։

Նա բոլորովին իջեցրեց ատրճանակը։

— Դա ի՞նչ կատակներ են։

— Իշխանին մոտեցրեք արգելագծին։

Հակառակորդը չհասավ մինչև վերջնական արգելագիծը։

— Իշխան,— դեմքը ծռմռեց Օդե դե Սիոնը,— ինչպե՞ս չեք ամաչում։

Մի լայն քայլով Ունգերն-Վիտգենշտեյնը մոտեցավ արգելագծին.

— Ահա, կա՛ող եք սպանել...

— Շնորհակալ եմ ձեզանից,— ասաց Կարաբանովը, և նրան դիտողություն արեցին, որ նա խախտեց մենամարտի կանոնները՝ հակառակորդի հետ խոսել չի կարելի։

— Եվս մեկ խախտում,— ասաց Օդե դե Սիոնը,— և դուք կորցնում եք կրակելու իրավունքը...

«Կատակները մի կողմ»,— որոշեց Կարաբանովը, նորից բարձրացնելով ատրճանակը։ Իշխանի դեմքը նշանահատիկի տակ տափակեց ու երկատվեց։— «Հաճելի է նշան բռնել գունաթափ ճակատին»,— չգիտես ինչու, վերհիշեց Անդրեյը։ Ոչ, այդտեղ քիչ բան կա հաճելի. կենդանի մարդ է կանգնած քո առջև, թեկուզ և սրիկա, բայց մարդ...

Հանկարծ մտաբերեց գնդապետ Խվոշչինսկուն և առաջին խոսակցությունը նրա հետ։ «Այնուամենայնիվ, նա իրավացի էր...»

Բոպեն երկարեց։ Կարաբանովն ուղղակի վախեցնում էր

իր ախոյանին, ատրճանակի փողով հետևելով նրա յուրաքանչյուր շարժմանը։

— Կրակե՛ցեք,— գոռաց Կլյուգենաուն։

Կարաբանովը բարձրացրեց ատրճանակը և գնդակը բաց թողեց լազուր երկինք...

Ունգերն-Վիտգենշտեյնը այնպես էլ նայեց դեպի երկինք։

— Այդ ի՞նչ է նշանակում,— հարցրեց նա խզխզացող ձայնով։

Նրան մոտեցավ Օդե դե Սիոնը.

— Դա նշանակում է, որ պորուչիկ Կարաբանովը ձեզ կյանք է պարգևում։ Ցանկանում եմ, իշխան, որ դուք նույնպես վեհանձն լինեք։

Միշկա Ուվարովը շրխկոցով շիշը խփեց քարին.

— Միմոսնե՛ր։ Կատակերգություն են խաղում...

Կլյուգենաուն նրան հրեց կառքի մեջ, մտրակեց ձիերին.

— Կորե՛ք այստեղից գրողի ծոցը։ Այստեղ ձեր տրամադրությունը չունեն...

— Կ'ակոցի ի'ավունքն ի՞մն է,— հարցրեց իշխանը։

— Այո, ձերն է...

Կարաբանովը տեսավ, թե ինչպես ատրճանակի փողի սև անցքը սահեց նրա փորի երկայնքով, ավելի ու ավելի բարձր, հետո սկսեց սողալ սրտի շուրջը։ Եվ ահա շոշափեց ուսը։

Անդրեյը թուքը կուլ տվեց։

Քամուց գետնամած լինելով՝ աղմկում էր խոտը։

Կրակոցը ճայթեց գրեթե դիմահար, կրակը փայլատակեց գեմքին։

— Ա՜յ...

Ատրճանակը ձեռքից գցելով՝ Անդրեյը բռնեց ուսը։ Շապիկն արագորեն թրջվում էր արյունից։

— Ասացեք պա'ոն պո'ուչիկին,— լսեց Անդրեյը,— ո՞ ես նույնպես կա'ող եմ գնահատել վեհանձնությունը։

Կլյուգենաուն վազելով մոտեցավ վիրավորին։

— Որտեղի՞ց ես վիրավորվել,— հարցրեց նա։

— Անրակից... այնպես, ինչպես և Պացևիչը։

Բժիշկը պատռեց վերնաշապկի օձիքը, մատներով շոշափեց ոսկորի ելուստը։

— Դատարկ բան է,— ասաց նա։— Գինի տվեք նրան...

— Ես մի կրակո՞ց էլ ունեմ,— հարցրեց Կարաբանովը։

— Նա նույնպես,— տխուր համաձայնեց Կլյուգենաուն։

Կարաբանովի վերքը հապճեպ կապեցին բինտով։ Նրա ատրճանակը նորից լցրին։

Վիճակ զցեցին։

Անդրեյը կանգնած էր իր տեղում՝ սպասելով բացատով քայլող պրապորշչիկին։

— Դե ի՞նչ,— հարցրեց նա։

— Նրանն է,— կարճ պատասխանեց բարոնը։

Կարաբանովը գլխով արեց։

— Կդիմանա՞ք,— հարցրեց Կլյուգենաուն։

— Հարկավոր է...

Կարաբանովն առաջինը շարժվեց դեպի արգելագիծը՝ գոռալով հակառակորդի դեմքին.

— Սպանիր վերջացրո՛ւ, ստո՛ր...

Նա միայն բարձրացրեց ատրճանակը և, գլուխը շուռ տալով դեպի ձախ, փողով ծածկեց քունքը։ Սիրտն արդեն չէր կարող պաշտպանել գնդակից, ձախ ձեռքը վերքից թուլացած կախվել էր կողքից...

Կլյուգենաուն, չգիտես ինչու, ուղղագիծ կտրելով ամբողջ դաշտը, վազեց դեպի Օդե դե Սիոնը։

— Բաժանե՛ք իրարից,— գոռում էր նա հեռվից։— Բաժանե՛ք...

Եվ կրակոցը որոտաց։

— Սպասե՛ք,— Հշաց Կլյուգենաուն։— Արգելագիծն անցել եք...

— Իշխան, ի՞նչ արեցիք։

— Ես ձանձ'ացել եմ լսել ն'ա վի'ավո'անքնե'ը...

Կարաբանովը դեռ կանգնած էր ոտքերի վրա։

«Լինե՞լ, թե չլինել»,— մտածում էր նա։

Հետո նրա մարմինը մի տեսակ երերալով թեքվեց մի կողմ, և նա երեսնիվայր ընկավ գետնին։

Երբ վազելով մոտեցան նրան, նրա ձեռքի մատները դեռ դանդաղ բացվում էին, ազատելով ատրճանակը, որը արդեն պետք չէր։

Միշկա Ուվարովը թարմ շիշ բացեց։

— Գուցե դուք վազեիք տեսնեիք ի՞նչ է պատահել նրան,— ասաց նա բժշկին։

— Էլ ինչ վազեմ,— պատասխանեց բժիշկը։— Ես տեսա, թե ինչպես ընկավ խեղճը... Այդպես կարող են ընկնել միայն սպանվածները։

Իշխանուհի Դոլլին չցանկացավ նրա դին թողնել այդ հողի վրա։ Կարաբանովին դրեցին կապարե դագաղի մեջ, ձեռքերին հագցրին մոմլաթե ձեռնոցներ, դիակի վրա առատորեն մոմ լցրին։ Մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչը իր միջոցներով վագոն-սառցարան պատվիրեց, որով նրա համար ուստրե էին բերում, և պորուչիկ Կարաբանովը, որն իր կյանքի ընթացքում ճաշակեց ամեն բան, ինչը տրված է ճաշակելու այդպիսի մարդկանց, սկսեց իր վերջին ուղևորությունը։

Հուղարկավորության համար հանգուցյալի դագաղը դրված էր իր սրտին սիրելի Ռյազանշչինայի գյուղական մի փոքրիկ խաղաղ եկեղեցում։ Մոմի հետ միասին դեմքից պոկվեցին հոնքերն ու մազերը։ Հարևան կալվածատերերը այլանդակ ձևով հարբեցին իշխանուհու կողմից կազմակերպված հարուստ հոգեհացի ժամանակ, իսկ «Նահանգական տեղեկագրերում» նշվեց, որ Ռյազանի ազնվականությունը ի դեմս Կարաբանովի կորցրեց իր լավագույն զավակներից մեկին։

Երկու լայնասաղարթ կեչիների տակ, Աուստերլիցի հերոս

իր պապի կողքին, հայրենի հողի մեջ պառկեց պորուչիկ Կարաբանովը՝ սուսերով, համազգեստով, խթաններով։

Նրա գերեզմանի վրայից հիանալի տեսարան էր բացվում. թեք լանջերով տարածվում էին արծաթագույն վարելահողերը, հոսում էին մարմանդ գետակները, իսկ հեռվում կանաչին էին տալիս ռուսական թախծոտ միջանտառակները...

Վերջաբան

Իրքը չէր կարող ավարտված համարվել, եթե մենք այստեղ չասեինք մեր հերոսների հետագա ճակատագրի մասին։

Յու. Տ. Նեկրասովը շուտով դատապարտվեց հեղափոխական կուսակցություններից մեկին պատկանելու համար։ Դատարանում նա հայտարարեց, որ Թուրքիայի հետ պատերազմը միայն ամրապնդել է նրա համոզմունքը ռուսական հեղափոխության ծայրահեղ անհրաժեշտության մեջ։ «Միթե՞ ձեզ, պարոնայք դատավորներ,— ասել է նա դատապարտյալի նստարանից,— տարօրինակ չի թվում հենց մեր կողմից էլ ազատագրված Բուլղարիայում սահմանադրություն մտցնելը, այն ժամանակ, երբ սեփական երկիրը, որը կուլտուրական և բարոյական տեսակետից ամենևին էլ ավելի ցածր չի կանգնած, մինչև այժմ մնում է իրավազուրկ, ստորացած և ինքնակալական...»։

Սիբիրի աղագործարաններում չորս տարի տաժանակիր աշխատանքից հետո Յուրի Տիմոֆեևիչին բաց թողեցին աքսորաբնակության։ Եթե մենք չենք սխալվում, նա այն ժամանակ ապրում էր Կաինսկում, որտեղ զբաղվում էր ատաղձագործությամբ։ Եվ հենց այդտեղից էլ նա փախուստի

էջիմում այն ճանապարհով, որը բացել էր Բակունինը. Ամուրի երկայնքով Ճապոնիա, այնտեղից ծովով՝ Ամերիկա, որտեղից ուղիղ ճանապարհով՝ դեպի Եվրոպա, ավելի ստույգ՝ Ժնև, որն այդ ժամանակ դարձել էր ռուսական հեղափոխության գրեթե Մեքքան։ Շվեյցարիայում Նեկրասովը խիստ կարիքի մեջ էր. նա իր համար մի կտոր հացի փող էր վաստակում պատահական դասեր տալով, և, որքան էլ դա տարօրինակ է, ստորջրյա լողարկերի կառուցվածքի վերաբերյալ անգլերեն ամսագրերին թղթակցություններ գրելով։

Զինվորական բժիշկ Ա. Բ. Սիվիցկին շարունակում էր ռուսական զինվորին ծառայելու բարի գործը, որին և նվիրեց իր ամբողջ կյանքը։ Արդեն զառամյալ մարդ լինելով, նա, որպես հոսպիտալային տեսուչ, մասնակցեց Ռուս-ճապոնական պատերազմին։ 1905 թ. փետրվարի 25-ին, 5-րդ սիբիրյան կորպուսի դասավորության վայրում նա ընկավ թշնամու գնդացրի կրակի տակ, երբ Մուկշանի գումարտակի համհարզ, փոխպորուչիկ Ն. Ա. Դիմիտրիև-Մամոնովի հետ միասին Շուալինզում փորձում էր անցնել փողոցը, և երկուսի մահն էլ վրա հասավ մի ակնթարթում։ Զինվորական պատիվներ տալուց հետո Ա. Բ. Սիվիցկուն թաղեցին Խուշիտայ (Արևելա-Չինական երկաթուղի) երկաթուղային կայարանի մոտ, վերը նշված փոխպորուչիկի հետ մի գերեզմանում։

Մի քիչ այլ կերպ դասավորվեց Ն. Մ. Վատնինի ճակատագիրը. ունենալով դյուցազնական առողջություն՝ Բայազետի նախկին հարյուրապետը անցյալ դարի վերջում արդեն պաշտոնաթող էր եղել համազգեստով, սակայն դա արդյոք կազակային գեներալի համազգե՞ստ էր, ճշտիվ հայտնի չէ։ Ապրում էր նա իր հայրենիքում՝ կազակային ստանիցայում, վարելով շատ հասարակ կյանք, ոչնչով չտարբերվելով իր հայրենակիցներից։ Նրա ծոռներից մեկը, որը ներկայումս ձկնարդյունաբերության մինիստրության աշխատակից է, պատմում էր հեղինակին, որ իր նախապապը մահացել է խոր ծերության հասակում՝ մինչև իր կյանքի վերջին օրերը հայրենի ստանիցայում վայելելով համընդհանուր հարգանք ու պատիվ։

Ցունկեր Ա. Գ. Եվդոկիմովը շարունակեց պարապմունք-

ները Կազանի համալսարանում՝ հույս ներշնչելով ժամանակի ընթացքում դառնալ նշանավոր մասնագետ այն ժամանակ դեռ բոլորովին երիտասարդ գիտության՝ միկրոբիոլոգիայի բնագավառում։ Սակայն նրա հարսնացուն ծնկից վերադառնալու ժամանակ ձերբակալվում է անլեգալ գրականության բեռով և աքսորվում Սիբիր։ Եվդոկիմովը հրաժեշտ տվեց ամբիոնին և հետևեց հարսնացուին՝ տայգայական խուլ վայրերը, որտեղ Ալիբերովի հանքերի հարևանությամբ պատահմամբ հայտնաբերեց գրաֆիտային նոր հանքեր և արագ հարստացավ։ Հետագայում, վերադառնալով գիտական աշխատանքի, Եվդոկիմովը մի քանի անգամ կամավոր մեկնում է խոլերային և ժանտախտային նահանգները՝ համաճարակի օջախների դեմ պայքարելու, և 1893 թվականին, ուղևորության ժամանակ գտնվելով Փարիզում, իրեն վտանգի է ենթարկում՝ Պաստերի ինստիտուտում երկրորդ անգամ ներարկելով իրեն (Second Vaccin) խոլերայի շիճուկը։ Եվդոկիմովը առաջին գիտնականներից մեկն էր, որ հենց անմիջապես և անվերապահորեն միացավ հեղափոխությանը և 1924 թվականին, գտնվելով Ֆերգանայի մարզում, որտեղ նա գլխավորում էր համաճարակային արշավախմբերից մեկը, ողբերգական ձևով ընկավ բասմաչների սրից...

Ա. Ե. Խվոշչինսկայան, Բայազետում ամուսնուն կորցնելով, պարզվում է, ինչպես նկատել է հետազոտողներից մեկը, կորցնում է նաև իր բոլոր խնայողությունները։ Մեկ ուրիշ տեղ մենք հանդիպում ենք այսպիսի հաղորդագրության. «Ներկայումս (1885 թ.) ոչ ամուսնությունը մայոր Բելովոդսկու հետ, ոչ անզավակությունը, որը ավելի շատ հանգստություն է տալիս, չեն կարող վերականգնել նրա ծայրահեղորեն քայքայված առողջությունը...»։ Ինչևիցե, 1899 թվականին մենք Խվոշչինսկայային տեսնում ենք Պետերբուրգում ապրելիս, Մեցի տանը, որը գտնվում էր Դվորյանի նրբանցքի վրա, պալատական խորհրդական, հաղորդակցության ճանապարհների ինժեներ բարոն Ֆ. Պ. ֆոն Կլյուգենաուի բնակարանում։ Ֆյոդոր Պետրովիչը ծառայում էր տրանսպորտում և զբաղվում էր կախովի կամուրջների կոնստրուկցիաների նախագծմամբ։ Հենց այդ բնակարանում էլ նրանք դիմավորեցին Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը, որը ինժեներին ազատեց բարոնությունից։ Ներունիները տեղափոխվեցին մի սենյակ, որի լուսամուտները բացվում էին Պրյաժկայի վրա։

Կլյուգենաուն վերջին կամուրջը կառուցել է արդեն սովետական իշխանության ժամանակ Պոլոնկա գետակի վրա, Պորխով կայանից ոչ հեռու։ Ասում են՝ կամուրջը կանգուն է եղել մինչև 1943 թվականը, հետո նահանջող գերմանացիները պայթեցրել են։ Ներունական տարիներին Ֆյոդոր Պետրովիչը սիրել է ֆլեյտա նվագել և տարվել է թատերական աֆիշների հավաքածու կազմելով, որը հետագայում նա հանձնել է երկրի թանգարաններից մեկին։ Ագլայա Եգորովնան զբաղվել է ֆրանսերենի մասնավոր դասեր տալով, իսկ երեկոները ծաղիկներ է պատրաստել կանացի գլխարկների համար, որը կազմել է նրա լրացուցիչ վաստակը։

Ներունիների կյանքը եղել է խաղաղ և, պետք է ենթադրել, չափազանց համերաշխ։ Նրանց մաքուր սենյակում կախված էր երկու դիմանկար՝ մեկը Ժիլբեր Ռոմինն էր, որի բոցաշունչ կերպարը երկրպագում էր Կլյուգենաուն, իսկ մյուսը Անդրեյ Կարաբանովինն էր, կավալերգարդի փայլփլուն համազգեստով, որին մի ժամանակ երկրպագում էր Ագլայա Եգորովնան։ Եվ երբ հարևանների երեխաները գալիս էին Ներունիների մոտ, Խվոշչինսկայան նրանց հետաքրքրասիրությունը բավարարելու համար ասում էր.

— Սա, երեխաներ, Շառլ-Ժյուլ Ռոմն է՝ մեծ մոնտանյարը և տիեզերական հոետորը։ Իսկ սա... սա ուղղակի գեղեցիկ քեռի է։

Կլյուգենաու ամուսինները մահացել են համարյա միասին, գրեթե չհիվանդանալով, մեկը մյուսից մեկ-երկու օր հետո, և թաղվել են իրար կողքի, Լենինգրադի Միտրոֆանովյան գերեզմանոցում, բավականին մոռացված բանաստեղծ ու քննադատ Ապոլոն Գրիգորևի գերեզմանի հարևանությամբ։

Եվ նրանց հարևանները շատ զարմացած էին, երբ հնոտիա-

վաճառ թաթարը, որ եկել էր գնելու հանգուցյալների թողած իրերը, հին ստվարաթղթերի ու գլխարկների փետուրների մեջ հանկարծ հայտնաբերեց երկու բրոնզե ճեղալ՝ այսպիսի համեստ մակագրությամբ.

Բայազետի
հերոսական
պաշտպանության համար
1877 թ.

Լենինգրադ—Ռոշչինո—Կովկաս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից 3

Մասն առաջին

ՀԵԹՅԱԼՆԵՐԸ

Պորուչիկ Կարաբանովը 6
Գիշերային հեծյալները 80
Արարատյան հնոցը 202
Ցաթաղանների տակ 289

Մասն երկրորդ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Տաղնապ 358
Արյունալի քրտինք 450
Անմահ կայազորը 539
Փասիաններ և շեյթաններ 634
Վերջաբան 704

ISBN 5—550—00318—x

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ՊԻԿՈՒԼ ՎԱԼԵՆՏԻՆ ՍԱՎՎԻՉ

Բ ա յ ա զ է տ

Վեպ

Литературно-художественное издание

ПИКУЛЬ ВАЛЕНТИН САВВИЧ

Б А Я З Е Т

Роман

Ереван, издательство «Хорурдаин грох»
На армянском языке

Խմբ. վարիչ՝ Վ. Հ. Բաբայան
Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի
Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան
Տեխ. խմբագիր՝ Ա. Հ. Սեռոյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բուլաթյան

ИБ *№. 6498*

Հանձնված է շարվածքի 18. 04. 89։ Ստորագրված է տպագրության 18. 09. 89։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ՝ տպագր. № 2։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր, 37,38 պայմ. տպ. մամ., 33,1 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 50.000 (I թողարկում 1—25000)։ Պատվեր 564։ Գինը՝ 3 ռ. 30 կոպ.։

«Խորհրդային գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։
Издательство «Хорурдаин грох», Ереван—9, ул. Теряна, 91.

ՀԽՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան—10, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли, Ереван-10, Алавердяна, 65.

«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
1990 Թ. ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ ԼՈՒՅՍ ԿԸՆԾԱՑԻ

ՋԱԼԻԳԻՆ Ս. Հարավ-ամերիկյան տարբերակ, վեպ

ԲԻԿՈՎ Վ. Ադեմի նշան, վիպակներ

ՇՈԼՈՄ-ԱԼԵՅԽԵՄ Թափառող աստղեր, վեպ

ԳԱՐԴՈՆ Վ. Զմռսխտավառ ասպետը, վեպ

ԳՈԼԴԻՆԳ ՈՒ. Ճանճերի տիրակալը, վիպակ

ԴՅՈՒՄԱ Ա. Մարզա թագուհին, վեպ

ԼԱԳԵՐԿՎԻՍՏ Պ. Դահիճը, Թզուկը, վիպակներ

ՍԱՆԴ Ժ. Ինդիանա, վեպ

ՍԱՐՈՅԱՆ Վ. Երկեր, գիրք IV